*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

# 2017 ԹՎԱԿԱՆԻ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. **Ընդհանուր դրույթներ .....5**
2. **Վերահսկողության արդյունքներ .....7**

2.1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և օգտագործման, այդ թվում՝ կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի կառավարման լիազորված մարմնի կողմից բաժնեմասի կառավարման գործունեության, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....7

2.2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....33

2.3. ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....89

2.4. Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի, Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման, Սեյսմիկ անվտանգության բարելավման վարկային ծրագրերի, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ու Սոցիալական ներդրումների և Տեղական զարգացման դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....143

2.5. ՀՀ տարածքում գործող սոցիալական ծառայություն տրամադրող տարածքային կենտրոնների կողմից իրականացվող ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....157

2.6. Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման

նկատմամբ /վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպություններ/ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....183
2.7. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմանբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....233
2.8. ՀՀ տարածքում ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման (ոչ մետաղական հանքավայրեր) նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....261
2.9. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....275
2.10. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում» ծրագրերով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ .....283
2.11. ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....304
2.12. Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային, սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....388

2.13. ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....426
2.14. ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....498
2.15. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....721
2.16. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման, արտաբյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ.....751
2.17. Եվրասիական տնտեսական միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Եվրասիական տնտեսական միության գույքի և այլ ակտիվների օգտագործման նկատմամբ իրականացված համատեղ արտաքին աուդիտի (հսկողության) վերաբերյալ.....777
2.18. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման և բաշխման, դրանք, որպես եկամուտ, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցման նկատմամբ իրականացված համատեղ վերահսկողության վերաբերյալ.....782
**3. Զարգացման ծրագրեր և միջազգային համագործակցություն .....786**
3.1. Զարգացման ծրագրեր .....786
3.2. Մասնակցություն միջազգային և տարածաշրջանային միջոցառումներին.....788
3.3. Համատեղ վերահսկողություն .....789

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև, ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված Վերահսկիչ պալատի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի թվով 18 ընթացիկ հաշվետվություններում, որոնցից 2-ը՝ Եվրասիական տնտեսական միության մասով և 6–ը՝ արտածրագրային վերահսկողության արդյունքներով:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով թվով 3 արձանագրություններ ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ դիտարկելով վերջիններս որպես քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ կասկածներ պարունակող: Դրանք են՝

1. ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2018թ. մարտի 19-ի թիվ 7/4 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության հիմք հանդիսացող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով կազմված թիվ 1 արձանագրությունը.

2. ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2018թ. մարտի 19-ի թիվ 7/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության հիմք հանդիսացող ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի պահանջով ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթների մասով կազմված թիվ 2 արձանագրությունը.

3. ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2018թ. մարտի 22-ի թիվ 8/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության հիմք հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման ծրագրի մասով կազմված թիվ 2 արձանագրությունը և կից հավելվածը:

Բոլոր հաշվետվությունները, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան, Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով և դրանց մասին տեղեկացվել է ՀՀ Նախագահին և ՀՀ

կառավարությանը: Ընթացիկ հաշվետվությունները տեղադրվում են Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

Վերահսկիչ պալատի կողմից կազմված բոլոր ընթացիկ հաշվետվություններում վերահսկողության արդյունքների հիման վրա ՀՀ կառավարությանը, նախարարություններին, այլ պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին, վերահսկողության արդյունքների հիման վրա ներկայացվել են շուրջ 180 առաջարկ:

Վերահսկողության ընթացքում հայտնաբերված փաստերը պարունակող արձանագրությունները, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով, ներկայացվել են վերահսկվող օբյեկտների ղեկավարներին և ստորագրվել են վերջիններիս կողմից:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետով սահմանված կարգով վերահսկվողի ներկայացրած բոլոր առարկությունները կից հավելվածով ներառված են վերահսկողության արդյունքում կազմված ընթացիկ հաշվետվություններում և հանդիսանում են դրանց անբաժանելի մասը:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջով ընթացիկ հաշվետվություններում և եզրակացություններում ամրագրված խախտումները մեկամսյա ժամկետում վերահսկվող օբյեկտների ղեկավարների կողմից վերացնելու վերաբերյալ Վերահսկիչ պալատին տեղեկատվություն տրամադրելու դեպքում, Վերահսկիչ պալատն այն ամբողջությամբ կտրամադրի Ազգային ժողովին՝ եռօրյա ժամկետում:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքներով: «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը ընդգրկում է գործունեության տարեկան ծրագրի բոլոր ծրագրային հարցերի ընթացիկ հաշվետվությունները:

## 2.1 ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ 50 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. ապրիլի 12-ի թիվ 8/1 որոշում: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և օգտագործման, այդ թվում՝ կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի կառավարման լիազորված մարմնի կողմից բաժնեմասի կառավարման գործունեության, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման արդյունավետության և օրինականության որոշումը: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործմանը և պետական սեփականության կառավարմանն ու օգտագործմանը, այդ թվում՝ կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի կառավարման լիազորված մարմնի կողմից բաժնեմասի կառավարման գործունեությանը, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման գործընթացներն ու ընթացակարգերը: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, «Ջրառ» ՓԲԸ, «Մելիորացիա» ՓԲԸ: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 01.01.2016-01.12.2017թթ.: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 13.04.2017-15.03.2018թթ.: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը՝ կատարելով ֆինանսա- |

կան, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) վերահսկողություն: Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկողության օբյեկտներից ստացված տվյալների ուսումնասիրություն, ինչի արդյունքում ստուգում է կատարվել «Մելիորացիա» ՓԲԸ-ում: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են վերահսկողության արդյունքները:

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## «ԿՈԼԵԿՏՈՐԱԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳԻՐ

### *ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

**Ծրագրի բյուջետային հայտերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ**

**- 2016թ. մեկ ընդհանուր ծրագրի իրականացման համար կազմվել են 2 տարբեր բյուջետային ֆինանսավորման հայտեր, որտեղ նույն աշխատանքների արժեքները հաշվարկվել են տարբեր՝ ՀՀ-ում չգործող գնացուցակներով:**

**- 2017թ. բյուջետային հայտում չկա հայտի գումարը հիմնավորող հաշվարկը:**

Ծրագրի իրականացման համար ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և «Մելիորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ՓԲԸ) միջև 19.02.2016 թվականին կնքվել է դրամաշնորհի հաշվին իրականացման թիվ 01-ԴՇ պայմանագիրը՝ 321,666.0 հազ. դրամի, իսկ 01.02.2017թ.-ին՝ թիվ 01-ԴՇ պայմանագիրը 320,473.0 հազ. դրամի չափով: Դրամաշնորհային պայմանագրերի առարկա է հանդիսացել կոլեկտորադրենաժային ցանցի (այսուհետ՝ ցանց) պահպանումն ու շահագործումը (588,759.0 հազ. դրամ) և գրունտային ջրերի մակարդակի որոշման աշխատանքները (53,380.0 հազ. դրամ): **Կոմիտեի և ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ձևին:**

20.06.2016թ. թիվ 1 և 14.07.2016թ. թիվ 2 լրացուցիչ համաձայնագրերով նախատեսվել է փոփոխել 19.02.2016թ. կնքված 01-ԴՇ պայմանագրի թերությունների ակտերը և թիվ 2;3 հավելվածները, (կատարման և վճարման ժամանակացույցերը), սակայն փաստացի փոփոխել են նաև հավելված թիվ 2.1-ը՝ նախահաշիվը, այն կազմվել է նոր ծավալներով և նոր միավոր գներով:

26.05.2017թ.-ի թիվ 1 լրացուցիչ համաձայնագրով, անփոփոխ թողնելով պայմանագրային գինը, փոփոխվել է պայմանագրին կից թերությունների ակտը: 05.09.2017թ.-ի թիվ 2 համաձայնագրով վերահաստատվել է 25.05.2017թ.-ի թերությունների ակտը, սակայն փոփոխվել է նաև պայմանագրի հավելված 2.1-ը՝ պայմանագրային գինը հիմնավորող նախահաշիվը, ընդհանուր պայմանագրային գինը թողնելով նույնը, ավելացվել է չնախատեսված ծախսեր բաժինը:

**Նույն պայմանագրային գումարով նախատեսվել է իրականացնել 2687խմ-ով պակաս մաքրման և 1691 խմ-ով պակաս հարթեցման աշխատանքներ**

Չնայած նրան, որ թիվ 2 համաձայնագրով նշվել է, որ հաստատվում է թիվ 1 համաձայնագրով հաստատված 25.05.2017թ.-ի «Փոփոխված թերությունների ակտ»-ը՝ պայմանագրին կից ներկայացվել է նշված թերությունների ակտից տարբերվող թերությունների ակտ և նախահաշիվը կազմվել է այդ թերությունների ակտում նշված ծավալներով: Արդյունքում, նույն պայմանագրային գումարով նախատեսվել է իրականացնել 2687խմ-ով պակաս մաքրման և 1691 խմ-ով պակաս հարթեցման աշխատանքներ:

2016թ.-ի բյուջետային հայտով նախատեսվել է կատարել 141,3 կմ երկարությամբ ցանցի մաքրում 312628 խմ բերվածքներից, այնինչ, համաձայն կատարողականների, կատարվել է 136,88 կմ ցանցի մաքրում 307697խմ բերվածքներից:

2016թ.-ի վերջնական թերությունների ակտում և նախահաշվում մաքրման աշխատանքների ծավալները ավել են հաշվարկվել թերությունների ակտում և նախագծերում սահմանված չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալից 31727խմ-ով: Բացի այդ, նախահաշիվները հաշվարկվել են ՀՀ-ում չգործող գնացուցակներով, ինչի արդյունքում աշխատանքների նախահաշվային արժեքներն ավելի են հաշվարկվել գործող գնացուցակով ստացվող արժեքներից:

ՀՀ կառավարության 30.09.2014թ.-ի թիվ 1393-Ն որոշման համաձայն 5 մլն. դրամից ավելի արժեք ունեցող թվով 8 օբյեկտների համար կազմվել են

նախագծանախահաշվային փաստաթղթեր: Վերջիններիս կազմման համար դրամաշնորհի պայմանագրով նախատեսված գումարը գերազանցում է (սահմանված կարգով նախահաշվային արժեքի հաշվարկման դեպքում) ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ.-ի թիվ 19-Ն հրամանի պահանջներով հաշվարկված արժեքը:

**Աշխատանքների շուրջ 150% թանկացումը հիմնավորվել է նյութերի և աշխատավարձի ընդամենը 30% գնաճով**

2006թ. մինչև 2016թ., գրեթե նույն ֆինանսավորման պայմաններում, մաքրման աշխատանքները նվազել են շուրջ 2.5 անգամ, 350 կմ-ից դառնալով 141.3 կմ, որի պատճառը նշվել է աշխատավարձի, շինանյութերի և վառելիքաքսուքային նյութերի շուրջ 30% գնաճը: Այսինքն, աշխատանքների շուրջ 150% թանկացումը հիմնավորվել է նյութերի և աշխատավարձի ընդամենը 30% գնաճով:

## *ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

2016թ. կատարողական ակտերի գումարը ավելի է հաշվարկվել մի շարք աշխատանքների միավոր գները պայմանագրում (համաձայնագրում) սահմանվածից բարձր ընդունելու արդյունքում, ընդ որում, տարբեր ամիսներին ընդունվել են տարբեր գներ:

2017թ. 01.09.2017թ.-ի դրությամբ կազմված մաքրման աշխատանքների կատարողական ակտերի գումարը ավելի է հաշվարկվել թվաբանական սխալի արդյունքում:

ՓԲԸ-ի 01.01.2016-31.12.2016թթ.-ի և 01.01.2017-01.09.2017թթ.-ի դրամական ելքերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

***Աղյուսակ 1***

*հազ. դրամ*

| NN | Ցուցանիշների անվանումը | 01.01.2016-31.12.2016թթ. | 01.01.2017-01.09.2017թթ. |
|---|---|---|---|
| | Դրամական ելքեր | | |
| 1. | Աշխատավարձ հարկերով | 88,323.0 | 46,887.4 |
| 2 | Գործուղման ծախսեր | 329.0 | 133.0 |
| 3 | Անձնական օգտագործման ավտոմեքենաների փոխհատուցման գումար | 3,860.0 | 2,147.9 |
| 4 | Մեխանիզմների վարձավճար | 158,383.2 | 71,878.5 |
| 5 | Անշարժ գույքի վարձակալություն | 1,071.4 | 714.2 |
| 6 | Հումք, հիմնական և օժանդակ նյութեր, պահեստամասեր, վառելիք և քսայուղեր ԱԱՀ-ով, այդ թվում՝ | 55,392.8 | 35,032.2 |
| 6.1 | Վառելիք և քսայուղեր | 53,830.5 | 33,481.7 |
| 7 | Շենքերի շահագործման, տնտեսական, կոմունալ ու այլ ծախսեր, ընդամենը | 1,680.8 | 1,060.9 |
| 8 | Ֆինանսական և ապահովագրական ծառայություններ | 406.5 | 150.0 |
| 9 | Էլեկտրաէներգիայի ծախսեր | 2,374.6 | 1,898.2 |
| 10 | Դրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն | 3,744.0 | 1,584.0 |
| 11 | Դրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծերի փորձաքննություն | 416.5 | 345.0 |

Ցանցի պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով 30.03.2016 թ.-ին կնքվել են պայմանագրեր (աղյուսակ 2): Կնքված պայմանագրերի առարկա է հանդիսացել դրագլայն տիպի էքսկավատորների վարձակալությունը:

***Աղյուսակ 2***

*հազ. դրամ*

| Չափաբաժին | Կազմակերպություն | Միավորի (1 ժամի) արժեքը ՀՀ դրամ | Պայմանագրի արժեքը (168ժամ x 8ամիս x միավորի արժեք) | Պայմանագրի արժեքը փոփոխությամբ ներառելով բուլդոզերի վարձակալությունը |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՁ Հրաչյա Հարությունյան | 22,550.0 | 61,152.0 | 61,152.0 |
| 2 | ԱՁ Հրաչյա Հարությունյան | 22,950.0 | | |
| 3 | Արայիկ-Արմեն ՍՊԸ | 22,850.0 | 30,710.4 | 31,886.3 |
| 4 | Դավիթ-Նորայր ՍՊԸ | 23,600.0 | 31,718.4 | 32,724.9 |
| 5 | Որդի-Միեր ՍՊԸ | 22,300.0 | 29,971.2 | 31,108.2 |
| | Ընդամենը | | 153,552.0 | 156,871.5 |

Ցանցի պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով 18.04.2017 թ.-ին կնքվել են պայմանագրեր (աղյուսակ 3):

***Աղյուսակ 3***

*հազ. դրամ*

| Չափաբաժին | Կազմակերպություն | Միավորի (1 ժամի) արժեքը ՀՀ դրամ | Հանույթի ծավալ խմ | Կնքված պայմանագրի արժեքը (ծավալ/43.5խմժ x միավորի արժեք) |
|---|---|---|---|---|
| 1 | Դավիթ-Նորայր ՍՊԸ | 20,780.0 | 58800 | 28,088.8 |
| 2 | ԱՁ Հրաչյա Հարությունյան | 20,730.0 | 68630 | 32,705.7 |
| 3 | ԱՁ Հրաչյա Հարությունյան | 20,770.0 | 49050 | 23,419.9 |
| 4 | Արայիկ-Արմեն ՍՊԸ | 20,820.0 | 61,600 | 29,483.0 |
| 5 | Որդի-Միեր ՍՊԸ | 20,760.0 | 60710 | 28,973.3 |
| 6 | Ցող-Աստղ ՍՊԸ | 20,750.0 | 36300 | 17,315.5 |
| | Ընդամենը | | 335090 | 159,986.4 |

## *Վերահսկողության արդյունքում պարզվեց.*

1. 2016 թվականի դրամաշնորհային պայմանագրով նախատեսվել է իրականացնել 268847 խմ ծավալով մաքրման աշխատանքներ, սակայն կազմակերպությունների հետ կնքվել են 292321 խմ ծավալի մաքրման աշխատանքների պայմանագրեր:

2. 2016-2017թթ. ՓԲԸ-ի կողմից կոմիտեին հանձնված դրագլայն էքսկավատորով մաքրման ծավալը գերազանցում է վարձատու կազմակերպությունների կողմից ՓԲԸ-ին հանձնված ծավալին: Փաստաթղթերով չի հիմնավորվում ընդամենը կոմիտեին հանձնված 30760 խմ մաքրման ծավալի իրականացված լինելու փաստը: ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթեր, որ աշխատանքներն իրականացվել են 2016թ.՝ 6-րդ, 7-րդ և 2017թ. 8-րդ չափաբաժինների շրջանակներում, սակայն չի հիմնավորվել, թե ով է իրականացրել դրանք և ինչ տեխնիկայով:

3. 2016թ ՓԲԸ-ն, համաձայն կոմիտեին ներկայացրած հաշվետվությունների, վերջինիս հանձնել է 19665 խմ բերվածքների տեղափոխման աշխատանքներ: Վերջիններիս իրականացված լինելու փաստը փաստաթղթերով չի հիմնավորվում, քանի որ առկա չեն եղել վերոգրյալ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ ինքնաթափեր:

4. 2017թ. դրագլայն տիպի էքսկավատորների վարձակալության պայմանագրերով նախատեսվել է, որ վարձատու կազմակերպությունները պարտավոր են իրականացնել հարթեցման և բերվածքների տեղափոխման աշխատանքներ: Վերահսկիչ պալատի կողմից պահանջվել է ներկայացնել վերոգրյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայությունը հավաստող փաստաթղթեր: Բացի դրանից, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տրամադրվել է տեղեկատվություն կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ: Վերոգրյալի արդյունքում պարզվել է, որ 3 վարձատու ընկերություններ սեփականության կամ օգտագործման իրավունքով չունեին համապատասխան տեխնիկա, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսներ: Արդյունքում, փաստաթղթերով չի հիմնավորվել ՓԲԸ-ի կողմից կոմիտեին հանձնված 27910 խմ հարթեցման

և 2069 խմ տեղափոխման աշխատանքների իրականացված լինելու փաստը:

5. 2016-2017թթ. ՓԲԸ-ի կողմից դրագլայն էքսկավատորների վարձատու կազմակերպություններին հատկացվել է 11028 լիտր բենզինային վառելիք էքսկավատորավարներին աշխատանքի տանելու և բերելու համար, սակայն վերջինս չի հանդիսացել ՓԲԸ-ի պարտականությունը:

## *ԴՐԱԳԼԱՅՆ ՏԻՊԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

2016-2017թթ. հայտարարվել է տեխնիկայի վարձակալության ծառայությունների ձեռք բերման բաց ընթացակարգ: Տեխնիկան իրենից ներկայացնում է դրագլայն 652 կամ համարժեք էքսկավատոր:

**2016թ.**

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել են 5 չափաբաժիններ: Տեխնիկական բնութագրով նախատեսվել է նաև, որ կատարվելիք աշխատանքների նորման կազմում է 43.5 խմ/ժամ՝ օրական 8 ժամ, ծառայության մատուցման ժամկետը՝ 2016թ. ապրիլից դեկտեմբեր ամիսներ, սակայն չի նշվել ամսվա ընթացքում աշխատելու օրերի քանակը: Վերոգրյալով կարող էր խոչընդոտվել մրցակցությունը, քանի որ հնարավոր մասնակիցներն առանց իմանալու վարձակալության ժամերի ընդհանուր քանակը, չէին կարող հաշվարկել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գինը: Վերջինս հանդիսանում է ՀՀ կառավության 2011թ. թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջ: Հարկ է նշել, որ չափաբաժիններով միակ մասնակից հանդիսացած անձինք ներկայացրել են հայտի ապահովում հետագայում կնքված պայմանագրի 2%-ի չափով:

**Կարող էր խոչընդոտվել մրցակցությունը**

Տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ վառելիքաքսուքային նյութերը պետք է տրամադրի պատվիրատուն:

Հայտեր են ներկայացրել 4 անձինք, որոնցից մեկը՝ 2 չափաբաժնով: 21.03.2016 թվականի հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ ընթացակարգի մասնակիցներից յուրաքանչյուրն իր ներկայացրած չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

***Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց՝***

1. Կարգի 35-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, սակայն մասնակիցները գնային առաջարկը ներկայացրել են 1 ժամվա համար: Խնդիրն առկա է նաև 2017թ. ընթացակարգում:

2. **Ֆիզիկական անձ Հրաչյա Հարությունյանի հայտը պետք է մերժվեր՝** հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի 4-րդ և 45-րդ ենթակետերը, համաձայն որի, գնային առաջարկի կամ հայտի ապահովման հրավերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում հայտը մերժվում է: ՖԱ-ի հայտի ապահովման մեջ նշվել է այլ ընկերության տնօրենի անուն ազգանուն:

**Խախտվել են մասնագիտական փորձառության պահանջները**

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության, 2-րդ փուլով մասնակիցներից պահանջվել են մասնագիտական փորձառության, աշխատանքային ռեսուրսների, տեխնիկական միջոցների առկայությունը հավաստող փաստաթղթեր: Վերոգրյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետով նախատեսվել է, որ մասնակիցը որպես մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացնի նախկինում իրականացրած համանման պայմանագիր (պայմանագրեր), որով համանման են համարվել տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցումը կամ ցանցերի մաքրման աշխատանքները: Համաձայն Կարգի 69-րդ կետի «գործարքները համարվում են համանման, եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում»: Տեխնիկայի վարձակալությունը և ցանցերի մաքրման աշխատանքները, համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի

2009 թվականի հունիսի 3-ի թիվ 372-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության դասակարգչի, չեն հանդիսանում միևնույն խմբի տեսակներ:

Ֆ/Ա Հրաչյա Հարությունյանը որպես մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթեր ներկայացրել է տեխնիկայի վարձակալության, իսկ մյուս 3 կազմակերպությունները՝ ցանցերի մաքրման աշխատանքների պայմանագրեր:

Այսպիսով, հրավերը կազմվել է կարգի 69-րդ կետի պահանջներին անհամապատասխան, որի արդյունքում բոլոր մասնակիցների մասնագիտական փորձառությունը գնահատվել է բավարար:

Բացառությամբ 1-ին, 2-րդ չափաբաժինների՝ մյուս Կատարողների հետ 2016թ. կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր: Վերջիններով յուրաքանչյուրի պայմանագրային արժեքներն ավելացվել են բուլդոզերի վարձակալության համար սահմանված գումարի՝ շուրջ մեկական միլիոն դրամ գումարի չափով: Սույնով խախտվել է 2010 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ **բանակցային ընթացակարգ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու ընթացակարգով գնումներ իրականացնելու նախապայման առկա չէր**:

**2017թ.**

**Խոչընդոտվել է մրցակցությունը**

**Խախտվել է Օրենքի պահանջը, համաձայն որի, արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին**

Ստուգման արդյունքում պարզվեց, որ հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, որի արդյունքում խոչընդոտվել է մրցակցությունը: Մասնավորապես, դրագլայն տիպի էքսկավատորի վարձակալության բաց ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ **կատարողը իրականացնում է նաև բերմանների հարթեցման և հանույթի տեղափոխման** աշխատանքներ: Վերջինս հնարավոր չէր իրականացնել դրագլայն տիպի էքսկավատորով, քանի որ դրա համար անհրաժեշտ էին ինքնաթափեր և բուլդոզերներ: Վերոգրյալ բառակապակցությամբ ենթադրվում է, որ բերմանների ամբողջ ծավալը պետք է տեղափոխվեր (այնինչ դրամաշնորհային պայմանագրով նախատեսվել է բերմանների մաքրում՝ 322040 խմ, բարձում և տեղափոխում 13050 խմ), իսկ հարթեցումը պետք է իրականացվեր անհայտ

ծավալով: Արդյունքում, խախտվել է Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը, համաձայն որի, արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին: Խախտվել են նաև Օրենքի **12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով սահմանված պահանջները:**

07.04.2017թ.-ի հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ ընթացակարգի մասնակիցներից յուրաքանչյուրն իր ներկայացրած չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող, բացառությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի, որի հայտը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ՝ «տուժանքի համաձայնագրում բացակայում է ներկայացման ամիս, ամսաթիվը, ինչպես նաև բացակայում է արժույթը»:

Համաձայն Կարգի 44-րդ կետի 4-րդ և 45-րդ ենթակետերի, հայտը ենթակա էր մերժման, սակայն նմանատիպ թերություններով այլ հայտեր ներկայացված եղել են թե 2016թ. և թե 2017թ. ընթացակարգերում, սակայն վերջիններս չեն մերժվել: **Այսպիսով, 2016-2017թթ. վարձատու կազմակերպությունների ընտրությունն իրականացվել է գնումների մասին օրենսդրության խախտումներով, որի արդյունքում խոչընդոտվել է մրցակցությունը:**

**Երկու տարվա ընթացքում վարձակալության համար կատարվել է 312,000.0 հազ. դրամի ծախս, այն դեպքում, երբ միայն մեկ տարվա վարձակալության գումարով կարելի էր ձեռք բերել համապատասխան քանակի էքսկավատորներ**

Երկու տարվա ընթացքում վարձակալության համար կատարվել է 312,000.0 հազ. դրամի ծախս, այն դեպքում, երբ միայն մեկ տարվա վարձակալության գումարով կարելի էր ձեռք բերել վարձակալված էքսկավատորների քանակին համապատասխան, տեխնիկապես ավելի հզոր նոր էքսկավատորներ: Այդ դեպքում, հետագայում դրանց վարձակալության անհրաժեշտություն չէր լինի: Բացի դրանից, վերջիններիս շահագործումը լրացուցիչ եկամուտ կարող էր ապահովել ՓԲԸ-ին:

Կատարված աշխատանքների և ծրագրով նախատեսված միջոցառումների համապատասխանության, կազմված փաստաթղթերի արժանահավատության և ծրագրի արդյունավետության ուսումնասիրությունից պարզվել է, որ ՓԲԸ-ի կողմից կազմված «ՀՀ ոռոգելի և չորացված հողերի կադաստր»-ով (այսուհետ՝ Կադաստր) Արարատյան հարթավայրում գերխոնավ են համարվում մինչև 2մ խորության վրա տեղադրված գրունտային ջրերով տարածքները: Համաձայն Կադաստրի և դրամաշնորհային ծրագրի, ցանցը պետք է ծառայի ոռոգելի հողատարածքների

գրունտային ջրերի մակարդակների իջեցմանը և հեռացմանը, գերխոնավ հողերի մակերեսի նվազեցմանը: Ցանցի արդյունավետ աշխատանքի գնահատականը, հիմնականում, նրանց տակ ընկած տարածքներում գրունտային ջրերի մակարդակների օպտիմալ խորությունն է, նախագծային ջրթողունակությունն է և դրենաժային ջրերի հանքայնացման աստիճանն է: Ծրագրի յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար անհրաժեշտ միջոցառում և գնահատման չափանիշ է սահմանվել ցանցի մաքրումը, որը հնարավորություն կտա գերխոնավ հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորության վրա:

**Իրականացվում է ծրագիր՝ առանց ծրագրի արդյունավետության գնահատման համար սահմանված չափանիշների**

Կադաստրով դրենաժային համակարգի տակ ընկած հողատարածքները ցույց են տրվել 34457 հա (այդ թվում Արարատյան հարթավայրում 32754 հա), սակայն այդ մակերեսը ոչնչով չի հիմնավորվում: ՓԲԸ-ն չունի այդ հողատարածքների հստակ սահմանազատված քարտեզները: Այդ մակերեսում, համաձայն գրունտային ջրերի մակարդակների քարտեզների, ներառվել են հողատարածքներ, որտեղ ընդհանրապես չկան ցանցեր: Չկան սահմանված գրունտային ջրերի մակարդակների օպտիմալ խորությունները, նախագծային ջրթողունակությունները և դրենաժային ջրերի հանքայնացման աստիճանները: Այսպիսով, իրականացվում է ծրագիր՝ առանց ծրագրի արդյունավետության գնահատման համար սահմանված չափանիշների:

***Բացի այդ, հիմնական նպատակ սահմանված «գրունտային ջրերի մակարդակների իջեցման» ուսումնասիրությամբ պարզվել է, որ***

- 2016-2017թթ. ծրագրերում ներառվել և կատարողականներով ցույց են տրվել, որ մաքրվել են դրենաժներ, որոնք եղել են չոր՝ առանց գրունտային ջրերի (2016թ.-ին՝ 29.7 կմ, և 2017թ.-ին՝ 31.6 կմ), ինչպես նաև այնպիսի դրենաժներ, որտեղ գրունտային ջրերի շերտի խորությունը 2 մ և ավելի խորությամբ խրամուղիներում կազմել է ընդամենը 0-ից 20 սմ (2016թ-ին՝ 83567 խմ և 2017թ.-ին՝ 84409 խմ, այսինքն՝ ընդհանուր ծավալի շուրջ 27%-ը):

- 2016թ.-ին, գերխոնավ հողատարածքներում ունենալով շուրջ 373.3 կմ ցանց, մաքրման ծրագրում ներառվել և մաքրում են ցույց տրվել շուրջ 54.7 կմ,

փոխարենը ծրագրում ներառել են շուրջ 23.9 կմ ցանցեր, որտեղ գրունտային ջրերի խորությունները եղել են 3 մ և ավելի:

- 2017թ.-ին, գերխոնավ հողատարածքներում ունենալով շուրջ 376.6 կմ ցանց, մաքրման ծրագրում ներառվել և մաքրում են ցույց տրվել շուրջ 62.5 կմ, փոխարենը ծրագրում ներառել են 13 կմ ցանցեր, որտեղ գրունտային ջրերի խորությունները եղել են 3 մ և ավելի:

- Դրամաշնորհային պայմանագրերով նախատեսվել է գրունտային ջրերի մակարդակների թվայնացված 75 քարտեզների կազմում: Համադրելով թվայնացված քարտեզները և կոլեկտորադրենաժային համակարգերի հատակագծերը՝ պարզվել է, որ 2016թ.-ին ծրագրում ներառված ցանցից 7.54 կմ ցանց արտացոլված չէ թվայնացված քարտեզներում, իսկ 32 դեպքով տարբերություններ կան ջրհավաքների և չորացուցիչների երկարությունների միջև՝ 3.2 կմ-ի չափով: 2017թ.-ին ծրագրում ներառված ցանցից 0,9 կմ ցանցն արտացոլված չէ թվայնացված քարտեզների վրա, իսկ 32 դեպքով տարբերություններ կան ջրհավաքների և չորացուցիչների երկարությունների միջև 2,1 կմ-ի չափով:

ՓԲԸ-ի աշխատակիցների հետ համատեղ, պատահականության սկզբունքով ընտրված, թվով 64 հորերում կատարված գրունտային ջրերի մակարդակների խորությունների չափման արդյունքների և մինչ այդ ՓԲԸ-ի կողմից այդ հորերում արձանագրված խորությունների համադրումից պարզվել է, որ 45 դեպքով գրունտային ջրերի մակարդակն ավելի ցածր է, քան ընկերության կողմից արձանագրվել է: Առանձին դեպքով տարբերությունը հասնում է մինչև 2.1 մ-ի:

***Ընտրանքային կարգով ուսումնասիրելով Հրազդան գետի ձախափնյա և աջափնյա ցանցերի տեխնիկական վիճակի հսկողության մասին ՓԲԸ-ի կազմած 2016թ.-ի երկու կիսամյակների և 2017թ.-ի 1-ին կիսամյակի հաշվետվությունները պարզվել է, որ***

- 2016թ. մաքրման աշխատանքներ կատարելուց շուրջ մեկ ամիս անց 20156 մ հատվածներում և 2017թ.-ի 1-ին կիսամյակում 4717 մ հատվածներում ցանցը լցված է բերվածքներով և ենթակա է մաքրման:

- 2016թ. հուլիս ամսին իրականացված դիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ կատարվել են մաքրման աշխատանքներ ապրիլ-սեպտեմբեր ամիսներին:

- Անհամապատասխանություններ կան ցանցի տեխնիկական վիճակի հսկողության կիսամյակային հաշվետվությունների ամփոփագրում ցանցի կտրվածքի միջին չափերի նկարագրության, սխեմատիկ կտրվածքների չափերի և թերությունների ակտում նշված չափերի միջև:

Դրամաշնորհային պայմանագրերի փոփոխության արդյունքում հանվել է ջրհավաքի մաքրման աշխատանքը, սակայն ծրագրում թողնվել են այդ ջրհավաքում լցվող չորացուցիչների (նույնիսկ ավելացել են մի քանի չորացուցիչներ) մաքրման աշխատանքները: Վերջինս այդ աշխատանքների կատարումը դարձրել է անարդյունավետ, քանի որ, չմաքրված ջրհավաքը հանդիսացել է դիմհար չորացուցիչներից ջրահեռացման համար:

***Ընտրանքային կարգով ուսումնասիրելով Արագածոտնի մարզի Արագած համայնքի ցանցի թերությունների ակտում և փոփոխված թերությունների ակտում ցույց տրված մաքրման ենթակա դրենաժների երկարությունները, մաքրվող շերտի հաստությունները կամ խրամուղու առկա խորությունը՝ պարզվել է, որ***

- վերջին անգամ 2005թ.-ին մաքրված չորացուցիչների և ջրհավաքների լցվածությունները 2017թ.-ի փետրվարին, այսինքն 12 տարում, կազմել են 37%-41%, իսկ 2017թ.-ի մայիսին՝ փոփոխությամբ, դրանք ցույց են տրվել 66%-90%, այսինքն 12 տարում հավաքված բերվածքները ընդամենը 4 ամսում կրկնապատկվել են:

- Տարբերություններ կան ցանցերի երկարությունների մեջ: Առանձին դեպքերով, սկզբնական թերությունների ակտում նշված երկարությունը փոփոխված թերությունների ակտում ավելացվել է 2.2 անգամ՝ 740 մ-ի փոխարեն ցույց տալով 1620 մ:

- Փոփոխված թերությունների ակտում լրացուցիչ ընդգրկված 3 չորացուցիչները բացակայում են Ընկերության կողմից ներկայացված հանրապետության ցանցի ընդհանուր ցանկից և հաշվառված չեն եղել ընկերության հաշվեկշռում:

Ընդհանրապես, մաքրման աշխատանքներ չեն պլանավորվել և չեն իրականացվել առկա 629.5 կմ փակ ցանցում: Չնայած դրան, ընտրանքային կարգով ուսումնասիրելով Արտաշատի, Արմավիրի և Մասիսի տարածաշրջանների փակ ցանցում գտնվող թվով 48 հորերի գրունտային ջրերի մակարդակների վերջին 7 տարվա ցուցանիշները, պարզվել է, որ դրանցից 32-ում գրունտային ջրերի մակարդակը նվազել է առանձին դեպքում մինչև 0.98մ-ով:

## *2016Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱԿԱՀԵՂԵՂԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Հակահեղեղային միջոցառումների շրջանակներում 2016թ.-ին իրականացված շինարարական աշխատանքների համար 5 ընկերությունների կողմից կազմվել են 10 օբյեկտների շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր:

**Նախահաշվային արժեքներն էականորեն ավելի են հաշվարկվել**

Ընտրանքային կարգով 8 օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ նախահաշիվները ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ով (այսուհետև՝ Կարգ) սահմանված պահանջների խախտմամբ հաշվարկելու, սխալ նորմեր և նորմատիվներ կիրառելու, մի քանի աշխատանքների ծավալները նախագծային չափերով, սահմանված նորմերով և կարգով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներից ավելի ընդունելու արդյունքում նախահաշվային արժեքներն էականորեն ավելի են հաշվարկվել: Մասնավորապես,

- Թվով մեկ օբյեկտում ափապաշտպան կառույցի ծավալները հաշվարկելիս՝ ավել են ընդունվել լայնական կտրվածքի մակերեսները և ափապաշտպանի հետ կարճապատնեշների միացման հանգույցներում ծավալները:
- Թվով 3 օբյեկտներում Շինարարական Նորմերի ու Կանոնների IV-2-82 հավաքածու 42-ի աղյուսակ 42-1-ի և հավաքածու 38-ի տեխնիկական մասի 1.3 և 1.4 կետերի պահանջների խախտմամբ են հաշվարկվել ավտոկռունկով ափապաշտպանի և ավտոկռունկով ու բուլդոզերով կարճապատնեշների

կառուցման համար անհրաժեշտ ժայռային գրունտի փխրեցման, հավաքման, բարձման և տեղափոխման աշխատանքների ծավալները:

### Առանձին դեպքերում

- Սխալ են հաշվարկվել չնախատեսված ծախսերի և աշխատանքների տոկոսադրույքը՝ Կարգով սահմանված 3%-ի փոխարեն ընդունվել է 4%:
- Սխալ են հաշվարկվել աշխատանքների համար անհրաժեշտ քարերի ստացման մեթոդները և արժեքները: Ունենալով գործող նորմատիվներ և նորմատիվային միավոր արժեքներ պայթեցմամբ ժայռային ապարների փխրեցման համար՝ (ՇՆուԿ IV.2.82 մաս IV Գլուխ 2 և EPEP հավաքածու 3), հաշվարկվել է գործող նորմատիվներում և նորմատիվային միավոր արժեքներում գոյություն չունեցող էքսկավատորի բազայի վրա հիդրոմուրճով խոշոր քարերի փխրեցում և այդ աշխատանքների մեքենա-մեխանիզմների շահագործման միավորի համար: Ուղղակի ծախսերում, խախտելով Կարգ-ի 20-րդ կետի պահանջը, ընդունվել է ոչնչով չհիմնավորվող արժեք: Բացի այդ, գաբիոնների շարի համար անհրաժեշտ ընդհամենը 10-25սմ չափերի քարերը հավաքելով կուտակելու փոխարեն, նույնպես հաշվարկվել են էքսկավատորի բազայի վրա հիդրոմուրճով խոշոր քարերի փխրեցում :
- Կարգի պահանջների խախտմամբ են հաշվարկվել քարերի, բնահողի և բերվածքների տեղափոխման և ավտոկռունկով քարերի բարձման աշխատանքների նախահաշվային արժեքները: Շահագործող կազմակերպությունների առաջարկած գներով հաշվարկի փոխարեն հաշվարկել են ՀՀ-ում չգործող և չգրանցված գնացուցակի արժեքներով:
- Սխալ է ընդունվել ավտոկռունկի միջոցով խոշոր քարերով գետի ափի ամրացման աշխատանքների շերտի նվազագույն հաստությունը:
- Սխալ են ընդունվել բուլդոզերով քարերի, բնահողի և բերվածքների տեղափոխման հեռավորությունները:
- Բուլդոզերով գետի հունի մաքրման և էքսկավատորով բնահողի մշակման աշխատանքներում մեքենա-մեխանիզմների շահագործման ծախսերի միավոր գների վրա կիրառվել են ոչնչով չհիմնավորված 1.1 և 1.2 թանկացման գործակիցներ:

- Սխալ է ընդունվել մեխանիզմով բնահողի մշակման կարգը և ծավալային կշիռը:
- Ավելի է հաշվարկվել բուլդոզերով բնահողի տեղափոխման աշխատանքի ծավալը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 2016-2017թթ. 34 ջրօգտագործող ընկերությունները և 2 ջրառ իրականացնող ընկերությունները վերակազմավորվել են միացման ձևով: Այդ իսկ պատճառով վերջիններիս պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի, ինչպես նաև այլ ծրագրերի նկատմամբ վերահսկողությունը նախատեսվում է իրականացնել 2018թ.:

2 2016-2017թթ. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Մելիորացիա» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին:

3 ՓԲԸ-ի և Կոմիտեի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրերի գինը հիմնավորող նախահաշվային արժեքները բարձր են սահմանվել աշխատանքների ծավալների ավելի հաշվարկման և ՀՀ-ում չգործող գնացուցակների կիրառման արդյունքում: 10 տարվա կտրվածքով աշխատավարձի և նյութերի ընդամենը 30% գնաճի պայմաններում մաքրման աշխատանքները թանկացել են 150%-ով:

4 ՓԲԸ-ի կատարողական ակտերում մի շարք աշխատանքների միավոր գները պայմանագրով սահմանվածից բարձր ընդունելու և թվաբանական սխալների արդյունքում ավելի են հաշվարկվել կատարողականների գումարները:

5 2016-2017թ. ՓԲԸ-ն Կոմիտեին հանձնել է ցանցերի մաքրման 30760 խմ-ով պակաս ծավալ, քան ՓԲԸ-ն ընդունել է դրագլայն էքսկավատորների վարձատու կազմակերպություններից: Վերոգրյալ աշխատանքների իրականացումը ներկայացվել է որպես 2016թ.՝ 6-րդ, 7-րդ և 2017թ.՝ 8-րդ «ենթադրյալ» չափաբաժիններ:

6 2016թ. ՓԲԸ-ն Կոմիտեին հանձնել է բերվածքների տեղափոխման 19665 խմ ծավալ, սակայն առկա չեն եղել ինքնաթափեր և վերոգրյալ

աշխատանքների իրականացումը հավաստող փաստաթղթեր: Չի հիմնավորվում, թե ով է իրականացրել այդ աշխատանքը և ինչ տեխնիկայով:

7 2017թ. ՓԲԸ-ի կողմից Կոմիտեին հանձնված տեղափոխման և հարթեցման ծավալից չի հիմնավորվում համապատասխանաբար՝ 2069 խմ և 27910 խմ ծավալի իրականացված լինելու փաստը, քանի որ աշխատանքներ իրականացրած 3 կազմակերպությունները չունեին համապատասխան տեխնիկա և աշխատանքային ռեսուրսներ:

8 Արժանահավատ չեն մաքրման աշխատանքների ծավալները, գրունտային ջրերի մակարդակների ցուցանիշները, դրենաժային ցանցերի երկարությունները, գերխոնավ հողերի մակերեսները, կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի հսկողության հաշվետվությունները:

9 2016-2017թթ. դրագլայն տեսակի էքսկավատորների վարձակալության ընթացակարգերն իրականացվել են գնումների մասին օրենսդրության խախտումներով, որի արդյունքում խոչընդոտվել է մրցակցությունը:

10 2016-2017թթ. ավելի քան 20 տարի շահագործված դրագլայն տեսակի էքսկավատորների վարձակալության նպատակով ՓԲԸ-ի կողմից կատարվել է շուրջ 312,000.0 հազ. դրամի ծախս: Միայն 1 տարվա վարձակալության գումարով հնարավոր էր ձեռք բերել տեխնիկապես ավելի հզոր նոր էքսկավատորներ:

11 Էքսկավատորների վարձատու կազմակերպություններին ՓԲԸ-ի կողմից հատկացվել է 11028 լիտր բենզինային վառելիք էքսկավատորավարներին տեղափոխելու համար, սակայն վերջինիս պարտականությունը ՓԲԸ-ն չուներ:

12 Չեն մշակվել ծրագրի արդյունավետության գնահատման չափանիշներ՝ գրունտային ջրերի մակարդակների օպտիմալ խորությունները, նախագծային ջրթողունակությունները և դրենաժային ջրերի հանքայնացման թույլատրելի աստիճանները: Բացի այդ, ոչնչով չեն հիմնավորվում դրենաժային ցանցի տակ ընկած հողատարածքների ցույց տրված սահմանները և մակերեսները:

13

Չեն հիմնավորվում ծրագրում ներառված ցանցերի մաքրման անհրաժեշտությունները: Ներառվել են դրենաժներ, որոնք եղել են չոր՝ առանց գրունտային ջրերի կամ որտեղ գրունտային ջրերի խորությունը կազմել է ընդամենը 0 սմ-ից 20 սմ: Ներառել են գերխոնավ հողերում առկա ցանցերի ընդամենը 16%-ը, փոխարենը ներառվել են ցանցեր, որտեղ գրունտային ջրերի խորությունները եղել են 3 մ և ավելի:

14

Չեն մաքրվել փակ դրենաժային համակարգերը, չնայած դրան, տարածքների 67%-ում, վերջին 7 տարիների կտրվածքով, արձանագրվել են գրունտային ջրերի մակարդակների իջեցում:

15

2016թ. ՓԲԸ-ի կողմից իրականացված առաջնահերթ հակահեղեղային միջոցառումների նախահաշիվները, ՀՀ կառավարության 2011թ. Հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ի, Շինարարական Նորմերով ու Կանոններով սահմանված պահանջների խախտմամբ հաշվարկելու, աշխատանքների ծավալները նախագծային չափերից ավելի մեծ չափերով հաշվարկելու արդյունքում, թույլ են տրվել նախահաշվային արժեքների թանկացումներ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Կոմիտեին՝**

1. Գնել դրագլայն տիպի նոր էքսկավատորների ձեռք բերման նպատակահարմարության հարցը, կամ էքսկավատորների վարձակալության փոխարեն իրականացնել մաքրման ծառայությունների տնտեսապես ավելի շահավետ գնում:

2. Նախահաշիվները կազմել բացառապես գործող իրավական, նորմատիվային և տեխնիկական ակտերի պահանջներին համապատասխան և բացառել նախահաշիվներում նախագծով չնախատեսված կամ չհիմնավորված աշխատանքների ծավալների ներառումը:

3. Կատարողականները հաշվարկել բացառապես դրամաշնորհի պայմանագրում սահմանված գներով:

4. Սահմանել ծրագրի արդյունավետության գնահատման չափանիշների հստակ թվային ցուցանիշները և արձանագրել այդ ցուցանիշները մաքրման ծրագրում ներառված յուրաքանչյուր առանձին ցանցի համար մինչև մաքրումը և մաքրումից հետո:

5. Հստակ գնահատել, թե որ դրենաժներում է անհրաժեշտ իրականացնել մաքրման աշխատանքներ՝ բացառելով չոր դրենաժներում մաքրման աշխատանքների իրականացումը:

6. Հստակեցնել դրենաժային ցանցի տակ գտնվող հողատարածքների մակերեսները՝ կազմելով քարտեզներ, հստակ նշելով հողատարածքների սահմանների հեռավորությունները ցանցի բաղադրիչներից՝ չորացուցիչից, ջրհավաքից և կոլեկտորից:

7. Նախագծային փաստաթղթերում հիմնավորել ափերի ամրացման աշխատանքների ընտրված մեթոդի (գաբիոնի շար, խոշորաբեկոր քարերի լիցք, բնահողից պատվար և

այն) և աշխատանքի տեսակի (քարերի փխրեցում պայթեցումով, հիդրոմուրճով կամ հավաքում) տնտեսապես շահավետ լինելը:

8. ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 10-րդ մասի պահանջի համաձայն, նախագծերում սահմանել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

***Հավելված***

**Առարկություններ և պարզաբանումներ**

Ընկերության կողմից 2016 և 2017թթ. նախահաշիվները հաշվարկելիս կիրառված գնացուցակները, կազմված են 1984թ. գներով, որոնք ընդգրկված չեն ՀՀ-ում գործող գնացուցակների ցանկում, քանի որ դրանք վերաբերվում են ջրատնտեսական համակարգերի նորոգման աշխատանքներին, այլ ոչ շինարարությանը: Համաձայն 23.12.2015թ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացված գրության, <<ջրային տնտեսության ոլորտի նորոգման և շահագործման խնդիրները կանոնակարգող, իրավասու կազմակերպության կողմից կազմված և հաստատված ներքին գնացուցակներ և նյութածախսի նորմեր են, որոնց սահմանված կարգով ընդունման գործընթացը գտնվում է ջրային տնտեսության ոլորտի լիազոր մարմնի իրավասության շրջանակներում>>: Վերոհիշյալ գրությունը հիմք է հանդիսացել ընկերության և ամբողջ ջրատնտեսական համակարգի համար կիրառելու նշված գնացուցակները և նյութածախսերի նորմերը:

<<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ն 2017թ. ընկերության կողմից կազմակերպված բաց ընթացակարգով տեխնիկայի վարձակալության ծառայությունների գնման մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացրել է գնման հայտ 2-րդ չափաբաժնի մասով: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտը մերժվել է տուժանքի համաձայնագրում ամսաթվի և արժույթի բացակայության պատճառով: Նույն չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև ԱՁ Հրաչյա Հարությունյանը: Հայտ ներկայացրած մասնակիցների շահերը չոտնահարելու և ազատ մրցակցությանը չխոչընդոտելու համար գնահատող հանձնաժողովը տվյալ հայտերն ուսումնասիրել է առավել մանրամասն և մերժել <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ի ներկայացրած հայտը:

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրությունը (07.04.2017թ.) հրապարակվել է gnumner.am կայքում և ուղարկվել բոլոր մասնակիցներին:

<<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ն չի բողոքարկել մրցույթի արդյունքները:

Արարատյան հարթավայրում դրենաժի տակ ընկած տարածքների վերաբերյալ՝ ընկերության կողմից, հաշվի առնելով 2010-2011 թթ. <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրով իրականացված աշխատանքների պատճառով դրենաժների երկարության ու տարածքների փոփոխությունները, վերահաշվարկվել է բաց դրենաժի տակ ընկած տարածքները: Կազմվել է նոր թվայնացված քարտեզ 1:50000 մասշտաբի, համաձայն որի բաց դրենաժի տակ ընկած տարածքը կազմում է շուրջ 26000 հա, իսկ փակ դրենաժի տարածքը մնացել է անփոփոխ և կազմում է 7729 հա, ընդհանուրը 33729 հա: Կազմված քարտեզը ներկայացվել է ՀՀ վերահսկիչ պալատին:

Արարատյան հարթավայրում, ըստ սահմանված նորմերի, գերխոնավ են համարվում մինչև 2.0մ խորության գրունտային ջրերի մակարդակի պայմանները, իսկ մնացած մարզերում՝ 1.0մ:

Գրունտային և դրենաժային ջրերի հանքայնացման աստիճանները որոշվում են ընկերության քիմիական լաբորատորիայում 3 անգամ՝ մինչվեգետացիոն, վեգետացիոն և հետվեգետացիոն ժամանակաշրջաններում:

Ընկերության կողմից չոր դրենաժների մաքրումը բացառվում է:

Գրունտային ջրերի մակարդակների չափումներն իրականացվում են մշտական՝ ամիսը 3 անգամ:

Վերահսկիչ պալատի մասնագետների և գրունտային ջրերի մակարդակների ուսումնասիրման խմբի կողմից պատահականության սկզբունքով 2017թ. սեպտեմբերի 12-14 իրականացվել են 69 դիտողական հորատանցքերի գրունտային ջրերի մակարդակների չափման աշխատանքներ, որոնց արդյունքում պարզվել է, որ իրոք մի շարք հորատանցքերում գրունտային ջրերի մակարդակները զգալի իջել են, հողահանդակների չոռոգման և տեղումների բացակայության պատճառով: Հորատանցքերի կից տարածքներում տեղադրված դրենաժներում նույնպես ջրի մակարդակները զգալիորեն նվազել են:

2017թ. 6-րդ չափաժբաժնով իրականացվել են ՀՀ Լոռու և Արագածոտնի մարզերի դրենաժների մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ: 7-րդ չափաբաժնով իրականացվել են դրենաժային ցանցերի ձեռքով մաքրման աշխատանքները: 8-րդ չափաբաժնով իրականացվել են ակնադիտական եղանակով կազմված թերությունների ակտի և նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումից հետո մեխանիզմներով մաքրման ծավալների 24.0 հազ խմ ավելցացած հանույթի մաքրում, որը

կատարվել է <<Դավիթ-Նորայր>>, <<Արայիկ և Արմեն>> ՍՊԸ-ների և <<Հրաչյա Հարությունյան>> ԱՁ-ի կողմից և չի վճարվել պայմանագրով նախատեսված գինը չգերազանցելու համար:

# 2.2 ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի 1.1-րդ կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի օգոստոսի 28-ի թիվ 16/1 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման արդյունավետության և օրինականության որոշումը: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ուսումնասիրության և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության վերահսկողության տեսակները:<br><br>Վերահսկողության ընթացքում հավաքված անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա կատարվել է փաստացի վիճակի և օրենքներով ու իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության ուսումնասիրություն: Կատարվել է ուսումնասիրության արդյունքներով արձանագրված փաստերի վերլուծություն: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## 1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

### *1.1 Բյուջետային միջոցների օգտագործում*

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) պետական բյուջեի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում» ծրագրով 2016 թվականին հատկացվել է 1,417,554.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,347,048.9 հազ. դրամ: 2017 թվականին պետական բյուջեից հատկացումը և դրամարկղային ծախսը կազմել են համապատասխանաբար՝ 1,351,386.9 հազ. դրամ և 1,329,065.0 հազ. դրամ:

2016 և 2017 թվականներին Ծառայության պահպանման ծախսերի համապատասխանաբար՝ 84.3%-ը և 83.4%-ը կազմել են աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսերը: Ծառայության էներգետիկ, կապի և կոմունալ ծառայությունների ծախսերը կազմել են 2016 և 2017 թվականների պահպանման ծախսերի համապատասխանաբար՝ 7.8%-ը և 8.2%-ը: Ծառայության կարիքների համար ապրանքների ձեռք բերման ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 64,229.5 հազ. դրամ և 53,476.0 հազ. դրամ, կամ պահպանման ծախսերի 4.8%-ը և 4.0-ը: Ծառայության 13 ավտոմեքենաների շահագործման համար «տրանսպորտային նյութեր» հոդվածով բենզինի ձեռք բերման ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 10,806.2 հազ. դրամ և 11,784.0 հազ. դրամ, Ծառայության մնացած ավտոմեքենաները շահագործվել են արտաբյուջետային միջոցների հաշվին: 2016 և 2017 թվականներին Ծառայության ծախսերը «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով կազմել են համապատասխանաբար՝ 53,423.4 հազ. դրամ և 41,146.0 հազ. դրամ:

**2016 և 2017 թվականներին Ծառայության պահպանման ծախսերի համապատասխանաբար՝ 84.3%-ը և 83.4%-ը կազմել են աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսերը**

ՀՀ արդարադատության նախարարի 07.03.2012թ. թիվ 31-Ն հրամանի համաձայն՝ Ծառայության յուրաքանչյուր ծառայողին երկու տարվա համար տրամադրվում է մեկ սվիտեր: Ծառայությունը բյուջետային միջոցների հաշվին 2016 թվականին «Արս-Ֆայն» ՍՊԸ-ից և 2017 թվականին «Էլաամոդա» ՍՊԸ-ից ձեռք է բերել համապատասխանաբար՝ 200 հատ և 150 հատ սվիտեր, մեկ հատը՝ 17.5 հազ. դրամ արժեքով: Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ծառայության պահեստում սվիտերների մնացորդը կազմում էր 580 հատ: Փաստորեն, հաստիքացուցակի 427 աշխատողներով Ծառայությունը ապահովված է եղել սվիտերներով հաջորդ երկու տարվա համար, սակայն 2016 և 2017 թվականներին գնել է 6,125.0 հազ. դրամի 350 հատ սվիտեր:

**Ծառայությունը ապահովված է եղել սվիտերներով հաջորդ երկու տարվա համար, սակայն 2016 և 2017 թվականներին գնել է 6,125.0 հազ. դրամի 350 հատ սվիտեր**

## *1.2 Արտաբյուջետային միջոցների օգտագործում*

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կատարողական գործողությունները կատարվում են պետական բյուջեի և հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին»: Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները ձևավորվում են կատարողական գործողությունների կատարման ծախսերի համար պարտապաններից բռնագանձված գումարների հաշվին:

2016 և 2017 թվականներին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին Ծառայության ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 1,307,924.3 հազ. դրամ և 1,463,470.7 հազ. դրամ:

2016 թվականին գործող՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցների կեսն օգտագործվում է ծառայողների նյութական խրախուսման, իսկ մյուս կեսը՝ կատարողական ծախսերի և համակարգի զարգացման համար»: Ստուգմամբ պարզվել է, որ 2016

թվականին Ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդից ծախսերի 36,7%-ը՝ 479,462.0 հազ. դրամ, ուղղվել է նյութական խրախուսման բաղադրիչին, իսկ 63.3%-ը՝ 828,462.3 հազ. դրամ, համակարգի զարգացմանը: Փաստորեն, 2016 թվականին Ծառայությունը խախտել է օրենքով սահմանված բաղադրիչների հարաբերակցությունը. նյութական խրախուսման բաղադրիչին հատկացրել է 174,500.1 հազ. դրամ պակաս:

**Ծառայությունը խախտել է օրենքով սահմանված բաղադրիչների հարաբերակցությունը. նյութական խրախուսման բաղադրիչին հատկացրել է 174,500.1 հազ. դրամ պակաս**

ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 90%-ը բաշխվում է հարկադիր կատարման ծառայողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց միջև՝ նրանց ամսական դրամական բավարարմանը համամասնորեն, և վճարվում է յուրաքանչյուր ամիս, իսկ նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 10%-ը կարող է տրամադրվել առանձին աշխատողների՝ որպես դրամական պարգևատրում՝ աշխատանքային բարձր արդյունավետության և բարդ ու ծավալուն կատարողական գործողությունների իրականացման համար: Սակայն, 2016 և 2017 թվականներին նյութական խրախուսման բաղադրիչից համապատասխանաբար՝ 331,815.6 հազ. դրամ և 392,819.3 հազ. դրամ Ծառայությունն ուղղել է պայմանագրային հիմունքներով աշխատող ավելի քան 200 անձանց վարձատրությանը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատված կարգին: Արդյունքում, 2016 թվականին հարկադիր կատարման ծառայողներին խրախուսման բաղադրիչից բաշխման ենթակա գումարը պակասել է և օրենքով նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի կեսը կազմող հաշվարկային 653,962.2 հազ. դրամի փոխարեն կազմել է 147,646.4 հազ. դրամ:

**2016թ. և 2017թ. նյութական խրախուսման բաղադրիչից համապատասխանաբար՝ 331,815.6 հազ. դրամ և 392,819.3 հազ. դրամ ուղղվել է պայմանագրային հիմունքներով աշխատող ավելի քան 200 անձանց վարձատրությանը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության որոշմանը**

2016 թվականին Ծառայությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 49-Ն որոշումը, նյութական խրախուսման և համակարգի

զարգացման ֆոնդի միջոցների ծախսման նախահաշիվ չի կազմել, և համակարգի զարգացման բաղադրիչի միջոցների հաշվին գնումները կատարվել են առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների գործընթացների՝ չի կազմվել գնումների պլան, չի ընտրվել գնման ձև և կնքվել են ուղղակի պայմանագրեր:

2016 և 2017 թվականներին Ծառայությունը «համակարգչային ծառայություններ» հոդվածով արտաբյուջետային միջոցների հաշվին ծախսել է համապատասխանաբար՝ 66,147.1 հազ. դրամ և 22,408.3 հազ. դրամ:

Ծառայությունը «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ 13.09.2016թ. կնքել է պայմանագիր, համաձայն որի՝ կատարողը մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը պետք է փաստաթղթաշրջանառության ավտոմատացման համակարգում ներդնի նոր ծրագիր: Պայմանագրի արժեքը կազմել է 7,000.0 հազ. դրամ: Պայմանագրի համաձայն՝ ստանձնած պարտավորությունների դիմաց գումարը վճարվում է երկու փուլով՝ 3,500.0 հազ. դրամը վճարվում է հոկտեմբեր ամսին և 3,500.0 հազ. դրամը՝ հանձնման-ընդունման ակտ ստորագրելուց հետո՝ 2016 թվականի դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:

**Ծառայության կողմից ենթակա էր հաշվարկել և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ից գանձել 3,500.0 հազ. դրամի աշխատանքի յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0.1 տոկոս տույժ՝ 1,277.5 հազ. դրամ**

Ստուգմամբ պարզվել է, որ հանձնման-ընդունման արձանագրություն չի կազմվել, պայմանագրի ժամկետը ավարտվելուց 12 ամիս հետո՝ 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքվել է համաձայնագիր, որով աշխատանքը ընդունվել է մասնակի կատարված՝ վճարված 3,500.0 հազ. դրամի չափով, և պայմանագիրը լուծվել է: Փաստորեն, մինչև համաձայնագիր կնքելը Ծառայության կողմից ենթակա էր հաշվարկել և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ից գանձել 3,500.0 հազ. դրամի կատարված աշխատանքի յուրաքանչյուր ուշացված օրվա համար պայմանագրի 6.1 կետով նախատեսված 0.1 տոկոս տույժ՝ 1,277.5 հազ. դրամ:

**«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ին վճարվել է հավելյալ 583.3 հազ. դրամ ԱԱՀ-ի գումար, որը պարտավորություն է պետական բյուջեի նկատմամբ**

Ծառայությունը մեկ անձից գնման ձևով «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ կնքել է ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման 07.12.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԶԹ 2017/3 պայմանագիրը: «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի գնային առաջարկը և պայմանագրի արժեքը կազմել է 3,500.0 հազ. դրամ, այդ թվում՝ 583.3 հազ. դրամ ավելացված արժեքի հարկ: «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չի համարվում և վճարման է ներկայացրել է 20.12.2017թ. հաշիվ ապրանքագիր՝ 3,500.0 հազ. դրամ առանց ԱԱՀ, որը վճարվել է: Փաստորեն, Ծառայությունը «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ին վճարել է հավելյալ 583.3 հազ. դրամ ԱԱՀ-ի գումարը, որը պարտավորություն է պետական բյուջեի նկատմամբ:

**Ծառայությունը պահանջից ավելի գնել է 867.0 հազ. դրամի 60 հատ «Kaspersky» համակարգչային ծրագրային արտոնագրեր**

Ծառայությունը արտաբյուջետային միջոցների հաշվին 2016 թվականին «Սոֆթ Թայմ» ՍՊԸ-ից ձեռք է բերել 570 հատ «Kaspersky» համակարգչային ծրագրային արտոնագրեր՝ 8,236.5 հազ. դրամ արժեքով: Ստուգմամբ պարզվել է, որ Ծառայության հաշվեկշռում այդ տարի առկա էր 521 հատ համակարգիչ, որից 11-ն անսարք էին և չէին շահագործվում: Փաստորեն, Ծառայությունը պահանջից ավելի գնել է 867.0 հազ. դրամի 60 հատ «Kaspersky» համակարգչային ծրագրային արտոնագրեր:

**190 քարթրիջների լիցքավորման և վերանորոգման համար ավելի է ծախսվել 459.8 հազ. դրամ**

Ծառայությունը 2016 թվականի հունվարից մինչև հունիս ամիսները ներառյալ արտաբյուջետային միջոցների հաշվին ձեռք է բերել տպագրող և պատճենահանող սարքավորումների քարթրիջների լիցքավորման և վերանորոգման ծառայություններ, որի համար յուրաքանչյուր ամիս «Նեոսիստեմ» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագրեր: Ստուգմամբ պարզվել է, որ առաջին հինգ ամիսների համար կնքված պայմանագրերով մեկ հատ քարթրիջի լիցքավորման և վերանորոգման գինը սահմանվել է 1580 դրամ, իսկ հունիս ամսվա համար՝ պայմանագրով գինը առանց հիմնավորման թանկացել է և սահմանվել 4000 դրամ: Արդյունքում, Ծառայությունը հունիս ամսվա պայմանագրի շրջանակներում՝ ըստ հանձնման-ընդունման արձանագրությունների, 190 քարթրիջների լիցքավորման և վերանորոգման համար ավելի է ծախսել 459.8 հազ. դրամ:

2016 և 2017 թվականներին «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով Ծառայությունը ծախսել է համապատասխանաբար՝ 60,477.1 հազ. դրամ և 98,071.9 հազ. դրամ:

**Թղթի մեկ տուփը գնել է 158 դրամով թանկ՝ ծախսելով ավելի 1,034.9 հազ. դրամ**

2016 թվականին Ծառայությունը «Փեն բոքս» ՍՊԸ-ից 11.01.2016թ. թիվ ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/3-30 պայմանագրով գնել է 4000 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝ 1480 դրամով, իսկ «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ից դեկտեմբեր ամսվա ընթացքում 12 հաշիվ ապրանքագրերով գնել է 6550 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝ 1638 դրամով: Ստուգմամբ պարզվել է, որ «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ից գնումների ընթացքում Ծառայությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջը՝ միևնույն տեխնիկական բնութագիր ունեցող ապրանքը բաժանել է 1,000.0 հազ. դրամը չգերազանցող չափաբաժինների և կատարել է ուղղակի գնումներ: Արդյունքում՝ Ծառայությունը «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ից հաշիվ ապրանքագրերով թղթի մեկ տուփը գնել է 158 դրամով թանկ, ծախսելով ավելի 1,034.9 հազ. դրամ:

**Թղթի երկրորդ խմբաքանակով մեկ տուփը գնել է 225 դրամով թանկ՝ ծախսելով ավելի 5,062.5 հազ. դրամ**

2017 թվականին Ծառայությունը «Սմարթլայն» ՍՊԸ-ից 17.05.2017թ. թիվ ԴԱՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2 պայմանագրով գնել է 7500 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝ 1410 դրամով, իսկ 03.10.2017թ. թիվ ԴԱՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1 պայմանագրով՝ 22500 տուփ, մեկ տուփը՝ 1635 դրամով: Փաստորեն, մեկ տարվա ընթացքում Ծառայությունը նույն մատակարարից թղթի երկրորդ խմբաքանակով մեկ տուփը գնել է 225 դրամով թանկ, ծախսելով ավելի 5,062.5 հազ. դրամ:

Ծառայությունը արտաբյուջետային միջոցների հաշվին 2016 թվականին գնել է 10550 տուփ A4 ֆորմատի թուղթ, որից 6550 տուփը դեկտեմբերին, իսկ 2017 թվականին՝ 30000 տուփ, կամ 2.8 անգամ ավելի: 2017 թվականին գնված 11460 տուփ A4 ֆորմատի թուղթը մինչև 2018 թվականի մարտի 1-ը ի պահ է հանձնվել մատակարարին, քանի որ տարվա պահանջարկը ամբողջությամբ բավարարված էր, և բացի այդ, Ծառայության պահեստում տարեվերջին առկա էր 5895 տուփ թղթի մնացորդ: Հետևաբար, 2018 թվականի ծախսերի նախահաշվով A4 ֆորմատի թղթի պահանջարկը պետք է հաշվարկել հաշվի առնելով 2017 թվականի տարեվերջի 17355 տուփ թղթի մնացորդը:

**Հոգեբանական ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերով Ծառայությունը չի սահմանել միավորի գին, չի վարել մատուցված ծառայությունների քանակի հաշվառում և վճարումները կատարել է առանց հաշվարկային հիմքի**

Ծառայությունը 2016 և 2017 թվականներին հոգեբանական ծառայությունների մատուցման համար անհատ ձեռնարկատիրոջը վճարել է համապատասխանաբար՝ 1,880.0 հազ. դրամ և 3,640.0 հազ. դրամ: Կնքված պայմանագրերով կատարողը պարտավորվել է պատվիրատուի որոշումներին և հանձնարարություններին համապատասխան մատուցել ընդհանուր նկարագրությամբ հոգեբանական փորձագի-տական, դիագնոստիկ և խորհրդվատվական ծառայություններ: Ծառայությունը չի սահմանել հոգեբանական ծառայության միավորի գին, չի վարել մատուցված հոգեբանական ծառայությունների քանակի հաշվառում և պայմանագրերով վճարումները կատարել է առանց հաշվարկային հիմքի՝ 2016 թվականի տարբեր ամիսներին վճարել է ամսական 200.0 հազարական դրամ և 340.0 հազարական դրամ, 2017 թվականին՝ ամսական 300.0 հազարական դրամ:

**Գործարքային վարձատրվող բանվորներին վճարված աշխատավարձում 3,962.9 հազ. դրամը կազմել են վճարված տրանսպորտային ծախսերը և օրավարձերը**

2016 թվականի ընթացքում Ծառայությունը շենքերի և շինությունների պահպանման, ընթացիկ նորոգման և վտարման աշխատանքների համար կազմակերպություն-ներից ձեռք է բերել 41,212.9 հազ. դրամի շինարարական նյութեր և տնտեսական ապրանքներ: Շինարարական նյութերը տեղադրվել են աշխատանքային պայմանագրերով ներգրավված գործարքային վարձատրվող բանվորների կողմից, որի համար կազմվել են թվով 10 կատարողական ակտեր: Կատարողական ակտերով Ծառայության պահեստից շինարարական նյութերի և տնտեսական ապրանքների ծախսը կազմել է 39,526.4 հազ. դրամ, որի տեղադրման համար պայմանագրային աշխատող բանվորներին հաշվարկվել և վճարվել է 31,053.5 հազ. դրամ աշխատավարձ: Ստուգմամբ պարզվել է, որ վճարված աշխատավարձում 3,962.9 հազ. դրամը կազմել են գործարքային հիմունքներով աշխատող բանվորներին կատարողական ակտերով հավելյալ վճարված տրանսպորտային ծախսերը և օրավարձերը:

Ծառայությունը «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքել է երկու վերելակների մոնտաժման աշխատանքների կատարման 24.03.2016թ. թիվ ԴԱՀԿ-ՎՄԳՊ-

16/03-01 գնման պայմանագիրը՝ 39,480.0 հազ. դրամ արժեքով: Հաջորդ տարի Ծառայությունը ևս երկու վերելակների մատակարարման և մոնտաժման համար նույն կատարողի հետ կնքել է 15.05.2017թ. թիվ ԴԱՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/1 գնման պայմանագիրը՝ 41,680.0 հազ. դրամ արժեքով: 2016 և 2017 թվականներին կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերը ներառում են վերելակների մատակարարում և մոնտաժման աշխատանքներ: Բացի այդ, 2016 թվականի պայմանագրով նախատեսվել է նաև Ծառայության վարչական շենքում առկա վերելակների ապամոնտաժումը:

2016 թվականի մայիսի 4-ի հանձնման-ընդունման արձանագրությունով Ծառայությունը հավաստել է 39,480.0 հազ. դրամ արժեքով երկու վերելակների մատակարարումը և մոնտաժումը: Ծառայության 2017 թվականի գնումների պլանով հաջորդ երկու վերելակների գնման համար առանց հաշվարկային հիմքի նախատեսվել է ավելի գումար՝ 42,000.0 հազ. դրամ այն դեպքում, երբ առաջին պայմանագիրը ներառում էր վերելակների ապամոնտաժման աշխատանքներ: Հաշվի առնելով, որ պայմանագրերով վերելակների տեխնիկական բնութագրերը էականորեն չեն տարբերվում, նույն կատարողի հետ կնքված երկրորդ պայմանագրով վերելակների գնման համար ավելի է ծախսվել 2,200.0 հազ. դրամ:

**Վերելակների գնման համար ավելի է ծախսվել 2,200.0 հազ. դրամ**

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 10-րդ կետի՝ շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները: Ծառայության 2017 թվականի արտաբյուջետային ծախսերի նախահաշվի գնումների պլանով «նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում» հոդվածով նախատեսվել և բանակցային ընթացակարգով գնման գործընթացի արդյունքում «Արմստրոյ» ՍՊԸ–ի հետ կնքվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի գնման 20.07.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԲԸՀ-17/01 պայմանագիրը՝ 1,330.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսվել է կազմել և սահմանված կարգով փորձաքննության ներկայացնել Ծառայության վարչական շենքի և Սյունիքի, Արագածոտնի, Արմավիրի մարզային բաժինների շենքերի ընթացիկ նորոգումների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Կատարողի կողմից նախագծեր չեն կազմվել,

**Կատարողի կողմից նախագծեր չեն կազմվել**

ներկայացվել են միայն նախահաշիվներ Ծառայության վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգման և արտաքին ջերմային ցանցի, դահլիճի և սանհանգույցների, ճաշարանի, տանիքի նորոգումների համար՝ 119,700.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով (մարզային բաժինների շենքերի նորոգումների համար նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն ներկայացվել): Սակայն, Ծառայությունը 04.08.2017թ. թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ հավաստել է կատարողի կողմից տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարումը:

Փաստորեն, Ծառայության վարչական շենքի նորոգումների 2017 թվականի չորս շինարարական ծրագրերի համար պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերը թերի կազմելու արդյունքում այդ շինարարական աշխատանքները կատարվել են առանց նախագծերի:

Ծառայության վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգման և արտաքին ջերմային ցանցի աշխատանքների կատարման համար Ծառայությունը «Աբակ» ՍՊԸ-ի հետ կնքել է 14.11.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/Բ պայմանագիրը՝ 9,464.9 հազ. դրամ արժեքով: Շինարարական օբյեկտի նախահաշվային արժեքը կազմել էր 10,847.7 հազ. դրամ: 2017 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ Ծառայությունը հավաստել է աշխատանքների կատարումը:

**Կապալառուին հավելյալ վճարվել է 2,008.9 հազ. դրամ**

Ստուգման ընթացքում, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված բանաձևի համապատասխան գործակցով կատարված կատարողական ակտի վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ կապալառուին ենթակա էր վճարման 7,455.7 հազ. դրամ, կամ հավելյալ վճարվել է 2,008.9 հազ. դրամ:

Ծառայության վարչական շենքի տանիքի նորոգման աշխատանքների կատարման համար «Արթմաշին» ՍՊԸ-ի հետ կնքվել է 27.11.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/Բ պայմանագիրը՝ 13,368.0 հազ. դրամ արժեքով: Շինարարական օբյեկտի նախահաշվային արժեքը կազմել էր 14,109.8 հազ. դրամ: 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ Ծառայությունը հավաստել է աշխատանքների կատարումը:

**Կապալառուին հավելյալ վճարվել է 1,453.8 հազ. դրամ**

Ստուգման ընթացքում, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված բանաձևի համապատասխան գործակցով կատարված կատարողական ակտի վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ կապալառուին ենթակա էր վճարման 11,914.2 հազ. դրամ, կամ հավելյալ վճարվել է 1,453.8 հազ. դրամ:

Ծառայության վարչական շենքի ճաշարանի վերանորոգման աշխատանքների կատարման համար «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հետ կնքվել է 27.11.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/ՃՎ պայմանագիրը՝ 50,000.0 հազ. դրամ արժեքով: Շինարարական օբյեկտի նախահաշվային արժեքը կազմել էր 69,805.4 հազ. դրամ:

Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 24 օրացուցային օր՝ հաշված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ Ծառայությունը հավաստել է կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված ծավալից 17,998.5 հազ. դրամի աշխատանքների կատարումը: Համաձայն 12.12.2017թ. թիվ 1 համաձայնագրի՝ պայմանագրով նախատեսված մնացած 32,000.0 հազ. դրամը փոխանցվել է կապալառուին որպես կանխավճար, իսկ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 թվականի հունվարի 18-ը:

**Ծառայությունը չէր կարող տրամադրել կապալառուին կանխավճար և պարտավոր է պայմանագրի չկատարված մասի գնի՝ 32,000.0 հազ. դրամի նկատմամբ ապահովել տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նույն կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ արգելվում է պայմանագրի փոփոխությամբ կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն: Բացի այդ, կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ պայմանագիր կնքած կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ:

Տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Սահմանված է նաև, որ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ: Փաստորեն, Ծառայությունը չէր կարող տրամադրել կապալառուին կանխավճար և պարտավոր է պայմանագրի չկատարված մասի գնի՝ 32,000.0 հազ. դրամի նկատմամբ ապահովել տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը:

**Կապալառուին հավելյալ վճարվել է 1,050.9 հազ. դրամ**

Ստուգման ընթացքում, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված բանաձևի համապատասխան գործակցով կատարված կատարողական ակտի վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ կապալառուին ենթակա էր վճարման 48,949.1 հազ. դրամ, կամ հավելյալ վճարվել է 1,050.9 հազ. դրամ:

Ծառայության վարչական շենքի սանհանգույցների և դահլիճի նորոգման աշխատանքների կատարման համար «Աբակ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 27.11.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/ՍԴ պայմանագիրը՝ 19,461.7 հազ. դրամ արժեքով: Շինարարական օբյեկտի նախահաշվային արժեքը կազմել էր 24,937.9 հազ. դրամ:

Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 24 օրացուցային օր՝ հաշված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: 2017 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ Ծառայությունը հավաստել է կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված ծավալից 7,461.7 հազ. դրամի աշխատանքների կատարումը: Համաձայն 12.12.2017թ. թիվ 1 համաձայնագրի՝ պայմանագրով նախատեսված մնացած 12,000.0 հազ. դրամը փոխանցվել է կապալառուին որպես կանխավճար, իսկ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 թվականի հունվարի 19-ը: Համաձայնագիրը կնքվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 4-րդ, 5-րդ, 9-րդ ենթակետերի և 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջների խախտումով՝ Ծառայությունը փոփոխել է պայմանագիրը մասնակի չկատարման հետևանքով, տրամադրել է կանխավճար, չի հաշվարկել և հաշվանցել տույժեր ու տուգանքներ:

**Կապալառուին հավելյալ վճարվել է 668.5 հազ. դրամ**

Ստուգման ընթացքում, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ

հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված բանաձևի համապատասխան գործակցով կատարված կատարողական ակտի վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ կապալառուին ենթակա էր վճարման 18,793.2 հազ. դրամ, կամ հավելյալ վճարվել է 668.5 հազ. դրամ:

Փաստորեն, Ծառայության վարչական շենքի վերանորոգումների համար 2017 թվականին կնքված չորս պայմանագրերով կապալառուներին հավելյալ վճարվել է 5,182.1 հազ. դրամ:

## 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

### *2.1 Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված կատարողական վարույթներ*

2016 թվականին Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայությունը հարուցել է 680052 կատարողական վարույթ՝ 7,420,502.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Այդ վարույթներով 2016 թվականին և 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, բռնագանձվել է 1,926,239.5 հազ. դրամ կամ բռնագանձման ենթակա գումարի 26.0%-ը:

2017 թվականին Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայությունը նոյեմբերի 29-ի դրությամբ հարուցել է 733787 կատարողական վարույթ՝ 6,803,141.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Այդ վարույթներով բռնագանձվել է 1,596,382.5 հազ. դրամ կամ բռնագանձման ենթակա գումարի 23.5%-ը:

ՀՀ կառավարության 25.11.2015թ. թիվ 1398-Ն որոշմամբ հաստատվել են Ծառայության և Ճանապարհային ոստիկանության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգը և էլեկտրոնային փաստաթղթերի ձևերը: Ծառայության և Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային համակարգերի համադրումը ցույց է տվել, որ 2016 և 2017 թվականներին (2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ) Ճանապարհային ոստիկանության կողմից ուղարկված 48757 վարչական ակտերով Ծառայությունը կատարողական վարույթներ չի հարուցել, որից 1612 վարչական ակտ՝ կրկնակի ուղարկված:

**Ճանապարհային ոստիկանության 47145 վարչական ակտերով վարույթների հարուցումը մերժվել է Ծառայության էլեկտրոնային համակարգի կողմից**

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին և 4-րդ մասերի պահանջներին չհամապատասխանելու դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին, այսինքն՝ հարկադիր կատարողը իրավասու է մերժել վարույթի հարուցումը: Ստուգմամբ պարզվել է, որ 47145 վարչական ակտերով 423,387.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով վարույթների հարուցումը մերժվել է: Ըստ Ծառայության պարզաբանման՝ վարույթի հարուցումը մերժվել է Ծառայության էլեկտրոնային համակարգի կողմից՝ պարտապանի անձնագրի համարի, հանրային ծառայությունների համարանիշի կամ այլ տվյալների բացակայության պատճառով: Մերժված 5113 վարչական ակտերում առկա է պարտապանի հանրային ծառայությունների համարանիշը: Այդ վարչական ակտերից նույնականացվել է 1798 վարչական ակտ 889 ֆիզիկական անձի, որոնց նկատմամբ Ծառայությունը այլ վարչական ակտերով հարուցել է կատարողական վարույթներ: Ընդ որում, այդ վարչական ակտերից 1153 վարչական ակտ մերժվել է կատարման ներկայացնելու ժամկետը խախտելու հիմքով: Փաստորեն, էլեկտրոնային համակարգի կողմից վարչական ակտերը անհիմն մերժելու արդյունքում հարկադիր կատարողները չեն հարուցել 645 կատարողական վարույթ՝ 5,425.5 հազ. դրամ բռնագանձման գումարով:

**Էլեկտրոնային համակարգի կողմից վարչական ակտերը անհիմն մերժելու արդյունքում հարկադիր կատարողները չեն հարուցել 645 կատարողական վարույթ՝ 5,425.5 հազ. դրամ բռնագանձման գումարով**

Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայության կողմից 2016 թվականին հարուցված 4,520,757.4 հազ. դրամի 417609 կատարողական վարույթներ և 2017 թվականին հարուցված 4,496,569.6 հազ. դրամի 499944 կատարողական վարույթներ 2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ պարտապանը չունի գույք կամ եկամուտ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթները

2016 և 2017 թվականներին հարուցվել են համապատասխանաբար՝ 54028 և 74102 ֆիզիկական անձանց նկատմամբ: Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին այդ հոդվածով ավարտված վարույթներով պարտապան հանդիսացող 33202 անձանց նկատմամբ 2017 թվականին Ծառայության կողմից ևս հարուցվել և օրենքի նույն հոդվածի հիմքով ավարտվել են կատարողական վարույթներ: Ընդ որում, այդ անձանցից 597 անձի նկատմամբ յուրաքանչյուր տարի հարուցվել և օրենքի այդ հոդվածի հիմքով ավարտել է 50-ից ավելի կատարողական վարույթ: Փաստորեն, այդ անձինք, չունենալով գույք կամ եկամուտ, փաստացի շահագործել են ավտոմեքենա և կատարել են բազմաթիվ խախտումներ, որի համար նրանց նկատմամբ 2016 թվականին հարուցվել և ավարտվել են 785,252.1 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 89565 վարույթ և 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ՝ 603,590.1 հազ. դրամի 80701 վարույթ:

**Ավտոմեքենաների վրա արձանագրված բազմաթիվ խախտումների համար նշանակվել են տուգանքներ գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ**

Ստուգմամբ պարզվել է, որ առանձին դեպքերում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ավտոմեքենաների վրա արձանագրված բազմաթիվ խախտումների համար նշանակվել են տուգանքներ գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ: Այսպես, 2016 և 2017 թվականներին տաքսի ծառայություն մատուցող մեկ կազմակերպության պատկանող ավտոմեքենաների խախտումների 3718 վարչական ակտերով նշանակված 25,337.3 հազ. դրամի տուգանքներն արձանագրվել են մեկ ֆիզիկական անձի վրա, մեկ այլ կազմակերպությանը պատկանող ավտոմեքենաների 2569 վարչական ակտերով 22,175.5 հազ. դրամի տուգանքներն արձանագրվել են ևս մեկ ֆիզիկական անձի վրա: Առկա են նաև դեպքեր, երբ տարբեր անձանց պատկանող ավտոմեքենաների վրա արձանագրված խախտումներով տուգանքների բռնագանձման համար հարուցված վարույթներով պարտապան է հանդիսացել գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձ: Այսպես, 2016 և 2017 թվականներին երեք անձանց պատկանող ավտոմեքենաներով կատարված խախտումների համար հարուցված 14,875.5 հազ. դրամի 1913 վարույթով պարտապան է հանդիսացել մեկ ֆիզիկական անձ, 8,494.8 հազ. դրամի 1103 վարույթով՝ մեկ այլ ֆիզիկական անձ:

Ծառայության կողմից հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի հիմքով ավարտված վարույթներով պարտապան ֆիզիկական անձանց տվյալները համադրվել են հարկային

ծառայության տվյալների բազաների հետ: Ստուգմամբ պարզվել է, որ այդ պարտապաններից առնվազն 9569 անձ 2016 թվականին աշխատել են, սակայն հարկադիր կատարողները դրանց նկատմամբ 857,994.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով վարույթները ավարտել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հոդվածի հիմքով: 2017 թվականին աշխատել են պարտապան առնվազն 16565 ֆիզիկական անձ, որոնց վարույթներն ավարտվել են նույն հոդվածի հիմքով: Այդ անձանցից բռնագանձման ենթակա գումարը կազմել է 702,225.8 հազ. դրամ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կատարողական թերթով բռնագանձում առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա: Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել»:

**Հարկադիր կատարողները խախտել են օրենքի պահանջը՝ պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել**

Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հոդվածի հիմքով ավարտված 217,522.6 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 19994 վարույթներով՝ 1,000.0 հազ. դրամ և ավելի բռնագանձման ենթակա գումար ունեցող 120 պարտապան ունեցել են մեկ կամ ավելի սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաներ: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, օրենքի նույն հոդվածով ավարտված 152,818.0 հազ. դրամի 17886 վարույթներով ավտոմեքենա է ունեցել 86 պարտապան: Սակայն, հարկադիր կատարողները խախտել են օրենքի պահանջը՝ պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը:

Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի

**2016 և 2017 թվականներին 4303 և 1814 կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանքներ չեն դրվել**

հիմքով ավարտված 64,797.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 4303 կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանքներ չեն դրվել: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, արգելանքներ չեն դրվել ավարտված 38,152.6 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 1814 կատարողական վարույթներով: Այդ վարույթներից պատահական ընտրված 258 վարույթի վերաբերյալ Ծառայությունը պատասխանել է, որ 101 դեպքում պարտապանները նույնականացվել են, սակայն արգելանքներ չեն դրվել, 84 դեպքում հնարավոր չի եղել նույնականացնել պարտապանին, 44 դեպքում արգելանքները կիրառվել են մասնակի և 5 վարույթ կարճվել է:

Բացի այդ, ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 1,517.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 81 կատարողական վարույթներով դրվել են սահմանվածից պակաս արգելանքներ: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, պակաս արգելանքներ են դրվել 1,242.2 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 116 վարույթով: Այդ վարույթներով պակաս դրված արգելանքների վերաբերյալ Ծառայությունը պատասխանել է, որ արգելանքների հաղորդագրություններ չեն ուղարկվել բանկերին ծրագրային խնդիրների պատճառով, իսկ առանձին դեպքերում արգելանքի հաղորդագրություններ չեն ուղարկվել նաև Ճանապարհային ոստիկանություն, Մաքսային ծառայություն և այլ պետական մարմիններ:

Մասնավորապես, պատահական ընտրված 42 պարտապանների նկատմամբ հարուցված կատարողական վարույթների ստուգմամբ պարզվել է, որ հարկադիր կատարողների կողմից 50.0 հազ. դրամը գերազանցող բռնագանձման ենթակա գումարով երկու կատարողական վարույթներով արգելանքի հաղորդագրություններ չեն ուղարկվել Մաքսային ծառայություն, և այդ վարույթներով պարտապան հանդիսացող անձինք հանրապետություն են ներկրել ավտոմեքենաներ:

**Հարկադիր կատարողները, չունենալով բանկերից կամ պետական մարմիններից տեղեկատվություն պարտապանների դրամական միջոցների և գույքի առկայության վերաբերյալ, կատարողական վարույթներն անհիմն ավարտել են**

Փաստորեն, հարկադիր կատարողները կատարողական գործողությունները կատարել են թերի, և չունենալով բանկերից կամ պետական մարմիններից տեղեկատվություն պարտապանների դրամական միջոցների և գույքի առկայության վերաբերյալ, կատարողական վարույթներն անհիմն ավարտել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ պարտապանը չունի գույք կամ եկամուտ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե առկա է վարույթի կարճման հիմքերը, դատարանը որոշում է կայացրել գույքը արգելանքից հանելու մասին կամ պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը:

Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 8316 կատարողական վարույթներով առկա են պարտապանի գույքը արգելանքից հանելու դեպքեր, այդ թվում՝ 9,550.6 հազ. դրամի բռնագանձման ենթակա գումարով 741 կատարողական վարույթներով պարտապաններն ազատվել են բոլոր դրված արգելանքներից: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, 6162 կատարողական վարույթներով ևս առկա են արգելանքից հանելու դեպքեր, այդ թվում՝ 10,390.9 հազ. դրամի բռնագանձման ենթակա գումարով 978 կատարողական վարույթներով հանվել են բոլոր դրված արգելանքները:

Ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ առանձին դեպքերում գույքն արգելանքից հանելը չի հիմնավորվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի դրույթներով, կամ հարկադիր կատարողների կողմից վարույթը ավարտելու նույն ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքը կիրառվել է սխալ և այդ վարույթները ենթակա էին ավարտման կամ կարճման օրենքի այլ հոդվածների հիմքերով:

2016 թվականին հարուցվել և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2.1-ին կետերի հիմքով՝ հնարավոր չէ պարզել պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը, ավարտվել

է 9474 վարույթ՝ բռնագանձման ենթակա 386,097.5 հազ. դրամ գումարով: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, ավարտվել է 2799 վարույթ՝ բռնագանձման ենթակա 338,426.0 հազ. դրամ գումարով: Վարույթները հարուցվել են համապատասխանաբար՝ 5475 և 2036 ֆիզիկական անձանց նկատմամբ: Ավարտված այդ վարույթներով պարտապան հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները համադրվել են հարկային ծառայության տվյալների բազաների հետ: Պարզվել է, որ 2016 թվականին աշխատել է 297 անձ, 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, 287 անձ, սակայն դրանց նկատմամբ հարուցված վարույթներն ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2.1-ին կետերի հիմքով:

**Ծառայության կողմից կիրառվող փաստաթղթերի ձևերը չեն ապահովում բռնագանձման գործընթացի արդյունավետ կազմակերպումը**

Ծառայության կողմից կիրառվող փաստաթղթերի ձևերով նախատեսված չէ հարկային ծառայությունից ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն ստանալը, որի արդյունքում կատարողական գործողությունները լիարժեք չեն բռնագանձման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում կատարողական թերթ ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Ստուգմամբ պարզվել է, որ 2016 թվականին 164 կատարողական վարույթներ հարուցվել են սահմանված ժամկետից ուշացումով, ընդ որում՝ ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ այդ ժամանակ երկու պարտապան օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաները: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, օրենքի պահանջի խախտումով հարուցվել է 2160 կատարողական վարույթ:

## *2.2 Պետական բյուջեի օգտին բռնագանձման կատարողական վարույթներ*

Ծառայության կողմից պետական բյուջեի օգտին բռնագանձման համար հարուցված կատարողական վարույթներով 2016 և 2017 թվականներին

բռնագանձվել և պետական բյուջե մուտք է եղել համապատասխանաբար՝ 1,561,323.1 հազ. դրամ և 1,789,302.8 հազ. դրամ:

Ընտրանքային կարգով ստուգվել են պետական բյուջեի օգտին բռնագանձման ենթակա 10,000.0 հազ. դրամը գերազանցող ավարտված և կարճված կատարողական վարույթները: Արձանագրվել է.

**ՀՀ ֆինանսների նախարարության պահանջով** իրավաբանական անձից 15.03.2016թ. թիվ 01772859 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձման 130,172.6 հազ. դրամ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընկերությունը հաշվապահական հաշվեկշռում ունեցել է ակտիվներ, այդ թվում՝ դեբիտորական պարտքեր՝ 18,421,0 հազ. դրամ, ընթացիկ կանխավճարներ 4,334.1 հազ. դրամ, դրամական միջոցներ 40,000,0 հազ. դրամ: Ընկերության բանկի հաշվի մնացորդը 2016 թվականի մարտի 30-ի դրությամբ կազմել է 222.8 հազ. դրամ, որը բռնագանձվել է Ծառայության կողմից:

Հարկադիր կատարողը ընկերություն է այցելել վարույթը հարուցելուց 16 օր հետո՝ 2016 թվականի ապրիլի 1-ին: Ըստ դրամարկղի գրքի՝ ընկերությունը մեկ օր առաջ դրամարկղից ելք էր արել որպես փոխառություն 35,000.0 հազ. դրամ, որի վերադարձման ժամկետը պարզելու համար հարկադիր կատարողը գործողություններ չի կատարել: Ստուգման ընթացքում կատարված վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ դրամարկղի գրքում ներկայացված 268.1 հազ. դրամի փոխարեն դրամարկղի մնացորդը կազմում էր 513.6 հազ. դրամ, որը հարկադիր կատարողը չի բռնագանձել, խախտելով «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ հայտնաբերված կանխիկ գումարը առգրավվում է և մեկ օրվա ընթացքում մուտքագրվում համապատասխան դեպոզիտային հաշվին:

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ ընկերության գործունեությունը դադարեցված չէ: Սակայն, կատարողական վարույթի գործում բացակայում է արձանագրությունը հարկադիր կատարողի կողմից ընկերության գործունեության հասցե այցելելու մասին՝ հումք նյութերի և պատրաստի արտադրանքի մնացորդների, ինչպես նաև արտադրական միջոցների առկայությունը պարզելու համար:

**Բռնագանձման ենթակա 130,172.6 հազ. դրամ գումարից պետական բյուջե մուտք է եղել 222.8 հազ. դրամ**

Կատարողական վարույթը 2016 թվականի հունիսի 14-ին կարճվել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով՝ իրավաբանական անձից գանձման ենթակա դրամական միջոցները գերազան-ցում են իրավաբանական անձի գույքի արժեքը: Փաստորեն, կատարողական վարույթի արդյունքում ընկերությունից բռնագանձման ենթակա 130,172.6 հազ. դրամ գումարից պետական բյուջե մուտք է եղել 222.8 հազ. դրամ:

**Կապանի հարկային տեսչության պահանջով** իրավաբանական անձից 31.10.2014թ. թիվ 00510796 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձման 40,854.0 հազ. դրամ: Կատարողական վարույթ հարուցելուց հետո հարկադիր կատարողի կողմից կատարված էլեկտրոնային հարցումների համաձայն՝ ընկերությունը «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ունի բանկային հաշիվ, որի մնացորդը կազմում էր 161.6 հազ. դրամ, ինչպես նաև 16 տարբեր մակնիշի մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ: Ընկերությունը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռում ունեցել է 640,166.2 հազ. դրամի հիմնական միջոցներ, 4,792.0 հազ. դրամի ոչ նյութական ակտիվներ, 284,800.8 հազ. դրամի հումք և նյութեր, կիսապատրաստուկներ, 51,330,8 հազ. դրամի արագամաշ առարկա-ներ, 1,156,769.4 հազ. դրամի անավարտ արտադրություն, 466,682,4 հազ. դրամի տրված կանխավճարներ, ինչպես նաև տրակտորներ և այլ տեխնիկա:

**Կատարողական գործողություններ չի իրականացվել 40,854.0 հազ. դրամը պետական բյուջեի օգտին բռնագանձելու ուղղությամբ**

Կատարողական վարույթով ընկերութ-յունից գումար չի բռնագանձվել, և 2016 թվականի հունիսի 10-ին այն կասեցվել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ընկերությանը սնանկ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելու հիմքով: Ընկերությունը սնանկ չի ճանաչվել և կասեցված վարույթը Ծառայությունը 2017 թվականի հունվարի 20-ին վերսկսել է:

Փաստորեն, կատարողական վարույթով մինչև այն կասեցնելը և վերսկսելուց հետո առ ստուգման պահը կատարողական գործողություններ չեն

իրականացվել 40,854.0 հազ. դրամը պետական բյուջեի օգտին բռնագանձելու ուղղությամբ:

**Կոտայքի հարկային տեսչության պահանջով** իրավաբանական անձից 27.10.2015թ. թիվ 00956189 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձման 20,952.9 հազ. դրամ: Ընկերության տնօրենի կողմից 2016 թվականի սեպտեմբերի 16-ին տրված հայտարարության համաձայն՝ ընկերությունը չունի շենք-շինություններ, հողամասեր, շարժական գույք, պարտատոմսեր, մուրհակներ, դրամական միջոցներ: Ընկերության բանկի հաշվի մնացորդը կազմում էր 10.5 հազ. դրամ: Հիմք ընդունելով տնօրենի հայտարարությունը, որ ընկերությունը չունի գույք և գույքային իրավունքներ, հարկադիր կատարողը կատարողական վարույթը 2015 թվականի հոկտեմբերի 27-ին ավարտել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ հնարավոր չէ պարզել գույքի գտնվելու վայրը:

**Կատարողական գործողություններ չի կատարվել ընկերությունից 20,952.9 հազ. դրամը պետական բյուջեի օգտին բռնագանձելու ուղղությամբ**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.12.2015թ. թիվ 6676 գրությամբ խնդրել է վերսկսել ավարտված կատարողական վարույթը, քանի որ ընկերությունը իրականացնում է գործունեություն և սահմանված ժամկետներում ներկայացնում է հաշվետվություններ: Կատարողական վարույթը վերսկսվել է և 2016 թվականի հունվարի 13-ին հարուցվել է նոր վարույթ: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ընկերությանը սնանկ ճանաչելու մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դիմումը վարույթ ընդունելու հիմքով կատարողական վարույթը 2016 թվականի նոյեմբերի 17-ին կասեցվել է: Դատարանի 2017 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջը մերժվել է, որից 5 ամիս հետո՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ին վարույթը վերսկսվել է:

Ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը 2016 և 2017 թվականներին զբաղվել է հանքային ջրերի արտադրությամբ և ունեցել է աշխատողներ, ստացել է եկամուտ: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության գործունեության հասցե, հարկային տեսչությունից չի պահանջել ընկերության վերջին տարվա հաշվապահական հաշվետվությունները: Փաստորեն, 2016 թվականի սկզբին նոր վարույթ հարուցելուց հետո, մինչև նոյեմբեր ամսին այն կասեցնելը,

կատարողական գործողություններ չեն կատարվել ընկերությունից 20,952.9 հազ. դրամը պետական բյուջեի օգտին բռնագանձելու ուղղությամբ:

**Կենտրոն հարկային տեսչության պահանջով** իրավաբանական անձից 05.03.2015թ. թիվ 00866585 (07/01-6312/15) կատարողական վարույթով ենթակա է բռնագանձման 14,623.6 հազ. դրամ: Հարկադիր կատարողի կողմից ընկերության բանկային հաշվից բռնագանձվել է 3,662.0 հազ. դրամ: Հարկադիր կատարողը հարկային տեսչությունից չի պահանջել դրամարկղի գիրքը, վերջին տարվա հաշվապահական հաշվետվությունները՝ ընկերության ակտիվների մեծությունը պարզելու համար, տնօրենից չի պահանջել հայտարարություն գույքի և դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ, չի բռնագանձել ընկերության սեփականություն հանդիսացող «Մերսեդես Բենց G500» մակնիշի ավտոմեքենան:

Կատարողական վարույթը 2016 թվականի մարտի 17-ին ավարտվել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, որից հետո դատարանի 2016 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ ընկերությունը ճանաչվել է սնանկ և կատարողական վարույթը կարճվել է:

**Կատարողական գործողություններ չեն կատարվել, և արդյունքում առ ստուգման պահը բռնագանձման ենթակա 11,351.3 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել**

**ՀՀ ֆինանսների նախարարության պահանջով** իրավաբանական անձից 26.06.2015թ. թիվ 01/11-3488/15 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձման 11,351.3 հազ. դրամ: Ընկերության տնօրենը 2015 թվականի հուլիսի 15-ին տվել է հայտարարություն, որ ընկերությունը ունի 12 խոտանված և 4 անսարք ավտոմեքենաներ: Հարկադիր կատարողը նույն օրն արգելանք է դրել 8 ավտոմեքենայի վրա: 2016 թվականի փետրվարի 26-ին հարկադիր կատարողը այցելել է ընկերության տնօրենի տուն՝ մեքենաների գտնվելու վայրը պարզելու համար: Արձանագրվել է, որ տնօրենը արդեն 3 ամիս բացակայում է հանրապետությունից և նրան հայտնաբերելու համար հայտարարվել է հետախուզում, իսկ կատարողական վարույթը 2016 թվականի ապրիլի 25-ին ավարտվել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Փաստորեն, հարկադիր կատարողը ընկերության գույքի վրա արգելանք դնելուց հետո մինչև տնօրենի տուն այցելելը 7 ամիս գույքը բռնագանձելու ուղղությամբ

կատարողական գործողություններ չի կատարել, որի արդյունքում առ ստուգման պահը բռնագանձման ենթակա 11,351.3 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

**Բռնագանձման ենթակա 10,535.6 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել**

**Կենտրոնի հարկային տեսչության պահանջով** իրավաբանական անձից 26.04.2016թ. թիվ 01853808 կատարողական վարույթով հօգուտ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 10,535.6 հազ. դրամ: Հարկադիր կատարողը հարկային տեսչությունից չի պահանջել ընկերության հաշվապահական հաշվետվությունները՝ ակտիվները պարզելու համար: Ըստ վարույթի գործում առկա դրամարկղի գրքի՝ ընկերությունը 2015 թվականի դեկտեմբերի 1-ին մասնավոր անձանց տվել է 2,000.0 հազ. դրամի փոխառություն: Հարկադիր կատարողը չի պարզել տրամադրված փոխառության վերադարձման ժամկետը, և կատարողական վարույթն ավարտել է «Դատական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Արդյունքում, բռնագանձման ենթակա 10,535.6 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

ՀՀ արդարադատության նախարարի 12.04.2006թ. թիվ 65-Ն հրամանով հաստատվել են հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթներով կիրառվող փաստաթղթերի ձևերը: Կիրառվող փաստաթղթերի ձև 59-ի համաձայն՝ Ծառայությունը հարկային ծառայությունից պահանջում է պարտապան կազմակերպության վերջին հաշվարկային հաշվեկշռի պատճենները, ինչպես նաև հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի տվյալները: Ստուգմամբ պարզվել է, որ Ծառայության կողմից մշակված էլեկտրոնային եղանակով հարցման ձև 59-ով չեն պահանջվում իրավաբանական անձանց հաշվարկային հաշվեկշիռները, իսկ էլեկտրոնային եղանակով ստացված պատասխաններում բացակայում է տեղեկատվություն հիմնական և դրամական միջոցների, հումք նյութերի և դեբիտորական պարտքերի մասին: Մասնավորապես, 31.10.2014թ. թիվ 01/13-152669/14 և 15.03.2016թ. թիվ 01772859 վարույթներով իրավաբանական անձանց հաշվապահական հաշվեկշիռներում առկա է համապատասխանաբար՝ 2,604,541.6 հազ. դրամի և 62,755.1 հազ. դրամի ակտիվներ,

**Առանձին դեպքերում կատարողական գործողությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով պետական բյուջեի օգտին բռնագանձված միջոցներից մուտքերն էապես պակաս են բռնագանձման ենթակա գումարներից**

սակայն ձև 59 էլեկտրոնային հարցումներով ստացված պատասխանների համաձայն՝ այդ ընկերություններն ակտիվներ չունեն: Արդյունքում, հարկադիր կատարողը չի տիրապետում անհրաժեշտ տեղեկատվությանը՝ կազմակերպություններից բռնագանձման ենթակա ակտիվների վերաբերյալ:

Փաստորեն, առանձին դեպքերում կատարողական գործողությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով 2016 և 2017 թվականներին պետական բյուջեի օգտին բռնագանձված միջոցներից մուտքերն էապես պակաս են բռնագանձման ենթակա գումարներից:

## *2.3 Երևանի քաղաքապետարանի պահանջով հարուցված կատարողական վարույթներ*

**Երևանի քաղաքապետարանի պահանջով հարուցված զգալի թվով վարույթներով պարտապան հանդիսացող իրավաբանական և ֆիզիկական անձինք ունեցել են եկամուտներ, սակայն այդ վարույթներով գումարներ չեն բռնագանձվել**

Ծառայությունը Երևանի քաղաքապետարանի պահանջով 2016 թվականին հարուցել է 52728 կատարողական վարույթներ՝ 1,162,831.5 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: 2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ հարուցվել է 26277 վարույթ՝ 448,941.9 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով:

2016 և 2017 թվականներին հարուցված կատարողական վարույթներից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ պարտապանը չունի գույք կամ եկամուտ, ավարտել է 23130 վարույթ՝ 333,426.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Օրենքի այդ հոդվածով ավարտված 38,697.2 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 344 վարույթներով պարտապան են հանդիսացել իրավաբանական անձինք: Ստուգմամբ պարզվել է, որ առանձին դեպքերում 200.0 հազ. դրամ և ավելի բռնագանձման ենթակա գումար ունեցող այդ իրավաբանական անձինք 2016 և 2017 թվականներին գործել են, ունեցել են եկամուտներ: Մասնավորապես, 2,920.1 հազ դրամ բռնագանձման ենթակա գումարով թիվ 00464966 կատարողական վարույթն ավարտվել է այն դեպքում, երբ պարտապան ընկերությունը 2016 թվականին գործել է և ունեցել է 757,155.3 հազ. դրամ եկամուտ, ընդ որում՝ ընկերության նկատմամբ հարուցված չորս այլ վարույթներով Ծառայությունն այդ ընթացքում բռնագանձել է 3,221.1 հազ. դրամ:

Թիվ 00924955, թիվ 03632054 և թիվ 01935717 կատարողական վարույթներով պարտապան հանդիսացող իրավաբանական անձինք 2016 թվականին նույնպես ունեցել են եկամուտ համապատասխանաբար՝ 610,262.6 հազ. դրամ, 34,294.9 հազ. դրամ և 10,161.1 հազ. դրամ:

Բացի այդ, ստուգվել են 5.0 հազ. դրամի չափով բռնագանձման ենթակա գումարով կատարողական վարույթները, որի գերակշիռ մասը կազմում են ավտոկայանատեղի տեղական տուրք չվճարած անձանց նկատմամբ նշանակված վարչական տուգանքները: 2016 և 2017 թվականներին հարուցված այդ վարույթներից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտվել է համապատասխանաբար՝ 17427 և 10525 վարույթ: Ավարտված վարույթներով պարտապան հանդիսացող և տրանսպորտային միջոցները փաստացի շահագործող համապատասխանաբար՝ 6204 և 5586 ֆիզիկական անձանց տվյալները համադրվել են հարկային ծառայության տվյալների բազաների հետ: Ստուգմամբ պարզվել է, որ 2016 և 2017 թվականներին այդ ֆիզիկական անձանցից աշխատել և եկամտահարկ է վճարել համապատասխանաբար՝ 1160 և 1436 անձ, որոնց նկատմամբ տարբեր վարույթներով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 38,280.0 հազ. դրամ:

Փաստորեն, Երևանի քաղաքապետարանի պահանջով հարուցված զգալի թվով վարույթներով պարտապան հանդիսացող իրավաբանական և ֆիզիկական անձինք ունեցել են եկամուտներ, սակայն այդ վարույթներով գումարներ չեն բռնագանձվել:

## *2.4 Հարկադիր էլեկտրոնային աճուրդների միջոցով պետական բյուջեի օգտին բռնագանձված գումարներ*

**Պետական բյուջեի օգտին բռնագանձված 407,018.7 հազ. դրամ գնահատված արժեքով գույքի հարկադիր էլեկտրոնային աճուրդներով վաճառքից մուտք է եղել 35,725.2 հազ. դրամ կամ 8.7%-ը**

Ուսումնասիրվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդներով պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2016 և 2017 թվականներին գնահատող լիցենզավորված կազմակերպությունների կողմից 407,018.7 հազ. դրամ գնահատված արժեքով գույքի աճուրդով վաճառքից պետական բյուջե մուտք է եղել 35,725.2 հազ. դրամ՝ գնահատված արժեքի 8.7%-ը:

Արձանագրվել է.

- Թիվ 01/11-1152/13 կատարողական վարույթով տիրազուրկ 15.8 տոննա կալիումի քլորիդը (պարարտանյութ) գնահատվել է 5,523.0 հազ. դրամ, որն աճուրդով վաճառվել է 15.3 հազ դրամով կամ մեկ տոննան՝ 970 դրամ այն դեպքում, երբ պետական կարիքների համար 2017 թվականին գնվել է 340 տոննա կալիումի քլորիդ, մեկ տոննան՝ 218.0 հազ. դրամ արժեքով:

- Թիվ 00221915 կատարողական վարույթով ֆիզիկական անձի պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմել է 3,863.1 հազ. դրամ: Բռնագանձվել են գյուղնշանակության 7600 քմ հողատարածքներ՝ 6,085.0 հազ. դրամ գնահատված արժեքով, կամ մեկ քմ միջին գինը՝ 800 դրամ: Աճուրդով հողատարածքները վաճառվել են 427.9 հազ. դրամով (մեկ քմ՝ 56.3 դրամ) կամ գնահատված արժեքից 14.2 անգամ պակաս:

- Թիվ 01/10-431/14 կատարողական վարույթով ֆիզիկական անձի կողմից մաքսանենգ ճանապարհով ներմուծված 188.8 կգ., տարբեր տեսակի կոշիկները պետական բյուջեի օգտին բռնագանձվել և գնահատվել է 1,396.8 հազ. դրամ: Աճուրդով կոշիկները վաճառվել են 52.6 հազ. դրամով կամ գնահատված արժեքից 26.5 անգամ պակաս:

- Թիվ 01/11-1895/12 կատարողական վարույթով իրավաբանական անձի պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմել է 1,192.4 հազ. դրամ: Ընկերությունից բռնագանձվել է վերամշակված կաշի, կոշիկի կաղապարներ,

դրոշմահաստոց, որոնք գնահատվել են 2,091.0 հազ. դրամ: Աճուրդով այդ ապրանքները վաճառվել են 69.1 հազ. դրամով կամ գնահատված արժեքից 30.3 անգամ պակաս:

- Թիվ 05-4261/14 կատարողական վարույթով իրավաբանական անձի պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմել է 1,412.1 հազ. դրամ: Բռնագանձված «ԿԱՄԱԶ-5410» մակնիշի բեռնատար մեքենան գնահատվել է 4,000.0 հազ. դրամ, որն աճուրդով վաճառվել է 149.0 հազ. դրամով կամ գնահատված արժեքից 26.8 անգամ պակաս:

- Թիվ 09-504/13 կատարողական վարույթով իրավաբանական անձի պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմել է 2,878.5 հազ. դրամ: Կոոպերատիվից բռնգանձվել են 75 տոննա, 54 տոննա և 25 տոննա տարողությամբ մետաղական տարաներ, որոնք գնահատվել են գումարային 5,550.0 հազ. դրամ: Աճուրդով վաճառքի գինը կազմել է 605.0 հազ. դրամ կամ գնահատված արժեքից 9.2 անգամ պակաս: Բռնագանձվել է նաև զոդման ապարատ, մղման պոմպով տարա և էլեկտրական գեներատոր՝ 3,090.0 հազ. դրամ գնահատված արժեքով, որն աճուրդով վաճառվել է 72.3 հազ. դրամով կամ 42.7 անգամ պակաս:

- Թիվ 00879761 կատարողական վարույթով իրավաբանական անձի պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմել է 8,545.3 հազ. դրամ: Բռնագանձվել է 47,550.0 հազ. դրամ գնահատված արժեքով անշարժ գույք, որն աճուրդով վաճառվել է 4,386.0 հազ. դրամով կամ 10.8 անգամ պակաս:

**Ծառայության կողմից աճուրդի դրված անշարժ գույքի լոտերն աճուրդի տևողության 10 օրերի ընթացքում ոչ միշտ են տեսանելի լոտերի էլեկտրոնային ցանկում:**

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ աճուրդի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, հաջորդ հակադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով»: Նույն օրենքի 35.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը»:

2017 թվականի հուլիսի 26-ից մինչև սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակաշրջանում (ժամը 12.00-ից մինչև 13.00 ընկած ժամանակահատված) հարկադիր էլեկտրոնային աճուրդի իրականացման և կազմակերպման «harkadir.ajurd.am» կայքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ծառայության կողմից աճուրդի դրված անշարժ գույքի լոտերն աճուրդի տևողության 10 օրերի ընթացքում ոչ միշտ են տեսանելի լոտերի էլեկտրոնային ցանկում: Մասնավորապես, թիվ 268294, թիվ 267465, թիվ 268619, թիվ 268489, թիվ 268358, թիվ 268466, թիվ 269098, թիվ 267941, թիվ 268223 լոտերը տեսանելի չեն եղել երկուսից մինչև հինգ անգամ, առանձին դեպքերում, նաև աճուրդի ավարտման օրը:

**Հարկադիր աճուրդի էլեկտրոնային համակարգը կատարյալ չէ և չի ապահովում հրապարակայնությունը**

Փաստորեն, հարկադիր աճուրդի էլեկտրոնային համակարգը կատարյալ չէ և չի ապահովում հրապարակայնությունը՝ աճուրդի դրված լոտերը ոչ միշտ են տեսանելի հնարավոր մասնակիցների համար, աճուրդները չեն կայանում մասնակիցների բացակայության պատճառով և աճուրդի արդյունքում մասնագիտացված կազմակերպությունների կողմից գնահատված գույքը վաճառվում է տասնապատիկ անգամ էժան:

## *2.5 ԴԱՀԿ ծառայության արտաբյուջետային դեպոզիտային հաշիվների մնացորդներ*

2016 և 2017 թվականներին Ծառայության 12 գանձապետական արտաբյուջետային հաշիվներին մուտք է եղել համապատասխանաբար՝ 12,223,573.7 հազ. դրամ և 14,881,020.6 հազ. դրամ: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հաշիվների մնացորդը կազմել է՝ 1,774,190.8 հազ. դրամ, որից 1,253,537.9 հազ. դրամ՝ Ծառայության Երևանի բաժնի արտաբյուջետային հաշվին:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ծառայության Երևանի բաժնի դրամարկղում առկա էր 737,473.7 հազ. դրամ մնացորդ, որն ապրիլ և մայիս ամիսներին մուտքագրվել է Ծառայության Երևանի բաժնի գանձապետական 900013288015 արտաբյուջետային հաշվին: Միաժամանակ, 2016 թվականի հունվարի 1-ին գանձապետական արտաբյուջետային հաշվին առկա էր 111,739.2 հազ. դրամ մնացորդ: 2017 թվականի հունվարի 1-ին Երևանի բաժնի

արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 906,823.6 հազ. դրամ, իսկ 2018 թվականի հունվարի 1-ին՝ 1,253,537.9 հազ. դրամ:

Ստուգման ընթացքում՝ հարցմանն ի պատասխան, Ծառայությունը տեղեկացրել է, որ արտաբյուջետային հաշվին առկա գումարները չեն բաշխվում պահանջատերերին, քանի որ գումարների փոխանցման համար պահանջատերերը չեն ներկայացրել համապատասխան հաշիվ կամ ներկայացրել են սխալ հաշիվ, ինչպես նաև չեն ներկայացել Ծառայություն՝ հասանելիք գումարները ստանալու համար:

**Ծառայությունը միջոցներ չի ձեռնարկել՝ բռնագանձված գումարները հայտնի հասցեատերերին, այդ թվում՝ պետական բյուջե փոխանցելու ուղղությամբ**

Ծառայության դեպոզիտային հաշվին առկա բռնագանձված մնացորդ գումարների պահանջատերերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ցանկում զգալի թիվ են կազմում պետական գրանցում ունեցող՝ տարիներ շարունակ հանրապետությունում գործող հայտնի իրավաբանական անձինք: Մասնավորապես, բռնագանձված 45,768.4 հազ. դրամի պահանջատեր են հանդիսանում առանձին առևտրային բանկերը, որոնց հետ Ծառայությունն իր ամենօրյա գործառույթների շրջանակներում փաստաթղթաշրջանառություն է իրականացնում էլեկտրոնային հատուկ կապուղու միջոցով: Բացի այդ, տարբեր պետական մարմինների պահանջով հաշվին առկա բռնագանձված 21,956.0 հազ. դրամի պահանջատեր է հանդիսանում պետական բյուջեն:

Փաստորեն, Ծառայության Երևանի բաժնի դրամարկղի մնացորդը 2016 թվականին գանձապետական արտաբյուջետային հաշվին մուտքագրելուց հետո տարեցտարի այդ հաշվի մնացորդն ավելացել է, իսկ Ծառայությունը միջոցներ չի ձեռնարկել՝ բռնագանձված գումարները հայտնի հասցեատերերին, այդ թվում՝ պետական բյուջե փոխանցելու ուղղությամբ:

Բացի այդ, Ծառայության տարբեր բաժինների դեպոզիտային հաշիվներին առկա է չպարզված 149,806.4 հազ. դրամի մնացորդ գումար, որի պահանջատերերը տարիներ շարունակ անհայտ են:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Ծառայությանը պետական բյուջեի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում» ծրագրով 2016 թվականին հատկացվել է 1,417,554.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,347,048.9 հազ. դրամ: 2017 թվականին հատկացումը և դրամարկղային ծախսը կազմել են համապատասխանաբար՝ 1,351,386.9 հազ. դրամ և 1,329,065.0 հազ. դրամ: Այդ տարիներին Ծառայության պահպանման ծախսերի համապատասխանաբար՝ 84.3%-ը և 83.4%-ը կազմել են աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսերը:

2

Ծառայությունը հաստիքացուցակի 427 աշխատողներով 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ապահովված է եղել սվիտերներով հաջորդ երկու տարվա համար, սակայն 2016 և 2017 թվականներին գնել է 6,125.0 հազ. դրամի 350 հատ սվիտեր:

3

2016 և 2017 թվականներին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին Ծառայության ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 1,307,924.3 հազ. դրամ և 1,463,470.7 հազ. դրամ: 2016 թվականին Ծառայությունը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի բաղադրիչների հավասար հարաբերակցությունը՝ նյութական խրախուսման բաղադրիչին հատկացրել է 174,500.1 հազ. դրամ պակաս:

4

2016 և 2017 թվականներին նյութական խրախուսման բաղադրիչից ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշման համաձայն հարկադիր կատարման ծառայողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց համար նախատեսված համապատասխանաբար՝ 331,815.6 հազ. դրամը և 392,819.3 հազ. դրամը Ծառայությունն ուղղել է

պայմանագրային հիմունքներով աշխատող ավելի քան 200 անձանց վարձատրությանը:

5 Ծառայությունը «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ 13.09.2016թ. կնքել է պայմանագիր՝ 7,000.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի ժամկետն ավարտվելուց 12 ամիս հետո կնքվել է համաձայնագիր, որով աշխատանքն ընդունվել է մասնակի կատարված՝ վճարված 3,500.0 հազ. դրամի չափով, և պայմանագիրը լուծվել է: Ծառայության կողմից մինչև համաձայնագիր կնքելը ենթակա էր հաշվարկել և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ից գանձել յուրաքանչյուր ուշացված օրվա համար պայմանագրով նախատեսված 0.1 տոկոս տույժ՝ 1,277.5 հազ. դրամ:

6 Ծառայությունը ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման համար կնքված 3,500.0 հազ. դրամի 07.12.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԶԹ 2017/3 պայմանագրով ԱԱՀ վճարող չհամարվող «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ին վճարել է 583.3 հազ. դրամ ԱԱՀ-ի գումարը:

7 Ծառայությունը 2016 թվականին «Սոֆթ Թայմ» ՍՊԸ-ից ձեռք է բերել 570 հատ «Kaspersky» համակարգչային ծրագրային արտոնագրեր, որից 867.0 հազ. դրամի 60 հատը գնել է պահանջարկից ավելի:

8 2016 թվականին Ծառայության և «Նեոսիստեմ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերով հինգ ամիսների համար մեկ հատ քարթրիջի լիցքավորման և վերանորոգման գինը սահմանվել է 1580 դրամ, իսկ հաջորդ ամսվա համար գինը առանց հիմնավորման թանկացել է և սահմանվել է 4000 դրամ, որի արդյունքում 190 քարթրիջների լիցքավորման և վերանորոգման համար ավելի է ծախսվել 459.8 հազ. դրամ:

9 2016 թվականին Ծառայությունը «Փեն բոքս» ՍՊԸ-ից պայմանագրով գնել է 4000 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝ 1480 դրամով, իսկ «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ից դեկտեմբեր ամսվա ընթացքում 12 հաշիվ ապրանքագրերով գնել է 6550 տուփ թուղթ, մեկ տուփը 158 դրամով թանկ, ծախսելով ավելի 1,034.9 հազ. դրամ: 2017 թվականին Ծառայությունը «Սմարթլայն» ՍՊԸ-ից առաջին պայմանագրով գնել է 7500 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝

1410 դրամով, իսկ երկրորդ պայմանագրով՝ 22500 տուփ, մեկ տուփը 225 դրամով թանկ, ծախսելով ավելի 5,062.5 հազ. դրամ:

10

Հոգեբանական ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերով Ծառայությունը չի սահմանել միավորի գին, չի վարել մատուցված ծառայությունների քանակի հաշվառում և վճարումները կատարել է առանց հաշվարկային հիմքի՝ 2016 թվականի տարբեր ամիսներին վճարել է ամսական 200.0 հազարական դրամ և 340.0 հազարական դրամ, 2017 թվականին՝ ամսական 300.0 հազարական դրամ:

11

2016 թվականին Ծառայությունը երկու վերելակների մոնտաժման աշխատանքների կատարման համար «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագիր՝ 39,480.0 հազ. դրամ արժեքով, հաջորդ տարի ևս երկու վերելակների մատակարարման և մոնտաժման համար նույն կատարողի հետ կնքել է պայմանագիր՝ 41,680.0 հազ. դրամ արժեքով: Հաշվի առնելով, որ վերելակների տեխնիկական բնութագրերը էապես չեն տարբերվում և առաջին պայմանագիրը ներառել էր նաև վերելակների ապամոնտաժման աշխատանքներ, կնքված երկրորդ պայմանագրով վերելակների գնման համար ավելի է ծախսվել 2,200.0 հազ. դրամ:

12

Ծառայության վարչական շենքի նորոգումների 2017 թվականի չորս շինարարական ծրագրերի համար պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերը թերի կազմելու արդյունքում այդ շինարարական աշխատանքները կատարվել են առանց նախագծերի: Ծառայության վարչական շենքի վերանորոգումների համար 2017 թվականին կնքված չորս պայմանագրերով կապալառուներին հավելյալ վճարվել է 5,182.1 հազ. դրամ:

13

2016 թվականին Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայությունը հարուցել է 680052 կատարողական վարույթ՝ 7,420,502.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով, 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ հարուցել է 733787 կատարողական վարույթ՝ 6,803,141.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Այդ վարույթներով 2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ բռնագանձվել է համապատասխանաբար՝

1,926,239.5 հազ. դրամ և 1,596,382.5 հազ. դրամ, կամ բռնագանձման ենթակա գումարի 26.0%-ը և 23.5%-ը:

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին և 4-րդ մասերի պահանջներին չհամապատասխանելու դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին, այսինքն՝ հարկադիր կատարողը իրավասու է մերժել վարույթի հարուցումը: Սակայն, 423,387.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 47145 վարչական ակտերով վարույթների հարուցումը մերժվել է Ծառայության էլեկտրոնային համակարգի կողմից՝ պարտապանի անձնագրի համարի, հանրային ծառայությունների համարանիշի կամ այլ տվյալների բացակայության պատճառով: Մերժված 5113 վարչական ակտերում առկա է պարտապանի հանրային ծառայությունների համարանիշը: Այդ վարչական ակտերից նույնականացվել է 1798 վարչական ակտ 889 ֆիզիկական անձի, որոնց նկատմամբ Ծառայությունն այլ վարչական ակտերով հարուցել է կատարողական վարույթներ: Ընդ որում, այդ վարչական ակտերից 1153 վարչական ակտ մերժվել է կատարման ներկայացնելու ժամկետը խախտելու հիմքով: Փաստորեն, էլեկտրոնային համակարգի կողմից վարչական ակտերը անհիմն մերժելու արդյունքում հարկադիր կատարողները չեն հարուցել 645 կատարողական վարույթ՝ 5,425.5 հազ. դրամ բռնագանձման գումարով:

14

Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայության կողմից 2016 թվականին հարուցված 4,520,757.4 հազ. դրամի 417609 կատարողական վարույթներ և 2017 թվականին հարուցված 4,496,569.6 հազ. դրամի 499944 կատարողական վարույթներ 2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ պարտապանը չունի գույք կամ եկամուտ:

15

2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված վարույթներով պարտապան հանդիսացող 33202 ան-

16

ձանց նկատմամբ 2017 թվականին Ծառայության կողմից ևս հարուցվել և օրենքի նույն հոդվածի հիմքով ավարտվել են կատարողական վարույթներ: Ընդ որում, այդ անձանցից 597 անձի նկատմամբ յուրաքանչյուր տարի հարուցվել և օրենքի այդ հոդվածի հիմքով ավարտել է 50-ից ավելի կատարողական վարույթներ: Փաստորեն, այդ անձինք, չունենալով գույք կամ եկամուտ, փաստացի շահագործել են ավտոմեքենա և կատարել են բազմաթիվ խախտումներ, որի համար նրանց նկատմամբ 2016 թվականին հարուցվել և ավարտվել են 785,252.1 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 89565 վարույթ և 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ՝ 603,590.1 հազ. դրամի 80701 վարույթ: Առանձին դեպքերում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ավտոմեքենաների վրա արձանագրված բազմաթիվ խախտումների համար նշանակվել են տուգանքներ գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ:

17

Ծառայության կողմից հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված վարույթներով պարտապան ֆիզիկական անձանցից 2016 թվականին աշխատել է 9569 անձ, սակայն հարկադիր կատարողները դրանց նկատմամբ 857,994.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով վարույթներն ավարտել են: 2017 թվականին աշխատել են պարտապան 16565 ֆիզիկական անձինք, որոնց 702,225.8 հազ. դրամի վարույթները ավարտվել են նույն հիմքով:

18

2016 թվականին հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 217,522.6 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 19994 վարույ-թով՝ 1,000.0 հազ. դրամ և ավելի բռնագանձման ենթակա գումար ունեցող 120 պարտապան ունեցել են մեկ կամ ավելի սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաներ: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, օրենքի նույն հոդվածով ավարտված 152,818.0 հազ. դրամի 17886 վարույթով ավտոմեքենա է ունեցել 86 պարտապան: Սակայն, հարկադիր կատարողները պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել:

19

2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 4303 կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանքներ չեն դրվել: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, արգելանքներ չեն դրվել ավարտված 1814 կատարողական վարույթներով:

20

2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 81 կատարողական վարույթներով դրվել են սահմանվածից պակաս արգելանքներ, 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, պակաս արգելանքներ են դրվել 116 վարույթով:

21

2016 թվականին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 8316 կատարողական վարույթներով առկա են պարտապանի գույքը արգելանքից հանելու դեպքեր, այդ թվում՝ 741 կատարողական վարույթներով պարտապաններն ազատվել են բոլոր դրված արգելանքներից: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, 6162 կատարողական վարույթներով ևս առկա են արգելանքից հանելու դեպքեր, այդ թվում՝ 978 կատարողական վարույթներով հանվել են բոլոր դրված արգելանքները:

22

2016 թվականին հարուցվել և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2.1-ին կետերի հիմքով՝ հնարավոր չէ պարզել պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը, ավարտվել է 9474 վարույթ՝ բռնագանձման ենթակա 386,097.5 հազ. դրամ գումարով: 2017 թվականին՝ նոյեմբերի 29-ի դրությամբ, ավարտվել է 2799 վարույթ՝ բռնագանձման ենթակա 338,426.0 հազ. դրամ գումարով այն դեպքում, երբ այդ վարույթներով պարտապան հանդիսացող 297 անձ աշխատել է 2016 թվականին և 287 անձ աշխատել է 2017 թվականին:

23

Ծառայության կողմից կիրառվող փաստաթղթերի ձևերով նախատեսված չէ հարկային ծառայությունից ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն ստանալը, որի արդյունքում կատարողական գործողությունները լիարժեք չեն

բռնագանձման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

24 2016 թվականին 164 կատարողական վարույթներ հարուցվել են օրենքով սահմանված ժամկետից ուշացումով, ընդ որում՝ ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ այդ ժամանակ երկու պարտապան օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաները:

25 Ծառայության կողմից պետական բյուջեի օգտին բռնագանձման համար հարուցված կատարողական վարույթներով 2016 և 2017 թվականներին բռնագանձվել և պետական բյուջե մուտք է եղել համապատասխանաբար՝ 1,561,323.1 հազ. դրամ և 1,789,302.8 հազ. դրամ:

26 Ծառայության կողմից մշակված էլեկտրոնային եղանակով հարկային ծառայությունից հարցման ձևը չի համապատասխանում ՀՀ արդարադատության նախարարի 12.04.2006թ. թիվ 65-Ն հրամանով հաստատված ձև 59-ին՝ չեն պահանջվում իրավաբանական անձանց հաշվարկային հաշվեկշիռները, իսկ էլեկտրոնային եղանակով ստացված պատասխաններում բացակայում է տեղեկատվություն հիմնական և դրամական միջոցների, հումք նյութերի և դեբիտորական պարտքերի մասին: Առանձին դեպքերում կատարողական գործողությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով 2016 և 2017 թվականներին պետական բյուջեի օգտին բռնագանձված միջոցներից մուտքերը էական պակաս են բռնագանձման ենթակա գումարներից:

27 Ծառայությունը Երևանի քաղաքապետարանի պահանջով 2016 թվականին հարուցել է 52728 վարույթներ՝ 1,162,831.5 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: 2017 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ հարուցվել է 26277 վարույթ՝ 448,941.9 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Հարուցված զգալի թվով վարույթներով պարտապան հանդիսացող իրավաբանական և ֆիզիկական անձինք ունեցել են եկամուտներ, սակայն այդ վարույթներով գումարներ չեն բռնագանձվել:

28

Հարկադիր աճուրդի էլեկտրոնային համակարգը կատարյալ չէ և չի ապահովում հրապարակայնությունը՝ աճուրդի դրված լոտերը ոչ միշտ են տեսանելի հնարավոր մասնակիցների համար, աճուրդները չեն կայանում մասնակիցների բացակայության պատճառով և աճուրդի արդյունքում մասնագիտացված կազմակերպությունների կողմից գնահատված գույքը վաճառվում է տասնապատիկ անգամ էժան: 2016 և 2017 թվականներին գնահատող լիցենզավորված կազմակերպությունների կողմից 407,018.7 հազ. դրամ գնահատված արժեքով գույքի աճուրդով վաճառքից պետական բյուջե մուտք է եղել 35,725.2 հազ. դրամ, կամ գնահատված արժեքի 8.7%-ը:

29

Ծառայության Երևանի բաժնի դրամարկղի մնացորդը՝ 737,473.7 հազ. դրամ, 2016 թվականին գանձապետական արտաբյուջետային հաշվին մուտքագրելուց հետո այդ հաշվի մնացորդը ավելացել և կազմել է 1,253,537.9 հազ. դրամ, իսկ Ծառայությունը միջոցներ չի ձեռնարկել՝ բռնագանձված գումարները հայտնի հասցեատերերին, այդ թվում՝ պետական բյուջե փոխանցելու ուղղությամբ:

30

Ծառայության տարբեր բաժինների դեպոզիտային հաշիվներին առկա է չպարզված 149,806.4 հազ. դրամի մնացորդ գումար, որի պահանջատերերը տարիներ շարունակ անհայտ են:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՀ կառավարությանը** | Քննարկել՝ գույք կամ եկամուտ չունեցող անձանց կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքում պատասխանատվության միջոցներ սահմանել տրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձի նկատմամբ: |
| **Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը** | 1. գնումները կատարել գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերին համապատասխան,<br>2. կատարման ներկայացված թերի տվյալներով վարչական ակտերը վերադարձնել վարչական մարմին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1 հոդվածի պահանջին համապատասխան՝ հարկադիր կատարողի կողմից,<br>3. Ծառայության էլեկտրոնային համակարգի միջոցով ապահովել հարկադիր կատարողի կողմից հաղորդագրության ստացումը պարտապանի բանկային հաշվին գումար առաջանալու և այն առևտրային բանկի կողմից արգելադրելու պահին,<br>4. կատարողական գործողություններն արդյունավետ կատարելու նպատակով ձեռնարկել միջոցներ հարկային ծառայությունից պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու ուղղությամբ,<br>5. ձեռնարկել միջոցներ՝ հարկադիր կատարողի կողմից կատարվող կատարողական գործողությունների, մասնավորապես՝ պարտապանների գույքի վրա արգելանքներ դնելու և դրանից ազատելու նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ,<br>6. առաջարկել իրավական լուծում Ծառայության դեպոզիտային հաշիվներում առկա չպարզված գումարների օգտագործման համար: |

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

Հավելված

## ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Բյուջետային միջոցների օգտագործում

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում» ծրագրով 2016 թվականին հատկացվել է 1,417,554.8 հազ. դրամ, այնուհետև ՀՀ կառավարության 07.07.2016թ. № 724-Ն որոշմամբ նշված ծրագիրը «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածի գծով պակասեցվել է 740.0 հազ. դրամով և տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 1,416,814.8 հազ. դրամ:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԴԱՀԿ ապահովող ծառայության պահեստում սվիտերների մնացորդը կազմել է 580 հատ: ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից բյուջետային միջոցների հաշվին 2016 թվականին իրականացված գնման ընթացակարգի արդյունքում «Արս-Ֆայն» ՍՊԸ-ից ձեռք է բերվել անվանացանկով նախատեսված թվով 200 հատ սվիտերներ՝ մեկ հատը 17.5 հազ.դրամ գումարով, իսկ 2017 թվականին նույնպես բյուջետային միջոցների հաշվին իրականացված գնման ընթացակարգի արդյունքում «Էլաամոդա» ՍՊԸ-ից ձեռք է բերվել ևս 150 հատ սվիտեր՝ մեկ հատը 17.5 հազ.դրամ գումարով: Այսպիսով Ծառայության կողմից 2016 և 2017 թվականների ընթացքում պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդամենը 350 հատ սվիտեր, իսկ 2016 և 2017 թվականներին արտաբյուջետային միջոցների հաշվին սվիտերներ ձեռք չեն բերվել:

Սվիտերների նշված քանակների ձեռք բերումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականի հունվարից անհրաժեշտ էր աշխատակիցներին ապահովել սվիտերներով, որոնց կրման ժամկետը լրանում էր 2018 թվականի ընթացքում, ինչպես նաև հաշվի է առնվել 2016-2017 թվականների կադրերի հոսունությունը, որը կազմել է ավելի քան 100 ծառայող և դեռևս անհայտ է 2018 թվականին նորանշանակ ծառայողների թվաքանակը:

### Արտաբյուջետային միջոցների օգտագործում

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** ««ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ» արտաբյուջետային ծրագրի միջոցների ծախսման նախահաշիվը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմման ժամանակ պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 4112 տնտեսագիտական դասակարգման հոդվածի տարեկան գումարը հաշվարկվել է համաձայն **2013 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի,** հանաձայն որի.

**«Տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել տվյալ մարմնի աշխատավարձի տարեկան ֆոնդի 30 տոկոսը»:**

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծատայության պայմանագրային աշխատողների վարձատրությունը կատարվել է աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Հետևաբար, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պայմանագրային աշխատողների վարձատրությունը չի կարող ազդել հարկադիր կատարողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բաշխման ենթակա ամսական գումարի նվազմանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության արդյունքում 67-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «7. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն օգտագործվում են կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման, համակարգի զարգացման և ծառայողների նյութական խրախուսման, ինչպես նաև սույն մասի երրորդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների վերականգնման համար:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը, ինչպես նաև ծախսման այլ ուղղությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից տրամադրված միջոցները վերականգնվում են հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին»:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի խորհրդականները «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չեն հանդիսանում պետական պաշտոն զբաղեցնող անձինք: Նրանք պայմանագրային հիմունքներով քաղաքացիական աշխատանք կատարող անձինք են: Հետևաբար «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածով սահմանված գործակիցները չեն տարածվում վերջիններիս վրա:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի խորհրդականների հետ աշխատանքային պայմանագրեր կնքելիս նրանց աշխատավարձի չափը սահմանվել է փոխադարձ համաձայնությամբ:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի խորհրդականը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանդիսանում պետական պաշտոն զբաղեցնող անձ: Նա պայմանագրային հիմունքներով քաղաքացիական աշխատանք կատարող անձ է: Վերջինիս հետ ընդհանուր հիմունքներով կնքվել է աշխատանքային պայմանագիր:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում, որի մասին գործատուն գրավոր ձևով պետք է ծանուցի աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչև նոր պայմանների ուժի մեջ մտնելը:»: Նշված նորմի բովանդակությունից ակնհայտ է, որ գործատուն իր աշխատողին այլ աշխատանքի փոխադրելիս միակողմանիորեն իրավունք չունի փոփոխել աշխատանքի էական պայմանները՝ այդ թվում աշխատավարձը: Հետևաբար անձը տեղափոխման կարգով ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի խորհրդականի պաշտոնից տեղափոխվել է Ծառայության Իրավաբանական բաժին՝ որպես իրավախորհրդատու՝ պահպանելով իր աշխատավարձը:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Համաձայն ՀՀ կառավարության 03.04.1999թ. թիվ 205 որոշման՝ Ծառայության (նախկինում՝ ԴԱՀԿ ապահովող վարչության) և մարզային ստորաբաժանումների համար բացվել են դեպոզիտային հաշիվներ վերը նշված գումարների մուտքագրման և բաշխման նպատակով: ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 404 որոշմամբ սահմանվել է նշված հաշիվներում գոյացած միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը, այնուհետև 03.02.2000թ. թիվ 49 որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 404 որոշման մեջ և սահմանվել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ

ապահովող ծառայության և նրա մարզային ստորաբաժանումների համար բացված հաշիվները **տնօրինվում են առանց նախահաշիվների:** Այդ իսկ պատճառով 2016 թվականի համար չեն կազմվել արտաբյուջետային միջոցների ծախսման նախահաշիվ, գնումների պլան և չեն սահմանվել նախահաշվային գներ:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին գնումները, ինչպես նաև 2017 թվականի փետրվարի 23-ից Ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին գնումները իրականացվում են ՀՀ ԱՆ Դատաիրավական բարեփոխումների ԾԻԳ պետական հիմնարկի միջոցով, որը և հանդիսանում է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության գնումների համակարգողը:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** 2016 թվականին Ծառայության և «Գեղարվեստի կոմբինատ» ՍՊԸ-ի միջև կնքվել է տրանսպորտային միջոցների կայանման և պահպանության պայմանագիր, որը ըստ էության ծառայությունների մատուցում է: Նմանատիպ պայմանագրի համար սահմանված է հասարակ գրավոր ձև, որը պահպանված է:

Հետագայում միևնույն կողմերի միջև կնքվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որը վավերացվել է նոտարական կարգով: Այս դեպքում նույնպես օրենքով սահմանված ձևը պահպանված է:

Բացի այդ Ծառայությունը նույն նպատակի համար վարձակալել է նաև այլ տարածք՝ կնքելով տարածքի վարձակալության պայմանագիր, որը վավերացվել է նոտարական կարգով:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Վարձակալած տարածքներում կայանված տրանսպորտային միջոցների պահպանությունը իրականացնում է Ծառայությունը, քանի որ դրանք առանձնացված փակ տարածքներ են և գտնվում են բացառապես Ծառայության տիրապետության տակ:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Նշված պայմանագրի համաձայն «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերության կողմից պետք է կազմվեր և ներդրվեր ՀՀ առևտրային բանկերի հետ համահունչ գործող ծրագրային մոդուլ: «Զեթ Թեքնոլոջի»-ն ՍՊԸ ժամանակին կատարել է իր ստանձնած պարտավորության առաջին մասը, սակայն երկրորդ մասը հնարավոր չի եղել իրականացնել նրա կամքից անկախ պատճառներով: Մասնավորապես համանման մոդուլներ պետք է ներդնեին նաև առևտրային բանկերը, որից հետո միայն «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը կկարողանար կատարել աշխատանքի երկրորդ մասը: Բանկերը սահմանված ժամկետում չեն կատարել ՀՀ ԿԲ խորհրդի որոշման պահանջը և հետևաբար «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը չի կարողացել պայմանագրով սահմանված ժամկետում կատարել իր պարտավորությունը: Վերը նշվածը հաշվի առնելով նրա նկատմամբ պայմանագրով և կամ օրենքով նախատեսված տույժեր կիրառելի չէին և չեն կիրառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի և 1091-րդ հոդվածի համաձայն, անձն ազատվում է քաղաքացիաիրավական պատասխանատվությունից եթե կետանցը տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Ծառայությունը մեկ անձից գնման ձևով «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ կնքել է ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման 07.12.2017թ. թիվ ԴԱՀԿ-ԶԹ 2017/3 պայմանագիրը, որի 4.1. կետում «ներառյալ ԱԱՀ» գրառումը վրիպակ է: Պայմանագիր կնքելիս օգտագործվել է տիպային ձև և այդ արտահայտությունը չի հեռացվել:

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը ԱԱՀ վճարող չէ, բացի այդ ներկայացված հարկային հաշիվը նույնպես առանց ԱԱՀ է: Հետևաբար տվյալ գործարքից ԱԱՀ չի առաջացել և չէր կարող առաջանալ: Ծառայությունը ավելի գումար չի վճարել: Թույլ տրված վրիպակը ուղղվել է, որի մասին ստուգման ընթացքում ստուգում իրականացնող Հանձնաժողովին տեղեկացվել է:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Ծառայության հաշվեկշռում 01.01.2016թ. դրությամբ առկա են եղել ևս 45 հատ համակարգիչներ և 11 հատ սերվերներ՝ շահագործման չհանձնված վիճակում, որոնք տարվա ընթացքում հանձնվել են շահագործման: 2016թ. ընթացքում Ծառայությունը նաև ձեռք է բերել 4 հատ նոր համակարգիչ:

Հաշվի առնելով համակարգչային տեխնիկայի առկայության վերոնշյալ քանակները, 2016թ. ընթացքում թվով 570 հատ համակարգիչների համար նախատեսված «Kaspersky» հակավիրուսային ծրագրային փաթեթի ձեռք բերումը համապատասխանել է Ծառայության իրական կարիքներին:

**ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.** 2016թ. հունվար-մայիս ամիսներին «Նեոսիստեմ» ՍՊ ընկերությունը մատուցել է քարթրիջների լիցքավորման ծառայություններ՝ մեկ հատ քարթրիջի լիցքավորման արժեքը սահմանելով 1580 դրամ:

Հաշվի առնելով Ծառայությունում օգտագործվող որոշ քարթրիջների կուտակային մաշվածության առկայությունը՝ 2016թ. հունիս ամսին «Նեոսիստեմ» ՍՊ ընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ քարթրիջների լիցքավորման հետ միասին պետք է իրականացվեն նաև քարթրիջների վերանորոգման աշխատանքներ, ուստի մեկ հատ քարթրիջի սպասարկման արժեքը սահմանվել է 4000 դրամ:

Հունիս ամսվա ընթացքում «Նեոսիստեմ» ՍՊԸ կողմից մատուցված փաստացի ծառայությունների ընդհանուր գումարային արժեքը կազմել է 612.000 դրամ, ինչը գումարային առումով համեմատական է հունվար-մայիս ամիսներին «Նեոսիստեմ» ՍՊԸ կողմից մատուցված ծառայությունների ընդհանուր գումարային արժեքներին:

| Ամիս | Քանակ, հատ | Գին, դրամ | Գումար, դրամ |
|---|---|---|---|
| Հունվար | 380 | 1580 | 600400 |
| Փետրվար | 377 | 1580 | 595660 |
| Մարտ | 420 | 1580 | 663600 |
| Ապրիլ | 329 | 1580 | 519820 |
| Մայիս | 412 | 1580 | 650960 |
| **Հունիս** | **153** | **4000** | **612000** |

Հաշվի առնելով վերը նշվածը հետագայում Ծառայությունը ձեռք է բերել նոր քարթրիջներ՝ էականորեն նվազեցնելով քարթրիջների լիցքավորման վրա ծախսվող գումարները:

**ԴԱՀԿ ծառայության առարկությունը.** 2016 թվականին Ծառայությունը իրականացված գնման ընթացակարգի շրջանակներում «Փեն բոքս» ՍՊԸ-ից գնել է 4000 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը՝ 1480 դրամ: Այնուհետև 2016 թվականին իրականացված ընթացակարգի արդյունքում /ՀՀ պետական բյուջեի հաշվին/ «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի հետ 21.04.2016թ.-ին կնքվել է ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15/3-4 ծածկագրով պայմանագիրը, որով A4 ֆորմատի թղթի մեկ տուփի գինը սահմանված է 1638 դրամ՝ քանակը 17125 տուփ: Ծառայությունը 2016 թվականի դեկտեմբեր ամսին հաշվի առնելով կատարողական վարույթների աննախադեպ աճը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2017 թվականի արտաբյուջետային միջոցների ծախսման նախահաշիվը կհաստատվի 1-ին եռամսյակի ընթացքում և հաշվի առնելով այն որ գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնարին է, որոշում է կայացվել «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ից գնել 6550 տուփ A4 ֆորմատի թուղթ, մեկ տուփը 1638 դրամ գումարով /նույն գնով որով և կնքված է եղել պայմանագիրը/: ՀՀ կառավարության 16.02.2017 թվականի թիվ 154-Ն «ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների ծախսման 2017 թվականի նախահաշիվը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված գնումների անվանացանկով սահմանված նախահաշվային գնով ԴԱՀԿ ծառայությունը նշված միջոցների հաշվին իրականացված գնման ընթացակարգի արդյունքում 17.05.2017թ. «Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ ԴԱՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2 պայմանագիրը, որով գնվել է 7500 տուփ թուղթ, մեկ տուփը 1410 դրամ գումարով: Նույն թվականին բյուջետային միջոցների հաշվին ձեռք է բերել 13552 տուփ A4 ֆորմատի թուղթ, այսինքն 3573 տուփով պակաս քան 2016 թվականի բյուջետային միջոցների հաշվին, որը և պատճառ է հանդիսացել 2017 թվականի արտաբյուջետային միջոցների հաշվին գնվող թղթի քանակի ավելացման համար:

Հաշվի առնելով կատարողական վարույթների աճի աննախադեպ տեմպերը և այն հանգամանքը, որ մինչև 2018 թվականի 1-ին եռամսյակի ավարտը Ծառայությունը ունենալու է A4

ֆորմատի թղթի կարիք, որոշվել է ձեռք բերել լրացուցիչ քանակի թուղթ: Ծառայության կողմից ձեռնարկվել և շրջանառության մեջ է դրվել վերը նշված նախահաշվում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 02.11.2017 թվականին (թիվ 1377-Ն որոշում), որով և սահմանվել է լրացուցիչ ձեռք բերվող A4 ֆորմատի թղթի քանակը և նախահաշվային գինը: Մինչ այդ Ծառայությունը սահմանված կարգով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն վերը նշված թղթի լրացուցիչ քանակ ձեռք բերելու համար հետագա ֆինանսական միջոցների հատկացման պայմանով գնման ընթացակարգ իրականացնելու վերաբերյալ ծանուցմամբ և ստացել է դրական կարծիք: Իրականացված գնման ընթացակարգի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հետ կնքվել է ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով պայմանագիրը՝ 22500 տուփ թուղթ, մեկ տուփը 1635 դրամ գումարով ձեռք բերելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը ակնհայտ է, որ երկու ընթացակարգերի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված է նախահաշվային գին և նույն բնութագիր ունեցող ապրանքը չի բաժանվել երկու չափաբաժնի, այլ իրականացվել են երկու գնման ընթացակարգեր:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Ծառայության և Ա/Ձ Մարիամ Մեհրաբյանի միջև համագործակցությունը սկսվել է 2016 թվականի ապրիլի 1-ից: Համագործակցության նախաձեռնողը եղել է Ծառայությունը հաշվի առնելով այն, որ որոշակի բարդ կատարողական վարույթներով, որոնք են երեխայի տեսակցություն, երեխայի հանձնում և անչափահասների ներգրավվածությամբ այլ՝ ոչ գույքային վարույթներ, հարկադիր կատարողը և կատարման գործընթացը կարող են որոշակի արժեքավոր աջակցություն ստանալ:

Սկզբնական պայմանագիրը կնքվել է 3 ամսով որպես փորձնական՝ նախատեսելով ծառայությունների մատուցում Երևան քաղաքի սահմաններում, և որպես վճար նախատեսվել է ամսական 200,000 ՀՀ դրամ: Եռամսյա համագործակցության ամփոփումը ակնհայտ է դարձրել, որ մատուցվող ծառայությունը պահանջված է և դրական է անդրադառնում կատարողական վարույթների ընթացքին: Հետևաբար որոշում է կայացվել շարունակել համագործակցությունը: 2016թ-ի հուլիսի 1-ին պայմանագիր կնքելիս Ա/Ձ Մարիամ Մեհրաբյանը առաջարկել է պայմանագրով նախատեսել նաև իր կողմից կատարված տրանսպորտային ծախսի փոխհատուցում: Պայմանագրի 5.4 կետով նախատեսվել է, որ Ծառայությունը՝ որպես պատվիրատու պետք է փոխհատուցի Կատարողի կատարած տրանսպորտային ծախսերը:

Հետագայում Ա/Ձ Մարիամ Մեհրաբյանի հետ փոխադարձ համաձայնությամբ որոշվել է ծառայության մատուցումը իրականացնել նաև մարզերում: Միաժամանակ նաև հաշվի առնելով, որ տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը որոշակի գործնական դժվարություններ է առաջացրել, փոխադարձ համաձայնությամբ, որոշվել է նաև կատարել հաշվարկ և այն ներառել պայմանագրի գնի մեջ: Նշվածի հիման վրա 2016 թվականի սեպտեմբերի 30–ին կնքված պայմանագրում գինը սահմանվել է 340,000 դրամ՝ առանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, ներառելով նաև մարզերի սպասարկումը: Սակայն հետագայում ամենամսյա հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում և փոխադարձ համաձայնությամբ 2017թ հունվարի 9-ին կնքված պայմանագրով գինը նվազեցվել է ՝ ամսական 300,000 դրամ առանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման:

Ըստ էության պայմանագրի շրջանակներում կատարվել և կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Բարդ միջանձնային հարաբերությունների վերլուծություն,
- Հարկադիր կատարողին որոշակի հմտությունների ուսուցանում և խորհրդատվություն,
- Երեխաների հետ անմիջական աշխատանք,
- Երեխայի վրա հոգեբանական ազդեցության վերաբերյալ հետազոտություն:

Ի տարբերություն շարժական և անշարժ գույքի գնահատման ծառայությունների, կամ փորձաքննությունների, որոնք հաշվելի են քանակով, ծառայության սույն տարբերակը հնարավոր չէ հաշվարկել կամ հաշվառել: Այդուհանդերձ ամսվա ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ Ա/Ձ Մարիամ Մեհրաբյանի կողմից Ծառայությանը ներկայացվում է ամփոփ հաշվետվություն:

Ինչ վերաբերվում է պայմանագրի գնի տատանումներին, ապա դրա նպատակը եղել է պարզել փոխշահավետ միջին վարձատրության չափը, որը համապատասխանում է կատարվող աշխատանքին:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Ծառայության կողմից 2017 թվականի գնումների պլանով նախատեսվել է թվով 2 վերելակների գնում, որոնց մեկ միավորի գինը սահմանվել է 21,000.0 հազ.դրամ գումար, այսինքն նախատեսվել է 42,000.0 հազ.դրամ գումար: 2017 թվականին իրականացված գնման ընթացակարգի արդյունքում հաղթող կազմակերպության հետ 15.05.2017 թվականին կնքվել է թիվ ԴԱՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/1 պայմանագիրը՝ 41,680.0 հազ.դրամ գումարով: Նախկին ձեռք բերված վերելակների գնի համեմատ 2017 թվականին ձեռք բերված վերելակների գնի տարբերությունը այն է, որ նախատեսված է եղել ձեռք բերել ավելի արդիական և որակյալ տեխնիկական բնութագիր ունեցող վերելակներ, մասնավորապես 2017 թվականին ձեռք բերված վերելակների համար նախատեսվել են վերելակների կանչի երկկողմանի կոճակներ (2016թ-ին ձեռք բերվածներում մեկ կողմանի) և շարժիչները նախատեսված են 1.4 մ/վ արագություն ապահովելու համար (2016թ.-ին ձեռք բերվածներում 1.0 մ/վ), հետևաբար 2,200.0 հազ. դրամով թանկ գնումը արդարացված է:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Ծառայության 2017 թվականի արտաբյուջետային միջոցների ծախսման նախահաշվով «Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում» հոդվածով նախատեսված էր 1,331.0 հազ.դրամ գումար: Գնման գործընթացի արդյունքում 1,330.0 հազ.դրամ գումարով 20.07.2017 թվականին կնքված թիվ ԴԱՀԿ-ԲԸՀ-17/01 պայմանագրի շրջանակում հաղթող կազմակերպության կողմից կազմվել և Ծառայությանն է ներկայացվել ԴԱՀԿ ապահովող ծառայության հարակից տարածքի բարեկարգման և արտաքին ջերմային ցանցի, ճաշարանի, տանիքների, դահլիճի, սանհանգույցների և Արագածոտնի մարզային բաժնի վարչական շենքի ընթացիկ նորոգման համար նախահաշիվները և թերությունների ակտեր՝ ընդհանուր 158,300.0 հազ.դրամ գումարի ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու համար: 2017 թվականի նախահաշվով նշված գումարից միայն 119,700.0 հազ.դրամ գումարի է իրականացվել մրցույթներ և կնքվել համապատասխան պայմանագրեր, մնացած 38,600.0 հազ.դրամ գումարի մրցույթն որոշվել է իրականացնել 2018 թվականի ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում /Արագածոտնի մարզային բաժնի վարչական շենք/: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Քաղաքաշինության նախարարի» 2008 թվականի 19-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն խոշորացված արժեքի հիմնական նախագծային աշխատանքների նորմատիվը շինարարության /վերակառուցման/ արժեքի նկատմամբ սահմանված է միջինը 7%-ի չափով, ուստի նախագծեր կազմելու դեպքում արժեքը կլիներ 11,081.0 հազ.դրամ գումար, սակայն հաշվի է առնվել այն, որ Ծառայությունը նախագծող կազմակերպությանը պատվիրել է կազմել թերությունների ակտեր և նախահաշիվներ, որոնց գումարը վերը նշված կարգի համաձայն հաշվարկվում է նախագծեր կազմելու գումարի միջինը 14%-ի չափով, որը կազմում է 1,551.3 հազ.դրամ գումար: Փաստացի Նախահաշիվները կազմած կազմակերպությանը վճարվել է հաշվարկված գումարի 85%-ը:

Կազմակերպված ընթացակարգի հրավերը, ինչպես նաև ընթացակարգի իրականացման արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ լիազոր մարմնի կողմից դիտողություններ չեն եղել և կնքված պայմանագրին տրվել է դրական եզրակացություն:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Ծառայության և «Աբակ» ՍՊԸ-ի միջև 14.11.2017 թվականին կնքվել է ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/Բ /ջերմային ցանց, բարեկարգում/ պայմանագիրը: Կազմակերպված գնման ընթացակարգերի հրավերով Ծառայության կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների տեխնիկական բնութագրերով հրապարակվել են կատարվող աշխատանքների ծավալաթերթը և աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկները՝ առանց կատարվող աշխատանքների նախահաշվային գումարների: Մրցույթի մասնակիցներին տեսանելի չեն եղել նախահաշիվների գումարները: Մասնակիցների կողմից գնային առաջարկները ներկայացվել են հրապարակված ծավալաթերթի միավորների գնի հաշվարկով, այսինքն հնարավոր չի եղել կիրառել աղյուսակում նշված բանաձևով նվազեցումները նախահաշվային գնի նկատմամբ:

Այսինքն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը վերաբերում է շինարարական ծրագրերի գնմանը և նույն կարգի 10-րդ կետի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները, այնինչ Ծառայության կողմից ի սկզբանե պատվիրվել են նախահաշիվներ և թերությունների ակտեր, որոնց հիման վրա ՀՀ ԱՆ Դատաիրավական ԾԻԳ ՊՀ-ի կողմից հրապարակվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու ընթացակարգը:

Կազմակերպված ընթացակարգերի հրավերների, ինչպես նաև ընթացակարգերի իրականացման արդյունքում կնքված պայմանագրերի վերաբերյալ լիազոր մարմնի կողմից դիտողություններ չեն եղել և կնքված պայմանագրերին տրվել է դրական եզրակացություն:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** Ծառայության և «Արթմաշին» ՍՊԸ-ի միջև 27.11.2017 թվականին կնքվել է ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/Տ /տանիքի վերանորոգում/ պայմանագիրը: Կազմակերպված գնման ընթացակարգերի հրավերով Ծառայության կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների տեխնիկական բնութագրերով հրապարակվել են կատարվող աշխատանքների ծավալաթերթը և աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկները՝ առանց կատարվող աշխատանքների նախահաշվային գումարների: Մրցույթի մասնակիցներին տեսանելի չեն եղել նախահաշիվների գումարները: Մասնակիցների կողմից գնային առաջարկները ներկայացվել են հրապարակված ծավալաթերթի միավորների գնի հաշվարկով, այսինքն հնարավոր չի եղել կիրառել աղյուսակում նշված բանաձևով նվազեցումները նախահաշվային գնի նկատմամբ: Այսինքն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը վերաբերում է շինարարական ծրագրերի գնմանը և նույն կարգի 10-րդ կետի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները, այնինչ Ծառայության կողմից ի սկզբանե պատվիրվել են նախահաշիվներ և թերությունների ակտեր, որոնց հիման վրա ՀՀ ԱՆ Դատաիրավական ԾԻԳ ՊՀ-ի կողմից հրապարակվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու ընթացակարգը:

Կազմակերպված ընթացակարգերի հրավերները, ինչպես նաև ընթացակարգերի իրականացման արդյունքում կնքված պայմանագրերի վերաբերյալ լիազոր մարմնի կողմից դիտողություններ չեն եղել և կնքված պայմանագրերին տրվել է դրական եզրակացություն:

**<u>ԴԱՀԿ ծառայության առարկությունը.</u>** ԴԱՀԿ ապահովող ծառայության վարչական շենքի ճաշարանի վերանորոգման աշխատանքների կատարման համար գնանշման հարցում գնման ընթացակարգով իրականացված գնման գործընթացի արդյունքում Ծառայությունը 27.11.2017 թվականին կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/ՃՎ պայմանագիրը՝ 50,000.0 հազ.դրամ գումարով: Պայմանագրով աշխատանքների ավարտը նախատեսված է եղել 20.12.2017թ.

Պայմանագիրը լիազոր մարմնի կողմից հաշվառվել է /ստացել է դրական եզրակացություն/ 06.12.2017 թվականին: Նկատի ունենալով այն փաստը, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները կապալառուի կողմից չեն կարող ավարտվել պայմանագրով նշված ժամկետում, քանդման աշխատանքներից հետո ի հայտ են եկել ծավալաթերթից դուրս լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն /օրինակ՝ արտաքին կոյուղու անցկացման և դիտահորերի մոնտաժում/ և հաշվի առնելով կապալառուի առաջարկը, ինչպես նաև հիմք ընդունելով կնքված պայմանագրի 8.5 և 8.6 կետերը 12.12.2017 թվականին կապալառուի հետ կնքվել է պայմանագրի անբաժանելի մաս կազմող լրացուցիչ թիվ 1 համաձայնագիրը, որով նախատեսվել է երկարացնել աշխատանքների կատարման վերջնաժամկետը 30 օրացուցային օրով և նախատեսել մինչև համաձայնագրով սահմանված վերջնաժամկետը կապալառուին վճարել կանխավճար՝ տրամադրված բանկային երաշխիքի հիման վրա: Համաձայնագրով նախատեսված կանխավճարի տրամադրման հիմք է հանդիսացել նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը այն է՝ «Արգելվում է պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու

հնարավորություն՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների, **կամ եթե պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի**»:

Մինչև 18.12.2017 թվականը կապալառուի կողմից իրականացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքներից 17,998.5 հազ.դրամ գումարի աշխատանք, որն ընդունվել է Ծառայության կողմից: Մնացորդ 32,001.5 դրամ գումարից 32,000.0 հազ. դրամ գումարը 22.12.2017 թվականին փոխանցվել է որպես կանխավճար՝ 20.12.2017թ-ից մինչև 19.01.2018 թվականը աշխատանքներն ավարտելու դիմաց:

Նշված թիվ 1 համաձայնագիրը ներբեռնվել է լիազոր մարմնի պաշտոնական կայք և ստացել է դրական եզրակացություն, ինչի հիման վրա էլ կատարվել է հետագա գործընթացը:

Ներկայումս 12.03.2018թ. դրությամբ դեռևս կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն ավարտվել, ինչի հիման վրա Ծառայության կողմից հաշվարկվում է պայմանագրով նախատեսված տույժեր և տուգանքներ, աշխատանքների ավարտից հետո գումարի հաշվանցումը կկատարվի կանխավճարային գումարից այն նվազեցնելու միջոցով:

Ինչ վերաբերվում է կազմակերպության կողմից ընթացակարգին գնային առաջարկը ներկայացնելուց աղյուսակում նշված բանաձևով նվազեցման գործակիցը նախահաշվային գնի նկատմամբ կիրառելուն, ապա դրա հնարավորությունը չի եղել այն պատճառով, որ մրցույթի մասնակիցներին տեսանելի են եղել միայն ծավալաթերթն ու օրացուցային գրաֆիկը և նրանց կողմից գնային առաջարկները ներկայացվել են հրապարակված ծավալաթերթի միավորների գնի հաշվարկով: Այսինքն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը վերաբերում է շինարարական ծրագրերի գնմանը և նույն կարգի 10-րդ կետի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած **նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները**, այնինչ Ծառայության կողմից ի սկզբանե պատվիրվել են նախահաշիվներ և թերությունների ակտեր, որոնց հիման վրա ՀՀ ԱՆ Դատաիրավական ԾԻԳ ՊՀ-ի կողմից հրապարակվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու ընթացակարգը:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** ԴԱՀԿ ապահովող ծառայության վարչական շենքի սանհանգույցների և դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման համար գնանշման հարցում գնման ընթացակարգով իրականացված գնման գործընթացի արդյունքում Ծառայությունը 27.11.2017 թվականին կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-17/ՍԴ պայմանագիրը՝ 19,461.7 հազ.դրամ գումարով: Պայմանագրով աշխատանքների ավարտը նախատեսված է եղել 20.12.2017թ.

Պայմանագիրը լիազոր մարմնի կողմից հաշվառվել է /ստացել է դրական եզրակացություն/ 06.12.2017 թվականին: Նկատի ունենալով այն փաստը, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները կապալառուի կողմից չեն կարող ավարտվել պայմանագրով նշված ժամկետում և հաշվի առնելով կապալառուի առաջարկը, ինչպես նաև հիմք ընդունելով կնքված պայմանագրի 8.5 և 8.6 կետերը 12.12.2017 թվականին կապալառուի հետ կնքվել է պայմանագրի անբաժանելի մաս կազմող լրացուցիչ թիվ 1 համաձայնագիրը, որով նախատեսվել է երկարացնել աշխատանքների կատարման վերջնաժամկետը 30 օրացուցային օրով և նախատեսել մինչև համաձայնագրով սահմանված վերջնաժամկետը կապալառուին վճարել կանխավճար՝ տրամադրված բանկային երաշխիքի հիման վրա: Համաձայնագրով նախատեսված կանխավճարի տրամադրման հիմք է հանդիսացել նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը այն է՝ «Արգելվում է պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների, **կամ եթե պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի**»:

Մինչև 15.12.2017 թվականը կապալառուի կողմից իրականացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքներից 7,461.7 հազ.դրամ գումարի աշխատանք, որն ընդունվել է Ծառայության կողմից: Մնացորդ 12,000.0 դրամ գումարը 22.12.2017 թվականին փոխանցվել է որպես կանխավճար՝ 20.12.2017թ-ից մինչև 19.01.2018 թվականը աշխատանքներն ավարտելու դիմաց:

Նշված թիվ 1 համաձայնագիրը ներբեռնվել է լիազոր մարմնի պաշտոնական կայք և ստացել է դրական եզրակացություն, ինչի հիման վրա էլ կատարվել է հետագա գործընթացը:

Մինչև համաձայնագրով սահմանված ժամկետը կապալառուի կողմից աշխատանքները չավարտելու դեպքում Ծառայության կողմից կկատարվի պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքի հաշվանցումը՝ կանխավճարային գումարից այն նվազեցնելու միջոցով:

Ինչ վերաբերվում է կազմակերպության կողմից ընթացակարգին գնային առաջարկը ներկայացնելուց աղյուսակում նշված բանաձևով նվազեցման գործակիցը նախահաշվային գնի նկատմամբ կիրառելուն, ապա դրա հնարավորությունը չի եղել այն պատճառով, որ մրցույթի մասնակիցներին տեսանելի են եղել միայն ծավալաթերթն ու օրացուցային գրաֆիկը և նրանց կողմից գնային առաջարկները ներկայացվել են հրապարակված ծավալաթերթի միավորների գնի հաշվարկով: Այսինքն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը վերաբերում է շինարարական ծրագրերի գնմանը և նույն կարգի 10-րդ կետի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած **նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները**, այնինչ Ծառայության կողմից ի սկզբանե պատվիրվել են նախահաշիվներ և թերությունների ակտեր, որոնց հիման վրա ՀՀ ԱՆ Դատահիրավական ԾԻԳ ՊՀ-ի կողմից հրապարակվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու ընթացակարգը:

**Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված կատարողական վարույթներ**

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Ծառայության կողմից 2016 և 2017 թթ. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության օգտին բռնագանձվել է համապատասխանաբար 2.108.438.254 դրամ և 2.768.070.838 դրամ: Նշված գումարները բռնագանձվել են ինչպես տվյալ ժամանակահատվածում հարուցված այնպես էլ մինչ այդ հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի որևէ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթներով:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** ՀՀ կառավարության 26 նոյեմբերի 2015թ. թիվ 1398-Ն որոշմամբ հաստատվել է՝

1. ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ ԿԱ ոստկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգը:

2. ՀՀ ԿԱ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության շրջանառվող էլեկտրոնային փաստաթղթերի ձևերը:

Հաստատված կարգի 7-րդ կետի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման համար կիրառվող արձանագրությունները համաձայնեցվում են Ծառայության տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և համակարգի ավտոմատացման և «Ճանապարհային ոստիկանության» ծրագրային ապահովման և տեխնիկական սպասարկման բաժինների կողմից: Նշված բաժինների կողմից համաձայնեցված արձանագրությունով սահմանվել է ստացվող էլեկտրոնային հաղորդագրությունների համար օրենքով նախատեսված պարտադիր պայմաններ, որոնց բացակայության կամ ոչ լիարժեք լինելու դեպքում համակարգը մերժում է տվյալ հաղորդագրությունը: Սույն մեխանիզմը պայմանավորված է վարչական ակտերի մեծաքանակ լինելու հանգամանքով, հնարավորություն է տալիս հնարավորինս արագ իրականացնել պարտապանների նույնականացումը և կատարողական վարույթների հարուցումը: Նվազեցնում է նաև հարկադիր կատարողների ծանրաբեռնվածությունը:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Նշված 5113 վարչական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նույնականացված է եղել 1788 վարչական ակտ 17,045.8 հազար դրամ բռնագանձման ենթակա գումարով, որը վերաբերվել է 889 ֆիզիկական անձանց: Նշված վարչական ակտերից 1153-ը՝ 11,692.3 հազար դրամ բռնագանձման ենթակա գումարով, ներկայացվել են կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ, 76-ը՝ 523.2 հազար դրամ բռնագանձման ենթակա գումարով, չեն պարունակել պարտապանի նույականացման համար անհրաժեշտ տվյալներ (անձնագիր կամ ՀԾՀ), իսկ մնացած 559 վարչական ակտերի դեպքում՝ 4,830.3 հազար դրամ բռնագանձման ենթակա գումարով, ներմուծելիս տեղի է ունեցել ծրագրային սխալ, որի արդյունքում նշված ակտերը չեն ընդունվել կատարման: Տվյալ խնդիրը արձանագրվել է հիմնականում այն վարչական ակտերով, որոնք ստացվել են մինչև 2017 թվականի մարտ ամիսը, որից հետո արձանագրված ծրագրային բացը հայտնաբերվել և վերացվել է: Տրվել են ծրագրային նոր կարգավորումներ, որի արդյունքում խնդիրը հետագայում բացառվել է:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** 2016 և 2017թթ. ընթացքում հարուցվել են բազմաթիվ կատարողական վարույթներ, որոնք որոշ դեպքերում հարուցվել են նույն պարտապանների նկատմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նշված անձանց վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներով հարկադիր կատարողների կողմից ձեռնարկվել են կատարողական գործողություններ՝ կիրառվել են արգելանքներ, հարուցված կատարողական վարույթներով պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Նշված կատարողական վարույթները կատարողական գործողությունների արդյունքում ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի տարբեր կետերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի դեպքում չի հայտնաբերվել գույք կամ դրամական միջոց, որի վրա կարելի է բռնագանձում տարածել, մյուս դեպքում անհնար է եղել պարզել պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը, որոնց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Իսկ տրանսպորտային միջոցները, որոնցով կատարվել են իրավախախտումները գրեթե բոլոր դեպքերում հաշվառված են այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անվամբ: Նշված դեպքերում արգելանքի կիրառում տվյալ տրանսպորտային միջոցի վրա օրենքով չի նախատեսվում:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը, ուստի կատարողական վարույթ հարուցվում և հարկադիր կատարման միջոցներ են կիրառվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, ովքեր կատարողական վարույթով հանդիսանում են պարտապան: Իրականացվող կատարողական գործողությունները ամբողջապես իրականացվում են տվյալ պարտապանի գույքի և դրամական միջոցների հայտնաբերման, հետագայում իրացման ուղղությամբ:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** 2016 և 2017թթ. հարուցված կատարողական վարույթներով պարտապանները ունեցել են եկամուտ (աշխատավարձ), սակայն նրանց նկատմամբ հարուցված կատարողական վարույթներն ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի համապատասխան կետերով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նշված պարտապանների նկատմամբ հարուցված կատարողական վարույթների զգալի մասը կարճվել են հենց պարտապանների բանկային հաշիվներից կատարված բռնագանձումների արդյունքում: Ավարտված կատարողական վարույթների զգալի մասում առկա են առևտրային բանկերի կողմից ուղարկված պատասխան գրություններ, որտեղ երևում է, որ արգելանք դնելու օրվա դրությամբ տվյալ կատարողական վարույթով պարտապանը չի ունեցել դրամական միջոցներ, որի արդյունքում կատարողական վարույթները ավարտվել են: Նշված ցանկում կան կատարողական վարույթներ, որոնցով արգելադրվել է պահանջվող գումարն ամբողջությամբ կամ մասնակի, սակայն բռնագանձում չի

իրականացվել ելնելով հարկադիր կատարողի գերծանրաբեռնվածությունից, սակայն արգելանքները պահպանված են: Հարկ է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ հարկադիր կատարողը կարողանում է պարզել պարտապանի աշխատելու փաստը, որն իր հերթին խոչընդոտ է հանդիսանում հարկադիր կատարողի գործողություններին, ինչը պայմանավորված է ներկայիս գործիքակազմով: Միաժամանակ հայտնում ենք, որ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ նախկինում արգելադրված, սակայն չբռնագանձված գումարները սեղմ ժամկետում բռնագանձելու ուղղությամբ, ինչպես նաև տարվում են աշխատանքներ նշված խնդրին ծրագրային լուծում տալու համար, հետագայում բարձրացված հարցը բացառելու համար:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Սույն հարցի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պարտապանների անվամբ հաշվառված ավտոմեքենաների վրա արգելանքները կիրառված են և բոլոր այն դեպքերում, երբ նշված ավտոմեքենաները չեն հայտնաբերվել, դրանց նկատմամբ հարկադիր կատարողի որոշմամբ հայտարարվել է հետախուզում, որի մեկ օրինակը ուղարկվել է նաև ՃՈ: Նշված մեքենաները հայտնաբերվելու դեպքում բռնագանձում կտարածվի օրենքով սահմանված կարգով:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Սույն հարցի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2016 և 2017 թթ. հարուցված կատարողական վարույթներում առկա են եղել կատարողական վարույթներ, որոնցով հնարավոր չի եղել նույնականացնել պարտապանի տվյալները, որով պայմանավորված հնարավոր չի եղել նաև կիրառել արգելանքներ: Ծառայության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ նշված կատարողական վարույթներով պարտապանների տվյալների նույնականացումը իրականացնելու ուղղությամբ, ինչպես նաև տարվում են աշխատանքներ նշված խնդրին ծրագրային լուծում տալու համար, հետագայում բարձրացված հարցը բացառելու համար: Ինչ վերաբերում է այն կատարողական վարույթներին, որոնցով հնարավոր է եղել նույնականացնել պարտապանին, սակայն արգելանքներ չեն կիրառվել, ապա հարկ է նշել, որ նշված կատարողական վարույթների գերակշիռ մասում պարտապանների վերաբերյալ նախկինում հարուցված են եղել բազմաթիվ կատարողական վարույթներ, որոնցով արգելանքները ամբողջությամբ կիրառված են, որով նվազագույնի է հասցվում պարտապանների կողմից պարտավորության կատարումից խուսափելու հնարավորությունը:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Բարձրացված հարցի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն կատարողական վարույթները, որոնցով ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայություն արգելանքներ չեն կիրառվել, մեծամասամբ եղել են մինչև 50.000 դրամ բռնագանձման ենթակա գումարով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միևնույն պարտապանի նկատմամբ հարուցված կատարողական վարույթները, որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կարող էր մեծ լինել 50.000 դրամից, հարուցվել են տարբեր ժամանակներում, ուստի կատարողական վարույթների միավորման հարցը մնացել է բաց: Խնդիրը մեծամասամբ վերաբերվում է վարչական ակտի հիմքով հարուցված կատարողական վարույթներին, որը պայմանավորված է եղել ծրագրային խնդրի հետ: Ծառայությունը ձեռնարկել է համապատասխան միջոցներ արձանագրված խնդիրը լուծելու և հետագայում բացառելու ուղղությամբ:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Կատարողական վարույթներով կիրառված արգելանքները վերացնելու հետ կապված խնդրի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արգելանքի վերացումները մեծամասամբ պայմանավորված են պարտապանների աշխատավարձի կամ կենսաթոշակի այդ թվում նաև հաշմանդամության կենսաթոշակի, հաշվեհամարը ազատելու հանգամանքով: Իսկ որոշ դեպքերում արգելանքները վերացվել են հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանի անվամբ արգելադրված այլ գույքերը ավելի քան բավարար են պարտավորությունները կատարելու համար, որը կարգավորվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով: Ինչ վերաբերում է այն կատարողական վարույթներին, որտեղ արգելանքները վերացվել են ամբողջությամբ, ապա դա պայմանավորված է տվյալ պարտապանի վերաբերյալ հարուցված կատարողական վարույթների մեծ քանակով: Դրանցով մեկ կատարողական վարույթով կիրառվել են միասնական արգելանքներ պարտապանների աշխատավարձի կամ կենսաթոշակի նկատմամբ:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** 2016 և 2017թթ. ընթացքում հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2.1 կետերի հիմքով ավարտված կատարողական վարույթների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նշված կատարողական վարույթներով հարկադիր կատարողների կողմից ձեռնարկվել են կատարողական գործողություններ՝ կիրառվել են արգելանքներ, պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Նշված կատարողական վարույթները կատարողական գործողությունների արդյունքում ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2.1 կետերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի դեպքում չի հայտնաբերվել գույք կամ դրամական միջոց, որի վրա կարելի է բռնագանձում տարածել, մյուս դեպքում անհնար է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, որոնց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Ավարտված կատարողական վարույթների զգալի մասում առկա են առևտրային բանկերի կողմից ուղարկված պատասխան գրություններ, որտեղ երևում է, որ արգելանք դնելու օրվա դրությամբ տվյալ կատարողական վարույթով պարտապանը չի ունեցել դրամական միջոցներ, որի արդյունքում կատարողական վարույթները ավարտվել են: Հարկ է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ հարկադիր կատարողը կարողանում է պարզել պարտապանի աշխատելու փաստը, որը պայմանավորված է ներկայիս գործիքակազմով: Ներկայումս Ծառայությունը միջոցներ է ձեռնարկում ՀՀ ԿԱ պետական եկամուտներ կոմիտեից պարտապանների վերաբերյալ ստացվող տեղեկատվության շրջանակում աշխատելու փաստի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ուղղությամբ:

Այնուամենայնիվ հարկ է նշել նաև, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ Պարտապանի աշխատավարձի և այլ եկամուտների վրա տարածվում է բռնագանձում, եթե՝ պարտապանը չունի գույք, կամ եղած գույքը բավարար չէ բռնագանձվող գումարը լրիվ մարելու համար…:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Սույն հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ բարձրացված հարցը մեծամասամբ վերաբերվում է էլեկտրոնային կապուղու միջոցով ստացվող վարչական ակտերին: Խնդիրը պայմանավորված է Ծառայության անձնակազմի գերծանրաբեռնվածությամբ, հաշվի առնելով վարչական ակտերի մեծաքանակ մուտքը, որը օրեցօր ավելանում է: Օրինակ՝ միայն 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև 12-ն ընկած ժամանակահատվածում Ծառայություն են մուտք եղել 102.000 վարչական ակտ:

**Պետական բյուջեի օգտին բռնագանձման կատարողական վարույթներ**

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Թիվ 01772859 կատարողական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով՝ այն է անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման սահմանափակումները՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝ իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն կատարողական վարույթը հարուցվել է անբողոքարկելի վարչական ակտի հիմքով և այն հանգամանքը, որ Ընկերության հաշվեկշռում առկա ակտիվների հանրագումարը չի բավարարում կատարողական վարույթի պահանջի ամբողջական կատարումն ապահովելու համար, ուստի հարկադիր կատարողը կարճել է կատարողական վարույթը վերը նշված հոդվածի հիմքով, ինչը և պարտավոր էր անել:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Թիվ 00510796 կատարողական վարույթի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն հարուցվել է անբողոքարկելի դարձած վարչական ակտի

հիմքով պարտապանից 40.853.991 դրամ բռնագանձելու վերաբերյալ: Կատարողական գործողությունների ընթացքում արգելանքներ են դրվել պարտապանին պատկանող մի շարք գույքերի և դրամական միջոցների վրա: Պարտապանի վերաբերյալ 17.03.2015թ. Ծառայություն է մուտք եղել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի գրությունը՝ սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին գործ համար ՍԴ3/0003/04/15: Նշված հիմքով սույն կատարողական վարույթը կասեցվել է: Թիվ ՍԴ3/0003/04/15 սնանկության գործով 01.06.2015թ. կայացվել է վճիռ՝ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2016թ. որոշմամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության: Ներկայումս տվյալ գործի քննությունը շարունակվում է: Կատարողական վարույթի կասեցման հիմքը վերացված չէ, հետևաբար կատարողական վարույթը չի վերսկսվել:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Թիվ 02101326 կատարողական վարույթը հարուցվել է վարչական ակտի հիմքով՝ Ընկերությունից 21.120.243 դրամ բռնագանձելու վերաբերյալ: Կատարողական վարույթը հարուցվել է 28.07.2016թ.: Հարկադիր կատարողի կողմից որոշում է կայացվել պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին: Տարբեր ժամանակներում այցելություն է կատարվել պարտապանի հասցե, որի վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: 16.09.2016թ. արձանագրություն է կազմվել պարտապան Ընկերության դրմարկղային գիրքը ստուգելու և արգելանք կիրառելու մասին: Ըստ կատարված ստուգման դրամարկղում գումար չի հայտնաբերվել: Նույն օրը Ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր, որևէ գույք չի հայտարարագրվել: 26.09.2016թ. սույն կատարողական վարույթը կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ 42-րդ 1-ին մասի 13-րդ կետի հիմքով:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Թիվ 00866585 կատարողական վարույթը հարուցվել է անբողոքարկելի վարչական ակտի հիմքով՝ պարտապանից 14.623.598 դրամ բռնագանձելու վերաբերյալ: Կատարողական վարույթը հարուցվել է 05.03.2015թ.: Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապանին պատկանող մեկ անվանում ավտոմեքենայի վրա, ինչպես նաև «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ում առկա դրամական միջոցների վրա: Արգելադրված դրամական միջոցների մի մասով կարճվել է Ծառայությունում պարտապանի վերաբերյալ նախկինում հարուցված մեկ այլ կատարողական վարույթ, իսկ մնացած 3.662.014 դրամը բաշխվել է սույն կատարողական վարույթով: Պարտապանին պատկանող այլ գույք և դրամական միջոցներ չի հայտնաբերվել:

Հետախուզում է հայտարարվել Ընկերության տնօրենի նկատմամբ, որի վերաբերյալ ոստիկանությունում կազմվել է հետախուզական գործ: 17.03.2016թ. կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: 27.02.2017թ. Ծառայություն է մուտք եղել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի գրությունը՝ պարտապան ընկերությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ: Նշված հիմքով կատարողական վարույթը վերսկսվել է և կարճվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով:

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.</u>** Թիվ 01/11-3488/15 կատարողական վարույթը 26.06.2015թ. հարուցվել է անբողոքարկելի դարձած վարչական ակտի հիմքով՝ պարտապանից 11.351.334 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ: Կատարողական գործողությունների ընթացքում Ընկերության տնօրենից վերցվել է հայտարարագիր: 15.07.2015թ. հարկադիր կատարողի կողմից գույքագրվել է արգելադրված ավտոմեքենաներից ութը՝ բոլորը վթարված և անսարք վիճակում: 02.03.2016թ. հետախուզում է հայտարարվել պարտապան Ընկերության տնօրենի նկատմամբ: Հաշվի առնելով, որ տնօրենի բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում պարտապանի գույքի նկատմամբ հետախուզման աշխատանքները ամբողջական ծավալով կատարելուն և նկատի ունենալով վարչական ակտի հարկադիր կատարման սահմանափակումը հարկադիր կատարողը 25.04.2016թ. որոշում է կայացրել կատարողական վարույթն ավարտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով: 07.02.2018թ. Ծառայություն է մուտք եղել թիվ ԵԱՔԴ/0185/04/16 վճիռը, համաձայն որի

պարտապան ընկերությունը ճանաչվել է սնանկ: Նշված հիմքով կատարողական վարույթը վերսկսվել է և կարճվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով:

**ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.** Թիվ 01853808 կատարողական վարույթը հարուցվել է 26.04.2016թ. անբողոքարկելի դարձած վարչական ակտի հիմքով՝ պարտապան ընկերությունից 10.053.557 դրամ բռնագանձելու վերաբերյալ: Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է հայտարարագիր, հարկադիր կատարողի կողմից կազմվել է արձանագրություն պարտապանի դրամարկղային գրքի զննության վերաբերյալ, որտեղ գումար չի հայնաբերվել: Դրամարկղային գրքի 39-րդ թերթի 01.12.2015թ. գրառմամբ ընկերությունը կատարել է «փոխառության մասնակի մարում»: Ընկերությանը պատկանող գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել: Կատարողական վարույթը ավարտվել է:

**ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.** Ծառայության կողմից 2018 թվականի աշխատանքային ծրագրի շրջանակում նախատեսված է ի թիվս այլ գերատեսչությունների, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ էլեկտրոնային փաստաթղթա-շրջանառության ձևանմուշների և ծավալի փոփոխություն:

**Երևանի քաղաքապետարանի պահանջով հարուցված կատարողական վարույթներ**

**ԴԱՀԿ ծառայության բացատրությունը.** Վերը նշվածի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ընկերությունից հօգուտ Երևանի քաղաքապետարանի գումար բռնագանձելու վերաբերյալ հարուցված կատարողական վարույթը 28.12.2017թ. կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Մյուս ընկերության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի օգտին հարուցված թվով հինգ կատարողական վարույթները նույնպես կարճվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Երրորդ ընկերության վերաբերյալ հարուցված կատարողական վարույթով օրենքով սահմանված կարգով կիրառվել են արգելանքներ, սակայն ըստ ՀՀ գործող առևտրային բանկերի պատասխան հաղորդագրությունների՝ գումար չի արգելադրվել:

**Հարկադիր էլեկտրոնային աճուրդների միջոցով պետական բյուջեի օգտին բռնագանձված գումարներ**

**ԴԱՀԿ ծառայության առարկությունները.** Արձանագրված փաստը, որ լոտերը ոչ միշտ են տեսանելի մասնակիցների համար և աճուրդները չեն կայանում մասնակիցների բացակայության պատճառով, ինչի արդյունքում աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը տասնապատիկ անգամ նվազում է, իրականությանը չի համապատասխանում:

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.2 հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Արձանագրված թիվ 268294 և 269098 լոտերը օրենքով սահմանված կարգով համապատասխանաբար 07.08.2017թ.-ին և 21.08.2017թ.-ին հանվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդից, քանի որ կատարողական վարույթները կասեցվել են:

Վերոնշյալ տեղեկատվությունը արձանագրության մեջ նշված ժամանակահատվածում հնարավոր էր դիտել https://harkadir.ajurd.am կայքի «Աճուրդից հանված» պատուհանում:

Արձանագրության մեջ նշված ժամանակահատվածում 267465, 268619, 268489, 268358, 268466, 267941, 268223 լոտերի համարները եթե մուտքագրվեր https://harkadir.ajurd.am կայքի համապատասխան փնտրման պատուհանում, անպայման կդիտվեր ընթացիկ (ակտիվ) վիճակում:

Երբ կայքում կատարվում են գործողություններ՝ նոր լոտերի ստեղծում, վաճառք, կասեցում, այդ դեպքում լոտացուցակի հաջորդականությունը փոխվում է և լոտը կարող է տեղափոխվել այլ էջ:

Ինչ վերաբերվում է արձանագրված թիվ 01/11-1152/13, թիվ 00221915, թիվ 01/10-431/14, թիվ 01/11-1895/12, թիվ 05-4261/14, թիվ 09-504/13 և թիվ 00879761 կատարողական վարույթներով հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառված գույքերին, ապա դրանք ներկայացվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի հարկադիր կատարողի որոշմամբ՝ հիմք ընդունելով համապատասխան փորձագիտական եզրակացությունը (գնահատման):

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հարկադիր աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լոտի գնի 75%-ի չափով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով:

https://harkadir.ajurd.am կայքն աշխատում է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և միշտ հասանելի է բոլորին՝ ապահովելով հրապարակայնությունը, ուստի գնային առաջարկներ կարող են կատարել բոլոր գրանցված մասնակիցները: Հարկադիր էլեկտրոնային աճուրդին կարելի է մասնակցել գրանցվելով ծառայության բաժիններում և էլեկտրոնային եղանակով:

**Այսպիսով հարկադիր էլեկտրոնային աճուրդի լոտի գնագոյացումը հիմնվում է փորձագետի եզրակացության վրա, կրկնաճուրդների հետևանքով գնի իջեցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով, գործընթացը ամբողջովին ավտոմատացված է, հետևաբար որևէ միջամտություն հարկադիր կատարողի կողմից բացառվում է:**

**ԴԱՀԿ ծառայության արտաբյուջետային դեպոզիտային հաշիվների մնացորդներ**

**<u>ԴԱՀԿ ծառայության բացատրությունները.</u>** Ծառայության դեպոզիտ հաշիվների գումարների չբաշխված մնացորդները գոյացնում են հետևյալ պատճառներով.

1. Կատարողական վարույթների կասեցման հետևանքով (կատարողական վարույթներով պարտապանների սնանկության վերաբերյալ հայցի ընդունում դատարանների կողմից, պարտապանի և պահանջատիրոջ հաշտության համաձայնության առկայության դեպքում դրանց ուղարկումը դատարան օրենքով սահմանված կարգով հաստատման և այլն):
2. Հայցի ապահովման վարույթներով Ծառայության դեպոզիտ հաշվին պարտապանների կողմից վճարված գումարները չեն կարող բաշխվել, մինչև դատարանի կողմից ըստ էության վճիռների օրինական ուժի մեջ մտնելը:
3. Ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցված գումարները հնարավոր չէ նույնականացնել (որոշ դեպքերում հնարավոր չի լինում նույնականացնել պարտապաններին, որոշ դեպքերում հնարավոր չի լինում նույնականացնել պահանջատերերին):
4. Պարտապանները կամ պահանջատերերը չեն ներկայացնում բանկային հաշվի համար և/կամ չեն նարկայանում Ծառայություն գումարը ստանալու համար, կամ հրաժարվում են իրենց հասանելիք գումարները ստանալուց, մասնավորապես՝ թիվ 03407269 կատարողական վարույթով պահանջատերերը հրաժարվում են ստանալ 41.502.000 դրամը, որը բռնագանձվել է նույն վարույթով պարտապանից: Թիվ 0165496 կատարողական վարույթով պահանջատերերը հրաժարվում են ստանալ 26.791.000 դրամը, որը բռնագանձվել է նույն վարույթով պարտապանից: Պահանջատերերը հրաժարվում են ստանալ 60.292.000 դրամը, որը բռնագանձվել է թիվ 01/08-266/06 կատարողական վարույթով պարտապանից: Պահանջատերը հրաժարվում է ստանալ 37.363.733 դրամը, որը բռնագանձվել է թիվ 01/08-29/07 կատարողական վարույթով պարտապանից: Այսինքն՝ միայն նշված 4 կատարողական վարույթներով Ծառայության

դեպոզիտ հաշվին գտնվող 165.948.733 դրամ գումարը մնում է դեպոզիտ հաշվին պահանջատերերի հրաժարվելու հիմքով):

Վերահսկիչ պալատի հանձնաժողովի կողմից նշված հայտնի պահանջատերերին (այդ թվում պետական բյուջեի օգտին) Ծառայության դեպոզիտ հաշվին մուտքագրված գումարները հանրավոր չի եղել բաշխել, քանի որ այդ կատարողական վարույթներով հնարավոր չի եղել նույնականացնել պարտապաններին, այսինքն գումար փոխանցողը հայտնի է, պահանջատերը հայտնի է, սակայն հատնի չի թե ում պարտավորության կատարման նպատակով է իրականցվել վճարումը:

Վերը նշված խնդրի լուծման նպատակով ներկայումս Ծառայությունում ներդրվել է աշխատանքային կարգ, համաձայն որի յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին Ծառայության ֆինանսական բաժնի կողմից բաժինների համակարգողներին է ներկայացվում տեղեկատվություն չբաշխված գումարների վերաբերյալ:

## 2.3 ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/1 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-նե-րին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման արդյունավետության և օրինականության որոշումը: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-նե-րին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման օրինականության և արդյունավետության գործընթաց: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ներ: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը:<br><br>Դիտարկման փուլում իրականացվել են ստուգման օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն:<br><br>Ստուգման ընթացքում կիրառվել են տարբեր տվյալների քանակական և որակական համադրման/համեմատման մեթոդներ, կատարվել են հարցումներ, իրականացվել են լուսանկարահանումներ (որպես փաստագրական ապա- |

ցույցների ձեռք բերման եղանակ), կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել, վերլուծվել են դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## I. *«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ*

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Ազգային պարկ) ստեղծվել է ՀՀ կառավարության 30.05.2002թ.-ի ««Սևան» Ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 927-Ն որոշմամբ:

**Մինչ օրս չկա նոր կառավարման պլան**

ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության 2007թ.-ի հունվարի 18-ի N 205-Ն որոշմամբ հաստատվել է Ազգային պարկի 2007-2011թթ. կառավարման պլանը, որից հետո մինչ օրս չկա նոր կառավարման պլան: «Հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում սահմանվում է, որ կառավարման պլանը տվյալ տարածքի զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթ է, ուստի դրա առկայությունը կարևոր է ազգային պարկի գործունեության նպատակներն իրականացնելու համար:

### *Եկամուտների և ծախսերի վերաբերյալ*

**2016, 2017 թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացումներ**

«Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրով (այսուհետ՝

ծրագիր) նախատեսվել է 269,424.0 հազ. դրամ, որի իրականացման համար Նախարարության և Ազգային պարկի միջև կնքվել է դրամաշնորհի պայմանագիր:

«Հայաստանի Հանրապետության 2017թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 249,355.6 հազ. դրամ, որի իրականացման համար Նախարարության և Ազգային պարկի միջև կնքվել է դրամաշնորհի պայմանագիր:

**Ազգային պարկի 2016, 2017 թթ.-ի եկամուտներ և ծախսեր**

Ազգային պարկի 2016թ.-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով եկամուտներ է նախատեսվել 443,113.7 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներ (դրամաշնորհ)՝ 261,045.9 հազ. դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 182,067.8 հազ. դրամ: Ծախսեր է նախատեսվել 450,438.0 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներից՝ 261,045.9 հազ. դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 189,392.1 հազ. դրամ:

Ազգային պարկի 2016թ.-ի փաստացի եկամուտները կազմել են 421,167.8 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներ՝ 261,045.9 հազ. դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 160,121.9 հազ. դրամ: Փաստացի ծախսերը ցույց են տրվել 453,214.9 հազ. դրամ:

2017թ.-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով եկամուտներ է նախատեսվել 536,965.6 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներ՝ 249,355.6 հազ. դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 287,610.0 հազ. դրամ: Ծախսեր է նախատեսվել 524,752.6 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներից՝ 249,355.6 հազ. դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 275,397.0 հազ. դրամ:

2017թ.-ի փաստացի եկամուտները կազմել են 520,273.3 հազ. դրամ, որից պետության կողմից տրվող հատկացումներ՝ 333,230.6 հազ. դրամ (այդ թվում՝ 83,875.0 հազ. դրամը պահուստային ֆոնդից՝ անտառտնկարկների մաքրման համար), ձեռնարկատիրական գործունեությունից՝ 187,042.7 հազ. դրամ: Փաստացի ծախսերը ցույց են տրվել 524,369.5 հազ. դրամ:

2016թ.-ին 261,045.9 հազ. դրամ դրամաշնորհից նախատեսվել և վճարվել է 234,838.5 հազ. դրամ (90%) աշխատավարձ՝ միջինը 170 հաստիքային միավորի համար: Միաժամանակ, ձեռնարկատիրական գործունեությունից աշխատավարձ է նախատեսվել 61,168.5 հազ. դրամ և փաստացի վճարվել է 67,402.3 հազ. դրամ:

2017թ.-ի բյուջետային հայտով 179 հաստիքային միավորի համար նախատեսվել է 243,070.5 հազ. դրամ աշխատավարձի ֆոնդ, սակայն դրամաշնորհի պայմանագրով, նախահաշվի և հաստիքացուցակի փոփոխություններով նախատեսվել է 193 հաստիքային միավոր՝ 249,355.6 հազ. դրամ աշխատավարձ կամ բյուջետային հայտի նկատմամբ 6,285.1 հազ. դրամ ավելի է նախատեսվել՝ 14 հաստիքային միավորի համար: Փաստացի ծախսը կազմել է 235,713.5 հազ. դրամ կամ 2017թ.-ի դրամաշնորհից չի ծախսվել 13,642.1 հազ. դրամ: Միաժամանակ, ձեռնարկատիրական գործունեությունից աշխատավարձ է նախատեսվել 97,860.2 հազ. դրամ և փաստացի վճարվել է 72,783.4 հազ. դրամ:

**Ազգային պարկը չունի անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաներ և աշխատավարձերի հաշվարկման չափորոշիչներ**

Ազգային պարկի կանոնադրության 27-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն Ազգային պարկի տնօրենը խորհրդի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տեղամասերի պահաբաժինների պահպանությունն իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաները, կազմակերպության հսկողական գործառույթներ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի հաշվարկման և խրախուսման չափորոշիչները: Սակայն նշված ենթակետը չի կիրառվել և փաստորեն Ազգային պարկը չի ունեցել տեղամասերի պահաբաժինների պահպանությունն իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաներ և աշխատավարձերի հաշվարկման չափորոշիչներ:

## *Գիտական և անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ*

2016 և 2017թթ. իրականացվել է 43,700.0 հազ. դրամի գիտական և անտառտնկման աշխատանքներ, որից 16,700.0 հազ. դրամը՝ «Շրջակա

**Մրցույթների վերաբերյալ**

միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ», 9,000.0 հազ. դրամը՝ «Բիոպրոեկտ», 15,000.0 հազ. դրամը՝ «Նաիրի-Նունե» ՍՊ Ընկերությունների և 3,000.0 հազ. դրամը՝ «Կարեն Աղաբաբյան Էրնեստի» ԱՁ-ի կողմից: Բոլոր դեպքերում մրցույթներն իրականացվել են պարզեցված ընթացակարգով, մասնակցել են միայն վերը նշված կազմակերպությունները և անհատ ձեռնակատերը, բոլոր մրցույթներին մասնակցել է մեկական կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որն էլ հանդիսացել է մրցույթի հաղթող:

## *«Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊ Ընկերության վերաբերյալ*

**Բացակայում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն-ները, իսկ ծառայություն մատուցող ընկերությունը անմիջականորեն փոխկապակցված է Ազգային պարկի տնօրենի հետ**

2016թ.-ին ընկերության հետ կնքվել են 16,700.0 հազ. դրամի թվով 3 պայմանագրեր («Անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարանի հիմնում և դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրության ծառայություններ», «Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման ծառայություններ» և «Պատրաստի միկրոբիոլոգիական միջավայրերի ձեռք բերման ծառայություններ»), որից 15,700.0 հազ. դրամը բյուջետային միջոցներից, իսկ 1,000.0 հազ. դրամը՝ ձեռնարկատիրական գործունեությունից:

Ընկերությունը հիմնադրվել է 2009թ.-ին Ազգային պարկի ներկայիս տնօրենի կողմից: Մրցույթներն իրականացնելու ժամանակ վերջինս հանդիսացել է գիտության գծով տնօրենի տեղակալ, իսկ Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման ծառայությունների ձեռք բերման մրցույթի ժամանակ հանդիսացել է նաև գնահատող հանձնաժողովի նախագահ: Հարկ է նաև նշել, որ

15.06.2010թ.-ից ընկերության 100% բաժնեմասը փոխանցվել է Ազգային պարկի տնօրենի հետ անմիջական փոխկապակցվածություն ունեցող մեկ այլ անձի: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրան բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա հայտնում է ինքնաբացարկ՝ բացառելով իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին, իսկ տվյալ ընթացակարգում նրան փոխարինում է հանձնաժողովի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն: ի ներկայացրած նյութերում բացակայում են շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները: «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ.-ի թիվ 168 որոշման 18-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովի անդամը կամ հրավիրված փորձագետը (մասնագետը) չեն կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե վերջիններիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) և (կամ) այդ անձանց կողմից հիմնադրած կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունները կարող են հանդիսանալ գնումների տվյալ գործընթացի հնարավոր մասնակից: Այդ կապակցությամբ հանձնաժողովի անդամը և հրավիրված փորձագետը (մասնագետը) ստորագրում են համապատասխան հայտարարություն: Ազգային պարկի տնօրենը երեք դեպքերով էլ հանդես է եկել նաև որպես ծառայությունն ընդունող, իսկ ծառայությունը հանձնողը եղել է «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊ Ընկերության տնօրենը, ով միաժամանակ հանդիսացել է նաև Ազգային պարկի տնտեսական բաժնի պետ: Պայմանագրերից 2-ը կնքվել են 2016թ.-ի մայիսի 2-ին, մեկը՝ հուլիսի 25-ին: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ) ընկերությունը պայմանագրերի կատարման ժամանակահատվածում ունեցել է 4 աշխատակից՝ ներառյալ տնօրենը:

***«Անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարանի հիմնում և դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրության ծառայություններ»***

Պայմանագրի տեխնիկական բնութագրի գնման ժամանակացույցի համաձայն 02.04.2016-10.12.2016թթ. Ազգային պարկի Մարտունի մասնաճյուղում պետք է իրականացվեր՝ 6,020.0 հազ. դրամ արժեքով, նոր տնկարանի հիմնում:

Ըստ «Արմենպրես» լրատվական գործակալության 22.05.2014թ.-ի հրապարակման (հղում՝ https://armenpress.am/arm/news/762824/) Ազգային պարկի Մարտունու մասնաճյուղում 2014թ.-ին արդեն իսկ հիմնվել էր 20,000 քմ անտառտնկարան նույն վայրում, որտեղ իբրև հիմնում էր իրականացվել 2016թ.-ին: Այդուհանդերձ, արձանագրվել է, որ նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի՝ տեխնիկական բնութագրում նկարագրվածից քիչ ծավալներով, մասնավորապես՝ նախատեսված 25,000 քմ տարածքի փոխարեն հիմնվել և աշխատանքներ են կատարվել առավելագույնը 12,500 քմ մակերեսի վրա, այդ թվում որպես մշակելի տարածք 8,000 քմ, իսկ ծառատունկ իրականացվել է 4000 քմ վրա: Այսպիսով, ընդհանուր աշխատանքները կատարվել են ցանկապատման մասով՝ 70%-ի չափով, հողերի նախապատրաստման և ծառատնկման մասով՝ 30%-ի չափով, արդյունքում փաստացի չի կատարվել է 3,900.0 հազ. դրամի աշխատանքներ:

Ի սկզբանե, ըստ ներկայացված նախահաշվի նախատեսված է եղել 600մ ցանկապատում (ցանց), և զուտ մաթեմատիկորեն առավելագույն մակերեսը, որը հնարավոր է տեղավորել 600մ պարագծի մեջ 22,500 քմ-ն է, այսինքն 2,500 քմ-ի համար նախատեսված է եղել ավելի աշխատանքներ (25,000-22,500 = 2,500):

**Լուսանկար 1**. 2014թ.-ին Մարտունի մասնաճյուղում հիմնված տնկարան (աղբյուր՝ «Արմենպրես» լրատվական գործակալության կայքում հրապարակված https://armenpress.am/arm/news/762824/ հոդված)

**Լուսանկար 2.** 2016թ.-ին Մարտունի մասնաճյուղում հիմնված տնկարան (աղբյուր՝ 2017թ. դեկտեմբեր ամսին ստուգում իրականացնող հանձնաժողովի անդամների կողմից կատարված նկարահանում)

## *«Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման ծառայություններ»*

**4 բետոնե և 2 հողաշեն ավազանների փոխարեն փաստացի առկա է ընդամենը 1 հողաշեն ավազան**

«Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման ծառայությունների գնման» պայմանագրի տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի համաձայն 25.07.2016-15.12.2016թթ. պետք է իրականացվեր 9,680.0 հազ. դրամ արժեքով, հետևյալ ծավալի աշխատանքները՝

- Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների մայրական կազմի ձեռք բերում
- Մայրական կազմից ձկնկիթի ստացում
- Ձկնկիթի ինկուբացում
- Թրթուրների խնամք համապատասխան պայմանների ստեղծում
- Արհեստական պայմաններում կերակրման համար համապատասխան կերերի մշակում և ստացում
- Մանրաձկան աճեցում, մանրաձկան հետագա զարգացման համար պայմանների ստեղծում
- Կերակրման չափաքանակների և գործակիցների մշակում, արհեստական վերարտադրության պայմաններում դրանց աճման և զարգացման տեմպերի գրանցում տարբեր պայմաններում:

Վերոնշյալ աշխատանքները պետք է իրականացվեին Ազգային պարկի Մարտունու մասնաճյուղի մանրաձկան արտադրամասում, սակայն Ազգային պարկը փաստացի իր հաշվեկշռում մանրաձկան արտադրամաս առհասարակ չունի: Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն վերոնշյալ գիտական աշխատանքները պետք է իրականացվեին Կարեն Աղաբաբյանի և Էդուարդ Յավրույանի կողմից, սակայն հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն վերը նշված անձինք երբևէ չեն հանդիսացել ընկերության աշխատակիցներ:

Ըստ տեխնիկական բնութագրի նախատեսված աշխատանքների մեծ մասը ենթադրում է կատարված աշխատանքի քանակական ցուցանիշ, սակայն հանձնման-ընդունման արձանագրությունում առկա չէ որևէ քանակական

ցուցանիշ՝ օրինակ, թե որքան ձկնկիթ է ինկուբացվել կամ որքան կեր է ստացվել: Ըստ նախահաշվի նախատեսված է եղել նաև երկու հողաշեն ավազանի նախապատրաստում (յուրաքանչյուրը 200.0 հազ. դրամ) և 4 բետոնե ավազանների վերակառուցում (ընդհանուր 600.0 հազ. դրամ), սակայն ստուգում իրականացնող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված այցելությունից պարզվել է, որ փաստացի առկա է ընդամենը մեկ հողաշեն ավազան (լուսանկար 3):

**<u>Լուսանկար 3.</u>** Հողաշեն ավազան

## *«Պատրաստի միկրոբիոլոգիական միջավայրեր»*

Պայմանագրով Ազգային պարկը «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել 800 հատ պատրաստի միկրոբիոլոգիական միջավայրեր ընդհանուր 1,000.0 հազ. դրամ արժեքով: Ազգային պարկի և ընկերության միջև կնքված պայմանագրով, ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների ճշտման նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալների ուսումնասիրությամբ առաջանում են կասկածներ առ այն, որ ընկերության կողմից վերը նշված ապրանքների ձեռք բերում տվյալ ժամանակահատվածում չի եղել:

## *«Բիոպրոյեկտ» ՍՊ Ընկերության վերաբերյալ*

Ընկերության հետ 2016թ.-ին կնքվել է «Անտառտնկման աշխատանքների» պայմանագիր՝ 9,000.0 հազ. դրամ արժեքով, ըստ որի պետք է Ազգային պարկի Սևան մասնաճյուղի Ախթամար (2 հա) և Մարտունու մասնաճյուղի Երանոս (5 հա) տեղամասերի տարածքում իրականացվեր 7 հա անտառտնկման աշխատանքներ: Ընկերության հիմնադիրը և տնօրենը կրկին հանդիսանում են Ազգային պարկի տնօրենի հետ անմիջական փոխկապակցվածություն ունեցող անձինք: Ըստ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության պայմանագրի կատարման ժամանակահատվածում «Բիոպրոյեկտ» ՍՊ ընկերությունում բացի տնօրենից աշխատել է միայն մեկ աշխատակից, այն էլ 04.04.2016թ.-ից մինչև 22.04.2016թ. ընկած ժամանակահատվածում: Վերջինս աշխատել է նաև «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊ ընկերությունում 02.05.2016-01.11.2016թթ. և հանդիսանում է Ազգային պարկի տնտեսական բաժնի պետի հետ անմիջական փոխկապակցված անձ: Հաշվի առնելով, որ ըստ տեխնիկական բնութագրի պետք է տնկվեր 10,500 տնկի, և դրանից հետևում է, որ ընկերության կողմից 18 օրում նախատեսված ծավալով աշխատանքը հնարավոր

**Անտառտնկման աշխատանքների շրջանակներում առկա ծառերի մեծ մասը գտնվում էին չորացած վիճակում կամ ընդհանրապես բացակայում էին, իսկ աշխատանքների իրականացման պայամանագրի կողմը անմիջականորեն փոխկապակցած է Ազգային պարկի տնօրենի հետ**

չէր իրականացնել: Ծառատնկումների փաստացի կատարված ուսումնասիրությամբ պարզվեց, որ Սևան մասնաճյուղի Ախթամար տեղամասում տնկվել են միայն բարդի տեսակի ծառեր, առկա ծառերի մեծ մասը գտնվում էին չորացած վիճակում կամ ընդհանրապես բացակայում էին, ըստ աշխատակիցների պարզաբանման 2 հա տարածքի վրա կատարված ծառատունկը ցրտահարվել էր:

## *«Նաիրի-Նունե» ՍՊ Ընկերության վերաբերյալ*

**Ընկերությունը տվյալ ժամանակահատվածում տնկիների ձեռքբերում չի ունեցել**

«Նաիրի-Նունե» ՍՊ ընկերության հետ 2017թ.-ին կնքվել է 15,000.0 հազ. դրամի պայմանագիր, այդ թվում՝ ծառատունկ՝ 10,517.2 հազ. դրամի և կոճղաշիվերի հատում՝ 4,482.8 հազ. դրամի: Նախատեսվել է 13630 հատ տնկիների ձեռք բերում և տնկում: Ընկերությունը տվյալ պայմնագիրը կնքելու համար պետք է ունենար նախկինում կատարված նմանատիպ աշխատանքի փորձ և որպես այդպիսին, ներկայացվել է 2016թ.-ի մայիս ամսին ֆիզիկական անձի համար իրականացված 10,000.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հարկային հաշիվների և հաշվարկային փաստաթղթերի, ինչպես նաև շրջանառության հարկի հաշվարկների համադրումից պարզվեց, որ «Նաիրի-Նունե» ՍՊ ընկերությունը վերոնշյալ ֆիզիկական անձի հետ կնքած պայամանգիրը չի ներառել իր իսկ կողմից ներկայացված հաշվետվություններում, չի ներառել նաև իր շրջանառության մեջ: Ազգային պարկի և ընկերության միջև կնքված պայմանագրով ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը ճշտելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալների ուսումնասիրությամբ առաջանում են կասկածներ, քանի որ ընկերությունը տվյալ ժամանակահատվածում տնկիների ձեռք բերում չի ունեցել:

## *«Կարեն Աղաբաբյան Էոնեստի» ԱՁ-ի վերաբերյալ*

Ազգային պարկի կողմից «Կարեն Աղաբաբյան Էոնեստի» ԱՁ-ի հետ 11.07.2017թ.-ին կնքվել է 3,000.0 հազ. դրամի պայմանագիր, ըստ որի, պետք է իրականացվեր ցերեկային թիթեռների և թռչունների մոնիթորինգ: Համաձայն

նախահաշվի, թիթեռների մոնիթորինգի արժեքը կազմել է 1,600.0 հազ. դրամ, իսկ թռչունների մոնիթորինգի արժեքը՝ 1,400.0 հազ. դրամ:

- Թիթեռների մոնիթորինգի վերաբերյալ.

**Ընդունված աշխատանքների վերաբերյալ ոչ մի քանակական և որակական ցուցանիշներ գոյություն չունեն**

Համաձայն պայմանագրի, թիթեռների մոնիթորինգի ծառայությունների մատուցման ժամանակահատված է սահմանվել մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 15-ը սակայն հստակ սահմանված չէ, թե որ ժամանակահատվածի համար կամ քանի օր պետք է իրականացվեր թիթեռների մոնիթորինգ: Կարեն Աղաբաբյանի կողմից ներկայացված հաշվետվության ուսումնասիրությունից պարզ դարձավ որ. թիթեռների մոնիթորինգն իրականացվել է՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ ընդամենը 6 օր (հունիսի 12-ին և 13-ին, հուլիսի 16-ին և 17-ին, օգոստոսի 11-ին և 12-ին)

Պայմանագրով սահմանված է, որ կատարողը պետք է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնի հաշվետվություն տվյալ եռամսյակում իրականացված մոնիթորինգի վերաբերյալ, ինչը կատարողի կողմից չի ներկայացվել կամ սահմանված է որ պետք է մշակի թիթեռների երթուղիներ էկոտուրիստական արշավների համար, որը չի մշակվել: Հետևաբար, անհասկանալի է, թե Ազգային պարկի կողմից ինչ աշխատանքներ են ընդունվել մինչև վերջնական հաշվետվության ընդունումը, առավել ևս, որ հանձնման-ընդունման արձանագրություններում ընդունված աշխատանքների վերաբերյալ ոչ մի քանակական և որակական ցուցանիշներ գոյություն չունեն (հանձնման-ընդունման Արձանագրություն 1 03.08.2017թ և հանձնման-ընդունման արձանագրություն 2 25.10.2017թ)

- Թռչունների մոնիթորինգի վերաբերյալ.

**Կնքվել է պայմանագիր արդեն իսկ կատարված ծառայության ձեռք բերման համար**

Համաձայն պայմանագրի թռչունների մոնիթորինգի ծառայությունների մատուցման ժամանակահատված է սահմանված 11.07.2017թ.-ից մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 15-ը, սակայն, այս դեպքում ևս հստակ չէ, թե որ ժամանակահատվածի համար կամ քանի օր պետք է իրականացվի թռչունների մոնիթորինգը: Կարեն Աղաբաբյանի կողմից ներկայացված հաշվետվության

ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ թռչունների մոնիթորինգն իրականցվել է մայիս-հուլիս ամիսներին 14 օր (մայիսի՝ 10, 11, 12, 13, 14, 15, 25, 26, 29 օրերին, հունիսի՝ 1, 4, 5, 6 և հուլիսի՝ 1-ին):

Թիթեռների և թռչունների մոնիթորինգի վերաբերյալ պայմանագրում նշված դիտարկումների կետերի և դրա համար առավելագույն նպատակահարմար կետի ընտրությունը, ինչպես նաև բուն մոնիթորինգը, թիթեռների դեպքում մասամբ, իսկ թռչունների դեպքում՝ ամբողջովին, իրականացվել են մինչև պայմանագրի կնքումը: Էկոտուրիստական արշավների համար երթուղիները չեն մշակվել ընդհանրապես: Մոնիթորինգային աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ չի ներկայացվել: Ազգային պարկի կողմից կնքվել է պայմանագիր արդեն իսկ կատարված ծառայության ձեռք բերման համար:

## *Բիոզուգարանների վերաբերյալ*

**18 կառուցված և 12 բիոզուգարաններ**

Ազգային պարկի հաշվապահական հաշվեկշռի համաձայն, որպես հիմնական միջոց հաշվառված են 18 կառուցված և 12 բիոզուգարաններ: Զուգարանների փաստացի առկայության ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 18 հատ կառուցված զուգարանները գտնվում են թիվ 1, 2 և 3 հանրային լողափերում (լուսանկարներ 4, 5, 6, 7), իսկ 12 հատ բիոզուգարանները Ազգային պարկի պահեստում, սակայն պահեստում առկա էին ոչ ամբողջական զուգարաններ, այլ միայն զուգարանակոնքեր՝ առանց հիմնակմախքի (լուսանկար 9): Հատկանշական է, որ Ազգային պարկի գլխամասի տարածքում առկա էին 12 հատ ամբողջական բիոզուգարաններ (լուսանկար 9), որոնք ըստ Ազգային պարկի կողմից ներկայացված տեղեկատվության հանդիսանում են Ազգային պարկի տնօրենի անձնական գույքը: Հատկանշական է այն հանգամանքը, որ Ազգային պարկի տնօրենին ամիջականորեն փոխկապակցված անձին պատկանող ընկերությունը իրականացնում է նաև բիոզուգարանների վարձակալությամբ տրամադրման գործունեություն:

**Լուսանկար 4.** Հանրային լողափ 1

**Լուսանկար 5.** Հանրային լողափ 1

**Լուսանկար 6.** Հանրային լողափ 2

**Լուսանկար 7.** Հանրային լողափ 3

**Լուսանկար 8.** Պահեստում առկա զուգարանակոնքեր

**Լուսանկար 9.** Ազգային պարկի տարածքում առկա բիոզուգարաններ

## *Հողօգտագործման վերաբերյալ*

**Բիզնես ծրագրերը հիմնականում կրել են ձևական բնույթ**

Ազգային պարկը 2017թ.-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ ունի վարձակալությամբ (ներառյալ կառուցապատման իրավունքով) տրամադրված թվով 875 հողամաս, որոնց ընդհանուր վարձավճարի տարեկան չափը կազմում է 168,216.1 հազ. դրամ: 01.10.2017թ.-ի դրությամբ հողամասերի վարձակալության ընդհանուր պարտքը կազմում է 267,327.2 հազ. դրամ: 2015-2017թթ.-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել է 162 հայցադիմում: Միայն 11 վարձակալ 01.10.2017թ.-ի դրությամբ չունեն պարտքեր, իսկ մյուս դեպքերում վարձակալները շարունակում են չկատարել իրենց պարտավորությունները, ինչի արդյունքում

նրանց պարտքի ընդհանուր չափը կազմում է 40,758.4 հազ. դրամ: 2017թ.-ին ներկայացվել է 81 հայցադիմում, որից 37-ը՝ գումար բռնագանձելու և պայմանագիրը լուծելու պահանջով, իսկ 44-ը՝ միայն գումար բռնագանձելու: 2016 և 2017թթ.-ին լուծվել են թվով 19 պայմանագրեր:

Հաշվի առնելով վարձակալների կողմից մեկ տարի և ավելի վճարային պարտավորություններ չկատարելու հանգամանքը, եզրահանգում ենք, որ 70 վարձակալները չեն կատարում իրենց պարտականությունները, որոնց ընդհանուր տարեկան վարձավճարի չափը կազմում է 13,271.4 հազ. դրամ, իսկ պարտքը՝ 01.10.2017թ.-ի դրությամբ 80,357.9 հազ. դրամ:

Կառավարության 2008թ.-ի 1563-Ն որոշման 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն երկրորդ ենթագոտու տարածքում կառուցապատման նպատակով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կարող են տրամադրվել մինչև 25 տարի ժամկետով, իսկ եթե կառուցապատման համար ներդրումները կազմում են 150 մլն. և ավելի դրամ, ապա հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերը դրանց գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո կարող են երկարաձգվել մինչև 2060թ.-ի դեկտեմբերի 31-ը:

Նշված պայմանով կնքվել է 51 պայմանագիր: Ներդրումային բիզնես ծրագրերով գործերի ուսումնասիրությունից կարող ենք եզրահանգել, որ բիզնես ծրագրերը հիմնականում կրել են ձևական բնույթ, նույնաբովանդակ են, որոշ դեպքերում չեն սահմանվել ժամանակացույցեր կատարվելիք աշխատանքների կամ ներդրումների մեծ մասը նախատեսվում է իրականացնել պայմանագիրը կնքելուց բավական ուշ ժամկետներում, ինչպես նաև չկա ներդրումների կատարման վերաբերյալ հաշվետվողականության համակարգ, արդյունավետ մեխանիզմներ՝ ներդրումների կատարման ընթացքը գնահատելու համար: Բացակայում են համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու և հետևանքներ կիրառելու իրավական կարգավորումներ՝ ներդրումային պարտավորությունները չկատարելու պարագայում: Շատ դեպքերում 2017թ.-ին արդեն իսկ պետք է կատարված լինեին ներդրումների մեծ մասը, սակայն փաստացի չեն կատարվել: Օրինակ,

Մյուս դեպքում, ըստ ընկերության ներկայացրած բիզնես ծրագրի, 2017թ.-ին պետք է կատարված լիներ 250,000.0 հազ. դրամի ներդրում, սակայն չկա կատարված որևէ ներդրում և վերջինիս պարտքը 01.10.2017թ.-ի դրությամբ կազմում էր 1,191.7 հազ. դրամ: Ընկերության դեմ Ազգային պարկը 5 անգամ դիմել

է դատարան միայն գումար բռնագանձելու պահանջով՝ 2009, 2011,2012,2013 և 2015 թվականներին:

Ըստ մեկ այլ դեպքում ընկերության ներկայացրած բիզնես ծրագրի, նախատեսվել է 150,000.0 հազ. դրամի ներդրում, որից 30,000.0 հազ. դրամը պետք է արդեն կատարված լիներ, սակայն նշված հողօգտագործողի տարածքում առկա է միայն մեկ փայտե տնակ (լուսանկար 10):

Մեկ դեպքում ընկերության ներկայացրած բիզնես ծրագրի համաձայն պետք է կատարված լիներ 160,000.0 հազ. դրամի ներդրում, սակայն հողամասում առկա է միայն քարե պարիսպ(լուսանկար 11):

Ընկերությանը տրամադրված հողամասի վարձակալության պայմանագրով հողամասի չափը կազմում է 50000 քմ, իսկ վարձավճարը՝ 400.0 հազ. դրամ, սակայն Ազգային պարկի կողմից գանձվում է 35000 քմ-ի վարձ 280.000 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով կադաստրի վկայականը: Առկա են նաև երկու պայմանագրեր արդեն ճշտված քմ-ներով 35,000 և 15,000, որոնք, սակայն, չունեն նոտարական և պետական գրանցում:

Որոշ դեպքերում Ազգային պարկում առկա փաստաթղթերում բացակայում են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունները:

**Լուսանկար 10.**

**Լուսանկար 11.**

## *Չպարզաբանված մուծումներ*

**Չպարզաբանված մուծումները գոյացել են թվով 97 ֆիզիկական և իրավաբանական անձանցից**

01.01.2016թ.-ի դրությամբ Ազգային պարկի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասին տեղեկանքում առկա է 21.967.4 հազ. դրամ գումարի կրեդիտորական պարտք՝ որպես «Հողի վարձավճար չպարզաբանված մուծում», 01.12.2017թ.-ի դրությամբ դրանք կազմել են 22,561.8 հազ. դրամ, իսկ 01.01.2018թ. դրությամբ՝ 19,782.1 հազ. դրամ:

Չպարզաբանված մուծումները գոյացել են թվով 97 ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Չպարզաբանված մուծումների հնարավոր պատճառները կարող են լինել՝ վարձակալի փոխարեն մեկ այլ անձի կողմից վճարման կատարումը, Ազգային պարկի հետ կնքված, բայց դեռևս պետական գրանցում չստացած պայմանագրերի համար գումարների փոխանցումը, համայնքային բյուջեի փոխարեն Ազգային պարկի բյուջե կատարված փոխանցումը, վճարում կատարելիս վարձակալության պայմանագրի համարը կամ այլ նույնականացնող պայմաններ չնշելը և այլ պատճառներ:

Սակայն ակնհայտ է այն հանգամանքը, որ 97-ից 19-ը հանդիսանում են Ազգային պարկի հողոգտագործողներ և անհասկանալի է, թե ինչու են այդ պարագայում կատարված մուծումները դիտարկվում չպարզաբանված՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նույն անձանց մասով առկա են վարձավճարի պարտքեր: Օրինակ՝

1. Մեկ դեպքում ընկերության պարտքը կազմում է 721.7 հազ. դրամ, սակայն ընկերության կողմից կատարվել է 3,843.1 հազ. դրամ վճարում, ինչպես նաև, 01.01.2016թ.-ից մինչև 01.01.2018թ. հաշվարկվել է տույժ 51.1 հազ. դրամ:

2. Մեկ այլ դեպքում, ընկերության պարտքը կազմում է 217.5 հազ. դրամ, սակայն ընկերության կողմից կատարվել է 2,190.0 հազ. դրամ վճարում:

3. Քաղաքացու պարտքը կազմում 5,168.8 հազ. դրամ, սակայն վերջինիս կողմից կատարվել է 1,000.0 հազ. դրամ վճարում, ինչպես նաև, 01.01.2016թ.-ից մինչև 01.01.2018թ. հաշվարկվել է տույժ՝ 2,727.9 հազ. դրամ:

Մեկ այլ դեպքով, ըստ կադաստրի պետական կոմիտեի տրամադրած տեղեկատվության, ընկերության անվամբ գրանցված է 5.96 հա հողամասի վարձակալության պայմանագիր, իսկ ըստ Ազգային պարկի տրամադրած տեղեկատվության, այդ ընկերությունը չունի վարձակալած հողատարածք: Հատկանշական է, որ Ազգային պարկում առկա է այդ ընկերության կողմից 4,354.6 հազ. դրամ գումարի «չպարզաբանված վճարում»:

## *Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների վերաբերյալ*

**Ծրագիրն իրականացվել է մինչև նախարարության հետ պայմանագրի կնքումը**

ՀՀ կառավարության 24.08.2017թ.-ի «ՀՀ 2017թ.-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1052-Ն որոշման համաձայն «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 83,875.0 հազ. դրամ:

02.10.2017թ.-ին նախարարության և Ազգային պարկի միջև կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N ՀՀ-ԲՆ-ԴՇ-17/11 պայմանագիրը» (այսուհետ՝ պայմանագիր) գումարով 83,875.0 հազ. դրամի՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի իրականացման համար (այսուհետ՝ ծրագիր): 01.01.2018թ.-ի դրությամբ կողմից պայմանագրով նախատեսված գումարը ամբողջությամբ հատկացվել է:

Պայմանագրին կից մաքրման տարածքների քարտեզ-սխեմաներով և հավելվածով նախատեսվել է Մարտունի տեղամասում 44 հա գումարով 38,731.0 հազ. դրամի և Նորատուսի տեղամասում 20 հա գումարով 16,133.9 հազ. դրամի մաքրման աշխատանքներ, ընդամենը 64 հա՝ գումարով 54,864.9 հազ. դրամ, որի նկատմամբ հաշվարկվել են 12.52 % վերադիր ծախսեր՝ 6,869.65 հազ. դրամ, 11.0 % շահույթ՝ 6,790.0 հազ. դրամ, 2.0 % չնախատեսված ծախսեր՝ 1,370.5 հազ. դրամ, 20% ԱԱՀ՝ 13,979.2 հազ. դրամ:

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, ուստի պայմանագրով ի սկզբանե չպետք է նախատեսվեր 11.0% շահույթ՝ գումարով 6,790.0 հազ. դրամ: Ազգային պարկի կանոնադրության II գլխի 9-րդ կետով հստակ սահմանված են ձեռնարկատիրական գործունեության տեսակները, իսկ կանոնադրության VII-րդ գլխի 41-րդ կետի պահանջն այն է, որ՝ «Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը, հիմնադրի կողմից սահմանված կարգով, օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար» կամ Ազգային պարկը կարող էր շահույթ ստանալ միայն ձեռնարկատիրական գործունեությունից, այլ ոչ պետական բյուջեից հատկացված դրամաշնորհներից:

Պայմանագրի 2.4.7 կետով սահմանված է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

Ազգային պարկի կողմից անտեսվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները և 02.10.2017թ.-ին, առանց մրցույթի, «Արտնաուկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հետ կնքվել է 41,633.0 հազ. դրամի ծառայությունների մատուցման ձեռք բերման պայմանագիր: Համաձայն պայմանագրի,

ծառայությունների կատարման համար 17,275.0 վառելիքը և այլ տրանսպորտային նյութերը պետք է տրամադրի Ազգային պարկը:

Համաձայն Ազգային պարկի տնօրենի կողմից 02.10.2017 թվականին հաստատված ծավալաթերթի, ջրի միջից դուրս բերված 407.5 խմ ծավալով արմատախիլ արված զանգվածի «լաստանավից դատարկում» աշխատանքը նախատեսված չէ, սակայն այդ աշխատանքները Ազգային պարկի կողմից հանձնվել է նախարարությանը:

Չնայած այն հանգամանքին, որ ինչպես դրամաշնորհի, այնպես էլ «Արտնաուկա» ՍՊԸ-ի հետ պայմանագրերը կնքվել են 02.10.2017թ.-ին, սակայն, մաքրման աշխատանքները սկսվել են մինչև պայմանագրերի կնքումը, ինչի մասին վկայում է Ազգային պարկի կողմից տրամադրված Մարտունի տեղամասում մաքրման աշխատանքների կատարման տեսագրության սկավառակի վերծանումը, ըստ որի, սկավառակի վրա տեսագրության նյութը տեղադրվել է 17.09.2017թ.-ին, որտեղ հստակ երևում է, որ մաքրման աշխատանքները ընթացքի մեջ են եղել: Նույնի մասին է վկայում նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված արբանյակային տեսապատկերները (տեսապատկեր 1, 2, 3), որտեղ երևում է, որ մաքրման աշխատանքների զգալի մասն արդեն իսկ կատարված են եղել սեպտեմբեր ամսին: Հատկանշական է, այն հանգամանքը, որ մաքրման աշխատանքները կատարած Ընկերությունը 2017թ.-ի սեպտեմբերին աշխատակիցներ չի ունեցել և գործունեությունը դադարեցված է եղել և վերջինս գործունեությունը վերսկսել է 2017թ.-ի հոկտեմբերին: Հատկանշական է, որ Ընկերությունը մինչև այդ զբաղվել է շոու-ծրագրերի և միջոցառումների կազմակերպմամբ:

Նախահաշվով 5 հա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների համար նախատեսվել է 3,468.3 հազ. դրամ, որը պետք է իրականացվեր Watermaster classic III ֆրեզերային հողագործ-էքսկավատորով, սակայն փաստացի ծախսը ցույց է տրվել 2,319.1 հազ. դրամ, որից մեխանիզատորին վճարված աշխատավարձը կազմել է 469.1 հազ. դրամ (հոկտեմբեր՝ 12 օր, նոյեմբեր՝ 17 օր): Էքսկավատորը պահատվության պայմանագրի համաձայն «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հաձնվել էր Ազգային պարկին: Պայմանագրի համաձայն Ազգային պարկը իրավունք ուներ նշված էքսկավատորը շահագործել միայն վերը նշված պետական հիմնարկի թույլտվությամբ: Ստուգման

ժամանակ Ազգային պարկից պահանջվեց էքսկավատորի շահագործման թույլտվությունը և տեղեկանք առ այն, թե ինչ եղանակով է այն պահպանվող տարածքից տեղափոխվել Սևանա լիճ և լճից պահպանվող տարածք: Ազգային պարկի կողմից ներկայացված տեղեկանքում բացակայում է շահագործման թույլտվության վերաբերյալ տեղեկատվություն, իսկ էքսկավատորի տեղափոխման վերաբերյալ նշվում է, որ «տեղափոխումն իրականացվել է Ազգային պարկի տնօրինության նախաձեռնությամբ»: Հարկ է նաև նշել, որ Ազգային պարկի կողմից ծրագրի փաստացի ծախսերը ցույց է տրվել ընդամենը 61,247.1 հազ. դրամ:

**Տեսապատկեր 1.** 09.09.2017թ. (Մարտունի մասնաճյուղ)

**Տեսապատկեր 2.** 19.09.2017թ. (Մարտունի մասնաճյուղ)

**Տեսապատկեր 3.** 10.10.2017թ. (Մարտունի մասնաճյուղ)



## *Ֆիզիկական անձանց կողմից իրականացված մաքրման վերաբերյալ*

**Տարածքների մաքրումները մրցութային կարգով կազմակերպելու դեպքում հնարավոր կլիներ ստանալ 22,437.0 հազ. դրամի եկամուտ:**

2016-2017թթ. Ազգային պարկի կողմից ջրածածկ տարածքների մաքրման նպատակով 7 ֆիզիկական անձանց հետ կնքվել է թվով 10 պայմանագիր, որի համաձայն պետք է մաքրվեր ընդհանուր 27,1 հա տարածք: Համաձայն կառավարության 2014թ.-ի N 359 որոշման անտառտնկարկների մաքրման արդյունքում առաջացած անտառանյութը մաքրումն իրականացնող ֆիզիկական անձանց տրամադրվում է անհատույց:

Թվով երեք պայմանագրի մասով առկա չէին քաղաքացիների դիմումները: Իրականացված անտառմաքրման աշխատանքների արդյունքում, ըստ անտառհատման տոմսերի, հատվել է 29240 հատ ծառ, որի արդյունքում առաջացել է 3,300 խմ անտառանյութ, այդ թվում՝ շինափայտ՝ 1,665 խմ և վառելափայտ՝ 1,645 խմ: Վերը նշված անտառանյութը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 13.05.2004թ.-ի թիվ 97 հրամանի համաձայն, նվազագույն գներով հաշվարկելու պարագայում, անտառանյութից առաջացած հասույթը կկազմի 42,653.0 հազ. դրամ (ներառյալ՝ ԱԱՀ): Հաշվարկի համար հիմք է ընդունվել «վերևի պահեստ»-ից (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 13.05.2004թ.-ի թիվ 97 հրամանում նշված մասնաճյուղի պահեստ) անտառանյութի վաճառքի գները: Համեմատության համար հարկ է նշել, որ կազմակերպությունների կողմից տվյալ տարածքները մաքրելու համար անհրաժեշտ կլիներ 20,225.0 հազ. դրամ՝ հաշվի առնելով այն, որ ֆիզիկական անձանց կողմից մաքրված տարածքները ցամաքային են: Հետևաբար, համապատասխան տարածքների մաքրումները մրցութային կարգով կազմակերպելու դեպքում հնարավոր կլիներ ստանալ 22,437.0 հազ. դրամի եկամուտ:

## *Անտառանյութի իրացման վերաբերյալ*

01.01.2016թ.-ի դրությամբ անտառանյութի մնացորդը կազմել է 1189.9 խմ՝ 806.7 հազ. դրամի, 2016թ.-ին մուտքագրվել է 821.7 խմ՝ 3,806.5 հազ. դրամի,

ելքագրվել է 617.2 խմ՝ 3,376.3 հազ. դրամի, 01.01.2017թ.-ի դրությամբ մնացորդը կազմել է 1394.3 խմ՝ 1,237.1 հազ. դրամի:

2017թ.-ին մուտքագրվել է 966.7 խ.մ՝ 4,992.6 հազ. դրամի, ելքագրվել է 903.5 խմ՝ 4,861.0 հազ. դրամի, 01.01.2018թ.-ի դրությամբ մնացորդը կազմել է 1457.5 խմ՝ 1,368.7 հազ. դրամի:

2016թ.-ին Ազգային պարկի կողմից թվով 8 հաշիվ-ապրանքագրերով վաճառվել է 4,051.5 հազ. դրամի անտառանյութ, 2017թ.-ին՝ թվով 40 հաշիվ-ապրանքագրերով վաճառվել է 6,669.6 հազ. դրամի անտառանյութ (ներառյալ՝ ԱԱՀ):

Անտառհատումից առաջացած շինափայտը, վառելափայտը, ջախը որոշ դեպքերում վաճառվել է նաև Ազգային պարկի Մարտունի մասնաճյուղի տնօրենին, աշխատակիցներին կամ նրանց ազգակիցներին: Օրինակ՝

15.07.2016թ.-ի թիվ 45 անտառհատման տոմսի համաձայն կազմված ակտով մուտքագրվել է 4 խմ շինափայտ սոճի, 40 խմ վառելափայտ սոճի, 5 խմ ջախ և վերը նշված շինափայտը, վառելափայտը, ջախը 236.4 հազ. դրամի վաճառվել է Մարտունի մասնաճյուղի տնօրենին: Վերջինս հանդիսացել է նաև հաշվեգնահատման, հատատեղերի հատկացման, անտառհատման տոմսի և սանիտարական հատումից առաջացած անտառանյութի ակտի կազմման պատասխանատուն:

18.11.2015թ. թիվ 36 անտառհատման տոմսի համաձայն 2016թ.-ի հոկտեմբերի 24-ին Մարտունու մասնաճյուղի հանձնաժողովի կողմից կազմված ակտի հիման վրա մուտքագրված անտառանյութը (69 խմ շինափայտ, 100 խմ վառելափայտ, 70 խմ ջախ) ամբողջությամբ վաճառվել է նույն մասնաճյուղի տնօրենին:

Ազգային պարկը անտառանյութի իրացման համար առաջնորդվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 13.05.2004թ.-ի թիվ 97 հրամանով, իսկ Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների արդյունքում կուտակված անտառանյութի բացթողնման (վաճառքի) համար՝ ՀՀ բնապահպանության նախարարին կից կոլեգիայի 14.10.2009թ.-ի թիվ Կ4/1 որոշմամբ 1 խմ սահմանված նվազագույն գներով:

Հարկ է նշել, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն 2016-2017թթ.-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի

քաղաքում վառելափայտի 1 խմ-ի միջինացված գինը կազմել է 22.0 հազ. դրամ, այն դեպքում, երբ Ազգային պարկի կողմից մեկ խմ վառելափայտը վաճառվել է նույն ժամանակաշրջանում առավելագույնը՝ 9.6 հազ. դրամով (ներառյալ՝ ԱԱՀ):

Ազգային պարկի կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն 2016-2017թթ.-ին կատարվել են ընդամենը 18 անտառհատման աշխատանքներ, որից 15 դեպքում է կազմվել անտառհատման տոմս (երեք դեպքի համար բացակայում են անտառհատման տոմսերը), միայն երկու դեպքում են առկա նախարարին ուղղված գրությունները, նախարարության ուսումնասիրությունները և թույլտվությունները (մեկում բացակայում է քանակները): 4 դեպքում բացակայում են հաշվեգնահատման ցուցակները, 7 դեպքում՝ հատատեղերի հատկացումը, մեկ դեպքում բացակայում է մուտքագրման ակտը:

## II. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ազգային պարկի) գործունեության առարկան և նպատակը պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև, կայուն օգտագործման ապահովումն է:

### *Պետության կողմից դրամաշնորհի տեսքով տրամադրվող ֆինանսական աջակցություն*

**ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումներ**

Ազգային պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2016թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 137,499.2 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 107,691.7 հազ. դրամ գումար:

Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Ազգային պարկի միջև, 2016թ.-ի հունվարի 25-ին կնքվել է 137,499.2 հազ. դրամի՝ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» ՈՀՀ-ԲՆ-ԴՇ-16/04 դրամաշնորհային պայմանագիրը իսկ 2017թ.-ի՝ փետրվարի 3-ին՝ 107,691.7 հազ. դրամի ՈՀՀ-ԲՆ-ԴՇ-17/04 դրամաշնորհային պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

2016թ.-ի օգոստոսի 8-ին կողմերի միջև կնքված պայմանագրի փոփոխության թիվ 1 համաձայնագրի համաձայն պայմանագրի գինը նվազել է 62.6 հազ.դրամով, կազմելով 137,436.6 հազ.դրամ, իսկ 2017թ.-ի փետրվարի 3-ին կնքված պայմանագրի փոփոխության համաձայն 2017թ-ի պայմանագրի գինը կազմել է 122,691.7 հազ. դրամ, այդ թվում՝

հազ.դրամ

| h/h | Միջոցառման անվանումը | 2016թ. | 2017թ |
|---|---|---|---|
| 1 | Ազգային պարկի պահպանության համար | 116,488.9 | 113,630.0 |
| 2 | Գիտական ուսումնասիրությունների համար | 13,392.5 | 9,360.0 |
| 3 | Ծրագրային միջոցառումների իրականացում, այդ թվում՝ | 7,555.2 | 560,0 |
| | Հակահրդեհային միջոցառում ների, «Պարզ լճի» ուսումնասի րության, անտառտնտեսկան միջոցառումների, Ազգային պար կի տեղամասերում հերթական վերստուգիչ աշխատանքների անցկացման և այլ աշխատանք ների կատարման համար | 7,555.2 | |
| | Էկոտուրիզմի զարգացման նպատակով Պարզ լիճ-Գոշավանք էկոերթուղու սկբնահատվածում գտնվող հին խաչքարերի հատվածի բարեկարգման մաքրման, էկոերթուղիների պարբերական աղբահանության, Ազգային Պարկի տարածքի սահմանանիշերի պատրաստում և տեղադրում | | 560.0 |
| | Ընդամենը | 137,436.6 | 123,550,0 |

2016թ.-ին Ազգային պարկի բյուջետային հայտով նախատեսված 89 հաստիքային միավորի փոխարեն՝ (տարեկան 123,124.0 հազ. դրամ

աշխատավարձի ֆոնդով), հաստատել է (նախարարության հետ համաձայնեցված) 90 հաստիքային միավոր՝ (127,380.0 հազ. դրամ աշխատավարձի ֆոնդով):

2016թ.-ի ֆինանսավորումը կազմել է 137,436.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 125,421.1 հազ. դրամ, (այդ թվում՝ աշխատավարձ՝ 121,178.7 հազ. դրամ, կամ 96.6%, ապրանքների և ծառայությունների ձեռք բերում՝ 350.0 հազ. դրամ կամ 0.3%-ը, այլ ծախսեր ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում՝ 3,892.8 հազ.դրամ կամ 3.1%):

2017թ.-ի ֆինանսավորումը կազմել է 122,691.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 120,231.5 հազ. դրամ (այդ թվում՝ աշխատավարձ՝ 86,657.2 հազ. դրամ, կամ 72.1%, ապրանքների և ծառայությունների ձեռք բերում՝ 33,325.0 հազ. դրամ կամ 27.7%, այլ ծախսեր՝ ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում՝ 260.0 հազ.դրամ, կամ 0.2%),

Նախարարության և Ազգային պարկի միջև կնքված ՈՀՀ-ԲՆ-ԴՇ-16/04 պայմանագրի ուսումնասիրությունից պարզվեց, որ Նախարարության կողմից չի ապահովվել պայմանագրի.

- 3-րդ կետի պահանջը, Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման մոնիթորինգ չի իրականացրել,

2.3.4 կետի պահանջը՝ Նախարարությունը ստացված հաշվետվություններն առանց ուսումնասիրելու՝ իրականացված միջոցառումների համապատասխանությունը ծրագրի և պայմանագրի պահանջներին, համապատասխան գրություններով Ազգային պարկին իրազեկել է հաշվետվություններն ընդունելու մասին:

**Աշխատանքները իրականացվել են առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի ապահովման:**

Ազգային պարկի կողմից չի ապահովվել

2.4.7 կետի պահանջը՝ Ազգային պարկի 2016թ.-ի միջոցառումների ծրագրով հակահրդեհային միջոցառումների իրակա-նացման, ջրավազանների վերանորոգման, ինչպես նաև, անտառտնտեսական միջոցառումների իրականացման համար նախատեսված 5,973.4 հազ. դրամի (այդ թվում պետական բյուջեից 5,131.8 հազ.

դրամ) աշխատանքներն իրականացվել են առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի ապահովման:

## *Ձեռնարկատիրական գործունեություն*

Կանոնադրության II-րդ բաժնի 9-րդ կետի համաձայն Ազգային պարկը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաբանական պաշարների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային պաշարների վերարտադրություն, օգտագործում և իրացում,
- սանիտարական և խնամքի հատումների իրականացման արդյունքում առաջացած բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,
- երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում,
- կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, ուտելի բույսերի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում,
- էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում,
- ճանաչողական զբոսաշրջության կազմակերպում,
- քաղաքացիների հանգստի ու զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,
- պարկին վերաբերող գովազդի կազմակերպում և իրականացում,
- գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում,
- տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն:

Հաշվի առնելով, որ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների մեծ մասը ձևավորվում է փայտանյութի իրացումից և վարձավճարների հավաքագրումից, և այն, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև տարբեր տեսակի ու տրամաչափի կանգուն ծառերի ապօրինի ծառահատումների հետևանքով բուսական աշխարհին խոշոր չափերով վնաս հասցնելու համար հարուցվել են բազմաթիվ քրեական գործեր և իրականացվում է քննություն, ուստի Ազգային պարկի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության մասով Վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն չի իրականացվել:

***Կովկասի բնության հիմնադրամի կողմից դրամաշնորհի տեսքով տրամադրվող ֆինանսական աջակցության ծրագիր***

հազ. դրամ

| Տարեթիվ | Տարեսկզբի մնացորդ | Ֆինանսավորման չափը | Փաստացի ծախս |
|---|---|---|---|
| 2016 | 12,988.3 | 87,440.0 | 85,605.0 |
| 2017 | 15,639.4 | 44,157.5 | 45,497.3 |
| Ընդամենը | | 131,597.5 | 131,102.3 |

2009թ. մայիսի 22-ին Հիմնադրամի և Նախարարության միջև կնքված շրջանակային համաձայնագրի հիման վրա 2016թ. մարտի 17-ին Հիմնադրամի, Նախարարության և Ազգային պարկի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր, համաձայն որի, Հիմնադրամը 2016-2018 թվականների ընթացքում բացառապես Ազգային պարկի ընթացիկ ծախսերի համար պատրաստակամություն է հայտնել տրամադրել 500.0 հազ. եվրո դրամաշնորհ: Պայմանագրի 4.2 կետի համաձայն դրամաշնորհային գումարները փոխանցվում են Ազգային պարկին՝ տարեկան ծրագրերը հաստատվելուց հետո՝ փոխարկված ՀՀ դրամի: Հիմնադրամը 2016 թ. Ազգային պարկին հատկացրել է 87,440.0 հազ.

**Դեռևս չի ծախսվել 268,241 եվրո գումար**

դրամ, 2017 թվականին ՝ 44,157.5 հազ. դրամ: Ընդամենը հիմնադարամի 2016 թ. և 2017 թ. Ազգային պարկին հատկացված գումարը կազմել է 131,597.5 հազ. դրամ, որից 2016 թվականին ծախսվել է 85,605.2 հազ. դրամ, իսկ 2017 թվականին՝ 45,497.3 հազ. դրամ, ընդամենը 2016 և 2017 թթ. ծախսերը կազմել են 132,102.5 հազ. դրամ, որը համարժեք է 231 759 եվրոյին: 2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ եվրոյի փոխարժեքով (1 եվրո = 570 դրամ) հիմնադարամի և Ազգային պարկի միջև կնքված պայմանագրով նախատեսված 500,000 եվրո գումարից դեռևս չի ծախսվել 268,241 եվրո գումար կամ 152,897.4 հազ. դրամ (կամ 54%), այնինչ, ծրագրերն ավարտվում են 2018թ,-ի դեկտեմբերի 31-ին:

## *Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասեր և ներդրումային պարտավորություններ*

### Ազգային պարկը չի ունեցել 2012-2016 թ.թ. համար կառավարման պլան

Կանոնադրության համաձայն, ըստ տարածքագործառնական գոտիների՝ Ազգային պարկի գործունեության առարկան ընդգրկում է նաև ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողատարածքների վարձակալությամբ և կառուցապատման իրավունքով տրամադրումը: Ազգային պարկի տարածքները՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ են, որոնց զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորվում է պաշտոնական փաստաթղթով՝ ՀՀ կառավարության որոշմամբ ըստ տարիների հաստատված կառավարման պլանով, որն իր մեջ ընդգրկում է բնության հատուկ պահպանվող տարածքի գոտիավորման, սահմանների, կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ կենսաբանական պաշարների տեղաբաշխման, հողօգտագործման և այլ թեմատիկ քարտեզներն ու հատակագծերը: Ազգային պարկը տարիներ շարունակ (մինչև ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի թիվ N 190-Ն որոշմամբ հաստատված 2017-2026 թ.թ. կառավարման պլանի) աշխատել է 2007-2011 թ.թ. կառավարման պլանով, այսինքն՝ Ազգային պարկը 2012-2016 թ.թ. համար կառավարման պլան չի ունեցել: Ստուգմամբ պարզ դարձավ, որ Ազգային պարկի և իրավաբանական անձանց, քաղաքացիների միջև կնքված և մինչ օրս գործող հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված պայմանագրերը թվով 80–ն:

Կնքված պայմանագրերի ուսումնասիրությամբ պարզվեց.

- Ներդրումային պարտավորությունները կատարված չեն թվով 16 հողամասի կառուցապատման իրավունք ձեռք բերողների կողմից: Հողամասեր այցելություններից պարզ դարձավ, որ ներդրողների կողմից կառուցապատում չի իրականացվել խախտելով պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ժամկետները: Հիմք ընդունելով կնքված և նոտարական կարգով վավերացված պայմանագրերը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 2-րդ մասի պահանջներով, պայմանագրի էական խախտման դեպքերում կողմերից մեկի (Ազգային պարկի) պահանջով պայմանագիրը կարող է լուծվել դատարանի վճռով:
- Կառուցապատում իրականացված չէ թվով 25 հողամասի կառուցապատման իրավունք ձեռք բերողների կողմից: Այցելություններից պարզվեց, որ կառուցապատողները պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չեն կատարել, այն է՝ հողամասերը չեն կառուցապատվել:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1 «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով

1.1. Ազգային պարկն իր գործունեությունն իրականացնում է առանց կառավարման պլանի:

1.2. 2017թ.-ի բյուջետային հայտով նախատեսվել է 179 հաստիքային միավոր, սակայն դրամաշնորհի պայմանագրով, նախահաշվի և հաստիքացուցակի փոփոխություններով նախատեսվել է 193 հաստիքային միավոր: Բյուջետային հայտի նկատմամբ 14 հաստիքային միավորի համար ավելի աշխատավարձ է նախատեսվել 6,285.1 հազ. դրամ: 2017թ.-ի դրամաշնորհից աշխատավարձի համար չի ծախսվել 13,642.1 հազ. դրամ:

1.3. Ազգային պարկը չունի տեղամասերի պահաբաժինների պահպանությունն իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաներ և աշխատավարձերի հաշվարկման չափորոշիչներ:

1.4. Ազգային պարկի տնօրենի և «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊ ընկերության միջև առկա է շահերի բախում:

1.5. Արդեն իսկ առկա տնկարանի համար պետական բյուջեից հատկացվել է տնկարանի ստեղծման գումար:

1.6. Նախահաշվով նախատեսված երկու հողաշեն ավազանի փոխարեն փաստացի առկա էր մեկ ավազան, իսկ 4 հատ բետոնե ավազանները փաստացի առկա չէին:

1.7. Ազգային պարկը կարող էր անձամբ գնել և պատրաստել պատրաստի միկրոբիլոգիական միջավայրեր ավելի մատչելի գներով:

1.8. Ազգային պարկի տնօրենը և «Բիոպրոյեկտ» ՍՊ ընկերության հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում են փոխկապակցված անձինք:

1.9. «Բիոպրոյեկտ» ՍՊ ընկերության կողմից տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարման փաստը վկայող հաշվետվություններն արժանահավատ չեն:

1.10. Թռչունների և թիթեռների մոնիթորինգի իրականացման պայմանագրով չկան մոնիթորինգի կատարման հաստակ ժամկետներ, պայմանագիրը կնքվել է փաստացի մոնիթորինգի կատարման ավարտից հետո (թիթեռների մասով մասամբ, թռչունների մասով՝ ամբողջությամբ), չեն ներկայացվել պայմանագրով նախատեսված հաշվետվությունները:

1.11. Ազգային պարկն ուներ տնկարան և հետևաբար, կարող էր ամբողջությամբ կամ մասամբ իրականացնել տնկիների աճեցումը և ծառատնկման աշխատանքները կամ դրանք տրամադրեր «Նաիրի-Նունե» ՍՊ ընկերությանը:

1.12. Ազգային պարկը որոշ դեպքերում գումար բռնագանձելու և պայմանագիր լուծելու պահանջով չի դիմել դատարան՝ ընդդեմ վարձակալների:

1.13. Որոշ դեպքերում հողօգտագործողների կողմից Ազգային պարկին կատարված վճարումները դիտարկվում են որպես չպարզաբանված մուծումներ, այն պարագայում, երբ նույն անձանց մասով առկա են վարձավճարի պարտքեր:

1.14. «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի զգալի մասն իրականացվել է մինչև նախարարության և ծառայություններն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրերի կնքումը և Ազգային պարկն իր ուժերով է կատարել մաքրման աշխատանքները:

1.15. Ազգային Պարկի կողմից անտեսվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի իրականացման ժամանակ:

1.16. Watermaster classic III ֆրեզերային հողագործ-էքսկավատորի շահագործման համար բացակայում է համապատասխան թույտվությունը և դրա տեղափոխումը հիմնավորող փաստաթղթերը:

1.17. Անտառհատումից առաջացած շինափայտի, վառելափայտի վաճառքը իրականացվել է ոչ մրցակցային պայմաններում և թերություններով :

## 2 «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով

2.1. Ցածր է Կովկասի բնության հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացման տեմպերը:

2.2. Հողամասի կառուցապատման իրավունք ձեռք բերողների կողմից կառուցապատման և ներդրումային պարտավորությունները չկատարելու պարագայում Ազգային պարկը չի օգտագործել իրեն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավունքը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ բնապահպանության նախարարությանը՝**

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով

Ձեռնարկել միջոցառումներ Սևան ազգային պարկի նոր կառավարման պլան կազմելու և հետագա գործունեությունը դրա հիման վրա իրականացնելու ուղղությամբ:

Իրականացնել հսկողություն Ազգային պարկին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:

Բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով պետական բյուջեով ծրագրի միջոցները դրամաշնորհի փոխարեն նախատեսել սուբսիդիայի ձևով, որը կապահովի կատարված ծախսերին համապատասխան միջոցների հատկացումը:

Բյուջետային հայտը կազմել համապատասխան հիմնավորումներով և հաշվարկներով:

Հետևողական լինել Ազգային պարկի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման ժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ:

Իրականացնել պատշաճ հսկողություն Ազգային պարկի կողմից կնքված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

Կազմել ֆիզիկական անձանց կողմից կատարվող մաքրումների համար նախատեսվող տարածքների սխեմա և նախատեսել որոշակի հատուցելիության պայմաններ:

Վերանայել անտառանյութի բացթողնման (վաճառքի) գները՝ համապատասխանեցնելով շուկայական գներին:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով

Բարելավել Կովկասի բնության հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի իրականացման տեմպերը:

Սահմանել պատշաճ հսկողություն Ազգային պարկի հետ կնքված պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման նկատմամբ:

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին

Կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջները՝ բացառելով շահերի բախումները և Ազգային պարկի հետ փոխկապակցված անձանց հետ գործարքների իրականացումը:

Ծրագրերի բյուջետային հայտերով նախատեսել ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ, հիմնավորված ֆինանսական միջոցներ:

Ձեռնարկել համապատասխան միջոցներ հողօգտագործներից վարձավճարները ժամանակին գանձելու ուղղությամբ:

Միջոցներ ձեռնարկել վարձավճարներից գոյացած պարտքերի գանձման ուղղությամբ և լուծել պայմանագրային պարտավորություններն անբարեխղճորեն կատարող վարձակալների հետ կնքված պայմանագրերը:

Ազգային պարկին կատարված մուծումները պարզաբանել՝ հողօգտագործողների կողմից կատարված վճարումները նվազեցնել վերջիններիս պարտքերից, իսկ չպարզաբանված մուծումները հետ վերադարձնել:

Կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով վճարումների կատարման հստակ ժամանակացույցներ:

Ապահովել անտառանյութի իրացման (վաճառքի) մրցակցային պայմաններ:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին

Պայմանագրերով նախատեսված աշխատանքներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Վերանայել հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված պայմանագրերը:

Հետևողական լինել պայմանադիր մյուս կողմի պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

***Հավելված***

**ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
**ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 2-ի թիվ 7/8 որոշման հիման վրա իրականացվող վերահսկողության ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ արձանագրության**

ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 18-ի N205-Ն որոշմամբ հաստատվել է «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանը, որից հետո, մինչև օրս նոր կառավարման պլան չի կազմվել: Տեղեկացնում եմ, որ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանը կազմվում է լիազորված պետական մարմնի հաստատած մեթոդական ցուցումների հիման վրա: ՊՈԱԿ-ը 2017թ. մարտի 30-ին դիմել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ մեթոդական ցուցումները տրամադրելու խնդրանքով և 04.04.2017թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից դրանք տրամադրվել են ՊՈԱԿ-ին, սակայն կառավարման պլան կազմելու համար գումարներ չեն հատկացվել, իսկ դրա կազմումը կապված է մեծ գումարների հետ, քանի որ <<Սևան>> ազգային պարկի և համայնքների միջև առկա են բազմաթիվ սահմանային խնդիրներ, որոնք հստակեցնելու համար պետք է իրականացվեն չափագրումներ, ինչի համար կպահանջվի շուրջ 38.0 միլիոն դրամ գումար: Իսկ պլանի մյուս ելակետային դրույթների հավաքագրումն ընթացքի մեջ է: Բացի այդ, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել <<Սևան>> ազգային պարկի բարեփոխումների և զարգացման ռազմավարությունը և 2018-2023թթ. Միջոցառումների ծրագիրը, համաձայն որի նախատեսված է կառավարման պլանի մշակում՝ 2019 թվական 4-րդ եռամսյակում: Համաձայն նշված ծրագրի կառավարման պլանի կազմման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսը կազմում է 73.6 միլիոն դրամ: Ուստի «Սևան» ազգային պարկի նոր կառավարման պլանը ծրագրում նախատեսված ժամկետներում կկազմվի՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացվելու պարագայում:

**Եկամուտների և ծախսերի վերաբերյալ**

Կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվները կազմվում են դրամարկղային մեթոդով, հետևաբար պլանային և փաստացի ցուցանիշների համադրումը նույնպես կատարվում է նշված մեթոդով:

Քանի որ 2016թ. և 2017թ. փաստացի եկամուտները արտացոլվել են դրամարկղային մեթոդով, իսկ որպես փաստացի ծախսեր ցույց են տրվել հաշվեգրված ծախսերի գումարները՝ 2016թ. համար 453214,9 հազար դրամ, 2017թ համար 524369,5 հազար դրամ, հարկ եմ համարում արձանագրության համապատասխան բաժնում ներառել նաև ծախսերի փաստացի դրամարկղային ցուցանիշները՝ 2016թ. համար 428545,3 հազար դրամ, 2017թ. համար 515038,6 հազար դրամ: Վերը նշված մոտեցման անտեսումը փաստացի դրամարկղային եկամուտների և ծախսերի համադրման ընթացքում անհնարին է դարձնում ճիշտ վերլուծություն կատարելը՝ առաջացնելով պարզ թվաբանական անճշտություններ:

**Աշխատավարձի վերաբերյալ**

Դրամաշնորհային պայմանագրի համաձայն դրամաշնորհը տրամադրվում է <<Սևան>> ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների>> իրականացման նպատակով: Նշված ծառայությունները 2017թ. կատարվել են ամբողջ ծավալով, ինչը հաստատվում է վերադաս մարմին ներկայացված հաշվետվություններով: 2017թ.-ին ՊՈԱԿ-ը ստացված դրամաշնորհային գումարը՝ 249355,6 հազար դրամ ամբողջությամբ ուղղել է աշխատավարձի փաստացի վճարման, այսինքն աշխատավարձի գծով դրամարկղային ծախսերը փաստացի կազմել է 249355,6 հազար դրամ՝ անկախ հաստիքացուցակի հիման վրա կատարած 235713,5 հազար դրամ հաշվեգրված ծախսերի:

Արձանագրած 13642.1 հազար դրամը հաստիքացուցակով առաջացած տարբերությունն է: 249 355.6 հազար դրամ աշխատավարձ է նախատեսվել, 249355.6 հազար դրամ էլ վճարվել է: Թեև, համաձայն 2017 թվականի համար հաստատված հաստիքացուցակի ունեցել ենք թափուր հաստիքներ, սակայն դրա փոխարեն, ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրները լուծելու նպատակով աշխատանքի են ընդունվել այլ աշխատակիցներ, արդյունքում աշխատավարձի ֆոնդի տնտեսում չի եղել, այն ամբողջովին ծախսվել է աշխատավարձի և արձակուրդային վճարների վճարման համար:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ պետական բյուջեից ՊՈԱԿ-ին գումարը հատկացվել է որպես դրամաշնորհ՝ <<Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն/պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում, հակահրդեհային միջոցառումներ, գիտական ուսումնասիրություններ և անտառտնտեսական միջոցառումներ>> ծառայությունների իրականացման համար, ինչն ամբողջությամբ իրականացվել է: Պետության կողմից ֆինանսավորված բոլոր ծառայությունները ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են պատշաճ մակարդակով: Որպես դրամաշնորհ ստացված գումարի բաշխումը արտացոլվում է տվյալ տարվա ծախսերի և եկամուտների նախահաշվում, որը անհրաժեշտությունից ելնելով ենթակա է փոփոխության, իսկ այս պարագայում նախահաշվով նախատեսված հոդվածներից շեղումներ չեն եղել, գումարը նախատեսված է եղել որպես աշխատավարձ, աշխատավարձ էլ վճարվել է: Գումարը կարող էր տնտեսվել և վերադարձվեր պետությանը այն պարագայում, եթե պետության կողմից սահմանված ծառայությունները չկատարվեին, կամ կատարվեին թերի, ՊՈԱԿ-ի կողմից աշխատանքների իրականացման վերաբերյալ հաշվետվությունները չընդունվեին, կամ ընդունվեին մասամբ, իսկ այս պարագայում պետության կողմից ֆինանսավորած ծառայությունները ամբողջությամբ իրականացվել են, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվություններն ընդունվել են:

Ինչ վերաբերում է <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կանոնադրության 27-րդ կետի 15-րդ ենթակետին՝ կազմակերպության տեղամասերի պահաբաժինների պահպանությունն իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաներին, կազմակերպության հսկողական գործառույթ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի հաշվարկման և խրախուսման չափորոշիչներին, տեղեկացնում եմ, որ դեռևս 2008թ.-ին, <<Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման>> ծրագրի շրջանակներում մշակվել է <<Սևան>> և <<Դիլիջան>> ազգային պարկերի պահաբաժինների առանձնացման չափորոշիչները, պահաբաժիններում <<Սևան>> և <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների հսկողական գործառույթներ իրականցնող անձնակազմի ծառայողական պարտականությունները, աշխատավարձի, լրացուցիչ աշխատավարձի, հավելավճարի հաշվարկման և խրախուսման չափորոշիչները սահմանելու, ինչպես նաև <<Սևան>> և <<Դիլիջան>> ազգային պարկերի տարածքներում շուրջօրյա հսկողության իրականացման վերաբերյալ կարգերը (կցվում են): Հարկ եմ համարում նշել, որ նույն ծրագրի շրջանակներում մշակվել է 35 իրավական ակտեր՝ այդ թվում նաև <<Սևան>> և <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները: Նշված 35 ակտերից հաստավել են միայն ՊՈԱԿ-ների կանոնադրությունները և <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կանոնադրությունները, իսկ մնացած կարգերը բազմիցս քննարկվել են, սակայն դրանք չեն հաստատվել: Ինչ վերաբերում է արձանագրության մեջ նշված չափորոշիչներին, տեղեկացնում եմ, որ կարգը ներկայացվել է և ՀՀ բնապահպանության նախարարություն, և Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին, բազմիցս քննարկվել են, սակայն տվյալ կարգերի ընդունման դեպքում անհրաժեշտություն էր առաջանալու ներգրավել հավելյալ ֆինանսական միջոցներ՝ շուրջօրյա հսկողություն իրականացնելու համար, իսկ պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները չեն բավականացնի տվյալ համակարգի ներդրման համար, հետևաբար կարգի ընդունումը տարաժամկետվել է մինչև համապատասխան ֆինանսական միջոցներ

հատկացվելը: Հարկ եմ համարում հայտնել, որ նշված կարգի ներդրման համար անհրաժեշտ կլիներ պետության կողմից 3 անգամ ավել ֆինանսական միջոցների հատկացում:

**Գիտական և անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ**

2016 և 2017 թվականների ընթացքում 42700.0 հազար դրամի շրջանակներում (ստուգող խմբի կողմից արձանագրված 43700.0 հազար դրամի փոխարեն) իրականացվել է գիտական և անտառտնտեսական աշխատանքներ: Նշված բոլոր ծառայությունններն ու աշխատանքները ձեռք են բերվել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընթացակարգերի միջոցով: Ինչ վերաբերում է արձանագրության մեջ նաև ներառված 1000.0 հազար դրամին, նշված գումարով ձեռք են բերվել ապրանքներ՝ պատրաստի միկրոբիոլոգիական միջավայրեր: Բոլոր ընթացակարգերին մասնակցել են մեկական կազմակերպություն և ճանաչվել հաղթողներ:

Հարկ է նշել, որ գիտական ուսումնասիրությունների համար ՊՈԱԿ-ը նախատեսել է ֆինանսական միջոցներ՝ ելնելով ՊՈԱԿ-ի ֆինանսական վիճակից, սակայն իրականում նմանատիպ ուսումնասիրությունների իրականացման համար շատ ավելի մեծ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Մինչև 2016 թվականը, ՊՈԱԿ-ում իրականացվել են ավելի լայնածավալ գիտական ուսումնասիրություններ՝ բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև Սևանա լիճ թափվող գետերի միկրոբիոլոգիական ուսումնասիրություններ, սակայն 2015 թվականին <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում քննարկվեց և առաջարկվեց գիտական հետազոտությունները իրականացվեն թեմատիկ և լինեն ավելի առարկայական: Խնդիր դրվեց իրականացնել <<Անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարանի հիմնում և դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրություն>> և <<Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրություն>>:

2017թ-ին նախատեսվել է 3000,0 հազար դրամ՝ ցերեկային թիթեռների և թռչունների ուսումնասիրման համար, և տվյալ ուսումնասրության համար աշխատել է պրոֆեսիոնալ մասնագետների խումբ, հիմնականում Ամերիկյան համալսարանի մասնագետներ:

**<<Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ>> ՍՊԸ-ի մասով**

Ընկերությունը իրականում 2009 թվականին հիմանդրվել է Վահե Գուլանյանի կողմից, սակայն 2010 թվականին արդեն իսկ ընկերության բոլոր բաժնեմասերը փոխանցվել են այլ անձի, ուստի ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականի համար հայտարարված գնման ընթացակարգերին ընկերության մասնակցությունը ՀՀ օրենսդրությանը չէր հակասում: Ընկերությունը գիտական ուսումնասիրությունների ոլորտում բավականին մեծ փորձ ունի և աշխատակազմում ընդգրկված են ոլորտի լավագույն մասնագետներ:

Ինչ վերաբերում է ընկերության կողմից գնման գործընթացներին մասնակցելուն, հայտնում եմ, որ 2 դեպքերում ընկերության մասնակցությունը ընթացակարգերին որևէ ձևով չի հակասել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, ինչ վերաբերում է <<Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման>> ծառայություններին, որում Վահե Գուլանյանը հադես է եկել որպես հանձնաժողովի նախագահ, ապա հայտնում եմ. եթե նույնիսկ Գուլանյանի կողմից ինքնաբացարկ հայտարարվեր, միևնույն է դա չէր անդրադառնա ընկերության կողմից ընթացակարգի հաղթող ճանաչվելուն, քանի որ ընթացակարգին մասնակցության հայտ այլ կազմակերպության կողմից չի ներկայացվել, այլ մասնակից չի եղել, ավելին, ընկերությունը ուներ տվյալ ընթացակարգի հրավերով պահանջվող մասնագիտական ներուժն ու փորձառությունը՝ տվյալ ծառայությունը իրականացնելու համար:

Ծառայությունների արդյունքներն ընդունելու վերաբերյալ հայտնում եմ, որ 2016թ.-ին ՊՈԱԿ-ի գիտության գծով տնօրենի տեղակալը հանդիսացել է Վահե Գուլանյանը, հետևաբար ՊՈԱԿ-ի կողմից ձեռք բերվող գիտական ուսումնասիրությունների արդյունքների ընդունումը՝ որպես պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Վ. Գուլանյանի անմիջական պարտականությունն

էր: Այս պարագայում, Վահե Գուլանյանի՝ որպես պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հանդես գալը որևէ կերպ չի հակասում <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրությանը: Ինչ վերաբերվում է նրան, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի տնտեսական բաժնի պետ Տիգրան Մնացականյանը հանդիսացել է ընկերության տնօրենը, ապա հայտնում եմ, որ նշված հանգամանքը ևս որևէ կերպ չի հակասում ՀՀ օրենսդրությանը, ավելին, ընկերությունում կարող էին համատեղության կարգով աշխատել նաև ՊՈԱԿ-ի այլ աշխատակիցներ: Այս դեպքում անհասկանալի է ստուգող խմբի անդրադարձը ընկերության տնօրենի ով լինելուն:

**<<Անտառային արժեքավոր տեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարանի հիմնում և դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրության ծառայություններ>> -ի մասով**

Հայտնում եմ, որ նշված ծառայությունների համար նպատակահարմար վայրը հատկացվել է ՊՈԱԿ-ի կողմից: Ընտրվել է տարածք, որտեղ բացատներ կան, հաշվի է առնվել տարածքում ջրի առկայությունը, հետևաբար թվային տարբերություններ կարող էր լինել սխալ չափագրումների հետ կապված: ՀՀ վերահսկիչ պալատի ստուգող խմբի կողմից կազմված ստուգումների արձանագրությունը ներկայացնելու հետո ՊՈԱԿ-ի կողմից կրկին իրականացվել է նշված տարածքի չափագրում: Թեև ընկերության կողմից իրականացվել են շատ այլ ծախսեր, որոնք նախատեսված չեն եղել գնման պայմանագրում, սակայն կան թերի կատարումներ, ուստի աշխատանքն իրականացրած ընկերության հետ կազմակերպվել են քննարկումներ, որի արդյունքում ընկերությունը պարտավորվել է իր միջոցների հաշվին վերացնել առաջացած շեղումները մինչև 2018թ-ի դեկտեմբերի 31-ը:

Ինչ վերաբերում է 22.05.2014թ -ի մամուլի հրապարակումներին, հայտնում եմ, որ 2014թ-ին ևս <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է նմանատիպ ծրագիր՝ Երանոս գյուղի հարևանությամբ իրականացվել է ծառատունկ, ներկայումս այնտեղ առկա է պուրակ, տեղադրված է ցուցանակ և այն նվիրված է եղեռնի զոհերի հիշատակին:

**<<Սևանի սիգ, կողակ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրման>> ծառայությունների մասով**

<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի և <<Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ>> ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ծառայությունները ՍՊԸ-ի կողմից իրականացվել է պատշաճ մակարդակով և սահմանված ժամկետներում:

Գոյություն ունեցող մանրաձկան արտադրամասը կառուցվել է նշված ծառայությունների մատուցման արդյունքում, ի սկզբանե արտադրամասը ունեցել է 2 հողային ավազան, պլաստիկ վաններ, 4 հատ բետոնային ավազաններ՝ շենքի հետնամասում, որտեղից էլ սնուցման ջուրը հոսել է դեպի արտադրամաս: Ծրագրի հիմնական նպատակը գիտափորձն է եղել՝ համոզվելու համար, թե արդյոք հնարավոր է արհեստական վերարտադրել սիգ, կողակ և բեղլու ձկնատեսակները, ինչ արագությամբ և ինչ պայմաններում են աճում նշված ձկնատեսակները, սակայն դրա համար լայնածավալ հաշվետվություն չի նախատեսվել: Կատարված փորձերի արդյունքում պարզվել է, որ հնարավոր է Սևանի սիգ, բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրությունը: Հաշվի առնելով, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ն ունի 1 ձկնաբան-ձկնաբույծ և տվյալ աշխատակիցը միայնակ իր ուժերով չէր կարող իրականացնել տվյալ ծավալի աշխատանքներ, հետևաբար աշխատանքները իրականացվել են մրցութային կարգով, իսկ ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները մասնակցել են կատարված փորձերին և հսկողություն են իրականացրել, ինչպես նաև ծանոթացել արդյունքներին: Աշխատանքներ են տարվել Սևանի կողակի հետ կապված, սակայն դրական արդյունք չի տվել, քանի որ հայթհայթված ձկնկիթը արհեստական պայմաններում նորմալ չի ինկուբացվել: Գիտափորձը ցույց է տվել, որ բացի կողակից, մյուս բոլոր տեսակների մասով հնարավոր է իրականացնել արհեստական

վերարտադրություն: ՊՈԱԿ-ը գտնում է, որ գիտափորձը բավականին մեծ նշանակություն ուներ և <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի համար, և պետության համար, քանի որ նման գիտափորձ առաջին անգամ էր իրականացվում, որը որ հնարավորություն տվեց ՊՈԱԿ-ին մշակելու Սևանի կողակի արհեստական վերարտադրման այլ մեթոդ, որը ներկայումս շատ արդիական է և քննարկումների փուլում է: Ստուգման արձանագրության մեջ նշված է, որ հողաշեն կամ բետոնային ավազանները բացակայում են, սակայն դրա պատճառն այն է, որ աշխատանքի ընթացքում կառուցված 4 բետոնե ավազանները չեն ապահովել անհրաժեշտ ջրի քանակությունը և բուծարանը կանգնել է ջրի սակավության խնդրի առաջ, այդ իսկ պատճառով ՊՈԱԿ-ի կողմից 4 բետոնե ավազանները քանդվել են և պատրաստվել է 1 հողային ավազան (լճակ), որպեսզի բուծարանն ապահովվի անհրաժեշտ քանակությամբ ջրով: Հողային ավազաններից 1-ը այժմ կա, իսկ մյուսը քանդվել է, տարածքը հարթեցվել է և տարածքում ժամանակավոր լցված են Սևանա լճի ջրածածկվող անտառտնկարկների մաքրումից առաջացած բիոմասսան (արմատները և ճյուղիկները)՝ հետագայում դրանք վերամշակելու և բիովառելիք ստանալու համար: ՍՊԸ-ի հետ քննարկվել է ավազանների նախկին տեսքի բերելու հարցը և ընկերությունը չի առարկել անհարաժեշտության դեպքում նախկինում կառուցած ավազանները իր միջոցներով վերականգնել, պայմանով, որ կուտակված բիոմասսան ՊՈԱԿ-ի կողմից տարածքից դուրս բերվի: Տեղեկացնում եմ նաև, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը նախատեսում է տվյալ ձկան արտադրամասում նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել Սևանի կողակի ձկնկիթի ինկուբացիա:

**Պատրաստի միկրոբիոլոգիական միջավայրեր**

<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ն ունի լաբորատորիա, ունի հիդրոկենսաբան և ստանդարտ լաբորատոր հետազոտությունների համար անհրաժեշտ միկրոբիոլոգիական միջավայրերը ստեղծվում են տվյալ մասնագետի կողմից, սակայն 2016 թվականի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հավելյալ ոչ ստանդարտ հետազոտությունների իրականացման, հետևաբար նաև հավելյալ միկրոբիոլոգիական միջավայրերի անհարժեշտություն է առաջացել: Մեկ մասնագետը ժամանակի առումով չէր կարող հասցնել համապատասխան միջավայրեր ստեղծել, ուստի ՊՈԱԿ-ը նպատակահարմար է գտել դրանք ձեռք բերել պատրաստի վիճակում: Ինչ վերաբերում է ստուգող խմբի կողմից արձանագրած միկրոբիոլոգիական միջավայրերի շուկայական գնին, տեղեկացնում եմ. գուցե հնարավոր լիներ շուկայում գտնել նշված գնով, սակայն պահպանելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները, կազմակերպվել է համապատասխան ընթացակարգ, որին մասնակցել է միայն նշված ընկերությունը և առաջարկած գինը նախահաշվային գնից բարձր չի եղել, ուստի հնարավոր չէր այլ կազմակերպությունից ձեռք բերել:

**<<Բիոպրոյեկտ>> ՍՊԸ-ի մասով**

2016թ-ին ընկերության կողմից անտառտնկման աշխատանքներ են իրականացվել 9000,0 հազար դրամ արժեքով: Ստուգող խմբի կողմից արձանագրած <<Բիոպրոյեկտ>> ՍՊԸ-ի տնօրենի և հիմնադրի անունները մատնանշելը անհասկանալի է: Ինչ վերաբերում է տվյալ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում ՍՊԸ-ի ունեցած միակ աշխատակցի 2 Ընկերություններում միաժամանակ աշխատելու հանգամանքին, ինչպես նաև տվյալ աշխատակցի՝ ՊՈԱԿ-ի տնտեսական բաժնի պետ Տ. Մնացականյանին ազգակից լինելու հանգամանքին, հայտնում եմ, որ նշված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել աշխատանքները պատշաճ որակով և նախատեսված ժամանակահատվածում իրականացնելու համար և չեն հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին: Հայտնում եմ նաև, որ Սիմոն Մնացականյանը աշխատել է որպես բուսաբան և աշխատանքները ամբողջությամբ իրականացվել են <<Բիոպրոյեկտ>> ՍՊԸ-ի կողմից, գնման պայմանագրին համապատասխան: Նշված աշխատանքները ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացնելու եզրահանգումը անհիմն է:

Ինչ վերաբերում է Սևանի մասնաճյուղի Ախթամար և Մարտունի մասնաճյուղի Երանոս տեղամասերում անտառտնկարկների վիճակին, հայտնում եմ, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը ծառատունկ իրականացնելու համար ընտրում է տարբեր հատվածներ և տարբեր

ծառատեսակներ՝ դրանց աճի առավել նպատակահարմար վայրերը գտնելու համար: Հետևաբար ընտրված տարածքների արդյունքում Մարտունու մասնաճյուղում նշված տեսակը ցուցաբերել է աճման բարձր տեմպեր, իսկ Սևանի մասնաճյուղի Ախթամարի տեղամասում աճման ցածր տեմպեր, ինչը պայմանավորված է եղել տարածքի սակավաջրության հետ: Նշվածի արդյունքում արձանագրվել է, որ Ախթամար տեղամասի նշված հատվածում նպատակահարմար չի բարդու տնկիների աճեցումը: Ընկերության կողմից տվյալ տարում աշխատանքը կողմերի միջև կնքված գնման պայմանագրին համապատասխան ամբողջությամբ իրականացվել է, ինչի մասին է վկայում արդյունքների հանձման-ընդունման արձանագրությունը:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ <<Սևան>> ազգային պարկի տարածքում ամեն տարի իրականացվող ծառատնկումների շնորհիվ այսօր արդեն գոյություն ունի երիտասարդ անտառաշերտ:

**Բիոզուգարանների մասով**

ՀՀ Կառավարության 28.04.2011թ. N527-Ն որոշմամբ 2011 թվականին ստեղծվել են Սևանի հանրային թիվ 1 և 2 լողափերը: Հանրային լողափերի կառուցումը իրականացվել է <<Նաիրիշին>> ԲԲ ընկերության կողմից: Նույն ընկերության կողմից կառուցապատման շրջանակներում հանրային լողափերում 2011թ-ին տեղադրվել են թվով 12 բիոզուգարաններ: ՀՀ Կառավարության 07.06.2012թ-ի N752-Ն որոշմամբ ստեղծվեց թիվ 3 հանրային լողափը՝ թիվ 1 հանրային լողափին կից: Լողափնյա 1 սեզոնի ընթացքում պարզ դարձավ, որ նշված բիոզուգարանները բավարար չէին մեծաքանակ հանգստացողներին սպասարկելու համար: 2015 թվականին, ՄԱԶԾ ԳԷՀ ՓԴ ծրագրի շրջանակներում <<Բիոս>> բնապահպանական հասարակական կազմակերպության կողմից թիվ 1 և 2 հանրային լողափերի բիոզուգարանների զուգարանակոնքերը հանվեցին, իսկ հիմնակմախքների մեջ հավաքվեցին Կովկասյան զուգարանակոնքեր, որտեղից ջուրը հոսում էր հատուկ նախատեսված կենսաբանական տարաներ, որտեղ անցնում էր կենսաքիմիական մշակումներ: Այսպիսով թիվ 1 և 2 հանրային լողափերից հանված թվով 12 տորֆային բիոզուգարանների զուգարանակոնքերը տեղափոխվեցին ՊՈԱԿ-ի պահեստ, ինչն էլ արձանագրվել է ստուգող խմբի կողմից: Այսօրվա դրությամբ 3 հանրային լողափերում առկա են 18 զուգարաններ:

Ինչ վերաբերում է ՊՈԱԿ-ի գրասենյակի տարածքում առկա բիոզուգարաններին, որոնք հանդիսանում են տնօրեն Վահե Գուլանյանի անձնական գույքը, դրանք գրասենյակի տարածք են տեղափոխվել 2014թ-ին: Մինչ այդ, հանգստի սեզոնին վերը նշված ընկերության կողմից տեղադրված զուգարանների հետ միասին դրանք տեղադրված են եղել հանրային լողափերում, սակայն ՊՈԱԿ-ի գույքը չեն հանդիսացել:

Ընկերության կողմից բիոզուգարանները այլ կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրելը <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին չի վերաբերում, ինչպես նաև գտնում եմ, որ դրա վերաբերյալ արձանագրությունում կատարված անդրադարձը անհիմն է:

**<<Նաիրի-Նունե>> ՍՊԸ-ի մասով**

<<Նաիրի-Նունե>> ՍՊԸ-ի կողմից 2017թ.-ին իրականացված անտառտնկման աշխատանքների վերաբերյալ հայտնում եմ, որ թեև <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ն ունի տնկարան, սակայն նշված քանակով տնկիներ չուներ, իսկ առկա տնկիները ենթակա չէին տվյալ տարում տնկման, ուստի ծառատունկն իրականացվել է գնման ընթացակարգի արդյունքում: Հարկ եմ համարում նշել, որ ՊՈԱԿ-ը ևս այն կարծիքին է, որ տնկիներ ձեռք բերելու համար գումար չծախսվի, այդ իսկ պատճառով ՊՈԱԿ-ը 2018թ-ին նախատեսել է ծառատունկը իրականացնել սեփական միջոցներով, սեփական տնկարանից: Ինչ վերաբերում է ՊԵԿ-ի տեղեկատվությանը՝ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ը նման տեղեկատվություն չունի, սակայն փաստն այն է, որ ծառատունկը ՍՊԸ-ի կողմից իրականացվել է պատշաճ մակարդակով և սահմանված քանակով:

**<<Կարեն Աղաբաբյան Էռնեստի>> ԱՁ-ի մասով**

<<Կարեն Աղաբաբյան Էռնեստի>> ԱՁ-ի կողմից, համաձայն ՊՈԱԿ-ի հետ կնքված գնման պայմանագրի, պրոֆեսիոնալ ձևով իրականացվել են տարածքի ցերեկային թիթեռների և թռչունների մոնիթորինգ, ինչի վերաբերյալ հաշվետվությունների հայերեն և անգլերեն տարբերակները ներկայացվել է ՊՈԱԿ-ին: Անգլերեն տարբերակները ԱՁ-ի կողմից ներկայացվել են 2017թ. նոյեմբերի 1-ին (էլ. Փոստով ուղարկելու վերաբերյալ կցվում է), իսկ հայերեն հաշվետվությունները ներկայացվել են 2018թ. հունվարի 11-ին (էլ. Փոստով ուղարկելու վերաբերյալ կցվում է): Պայմանագրով սահմանված ծառայությունները կատարվել են ամբողջությամբ, ուստի որևէ գումար ենթակա չէ վերականգման: Հարկ եմ համարում նշել, որ իրականում նմանատիպ ծառայության արժեքը 3000.0 հազար դրամից շատ ավելին արժե, և դեռ հարց է, նպանատիպ որակի ծառայություններ այլ մեկը կարող էր մատուցել, թե ոչ, քանի որ տվյալ ուսումնասիրության համար աշխատել է պրոֆեսիոնալ մասնագետների խումբ (Հաշվետվությունը կցվում է):

**Հողօգտագործման մասով**

Ստուգող խմբի կողմից արձանագրած <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից ցուցաբերած ոչ միատեսակ, անհավասար մոտեցման և որոշ դեպքերում միայն գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու դիտարկմանը առարկելով, հայտնում եմ հետևյալը.

<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը երբևէ չի ցուցաբերել կողմնակալ, կամ անհավասար մոտեցում վարձակալների նկատմամբ, այլ առաջնորդվել է ՀՀ քաղաքացիական և այլ օրենսգրքերի պահանջներով, ինչպես նաև <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև կնքված պայմանագրերով: Ստորև ներկայացնում եմ հիմնավորումները, համապատասխան օրինակներով.

1. Պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով սահմանված է, որ վարձակալը վարձավճարները պետք է վճարի տարեկան կտրվածքով, իսկ պայմանագիրը վարձավճարների ոչ բարեխիղճ կատարելու մասով վաղաժամկետ լուծելու հիմքերից է պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո վարձակալի կողմից 2 անգամից ավել վճարում չկատարելը: Վերը նշվածից հետևում է, որ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջով դատարան դիմելու համար անհրաժեշտ է 2 տարի սպասել, մինչև վարձակալը 2 անգամից ավել կետանց թույլ տա, ինչն էլ հանդսանում է դատարան միայն գումարի բռանագանձման պահանջով դիմելու պատճառներից մեկը: Նշված խնդիրը կարգավորելու համար <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ում քննարկումներ են իրականացվել վարձավճարների մասով հստակ ժամանակացույց սահմանելու վերաբերյալ պայմանագրերում երկկողմանի փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հայցով դատարան չդիմելու պատճառ է հանդիսանում նաև այն, որ, մինչ հայցով դատարան դիմելը, պետք է նաև պահպանել արտադատարանական կարգը, այն է՝ պայմանագրի վաղաժամկետ լուծելու առաջարկ ուղարկել կողմին՝ հնարավորություն տալով հայտնել իր դիրքորոշումը, իսկ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքերի առկայության դեպքում գրեթե բոլոր անբարեխիղճ վարձակալներին ուղարկել է պայմանագրերը վաղաժամկետ լուծելու առաջարկներ, բացառությամբ սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների, կամ անհատների, իսկ վերջիններիս վերաբերյալ ՊՈԱԿ-ը համապատասխան դատարաններին է ներկայացրել սնանկության վարույթում որպես պահանջատեր գրանցվելու դիմումներ: Ուղարկած առաջարկների մեծ մասը հետ է վերադարձվել <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ՝ չպահանջված, անհայտ, տեղափոխված, փակ դուռ, մահացած, մերժված, սխալ հասցե նշումներով, ինչը հաստատվում է նաև ծրարների հետ ծանուցումներով: Չնայած թվարկված պատճառներին, <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը գումարի բռնագանձման և պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջներով դիմել է դատարան, սակայն հայցը բավարարվել է մասնակի՝ գումարի բռնագանձման պահանջը բավարարվել է, իսկ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջը մերժվել է, քանի որ դատարանը արձանագրել է, որ հայցվորի կողմից պատասխանողին ուղարկված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու առաջարկը ստանալու վերաբերյալ չի ներկայացել հիմնավոր ապացույց

(առաջարկները հետ են վերադարձվել չպահանջված և մերժված նշումներով, օրինակ՝ քաղաքացիական գործեր թիվ ԳԴ4/1621/02/17 և ԳԴ1/0325/02/17):

Նշված խնդիրը կարգավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 և 468 հոդվածներով, ինչպես նաև առկա է ՀՀ Վճռաբեկ դատարանի 19.10.2012թ-ի ԵՇԴ/1103/02/11 գործով որոշումը, ըստ հայցի Արմեն Տիշինյանի ընդդեմ Հմայակ Խաչատրյանի: Ստեղծված իրավիճակից երևում է, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը ոչ թե ցուցաբերել է ոչ միատեսակ և անհավասար մոտեցում նույն հանգամանքների պարագայում, այլ պարզապես խուսափել է ավելորդ պետական տուրքի վճարումից և անարդյունավետ աշխատանք կատարելուց:

Արձանագրության մեջ նշված թվով 70 վարձակալների մասով ՊՈԱԿ-ը անգործություն չի դրսևորել: Առդիր ցանկում ներկայացված են նշված հիմնավորումները (կցվում է):

Լավանդա սիթիի մասով - ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԳԴ4/0253/02/11 քաղաքացիական գործով ըստ հայցի <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի ընդդեմ Արայիկ Հայրապետյանի, երրորդ անձ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետարան գումարի բռնագանձման պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Արայիկ Հայրապետյանի ընդդեմ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի՝ պայմանագիրը լուծելու պահանջի մասին, 2011թ.-ից սկսած դատարանում վիճարկվել է գումարի չափը, տրամադրված տարածքի չափերը և պայմանագիրը լուծելու պահանջները: Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԳԴ4/0253/02/11 վճռի համաձայն պայմանագիրը լուծվել է, իսկ մնացած պահանջների մասով գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության: Գործի քննության ընթացքում, Արայիկ Հայրապետյանի և տնակների սեփականատերերի հետ բազմաթիվ անգամներ արտադատարանական կարգով բանակցել ենք՝ խնդրին վերջնական լուծում տալու համար: Արայիկ Հայրապետյանը բանակցությունների ընթացքում պնդել է, որ մեր կողմից ներկայացված գումարի չափը խիստ վիճելի է, քանի որ ժամանակի ընթացքում տարածքի զգալի մասը ջրածածկվել է և պետք է կատարվի վերահաշվարկ, սակայն նույնպես կողմերիս միջև համաձայնություն ձեռք չբերվեց: Իսկ բանակցությունների մյուս կողմ հանդիսացող սեփականատերերը իրենց մտահոգություններն էին հայտնում հողի նկատմամբ իրենց իրավունքի անորոշության վերաբերյալ, հետևաբար պատրաստակամություն հայտնեցին նշված խնդրին լուծում տալու և վարձակալության իրավունք ձեռք բերելու: Արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն, որով սեփականատերերը պետք է համամասնորեն վճարեն նախկինում կուտակված վարձավճարների գումարները՝ կնքելով <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի հետ հողի վարձակալության պայմանագրեր: Վերոգրյալից հետևում է, որ կողմերիս միջև կնքված հաշտությունը բնավ էլ պահանջի զիջում չէ, այլ ընդհակառակը՝ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը ամբողջությամբ կհավաքագրի տվյալ գումարը, իսկ հետագայում, նոր կնքված պայմանագրերի համաձայն, 1 քմ-ի համար սահմանվող արժեքը մի քանի անգամ կգերազանցի Արայիկ Հայրապետյանի հետ կնքված պայմանագրով նախատեսված 1 քմ-ի դիմաց 14 ՀՀ դրամ արժեքին: Հաշտության համաձայնությունը արդեն իսկ տվել է իր դրական արդյունքը, քանի որ սեփականատերերից մի քանիսի հետ արդեն ձեռք է բերվել պայմանավորվածություն, և պատրաստվում ենք կնքել վարձակալության նոր պայմանագրեր:

08.01.2016թ. և 09.01.2017թ.-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի բնակչուհի Արմանուշ Դավթյանի հետ կնքված 64 քմ. ամսական 100.0 հազ. ՀՀ դրամով վարձակալության պայմանագիր կնքելու վերաբերյալ հայտնում եմ, որ նշված տարածքը ավելի նպատակահարմար է և տնտեսապես ավելի շահավետ Մարտունու մասնաճյուղի բնականոն աշխատանքը ապահովելու նպատակով, քանի որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը տարածքը շահագործում է միայն վճարելով 100.0 հազ. ՀՀ դրամի չափով որպես վարձավճարի գումար, որից պահում է կատարվում գումարի 10%-ի չափով որպես եկամտային հարկի գումար և առանց որևէ ընթացիկ վերանորոգման կամ կոմունալ սպասարկման ծախսերի վճարի: Վերոնշյալ փաստը հիմնավորելու համար հարկ եմ համարում նշել, որ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը Սևանի մասնաճուղում, բացի կոմունալ վճարումներից, շենքի միայն տանիքի վերանորոգման համար 2016թ. ծախսել է շուրջ 2 միլիոն ՀՀ դրամ, իսկ Վարդենիկի մասնաճյուղի շենքի բնականոն մաշվածության հետևանքով առաջացած վերանորոգման ծախսերը հոգալու համար ծախսվել է շուրջ 1.9 միլիոն ՀՀ դրամ: Երկու դեպքում էլ միայն վերանորոգման ծախսերը անհամեմատ շատ

են կազմում, քան վարձակալած տարածքի վարձավճարի գումարը: Պայմանագիրը չի հակասում որևէ օրենսդրական ակտի:

**Սահմանների վերաբերյալ**

Սահմանների վերաբերյալ խմբի կողմից արձանագրածի վերաբերյալ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը առարկություն չունի, ավելին, ՊՈԱԿ-ը համակարծիք է ստուգող խմբի հետ:

**Չպարզաբանված մուծումներ**

ՊՈԱԿ-ում չպարզաբանված մուծումների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար վերանայվում է, ճշգրտվում են այլ անձի կողմից որևէ հողօգտագործողի համար կատարված վճարումները, պայմանագրերի համարները և այլն: Ինչ վերաբերում է <<Ռենեսանս փրոֆիթ>> ՍՊԸ-ին, նշված կազմակերպությունը չունի ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագիր, սակայն փաստացի ունի պետությունից մասնավորեցված գույք և ՀՀ հողային օրենսգրքի 118 հոդվածի 4-րդ մասով տիրապետում է նաև համապատասխան հողամասին և վճարել է փաստացի տիրապետման համար:

**Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների վերաբերյալ**

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության և <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի միջև 02.10.2017թ.-ին կնքված ՀՀ-ԴՇ-17/11 պայմանագրի, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայությունների իրականացման համար, որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 83 875.0 հազար դրամ գումար:

Մաքրման աշխատանքների իրականացման համար ՊՈԱԿ-ի կողմից ընթացակարգի անտեսելու վերաբերյալ հայտնում եմ. ՀՀ կառավարության 24.08.2017թ. N1052-Ն որոշման ընդունումից անմիջապես հետո, երբ արդեն իսկ պարզ դարձավ, որ մաքրումներն իրականացվելու են <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից, ՊՈԱԿ-ը, հաշվի առնելով ժամանակի սղությունը, <<Արտնաուկա>> ՍՊԸ-ի միջոցներով անհապաղ ձեռնամուխ եղավ մաքրման աշխատանքներին, քանի որ ժամանակ էր պահանջվելու մինչև նշված որոշումն ուժի մտներ, կնքվեր համապատասխան դրամաշնորհի պայմանագիր (ինչի մասին էլ վկայում է հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագիրը): Այս պարագայում եթե հոկտեմբերի 2-ից հետո կազմակերպվեր ընթացակարգ, որի համար պահանջվելու էր մոտ 10-15 օր և հոկտեմբերի 20-ից մինչև դեպտեմբերի 20-ն ընկած կարճ ժամանակահատվածում անհնարին կլիներ նմանատիպ ծավալի աշխատանք իրականացնել: Ուստի ՊՈԱԿ-ի կողմից <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ կետով նախատեսված հիմքով, մրցույթային կարգով ձեռք է բերվել վառելիք և այլ անհրաժեշտ տրանսպորտային նյութեր, ինչն էլ հետագայում տրամադրել է մաքրումն իրականացնող կազմակերպությանը: Այսպիսով, ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է գնումը մեկ անձից ձեռք բերելու միջոցով, որպեսզի ընկերությունը վճարեր իր աշխատակիցներին՝ կատարված աշխատանքի և վարձակալած տեխնիկայի դիմաց:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ 2017 թվականին իրականացրած մաքրման աշխատանքները կատարվել են աննախադեպ բարձր որակով, ավելին, նախատեսված 64,0 հա-ից ավել է մաքրվել շուրջ 6,0 հա, երբևէ նմանատիպ մաքրում չի իրականացվել: Տվյալ տարում բացի ծառերի կտրելն ու արմատախիլ անելը, նաև տարածքի ամբողջ հողաշերտն է հեռացվել ամբողջ օրգանական նյութերի հետ մասին: Կատարվածի բարձր որակի մասին է վկայում և աշխատանքներն ընդունող հանձնաժողովի, և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության, և ՊՈԱԿ-ի անձնակազմի կարծիքները: Եվ ինչու չէ, նաև ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ստուգումներ իրականացնող խումբը, համեմատականներ անցկացնելով նախորդ տարիների մաքրումների և 2017 թվականի մաքրումների որակի մեջ, չէր կարող չնկատել 2017 թվականի մաքրումների որակի տարբերությունը:

Ելնելով վերոգրյալից, հարկ եմ համարում նշել, որ թե ՊՈԱԿ-ի, թե ՍՊԸ-ի գործունեության հետևանքով պետությանը, կամ ՊՈԱԿ-ին որևէ վնաս չի հասցվել թե ֆինանսական, և թե աշխատանքի հետ կապված :

Ստուգող խմբի կողմից արձանագրած վերականգնելու ենթակա գումարների վերաբերյալ տեղեկացնում եմ, որ դա անհեթեթություն է, դա վկայում է հանգամանքների ոչ բազմակի քննության մասին: Գումարը պետության կողմից ՊՈԱԿ-ին է տրվել դրամաշնորհի տեսքով: Պետության կողմից որոշվել է իրականացման վայրը և ծավալները: Պետությունը տրամադրել է կոնկրետ գումար՝ կոնկրետ ծավալի աշխատանքների համար: ՊՈԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում պետության կողմից սահմանված ամբողջ ծավալը մաքրվել է:

Շահութարահարկի մասով հայտնում եմ, որ յուրաքնաչյուր տարվա համար շահութահարկը հաշվարկվում և վճարվում է հաջորդ տարվա մինչև ապրիլի 15-ը, հետևաբար ՊՈԱԿ-ը դեռևս շահութահարկի հաշվետվություն չի ներկայացրել: Այս պարագայում ստուգող խմբի կողմից շահութահարկը վերականգնելու վերաբերյալ արձանագրածը անհիմն է:

Ինչ վերաբերում է Ավելացված արժեքի հարկին, հարկ եմ համարում կրկին շեշտել, որ պետության կողմից գումարը տրամադրվել է որպես դրամաշնորհ, իսկ ստուգող խմբի կողմից հղում չի արվել այն իրավական ակտին, համաձայն որի դրամաշնորհի ձևով ստացված գումարից ավելացված արժեքի հարկ պետք է վճարվեր:

Արձանագրության մեջ նշված ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հաշվարկված և ՊՈԱԿ-ին ավել փոխանցված գումարների վերաբերյալ հայտնում եմ, որ գումարը չի հաշվարկվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, գումարը հաշվարկված և հաստատված է ՀՀ կառավարության կողմից, ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից, իսկ հաշվարկված գումարի դիմաց սահմանված աշխատանքն ամբողջությամբ իրականացվել է:

ՀՀ բնապահպանության նախարարության և <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի միջև 02.10.2017թ.-ին կնքված ՀՀ-ԴՇ-17/11 պայմանագրով նախատեսված էր 5.0 հա ջրածածկ տարածքի մաքրման աշխատանքներ՝ Watermaster classic III ֆրեզերային հողագործ-էքսկավատորով: Թեև ՊՈԱԿ-ը տվյալ տեխնիկան շահագործելու համար պետք է ունենար <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի համաձայնությունը, սակայն ելնելով աշխատանքների անհապաղ իրականացման անհրաժեշտությունից, ՊՈԱԿ-ի տնօրենի ցուցումով տեխնիկան շահագործվել է: Ինչ վերաբերում է մեխանիզատորի մինչև դեկտեմբերի 20-ը աշխատելուն, հայտնում եմ, որ թեև տեխնիկայի աշխատանքը տարածքում ավարտվել է նոյեմբերի 30-ին, սակայն տեխնիկան ՊՈԱԿ-ի տարածք տեղափոխելուց հետո անհրաժեշտություն կար պատշաճ խնամք իրականցնել և կոնսերվացնել՝ հետագայում տեխնիկայի անխափան շահագործում իրականցնելու համար:

**Ֆիզիկական անձանց կողմից իրականացված մաքրման վերաբերյալ**

Ֆիզիկական անձանց կողմից Սևանա լճի ջրածածկվող տարածքների մաքրումն իրականացվել է համաձայն ՀՀ ԱԺ մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2010թ. նոյեմբերի 25-ի նիստում հավանության արժանացած պայմանագրերի տիպային ձևերին համապատասխան: Իսկ ՀՀ կառավարության 2014թ. N359-Ն որոշմամբ սահմանվել է, որ անտառտնկարկների մաքրման արդյունքում գոյացած անտառանյութը ֆիզիկական անձանց տրամադրվում է անվճար:

Ֆիզիկական անձանց միջոցով իրականացվող անտառմաքրումների հիմնական նպատակը ՀՀ պետական բյուջեի միջոցների խնայումն է, որպեսզի բյուջեից հնարավորինս քիչ գումարներ ծախսվեն Սևանա լճի ջրածածկվող տարածքները մաքրելու համար: Ընդհանուր առմամբ 2010-2017 թվականի ընթացքում ֆիզիկական անձանց կողմից մաքրվել է Սևանա լճի ջրածածկվող 324 հա տարածք, հետևաբար բյուջեից տնտեսվել է շուրջ 421,2 միլիոն դրամ գումար, քանի որ պետության կողմից իրականցվող մաքրումների յուրաքանչյուր 1 հա-ի համար հավարկվում և պետ բյուջեից վճարվում է մոտ 1,3 միլիոն դրամ գումար: Միայն 2016 և 2017 թվականներին ֆիզիկական անձանց

միջոցներով մաքրվել է 27,10 հա տարածք, ինչի համար պետությունը կծախսեր շուրջ 35,2 միլիոն դրամ:

Ստուգող խմբի կողմից տնտեսական օգուտներ ունենալու մասով արձանագրած հաշվարկները իրականությանը չեն համապատասխանում և որևէ միտք չեն արտահայտում: Հետևաբար պարզաբանման կարիք կա, թե <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը անտառտնկարկների մաքրման աշխատանքներից ինչպես էր գումար տնտեսելու: Ավելին, եթե տարածքները մաքրման տրամադրվեին մրցութային կարգով, յուրաքանչյուր մաքրվող հեկտարի համար մաքրումն իրականացնողին պետք է վճարվեր մոտ 1.3 միլիոն դրամ գումար:

Արձանագրության մեջ նշված է, որ ՊՈԱԿ-ի և ֆիզիկական անձանց միջև կնքված անտառմաքրման թվով 3 պայմանագրերի փաթեթներում բացակայում են քաղաքացիների դիմումները, ինչի վերաբերյալ հայտնում եմ. թեև փաթեթներում տվյալ պահին դրանք առկա չեն եղել, սակայն ՊՈԱԿ մուտք եղած բոլոր դիմումներն ու գրությունները պահպանվում են ՊՈԱԿ-ի Քարտուղարությունում, իսկ դրանք գրանցվում են համապատասխան գործավարական մատյաններում (անհրաժեշտության դեպքում դրանք կտրամադրվեն):

Ինչ վերաբերում է մաքրումների համար իրականացված անհամաչափ հողհատկացումներին, ապա դա իրականությանը չի համապատասխանում: Ֆիզիկական անձանց մաքրման ենթակա հողատարածքները տրամադրվել են հերթով և համաչափ՝ ըստ մասնաճյուղերի և համայնքների:

**Անտառանյութի իրացման վերաբերյալ**

Անտառհատումներից առաջացած փայտանյութը մուտքագրվում է ՊՈԱԿ-ի պահեստ, և որպեսզի այն չորակազրկվի, համապատասխան դիմումների հիման վրա իրացվում է: Իսկ իրացման մասով ՀՀ օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա, թե ում վաճառվի: Եվ այստեղ բոլորովին անհիմն է փայտանյութը ձեռք բերողների անունները մատնանշելը:

ՊՈԱԿ-ի կողմից <<Արտյոմ Մուրադյան>> և <<Արտաշես Ավետիսյան>> ԱՁ-ներին վաճառված և <<Գերմանական միջազգային համագործակցության ընկերության ԿԻԿ>> ծրագրին վաճառված փայտանյութի գները բնականաբար նույնը չէին կարող լինել, քանի որ վերջինիս վաճառվել են ընտրված, հարթ, ուղիղ, միաչափ, կիսամշակված բարձր սորտի շինափայտ: Այս մասով ՊՈԱԿ-ի գործունեությունը որևէ վնաս չի հասցրել թե պետությանը, թե ՊՈԱԿ-ին:

ՊՈԱԿ-ի կողմից անտառանյութն իրացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 13.05.2004թ. N97 հրամանով, իսկ Սևանա լճի ջրածած անտառտնկարկների մաքրման աշխատանքների արդյունքում կուտակված անտառանյութի բացթողնման համար՝ ՀՀ բնապահպանության նախարարին կից կոլեգիայի 14.10.2009թ. ՆԿ4/1 որոշմամբ սահմանված գներով: Արձանագրության մեջ նշված փայտանյութի շուկայական գների վերաբերյալ հայտնում եմ, որ Սևանի ավազանում նման գին գոյություն չունի: Արձանագրված գները ուռճացված են:

Ինչ վերաբերում է անտառմաքրման փաստաթղթերի փաթեթներում որոշ փաստաթղթերի (3 անտառհատման տոմս, 4 հաշվեգնահատման ցուցակներ, 7 հատատեղի հատկացումներ, 1 մուտքագրման ակտ, նախարարին ուղված գրություններ) բացակայությանը, հայտնում եմ, որ փաթեթներում տվյալ փաստաթղթերի բացակայությունը դեռևս չի նշանակում, որ դրանք չկան, քանի որ տվյալ փաստաթղթերի հիման վրա է իրականացվում անտառմաքրման աշխատանքները: Փաստաթղթերը կարող էին գտնվել քարտուղարությունում կամ պատասխանատու ստորաբաժանման փաստաթղթերի հետ (անհրաժեշտության դեպքում դրանք կտրամադրվեն):

Ներկայացնելով <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի առարկությունները, հայտնում եմ նաև, որ ստուգող խմբի կողմից ներկայացված արձանագրության մեջ նշված փաստերից պարզ չէ, թե ինչ իրավական խախտումներ են իրականացվել ՊՈԱԿ-ի կողմից, կամ ինչ նյութական վնաս են կրել պետությունը և ՊՈԱԿ-ը, քանի որ որևէ փաստի վերաբերյալ չկա իրավական հիմնավորում և հղում որևէ իրավական ակտի: Ավելին, փաստերը ներկայացված են ենթադրությունների և եզրակացությունների հիման վրա: Ուստի, հաշվի առնելով ՊՈԱԿ-ի հիմնավոր առարկությունները, առաջարկում եմ արձանագրությունը վերախմբագրել:

# 2.4 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 18/3 և սեպտեմբերի 12-ի թիվ 18/2 որոշումները: |
| **Վերահսկողության նպատակը** | Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող՝ վերահսկողության ենթակա ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման օրինականության և արդյունավետության ուսումնասիրություն: |
| **Վերահսկողության առարկան** | Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող «Տարածքային զարգացման հիմնադրամի», «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման», Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեյսմիկ անվտանգության բարելավման» վարկային ծրագրերի, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Տեղական ինքնակառավարման բարեփոխումների», ՀԲ աջակցությամբ իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» դրամաշնորհային ծրագրերին հատկացված միջոցների օգտագործում: |
| **Վերահսկողության օբյեկտը** | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ): |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | Ծրագրերի սկզբից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:<br><br>Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են վերահսկվող օբյեկտից ստացված փաստաթղթերը և տվյալները, կիրառվել են ընտրանքի ոչ վիճակագրական մեթոդներ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծության են ենթարկվել դիտարկման և ստուգման ընթացքում ստացված նյութերն ու արձանագրված փաստերը: Իրա- |

կանացվել է ֆինանսական և այլ հաշվետվությունների ու համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապակցվածության և համեմատության վերլուծություն:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1521-Ն որոշմամբ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը վերանվանվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (կրճատ ՀՏԶՀ) և նույն որոշմամբ հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

**2017թ. ընթացքում հոգաբարձուների խորհրդի կողմից որևէ ծրագրի ամփոփ բյուջեների հաստատում տեղի չի ունեցել:**

2017թ. ընթացքում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմի որևէ ծրագրի ամփոփ բյուջեների հաստատում տեղի չի ունեցել: 03.05.2017թ. հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությամբ որոշվել է հաստատել ՀՏԶՀ-ի 2017թ. բյուջեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված տարբերակը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված տարբերակն առ ստուգման ավարտը չէր ներկայացվել:

Հոգաբարձուների խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են տարեկան առնվազն երկու անգամ, սակայն 2016թ. ընթացքում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից նիստեր չեն իրականացվել, իսկ 2017թ. ընթացքում իրականացվել է մեկ նիստ 28.04.2017թ.-ին:

### *I. Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի վերաբերյալ*

**Ամբողջական ֆինանսավորումը կազմելու է 42,850.0 հազ. ԱՄՆ դոլար**

**Վարկային համաձայնագիրը՝** Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 2015թ. ապրիլի 8-ին, որն ուժի մեջ է մտել 180 օր անց: Ծրագիրն ավարտվում է 2020 թվականի հունիսի 30-ին, ամբողջական ֆինանսավորումը կազմելու է 42,850.0 հազ. ԱՄՆ դոլար, որից 11,000.0 հազ. ԱՄՆ դոլար պետք է հատկացվի ՀՀ կառավարության կողմից, 1,850.0 հազ. ԱՄՆ դոլար՝ շահառու համայնքների կողմից, 30,000.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ՝ ՎԶՄԲ-ի կողմից՝ համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի, օգտագործման և հասանելիության բարելավման նպատակով:

Հայաստանի համայնքներում կիրականացվեն սոցիալական ենթակառուցվածքների (դպրոցներ, մանկապարտեզներ, բժշկական ու սոցիալական ծառայությունների կենտրոններ, համայնքային կենտրոններ, ջրամատակարարման ու աղբահանության համակարգեր), ինչպես նաև տնտեսական ենթակառուցվածքների (ոռոգման համակարգեր, գյուղմթերքների վերամշակման ու պահեստային շինություններ, շուկաներ և այլն) վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ:

Նոր ծրագրի ուղղակի շահառու կդառնան 150 համայնքներ, հիմնականում՝ գյուղական:

### *Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվությունների, 2015թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 990,900.7 հազ. դրամ, փաստացի ծախսը և վճարումը 611,613.6 հազ. դրամ:

ՈՒսումնասիրությամբ պարզվեց, որ հաշվետվությամբ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով ցույց է տրվել վճարում 4,249.7 հազ. դրամի, սակայն նշված հոդվածով ծախս չի իրականացվել: Նշված գումարի չափով իրականացվել է եկամտային հարկի վճարում, որը պետք է ցույց տրվեր այլ ծախսեր հոդվածով:

2016թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 2,872,337.7 հազ. դրամ, փաստացի ծախսը և վճարումը 4,010,529.4 հազ. դրամ:

**Վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 12,057.8 հազ. դրամի չափով**

ՈՒսումնասիրությամբ պարզվեց, որ հաշվետվությամբ շենքերի և շինությունների շինարարություն հոդվածով ցույց է տրվել վճարում 3,128,859.1 հազ. դրամի, իսկ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով՝ 69,208.53 հազ. դրամի: Ընդամենը նշված հոդվածներով ցույց է տրվել վճարում 3,198,067.6 հազ. դրամի, սակայն իրականացվել է փաստացի վճարում 3,210,125.4 հազ. դրամի, կամ վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 12,057.8 հազ. դրամի չափով:

**Վճարումը հաշվետվությամբ ավել է ցույց տրվել 16,869.5 հազ. դրամի չափով**

Վարչական սարքավորումներ հոդվածով վճարում է ցույց տրվել 144,687.4 հազ. դրամի, սակայն նշված հոդվածով իրականացվել է փաստացի վճարում 127,817.9 հազ. դրամի, կամ վճարումը հաշվետվությամբ ավել է ցույց տրվել 16,869.5 հազ. դրամի չափով:

**Վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 3,776.5 հազ. դրամի չափով**

Նախագծահետազոտական ծախսեր հոդվածով վճարում է ցույց տրվել 349,070.5 հազ. դրամի, սակայն նշված հոդվածով իրականացվել է փաստացի վճարում 352.847.0 հազ. դրամի, կամ վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 3,776.5 հազ. դրամի չափով:

2017թ. ինը ամիսների ճշտված պլանը կազմել է 3,376,733.3 հազ. դրամ, փաստացի ծախսը և վճարումը՝ 1,889,403.1 հազ. դրամ:

**Վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 11,454.2 հազ. դրամի չափով**

ՈՒսումնասիրությամբ պարզվեց, որ հաշվետվությամբ վարչական սարքավորումներ հոդվածով վճարում է ցույց տրվել 63,534.44 հազ. դրամի, սակայն նշված հոդվածով իրականացվել է փաստացի վճարում 52,080.2 հազ. դրամի, կամ վճարումը հաշվետվությամբ ավել է ցույց տրվել 11,454.2 հազ. դրամի չափով:

**Վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 10,941.1 հազ. դրամի չափով**

Նախագծահետազոտական ծախսեր հոդվածով հաշվետվությամբ ցույց է տրվել 89,157.84 հազ. դրամի վճարում, սակայն նշված

հոդվածով իրականացվել է փաստացի վճարում 100,098.9 հազ. դրամի կամ վճարումը հաշվետվությամբ պակաս է ցույց տրվել 10,941.1 հազ. դրամի չափով:

** Ներկայացված են 2017թ. ինն ամիսների փվյալները, քանի որ սփուգման ժամանակ փարեկան հաշվեփվությունները ներկայացված չէին:*

### *TG-05, TG-06, TG-07 կնքված կահույքի մատակարարման պայմանագրերի վերաբերյալ*

Համաձայն ղեկավար ձեռնարկի 12.4.2 կետի ապրանքներ բաժնի 2-րդ պարբերության, ապրանքների մատակարարման ընդունման–հանձնման ակտերը պետք է ստորագրված լինեին ՀՏՋՀ-ի կողմից, որոնք ստորագրված չէին:

**Միկրոծրագրերը չպետք է իրականացվեին Երևան քաղաքում, բայց իրականացվել է**

**TG-05, TG-07** պայմանագրերի շրջանակնե-րում իրականացվել է կահույքի մատակարա-րում Երևանի Վ. Տերյանի անվան թիվ 60 դպրոցին 2,713.0 հազ դրամի, այն դեպքում, երբ համաձայն ղեկավար ձեռնարկի, միկրոծրագրերը կարող են իրականացվել երկրի բոլոր բնակավայրերում, այդ թվում՝ նաև մարզկենտրոններում, բացի Երևան քաղաքից: Բաղադրիչը ֆինանսավորում է նաև միկրոծրագրերի համար ապրանքների տրամադրում, որոնք կհատկացվեն հիմնադրամի ծրագրերով վերականգնված ենթակառույցներին, ինչպես նաև մարզի համանման այլ ենթակառույցներին:

### *Ընդհանուր պայմանագրերի և մրցույթների վերաբերյալ*

ՀՏՋՀ-ում տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում 01.01.2015թ. մինչև 01.10.2017թ. դրությամբ իրականացված մրցույթների արդյունքում կնքվել են թվով 123 պայմանագրեր, որից 65 կազմակերպությունների հետ կնքվել են շինարարական պայմանագրեր, 9-ի հետ՝ ապրանքների մատակարարման պայմանագրեր, 49-ի հետ՝ խորհրդատվության պայմանագրեր:

Թվով 65 շին. կազմակերպությունների մասով իրականացված մրցույթի արդյունքներով թվով 36-ի հետ իրականացվել է «Ազգային մրցույթ» (200.0 հազ. դոլարից մինչև 400.0 հազ. դոլար), և 29-ի հետ՝ «Գնանշում» ընթացակարգը (մինչև 200.0 հազ. դոլար): Ընդամենը 65 կազմակերպությունների մասով կնքված պայմանագրերի շրջանակներում նախահաշիվների գումարները կազմել են 7,939,020.0 հազ. դրամ, կնքվել են պայմանագրեր 7,352,120.0 հազ. դրամի կամ պայմանագրերը նախահաշվի նկատմամբ կազմում են 92.6%:

***Նախագծանախահաշվային աշխատանքների ուսումնասիրության վերաբերյալ հայտնաբերված թերություններ***

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի խմելու ջրի նոր ջրատարի կառուցում, Շիրակի մարզի Կրասար համայնքի 100 աշակերտի համար դպրոցի կառուցում, Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցում, Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 2 մսուր-մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի հիմնանորոգում, Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի մանկապարտեզի վերակառուցում ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնցում արձանագրվել են հետևյալ թերությունները՝

***Նախագծային առաջադրանքների թերի լինելու պատճառով առաջացել են նախագծերի վերամշակման և լրամշակման անհրաժեշտություն:***

| ՀԱՄԱՅՆՔ(ՆԵՐ) | ԹԵՐՈՒԹՅՈՒՆ(ՆԵՐ) |
|---|---|
| **Համայնքներում կառուցվող օբյեկտների նախագծերից** | |
| **Ազատամուտ, Բերդ և Դդմաշեն** | էլեկտրատեխնիկական մաս բաժնում բացակայում են հաղորդալարերի և ճկախողովակների մոնտաժման գծագրերը: |
| **Կրասար, Ազատամուտ, Բերդ և Դդմաշեն** | էլեկտրատեխնիկական մաս բաժնում բացակայում են հողանցման վերաբերյալ գծագրերը:<br><br>Վիտրաժների և դռների գծագրերում՝ դրանց ամրացման մանրամասները: |
| **Ջաջուռ** | Նախագծում կատարվել են փոփոխություններ, որոնք լրացուցիչ նախագծային լուծումներ են պահանջում:<br><br>Մասնավորապես՝ ջրագծի խողովակների համար փոսորակների պատրաստման ժամանակ պարզվել է, որ նկ.3+40 և նկ.6+00 հատվածներում փոսորակը խաչվում է գոյություն ունեցող հեղեղատարի հետ, ինչը նախագծային փաստաթղթերում նախատեսված չի եղել, ինչպես նաև նոր կառուցվող ջրատարի և գոյություն ունեցող ջրատարի միացման նախագծային լուծումների վերաբերյալ նախագիծը: |
| **Նախահաշիվների վերաբերյալ** | |
| **Ազատամուտ, Բերդ, Ջաջուռ, Կրասար և Դդմաշեն** | Օբյեկտների նախահաշիվները կազմվել են հիմնադրամի նախահաշվային բաժնում և սահմանված կարգով փորձաքննություն չի կատարվել: |
| **Ազատամուտ և Կրասար** | Քանդման (ապամոնտաժման) աշխատանքներում (գոյություն ունեցող շենքի բետոնից հիմքեր) բացակայում են քանդման մանրամասն նկարագրերը: |

| | |
|---|---|
| **Բերդ** | Քանդման (ապամոնտաժման) աշխատանքներում բացակայում են նյութերի մանրամասն նկարագրերը:<br><br>Քանդման (ապամոնտաժման) արդյունքում ստացված շինարարական նյութերի ընդհանուր ծավալներից պետք է առանձնացվեին ծավալներ, որոնք կարելի էր կրկնակի օգտագործել: |
| **Շինարարության նորմերի ընդունման մասով բացակայում են** | |
| **Ջաջուռ, Կրասար** | Բետոնի կազմի վերաբերյալ նախագծերը (ջրանթափանցելիության մասով): |
| **Ջաջուռ** | Բետոնի ջրանթափանցելիության փորձարկման ակտը: |
| **Ազատամուտ, Բերդ, Ջաջուռ, Կրասար և Դդմաշեն** | Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերը: |
| **Դդմաշեն** | Տոփանման ակտերը: |
| **Ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները** | |
| **Ազատամուտ** | 4 սմ հաստությամբ միջնահատիկ ասֆալտաբետոնե 94 քմ ծածկույթի 17 քմ հատվածում տեղ-տեղ առկա էր խոտածածկույթ: Բազալտե սալերի ջարդոնից պատրաստված 191 քմ սալվածքի 21 քմ հատվածում առկա են ճաքեր: Մոխրագույն և գունավոր բետոնե սալիկներից պատրաստված 315 քմ մայթերի 82 քմ հատվածում առկա են նստվածքներ: |
| **Դդմաշեն** | Պատերի ջերմամեկուսացում պեռլիտե սալերով 80մմ հաստությամբ աշխատանքներն իրականացվել են մշակված նախագծին համապատասխան, սակայն արդյունքում պատուհանների հարթ թեքությունների (շեպերի) վրա առաջացել են երկայնական ճաքեր: |

| | |
|---|---|
| | Իրականացված 370քմ ասֆալտապատման աշխատանքների 32քմ հատվածում առկա է խոտածածկույթ:<br><br>Ջեռուցման խողովակների պաշտպանիչ պատյան լամինատից (17քմ), տեղում պատրաստված կաղապարի եզրերը քայքայվել էին: |
| **Կրասար** | Ջրահեռացման համակարգը տեղադրված է ոչ նախագծային տեսքով:<br><br>Տանիքում խարամը հարթեցված չէր, կային նաև կանգնակներ, հենագերաններ, որոնց վրա առկա էին ճաքեր, անհրաժեշտ է կատարել համապատասխան ամրացման աշխատանքներ: |
| **Ջաջուռ** | **Աղբյուրակապի շինարարության վերաբերյալ**<br><br>Մետաղական մտոցների և օդի պարզեցված ֆիլտրի մետաղական հովհարի ներկված մակերեսն ամբողջովին քայքայված էր:<br><br>Ջրընդունիչի մետաղական ցանկապատի 9 մետր հատվածն ամբողջովին քանդված էր: |
| **Բերդ** | Բազալտե սալերի ջարդոնից պատրաստված 160 քմ սալվածքի 15 քմ հատվածի բետոնային մասը քայքայված էր:<br><br>Նկուղում 30մմ հաստությամբ պատրաստված 217.3 քմ ցեմենտային հատակի 32 քմ հատվածը քայքայված էր: |

## II. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման», Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեյսմիկ անվտանգության բարելավման» վարկային ծրագրերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ

Վերը նշված ծրագրերով իրականացվել է դիտարկում և վերլուծություն: Կատարված աշխատանքները, համեմատած ծրագրի ընդհանուր աշխատանքների հետ, կազմում են ցածր տոկոս (մոտ 3%), իսկ ծրագրերն ավարտվելու են 2018-2021թթ. ընթացքում, ուստի, նշված ծրագրերի ուսումնասիրությունը լիարժեք և ամբողջական լինելու համար նպատակահարմար ենք գտնում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվեքննություն իրականացնել ծրագրերի մեծածավալ աշխատանքների կատարման դեպքում: Տվյալ դեպքում հնարավոր կլինի համալիր մոտեցում ցուցաբերել նշված ծրագրերին, հատկապես, ի նկատի ունենալով հաշվեքննության համար նոր օրենքով ստեղծված գործիքակազմը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվետվությունները ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել թերություններով:

2. Նախագծային առաջադրանքների թերի լինելու պատճառով առաջացել է նախագծերի վերամշակման և լրամշակման անհրաժեշտություն:

3. Նախագծանախահաշվային փաստաթղթերում բացակայում են շինարարական նյութերի բնութագրերը և հստակ նկարագրությունները:

4. Օբյեկտների նախահաշիվները սահմանված կարգով փորձաքննության չեն ենթարկվել:

5. Օբյեկտներում հիմնանորոգման և վերականգնման աշխատանքների ընթացքում առանց նախագծի փոփոխման իրականացվել են շին. աշխատանքներ:

6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման», Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեյսմիկ անվտանգության բարելավման» վարկային ծրագրերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» դրամաշնորհային ծրագրերն ավարտվելու են 2018-2021թթ. ընթացքում, ուստի, նշված ծրագրերի ուսումնասիրությունը լիարժեք և ամբողջական լինելու համար նպատակահարմար ենք գտնում հաշվեքննություն իրականացնել ծրագրերի մեծածավալ աշխատանքների կատարման դեպքում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին**

1. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել ճշտված հաշվետվություններ:
2. Նախագծային առաջադրանքը կազմել սահմանված կարգին համապատասխան, պարտադիր նշելով օգտագործվող շինարարական նյութերի տեսակը, որակը, ծագումը և այլն:
3. Օբյեկտների նախահաշիվները, որոնք մշակվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի նախահաշվային բաժնում, ենթարկել փորձաքննության:
4. Մրցույթի առաջարկների ներկայացման հրավերքում ներառել ըստ մարզերի գույքերի քանակային տեղաբաշխվածությունը:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

# 2.5 ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. սեպտեմբերի 23-ի թիվ 19/2 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված սոցիալական վճարների նշանակման օրինականության ուսումնասիրություն: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ պետական բյուջեով նախատեսված ընտանեկան և սոցիալական նպաստների, եռամսյակային հրատապ օգնության նշանակման գործընթացներ: |
| **Վերահսկվող օբյեկտ(ներ)՝** | ՀՀ Արարատի, Արմավիրի և Լոռու մարզպետարանների աշխատակազմերը և Արարատի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմը: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջան** | 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության վերահսկողության տեսակները:<br><br>Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են վերահսկվող օբյեկտներից ստացված փաստաթղթերը և տվյալները, կիրառվել են ընտրանքի, տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համադրման և համեմատման մեթոդներ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծության են ենթարկվել դիտարկման և ստուգման ընթացքում ստացված նյութերն ու արձանագրված փաստերը: Ստուգում է իրականացվել Արարատի և Արմավիրի մարզերի սոցիալական աջակցության տարածքային մարմիններում, իսկ Լոռու մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմիններում իրականացվել է դիտարկում և վերլուծություն: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**ՀՀ Արարատի մարզի ՍԱՏԳ-ներում** (Արտաշատի, Մասիսի, Վեդիի և Արարատի) հաշվառված է 2015թ.-ին՝ 9087, 2016թ.-ին՝ 8970, 01.11.2017թ. դրությամբ՝ 8934 նպաստառու ընտանիք, որոնց վճարվել է համապատասխանաբար՝ 3,116,988.8 հազ. դրամ, 3,156,721.0 հազ. դրամ և 2,683,084.5 հազ. դրամ:

**ՀՀ Արմավիրի մարզի ՍԱՏԳ-ներում** (Վաղարշապատի, Արմավիրի և Բաղրամյանի) հաշվառված է 2015թ.-ին՝ 6276, 2016թ.-ին՝ 6134, 01.11.2017թ. դրությամբ՝ 6078 նպաստառու ընտանիք, որոնց վճարվել է համապատասխանաբար՝ 2,140,391.3 հազ. դրամ, 2,153,284.0 հազ. դրամ և 1,820,656.0 հազ. դրամ:

**ՀՀ Լոռու մարզի ՍԱՏԳ-ներում** (Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի և Տաշիրի) հաշվառված է 2015թ.-ին՝ 13769, 2016թ.-ին՝ 13554, 01.11.2017թ. դրությամբ՝ 12691 նպաստառու ընտանիք, որոնց վճարվել է համապատասխանաբար՝ 4,239,586.5 հազ. դրամ, 4,271,426.5 հազ. դրամ և 3,568,541.5 հազ. դրամ:

ՈՒսումնասիրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տրամադրված հարակից բազաների տեղեկատվության կիրառման օրինականության հարցերը:

2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ Արարատի, Արմավիրի և Լոռու մարզպետարանների աշխատակազմերի կողմից հարակից բազաներով ՍԱՏԳ/Բ/-երին է տրամադրվել «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց վերաբերյալ տեղեկատվություն, որոնք ուսումնասիրվել են տարածքային մարմինների կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ: Այսպես՝

**797 ընտանիք թաքցրել են իրենց ընտանիքի անդամի աշխատելու փաստը**

- 2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ Արարատի, Արմավիրի և Լոռու մարզերի ՍԱՏԳ/Բ/-ներին տրամադրվել են 37014 ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց անդամների աշխատելու և աշխատավարձի չափի

մասին: Այդ ընտանիքներից 22724-ը եղել են նպաստառուներ, 797 ընտանիքներ թաքցրել են իրենց ընտանիքի անդամի աշխատելու փաստը: Առաջացել է 49,678.5 հազ. դրամ ավել ստացած գումար, որից 20,614.5 հազ. դրամը մարվել է համակարգող խորհրդի կողմից, իսկ 24,701.7 հազ. դրամը հետ է գանձվել, 4,362.5 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

**Պետական ռեգիստրի տվյալների հիման վրա զրոյացվել են 198 նպաստառու ընտանիքների միավորներ**

- 2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի մարմիններում գրանցված և «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց տվյալների համադրման արդյունքում ՍԱՏԳ/Բ/-ները ստացել են 5507 անձի մասին տվյալներ: Այդ ընտանիքներից 2909-ը եղել են նպաստառուներ, որոնցից զրոյացվել են 198 նպաստառու ընտանիքների միավորներ: Առաջացել է 1,767.0 հազ. դրամ ավել ստացած գումար, որից 876.0 հազ. դրամը մարվել է համակարգող խորհրդի կողմից, 638.0 հազ. դրամը հետ է գանձվել, իսկ 253.0 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

**Անշարժ գույքի հետ կապված գործարքների հիման վրա զրոյացվել են 228 նպաստառու ընտանիքների միավորներ**

- 2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ՍԱՏԳ/Բ/-ներին տրամադրվել է 2559 անձի մասին անշարժ գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն: Այդ ընտանիքներից 1837-ը եղել են նպաստառուներ, որոնցից զրոյացվել են 228 նպաստառու ընտանիքների միավորներ: Առաջացել է 5,322.0 հազ. դրամ ավել ստացած գումար, որից 2,515.5 հազ. դրամը մարվել է համակարգող խորհրդի կողմից, իսկ

2,386.1 հազ. դրամը հետ է գանձվել, 420.4 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

**Անձնական օգտագործման փոխադրամիջոցի գրանցման և տեխզննման անցկացման հիման վրա զրոյացվել են 504 նպաստառու ընտանիքների միավորներ**

- 2015թ., 2016 և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ոստիկանության ՃՈ–ում անձնական օգտագործման փոխադրամիջոց գրանցած, տեխնիկական զննում անցած և «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց տվյալների համադրման արդյունքում ՍԱՏԳ/Բ/-ները ստացել են 4532 անձի մասին տվյալներ: Այդ ընտանիքներից 2044-ը եղել են նպաստառուներ, որոնցից զրոյացվել են 504 նպաստառու ընտանիքների միավորներ: Առաջացել է 12,917.0 հազ. դրամ ավել ստացած գումար, որից 3,357.0 հազ. դրամը մարվել է համակարգող խորհրդի կողմից, 6,483.1 հազ. դրամը հետ է գանձվել, 3,076.9 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

**Մաքսային գործարքների մասին տվյալների հիման վրա զրոյացվել են 30 նպաստառու ընտանիքների միավորներ**

- 2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Ընտանեկան նպաստ» համակարգում ընդգրկված անձանց տվյալների համադրման արդյունքում ՍԱՏԳ/Բ/-ներին տրամադրվել է 161 անձանց մաքսային գործարքների մասին տվյալներ: Այդ ընտանիքներից 101-ը եղել են նպաստառուներ, որից 30 նպաստառուի միավոր զրոյացվել է: Առաջացել է 494.0 հազ. դրամի ավել ստացած գումար, որից 139.5 հազ. դրամը մարվել է համակարգող խորհրդի կողմից, 302.5 հազ. դրամը հետ է գանձվել, 52.0 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

**Գազի և էլեկտրաէներգիայի գերածախսի հիման վրա զրոյացվել են 395 նպաստառու ընտանիքների միավորներ**

- Գազի գերածախսի վերաբերյալ ստացվել է տեղեկատվություն 11567 նպաստառու ընտանիքների վերաբերյալ: Այդ ընտանիքներից 10401-ը եղել են նպաստառուներ, որից զրոյացվել է 259-ի

անապահովության միավորը: Ավել ստացած գումար չի առաջացել:

- Ամառային ամիսների ընթացքում սահմանային չափաքանակից ավել սպառած էլեկտրաէներգիա ունեցող նպաստառու ընտանիքների թվաքանակը կազմում է 2741: Այդ ընտանիքներից 2189-ը եղել են նպաստառուներ, որից զրոյացվել է 136-ի անապահովության միավորը: Ավել ստացած գումար չի առաջացել:

**Հայտնաբերված ավել վճարված գումարը կազմել է 70,178.7 հազ. դրամ**

Այսպիսով, Արարատի, Արմավիրի և Լոռու մարզի ՍԱՏԳ/Բ/-ներում 2015թ., 2016թ. և 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ հարակից բազաների տվյալների կիրառման մասով գործունեության արդյունքում հայտնաբերված ավել վճարված գումարը կազմել է 70,178.7 հազ. դրամ, որից համակարգող խորհրդի կողմից մարվել է 27,502.5 հազ. դրամ, հետ է գանձվել 34.511.4 հազ. դրամ, մնացորդի՝ 8,164.8 հազ. դրամի հետգանձումը ընթացքի մեջ է:

Քանի, որ Լոռու մարզի ՍԱՏԳ-ների կողմից հայտնաբերված ավել վճարված գումարի (22,223.7 հազ. դրամ) շուրջ 73.2 տոկոսը՝ 16.249.4 հազ. դրամը հետ է գանձվել, այդ իսկ պատճառով մարզի ՍԱՏԳ-ներում ստուգում չի իրականացվել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված հարակից բազաների տեղեկատվության կիրառման օրինականության ճշտության վերահսկողության նպատակով ընտրանքային կարգով ստուգվել է Արարատի մարզի Արտաշատի, Մասիսի, Վեդիի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները, Արարատ քաղաքի սոցիալական աջակցության տարածքային բաժինը և Արմավիրի մարզի Վաղարշապատի, Արմավիրի և Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները:

1. ***ՈՒսումնասիրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի (այսուհետ՝ «Նորք» ՏՎԿ) կողմից հարակից բազաներով տրամադրված տեղեկատվության կիրառման ուղղությամբ ՍԱՏԳ/Բ/-ների կողմից կատարված աշխատանքները, մասնավորապես՝***

**Աշխատավարձի մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 35 խախտում՝ 2,512.5 հազ. դրամի չափով**

**1.1** Նպաստառու ընտանիքների անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների (աշխատավարձի) չափի մասին ներկայացված տեղեկանքների և այդ տվյալները համակարգ մուտքագրելու հավաստիությունը, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվության կիրառման արդյունքները: Պարզվել է, որ 35 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 30.01.2014թ.-ի թիվ 145-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 23-րդ կետի առաջին ենթակետի, 3-րդ հավելվածի 24-րդ և 51-րդ կետերի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 2,512.5 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 14 դեպք՝ 991.5 հազ. դրամ, Մասիսի ՍԱՏԳ - 2 դեպք՝ 174.0 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ- 7 դեպք՝ 496.5.0 հազ. դրամ, Արարատի ՍԱՏԳ - 6 դեպք՝ 290.5 հազ. դրամ, Արմավիրի ՍԱՏԳ-4 դեպք՝ 502.0 հազ. դրամ, Բաղրամյանի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 58.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Արտաշատի ՍԱՏԳ:** Ք. Արտաշատ: Նպաստառուն 01.10.2015թ.-ից աշխատում է «Զարգացման հայկական բանկ» ՓԲԸ-ում: «Նորք» ՏՎԿ-ի

01.03.2016թ. տեղեկատվության համաձայն, 2016թ. հունվարին նպաստառուի աշխատավարձը կազմել է 219.4 հազ. դրամ, փետրվարին՝ 175.5 հազ. դրամ, որի մասին քաղաքացին չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, իսկ «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվությունը չի մուտքագրվել սոցանձնագիր: Ավել վճարված գումարը կազմել է 196.0 հազ. դրամ:

- **Վեդիի ՍԱՏԳ:** Ք. Վեդի: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ հարսը 2016թ. հունվարից աշխատում է Վեդիի բժշկական կենտրոնում և ստանում է միջինը 120.0 հազ. դրամ աշխատավարձ: «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվությունը ստացվել է 2016թ.-ի մայիսին: 2016թ.-ի նոյեմբերին դադարեցվել է նպաստի վճարումը: Ավել վճարված գումարը կազմել է 132.0 հազ. դրամ:

**Անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 51 խախտում՝ 14,195.5 հազ. դրամի չափով**

**1.2** Նպաստառու ընտանիքների անդամնե-րի կողմից անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու փաստերը և հանգամանքները, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվության կիրառման արդյունքները, ինչպես նաև համապատասխանությունը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված նպաստառու ընտանիքների վերաբերյալ տեղեկատվությանը: Պարզվել է, որ 51 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 2014թ-ի թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 17-րդ և 51-րդ կետերի պահանջները, որի արդյունքում ավել վճարված գումարը կազմել է 14,195.5 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 4 դեպք՝ 919.0 հազ. դրամ, Մասիսի ՍԱՏԳ - 4 դեպք՝ 839.0 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ- 20 դեպք՝ 3,426.5 հազ. դրամ, Արարատի ՍԱՏԳ - 4 դեպք՝ 1,827.5 հազ. դրամ, Վաղարշապատի ՍԱՏԳ-12 դեպք՝ 4,787.5 հազ. դրամ, Արմավիրի ՍԱՏԳ-4 դեպք՝ 2,291.0 հազ. դրամ, Բաղրամյանի ՍԱՏԳ- 3 դեպք՝ 105.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Գ. Հայթաղ: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ 26.02.2015թ.-ին ինքը ձեռք է բերել սեփականություն գ.Հայթաղ Անդրանիկի տ.26 հասցեում, 138.1քմ մակերեսով՝ 7,200.0

հազ. դրամ արժեքով: ՍԱՏԳ-ն տեղեկատվությունը ստացել է 2015թ.-ի մայիսին: Նպաստառու է 2011թ.-ի փետրվար ամսից: Նպաստի վճարումը շարունակվել է: 11.05.2015թ. ՍԱԽ-ի առաջարկությունը պատշաճ հիմնավորված չէ: Ավել վճարված գումարը կազմել է 1,192.0 հազ. դրամ:

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Շահումյան Թ/Ֆ: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ 13.08.2015թ.-ին ինքը ձեռք է բերել սեփականություն Շահումյան, Թ/Ֆ Լ. Նավասարդյան, տ. 3 հասցեում՝ 165.7քմ մակերեսով տուն՝ 2,000.0 հազ. դրամ արժեքով: ՍԱՏԳ-ն տեղեկատվությունը ստացել է 2015թ.-ի նոյեմբերին: Նպաստառու է 2014թ.-ի փետրվար ամսից: Նպաստի վճարումը շարունակվել է: 29.12.2015թ.-ի ՍԱԽ-ի առաջարկությունը պատշաճ հիմնավորված չէ: Ավել վճարված գումարը կազմել է 955.0 հազ. դրամ:

- **Վեդիի ՍԱՏԳ:** Գ. Երասխ: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ որդին 20.12.2016թ.-ին ձեռք է բերել սեփականություն ք. Երևան, Բ. Մուրադյան, 3 շ., բն.14 հասցեում, 77.65 քառ. մակերեսով, գինը 16,975.0 հազ. դրամ: ՍԱՏԳ-ն տեղեկատվությունը ստացել է 2017թ.-ի հուլիսին, վճարումը դադարեցվել է 2017թ.-ի սեպտեմբերից: Նպաստառու է 2002 թվականից: Ավել վճարված գումարը կազմել է 339.0 հազ. դրամ:

**Ավտոմեքենաների առկայության և ձեռք բերման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 25 խախտում՝ 5,748.0 հազ. դրամի չափով**

**1.3** Նպաստառու ընտանիքների անդամների տեխնիկական զննում անցած անձնական օգտագործման ավտոմեքենաների առկայության, դրանց ձեռք բերման փաստերը և հանգամանքները, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվության կիրառման արդյունքները, ինչպես նաև համապատասխանությունը ՀՀ ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված նպաստառու ընտանիքների վերաբերյալ տեղեկատվությանը: Պարզվել է, որ 25 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 2014թ.-ի թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 15-րդ և 51-րդ կետերի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 5,748.0 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 4 դեպք՝ 800.0 հազ. դրամ, Մասիսի ՍԱՏԳ - 6 դեպք՝ 1,534.5 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 664.0 հազ. դրամ, Արարատի ՍԱՏԳ - 3 դեպք՝ 69.0 հազ. դրամ,

Վաղարշապատի ՍԱՏԳ-4 դեպք՝ 165.5 հազ. դրամ, Արմավիրի ՍԱՏԳ-6 դեպք՝ 2,515.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Մասիսի ՍԱՏԳ:** Նպաստառուն 08.06.2015թ.-ին ձեռք է բերել անձնական օգտագործման 1999թ.-ի արտադրության «Մերսեդես Բենց 180» մակնիշի ավտոմեքենա: 2017թ.-ի հունիսին դադարեցվել է նպաստի վճարումը: Գործարքից հետո նպաստը վճարվել է ևս 23 ամիս՝ ավել վճարված գումարը կազմել է 1,523.5 հազ.դրամ, որից ՍԱԽ-ի նիստով 201.0 հազ. դրամը մարվել է, իսկ 601.0 հազ. դրամի մասով կազմվել է ժամանակացույց, ընդամենը՝ 802.0 հազ. դրամ:

- **Վեդիի ՍԱՏԳ:** Գ. Լուսաշող: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ 2014թ. դեկտեմբերին ձեռք է բերել 2003թ. արտադրության «ՎԱԶ 2106» մակնիշի ավտոմեքենա: «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվությունը ստացվել է 2017թ.-ի հունիսին: Ներկայացվել է ՍԱԽ-ի նիստին, սակայն որոշում չի կայացվել: Ավել վճարված գումարը կազմել է 345.0 հազ. դրամ:

**Մաքսային մուծումների մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 4 խախտում՝ 1,939.0 հազ. դրամի չափով**

**1.4** Նպաստառու ընտանիքների անդամների կողմից մաքսային վճարումներ կատարելու փաստերը և հանգամանքները, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվության կիրառման արդյունքները: Պարզվել է, որ 4 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 30.01.2014թ.-ի թիվ 45-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 51-րդ և 18-րդ կետերի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 1,939.0 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 2 դեպք՝ 217.0 հազ. դրամ, Վաղարշապատի ՍԱՏԳ-2 դեպք՝ 1,722.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Գ. Արևշատ: Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ ամուսինը 2017թ.-ի հունիսին կատարել է մաքսային մուծում 633.0 հազ. դրամի չափով, որով ներմուծել է 2006թ.-ի արտադրության

«TOYOTA VOKSI» մակնիշի ավտոմեքենա: «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվությունը ստացվել է 2017թ.-ի օգոստոսին: Վճարումը դադարեցված չէ: 09.09.2017թ.-ի համակարգող խորհրդի առաջարկությունը պատշաճ հիմնավորված չէ: Ավել վճարված գումարը կազմել է 418.0 հազ. դրամ:

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Նպաստառուն չի տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ որդին 2015թ.-ի մարտին կատարել է մաքսային մուծում 382.0 հազ. դրամի չափով, որով ներմուծել է 1998թ.-ի արտադրության «OPEL ASTRA 1.8» մակնիշի ավտոմեքենա: ՍԱՏԳ-ն տեղեկատվությունը ստացել է 2015թ.-ի մայիսին: Վճարումը դադարեցված չէ, 30.06.2015թ.-ին համակարգող խորհրդի առաջարկությունը պատշաճ հիմնավորված չէ: Ավել վճարված գումարը կազմել է 1,305.0 հազ. դրամ:

**Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և ընկերություններում հիմնադիր լինելու մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 20 խախտում՝ 1,756.5 հազ. դրամի չափով**

**1.5** Նպաստառու ընտանիքների անդամների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ընկերություններում /ՍՊԸ, ՓԲԸ և այլն/ բաժնետերեր լինելու փաստերը և հանգամանքները, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվության կիրառման արդյունքները: Պարզվել է, որ 20 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 30.01.2014թ.-ի թիվ 145-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 51-րդ և 16-րդ, ինչպես նաև 8-րդ հավելվածի 23-րդ կետերի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 1,756.5 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 2 դեպք՝ 94.5 հազ. դրամ, Մասիսի ՍԱՏԳ - 11 դեպք՝ 1,267.5 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 150.0 հազ. դրամ, Արարատի ՍԱՏԲ - 3 դեպք՝ 193.5 հազ. դրամ, Բաղրամյանի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 51.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Մասիսի ՍԱՏԳ:** Ք. Մասիս: Նպաստառուն 23.07.2015թ.-ից պետ. ռեգիստրում գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, դադարեցվել է

20.12.2016թ.-ին: «Նորք» ՏՎԿ-ից ՍԱՏԳ-ին ուղարկված տեղեկատվությունը ստացվել է 2016թ. մայիսին, սակայն չի մուտքագրվել և շարունակվել է նպաստի վճարումը: Ավել վճարված գումարը կազմել է 464.0 հազ. դրամ:

- **Վեդիի ՍԱՏԳ:** Գ. Արարատ: Նպաստառու ընտանիքի երկու անդամներ չեն տեղեկացրել ՍԱՏԳ-ին, որ 01.04.2015թ. և 26.10.2015թ.-ից զբաղվել են անհատ ձեռնարկատիրությամբ: Նպաստ ստացել են 2017թ.-ի հուլիսից: ՍԱՏԳ-ն տեղեկատվություն ստացել է 2017թ.-ի հուլիսին: ԱՁ-ի գործունեությունը 14.09.17թ.-ին դադարեցվել է: Ավել վճարված գումարը կազմել է 92.0 հազ. դրամ:

**Գազի գերածախսի մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 21 խախտում՝ 3,074.5 հազ. դրամի չափով**

**1.6** 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի սահմանած քանակը գերազանցած ընտանիքների վերաբերյալ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկատվության կիրառման արդյունքները: Պարզվել է, որ 21 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 30.01.2014թ.-ի թիվ 145-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 19.1 կետի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 3,074.5 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 11 դեպք՝ 2,396.0 հազ. դրամ, Մասիսի ՍԱՏԳ - 9 դեպք՝ 310.5 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ- 1 դեպք՝ 368.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Արտաշատի ՍԱՏԳ:** Գ. Մխչյան: Ընտանիքը նպաստառու է 01.04.2017թ.-ից: «Նորք» ՏՎԿ-ի տեղեկատվության համաձայն նպաստառու ընտանիքի բնական գազի սահմանված չափաքանակից ավելի սպառած գազի գերածախսը կազմել է 3043 խ/մ: Հարցը քննարկվել է ՍԱԽ-ի 02.08.2017թ. նիստում և չի զրոյացվել: Տնամերձ հողամասում առկա է 3 ջերմոց, որի մասին չի արձանագրված ՍԱ-ում նախորդ տնային այցելությունների և փաստագրման արդյունքներով: Ավել վճարված գումարը կազմել է 216.0 հազ. դրամ:

- **Վեդիի ՍԱՏԳ:** Գ. Սիսավան: Նպաստառուն զբաղվում է ձավարեղենի արտադրությամբ և սեփական բարեկեցիկ առանձնատանն ունի լոկալ ջեռուցման համակարգ, բակում ունի արտադրական շինություն՝ մոտ 200 քմ: Գազի գերածախսը կազմել է 7104 խմ: Նպաստառու է 01.11.2012թ.-ից, վերջին փաստագրումը կատարվել է 25.11.2016թ., վճարումը դադարեցվել է 31.07.2017թ. գազի գերածախսի պատճառով: Փաստագրման ժամանակ՝ 25.11.2016թ. նշված ընտանիքը պետք է ճանաչվեր բարեկեցիկ և նպաստ չստանար: Ավել վճարված գումարը կազմել է 368.0 հազ. դրամ:

Արտաշատի ՍԱՏԳ-ին կից գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի 02.08.2017թ. N 8 նիստում որոշվել է չզրոյացնել 835 ընտանիքների (փաստագրված) անապահովության միավորները, իսկ խորհրդի 05.09.2017թ. N 44 որոշմամբ որոշվել է չզրոյացնել ևս 30 ընտանիքների անապահովության միավորները, որոնցից 132-ն ունեցել են 1000 խ/մ-ից ավելի գազի գերածախս:

Մասիսի ՍԱՏԳ-ին կից գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի 21.07.2017թ. նիստում որոշվել է չզրոյացնել 597 ընտանիքների (փաստագրված) անապահովության միավորները, այդ թվում՝ 513 նպաստառու ընտանիքների միավորները, որից 96-ն ունեցել են 1000 խ/մ-ից ավելի գազի գերածախս: Միաժամանակ, գործերի ուսումնասիրության և տնայցի արդյունքներով պարզվել է, որ ՍԱՏԳ-ի թվով 34 սոց. գործերում բացակայում են տնայցի արձանագրությունները, որոնք ներկայացվել են ՍԱԽ-ի քննարկմանը:

Վեդիի ՍԱՏԳ-ում 2017 թվականի հուլիս ամսին ստացվել է գազի գերածախսի մասին տեղեկատվություն մայիս ամսվա դրությամբ՝ 599 ընտանիքի վերաբերյալ, որից 62 նպաստառու ընտանիքի նպաստի վճարումները դադարեցվել են: Դադարեցվել է ինչպես 7104 խմ գազի գերածախս ունեցող, այնպես էլ 109 խմ գազի գերածախս ունեցող նպաստառու ընտանիքների նպաստի վճարումը: Նպաստի վճարումները շարունակելու կամ դադարեցնելու հարցերում գազի գերածախսի ծավալներից ելնելով որևէ օրինաչափություն չի կիրառվել:

**Բնակության վայրի հաշվառման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 7 խախտում՝ 2,045.0 հազ. դրամի չափով**

**1.7** Նպաստառու ընտանիքների անդամների՝ ըստ բնակության վայրի հաշվառման և այդ տվյալների՝ համակարգ մուտքագրելու ճշտությունը: Ուսումնասիրությունից պարզվել է, որ 7 դեպքով խախտվել են ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 7–րդ կետի և 51–րդ կետի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 2,045.0 հազ. դրամ (Վաղարշապատի ՍԱՏԳ- 7 դեպք՝ 2,045.0 հազ. դրամ):

Օրինակ՝

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Գ. Դաշտ: Սոցանձնագրում չեն գրանցել փաստացի հաշվառված 2 անձանց: Ավել վճարված գումարը կազմում է 557.0 հազ. դրամ:
- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Ք. Վաղարշապատ: Սոցանձնագրում չի գրանցվել փաստացի հաշվառված մեկ անձ: Ավել վճարված գումարը կազմում է 348.0 հազ. դրամ:

## 2. *ՈՒսումնասիրվել են նպաստառու ընտանիքներին, ինչպես նաև «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց եռամսյակային հրատապ օգնության տրամադրման գործերը:*

**Եռամսյակային հրատապ օգնության տրամադրման մասով հայտնաբերվել է 15 խախտում՝ 1,997.0 հազ. դրամի չափով**

Ուսումնասիրությունից պարզվել է, որ 15 դեպքով խախտվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի, 22-րդ հոդվածի, 1-ին կետի և ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման 8-րդ հավելվածի 38-րդ, 39-րդ, 44-րդ և 45-րդ կետերի, 3-րդ հավելվածի 47-րդ և 51–րդ կետերի պահանջները, որի արդյունքում վճարված գումարը կազմել է 1,997.0 հազ. դրամ (Արտաշատի ՍԱՏԳ - 9 դեպք՝ 1,583.0 հազ. դրամ, Վեդիի ՍԱՏԳ-3 դեպք՝ 252.0 հազ. դրամ (կապված է անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման հետ), Վաղարշապատի ՍԱՏԳ-1 դեպք՝ 108.0 հազ. դրամ

(կապված է մաքսային վճար կատարելու հետ), Բաղրամյանի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 54.0 հազ. դրամ (կապված է ավտոմեքենաներ ձեռք բերելու հետ)):

Օրինակ՝

- **Արտաշատի ՍԱՏԳ:** Գ. Բերքանուշ: 2015-16թթ. ընթացքում 3 եռամսյակ (9 ամիս) անընդմեջ ՍԱԽ-ի որոշմամբ տրամադրվել է եռամսյակային հրատապ օգնություն: Նպաստառուն 01.04.2015թ. ձեռք է բերել 2004թ. արտադրության ավտոմեքենա, որի վերաբերյալ «Նորք» կենտրոնից ստացված տեղեկատվության կոդը չի կիրառվել, տնային այցելություն չի կատարվել, չեն կազմվել արձանագրություններ, չկան եզրակացություններ և առաջարկություններ: Ավել վճարված գումարը կազմել է 153.0 հազ. դրամ:

- **Վաղարշապատի ՍԱՏԳ:** Ք. Վաղարշապատ: Նպաստառուն թաքցրել է այն փաստը, որ 05.2017թ.-ին ինքը կատարել է մաքսային մուծում 526.000 դրամի չափով, որով ներմուծել է 2000թ. արտադրության «MERCEDES BENZ C 200» մակնիշի ավտոմեքենա: «Նորք» ՏՎԿ-ի տրամադրած տեղեկատվությունը ստացվել է 2017թ.-ի հունիսին: Ստացել է հրատապ դրամական օգնություն 2017թ.-ի 3-ից և 4-ից եռամսյակներին: 31.07.2017թ.-ի ՀԽ-ի առաջարկությունը պատշաճ հիմնավորված չէ: Ավել վճարված գումարը կազմել է 108.0 հազ. դրամ:

Արտաշատի ՍԱՏԳ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ դրամական օգնություն ստանալու համար ՍԱՏԳ-ին ներկայացված դիմումներից մերժվել են 32-ը, որոնց տնային այցելության արձանագրությունները, ՍԱՏԳ-ի գրավոր պատասխանները, ՍԱԽ-ում քննարկման արդյունքները բացակայում են:

Արտաշատի ՍԱՏԳ-ում 7 դեպքով եռամսյակային հրատապ օգնություն տրամադրվել է 7-ից 11 եռամսյակ անընդմեջ՝ 7 եռամսյակ՝ 2 ընտանիքի, 8 եռամսյակ՝ 1 ընտանիքի, 10 եռամսյակ՝ 3 ընտանիքի և 11 եռամսյակ՝ 1 ընտանիքի:

Վեդիի ՍԱՏԳ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ օգնություն է տրամադրվել 17 ընտանիքների՝ 7-ից 12 եռամսյակ անընդմեջ՝ 7 եռամսյակ՝ 1 ընտանիքի, 9 եռամսյակ՝ 3 ընտանիքի, 10 եռամսյակ՝ 5 ընտանիքի, 11 եռամսյակ՝ 6 ընտանիքի, 12 եռամսյակ՝ 2 ընտանիքի:

Արարատի ՍԱՏԲ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ օգնություն է տրամադրվել 6 ընտանիքների, 5-ից 6 եռամսյակ անընդմեջ՝ 5 եռամսյակ՝ 3 ընտանիքի, 6 եռամսյակ՝ 3 ընտանիքի:

Վաղարշապատի ՍԱՏԳ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ օգնություն է տրամադրվել 130 ընտանիքների, 6-ից 12 եռամսյակ անընդմեջ՝ 12 եռամսյակ՝ 12 ընտանիքի, 11 եռամսյակ՝ 12 ընտանիքի, 10 եռամսյակ՝ 17 ընտանիքի, 9 եռամսյակ՝ 20 ընտանիքի, 8 եռամսյակ՝ 22 ընտանիքի, 7 եռամսյակ՝ 23 ընտանիքի, 6 եռամսյակ՝ 24 ընտանիքի:

Արմավիրի ՍԱՏԳ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ օգնություն է տրամադրվել 68 ընտանիքների, 7-ից 12 եռամսյակ անընդմեջ՝ 7 եռամսյակ՝ 6 ընտանիքի, 8 եռամսյակ՝ 8 ընտանիքի, 9 եռամսյակ՝ 7 ընտանիքի, 10 եռամսյակ՝ 11 ընտանիքի, 11 եռամսյակ՝ 17 ընտանիքի, 12 եռամսյակ՝ 19 ընտանիքի:

Բաղրամյանի ՍԱՏԳ-ում 2015-2017թթ. ընթացքում եռամսյակային հրատապ օգնություն է տրամադրվել 7 ընտանիքների, 7-ից 11 եռամսյակ անընդմեջ՝ 7 եռամսյակ՝ 1 ընտանիքի, 8 եռամսյակ՝ 1 ընտանիքի, 9 եռամսյակ՝ 1 ընտանիքի, 10 եռամսյակ՝ 3 ընտանիքի, 11 եռամսյակ՝ 1 ընտանիքի:

***3 Ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման թիվ 7 հավելվածի համաձայն, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում հաշվառված անձանց մասին ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների տրամադրած տեղեկատվության հիման վրա «Նորք» ՏՎԿ կատարած համադրման արդյունքների՝ ՍԱՏԳ-ներին տրամադրման ժամանակացույցը:***

**Հաճախ ՍԱՏԳ-ները տեղեկատվությունը ստանում են ուշացումով: Արդյունքում ամիսներ շարունակ տեղեկատվության բացակայության պայմաններում շարունակվում են նպաստի վճարումները**

«Նորք» ՏՎԿ-ն տեղեկատվությունը համադրելուց հետո այն փոխանցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որտեղից այն ուղարկվում է ՀՀ մարզպետարաններ, որոնք էլ տեղեկատվությունը տալիս են ՍԱՏԳ-ներին: Ուսումնասիրությունից պարզվեց, որ հաճախ են դեպքերը, երբ ՍԱՏԳ-ները տեղեկատվությունը ստանում են 1-11 ամիս ուշացումով: Օրինակ «Նորք» ՏՎԿ-ի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով տեղեկատվությունները 2016թ. օգոստոսից մինչև 2017 թ. հուլիս ամիսը գործակալություններ չեն ներկայացվել, իսկ ավտոմեքենաների ձեռքբերումների և առկայության մասին տեղեկատվությունը գործակալությունները չեն ստացել 2016թ.-ի հուլիսից մինչև 2017 թ. հուլիս ամիսը: Մինչդեռ, ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման թիվ 7 հավելվածով նախատեսված է, որ այդ տվյալները համապատասխան պետական մարմինները պետք է ներկայացնեն «Նորք» ՏՎԿ-ին առցանց հարցման օրվա հաջորդող 10-րդ օրը:

Արդյունքում, ամիսներ շարունակ տեղեկատվության բացակայության պայմաններում շարունակվում են նպաստի վճարումները, այնուհետև դրանց հետգանձելու խնդիրներ են առաջանում:

**Որոշ տեղեկատվություն գործակալություններն ընդհանրապես չեն ստացել, իսկ նպաստառուները դրանց վերաբերյալ չեն տեղեկացրել ՍԱՏԳ-ներին**

Միևնույն ժամանակ, ՀՀ վերահսկիչ պալատը հարցման արդյունքում համապատասխան տեղեկատվություն է ստացել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից և ՀՀ ԿԱ Ոստիկանության ծառայությունից և այն համադրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հարակից բազաներով գործակալություններին տրամադրված տեղեկատվության հետ: Պարզվել է, որ որոշ տեղեկատվություն գործակալություններն ընդհանրապես չեն ստացել, իսկ նպաստառուները դրանց վերաբերյալ չեն տեղեկացրել ՍԱՏԳ-ներին: Մասնավորապես, անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով Արարատի և Արմավիրի մարզերում արձանագրված խախտումների 12 դեպքերում՝ 5,397.5 հազ. դրամի

չափով, (Մասիսի ՍԱՏԳ- 2 դեպք՝ 520.0 հազ. դրամի չափով, Արտաշատի ՍԱՏԳ-1 դեպք՝ 671.0 հազ. դրամի չափով, Արարատի ՍԱՏԲ-4 դեպք՝ 1,827.5 հազ. դրամի չափով, Վաղարշապատի ՍԱՏԳ-4 դեպք՝ 1,375.0 հազ. դրամի չափով և Արմավիրի ՍԱՏԳ-1 դեպք՝ 1,004.0 հազ. դրամի չափով), սոցիալական աջակցության տարածքային մարմինները համապատասխան տեղեկատվություն չեն ստացել, իսկ 1 դեպքում ՝ 105.0 հազ. դրամի չափով, տեղեկատվություն չի ստացվել ավտոմեքենաների առկայության վերաբերյալ Արտաշատի ՍԱՏԳ-ում:

Լոռու մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմիններում դիտարկման և վերլուծության արդյունքում պարզվեց, որ անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով մարզի գործակալությունները չեն ստացել 153 տեղեկատվություն, 38 դեպքում տեղեկատվություն չի ստացվել ավտոմեքենաների առկայության վերաբերյալ, իսկ 5 դեպքում տեղեկատվություն չի ստացվել ընկերություններում հիմնադիր լինելու վերաբերյալ: Համապատասխան գործակալություններին առաջարկվել է ուսումնասիրել նշված տեղեկատվությունը և սահմանված կարգով կատարել համապատասխան գործողություններ:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 899-ն որոշմամբ «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ն վերակազմակերպվել է «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի:

### *4. Ուսումնասիրվել է աջակցության խորհուրդների գործունեությունը, նրանց կողմից ներկայացված առաջարկությունները:*

**Խորհրդի անդամները խորամուխ չեն լինում իրենց կայացրած որոշումների մեջ:**

Հիմնականում առաջարկությունները կատարվել են առանց հանգամանքների պատշաճ ուսումնասիրության, աջակցության խորհրդի անդամները խորամուխ չեն լինում իրենց կայացրած որոշումների մեջ՝ ստորագրում են մի փաստաթղթի տակ, որտեղ չի երևում, թե որ նպաստառու ընտանիքների մասին են որոշումներ կայացնում:

Խորհրդի նիստերում քննարկվում են միանգամից մի քանի հարյուր հարցեր՝ հատկապես, էլեկտրաէներգիայի և գազի գերածախսի մասով հարցերը

քննարկելիս: Գազի գերածախսի մասով նպաստառու ընտանիքների միավորները չզրոյացնելու հարցում չկա որևէ օրինաչափություն՝ Խորհուրդներն ընդունում են որոշումներ՝ հաստատելով ՍԱՏԳ-ների տեսուչների բոլոր գործողություններն առանց բացառության: Դադարեցվել են 200-ից 500 խ/մ գազի գերածախս ունեցող նպաստառու ընտանիքների նպաստների վճարումը, այն դեպքում, երբ 1000 և ավելի խ/մ գազի գերածախսի դեպքում հիմնականում շարունակվել է նպաստի վճարումը:

Բացակայում են տնային այցելության արձանագրություններ և յուրաքանչյուր գործի պահանջը հիմնավորող այլ փաստաթղթեր, որի ժամանակ խախտվում են ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման թիվ 3 հավելվածի 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 19.1–րդ կետերի պահանջները, այսինքն՝ բացակայում են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունները և ՍԱՏԳ-ների կողմից կազմակերպած տնային այցելությունների ընթացքում կատարված ուսումնասիրությունների մասին արձանագրությունները:

***Աջակցության խորհրդի արձանագրություններում հիմնականում չեն նշվում, թե քննարկվող համադրման ցուցակները երբ են ստացվել, ինչ քանակությամբ և որ հարակից բազաների հարցերն են քննարկվում, և որ պահի դրությամբ են այդ փվյալները ներկայացվել: Բացակայում են նպաստառուների անունները, սոցանձնագրերի համարները և դրանք ներկայացվում են միայն կից ցուցակներով, որտեղ համակարգող խորհրդի անդամների ստորագրությունները բացակայում են:***

Մասնավորապես, Վեդիի ՍԱՏԳ-ում աջակցության խորհրդի արձանագրություններում «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված հարակից բազաների կիրառման վերաբերյալ» հարցը շատ մակերեսորեն է արձանագրված: Բոլոր արձանագրություններում նշված է միևնույն՝ «որոշեցին համադրման արդյունքում ոչ մի ընտանիքի կարիքավորության միավորը չզրոյացնել, ցուցակը կցվում է» արտահայտությունը: Սակայն ոչ մի ցուցակ որոշմանը կցված չէ, այլ ընդամենն առկա են տեսուչների զեկուցագրերը: Միայն այդ զեկուցագրերում են երևում, թե որ նպաստառու ընտանիքների վերաբերյալ է հարցերը ներկայացվել աջակցության խորհուրդ: Աջակցության խորհուրդների որոշումների մեջ չի նշվել, թե քանի նպաստառու

ընտանիքների հարցեր են քննարկվել և կոնկրետ որ նպաստառու ընտանիքների մասին է խոսքը:

Արտաշատի ՍԱՏԳ-ում 02.04.2015թ. թիվ 4, 03.03.2016թ. թիվ 3 և 06.06.2016թ. թիվ 6 նիստերում քննարկվել է համապատասխանաբար 478, 592 և 528 նպաստառու ընտանիքների աշխատելու և եկամուտների հարցը, նիստերի արձանագրություններում բացակայում է նպաստառու ընտանիքների անվանացանկը: Խորհուրդը որոշել է առաջարկել ՍԱՏԳ-ին չզրոյացնել նշված ընտանիքների անապահովության միավորները, սակայն, առկա է միայն քանակական արձանագրումը, չեն նշված այն նպաստառու ընտանիքները, որոնց վերաբերյալ կայացվել է որոշումը: Միաժամանակ, օրակարգում չեն նշված հարակից բազաների տեղեկատվության ստացման ժամկետները:

***Անվանացանկի բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել նպաստառու ընտանիքների վերաբերյալ կայացված անհատական որոշումները, դրանց հիմքերի առկայությունը, ավել վճարված գումարների հետգանձման ընթացակարգը և արդյունքները:***

Նշենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 11.02.2016թ. թիվ 25-ն հրամանի համաձայն, աջակցության խորհուրդը վերանվանվել է սոցիալական համագործակցության աշխատանքները համակարգող խորհրդի, որի կազմում ընդգրկվել են նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերահսկողության ընթացքում հայտնաբերվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 30.01.2014թ. «Պետական նպաստների մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-ն որոշման մի շարք դրույթների խախտումներ:

1

Ընդհանուր առմամբ Արարատի և Արմավիրի մարզերի թվով 7 սոցիալական աջակցության տարածքային մարմինների վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են 178 դեպքով 33,268.0 հազ. դրամ գումարի չափով տարբեր բնույթի խախտումներ, մասնավորապես,

- Աշխատանքի վարձատրության մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 35 խախտում՝ 2,512.5 հազ. դրամի չափով;
- Անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 51 խախտում՝ 14,195.5 հազ. դրամի չափով:
- Ավտոմեքենաների առկայության և ձեռք բերման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 25 խախտում՝ 5,748.0 հազ. դրամի չափով:
- Մաքսային մուծումների մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 4 խախտում՝ 1,939.0 հազ. դրամի չափով:
- Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և ընկերություններում հիմնադիր լինելու մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 20 խախտում՝ 1,756.5 հազ. դրամի չափով:
- Գազի գերածախսի մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 21 խախտում՝ 3,074.5 հազ. դրամի չափով:
- Բնակության վայրի հաշվառման մասով տեղեկատվության կիրառմամբ հայտնաբերվել է 7 խախտում՝ 2,045.0 հազ. դրամի չափով:
- Եռամսյակային հրատապ օգնության տրամադրման մասով հայտնաբերվել է 15 խախտում՝ 1,997.0 հազ. դրամի չափով:

2

Հարակից բազաների տեղեկատվությունները շարունակվում են ուշացումներով տրամադրվել ՍԱՏԳ-ներին: Նշված խնդիրը արտացոլվել է նաև ՀՀ վերահսկիչ պալատի 2015 և 2016 թվականների ընթացիկ հաշվետվություններում: Կան դեպքեր, երբ ՍԱՏԳ-ները տեղեկատվությունները ստացել են 1-11 ամիս ուշացումներով: Օրինակ «Նորք» ՏՎԿ-ի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով տեղեկատվությունները 2016թ.-ի օգոստոսից մինչև 2017 թ. հուլիս ամիսը գործակալություններ չեն ներկայացվել, իսկ ավտոմեքենաների առկայության մասին տեղեկատվությունը գործակալությունները չեն ստացել 2016թ.-ի հուլիսից մինչև 2017 թ.

հուլիս ամիսը: Մինչդեռ, ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145-Ն որոշման թիվ 7 հավելվածով նախատեսված է, որ այդ տվյալները համապատասխան պետական մարմինները պետք է ներկայացնեն «Նորք» ՏՎԿ-ին առցանց հարցման օրվա հաջորդող 10-րդ օրը:

Արդյունքում, ամիսներ շարունակ տեղեկատվության բացակայության պայմաններում շարունակվում են նպաստի վճարումները, այնուհետև դրանք հետգանձելու խնդիրներ են առաջանում:

**3** ՀՀ վերահսկիչ պալատի հարցման արդյունքում տեղեկատվություններ են ստացվել, որոնք գործակալություններն ընդհանրապես չեն ստացել, իսկ նպաստառուները դրանց վերաբերյալ չեն տեղեկացրել ՍԱՏԳ-ներին և, արդյունքում, առաջանում են ավել վճարված գումարներ: Մասնավորապես, անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով Արարատի և Արմավիրի մարզերում արձանագրված խախտումների 12 դեպքերում՝ 5,397.5 հազ. դրամի չափով, սոցիալական աջակցության տարածքային մարմինները համապատասխան տեղեկատվություն չեն ստացել, իսկ 1 դեպքում ՝ 105.0 հազ. դրամի խախտման գումարի չափով, տեղեկատվություն չի ստացվել ավտոմեքենաների առկայության վերաբերյալ:

Լոռու մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հարակից բազաներով անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերման մասով չեն ստացել 153 տեղեկատվություն, 38 տեղեկատվություն՝ ավտոմեքենաների առկայության և ձեռք բերումների մասով և 5 տեղեկատվություն՝ ընկերություններում հիմնադիր լինելու վերաբերյալ:

**4** Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությունները հիմնականում կատարվել են առանց հանգամանքների պատշաճ ուսումնասիրության, աջակցության խորհրդի անդամները խորամուխ չեն լինում իրենց կայացրած որոշումների մեջ՝ ստորագրում են մի փաստաթղթի տակ, որտեղ չի երևում, թե որ նպաստառու ընտանիքների մասին են որոշումներ կայացնում:

Աջակցության խորհրդի արձանագրություններում հիմնականում չեն նշվել, թե քննարկվող համադրման ցուցակները երբ են ստացվել, ինչ քանակությամբ, որ հարակից բազաների հարցերն են քննարկվել, և որ պահի դրությամբ են այդ տվյալները ներկայացվել: Բացակայում են նպաստառուների անունները, սոցանձնագրերի համարները, դրանք ներկայացվում են միայն կից ցուցակներով, որտեղ համակարգող խորհրդի անդամների ստորագրությունները բացակայում են:

ՍԱՏԳ-ների ներկայացմամբ աջակցության խորհրդի անդամները կայացնում են որոշումներ, որոնցով չեն դադարեցվում նպաստի վճարումները նույնիսկ 1 մլն և ավելի գներով անշարժ գույքի և այլ բնույթի գործարքներ կատարելու դեպքում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ կառավարությանը**

Միջոցներ ձեռնարկել հարակից բազաներով սահմանված տեղեկատվությունը համապատասխան գերատեսչությունների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը օրենսդրությամբ սահմանված ժամկետներում տրամադրելու ուղղությամբ:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը**

1. Միջոցներ ձեռնարկել հարակից բազաները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում համապատասխան մարմիններից ստանալու և համադրման արդյունքները ՍԱՏԳ/Բ/-ներին տրամադրելու ուղղությամբ:

2. ՈՒժեղացնել հսկողությունը ՍԱՏԳ/Բ/-ների գործունեության նկատմամբ՝ արձանագրված խախտումների և դրանց պատճառների վերացման և հետագայում բացառելու նպատակով:
3. Քննարկել նպաստառու ընտանիքի անդամների կողմից որոշակի արժեքների անշարժ գույքի սեփականության իրավունքի, ավտոմեքենաների ձեռքբերումների, մաքսային մուծումների (հատկապես, երբ ներմուծվում են ավտոմեքենաներ) և այլ դեպքերում համակարգող խորհուրդների կողմից ընտանեկան և սոցիալական նպաստների վճարումները շարունակելու և եռամսյակային դրամական օգնության տրամադրման հարցերում դիրքորոշումների և մոտեցումների վերաբերյալ ուղեցույցների, մեթոդական կողմնորոշումների և երաշխավորությունների մշակման նպատակահարմարության հարցը:
4. Կանոնակարգել համակարգող խորհուրդների նիստերի արձանագրությունների գրանցման հարցերը, ինչպես նաև՝ կազմման հարցերն այն իմաստով, որ արձանագրություններում հստակ նշվեն հարակից բազաների անվանումները, ստացման ժամկետները, նպաստառուների անվանումները, սոցանձնագրերի համարները և այն ուսումնասիրության արդյունքներն ու փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսանալու պատշաճ հիմնավորված առաջարկություն ներկայացնելու համար:
5. Կանոնակարգել սոցիալական գործերում առկա փաստաթղթերի (տեղեկանքներ, ուսումնասիրության արձանագրություններ և այլն) ստացման և գրանցման հարցերը՝ փաստաթղթերի առկայության հստակ հաշվառում իրականացնելու նպատակով:

**ՀՀ Լոռու մարզպետին**

Հանձնարարել մարզպետարանի ենթակայության սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին՝ ՀՀ վերահսկիչ պալատի հարցման արդյունքներով ստացված և հարակից բազաներում չարտացոլված տեղեկատվությունները օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ վերահսկիչ պալատին:

**ՀՀ Արարատի և Արմավիրի մարզպետներին**

1. Միջոցներ ձեռնարկել վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումները վերացնելու և հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:

2. Բարձրացնել ՍԱՏԳ/Բ/-ների պատասխանատվությունը հարակից բազաներով ստացված տեղեկատվության իրացման, եռամսյակային հրատապ օգնության տրամադրման, հավաքագրված տեղեկատվությունը սոց. անձնագրերում մուտքագրման և սոցիալական գործերում ամփոփված հիմքերի արժանահավատության նկատմամբ:

3. Միջոցներ ձեռնարկել, որպեսզի սոցիալական աջակցության տարածքային մարմինների և համակարգող խորհուրդների կողմից հարակից բազաներով ստացված անշարժ գույքի սեփականության իրավունքի և ավտոմեքենաների ձեռք բերումների, մաքսային մուծումների վերաբերյալ և այլ տեղեկատվությունները ամբողջական և հանգամանալից ուսումնասիրվեն և հստակ ու պատշաճ հիմնավորվեն գործարքներ կատարած ընտանիքների նպաստի իրավունքը շարունակելու որոշումները:

4. «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ոչ նպաստառու ընտանիքներին անհետաձգելի լուծում պահանջող իրավիճակներում հրատապ օգնություն նշանակելու համար գործերում ապահովել օրենքով և ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145 որոշման 8-րդ հավելվածով նախատեսված հիմքերի առկայությունը:

ՀՀ պետական բյուջե վերականգնվող գումարները փոխանցել գանձապետարանի համակարգում բացված այլ եկամտային հաշվին՝ նշելով «96» կոդը:

***«ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:***

*Հավելված*

## ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Արմավիր ՍԱՏԳ*

1. ՍԱ 796890 Ա. Մխիթարյանի ընտանիքը բաղկացած է 6 շնչից, հաշմանդամ պապն ու տատը խնամում են 4 միակողմանի ծնողազուրկ անչափահաս երեխաների: Հովանավորների և բարերարների կողմից նրանց ընտանիքը ձեռք է բերել բնակելի տուն տարաժամկետ վճարման պայմանով: Միավորը՝ 51.37: ՍԱԽ–ը 28.12.2017թ.–ին որոշել է չդադարեցնել ընտանիքի նպաստը:

2. ՍԱ 796132 Հ. Սերոբյանի ընտանիքը բաղկացած է 2 շնչից՝ մայրը և ծնողազուրկ անչափահաս երեխան: Ընտանիքը 1997թ.-ից մինչ օրս բնակվում է Բամբակաշատ համայնքի 17/5 փ. 9տ.: Տասնութ տարվա ընթացքում նրանք մաս-մաս վճարել են տան գումարը, որը կազմում է 1500000դր. և 22.06.2015թ. ձևակերպել անշարժ գույքի կադաստրում: Ընտանիքը նպաստ է ստանում 2009թ.-ից: Միավորը՝ 36.71: ՍԱԽ–ը 30.08.2015թ.–ին որոշել է չդադարեցնել ընտանիքի նպաստը:

Անշարժ գույք ձեռք բերած 2 ընտանիքի ՍԱ /796890,796132/ նկատմամբ հաշվի առնելով ընտանիքների ծանր սոցիալական վիճակը, որոշվել է չկիրառել «Կ» կոդը համաձայն ՀՀ Կառավարության 30 հունվարի 2014թ. թիվ 145-Ն որոշման 3 հավելվածի 17 կետի:

### *Վաղարշապատի ՍԱՏԳ*

1. Հավելված 1

Ընտանիքի անդամների հաշվառումը (ՍԱ 880467, 702936, 229242, 880586, 223270) կատարվել է համաձայն «Պետական նպաստների մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 30 հունվարի 2014թ. թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 8-րդ կետի 2 մասի՝ «Բացակա լրացված ընտանիքի անդամին սոցիալական անձնագրում ամրագրվում է «հարգելի բացակա» եթե՝

2) տեղական ռեգիստրում՝ տվյալ բնակության վայրում հաշվառված ընտանիքի բոլոր անդամներն են նշված «բացակա» և սոցիալական անձնագիրը լրացվում է տվյալ բնակության վայրում փաստացի հիմունքներով հաշվառված և բնակվող ընտանիքի համար:

ՍԱ 880613 Պողոսյան Զոհրաբի բնակության հասցեում, առանց իր համաձայնության կատարվել է երկու քաղաքացիների փաստացի հաշվառում համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքում սխալ հասցե նշելու պատճարով: Տվյալ քաղաքացիներն իրենց ընտանիքի անդամներ չեն և տվյալ հասցեում չեն բնակվում, բնակչության ռեգիստրի սխալը ուղղվել է:

2. Հավելված 2

ՏՈՂ 1. ՍԱ 880191 Հարություն Մանուկյանի ընտանիքը կազմված է 5 անձից՝ ամուսիններ և 3 անչափահաս երեխա: 02.2015թ. ձեռք է բերել բնակելի տուն գումարը իր ծնողների և եղբայրների օգնությամբ մաս-մաս վճարելու պայմանով: Ձեռք բերած տունը բնակվելու համար պիտանի չի եղել, ինչի պատճառով ընտանիքը 3 տարի բնակվել է վարձով՝ 2018 հունվարից բնակվում են այդ տանը՝ ստեղծելով բնակության համար նվազագույն պայմաններ: Հաշվի առնելով ընտանիքի կարիքավորությունը՝ ՍԱԽ 29.05.2015թ. որոշել է չզրոյացնել ընտանիքի միավորը:

ՏՈՂ 6. ՍԱ 816005 Գոռ Սողոմոնյանի ընտանիքը կազմված է 6 անձից, թոշակառու մայրը, 3 երեխա՝ որոնցից մեկը՝ ուսանող, 92 սեփականաշնորհման ժամանակ վկայականը տրվել է ուրիշի անունով, դատական գործընթացից խուսափելու համար իր տնօրինության տակ գտնվող 0.29 հա հողը ձևակերպել է առքուվաճառք: Չվերանորոգված տուն, հատակը բետոն: Միավորը 32.33: ՍԱԽ 31.09.2015թ. որոշել է չզրոյացնել ընտանիքի միավորը:

ՏՈՂ 7. ՍԱ 232974 Բաղդասարյան Արմենը բնակվում է իր տանը: Տունը հին, չվերանորոգված, հատակը՝ բետոն, պատերը՝ ճաքած: Բնակվում են ամուսիններով՝ 3 անչափահաս երեխաների հետ: Հանգուցյալ մայրը՝ Մարջիկ Դրաստամատի Բաղդասարյանը, 1986թ. տունը նվիրել էր եղբորը՝ Մուշեղ Դրաստամատի Բաղդասարյանին: 2015թ. կարկտահարությունից հետո, հայտնվելով ծանր սոցիալական վիճակում, տունը գրավադրելու նպատակով ձևակերպել են առքուվաճառք: Նոր տուն չեն գնել, միշտ բնակվել են նույն տանը: ՍԱԽ 29.05.2015թ. որոշել է չզրոյացնել:

ՏՈՂ 8. ՍԱ 224416 Հակոբյան Աղվանի ընտանիքը կազմված է 11 անձից, որից 5-ը՝ անչափահաս, հայրը՝ 2-րդ խմբի հաշմանդամ, ոտքի մատները անդամահատված: Երկու եղբոր ընտանիքները բնակվում են հին, չվերանորոգված, 3 սենյակից բաղկացած տանը: Բնակարանային հարցը բարելավելու նպատակով վաճառել է 0.1 հա սեփականաշնորհված հողը և գնել 0.1 հա տնամերձ հողամաս, իր հողակտորը գնորդի խնդրանքով ձևակերպել է նվիրատվություն: Գտնվում են ծանր սոցիալական վիճակում: ՀԽ 31.08.2017թ. որոշել է չզրոյացնել:

ՏՈՂ 10. ՍԱ 232428 Հակոբյան Ռոզայի ընտանիքը կազմված է եղել 7 անձից, որոնցից 3–ը՝ 3 րդ խմբի հաշմադամ՝ ինքը Ռոզան ունի գոյացություն, իսկ 2 տղաներն ունեն հոգեկան խնդիրներ:

Երկու եղբայրներից Հարությունյան Հակոբը ամուսնացած է, ունի 2 երեխա: Հոգեկան խնդիրներ ունեցող եղբայրների համատեղ բնակությունը դարձել էր անհնար և Հարությունյան Հակոբը աներոջ օգնությամբ գնել է բնակարան՝ առանձնանալու նպատակով: Իրենց և ձեռք բերած բնակարանները հին են, չվերանորոգված, բետոնե հատակ, դռներ չկան: Գտնվում են ծանր սոցիալական վիճակում: ՍԱԽ 31.08.2017 որոշել է չզրոյացնել:

Անշարժ գույք ձեռք բերած 12 ընտանիքից 5 ընտանիքի (ՍԱ 880191, 816005, 232974, 224416, 232428) նկատմամբ, հաշվի առնելով ընտանիքների կարիքավոր լինելը, որոշվել է չկիրառել «Կ» կոդը համաձայն ՀՀ կառավարության 30 հունվարի 2014թ. թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 17-րդ կետի:

3. Հավելված 4

1. ՍԱ 229319 Առաքելյան Գոհարի որդին՝ Վահրամ Առաքելյանը, 2015թ. մարտին, չմերժելով ընկերոջ խնդրանքը, իր անունով կատարել է մաքսային մուծում: Բնակվում են 2 եղբոր ընտանիք՝ 10 անձով, որից՝ 5 անչափահաս, տունը՝ հին, չվերանորոգված, սան. հանգույցը դրսում: ՍԱԽ 30.06.2015թ. որոշել է չզրոյացնել:

2. ՍԱ 879123 Կուդրյաշովա Տատյանայի ընտանիքը՝ 8 անձից, ինքը, ամուսինը և 6 անչափահաս երեխաները: Կուդրյաշովա Տատյանայի ամուսինը՝ Կուդրյաշով Վասիլին, իր եղբոր խնդրանքով 2017թ. հունիսին կատարել է մաքսային մուծում, մեքենան պատկանում է եղբորը: Բնակվում են 1 սենյակում, ՀԽ 29.09.2017թ. որոշել է չզրոյացնել:

Մաքսային մուծում կատարած 2 ընտանիքի (ՍԱ 229319, 879123, հետագայում ՃՈ ցուցակներով ավտոմեքենա չի եկել) նկատմամբ, հաշվի առնելով ընտանիքների կարիքավոր լինելը, որոշվել է չզրոյացնել, համաձայն ՀՀ կառավարության 30 հունվարի 2014թ. թիվ 145-Ն որոշման 3-չդ հավելվածի 18-րդ կետի:

4. Հավելված 5

ՍԱ 403371 Հովհաննիսյան Հովհաննեսի ընտանիքը կազմված է 5 անձից: Ինքը 3-րդ խմբի հաշմանդամ, ունի 1 անչափահաս թոռնիկ: Հարևանի խնդրանքով 2017թ. մայիսին կատարել է մաքսային մուծում: Ընտանիքը ապրում է հին, չվերանորոգված տանը: Հաշվի առնելով ընտանիքների կարիքավոր լինելը՝ ՍԱԽ 31.07.2017թ. որոշել է չզրոյացնել, համաձայն ՀՀ կառավարության 30 հունվարի 2014թ. թիվ 145-Ն որոշման 3-րդ

# 2.6 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. ապրիլի 12-ի թիվ 8/2 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասին նախնական պատկերացում կազմելու համար, առանց ծրագրերի իրականացման կազմակերպություններ մուտք գործելու, տեղեկատվության հավաքում: |
| **Վերահսկողության առարկան** | Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրեր: |
| **Վերահսկողության օբյեկտները** | Վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպություններ: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. ապրիլի 1-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017թ. ապրիլի 13-ից մինչև 2018թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Դիտարկումն իրականացնելու նպատակով վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպություններից պահանջվել է տեղեկատվություն՝ 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածի համար՝ նախապես մշակված ձևաչափով: Տվյալների ուսումնասիրության և որոշակի ընտրանքի արդյունքում, մի շարք ծրագրերի մասով ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 2017թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ: Ուսումնասիրությունների արդյունքում ընտրված ոլորտներում իրականացվող վարկային և դրամաշնորհային մի շարք ծրագրերի իրականացման ընթացքն ընդգրկվել է ՀՀ վերահսկիչ պալատի 2017թ. վերահսկողության թեմաների շարքում, մի մասն էլ՝ 2018թ. տարեկան ծրագրում: |

# ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպություններից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքներն, ըստ ծրագիրն իրականացնող կազմակերպությունների, ներկայացված են ստորև՝

## *ՀՀ կառավարության աշխատակազմ*

### 1. «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

#### 1.1. Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման ծրագիր

*Ծրագրի արժեքը* պլանավորվել էր 57.1 մլն ԱՄՆ դոլար, սակայն 01.04.2017թ. դրությամբ դեռևս կնքվել են ֆինանսավորման հետևյալ համաձայնագրերը՝

*ա) Ֆինանսավորողը՝* Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ (IFAD)

*Վարկային և դրամաշնորհային համաձայնագրի ամսաթիվը՝* 12.11.2014թ., ԱԺ վավերացում՝ 20.05.2015թ.

*Վարկի գումարը՝* 11.6 մլն ԱՄՆ դոլար, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 11.99 մլն ԱՄՆ դոլար

*Դրամաշնորհի գումարը՝* 0.4 մլն ԱՄՆ դոլար,

*բ) Վարկատուն՝* Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 03.09.2015թ., ԱԺ վավերացում՝ 24.11.2015թ.

*Վարկի գումարը՝* 25.0 մլն ԱՄՆ դոլար, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 35.4 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 2021թ.

*Ծրագրի նպատակը՝* բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը ծրագրի իրականացման տարածքում, որտեղ աղքատությունը գերիշխող է, ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ուժեղացման և արժեշղթայի օղակների միջև կապի խթանման միջոցով, որոնք աջակցություն կստանան ծրագրի շրջանակներում:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- գյուղական ֆինանսավորման բաղադրիչ,
- գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուց-վածքների բարելավում,
- ֆերմերների իրազեկման և աջակցության բաղադրիչ,
- ծրագրի կառավարման բաղադրիչ:

*01.04.2017թ. դրությամբ* IFAD-ի վարկային միջոցների շրջանակներում փաստացի ծախսը կազմել է 0.3 մլն ԱՄՆ դոլար (վարկ՝ 0.3, ՀՀ համաֆինանսավորում՝ 0.7 մլն ԱՄՆ դոլար): IFAD-ի դրամաշնորհից գումար չի ծախսվել: Իսկ OPEC-ի վարկային միջոցների շրջանակներում փաստացի ծախսը կազմել է 24.9 մլն ԱՄՆ դոլար (վարկ՝ 17.5, ՀՀ համաֆինանսավորում՝ 6.5, այլ աղբյուրներ՝ 0.9 մլն ԱՄՆ դոլար):

Ծրագրի ֆինանսավորման այս երկու աղբյուրներով, 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ու վճարումները ներկայացված են ստորև՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 12,812,191 | 11,184,922 | 11,044,472 |
| **Խորհրդատվություն** | 628,797 | 655,696 | 655,696 |
| **Ընդամենը** | **13,440,987** | **11,840,618** | **11,700,169** |

Ծրագրի ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.10.2017թ. դրությամբ: Ցուցանիշներն ավելացել են ծրագրի բոլոր ուղղություններով՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 14,021,751 | 13,399,912 | 12,821,668 |
| **Խորհրդատվություն** | 698,597 | 732,275 | 732,275 |
| **Ընդամենը** | **14,720,348** | **14,132,186** | **13,553,943** |

*գ) Դրամաշնորհի տրամադրողը*՝ IFAD-ի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (GEF)
*Դրամաշնորհի համաձայնագրի ամսաթիվը*՝ 15.06.2016թ.
*Դրամաշնորհի գումարը*՝ 3.9 մլն ԱՄՆ դոլար
Դրամաշնորհով ֆինանսավորվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագիրն ինտեգրվել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման ծրագրին» որպես բաղադրիչ մաս: Արդյունքում, Ծրագրի գնումների պլանում ներկայացված են ֆինանսավորման վերը նշված երեք աղբյուրները:
«Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

- ներդրումներ կայուն ֆերմերային համակարգերի և տեխնոլոգիաների մեջ,
- լանդշաֆտների վերականգնման միջոցով համայնքային հողերի դեգրադացիայի կանխարգելում,
- փոքր ֆերմերային տնտեսությունների կարողությունների բարձրացում՝ հողերի դեգրադացման դեմ պայքարի նպաստավոր պայմանների հիմնման միջոցով,

- ծրագրի կառավարում:

01.04.2017թ. դրությամբ, ինչպես նաև՝ 01.10.2017թ. դրությամբ GEF-ի դրամաշնորհային միջոցներից գումար չի ծախսվել:

## 2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

**Դիտարկման արդյունքում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ այս ծրագրերն ընդգրկվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2017թ.-ի վերահսկողության թեմաներում՝ որպես արտածրագրային վերահսկություն:**

### *2.1.* Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր) ծրագիր

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 08.04.2015թ., ԱԺ վավերացում՝ 23.06.2015թ.

*Վարկի գումարը՝* 30.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 42.9 մլն ԱՄՆ դոլար (ՀՀ համաֆինանսավորում՝ 11.0 մլն ԱՄՆ դոլար, շահառուներ[1]՝ 1.9 մլն ԱՄՆ դոլար)

*Ծրագրի սկիզբը՝* 22.09.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.06.2020թ.

*Ծրագրի նպատակը՝* Համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- տեղական մակարդակով սոցիալ-տնտեսական զարգացմանն ու կարողությունների ստեղծմանն աջակցություն,
- միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններին օժանդակություն,
- ինստիտուցիոնալ հզորացում և ծրագրի կառավարում:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 10.6 մլն ԱՄՆ դոլար:

[1] «Շահառու» նշանակում է որևէ համայնք, քաղաքային համայնք, մարզ, համայնքահեն կազմակերպություն, ավագանի և դպրոցի խորհուրդ, որը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում սահմանված՝ նշվածի չափանիշներին Միկրոծրագրի կամ Ենթածրագրի շահառու լինելու համար:

## *2.2.* Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր) ծրագիր

*Դրամաշնորհ տրամադրողը՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ/ՀԲ

*Դրամաշնորհի համաձայնագրի ամսաթիվը՝* 12.08.2016թ.

*Դրամաշնորհի գումարը՝* 2.4 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 02.02.2017թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* զարգացնել հարավային Հայաստանի համայնքապետարանների կարողությունները՝ վերջիններիս բնակիչներին կայուն ենթակառուցվածքի և ծառայությունների մատուցման ուղղությամբ: Այս ծրագիրը լրացնում է վարկային ծրագրի 2-րդ բաղադրիչով նախատեսված որոշակի գործողությունները, և բաղկացած է հետևյալ բաղադրիչից՝

- տեղական զարգացմանը և հանրային ծառայությունների մատուցմանն ուղղված կապիտալ ներդրումներ:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* 01.04.2017թ. դրությամբ ծրագրից գումար չի ծախսվել:

## *2.3.* Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - Արդյունքների վրա հիմնված փոխատվություն

*Վարկատու՝* Ասիական զարգացման բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 19.10.2015թ., ԱԺ վավերացում՝ 18.12.2015թ.

*Վարկի գումարը՝* 83.6 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 102.1 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 22.12.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 31/05/2021թ.

*Ծրագրի նպատակը՝* նպաստել «Դպրոցների ուժեղացման և վերակառուցման ծրագրի»[2] իրականացմանը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում,
- սեյսմիկ աղետի պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում,
- սեյսմիկ աղետի ռիսկի կառավարման և նվազեցման համար օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում,
- ծրագրի իրագործման և իրականացման կարողությունների բարձրացում:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 0.53 մլն ԱՄՆ դոլար:

## *2.4.* Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 23.02.2016թ., ԱԺ վավերացում՝ 16.12.2016թ.

*Վարկի գումարը՝* 55.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 68.6 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 29.12.2016թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.04.2021թ.

*Ծրագրի նպատակը՝* բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ ընտրված շրջանների տեղական տնտեսությանը Վարկառուի աջակցությունը բարելավելու համար

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- ժառանգության հանգույցի վերականգնում և զբոսաշրջային երթուղու մշակում,

[2] ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 797-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին»

- ինստիտուցիոնալ զարգացում,
- չնախատեսված արտակարգ իրավիճակներին արձագանքում:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* 01.04.2017թ. դրությամբ ծրագրից գումար չի ծախսվել:

## *2.5.* Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագիր

*Դրամաշնորհ տրամադրողը՝* ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն (USAID)

*Դրամաշնորհի գումարը՝* 8.6 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 9.4 մլն ԱՄՆ դոլար (0.8 մլն ԱՄՆ դոլար՝ համայնքների ներդրումը)

*Ծրագրի սկիզբը՝* 10.08.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 10.08.2020թ.

*Ծրագրի նպատակը՝* օժանդակել ՀՀ-ին հասնելու ավելի մրցակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման՝ Հայաստանում վարչատարածքային բարեփոխման միջոցով:

Ծրագրի շրջանակներում ներդրումային միջոցներ կտրամադրվեն ՀՀ կառավարության կողմից իրականացվող վարչատարածքային բարեփոխման պիլոտային փուլում 14 խոշորացվող փնջերում զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար:

Ծրագրի վերջնական հաջողությունը չափվելու է 14 թիրախային փնջերից յուրաքանչյուրում հետևյալ երեք նպատակների (վերջնական արդյունքների) իրականացումով՝

1. ՀՀ կառավարության վարչատարածքային բարեփոխումները խթանել են տեղական ինքնակառավարման մարմինների՝ ռեսուրսների վարչարարության և որակյալ ծառայությունների տրամադրման ինստիտուցիոնալ կարողությունները,
2. Մշակվել և փորձարկվել է տեղական մակարդակում ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման մոդել,
3. Հզորացվել են համայնքային ռեսուրսները, ծառայությունների տրամադրում ու ՏԻՄ-երի արձագանքելու պատրաստակամությունը:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 0.5 մլն ԱՄՆ դոլար:

01.01.2015-01.04.2017թթ. ժամանակահատվածում բոլոր երեք ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերով վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| Կատեգորիաներ | Պայմանագրերի արժեք | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 14,742,316 | 7,451,132 | 7,926,478 |
| **Ապրանքների ձեռք բերում** | 1,622,929 | 746,241 | 746,241 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 1,684,598 | 1,262,087 | 1,262,087 |
| **Ընդամենը** | **18,049,843** | **9,459,460** | **9,934,805** |

*Ծրագրի ընդհանուր աշխատանքների հետ համեմատ, կատարված աշխատանքները ցածր տոկոս են կազմում (մոտ 3 %): Ծրագրերը ավարտվելու են 2018-2021թթ. ընթացքում, ուստի, նշված ծրագրերի ուսումնասիրությունը լիարժեք և ամբողջական լինելու համար նպատակահարմար է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվեքննություն իրականացնել ծրագրերի մեծածավալ աշխատանքների կատարման դեպքում:*

**3. ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող ծրագրերը դիտարկման ընթացքում չեն ուսումնասիրվել, քանի որ այդ ծրագրերը, որպես վերահսկողության առանձին թեմաներ, ընդգրկվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2017թ. տարեկան գործունեության ծրագրում:**

## *ՀՀ առողջապահության նախարարություն*

### 1. «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

**Դիտարկման արդյունքում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ այս ծրագրերն ընդգրկվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2017թ.-ի վերահսկողության թեմաներում՝ որպես արտածրագրային վերահսկություն:**

#### 1.1. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր

*Վարկատուն՝* Միջազգային զարգացման ընկերակցություն (Համաշխարհային բանկ)

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 17.05.2013թ., ԱԺ վավերացում՝ 20.06.2013թ.

*Վարկի գումարը՝* 22.8 մլն SDR կամ 35.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 43.3 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 22.07.2013թ.

*Ծրագրի ավարտը՝* 15.12.2019թ.

*Ծրագրի նպատակը՝* բարելավել (i) մոր և մանկան առողջության (ՄՄԱ) ծառայությունները, (ii) առանձին ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելումը, վաղ հայտնաբերումն ու կառավարումը առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում, (iii) ՀՀ տարածքում գործող առանձին հիվանդանոցների արդյունավետությունն ու որակը:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում՝ ԱԱՊ հիմնարկներում ՄՄԱ ծառայությունները և ՈՎՀ-ի ծառայությունները բարելավելու նպատակով,
- առանձին հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում,
- ծրագրի կառավարում:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* կազմել է 21.2 մլն ԱՄՆ դոլար:

### *1.2.* Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր

*Դրամաշնորհ տրամադրողը՝* Միջազգային զարգացման ընկերակցություն (Համաշխարհային բանկ)

*Դրամաշնորհի գրության ամսաթիվը՝* 11.07.2013թ.

*Ծրագրի իրականացնողը՝* «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

*Դրամաշնորհի գումարը՝* 1.8 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 27.09.2013թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* կատարողական արդյունքների հիման վրա ֆինանսավորման շնորհիվ առաջնային առողջության (ԱԱ) մակարդակով մի շարք ընտրված հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման բարելավումը:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- կատարողական արդյունքների հիման վրա ֆինանսավորում՝ ԱԱՊ-ներում ՄՄԱ ծառայությունների բարելավման նպատակով:

Արդյունքում, «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի» վարկային, դրամաշնորհային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների ընդհանուր արժեքը կազմում է 45.1 մլն ԱՄՆ դոլար:

01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում պայմանագրերի շրջանակնե-րում կատարված աշխատանքների և փաստացի վճարումների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումները |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 8,447,266 | 2,661,897 | 3,219,350 |
| **Ապրանքներ** | 9,461,594 | 9,549,138 | 8,908,237 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 1,137,528 | 606,720 | 606,567 |
| **Ընդամենը** | **19,046,388** | **12,817,755** | **12,734,154** |

# ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

## 1. Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (ՀԱԷԿ)

### 1.1. Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագիր

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

*Վարկատուն՝* Ռուսաստանի Դաշնություն

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 05.02.2015թ.

*Վարկի գումարը՝* 270.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 344.7 մլն ԱՄՆ դոլար, որից՝ վարկ 270.0 մլն ԱՄՆ դոլար, ՀՀ համաֆինանսավորում՝ 18.8 մլն ԱՄՆ դոլար՝ ոչ ռեզիդենտի գծով շահութահարկի վճարման համար, ՀԱԷԿ սեփական միջոցներ՝ 55.9 մլն ԱՄՆ դոլար՝ ոչ ռեզիդենտի գծով ԱԱՀ-ի վճարման համար:

*Դրամաշնորհի գումարը՝* 30.0 մլն ԱՄՆ դոլար

*Դրամաշնորհի մասով ծրագրի արժեքը՝* 32.2 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 2019թ.

*Նկարագրություն՝* Տրամադրվում է արտահանման վարկ՝ ֆինանսավորելու Մեծամորի ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման աշխատանքները: Վարկն օգտագործվում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի 90%-ը ֆինանսավորելու համար: Յուրաքանչյուր պայմանագրի կանխավճարը կազմում է ոչ պակաս, քան պայմանագրի արժեքի 10%-ը, որը ֆինանսավորվում է ՌԴ կողմից՝ 30.0 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհի շրջանակներում (ՌԴ կողմից

տրվում է 300.0 մլն ԱՄՆ դոլար=270.0 մլն ԱՄՆ դոլար վարկ +30.0 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ, բոլոր պայմանագրերը ֆինանսավորվելու են նույն 90%/10% համամասնությամբ):

01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կնքված պայմանագրերով վճարումները ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեք | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Խորհրդատվական ծառայություններ (կառավարում)** | 30,000,000 | 11,454,545 | 10,472,727 |
| **Աշխատանքներ (ծրագրերի մշակում, փաստաթղթերի, հայեցակարգերի մշակում, վերլուծություններ, վերահսկում)** | 38,691,875 | 18,787,039 | 15,897,822 |
| **Ապրանքների մատակարարում** | 2,410,898 | 908,949 | 2,410,898 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **71,102,773** | **31,150,533** | **28,781,447** |

Ծրագրի ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.09.2017թ. դրությամբ: Ցուցանիշներն ավելացել են բոլոր ծախսային ուղղություններով: Տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեք | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Խորհրդատվական ծառայություններ (կառավարում)** | 30,000,000 | **13,090,909** | **13,418,182** |
| **Աշխատանքներ (ծրագրերի մշակում, փաստաթղթերի, հայեցակարգերի մշակում, վերլուծություններ, վերահսկում)** | 38,822,226 | 20,268,690 | 21,853,570 |
| **Ապրանքների մատակարարում** | 6,255,993 | 978,441 | 6,186,502 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **75,078,219** | **34,338,040** | **41,458,253** |

## 2. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (համակարգում է աշխատանքները «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ)

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

### *2.1. Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր*

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (ՀԲ)

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 12.05.2016թ., ԱԺ վավերացում՝ 17.06.2016թ.

*Վարկի գումարը՝* 30.0 մլն ԱՄՆ դոլար, ՀԱԷԿ-ի մասը՝ 8.6 մլն ԱՄՆ դոլար, ՋԷԿ-ի մասը՝ 21.5 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 19.07.2016թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.07.2021թ.

*Ծրագրի նպատակը՝* սատարել Վարկառուի՝ էլեկտրաէներգիայի մատակարարման համարժեքության և հուսալիության պահպանման ջանքերը՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով:

*Ծրագրի բաղադրիչները՝*

Ա. Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների՝ հիմնական գործունեության հետ չկապված նպատակներով դրամական միջոցների արտահոսքի բացառում՝ (i)ՀԱԷԿ-ի և Երևանի ՋԷԿ-ի համար հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր կատարելու, փոխառություններ վերցնելու և տրամադրելու արգելքի սահմանման և (ii) պետական «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարման միջոցով:

Բ. Առևտրային թանկ վարկերի նվազեցում և դեբիտորական պարտքերի ստացում՝ (i) Օժանդակ նամակում նշված՝ ՀԱԷԿ-ի և Երևանի ՋԷԿ-ի

առևտրային վարկերի մայր գումարների վերաֆինանսավորման և (ii) ՀԱԷԿ-ի և Երևանի ՋԷԿ-ի՝ Հայաստանի էլեկտրական ցանցին (ՀԷՑ) մատակարարած էլեկտրաէներգիայի դիմաց դեբիտորական պարտքերի ստացման միջոցով:

Գ. Երևանի ՋԷԿ-ի՝ Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի Երևան ԳԳՄ մասնաճյուղի նկատմամբ Օժանդակ նամակ N3-ում հղում կատարված պայմանագրի շրջանակում ունեցած կրեդիտորական պարտքերի մարում:

Դ. Սակագների փոփոխություն՝ էլեկտրաէներգիայի մատակարարման արժեքը լիարժեք արտացոլելու համար. (i) ՀԷՑ-ի լիցենզիայի փոփոխության միջոցով՝ տալով ՀԷՑ-ի կողմից գնված էլեկտրաէներգիայի փաստացի և կանխատեսվող արժեքի անհամապատասխանության հետևանքով կրած վնասի (օգուտի) ամբողջ չափով սակագնային մարժան ճշգրտելու հնարավորություն և (ii) սակագների սահմանման մեթոդաբանության վերանայման միջոցով՝ տալով բնական գազի գնման հետ կապված՝ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանման հետևանքով կրած վնասի (օգուտի) ամբողջ չափով սակագինը ճշգրտելու հնարավորություն:

Ե. Երևանի ՋԷԿ-ի Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (ՀՇԳՑԷ) գազային տուրբինի արտադրական հզորության պահպանում՝ գազատուրբինի որոշ բաղադրիչների փոխարինման միջոցով:

Նախարարությունը պետք է համակարգի աշխատանքը նշված մարմինների հետ, որոնք աջակցելու են վերջինիս Ծրագրի իրականացման հարցում.

(i) ՀԱԷԿ-ի հետ՝ մասնակցելու Ծրագրի՝ Մաս Ա-ի և Բ-ի միջոցառումներին,
(ii) (ii) Երևանի ՋԷԿ-ի հետ՝ մասնակցելու Ծրագրի Մասեր Ա,-ի Բ-ի, Գ-ի և Ե-ի միջոցառումներին,
(iii) (iii) ՀԾԿՀ-ի հետ՝ մասնակցելու Ծրագրի Մաս Դ-ի միջոցառումներին:

«Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, 01.04.2017թ. դրությամբ ծախսվել է 17.57 մլն ԱՄՆ դոլար, որից՝ առևտրային վարկերի մարում՝ 4.6 մլն ԱՄՆ դոլար, գազի դիմաց պարտավորությունների մարում՝ 13.0 մլն ԱՄՆ դոլար:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, 01.04.2017թ. դրությամբ ծախսվել է 7.0 մլն ԱՄՆ դոլար, որն ուղղվել է ձեռք բերված միջուկային վառելիքի դիմաց վճարմանը:

## 3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (ԲԷՑ)

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշար-ների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

### *3.1. «Գյումրի-2» 220/110 կՎտ ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում Մեքենամեխանիզմների մատակարարում*

*Վարկատուն՝* Գերմանիայի Զարգացման վարկերի բանկ (KfW)

Ըստ ԲԷՑ-ի կողմից ներկայացված տեղեկատվության, «Գյումրի-2» 220/110 կՎտ ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի ավարտից հետո (06.02.2014թ.), առաջացել է ծրագրի միջոցներից խնայված 1.5 մլն եվրո գումար: KfW-ի և ծրագրի կառավարման խորհրդի հաստատումից հետո, ՀՀ կառավարությունը 2015թ. դեկտեմբերի 24-ին որոշել է նշված գումարը օգտագործել Գյումրի-2 ենթակայանի անխափան շահագործման և պահպանման համար անհրաժեշտ մեքենամեխանիզմների (վերամբարձ կռունկներ, հենահարթակով ամբարձիչներ և այլն) և պահեստամասերի ձեռք բերման նպատակով:

Մեքենամեխնիզմների մատակարարման համար ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 2.0 մլն եվրո, ներառյալ՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, ժամկետը՝ մինչև 30.09.2017թ.:

Ներկայացված տեղեկատվության համաձայն, 01.04.2017թ. դրությամբ ընդամենը հայտարարվել է մրցույթ:

### *3.2. Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ ենթակայաններ)*

*Վարկատուներ՝*

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկ (KfW), 09.12.2014թ., 10.2 մլն եվրո,

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկ, 09.12.2014թ., 75.0 մլն եվրո,
- Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ), 16.03.2015թ., 10.0 մլն եվրո,
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկ, 11.12.2015թ., 83.0 մլն եվրո,
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկ, 30.05.2016թ., 10.0 մլն եվրո (դրամաշնորհ):

*Վարկերի և դրամաշնորհի ընդհանուր գումարը՝* 188.2 մլն եվրո

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 225.8 մլն եվրո (37.6 մլն եվրոյի չափով համաֆինանսավորում)

*Ծրագրի սկիզբը՝* 09.12.2014թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2020թ.

*Ծրագրի նպատակները՝*

- բարձր լարման հաստատուն հոսանքի («ԲԼՀՀ») փոխակերպիչ կայան (ՓԿ), Այրումում (ՀՀ) 500/400/220 ԿՎ հզորությամբ ենթակայանի կառուցում,
- 500 ԿՎ հզորությամբ մինչև Վրաստանի սահմանը հասնող օդային գծի կառուցում,
- գոյություն ունեցող 220 ԿՎ հզորությամբ գծի՝ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանին միացում,
- խորհրդատվական ծառայություններ,
- 2 կմ երկարությամբ, 220ԿՎ լարմամբ փոխկապակցումներ Հայաստանի գործող ցանցին,
- 43 կմ երկարությամբ, 500ԿՎ լարմամբ հաղորդման գիծ՝ Այրում (Հայաստան) - Մառնեուլ (Վրաստան): Վրացական տարածքում արդեն գոյություն ունի հաղորդման գծի 17 կմ հատված,
- Դդմաշենում ենթակայանի կառուցում,
- էլեկտրահաղորդման գծերի և համապատասխան բաշխիչ սարքերի շինարարություն և վերակառուցում,
- սեկտորի և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

### *3.3. Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր*

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 01.06.2011թ.

*Վարկի գումարը՝* 39.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 52.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 01.06.2011թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.06.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* բարձրացնել էլեկտրամատակարարման ցանցի հուսալիությունը և կարողությունը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- էլեկտրամատակարարման ցանցի ուժեղացում,
- տեխնիկական աջակցություն:

### *3.4. Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում*

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 06.08.2014թ.

*Վարկի գումարը՝* 40.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 50.1 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 06.08.2014թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* բարձրացնել էլեկտրամատակարարման ցանցի հուսալիությունը և կարողությունը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- էլեկտրամատակարարման ցանցի ուժեղացում
- տեխնիկական աջակցություն

Ընդհանուր առմամբ, երեք ծրագրերով, 01.01.2016-01.04.2016թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ու վճարումները ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Աշխատանքներ** | 55,461,339 | 7,079,657 | 12,234,808 |
| **Խորհրդատվություն** | 9,405,599 | 2,587,157 | 3,411,280 |
| **Ընդամենը** | **64,866,939** | **9,666,814** | **15,646,088** |

## 4. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ (ԷԷՀՕ) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (ԲԷՑ)

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

### *4.1. Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր*

*Վարկատուն՝* Ասիական Զարգացման բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 05.09.2014թ., ԱԺ վավերացում՝ 17.12.2014թ.

*Վարկի գումարը՝* 37.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 50.0 մլն ԱՄՆ դոլար (ԷԷՀՕ-ի մաս՝ 18.1 մլն ԱՄՆ դոլար, ԲԷՑ-ի մաս՝ 31.9 մլն ԱՄՆ դոլար)

*Ծրագրի սկիզբը՝* 12.02.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2019թ.

*Ծրագրի համառոտ նկարագրությունը՝* Ներքին հաղորդման ցանցի գործառնական արդյունավետության բարձրացում

*Ծրագրի նպատակը՝* Բարելավել ազգային էլեկտրաէներգիայի համակարգի աշխատանքի հուսալիությունն ու արդյունավետությունը և խթանել հաղորդման կարողությունը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- վերահսկման և տվյալների ձեռք բերման համակարգի (SCADA) ընդլայնում (իրականացնող՝ ԷԷՀՕ)
- գոյություն ունեցող 220-110ԿՎ երկու ենթակայանների վերակառուցում (իրականացնող՝ ԲԷՑ)
- աջակցություն ինստիտուցիոնալ զարգացմանը, կարողությունների հզորացմանը և ծրագրի կառավարմանը

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* Ընդհանուր առմամբ, 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 4.2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ԷԷՀՕ- մասով՝ 0.6 մլն ԱՄՆ դոլար, ԲԷՑ-ի մասով՝ 3.6 մլն ԱՄՆ դոլար

Իսկ 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում ծրագրի երկու մասերով կատարված աշխատանքները և փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Խորհրդատվական ծառայություններ** | 2,099,835 | 462,221 | 326,155 |
| **Շինարարական աշխատանքներ** | 14,805,187 | - | 2,961,037 |
| **Ընդամենը** | **16,905,022** | **462,221** | **3,287,192** |

## 5. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ (ՋԷԿ) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (ԲԷՑ)

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշար-ների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

### *5.1. Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր*

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 08.04.2015թ., ԱԺ վավերացում՝ 23.06.2015թ.

*Վարկի գումարը՝* 52.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 64.9 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 21.09.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.12.2019թ.

*Ծրագրի նպատակը՝* Էլեկտրահաղորդման ցանցի և համակարգի կառավարման հուսալիության բարելավումը և ՀՀ-ի՝ բավարար էլեկտրամատակարարման ապահովման ջանքերին օժանդակումը

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- էլեկտրահաղորդման ցանցի ուժեղացում (իրականացնողներ՝ ՋԷԿ և ԲԷՑ),
- էներգահամակարգի կառավարման բարելավում (իրականացնող՝ ԲԷՑ),
- էլեկտրաէներգիայի արտադրության հզորության մեջ ներդրման նախապատրաստում (իրականացնող՝ ՋԷԿ), աուդիտների իրականացում (իրականացնող՝ ԲԷՑ):

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* Ընդհանուր առմամբ, 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 6.0 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ԲԷՑ-ի մասով՝ 2.2 մլն ԱՄՆ դոլար, ՋԷԿ-ի մասով՝ 3.9 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրի երկու մասերով կնքված պայմանագրերով 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքները և փաստացի վճարումը ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրի արժեք | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 29,614,762 | 179,996 | 4,984,498 |
| **Խորհրդատվություն** | 463,196 | 61,853 | 114,114 |
| **Ընդամենը** | **30,077,958** | **241,849** | **5,098,612** |

## 6. «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

### *6.1. Էներգախնայողության ծրագիր*

*Դրամաշնորհի տրամադրողը՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Համաձայնագրի ամսաթիվը՝* 20.04.2012թ.

*Դրամաշնորհի գումարը՝* 1.8 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 2.1 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 12.09.2012թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.06.2016թ.

*Ծրագրի նպատակը՝* կրճատել էներգիայի սպառումը սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում՝ պետական հատվածում էներգախնայողությանն ուղղված ներդրումների համար խոչընդոտների վերացման միջոցով:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- հանրային օբյեկտների էներգախնայողական ներդրումների ֆինանսավորում,
- տեխնիկական օժանդակություն:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* Ընդհանուր առմամբ, 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 2.1 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի գնումների պլանով նախատեսված բոլոր պայմանագրերը կնքված են: Այս ծրագրի շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում պայմանագրերով վճարումները ներկայացված են ստորև՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Խորհրդատվական ծառայություններ** | 217,971 | 152,436 | 153,338 |

## *6.2. Երկրաջերմային հեղախուզական հորատման ծրագիր*

*Դրամաշնորհ տրամադրողը՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Համաձայնագրի ամսաթիվը՝* 16.06.2015թ.

*Դրամաշնորհի գումարը՝* 8.6 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 10.7 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 25.08.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.05.2019թ.

*Ծրագրի նպատակը՝* պարզել, թե արդյոք ծրագրի տեղամասի երկրաջերմային պաշարը բավարար է էլեկտրաէներգիայի արտադրության համար և եթե այո,

ապա մասնավոր հատվածին ներգրավել երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- մերձատար ճանապարհի կառուցում և հետախուզական հորատման առաջին փուլ,
- տեխնիկական աջակցություն և վերահսկողություն,
- ջրային ենթակառուցվածքի, հորատման հարթակների կառուցում և հետախուզական հորատման երկրորդ փուլ,
- տեխնիկական աջակցություն և վերահսկողություն:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* Ընդհանուր առմամբ, 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 7.7 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում պայմանագրերով կատարված աշխատանքները և վճարումները ներկայացված են ստորև՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Աշխատանքներ** | 3,281,698 | 2,630,494 | 2,663,055 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 422,603 | 383,667 | 328,086 |
| **Ընդամենը** | 3,704,300 | 3,014,161 | 2,991,141 |

Այս ծրագրի շրջանակներում ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.10.2017թ. դրությամբ: 01.10.2017թ.-ի դրությամբ ծրագրով կատարված աշխատանքներն ու փաստացի վճարումները հետևյալն են՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Աշխատանքներ** | 3,281,698 | 2,630,494 | 3,281,698 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 449,788 | 442,265 | 439,424 |
| **Ընդամենը** | 3,731,486 | 3,072,759 | 3,721,121 |

### *6.3. Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր*

*Դրամաշնորհ տրամադրողը՝* Համաշխարհային բանկ

*Համաձայնագրի ամսաթիվը՝* 05.06.2015թ.

*Դրամաշնորհի գումարը՝* 2.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 2.5 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 02.10.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.05.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* ՀՀ-ին օժանդակել արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի առաջարկվող ծրագրի նախապատրաստման հարցում:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- ռեսուրսների քարտեզագրում և իրագործելիության տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ,
- բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի նախապատրաստում,
- արևային ֆոտովոլտային կայանների զարգացման համար իրավակարգավորման դաշտի գնահատում,
- գործարքի խորհրդատվական ծառայություններ,
- գործառնական ձեռնարկ,

- դրամաշնորհի իրականացմանն օժանդակություն:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* Ընդհանուր առմամբ, 01.04.2017թ. դրությամբ ծրագրից ծախսվել է 1.270 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում պայմանագրերով վճարումները ներկայացված են ստորև՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Ապրանքների ձեռք բերում** | 253,069 | 253,069 | 253,069 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 497,938 | 307,579 | 307,916,5 |
| **Ընդամենը** | 751,007 | 560,648 | 560,986 |

Այս ծրագրի շրջանակներում ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.10.2017թ. դրությամբ: Ավելացել են միայն խորհրդատվական ծառայությունների գծով ցուցանիշները: Արդյունքում, 01.10.2017թ.-ի դրությամբ ծրագրով կատարված աշխատանքներն ու փաստացի վճարումները հետևյալն են՝

հազ. դրամ

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Ապրանքների ձեռք բերում** | 253,069 | 253,069 | 253,069 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 513,853 | 525,734 | 527,000 |
| **Ընդամենը** | 766,922 | 778,804 | 780,069 |

## *Ջրային տնտեսության պետական կոմիտե*

### 1. «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագիրն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշար-ների նախարարության վերահսկողության շրջանակներում:**

#### *1.1. Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր*

*Վարկատուն՝* Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 29.05.2013թ., ԱԺ վավերացում՝ 07.06.2013թ.

*Վարկի գումարը՝* 30.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 37.5 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 15.07.2013թ.

*Ծրագրի ավարտը՝* 30.06.2018թ.

*Ծրագրի նպատակը՝* (1) նվազեցնել օգտագործվող էլեկտրաէներգիայի քանակը և բարելավել ոռոգման տեղափոխման արդյունավետությունը թիրախավորված ոռոգման համակարգերում, և (2) բարելավել կարևոր տվյալների և տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը՝ որոշում ընդունողների և այլ շահառուների համար:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- Ոռոգման համակարգերի բարելավում,
- Կառավարման տեղեկատվություն,

- ծրագրի կառավարում և ՋՕԸ-ներին աջակցություն:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* կազմել է 28.5 մլն ԱՄՆ դոլար:

Իսկ 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում այս ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և կատարված փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 17,933,037 | 9,164,304 | 10,478,178 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 771,470 | 397,124 | 397,335 |
| **Ընդամենը** | **18,704,507** | **9,561,428** | **10,875,513** |

### *1.2. Ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում, Ախուրյան գետ, փուլ 1 (Կապսի ջրամբարի և ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում)*

*Վարկատուն՝* Գերմանիայի զարգացման վարկերի բանկ (KfW)

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 19.12.2014թ.

*Վարկի գումարը՝* 50.0 մլն եվրո

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 60.0 մլն եվրո

*Ծրագրի սկիզբը՝* 29.06.2015թ.

*Ծրագրի ավարտը՝* 10.12.2021թ.

*Ծրագրի նպատակը՝* (1) գյուղատնտեսական ոռոգման նպատակով Ախուրյան գետի վրա 25 մլն խմ տարողությամբ/հզորությամբ Կապսի ջրամբարի վերակառուցում և ավարտում,

(2) գետի համակարգի վերադիր հատվածներում ջրի կառավարման բարելավում,

(3) խորհրդատվական ծառայություններ:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* կազմել է 1.7 մլն եվրո:

Իսկ 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում այս ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և կատարված փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

Եվրո

| | Պայմանագրերի արժեքը | Կատարո-ղական | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Խորհրդատվական ծառայություններ** | 7,189,173 | 1,365,309 | 1,365,309 |
| **Ընդամենը** | **7,189,173** | **1,365,309** | **1,365,309** |

### *1.3. Վեդու ջրամբարի և ոռոգման ցանցերի կառուցում*

*Վարկատուն՝* Զարգացման Ֆրանսիական գործակալություն

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 26.01.2016թ., ԱԺ վավերացում՝ 12.05.2016թ.

*Վարկի գումարը՝* 75.0 մլն եվրո

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 90.0 մլն եվրո

*Ծրագրի սկիզբը՝* 12.05.2016թ.

*Ծրագրի ավարտը՝* 31.03.2021թ.

*Ծրագրի նպատակը՝* բարելավել ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը Արարատյան հարթավայրի բերրի հողերում՝ (ա) ապահովելով լրացուցիչ վերականգնվող ջրային ռեսուրսներ Վեդիի ջրամբարի կառուցման միջոցով և (բ) բարելավելով ոռոգման արդյունավետությունը ցանցերի վերանորոգման ու արդիականացման միջոցով:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- Վեդիի ջրամբարի և օժանդակ կառույցների կառուցում/շինարարություն,
- Ռոգելի տարածքների վերականգնում, արդիականացում և ընդլայնում (3200հա),
- ծրագրի իրականացում:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* կազմել է 15,347.5 մլն եվրո:

01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում այս ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերը, իրականացված աշխատանքները և կատարված փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

Եվրո

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 80,342,125 | - | 13,369,338 |
| **Ապրանքներ** | 89,261 | 88,850 | 88,850 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 4,247,883 | 1,406,456 | 1,413,295 |
| **Ընդամենը** | **84,679,269** | **1,495,306** | **14,871,482** |

Ծրագրի կատարման ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.10.2017թ. դրությամբ, որոնց տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում՝

Եվրո

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 80,342,125 | 12,784,396 | 23,000,603 |
| **Ապրանքներ** | 89,261 | 88,849.86 | 88,849.86 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 4,247,883 | 1,454,859 | 1,888,896 |
| **Ընդամենը** | **84,679,269** | **14,328,104** | **24,978,349** |

### *1.4. Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր*

*Վարկատուն՝* Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամ (հակաճգնաժամային հիմնադրամ)

*Վարկային համաձայնագրի ամսաթիվը՝* 16.10.2015թ., ԱԺ վավերացում՝ 25.04.2016թ.

*Վարկի գումարը՝* 40.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 50.0 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 01.06.2016թ.

*Ծրագրի ավարտը՝* 01.06.2021թ.

*Ծրագրի նպատակը՝*

- ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում,
- ոռոգելի հողերի մակերեսների մեծացում,
- ՋՕԸ-ների տեխնիկական հագեցման բարձրացում և կառավարչական հմտությունների զարգացում, ՋՕԸ-ների ֆեդերացիայի ստեղծում:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- մեխանիկական ոռոգման փոխարինումը ինքնահոսով,
- մայր ջրանցքների և երկրորդական ջրանցքների վերականգնում,
- ՋՕԸ-ների ներտնտեսական բաշխիչ ցանցերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների ինստիտուցիոնալ հնարավորությունների զարգացում և ՋՕԸ-ների ֆեդերացիայի ստեղծման պիլոտային ծրագիր,

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախսը՝* կազմել էր ընդամենը 0.006 մլն ԱՄՆ դոլար: Իսկ 01.10.2017թ.-ի դրությամբ տվյալներով կատարված աշխատանքներն ու փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Շինարարական աշխատանքներ** | 970,712 | 0 | 194,158 |
| **Ապրանքներ** | 27,882 | 27,882 | 27,923 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 31,789 | | |
| **Ընդամենը** | **1,030,383** | **27,882** | **222,081** |

### *1.5. Մաստարայի ջրամբարի նախապատրաստման ծրագիր*

*Դրամաշնորհ տրամադրողը՝* Համաշխարհային բանկ

*Դրամաշնորհի ամսաթիվը՝* 16.07.2015թ.

*Դրամաշնորհի գումարը՝* 0.7 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 0.7 մլն ԱՄՆ դոլար

*Ծրագրի սկիզբը՝* 12.10.2016թ.

*Ծրագրի ավարտը՝* 01.10.2017թ.

*Ծրագրի նպատակը՝* բարձրացնել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Մաստարայի ջրամբարի ծրագրի պատրաստվածության աստիճանը՝ համապատասխան ծրագրի նախապատրաստման ուսումնասիրությունների իրականացմանն օժանդակելու միջոցով, և ընդլայնել ԾԻԳ-ի՝ ծրագրերի նախապատրաստման և իրականացման կարողությունները:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

- Մաստարայի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և նախնական նախագծի և ծրագրային փաստաթղթերի կազմում,
- ԾԻԳ-ի կարողությունների զարգացում,
- դրամաշնորհի ֆինանսական աուդիտ:

*01.04.2017թ. դրությամբ փաստացի ծախս* չի կատարվել: Իսկ 01.10.2017թ.-ի դրությամբ տվյալների համաձայն, թվով 3 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով, ընդհանուր 319.9 մլն դրամ արժեքով, կատարողական դեռևս չկա, սակայն կատարվել է 53.7 մլն դրամի կանխավճար:

ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 191-Ա որոշմամբ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում իրականացվող օտարերկրյա պետությունների, միջազգային վարկատու և դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող մի շարք շարունակական ծրագրերի հետագա իրականացման, ծախսերի, ծրագրերի մասին հաշվետվությունները ներկայացնելու և ավարտված ծրագրերի մասին հետագա հաշվետվությունները ներկայացնելու գործառույթներն իրականացվում են «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով: ԾԻԳ-ին հանձնված ծրագրերը հետևյալն են՝

| Ծրագրի անվանումը | Վարկային և դրամաշնորհային ծրագրերի անվանումները | Արժույթը | Գումարը |
|---|---|---|---|
| **«Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագիր** | Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման ծրագրի երրորդ փուլ | Եվրո | 30,000,000 |
| | Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման ծրագրի երրորդ փուլ | | 25,000,000 |

| | | | |
|---|---|---|---|
| | Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ | | 12,000,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **67,000,000** |
| **Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր** | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր | ԱՄՆ դոլար | 7,000,000 |
| | Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր | | 7,000,000 |
| | Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր | | 7,000,000 |
| | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր | | 665,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **21,665,000** |

Դիտարկման կատարման ընթացքում «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի մասով ֆինանսավորման համաձայնագրերը դեռևս ուժի մեջ չէին մտել, ինչի արդյունքում, այս մասով աշխատանքներ չեն կատարվել:

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի մասով ԾԻԳ-ի կողմից իրականացվող փուլում, 01.01.2017-01.10.2017թթ. ժամանակահատվածում կատարվել է 2.1 մլն ԱՄՆ դոլար և 174.1 մլն դրամ ընդհանուր արժեքով փաստացի ծախս:

# Երևանի քաղաքապետարան

## *1.1. Երևանի մետրոյի վերակառուցման ծրագրի 2-րդ փուլ*

*Վարկ և դրամաշնորհ տրամադրողները, համաձայնագրերի ստորագրումը և գումարը՝*

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, 03.08.2012թ.՝ 5.0 մլն եվրո վարկ
- ԵՄ հարևանության ներդրումային ծրագիր, 28.09.2012թ.՝ 5.0 մլն եվրո դրամաշնորհ
- Եվրոպական ներդրումային բանկ, 10.05.2013թ.՝ 5.0 մլն եվրո վարկ

*Վարկերի և դրամաշնորհների գումարը՝* 15.0 մլն եվրո

*Ծրագրի ընդհանուր արժեքը՝* 19.6 մլն եվրո

Ծրագրով նախատեսվել էր ծրագիրն իրականացնողին տրամադրել նաև ԵՄ հարևանության ներդրումային ծրագրով տեխնիկական աջակցություն՝ 2.2 մլն եվրո: Սակայն գնումների պլանի համաձայն, ԵՄ հարևանության ներդրումային ծրագրի շրջանակներում պետք է հատկացվի 1.5 մլն եվրո աջակցություն:

*Ծրագրի սկիզբը՝* 03.08.2012թ.

*Ծրագրի ավարտը՝* 01.04.2017թ.

Ծրագրի շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները ներկայացված են ստորև՝

Եվրո

| | Պայմանագրի արժեքը | Կատարողականը | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 12,377,530 | 2,080,791 | 2,507,274 |
| **Խորհրդատվություն** | 850,000 | 335,422 | 335,422 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13,227,530** | **2,416,214** | **2,842,696** |

Դիտարկման ընթացքում ուսումնասիրվել են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից ֆինանսավորվող Երևանի կոշտ թափոնների դրամաշնորհային ծրագրի, Երևանի քաղաքային լուսավորության դրամաշնորհային ծրագրի, և Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր - Տրանշ 1 և Տրանշ 2 ծրագրերը: Դրանց շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները ներկայացված են ստորև՝

Եվրո

| **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ** | | | |
|---|---|---|---|
| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարումներ |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 1,023,261 | 222,202 | 241,791 |
| **Ընդամենը** | **1,023,261** | **222,202** | **241,791** |

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող երկու ծրագրերի կատարման ցուցանիշներն ամփոփվել են նաև 01.10.2017թ. դրությամբ՝

Եվրո

| Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ | | | |
|---|---|---|---|
| | Պայմանագրերի արժեքը | Կատարողական | Փաստացի վճարումներ |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 1,103,241 | 276,391 | 270,150 |
| **Ընդամենը** | **1,103,241** | **276,391** | **270,150** |

Ասիական զարգացման բանկի կողմից երկու տրանշերով ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածի համար ներկայացված է ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | **Պայմանագրերի արժեքը** | **Կատարված աշխատանքները** | **Փաստացի վճարումներ** |
|---|---|---|---|
| **Աշխատանքներ** | 56,717,400 | 12,351,066 | 17,315,013 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 8,059,304 | 1,703,212 | 1,935,444 |
| **Ընդամենը** | **64,776,703** | **14,054,278** | **19,250,457** |

Երկու տրանշերով ծրագրերի կատարման ցուցանիշները 01.10.2017թ. դրությամբ ներկայացված է ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքները | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Աշխատանքներ** | 56,717,400 | 14,511,771 | 18,719,795 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 10,740,716 | 2,575,738 | 3,169,215 |
| **Ընդամենը** | **67,458,116** | **17,087,509** | **21,889,010** |

**Վերոհիշյալ ծրագրին Հաշվեքննիչ պալատը կանդրադառնա աուդիտների մասով ծավալը ծածկելուց հետո:**

Հաշվի առնելով, որ «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» Եվրոպական միության բյուջետային աջակցության համաձայնագրով նախապայման է սահմանված 2018-2019թթ.-ին իրականացվելիք վերահսկողությունների մասով, ըստ որի՝

- ✓ 2018թ.-ին ՀՀ հաշվեքննիչ պալատը ֆինանսական և համապատասխանության աուդիտներ պետք է իրականացնի պետական այն մարմիններում, որոնց ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում կազմում է առնվազն 17.5%,
- ✓ 2019թ.-ին՝ առնվազն 25%-ը:

# ՀՀ ֆինանսների նախարարություն

## 1. «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկ

**Վերահսկիչ պալատը կանդրադառնա համապատասխան ոլորտներում իրականացվելիք վերահսկողությունների/հաշվեքննությունների շրջանակներում:**

Դիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի կողմից 2016թ.-ից մինչև 01.04.2017թ.-ը իրականացվող թվով 12 ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները՝

1. «Կենսաթոշակների մասին հանրային իրազեկման և գրագիտության ծրագիր», ԻԶՀ դրամաշնորհային ծրագիր,
2. «Հայաստանի կենսապայմանների ամբողջացված հետազոտության ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր,
3. «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր,
4. «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» վարկային ծրագիր,
5. «Երիտասարդների մասնակցության խթանման ծրագիր RETF փոքր դրամաշնորհային ծրագիր»,
6. «Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր»,
7. «Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր»,
8. «Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր»,
9. «Էլ. հասարակության և նորարարության համար մրցունակության ծրագիր»,
10. «ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր»,
11. «Քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման ծրագրի համար ԻԶՀ դրամաշնորհային ծրագիր»,
12. «Հայաստանի հանրային հատվածի ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագիր»:

Նշված ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածի համար ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողականը | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 10,324,729 | 4,639,458 | 4,786,381 |
| **Ապրանքներ** | 5,649,281 | 3,905,084 | 3,912,516 |
| **Խորհրդատվություն** | 6,204,617 | 3,545,090 | 3,320,563 |
| **Դրամաշնորհներ** | 119,462 | 121,511 | 119,462 |
| **Ընդամենը** | **22,298,089** | **12,211,143** | **12,138,922** |

Ծրագրերի իրականացման ընթացքն ուսումնասիրվել է նաև 01.10.2017թ.-ի դրությամբ: Այս ընթացքում սկսել է իրականացվել նաև «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիրը»: Բոլոր ծրագրերով ընդհանրական ցուցանիշները 01.10.2017թ. դրությամբ ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարողականը | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 10,324,729 | 5,977,143 | 5,958,524 |
| **Ապրանքներ** | 8,438,403 | 4,371,996 | 4,308,075 |
| **Խորհրդատվություն** | 6,517,143 | 4,024,862 | 3,800,365 |
| **Դրամաշնորհներ** | 119,462 | 121,511 | 119,462 |
| **Ընդամենը** | **25,399,737** | **14,495,513** | **14,186,426** |

# ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

## 1. «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագրերն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ.-ի վերահսկողության թեմաներում՝ որպես արտածրագրային վերահսկողություն:**

Դիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում իրականացվող թվով 8 ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները՝

1. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս - հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր- Տրանշ 1,
2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս - հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր- Տրանշ 2,
3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս - հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր- Տրանշ 3,
4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս -հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր- Տրանշ 3,
5. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագիր,
6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր,
7. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ 6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր,
8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման դրամաշնորհային ծրագիր:

Նշված ծրագրերի վերաբերյալ ընդհանրական ցուցանիշները 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածի համար ներկայացված են ստորև՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեք | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| Շինարարություն | 467,314,848 | 65,627,122 | 64,863,621 |
| Խորհրդատվություն | 23,869,346 | 5,973,560 | 5,234,053 |
| **Ընդամենը** | **491,184,194** | **71,600,683** | **70,097,674** |

## ՀՀ կրթության և գիտության նախարարություն

### 1. «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկ

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագրերն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի՝ կրթության ոլոտին վերաբերող առաջիկա հնարավոր վերահսկողության թեմաներում**

Դիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է ԾԻԳ-ի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները:

*Ծրագրի նպատակները՝*

- Հանրակրթության ոլորտի հետագա բարելավում,
- Մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանում:

*Ծրագրի բաղադրիչ մասերը՝*

1. «Հանրակրթության որակի բարելավում», որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

   - Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում:
   - Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը:
   - Հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը:
   - Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:

2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

3. Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

01.01.2016-01.04.2017թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքները և փաստացի վճարումները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 6,849,212 | 2,025,939 | 2,380,544 |
| **Ապրանքներ** | 12,363 | 12,365 | 12,346 |
| **Խորհրդատվություն** | 1,042,037 | 713,758 | 738,184 |
| **Դրամաշնորհներ ԲՈՒՀ-երին** | 3,478,229 | | 1,504,041 |
| **Դրամաշնորհներ նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններին** | 286,710 | | 284,301 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **11,668,551** | **2,752,062** | **4,919,416** |

Ծրագրի ցուցանիշներն ուսումնասիրվել են նաև 01.10.2017թ. դրությամբ՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրի արժեքը | Կատարված աշխատանքներ | Փաստացի վճարում |
|---|---|---|---|
| **Շինարարություն** | 6,849,212 | 3,791,827 | 3,605,051 |
| **Ապրանքներ** | 385,328 | 162,849 | 162,826 |
| **Խորհրդատվություն** | 1,137,476 | 878,448 | 903,651 |
| **Դրամաշնորհներ ԲՈՒՀ-երին** | 3,478,229 | | 2,281,387 |
| **Դրամաշնորհներ նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններին** | 535,290 | | 502,022 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **12,385,535** | **4,833,124** | **7,454,937** |

## *ՀՀ բնապահպանության նախարարություն*

### 1. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

**Դիտարկման արդյունքում առաջարկվել է ծրագրերն ընդգրկել ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվելիք ՀՀ բնապահպանության նախարարության վերահսկողության շրջանակներում:**

Դիտարկման ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ ծրագրերի կատարման ցուցանիշները՝ 01.01.2016-01.10.2017թթ. ժամանակահատվածի համար՝

1. ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի կառավարման, ներառման և թափանցիկության ապահովման համար դրամաշնորհային ծրագիր,
2. «Էմերալդ ցանց»-Բնապահպանական տարածքների պատրաստում, Փուլ II» դրամաշնորհային ծրագիր,
3. ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի Համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիական կարիքների գնահատում» դրամաշնորհային ծրագիր:

Ծրագրերի ամփոփ ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ԱՄՆ դոլար

| | Պայմանագրերի արժեքը | Կատարված աշխատանքները | Փաստացի վճարումներ |
|---|---|---|---|
| **Ապրանքներ** | 54,405 | 54,581 | 54,581 |
| **Խորհրդատվական ծառայություններ** | 113,725 | 113,627 | 113,627 |
| **Ընդամենը** | **168,130** | **168,207** | **168,208** |

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ կառավարությանը՝**

1. ՀՀ կառավարության 07.08.2014թ.-ի թիվ 884-Ն որոշմամբ, ինչպես նաև՝ ՀՀ վարչապետի 12.09.2014թ. թիվ 893 որոշմամբ նախատեսված՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը և հաշվետվությունները ներկայացնել նաև ՀՀ հաշվեքննիչ պալատ՝ իր գործունեության ընթացքում ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաշվեքննությունների, ինչպես նաև՝ պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների իրականացումը պատշաճ կազմակերպելու նպատակով:
2. ՀՀ վերահսկիչ պալատի աուդիտների արդյունավետությունը բարձրացնելու, ռիսկերի գնահատման մեթոդաբանություն կիրառելու և ներկայումս ընթացող բարեփոխումների սահուն ընթացքն ապահովելու նպատակով գործուն աջակցություն ցուցաբերել Համաշխարհային բանկի հետ տարվող բանակցություններում ՀՀ վերահսկիչ պալատի համար գնումների ոլորտի «STEP – Systematic Tracking of Exchanges in Procurement» տեղեկատվական համակարգի հասանելիության ապահովման հարցում[3]:

[3] ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. սեպտեմբերի 7-ի թիվ 5-2/16266-17 գրության հիման վրա Համաշխարհային բանկի Client Connection տեղեկատվական համակարգը հասանելի է ՀՀ վերահսկիչ պալատի համար:

# 2.7 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 18/4 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման արդյունավետության և օրինականության որոշումը: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման գործընթաց: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, պետական գույքի (այդ թվում՝ բաժնեմասերի) կառավարման լիազորությամբ օժտված պետական մարմիններ, ներառյալ՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններ (ընտրանքային): |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության ձերը, ինչպես նաև՝ համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները:<br><br>Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկողությամբ ընդգրկված օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, դասակարգում, ռիսկերի գնահատում և վերլուծություն: Վերլուծության փուլում ամփոփվել, վերլուծվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Ընդհանուր նկարագիր

2016 և 2017 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) իրականացրել է պետական գույքի կառավարման, այդ թվում՝ մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության կարգավորման ու լուծարման գործընթացները՝ առաջնորդվելով «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022թթ. ծրագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

Վարչության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպություններն են՝ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կենտրոն), «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ (այսուհետ՝ Գործակալություն), և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ:

## *Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ*

Վարչությունը կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներն իրականացրել է ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներով սահմանված ծրագրերով:

**1.** «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների պահպանում» ծրագրով 2016 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 619,929.3 հազ. դրամ, 2017 թվականին՝ 792, 786.6 հազ. դրամ:

2016թ.-ին նախատեսված 619,929.3 հազ. դրամից ֆինանսավորվել է 585,561.3 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 585,156.4 հազ. դրամ: 2017թ. ինն ամսում ֆինանսավորվել է 548,124.8 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմում է 543,052.0 հազ. դրամ:

2016թ. «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» մասով նախատեսված 355,381.5 հազ.դրամը, որը կազմում է ապարատի ընդհանուր ծախսի 60,73%-ը՝ ամբողջությամբ ֆինանսավորվել և ծախսվել է: 2017թ. ապարատի ինն ամսվա ընդհանուր ծախսի մեջ աշխատավարձի ֆոնդը կազմում է 42,9%:

Վարչությանը 2016թ. բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման մի շարք հոդվածներով կատարվել են հետևյալ հատկացումները.

- ՀՀ կառավարության 22.02.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ «Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով հատկացվել է 17,269.0 հազ. դրամ՝ տարածքի տրամադրման համար, որն էլ ֆինանսավորվել և ծախսվել է:
- ՀՀ կառավարության 18.02.2016թ. թիվ 184-Ն և 22.09.2016թ. թիվ 1004-Ն որոշումներով «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ին 2016թ. գործունեության ապահովման նպատակով «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 152,497.0 հազ.դրամ, որից ֆինանսավորվել և ծախսվել է 143,497.0 հազ.դրամ:

- ՀՀ կառավարության 31.03.2016թ. թիվ 340-Ն որոշմամբ Կառավարական N 2 և N 3 շենքերի և շինությունների սպասարկման ծառայություններ մատուցելու համար «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 180,180.0 հազ.դրամ, որից ֆինանսավորվել է 176,083.1 հազ.դրամ և ծախսվել է 175,538.3 հազ.դրամ, տարբերությունը 544.8 հազ դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

- ՀՀ կառավարության 31.03.2016թ. թիվ 341-Ն որոշմամբ ՀՀ կառավարական N 3 շենքում ընթացիկ վերանորոգում կատարելու համար «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» հոդվածով հատկացվել է 32,500.0 հազ. դրամ, որից ֆինանսավորվել և ծախսվել է 32,436.5 հազ. դրամ:

- ՀՀ կառավարության 09.06.2016թ. թիվ 629-Ն և 18.11.2016թ. թիվ 1180-Ն որոշումներով ՀՀ կառավարական N 2 շենքում (հասցեն՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3 և 3/8) տեղակայված թվով 5 նախարարությունների էներգետիկ և կոմունալ ծառայությունների համար հատկացվել է 100,963.6 հազ. դրամ, որից ֆինանսավորվել և ծախսվել է 95,365.8 հազ. դրամ:

- «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի անշարժ և շարժական գույքը ձեռքբերելու համար ՀՀ կառավարության 22.09.2016թ. թիվ 977-Ն որոշմամբ «Շենքերի և շինությունների ձեռքբերում» և «Վարչական սարքավորումների ձեռքբերում» հոդվածներով հատկացվել է 1,040,800.8 հազ.դրամ:

- ՀՀ կառավարության 03.11.2016թ. թիվ 1110-Ն որոշմամբ «Գեոկոմպլեքս» ՓԲԸ-ի լուծարումից հետո մնացած գույքի և պարտավորությունների մարման համար հատկացվել է 27,722.2 հազ. դրամ՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով, որն էլ ամբողջովին ֆինանսավորվել և իրացվել է:

- ՀՀ կառավարության 03.11.2016թ. թիվ 1166-Ն որոշմամբ «Շենքերի և շինությունների ձեռքբերում» հոդվածով հատկացվել է 17,500.0 հազ.դրամ:

- ՀՀ կառավարության 03.11.2016թ. թիվ 1166-Ն որոշմամբ «Շենքերի և շինությունների ձեռքբերում» հոդվածով հատկացվել է 17,500.0 հազ.դրամ՝ «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը սեփականության

իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Չարենցի 13 հասցեում գտնվող գույքը Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու նպատակով:

- ՀՀ կառավարության 22.12.2016թ. թիվ 1310-Ն որոշմամբ, մի շարք կազմակերպությունների վարձավճարներ իրականացվել են ՀՀ պետական բյուջեից՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամում կատարվող կամավոր գույքային վճար: Նշված նպատակով վերը նշված որոշմամբ, Վարչությանը հատկացվել է 7,428.0 հազ. դրամ, որից՝ 2,412.0 հազ. դրամը՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ», և 5,016.0 հազ. դրամը՝ «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածներով:

2016թ. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Վարչությանը հատկացվել է 1,576,960.6 հազ. դրամ, որից ֆինանսավորվել և ծախսել է 1,558,202.4 հազ.դրամ:

2017թ. ինն ամսում ՀՀ կառավարության վերը նշված որոշումներով պահուստային ֆոնդից նախատեսվել է 99,127.7 հազ. դրամի հատկացում, որից ֆինանսավորվել և ծախսվել է 78,778.3 հազ .դրամ:

**2.** ՀՀ կառավարության 24.03.2016թ. թիվ 298-Ն որոշմամբ Վարչությանը 2016թ.-ին թույլատրվել է իրականացնել հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության ծրագիր: 2016թ. ընթացքում մուտք է եղել 27,026.9 հազ. դրամ և ելք՝ 12,917.8 հազ. դրամ: Տարեվերջին նշված ծրագրով արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 14,109.1 հազ.դրամ:

Վարչությանը 2017թ.-ին ՀՀ կառավարության 23.03.2017թ. թիվ 298-Ն որոշմամբ կրկին թույլատրվել է իրականացնել պահառության ծրագիր: 2017թ. ինն ամսում ֆինանսավորվել է 12,582.2 հազ.դրամ և փաստացի ծախսվել է 12,803.7 հազ.դրամ:

**3.** ՀՀ կառավարության 14.01.2016թ. թիվ 4-Ն և 16.06.2016թ. թիվ 647-Ն որոշումներով թույլատրվել է Վարչությանը Երևան քաղաքի Կառավարական N 2 մասնաշենքի հասցեում գտնվող շենքի բաղադրիչը համարվող տարածքները ձեռք

բերել սեփականատերերից («Արարատ-Ռեստորան», «Նոյան Տապան 1» և «ԱՂԺ» ՍՊԸ-ներ) և իրականացնել Երևան քաղաքի Կառավարական N 2 շենքի սեփականատեր «Տանգո» ՓԲԸ-ի հետ օտարման գործարքներ: Գործարքների արդյունքում 2016թ. տարեվերջին նշված ծրագրով արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 50,369.31 հազ. դրամ: Նշված մնացորդը ՀՀ կառավարության 24.08.2017թ.-ի թիվ 1023-Ն որոշմամբ նախատեսվել է ծախսել Վարչության կողմից զբաղեցրած Տիգրան Մեծի 4 հասցեի վերանորոգման աշխատանքների համար:

**4.** «Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են Կենտրոնի կողմից աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքների 18.01.2016 թվականին կնքված N ԱԿ-01 և 13.01.2017թ. N ԱԿ-01 դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով: Կենտրոնին 2016 և 2017 թվականներին տրամադրվել է համապատասխանաբար 33,012.5 հազ. դրամ և 33,007.8 հազ. դրամ դրամաշնորհ: 2016թ.-ին ֆինանսավորվել և ծախսվել է 33,012.5 հազ. դրամ, իսկ 2017թ. ինն ամսվա ֆինանսավորումը և դրամական ծախսը կազմել է 22,016.3 հազ. դրամ:

**5.** «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են Գործակալության կողմից 20.01.2016թ. կնքված ՊԳԳ-01 և 09.02.2017թ. կնքված ՊԳԳ-01 դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով: 2016թ. Գործակալության ճշտված նախահաշիվը կազմել է 37,202.3 հազ. դրամ և նույնքան էլ կազմել է դրամարկղային ծախսը: Համաձայն 31.03.2016թ. թիվ 340-Ն որոշման, Երևան քաղաքի Կառավարական 2 և Կառավարական 3 Վ.Սարգսյան 3 և 3/8 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների սպասարկման ծառայությունների կատարումը տրամադրվել է Գործակալությանը, որն իրականացնելու համար վերը նշված որոշմամբ հատկացվել է 180,180.0 հազ. դրամ, որից ֆինանսավորվել և ծախսվել է 176,083.1 հազ. դրամ:

Գործակալությանը 2017թ. դրամաշնորհի պայմանագրով տրամադրվել է 271,460.7 հազ. դրամ, որից 234,284.6 հազ. դրամը Կառավարական թիվ 2 և թիվ 3 շենքերի սպասարկման ծառայության գումարն է: 2017թ. ինն ամսվա ֆինանսավորումը 181,064.3 հազ. դրամ է, նույնքան էլ կազմում է Գործակալության դրամարկղային ծախսը:

**6.** «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ին 2017թ. «Համերգների, փառատոնների և այլ միջոցառումների կազմակերպում» ծրագրով 08.02.2017թ.-ի N ՄՀՀ-01 դրամաշնորհի տրամադրման պայմանագրով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 163,037.6 հազ. դրամ, որից 9 ամսում ֆինանսավորվել և ծախսվել է 95,954.0 հազ. դրամ:

**7.** Դեֆիցիտի ֆինանսավորում ծրագրով՝ ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1228-Ն և 15.12.2016թ. թիվ 1297-Ն որոշումների համաձայն, Երևան քաղաքի Վ.Սարգսյան 3/3 հասցեում գտնվող այրված շենքի 1-ին հարկի նախկին սեփականատեր թվով 5 իրավաբանական անձանց իրական վնասի դիմաց վճարելու համար «Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժինների ձեռքբերում» հոդվածով Վարչությանը հատկացված 1,678,000.0 հազ. դրամից վճարվել է 1,614,851.2 հազ. դրամ՝ պայմանավորված ԱՄՆ-ի դոլարի փոխարժեքի փոփոխությամբ:

## *Բյուջետային մուտքերի ապահովման վերաբերյալ*

### 2016 թվականի բյուջետային մուտքերը

- 2016 թվականին պետական գույքի օտարումից մուտքերը կազմել են 6,868,616.1 հազ. դրամ, որից պետական բյուջե մուտքագրվել է 4,158,501.0 հազ. դրամ և համայնքային բյուջեներ՝ 2,710,115.1 հազ. դրամ:
- Նույն ժամանակահատվածում պետական գույքի մասնավորեցումից մուտքերը կազմել են 62,954.3 հազ. դրամ, որից պետբյուջե մուտքագրվել է 61,433.0 հազ. դրամ և համայնքային բյուջեներ՝ 1,521.3 հազ. դրամ:
- Պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքերը կազմել են 38,577.7 հազ. դրամ:
- 2016 թվականին գույքի վարձակալության վարձավճարներից ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 227,790.4 հազ.դրամ:
- Համաձայն ՀՀ կառավարության 03.10.2013թ. թիվ 1130-Ն որոշման՝ պետական սեփականություն համարվող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման

վարձավճարներից 2016թ. հավաքագրվել է 89,255.5 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել՝ 21,710.4 հազ.դրամ:

**2017 թվականի բյուջետային մուտքերը**

- 2017թ.-ի 9 ամիսների ընթացքում պետական գույքի օտարումից մուտքերը կազմել են 364,411.8 հազ.դրամ, որից պետական բյուջե մուտքագրվել է 282,894.8 հազ.դրամ և համայնքային բյուջեներ՝ 81,517.0 հազ. դրամ:
- Նույն ժամանակահատվածում պետական գույքի մասնավորեցումից մուտքերը կազմել են 26,963.4 հազ. դրամ, որից պետբյուջե՝ 26,164.4 հազ. դրամ և համայնքային բյուջեներ՝ 799.0 հազ. դրամ:
- Պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքերը կազմել են 84,278.6 հազ. դրամ:
- Համաձայն ՀՀ կառավարության 03.10.2013թ. թիվ 1130-Ն որոշման՝ պետական սեփականություն համարվող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման վարձավճարներից 2017թ.-ի 9 ամիսների ընթացքում հավաքագրվել և բաշխվել է 124,392.9 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե՝ 31,753.2 հազ.դրամ:
- Նույն ժամանակահատվածում գույքի վարձակալության վարձավճարներից ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 154,484.9 հազ.դրամ:

## *Պետական գույքի օտարման վերաբերյալ*

**ՀՀ Կառավարության 13.06.2003թ. թիվ 882 որոշման պահանջների կատարման գործընթաց**

2016թ-ին և 2017թ-ին 9 ամիսների ընթացքում օտարվել է թվով 18 անշարժ գույք, որից 13-ը մրցույթով, իսկ 5-ը ուղղակի վաճառքի ձևով, ընդհանուր առմամբ 366,811,363 դրամով:

Թվով 16 անշարժ գույք օտարվել է ներդրումային և այլ պարտավորություններով:

ՀՀ կառավարության 13.06.2003թ. թիվ 882 որոշմամբ հաստատվել է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման կարգը, ինչպես նաև որոշման 2-րդ կետով հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված գույքի վաճառքի մասին տեղեկատվությունը՝ նշելով վաճառքի ձևը, գույքի կազմը, հաշվեկշռային ու գնահատված արժեքները, վաճառքից ստացված գումարի չափը և գնորդների ստանձնած պարտավորությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության 12.10.2017թ. 01/3-4/18471-17 գրությամբ ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի, ի կատարումն որոշման 2-րդ կետի, օտարման գույքի վերաբերյալ տեղեկատվություն են ներկայացրել միայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը և Լոռու մարզպետարանը, մասնավորապես՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ 2015-ին՝ 4 օտարում, 2016 և 2017թթ-ներին՝ մեկական օտարում, Լոռու մարզպետարան՝ 2015-ին՝ 3, 2016-ին՝ 2 օտարում:

Այսպիսով, որոշման պահանջը չի կատարվել նաև Վարչության կողմից:

## *Պետական սեփականություն հանդիսացող ավտոմեքենաների օտարումը*

| | |
|---|---|
| **Աճուրդների իրականացման գործընթաց** | Օտարման գործընթացում աճուրդների կազմակերպումն իրականացվել է Կենտրոնի կողմից: |

Իսկ պահառությունը, համաձայն ՀՀ կառավարության 2016թ մարտի 24-ի N 298- Ն որոշման, պետք է իրականացվի Գործակալության կողմից Երևանի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում:

Կառավարության 2016թ. թիվ 298-Ն որոշման և 2017թ. մարտի 30-ի սուբսիդիայի տրամադրման ՊԳԳ-Ս-01 պայմանագրի հավելված 1-ի 2-րդ կետի

համաձայն, հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառությունը պետք է իրականացնի Գործակալությունը: Մինչդեռ, ոչ բոլոր մեքենաներն են պահառության տրվում այդ տարածքում, մասնավորապես, այնտեղ չեն տեղափոխվում այն մեքենաները որոնց տեխնիկական բնութագրերն, ըստ փաստաթղթերի գնահատվել են անբավարար: Արդյունքում, կարող է խախտվել գնորդի կողմից աճուրդի լոտին ծանոթանալու իրավունքը: Հարկ է նշել, որ առկա են նաև դեպքեր, երբ ըստ փաստաթղթերի անբավարար տեխնիկական բնութագրեր ունեցող տրանսպորտային միջոցներ են տեղափոխվել պահառության պահպանման տարածք:

**Օտարված ավտոմեքենաների պետական հաշվառման և գրանցման գործընթաց**

Ըստ ներկայացված տեղեկատվության, Կենտրոնի կողմից 2016թ-ին օտարվել են 315, իսկ 2017 թվականի 9 ամիսների դրությամբ՝ 368 տրանսպորտային միջոցներ, որոնք եղել են ամրացված 38 գերատեսչություններին և պետական հիմնարկներին: Կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2014 - 2017թթ առաջին եռամսյակում օտարվել է թվով 892 տրանսպորտային միջոց: ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն նույն ժամանակահատվածում Կենտրոնի կողմից օտարված ավտոմեքենաների թիվը հաշվառվել է թվով 309:

Փաստորեն, օտարվել և պետական հաշվառում չեն ստացել թվով 583 ավտոմեքենա:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի համաձայն, տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ կողմերի կողմից գործարքը ստորագրելու օրվանից հետո 15-օրյա ժամկետում: Տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության՝ նման գործարքն առոչինչ է:

Կենտրոնի փաստաթղթաշրջանառության արխիվացումը կատարվում է առանձնացված սենյակում միայն թղթային տարբերակով, հետևաբար, աճուրդների կազմակերպման գործընթացի արդյունավետությունը խթանելու

նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել փաստաթղթերի արխիվացումը էլեկտրոնային համակարգի միջոցով կատարելու համար:

## *Անշարժ գույքի շուկայական արժեքի վերլուծություն*

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, անշարժ գույքի պետական ռեգիստրը մշակում և իրականացնում է ՀՀ տարածքում անշարժ գույքի շուկայի բնագավառում ընդհանուր քաղաքականություն, ինչպես նաև, նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն պետական գրանցման հիմնական սկզբունքներից ու խնդիրներից է անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուետ՝ Կոմիտե) կանոնադրության 8-րդ կետի է) ենթակետի համաձայն Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպում ու իրականացում, անշարժ գույքի շուկայի վերլուծություն և տեղեկատվության հրապարակում, իսկ ը) ենթակետի համաձայն՝ անշարժ գույքի շուկայի ձևավորման ու կայացման միջոցառումների կազմակերպում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոմիտեից տեղեկատվություն է պահանջվել համապատասխանաբար հասարակական նշանակության տարածքների օտարման կողմնորոշիչ շուկայական գների վերաբերյալ, ինչի արդյունքում Կոմիտեն պատասխանել է, որ իր կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի գնային և քանակային վերլուծությունները, համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով, տեղադրվում են Կոմիտեի պաշտոնական կայքի (cadastre.am) «Տեղեկատու» բաժնի «Անշարժ գույքի շուկայի վերլուծություն» ենթաբաժնում, իսկ օտարման և վարձակալության դեպքում՝ շուկայական գների հաշվարկ Կոմիտեի կողմից չի իրականացվում:

Սակայն, ինչպես բազմաբնակարան բնակելի շենքերի, այնպես էլ հասարակական նշանակության շենքերի տարածքների մասով շուկայի վերլուծություն անելու Կոմիտեի պարտավորությունը ամրագրված է օրենսդրական

ակտերով, ու թեև Կոմիտի պաշտոնական կայքի (cadastre.am) «Տեղեկատու» բաժնի «Անշարժ գույքի շուկայի վերլուծություն» ենթաբաժնում հրապարակվում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական արժեքները, բայց հասարակական նշանակության շենքերի շուկայական արժեքի վերլուծություն չի կատարվում և չի հրապարակվում:

Ուստի, Վարչությունը պետք է համագործակցի Կոմիտեի հետ հասարակական նշանակության տարածքների մասով գործարքների վերլուծության իրականացման նպատակով:

## *Պետական սեփականության կառավարման վերաբերյալ*

### 1. «Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպում» ծրագրի կատարման մասին

Ծրագրի իրականացման նպատակով 2016թ. և 2017թ. համար միջոցները տրամադրվել են Վարչության արտաբյուջետային հաշվից՝ սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի հիման վրա:

Պայմանագրերի գործողության ժամկետներ են սահմանվել՝ 01.04.2016-31.12.2016թթ. և 01.01.2017-31.12.2017թթ. ժամանակահատվածները, չնայած այն հանգամանքին, որ դրանք կնքվել են համապատասխանաբար 28.04.2016թ. և 30.03.2017թ.:

Պայմանագրերով 2016թ. տրամադրվել է 12,917.8 հազ դրամ, իսկ՝ 2017թ. 9 ամիսների ընթացքում՝ 12,582.0 հազ. դրամ:

Օտարման ենթակա շարժական գույքի պահառության ծառայությունների մատուցումը իրականացվում է Երևանի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում:

Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված յուրաքանչյուր միավոր մինչև 5 մլն. դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության

կազմակերպում» ծրագրի իրագործման նպատակով ՀՀ կառավարության 24.03.2016 թ. թիվ 298-Ն և 23.03.2017թ. թիվ 298-Ն որոշումներով Վարչության արտաբյուջետային հաշվի միջոցներից հատկացվել էր համապատասխանաբար՝ 2016թ-ին՝ 14,173.7 հազ. դրամ. և 2017թ.-ին՝ 21,823.1 հազ. դրամ, իսկ Վարչության պետին թույլատրվել էր այդ գումարների չափով Գործակալության հետ կնքել «Սուբսիդիայի տրամադրման մասին» պայմանագրեր՝ վերը նշված ծրագրով 2016թ. և 2017թ. նախատեսված ծառայությունների մատուցման համար: Այդ պայմանագրերով սահմանվել էին տարեկան ծախսերի ընդհանուր նախահաշիվները, որոնցով նախատեսված էր Գործակալության կողմից կատարվող ծախսերի հատուցում:

Միաժամանակ ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 3-րդ կետով սահմանված է, որ «Սույն կարգի իմաստով սուբսիդիան՝ պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից … ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է:»

Հաշվի առնելով վերը նշվածը, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերը նշված ծրագրով ապագայում կնքվող պայմանագրերով Գործակալության կողմից կատարվող ծախսերի մասնակի հատուցում նախատեսելու համար, իսկ ծախսերի մնացած մասի հատուցումն ապահովել պահառության տարածքում կազմակերպվող Գործակալության հնարավոր ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հաշվին:

## 2. Գնումների կազմակերպման գործընթացը

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարում**

2016թ. Գործակալության կողմից Կառավարական թիվ 3 շենքի վերելակների մասնագիտական տեխնիկական սպասարկման ծառայությունների ՊԳ16-ՇՀԾՁԲ-15/9-02 ծածկագրով ձեռքբերումը մրցակցային կարգով կազմակերպելու ընթացքում Գործակալության կողմից ճիշտ չէր հաշվարկվել գործընթացի ավարտի (հաղթող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու) ժամկետը, այն սահմանելով 01.05.2016թ.: Ընդ որում, այդ ծառայությունների գնման անհրաժեշտությունը ծագել էր 18.04.2016 թ.՝ Գործակալության 2016թ. գնումների պլանում կառավարական թիվ 2 և թիվ 3 շենքերի շահագործման հետ կապված փոփոխություններն ու լրացումները հրապարակելու պահից: Կառավարական թիվ 3 շենքի վերելակների մասնագիտացված տեխնիկական սպասարկման ծառայությունների՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման մրցույթի հրավերը հրապարակվել է 05.05.2016թ., իսկ մրցույթի արդյունքներն ամփոփվել են 17.05.2016թ. և միայն հետմրցութային աշխատանքների կատարման ավարտին՝ 23.05.2016թ. «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքվել է վերը նշված ծառայությունների գնման պայմանագիրը: Վերը նշված սխալ հաշվարկի հետևանքով 01.05.2016թ.-ից մինչև 23.05.2016թ. ժամանակահատվածով նվազեցվել է պայմանագրով սահմանված՝ ծառայությունների մատուցման ժամկետը և դրան համաչափ էլ նվազեցվել է այդ ծառայությունների գնման նախատեսված արժեքը: Թեպետև կատարվածի արդյունքում գումարների անհիմն կամ ոչ նպատակային ծախս չի կատարվել, այնուամենայնիվ, գնման պլանավորման և ֆինանսավորման գործընթացի կազմակերպման մասով Գործակալության կողմից չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները, քանի որ փոփոխվել էր գնման առարկայի (ծառայությունների մատուցման) ժամկետը:

## 3. Պետական մասնակցությամբ ընկերությունների բաժնետոմսերի տնօրինման և կառավարման գործընթացը

### «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ.

ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 29-ի թիվ 474-Ն որոշման համաձայն՝ «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող 100% բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից՝ 23.08.2010թ-ի հանձման-ընդունման ակտով փոխանցվել են Վարչությանը:

Ընկերությունն ընդգրկված է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկերում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Հրազդանի կիրճ, թիվ 4:

Ընկերության գործունեության ոլորտը՝ մարզական-թատերականացված տոնահանդեսների, միջոցառումների կազմակերպում: Ընկերությունում հաշվառվում է մեկ հաստիք (տնօրեն):

«Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ի շենքերի և շինությունների մակերեսը կազմում է 948.35 քմ., իսկ հողամասի չափը՝ 3.9525 հա, որից շուրջ 3.5 հա զբաղեցնում է մարզադաշտը՝ սպասարկող հողատարածքով:

Ընկերության ամբողջ գույքը 28.12.2001թ-ից տրամադրված է վարձակալության՝ «Հրազդան մարզահամալիր վարձակալական ձեռնարկություն» ՓԲԸ-ին մինչև 2050թ:

Ընկերությունը հայտնվել է ֆինանսատնտեսական ծանր վիճակի մեջ, քանի որ ընկերության մուտքերը պետք է ապահովվեին գույքի վարձավճարներից գոյացած միջոցներից, իսկ գույքի վարձակալը՝ «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ-ն՝ հանդիսանալով «Հրազդան մարզահամալիր վարձակալական ձեռնարկություն» ՓԲԸ-ի իրավահաջորդը, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.06.2015թ. թիվ ԵԿԴ/0144/04/15 վճռով ճանաչվել է սնանկ:

### «Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ.

ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 29-ի թիվ 474-Ն որոշման համաձայն, «Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող 100% բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից 19.08.2010թ-ի հանձման-ընդունման ակտով փոխանցվել են Վարչությանը: Ընկերությունն ընդգրկված է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկերում (ծածկագիր 90057):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Շիրակի 39:

Ընկերության գործունեության ոլորտը՝ ձիավարության ուսուցման կազմակերպում:

«Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ-ի շենքերի և շինությունների մակերեսը կազմում է 10413.4 քմ., իսկ հողամասի չափը՝ 29,8 հա:

Ընկերությունում հաշվառվում է 1 հաստիք՝տնօրեն:

Ընկերության ողջ գույքը 08.04.2004թ-ին կնքված վարձակալության պայմանագրի համաձայն՝ 23 տարի 11 ամիս ժամկետով տրվել է «Վերածնունդ-Հայրապետյան» ՍՊԸ-ին:

Համաձայն վարձակալության պայմանագրի 2.2 ենթակետի՝ «Վերածնունդ-Հայրապետյան» ՍՊԸ-ն պարտավորվել է 5 տարվա ընթացքում հողամասի կառուցապատման, առողջարարական և կանաչապատման աշխատանքների իրականացման նպատակով ներդնել 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Ըստ պայմանագրի՝ ներդրված գումարն ամբողջությամբ փոխհատուցելուց հետո միայն պետք է իրականացվի վարձակալական գումարների վճարում՝ ստացված մաքուր շահույթի 20 տոկոսի չափով:

Ընկերությանը վարձավճարներ չեն վճարվել, քանի որ «Վերածնունդ-Հայրապետյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ներդրված շուրջ 2.9 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք գումարը չի փոխհատուցվել:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Վարձակալն իր հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալված գույքի անբաժանելի բարելավումներ, ապա պայմանագրի դադարեցումից հետո իրավունք ունի Վարձատուի կողմից այդ բարելավումների արժեքի հատուցման:

Ընկերության ֆինանսատնտեսական ծանր վիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընկերության մուտքերը պետք է ապահովվեին գույքի վարձավճարներից, ինչը չի կատարվել: Նույնիսկ տնօրենին աշխատավարձ չի հաշվարկվել և չի վճարվել: Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում շահաբաժին չի վճարվել:

### «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ.

ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 29-ի N 474 որոշման համաձայն, Ընկերության 80% պետական սեփականություն հադիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը 2015 թվականից փոխանցվել է Վարչությանը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Արշակունյաց պող. թիվ 12: Ընկերության գլխամասի հասցեն է՝ ք. Երևան, Արշակունյաց պող, թիվ 12, անշարժ գույքի ընդհանուր մակերեսն է 5196.15 քմ՝ թվով 22 հատ շենք-շինություններ, սեփականության իրավունքով հատկացված հողամասը՝ 3635 քմ:

Ընկերությունը ՀՀ տարբեր մարզերում ունի 5010,1ք. մակերեսով անշարժ գույք, զբաղեցրած հողամաս՝ 26,2 հա:

Ընկերության 20 % ոչ պետական բաժնեմասի բաժնետերերի թիվը 1456 է:

17.07.2017թ. ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի 80 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը քննարկվել և ընդունվել է ֆինանսատնտեսական կոմիտեի 10.08.2017թ. թիվ 31 նիստում: ՀՀ կառավարության կողմից որոշում դեռ չի ընդունվել:

«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի գույքը գնահատվել է 18.01.2017 թվականին: Գույքի գնահատված արժեքը կազմել է 3,519,060.031 հազ դրամ:

«Գնոմոն» ԲԲ ըկերության դեբիտորական պարտքը կազմել է 1,146,899.5 հազ դրամ, ինչի վերաբերյալ ընկերության հայցն ընդունվել է վարույթ: Հաշվի առնելով վերոգրյալը ընկերությունը հայտնվել է ֆինանսատնտեսական ծանր վիճակում և ընկերությունը տարիներ շարունակ աշխատել է խոշոր չափերի վնասով: 2016թ. վնասը կազմել է 102.238 հազ. դրամ, 2017թ. առաջին կիսամյակի վնասը՝ 56.451 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջե շահաբաժին չի վճարվել:

### «Ավտոմատիկա» ՓԲԸ

ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 47-Ա որոշմամբ «Ավտոմատիկա» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող 80 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունը 31.03.2015թ. ստորագրված բաժնետոմսերի հանձնման-ընդունման ակտով փոխանցվել է Վարչությանը:

Ընկերության հասցեն է՝ Երևան, Թևոսյան 3/1: Ընկերությունը գործունեություն չի ծավալում, ունի 3 աշխատող:

«Ավտոմատիկա» ՓԲԸ-ի շենք-շինությունների մակերեսը կազմում է 13464,8քմ:

Վերահսկողության պահին գնահատման համար ելակետային տվյալների փաթեթ դեռևս չէր ներկայացվել:

ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1436-Ն որոշման համաձայն «Ավտոմատիկա» ՓԲԸ-ին տրամադրվել է 88731,0 հազ. դրամ բյուջետային վարկ՝ տարեկան 8.5 տոկոս տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման ժամկետով: Տրամադրված բյուջետային վարկը մարելու նպատակով «Ավտոմատիկա» փակ բաժնետիրական ընկերության և «ՌԱՖԱԷԼԳՐԻԳ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվել է գույքի վարձակալության պայմանագիր:

Բյուջետային վարկով մարվել է ընկերության 88,730,5 հազ դրամի պարտավորությունը՝ այդ թվում, պետական բյուջե՝ 15,850.1 հազ դրամ, աշխատավարձ՝ 61,789.0 հազ. դրամ, դատական ծախսեր՝ 1,240.9 հազ դրամ և այլ պարտավորություններ 9,850.5 հազ դրամ:

Տվյալ դեպքում ռիսկային է վարկի նպատային օգտագործումը և մարումը:

## 4. Պետական գույքի մասնավորեցումը

**«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարում**

2016 թվականին և 2017 թվականի 9 ամիսների ընթացքում մասնավորեցվել է թվով 8 անշարժ գույք, որից 6-ը ուղղակի վաճառքի ձևով, 2-ը՝ աճուրդով:

Երեք պայմանագիր կնքվել է առանց պարտավորությունների, 3-ը պարտավորություններով, իսկ 1-ով առկա է սահմանված պարտավորությունների փոփոխության վերաբերյալ նախագիծ, որով նախատեսվում է ժամկետների և ներդրումների փոփոխություն: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Եվս մեկ գործով 100,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրումը չի կատարվել, հաշվարկվել է՝ 20,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի պարտավորություն և գործը գտնվում է դատարանում:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Օրենքում ներկայացված 47 ընկերություններից 28-ի համար ներկայացվել են գնահատման ելակետային տվյալների փաթեթներ, սակայն վերահսկողության պահի դրությամբ գնահատվել էին ընդամենը 8 ընկերություններ, իսկ թվով 6-ի մասով ներկայացվել են մասնավորեցման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր:

## 5. Պետական գույքի անհատույց օգտագործումը, նվիրաբերությունը, ծառայությունների մատուցումը

2016թ. և 2017թ. 9 ամիսների ընթացքում անհատույց օգտագործման է տրվել թվով 384 անշարժ գույք, որից միայն 32-ն է նախատեսված պարտավորություններով: Բոլոր պարտավորությունները կատարված են:

Նվիրաբերության պայմանագրերով տրվել է թվով 4 անշարժ գույք, որից 2-ի պարտավորությունները կատարվել են, իսկ 2-ով պարտավորությունների կատարումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են և գտնվում են գնահատման փուլում:

Ծառայությունների մատուցման է տրվել թվով 2 անշարժ գույք, որից 1-ով պարտավորությունը կատարվել է, իսկ մյուսով չի կատարվել, գործը գտնվում դատարանում:

## 6. Ներդրումային եվ սոցիալական երաշխիքների մասով պարտավորությունների կատարում

**Պարտավորությունների կատարման գործընթաց**

01.01.2016-01.10.2017թթ. ժամանակահատվածում առկա են ներդրումային, սոցիալական երաշխիքների և գործունեության պրոֆիլի պահպանման մասով պարտավորություններ ունեցող թվով 73 պայմանագրեր:

Այդ թվում՝ մասնավորեցման, օտարման և վարձակալության 39 պայմանագրերով ստանձնվել են ներդրումային և աշխատատեղերի ստեղծման պարտավորություններ, որոնցից 17 գնորդները և 1 վարձակալը՝ «Պատանի լողորդ» ՍՊԸ-ն, ստանձնել են 359,848.7 հազ դրամի և 4 պայմանագրերով՝ 6,470,570.0 ԱՄՆ դոլարի ներդրումային պարտավորություններ:

Մեկ գնորդի՝ «ԱԳՐՈՀՈԼԴԻՆԳ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել 100,000.0 ԱՄՆ դոլարի ներդրում, որի նկատմամբ հաշվարկվել է 20,000.0 ԱՄՆ դոլարի տույժ և գործը գտնվում է դատական վարույթում: Չեն կատարվել նաև 3 գնորդների՝ «Բիզնես Լայն» ՍՊԸ-ի, «ԲԻԶՆԵՍ-ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և քաղաքացի Վահան Այվազյանի կողմից ստանձնած 52,916.7 հազ դրամի ներդրումները, որի նկատմամբ հաշվարկվել է 10,583.340 հազ դրամի տույժ:

Թվով 6 պայմանագրերով նախատեսված 101 աշխատատեղերի ստեղծման պարտավորությունը գերակատարվել է, արդյունքում ստեղծվել է 274 աշխատատեղ:

Թվով 8 պայմանագրերով նախատեսվել է պրոֆիլի պահպանման պարտավորություն, որոնցից 7-ը պահպանվում են, չի պահպանվում 1 գնորդի կողմից (գործը գտնվում է դատական վարույթում):

Թվով 2 պայմանագրերով նախատեսված է Փոքր ՀԷԿ-երի և ՀԷԿ-ի կառուցման պարտավորություն, որոնք կատարվել են:

Թվով 1 պայմանագրով նախատեսված է Կառավարական 2 շենքի կառուցման և պետությանը հանձնման պարտավորություն, որը կատարվել է:

Պարտավորություններ են նախատեսվել նաև անհատույց օգտագործման իրավունքի թվով 26 պայմանագրերում, որոնցից 6 պայմանագրերով նախատեսված է 113,459.5 հազ դրամի ներդրումային, իսկ 20 պայմանագրերով նախատեսված է ներկայացված գործարար ծրագրերին համապատասխան գործունեության իրականացման պարտավորություն, որոնք կատարվել են:

«ՆՅՈՒՏԵՔ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ-ի շինարարական և վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը, և գործը գտնվում է դատական վարույթում:

Պետական գույքի նվիրաբերության պայմանագրերը, համաձայն ՀՀ Կառավարության 2016 թվականի N 1067-Ն որոշման կարգի, նախատեսում են որոշակի պայմանների կատարում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ նվիրաբերության 4 պայմանագրերից 3-ով նախատեսվել է 195,800.0 հազ. դրամի ներդրումային պարտավորություն, որից պարտավորությունները կատարվել են երկուսի կողմից, իսկ մյուս Նվիրառուի կողմից ներկայացված փաստաթղթերը գտնվում են գնահատման փուլում: Մեկ պայմանագրով նախատեսվել է արվեստի դպրոցի հիմնադրման պարտավորություն, որը կատարվել է:

01.01.2016-01.10.2017թթ. ժամանակահատվածում ժամկետից շուտ պարտավորությունները կատարվել են 6 պայմանագրերով, որոնցով նախատեսված 131.0 մլն. դրամի փոխարեն կատարվել է 143,944.4 հազ դրամի: Ինչպես նաև նախատեսված 6 աշխատատեղի փոխարեն ստեղծվել է 8 աշխատատեղ, ապահովելով 75.0 հազ դրամ միջին աշխատավարձի չափը:

Այսպիսով, վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում նախատեսված 800,108 .2 հազ դրամի և 6,470,570 ԱՄՆդոլարի փոխարեն կատարվել է 1,225,207.3 հազ դրամի և 7,735,779.5 ԱՄՆ դոլարի ներդրում:

Չի կատարվել 52 ,916 .7 հազ դրամի ներդրում, որի նկատմամբ հաշվարկվել է 10 ,583 .3 հազ դրամ տույժ, չի կատարվել նաև 100,000 ԱՄՆ դոլարի ներդրում, որի նկատմամբ հաշվարկվել է 20,000 ԱՄՆ դոլարի տույժ:

Նախատեսված 101 աշխատատեղի փոխարեն ստեղծվել է 274 աշխատատեղ:

Պրոֆիլի պահպանման, ինչպես նաև ծառայությունների մատուցման մեկական պարտավորություններ չեն կատարվել:

Չկատարված պարտավորությունների մասով գործերը գտնվում են դատական վարույթում:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Չի կատարվել ՀՀ կառավարության 13.06.2003թ. թիվ 882 որոշման 2-րդ կետի պահանջը, ըստ որի, հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված գույքի վաճառքի մասին տեղեկատվությունը՝ նշելով վաճառքի ձևը, գույքի կազմը, հաշվեկշռային ու գնահատված արժեքները, վաճառքից ստացված գումարի չափը և գնորդների ստանձնած պարտավորությունները: Հիշյալ որոշման պահանջը ՀՀ բոլոր պետական մարմիններից կատարվել է միայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և Լոռու մարզպետարանի կողմից: Այսպիսով, որոշման պահանջը չի կատարվել նաև Վարչության կողմից:

2

Պահառության տարածքում Գործակալության կողմից աշխատանքներն իրականացվել են միայն ՀՀ պետական բյուջեից ստացված սուբսիդիայի պայմանագրի միջոցներով, իսկ ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացվել: Մինչդեռ, ըստ ՀՀ կառավարության 24.12.2003թ. N 1937-Ն «ՀՀ պետական բյուջից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» որոշման՝ սուբսիդիան ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է:

3

2016թ. Գործակալության կողմից Կառավարական թիվ 3 շենքի վերելակների մասնագիտական տեխնիկական սպասարկման ծառայությունների ՊԳ16-ՇՀԾՁԲ-15/9-02 ծածկագրով ձեռքբերումը մրցակցային կարգով կազմակերպելու ընթացքում Գործակալության կողմից ճիշտ չէր հաշվարկվել գործընթացի ավարտի (հաղթող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու) ժամկետը: Սխալ

հաշվարկի հետևանքով 01.05.2016թ-ից մինչև 23.05.2016թ. ժամանակահատվածով նվազեցվել է պայմանագրով սահմանված՝ ծառայությունների մատուցման ժամկետը և դրան համաչափ էլ նվազեցվել է այդ ծառայությունների գնման նախատեսված արժեքը: Թեպետև կատարվածի արդյունքում գումարների անհիմն կամ ոչ նպատակային ծախս չի կատարվել, այնուամենայնիվ, գնման պլանավորման և ֆինանսավորման գործընթացի կազմակերպման մասով Գործակալության կողմից չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները, քանի որ, փոփոխվել էր գնման առարկայի (ծառայությունների մատուցման) ժամկետը:

4

Կառավարության 2016թ. 298-Ն որոշման և 2017թ. մարտի 30-ի սուբսիդիայի տրամադրման ՊԳԳ-Ս-01 պայմանագրի հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն՝ հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառությունը ենթակա է կատարման Գործակալության կողմից: Մինչդեռ, ոչ բոլոր մեքենաներն են պահառության տրվում Երևանի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում, մասնավորապես, այնտեղ չեն տեղափոխվում այն մեքենաները, որոնց տեխնիկական բնութագրերը, ըստ փաստաթղթերի գնահատվել են անբավարար: Արդյունքում, կարող է խախտվել գնորդի կողմից աճուրդի լոտերին ծանոթանալու իրավունքը: Հարկ է նշել, որ առկա են նաև դեպքեր, երբ ըստ փաստաթղթերի անբավարար տեխնիկական բնութագրեր ունեցող տրանսպորտային միջոցներ են տեղափոխվել պահառության պահպանման տարածք:

5

Կենտրոնի կողմից 2014-2017թ.թ. առաջին եռամսյակում օտարվել է թվով 892 տրանսպորտային միջոց, սակայն, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն, Կենտրոնի կողմից օտարված ավտոմեքենաներից հաշվառվել է թվով 309-ը: Փաստորեն, օտարվել և պետական հաշվառում չեն ստացել թվով 583 ավտոմեքենա: «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդ-վածի 2-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման, իսկ այդ պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության՝ նման գործարքն առոչինչ է:

6 Մասնավորեցման ծրագրում ընդգրկված պետական մասնակցությամբ որոշ ընկերությունների գույքը և դրամական միջոցները տնօրինվում և կառավարվում են ոչ արդյունավետ: Օրինակ՝ «Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ, «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ, «Ավտոմատիկա» ՓԲԸ:

7 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Օրենքում ներկայացված 47 ընկերություններից 28-ի համար ներկայացվել են գնահատման ելակետային տվյալների փաթեթներ, սակայն վերահսկողության պահի դրությամբ գնահատվել էին ընդամենը 8 ընկերություններ, իսկ թվով 6-ի մասով ներկայացվել են մասնավորեցման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր:

8 Բավարար չէ Վարչության և Կադաստրի համագործակցությունը օտարվող հանրային նշանակության անշարժ գույքի շուկայական արժեքների վերաբերյալ առավել ճշգրիտ տվյալների վերլուծության և հրապարակման համար: Կադաստրի պաշտոնական կայքի (cadastre.am) «Տեղեկատու» բաժնի «Անշարժ գույքի շուկայի վերլուծություն» ենթաբաժնում հրապարակվում է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական արժեքները, բայց հասարակական նշանակության շենքերի շուկայական արժեքի վերլուծություն ոչ կատարվում է, և ոչ էլ հրապարակվում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՀ կառավարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը** | Միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարության 13.06.2003թ. թիվ 882 որոշման պահանջը՝ պետական կառավարման մարմինների կողմից հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված գույքի վաճառքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասով կատարելու ուղղությամբ: |
| **ՀՀ կառավարությանը և ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը** | Միջոցներ ձեռնարկել Կենտրոնի կողմից օտարված տրանսպորտային միջոցների հաշվառման գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ՝ ճշգրտելով դրանց թվաքանակը Վարչության հետ: |
| **ՀՀ կառավարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին** | Օրենքի և կանոնադրության պահանջների համաձայն բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական արժեքների վերլուծության և հրապարակման հետ մեկտեղ վերլուծել և հրապարակել նաև հասարակական նշանակության անշարժ գույքի տվյալները: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը** | Միջոցներ ձեռնարկել ՊՈԱԿ–ների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության խրախուսման համար՝ ավելացնելով ձեռնարկատիրական գործունեությունից այդ կազմակերպությունների դրամական մուտքերը:<br><br>Միջոցներ ձեռնարկել մասնավորեցման ծրագրով սահմանված ժամանակացույցի և այլ սահմանափակումների կատարման ուղղությամբ:<br><br>Միջոցներ ձեռնարկել ոչ արդյունավետ կառավարվող պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության կասեցման, լուծարման |

և վերջիններիս կուտակած պարտավորությունների մարման ուղղությամբ:

Աճուրդների կազմակերպման գործընթացի արդյունավետությունը խթանելու նպատակով՝ միջոցներ ձեռնարկել փաստաթղթերի արխիվացումը էլեկտրոնային համակարգի միջոցով կատարելու համար:

Միջոցներ ձեռնարկել մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով բոլոր տրանսպորտային միջոցների պահառությունը հատուկ տրամադրված տարածքում Գործակալության միջոցով կատարելու ուղղությամբ:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

# 2.8 ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ) ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 25/3 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ տարածքում ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման (ոչ մետաղական հանքավայրեր) վերահսկողության իրականացումը: |
| **Վերահսկողության առարկան** | Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման (ոչ մետաղական հանքավայրեր) կառավարման և օգտագործման գործընթացներ: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության նախարարություններ: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017թ. նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. մարտի 15-ը ներառյալ: |
| **Վերահսկողության ձևերը** | Դիտարկում և վերլուծություն: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Դիտարկման ընթացքում կատարվել է ներկայացված տվյալների ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացվել են դիտարկման և վերլուծության ուղղությունները:<br><br>Կատարվել է մի շարք փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն ու համադրում: Վերահսկողության ընթացքում իրականացվել է ընդերքօգտագործողների կողմից տարեկան ֆինանսատնտեսական ցուցանիշների ուսումնասիրություն, եկամուտների տարեկան ծրագրային ցուցանիշների, ինչպես նաև ընդերքօգտագործման վճարների մասով պարտավորությունների կատարման ընթացքի ուսումնասիրություն: Կիրառվել են վերահսկողության ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) տեսակները: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների իրացման շրջանառությունը նվազել է**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.07.2017թ. թիվ 01/6-1/27157-17 պատասխան գրությամբ տրամադրված տեղեկատվության համաձայն, հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների իրացման շրջանառության ծավալների նվազում է արձանագրվել բազային տարվա, այն է՝ 2014թ. տարեկան 616.8 մլրդ. դրամ իրացման շրջանառության համեմատությամբ, 2016 թվականին այն նվազել է 46.9 մլրդ. դրամով կամ 7.6%-ով և կազմել 569.9 մլրդ. դրամ:

Ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում անկումը պայմանավորված էր նաև շինարարության ծավալների նվազմամբ: Այսպես, 2014 թվականին շինարարության ծավալներն արձանագրվել են 448.8 մլրդ դրամ, ինչը կազմել է ՀՆԱ-ի՝ 4,828.6 մլրդ դրամի 9.3%-ը, սակայն 2016 թվականին այդ ծավալները նվազել են 42.6 մլրդ դրամով կամ 9.5%-ով և կազմել են 406.2 մլրդ դրամ, կազմելով 5,079.9 մլրդ. դրամ՝ ՀՆԱ-ի 8.0%-ը: Այլ կերպ՝ ՀՆԱ-ում շինարարության տեսակարար կշիռը նվազել է 1.3 տոկոսային կետով:

**Որպես հետևանք՝ նվազել են վճարված հարկերը**

Շարունակական անկում է արձանագրվել նաև ոլորտի ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի բացարձակ ցուցանիշում, մասնավորապես ուղղակի հարկերում, որոնք արտացոլում են ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները: Այսպես, եթե 2014թ. վճարվել է 20.5 մլրդ. դրամ շահութահարկ, ապա հաջորդ տարի՝ 19.1 մլրդ. դրամ, իսկ 2016 թվականին այն կազմել է 16.1 մլրդ. դրամ: Այլ կերպ՝ ոլորտում ընդգրկված ընկերությունների համախառն շահույթը նշված ժամանակահատվածում նվազել է 21.6%-ով՝ 102.5 մլրդ. դրամից հասնելով 80.3 մլրդ. դրամի:

Յուրաքանչյուր տարի, պետական բյուջեի մասին օրենքի ընդունումից հետո, ՀՀ կառավարությունը որոշում է ընդունում պետական բյուջեի կատարումն

ապահովող միջոցառումների մասին, որի հավելված 6-ում նշվում են տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված եկամուտների առանձին տեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման եռամսյակային համամասնությունները՝ ըստ դրանց գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ին ընդունած՝ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1555-Ն որոշման 6-րդ հավելվածով, 2016 թվականին պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման համար տրված արտոնագրերի (թույլտվությունների) դիմաց 749,500.0 հազ. դրամի պետական տուրք է նախատեսվել ՀՀ պետական բյուջեում: Գանձման համար պատասխանատու մարմին է սահմանվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, որտեղ առկա տեղեկատվության համաձայն, 2016 թվականին փաստացի հավաքագրումը տվյալ եկամտատեսակով կազմել է 527,130.4 հազ. դրամ, ինչը կազմում է նախատեսվածի 70.3%-ը:

**2016թ. պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման համար տրված արտոնագրերի դիմաց պետական տուրքի գծով փաստացի հավաքագրումը կազմել է նախատեսվածի 70.3%-ը**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 08.01.2018թ. տրամադրված թիվ 03/70-1/637-18 պատասխան գրությամբ տեղեկատվություն է տրամադրել պետական տուրքի մասով պարտավորությունների վերաբերյալ, համաձայն որի, 01.01.2017թ. դրությամբ դրանք կազմել են 816,716.5 հազ. դրամ, որից 484,343.8 հազ. դրամը ապառքի գումարն է, իսկ 332,372.7 հազ. դրամը՝ պետական տուրքի վճարումն ուշացնելու դիմաց օրական տույժերի կիրառման արդյունքում գոյացած գումարը: Տվյալ ցուցանիշում էական են «Կեյ Էֆ Պրոդաքշն» ՍՊԸ-ի, «Վայոց Ձոր ֆրուկտ» ՍՊԸ-ի և «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի պարտավորությունները, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 163,290.0 հազ. դրամ (20.0%), 145,540.5 հազ. դրամ (17.8%) և 138,881.8 հազ. դրամ (17.0%): Նշենք, որ պարտավորությունները պետական տուրքի մասով շարունակաբար աճի միտում են ունեցել: Այսպես, եթե 01.01.2014թ. դրությամբ պարտավորությունը կազմել է ընդամենը 442,700.4 հազ. դրամ, ապա 01.01.2015թ. այն կազմել է 700,508.9 հազ. դրամ, 01.01.2016 թվականին՝ 679,041.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ արձանագրելով առավելագույն՝ 762,987.6 հազ. դրամ ցուցանիշը: Այլ կերպ՝ նշված

ժամանակահատվածում պարտավորությունները պետական տուրքի մասով աճել են 320,287.2 հազ. դրամով կամ 72.3%-ով: Ներկայացված տեղեկատվության համաձայն, 01.12.2017թ. դրությամբ հանքային իրավունք կրող տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունը պետական տուրքի մասով նվազել է 274,171.4 հազ. դրամով, հասնելով 488,816.1 հազ. դրամի: 2017թ. ընթացքում առանձին ընկերություններ սնանկ են ճանաչվել և լուծարվել են, ինչի արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից վերոնշյալ գրությամբ դրանց պարտավորությունները 01.12.2017թ. դրությամբ այլևս չեն արտացոլվել, մասնավորապես, «Վայոց Ձոր ֆրուկտ» և «Կեյ էֆ Պրոդակշն» ընկերությունների մասով, որոնք կազմել էին համապատասխանաբար՝ 145,540.5 և 163,290.0 հազ. դրամ:

**Պարտավորությունները պետական տուրքի մասով աճել են 320,287.2 հազ. դրամով կամ 72.3%-ով**

Նշենք, որ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա, մասնավորապես, չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում, իսկ նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն, ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած 90-օրյա ժամկետում ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը: Ավելին, ընդերքօգտագործողի և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ կնքվող՝ ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 437-Ն որոշմամբ սահմանված պայմանագրի 2-րդ կետում նշվում է, որ ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Միաժամանակ, պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը՝ ՀՀ կառավարության 1997 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 547 որոշմանը համապատասխան:

**Շրջակա միջավայրի պահպանության նպատակով կենտրոնական գանձապետարանում բացված արտաբյուջետային հաշվին 01.11.2017թ. դրությամբ կուտակվել են 1,226,553.5 հազ. դրամի ֆինանսական միջոցներ:**

**Սակայն, տվյալ հաշվարկային հաշվից հատկացումներ չեն կատարվել, քանի որ բնապահպանական միջացառումներ չեն իրականացվել:**

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակով, այն է՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով բնության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով, կատարվում են բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարները: Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանել է ՀՀ կառավարությունը՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշմամբ: Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունն արտացոլվում է ընդերքօգտագործման պայմանագրում: Շրջակա միջավայրի պահպանության նպատակով կատարվող մասհանումները հաշվեգրվում են կենտրոնական գանձապետարանում բացված արտաբյուջետային կուտակային հաշվին: Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումները կատարվում են ստանձնած պարտավորությունների իրականացման շրջանակներում՝ բնապահպանական միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Ընդերքօգտագործողների կողմից դրամագլխին փոխանցումները կատարվում են նախնական և ընթացիկ հատկացումների միջոցով: Նախնական հատկացումը տնտեսվարողի կողմից կատարվում է համապատասխան պայմանագիրը ստորագրելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում և չպետք է պակաս լինի ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքի 15%-ից: Ընդերքօգտագործման պայմանագրով ընթացիկ հատկացումների կատարման ժամանակացույց սահմանված չլինելու դեպքում հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 30-ը: Վերջին տարվա համար ընթացիկ հատկացումներ չեն կատարվում:

2017թ. հոկտեմբեր ամիսը ներառյալ տվյալ հաշվին կուտակվել են 1,226,553.5 հազ. դրամի ֆինանսական միջոցներ, որից 437,567.4 հազ. դրամը 2014 թվականի տարեսկզբի մնացորդն է: 2014-2016 թվականներին և 2017թ. 1-ին կիսամյակում տվյալ հաշվին ընդերքօգտագործողների կողմից փոխանցվել են 788,986.1 հազ. դրամի ֆինանսական միջոցներ, մասնավորապես, 2014 թվականին՝ 446,269.0 հազ. դրամ, 2015թ.՝ 18,225.4, 2016 թվականին՝ 232,323.5 հազ. դրամ և 2017թ. հոկտեմբերը ներառյալ՝ 92,168.2 հազ. դրամ: Տվյալ հաշվարկային հաշվից բնապահպանական միջոցառումներ իրականացնելու նպատակով հատկացումներ դեռևս չեն կատարվել:

**Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին չի վճարվել նախատեսվածի 48.9%-ը**

Ոչ մետաղական հանքավայրերի մասով ընդերքօգտագործողների կողմից 01.06.2017թ. դրությամբ, ըստ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի, դրամագլխին նախատեսվել է վճարել 471,692.3 հազ. դրամ, փաստացի վճարվել է 241,127.3 հազ. դրամ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կամ պարտավորությունը կազմել է 230,565.0 հազ. դրամ (նախատեսվածի 48.9%-ը)՝ թվով 398 ոչ մետաղական օգտակար հանածո արդյունահանող տնտեսվարողներից շուրջ 3/4-ը: Նշված ընկերությունները, հիմք ընդունելով «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված պահանջը, 2012թ. ընթացքում ընդերքօգտագործման իրավունքը վերաձևակերպել են, կնքել են ընդերքօգտագործման նոր պայմանագրեր: ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ին ընդունած՝ «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 437-Ն որոշմամբ, տնտեսվարողի հետ կնքվելիք ընդերքօգտագործման պայմանագրերի կողմ է հանդիսանում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարարի: Որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետով նախատեսվում է ընդերքօգտագործողների կողմից վճարներ կատարել բնության և շրջակա միջավայրի դրամագլխին:

Նշենք, որ «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվել են ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի, այն է՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասությունները, մասնավորապես, ընդերքօգտագործման իրավունքի և ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրումը, ընդերքօգտագործման պայմանագրի կնքումը, ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված նորմերի ու կանոնների կատարման նկատմամբ վերահսկողության

իրականացումը և այլն: Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, լիազոր մարմինը կարող է զգուշացում տալ ընդերքօգտագործողին, եթե վերջինս, մասնավորապես, չի վճարել նախատեսված վճարները, իսկ նույն հոդվածի 5-րդ կետով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում է նախատեսվում, եթե 90 օրվա ընթացքում վճարումը չի կատարվել: Տվյալ դրույթն արտացոլվել է նաև տնտեսվարողի և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարության միջև կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերում:

Բացի այդ, 01.01.2017թ. դրությամբ 96 օգտակար հանածո արդյունահանող կազմակերպությունների ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է, որոնցից 4 դեպքում տնտեսվարողը դատարանի վճռով սնանկ է ճանաչվել, իսկ 92 ընդերքօգտագործման իրավունքի մասով նշված դրամագլխին համախառն պարտավորությունը կազմել է 121,184.0 հազ. դրամ:

**Ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպումը չի կատարվել**

Թվով 40 դեպքում ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ կետի հիմքով, որը ենթադրում է սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, այն է՝ 2012 թվականին, ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպում, ինչը չի կատարվել: Ի դեպ, նախկին ժամանակահատվածում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումները կատարվել են «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի հիմքով:

Թվով 24 դեպքում ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության գործողության ժամկետը լրացել է, իսկ 2-ի դեպքում դադարեցվել է Օրենսգրքի 30-րդ հոդվածի հիմքով:

Տնտեսվարողի դիմումի համաձայն, տրամադրվել են 26 հրաժարման հավաստագրեր, որոնցից 11-ի ընդերքօգտագործման իրավունքները վերաձևակերպած են եղել՝ դրանք համապատասխանեցնելով «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքին: Օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն, ընդերգօտագործողը, որը ցանկանում է հրաժարվել ընդերքի տեղամասի կամ նրա մի հատվածի նկատմամբ իրավունքից, համապատասխան դիմում է ներկայացնում լիազոր մարմին, որին կցվում է պահանջվող փաստաթղթերի ցանկ, այդ թվում՝ ֆինանսական պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթղթերի

առկայությունը հավաստող, որի բացակայության պայմաններում լիազոր մարմինը իրավասու չէր տրամադրելու հրաժարման հավաստագրերը: Ընդերքօգտագործման պայմանագրով նույնպես տնտեսվարողին զգուշացում է տրվում, եթե նա չի կատարել ընդերքօգտագործման իրավունքի պայմանները և չի վճարել նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում, իսկ 90-օրյա ժամկետում չվճարելու հանգամանքը ընդերքօգտագործման իրավունքից զրկելու հիմք է հանդիսանում: Ի դեպ, հրաժարման հավաստագրեր տրամադրում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությունը՝ ՀՀ Կառավարության կողմից 2010թ. նոյեմբերի 25-ին ընդունած թիվ 1526-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան:

**19 դեպքում ընդերքօգտագործման նախկին պայմանագրերը բացակայել են, 6 դեպքում բացակայել են ինչպես նախկին, այնպես էլ՝ վերաձևակերպումից հետո կնքված պայմանագրերը, 91 դեպքում՝ չի նշվել դրամագլխին վճարման ենթակա գումարի չափը**

Ընդերքօգտագործման բնագավառում պարտավորությունների առաջացմանը նպաստել է նաև այն, որ «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 80-րդ հոդվածի հիմքով ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպումների արդյունքում կնքվել են նոր պայմանագրեր, որոնցում չի արտացոլվել բնության և շրջակա միջավայրի դրամագլխին կատարվող հատկացումների գումարի չափը, ժամկետները: «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 69-րդ հոդվածի հիմքով ՀՀ կառավարությունը 2012թ. օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշմամբ սահմանել է դրամագլխին հատկացումների հաշվարկման կարգը, հաստատել մասնագիտական հանձնաժողովի կազմը և այլն: «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության ուսումնասիրությամբ արձանագրվեց, որ 19 դեպքում ընդերքօգտագործման նախկին, այն է՝ մինչև իրավունքի վերաձևակերպումը կնքված պայմանագրերը բացակայել են, 6 դեպքում բացակայել են ինչպես նախկին, այնպես էլ վերաձևակերպումից հետո կնքված պայմանագրերը, իսկ թվով 91 դեպքում՝ ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման կամ նոր տրված իրավունքի ժամանակ կնքված պայմանագրերում չի նշվել դրամագլխին վճարման ենթակա գումարի չափը:

Ինչ վերաբերում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված գործառույթներին, ապա դրանք սահմանված են «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով, որի համաձայն, սահմանված են

ընդերքի օգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի իրավասությունները, մասնավորապես, ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական քաղաքականության ձևավորումը, ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունումը և այլն: Օրենսգրքի 70-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, այն դեպքում, երբ ընդերքօգտագործողը սահմանված ժամկետում չի կատարել նախագծով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված բնապահպանական (մասնավորապես՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքները, լիազոր մարմինը սեփական նախաձեռնությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի միջոցների հաշվին ձեռնարկում է նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները: Սակայն, ոչ մի ընդերքօգտագործման տեղամասում, այդ թվում՝ փակված հանքավայրերում, չեն իրականացվել բնապահպանական ռեկուլտիվացիոն միջոցառումներ, ինչը վկայում է բնության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ոչ բավարար լինելու մասին:

**Ոչ մի ընդերքօգտագործման տեղամասում, այդ թվում՝ փակված հանքավայրերում, չեն իրականացվել բնապահպանական ռեկուլտիվացիոն միջոցառումներ**

**Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանը, շրջակա միջավայրին և բնակչությանը հասցված վնասի չափերի նվազեցմանն ուղղված աշխատանքները բավարար չեն:**

**Վերահսկողական գործառույթը ցածր մակարդակում է:**

Հանքարդյունաբերության ոլորտը երկրի տնտեսությունում էական նշանակություն ունի: Սակայն, բավարար չեն աշխատանքներն՝ ուղղված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանը, շրջակա միջավայրին և բնակչությանը հասցված վնասի չափերի նվազեցմանը, իսկ ոլորտում առկա վերահսկողական գործառույթների ցածր մակարդակը հանգեցրել է մի իրավիճակի, երբ տնտեսվարողների՝ կարճաժամկետ հատվածում մեծ եկամուտ ստանալու

ցանկությունը, հանգեցրել է բնապահպանական և սոցիալական լուրջ խնդիրների: Առաջնային են դառնում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման աշխատանքների կատարմանն ուղղված պարտականությունների ապահովման խնդիրները, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակով դրամագլխի ձևավորման և կառավարման արդյունավետության բարձրացումը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Հանքարդյունաբերության ոլորտում զբաղված ընկերությունների իրացման շրջանառության ծավալների նվազում է արձանագրվել՝ 2014թ. տարեկան 616.8 մլրդ. դրամ իրացման շրջանառության համեմատությամբ, 2016 թվականին այն նվազել է 46.9 մլրդ. դրամով կամ 7.6%-ով և կազմել 569.9 մլրդ. դրամ, իսկ ոլորտում ընդգրկված ընկերությունների համախառն շահույթը նշված ժամանակահատվածում նվազել է 21.6%-ով՝ 102.5 մլրդ. դրամից հասնելով 80.3 մլրդ. դրամի:

2

Լիազոր մարմինը կարող էր դադարեցնել ընդերքօգտագործման իրավունքը, ինչը չի արվել: Արդյունքում, չի ապահովվել «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի պահանջը, ՀՀ կառավարության թիվ 1079-Ն և թիվ 437-Ն որոշումների, ինչպես նաև տվյալ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին կառավարության որոշումների պահանջները:

**2.1** Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման համար տրված արտոնագրերի (թույլտվությունների) դիմաց ՀՀ պետական բյուջե գանձվող պետական տուրքի շարունակաբար թերհավաքագրման պայմաններում կուտակվել են պարտավորություններ, որոնք 01.12.2017թ. դրությամբ կազմել են *488,816.1* հազ. դրամ:

**2.2** Ոչ մետաղական հանքավայրերի մասով ընդերքօգտագործողների կողմից դրամագլխին նախատեսվել է վճարել 471,692.3 հազ. դրամ, փաստացի վճարվել է 241,127.3 հազ. դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պարտավորությունը 01.06.2017թ. դրությամբ կազմել է *230,565.0 հազ. դրամ:*

**2.3** Թվով 92 օգտակար հանածո արդյունահանող կազմակերպությունների ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է, սակայն շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պարտավորությունը 01.01.2017թ. դրությամբ կազմել է *121,184.0 հազ.*

*դրամ:* Լիազոր մարմինը կարող էր դադարեցնել ընդերքօգտագործման իրավունքը, ինչը չի արվել, իսկ հրաժարման հավաստագրերը տրամադրվել են առանց ֆինանսական պարտավորությունները հավաստող փաստաթղթերի: Արդյունքում, խախտվել են «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի, ՀՀ կառավարության թիվ 1079-Ն և թիվ 437-Ն որոշումների պահանջները:

3

Շրջակա միջավայրի պահպանության նպատակով կենտրոնական գանձապետարանում բացված արտաբյուջետային հաշվին 01.11.2017թ. դրությամբ կուտակվել են 1,226,553.5 հազ. դրամի ֆինանսական միջոցներ: Տվյալ հաշվարկային հաշվից հատկացումներ չեն կատարվել, քանի որ բնապահպանական միջացառումներ չեն իրականացվել: Արդյունքում, խախտվել է «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի պահանջը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին** | Ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը, որոնք կնպաստեն պետական տուրքի լիարժեք հաշվանցմանը, ինչպես նաև նախորդ տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով գոյացած ապառքների մարմանը:<br>Համատեղ մշակել միջոցառումների պլան, ինչը կապահովի պետական տուրքի մասով արձանագրված պարտավորությունների մարումը: |
| **ՀՀ բնապահպանության նախարարությանը** | Ձեռնարկել միջոցներ ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունման ուղղությամբ:<br>Շրջակա միջավայրի պահպանության նպատակով պետական բյուջեում կուտակված ֆինանսական միջոցներն ուղղել բնապահպանական միջոցառումների իրականացմանը՝ հիմքում ունենալով գործողությունների հաստատված ժամանակացույց: |

***Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

# 2.9 ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | Վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ.-ի հուլիսի 31-ի թիվ 14/6 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ վերահսկողություն: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները, բյուջետային մուտքերը, բյուջետային ծրագրերի կատարման նպատակով նախարարության կողմից կնքված պայմանագրերը, դրանցով սահմանված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված գործառույթները և պետական սեփականության կառավարման և օգտագործման գործընթացները: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 1-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017թ.-ի օգոստոսի 7-ից մինչև 2018թ.-ի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման ձևը (համապատասխան ռիսկերի առկայության դեպքում կարող էր կիրառվել նաև ստուգման ձևը), իսկ վերլուծության ձևը չի կիրառվել համապատասխան տեղեկատվությունը դիտարկման ընթացքում ամբողջական և ժամանակին ներկայացված չլինելու պատճառով: Վերահսկողությունը նախատեսվում էր իրականացնել ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակներով: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեով 2016 թվականին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը հատկացվել է 42,993,513.0 հազ. դրամ, իսկ 2017 թվականին՝ 69,728,995.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը 2016 թվականին կազմել է 46,267,027.0 հազ. դրամ, իսկ առ 01.09.2017 թվականը՝ 25,833,225.0 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեով նախատեսված 33 ծախսային ծրագրերից նախատեսվել է վերահսկել 15-ը, որոնց համար 2016 թվականին հատկացվել է 23,292,000.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 19,408,000.0 հազ. դրամ, 2017 թվականին հատկացված գումարը կազմել է 35,121,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 01.09.2017 թվականի դրությամբ՝ 13,739,000.0 հազ. դրամ:

Մասնավորապես.

***«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրով***

*2016թ.-ին ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 6,256,692.0 հազ. դրամ, որից՝*

**1.** Ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում՝ 6,014,566.6 հազ. դրամ, այդ թվում՝

- ✓ Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում՝ 4,969.556.6 հազ. դրամ,
- ✓ Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում՝ 295,000.0 հազ. դրամ,
- ✓ Մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում՝ 750,000.0 հազ. դրամ:

**2.** Արհեստական կառույցների պահպանում և շահագործում՝ 242,135.0 հազ. դրամ,

ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 6,160,300.0 հազ. դրամ:

*2017թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 7,449,527.0 հազ. դրամ, որից՝*

1. Ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում՝ 7,207,474.4 հազ. դրամ, այդ թվում՝
   - ✓ Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում՝ 5,279,566.0 հազ. դրամ,
   - ✓ Պարբերական պահպանում (միջին նորոգում)՝ 707,917.0 հազ. դրամ,
   - ✓ Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում՝ 350,000.0 հազ. դրամ,
   - ✓ Մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում՝ 870,000.0 հազ. դրամ:
2. Արհեստական կառույցների պահպանում և շահագործում՝ 242,052.6 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում փաստացի ծախսը 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ցույց է տրվել 4,731,600.0 հազ. դրամ:

---

## *«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով*

---

2016թ. պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 3,324,778.1 հազ. դրամ: ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 3,249,491.0 հազ. դրամ:

2017թ. պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսվել է 4,655,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը 01.12.2017թ. դրությամբ կազմել է 3,562,700.0 հազ. դրամ:

---

## *«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով*

---

2016 թվականի բյուջեով տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 385,498.6 հազ. դրամ: Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 378,984.3 հազ. դրամ:

2017 թվականի պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսվել է 345,000.0 հազ. դրամ, ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն փաստացի ծախսը 01.09.2017թ. դրությամբ ցույց է տրվել 173,126.0 հազ. դրամ:

**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման»** ծրագրի իրականացման համար, ՀՀ պետական բյուջեից 2016թ.-ին նախատեսվել է հատկացնել 3,042,503.1 հազ. դրամ, 2017 թվականին՝ 407,911.0 հազ. դրամ: Ըստ բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության՝ 2016 թվականին փաստացի ծախսը կազմել է 1,632,887.5 հազ. դրամ, 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ 278,200.0 հազ. դրամ:

**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ»** ծրագրի իրականացման համար, ՀՀ պետական բյուջեով 2016թ.-ին նախատեսվել է հատկացնել 4,333,417.1 հազ. դրամ, իսկ 2017 թվականի համար՝ 6,908,745.0 հազ. դրամ: Համաձայն բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության՝ 2016 թվականին փաստացի ծախսը կազմել է 3,745,440.6 հազ. դրամ, 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ 4,849,200.0 հազ. դրամ:

***Մ6 Վանաձոր–Ալավերդի–Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրով*** ՀՀ պետական բյուջեով 2016 թվականին նախատեսվել է իրականացնել 3,378,077.0 հազ. դրամի, իսկ 2017թ.-ին՝ 10,548,347.0 հազ. դրամի աշխատանքներ: Համաձայն բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության՝ 2016թ.-ին փաստացի ծախսը կազմել է 3,244,848.0 հազ. դրամ, իսկ 2017թ.-ի առ 1-ը դեկտեմբերի 6,434,000.0 հազ. դրամ:

**ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման ծրագրի իրականացման համար** 2016 թվականի պետական բյուջեով հատկացվել է 662,399.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 40,588.5 հազ. դրամ: 2017 թվականին հատկացվել է 342,646.0 հազ. դրամ, 01.12.2017 թվականի դրությամբ ծախսը կազմել է 22,463.9 հազ. դրամ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի **«Բագրատաշեն» անցակետի կամրջի վերակառուցման ծրագրի** շրջանակներում խորհրդատվական ծառայությունների

ձեռք բերման դրամաշնորհային ծրագրով 2016 թվականին հատկացվել է 40,949.7 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 8,143.8 հազ. դրամ: 2017 թվականին հատկացվել է 33,660.0 հազ. դրամ, 01.12.2017 թվականի դրությամբ ծախսը կազմել է 17,036.0 հազ. դրամ:

**«Երկաթուղու շինարարության տնօրինություն»** ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման ծրագրով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 39,156.0 հազ. դրամ սուբսիդիա, տարեկան ճշտված պլանով հատկացվող գումարը ավելացել և դարձել է 45,420.0 հազ. դրամ, փաստացի ծախսը, ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն, կազմել է 45,420.0 հազ. դրամ:

2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 35,000.0 հազ. դրամ սուբսիդիա, առ 01.12.2017 թվականի դրությամբ ծախս չի կատարվել:

«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲ ընկերությունը ՀՀ կառավարության 12.01.2017 թվականի թիվ 9-Ա որոշմամբ լուծարվել է:

**Պետական աջակցություն «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին ծրագրով** 2016 թվականին պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 26,352.9 հազ. դրամ դրամաշնորհ: ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն, փաստացի ծախսը կազմել է 26,344.5 հազ. դրամ: 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 26,352.0 հազ. դրամ դրամաշնորհ, ճշտված ծրագրով գումարը դարձել է 0.0 դրամ:

**Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում ծրագրով** ՀՀ պետական բյուջեից 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 312,815.0 հազ. դրամ սուբսիդիա, իսկ 2017թ.-ին՝ 324,000.0 հազ. դրամ: 2016 թվականին փաստացի տրամադրվել է 312,814.1 հազ. դրամ սուբսիդիա, 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 301,720.0 հազ. դրամ:

**Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ** ծրագրով 2016թ.-ին ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 374,367.1 հազ. դրամ դրամաշնորհ, փաստացի ծախսը կազմել է 351,285.0 հազ. դրամ: 2017թ.-ին բյուջեի ճշտված ծրագրով նախատեսվել է հատկացնել 309,767.0 հազ. դրամ դրամաշնորհ, առ 01.10.2017 թվականին փաստացի ծախսը կազմել է 201,452.0 հազ. դրամ:

**Բյուջետային մուտքերի ապահովում, պետական սեփականության կառավարում և օգտագործում ծրագրերով** 2016 թվականին նախատեսվել է պետական բյուջե հավաքագրել 892,261.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1,374,016.0 հազ. դրամ:

2017 թվականին նախատեսվել է պետական բյուջե հավաքագրել 818,798.0 հազ. դրամ, 01.12.2017 թվականի դրությամբ փաստացի հավաքագրվել է 1,421,253.5 հազ. դրամ:

Վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 28.08.2017 թվականի թիվ ՎՊԵ-142 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից պահանջվել է համապատասխան տեղեկատվություն, սակայն պահանջված տեղեկատվությունը սահմանված ժամկետում և ամբողջությամբ չի տրամադրվել:

***2017թ. նոյեմբերի 1-ի թիվ ՎՊԵ-ԴՀ-52 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն: 2017թ. նոյեմբերի 17-ին թիվ ՎՊԵ-ԴՀ-72 գրությամբ նախարարությունից ևս մեկ անգամ ՀՀ վերահսկիչ պալատը խնդրել է ներկայացնել վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Սակայն, ըստ էության, պահանջված տեղեկատվությունը տրամադրվել է սահմանված ժամկետից ուշացումներով և ոչ ամբողջական:***

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը հատկացված բյուջետային միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման վերաբերյալ***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջված տեղեկատվությունը տրամադրվել է սահմանված ժամկետից ուշացումներով և ոչ ամբողջական, և այն, որ տվյալ վերահսկողության շրջանակներում դիտարկում իրականացնելուց հետո կարևորվում է «ստուգում» և «վերլուծություն» ձևերը, իսկ դրա իրականացման համար արդեն իսկ առաջացել էին ժամկետային սահմանափակումներ, ուստի, նպատակահարմար է վերոնշյալ ծրագրերի նկատմամբ վերահսկողությունն իրականացնել 2018 թվականին:

# 2.10 ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ «ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԵՎ «ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՍԱՅԼԱԿՆԵՐՈՎ ԵՎ ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 19/1 որոշումը |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պետական բյուջեից «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման և «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովում»: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պետական բյուջեից «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովում» ծրագրերով հատկացված, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և նշված ծրագրերն իրականացնող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերով պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված գործառույթներ և ընթացակարգեր: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Վերահսկողության իրականացման ժամկետը** | 2017թ. սեպտեմբերի 23-ից մինչև 2018թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջանը** | 2015թ. հունվարի 12-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:<br><br>Վերահսկողության ընթացքում կատարվել է վերահսկողության օբյեկտներից, «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման հիմնադրամից և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, տարբեր տվյալների համադրում և վերլուծություն: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## 1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*1. Ուսումնասիրվող ծրագրի հիմնական նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովումը, նրանց կորցված ֆունկցիայի կամ օրգանի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը, կենսագործունեության սահմանափակումների հնարավորինս նվազեցումը պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ (պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի և օրթոպեդիկ կոշիկներ, հենակներ, ձեռնափայտեր, քայլակներ, ձայնասփեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլն) տրամադրելու միջոցով (այսուհետ՝ պարագաներ):*

2. Հաշմանդամություն ունեցող անձանց պարագաները տրամադրվում են կառավարության 10.09.2015թ.-ի 1035-Ն որոշման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 30.09.2013թ.-ի 131-Ա/1 հրամանի պահանջներին համապատասխան և բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից տրամադրված վերականգնողական անհատական ծրագրի (այսուհետ՝ ՎԱԾ) հիման վրա:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովումը

3. Ծրագրի շրջանակներում ծառայություն-ների ձեռք բերման համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից յուրաքանչյուր տարի հայտարարվում է մրցույթ՝ շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգով, որի արդյունում հաղթող ճանաչված կազմակերպությունները պարագաները սահմանված կարգով և ժամանակահատվածում՝ բացառությամբ լսողական սարքերի և սայլակների, պատրաստում և տրամադրում են շահառուներին, ինչպես նաև կատարում են պարագաների վերանորոգում՝ դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելով նախարարությանը և տվյալները մուտքագրելով տեղեկատվական համակարգ:

4. Սայլակների և լողական սարքերի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունները համապատասխան պարագաները մատակարարում են նախարարության ենթակայությամբ գործող «Հանգրվան» ՊՈԱԿ-ին, որն էլ իր հերթին իրականացնում է դրանց բաշխման գործընթացը շահառուներին:

5. ՀՀ 2015-2017թթ. ճշտված բյուջեներով նախարարության կարիքների համար «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով, լողական սարքերով ապահովման» ծրագրերով նախատեսվել է.

- 2015թ.-ին՝ 941,997.0 հազ. դրամ,
- 2016թ.-ին՝ 945,896.6 հազ. դրամ,
- 2017թ.-ին՝ 901,891.5 հազ. դրամ:




6. Փաստացի ծախսը համապատասխանաբար կազմել է.

- 2015թ.-ին՝ 906,883.7 հազ. դրամ,
- 2016թ.-ին՝ 922,381.4 հազ. դրամ,
- 2017թ.-ին՝ 819,623.2 հազ. դրամ:

7. Ծրագրերի իրականացման ընդհանրական պատկերը ըստ տարիների և իրականացնող կազմակերպությունների հետևյալն է՝

## «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով և դրանց վերանորոգում» ծրագիր

հազ. դրամ

| Տարի | Կազմակերպություն | Պայմանագրի գումար | Փաստացի ծախս | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 2015 | “Ինտերօրթ” ՍՊԸ | 525,002.5 | 524,178.5 | 99.8 |
| | “Պրոթեզաօրթոպեդիկ” ՍՊԸ | 171,215.0 | 171,215.0 | 100 |
| | “Սատար” հաշմանդամների ՀԿ | 90,825.7 | 90,566.0 | 99.7 |
| | “Ձայնալարերը հեռացվածների միավորում” ՀԿ | 27,600.0 | 27,600.0 | 100 |
| | “Աչք” ՍՊԸ | 11,050.0 | 11,050.0 | 100 |
| | **Ընդամենը** | **825,693.2** | **824,609.5** | **99.9** |
| 2016 | “Ինտերօրթ” ՍՊԸ | 533,826.5 | 529,287.0 | 99.1 |
| | “Պրոթեզաօրթոպեդիկ” ՍՊԸ | 204,649.7 | 198,637.7 | 97.1 |
| | “Սատար” հաշմանդամների ՀԿ | 61,710.4 | 59,758.6 | 96.8 |
| | “Ձայնալարերը հեռացվածների միավորում” ՀԿ | 27,600.0 | 27,600.0 | 100 |
| | “Աչք” ՍՊԸ | 13,000.0 | 13,000.0 | 100 |
| | **Ընդամենը** | **840,784.6** | **828,283.3** | **98.5** |
| 2017 | “Ինտերօրթ” ՍՊԸ | 535,485.5 | 534,034.5 | 99.7 |
| | “Պրոթեզաօրթոպեդիկ” ՍՊԸ | 133,918.9 | 98,563.1 | 73.6 |
| | “Սատար” հաշմանդամների ՀԿ | 84,397.7 | 51,098.0 | 60.5 |
| | “Ձայնալարերը հեռացվածների միավորում” ՀԿ | 34,500.0 | 34,500.0 | 100 |
| | “Աչք” ՍՊԸ | 12,999.3 | 12,999.3 | 100 |
| | “Նոր որակ” ՍՊԸ | 16,626.6 | 16.545.6 | 99.5 |
| | **Ընդամենը** | **817,928.0** | **747,740.5** | **91.4** |

### «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովման» ծրագիր

հազ. դրամ

| Տարի | Կազմակերպություն | Պայմանագրի գումար | Փաստացի ծախս | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 2015 | “Ագաթ 777” ՍՊԸ | 36,700.0 | 36,700.0 | 100 |
| | “Կամար” ՓԲԸ | 23,024.4 | 23,024.0 | 100 |
| | “Դանինի” ՍՊԸ | 14,808.0 | 14,808.0 | 100 |
| | “Մանուսկրիպտ” ՍՊԸ | 4,800.0 | 4,800.0 | 100 |
| | **Ընդամենը** | **79,332.4** | **79,332.4** | **100** |
| 2016 | “Դանինի” ՍՊԸ | 40,240.0 | 40,240.0 | 100 |
| | “Ագաթ 777” ՍՊԸ | 34,964.8 | 34,964.8 | 100 |
| | “Մանուսկրիպտ” ՍՊԸ | 3,900.0 | 3,900.0 | 100 |
| | “Սատար” հաշմանդամների ՀԿ | 2,490.0 | 2,490.0 | 100 |
| | **Ընդամենը** | **81,594.8** | **81,594.8** | **100** |
| 2017 | “Բարրի” ՍՊԸ | 35,676.6 | 31,818.6 | 89.1 |
| | “Նոր որակ” ՍՊԸ | 24,144.9 | 24,144.9 | 100 |
| | “Կինդ-Արտ” | 10,710.0 | 5,460.0 | 51 |
| | “Մանուսկրիպտ” ՍՊԸ | 4,800.0 | 4,800.0 | 100 |
| | “Պրոթեզաօրթոպեդիկ” ՍՊԸ | 3,490.0 | 3,469.2 | 99.4 |
| | “Կամար” ՓԲԸ | 1,520.0 | 570.0 | 37.5 |
| | **Ընդամենը** | **83,963.5** | **71,882.7** | **85.6** |

## 2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման մրցույթների հրավերներով 2015թ.-ին թվով՝ 37, 2016թ.-ին թվով՝ 35, իսկ 2017թ.-ին թվով՝ 29 չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերում սահմանվել է, որ պարագաները պետք է լինեն Գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող:

Գնման առարկայի բնութագրերը մրցակցության հավասար պայմաններ չեն ապահովել

1.1. Վերոնշվածը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր

մասնակիցների համար և չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

2. Միաժամանակ, պետք է նշել, որ գնման առարկայի բնութագրերում օգտագործված «գերմանական տեխնոլոգիայով արտադրվող» հասկացությունը չի համարվում ձեռք բերվող ապրանքի որակին, ստանդարտին, անվտանգությանը կամ այլ հատկանիշներին վերաբերող առանձնահատկություն: Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում ապրանքի որևէ երկրի տեխնոլոգիայով արտադրված լինելը չի համարվում բնութագրիչ:

3. Ծառայությունների մատուցումն իրականացվել է շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգով ընդհանուր 2015թ.-ին՝ 112, 2016թ.-ին՝ 125 և 2017թ.-ին՝ 106 չափաբաժիններով: 2015թ.-ի 1-73, 2016թ.-ի 1-84, 116, 117, 119, 120, 122 և 123, 2017թ.-ի 1-14, 18, 19, 21-80, 99-101, 103 և 104 չափաբաժինների մասով սահմանվել է, որ ապրանքը պետք է լինի տեղական արտադրության և ԱՊՀ երկրների նյութերից և տեխնոլոգիայով արտադրվող, իսկ 2015թ.-ի 74-112, 2016թ.-ի 85-115, 118, 121, 124 և 125, 2017թ.-ի 15-17, 20, 80-98, 102, 105 և 106 չափաբաժինների մասով՝ գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի:

4. Նշված չափաբաժիններով ծառայությունների որոշ անվանումներ կրկնվում են . Օրինակ՝

4.1. **Սրունքի պրոթեզներ**՝ 2015-2017թթ. համապատասխանաբար նախատեսվել է տեղական արտադրության թվով՝ 38, 48 և 5 հատ, որոնց մեկ միավորի պայմանագրային միջին արժեքը կազմել է՝ 236.5, 223.5 և 241.0 հազ. դրամ, իսկ գերմանական տեխնոլոգիայով արտադրված պարագաների դեպքում՝ 152, 166 և 147 հատ, 401.7, 430.0, 430.0 հազ. դրամ միավոր արժեքներով:

4.2. **Ազդրի պրոթեզներ**՝ 2015-2017թթ. համապատասխանաբար նախատեսվել է տեղական արտադրության թվով՝ 28, 12 և 15 հատ, որոնց մեկ միավորի պայմանագրային միջին արժեքը կազմել է՝ 287.3, 287.3 և 246.0 հազ. դրամ, իսկ գերմանական տեխնոլոգիայով արտադրված պարագաների դեպքում՝ 171, 186 և 190 հատ, միավորի միջին արժեքը 1,298.3 հազ. դրամ:

5. **Այսպիսով, մրցույթի տեխնիկական բնութագրերում նշվել են այնպիսի պայմաններ, որոնք մենաշնորհային դիրք են ապահովել «Ինտերօրթո» ՍՊԸ-ի համար (որը հանդիսանում է «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի պաշտոնական և միակ ներկայացուցիչը ՀՀ-ում):**

6. Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 21.02.2013թ. թիվ 30-Ա/1 հրամանի հավելված 2-ի 3-րդ բաժնի 13-րդ կետի պահանջների՝ նախարարությունը պարտավոր է կատարել հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգ:

6.1. Սակայն, ուսումնասիրությունները վկայում են, որ Նախարարությունը պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրման և դրանց վերանորոգման մասին իրազեկվում է միայն կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների միջոցով և փաստացի չի մասնակցում հաշմանդամին պարագաների տրամադրման և դրանց վերանորոգման գործընթացին:

6.2. Չի գնահատում պարագաների և/կամ մատուցված ծառայությունների համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին:

Նախարարության կողմից չի իրականացվել հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում իրականացվող ծրագրերի մոնիթորինգ

6.3. Առավելագույնը, որ կարող է փաստել նախարարությունը, պարագան ստանալու և/կամ ծառայությունը մատուցված լինելու վերաբերյալ հաշմանդամի անվան դիմաց դրված ստորագրությունն է:

7. Պլանավորման գործընթացում քանակական, որակական և գնային առումով չկա որևէ ուսումնասիրություն: Գնային մասով հիմք են ընդունվում միայն նախորդ տարվա պայմանագրով սահմանված գները:

8. Նախարարության կողմից 27.07.2017թ. տրված տեղեկանքի համաձայն, 2016թ.-ի կարիքների համար «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովման» ծրագրերով պարագաների գնման ընթացակարգերը կազմակերպվել են էլեկտրոնային եղանակով 2015թ.-ի վերջում, և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլվել է gnumner.am և armeps.am պաշտոնական կայքերում:

Փաստաթղթերի թղթային տարբերակները մեծամասամբ նախարարությունում չեն պահպանվել

Սակայն փաստաթղթերի թղթային տարբերակները մեծամասամբ նախարարությունում չեն պահպանվել: Ամբողջությամբ չեն պահպանվել նաև մրցույթի արդյունքները գնահատող հանձնաժողովի որոշումների ու նիստերի արձանագրությունները:

9. Վերականգնողական անհատական ծրագրում (ՎԱԾ) սահմանված պարագան ստանալու նպատակով հաշմանդամը դիմում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և ծառայությունը մատուցող կազմակերպություն:

Հստակեցված չէ, թե որ շահառուն պետք է ստանա գերմանական և որը՝ տեղական հումքով պատրաստված միևնույն պարագան

10. Որևէ ընթացակարգով հստակեցված չէ, թե որ շահառուն պետք է ստանա գերմանական և որը՝ տեղական հումքով պատրաստված միևնույն պարագան, ինչը ստեղծում է անհավասար պայմաններ շահառուների համար և կարող է իր մեջ պարունակել տրամադրող կազմակերպության կողմից կամայական մոտեցման ռիսկեր:

11. ՀՀ կառավարության 10.09.2015թ.-ի թիվ 1035-Ն որոշմամբ սահմանված են պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման և պարագաների վերանորոգման ժամկետներ:

11.1. Տվյալ որոշմամբ սահմանվել է «ստորին վերջույթի պրոթեզների» համար մեկ տարվա երաշխիքային ժամկետ, իսկ «ստորին վերջույթի մոդուլյար պրոթեզների» համար՝ 6 ամիս:

12. **Թե ինչ հիմնավորումներով է նման ժամկետներ սահմանվել Կառավարության համապատասխան որոշմամբ, հայտնի չէ, հատկապես նկատի ունենալով այն փաստը, որ օրինակ՝ «ՕԹԹՈ-ԲՈՔ» կազմակերպության կողմից հրապարակած տեղեկատվության համաձայն, «ստորին վերջույթի պրոթեզների» և «ստորին վերջույթի մոդուլյար պրոթեզների» համար սահմանված է առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ:**

13. Գնման պայմանագրերին կից հավելված 1-ում հստակ ներկայացված չի եղել մատուցվող ծառայությունների (ըստ չափաբաժինների) տեխնիկական չափանիշները, բնութագրերը, դասակարգումը և ֆունկցիան: Մինչդեռ, ըստ այդ ժամանակ գործող Գնումների մասին ՀՀ օրենսդրության, նման գնման բնութագրերը պետք է լինեին ամբողջական և համարժեք, դրանց հատկանիշները հնարավորինս պետք է ներառեին պրոթեզների որակին, ստանդարտին, անվտանգությանը, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրություն (հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Հստակ ներկայացված չէ մատուցվող ծառայությունների (ըստ չափաբաժինների) տեխնիկական չափանիշները

14. «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից տրամադրված 2015-2017թթ. տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա են 7 պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և 2 սայլակների բաշխման, ինչպես նաև 5 պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման դեպքեր շահառուների մահվան օրվանից հետո.

Առկա են պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրման և վերանորոգման բազմաթիվ դեպքեր՝ շահառուների մահվան օրվանից հետո

15. 01.01.2015-01.11.2017թթ. ժամանակահատվածում «Ինտերօրթո» ՍՊԸ-ի ներմուծման և ձեռք բերման փաստաթղթերի, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից ստացված տեղեկատվության և «ՕԹԹՈ-ԲՈՔ» ընկերության կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված տեխնոլոգիական հրահանգների ուսումնասիրության և համադրումների արդյունքում պարզվեց, որ.

| | |
|---|---|
| Առկա են տարբերություններ ՊԵԿ-ի կողմից ստացված տեղեկությունների և ընկերության կողմից հրապարակված տեղեկությունների միջև: | • Վերը նշված ժամանակահատվածում առկա են բաշխված պարագաների և դրանց պատրաստման համար ընկերության կողմից ներմուծված և/կամ/ ձեռք բերված անհրաժեշտ բաղկացուցիչ մասերի (դետալների) միջև տարբերություններ: |

16. Բաշխվել է 45 «Թաթի պրոթեզ ըստ Շոպարտի» պրոթեզաօրթոպեդիկ պարագա՝ 12,150.0 հազ. դրամ պայմանագրային ընդհանուր արժեքով, սակայն նշված ժամանակահատվածում պրոթեզաօրթոպեդիկ պարագայի պատրաստման համար անհրաժեշտ «ՕԹԹՈ-ԲՈՔ» ընկերության կողմից հրապարակված տեխնոլոգիական հրահանգով նախատեսված 1E80, 1E81 կամ 1E82 («տակացու») մասը չի ներմուծվել (հիմք՝ ՊԵԿ-ից ստացած տվյալներ):

17. Բաշխվել է 427 հատ «Սրունքի մոդուլյար պրոթեզ» պրոթեզաօրթոպեդիկ պարագա՝ 251,930.0 հազ. դրամ պայմանագրային արժեքով, սակայն պարագայի պատրաստման համար անհրաժեշտ «ՕԹԹՈ-ԲՈՔ» ընկերության կողմից հրապարակված տեխնոլոգիական հրահանգով նախատեսված 2R103 կամ 2R102 կամ 2R105, կամ 2R122 կամ 2R124 կամ 2R125 կամ 2R201 կամ 2R120 կամ 2R121 կամ 2R123 («մոդուլյար հավաքածու») մասերից չի ներմուծվել (հիմք՝ ՊԵԿ-ից ստացած տվյալներ):

18. Բաշխվել է 497,090.0 հազ. դրամի պայմանագրային ընդհանուր արժեքով 470 ազդրի մոդուլյար (բացառությամբ ISNI և ISNI սիլիկոնե լայներով) պրոթեզներ, ծնկահոդ, ինչպես նաև կոնքազդրի էքզարտիկ պրոթեզներ, որոնց կառուցվածքում ընդգրկվում է ծնկահոդը:

18.1. Հաշվի առնելով, որ ՊԵԿ-ից ստացված տվյալներով նշված ժամանակաշրջանում Ընկերությունը ներմուծել է ընդամենը 269 հատ ծնկահոդ, ուրեմն Ընկերության կողմից հաշվետվություններով ներկայացված պրոթեզների բաղկացուցիչ մաս հանդիսացող մնացած՝ 212,559.0 հազ. դրամի արժեքով 201 հատ ծնկահոդի հետ կապված պրոթեզների բաշխման փաստը կարող է լինել անարժանահավատ:

18.2. Այսինքն՝ ընկերությունը կարող էր բաշխել միայն 284,531.0 հազ. դրամի պայմանագրային ընդհանուր արժեքով 269 ազդրի մոդուլյար (բացառությամբ

ISNI և ISNI սիլիկոնե լայներով) պրոթեզներ, ծնկահոդ, ինչպես նաև կոնքազդրի էքզարտիկ պրոթեզներ:

Բաշխվել են 197մլն դրամի պարագաներ, սակայն մի շարք մասեր չեն ներմուծվել

19. Բաշխվել է 197,106.6 հազ. դրամի պայմանագրային ընդհանուր արժեքով 385 «ստորին վերջույթի բուժամարզական պրոթեզ» պրոթեզաօրթոպեդիկ պարագա, սակայն վերոնշյալ ժամանակահատվածում պրոթեզաօրթոպեդիկ պարագայի պատրաստման համար անհրաժեշտ «ՕԹԹՈ-ԲՈՔ» ընկերության կողմից հրապարակված տեխնոլոգիական հրահանգով նախատեսված 6K4 («ազդրի ընդունիչ»), 6S2 («պնեվմատիկ փոխարկիչի ծածկ»), 99B23 («կոնաձև բարձիկ»), 6B3 («հավաքածու»), 5R6 («բնիկ»), 2R45=S կամ 501Z2=M6*25 կամ 506G3=M8*12V («ադապտոր»), 2R45=34 կամ 2R56=230 կամ 2R56=300 («ադապտոր»), 4R101 կամ 4R112 («շարժական ադապտոր»), 4R1 («ամրակ») մասերը չեն ներմուծվել (հիմք՝ ՊԵԿ-ից ստացած տվյալներ):

20. Ընդհանուր առմամբ, բոլոր տեսակի ստորին վերջույթների պրոթեզների բաղկացուցիչ մաս է հանդիսանում թաթը: Ընկերության կողմից 01.01.2015-01.11.2017թթ. ներմուծվել է 1222 թաթ (հիմք՝ ՊԵԿ-ից ստացած տվյալներ), սակայն, ըստ բաշխման ցուցակների, տրամադրվել է 1766 ստորին վերջույթի պրոթեզ:

21. 2016թ.-ի մրցույթում հաղթող ճանաչված «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն շահառուներին տրամադրել է 2000 զույգ պրոթեզի կոշիկ:

21.1. Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն մեկ այլ կազմակերպությունից (այսուհետ՝ կազմակերպություն) 2016թ.-ին ձեռք է բերել պրոթեզի 1500 զույգ կոշիկ:

21.2. Տվյալ կազմակերպությունը 15.08.2016թ.-ի դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված տվյալներով չի ունեցել որևէ աշխատակից և այդ պարագայում սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի պատվերով իբրև կարողացել է առաջին անգամ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ ստացող հաշմանդամներից վերցնել 82 զույգ պրոթեզի կոշիկների չափերը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Որոշ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերում նշված գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկված կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրված լինելու մասին պահանջը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին: Փաստորեն, շատ դեպքերում չի ստեղծվում մրցակցային դաշտ և առաջանում է մենաշնորհային իրավիճակ:

2 Նախարարությունը տրամադրված կամ վերանորոգված պարագայի վերաբերյալ իրազեկվում է միայն կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների միջոցով և փաստացի չի մասնակցում հաշմանդամին պարագայի տրամադրման կամ դրա վերա-նորոգման գործընթացին:

3 Բաշխման փուլում Նախարարությունը չի գնահատում պարագաների համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին:

4 Նախարարությունը պարագան ստանալու և/կամ ծառայությունը մատուցված լինելու վերաբերյալ տեղեկանում է միայն փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով:

5 Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 21.02.2013թ. թիվ 30-Ա/1 հրամանի հավելված 2-ի 3-րդ բաժնի 13-րդ կետի պահանջների համաձայն նախարարությունը պարտավոր է կատարել հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգ:

Բացակայում են մոնիթորինգի իրականացման հաստատված ընթացակարգեր: Ընթացակարգերի բացակայությունը և վերահսկողության ընթացքում արձանագրված փաստերը վկայում են այն մասին, որ ծրագրերի իրականացման հսկողություն գրեթե չի իրականացվում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

1. Միջոցներ ձեռնարկել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունում, առանց միջամտելու կազմակերպության բնականոն գործունեությանը, հետևելու և մասնակցելու պարագաների տրամադրման և վերանորոգման գործընթացին:

2. Սահմանել մոնիթորինգի իրականացման ընթացակարգ:

3. Միջոցներ ձեռնարկել գնումների կազմակերպման գործընթացի բարելավման ուղղությամբ՝ մասնավորապես, տեխնիկական բնութագրերը համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

4. ՎԱԾ-ում նշել մատակարար կազմակերպության անվանումը:

5. Վերանայել պրոթեզաօրթոպեդիկ պարագաների երաշխիքային ժամկետները՝ ուսումնասիրելով միջազգային փորձը:

6. Անհրաժեշտ է բացառել որևէ կազմակերպության արհեստականորեն ստեղծված մենաշնորհային դիրք ունենալը:

***«ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ/ կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:***

Հավելված

## ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ներկայացված՝ «Հաշմանդամներին պրոթեզաօրթպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովում» ծրագրի կատարման նկատմամբ իրականացված վերահսկողությամբ արձանագրված փաստերի արձանագրության վերաբերյալ**

**1. Տեխնկակական բնութագրի միջոցով «Ինտերօրթո» կազմակերպության համար մենաշնորհային դիրք ապահովելու վերաբերյալ**

«Հաշմանդամներին պրոթեզաօրթպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի շրջանակներում 2 տարբեր տեխնիկական բնութագրերով ծառայությունների գնման գործընթացը պայմանավորված է նախընթաց պատմությամբ:

Մասնավորապես, տարիներ ի վեր (մինչև 2015 թվականը) Հայաստանում գործել են ընդամենը 2 կազմակերպություն՝

1) «Պրոթեզաօրթպեդիկ» ՍՊԸ-ն գործում է (պրոթեզավորման ծառայություններ է մատուցում) 1928 թվականից և գործել է ԽՍՀՄ գիտահետազոտական ինստիտուտների կողմից ներկայացված մեթոդական ուղեցույցների հիման վրա՝ ԽՍՀՄ երկրների արտադրության նյութերով,

2) «Ինտերօրթո» ՍՊԸ-ն գործում է (պրոթեզավորման ծառայություններ է մատուցում) 1989 թվականից (հիմնադրվել է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության (ԳՖՀ) կառավարության աջակցությամբ՝ որպես անվարձահատույց նվիրաբերություն 1988 թվականի երկրաշարժից տուժած Հայաստանի ժողովրդին) և գործել է գերմանական փորձի հիման վրա և պրոթեզներ պատրաստել ԳՖՀ-ից մատակարարված գերմանական «Օթթո-Բոք» ֆիրմայի կողմից արտադրվող նյութերով և դետալներով:

Այսինքն, խորհրդային շրջանում, մինչև 1988 թվականը, անձինք պրոթեզավորվել են «Պրոթեզաօրթպեդիկ» կազմակերպությունում, իսկ սկսած 1989 թվականից՝ նաև «Ինտերօրթո» կազմակերպությունում (երկրաշարժի հետևանքով հաշմանդամ դարձածներ, արցախյան ազատամարտի մասնակիցներ):

Ընդ որում, դեռևս խորհրդային ժամանակաշրջանեից սկսած, հաշմանդամություն ունեցող անձինք իրենց ցանկությամբ դիմել են վերը նշված 2 կազմակերպությունները և ստացել համապատասխան ծառայություն և, սովորույթի ուժով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձը հոգեբանորեն և ֆիզիկապես հարմարվում է իրեն տրամադրևած պրոթեզին, «Պրոթեզաօրթպեդիկ» կազմակերպութայն ծառայություններից հիմնականում օգտվել են տարեց սերունդը, իսկ «Ինտերօրթո» կազմակերպութայն ծառայություններից՝ երիտասարդ սերունդը և առաջին անգամ պրոթեզավորվող անձինք:

Հետևաբար, հայրենական արտադրության պրոթեզներ ստացող անձանց թվաքանակը գնալով նվազել է, իսկ գերմանական տեխնոլոգիայով պատրաստված պրոթեզներ ստացող անձանց թվաքանակը՝ աճել:

Այդ է վկայում նաև պրոթեզներ ստացած անձանց տարիքային վերլուծությունը, որի համաձայն հայրենական արտադրության պրոթեզներ ստացող անձանց միջին տարիքը 65 է, իսկ գերմանական արտադրության պրոթեզներ ստացող անձանց միջին տարիքը՝ 57:

**Պրոթեզավորված անձանց թիվը՝ ըստ տարքային խմբերի և պրոթեզի պատրաստման տեխնոլոգիաների, 2008-2018 թթ.**

| | Պրոթեզավորված անձինք |
|---|---|

| Տարիքային խումբը | Ընդամեն | Հայրենական արտադրության | Գերմանական արտադրության |
|---|---|---|---|
| 1-18 | 23 | 4 | 19 |
| 19-30 | 153 | 37 | 116 |
| 31-65 | 1831 | 490 | 1341 |
| 66-80 | 849 | 211 | 638 |
| 81 և ավելի բարձր տարիքի | 398 | 221 | 177 |

**Տրամադրված պրոթեզների թիվը՝ ըստ հաշմանդամության պատճառական կապի և պրոթեզի պատրաստման տեխնոլոգիաների, 2008-2018 թթ.**

| Հաշմանդամության պատճառը | Պրոթեզների քանակը | |
|---|---|---|
| | Հայրենական արտադրության | Գերմանական արտադրության |
| Երկրաշարժի հետևանքով | 7 | 113 |
| Զինծառայության ընթացքում | 63 | 213 |
| Զինծառայության պարտականությունները կատարելիս | 87 | 410 |
| ՀՀ սահմանները պաշտպանելիս | 72 | 369 |
| ԽՍՀՄ սահմանները պաշտպանելիս | 16 | 13 |
| Աշխատանքային խեղում | 160 | 163 |
| Ընդհանուր հիվանդություն | 1419 | 2760 |
| Մանկուց հիվանդություն | 210 | 369 |
| Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետևանքով | 4 | 3 |

Գերմանական արտադրության պրոթեզներ ստացող անձանց թվաքանակի աճը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այդ պրոթեզներն են ընտրել նաև շաքարային դիաբետի հետևանքով ամպուտացված անձինք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, գերմանական տեխնոլոգիայով պատրաստված պրոթեզի հետ կիրառվում է սիլիկոնե գուլպա, ինչը ավելի հարմարավետ է դարձնում պրոթեզի օգտագործումը:Շաքարային դիաբետ ունեցող պրոթեզավորված անձանցից 2008-2018 թվականներին 689-ը նախընտրել են գերմանական, իսկ 199՝ հայրենական արտադրության պրոթեզներ:

Հարկ է նշել նաև, որ 2000-2001թթ. հայրենական նյութերով և դրան համարժեք նյութերով արտադրվող պրոթեզաօրթպեդիկ պարագաները չեն արտադրվել, ինչի արդյունքում նշված 2 տարիների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձինք դիմել են միայն «Ինտերօրթո» ՍՊԸ և շարունակել հաջորդ տարիներին նույնպես ստանալ ծառայություններ այդ կազմակերպություններից:

2000-ական թվականների կեսերից սկսված՝ պրոթեզաօրթպեդիկ պարագաների ձեռքբերման համար, գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով կազմակերպվել են մրցույթներ:

Հաշվի առնելով, որ տասնամյակներ շարունակ Ծրագրի շահառուները ստացել են իրենց կարիքներին համապատասխան պրոթեզաօրթպեդիկ պարագաներ (այդ թվում պրոթեզներ) իրենց կողմից ընտրված կազմակերպություններից, նպատակահարմար է եղել մրցույթը կազմակերպել հենց վերը նշված 2 տեխնիկական բնութագրերով:

Ընդ որում, տեխնիկական բնութագրերը հղումներ են պարունակել «Օթթո-Բոք» ֆիրմայի, ԱՊՀ երկներում արտադրվող նյութերին, ինչպես նաև պրոթեզների պատրաստման գերմանական և հայրենական տեխնոլոգիաներին սկսած 2000-ականներից, ինչը սակայն չի հակասել գործող իրավակարգավորումներին:

Մասնավորապես, մինչև 2017 թվականը գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, **բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը**:»:

Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի եղել հստակ բնութագրել գնման առարկան՝ տեխնիկական բնութագրում հղում է կատարվել ֆիրմային անվանմանը՝ կիրառելով **«կամ համարժեք» բառերը, ինչը համապատասխանել է գործող օրենքին:**

Այսինքն, տեխնիկական բնութագրում «Գերմանական» կամ «հայրենական» տեխնոլոգիաներին հղումների կիրառմամբ նպատակ է դրվել ոչ թե մատուցվող ծառայությունների որակին, ստանդարտին, անվտանգությանը վերաբերող առանձնահատկություններ նկարագրել, այլ՝ հնարավոր մասնակիցներին առավել հասկանալի ներկայացնել պահանջվող ծառայությունների ամբողջական նկարագիրը և, որն ամենկարևորն է՝ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց պատշաճ որակի ծառայություններ մատուցելը, հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարիքները:

Մեկ անգամ ևս նշենք, որ շահառուների կարիքները ձևավորվել են պատմականորեն, սովորույթի ուժով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե առաջին անգամ պրոթեզավորվելիս անձը (օրինակ՝ 2005 թվականին) ո՞ր կազմակերպության ծառայություններից է օգտվել (սովորույթի ուժի մասին է վկայում նաև 2018 թվականին տեղի ունեցած մրցույթին հաջորդած բողոքի ալիքը):

Ընդ որում, խնդրո առարկա ձևակերպումները որևէ կերպ չեն խոչընդոտել այլ կազմակերպությունների մասնակցությունը:

Այդ է վկայում այն հանգամանքը, որ նույն տեխնիկական բնութագրի հիման վրա տեղի ունեցած մրցույթի արդյունքում 2016-2017թթ. պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների մրցույթին մասնակցել են նաև այլ կազմակերպություններ և ճանաչվել հաղթող, քանի որ ներկայացրել են «Օթթո-Բոք» ֆիրմայի պարագաներին համարժեք պարագաներ (առաջարկել են ավելի մրցունակ գին, քան «Ինտերօրթո» կազմակերպությունը): Մասնավորապես, 2016-2017թթ. «Օթթո-Բոք» ֆիրմայի կամ համարժեք պարագաներ են տրամադրել նաև «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն՝ 1911 պարագա (2016թ.՝ 1178 պարագա և 2017թ.՝ 733 պարագա): Նույն ժամանակահատվածում «Ինտերօրթո» ՍՊԸ-ն տրամադրել է 1596 պարագա (936 և 660):

Նույն իրողություններն են արձանագրվել նաև հայրենական և ԱՊՀ երկրներում թողարկվող նյութերով կամ համարժեք նյութերով պրոթեզաօրթոպեդիկ պարագաների դեպքում:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակահատվածում իրականացված բովանդակային ծավալուն աշխատանքների արդյունքում 2018 թվականի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգի համար տեխնիկական բնութագրերում որևէ ֆիրմային նշանի կամ երկրների հղումներն ամբողջությամբ հանվել են, իսկ չափաբաժինները՝ միասնականացվել:

**2. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողություն չիրականացնելու վերաբերյալ**

Վերջին տարիներին շարունակական բնույթ են կրել պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու և արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Մասնավորապես.

1) ներքին ռեսուրսների հաշվին մշակվել և ներդրվել է Պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների տեղեկատվական համակարգը, որի միջոցով հաշվառվում են տրամադրված պարագաները,

2) շահառուների հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով պարբերական բնույթ են կրել մատուցված ծառայությունները գնահատելու նպատակով իրականացվող տունայցերը և հեռախոսազանգերը,

3) նախարարության համապատասխան ստորաբաժանումները պարբերաբար մոնիթորինգի և աուդիտի են ենթարկել ծրագրի իրականացման ընթացքը, այդ թվում՝ տրամադրվող պարագաների համապատասխանությունը տեխնիկական բնութագրի չափանիշներին, և այլն:

Ընդ որում, խնդրո առարկա աշխատանքները տվել են նաև առարկայական արդյունքներ:

Օրինակ, 2016 թվականի առաջին եռամսյակում տրամադրված հենակների և ձեռնափայտերի հետ կապված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող պարագաներ, որի պատճառով «Պրոթեզաորթոպեդիկ» ՍՊԸ կազմակերպությունը տուգանվել է ավելի քան 1 մլն ՀՀ դրամով, իսկ ոչ պատշաճ որակի պարագաները փոխարինվել են:

2017թ. ժամանակահատվածում նախարարության կողմից ուսումնասիրություն է իրականացվել՝ «Պրոթեզաորթոպեդիկ», «Ինտերօրթ», «Աչք» և «Արաբկիր» Բժշկական Համալիր-Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ-ներում, ինչպես նաև «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ում, «Ձայնալարերը հեռացվածների միավորում» ՀԿ-ում և «Հանգրվան» ՊՈԱԿ-ում՝ «Հաշմանդամներին սայլակներով եվ լսողական սարքերով ապահովման», «Հաշմանդամներին պրոթեզաորթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» և «Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրում» ծրագրերի շրջանակներում:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում քաղաքացիներին մատուցված պրոթեզաորթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և վերանորոգման ծառայությունների խորքային ուսումնասիրության նպատակով իրականացվել են հարցումներ տնային այցելությունների ժամանակ՝ Երևան քաղաքի թվով 7 վարչական շրջաններում, ինչպես նաև ՀՀ Լոռու, Արարատի, Կոտայքի և Արմավիրի մարզերի տարբեր համայնքներում ծառայություններ ստացած, ընտրանքային կարգով ընտրված թվով 261 շահառուների շրջանում:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են թերություններ և խախտումներ, որոնց հիման վրա վերանայվել են տխնիկական բնութագրերը:

Միաժամանակ պետք է նշել, որ Նախարարությունը չունի համապատասխան ռեսուրսներ և գործառույթներ՝ անմիջականորեն մասնակցելու և վերահսկելու **յուրաքանչյուր** պարագայի տրամադրման գործընթացը (տարեկան տրամադրվում է շուրջ 12-13000 պարագա): Ընդ որում, տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին պարագաների համապատասխանությունը և պարագաների որակը գնահատելը առանձին դեպքերում ենթադրում է խիստ նեղ մասնագիտական գիտելիքներ և կարողություններ և լրացուցիչ ռեսուրսներ:

Մատուցվող ծառայությունների որակը (այդ թվում տրամադրվող պարագաների համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին) նախարարությունը վերահսկում է համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվող ուսումնասիրությունների, մոնիթորինգի, անհրաժեշտության դեպքում աուդիտի միջոցով: Իր հերթին պատասխանատու ստորաբաժանման կողմից պարբերաբար կատարվում են հեռախոսազանգեր, տունայցեր պարզելու մատուցված ծառայությունների որակը, ինչպես նաև պրոթեզաորթպեդիկ և վերականգնողական պարագաների համապատասխանությունը նախատեսված տեխնիակական բնութագրերին:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ ներկայում ներդրվում է նաև սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի մոնիտորինգի և գնահատման համակարգ, որի շրջանակներում նախատեսվում է գնահատել ծրագրի արդյունավետությունը:

Համակարգի ներդրումը հնարավորություն էլ ավելի բարելավել նախարարության կողմից իրականացվող վերահսկողական աշխատանքների արդյունավետությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով վերը նշված և մի շարք այլ խնդիրներ՝ առաջիկայում նախատեսվում է անցում կատարել հավաստագրերի հիման վրա պրոթեզաորթոպեդիկ պարագաների տրամադրմանը, ինչը կտրուկ կբարելավվի հանրությանը մատուցվող ծառայությունների որակը:

Միաժամանակ, 2018 թվականի համար կատարվող գնման տեխնիկական բնութագրում սահմանվել է նաև քաղաքացու դիմումը և անձնական քարտը Պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների տեղեկատվական համակարգ ներառելու պահանջ:

**3. Պլանավորման գործընթացում քանակական, որակական և գնային պլանավորման համար վերլուծություններ կատարելու հետ կապված**

Պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների քանակական պլանավորումը կատարվում է՝ հաշվի առնելով նախորդ տարիների միտումները և այն հանգամանքը, որ պրոթեզաօրթոպեդիկ պարագաները տրամադրվում են ժամկետով:

Խնդրո առարկա քանակական կանխատեսումները կատարվում են թե միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում, թե յուրաքանչյուր տարվա բյուջետային հայտի շրջանակներում, յուրաքանչյուր դեպքով մանրամասն քննարկելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որը անընդհատ ենթակա է ընթացիկ ճշգրտումների:

Օրինակ 2016 թվականին ապրիլյան քառօրյա պատերազմի հետևանքով առաջացավ ավելի շատ սրունքի պրոթեզի կարիք, քան նախատեսված էր 2016 թվականի գնման հայտով, որը սակայն հնարավոր չէր կանխատեսել:

Ընդ որում, այս առումով, քանակական պլանավորման կարողությունները էապես բարելավվել են Պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների տեղեկատվական համակարգի ներդրման արդյունքում:

Բացի այդ, ըստ անհրաժեշտության ծառայություն մատուցող կազմակերպությունները հերթագրում և նախարարություն են ներկայացնում ծառայություն ստանալու համար դիմած, սակայն քանակների սպառման պատճառով ծառայություն չստացած անձանց ցուցակները, որը ևս հնարավորություն է տալիս ըստ անհրաժեշտության կատարել ճգրտումներ:

**Միաժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատրաստակամ է քննարկելու քանակական կանխատեսումների ավելի արդյունավետմեխանիզմներին վերաբերող ցանկացած առաջարկություն:**

Որակական պլանավորման կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ պարագաների տեխնիկանան բնութագրերը քննարկվում են ինչպես վերականգնողաբանների, օրթեզիստների, պրոթեզիստների, ՀՀ ԲՍՓ գործակալության բժիշկ փորձագետների, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության մասնագետների և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկումներ են տեղի ունեցել «Ունիսոն», «Լիարժեք Կյանք», «Հայ Մայրեր»,«Հույսի Կամուրջ» «Հայաստանի կույերերի միավորում» և այլ ՀԿ-ների հետ, ինչի արդյունքում ավելացել են նոր պարագաներ, հստակեցվել են պարագաների տեսականին և դրանց քանակական ու որակական ցուցանիշները:

Ինչ վերաբերում է գնային վերլուծությանը, ապա այստեղ հարկ է տարբերակել պրոթեզներն ու այլ պարագաները:

Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է վերևում, պրոթեզների տրամադրման շուկայում գործում են 2 հիմնական կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրը տրամադրում է որոշակի տեսակի պրոթեզներ:

Այսինքն, ըստ էության երկրում բացակայում է պրոթեզի գնի վերաբերյալ այլընտրանքային աղբյուրները, հետևաբար՝ արդյունավետ ուսումնասիրություն կատարելու հնարավորությունները:

Այսպիսի պայմաններում նախարարությունն առաջնորդվել է պետական գնումների մասին օրենսդրությամբ և հիմք է ընդունել մրցույթի ընթացքում առաջացած գները:

Ընդ որում, վերջին տարիներին տեղի է ունեցել նաև գների նվազեցում:

Այլ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների դեպքում ըստ էության բացակայում է վերը նշված խնդիրը, քանի որ ըստ էության կա շուկա:

2016 թվականի ընթացում նախարարության պատասխանատու ստորաբաժանումների հետևողական աշխատանքների արդյունքում իրականացվել են լուրջ ուսումնասիրություններ, որոնց ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում չընդգրկված կազմակերպությունների նեղ մասնագետներ, ովքեր մասնագիտական աջակցություն

են տրամադրել նախարարությանը անվճարԿատարված աշխատանքների արդյունքում վերը նշված 2 տեխնիկական բնութագրերում (օրթեզների մասով) կատարվել են հստակեցման, հղկման, միասնականացման աշխատանքներ և գնագոյացման ուսումնասիրություններ: Այս գործընթացների արդյունքում հնարավոր է եղել ձևավորել մրցակցային դաշտ և օրթեզների պատրաստման ծառայությունների գնման գործընթացին մասնակցել են նաև այլ կազմակերպություններ, ինչ արդյունքում արձանագրվել են զգալի տնտեսումներ:

Մասնավորապես, եթե 2016 թվականին ՀՀ պետական բյուջեով օրթեզների տրամադրման համար հատկացվել է շուրջ 57,8 մլն դրամ, ապա 2017 թվականին՝ 43,2 մլն դրամ:

2017 թվականի ընթացքում արդեն աշխատանքներ իրականացվեցին նաև պրոթեզների և մյուս վերակագնողական պարագաների տեխնիկական բնութագրերի հստակեցման, հղկման և միասնականացման ուղղությամբ, նպատակ ունենալով ձևավորել մրցակցային դաշտ: Կատարված հետևողական աշխատանքների արդյունքում կազմակերպվել են 2018 թվականի կարիքների համար իրականացվող գնման մրցույթները, որտեղ արդեն պրոթեզների և մյուս վերակագնողական պարագաների մասով առկա է մրցակցություն:

Գների ուսումնասիրության և տեխնիկական բնութագրերի կատարելագործման աշխատանքները ունեն շարունակական բնույթ և գտնվում են նախարարության ուշադրության կենտրոնում:

**4. 2016 թվականի կարիքների համար կազմակերպված գնումների վերաբերյալ փաստաթղթերի հետ կապված**

Տեղեկացնում եմ, որ 2016 թվականի կարիքների համար «Հաշմանդամներին պրոթեզաօրթպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» և «Հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով ապահովում» ծրագրերով պահանջվող՝ գնման գործընթացին առընչվող փաստաթղթերի փաթեթը հնարավոր է եղել վերցնել armeps.am պաշտոնական կայքից գնումների բաժնի նախկին պետի օգնությամբ: Փաթեթը ներկայացվում է սույն առարկությանը կից:

**5. Պրոթեզի ընտրության ընթացակարգերի հետ կապված**

Ինչպես նշվեց, անձն ինքն է ընտրել, թե որ տեխնոլոգիայով արտադրված պրոթեզն է ինքը ուզում ստանալ՝ կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում այն հանգամանքից, թե որ կազմակերպությունն է իրականացրել նրա առաջնակի պրոթեզավորումը:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ շահառուի տեսանկյունից որքան խնդրահարույց է նախկինում տված պրոթեզի փոխարեն ավելի քիչ ֆունկցիոնալ հնրավորություններով օժտված պրոթեզ տրամադրելը, այնպես էլ նախկինում տված պրոթեզի փոխարեն ավելի շատ ֆունկցիոնալ հնրավորություններով օժտված պրոթեզ տրամադրելը:

Ըստ այդմ, որևէ իմպերատիվ միջամտություն այստեղ անթույլատրելի է:

Միաժամանակ, հնարավոր ռիսկերը կառավարելու նպատակով 2018 թվականի տեխնիկական բնութագրում հնարավորինս հստակեցվել է անձին պրոթեզի այս կամ այն տեսակը տրամադրելու հարցը առաջնակի պրոթեզավորման դեպքում: Իսկ նախկինում պրոթեզավորված անձանց դեպքում ընտրությունը կատարվում է, հաշվի առնելով նախորդիվ ստացած պրոթեզը:

Առաջիկայում նախատեսվում է անցում կատարել նաև հավաստագրման համակարգի:Մասնավորապես, նախատեսվում է պահպանել գործող մոտեցումը, որտեղ անձն ինքը կընտրի ծառայություն մատուցող կազմակերպությանը, ինչն էլ իր հերթին կստեղծի առողջ մրցակցային դաշտ:

**6. Պրոթեզների երաշխիքային և օգտագործման ժամկետների հետ կապված**

Պրոթեզների երաշխիքային և օգտագործման ժամկետները սահմանվել են՝ հաշվի առնելով միջազգային փորձը և առկա բյուջետային սահմանափակումները:

Մասնավորապես, լայնորեն կիրառվել է ռուսական փորձը և ռուսական գիտահետազոտական ինստիտուտների մեթոդական ուղեցույցներն ու խորհրդատվական նյութերը:

**7. Տեխնիկական բնութագրերի հստակության մասին**

Մինչև 2017 թվականը գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, **բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը**:»:

Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի եղել հստակ բնութագրել գնման առարկան՝ տեխնիկական բնութագրում հղում է կատարվել ֆիրմային անվանմանը՝ կիրառելով **«կամ համարժեք» բառերը, ինչը համապատասխանել է գործող օրենքին:**

# 2.11 ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | Վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/3 որոշումը |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրություն: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարմանն ու օգտագործմանն ուղղված աշխատանքները, գործարքները ու ընթացակարգը: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:<br><br>Դիտարկման փուլում վերահսկվող օբյեկտից պահանջվել և ստացվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ Վերահսկիչ պալատի տարեկան ծրագրով սահմանված թեմայի վերաբերյալ:<br><br>Ստուգման փուլում ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթերի ստուգման, ընթացակարգի և գործընթացի ուսումնասիրության, հարցման և հաշվարկման մեթոդները: Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապվածության և/կամ համեմատության վերլուծություն:<br><br>Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման մե- |

թոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տըվյալների ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել, ինչպես նաև վերլուծվել են վերահսկողության դիտարկման և ստուգման փուլերը:

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2016թ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) տարեկան ճշտված բյուջեն կազմել է 13,457,866.2 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 15,441,061.2 հազ. դրամ:

2016թ.-ին ՀՀ ԳՆ բյուջեի դրամարկղային ծախսը 1,983,195.0 հազ. դրամով գերազանցել է նույն թվականի տարեկան ճշտված բյուջեն: Շեղման հիմնական պատճառը «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (վարկային միջոցներ)» ծրագրերի ավել կատարողականն է:

2017թ.-ին ՀՀ ԳՆ տարեկան ճշտված բյուջեն կազմել է 10,692,219.6 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 9,228,786.4 հազ. դրամ: Շեղման հիմնական պատճառը «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (վարկային միջոցներ)», ինչպես նաև «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութի ձեռքբերման համար», «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրերի համար նախատեսված գումարների ոչ լրիվ օգտագործումն է:

2017թ.-ին դրամարկղային ծախսերը 2016թ.-ի համեմատ նվազել են ընդհանուր առմամբ 6,212,274.8 հազ. դրամի չափով: Նվազումը հիմնականում պայմանավորված է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության», «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութի ձեռքբերման համար», «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» ծրագրերի շրջանակներում դրամարկղային ծախսերի կրճատմամբ:

Գյուղատնտեսության նախարարության համակարգի առանձին ստորաբաժանումներին վերապահված գործառույթները և 2015-2017թթ. իրականացված գործունեությունը ներկայացված են Հավելված 1-ում:

## *ՀՀ հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ և ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ*

Ծրագրերի նկարագրություն՝

**«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ը ներկայացնում է հանրապետության պարարտանյութերի ընդհանուր անհրաժեշտ պահանջարկը**:

«ՀՀ հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ» ծրագրի հիմնական նպատակն է հողերի ագրոքիմիական քարտեզագրման միջոցով բերրիության փոփոխությունների բացահայտումն ու դրա վատթարացումը կանխելու ուղղությամբ միջոցառումների իրականացումը: Ծրագրի հիմնական խնդիրը համայնքներում ագրոքիմիական քարտեզներում նշված չափաքանակներին համապատասխան պարարտանյութերով պարարտացման իրականացումն է, որի արդյունքում զգալիորեն կբարձրանա պարարտանյութերի օգտագործման արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ը, պետական բյուջեից ֆինանսավորմամբ (2015թ.-ին՝ 70,186 հազ. դրամ, 2016թ.-ին՝ 71,310 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 64,229 հազ. դրամ) յուրաքանչյուր տարի հետազոտում է հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 20 տոկոսը (170 համայնքի հողատարածքներ) և նախորդ 4 տարիներից մնացած 80 տոկոսի (682 համայնքների հողատարածքներ) հետազոտությունների արդյունքների հետ մեկտեղ ներկայացնում հանրապետության պարարտանյութերի ընդհանուր անհրաժեշտ պահանջարկը:

ՀՀ մարզերում 2016-2017թթ.-երի համար անհրաժեշտ պարարտանյութերի պահանջարկի վերաբերյալ ՊՈԱԿ-ի կողմից կատարված վերլուծության համաձայն՝ 2016թ.-ին ազոտական պարարտանյութի պահանջարկը կազմել է 98.5 հազ. տոննա, ֆոսֆորականինը՝ 88.8 հազ. տոննա, կալիումականինը՝ 37.1 հազ. տոննա, իսկ 2017թ.-ին՝ ազոտականինը՝ 99.7 հազ. տոննա, ֆոսֆորականինը՝ 89.4 հազ. տոննա, կալիումականինը՝ 37.6 հազ. տոննա: Առանձին համայնքներում պարարտանյութերի պահանջարկը ներկայացվել է մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերում և մինչև տվյալ տարվա ավարտը համապատասխան ակտերով հանձնվել է համայնքների

ղեկավարներին (հարկ է նշել, որ ԳՆ-ին ներկայացնելու պահանջը բացակայում է Ծրագրում, ինչպես նաև ԳՆ-ի հետ կնքած պայմանագրերում, սակայն անհրաժեշտության դեպքում, ԳՆ-ի պահանջով, վերը նշված տեղեկատվությունը տրամադրվում է նաև ԳՆ-ին):

Վերը նշված ծրագրի իրականացման հետ միաժամանակ, ՀՀ ԳՆ-ն իրականացնում է «ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման համար պետական աջակցության» ծրագիրը, որի նպատակը ՀՀ մարզերի հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերը մատչելի գնով ձեռք բերելու հարցում աջակցելն ու հողերի արդյունավետ օգտագործման և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների, ստացվող եկամուտների բարձրացմանը նպաստելն է:

**Ձեռք բերված պարարտանյութերի քանակն ունի էական շեղում «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի ներկայացված պարարտանյութերի անհրաժեշտ պահանջարկից**

Այս ծրագրի շրջանակներում ձեռք բերված պարարտանյութերի քանակը 2016թ.-ին կազմել է՝ ազոտական՝ 32,000 տոննա, ֆոսֆորական՝ 320 տոննա, կալիումական՝ 840 տոննա, 2017թ.-ին՝ ազոտական՝ 25,545 տոննա, կալիումական՝ 340 տոննա, ինչն էական շեղում ունի «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետազոտության արդյունքներում ներկայացված պարարտանյութերի անհրաժեշտ պահանջարկից:

Ծրագրով հողօգտագործողներին մեկ հեկտարի համար տրամադրվում է 300 կգ ազոտական պարարտանյութ, մեկ հողօգտագործողին առավելագույնը մեկ տոննա չափով, իսկ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի քանակության սահմանափակում չկա: Արդյունքում, մեկ գյուղացուն տրամադրվող ազոտական պարարտանյութի սուբսիդավորման տարեկան առավելագույն գումարը կազմում է 20.0 հազ դրամ:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի շրջանակներում 2016թ.-ի համար «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորման հետ 22.01.2016թ.-ին կնքվել են 1,746,944.0 հազ. դրամ արժողությամբ պարարտանյութերի գների սուբսիդավորման, իսկ 12.03.2016թ.՝ 200,000.0 հազ. դրամ արժողությամբ պարարտանյութերի բեռնման, փոխադրման

իրականացման համար հատկացվող դրամաշնորհի պայմանագրեր: Համաձայն պայմանագրերի, *32,000 տոննա ազոտական պարարտանյութից* յուրաքանչյուր կիլոգրամի համար սուբսիդավորվել է 54.6 դրամը և մատակարարը պարտավորվել է 50 կիլոգրամանոց ազոտական պարարտանյութի պարկը գնորդին վաճառել և մատակարարել 6 հազ. դրամ արժեքով:

Նույն ծրագրի շրջանակներում ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռք բերման համար սուբսիդիայի և դրամաշնորհի պայմանագրեր են կնքվել «Հրաշք Այգի» ՍՊԸ–ի հետ: 29.01.2016թ.-ին կնքվել են 157,327.2 հազ. դրամ արժողությամբ պարարտանյութերի գների սուբսիդավորման, իսկ 24.03.2016թ.-ին՝ 7,250.0 հազ. դրամ արժողությամբ պարարտանյութերի բեռնման, փոխադրման իրականացման համար հատկացվող դրամաշնորհի պայմանագրեր: Համաձայն պայմանագրերի, *320 տոննա ֆոսֆորական և 840 տոննա կալիումական պարարտանյութերի* յուրաքանչյուր կիլոգրամի համար սուբսիդավորվել է 135.6 դրամ և մատակարարը պարտավորվել է 50 կիլոգրամանոց ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի պարկերը գնորդին վաճառել և մատակարարել յուրաքանչյուրը 7 հազ. դրամ արժեքով:

Ծրագրով 2017թ.-ի ընթացքում նախատեսվել է 31,937 տոննա ազոտական, 479.25 տոննա ֆոսֆորական, 343 տոննա կալիումական պարարտանյութերի սուբսիդավորում և բաշխում:

**Կնքված պայմանագրերի վերաբերյալ**

Ազոտական պարարտանյութի ձեռք բերման համար կնքվել են 2 սուբսիդավորման պայմանագրեր՝ «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորման հետ 244,661.7 հազ. դրամով՝ 14,841.5 տոննա պարարտանյութի համար և «Տորգովիյ Դոմ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի հետ՝ 341,927.0 հազ. դրամով՝ 17,096.35 տոննա պարարտանյութի համար:

2017թ.-ի ընթացքում «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորման կողմից փաստացի ներկրվել է 237,901.0 հազ. դրամ արժողությամբ՝ 13,849.2 տոննա պարարտանյութ (յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց սուբսիդավորման չափը միջինում կազմել է 17.2 դրամ), իսկ «Տորգովիյ դոմ« Դոնսկոյ Ագրոխիմ ցենտր» ՍՊԸ-ի կողմից ներկրվել է 233,910.0 հազ. դրամ արժողությամբ 11,695.8 տոնա պարարտանյութ (յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց սուբսիդավորման չափը կազմել է 20 դրամ): Մատակարարները պարտավորվել են 50 կիլոգրամանոց ազոտական պարարտանյութի պարկը գնորդին վաճառել և մատակարարել 6 հազ. դրամով:

2017թ.-ի ընթացքում կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ձեռք բերման համար կնքվել է մեկ սուբսիդավորման պայմանագիր՝ «Տորգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի հետ՝ 86,707.0 հազ. դրամի չափով, որի շրջանակներում պետք է ներկրվեր 479.25 տոննա ֆոսֆորական և 343.6 տոննա կալիումական պարարտանյութ: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թ.-ի մարտի 20-ի N 80-Ա հրամանով գյուղատնտեսության նախարարի 2017 թ.-ի փետրվարի 15-ի N 40-Ա հրամանում կատարվել է փոփոխություն և պարարտանյութերի համար հատկացված գումարները նախատեսվել է բաշխել հետևյալ համամասնությամբ՝ 59,906.2 հազ. դրամը՝ ֆոսֆորական և 26,800.8 հազ. դրամը՝ կալիումական պարարտանյութերի համար:

2017թ.-ի ընթացքում «Տորգովիյ Դոմ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի կողմից փաստացի ներկրվել է 26,520.0 հազ. դրամ արժողությամբ 340.0 տոննա կալիումական պարարտանյութ: Յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց սուբսիդավորման չափը կազմել է 78 դրամ և մատակարարը պարտավորվել է 50 կիլոգրամանոց ազոտական պարարտանյութի պարկը գնորդին վաճառել և մատակարարել 7 հազ. դրամ արժեքով:

ՀՀ կառավարության 2016թ.-ի թիվ 73-Ն որոշմամբ սահմանված է, որ ծրագրի շրջանակներում համայնքների ղեկավարները պարարտանյութեր գնել ցանկացող հողօգտագործողներից նախատեսված գնով գումարներ են հավաքագրում և փոխանցում մատակարարների բանկային հաշվեհամարներին՝ ՀՀ համապատասխան մարզպետի և մատակարարների միջև կնքված պայմանագրի համաձայն: Մատակարարները համայնքների հողօգտագործողներից փաստացի հավաքագրված գումարների դիմաց պարարտանյութերը մատակարարում են համապատասխան համայնքին՝ համայնքի ղեկավարի հետ կազմելով պարարտանյութերի հանձնման-ընդունման երկկողմանի հաստատված ակտ:

### Արձանագրված խախտումներ

- Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ պարարտանյութերի ծավալների մասով պահանջարկը գոյանում է հողօգտագործողների կողմից ներկայացված հայտերի հանրագումարով՝ առանց հաշվի առնելու «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Կարելի է եզրակացնել, որ ծրագիրը կրում է սոցիալական բնույթ և «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները հաշվի չեն առնվում: ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով անհրաժեշտ պարարտանյութերի ձեռք բերման գործում պետական

աջակցության ծրագրի արդյունավետությունը կապված է գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերում արտացոլված պարարտանյութերի պահանջարկի բավարարման ցուցանիշների, կամ դրանց համամասնությունների պահպանման հետ: Պարարտացման համամասնությունների չպահպանման արդյունքում՝ միայն ազոտականով կամ վերջինիս գերակշռմամբ, բույսերն ավելի շուտ են հիվանդանում, դժվարությամբ են տանում երաշտը, նվազում է ցրտադիմացկունությունը, պտուղների պահպանման ժամկետները:

- ԳՆ ենթակայության տակ գործող «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ տարածաշրջաններում ունեցած թվով 25 ագրոնոմները (01.01.2017թ.-ի դրությամբ) ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն իրենց վերապահված համապատասխան խորհրդատվական և վերահսկողական գործառույթը չեն իրականացնում:
- «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի շրջանակներում պատվիրատուի կողմից 2016 և 2017թթ. չի իրականացվել ապրանքի ձեռք բերման և տեղափոխման ծախսերի շուկայական գների ուսումնասիրություն և չի կազմվել համապատասխան նախահաշիվ:
- 2016թ.-ի համար մարզերի հողօգտագործողների կողմից ներկայացվել է 32,000 տոննա ազոտական, 2,000 տոննա ֆոսֆորական և 1,531 տոննա կալիումական պարարտանյութի պահանջարկ: Տարվա ընթացքում գյուղացիական տնտեսություններին փաստացի բաշխվել է 31,650 տոննա ազոտական (հաշվի առնելով նախորդ տարվա մնացորդը), 574 տոննա ֆոսֆորական, 1,015 տոննա կալիումական պարարտանյութ: Հետևաբար, նախարարության կողմից չի իրականացվել համապատասխան մոնիթորինգ, ինչպես նաև չեն կիրառվել հսկողական մեխանիզմներ ծրագիրը լիարժեք իրականացնելու և նպատակային արդյունքին հասցնելու համար:
- 2016թ.-ին պարարտանյութերի մատակարարումը և վաճառքն իրականացվել է ողջ տարվա ընթացքում, սակայն սուբսիդավորման և տեղափոխման պայմանագրերը կազմվել են այնպես, որ ամբողջ գումարը մատակարարներին տրամադրվել է միանվագ՝ առաջին եռամսյակում, այլ ոչ թե փաստացի մատակարարումն իրականացվելուց հետո:
- ՀՀ կառավարության 2016թ.-ի N 73-Ն որոշմամբ, ինչպես նաև պայմանագրի 2.1.12 կետով նախատեսված է, որ չվաճառված ազոտական պարարտանյութի սուբսիդավորման և տեղափոխման դրամաշնորհի գումարները հետ է վերադարձվում ՀՀ պետական բյուջե: Չներկրված և չվաճառված մնացորդը կազմել է 2,944 տոննա, որի արժեքը՝ ներառյալ տեղափոխման ծախսերը, կազմել

է 179,128.0 հազ. դրամ: Նշված գումարը չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե, և միայն տվյալ բյուջետային տարվա ավարտից 45 օր հետո, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 15.02.2017թ.-ի N 40-Ա հրամանով մատակարարին հանձնարարվել է շարունակել ծրագիրը հաջորդ տարում և բաշխել մնացորդը, որը հետագայում հաստատվել է ՀՀ կառավարության 09.03.2017թ.-ի N 246-Ա որոշմամբ: Նշված անհատական ակտը հակասում է ՀՀ կառավարության 2016թ.-ի թիվ 73-Ն նորմատիվ իրավական ակտին: Հարկ է նշել, որ մատակարարի կողմից ԳՆ-ին ուղարկված գրությունների համաձայն (1 ՀՊ-32, 06.03.2017թ.), մնացորդ ապրանքը՝ 2,944 տոննայի չափով, 2016թ.-ի ընթացքում չի ներկրվել ՀՀ-ի տարածք:

- Չվաճառված 504.25 տոննա ֆոսֆորական և 559.45 տոննա կալիումական պարարտանյութի ընդհանուր արժեքը՝ ներառյալ տեղափոխման ծախսերը, կազմել են 148,266.3 հազ. դրամ: Գումարը կրկին չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե, այլ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 15.02.2017թ.-ի N 40-Ա հրամանով մատակարարին հանձնարարվել է շարունակել ծրագիրը հաջորդ տարում և բաշխել մնացորդ քանակությունը, որը հետագայում հաստատվել է ՀՀ կառավարության 09.03.2017թ.-ի N 246-Ա որոշմամբ: Նշված անհատական ակտը հակասում է ՀՀ կառավարության 2016թ.-ի թիվ 73-Ն նորմատիվ իրավական ակտին:
- 2016թ.-ի ընթացքում մատակարարների կողմից չեն պահպանվել կառավարության որոշմամբ սահմանված մատակարարման պայմանները՝ պարարտանյութերը տրամադրվել են մինչ փաստացի վճարումը, ինչի արդյունքում ձևավորվել են պարտավորություններ: Չնայած այդ հանգամանքին, Կառավարության 07.12.2017թ.-ին N 1585-Ն որոշմամբ դադարեցվել են 2015 և 2016 թվականներին ՀՀ համայնքներին պարարտանյութերի հատկացման արդյունքում «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ն և «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի հանդեպ ձևավորված ՀՀ համայնքների պարտավորությունները (165,255.3 հազ. դրամի ազոտական, ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութերի հատկացման դիմաց ձևավորված):
- 2016-2017թթ.-ին պարարտանյութերի սուբսիդավորման պայմանագրե-րի գները համեմատելիս ստացվում է, որ 2017թ.-ին ազոտական և կալիումական պարարտանյութերը ձեռք են բերվել ավելի ցածր գներով: 2017թ.-ին սուբսիդավորման գումարները մատակարարներին տրամադրվել են կատարողականների հիման վրա, այլ ոչ թե միանվագ:

## *ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի վերաբերյալ*

ՀՀ կառավարության 22.03.2007թ.-ի N 336-Ա որոշմամբ Ծրագրի բյուջեն կազմել է 19,350.0 մլն. դրամ, համաձայն որի, ՀՀ պետք է ներկրվեր 12,110 գլուխ երինջ՝ ապահովելով կաթի արտադրության ծավալների աճը և կաթնային տավարաբուծության զարգացումը: Ծրագրի ընթացքում նախատեսվում էր նաև ստանալ 8,800 էգ մատղաշ, որի արդյունքում կովերի **գլխաքանակը կդառնար 20,910:**

Ծրագրով նախատեսված էր տավարի նախրի որակական կազմի փոփոխություն՝ (շվից, հոլշտինյան, սիմենթալ ցեղերի հաշվին) ստանալով հետևյալ արդյունքները.

- ներկրված և ՀՀ-ում ստացված կենդանիների հաշվին գրեթե ամբողջությամբ վերափոխել Արարատյան հարթավայրի տավարի գլխաքանակը, որակական և ցեղային կազմը, 2-3 անգամ ավելացնել ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի կովերի կաթնատվությունը,
- տարեկան լրացուցիչ արտադրել գրեթե 8 հազ. տոննա տավարի միս,
- Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի յուրաքանչյուր տարվա ծավալների արժեքը պետք է ավելանա 17 մլրդ. դրամով, որից 11 մլրդ. դրամը՝ կաթի, 6 մլրդ. ՀՀ դրամը՝ մսի արտադրության հաշվին:

Տոհմային երինջները հատկացվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ՀՀ ԳՆ ներկայացված հայտի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա:

Ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրով ձեռք բերված երինջների դիմաց նախատեսվող տարաժամկետ վճարման ժամկետը չորս տարի է (առաջին տարում՝ 10, երկրորդում՝ 20, երրորդում՝ 30, չորրորդում՝ 40 տոկոս), որի ընթացքում վերջիններս պետք է վճարում իրականացնեն ՀՀ ՖՆ գանձապետական հատուկ հաշվին՝ մարելով ամբողջ պարտքը մինչև 2020թ.-ը[4]:

[4] Ծրագրով ի սկզբանե նախատեսված էր վճարումներն իրականացնել մինչև 2019թ.-ը, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015թ.-ին ձեռք բերված կենդանիներից որոշակի քանակություն ներմուծվել է 2016թ.–ին, վճարումների ժամկետը երկարացվել է մինչև 2020թ-ը:

## Արձանագրված խախտումներ

**1.** Տոհմային երինջների բաշխման և հատկացման փուլում առկա են թերացումներ: Մասնավորապես, մասամբ են հաշվի առնվել տոհմային երինջների պահպանման անասնաբուժասանիտարական և տեխնոլոգիական պայմանները, շահառուների ֆինանսական հնարավորությունները:

**2.** ՀՀ ԳՆ կողմից, Ծրագրի պատշաճ իրականացման համար, չեն կիրառվել համապատասխան հսկողական մեխանիզմներ, այն դեպքում, երբ շահառուների հետ կնքված պայմանագրերով հստակեցված են ինչպես ծրագրի արդյունավետության, այնպես էլ վերահսկողության վերաբերյալ դրույթները:

Մասնավորապես, պայմանագրի համաձայն, շահառուն վճարման պարտականությունների հետ մեկտեղ պարտավոր է իրեն հանձնված տոհմային կենդանիների համար ապահովել անասնաբուժական ծառայություն, խնամքի նպաստավոր անասնաբուժասանիտարական և հատուկ սննդակարգի պայմաններ, յուրաքանչյուր ամիս իրականացնել անասնաբուծական հաշվառում, կաթի ստուգիչ կիթեր, որակական ցուցանիշների ուսումնասիրություններ (կաթի անալիզ) և այդ տվյալները ներկայացնել ԳՆ, ինչպես նաև տարին մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն երինջների պահպանվածության, ելքերի, ստացված հորթերի և կաթնատվության ցուցանիշների վերաբերյալ (պայմանագրի 2.4.3,-ից 2.4.10 կետեր):

ԳՆ-ն իր հերթին իրավունք ուներ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե խախտվել են վճարման ժամկետները կամ/և չի ներկայացվել տարեկան հաշվետվությունը: Նշված իրավունքը չի կիրառվել ԳՆ-ի կողմից:

**Արդյունքում, ՀՀ ԳՆ-ին հայտնի չէ Ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրված տոհմային երինջների փաստացի և վերարտադրված քանակությունը, իսկ ծրագրի հիմքում դրված նպատակների իրագործման քանակական չափանիշները գնահատելի չեն:**

**3. 2015-2016թթ.-ին ընդհանուր առմամբ ներկրվել է 695 երինջ, ընդ որում՝**

- 2015թ.-ին ներկրված 311,263.4 հազ. դրամ արժողությամբ 256 երինջների դիմաց տնտեսվարող սուբյեկտների կողմից 2016-2017թթ. վճարման առաջին և երկրորդ փուլերում նախատեսված 93,379 հազ. դրամի փոխարեն 02.10.2017թ.-ի դրությամբ հավաքագրվել է ընդամենը 20,687.5 հազ. դրամ:

2015թ.-ին երինջներ ձեռք բերած տնտեսվարողների կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով 02.10.2017թ.-

ի դրությամբ գանձապետական հատուկ հաշվին պակաս է մուտքագրվել 76,641.0 հազ. դրամ, որից՝ ժամկետանց պարտավորությունը՝ 73,382.9 հազ. ՀՀ դրամ, տույժը՝ 3,258.1 հազ. դրամ:

**Ներկայացված տեղեկատվության համաձայն ժամկետանց պարտավորություններ ունեցող 11 շահառուների մոտ ծրագրով ձեռք բերված 227 գլուխ երինջից առկա է 56-ը, իսկ շուրջ 207,914.2 հազ. դրամ պայմանագրային ընդհանուր արժեքով 171 գլուխ երինջներն առկա չեն:**

- 2016թ.-ին ներկրված 495,033.4 հազ. դրամ արժողությամբ 439 երինջների դիմաց տնտեսվարող սուբյեկտների կողմից 2017թ.-ի առաջին փուլում վճարման ենթակա 49,503 հազ. դրամի փոխարեն 02.10.2017թ.-ի դրությամբ հավաքագրվել է ընդամենը 3,647 հազ. դրամ:

2016թ.-ին երինջներ ձեռք բերած տնտեսվարողների կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով 02.10.2017թ.-ի դրությամբ գանձապետական հատուկ հաշվին պակաս է մուտքագրվել 49,067.0 հազ. դրամ, որից՝ ժամկետանց պարտավորությունը՝ 46,114.7 հազ ՀՀ դրամ, տույժը՝ 2,952.3 հազ. դրամ:

**Ներկայացված տեղեկատվության համաձայն, ժամկետանց պարտավորություններ ունեցող 12 շահառուների մոտ ծրագրով ձեռք բերված 419 գլուխ երինջից առկա է 319-ը, իսկ շուրջ 112,806.8 հազ. դրամ պայմանագրային ընդհանուր արժեքով 100 գլուխ երինջներն առկա չեն (Հավելված 2):**

**4.** Ֆիզիկական անձ Ազատ Մխիթարյանը (գործունեության վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Բազմաղբյուր), 2015թ.-ին ձեռք է բերել 12,158,727 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 10 գլուխ երինջ: ՀՀ ԳՆ-ն, առանց ուսումնասիրելու այս շահառուի կողմից 2015թ.-ին ձեռք բերած երինջների պահպանման անասնաբուժասանիտարական և տեխնոլոգիական պայմանները, ստանձնած պարտավորությունների մարման ֆինանսական հնարավորությունները, ամսական կտրվածքով իրականացվող անասնաբուծական հաշվառման, ստուգիչ կիթերի, կաթի որակական ցուցանիշների ուսումնասիրությունների և ձեռք բերված երինջների առկայության տվյալները, 2016թ.-ին վերջինիս տրամադրել է 5,674,600 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ևս 5 գլուխ երինջ: Արդյունքում, երինջների ձեռք բերման 2016թ.-ի պայմանագրի կնքման օրվանից՝ 05.08.2016թ., մոտ մեկ ու կես ամիս հետո շահառուի մոտ 2015թ.-ին ձեռք բերած երինջների մասով առաջացել է 1,215,872.7 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություններ:

02.10.2017թ.-ի դրությամբ, 2015-2016թթ.-ին ձեռք բերած երինջների դիմաց ստանձնած վճարման պարտավորություններն ընդհանրապես չկատարելու հետևանքով, միայն մայր գումարի մասով ունեցած ընդհանուր ժամկետանց պարտավորությունը կազմում է 4,215,078.0 ՀՀ դրամ (2015թ.-ին ձեռք բերածի մասով՝ 3,647,618.1 ՀՀ դրամ, 2016թ.-ին ձեռք բերածի մասով՝ 567,460.0 ՀՀ դրամ), այն դեպքում, երբ 2015-2016թթ.-ին ձեռք բերված 15 գլուխ երինջները շահառուի մոտ առկա չեն:

**5.** Ֆիզիկական անձ Գագիկ Հակոբյանը, (գործ. վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Արարատ), 2016թ.-ին ձեռք է բերել 46,531,720 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 41 գլուխ երինջ, որի դիմաց ստանձնած վճարման պարտավորություններն ընդհանրապես չկատարելու հետևանքով 02.10.2017թ.-ի դրությամբ միայն մայր գումարի մասով ունի 4,653,172.0 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություն, այն պարագայում, որ ձեռք բերված 41 գլուխ երինջները շահառուի մոտ առկա չեն:

**6.** Իրավաբանական անձ «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ-ն, (գործ. վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Պանրագործների թաղ, անասնապահ. համալիր N1), 2016թ. ձեռք է բերել 171 գլուխ երինջ, որի դիմաց ստանձնած վճարման պարտավորություններն ընդհանրապես չկատարելու հետևանքով 02.10.2017թ.-ի դրությամբ միայն մայր գումարի մասով ունի 19,087,485.0 դրամի ժամկետանց պարտավորություն:

**7. 2015թ.-ի ժամկետանց պարտավորություններ ունեցող 11 շահառուներից 7-ի մոտ մայր գումարի ժամկետանց պարտավորությունը կազմում է 27,721.9 հազ. դրամ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս մոտ 76 գլուխ երինջից ոչ մի գլուխ առկա չէ, ապա որպես պարտավորություն պետք է հաշվել այդ երինջների մասով կնքված պայմանագրի ամբողջ գումարը, որը կազմում է 92,406.3 հազ. դրամ:**

**8. 2016թ.-ի ժամկետանց պարտավորություններ ունեցող 12 շահառուներից 2-ի մոտ մայր գումարի ժամկետանց պարտավորությունը կազմում է 5,220.6 հազ. դրամ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս մոտ 46 գլուխ երինջից ոչ մի գլուխ առկա չէ, ապա որպես պարտավորություն պետք է հաշվել այդ երինջների մասով կնքված պայմանագրի ամբողջ գումարը, որը կազմում 52,206.3 հազ. դրամ[5]:**

[5] Ստուգման արդյունքներն ամփոփվել են՝ հիմք ընդունելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 02.10.2017թ.-ի դրությամբ ներկայացված տեղեկատվությունը:

## *ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ՀՀ-ում 2016թ.-ի գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիր*

ՀՀ Կառավարության 04.02.2016թ. N74-Ն որոշմամբ հաստատվել է 2016թ.-ի գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը, համաձայն որի, «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ ՊՈԱԿ) թույլատրվել է հաստատված ծրագիրն իրականացնելու համար ՊՈԱԿ-ի նպատակային հաշիվներից օգտագործել 477,640.5 հազ. դրամ, որից՝

**«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին թույլատրվել է օգտագործել 477,640.5 հազ. դրամ**

- 469,388.0 հազ. դրամը՝ 1745 տոննա սերմացուներ ձեռք բերելու համար,
- 8,252.5 հազ. դրամը՝ սերմացուների բարձման, բեռնաթափման և այլ ծախսերի համար:

Նույն որոշմամբ թույլատրվել է լիազորել ՊՈԱԿ-ին.

ա) Ռուսաստանի Դաշնությունից ձեռք բերել 1457 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու և 188 տոննա կորնգանի սերմացուներ,

բ) «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից գնել 100 տոննա գարնանացան գարու էլիտային սերմացու:

ՀՀ-ում 2016թ.-ի գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրերի իրականացման համար փաստացի ծախսվել է ընդհանուր 477,288.8 հազ. դրամ, որից՝ 451,388.0 հազ. դրամը ՌԴ-ից ներկրված: 18,000.0 հազ. դրամը տեղական սերմարտադրողներից գնված սերմացուների արժեքն է, իսկ 7,900.8 հազ. դրամը ՊՈԱԿ-ի կատարած ծախսերն են (բարձման, բեռնաթափման, բեռնափոխադրման և այլ ծախսեր):

ՊՈԱԿ-ի և ՀՀ մարզպետարանների միջև կնքվել են սերմացուների տրամադրման և դրանց դիմաց վճարման պայմանագրեր:

Գնված սերմացուի մեկ կիլոգրամը 2016թ.-ին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հողօգտագործողներին հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով: ՀՀ կառավարության 05.02.2015թ.-ի N93-Ն և 04.02.2016թ.-ի N74-Ն որոշումների համաձայն պետության սուբսիդավորման չափը կազմել է. (Աղյուսակ 1)

**Աղյուսակ 1** հազ. դրամ

| Սերմացուի տեսակ | Քանակ | 1-կգ գին | | | Ընդամենը գումար | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ձեռք բերման | Հողօգտագործողին հատկացված | Սուբսիդավորման գումար | Սերմացուի ձեռք բերման գումար | Հողօգտագործողին հատկացված սերմացուի գումար | Պետության կողմից սուբսիդավորում |
| Գարնանացան գարի ՌԴ-ից | 1,457.0 | 244.0 | 130.0 | 114.0 | 355,508.0 | 189,410.0 | 166,098.0 |
| Գարնանացան գարի **էլիտային** /Գյումրի/ | 100.0 | 180.0 | 130.0 | 50.0 | 18,000.0 | 13,000.0 | 5,000.0 |
| Կորնգան ՌԴ-ից | 188.0 | 510.0 | 370.0 | 140.0 | 95,880.0 | 69,560.0 | 26,320.0 |
| Առվոյտ ՌԴ-ից | 32.3 | 2,695.0 | 1,500.0 | 1,195.0 | 86,929.9 | 48,384.0 | 38,545.9 |
| Ընդամենը | 1,777.3 | | | | 556,317.9 | 320,354.0 | 235,963.9 |

Համաձայն ՀՀ կառավարության 04.02.2016 թ.-ի N 74-Ն որոշման, ՀՀ մարզերին 2016թ.-ի գարնանը տրամադրվել է 1557 տոննա գարնանացան գարու, 32.256 տոննա առվոյտի (2015թ.-ի մնացորդ) և 188 տոննա կորնգանի սերմացուներ: Տարեվերջի չիրացված մնացորդը կազմել է՝ 13.75 տոննա գարի՝ 3,355.0 հազ. դրամ (13.75 x 244.0 հազ. դրամ) գումարով և 7.511 տոննա առվոյտ՝ 20,242.1 հազ. դրամ (7.511 x 2,695.0 հազ. դրամ), ընդամենը՝ 23,597.1 հազ. դրամ (3,355.0 հազ. դրամ + 20,242.1 հազ. դրամ): Վերը նշված չիրացված սերմացուները, համաձայն ՀՀ կառավարության 10.11.2016թ.-ի N1148-Ն որոշման, պետք է պահեստավորվեին ՊՈԱԿ-ի պահեստում:

## Արձանագրված խախտումներ

- 2016թ.-ին ՊՈԱԿ-ը սեփական կամ վարձակալած պահեստ չի ունեցել, և սերմացուները պահվել են Բերրիություն ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում ՍՊԸ-ի պահեստներում, որի համար համապատասխան փաստաթղթավորում չի վարվել (պայմանագիր, ընդունման-հանձնման ակտ) **այսինքն խախտվել է N74-Ն որոշման պահանջը:**

- 2016թ.-ին ՀՀ մարզերին տրամադրված գարնանացան գարու, առվույտի և կորնգանի սերմացուների դիմաց վճարման ենթակա գումարը կազմել է 307,300.0 հազ. դրամ: Կառավարության որոշմամբ նախատեսվում էր սերմացուների բացթողումը մարզերում կատարել նախապես վճարելու պայմանով, սակայն, համաձայն ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկանքի, առ 27.11.2017 թ.-ի դրությամբ, վճարվել է ընդամենը 281,062.0 հազ. դրամ, պարտքը կազմում է 26,237.7 հազ. դրամ: Փաստորեն խախտվել է ՀՀ կառավարության 04.02.2016թ.-ի N 74-Ն որոշման 3-րդ մասի 20-րդ կետի նախապես վճարելու պահանջը: ՀՀ կառավարության 04.02.2016թ.-ի N 74-Ն որոշման համաձայն 10 մարզերից 5-ում բաշխումն իրականացվել է որոշման պահանջի խախտումով, որի արդյունքում գոյացել է **26,237.7 հազ. դրամի պարտք** (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2**

| h/h | Մարզը | Ընդամենը ենթակա է վճարման (ՀՀ դրամ) | Փաստացի վճարվել է (ՀՀ դրամ) | Պարտքը |
|---|---|---|---|---|
| 1 | Արագածոտն | 56,100,000 | 56,024,500 | 75,500 |
| 2 | Գեղարքունիք | 36,112,500 | 33,055,900 | 3,056,600 |
| 3 | Լոռի | 20,260,000 | 18,083,830 | 2,176,170 |
| 4 | Շիրակ, որից 100,0 տ Գյումրու ս/կ-ից | 84,914,000 | 82,605,000 | 2,309,000 |
| 5 | Սյունիք | 50,300,000 | 31,679,550 | 18,620,450 |
| **Ընդամենը** | | **247,686,500** | **221,448,780** | **26,237,720** |

### Գնման գործընթաց

**2016թ.-ին իրականացված «Գարնանացան գարու և կորնգանի սերմացուների» ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԳՆ-ՍԳ-ԲԸԱՀԱՊՁԲ16/01 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնման ընթացակարգ:**

2. Պատվիրատուի մոտ գնման գործընթացի նախապատրաստական և պայմանագրի կնքման փուլերում առկա է գործընթացների ժամանակագրական

անհամապատասխանություն: Գնումների պլանը հաստատվել է 22.01.2016թ.-ին և հրապարակվել, պատասխանատու ստորաբաժանում ձևավորելու հրամանը տրվել է 18.01.2016թ.-ին, գնահատող հանձնաժողովի 1-ին նիստը տեղի է ունեցել 20.01.2016թ.-ին, գնահատող հանձնաժողով ձևավորելու հրամանը տրվել է 25.01.2016թ.-ին: Հետևաբար, խախտվել են Որոշման կարգի 22-րդ, 35-րդ, 40-րդ կետերը:

Գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, ըստ որի էլ կազմվել է գնումների պլանը: Գնումների պլանում գնման առարկայի միավորի գները առկա չեն: **Խախտվել են Որոշման 19-րդ կետի պահանջները:**

3. Գնման գործընթացի ֆինանսավորման հիմք է հանդիսացել 2016թ.-ի փետրվարի 4-ի ՀՀ կառավարության N 74-Ն որոշումը, որտեղ գնման ձևի մասով չկա որևէ ձևակերպում, ուստի, Պատվիրատուն պետք է գնման գործընթացը կազմակերպեր գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգով: Պատվիրատուն գնման գործընթացը սկսել է նախքան նշված որոշման հաստատումը և այն կազմակերպել է բանակցային ընթացակարգով՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգով, որպես կարիքի հրատապ բավարարում, որը համապատասխանում է Որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի գ) պարբերությանը: **Խախտված են գնման ընթացակարգի ընտրության և կիրառման պայմանները:**

4. Գնման գործընթացի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն տեղեկագրում՝ www.old.gnumner.am կայքում հրապարկված չէ: **Խախտված են Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:**

5. Նախահաշվային գները չեն երևում Պատվիրատուի ոչ մի փաստաթղթում: Դրանք բացակայում են գնումների պլանում և կնքված պայմանագրի հայտարարության մեջ:

---

***ՀՀ-ում 2017թ.-ի գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիր***

---

**«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին թույլատրվել է օգտագործել 612,779.1 հազ. դրամ**

ՀՀ Կառավարության 09.03.2017թ.-ի N 216-Ն որոշմամբ հաստատվել է 2017թ.-ի գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը, համաձայն որի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարին՝ թույլատրել ՊՈԱԿ-ին սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրն իրականացնելու համար ՊՈԱԿ-ի նպատակային հաշիվներից օգտագործել 612,779.1 հազ. դրամ, որից՝

- 587,082.5 հազ. դրամ ՝ 1710 տոննա սերմացուներ ձեռք բերելու համար,
- 25,696.6 հազ. դրամը՝ բեռնաթափման, բարձման, համայնքներ տեղափոխման, գործուղման և այլ ծախսերի համար:

Նույն որոշմամբ թույլատրվել է լիազորել ՊՈԱԿ-ին՝

ա) Արտերկրից ձեռք բերել 1480 տոննա գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի առաջին վերարտադրության սերմացուներ:

բ) «Գնումների մասին» սահմանված ընթացակարգով «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից գնել 230 տոննա գարնանացան գարու էլիտային սերմացու:

Նույն որոշմամբ պետք է իրականացվեր ՀՀ մարզպետարանների կողմից 2015 և 2016 թթ.-երի գարնանացանի համար ներկրված, սակայն հողօգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված և ՊՈԱԿ-ի կողմից պահեստավորված 13.75 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու և 7.511 տոննա առվույտի սերմացուի բաշխումը:

2017թ.-ի գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի իրականացման համար փաստացի ծախսվել է ընդհանուր 610,366.7 հազ. դրամ, որից՝ 547,980.0 հազ. դրամը ՌԴ-ից ներկրված, 39,100.0 հազ. դրամը տեղական սերմարտադրողներից գնված սերմացուների արժեքն է, իսկ 23,286.7 հազ. դրամը՝ ՊՈԱԿ-ի կատարած ծախսերն են (բարձման, բեռնաթափման, բեռնափոխադրման և այլ ծախսեր):

ՀՀ կառավարության N 216-Ն որոշումը հաստատվել է 09.03.2017թ.-ին և ուժի մեջ մտել 10.03.2017թ.-ին: ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն, որի հետ

կնքվել է պայմանագիր 07.03.2017թ.-ին, այսինքն, ավելի վաղ, քան ընդունվել է որոշումը, իսկ այնուհետև՝ 14.03.2017թ.-ին կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, համաձայն կառավարության որոշման չափաքանակների:

Գնված սերմացուի մեկ կիլոգրամը 2017թ.-ին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հողօգտագործողներին հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով: ՀՀ կառավարության 09.03.2017թ.-ի N216-Ն որոշման համաձայն պետության սուբսիդավորման չափը կազմել է. (Աղյուսակ 3)

**Աղյուսակ 3**
հազ. դրամ

| Սերմացուի տեսակ | Քանակ | 1 կգ գին | | | Ընդամենը գումար | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ձեռք բերման | Հողօգտագործողին հատկացված | Սուբսիդավորման գումար | Սերմացուի ձեռք բերման գումար | Հողօգտագործողին հատկացված սերմացուի գումար | Պետության կողմից սուբսիդավորում |
| Գարնանացան գարի ՌԴ-ից | 1,000 | 290.0 | 130.0 | 160.0 | 290,000.0 | 130,000.0 | 160,000.0 |
| Գարնանացան գարի **էլիտային** /Գյումրի/ | 230 | 170.0 | 130.0 | 40.0 | 39,100.0 | 29,900.0 | 9,200.0 |
| Գարնանացան ցորեն | 200 | 290.0 | 150.0 | 140.0 | 58,000.0 | 30,000.0 | 28,000.0 |
| Հնդկացորեն | 13 | 850.0 | 500.0 | 350.0 | 11,050.0 | 6,500.0 | 4,550.0 |
| Ոլոռ | 7 | 640.0 | 300.0 | 340.0 | 4,480.0 | 2,100.0 | 2,380.0 |
| Սիսեռ | 5 | 1,150.0 | 500.0 | 650.0 | 5,750.0 | 2,500.0 | 3,250.0 |
| Եգիպտացորեն | 5 | 900.0 | 350.0 | 550.0 | 4,500.0 | 1,750.0 | 2,750.0 |
| Առվույտ | 10 | 2,300.0 | 1,500.0 | 800.0 | 23,000.0 | 15,000.0 | 8,000.0 |
| Կորնգան | 240 | 630.0 | 370.0 | 260.0 | 151,200.0 | 88,800.0 | 62,400.0 |
| **Ընդամենը** | **1,710** | | | | **587,080.0** | **306,550.0** | **280,530.0** |

ՀՀ կառավարության 09.03.2017թ.-ի N 216-Ն որոշմամբ նախատեսվել էր ՀՀ մարզերին տրամադրել 2017թ.-ի ձեռք բերված սերմացուները (համաձայն աղյուսակ 4-ի), ինչպես նաև 2015-2016թթ.-ի 13.75 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու և 7.511 տոննա առվույտի մնացորդը: Ընդ որում, բաշխված 489.83 տոննա գարնանացան գարուց 7 տոննան ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի համաձայնության հիման վրա անվճար տրամադրվել է Գեղարքունիքի մարզի Թթուջուր համայնքին:

Համաձայն ՀՀ կառավարության 09.03.2017թ.-ի N 216-Ն որոշման, ՀՀ մարզերի համար նախատեսված, սակայն հողօգտագործողների կողմից

վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուների հետագա պահպանության և դրանց իրացման աշխատանքների պատասխանատվությունը վերապահվում է ՊՈԱԿ-ին՝ 2018 թվականի գարնանը հողօգտագործողներին սույն ծրագրի դրույթներին համապատասխան հատկացնելու նպատակով:

### Արձանագրված խախտումներ

- Սխալ պլանավորման արդյունքում 2017թ.-ի գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի իրականացման նպատակով ձեռք բերված 587,080.0 հազ. դրամ արժեքով 1710 տոննա սերմացուներից 2017թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է 889.3 տոննա 346,216.9 հազ. դրամ արժեքով, կամ ձեռք բերված սերմացուների արժեքի 59%-ը: Բաշխումից հետո չիրացված սերմացուները ներկայացվում է Աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4**

| Սերմացուի տեսակ | Սերմացուի քանակ | | | Մնացորդի գումարը |
|---|---|---|---|---|
| | Բաշխման ենթակա (տոննա) | Փաստացի բաշխված (տոննա) | Մնացորդը (տոննա) | Սերմացուի ձեռք բերման գումարով (հազ. դրամ) |
| Գարնանացան գարի | 1,013.75 | 489.83 | 523.92 | 151,935.6 |
| Գարնանացան ցորեն | 200.0 | 89.01 | 110.99 | 32,188.0 |
| Հնդկացորեն | 13.0 | 1.78 | 11.22 | 9,537.0 |
| Ոլոռ | 7.0 | 7.00 | 0.00 | 0.0 |
| Սիսեռ | 5.0 | 3.45 | 1.56 | 1,788.3 |
| Եգիպտացորեն | 5.0 | 2.42 | 2.58 | 2,319.3 |
| Առվույտ | 17.5 | 5.10 | 12.40 | 28,510.8 |
| Կորնգան | 240.0 | 63.02 | 176.979 | 111,496.8 |
| Գարնանացան գարի էլիտային /Գյումրի/ | 230.0 | 180.35 | 49.65 | 8,441.2 |
| **Ընդամենը** | **1,731.25** | **841.96** | **889.29** | **346,216.9** |

### Գնման գործընթաց.

2017 թ.-ին իրականացված «գարնանացան գարու և կորնգանի սերմացուների» ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԳՆ-ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ 17/02 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

1. ընթացակարգում առկա է գնման գործընթացի նախապատրաստական և պայմանագրի կնքման գործընթացների ժամանակագրական անհամապատասխանություն (հիմքը նույն 2016թ.-ի գնման գործընթացի դեպքի համար):

- Գնումների պլանը հաստատվել է 20.02.2017թ.-ին և հրապարակվել:
- Պատասխանատու ստորաբաժանում ձևավորելու հրամանը տրվել է 17.02.2017թ.-ին:
- Գնահատող հանձնաժողովի 1-ին նիստը տեղի է ունեցել 17.02.2017թ.-ին:
- Գնահատող հանձնաժողով ձևավորելու հրամանը տրվել է 20.02.2017թ.-ին:

2. Գնման գործընթացի ֆինանսավորման հիմք է հանդիսացել 2017թ.-ի մարտի 9-ի ՀՀ կառավարության N 216-Ն որոշումը, որտեղ գնման ձևի մասով չկա որևէ ձևակերպում, ուստի, Պատվիրատուն պետք է գնման գործընթացը կազմակերպեր գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգով: Պատվիրատուն գնման գործընթացը սկսել է նախքան նշված որոշման հաստատումը և այն կազմակերպել որպես բանակցային ընթացակարգ՝ գնման հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգով, որպես կարիքի հրատապ բավարարում:

3. Տվյալ գնման ընթացակարգի հրավերով, ինչպես նաև տեղեկագրում հրապարակվել է, որ հայտերի բացումը տեղի է ունենալու հրավերի հրապարակման օրվանից (21.02.2017թ.-ին) հաշված 7-րդ աշխատանքային օրը, այն է 02.03.2017թ.-ի, ժամը 12:00-ին: Սակայն հայտերի բացման նիստի արձանագրության մեջ նշված է, որ հայտերի բացման նիստը կայացել է 06.03.2017թ.-ին: Խախտված են Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

4. Տվյալ ընթացակարգը բաղկացած է եղել 25 չափաբաժիններից: 23-րդ և 25-րդ չափաբաժիններով գնային առաջարկներ չեն ներկայացվել և այդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը պետք է հայտարարվեր չկայացած: Սակայն այդ մասին հայտերի բացման նիստի արձանագրության մեջ նշված չէ, ինչպես նաև, չկա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն տեղեկագրում:

- Խախտվել են Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջները:
- Խախտվել են Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

5. 2017թ.-ին կազմակերպված գնման ընթացակարգի «Դանսկի Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության գնային առաջարկում առկա է կասկածելի բացվածք:

Համաձայն Որոշման 35-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը»: Վերը նշված մասնակցի գնային առաջարկում առկա է ինքնարժեքի և շահույթի հսկայական և անհասկանալի տարբերություն: Մասնակիցը գնային առաջարկ է ներկայացրել թվով 23 չափաբաժինների համար և բոլոր չափաբաժիններում առկա է մոտավոր հետևյալ բացվածքը՝

Օրինակ, 1-ին չափաբաժնում, որտեղ գնման առարկա է հանդիսացել գարնանացան գարու սերմեր, քանակը 120 տոննա, մասնակցի ներկայացրած գնային առաջարկն ունի հետևյալ բացվածքը՝ ինքնարժեք 120 ՀՀ դրամ, շահույթ՝ 38,759.88 հազ դրամ, ԱԱՀ՝ չկա, ընդհանուր գումարը՝ 38,760.0 հազ. դրամ:

Բոլոր 23 չափաբաժիններով գնային առաջարկը ներկայացված է նույն սկզբունքով:

**2016-2017թթ.-ին սերմերի ձեռք բերման գնման ընթացակարգերի վերաբերյալ**

1. 2016-2017թթ.-ի սերմերի ձեռք բերման, գնման ընթացակարգերի փաստաթղթերի փաթեթների իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կազմակերպված գնման ընթացակարգերում **չեն կիրառվել** գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և պարտադիր կիրառման ենթակա հետևյալ փաստաթղթերը.

- Բացակայել է ՀՀ կառավարության 10.02.2011թ.-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետով սահմանված **գնման հայտը:**

Քանի որ նշված կետը չի կիրառվել, ուստի չկա նաև շուկայի ուսումնասիրություն իրականացված լինելու կամ նախահաշվային գնի որոշման վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Որոշման կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի (անձանց) կողմից հաստատված հայտարարությունն այն մասին, որ իր

մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակիցներ:

Որոշման կարգի 13-րդ կետով սահմանված՝ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հաստատված հայտարարությունն այն մասին, որ իր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակիցներ:

Որոշման կարգի 49-րդ կետով սահմանված գնահատման թերթիկներ:

22.12.2010թ.-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով սահմանված գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի արձանագրությունը:

2016-2017թթ.-ին Պատվիրատուի կողմից շուկայական գինը չուսումնասիրելու, ինչպես նաև նախահաշվային գին չկազմելու արդյունքում պայմանագրով փաստացի վճարված գումարի և շուկայական գնի մեջ առկա է տարբերություն: Շուկայական գնի բարձր լինելը փաստում է նաև այն, որ տեղական արտադրողի վաճառքի գները զգալիորեն ցածր են ՌԴ-ից ձեռք բերված սերմացուների գներից:

Ընդ որում, պետության կողմից 2017թ.-ին ՌԴ-ից ձեռք բերված ապրանքների 49.5% սուբսիդավորումից հետո սերմացուի 55.9%-ը չի իրացվել:

## *Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագիր*

Ծրագրի նպատակը գյուղատնտեսության ոլորտի տնտեսվարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային պայմանների կիրառմամբ, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է: Կառավարության 16.03.2017թ.-ի նիստի N 11 արձանագրային որոշման՝ Ծրագրի իրականացման ֆինանսական գնահատական բաժնում բերված են «ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի» տեխնիկայի առանձին տեսակների թվաքանակի և լիզինգի սուբսիդավորման անհրաժեշտ գումարների վերաբերյալ տվյալները:

Ծրագրի իրականացման արդյունքում՝ 2017թ.-ին և առաջիկա տարիներին հնարավոր կլինի ձեռք բերել 510 միավոր տեխնիկա՝ 2,829,442.0 հազ. դրամ

ընդհանուր արժեքով, որի սուբսիդավորման տոկոսագումարը կկազմի 499,510.1 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում 01.04.2017-29.12.2017թթ. ընթացքում ձեռք բերված տեխնիկայի լիզինգի ընդհանուր գումարը կազմել է 833,037.6 հազ. դրամ:

Որպես ծրագրի կողմեր սահմանված են շահառուները, ֆինանսական կազմակերպությունները, ԳՆ-ն և Գյուղական ֆինանսավորման կառույցը (ԳՖԿ): ԳՆ-ի գործառույթը սահմանափակվում է միայն մեկ շահառուի կողմից 100,000.0 հազ. դրամ և ավելի ընդհանուր գումարով ներկայացված հայտերին համաձայնություն տալով և ԳՖԿ-ի կողմից ծրագրի ընթացքի վերաբերյալ թվային տվյալներ ստանալով:

Լիզինգի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 01.04.2017-29.12.2017թթ. դրությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված ամփոփ հաշվետվության համաձայն, շահառուների թիվը կազմել է 65, որից՝ 11-ը՝ իրավաբանական անձ, 54-ը՝ ֆիզիկական անձ: Նշված շահառուներից 34-ի համար որպես ֆինանսական կազմակերպություն հանդես է եկել «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, 26-ի համար «ԱԳԲԱ լիզինգ» ՓԲԸ –ն և 5-ի համար՝ «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են Ծրագրի խոշոր շահառուներ հանդիսացող «Ֆիառ գրուպ» ՍՊԸ-ի՝ (ստեղծվել է 23.06.2017թ.-ին) 198,570. հազ. դրամ ընդհանուր գումարով, և «Նաիրիի Բերրիություն» ՍՊԸ-ի՝ 186,560.0 հազ. դրամ ընդհանուր գումարով տեխնիկայի ձեռք բերումները (կազմել են ծրագրի շրջանակներում կատարված ձեռք բերումների մոտ 46 %-ը), որից 20 տոկոսը վճարվել է շահառուների կողմից: Ապրանքները մատակարարել է «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն (մատակարարը զբաղվում է գյուղտեխնիկայի ներմուծմամբ և վաճառքով), որպես ֆինանսավորող կազմակերպություն հանդիսացել է «ՓՄՁ» ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ-ն, սուբսիդավորման տոկոսադրույքը կազմել է 7 տոկոս:

Ըստ ԳՆ-ի ներկայացված տեղեկատվության, «Ֆիառ գրուպ» ՍՊԸ-ին ծրագրում ընդգրկելու նպատակը պայմանավորված է Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքում մեքենատրակտորային կայանի ստեղծման նախաձեռնության հետ: Ընկերությունը նորաստեղծ կազմակերպություն է և չունի համապատասխան ոլորտում գործունեության փորձառություն: 2017թ.-ի օգոստոսի 25-ին Ծովակ համայնքում գյուղատնտեսության նախարարի մասնակցությամբ տեղի է ունեցել կայանի բացման արարողությունը: Տեսահոլովակներից երևում է, որ

գյուղատնտեսական տեխնիկան շարված է Ծովակ համայնքի տարածքով անցնող Երևան–Վարդենիս մայրուղու վրա:

Ընկերությունը (ՀՎՀՀ-02662368), գրանցվել է 23.06.2017թ.-ին, ըստ Կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 28.11.2017թ-ի No ԼԱ-1/8324 տեղեկատվության, սեփականության իրավունքով կամ վարձակալության հիմունքներով որևէ անշարժ գույք չունի, և պարզ չէ, թե որտեղ է գտնվում ձեռք բերված տեխնիկան: ՊԵԿ–ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն նշված ընկերությունը գործունեություն ծավալելու վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացրել և ըստ http://taxservice.am կայքում տեղադրված տեղեկատվության՝ 31.12.2017թ.-ի դրությամբ, նրա գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է եղել: Հարկ է նշել նաև, որ «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի տնօրենը և «Ֆիառ գրուպ» ՍՊԸ-ի հիմնադիրը փոխկապակցված անձիք են:

**Հետևաբար, կասկած կա, որ գործարքը կրել է ձևական բնույթ, ինչի արդյունքում, «Հրաշք Այգի» ընկերությունը, օգտվելով տոկոսադրույքի սուբսիդավորումից, ստանձնել է 158,871. հազ դրամ գումարի վարկային պարտավորությունը 2 տոկոս տոկոսադրույքով: Արդյունքում, լիզինգի պայմանագրի պետության կողմից սուբսիդավորման տոկոսի ընդհանուր գումարը կազմելու է 36,796.2 հազ. դրամ:**

**ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը չի սահմանել ծրագրային այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են՝ շահառուների ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտում, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման նպատակայնությունը, միավոր գյուղտեխնիկայի մասով սուբսիդավորման առավելագույն գումարի չափը, գերատեսչական, հսկողական և արդյունավետության գնահատումը:**

## *Գյուղտեխնիկայի կայանի կազմակերպման ծրագիր*

**Գյուղտեխնիկայի կայանի ստեղծման պիլոտային ծրագրի ֆինանսական աղբյուրը պահուստային ֆոնդն է**

Ծրագրի նպատակը գյուղտեխնիկայի կայանի ստեղծման պիլոտային ծրագրի իրականացումն է և ներդրված ֆինանսական միջոցների հետ վերադարձնելու արդյունքում՝ նոր գյուղտեխնիկայի կայանների ստեղծումը:

Ծրագրի հիմքը դրվել է «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 30.03.2017թ.-ի N 342-Ն որոշմամբ և գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվել է պետության կողմից տրամադրել մինչև 700,000.0 հազ. դրամ: Ներկայացվել են գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման 4 առաջարկներ՝ քաղաքացի Ս. Այվազյանի, «Նաիրիի Բերրիություն» ՍՊԸ-ի, «Չինվան» ՍՊԸ-ի, «Իդաս» ՍՊԸ-ի կողմից: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրության և գնահատման արդյունքում, 05.05.2017թ.-ի թիվ 1 արձանագրության հիման վրա, հավանության է արժանացել «Իդաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագիրը, և տրվել է դրական եզրակացություն, որն էլ հետագայում հավանության է արժանացել ՀՀ կառավարության նիստում (18.05.2017թ.-ի «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության նիստի N 20 արձանագրային որոշում):

Հարկ է նշել, որ ընդամենը 50 հազ. դրամ կանոնադրական կապիտալ ունեցող «Իդաս» ՍՊԸ-ն ստեղծվել է 28.04.2017թ.-ին և չի ունեցել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման բավարար փորձառություն: Ընկերությունը պարտավորվել է ծրագիրն իրականացնել վեց հաջորդական փուլերով, որի արդյունքում մինչև 450 հազ. հա մշակվող տարածքներում մեքենայացված ծառայությունների կիրառման մակարդակը պետք է հասցնել 90%-ի՝ ունենալով մինչև **1մլն. շահառու**՝ ծրագրի սկզբնական փուլերում ծառայություններ մատուցելով Գեղարքունիքի, Արմավիրի և Շիրակի մարզերում, իսկ հետագայում՝ ՀՀ ամբողջ տարածքում: Ծրագրի մեկնարկի համար նախատեսվել է ներգրավել 433.5 հազ. դրամ միջին աշխատավարձով շուրջ 88 աշխատակից, երկրորդ տարում դրանց թիվը դարձնել 142, իսկ 5-րդ տարում՝ 726:

Ծրագրի ֆինանսական աղբյուրը՝ պահուստային ֆոնդն է (խնայողություն այլ ծրագրից): Ծրագրով նախատեսվել է 700,000.0 հազ. դրամ գումար և ծրագրի կատարման ժամկետ է սահմանվել 2017-2021թթ.: Նախատեսվել է ձեռք բերել թվով 7 տրակտոր, 7 գութան, 4 գյուղմեքենա ցանքսի համար:

Կազմակերպությունը կայանը ստեղծելու համար պարտավորվել է իր կողմից իրականացնել 70,000.0 հազ. դրամի չափով գյուտեխնիկայի ներդրում:

31.12.2017թ.-ի դրությամբ փաստացի ծախսվել է 659,400.0 հազ. դրամ, որից՝ 23,800.0 հազ. դրամը «Սպեցմաշ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա վերջինիս կողմից մատակարարված 7 գութանների, իսկ 635,600.0 հազ. դրամ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ 19.10.2017թ.-ին կնքված պայմանագրի հիման վրա վերջինիս կողմից մատակարարված 7 տրակտորների համար: Ծրագրով ցանքսի համար նախատեսված 4 գյուղմեքենաները 12.01.2018թ.-ի դրությամբ ձեռք բերված չեն եղել:

### Արձանագրված խախտումներ

- Ըստ ծրագրի, տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվելու է կազմակերպությանը արժեքի (700,000.0 հազ. դրամ) և հավելավճարի (մինչև 226,000.0 հազ. դրամ) ամբողջական մարումից հետո, իսկ մինչ ամբողջական գումարի մարումը 2017թ.-ի մայիսի 18-ի N 516-Ն ՀՀ կառավարության որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամին: Նույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի և 5-րդ կետի համաձայն ընկերությունը տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերելու Հիմնադրամին վճարելով միայն պայմանագրի գումարը, որն օգտագործվելու է Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրագործման համար, ինչը հակասում է պիլոտային ծրագրի՝ վերադարձվող գումարով ՀՀ-ում գյուղտեխնիկայի այլ կայանների կազմակերպման նպատակին: Բացի այդ, Կառավարության որոշման մեջ նշված չէ ծրագրի շահառուի կողմից, ծրագրով նախատեսված ժամկետում մինչև 226,000.0 հազ. դրամի չափով վճարվելիք հավելավճարի մասին:
- Բացակայում են ՀՀ ԳՆ համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ կապված նմանատիպ հզոր տրակտորներ ձեռք բերելու անհրաժեշտության վերաբերյալ, քանի որ Ծրագրով

նախատեսված 7 տրակտորներից յուրաքանչյուրի արժեքը կազմում է 90,800.0 հազ. դրամ: Հարկ է նշել որ նմանատիպ տրակտորներն օգտագործվում են նաև շինարարության և ծանր արդյունաբերության մեջ:

- Բացակայում են ԳՆ-ի կողմից տեխնիկայի նպատակային շահագործման մասով հսկողական մեխանիզմները:
- 23,800.0 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ ձեռք են բերվել տրակտորների հզորությանը համապատասխան 7 գութաններ: Գութանների ձեռք բերման համար (պայմանագիր ԲՄԱՊՁԲ-17/1-ԳՏՊՏ-52) չի իրականացվել շուկայի գների ուսումնասիրություն:
- 12.01.2018թ.-ի դրությամբ տեխնիկայի համար որևէ փաստաթղթավորում չի վարվել (ի պահ հանձնման պայմանագիր, ընդունման-հանձման ակտ):

## *Բույսերի պաշտպանության միջոցառումներ ծրագիր*

**Անտառները և բույսերը հիվանդություններից ու վնասատուներից մաքրելու համար ծախսվել է 15,508.1 հազ. դրամ**

Ծրագրի նպատակն անտառները և բույսերը հիվանդություններից ու վնասատուներից մաքրելն է, որի պահանջը ներկայացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից, որն էլ իրականացրել է թունաքիմիկատի սրսկումը:

Թունաքիմիկատի ձեռք բերման համար ԳՆ-ի կողմից իրականացվել է գնում (շրջանակային համաձայնագիր) և հայտում նշվել է «Արրիվո» կամ համանման տեսակի, 250գ/լ ցիպերմետրին ազդող նյութի պարունակությամբ թունաքիմիկատ: 24.06.2016թ.-ին մրցույթի հաղթող է ճանաչվել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն՝ առաջարկելով «Ցիպերմաքսի» տեսակի թունաքիմիկատը՝ 15,508.1 հազ. դրամ պայմանագրային ընդհանուր արժեքով:

### Արձանագրված խախտումներ

- Պատվիրատուի կողմից չի իրականացվել շուկայական գների ուսումնասիրություն և գնում իրականացնելու համար չի կազմվել նախահաշիվ:
- Հայտում նշվել է «Արրիվո» կամ դրան համանման տեսակի, 250գ/լ ցիպերմետրին ազդող նյութի պարունակությամբ թունաքիմիկատ: Գոյություն ունեն անտառների տերևակերների դեմ պայքարի տարբեր թունաքիմիկատներ՝ ազդող

նյութերի պարունակության և համակցության տարբերություններով, սակայն որպես ազդող նյութ նշվել է միայն 250գ/լ ցիպերմետրինը:

- Մրցույթի մեկ այլ մասնակցի՝ «Արտագրո» ՍՊԸ-ի կողմից 12,616.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով առաջարկվել է ավելի խիտ 400գ/լ ցիպերմետրին ազդող նյութով «Ռիպկորդ» տեսակի թունաքիմիկատը: Հայտը մերժվել է, նշելով, որ «Ռիպկորդը» չի կիրառվում որպես անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոց, որի համար հիմք է ծառայել «ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» տեղեկագիրը: Սակայն նույն տեղեկագրում մրցույթով հաղթած և մատակարարված թունաքիմիկատը նույնպես նշված չէ որպես տերևակերների դեմ պայքարի միջոց: «Ռիպկորդ» ձեռք բերելու դեպքում հնարավոր կլիներ տնտեսել 2,900.0 հազ. դրամ, միևնույն ժամանակ թունաքիմիկատի ազդող նյութի առավել բարձր խտության հաշվին բարձրացնելով միջոցառումների արդյունավետությունը:

## *Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի վերաբերյալ*

**Ծրագրի նպատակը և նկարագիրը**

ՀՀ ԳՆ կողմից «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) իրականացվում է երկու բաղադրիչներով՝

1. Կենսապատվաստուկների ձեռք բերում
2. Հակաանասնահամաճարակային միջոցառումների, հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպում:

**2016թ.՝ 1,140,585.0 հազ. դրամ , իսկ 2017թ.՝ 1,016,905.2 հազ. դրամ ուղղված կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը**

2016-2017թթ. իրականացվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված հակաանասնահամաճարակային միջոցառումներ (ախտորոշում, պատվաստում, ախտահանում և այլն) հետևյալ հիվանդությունների նկատմամբ՝

1. Ախտորոշիչ հետազոտություններ՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելյոզ, տուբերկուլոզ, լեյկոզ,

2. Կանխարգելիչ միջոցառումներ՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, ինչպես նաև ձիերի սիբիրախտ, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դաբաղ, խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալար (էմկար), նոդուլյար մաշկաբորբ, պաստերելյոզ, մանր եղջերավոր կենդանիների բրադզոտ, ժանտախտ, խոզերի դասական ժանտախտ, թռչունների կեղծ ժանտախտ,

3. Մշակում՝ մեղվաընտանիքների վարրոատոզ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով պատվաստանյութերի ձեռք բերման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար 2016թ. պայմանագրով նախատեսվել է 1,140,585.0 հազ. դրամ, իսկ 2017թ.՝ 1,016,905.2 հազ. դրամ, այդ թվում.

- Պատվաստանյութերի ձեռք բերում 2016թ.-ին՝ 520,108.8 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 423,593.2 հազ. դրամ:
- Հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացում (անասնաբույժների և համաճարակաբանների աշխատավարձ) 2016թ.-ին՝ 620,476.2 հազ. դրամ, 2017թ-ին՝ 593,312.0 հազ. դրամ:

2016թ.-ին պատվաստանյութեր ձեռք բերելու համար փաստացի ծախսվել է 487,468.4 հազ. դրամ, կամ 32,642.4 հազ. դրամով պակաս, ինչը պայմանավոված է փոխանակային կուրսի տատանմամբ, ինչպես նաև պայմանագրով սահմանված գնի մեջ հաշվարկված ԱԱՀ-ի (29,538.2 հազ. դրամ) չվճարմամբ:

### Արձանագրված խախտումներ

- Որոշ մրցույթներում բացակայում են շուկայի ուսումնասիրությունները և համապատասխան նախահաշիվները, իսկ գները վերցվել են նախորդ տարվա պայմանագրերի գներով և ներառվել բյուջետային հայտում:
- 2016թ.-ի փետրվար և ապրիլ ամիսներին կնքված թվով 2 պայմանագրերում, որտեղ մրցույթի հաղթող են ճանաչվել ռուսաստանյան կազմակերպությունները, ապրանքների գների մեջ նախատեսվել է 42,079 հազ. դրամի ԱԱՀ, որն էլ վճարվել է պատվիրատուի կողմից: Հարկ է նշել, որ պատվաստանյութերի ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից, ԳՆ-ը չպետք է նախատեսեր և վճարեր ԱԱՀ-ը: ԳՆ-ն այս խնդրին անդրադարձել է միայն 2017թ.-ի հոկտեմբեր ամսին, առաջարկելով նշված գումարը ճանաչել որպես գերավճար և վերադարձնել պետական բյուջե (գանձապետական հաշվին): Նույն թվականի

հունիս ամսին կնքված պատվաստանյութերի ձեռք բերման պայմանագրի գնի մեջ կրկին նախատեսվել է ԱԱՀ՝ 29,538 հազ. դրամի չափով, որը, սակայն, չի վճարվել:

- 2016-2017թթ. գյուղատնտեսական կենդանիների անասնահամաճարակային կանխարգելիչ, ախտորոշիչ միջոցառումների իրականացման և անհրաժեշտ պատվաստանյութերի ձեռք բերման հաշվարկները կատարվել են 2015-2016թթ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված անասնագլխաքանակի տվյալների հիման վրա նախատեսելով անասնագլխաքանակի 3 տոկոս աճ (հաշվի առնելով վերջին 5 տարվա տվյալները): Այս տվյալները չեն կարող տվյալ միջոցառումների համար անհրաժեշտ պատվաստանյութերի քանակական ճշգրիտ պլանավորման համար հիմք հանդիսանալ, քանի որ ընթացիկ տարվա անասնագլխաքանակի վերաբերյալ հաշվետվությունները համայնքները ՀՀ ԱՎԾ–ին են տրամադրում տարին մեկ անգամ՝ հունվար ամսին, ինչը կարող է փոփոխվել տարվա ընթացքում նոր կենդանիներ ձեռք բերելով, մորթով, անկմամբ, և այլ տեղաշարժերով պայմանավորված: Խնդրի առումով նպատակահարմար է նշել, որ դեռևս 21.06.2014թ.-ին ընդունվել է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի (հոդվածներ 7, 20) լիազոր մարմնին տրված է գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման, կենդանիների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակման և տեղեկատվական շտեմարանի վարման լիազորություն, ինչը սակայն չի իրականացվում ԳՆ-ի կողմից:

- ԳՆ-ի կողմից չի իրականացվում համապատասխան հսկողական մեխանիզմներ, մոնիթորինգ՝ անասունների փաստացի պատվաստումների քանակի և որակի նկատմամբ: Անասնահամաճարակային հետազոտությունների արդյունքում ստացված հիվանդությունների վերաբերյալ ստացված փաստաթղթավորումը և հիվանդությունների հայտնաբերումը չի արտացոլում առկա իրավիճակը, քանի որ բացակայում են կենդանիների հաշվառման, համարակալման համակարգերը և կենդանիների տեղաշարժման ներդրված գործող մեխանիզմները: Տվյալ համակարգերի բացակայությունը հնարավորություն չի տալիս իսպառ վերացնել հիվանդությունները կամ գոնե բարձրացնել պետ. բյուջեի հաշվին իրականացվող բուժ-կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը: Սանիտարական սպանդն իրականացվում է ոչ սպանդանոցային պայմաններում, լայն կիրառվում է բակային մորթ, որը հիվանդությունների տարածման ևս մեկ ռիսկ է:

- Պետական պատվերի շրջանակներում իրականացվող պատվաստումների նկատմամբ վերահսկողությունը զուտ փաստաթղթային է:

Պատվաստանյութի ազդեցության ստուգման շճաբանական հետազոտություններ չեն իրականացվում: Արդյունքում, անասնաբուժական պետական վերահսկողությունը իրականացվում է թերի և առանց որևէ գիտական կամ ռիսկայնության հաշվարկի հիմքերի:

- Չնայած ծրագրի նպատակն է անվճար անասնաբուժասանիտարական ծառայության մատուցումը գյուղացիներին, սակայն ծրագրով չեն նախատեսվել պատվաստման համար անհրաժեշտ ֆիզլուծույթ, ասեղներ և անհրաժեշտ այլ պարագաներ, որոնց համար փաստացի վճարում են շահառուները:

## *«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ -ի գործունեության վերաբերյալ*

**Անասնահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքների համակարգում, խորհրդատվական ծառայությունների իրականացում**

«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ ԱԲԾԿ ՊՈԱԿ)՝ գտնվելով ՀՀ ԳՆ կառուցվածքում, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում իրականացնում է կանոնադրությամբ իրեն վերապահված մի շարք գործառույթներ, որոնցից հատկանշական են հետևյալները՝ ՀՀ տարածքում բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների դեմ պայքար, անասնաբուժական ծառայություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի շրջանակներում անասնահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքների համակարգում, խորհրդատվական ծառայությունների իրականացում և այլն:

### Արձանագրված խախտումներ

- ՀՀ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվող անասնաբուժական ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ կազմվում է եզրակացություն (պայմանագրի հավելված թիվ 5), որի հիման վրա կազմվում է հանձման-ընդունման արձանագրություն

(պայմանագրի հավելված թիվ 4): ԱԲԾԿ ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից հանձնման-ընդունման արձանագրության հաստատումից հետո կատարվում են վճարումներ: Բոլոր արձանագրություններում բացակայում է պատվիրատուի կնիքը, անուն ազգանունը, իսկ որոշ դեպքերում նաև ստորագրությունը:

- ԱԲԾԿ ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է կենդանիների հաշվառման, համարակալման և գրանցման միջոցառումների իրականացումը, կենդանական ծագման հումքի և մթերքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, ինչպես նաև կենդանիների դիակների ոչնչացման կամ տեխնիկական օգտահանման գործընթացների իրականացումը (կանոն. փոփ. կետեր՝ 10.4, 10.7): Բացի այդ, ըստ կանոնադրության, կազմակերպության գործունեության մաս են կազմում՝ ՀՀ տարածքում բույսերի, բուսական արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության, պահպանման և իրացման վայրերում (անկախ սեփականության ձևից) հետազոտությունների իրականացումը՝ մոնիթորինգ, բույսերի կարանտին օրգանիզմների հայտնաբերման, դրանց տարածման արեալի ճշտման, օջախների մեկուսացման և կարանտին միջոցառումների իրականացման նպատակով, գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և անձնագրավորման աշխատանքները, աջակցությունը գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքների կազմակերպման գործընթացին (կետեր՝ 11.1, 11.13, 11.4): ԱԲԾԿ ՊՈԱԿ-ը փաստացի չի իրականացնում նման գործառույթներ:

- ԱԲԾԿ ՊՈԱԿ-ը 18.12.2017թ.-ի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով ունի 411,039 հազ. դրամի չկատարված պարտավորություն, որից 1,033 հազ. դրամը ԱԱՀ 10 տոկոսի տույժի չափն է: Պարտավորությունը գոյացել է 2015թ.-ի դեկտեմբերի 1-ից 2017թ.-ի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում պետական պատվերի շրջանակներում դրամաշնորհների պայմանագրերով մատուցված ծառայություններից չվճարված ԱԱՀ գումարի չափով: Հարկ է նշել, որ 2013-2014թթ. ևս առաջացել է նման պարտավորություն, որի վճարման համար Կառավարության որոշմամբ գումար է հատկացվել, և մարվել պարտքը: Հետևաբար, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» 2016-2017թթ. ծրագրերի արժեքի մեջ, ի սկզբանե պետք է հաշվարկվեր ԱԱՀ-ի հարկման գումարը, ինչը չի իրականացվել:

## ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում» իրականացված ստուգումների վերաբերյալ

1. Կառավարությունը 2017թ. մարտի 9-ին N 243-Ա որոշմամբ դադարեցրել է «Գյուղատնտեսական» ԾԻԳ-ի գործունեությունը և ստեղծել է «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ» (այսուհետ՝ Հիմնադրամ):

Այնուհետև, ապրիլի 13-ին N-380-Ա որոշմամբ լուծարել են «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» (այսուհետ՝ ԳԱՀԿ) և «Գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոն» (այսուհետ՝ ԳԱՄԿ) ՓԲԸ-ները՝ դրանց կողմից իրականացվող «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի իրականացումը վերապահելով Հիմնադրամին:

ՀՀ Կառավարության 2017թ.-ի հունիսի 23-ի N 738-Ն որոշման N3 հավելվածի համաձայն, լուծարված ՓԲԸ-ների համար սահմանված բազմաթիվ գործառույթներ Հիմնադրամին կամ չեն փոխանցվել կամ կրճատվել են քանակապես *(առավել մանրամասն ներկայացված է աղյուսակ 1-ում):*

Աղյուսակ 1

| Մատուցվող ծառայության անվանումը | Գործառույթների քանակը | |
|---|---|---|
| | Լուծարված ԳԱՀԿ և ԳԱՄԿ ՓԲԸ-ների 2017թ. Հուլիս-դեկտեմբեր ամիսների համար նախատեսված | Հիմնադրամի համար սահմանված |
| Սեմինարներ և Ծրագրային խորհրդատվություն | 578 | **25** |
| Դաշտային ուսուցումներ և ծրագրային խորհրդատվություն | 430 | |
| Խորհրդատվություններ | 10611 | Բացակայում են |
| Փորձացուցադրական աշխատանքներ | 72 | Բացակայում են |
| Ռադիոհեռուստահաղորդումներ կամ տեսահոլովակներ | 46 | **20** |

| | | |
|---|---|---|
| Թերթիկների, բուկլետների թեմաներ | 198 | Բացակայում են |
| Թերթիկների և բուկլետների տպաքանակը | 51240 | Բացակայում են |
| Թերթերի թողարկումների քանակը | 79 | Բացակայում են |
| Թերթերի տպաքանակը | 102800 | Բացակայում են |
| Սեմինար-դասընթացներ ԳԱՄԿ-ի խորհրդատուների և այլ շահառուների համար | 9 | Բացակայում են |
| **Վարկերի հավաստագրման դասընթացներ** | **Բացակայում են** | **60** |

**Փոփոխությունների արդյունքում չեն սահմանվել գործառույթների արդյունքային ցուցանիշներ, չեն հստակեցվել գործառույթների որակական բնութագրիչներ, ծրագրի շահառուների քանակն ու աշխարհագրական ընդգրկվածությունը: Փաստորեն ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշներն էապես նվազել են, փոխարենը դրանց շարքն ավելացել է «վարկերի հավաստագրման դասընթաց» գործառույթով:**

2. ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 23-ի N 738-Ն որոշման համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թ.-ի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել է վերաբաշխում և որոշվել է «Գյուղատնտեսության աջակցության մարզային (ԳԱՄԿ-եր) և հանրապետական կենտրոն (ԳԱՀԿ)» ՓԲԸ-ի մնացորդը (119,613.4 հազ. դրամ) փոխանցել Հիմնադրամին, ինչը կատարվել է 17.07.2017թ.-ի ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հիմնադրամի միջև կնքված պայմանագրով:

**152,596,40 հազ. դրամ հավելյալ դրամաշնորհ արդեն իսկ նվազեցված գործառույթների իրականացման համար**

ՀՀ կառավարության 2017թ.-ի հուլիսի 27-ի N 738-Ն որոշման հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության և հիմնադրամի միջև 18.08.2017թ.-ին կնքված ՆԳՀՀ-180 համաձայնագրով նախատեսվել է Հիմնադրամին տրամադրել նաև 152,596,40 հազ. դրամի չափով դրամաշնորհ, որն ուղղվել է արդեն իսկ նվազեցված գործառույթների իրականացման համար ֆինասնական ծախսերի ավելացմանը:

Հիմնադրամի ստեղծման օրվանից մինչև 2018 թվականը, ընդհանուր նախատեսվել է հատկացնել 272,209.8 հազ. դրամ, որից 81,662.9 հազ. դրամ՝ ծրագրային խորհրդատվությունների, 54,442.0 հազ. դրամ՝ տեսանյութերի պատրաստման և 136,104.9 հազ. դրամ՝ վարկերի հավաստագրման դասընթացների իրականացման համար:

Հատկանշական է, որ Պայմանագրով և Համաձայնագրով չեն սահմանվել նշված գումարի դիմաց իրականացվող ծրագրերի հստակ չափորոշիչներ (հատուկ, չափելի, հաշվելի, իրատեսական և ժամանակային):

## *Ծրագրային դասընթացների մասին*

**Թեմաներն ընտրվել են առանց հաշվի առնելու առանձին մարզերում կամ համայնքներում առկա գյուղատնտեսական խնդիրներն ու զարգացման պահանջները**

Ըստ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017թ.-ի սեպտեմբերի 7-ի թիվ 4-Լ որոշմամբ սահմանված ուղեցույցի՝ ծրագրային դասընթացների թեմաներն ընտրելիս հաշվի են առնվում Հիմնադրամի կողմից ֆերմերային տնտեսություններին և մարզպետարաններին կատարված հարցումների արդյունքները:

Սակայն, ֆերմերային տնտեսությունների շրջանում անցկացված հարցումները հիմնավորող որևէ փաստաթուղթ Հիմնադրամի կողմից այդպես էլ չի ներկայացվել: Ներկայացվել է միայն Արմավիրի և Արարատի մարզերում պահանջվող դասընթացների թեմաների վերաբերյալ համապատասխան մարզպետարանների առաջարկները հիմնավորող երկու փաստաթուղթ:

Արդյունքում թեմաներն ընտրվել են առանց հաշվի առնելու առանձին մարզերում կամ համայնքներում առկա գյուղատնտեսական խնդիրներն ու զարգացման պահանջները: Բացի այդ, դասընթացների մասնակիցների քանակի վերաբերյալ փաստաթղթերում առկա տվյալների և լուսանկարներում առկա տվյալների միջև առկա է անհամապատասխանություն:

## Տեսահոլովակների մասին

**Հիմնադրամը տեսահոլովակները պատրաստել և ներբեռնել է համացանց կազմակերպված դասընթացների ավարտից հետո**

Տեսահոլովակները դիտման համար հասանելի են եղել միայն համացանցում՝ հիմնադրամի Youtube-յան և ֆեյսբուքյան էջերում (էջն ունի 250 հետևորդ):

Տեսահոլովակները հիմնականում ուսուցողական բնույթ չեն կրում, հասանելի չեն շահառուներին, գյուղատնտեսական առանձին խնդիրների վերաբերյալ տրամադրում են ընդհանրական և ոչ նեղ մասնագիտական տեղեկություններ: 2018թ. հունվարի 15-ի դրությամբ տեսահոլովակներն ունեցել են միջինում ընդամենը 82 դիտում:

Տեսահոլովակները շահառուներին ներկայացնելու կամ վերջիններիս դրանց մասին իրազեկելու այլ միջոցառումներ հիմնադրամի կողմից չեն իրականացվել:

Դասընթացների ժամանակ տեսանյութերը շահառուներին ցուցադրելու և վերջիններիս հետ քննարկելու հնարավորություն չի եղել, քանի որ դրանք չեն պատրաստվել դասընթացներից առաջ:

Հիմնադրամը հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար նախատեսված 10 տեսահոլովակը պատրաստել և ներբեռնել է համացանց Հիմնադրամի կողմից նույն ամիսներին կազմակերպված դասընթացների ավարտից հետո միայն:

Մնացած 10 տեսահոլովակը Հիմնադրամի կողմից ներբեռնվել է համացանց հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին կազմակերպված դասընթացների ավարտից հետո միայն:

---

## *Վարկերի հավաստագրերի դասընթացների մասին*

---

**Հիմնադրամը դասընթացները կազմակերպել է առանց սահմանված պահանջները պահպանելու:**

Նախարարության և Հիմնադրամի միջև կնքված թիվ ԳՀՀ-180 համաձայնագրով սահմանվել էր նախքան վարկերի հավաստագրման դասընթացները սկսելը Հիմնադրամի կողմից մասնակիցների ընտրության փուլի անցկացում և դրա հիման վրա ուսումնական պայմանագրերի կնքում:

Սակայն, Հիմնադրամը դասընթացները կազմակերպել է առանց նշված պահանջները պահպանելու:

Վարկերի հավաստագրման դասընթացների մասնակիցների թիվը գրեթե բոլոր մարզերում, ըստ նախատեսված գրանցման թերթիկների, չի համապատասխանում դասընթացների հաշվետվություններին կցված լուսանկարներում առկա մասնակիցների թվին:

Բազմաթիվ են դեպքերը, երբ վարկերի հավաստագրման եռօրյա դասընթացների միևնույն մասնակցի ստորագրությունը յուրաքանչյուր առանձին օրվա գրանցման թերթիկում տարբերվում է մյուսներից:

**Մարզային խորհրդատուների մասին**

Հիմնադրամի մարզային կառույցների կողմից իրականացված դասընթացներին առնչվող փաստաթղթերը վկայում են, որ մարզային կառույցների բազմաթիվ խորհրդատուներ դասընթացների մասով (ստանձնած պարտականություններ) որևէ գործունեություն չեն իրականացրել:

Սյունիքի մարզային կառույցում գրանցված 10 խորհրդատուից 5-ը, Գեղարքունիքի մարզային կառույցում գրանցված 10 խորհրդատուից 7-ը, Արարատի մարզային կառույցում գրանցված 8 խորհրդատուից 5-ը, Լոռու մարզային կառույցում գրանցված 10 խորհրդատուից 9-ը, Շիրակի մարզային կառույցում գրանցված 9 խորհրդատուից 5-ը Հիմնադրամի գործունեության առաջին եռամսյակում երբևէ ծրագրային կամ խմբային որևէ դասընթացի ժամանակ դասախոսությամբ հանդես չեն եկել:

Մարզային կառույցների ղեկավարներին չեն ներկայացվել նաև նրանց կողմից կատարված այլ աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ: Հիմնադրամի կողմից մինչև 31.12.2017թ. որևէ անհատական խորհրդատվական ծառայություն գյուղացու համար չի իրականացվել (ոչ վճարովի, ոչ էլ՝ անվճար եղանակով):

Գործունեության առաջին եռամսյակում Հիմնադրամի աշխատակիցների շուրջ 35%-ը որևէ գործունեություն չի իրականացրել, իսկ շուրջ 30%-ի գործունեության բնույթը անորոշ է և հստակ չէ:

Հիմնադրամի կողմից մատուցված և մատուցվող ծառայությունների վերջնական արդյունքային ցուցանիշների ապահովման գործում կենտրոնական գրասենյակի աշխատակիցների մասնակցությունն անորոշ է:

**Աշխատակազմ և վարձատրություն**

Լուծարված բոլոր կենտրոնների ֆինանսավորումը 2017թ. երկրորդ կիսամյակի համար նախատեսված է եղել 212.6 մլն. դրամ, մինչդեռ Հիմնադրամի ֆինանսավորումը նույն ժամանակահատվածի համար կազմել է 272.2 մլն. դրամ (այն դեպքում, երբ ծառայությունների քանակն ու շրջանակը էապես կրճատվել էր):

**Պլանավորվել էր ունենալ մոտ 30 մլն. դրամի բյուջեի խնայողություն**

Ընդ որում, էապես կրճատվել էր նաև Հիմնադրամի մարզային կառույցների աշխատակիցների թիվը (227-ից դարձել է 139):

Լուծարված հանրապետական կենտրոնի և նախկին ԾԻԳ-ի կենտրոնական գրասենյակի գումարային աշխատավարձի ամսական ֆոնդի հետ համեմատ, Հիմնադրամի կենտրոնական գրասենյակի նույն ցուցանիշը 4,5 մլն. դրամով ավելացել է, թեև աշխատակիցների քանակը 69-ից կրճատվել և դարձել է 52:

| Հիմնադրամի, լուծարված ԳԱՀԿ և ԳԱՄԿ ՓԲԸ-ների և ԾԻԳ-ի վարձատրության ֆոնդի համեմատական | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2017թ. | ԳԱՀԿ | ԳԱՄԿ | ԾԻԳ (լուծարված) | | Հիմնադրամ (հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված) | |
| | | | Կենտր. | Մարզ. | Կենտր. | Մարզ. |
| Աշխատողների թիվ | 29 | 211 | 40 | 16 | 52 | 139 |
| Աշխատավարձի ամսական ֆոնդ (հազ. դրամ) | 3,795.0 | 23,750.6 | 11,526.2 | 3,345.3 | 21,045.0 | 21,118.0 |
| Միջին ամսական աշխատավարձ (հազ. դրամ) | 130.9 | 112.6 | 288.2 | 209.1 | 404.7 | 151,9 |

Ըստ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի՝ հիմնադրամի կենտրոնական գրասենյակի 52 աշխատակցի աշխատավարձի ամսական ֆոնդը կազմում է 21,045.0 հազ. դրամ, իսկ մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը՝ 404.7 հազ.դրամ:

Հիմնադրամի մարզային կառույցների աշխատողների թվաքանակը ԳԱՄԿ-երի աշխատակիցների թվաքանակից պակասել է շուրջ 51%-ով, իսկ աշխատավարձի ֆոնդը ընդամենը 12%-ով:

Արդյունքում, Հիմնադրամի մարզային կառույցների միջին ամսական աշխատավարձը մոտավորապես 34%-ով բարձր է ԳԱՄԿ-երի աշխատակիցների միջին ամսական աշխատավարձից:

Հիմնադրամի կենտրոնական գրասենյակի աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը համապատասխանաբար 210% ավելի է ԳԱՀԿ-ի և 40% ավելի ԾԻԳ-ի նույն ցուցանիշներից:

Հիմնադրամի գործադիր տնօրենը 2017թ.-ի դեկտեմբերի 26-ի թիվ 52 որոշմամբ պարգևատրել է թվով 152 աշխատակիցների, այդ թվում՝ գործադիր տնօրենին (ինքն իրեն՝ 1,500.0 հազ. դրամ):

Պարգևատրման ընդհանուր գումարը կազմել է 32,237.6 հազ. դրամ: Պարգևատրված աշխատակիցներից 27-ն ընդունվել էր աշխատանքի 2017թ.-ի նոյեմբերի 8-ին և 13-ին, իսկ նրանց վճարված պարգևատրման գումարը կազմել է 9,628.0 հազ. դրամ: Հոկտեմբեր ամսին աշխատանքի ընդունված թվով 8 աշխատակից պարգևատրվել է 1,400.0 հազ. դրամ:

Այս ամենը չի վկայում, որ տարբեր կառույցներ լուծարելու և Հիմնադրամ ստեղծելու մասին Կառավարության որոշումներով նախատեսված ծախսերի օպտիմալացումն իրականացվել է: Ի դեպ, ըստ Կառավարության հիմնավորման, լուծարված ՓԲԸ-ների խորհրդատուների քանակի կրճատման հաշվին պլանավորվել էր ունենալ մոտ 30 մլն. դրամի բյուջեի խնայողություն:

## *Հիմնադրամի կողմից վարձակալած տարածքի մասին*

25.10.2017թ.-ին հիմնադրամի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որով Հիմնադրամը 15.10.2017թ.-ից մինչև 15.10.2022թ.-ն ընկած ժամանակահատվածի համար, ամսական 2,475.0 հազ. դրամով (տարեկան 29.700 հազ. դրամ) վարձակալել է 573.32 քմ մակերեսով տարածք (18 աշխատասենյակ)՝ Ադոնց 6/1 54 հասցեում, որի համար միայն 2017թ. վճարվել է 6,307.0 հազ. դրամ:

**29.700 հազ. դրամ 573.32 քմ մակերեսով տարածքի վարձակալության համար**

Մինչդեռ, Գյուղատնտեսության նախարարությանը պատկանող ք. Երևան, Մամիկոնյանց 39Ա հասցեում գտնվող շենքի 6-րդ և 7-րդ հարկերը (ընդհանուր մակերեսը՝ 640 քմ, աշխատասենյակների քանակը՝ շուրջ 24), որոնք նախկինում ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ զբաղեցնում էր ԳԱՀԿ-ն, մինչ այժմ զբաղեցված չէ (այդ տարածքը ԳԱՀԿ-ին տրամադրվել էր անհատույց):

| Վարձակալության հետ կապված տարեկան ֆինանսական ֆիսկալ բեռի մասին | | | | |
|---|---|---|---|---|
| | 2017թ. դրությամբ աշխատողների փաստացի թիվ | Զբաղեցրած տարածք (ք.մ.) | Աշխատասենյակների քանակ | Ֆինանսական ֆիսկալ բեռ (հազ.դրամ) |
| ԳԱՀԿ | 29 | 640 | 24 | Անհատույց |
| ՀԻՄՆԱԴՐԱՄ | 32 | 537.2 | 18 | 29,700,000 |

## *Տրանսպորտային միջոցների և սարքավորումների մասին*

**47 միավոր գյուղատնտեսական տեխնիկա անգործության է մատնվել:**

ՀՀ գյուղատնտեսության նախարության և ԳՀՀ-ի միջև սեպտեմբերի 26-ին կնքված ՈԳՀՀ-184 գույքի անհատույց օգտագործման պայմանագրով հիմնադրամին փոխանցված գույքը (այդ թվում՝ 30 միավոր ավտոմեքենա և 47 միավոր խոշոր գյուղատնտեսական տեխնիկա) սեպտեմբերի 27-ի ԳՀՀ N10 հրամանով ամրացվել էր հիմնադրամի մարզային կառույցներին:

Վերոնշյալ գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ընթացակարգերը սահմանված չեն եղել: Յուրաքանչյուր մարզային կառույցի կողմից շահագործվում է ընդամենը մեկ ավտոմեքենա:

Արդյունքում, 47 միավոր գյուղատնտեսական տեխնիկա անգործության է մատնվել:

Հատկանշական է, որ այդքան մեքենասարքավորման առկայության պարագայում, 2017թ.-ի բյուջետային հայտով և բյուջեի նախահաշվով «Այլ մեքենաների և սարքավորումների» ձեռք բերման համար նախատեսվել էր 14,960.0 հազ. դրամ գումար:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի դեկտեմբերի 4-ի որոշումով վերոնշյալ գումարի հոդվածը փոխարինվել է վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածով, այն պարագայում, երբ լուծարված կառույցներից հիմնադրամին փոխանցվել է օգտագործման պիտանի բազմաթիվ նմանատիպ գույք:

2017թ.-ի բյուջեի նախահաշվով տրանսպորտային նյութեր ձեռք բերելու համար նախատեսված 11.404.800 դրամից հոկտեմբերի 31-ի դրությամբ ծախսվել է 10. 612.800 դրամ՝ 31.680 լիտր բենզինի ձեռք բերման համար: 2017թ. վերջի դրությամբ հիմնադրամի բենզինի ծախսը կազմել է շուրջ 10.000 լիտր (3.350.000 դրամ) կամ գնված բենզինի շուրջ 32%-ը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոյեմբերի 8-ի N 11-Լ որոշմամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի»՝ հիմնադրամին փոխանցված

ֆինանսավորման միջոցների հաշվին նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների բյուջեի նախահաշվում «Տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվել է հատկացնել ևս 4.276.800 դրամ, որն այդպես էլ չի ծախսվել:

Տրանսպորտային նյութերի ձեռք բերման համար բյուջետային հայտով նախատեսված գումարը, փաստացի գնված բենզինի քանակությունը և 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների բյուջեի նախահաշվում «Տրանսպորտային նյութեր» հոդվածով այլ աղբյուրից ֆինանսավորմամբ նախատեսված գումարը հիմնավոր չեն:

**Այսպիսով, Հիմնադրամի գործունեության արդյունավետության բարձրացման հարցում արձանագրվել են հետևյալ ռիսկերը.**

- Հիմնադրամի առջև դրված չեն հստակ և կոնկրետ խնդիրներ և ակնկալվող արդյունքներ

- Առկա է Գյուղատնտեսության նախարարության և Հիմնադրամի փոխգործակցության ոչ բարձր մակարդակ, ոլորտում իրականացվող տարբեր ծրագրերի կրկնողություններ, կողմերի ֆունկցիոնալ ոչ հստակ դերեր և պատասխանատվության անորոշ շրջանակ

- Առկա է Հիմնադրամի ծախսերի, հաստիքացուցակի և օգտագործվող ռեսուրսների խնայողության, օգտակարության և արդյունավետության ոչ բարձր մակարդակ (Հիմնադրամի ղեկավարության նման բարձր աշխատավարձերը չեն համապատասխանում հանրային ոլորտում գործող պաշտոնյաների աշխատավարձերի մակարդակին):

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1

1.1. Գնման գործընթացները կազմակերպելիս չեն իրականացվել համապատասխան շուկայական գների ուսումնասիրություններ, որոնց հիման վրա չեն կազմվել համապատասխան նախահաշիվներ:

1.2. ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերելու նպատակով պետական աջակցության ծրագիրը կրում է սոցիալական բնույթ և «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները հաշվի չեն առնվում: Ծրագրի արդյունավետությունն այս տեսանկյունից կապված է «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերում արտացոլված պարարտանյութերի պահանջարկի բավարարման ցուցանիշների, կամ դրանց համամասնությունների պահպանման հետ, հակառակ դեպքում՝ միայն ազոտականով, կամ վերջինիս գերակշռմամբ, բույսերն ավելի շուտ են հիվանդանում, դժվարությամբ են տանում երաշտը, նվազում է ցրտադիմացկունությունը, պտուղների պահպանման ժամկետները:

1.3. Նախարարության կողմից չի իրականացվել համապատասխան մոնիթորինգ, ինչպես նաև չեն կիրառվել հսկողական մեխանիզմներ ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագիրը լիարժեք իրականացնելու և նպատակային արդյունքին հասնելու համար:

1.4. «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ագրոնոմները տարածաշրջաններում համապատասխան խորհրդատվական և վերահսկողական գործառույթը չեն իրականացնում:

1.5. 2016թ.-ի պարարտանյութերի մատակարարումը և վաճառքն իրականացվել է ողջ տարվա ընթացքում, սակայն սուբսիդավորման և տեղափոխման պայմանագրերի ամբողջ գումարները մատակարարներին տրամադրվել են միանվագ առաջին եռամսյակում, այլ ոչ թե փաստացի մատակարարումն իրականացվելուց հետո:

1.6. Պարարտանյութերի ներկրված և չվաճառված մնացորդների արժեքի չափով (ներառյալ տեղափոխման ծախսերը) գումարը գյուղատնտեսության նախարարի 15.02.2017թ.-ի N 40-Ա հրամանի հիման վրա չի վերադարձվել ՀՀ

պետական բյուջե՝ հակասելով ՀՀ կառավարության 29.01.2016թ.-ի 73-Ն որոշմամբ ավելի շուտ հաստատված ծրագրի պահանջին:

1.7. ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում մատակարարների կողմից չեն պահպանվել ՀՀ Կառավարության 2016թ. N 73-Ն որոշմամբ սահմանված մատակարարման պայմանները, ինչի արդյունքում ձևավորվել են 165,255,274 ՀՀ դրամի պարտավորություններ:

1.8. 2016-2017թթ.-ին պարարտանյութերի սուբսիդավորման պայմանագրերի գները համեմատելիս ստացվում է, որ 2017թ.-ին ազոտական և կալիումական պարարտանյութերը ձեռք են բերվել ավելի ցածր գներով:

1.9. Գյուղատնտեսության նախարարության կողմից, տավարաբուծության զարգացման ծրագրի պատշաճ իրականացման համար, չեն կիրառվել համապատասխան հսկողական և վերահսկողական մեխանիզմներ:

1.10. Տավարաբուծության զարգացման ծրագրի անարդյունավետության հետևանքով չեն ստացվել ծրագրով ակնկալվող արդյունքները:

1.11. 2015-2016թթ. ներկրված 806,296.8 դրամ արժողությամբ 695 երինջների դիմաց տնտեսվարող սուբյեկտների կողմից 2016-2017թթ. վճարման համապատասխան փուլերում նախատեսված 142,882 հազ. դրամի փոխարեն 02.10.2017թ.-ի դրությամբ հավաքագրվել է ընդամենը 24,334.5 հազ. դրամ, իսկ ժամկետանց պարտավորություններ ունեցող շահառուներից 23-ի մոտ ծրագրով ձեռք բերված 646 գլուխ երինջից առկա է 375-ը:

1.12. Տավարաբուծության զարգացման ծրագրով 2015-2016թթ. ժամկետանց պարտավորություններ ունեցող 23 շահառուներից 9-ի մոտ ծրագրով ստացած 122 գլուխ երինջից ոչ մի գլուխ առկա չէ:

1.13. ՀՀ-ում 2016թ. գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում 2016թ.-ի կառավարության N74-Ն որոշման մեջ հաշվի չի առնվել այն փաստը, որ ՊՈԱԿ-ը սեփականության հիմունքներով պահեստային տարածք չունի և սերմացուները պահել է այլ պահեստներում, որի համար համապատասխան փաստաթղթավորում չի վարել,

1.14. 2016թ.-ին սերմացուի բաշխումը իրականացվել է կառավարության որոշման պահանջի խախտումով, որի արդյունքում գոյացել է 26,237.7 հազ. դրամի պարտք:

1.15. Գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրով նախատեսված սերմացուի պահանջարկի սխալ պլանավորման արդյունքում 01.12.2017թ.-ի դրությամբ մնացորդը կազմել է 889.3

տոննա սերմացու՝ 346,216.9 հազ. դրամ արժեքով, կամ ձեռք բերված սերմացուների արժեքի 59%-ը:

1.16. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը չի սահմանել ծրագրային այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են՝ շահառուների ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտում, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման նպատակայնությունը, միավոր գյուղտեխնիկայի մասով սուբսիդավորման առավելագույն գումարի չափը, գերատեսչական, հսկողական և արդյունավետության գնահատումը:

1.17. Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի խոշոր շահառու հանդիսացող «Ֆիառ Գրուպ» ընկերությունը 2017թ.-ի օգոստոսից մինչև դեկտեմբեր ամիսները ծառայություններ չի մատուցել, իսկ նախատեսված մեքենատրակտորային կայանի ստեղծման, վերջինիս տեղակայման վերաբերյալ փաստեր չեն ներկայացվել, ինչը ցույց է տալիս, որ ԳՆ հսկողական մեխանիզմները չեն գործում:

1.18. Գյուղատնտեսական տեխնիկայի օտարումից ստացված ամբողջ գումարը հանդիսանում է գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի սեփականությունը և կարող է տնօրինվել իր կանոնադրության նպատակներին համապատասխան, որը հակասում է պիլոտային ծրագրի՝ վերադարձվող գումարով ՀՀ-ում գյուղտեխնիկայի այլ կայանների կազմակերպման նպատակին: Կառավարության որոշման մեջ նշված չէ ծրագրի շահառուի կողմից մինչև 226,000.0 հազ. դրամի չափով վճարվելիք հավելավճարի մասին:

1.19. Բացակայում են ՀՀ ԳՆ համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ կապված նմանատիպ հզոր տրակտորների և գութանների ձեռք բերման անհրաժեշտության վերաբերյալ:

1.20. Կազմակերպությունը պարտավորվել է իր կողմից իրականացնել 70,000.0 հազ. դրամի գյուղտեխնիկայի ներդրում (Կառավարության կողմից ներդրվող գումարի 10 % չափով), հետևաբար, ամբողջական կայանի ստեղծման համար ներդրումների չափը կկազմի 770,000.0 հազ. դրամից ավել: Այն դեպքում, երբ Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է նմանատիպ կայան ստեղծել մի քանի անգամ ավելի քիչ գումարով:

1.21. Բացակայում են ԳՆ-ի կողմից տեխնիկայի նպատակային շահագործման մասով հսկողական մեխանիզմները:

1.22. «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրով գոյություն ունեն անտառների տերևակերների դեմ պայքարի տարբեր թունաքիմիկատներ՝

ազդող նյութերի պարունակության և համակցության տարբերություններով, սակայն որպես ազդող նյութ նշվել է միայն 250գ/լ ցիպերմետրինը:

1.23. «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրով մրցույթի մեկ այլ մասնակցի կողմից առաջարկված 400գ/լ ցիպերմետրին ազդող նյութով թունաքիմիկատի ձեռք բերման դեպքում հնարավոր կլիներ տնտեսել 2.9 մլն ՀՀ դրամ, իսկ ազդող նյութի առավել բարձր խտության հաշվին բարձրացնել միջոցառումների արդյունավետությունը:

1.24. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի շրջանակներում պատվաստանյութերի ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից, սակայն 2016թ.-ին ձեռք բերման համար նախատեսվել և վճարվել է 42,079 հազ. դրամի ԱԱՀ: ԳՆ-ը այս խնդրին անդրադարձել է միայն 2017թ.-ի հոկտեմբեր ամսին, առաջարկելով նշված գումարը՝ ճանաչելով որպես գերավճար, վերադարձնել պետական բյուջե (գանձապետական հաշվին):

1.25. 21.06.2014թ.-ին ընդունվել է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի (հոդվածներ 7, 20) լիազոր մարմնին տրված է գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման, կենդանիների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակման և տեղեկատվական շտեմարանի վարման լիազորություն, ինչը, սակայն, չի իրականացվում ԳՆ-ի կողմից:

1.26. Անասնահամաճարակային հետազոտությունների արդյունքում ստացված հիվանդությունների վերաբերյալ փաստաթղթավորումը և հիվանդությունների հայտնաբերումը չի արտացոլում առկա իրավիճակը, հետևաբար նաև անհրաժեշտ պատվաստանյութերի ձեռք բերման իրական պահանջարկը, քանի որ բացակայում են կենդանիների հաշվառման, համարակալման համակարգերը և կենդանիների տեղաշարժման ներդրված գործող մեխանիզմները:

1.27. Պատվաստանյութի ազդեցության ստուգման շճաբանական հետազոտություններ չեն իրականացվում: Արդյունքում, անասնաբուժական պետական վերահսկողությունն իրականացվում է թերի և առանց որևէ գիտական կամ ռիսկայնության հաշվարկի հիմքերի:

1.28. Ծրագրով չեն նախատեսվել անվճար անասնաբուժասանիտարական ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆիզլուծույթ, ասեղներ և անհրաժեշտ այլ պարագաներ, որոնց համար փաստացի վճարում են շահառուները:

1.29. ՀՀ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում անասնաբույժի և «Անասնաբուժասանիտարիայի և

բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև անասնաբուժական ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսվում է կազմել հանձնման-ընդունման արձանագրություն, որը ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից հաստատելու դեպքում կատարում են վճարումներ: Հանձնման-ընդունման արձանագրություններում բացակայում է պատվիրատուի կնիքը, անուն ազգանունը, իսկ որոշ դեպքերում նաև ստորագրությունը:

1.30. ԱԲԾԿ ՊՈԱԿ-ը փաստացի չի իրականացնում կանոնադրությամբ իրեն վերապահված որոշ կարևոր գործառույթներ:

1.31. ԱԲԾԿ ՊՈԱԿ-ը 18.12.2017թ.-ի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով ունի 411,039 հազ. ՀՀ դրամի չկատարված պարտավորություն:

1.32. Գյուղական խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Հիմնադրամի համար 2 պայմանագրերով նախատեսված 272,209,800 դրամ գումարը շուրջ 28%-ով ավելի է լուծարված կառույցների ֆինասնավորումից (212.613.300 դրամ), այն պարագայում, երբ մատուցվող ծառայությունները քանակապես զգալիորեն կրճատվել են:

1.33. Պետական բյուջեից ստացած միջոցները Հիմնադրամը հիմնականում ծառայեցրել է կենտրոնական գրասենյակի աշխատակիցների համար բարձր աշխատավարձ սահմանելուն:

1.34. Հիմնադրամի կենտրոնական գրասենյակի աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը համապատասխանաբար 210% ավելի է ԳԱՀԿ-ից և 40% ավելի ԾԻԳ-ի նույն ցուցանիշից:

1.35. 2017թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Հիմնադրամի հիմնական գործունեությունն իրականացնող 86 մարզային խորհրդատուներից 30-ն իրենց աշխատանքային պայմանագրերով սահմանված որևէ գործունեություն չեն իրականացրել, սակայն ստացել են աշխատավարձ:

1.36. Շահառուների համար կազմակերպվող դասընթացներն ընդհանուր առմամբ կրել են ոչ կանոնակարգված բնույթ, իսկ դրանց կազմակերպման արդյունքում շահառուների ստացած գիտելիքների և վերջնարդյունքի գնահատման չափորոշիչները բացակայում են:

1.37. Դասընթացների թեմաներն ընտրվել են առանց հաշվի առնելու առանձին մարզերում կամ համայնքներում առկա գյուղատնտեսական խնդիրներն ու զարգացման պահանջները: Դասընթացների մասնակիցների քանակի վերաբերյալ փաստաթղթերում առկա տվյալների և լուսանկարներում առկա տվյալների միջև առկա է անհամապատասխանություն:

1.38. 2017թ. համար նախատեսված 20 ուսուցողական տեսանյութերը բովանդակային առումով նպատակային չեն, տարածվել են միայն համացանցի միջոցով, և 2018թ. հունվարի 15-ի դրությամբ ունեցել են միջինում ընդամենը 82 դիտում:

1.39. Բացակայում են իրականացվող ծրագրերի արդյունավետության ու արդյունքների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները:

1.40. Գյուղատնտեսության նախարարությանը պատկանող շենքում 640 քմ ազատ տարածքի առկայության պարագայում հիմնադրամը 5 տարի ժամկետով, ամսական 2.475.000 դրամ գումարով վարձակալել է 573.32քմ մակերեսով տարածք: 2017թ. տարածքի վարձակալության համար վճարվել է 6,307.0 հազ. դրամ, իսկ 2018թ. համար ծախսը կկազմի 29.7 մլն. դրամ:

1.41. Սխալ պլանավորման արդյունքում 2017թ. հիմնադրամի կողմից ծախսվել է ձեռք բերված բենզինի ընդամենը 30%-ը:

1.42. Լուծարված կառույցներից փոխանցված մեծաթիվ վարչական սարքավորումների և գույքի առկայության պարագայում հիմնադրամը ձեռք է բերել բազմաթիվ նմանատիպ իրեր:

1.43. Հիմնադրամին փոխանցված գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ընթացակարգերը սահմանված չեն եղել: Արդյունքում, 47 միավոր գյուղատնտեսական տեխնիկա անգործության է մատնված:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հաշվի առնել ՀՀ հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ ծրագրի շրջանակներում ստացված գյուղական համայնքների պարարտանյութերի պահանջարկի բավարարման ցուցանիշները, և դրանց համամասնությունների պահպանման կարևորությունը:
- ՈՒժեղացնել հսկողությունը ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագրի նպատակային և արդյունավետ կատարման ուղղությամբ:
- «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ագրոնոմներին ընդգրկել տարածաշրջաններում պարարտանյութերի պահանջարկի բավարարման ցուցանիշների, դրանց համամասնությունների պահպանման կարևորության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական և վերահսկողական աշխատանքների մեջ:
- Խորհրդատվական ծառայությունները հասանելի դարձնել ավելի շատ գյուղատնտեսական տնտեսությունների և ֆերմերների:
- Մշակել համապատասխան մեխանիզմներ պարարտանյութերի ձեռք բերման ճշգրիտ պլանավորման համար:
- Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ուժեղացնել վերահսկողությունը, իրականացնել այցելություններ, մոնիթորինգ:
- Խստացնել ուշադրությունը տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում շահառուների հետ կնքված պայմանագրերի կետերում նշված կենդանիների խնամքի, սննդակարգի, հաշվառման, հաշվետվությունների ներկայացման պահանջների կատարման վրա:
- Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում միակողմանի լուծել պայմանագրերն այն շահառուների հետ, որոնք խախտել են վճարման ժամկետները:
- Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում միակողմանի լուծել պայմանագրերը խնդրահարույց այն շահառուների հետ, որոնք այլևս

երինջներ չունեն, և ամբողջ պարտավորությունների մասով հայց ներկայացնել դատարան:

- Գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում ձեռնարկել միջոցներ ՀՀ մարզերի կողմից նախնական ներկայացված հայտերի պահանջարկի իրատեսական լինելու ուղղությամբ, որպեսզի տարեվերջում զերծ մնան մեծ քանակությամբ չիրացված մնացորդից:
- Ավելի սերտ համագործակցել ՀՀ-ում գործող պետական, ինչպես նաև մասնավոր տնտեսվարողների, սերմարտադրողների և սերմնաբուծական միությունների հետ և օգտագործել նրանց արտադրական ներուժը պետական ծրագրերի իրականացման մեջ, որն էլ տնտեսապես և ֆինանսապես ավելի արդյունավետ և մատչելի կլինի:
- Հստակեցնել գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման նպատակայնությունը, սահմանել գերատեսչական, հսկողական և արդյունավետության գնահատման չափանիշները, ինչպես նաև ձեռք բերվելիք միավոր գյուղտեխնիկայի սուբսիդավորման առավելագույն գումարի չափը:
- Հստակեցնել շահառուի կողմից վճարվելիք հավելյալ գումարի չափը, վճարման ժամանակացույցը և ամրագրել իրավական ակտով:
- Գյուղատնտեսական տեխնիկայի օտարումից ստացված ամբողջ գումարը հետ վերադարձնել ՀՀ պետական բյուջե, և այնուհետև, նոր սուբսիդիայի պայմանագրի հիման վրա վերջինս ուղղել պիլոտային ծրագրով նախատեսված ՀՀ-ում գյուղտեխնիկայի այլ կայանների կազմակերպման նպատակին:
- Իրականացնել մոնիթորինգ ձեռք բերված հզոր տրակտորների շահագործման վերաբերյալ:
- ԳՆ-ի կողմից տեխնիկայի նպատակային շահագործման մասով ներդնել և կիրառել հսկողական մեխանիզմներ:
- Աշխատանքներ տանել գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման, կենդանիների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակման և տեղեկատվական շտեմարանի վարման ուղղությամբ:
- Իրականացնել պատվաստանյութի ազդեցության ստուգման շճաբանական հետազոտություններ:
- ՀՀ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում խստացնել վերահսկողությունը փաստաթղթերի կազմման պահանջների նկատմամբ:
- Վերացնել «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող փաստացի և

կանոնադրությամբ վերապահված գործառույթների միջև առկա հակասությունները:

- Նպաստել հիմնադրամի մարզային կառույցների հեղինակության բարձրացմանը, որպեսզի դասընթացներից կամ խորհրդատվություններից գյուղատնտեսներն օգտվեն նպատակային և կարողանան ստացած տեղեկությունը, գիտելիքը ծառայեցնել սեփական գյուղացիական տնտեսության բարելավմանը:
- Տեսահոլովակների թեմաների ընտրությունը կատարել հիմնվելով առկա գյուղատնտեսական խնդիրների կամ զարգացման տեղական առանձնահատկությունների և մարտահրավերների վրա:
- Տեսանյութերը նկարահանել այնպիսի ժամանակացույցով, որ հնարավոր լինի ցուցադրել և քննարկել նաև կազմակերպվող դասընթացների ընթացքում, դրանց տարածման համար համագործակցել հեռուստաընկերությունների հետ, որպես գյուղատնտեսներին ավելի հասանելի զանգվածային տեղեկատվական միջոց:
- Բյուջետային պլանավորումն ու գնումների պլանավորումն իրականացնել ավելի հիմնավորված և հաշվարկված՝ բավականին մեծ չծախսված մնացորդից և ավելցուկային գնումներից խուսափելու համար:
- Ավելորդ ծախսերից խուսափելու համար որպես հիմնադրամի կենտրոնական գրասենյակի գործունեության տարածք օգտագործել Գյուղատնտեսության նախարարությունում առկա չզբաղեցված տարածքները:
- Սահմանել հիմնադրամին փոխանցված գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ընթացակարգեր:

***Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:***

**Հավելված 1**

| ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | | |
|---|---|---|---|---|
| N | **Ստորաբաժանման անվանում** | **Գործառույթներ** | **Հաս-տիք** | **2015-2017թթ. գործունեություն** |
| 1 | **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն** | Մշակում է գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը: | 129 | |
| 2 | **Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, կենտրոնական ապարատ** | Սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորում և վերահսկողություն, սահմանային հսկողություն: | 340 | |
| 3 | **ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ** | Սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում լաբորատոր փորձաքննությունների և ախտորոշումների իրականացում: | 180 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | **ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ** | Սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատում, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ռիկսերի վերլուծություն և գնահատում: | 51 | Իրականացրել է գիտական աշխատանքներ և համաճարակաբանական հետազոտություններ դաբաղ, բրուցելիոզ, մաշկաբորբ և աֆրիկյան ժանտախտ հիվանդությունների հայտնաբերման և ախտորոշման ուղղությամբ, անասնաբուժական վակցինաների, շիճուկների և ախտորոշիչների հետազոտություններ, մոլախոտերի դեմ պայքարի միջոցների փորձաքննություններ, վնասատուների դեմ պայքարի ինտեգրացված համակարգի մշակում, բույսերի հիվանդությունների գծով նոր սնկասպանների փորձարկումներ և բերքի մեջ պեստիցիդների մնացորդների քանակների ուսումնասիրություններ ու կենսաքիմիական հետազոտություններ: Ֆինանսավորվում է Գիտական պետական կոմիտեի կողմից: Տարեկան բյուջեն կազմում է 65,3 մլն դրամ: |
| 5 | **«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիա-յի ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ** | Սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատում, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ծառայությունների մատուցում և կենդանիների պատվաստումների իրականացում: | 64 | Դաշտային հետազոտությունների միջոցով իրականացրել է հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերում, ինչպես նաև անասնաբուժական հաշվետվությունների ընդունում, ամփոփում, պատվաստանյութերի բաշխում մարզերին և ախտահանության աշխատանքների կազմակերպում: Տարեկան բյուջեն կազմում է 134,8 մլն դրամ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | **Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն** | Իրականացնում է Գյուղատնտեսության նախարարությանը վերապահված գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման բնագավառի նկատմամբ վերահսկողական գործառույթներ և կիրառում է պատասխանատվության միջոցներ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների շահագործման բնագավառում: | 13 | 2017թ. ընթացքում կատարվել է 378 տեխնիկայի գրանցում, պետհամարանիշի հատկացում, 9 կցասայլի պետհամարանիշի հատկացում 672 տեխնիկայի գրանցում, վերագրանցում, հաշվառումից հանում 522 տրակտորիստ մեքենավարի վարման իրավունքի հատկացում, 16 տրակտորիստ մեքենավարի վարման իրավունքի կրկնօրինակի հատկացում, 463 պետական մենաշնորհային բնույթի ծառայություններ, 6 պետհամարանիշների կրկնակի հատկացում: |
| 7 | **Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ** | Հիմնադրամի նպատակն է ՀՀ գյուղատնտեսության զարգացման խթանումը, գյուղատնտեսության ոլորտին առնչվող ծրագրերի մշակմանը մասնակցությունը, իրականացումը և համակարգումը, մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի մշակումն ու իրականացումը և այլն: | 191 | Կազմակերպվել են խմբային դասընթացներ (լսարանային և գործնական), նկարահանվել է խորհրդատվական բնույթի 20 տեսանյութ: |
| 8 | **ՀՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ** | Գյուղատնտեսության բնագավառի գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանն աջակցություն, առանձին գիտահետազոտական ծրագրերի իրականացում և դրանց արդյունքների ներդրմանն աջակցություն, գյուղատնտեսության բնագավառում ռազմավարական ծրագրերի մշակում: | 6 | Հիմնադրամի կողմից հունիս ամսից մինչև դեկտեմբեր ամիսը Երևան քաղաքում կազմակերպվում է գյուղատնտեսական մթերքների 3 տոնավաճառ: Չի ֆինանսավորվում պետական բյուջեից: Տարեկան բյուջեն կազմում է 30 մլն դրամ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | **Հայաստանի խաղողագործութ-յան և գինեգործության հիմնադրամ** | Հիմնադրամի հիմնական գործառույթներն են՝ աջակցել գինու արտադրության ներուժ ունեցող՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող խաղողի սորտերի ընտրության ու բազմացման գործընթացներին, մասնակցել այգետարածքների մշակման, խաղողահումքի որակի բարելավման ու խնամքի, ընդլայնմանն ուղղված ծրագրերի մշակմանը և իրականացմանը և այլն: | 12 | Հայաստանում խաղողի այգիների կադաստրի համակարգի ստեղծման աշխատանքներ, ՀՀ-ում խաղողագինեգործության ոլորտի ներդրումային ծրագրի մոդելի մշակում /ՀՀ Վայոց ձորի մարզի օրինակով /, Աշխարհագրական նշումով գինիների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի բարելավում, ՀՀ խաղողագործության և գինեգործության, ինչպես նաև գինու տուրիզմի արժեշղթայի զարգաց ում, Մասնակցություն Միջազգային ցուցահանդեսներին և փառատոներին: Տարեկան բյուջեն կազմում է 200 մլն դրամ: |
| 10 | **«Լիցենզավորման կենտրոն» գործակալություն** | Գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման գործընթացի կազմակերպում. անաս-նաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրության լիցենզավորում, բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզավորում: | 3 | Հաշվառել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի բնագավառի 51 սուբյեկտի, դադարեցրել է 11-ի գործունեությունը: Հաշվառել է 23 ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի, խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրություններ, դադարեցրել է 7-ի լիցենզիաները: Տվել է բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման 54 լիցենզիա և անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման 77 հավաստագիր: Նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է: |
| 11 | **«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ** | Կայանի նպատակն է հացահատիկային մշակա-բույսերի, բազմամյա խոտա-բույսերի և կարտոֆիլի սերմերի սելեկցիոն գիտական հետա-զոտությունների իրականացումը Շիրակի դաշտավայրում: | 26 | Կայանի կողմից 296.04 հա տարածքի օգտագործման արդյունքում ստացվել է շուրջ 907տոննա բերք: Չի ֆինանսավորվում պետական բյուջեից: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 | **«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն»ՊՈԱԿ** | Ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով ուսումնասիրությունների իրականացում: | 23 | Հավաքագրել և վերլուծել են պետական մարմիններից, կազմակերպություններից և այլ աղբյուրներից 2016թ.-ի ընթացքում անտառօգտագործման, անտառվերականգնման, անտառների պահպանության, բնափայտի մթերման և իրացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք դասակարգվել և մուտքագրվել են տվյալների շտեմարան: Իրականացրել է անտառների պահպանության վիճակի վերաբերյալ դաշտային դիտարկումներ, <<Հայանտառ >> ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում և 2 բնության հատուկ պահպանվող տարածքներում: Տարեկան բյուջեն կազմում է 54,6 մլն դրամ: |
| 13 | **«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ** | Իրականացնում է գյուղատնտեսական հողերի բաղադրության, կազմի ագրոքիմիական հետազոտություններ: | 47 | Իրականացվել է 170 համայնքի 88286 հա հողատարածքից վերցրած 29429 նմուշում թվով 74455 լաբորատոր փորձաքննություն: Տարեկան բյուջեն կազմում է 71,3 մլն դրամ: |
| 14 | **«Սերմերի գործակալություն»** | Մշակաբույսերի սերմերի արտադրության և վերարտադրության արդյունավետ համա-կարգերի ստեղծում, սորտաթարմացման և սորտափորձարկման գործընթացում մշակաբույսերի սորտերի տնտեսական և կենսաբանական արժեքավոր հատկանիշների պահպանություն ու վերարտադրություն, բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող մշակաբույսերի նոր սորտերի տնտեսական օգտակարության պետական փորձարկումների անցկացում և օգտագործման համար թույլատրված սորտերի ցանկում ընդգրկելու վերաբերյալ | 25 | Իրականացվել են 15 սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանի հրապարակում, 115 բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ: Տարեկան բյուջեն կազմում է 59 մլն դրամ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առաջարկությունների ներկայացում: | | |
| 15 | **«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ** | Երկրագործության բնագավառում ավանդական տեխնոլոգիաների կատարելագործում, նոր տեխնոլոգիաների մշակում, հացազգի մշակաբույսերի նոր բերքատու սորտերի ստացում և ներդրում, ագրո-տեխնիկայի, սելեկցիայի, սերմնաբուծության, կենսաքիմիայի, ագրոէկոլոգիայի, կարտոֆիլաբուծության, կենսատեխնոլոգիայի ոլորտներում հետազոտությունների իրականացում,գյուղատնտե-սության բնագավառում գիտական կադրերի պատրաստում: | 23 | Փորձարկվել են 1304 հացահատիկային մշակաբույսերի սորտանմուշներ, 873 հատիկաընդեղենային մշակաբույսերի սորտանմուշներ, շրջանառվել է հացահատիկային մշակաբույսերի 2 սորտ, արտադրվել է 13,58 տոննա բազմացման տնկարանի, 80.25 տոննա էլիտա սերմացուներ: |
| 16 | **«Բանջարաբոստա-նային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ** | Բանջարաբոստանային մշակաբույսերի վերամշակման տեխնոլոգիաների մշակում, ստացված սորտերի և հիբրիդների տեխնոլոգիական գնահատում, սածիլների և սերմերի արտադրություն: | 32 | Աճեցրել է բարձր վերարտադրության սուպերէլիտային և էլիտային սերմեր, սածիլներ: Ֆինանսավորվում է Գիտության պետական կոմիտեի կողմից: |
| 17 | **«Հայկական միրգ» ԲԲԸ** | Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրի համընդհանուր նպատակին աջակցություն, հայկական մրգի համբավի ու բարի անվան տարածում տարածաշրջանային և միջազգային շուկաներում: | 2 | 2015թ.-ին Կազմակերպության կողմից ՀՀ Արագածոտնի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում տնկվել են 34,1 ընդհանուր տարածքով պտղատու այգիներ: Այժմ ֆինանսավորումը դադարեցվել է: |
| 18 | **ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Ագրոսպասարկում» ՓԲԸ** | Լուծարման փուլում է: | 0 | Գործունեություն չի իրականացրել: Չի ֆինանսավորվում պետական բյուջեից: |
| 19 | **«Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան» ՊՓԲԸ** | Լուծարման փուլում է: | 7 | Կատարվել են դաշտային փորձարկումներ նախորդ տարիների մշակաբույսերի աճեցման հետ կապված: Չի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ֆինանսավորվում պետական բյուջեից: |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 1174 | |

**Հավելված 2**

**ՀՀ -ում տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում 2015-2016 թթ.. ներկրված երինջների համար պարտքեր կուտակած խնդրահարույց շահառուների կողմից մինչև 2017 թ. հոկտեմբերի 2-ը կատարված վճարումների և 2017 թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ պարտավորությունների վերաբերյալ**

| Տնտեսությունը, ֆերմերը (շահառուները) | Պայման ագրի կնքման ամսաթիվը | Գլխաքանակը | 1 գլխի արժեք | Առկա քանակ | Պայմանագրի գինը (ՀՀ դրամ) | Փաստացի վճարվել է մինչև 2017 թ. հոկտեմբերի 2-ը (ՀՀ դրամ) | Մայր՝ ժամկետանց պարտավորությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2015 թվականին ներկրված երինջներ** | | | | | | | |
| Շիրակի մարզի գ. Սարագյուղ , գնորդ Գաբրիել Գաբրիելյան | 11/20/2015 | 10 հոլշտ | 1,215,873 | 9 | 12,158,727 | 1,371,310 | 2,376,067 |
| Գեղարքունիքի մարզի ք. Ճամբարակ, գնորդ Մամիկոն Խեչոյան | 11/20/2015 | 15 շվից | 1,215,873 | - | 18,238,091 | - | 5,471,427 |
| | 11/20/2015 | 20 շվից | 1,215,873 | - | 24,317,454 | - | 7,295,236 |
| | 11/20/2015 | 4 շվից | 1,215,873 | - | 4,863,491 | - | 1,459,047 |
| Շիրակի մարզի <<Բանդիվան կաթ>> ՍՊԸ՝ գնորդ Դավիթ Կարապետյան, գ. Բանդիվան | 11/20/2015 | 51 հոլշտին | 1,215,873 | | 62,009,508 | 6,383,057 | 12,401,878 |
| Շիրակի մարզի <<Բանդիվան կաթ>> ՍՊԸ՝ գնորդ Դավիթ Կարապետյան, գ. Բանդիվան | 11/20/2015 | 16 հոլշտին | 1,215,873 | | 19,453,963 | 2,060,357 | 3,890,758 |
| Շիրակի մարզի ք. Գյումրի <Ալեքպոլ> ՍՊԸ՝գնորդ Գուրգեն Չիլինգարյան**(մահացել է)** | 11/20/2015 | 31 շվից | 1,215,873 | 27 | 37,692,054 | - | 11,307,616 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կոտայքի մարզի գ. Սոլակ, գնորդ Սերոբ Կարապետյան | 11/20/2015 | 3 շվից | 1,215,873 | 2 | 3,647,618 | - | 1,094,285 |
| Շիրակի մարզի գ. Մեղրաշեն, գնորդ Գևորգ Բալոյան | 11/20/2015 | 10 հոլշտ | 1,215,873 | - | 12,158,727 | - | 3,647,618 |
| Վայոց Ձորի մարզի գ. Գլաձոր, գնորդ Սեյրան Մարգարյան | 11/20/2015 | 15 հոլշտ | 1,215,873 | - | 18,238,091 | - | 5,471,427 |
| Արագածոտնի մարզի գ. Բազմաղբյուր, գնորդ Ազատ Մխիթարյան | 11/20/2015 | 10 շվից | 1,215,873 | - | 12,158,727 | - | 3,647,618 |
| Գեղարքունիքի մարզի ք. Ճամբարակ, գնորդ Մեխակ Երիցյան | 11/20/2015 | 40 շվից | 1,215,873 | 18 | 48,634,908 | - | 14,590,472 |
| Արարատի մարզի գ. ՈՒրցաձոր, գնորդ Տիգրան Խաչատրյան | 11/20/2015 | 2 շվից | 1,215,873 | - | 2,431,745 | - | 729,524 |
| **Ընդամենը 2015 թ.** | | **227** | | **56** | **276,003,103** | **9,814,723** | **73,382,974** |
| **2016 թ. ներկրված երինջներ** | | | | | | | |
| Կարեն Միքաելյան, (գործ. վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Հարավ. թաղամաս, Չիմնի ՔՌԱ 3/2) | 7/1/2016 | 21 սիմենթալ | 1,140,261 | 21 | 23,945,477 | - | 2,394,548 |
| ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Դավիթ Մնոյան, (գործ. վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան) | 7/1/2016 | 15 սիմենթալ | 1,140,261 | 9 | 17,103,912 | 300,000 | 1,523,811 |
| Հովիկ Գալստյան, (գործ. վայրը՝ ՀՀ Շիրակի | 7/1/2016 | 29 շվից | 1,134,920 | 24 | 32,912,680 | - | 3,291,268 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| մարզ, գ. Աշոցք) | | | | | | | |
| Հակոբ Գոզուբոյուկյան, (գործ. վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գառնի) | 7/1/2016 | 15 սիմենթալ | 1,140,261 | 12 | 17,103,912 | - | 1,710,391 |
| Էդգար Սարգսյան, (գործ. վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Ջրափի) | 7/1/2016 | 16 շվից | 1,134,920 | 11 | 18,158,720 | 1,100,000 | 851,154 |
| <<Դսեղի գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն>> սպառողական կոոպերատիվ, (գործ. վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Դսեղ) | 7/1/2016 | 64 շվից | 1,134,920 | 57 | 72,634,880 | - | 7,263,488 |
| Գևորգ Բալոյան, (գործ. վայրը՝ՀՀ Շիրակի մարզ, Արթիկի տարածաշրջան գ. Մեղրաշեն) | 7/1/2016 | 10 սիմենթալ | 1,140,261 | 7 | 11,402,608 | - | 1,140,261 |
| Գագիկ Հակոբյան, (գործ. վայրը՝ՀՀ Արարատի մարզ, գ. Արարատ) | 7/19/2016 | 41 շվից | 1,134,920 | - | 46,531,720 | - | 4,653,172 |
| Աբրահամ Դանիելյան, (գործ. վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Զառ) | 7/19/2016 | 21 շվից | 1,134,920 | 13 | 23,833,320 | - | 2,383,332 |
| Մուրադ Բաբախանյան, (գործ. վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Զառ) | 7/19/2016 | 11 շվից | 1,134,920 | 8 | 12,484,120 | - | 1,248,412 |
| քաղաքացի Ազատ Մխիթարյան՝ (գործ վայրը՝ ՀՀ | 8/5/2016 | 5 շվից | 1,134,920 | - | 5,674,600 | - | 567,460 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտնի մարզ, գ. Բազմաղբյուր) | | | | | | | |
| <<Ագրոհոլդինգ Արմենիա>> ՍՊԸ, (գործ. վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Պանրագործնե րի թաղ, անասնապահ. համալիր N1) | 10/5/2016 | 171 հոլշտին | 1,116,227 | 157 | 190,874,817 | - | 19,087,485 |
| **Ընդամենը 2016թ.** | | **419** | | **319** | **472,660,766** | **1,400,000** | **46,114,782** |

*Հավելված 3*

# Պարզաբանումներ

**ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի առանձին ստորաբաժանումներին վերապահված գործառույթների և 2015-2017թթ. իրականացված գործունեության վերաբերյալ**

Ստուգում իրականացնող հանձնաժողովի կողմից 13.03.2018թ. կազմված արձանագրությանը (այսուհետ՝ Արձանագրություն) կից ներկայացված Հավելված 1-ում ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի առանձին ստորաբաժանումներին վերապահված գործառույթները և 2015-2017թթ. իրականացված գործունեությունը ներկայացված է խիստ համառոտ:

Նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև նախարարության ներքո գործող կազմակերպությունները իրականացնում են կանոնադրությամբ և համապատասխան իրավական ակտերով յուրաքանչյուրին վերապահված այլ գործառույթներ և դրանցից բխող գործունեություն:

**ՀՀ հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների և ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ**

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 1-ին կետի վերաբերյալ՝

ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Ագրոքիմիական ծառայություն>> ՊՈԱԿ-ը <<Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ>> ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի իրականացնում է թվով 170 համայնքի հողատարածքներից վերցված հողերի լաբորատոր փորձաքննություն, որի արդյունքների հիման վրա կազմվում են ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, որտեղ հստակ նշվում է պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ մշակաբույսերի և պարարտացման ժամկետների, որոնք էլ հանձնվել են համապատասխան համայնքապետարաններ: <<Ագրոքիմիական ծառայություն>> ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները կարևոր ուղեցույց են պարարտացման արդյունավետ չափաքանակների ընտրության հարցում, որոնք էլ հիմք են հանդիսացել ծրագրում սահմանել ֆոսֆորի՝ 400 կգ/հա և կալիումի՝ 150 կգ/հա չափաքանակները: Սակայն հողօգտագործողները սեփական հայեցողությամբ են կազմակերպում հողատարածքների պարարտացման աշխատանքները և ընտրում պարարտանյութի տեսակը:

Ինչ վերաբերվում է այն հարցին, որ <<Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման>> ծրագիրը կրում է սոցիալական բնույթ և «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները չեն ծառայում իրենց նպատակին, ապա տեղեկացնում ենք, որ հողօգտագործողների կողմից ներկայացված հայտերի հանրագումարով որոշվել է ոչ թե հանրապետությանը անհրաժեշտ պարարտանյութերի պահանջարկը, այլ <<Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման>> ծրագրի շրջանակներում վճարունակ հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերի պահանջարկը, հետևաբար այս երկու ծրագրերը համադրելի չեն և չեն կարող միմյանց հանդեպ համեմատման բազա հանդիսանալ:

Լրացուցիչ տեղեկացնում ենք, որ «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հետազոտվում են ինչպես մշակվող, այնպես էլ անմշակ հողերի կազմը:

Հողերի միակողմանի պարարտացումից խուսափելու, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով պարարտացումը խթանելու նպատակով 2018 թվականի պետական աջակցության ծրագրով նախատեսվել է սուբսիդավորել միայն ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը:

Հողատարածքների միակողմանի պարարտացումից խուսափելու վերաբերյալ հողօգտագործողներին իրազեկելու նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը բազմիցս գրավոր և բանավոր տեղեկացրել է մարզպետարաններին՝ այդ ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 3-րդ կետի վերաբերյալ՝

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության կողմից կատարվել են բանավոր հարցումներ, որոնք հիմք են հանդիսացել մատակարարներին 1 տոննայի հաշվով 6250 դրամ դրամաշնորհ տրամադրելու համար: Ստորև ներկայացվում է 1 տոննա պարարտանյութի բեռնաթափման և համայնքներ տեղափոխման համար կատարված ծախսերը՝ ներառյալ հարկերը.

- վագոնից բեռնաթափում և մեքենաների բեռնում-1500 դրամ,
- մեքենաներից բեռնաթափում պահեստ-1500 դրամ,
- պահեստից բարձում մեքենաները -1500 դրամ,
- 1 տոննայի տեղափոխումը դեպի համայնքներ միջինը – 1750 դրամ:

Վերոնշյալ գներն ուղարկվել են շահագրգիռ նախարարություններ, որի վերաբերյալ որևէ առարկություններ չեն ստացվել:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 4-րդ կետի վերաբերյալ՝

Ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութերի մնացորդային քանակությունները գոյացել են հողօգտագործողների կողմից համապատասխան վճարունակ պահանջարկ չներկայացնելու պատճառով: Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը սերտ համագործակցել է մարզպետարանների հետ՝ պարարտանյութերի ներկայացված քանակությունների իրացումն ապահովելու հարցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ծրագրով նախատեսված պարարտանյութերի մնացորդային քանակությունները բացասական ազդեցություն չեն ունեցել ծրագրի նպատակային արդյունքների վրա, քանի որ դրանք բաշխվել են հաջորդ տարվա ծրագրի շրջանակներում: 2017 թվականին պարարտանյութերի մնացորդային որևէ քանակություն ծրագրի ավարտին չի արձանագրվել:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 5-րդ կետի վերաբերյալ՝

2016 թվականին իրականացրած ծրագրի շրջանակներում «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին և «Հրաշք այգի» ՍՊԸ-ին ամբողջությամբ տրամադրվել է միայն սուբսիդիայի գումարը պարարտանյութերի նախատեսված քանակների ներկրումը արտերկրից և հողօգտագործողներին բաշխումը արդյունավետ ժամկետներում կազմակերպելու նպատակով: Տեղափոխման գումարը «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին տրամադրվել է ըստ բաշխված քանակների (համաձայն ներկայացված հաշվետվությունների), իսկ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին տեղափոխման գումար չի տրամադրվել, քանի որ դեռևս 2014 թվականից առկա է եղել տեղափոխման գումարի մնացորդ:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 6-րդ և 7-րդ կետերի վերաբերյալ՝

Քանի որ պարարտանյութերը գնվել են արտերկրից և վճարվել է գումարն ամբողջությամբ, սակայն չեն իրացվել հողօգտագործողների համապատասխան քանակի վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով, այն հանգեցրել է մատակարարների կողմից չօգտագործված գումարների հետվերադարձման ֆինանսական դժվարությունների:

Ազոտական պարարտանյութի 2944 տոննա չներկրված քանակությունը պայմանավորված է եղել արտադրող կազմակերպության և մատակարարի միջև ծագած ֆինանսական և իրավաբանական անհամաձայնություններով: Սակայն 2017 թվականին ծրագրի մեկնարկից հետո մատակարարն ապահովել է 2944 տոննա ազոտական պարարտանյութի ներկրումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի փետրվարի 15-ի N 40-Ա հրամանով հաստատված <<Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար>> ծրագրի 4-րդ կետով ոչ թե հանձնարարվել է նախորդ տարվա մնացորդի բաշխումն իրականացնել, այլ որպես ծրագրային դրույթ նախատեսվել է, թե ինչպես կարելի է տնօրինել նախորդ տարվա ծրագրի մնացորդ պարարտանյութը և միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ընդունելուց և համապատասխան պայմանագիր կնքելուց հետո ծրագրի մատակարար տնտեսավարողները պարտավորվել են իրականացնել ծրագրի 4-րդ կետով նախատեսված դրույթը:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 8-րդ կետի վերաբերյալ՝

Հողօգտագործողների կողմից օգտագործված պարարտանյութերի վճարման պարտավորությունները պայմանավորված են բնական աղետներով՝ կարկուտ, ուշ գարնանային ցրտահարություն: Առավել վնաս կրած հողօգտագործողներին պարարտանյութերը հատկացվել են ցանքատարածությունների արագ վերականգման նպատակով: Սակայն կրկնակի կարկտահարության հետևանքով հողօգտագործողները չեն կարողացել հետ վերադարձնել գոյացած պարտքերը, որն էլ զիջվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 1585-Ն որոշմամբ:

Արձանագրության <<Արձանագրված խնդիրներ>> բաժնի 9-րդ կետի վերաբերյալ՝

2016 և 2017 թվականների ծրագրերի իրականացման համար կազմակերպված գնային հարցումների արդյունքում սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր են կնքվել նվազագույն շահավետ գին առաջարկած մատակարարների հետ:

2016 և 2017 թվականին տրամադրված սուբսիդիաների տարբերությունը պայմանավորված է մատակարարների կողմից ներկայացված գնային առաջարկների տարբերությամբ:

Հաշվի առնելով ծրագրերի նախորդ տարիների փորձը, ծրագրի իրականացման մոտեցումների բարելավման նպատակով, 2017 թվականին ծրագրի իրականացման շրջանակներում սուբսիդիաները մատակարար կազմակերպություններին տրամադրվել են համաձայն ներկայացրած կատարողականների:

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2007-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արձանագրված խնդիրների 1-ին կետի կապակցությամբ հայտնում եմ՝ երինջների բաշխումն իրականացվել է համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կազմը և տոհմային երինջների հատկացման կարգը հաստատելու մասին» N 126-Ա հրամանի, որտեղ շահառուների ֆինանսական հնարավորությունների գնահատման վերաբերյալ դրույթ նախատեսված չէ:

2-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Վաճառող) և շահառուի (այսուհետ՝ Գնորդ) միջև կնքված «Տարաժամկետ վճարման պայմանով առքուվաճառքի պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.8. կամ 2.4.9. կետերի՝ Գնորդի պարտականություններից է առնվազն տարին մեկ անգամ Վաճառողին ներկայացնել հաշվետվություն՝ ներկրված տոհմային երինջների պահպանվածության, ելքերի, ստացված հորթերի և կաթնատվության ցուցանիշների վերաբերյալ:

Նշված հաշվետվությունները պատշաճ կերպով ներկայացվել են հիմնականում Ծրագրի շահառու խոշոր համալիրների («Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ, «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ, «Ալեքպոլ» ՍՊԸ, «Վամաքս» ՍՊԸ) և մի շարք ֆերմերային տնտեսությունների կողմից: Միաժամանակ, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալների համապատասխան գրություններով շահառուները պարբերաբար ծանուցվել են (առնվազն տարին երկու անգամ) վճարման ժամանակացույցին համապատասխան պայմանագրային պարտավորությունները ժամանակին իրականացնելու, ինչպես նաև վերոգրյալ կետերով սահմանված պարտականությունները կատարելու ուղղությամբ, քանի որ Պայմանագրով նախատեսված վերահսկողական այլ մեխանիզմներ նախատեսված չեն, իսկ ծրագրի շահառուների հետ կնքված պայմանագրերում Վաճառողի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման իրավունքն ամրագրված է բացառապես Պայմանագրի 2.1.5 կետում, համաձայն որի՝ Վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Գնորդը էականորեն խախտել է այն, իսկ Պայմանագրի 2.1.5.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե 2 և ավելի անգամ խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

Հարկ է նշել, որ 2016 թվականի մարտ ամսին և 2017 թվականի հուլիս ամսին (ՀՀ Նախագահի հանձնարարական) ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվել են Ծրագրի մշտադիտարկումներ, իսկ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում անհրաժեշտ ցուցանիշների հավաքագրման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան մասնագետները պարբերաբար իրականացրել են շրջայցեր:

4-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ Ծրագրի շրջանակներում հանրապետություն ներկրված բարձրարժեք տոհմային երինջների խմբաքանակից 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված «Տարաժամկետ վճարման պայմանով առքուվաճառքի» N ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-109 պայմանագրով (այսուհետ՝ N1 Պայմանագիր) Ազատ Մխիթարյանին հատկացվել են 10 գլուխ շվից ցեղի տոհմային երինջներ, որոնց դիմաց պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված առաջին փուլի վճարումը շահառուն պետք է իրականացներ 2016 թվականի սեպտեմբերի 25-ին, իսկ 2016 թվականին հատկացված 5 գլուխ շվից ցեղի տոհմային երինջների հանձնում-ընդունումը իրականացվել է 2016 թվականի ապրիլի 16-ին (2016 թվականի օգոստոսի 5-ի N ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-121 պայմանագիր (այսուհետ՝ N2 Պայմանագիր), ուստի նշված ժամանակահատվածում Ազատ Մխիթարյանը N1 Պայմանագրի մասով դեռևս ժամկետանց պարտավորություններ չի ունեցել:

Հարկ է նշել, որ Ծրագրի շրջանակներում գոյացած ժամկետանց պարտավորությունները բռնագանձելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ դատարաններ են ներկայացվել 127 դատական գործեր:

Ծրագրի շրջանակներում ժամկետանց պարտավորությունների բռնագանձմամբ պայմանավորված՝ սնանկության վարույթ է իրականացվում 7 տնտեսավարողների նկատմամբ և պարտատերերի ցուցակում ընդգրկվելու համար ներկայացվել է ընդամենը 199 387 294 ՀՀ դրամ 38 լումայի պահանջ:

Միաժամանակ, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից Ծրագրի վերաբերյալ ներկայացված խնդիրներն ի հայտ են եկել նաև տարբեր ժամանակահատվածներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, ինչի մասին ամբողջական տեղեկատվությունը պարբերաբար ներկայացվել է ՀՀ կառավարության և ՀՀ Նախագահի աշխատակազմեր:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերլուծելով Ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, դեռևս 2016 թվականից գտնվել է ոչ նպատակահարմար նախկինում կիրառված մեխանիզմներով ծրագրի շարունակումը: Սակայն, կարևորելով հանրապետությունում տավարաբուծության զարգացման խիստ անհրաժեշտությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն հաստատման է ներկայացվել բանկային երաշխիքի, կանխավճարի, ինչպես նաև երաշխավորների ինստիտուտի կիրառմամբ «Հայաստանի

Հանրապետությունում 2017-2022 թվականներին տավարաբուծության զարգացման ծրագիր» (ՀՀ կառավարության նիստում ընդունման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 թվականի ապրիլի 2-ը):

**ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն**

**ՀՀ-ում 2016 թվականին գարնանացան գարու, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի վերաբերյալ**

Արձանագրված խնդիրների **2-րդ կետի** կապակցությամբ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N 74-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 19-րդ կետի՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը ՀՀ մարզպետարանների հետ կնքել է համապատասխան պայմանագրեր՝ որոշման 18-րդ կետով ներկայացված սերմացուների քանակների հիման վրա: Համաձայն ծրագրի 21-րդ կետի՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը կնքված պայմանագրերի համաձայն սերմացուն մարզերում հատկացրել է ՀՀ մարզպետարաններին՝ ապահովելով սերմերի բեռնաթափումը մարզպետարանների կողմից հատկացված պահեստներում: Սակայն ՀՀ մարզպետարանների կողմից խախտվել է ծրագրի 20-րդ կետը, և սերմացուների բաշխումը կատարվել է առանց նախապես վճարելու պայմանով, որի արդյունքում առաջացել է 26 մլն. դրամի չափով պարտք: Նշված գումարը վերականգնելու նպատակով «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը հայցեր է ներկայացրել համապատասխան դատարաններ՝ գումարը վերականգնելու համար:

***<u>Գնման գործընթացի վերաբերյալ</u>***

Արձանագրված խնդիրների 2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Ձեր նշած ժամանակագրական անհամապատասխանությունները, ինչպես նաև գնումների պլանի թարմացված, նախահաշվային գներով տարբերակի չհրապարակումը գնումները համակարգողի և հանձնաժողովի քարտուղարի անփութության հետևանք են: Ինչ վերաբերվում է գնման պլաններին՝ դրանց լրացված, կնքված և ստորագրված տարբերակները հայտնաբերվել են հիմնական փաթեթից առանձին, դրանց չհրապարակման պատճառները մեզ հայտնի չեն:

3-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ դեռևս ՀՀ գյուղատնտեսության նախարարի աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի մարտի 3-ի N ԱԿ/ԿԱ-1/1443-14 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին խնդրվել է տալ մասնագիտական խորհրդատվություն նմանատիպ իրավիճակների կապակցությամբ, որին ի պատասխան «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 2014 թվականի ապրիլի 25-ի N 04/033-743 գրությամբ (պատճենը կցվում է) պարզաբանվել է. «որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող գնումները չեն հանդիսանում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումներ, ինչպես նաև այն, որ նշված մարմինների գնումների պլանները և դրանցում կատարվող փոփոխությունները հաստատվում են պատվիրատուի ղեկավարի կողմից»: Ուստի գնումների անհետաձգելի կամ հրատապ համարելու լիազորությունները վերապահված են «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրենին (կցվում է): Նշենք նաև, որ նշված ընթացակարգով հրավերներ են ուղարկվել թվով 18 կազմակերպությունների:

4-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ գնման գործընթացի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը www.old.gnumner.am կայքում չհրապարակվելու պատճառները մեզ հայտնի չեն, քանի որ դրա պատասխանատուն գնումների համակարգողն է: Նշված հայտարարության էլեկտրոնային տարբերակը համակարգչում առկա է (կցվում է), իսկ 2017 թվականի կնքված պայմանագրի մասին հայտարարությունը առկա է վերոնշյալ կայքում:

5-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ նախահաշվային գները երևում են 2016 թվականի հունվարի 20-ի և 2017 թվականի փետրվարի 17-ի հայտերում:

**ՀՀ-ում 2017 թվականին գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրերի վերաբերյալ**

Արձանագրված խնդիրների **1-ին կետի** կապակցությամբ հայտնում ենք, որ ծրագրի իրականացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ մարզերից ներկայացվել է 1876 տոննա գարնանացան մշակաբույսերի սերմացուների հայտ: Այնուհետև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա կատարվել է քանակների նվազեցում՝ 166 տոնայի չափով և կազմել է 1710 տոննա: Ծրագրի համաձայն սերմացուները տրամադրվել են փաստացի կատարված վճարումների հիման վրա: Չի իրացվել 871 տոննա սերմացու, որը պահեստավորվել է: Պայմանավորված 2018 թվականին գյուղատնտեսական աշխատանքները վաղ սկսելու հանգամանքով՝ հողօգտագործողների կողմից փաստացի կատարված վճարումների հիման վրա սկսվել է պահեստավորված 871 տոննա սերմացուի բաշխման գործընթացը:

***<u>Գնման գործընթացի վերաբերյալ</u>***

Արձանագրված խնդիրների 1-ին կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Ձեր նշած ժամանակագրական անհամապատասխանությունները, ինչպես նաև գնումների պլանի թարմացված, նախահաշվային գներով տարբերակի չհրապարակումը գնումները համակարգողի և հանձնաժողովի քարտուղարի անփութության հետևանք են: Ինչ վերաբերվում է գնման պլաններին՝ դրանց լրացված, կնքված և ստորագրված տարբերակները հայտնաբերվել են հիմնական փաթեթից առանձին, դրանց չհրապարակման պատճառները մեզ հայտնի չեն:

2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ դեռևս ՀՀ գյուղատնտեսության նախարարի աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի մարտի 3-ի N ԱԿ/ԿԱ-1/1443-14 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին խնդրվել է տալ մասնագիտական խորհրդատվություն նմանատիպ իրավիճակների կապակցությամբ, որին ի պատասխան «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 2014 թվականի ապրիլի 25-ի N 04/033-743 գրությամբ (պատճենը կցվում է) պարզաբանվել է. «որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող գնումները չեն հանդիսանում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումներ, ինչպես նաև այն, որ նշված մարմինների գնումների պլանները և դրանցում կատարվող փոփոխությունները հաստատվում են պատվիրատուի ղեկավարի կողմից»: Ուստի գնումների անհետաձգելի կամ հրատապ համարելու լիազորությունները վերապահված են «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրենին (կցվում է): Նշենք նաև, որ նշված ընթացակարգով հրավերներ են ուղարկվել թվով 18 կազմակերպությունների:

***<u>2016-2017թթ. սերմերի ձեռք բերման գնման ընթացակարգերի վերաբերյալ</u>***

Արձանագրված խնդիրների 1-ին կետի 1-ին ենթակետում նշված գնման հայտ չլինելու խնդրի կապակցությամբ հայտնում եմ, որ գնման հայտերն առկա են՝ հաստատված պատասխանատու ստորաբաժանման կողմից 2016 թվականի հունվարի 20-ին և 2017 թվականի փետրվարի 17-ին:

Նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված պատասխանատու ստորաբաժանման համապատասխան անձի և գնահատման հանձնաժողովի անդամների մերձավոր ազգակցության կամ խնամիության բացակայության մասին ստորագրված հայտարարությունները, ինչպես նաև 4-րդ ենթակետում նշված գնահատման թերթիկներն առկա են, սակայն պահպանվել են հիմնական փաթեթներից առանձին:

5-րդ ենթակետում նշված գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի արձանագրությունների թղթային տարբերակները հանձնաժողովի անդամների պնդմամբ պատշաճ ստորագրված են եղել և հանձնված հանձնաժողովի քարտուղարին, սակայն չեն հայտնաբերվել փաթեթներում:

6-րդ ենթակետի կապակցությամբ հայտնում ենք, որ

**2016 թվական** - շուկայական գինն ուսումնասիրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության կողմից, գնահարցում է ուղարկվել մոտ 10 կազմակերպության և ստացվել են համապատասխան գնառաջարկներ: Հաղթող կազմակերպության կողմից ներկայացված գնառաջարկը եղել է ավելի ցածր: «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից 18 ռուսական կազմակերպությունների ուղարկվել են հայտեր, մրցույթին մասնակցել է 2 կազմակերպություն՝ «ԱՏ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր»» ՍՊԸ-ն և «Սեմենա Ստավրոպոլյա» ՍՊԸ-ն: Մրցույթի ժամանակ փաթեթները բացելու ընթացքում «Սեմենա Ստավրոպոլյա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել մրցույթի պահանջներին: Արդյունքում հաղթող է ճանաչվել «ԱՏ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր»» ՍՊԸ-ն: Գարնանացան գարու սերմացուի 1 կգ-ի սկզբնական գինը կազմել է 389.5 դրամ, կորնգանի սերմացուի գինը՝ 675.5 դրամ: Բանակցությունների ընթացքում գները նվազել են և կազմել գարին 244 դրամ, կորնգանը՝ 510 դրամ: Նախահաշվային գին կազմված է եղել: Ներկրման գինը ձևավորվել է հետևյալ կերպ. սերմի շուկայական գին, ախտահանում, պարկավորում կազմակերպության ապրանքանշանով պարկերում, բարձում մեքենաներ, տեղափոխում ՀՀ մարզերի քաղաքներ՝ համաձայն մատակարարման ժամանակացույցի:

**2017 թվական** - շուկայական գինը նույնպես ուսումնասիրվել է, կազմվել է նախահաշվային գին, մրցույթին մասնակցել է 1 կազմակերպություն՝ «ԱՏ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր»» ՍՊԸ-ն, բանակցելու արդյունքում գինը նվազել է: Ներկրման գինը ձևավորվել է հետևյալ կերպ. սերմի շուկայական գին, ախտահանում, պարկավորում կազմակերպության ապրանքանշանով պարկերում, բարձում մեքենաներ, տեղափոխում ՀՀ մարզերի քաղաքներ՝ համաձայն մատակարարման ժամանակացույցի: Տեղեկացնում եմ նաև, որ ռուբլու կուրսի տատանման հետևանքով դրամային արժեքը փոխվել է և համապատասխանել 2016 թվականի գնառաջարկին: Այլ կազմակերպությունների հետ հեռախոսային զրույցներ են եղել, մրցույթին չմասնակցելը հիմնավորել են հետևյալ կերպ.

Ա. ներկրման սուղ ժամկետները,

Բ. արտերկրի կազմակերպությունները չեն ցանկանում հայկական դրամով գործարքներ կատարել, քանի որ ռուբլու կուրսի տատանման հետևանքով որոշակի գումարներ են կորցնում,

Գ. մեր կողմից վճարումը պետք է կատարվի բանկային երաշխիքի առկայության դեպքում կամ ապրանքը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի վերաբերյալ**

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 26/2 որոշման հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում իրականացված ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ արձանագրության՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) առնչվող մասի վերջին պարբերությունում նշված նկատառումների վերաբերյալ հայտնվում է հետևյալը.

Ծրագրում շահառուներին վերաբերող չափորոշիչների և գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման պայմանների վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ Ծրագրի 25-րդ մասի 9-րդ կետի ա. ենթակետով սահմանված է, որ ծրագրի մասնակից կարող են հանդիսանալ «գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման համար սույն ծրագրի պայմաններին համապատասխան լիզինգի պայմանագիր կնքած գյուղատնտեսությունում տնտեսավարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը), որոնք բավարարում են ծրագրին մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները», իսկ Ծրագրի Աղյուսակ 4-ում նշված է. «Լիզինգը տրամադրվում է ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին), անհատ ձեռնարկատերերին, գյուղացիական տնտեսություններին, ինչպես նաև մշտական եկամտի աղբյուր ունեցող ֆիզիկական անձանց»:

Ինչ վերաբերում է **գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման պայմաններին,** ապա այն սովորաբար սահմանվում է կոնկրետ գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական բնութագրով (կանոններով): Շահագործման պայմանների պահպանման վերաբերյալ դրույթներ սահմանված են նաև լիզինգառուի և ֆինանսական կառույցի միջև կնքված լիզինգի պայմանագրով, որում ամրագրված են հետևյալ դրույթները. «Գույքն օգտագործել դրա նպատակայնությանը համապատասխան և թույլ չտալ շահագործման կանոններում նշված փոխադրման, պահպանման և շահագործման կանոնների խախտում; առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկատարել Գույքի կառուցվածքային փոփոխություններ; պահպանել և կատարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները, որոնք ներկայացվում են Գույքից օգտվելու և այն պահպանելու համար»: Միաժամանակ, ծրագրի 25-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ «ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը Հայաստանի Հանրապետություն պետք է իրականացվի մասնագիտացված կառույցների կողմից, որոնք կիրականացնեն նաև գյուղատնտեսական տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկում», իսկ համաձայն Ծրագրի Աղյուսակ 4-ի՝ «լիզինգի առարկան բանկի կամ վարկային կազմակերպության հաշվին, լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից (կասկո)»:

<u>Գերատեսչական, հսկողական և արդյունավետության գնահատման չափանիշների և չափորոշիչների</u> հետ կապված նշենք, որ Ծրագրի V բաժինը առնչվում է Ծրագրի մոնիթորինգին, որտեղ ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից լիզինգառուների ծրագրի պայմաններին համապատասխանության ստուգումների իրականացման և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հաշվետվություն ներկայացնելու մասին դրույթներ: Ընդ որում, համաձայն Ծրագրի 30-րդ մասի 3-րդ կետի՝ վերը նշված հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն «հայտնաբերված խախտումների մասին»: Միաժամանակ, Ծրագրի 25-րդ մասի 11-րդ կետով սահմանված են լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցման դրույթները, որի բ. ենթակետով սահմանված է, որ լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է, երբ լիզինգի առարկան չի պահպանվում սահմանված պահանջներով:

<u>Տոկոսադրույքի սուբսիդավորման առավելագույն գումարի չափ սահմանված չլինելու</u> հարցի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ Ծրագրի 25-րդ մասի 9-րդ կետի ա) ենթակետով սահմանված է, որ Ծրագրի շրջանակում նույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 200 մլն դրամը, որն էլ հիմք ունենալով, ըստ տեխնիկայի տեսակի և լիզինգի ժամկետի հաշվարկվում է լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը:

Ծրագրի շահառու «Ֆիառ Գրուպ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ-02662368/ ստեղծվել է (գրանցվել է ) 2017 թվականի հունիսի 23-ին և համաձայն ՊԵԿ-ի http:// taxservice.am կայքում տեղադրված տեղեկատվության համարվում է գործող կազմակերպություն, ինչը հավաստում է ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված տեղեկատվությունը:

Աղյուսակ




«Ֆիառ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ձեռքբերված տեխնիկայի ընդհանուր գումարը կազմել է 198,570.0 հազ. ՀՀ դրամ,ապրանքների մատակարարումը կատարել է «Հրաշք այգի» ՍՊԸ-ն /ուղիղ գնումով/, որպես ֆինանսավորող կազմակերպություն հանդես է եկել ««Փոքր և միջին ձեռնարկությունների ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ԳՆ լիազորությունների շրջանակում չէ, թե ինչ և ում միջոցներով է ձեռք բերվել ծրագրի համապատասխան տեխնիկան, որպես կողմ ՀՀ ԳՆ-ի կողմից չեն արձանագրվել պայմանագրի շեղումներ:

**Գյուղտեխնիկայի կայանի կազմակերպման ծրագրի վերաբերյալ**

Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագրի նպատակը հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը: Պետական օժանդակությամբ գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպումը նպատակ ունի խթան հանդիսանալ ոլորտում մասնավոր կայանների ստեղծմանը: Վերադարձվող գումարով ՀՀ-ում այլ գյուղտեխնիկայի կայանների ստեղծման կամ արդեն իսկ գործող կայանների ընդլայնման անհրաժեշտության պարագայում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է համապատասխան որոշում կայացնել:

Գյուղատնտեսական տեխնիկայի օտարումից ստացված ամբողջ գումարը Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից կարող է օգտագործվել իր կանոնադրական նպատակներից ելնելով՝ այդ թվում նաև գյուղատնտեսության ոլորտին առնչվող ծրագրերում ներդրումներ իրականացնելու, մասնավոր հատվածի հետ համատեղ գյուղատնտեսական ներդրումային ծրագրերի մշակման, կառավարման, ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության գործիքների կիրառման, ծրագրերի իրականացմանը շարունակական աջակցություն տրամադրման միջոցով: Հիմնադրամի միջոցների ծախսման ուղղությունները որոշում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման նպատակով ներկայացված առաջարկները գնահատող հանձնաժողովի կազմում ներառված են եղել ինչպես ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի, այնպես էլ

գիտական կառույցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը ներկայացված առաջարկությունների գնահատումը իրականացրել է ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխան:

Գյուղատնտեսական տեխնիկայի կազմակերպման համար պետության կողմից տրամադրված ամբողջ գումարի, այդ թվում նաև հավելավճարի մարման ժամանակացույցը և չափը սահմանված է ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 20 արձանագրային որոշմամբ հաստատված ծրագրում:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 516-Ն որոշման 4-րդ կետի համաձայն գյուղատնտեսական տեխնիկայի համար «Իդաս» ՍՊԸ-ի կողմից վճարվող ամբողջ գումարը (գյուղտեխնիկայի արժեք և հավելավճարներ) սահմանվելու են տարաժամկետ վճարման պայմանով օտարելու պայմանագրով, ինչը բխելու է ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 20 արձանագրային որոշմամբ հաստատված ծրագրից:

Միևնույն ժամանակ առավել հստակություն մտցնելու նպատակով մշակվում է կառավարության որոշման նախագիծ, որով ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 516-Ն որոշման 4-րդ կետում «պայմանագրի գնի ամբողջությամբ վճարումը բառերից առաջ» կլրացվեն «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի և «Իդաս» ՍՊԸ-ի միջև կնքվող» բառերը:

Ծրագրի նպատակները և խնդիրները, հանրապետությունում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման և ծրագրի իրականացման ռիսկերի գնահատումը, ծրագրի իրականացման ֆինանսական գնահատականը, ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները սահմանված են Ծրագրում: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի չափորոշիչները, համապատասխան տեխնիկայի վերաբերյալ ներկայացված գնառաջարկները (այդ թվում նաև արտադրող ընկերություններից) ևս սահմանված են Ծրագրում:

Ինչ վերաբերում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տեխնիկայի նպատակային շահագործման մասով հսկողական մեխանիզմների բացակայությանը, ապա հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հաստատված գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագրի 5-րդ գլխում նախատեսված են ինչպես ծրագրի մոնիթորինգի, այնպես էլ ծրագրի պայմաններին համապատասխանությունն ստուգելու մեխանիզմների վերաբերյալ դրույթներ :

Տեխնիկայի նպատակային շահագործման առավել մանրամասն հսկողական մեխանիզմեր կամրագրվեն նաև «Իդաս» ՍՊԸ-ի հետ կնքվելիք պայմանագրով:

Ծրագրի շրջանակներում ձեռքբերված թվով 7 գութանների շուկայական գների ուսումնասիրության վերաբերյալ, հայտնում ենք, որ շուկայական գների ուսումնասիրությունը օրենքի պահանջ չէ և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

**Բույսերի պաշտպանության միջոցառումներ ծրագրի վերաբերյալ**

Արձանագրված խնդիրների 1-ին կետի վերաբերյալ՝ Անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառման համար անհրաժեշտ պեստիցիդների շուկայի ուսումնասիրություն իրականացվել է ինչպես նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության, այնպես էլ գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության մասնագետների կողմից: Կողմնորոշիչ գնի համար հիմք է հանդիսացել 2011-2015 թվականներին կնքված պայմանագրերի, ինչպես նաև շուկայական միջին գները, որը կազմել է 4150 դրամ: Հարկ է նաև նշել, որ շուկայական գների ուսումնասիրությունը օրենքի պահանջ չէ և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Արձանագրված խնդիրների 2-րդ կետի վերաբերյալ՝

Հայտը կազմելիս հաշվի է առնվել նախորդ տարիների փորձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի

Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկը հաստատելու մասին» 02-Ն հրամանով հաստատված անվանացանկում ընդգրկված «ցիպերմետրին 250 գ/լ» ազդող նյութով գրանցված ապրանքանիշերի տեսականին: 2016 թվականի մայիսին այդ անվանացանկում ներառված էին տարբեր երկրների ու ընկերությունների արտադրության 15 ապրանքանիշեր («Արրիվո (1.012)», «Ալեքսանդր (1.015)», «Կռալ (1.047)», «Շերպա (1.061)», «Վալսացիպեր (1.086)», «Ցիմբուշ (1.091)», «Ցիպերկիլ (1.092)», «Ցիպեր մաքսի (1.093)», «Ցիտկոր (1.094)», «Տրիումֆ (1.118)», «Ատրին (1.122)», «Արիբո (1.176)», «Արգո (1.191)», «Շարպեյ (1.222)» և «Զալպ (1.317)»):

2016 թվականի ապրիլի 11-ի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի N 01-09/45 գրությամբ առաջարկվել էր անտառի տերևակեր վնասատուների դեմ պայքար կազմակերպել «Լեպիդոցիդ» կամ «Ֆիտոլավին» կենսաբանական պայքարի միջոցներով, սակայն դրանց արժեքը, համաձայն ՀՀ ԳՆ աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության մասնագետների կողմից համացանցում կատարած ուսումնասիրությունների, 2-4 անգամ գերազանցում էր «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրով նախատեսված գումարը:

Արձանագրված խնդիրների 3-րդ կետի վերաբերյալ՝

«Ռիպկորդ (ցիպերմետրին 400 գ/լ)» տեսակի պեստիցիդը չի կարող համարժեք համարվել «ցիպերմետրին 250 գ/լ» ազդող նյութի պարունակությամբ վերը նշված պեստիցիդներից, որևէ մեկին: Ըստ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» տեղեկագրքի, եթե «Ցիպեր մաքսի» պեստիցիդի համար չի նշվել անտառի լայնատերև ծառատեսակների տերևակեր վնասատուների դեմ պայքարի միջոց, ապա դրան համարժեք «Արրիվո», «Կռալ», «Շերպա», «Վալսացիպեր» և «Արիբո» պեստիցիդների համար տեղեկագրքում հստակ նշված է «ցիպերմետրին 250 գ/լ»-ի օգտագործումը այդ նպատակով: Բացի այդ սկսած 2003 թվականից անտառի տերևակեր վնասատուների դեմ պայքար է կազմակեպվել ցիպերմետրին 250 գ/լ ազդող նյութ պարունակող տարբեր ապրանքանիշերով և դրանք բոլորն էլ ցուցաբերել են մեծ արդյունավետություն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ պեստիցիդների օգտագործման դեպքում շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վտանգը բարձր խտության պեստիցիդների դեպքում ավելի մեծ է և դրանք հնարավոր չէ գնահատել դրամական արտահայտությամբ: Այդ իսկ պատճառով չի կարելի միանշանակ նշել, որ «Ռիպկորդը ձեռքբերման դեպքում հնարավոր կլիներ տնտեսել 2.9 մլն. ՀՀ դրամ, միևնույն ժամանակ թունաքիմիկատի ազդող նյութի առավել բարձր խտության հաշվին բարձրացնել միջոցառումների արդյունավետությունը»:

**Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի վերաբերյալ**

Արձանագրված խնդիրների 1-ին կետի վերաբերյալ հայտնում ենք, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 13-ի թիվ 441-Ն որոշման 2013-2015թթ որոշակի ապրանքատեսակների համար սահմանվել են առավելագույն գներ, իսկ մնացած ապրանքատեսակների գների մասով սահմանվել է կարգ՝ շուկայի ուսումնասիրության: Չնայած այն հանգամանքին, որ վերը նշված ՀՀ կառավարության թիվ 441 որոշումը ուժը կորցրած է ճանաչվել 2015 թվականի փետրվարի 26-ին, այնուամենայնիվ 2016-2017 թվականներին ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվել են մրցույթների համար կանխատեսվող շուկայական գների ուսումնասիրություններ՝ հեռախոսակապով և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտում կանխատեսվող միավորի գները կարող են փոփոխվել կամ մնալ նախորդ տարվա ձեռքբերման գներով, որը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Հարկ ենք համարում նշել, որ շուկայական գների ուսումնասիրությունը օրենքի պահանջ չէ:

Արձանագրված խնդիրների 3-րդ կետի վերաբերյալ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտով նախատեսված է, որ պատվաստումների ընթացքում հնարավոր են անասնագլխաքանակի շեղումներ, որը կարող է պայմանավորված լինել նոր կենդանիների ձեռք բերումով, սննդի համար նախատեսված կենդանիների սպանդով, կենդանիների տեղաշարժով և այլ պատճառներով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման գործընթացին, ապա այն պահանջում է խոշոր ֆինանսական միջոցների ներդրում: Ներկայումս ՀՀ ԳՆ, սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվում է ծրագիր, որի ներդրման համար անհրաժեշտություն է առաջացել դիմել միջազգային կազմակերպությունների աջակցությանը:

Արձանագրված խնդիրների 4-րդ կետի վերաբերյալ՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի անասնաբուժական միջոցառումների կատարման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը: Միաժամանակ հայտնում եմ, որ Հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակը կայուն է՝ վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել, բացառությամբ կենդանիների բրուցելոզ հիվանդության դեպքերի, որը սահմանված կարգով ենթարկվում է սանիտարական սպանդի: Ինչ վերաբերում է բակային մորթի, ապա հարկ է նշել, որ 15.02.2018 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության որոշում՝ կենդանիների սպանդի **կիրառման ոլորտների և ժամանակացույցի վերաբերյալ:**

Արձանագրված խնդիրների 5-րդ կետի վերաբերյալ՝ Հանրապետությունում տարիներ շարունակ կիրառվում են միևնույն երկրի կողմից արտադրված պատվաստանյութերը, որոնք սահմանված կարգով գրանցվում են և արդյունքում հանրապետությունում պահպանվում է անասնահամաճարակային կայուն իրավիճակ: Պատվաստված անասնագլխաքանակի նկատմամբ իմունային ֆոնի շճաբանական փորձաքննության իրականացման համար կարող է հիմք հանդիսանալ հանրապետությունում վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքերը, ինչպես նաև Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության, արտադրող և օգտագործող երկրների կողմից ստացված պատվաստանյութերի վերաբերյալ հիմնավորված և հավաստի բացասական տվյալները, և ելնելով նախատեսվող շճաբանական փորձաքննության մեթոդներից այն կպահանջի համապատասխան ֆինանսական միջոցներ: Միաժամանակ հայտնում եմ, որ 2016 թվականին հանրապետությունում գրանցվել էր դաբաղ հիվանդության նոր դեպք, որը պայմանավորված է եղել գենետիկորեն նոր A AGVII դաբաղի վիրուսի ենթատեսակով, ինչպես նաև մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ (ՄԵԿԺ) հիվանդությունը, որը նախկինում երբեք մեր հանրապետությունում չի արձանագրվել: Վերջին տարիների ընթացքում ՄԵԿԺ-ի բռնկման դեպքեր են արձանագրվել մեզ հարևան Իրանում և Թուրքիայում, իսկ 2016թ.-ին նաև Վրաստանում: Հաշվի առնելով տարածաշրջանում ՄԵԿԺ-ի համաճարակային իրավիճակը մեր հանրապետությունը կարելի է դասել այս հիվանդության ներթափանցման տեսանկյունից բարձր ռիսկային գոտում: Ելնելով վերոգրյալից 2018 թվականի փետրվարի 15-ի N 6 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 2018-2020 թթ. ՀՀ դաբաղ հիվանդության շճահետազոտության և 2018-2020 թթ. ՀՀ մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության ռազմավարական ծրագրերը:

Արձանագրված խնդիրների 6-րդ կետի վերաբերյալ՝ ՀՀ ԳՆ կողմից 2016-2017 թթ. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջնաժամկետ ծախսային ծրագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել են նաև ֆիզիոլոգիական լուծույթ՝ որպես լուծիչ, ասեղներ և անհրաժեշտ այլ պարագաներ և ներառվել են բյուջետային հայտում, սակայն (հավանաբար բյուջեի սղության պատճառով) հետագայում փոփոխվել է: Այսպես օրինակ.

| N | Տարեթիվ | Նախատեսված | Հաստատված | ՀՀ կառավարության որոշում |
|---|---|---|---|---|
| 1 | 2014 | 1 164 219,8 | 1 136 519,0 | 2013թ N 1414-Ն |
| 2 | 2015 | 1 785 094,2 | 1 188 603,4 | 2014թ N 1515-Ն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | 2016 | 1 240 349,0 | 1 214 476,2 | 2015թ N 1555-Ն |
| 4 | 2017 | 1 214 476,2 | 1 050 045,5 | 2016թ N 1313-Ն |

Միաժամանակ հայտնում եմ, որ 2018թ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի բյուջետային հայտը նախատեսվել և հաստատվել է 28.12.2017 թվականի ՀՀ կառավարության N 1717-Ն որոշման համաձայն՝ 1 348 003,2 ՀՀ դրամով, որտեղ ներառված են նաև կենսաանվտանգությունն ապահովելու նպատակով՝ անասնաբուժական պարագաներ՝ մեկանգամյա օգտագործման ասեղներ, ինչպես նաև արտահագուստ:

**Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ**

Վերահսկիչ պալատի արձանագրության <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ բաժնի 3-րդ պարբերությունում նշված է, որ մեջբերում՝ <<ըստ կանոնադրության, կազմակերպության գործունեության մաս են կազմում՝ ՀՀ տարածքում բույսերի, բուսական արտադրանքի գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության, պահպանման և իրացման վայրերում (անկախ սեփականության ձևից) հետազոտությունների իրականացումը՝ մոնիթորինգ, բույսերի կարանտին օրգանիզմների հայտնաբերման, դրանց տարածման արեալի ճշտման օջախների մեկուսացման և կարանտին միջոցառումների իրականացման նպատակով, գյուղատնտեսական կենդանիների համարակալման հաշվառման և անձնագրավորման աշխատանքները, աջակցությունը գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքների կազմակերպման գործընթացին (կետեր՝ 11.1, 11.13, 11.4) ԱԲԾԿ ՊՈԱԿ-ը փաստացի չի իրականացնում նման գործառույթներ>>:

Հայտնում ենք, որ վերը մեջբերված բուսասանիտարիային վերաբերվող միջոցառումներն իրականացվում են սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության որոշմամբ կարանտին հայտարարվելու դեպքում: ՀՀ կառավարության 2014թ. Փետրվարի 27-ի N189-Ն և 2015թ. հունվարի 30-ի N 92-Ն որոշումներով ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում սահմանվել է կարանտին և ԱԲԾԿ ՊՈԱԿ-ին հանձնարարվել է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են վերահսկիչ պալատի արձանագրության մեջ:

Ինչպես նաև 21.06.2014թ.ընդունված Անասնաբուժության մասին ՀՀ օրենքի համաձայն (հոդված 7. 3) Լիազոր մարմինն է իրականացնում գյուղատնտեսական կենդանիների համարակալում և հաշվառում, ինչպես նաև հաշվառված կենդանիների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակում և տեղեկատվական շտեմարանի վարում: Ինչ վերաբերվում է ԱԲԾԿ ՊՈԱԿ-ի կանոնադրության, ըստ որի կազմակերպության գործունեության մաս են կազմում ՀՀ տարածքում գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքների կազմակերպման գործընթացի աջակցությանը, հարկ ենք համարում նշել, որ տարածաշրջանների համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների կողմից պարբերաբար տրվում է խորհրդատվություն անասնատերերին, իսկ կարանտին միջոցառումների ժամանակ (Կոտայքի մարզ Գեղաշեն համայնք) իրականացնում են համապատասխան գործառույթներ:

Ինչ վերաբերվում է հանձման-ընդունման որոշ արձանագրություններում կնիքի կամ ստորագրության բացակայության հարցին՝ տեղեկացնում ենք,որ բոլոր արձանագրությունները, վերահսկիչ պալատի ստուգումներից հետո ստորագրվել և կնքվել են:

Միաժամանակ վերահսկիչ պալատի արձանագրության <<ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռք բերման համար պետական աջակցության>> ծրագրի ստուգման արդյունքներով արձանագրված խնդիրների բաժնի երկրորդ պարբերությունում նշված է որ ԱԲԾԿ ՊՈԱԿ-ի 25 ագրոնոմները 01.01.2017թ դրությամբ չեն իրականացնում ՊՈԱԿ-ի

կանոնադրության համաձայն իրենց վերապահված համապատասխան խորհրդատվական և վերահսկողական գործառույթները: Ինչի վերաբերյալ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ագրոնոմների վրա վերը նշված ծրագրի շրջանակներում որևէ գործառույթ նախատեսված չէ:

Եթե գրվածը վերաբերվում է մարզային ագրոնոմների կողմից ընդհանրապես իրենց գործառույթներն իրականացնելուն, ապա հաշվի առնելով գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների կենսաբանական առանձնահատկությունները (գտնվում են ձմեռման փուլում) հունվար ամսին մոնիթորինգ և խորհրդատվություն իրականացնելը անիմաստ է, իսկ վերահսկողական գործառույթ ՊՈԱԿ-ը չունի:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ն իր գործառույթներն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ կնքված դրամաշնորհի պայմանագրով պատվիրված աշխատանքների շրջանակներում: ՊՈԱԿ-ի մարզային ագրոնոմների կողմից յուրաքանչյուր տարի 251650 հա գյուղատնտեսական հողատեսքերում իրականացվում է տարբեր մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների, մկնանման կրծողների և մորեխների տարածվածության և վարակվածության մոնիթորինգ, որի արդյունքում մատուցում են նաև խորհրդատվական ծառայություններ: Մարզային ագրոնոմների կողմից խորհրդատվական ծառայություններ են մատուցվում նաև բույսերի պաշտպանության ծրագրի շրջանակներում, մկնանման կրծողների և մորեխների դեմ պայքար կազմակերպելու նպատակով համայնքներին տրամադրվող բույսերի պաշտպանության միջոցներով պայքար կազմակերպելու ժամանակ[6]:

**Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում իրականացվող ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ**

Ի հավելումն՝ 2017 թվականի ընթացքում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ԳԾԻԳ-ի և խորհրդատվական կառույցների գործառույթների, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը (ԳԶՀ) իրականացրել է նաև հետևյալ աշխատանքները.

• Գյուղատնտեսական քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր (1.8 մլն ԱՄՆ դոլար, ստորագրվել է 2017թ.) - մշակել է գործողությունների ծրագիրը: Իրականացվել է կարիքների գնահատում, որը ներառում է՝ աշխատանքային հանդիպումներ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան վարչությունների, Համաշխարհային Բանկի ծրագրի իրականացման թիմի, խորհրդատուների հետ՝ ոլորտում առկա կարիքները բացահայտելու, գնահատելու և ծրագրային միջոցառումներն ըստ նշանակության առավել հստակ սահմանելու նպատակով: Մշակվել է Ծրագրի Գործառնական ձեռնարկը, ինչպես նաև Ծրագիրը կարգավորող անհրաժեշտ այլ փաստաթղթերը: Կազմվել է Ծրագրի գնումների պլանի, համապատասխան տեխնիկական առաջադրանքների ընդհանուր պայմանները:

• Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում դրամաշնորհային ծրագիր (10 մլն Եվրո, ԵՄ և Ֆրանսիայի զարգացման գործակալության միջև ստորագրվել է 2017թ., այժմ ներկայացված է հայկական կողմի ստորագրմանը) – Մշակվել է Ծրագրի ներքո Հիմնադրամի հիմնական գործառույթների նկարագիրը, Ծրագրի իրագործման աշխատանքային պլանը:

[6] Վերահսկվող օբյեկտի ղեկավարը, ծանոթանալով արձանագրությանը, դրանում նշված փաստերի, դատողությունների և եզրահանգումների վերաբերյալ ներկայացրել է առարկություններ և/կամ բացատրություններ, որոնք Վերահսկիչ պալատի կողմից ընդունվել են մասնակիորեն:

• Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնում պիլոտային ծրագիր - Հիմնադրամի կողմից իրականացված ոլորտի ուսումնասիրության տվյալների հիման վրա մշակվել է մրցույթի պայմանները, որակավորման պայմանները, մրցույթային փաթեթը, կառավարության որոշման նախագիծը: Կազմակերպվել են մրցութային հանձնաժողովի աշխատանքները, եզրակացությունների ամփոփումն ու ներկայացումը: Արդյունքում՝ Ծրագիրը հաստատվել է 2017 թվականի մարտի 30-ի 344-Ն Կառավարության որոշմամբ:

• Տեղական օրգանական/կենսաբանական պարարտանյութի արտադրություն Ծրագիր – իրականացվել է շուկայի ուսումնասիրություն, խնդիրների վերհանում: Մշակվել է մրցույթի պայմանները, որակավորման պայմանները, մրցույթային փաթեթը, կառավարության որոշման նախագիծը: Կազմակերպվել են առաջարկությունները գնահատող հանձնաժողովի աշխատանքները, եզրակացությունների ամփոփումն ու ներկայացումը: Հիմնադրամի կողմից կազմակերպվել է ընտրված երկու առաջարկներով ներկայացված արտադրանքի դաշտային փորձարկման աշխատանքները:

• Անասնակերի արտադրության կազմակերպման Ծրագիր - կազմակերպվել և համակարգվել է հիդրոպոնիկ եղանակով աճեցվող կանաչ կերի փորձարկումը երեք տնտեսություններում /տարբեր մեթոդաբանությամբ/, որի արդյունքները ներկայացվել են Կառավարության դիտարկմանը:

**Ծրագրային դասընթացների մասին**

• Համաձայն հիմնադրամի հոգաբարձուների կողմից սահմանված ուղեցույցի խորհրդատվական դասընթացների թեմաների ընտրությունը կատարվում ֆերմերային տնտեսությունների հարցումների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ինչպես նաև այլ մարմինների առաջարկությունների հիման վրա: Թեմաները կարող են մշակվել և ընտրվել նաև գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի համապատասխան մասնագետի կողմից: Դասընթացների թեմաների ընտրության համար գրավոր հարցում է ուղարկվել մարզպետարաններին: Մարզպետարաններին ուղարկված դասընթացների թեմաների ընտրության ժամանակ հարցումների արդյունքում մարզերի կողմից ստացված պատասխանների հիման վրա ընտրվել են դասընթացների թեմաները և ընդգրկվել Հիմնադրամի կողմից մատուցվող դասընթացների ծրագրում այս և հաջորդ տարիների համար: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ևս ստացվել են դասընթացի թեմաների ցանկ: Ֆերմերային տնտեսությունների հետաքրքրությունների շրջանակը պարզվել է համայնքներ այցերի ժամանակ, ինչը ևս հաշվի է առնվել դասընթացների թեմաները մշակելիս: Թեմաների ընտրությունը կատարվել է նաև Հիմնադրամի խորհրդատվության տնօրինության կենտրոնական և մարզային կառույցների մասնագետների կողմից:

Իրականացվել է խմբային դասընթացների մասնակիցների բավարարվածության գնահատում և գյուղատնտեսական կարիքների բացահայտում հետազոտական ծրագիրը: Արդյունքում բացահայտվել են թե՝

1. Որքանով են խմբային դասընթացների մասնակիցները բավարարված դասընթացների թեմաներից, բովանդակությունից, դասընթացավարներից, տեխնիկական հագեցվածությունից, կազմակերպման աշխատանքներից:

2. Որոնք են խմբային դասընթացների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները:

3. Գյուղատնտեսական ինչ խնդիրներ և գյուղատնտեսական խորհրդատվական լրացուցիչ ինչ կարիքներ ունեն մասնակիցները: Դա հնարավորություն է տվել՝ խմբային դասընթացների հնարավոր թերությունների ուղղությամբ աշխատել և բարձրացնել դասընթացների արդյունավետությունը:

**Տեսահոլովակների մասին**

- Տեսանյութերը հասանելի են հիմնադրամի Youtube-յան էջում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության վեբ կայքում, ինչպես նաև Հիմնադրամի ֆեյսբուքյան էջերում: Տեսանյութերը ցուցադրվում են դասընթացների ժամանակ: Յուրաքանչյուր տեսանյութ ցուցադրվում է տեսանյութը հրապարակվելուն հաջորդող դասընթացներին: Տեսանյութերը նկարահանվել են մասնագիտական կարծիքների հենքի վրա և հենց մասնագետների կողմից:

Վերահսկիչ Պալատի տեսանյութերի հետ կապված դիտարկման ուղղությամբ Հիմնադրամում մշակվել են արդյունաքային ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ և ներկայացվել լիազոր մարմին:

**Վարկերի հավաստագրման դասընթացների մասին**

ԳՀՀ-180 համաձայանգրում դասընթացների կազմակերպման վերաբերյալ պահանջներ սահմանված չեն: Դասընթացների կազմակերպման ընթացակարգերը, այդ թվում նաև մասնակիցների ընտրության անցկացումը, սահմանված է ԳՀՀ հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ուղեցույցով: Դասընթացների կազմակերպումը, հաշվի առնելով, որ իրականացվում է շահառուների համար անվճար, պայմանագրերի կնքման անհրաժեշտություն չի առաջանում: Մասնակիցներն ընտրվում են ըստ լրացված հայտերի, կազմակերպվում են խմբեր և տրամադրվում են թեմատիկ դասընթացներ:

Դասընթացների ժամանակ կատարված լուսանկարները չեն հանդիսանում են Հիմնադրամի կողմից դասընթացի մասնակիցների փաստը հավաստող փաստաթուղթ, դրանք կրում են զուտ օժանդակ բնույթ: Բացի այդ լուսանկարները պարտադիր չէ, որ պարունակեն գրանցման թերթիկում առկա բոլոր մասնակիցների նկարները: Դասընթացների մասնակիցների թվի գրանցման որևէ պահանջ սահմանված չէ: Դրանք չեն հանդիսանում արդյունքային ցուցանիշ: Դասընթացի փաստի տեղի ունենալն է հանդիսանում Հիմնադրամի կողմից իր պարտավորությունների կատարում: Դասընթացներին մասնակցիների ցուցակներում առկա են ֆերմերների հեռախոսահամարները, հասցեները և այլ տվյալներ:

Վարկային միջոցների նպատակային օգտագործման համապատասխանությունը ստուգելու մշտադիտարկման մեխանիզմներ սահմանված են ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրությամբ հավանություն ստացած «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրում»: Մշտադիտարկում սկսվել է իրականացվել 2018 թվականից (վարկերը սկսվել են տրամադրվել 2017թ. չորրորդ եռամսյակում, ինչը ԳՀՀ առաջարկությամբ արտացոլվել է Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների 2018 թվականի ոչ ֆինանսական ցուցանիշներում: Ըստ ընտրանքի 2018 թվականին իրականացվելու է 240 վարկեր ստացած տնտեսությունների նպատակային ծախսման մոնիթորինգ: Բացի այդ, ԳՀՀ կողմից կազմվել է վարկերի մոնիթորինգի համար կազմված հատուկ հարցաշար: Դասընթացի մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրել է գործարար ծրագիր, որի արդյունքում հնարավորություն է եղել գնահատել դասընթացների շրջանակներում դասընթացավարներից ստացված ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ ֆինանսական գրագիտության գիտելիքները:

**Մարզային խորհրդատուների մասին**

• Հիմնադրամի կողմից գյուղատնտեսական խորհրդատվության ուղղությամբ իրականացված գործունեությունը.

✓ Ամփոփվել է «Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամի գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների մատուցման ուղեցույց»-ը:

✓ Կազմակերպվել է խմբային 37 դասընթաց (լսարանային և գործնական), որոնց մասնակցել է 685 ֆերմեր: Իրականացվել է խմբային դասընթացների մասնակիցների բավարարվածության գնահատում և գյուղատնտեսական կարիքների բացահայտում հետազոտական ծրագիրը: Արդյունքում բացահայտվել են թե՝

1. Որքանով են խմբային դասընթացների մասնակիցները բավարարված դասընթացների թեմաներից, բովանդակությունից, դասընթացավարներից, տեխնիկական հագեցվածությունից, կազմակերպման աշխատանքներից:

2. Որոնք են խմբային դասընթացների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները:

3. Գյուղատնտեսական ինչ խնդիրներ և գյուղատնտեսական խորհրդատվական լրացուցիչ ինչ կարիքներ ունեն մասնակիցները: Դա հնարավորություն է տվել՝ խմբային դասընթացների հնարավոր թերությունների ուղղությամբ աշխատել և բարձրացնել դասընթացների արդյունավետությունը:

✓ Իրականցվել է 220 ծրագրային դասընթաց, որոնց մասնակցել է շուրջ 5,562 ֆիզիկական և իրավաբանական անձ, այդ թվում կոոպերատիվներ, հավաստագրվել՝ 5,326-ը: Դասընթացի մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրել է գործարար ծրագիր, որի արդյունքում հնարավորություն է եղել գնահատել դասընթացների շրջանակներում դասընթացավարներից ստացված ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ ֆինանսական գրագիտության գիտելիքները:

✓ Կազմվել են 5 ուղեցույցներ գյուղատնտեսական խորհրդատվության տարբեր թեմաներով:

✓ Իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի արդյունքում ձեռք բերված գյուղտեխնիկայի մոնիտորինգ:

✓ Աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքում կազմակերպված գյուղատնտեսական մթերքի տոնավաճառի կազմակերպամ հարցերում

✓ Կազմվել են խմբային դասընթացների մասնակիցների բավարարվածության, խորհրդատվական կարիքների բացահայտման, վարկերի նպատակային ծախսումների մոնիտորինգի հետազոտական ծրագրեր և մեթոդաբանություններ:

✓ Իրականացվել է մթերման վարկերի մոնիտորինգ:

✓ Պատրաստվել է 20 խորհրդատվական տեսանյութ: Տեսանյութերը ցուցադրվում են նաև դասընթնացների ժամանակ (ավելի քան 2500 շահառու):

Մրազային բոլոր խորհրդատուները ներգրավված են գյուղատնտեսական խորհրդատվության տնօրինության կողմից իրականացված վերոնշյալ գործունեության մեջ:

• ԳԶՀ խորհրդատվական տնօրինության կենտրոնական գրասենյակի թվով 6 աշխատակիցները, բացի վերոնշյալ ծրագրերի մասնակցությունից, իրականացնում են նաև հետևյալ ֆունկցիաները.

1. Ագրոնոմիական մասով փորձագետ (փորձագետը շարունակական պատրաստում է ուղեցույցներ ագրոնոմիական ուղղություններով, որից հետո ուսուցանում է մարզային ուսուցանողներին տվյալ ուղեցույցներով, վերջիններս ուսուցանում են ֆերմերներին):

2. Անասնաբուծական և անասնապահական մասով փորձագետ (փորձագետը շարունակական պատրաստում է ուղեցույցներ անասնաբուծական և անասնապահական

ուղղություններով, որից հետո ուսուցանում է մարզային ուսուցանողներին տվյալ ուղեցույցներով, վերջիններս ուսուցանում են ֆերմերներին):

3.Տվյալների վերլուծության փորձագետ (փորձագետը մարզային կառույցներից շարունակական հավաքագրում է տվյալներ և կատարում վերլուծություններ, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտել ֆերմերային տնտեսությունների կարիքները, ինչպես նաև հետևել դրանց փոփոխություններին):

4.Ծրագրային դասընթացների կազմակերպչական մասով մասնագետ (իրականացնում է ծրագրային դասընթացների կազմակերպում, մոնիթորինգ, գործարար ծրագրերի վերլուծություններ):

5.ԳՀՀ խորհրդատվության տնօրինության օգնական (օգնականը աջակցում է կենտրոնական ապարատի և մարզային կառույցների աշխատանքների արդյունավետ իրականացմանը):

6. Խորհրդատվության տնօրինության ղեկավար (կառավարում է կենտրոնական, ինչպես նաև մարզային կառույցների աշխատանքները):

**Աշխատակազմ և վարձատրություն**

• Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կառույցների 212.6 մլն դրամ ֆինանսավորման մեջ ԱԱՀ ներառված չէ: Հիմնադրամի կողմից գյուղական խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով 2017թ. 2-րդ կիսամյակի համար փաստացի ստացված գումարը կազմել է 220,6 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը (183.8 առանց ԱԱՀ), իսկ փաստացի ծախսը 196,6 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը (163.8 առանց ԱԱՀ): **Փաստացի Հիմնադրամի կողմից ծախսը կազմել է լուծարված կառույցների համեմատ 48.8 մլն դրամ պակաս: Բացի այդ մարզային կառույցների լուծարման արդյունքում արտաբյուջետային միջոցներից պետական բյուջե է մուտքագրվել է ավելի քան 25 մլն դրամ, որը ևս նախատեսված է եղել մարզային կառույցների պահպանման համար:** Հիմնադրամի մարզային կառույցների աշխատակիցների թվի կրճատման արդյունքում խորհրդատուների ամսեկան աշխատավարձը բարձրացել է 40%-ով **(ներկայումս 140,000 դրամ, նախկինում 70,000-100,000 դրամ):** Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կառույցների կողմից նախկինում իրականացված խորհրդատվական ծառայությունների մեծաթիվ լինելը ինչպես պետական, այնպես էլ հասարակական և միջազգային տարբեր կառույցների կողմից գնահատվել են ոչ նպատակահարմար: Այդ կապակցությամբ կատարվել են տարբեր առաջարկություններ ծառայությունների թվաքանակը կրճատելու ուղղությամբ:

• Հիմնադրամի աշխատակիցներին տարեվերջյան պարգևատրում տրամադրելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ վերջիններս հանդիսացել են լուծարված ԾԻԳ-ի կամ խորհրդատվական կառույցների աշխատակիցներ, որոնց գործառույթները փոխանցվել են Հիմնադրամին: ԾԻԳ-ի լուծարման ընթացքում (2017թ. հոկտեմբերի 12-ից նոյեմբերի 8) աշխատակիցները կատարել են իրենց գործառույթները: Հիմնադրամի աշխատակիցների աշխատանքի վարձատրության ֆոնդը, այդ թվում նաև տնօրենինը սահմանվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

**Հիմնադրամի կողմից վարձակալած տարածքի մասին**

• Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից նախկինում զբաղեցված Մամիկոնյանց 39ա շենքի 6-րդ և 7-րդ հարկերի տարածքի

աշխատասենյակների ընդհանուր մակերեսը 326,6 ք.մ (640 ք.մ տարածքի ընդգրկված են նաև ընդհանուր օգտագործման մակերեսները): ԳԱՀԿ-ի նախկին տարածքի օգտագործման հարցը քննարկելիս պարզ է դարձել, որ դրա կապիտալ վերանորոգման համար անհրաժեշտ է 50-100 միլիոն դրամի ծախս՝ կախված վերանորոգման ծավալներից: ԳԱՀԿ-ի 29 հաստիքային աշխատողներից տվյալ տարածքում տեղակայվել են 20 աշխատակից: Կոմունալ ծառայությունների և հավաքարարի ծախսերը կազմել են ամսեկան մոտ 470,000 դրամ: Բացի այդ նույնիսկ ԳԱՀԿ-ի տարածք տեղափոխվելու համար մինչ վերանորոգում իրականացնելը ևս անհրաժեշտ կլիներ Հիմնադրամի համար վարձակալել տարածք: ԾԻԳ-ի կողմից զբաղեցրած Կոմիտասի 54բ հասցեում 376,4 ք.մ տարածքում (զուտ աշխատասենյակների մակերեսը 340ք.մ.) աշխատել են ընդամենը 25 աշխատակից, և վերջիններիս աշխատատեղերով ապահովելը, նույնպես եղել է խնդիր: ԾԻԳ-ի կողմից նախկինում զբաղեցրած տարածքի զուտ վարձակալության վճարը կազմել է 1,080,000 դրամ: Նշված տարածքի վարձակալության գումարի մեջ ներառված չեն եղել կոմունալ ծախսերը (էլեկտրոէներգիա, գազ, ջուր, աղբահանություն) և հավաքարարի, պահակների և մաքրող նյութերի ամսական ծախսերը, որոնք ընդհանուր առմամբ կազմում են ամսական առնվազն 450.000 ՀՀ դրամ, ընդհանուր տարածքի վարձակալության և դրա հետ կապված ծախսերը կազմել են ամսական առնվազն 1.530.000 ՀՀ դրամ՝ 25 աշխատակցի հաշվարկով: **Համադրելով նշված թվերը կստացվի, որ ԾԻԳ-ի և ԳԱՀԿ– ի կողմից ամսական ծախսվել է 2. 000. 000 մլն դրամ զբաղեցրած տարածքի և կոմունալ ծառայությունների համար:** Հիմնադրամի կողմից վարձակալած 573.3 քմ տարածքը հանդիսանում է գրասենյակային տարածք: Վարձակալության մեջ ներառված են կոմունալ, մաքրության, անվտանգության և պահակակետի ծառայությունները, ավտոկայանատեղիները, մաքրող նյութերի ծախսերը: **Հիմնադրամի կենտրոնական ապարատի աշխատողների քանակը, ըստ հաստիքացուցակի, սահմանված է եղել 52 (ներկայումս՝ 43) աշխատող և ամսական վաճավճարը կազմում է 2. 475. 000 դրամ:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնադրամի կենտրոնական գրասենյակի բոլոր աշխատակիցները պետք է տեղակայված լինեն մեկ վայրում հիմնադրամի ներկայիս վարձակալած տարածքը առավել համապատասխանում է աշխատատեղերի համար նախատեսված պայմաններին:

**Տրանսպորտային միջոցների և սարքավորումների մասին**

• Նախկին լուծարված կենտրոնների 34 ավտոմեքենաները Հիմնադրամին են հանձնվել պահատվության մինչ համապատասխան կառավարության որոշումը: Կառավարության որոշման նախագծով նախատեսվում է Հիմնադրամին հանձնել 12 ավտոմեքենա:

**Հիմնադրամը նոր ավտոմեքենա ձեռք բերելու նպատակ չի ունեցել: Հիմնադրամի 2017թ. պահպանման ծախսերի նախահաշվի 5.3 տողում «Այլ մեքենաներ և սարքավումներ» հաշվում 14.960.000 ՀՀ դրամ գումարն ի սկզբանե նախատեսված է եղել հիմնադրամում նոր ընդունվող աշխատողների համար գրասենյակային կահույքի, համակարգչային սարքավորումների, կապի սարքավումների ձեռք բերման համար (ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ծախսերի հիմնավորում):** Ելնելով վերոնշյալից, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 04.12.2017թ. N 12-Լ որոշմամբ հիմնադրամի պահպանման ծախսերի «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հաշվում արտացոլված 14.960.000 ՀՀ դրամ գումարն, հոդվածի տնտեսագիտական դասակարգչի ճշգրտման նպատակով, ամբողջությամբ տեղափոխվել է «Վարչական սարքավումներ» հաշվին: Նշված հաշվից 2017թ. դեկտեմբեր ամսին իրականացվել է 12.484.516 ՀՀ դրամ ծախս, որի դիմաց հիմնադրամի կողմից ձեռք է բերվել 1 ժողովի սեղան, աթոռներ, 8 համակարգիչ, 1 սեռվեր, 5 հեռախոսակապի սարքավումներ, արխիվի պահպանման սրքավորումներ և այլն: Հիմնադրամին փոխանցված լուծարված կառույցների պիտանի գույքը ամբողջությամբ օգտագործվում է Հիմնադրամի մարզային կառույցների կողմից:

• Իսկ ինչ վերաբերվում է գյուղատնտեսական տեխնիկային, ապա վերջիններս հիմնադրամին են հանձնվել առանց տրակտորների, և դրանց շահագործումը հոկտեմբեր ամսին որևէ գյուղատնտեսական աշխատանքներում քիչ հավանական էին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոկտեմբեր ամսին նմանատիպ գյուղտեխնիկա օգտագործելու պահանջարկ չէր կարող լինել: Հիմնադրամին սեփականության իրավունքով վերոնշյալ գյուղատնտեսական տեխնիկան հանձնվելուց հետո կորոշվի դրանց օգտագործման հետագա ընթացքը:

• 31, 6 հազար լիտր բենզինի առկայությունը պայմանավորված է եղել նախկին պահանջարկից ելնելով: Հիմնադրամը, հաշվի առնելով բենզինի խնայողությունը, լրացուցիչ 4,3 մլն դրամի բենզինի գնում չի իրականացրել: 2018 թվականի բենզինի ծախսերը պլանավորելիս ևս հաշվի են առնվել առկա խնայողությունները:

• Հիմնադրամի ծախսերը և աշխատավարձները սահմանելիս հաշվի են առնվել նմանատիպ կառույցների պահպանման ծախսերը:

# 2.12 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ, ԳԼՈԲԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ, ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագիրը և վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/4 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների հաշվին իրականացված ծրագրերի ուսումնասիրությունը: |
| **Վերահսկողության առարկան** | Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների հաշվին իրականացված միջոցների օգտագործում: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ[7]) |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2015թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 20-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017թ. օգոստոսի 7-ից մինչև 2018թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները: |

[7] ա) ՀՀ կառավարության 2017թ.-ի մարտի 9-ի N 243-Ա որոշմամբ հիմնադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը և լուծարվել Գյուղատնտեսական ԾԻԳ-ը:
բ) ՎՊ-ի կողմից իրականացված ստուգումը եղել է Գյուղատնտեսական ԾԻԳ-ի լուծարային գործընթացի ժամանակաշրջանում:

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը, հաշվի առնելով ծրագրերի իրականացման ու վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանները, դիտարկման փուլում ոչ ռիսկային է համարել հետևյալ ծրագրերը.**

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից տրամադրված Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագիր (կատարման ժամկետը՝ 2014-2016թթ., արժեքը՝ 446 մլն դրամ):

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր (կատարվել է 2014թ.-ին, արժեքը՝ 185.4 մլն դրամ):

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր (կատարման ժամկետը՝ 2014-2015թթ., արժեքը՝ 232.8 մլն դրամ):

**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակն է.**

1. Անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացման, ցանցերի կառուցման և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովման միջոցով, արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգի ստեղծումը:

2. Աջակցել համայնքներում արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվների (Այսուհետ՝ Կոոպերատիվ) ստեղծմանը և կայացմանը, նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև անասնաբուժական ծառայության միջոցով կենդանիների առողջությանն ուղղված միջոցառումների բարելավմանը:

3. Կենդանիների մսուրային շրջանում անասնակերի ապահովման նպատակով կոոպերատիվի համաֆինանսավորմամբ գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի (Այսուհետ՝ Գյուղտեխնիկա) տրամադրում:

ՀՀ կառավարության 2017թ.-ի մարտի 9-ի N243-Ա որոշման 5-րդ կետով հանձնարարվել է՝ ֆինանսների և գյուղատնտեսության նախարարներին ՎԶՄԲ-ի հետ համաձայնեցնել վարկային և ֆինանսավորման համաձայնագրերի փոփոխությունները՝ այդ համաձայնագրերի իրականացումը վերապահել նույն որոշման 1-ին կետով ստեղծված Հիմնադրամին, իսկ ֆիդուցիար հարցերի իրականացումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ին: Նույն որոշման 6-րդ կետով սահմանվել է՝ համապատասխան փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո դադարեցնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետ՝ ԳԾԻԳ) գործունեությունը: Վերոհիշյալ փոփոխությունն ուժի մեջ է մտել 05.10.2017թ.-ին: 2017թ.-ի հոկտեմբերի 12-ին ԳԾԻԳ-ի բոլոր աշխատակիցներն ազատվել են աշխատանքից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017թ.-ի հոկտեմբերի 19-ի հրամանով ստեղծվել է լուծարային հանձնաժողով՝ ԳԾԻԳ-ի գործունեության դադարեցման աշխատանքները իրականացնելու նպատակով:

**Ծրագրով կատարված աշխատանքների ֆինանսական ցուցանիշներն ըստ տարիների**

**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր**

| հ/հ | Ծախսային հոդվածների անվանումներ | 9 ամիսներ (հազ. դրամ) | 2017թ.-ին կնքված պայմանագ-րերով կատարված վճարումներ (հազ.դրամ) |
|---|---|---|---|
| | **Ընդամենը ծախսեր** | **930,772.7** | **153,417.5** |
| | *Ըստ ծախսային հոդվածների՝* | | |
| **1** | **Շինարարություն** | **388,624.5** | **14,788.6** |
| **2** | **Ապրանքներ** | **140,828.9** | **138,628.9** |
| **3** | **Խորհրդատ-վություն** | **27,600.0** | |
| **4** | **Գործառնական ծախսեր** | **167,158.9** | |
| | *Որից՝* | | |
| **4.1** | **Աշխատավարձ** | **133,589.8** | |
| **5** | **Մոնիթորինգ, գնահատում, աուդիտ** | **4,764.0** | |
| **6** | **Դրամաշնորհներ** | **201,796.3** | |

**Աշխատանքների կազմակերպում**

Ծրագրով կատարված աշխատանքների ֆինանսական ցուցանիշներն ըստ տարիների ունեցել են հետևյալ տեսքը.

2015թ.՝ 3,125,322.4 հազ. դրամ, որից՝ աշխատավարձ - 146,982.2 հազ. դրամ (4.7%):

2016թ.՝ 5,227,642.3 հազ. դրամ, որից՝ աշխատավարձ - 200,270.0 հազ. դրամ (3.8%):

2017թ.-ի բյուջեով հաստատված պլանը կազմել է՝ 1,373,532.8 հազ. դրամ:

- Աշխատանքները չդադարացնելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2017թ.-ի ապրիլի 13-ի N 424-Ն որոշմամբ՝ բյուջեով հաստատված ծրագրի կատարողականը ավելացվել է 500 մլն դրամով, ինչի արդյունքում ճշտված պլանը կազմել է՝ 1,873,532.8 հազ. դրամ: 2017թ.-ի 9-ը ամիսների կատարողականը կազմել է՝ 930,772.7 հազ.դրամ (պլանավորվածի՝ 49.7%-ը): Գործառնական ծախսերը կազմել են՝ 167,158.9 հազ. դրամ, որից աշխատավարձ՝ 133,589.8 հազ.դրամ (կատարողականի՝ 14.4%-ը): Շինարարության, խորհրդատվության, դրամաշնորհների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման դիմաց վճարվել է 763,613.8 հազ. դրամ: Նշված գումարից 153,417.5 հազ. դրամ վճարվել է 2017թ.-ին կնքված պայմագրերի դիմաց, իսկ ծախսված գումարի մնացած մասը կազմել է նախկինում կնքված պայմանագրերի շարունակական վճարը: Վերլուծությունը ներկայացված է աղյուսակում:

- 2017թ.-ի ապրիլ ամսից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում որևէ մրցույթ չի հայտարարվել, իսկ օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին ապրանքների ձեռքբերման համար հայտարարվել է 13 մրցույթ, որից 8-ը չի կայացել: Նույն ամիսներին արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցման աշխատանքների համար հայտարարվել է 20 մրցույթ, որից՝ չի կայացել՝ 11-ը, կայացել է՝ 4-ը, մեկը լուծարվել է, իսկ 4 մրցույթ ընթացքի մեջ է (Հավելված 1 և 2): ԳԾԻԳ-ը չի ապահովել 2017թ.-ի համար նախատեսված ծրագրերի իրականացման գործընթացը:

## Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի իրականացում

**Ծրագրի շրջանակներում գնվել է՝ 1,467,747.8 հազ. դրամի Գյուղտեխնիկա:**

• Ծրագրի շրջանակներում՝ թվով 8 մարզում ստեղծվել է 113 Կոոպերատիվ, գնվել է՝ 1,467,747.8 հազ. դրամի Գյուղտեխնիկա (406 միավոր): Վարկային միջոցների և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմել է՝ 1,223,123.1 հազ. դրամ (80%):

- Ձեռք բերված գույքն ի պահ է հանձնվել, իսկ հետագայում՝ Կառավարության որոշումներով նվիրաբերվել է Կոոպերատիվներին:
- Իրավասու մարմինը կատարել է միայն գույքի առկայության մոնիթորինգ, իսկ Կոոպերատիվների հետագա գործունեության և գույքի նպատակային շահագործման մոնիթորինգ չի իրագործվել, չեն ներդրվել շահառուների կողմից ծրագրի միջոցով ձեռք բերված գույքի օգտագործմամբ ունեցած արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգեր և ընթացակարգեր, ինչի հետևանքով՝ ԳԾԻԳ-ը հնարավորություն չի ունեցել գնահատելու ծրագրի կատարման արդյունավետությունը և օգտավետությունը:
- ԳԾԻԳ-ի մարզային աշխատակիցների (8 մարզ՝ 16 աշխատակից) կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ շուրջ 50 միավոր Գյուղտեխնիկա գտնվել է անսարք վիճակում:
- Մինչև 2017թ.-ը, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով թվով 21 Կոոպերատիվի նվիրաբերվել է 617,540.8 հազ. դրամի Գյուղտեխնիկա: 2017թ.-ին ներկայացված հաշվետվություններով[8] միայն 4 Կոոպերատիվ է հաշվապահական հաշվեկշռում արտացոլել նվիրաբերված Գյուղտեխնիկան (166,812.2 հազ. դրամ):
- Թվով 46 Կոոպերատիվ Գյուղտեխնիկա չի ստացել՝ չնայած այն հանգամանքին, որ համաֆինանսավորման գումարի 20%-ն ունեցել են (օրինակ՝ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում հնգական Կոոպերատիվ): Կոոպերատիվները խուսափել են գումար փոխանցել ԳԾԻԳ-ի հաշվեհամարին, քանի որ վերջինս գտնվել է երկարատև լուծարման գործընթացում (վեց ամիս և ավել), իսկ այդ ընթացքում հայտարարված մրցույթները չեղյալ են համարվել:

[8] Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ

## Գնումների գործընթաց

***1. Ուսումնասիրվել է 2015-2017թթ.-ին իրականացված գնումների գործընթացի համապատասխանությունը սահմանված պահանջներին, ինչպես նաև՝ կատարվել է վերլուծություն գնման գործընթացների կիրառման արդյունավետության վերաբերյալ, մասնավորապես՝***

Իրականացված գնումներից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է թվով 20 գնման գործընթաց (Shopping ընթացակարգ):

Արձանագրվել է.

**1.1** Բացակայում են ձեռք բերվող ապրանքների շուկայական գների և դրանց ուսումնասիրության փաստը հիմնավորող փաստաթղթերը:

**Նախահաշվային և ներկայացված գնային առաջարկների միջև առկա են զգալի տարբերություններ**

**1.2** Գնման գործընթացներում կազմված նախահաշվային գների և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների միջև առկա են զգալի տարբերություններ: Օրինակ՝

- CARMAC2-CP-J-16-42 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը կազմել է 90.0 հազ. ԱՄՆ դոլար, հաղթող մասնակցի առաջարկած գինը եղել է 65.7 հազ. ԱՄՆ դոլար: Նախահաշվային գնի տարբերությունը՝ 24.3 հազ. ԱՄՆ դոլար: Ամենաբարձր գնային առաջարկը կազմել է՝ 72.0 հազ. ԱՄՆ դոլար:

- CARMAC2-CPP-J-87 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը կազմել է 80.0 հազ. ԱՄՆ դոլար, հաղթող մասնակցի առաջարկած գինը եղել է 71.7 հազ. ԱՄՆ դոլար: Տարբերությունը նախահաշվային գնի՝ 8.3 հազ. ԱՄՆ դոլար:

- CARMAC2-CPP-J-95 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը կազմել է 19,150.0 հազ. դրամ, հաղթող մասնակցի առաջարկած գինը եղել է 16,890.0 հազ. դրամ: Տարբերությունը նախահաշվային գնի՝ 2,260.0 հազ. դրամ:

- CARMAC2-CPP-L-8/2/1 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը կազմել է 56.7 հազ. ԱՄՆ դոլար, հաղթող մասնակցի առաջարկած գինը

եղել է 49.25 հազ. ԱՄՆ դոլար: Տարբերությունը նախահաշվային գնի՝ 7.45 հազ. ԱՄՆ դոլար:

Արդյունքում, նման դեպքերը պատվիրատուի մոտ կարող են առաջացնել շուկայական գներից բարձր գներով ապրանքների ձեռքբերման ռիսկ, ինչպես նաև ֆինանսական միջոցների սխալ պլանավորում հետագա գնումների համար:

**Մատակարարվող ապրանքների վիճակի բնութագրերը բացակայում են**

**1.3** Մատակարարվող ապրանքների վիճակը բնութագրող որևէ տեղեկություն տեխնիկական բնութագրերում չի ներկայացվել (նոր, ժամանակակից, գործարանային արտադրության և այլն): Նման բնութագրիչների բացակայությունը կարող է առաջացնել հետևյալ ռիսկերը.

- Մասնակիցները չեն կարող երկակի մեկնաբանությամբ ընկալել գնման առարկան:
- Պատվիրատուն չի կարողանա պահանջել, որ մատակարարվի ավելի լավ վիճակում գտնվող ապրանք, հատկապես, երբ որոշ դեպքերում արտերկրից ներմուծվում են սարքավորումներ ըստ առանձին մասերի, և տեխնիկայի վերջնական հավաքումը տեղի է ունենում Հայաստանում:
- Ձեռք բերվող ապրանքների վիճակի ոչ հստակ սահմանումը կխոչընդոտի գնային առաջարկի հաշվարկմանը, քանի որ դրանով է պայմանավորված գնային գործոնը, սա թույլ կտա հաղթող ընկերություններին մատակարարել շահագործված, նախկինում արտադրված և ոչ ժամանակակից ապրանքներ:
- «ՄՏՋ-82.1» տրակտորի համար նախատեսված հրող թևերի գնման տեխնիկական բնութագրերում նշվել է, որ մատակարարվող հրող թևը պետք է լինի՝ թեք տեղադրված, ուժեղացված, հրող ուժն առնվազն 950կգ, կառավարումը հիդրավլիկ և նախատեսված թևի բարձրացման և թեքման համար ու համատեղելի «Բելառուս ՄՏՋ-82.1» տրակտորի հիդրոհամակարգի հետ:

Կոոպերատիվները հրող թևերը ստացել են Սպիտակ քաղաքում, Սպիտակի «Ագրոսպասարկում» ԱՄ ԲԲԸ-ից՝ 1,150.0 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Ստացված հրող թևերը նախատեսված չեն եղել «Բելառուս ՄՏՋ 82.1»

տրակտորների համար: Մատակարարը մեկ այլ մոդելի տրակտորի համար նախատեսված հրող թևերը կտրել, ձևափոխել, զոդել և համապատասխանեցրել է «ՄՏԶ 82.1» տրակտորի միացման հանգույցներին:

**Պատշաճ կերպով չի գնահատվում մասնակիցների ներկայացրած առաջարկները, չի ուսումնասիրվում ապրանքների տեխնիկական բնութագրերը**

- Գնման գործընթացները կազմակերպելիս բոլոր համայնքների կարիքների համար կազմվում է մեկ ընդհանուր տեխնիկական բնութագիր՝ սահմանելով ընդհանուր տեխնիկական հատկանիշներ: Տարբեր մասնակիցներ մրցույթին մասնակցելիս ներկայացնում են տարբեր մոդելների և, հետևաբար, տարբեր բնութագրեր ունեցող ապրանքներ: Մրցույթի հրավերով սահմանված և մասնակցների ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանության մանրամասն ուսումնասիրություն չի կատարվում: Ստացվում է, որ նախ՝ չի ուսումնասիրվում առանձին համայնքի կարիքին համապատասխանող տեխնիկայի կամ գյուղգործիքների տեխնիկական բնութագրերը, պատշաճ կերպով չի գնահատվում մասնակիցների ներկայացրած առաջարկները, որոշ դեպքերում համայնքին է մատակարարվում կարիքին չհամապատասխանող ապրանք, որոնք ձեռքբերման օրվանից չեն շահագործվում:

Ախպրաձոր, Լիճք, Լճաշեն համայնքներում շարքացանները հնարավոր չի եղել շահագործել, քանի որ դրանք չեն համապատասխանել համայնքի հողատիպերին:

**Մեկից ավելի լոտեր պարունակող մրցույթներում կարող է լինել մրցակցության սահմանափակման ռիսկ**

**1.4** Համաշխարհային բանկի հաստատած ուղեցույցի, ինչպես նաև դրա հիման վրա կազմած և պատվիրատուին տրամադրված Shopping ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի, որը կիրառվել է բոլոր մրցույթների դեպքում հայերեն կամ ռուսերեն տարբերակներով, 2-րդ կետով սահմանված է մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների գնահատման տարբերակները, այն է՝ «Սույն հրավերի շրջանակներում դուք կարող եք գնային առաջարկ ներկայացնել մեկ կամ մի քանի ապրանքատեսակների համար: Ձեր գնային առաջարկը կգնահատվի առանձին ամեն լոտի համար, և պայմանագիրը կշնորհվի առանձին լոտի համար նվազագույն գնահատված գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը, կամ դուք պետք է սույն հրավերի ներքո գնային առաջարկ ներկայացնեք բոլոր լոտերի համար: Բոլոր լոտերի գնային առաջարկները կգնահատվեն միասին և

պայմանագիր կշնորհվի այն կազմակերպությանը, որն ամենացածր գինը կառաջարկի բոլոր լոտերի համար միասին վերցրած»:

Պատվիրատուն մրցույթներ կազմակերպելիս կիրառել է բացառապես վերը նշված կետի երկրորդ տարբերակը՝ անկախ գնվող ապրանքների քանակից: Մեկից ավելի լոտեր պարունակող մրցույթներում կարող է լինել մրցակցության սահմանափակման ռիսկ: Փաստորեն, այն ընկերությունները, որոնք կկարողանային ավելի ցածր գնային առաջարկներ ներկայացնել մեկ կամ մի քանի ապրանքների համար, չեն կարող մասնակցել տվյալ մրցույթին, քանի որ չեն կարողանալու ապահովել միաժամանակ բոլոր լոտերով նախատեսված ապրանքները: Մասնավորապես.

- CARMAC2-CP-J-16-35 ծածկագրով մրցույթին, որն ունեցել է 8 լոտ, գնային առաջարկներ են ներկայացրել երեք ընկերություններ: Նախահաշվային գինը սահմանվել է 44,567.6 հազ. դրամ: Մասնակիցների ներկայացրած ընդհանուր գներն են՝ «Հրաշք այգի» ՍՊԸ - 44,233.0 հազ. դրամ, Սպիտակի «Ագրոսպասարկում» ԱՄ ԲԲԸ՝ 44,765.0 հազ. դրամ և «Սպեցմաշ» ՍՊԸ՝ 45,068.0 հազ. դրամ: Սույն մրցույթում պատվիրատուն մասնակիցների գնային առաջարկները գնահատել է ընդհանուր գումարներով, հաղթող է ճանաչվել «Հրաշք այգի» ՍՊԸ-ն և մրցույթի արդյունքում պայմանագիր է կնքվել 44,233.0 հազ. դրամով: Սակայն, եթե պատվիրատուն ներկայացված գնային առաջարկները գնահատեր առանձին լոտերով, ապա կնքված պայմանագրերի գումարը կլիներ 37,498.0 հազ. դրամ, ինչը 6,735.0 հազ. դրամով ավելի պակաս է հաղթող ընկերության հետ կնքված պայմանագրի գնից:

- CARMAC2-CPP-L-8-2-1 ծածկագրով մրցույթում, որն ունեցել է 2 լոտ, նախահաշվային գինը սահմանվել է 27,186.5 հազ. դրամ: Սույն մրցույթում ևս պատվիրատուն մասնակիցների գնային առաջարկները գնահատել է ընդհանուր գումարներով, և մրցույթի արդյունքում պայմանագիր է կնքվել 23,618.0 հազ. դրամով: Սակայն, եթե պատվիրատուն ներկայացված գնային առաջարկները գնահատեր առանձին լոտերով, ապա արդյունքում կնքված պայմանագրերի գումարը կլիներ 18,718.0 հազ. դրամ, ինչը 4,900.0 հազ. դրամով ավելի պակաս է հաղթող ընկերության հետ կնքված պայմանագրի գնից:

**Կազմակերպված մրցույթներին մասնակցել են իրար հետ փոխկապակցված ընկերություններ**

**1.4** Կազմակերպված մրցույթներին մասնակցել են 3-5 միևնույն կամ իրար հետ փոխկապակցված ընկերություններ:

Պարզվեց.

- CARMAC2-CP-J-15-16 (Pickup) ծածկագրով սակարկությանը գնային առաջարկ ներկայացնելու հրավերներ է ուղղարկվել ինը կազմակերպության, որոնցից 4 ընկերության հիմնադիրները միևնույն անձինք[9] են («Վեկար», «Կարկոմավտո», «Մեգնա», «Գալոպեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ): Թվարկված չորս ընկերությունից երեքը հանդիսացել են սակարկությանը գնային առաջարկ ներկայացրած միակ հայտատուները:

- Գնահատող հանձնաժողովը ամենացածր գնային առաջարկ ներկայացրած հայտատու է համարել «Կարկոմավտո» ՍՊԸ-ին, իսկ կնքված պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 27,960.0 հազ. դրամ («ՈՒԱԶ» մակնիշի թվով 4 բեռնատար ավտոմեքենա):

- CARMAC-CPP-J-103 (Pickup) ծածկագրով սակարկությանը գնային առաջարկ ներկայացնելու հրավերներ է ուղղարկվել ութ կազմակերպությունների, որոնցից երեք ընկերությունների հիմնադիրը միևնույն անձն է («Կարկոմավտո», «Մեգնա», «Մուրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ): Հետագայում, նշված երեք ընկերությունները հանդիսացել են սակարկությանը գնային առաջարկ ներկայացրած միակ հայտատուները:

- Գնահատող հանձնաժողովը ամենացածր գնային առաջարկ ներկայացրած հայտատու է համարել «Կարկոմավտո» ՍՊԸ-ին, իսկ կնքված պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 40,050.0 հազ. դրամ (թվով 6 հատ «ՈՒԱԶ» մակնիշի բեռնատար ավտոմեքենաներ):

- ՈՒսումնասիրությամբ պարզվեց, որ CARMAC2-CP-J-15-16 (Pickup) և CARMAC-CPP-J-103 (Pickup) ծածկագրերով սակարկությունների արդյունքների հիման վրա կնքվել են պայմանագրեր՝ 68,010.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենաների շուկայական գների վերլուծության արդյունքում պարզվեց, որ ավտոմեքենաների արժեքը շուկայական գներով կազմում է՝ 44,391.2 հազ. դրամ: ԳԾԻԳ-ի գնահատող հանձնաժողովի կողմից

[9] ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

չի արգելվել փոխկապակցված ընկերությունների միաժամանակյա մասնակցությունը միևնույն սակարկությանը, որի արդյունքում՝ գնված մեքենաների ընդհանուր պայմանագրային արժեքը գերազանցել է շուկայական արժեքը 23,618.7 հազ. դրամով (53.2 %):

- CARMAC-CPP-J-96 և CARMAC-CP-J-15-09 ծածկագրերով սակարկություններին գնային առաջարկ ներկայացնելու նպատակով հրավերներ է ուղարկվել «Գալոպեր» ՍՊԸ-ին, սակայն, վերջինիս փոխարեն, երկու դեպքում էլ մասնակցության հայտ է ներկայացրել «Կարկոմավտո» ՍՊԸ-ն (փոխկապակցված): Հարկ է նշել, որ ԳԾԻԳ-ը «Կարկոմավտո» ՍՊԸ-ին սակարկությանը մասնակցելու հրավեր չի ուղարկել: Գնային առաջարկները գնահատող հանձնաժողովը վերը նշված փաստերը ուշադրության չի արժանացրել:
- CARMAC2-CP-J-16-21 ծածկագրով իրականացվող սակարկության գնահատման զեկույցում որպես հրավիրված մատակարար կամ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած հայտատու նշվել է «Սպիտակի ագրոսպասարկում» ԲԲԸ-ն:
- «Սպիտակի ագրոսպասարկում» ԲԲԸ գրառմամբ կազմակերպություն իրավաբանական անձ պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում գրանցված չէ:
- «Սպիտակի ագրոսպասարկում» ԲԲԸ անվանմամբ գնային առաջարկը ներկայացվել է «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Սպիտակի Շրջանային Միավորում ԲԲԸ-ի կնիքով, իսկ գնման գործընթացի հետ կապված փաստաթղթերը ստորագրել է գլխավոր տնօրենը:

- Գնահատող հանձնաժողովի կողմից հայտը չպետք է համարվեր համապատասխանող և չպետք է թույլատրվեր «Սպիտակի ագրոսպասարկում» ԲԲԸ անվանմամբ հայտատուի մասնակցությունը սակարկությանը:

## 2. Շուկայական գների ուսումնասիրություն

**Որոշ դեպքերում մատակարարված Գյուղտեխնիկայի գները գերազանցում են շուկայական գները**

Վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը ընտրանքային կարգով ուսումնասիրել է 9 պայմանագիր ու պարզել, որ որոշ դեպքերում մատակարարված Գյուղտեխնիկայի գները գերազանցում են շուկայականը[10]: Թվով 5 պայմանագրի դեպքում՝ գնված Գյուղտեխնիկայի ընդհանուր արժեքը բարձր է շուկայական գներից 53 և ավել տոկոսով, իսկ առանձին ապրանքների մասով գերազանցում է 100%-ը (Հավելված 3 և 4):

- Չեն պահպանվել ընթացակարգի մի շարք պահանջներ, մասնավորապես՝ նախահաշիվներ կազմելիս շուկայական գներ չեն ուսումնասիրվել:

## 3. Կոոպերատիվների համար ձեռք բերված Գյուղտեխնիկայի շահագործում

**Ձեռք է բերվել 2.1 մլրդ դրամի Գյուղտեխնիկա:**

Ծրագրի շրջանակներում ՀՀ 8 մարզերի թվով 68 համայնքում ստեղծված Կոոպերատիվների համար, 2015-2017թթ.-ին ձեռք է բերվել 2.1 մլրդ դրամի Գյուղտեխնիկա:

Կոոպերատիվների գործունեության արդյունավետության և ստացված Գյուղտեխնիկայի շահագործման հետ կապված արձանագրվել է հետևյալը՝

**Ուսումնասիրված Կոոպերատիվների 111 միավոր Գյուղտեխնիկայից 47-ը չի շահագործվում (142մլն դրամի)**

- Ստեղծված Կոոպերատիվներին անհրաժեշտ Գյուղտեխնիկայի և ծրագրի նպատակներին դրանց համապատասխանության նկատմամբ գնահատում չի իրականացվել:
- Կոոպերատիվների գործունեության և ստացված գույքի նպատակային շահագործման մոնիթորինգ չի իրականացվել:

[10] Արտադրող կամ դիստրիբյուտոր ընկերությունների պաշտոնական տեղեկատվության միջոցներ՝
ա) ՀՀ-ում Գյուղտեխնիկա վաճառող ընկերություններից ստացված գնացուցակներ:
բ) Գյուղտեխնիկայի և մեքենաների ներմուծման վերաբերյալ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության (INVOICE):
գ) https://agroserver.ru ; http://agromh.com ; http://vgtz-traktor.ru ; https://flagma.ru ; www.agrobase.ru ; https://ehkskavator.ru ; https://fermer.ru և այլ կայքեր:

- ՈՒսումնասիրվել է չորս մարզի, 14 համայնքի, թվով 14 Կոոպերատիվ: Պարզվել է, որ այդ համայնքների համար ստուգման ժամանակաշրջանում ձեռք է բերվել 111 միավոր Գյուղտեխնիկա (368.4 մլն դրամ): Ձեռք բերված Գյուղտեխնիկայից 47-ը չի շահագործվում (142 մլն դրամ կամ 38.5%):

**Անսարքության կամ հողատիպերին չհամապատասխանելու պատճառով չի շահագործվում 43,000.0 հազ. դրամի տեխնիկա**

***Չշահագործվող տեխնիկայի մասով արձանագրվել է.***

- Տրակտորի առկայության պայմաններում բացակայում են գյուղատնտեսական գործիքները կամ հակառակը՝ բացակայում է տրակտորը (թվով 24 տեխնիկա՝ 96.0 մլն դրամ ընդհանուր արժեքով):

- Չի շահագործվում անսարքության կամ հողատիպերին չհամապատասխանելու պատճառով թվով 20 տեխնիկա՝ 43.0 մլն դրամ ընդհանուր արժեքով:

- Նախատեսված չէ «ՄՏԶ 82.1» տրակտորի համար թվով 3 գյուղատնտեսական գործիք՝ 3.0 մլն դրամ արժեքով:

Պատկերը ըստ համայնքների ներկայացված է Հավելված 5-ում:

- Կոոպերատիվներին տրամադրվող Գյուղտեխնիկան նպատակ էր հետապնդում բարձրացնել գյուղատնտեսական Կոոպերացիաների գործունեության արդյունավետությունը և ստացված Գյուղտեխնիկայի համատեղ և արդյունավետ օգտագործման օգտավետության աստիճանը:

- ՈՒսումնասիրված Կոոպերատիվների գործունեությունը կրում է ձևական բնույթ, և ստեղծվել են ոչ թե ռեսուրսների համատեղմամբ միասնական և արդյունավետ գործունեություն իրականացնելու, այլ Գյուղտեխնիկա ունենալու համար, որի 45.8%-ն ընդհանրապես չի շահագործվում և մասամբ պահպանվում է բացօթյա ու ոչ պատշաճ պայմաններում:

**Գյուղտեխնիկայի զգալի մասը շահագործվում է ոչ լիարժեք ծանրաբեռնվածությամբ**

*Օգտագործվող Գյուղտեխնիկայի զգալի մասն էլ շահագործվում է ոչ լիարժեք ծանրաբեռնվածությամբ*: Այսպես.

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնանիստ համայնքի Կոոպերատիվը 2016թ.-ին ստացված գութանով կատարել է ընդամենը 4 հա վար, ձեռքի մեկ խոտհնձիչով 2017թ.-ին կատարվել է 14 հա խոտհունձ, Լիճք համայնքում 2015-2016թթ.-ին 6 միավոր ձեռքի խոտհնձիչով կատարվել է 50 հա հունձ, Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքում թվով 10 ձեռքի խոտհնձիչներով երկու տարիների ընթացքում կատարվել է 55 հա խոտհունձ, Սոլակ համայնքում 6 միավոր ձեռքի խոտհնձիչներով 2016թ.-ի ընթացքում կատարվել է 67, իսկ 2017թ.ին՝ 49,5 հա հունձ:

- Արտաշավան և Արծվանիստ համայնքների Կոոպերատիվները իրենց կարիքների համար գնված ձեռքի խոտհնձիչները հանձնել են վարձակալության:

- Ուսումնասիրված թվով 14 Կոոպերատիվներից փաստացի գործունեություն են ծավալել 13-ը, սակայն հարկային հաշվետվություն են ներկայացրել միայն 9-ը (64%):

***Այսպիսով՝ վարկային և համայնքային միջոցներով գնված Գյուղտեխնիկան չի ծառայում առաջադրված նպատակների իրագործմանը:***

***Ելնելով անբարենպաստ բնակլիմայական պայմաններից՝ վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը ստուգման իրականացման ժամանակահատվածում չի անդրադարձել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացման, ցանցերի կառուցման և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովման ուղղությամբ կատարված շինարարական աշխատանքներին: Աշխատանքներին նախատեսվել է անդրադառնալ 2018թ.-ին:***

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Ընդհանուր առմամբ, 2017թ.-ին ԳԾԻԳԸ գործել է ոչ արդյունավետ և չի ապահովել 2017թ.-ի համար նախատեսված ծրագրերի իրականացման գործընթացը:***

1 **Կոոպերատիվների հետագա գործունեության և գույքի նպատակային շահագործման մոնիթորինգ չի իրագործվել, չեն ներդրվել շահառուների կողմից ծրագրի միջոցով ձեռք բերված գույքի օգտագործմամբ ունեցած արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգեր և ընթացակարգեր, ինչի հետևանքով՝ ԳԾԻԳ-ը հնարավորություն չի ունեցել գնահատելու ծրագրի կատարման արդյունավետությունը և օգտավետությունը:**

2 **Գնման գործընթացներում կազմված նախահաշվային գների և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների միջև առկա զգալի տարբերությունները կարող են առաջացնել շուկայական գներից բարձր գներով ապրանքների ձեռքբերման ռիսկ, ինչպես նաև ֆինանսական միջոցների սխալ պլանավորում հետագա գնումների համար:**

3 **Մատակարարվող ապրանքների վիճակը բնութագրող որևէ տեղեկություն տեխնիկական բնութագրերում չներառելը հնարավորություն կտա հաղթող ընկերություններին՝ մատակարարել շահագործված, նախկինում արտադրված և ոչ ժամանակակից ապրանքներ:**

3.1 Որոշ դեպքերում, համայնքներին մատակարարվել է կարիքին չհամապատասխանող Գյուղտեխնիկա, որոնք գնման օրվանից չեն շահագործվում, հետևաբար՝ ձեռքբերումը դառնում է անարդյունավետ:

3.2 Գնման համար նախատեսված տարբեր տեսակների Գյուղտեխնիկան մեկ ընդհանուր գնային առաջարկով (լոտ) գնահատելու արդյունքում՝ պատվիրատուն զրկվել է որոշ մրցույթներում ավելի շատ խնայողություն ձևավորելու հնարավորությունից:

4 **Մրցույթներին առկա է մասնակցության և մրցակցության ցածր մակարդակ, ինչի վկայությունն է նաև այն, որ կազմակերպված մրցույթներին մասնակցել են միևնույն կամ իրար հետ փոխկապակցված ընկերությունները:**

5 **ԳՇԻԳ-ի գնահատող հանձնաժողովի կողմից չի արգելվել փոխկապակցված ընկերությունների միաժամանակյա մասնակցությունը միևնույն սակարկությանը:**

6 **Չեն պահպանվել գնումների գործընթացի ընթացակարգային մի շարք պահանջներ, մասնավորապես՝ նախահաշիվներ կազմելիս շուկայական գներ չեն ուսումնասիրվել, ստեղծվել են մրցակցության համար ոչ հավասար պայմաններ, և արդյունքում, խաթարվել է գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:**

7 **Կոոպերատիվների կարիքներին անհրաժեշտ Գյուղտեխնիկայի ուսումնասիրություն չի իրականացվել: Կոոպերատիվների գործունեության և ստացված գույքի նպատակային շահագործման մոնիթորինգ չի իրականացվել:**

7.1 Քիչ չեն դեպքերը, երբ ստացված տրակտորները չեն շահագործվում գյուղգործիքների բացակայության պատճառով, կամ հակառակը՝ տրակտորի բացակայության պայմաններում ձեռք են բերվել միայն գյուղգործիքները:

7.2 ՈՒսումնասիրված համայնքներում Գյուղտեխնիկայի 45.8%-ը մատակարարելուց հետո չի շահագործվել, իսկ օգտագործվող տեխնիկայի որոշ մասն էլ աշխատել է ոչ լիարժեք ծանրաբեռնվածությամբ:

7.3 Ստացված գյուղգործիքների մի մասը չի շահագործվում հողատիպերին չհամապատասխանելու պատճառով և պահպանվում է բացօթյա ու ոչ պատշաճ պայմաններում:

8 **Կոոպերատիվների գործունեությունը կրում է ձևական բնույթ և ստեղծվել են ոչ թե ռեսուրսների համատեղմամբ միասնական և արդյունավետ գործունեություն իրականացնելու, այլ Գյուղտեխնիկա ունենալու համար:**

Վերը նշվածներից կարելի է փաստել, որ վարկային ու Կոոպերատիվների միջոցներով գնված տեխնիկան չի ծառայում առաջադրված նպատակների իրագործմանը և օգտագործվում է անարդյունավետ

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1. ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին**

1. Ձեռնարկել միջոցներ նվիրաբերված Գյուղտեխնիկան գույքագրելու, Կոոպերատիվների հաշվապահական հաշվեկշռում արտացոլելու և հարկային հաշվետվություններ ներկայացնելու ուղղությամբ:

**2. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին**

2.1 Իրականացնել Գյուղտեխնիկայի նպատակային շահագործման մոնիթորինգ, ներդնել շահառուների կողմից ձեռք բերված գույքի օգտագործման և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգեր ու ընթացակարգեր, ուժեղացնել վերահսկողական օղակները:

2.1 Ձեռնարկել միջոցներ գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ դարձնելու ուղղությամբ:

2.2 Փաստաթղթավորել շուկայական գների ուսումնասիրությունները:

2.3 Նախահաշվային գների կազմման ժամանակ ուշադրություն դարձնել շուկայական գների ուսումնասիրմանը, հիմք ընդունելով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրական շուկայական գները:

2.4 Գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմել ամբողջական և հստակեցված (նշել ապրանքների վիճակը՝ նոր, ժամանակակից, գործարանային արտադրության և այլն):

2.5 Տրակտորները ձեռք բերել գյուղգործիքների հետ միասին և հակառակը:

2.6 Գյուղտեխնիկա ձեռք բերելուց առաջ ավելի մանրամասն և ամբողջական ուսումնասիրել տվյալ համայնքի հողատիպերը:

2.7 Տեխնիկական բնութագրերում նշել թե ինչ հողատիպերի համար պետք է նախատեսված լինի գնվող Գյուղտեխնիկան:

2.8 Բացառել հողատիպերին և ռելիեֆին չհամապատասխանող տրակտորների և գյուղգործիքների ձեռքբերումը:

2.9 Կանխել անորակ և արագ շարքից դուրս եկող Գյուղտեխնիկայի ընթացիկ մատակարարումները:

***«ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ/ կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:***

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

| 2017թ.-ին ապրանքների ձեռք բերման համար նախատեսված մրցույթների վերաբերյալ կատարված վերլուծություն | | | | | | Հավելված 1 |
|---|---|---|---|---|---|---|
| | **Ապրանքներ** | **Հայտարարման ամսաթիվը** | **Մրցույթի կայացման օրը** | **Հայտեր ներկայացրած մասնակիցների քանակը** | **Կարգավիճակը** | **Նախահաշվային արժեքը/ Պայմանագրի արժեքը** |
| 1 | Տրակտորների և գյուղ մեքենաների ձեռքբերում 2 լոտով CARMAC2-CP-J 17-50 (Agr.machinery) | 7.08.2017 | 17.08.2017 | 22 | Չի կայացել | 42,950.0 հազ. դրամ |
| | Կրկնակի հրավեր | 24.08.2017 | 31.08.2017 | 32 | Կայացել է Լոտ 1-ը, Լոտ 2-ը չի կայացել | 60,690 $ (Լոտ 1) |
| 2 | Հավաքիչ-մամլիչների ձեռքբերում CARMAC2-CP-J-17-51 (Balers) | 9.08.2017 | 18.08.2017 | 2 | Չի կայացել | 28,800.0 հազ. դրամ |
| | Կրկնակի հրավեր | 23.08.2017 | 30.08.2017 | 3 | Կայացել է | 23,880.0 հազ. դրամ |
| 3 | Հրող թևերի ձեռքբերում CARMAC2-CP-J-17-52 (Tech) | 11.08.2017 | 21.08.2017 | 2 | Չի կայացել | 4,320.0 հազ. դրամ |
| | Կրկնակի հրավեր | 25.08.2017 | 1.09.2017 | 3 | Կայացել է | 4,000.0 հազ. դրամ |
| 4 | Գյուղ.մեքենաների ձեռքբերում CARMAC2-CP-J-17-53 (Agr.machines) | 16.08.2017 | 25.08.2017 | 3 | Կայացել է | 5,25.0 հազ. դրամ/ 4,842.0 հազ. դրամ |
| 5 | Անասնաբուժական սպասարկման կենտրոնի անվտանգության համակարգի մատակարարում և տեղադրում CARMAC2-PG-17-19 (VC Security) | 28.08.2017 | 11.09.2017 | 1 | Չի կայացել | 1,000$ |
| | Կրկնակի հրավեր | 26.09.2017 | 10.10.2017 | 3 | Կայացել է | 371.8 հազ. դրամ |
| 6 | 1C ծրագրի և հարակից սարքավորումների գնում, տեղադրում և անձնակազմի ուսուցում | 8.09.2017 | 22.09.2017 | 1 | Չի կայացել | 2,000$ |
| | Կրկնակի հրավեր | 26.09.2017 | 10.10.2017 | 0 | Չի կայացել | 2,000$ |

## 2017թ.-ին արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռք բերման համար նախատեսված մրցույթների վերաբերյալ կատարված վերլուծություն

*Հավելված 2*

| | Աշխատանքներ | Հայտարարվել է | Մրցույթի կայացման օրը | Հայտեր ներկայացրած մասնակիցների քանակը | Կարգավիճակը | Նախահաշվային արժեքը/ Պայմանագրի արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ Կոտայքի մարզի Բուժական համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-K-5/02 (Buzhakan CW) | 21.08.2017 | 29.08.2017 | 3 | Կայացել է | 81,181.0 հազ. դրամ/ 72,012.9 հազ. դրամ |
| 2 | ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձորի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-S-4/02 (Kornidzor CW) | 28.08.2017 | 11.09.2017 | 0 | Չի կայացել | 8,705.0 հազ. դրամ/ |
| | Կրկնակի հրավեր | 6.09.2017 | 13.09.2017 | 1 | Չի կայացել | |
| | Եռակի հրավեր | 20.09.2017 | 4.10.2017 | 0 | Չի կայացել | |
| 3 | ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայր համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-S-5/02 (Shinuhayr CW) | 29.08.2017 | 12.09.2017 | 0 | Չի կայացել | 34,830.0 հազ. դրամ/ |
| | Կրկնակի հրավեր | 6.09.2017 | 13.09.2017 | 1 | Չի կայացել | |
| | Եռակի հրավեր | 20.09.2017 | 4.10.2017 | 4 | Կայացել է | 32,095.6 հազ. դրամ/ |
| 4 | ՀՀ Տավուշի մարզի Չինարի համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-T-4/02 (Chinari CW) | 30.08.2017 | 13.09.2017 | 0 | Չի կայացել | 10,747.0 հազ. դրամ/ |
| | Կրկնակի հրավեր | 6.09.2017 | 13.09.2017 | 2 | Չի կայացել | |
| | Եռակի հրավեր | 20.09.2017 | 4.10.2017 | 4 | Կայացել է | 10,203.8 հազ. դրամ/ |
| 5 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Այրք համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-G-16/02 (Airq CW) | 31.08.2017 | 14.09.2017 | 0 | Չի կայացել | 31,714.0 հազ. դրամ/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կրկնակի հրավեր | 6.09.2017 | 13.09.2017 | 4 | Կայացել է | 26,300.3 հազ. դրամ |
| 6 | ՀՀ Արագածոտնի մարզի Ն.Բազմաբերդ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-A-7/02 (N.Bazmaberd CW) | 4.09.2017 | 18.09.2017 | 0 | Չի կայացել | 85,500.0 հազ. դրամ/ |
| | Կրկնակի հրավեր | 8.09.2017 | 18.09.2017 | 2 | Չի կայացել | |
| | Եռակի հրավեր | 20.09.2017 | 4.10.2017 | | Ընթացքում է | |
| 7 | ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-A-9/02 (Nor Artik CW) | 20.09.2017 | 4.10.2017 | 0 | Լուծարվել է | 51,300.0 հազ. դրամ/ |
| | Կրկնակի հրավեր | 29.09.2017 | 6.10.2017 | | Ընթացքում է | |
| 8 | ՀՀ Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-V-4/02 (Zaritap CW) | 22.09.2017 | 6.10.2017 | | Ընթացքում է | 28,753.0 հազ.դրամ/ |
| 9 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-G-11/02 (Chambarak CW) | 23.09.2017 | 6.10.2017 | | Չի կայացել | 18,400.0 հազ. դրամ/ |
| 10 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում CARMAC2-CP-17-G-17/02 (Tsovazard CW) | 26.09.2017 | 10.10.2017 | | Ընթացքում է | 85,506.0 հազ. դրամ/ |

| Շուկայական գների ուսումնասիրություն | | | | | | | Հավելված 3 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մատակարարը Պայմանագրի համարը, սկիզբը | Պայմանագրի առարկան | Պայմանագրով | | Շուկայական գին | Պայմանագրով սահմանված ընդհանուր գումարը | Ընդամենը հաշվարկված ըստ շուկայական գնի | Տարբերությունը /պայմանագիր-շուկայական գին/ |
| | | Քանակ հատ | Մեկ միավորի գինը | Մեկ միավորի գինը | | | |
| «Սպեցմաշ» ՍՊԸ CARMAC2 CP-J-15/-09 (Agr. Machinery) 9/18/2015 | Գութան 4 իրանանի, կախվող, քարքարոտ հողերի համար ՊԳՊ-4-40-3 | 1 | 2,928.0 | 1,608.9 | 2,928.0 | 1,608.9 | 1,319.0 *82%* |
| | Գութան 3 իրանանի, կախվող ՊՆՊ-3-35 | 5 | 878.4 | 541.1 | 4,392.0 | 2,705.6 | 1,686.3 *62.3%* |
| | Գութան 4 իրանանի, կախվող ՊՆՊ-4-40 | 3 | 1,195.6 | 867.0 | 3,586.8 | 2,601.1 | 985.6 *37.9%* |
| | Հնձիչ մատնասեգմենտային, կախվող ԿՊՍ-2.1 | 7 | 707.6 | 363.3 | 4,953.2 | 2,543.6 | 2,409.5 *94.7%* |
| **Ընդամենը** | | **16** | | | **15,860.0** | **9,518.2** | **6,441.1** ***67.7%*** |
| «Սպեցմաշ» ՍՊԸ CARMAC2 CP-J-16-29 (Tractors) 6/16/2016 | Агромаш - 90ТГ | 1 | 24,800.0 | 21,114.2 | 24,800.0 | 21,114.2 | 3,685.8 *17.5%* |
| | Беларус-892.2 | 2 | 9,000.0 | 8,455.8 | 18,000.0 | 16,911.6 | 1,088.3 *6.4%* |
| **Ընդամենը** | | **3** | | | **42,800.0** | **38,025.8** | **4,774.1** ***12.6%*** |
| «Սպեցմաշ» ՍՊԸ CARMAC2 CP-J-16-21 (Drills) 3/3/2016 | Հացահատիկային շարքացան СЗ - 3.6 А-04 | 8 | 4,500.0 | 4,167.3 | 36,000.0 | 33,338.4 | 2,661.6 *8%* |
| **Ընդամենը** | | **8** | | | **36,000.0** | **33,338.4** | **2,661.6** ***8%*** |
| «Կարկոմավտո» ՍՊԸ CARMAC CPP-J-103 5/16/2016 | UAZ-390945-460 | 5 | 6,700.0 | 4,639.9 | 33,500.0 | 23,199.6 | 10,300.4 44.4% |
| | UAZ-330365-460 | 1 | 6,550.0 | 4,072.0 | 6,550.0 | 4,072.0 | 2,478.0 *60.9%* |
| **Ընդամենը** | | **6** | | | **40,050.0** | **27,271.6** | **12,778,400** ***46.9%*** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Կարկոմավտո» ՍՊԸ CARMAC2 CP-J-15-16(PICKUP) 12/28/2015 | UAZ-390945-441 | 4 | 6,990.0 | 4,279.9 | 27,960.0 | 17,119.6 | 10,840.3<br>*63.3%* |
| **Ընդամենը** | | **4** | | | **27,960.0** | **17,119.6** | **10,840.3**<br>***63.3%*** |
| «Կարկոմավտո» ՍՊԸ CARMAC CPP-J-88 4/15/2015 | UAZ-390945-441 | 2 | 7,480.0 | 4,279.9 | 14,960.0 | 8,559.8 | 6,400.1<br>*74.8%* |
| **Ընդամենը** | | **2** | | | **14,960.0** | **8,559.8** | **6,400.1**<br>***74.8%*** |

***Շուկայական գների ուսումնասիրություն***

***Հավելված 4***

***ԱՄՆ դոլար***

| **Մատակարարը Պայմանագրի համարը, սկիզբը** | Պայմանագրի առարկան | Պայմանագրով | | Շուկայական գին | Պայմանագրով սահմանված ընդհանուր գումարը | Ընդամենը հաշվարկված ըստ շուկայական գնի | Տարբերություն /պայմանագիր-շուկայական գին/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ հատ | Մեկ միավորի գինը | Մեկ միավորի գինը | | | |
| **«Ագրոտեխնիկ» ՍՊԸ CARMAC CPP-J-85 2/26/2015** | Հողաֆռեզ կախվող հողի ընդհանուր մշակման համար КНС-4.0 | 6 | 4100 | 2903 | 24600 | 17418 | 7182<br>*41.2%* |
| | Ցաքան զիգ-զագ БЗТ-1.0 | 8 | 290 | 89 | 2320 | 712 | 1608<br>*225.8%* |
| | Գութան 4 իրանանի, կախվող, քարքարոտ հողերի համար ՊԳՊ-4-40-3 | 3 | 8000 | 3363 | 24000 | 10089 | 13911<br>*137.9%* |
| | Գութան 3 իրանանի, կախվող ՊԳՊ-3-35 | 3 | 6000 | 2711 | 18000 | 8133 | 9867<br>*121.3%* |
| | Գութան 3 իրանանի, կախվող ՊԼՆ-3-35 | 11 | 1900 | 1056 | 20900 | 11616 | 9284<br>*79.9%* |
| | Գութան 4 իրանանի, կախվող ՊԼՆ-4 | 2 | 2400 | 2715 | 4800 | 5430 | 630 |
| **Ընդամենը** | | 33 | | | 94620 | 53398 | 41222 *77.2%* |
| **«Ագրոտեխնիկ» ՍՊԸ CARMAC CPP-J-** | Հացահատիկային շարքացան СЗ - 3.6 А-04 | 6 | 11950 | 8700 | 71700 | 52200 | 19500<br>*37.4%* |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **87 3/25/2015** | | | | | | | |
| **Ընդամենը** | | 6 | | | 71700 | 52200 | 19500 *37.4%* |
| **«Ռեմտեխնոկար » ՍՊԸ CARMAC2 CP-J-16-42 (Drills) 9/14/2016** | Հացահատիկային շարքացան ունիվերսալ СПУ-4Д | 9 | 7300 | 4765 | 65700 | 42885 | 22815 *53.2%* |
| **Ընդամենը** | | 9 | | | 65700 | 42885 | 22815 *53.2%* |

## *Կոոպերատիվների կողմից Գյուղտեխնիկայի շահագործում*

*Հավելված 5*

### 1. Արծվանիստ համայնք

| **Տեխնիկայի անվանումը և մակնիշը** | **Տրամադրման տարեթիվը** | **Քանակը /հատ/** | **Տեխնիկայի վիճակը** | **Պայմանագրային արժեքը ԱՄՆ դոլար** | **Մեկնաբանություն** |
|---|---|---|---|---|---|
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՎ-3.35» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 1125 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Գութան 4 իրանանի կախվող «ՊԳՊ-4-40-3» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 4860 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 11000 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Շարքացան «ՍՊՈ 4Դ» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 7300 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Կուլտիվատոր «ԿՊՍ-4» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 4400 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 4 | Սարքին | 10600 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 9 | | 39285 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 28685 | |

### 2. Լիճք համայնք

| **Տեխնիկայի անվանումը և մակնիշը** | **Տրամադրման տարեթիվը** | **Քանակը / հատ/** | **Տեխնիկայի վիճակը** | **Պայմանագրային արժեքը** | **Մեկնաբանություն** |
|---|---|---|---|---|---|
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2015թ. | 2 | սարքին | 39140 | Չի շահագործվում /նոր/ |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | գործարանային դեֆեկտ | 19570 | Վերանորոգվել է սեփական ուժերով, այժմ սարքին է |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2015թ. | 2 | ձևափոխած | 23500 | Չի շահագործվում /մեխանիզատոր չունենալու պատճառով/ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շարքացան «ՍԶ -3.6» | 2016թ. | 1 | փոխանարկել / անսարք / | 9100 | Չի շահագործվում /Փոխանակել են «ՍՊՈՒ-4Դ»-ի հետ, որն էլ 6հա օգտագործելուց հետո, շարքից դուրս է եկել/ |
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՊ-3.35» | 2016թ. | 2 | անսարք | 2180 | Չի շահագործվում /Անսարքության պատճառով/ |
| Հնձիչ «ԿՍՊ-2.1» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 1120 | Չի շահագործվում /նոր/ |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2015թ. | 6 | 5հ-անսարք 1հ-սարքին | 15900 | Չի շահագործվում /պահեստամասերի թանկության պատճառով/ |
| Տրակտորի հրող թև «ՄՏԶ-82.1»-ի | 2015թ. | 1 | Նախատեսված չէ | 2400 | Նախատեսված չէ «Բելառուս 82.1» տրակտորին |
| Ավտոմեքենա «ՈՒԱԶ-330365-460» | 2015թ. | 1 | սարքին | 14450 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 17 | | 127360 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 90690 | |
| **3. Վաղաշեն համայնք** | | | | | |
| **Տեխնիկայի անվանումը և մակնիշը** | **Տրամադրման տարեթիվը** | **Քանակը / հատ/** | **Տեխնիկայի վիճակը** | **Պայմանագրային արժեքը** | **Մեկնաբանություն** |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. 2017թ. | 3 | 1հ. Չի շահագործվել /նոր/ 2հ.սարքին | 34200 | Մեկ հատը նոր է և չի շահագործվում՝ խոտհավաք մամլիչի և հողաֆռեզի անսարքության պատճառով: Շահագործվում է 2 հատը: |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-320» | 2016թ. | 1 | Չի շահագործվել | 11200 | Չի շահագործվում /Անսարքության պատճառով, որը վերանորոգվել է/ |
| Խոտհավաք «5 թևով Սելմակ» | 2016թ. | 1 | Չի շահագործվել | 950 | Չի շահագործվում /Անսարքության պատճառով, որը վերանորոգվել է/ |
| Խոտհավաք մամլիչ «GALLIGNANI 3690 S» | 2016թ. | 1 | Չի շահագործվել | 15100 | Չի շահագործվում /Անսարքության պատճառով, որը վերանորոգվել է/ |
| Տրակտորին կցվող հողաֆռեզ «SOVEMA RP-2/200» | 2016թ. | 1 | Չի շահագործվել | 3780 | Չի շահագործվում /Անսարքության պատճառով, որը վերանորոգվել է/ |
| Խոտհնձիչ «Դուպլեքս Գոլդ» | 2016թ. 2017թ. | 2 | 1հ.Չի շահագործվել 1հ սարքին | 8400 | Չի շահագործվում 1 հատը /Անսարքության պատճառով, որը վերանորոգվել է/ |
| Գութան 2 իրանի կախվող «S 101 » | 2016թ. | 1 | սարքին | 1120 | Շահագործվում է |
| Գութան 3 իրանի կախվող «ՊՆՎ-3.35» | 2016թ. | 1 | սարքին | 1125 | Շահագործվում է |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 1 | սարքին | 2650 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 12 | | 78525 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 42430 | |
| **4. Ախպրածոր համայնք** | | | | | |

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը /հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Կուլտիվատոր «ԿՊՍ-4» | 2016թ. | 1 | անսարք | 4200 | Չի շահագործվում /զսպանակները և թաթիկները հաճախակի կոտրվում են/ |
| Գութան 4 իրանի կախվող «ՊՆՎ-4.35» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 1430 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Ինքնագնաց խոտհնձիչ դիզելով «BCS 740» | 2016թ. | 4 | 1հ. սարքին 3հ. անսարք | 20500 | Չի շահագործվում 3հատը /անսարքության պատճառով/ Շահագործվում է 1 հատը |
| Շարքացան «ՍՊՈ 4Դ» | 2016թ. | 1 | անսարք | 7300 | Չի շահագործվում /անսարքության պատճառով/ |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 3 | սարքին | 50400 | Շահագործվում է |
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՎ-3.35» | 2016թ. | 3 | սարքին | 3375 | Շահագործվում է /ձևափոխելուց հետո / |
| Ընդամենը | | 13 | | 87205 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 28580 | |

## 5.Գեղաշեն համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը / հատ/ | Տեխնի կայի վիճակը | Պայմանա գրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր | 17200 | Չի շահագործվում /նոր/ է |
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՊ-3.35» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր | 1090 | Չի շահագործվում /նոր/ է /ընդ որում գտնվում է չկոմպլեկտավորված /չհավաքված/ վիճակում/ |
| Ընդամենը | | 2 | | 18290 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 18290 | |

## 6. Մաստարա համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը / հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Կուլտիվատոր «ԿՊՍ-4» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 3160 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՊ-3.35» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 1090 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Շարքացան «ՍԶ-3,6Ա» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 9500 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Պարարտանյութի ցրիչ | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 720 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 1 | սարքին | 2630 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 5 | | 17100 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 14470 | |

## 7. ք.Մարտունի համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը /հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-1221.2» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 35860 | Չի շահագործվում /նոր/ է /Հրող թևի բացակայության պատճառով/ |
| Տրակտոր «Բելառուս 321» | 2016թ. | 1 | սարքին | 10450 | Շահագործվում է |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | սարքին | 16590 | Շահագործվում է |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 1 | սարքին | 5400 | Շահագործվում է |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 1 | սարքին | 11000 | Շահագործվում է |
| Խոտհնձիչ «Դուպլեքս Գոլդ» | 2016թ. | 1 | սարքին | 4200 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 6 | | 83500 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 35860 | |

## 8. Այրք համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը /հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 2 | 1հ.նոր 1հ.սարքին | 22000 | Չի շահագործվել /նոր/ է /երկրորդ տրակտորի բացակայության պատճառով / Շահագործվում է 1 հատը |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | սարքին | 16590 | Շահագործվում է |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 2 | սարքին | 5300 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 5 | | 43890 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 11000 | |

## 9. Լճաշեն համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը /հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Շարքացան «ՍՊՈՒ 4Դ» | 2016թ. | 1 | անսարք | 7300 | Չի շահագործվում /անսարքության պատճառով/ |
| Տրակտորի հրող «ՄՏԶ-82.1»-ի համար | 2016թ. | 1 | նախատեսված չէ | 2400 | Նախատեսված չէ «Բելառուս 82.1» տրակտորին |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2015թ. 2016թ. | 2 | սարքին | 37600 | Շահագործվում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 2 | սարքին | 22450 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 6 | | 69750 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 9700 | |

## 10. Սոլակ համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը / հատ/ | Տեխնի կայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 6 | 2հ.անսարք 4հ.սարքին, | 15840 | Չի շահագործվում 2 հատը /Անսարքության պատճառով /Շահագործվում է 4 հատը |
| Հնձիչ «ԿԴ-210» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր | 1850 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 1 | սարքին | 11000 | Շահագործվում է / վարձակալված տրակտորով/ |
| Ընդամենը | | 8 | | 28690 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 7130 | |

## 11. Արտաշավան համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը / հատ/ | Տեխնիկայի վիճակը | Պայմանագրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Կուլտիվատոր «ԿՊՍ-4» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 3160 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Գութան 3 իրանի կախվող «ՊՆՊ-3.35» | 2016թ. | 1 | Չի շահագործվել /նոր/ | 1090 | Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի բացակայության պատճառով/ |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 10 | սարքին | 26400 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 12 | | 30650 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 4250 | |

## 12. Լեռնանիստ համայնք

| Տեխնիկայի անվանումը և մակնիշը | Տրամադրման տարեթիվը | Քանակը / հատ/ | Տեխնի կայի վիճակը | Պայմանա գրային արժեքը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| Հրող թև | 2017թ. | 1 | նախատեսված չէ | 2400 | Նախատեսված չէ «Բելառուս 82.1» տրակտորին |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | սարքին | 16730 | Շահագործվում է |
| Ինքնագնաց խոտհնձիչ բենզինով «BCS 615L» | 2016թ. | 1 | սարքին | 2640 | Շահագործվում է |
| Հնձիչ «ԿԴ-210» | 2016թ. | 1 | սարքին | 1850 | Շահագործվում է / ձևափոխելուց, հավելյալ հզորությունը ավելացնելուց և «Բելառուս 82.1» տրակտորին համապատասխանեցնելուց հետո/ |
| Գութան 3 իրանանի կախվող «ՊՆՎ-3.35» | 2016թ. | 1 | սարքին | 1125 | Շահագործվում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | | 5 | | 24745 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 2400 | |
| **13. Մեծ Սեպասար համայնք** | | | | | |
| **Տեխնիկայի անվանումը և մակնիշը** | **Տրամադրման տարեթիվը** | **Քանակը / հատ/** | **Տեխնիկայի վիճակը** | **Պայմանագրային արժեքը** | **Մեկնաբանություն** |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 2 | սարքին | 33500 | Շահագործվում է |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 2 | սարքին | 22000 | Շահագործվում է |
| Գութան 4 իրանանի կախվող «ՊԳՊ-4-40-3» | 2016թ. | 1 | սարքին | 4860 | Շահագործվում է /կոոպերատիվի անդամներից մեկի սեփական թրթուրավոր տրակտորով անվճար/ |
| Կուլտիվատոր կցովի «AU300-DZIK» ազոտային | 2016թ. | 1 | սարքին | 7000 | Շահագործվում է /կոոպերատիվի անդամներից մեկի սեփական թրթուրավոր տրակտորով անվճար/ |
| Շարքացան «ՍԶ -3.6» | 2016թ. | 1 | սարքին | 9500 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 7 | | 76860 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 0 | |
| **14.Ղազանչի համայնք** | | | | | |
| **Տեխնիկայի անվանումը և մակնիշը** | **Տրամադրման տարեթիվը** | **Քանակը / հատ/** | **Տեխնիկայի վիճակը** | **Պայմանագրային արժեքը** | **Մեկնաբանություն** |
| Անիվավոր տրակտոր «ՄՏԶ-82.1» | 2016թ. | 1 | սարքին | 16750 | Շահագործվում է |
| Խոտհավաք մամլիչ «ՊՊՏ-041 ՏՈՒԿԱՆ» | 2016թ. | 1 | սարքին | 11000 | Շահագործվում է |
| Կուլտիվատոր կցովի «ԿՆՍ-4» | 2016թ. | 1 | սարքին | 4400 | Շահագործվում է |
| Շարքացան «ՍԶ -3.6» | 2016թ. | 1 | սարքին | 9500 | Շահագործվում է |
| Ընդամենը | | 4 | | 41650 | |
| ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | 0 | |
| | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ 14 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ** | | | | **767500** | |
| **ՈՐԻՑ ՉԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ** | | | | **293485** | 38.2% |
| | | | | | |

| | |
|---|---|
| **Չի շահագործվում /նոր/ է /տրակտորի կամ գյուղ. տեխնիկայի բացակայության պատճառով/** | 198525 |
| **Չի շահագործվում՝ անսարքության պատճառով, կամ չի համապատասխանում հողատիպերին** | 87760 |
| **Չի համապատասխանում Բելառուս 82.1 տրակտորին** | 7200 |

*Հավելված 6*

**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**
**ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 20/1 որոշման հիման վրա Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում (Գյուղատնտեսական ԾԻԳ) իրականացված ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ**

**Աշխատանքների կազմակերպում**

• 2017 թվականի ապրիլից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում մրցույթներ չհայտարարելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, օրինակ.

• անհրաժեշտություն է եղել որոշակի ճշգրտումներ մտցնել ջրարբիացման համակարգերի կառուցման համար պատրաստված նախագծային փաստաթղթերում (ուսումնասիրվել է 15 նախագիծ): Օրինակ՝ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար կառուցվող ապակեպատ ջերմոցի նախագծում իրականացվել է համադրում, որի արդյունքում կատարվել է նախկինում չնախատեսված աշխատանք (ջեռուցման, հովացման, ստվերացման համակարգերի կառուցում):

• Ուսումնասիրվել է 40 համայնքների արոտների կառավարման պլանների համապատասխանությունը առկա վիճակին (ջրարբիացման աղբյուրների առկայություն, խմոցների տեղադիրքերի ճշգրտում և այլն): Օրինակ, Վաղաշեն համայնքում ավելացվել է ջարբիացման համակարգի կառուցման նախատեսվող աշխատանքները: Համայնքի ներդրումը 5% փոխարեն կազմել է 35%՝ ավելի քան 80 մլն դրամ: Փոխարինվել է Հրազդանի անասնաբուժական կենտրոնի համար նախատեսված հողը՝ ճահճային լինելու պատճառով:

• Կազմվել են կոոպերատիվներին տրամադրվող գյուղտեխնիկայի կոմպլեկտներ, ինչը հնարավորություն կտա առավելապես խուսափել նաև արձանագրված տեխնիկաների չշահագործման խնդիրներից: (Օրինակ հնարավորության դեպքում տրամադրվի տրակտոր, գութան, կցորդիչ, այլ ոչ թե մի քանի գութան առանց տրակտորի):

• Միջոցներ են ձեռնարկվել լուծելու համայնքների և կոոպերատիվների կողմից կատարվելիք ներդրումները ապահովելու նպատակով: Հավաքագրվել են ՀԳՌԿՄ ծրագրից մնացած պետության հանդեպ համայնքների և կոոպերատիվների դեբիտորական պարտքերը, ինչպես նաև վճարվել են պետության կողմից համայնքներին և կոոպերատիվներին ունեցած կրեդիտորական պարտավորությունները: ՀԳՌԿՄ 2 ծրագրի իրականացման համար ևս տարվել են աշխատանքներ համայնքների և կոոպերատիվների ներդրումները ապահովելու նպատակով:

• Ծրագրի ֆինանսավորման համաձայնագրերի փոփոխությունները ստորագրված լինելու պարագայում որոշ ժամանակ գործընթացները կասեցվել են մինչև Համաձայնագրերը ուժի մեջ մտնելը:

Հայտարարված 32 մրցույթները վերաբերվել են 16 գնման, մրցույթները չեն կայացել բավարար քանակով ընդունելի հայտ չլինելու պատճառով, և մրցույթը վերահրապարակվել է:

Արդյունքում լուծարման ավարտից հետո՝ 2017թ. 4-րդ եռամսյակում 16 գնման առարկայով 13 դեպքում արդյունքում կնքվել են համապատասխան պայմանագրեր:

**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի իրականացում**

• Կոոպերատիվի հետագա գործունեության և տրամադրված գյուղտեխնիկայի նպատակային շահագործման համար Ծրագրում ընգրկված գյուղտեխնիկա ստացած յուրաքանչյուր կոոպերատիվի համար ներդրվել է մասնագետների կողմից մշակված տարեկան աշխատանքային պլանի և բյուջեի կազմման օրինակելի ձևը:

Վերը նշված փաստաթղթում նախատեսված են՝

- աշխատանքային ծավալները,
- աշխատանքների կատարման գրաֆիկը,
- պահանջվող գյուղտեխնիկայի տեսակը և քանակը,
- տարեկան գյուղտեխնիկայի ամորտիզացիայի արժեքը (տեխնիկայի արժեքի շուրջ 7.5 %-ի չափով պարտավորություն),
- ծառայությունների գնագոյացման հաշվարկը,
- բյուջեի կազմման համար այլ տվյալներ,

Մշակված է նաև կոոպերատիվի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի հաշվառման համակարգ, որտեղ արտացոլվում է՝

- կատարված աշխատանքների ծավալները,
- աշխատանքի արդյունքում կոոպերատիվի բյուջե մուտքագրված գումարները,
- կատարված ծախսերը:

Տարվա վերջում կոոպերատիվները հաշվետվությունները ներկայացնում են կոոպերատիվների անդամների ընդհանուր ժողովին և ԳԾԻԳ-ին:

Կոոպերատիվների կողմից ձեռք բերվող գյուղտեխնիկայի ծավալը, որը սահմանված է հենց կոոպերատիվի կառավարման փաստաթղթով, կախված է նաև կոոպերատիվների կողմից իրականացվող ներդրումների չափից: Օրինակ, Արծվանիստ ԱՄՍԿ-ի 5 միավոր գյուղտեխնիկան չի օգտագործվել տրակտոր չունենալու պատճառով, որի համաֆինանսավորումը կոոպերատիվը առ այսօր չի իրականացրել:

ԳԾԻԳ-ի կողմից ներդրված են համաձայանգրերով սահմանված մոնիտորինգի բոլոր մեխանիզմները: ՀՀ գյուղատնտեսության նախարարության մոնիտորինգի վարչությունը ևս ԾԻԳ-ի տնօրենի զեկուցագրի հիման վրա 2017 թվականի մարտի 20-ից ապրիլի 7-ը թվով 36 համայնքներում իրականացրել է տրամադրված կուլտիվատորների մոնիտորինգ: 2017 թվականի մայիսի 10-ից մայիսի 24-ը թվով 50 համայնքներում իրականացրել է Ծրագրի շրջանակներում տրամադրված 406 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի մոնիտորինգ:

Միևնույն ժամանակ Ծրագրի արդյունավետությունը առավել բարձրացնելու նպատակով ներկայումս աշխատանքներ են տարվում կոոպերատիվների կողմից իրականացվող գործունեության հաշվետվողականության նոր մեխանիզմների ներդրման ուղղությամբ:

- Ինչ վերաբերում է կոոպերատիվների կողմից նվիրաբերված գույքը հաշվեկշռում չարտացոլելու և հարկային մարմիններին հաշվետվություն չներկայացնելու հանգամանքներին, ապա ԳԾԻԳ-ը այդ գործընթացներին հետևելու, ինչպես նաև կոոպերատիվներին այդ մասով հանձնարարություն տալու որևէ իրավասությամբ օժտված չէ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով խնդիրը, ներկայումս կոոպերատիվներին տրամադրվում է լրացուցիչ մասնագիտական օժանդակություն նվիրաբերված գյուղտեխնիկան կոոպերատիվների կողմից հաշվապահական հաշվեկշռում արտացոլելու և համապատասխան հաշվետվություններ ներկայացնելու համար:

- ԳԾԻԳ-ի լուծարման գործընթացում համայնքները և կոոպերատիվները հնարավորություն են ունեցել իրականացնել փոխանցումներ: Մի շարք համայքներ և կոոպերատիվներ այդ ժամանակահատվածում կատարել են փոխանցումներ:

**Գնումների գործընթաց**

- Մինչ մրցույթի հայտարարումը պարտադիր սահմանվում է գնման ենթակա ապրանքների խմբաքանակի նախահաշվային գինը, որը որոշվում է հաշվի առնելով՝

ա/ Համայնքների արոտօգտագործողների միավորում Սպառողական Կոոպերատիվների կողմից ներկայացված հայտերը կողմնորոշիչ գներով, որոնք ստացվում են կոոպերատիվների կողմից մատակարարների շրջանում ինքնուրույն կատարված հարցումների արդյունքում;

բ/ ԳԾԻԳ-ի կողմից ապրանքների շուկայական գների ուսումնասիրությունը ինտերնետի միջոցով (օգտագործվում են տարբեր ռեսուրսներ, հիմնականում ԱՊՀ երկրների կայքեր, որտեղ զետեղված են գյուղատնտեսական տեխնիկայի վաճառքի գործող գները, օրինակ agroserver.ru),

կամ մատակարարների/արտադրողների առկա գնացուցակների, գրավոր կամ բանավոր հարցումների հիման վրա;

գ/ ԳԾԻԳ-ի կողմից նախկինում ձեռքբերված համանման ապրանքների արժեքների հիման վրա:

դ/ ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գները (smeinvest.am)

Շուկայական գների ուսումնասիրությունը կատարվում է պահանջվող տեխնիկական բնութագրերով հայտնի մակնիշների/արտադրողների համանման ապրանքների վերաբերյալ, քանի որ մրցույթի ընթացքում հնարավոր է առաջարկվեն այլ մոդելներ, քան նախատեսված են համայնքների արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվների կողմից: Այսինքն, չի սահմանափակվում ավելի լայն տեսականու ապրանքների ձեռքբերման հնարավորությունը: Տարբեր աղբյուրներից ստացված համանման ապրանքների միավոր գների հիման վրա որոշվում են տվյալ ապրանքատեսակների գները, որոնք և հիմք են հանդիսանում մրցույթի նախահաշվային գնի որոշման համար: Օրինակ՝

ա) CARMAC2-CP-J-16-42 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը գոյացել է ՀՀ-ում ձևավորված СПУ-4 (հարցմամբ պարզվել է - մոտ 4,000,000 ՀՀ դրամ «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ում), СЗ-3.6А-04 (հարցմամբ պարզվել է - մոտ 4,500,000 ՀՀ դրամ «Սպցմաշ» ՍՊԸ-ում) և СЗТ-3.6 (մոտ 12,260 ԱՄՆ դոլար ՌԴ-ում) շարքացանների շուկայական միջին գների հիման վրա:

բ) CARMAC-CPP-J-87 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը գոյացել է ՀՀ-ում ձևավորված СЗУ-3.6 (հարցմամբ պարզվել է - 6,900,000 ՀՀ դրամ «Գալոպեր» ՍՊԸ-ում), Sfoggia K4 SE 4300 (հարցմամբ պարզվել է - 5,850,000 ՀՀ դրամ «Հրաշք Այգի» ՍՊԸ-ում) և Polonez 4/780 (մոտ 12,500 Եվրո ՌԴ-ում) շարքացանների շուկայական գների հիման վրա:

գ) CARMAC-CPP-J-95 ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը գոյացել է ՀՀ-ում գործող «Հրաշք Այգի», «Սպցմաշ» ՍՊԸ-ների և «ՔԱՐԴ Ագրոսերվիս» ՓԲԸ-ի վաճառքի գների հիման վրա: Այս ծածկագրերով մրցույթի տեխնիկական բնութագրերով հնարավոր էր գնել նաև նույն հզորությամբ և համապատասխան պարամետրերով բելառուսական տրակտոր և գյուղ մեքենաներ, սակայն առաջարկվել և գնվել են չինական արտադրության տրակտոր, որոնք գնով բելառուսականից ավելի էժան են: Տվյալ դեպքում սահմանված նախահաշվային գինը թույլ էր տալիս գնել նաև այլ ընկերությունների տրակտորներ:

դ) CARMAC-CPP-L-8/2/1 ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրերով նախատեսված էր գնել մեկ այգեգործական տրակտոր, որոնք հիմնականում արտադրվում են Իտալիայում և մեկ առնվազն 120 ձ.ուժ տրակտոր: Մրցույթի արդյունքում գնվել է մեկ իտալական բարձրորակ այգեգործական տրակտոր և մեկ 120 ձ.ուժ չինական տրակտոր: Տեխնիկական մասնագրերով հնարավոր էր գնել նույն հզորությամբ և համապատասխան պարամետրերով բելառուսական տրակտոր, սակայն առաջարկվել և գնվել է չինական արտադրության տրակտոր, որը գնով բելառուսականից ավելի էժան է: Տվյալ դեպքում սահմանված նախահաշվային գինը թույլ էր տալիս գնել նաև այլ ընկերության տրակտորներ:

- Համաձայն ՀԲ գնումների ազգային մրցույթի ընթացակարգի «Մատակարարը երաշխավորում է, որ բոլոր ապրանքները նոր են, չօգտագործված, և առավել ժամանակակից կամ վերջին մոդելներ են, և որ ներառում են բոլոր ժամանակակից նորամուծությունները կառուցվածքում և նյութերում, եթե այլ բան չի նշվում պայմանագրում» (The Supplier warrants that all the Goods are new, unused, and of the most recent or current models, and that they incorporate all recent improvements in design and materials, unless provided otherwise in the Contract):

Shopping ընթացակարգով գնանշման հրավերներ ուղարկվում են միայն այն կազմակերպություններին, որոնք ճանաչված են տվյալ ոլորտում որպես փորձառու, վստահելի, բարձր հեղինակություն ունեցող մատակարարներ: Այդ կազմակերպություններն ունեն ՀԲ ծրագրերի հետ աշխատելու բավականին փորձ և քաջատեղյակ են ՀԲ ծրագրերով մատակարարվող ապրանքների վերոնշյալ պայմանի մասին:

Մինչ այժմ ԳԾԻԳ-ի կողմից որևէ հին կամ օգտագործված ապրանքների մատակարարման փորձ չի արձանագրվել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՎՊ առաջարկությունը, մատակարարվող ապրանքների վիճակը բնութագրող տեղեկությունները տեխնիկական բնութագրերում ներառելու նպատակով համապատասխան առաջարկություն կներկայացվի ՀԲ:

Օրինակում նշված ՄՏԶ-82.1 տրակտորի համար հրող թևեր ՀՀ-ում պատրաստվում են Սպիտակի «Ագրոսպասարկում» ԱՄ ԲԲԸ-ի կողմից: Կազմակերպությունը գնում է ՅՈՒՄԶ մակնիշի բուլդոզերային տրակտորի համար նախատեսված նոր, չօգտագործված բուլդոզերային թևերը և դրանք հարմարեցնում է տրակտորներին: Կատարվում է որոշ կառուցվածքային ձևափոխություն, պատրաստվում է ուժեղացված շրջանակ, որով և թևը ամրացվում է տրակտորին: Մատակարարի կողմից տրվում է առնվազն մեկ տարվա երաշխիք:

- Տեխնիկական մասնագրերը կազմելիս ուշադրություն է դարձվում կոոպերատիվների կողմից առաջարկված տեխնիկայի առանձնահատկությունների ներառմանը: Չնայած գնահատող հանձնաժողովների կողմից պարտադիր ուսումնասիրվում են մատակարարների կողմից առաջարկված տեխնիկական մասնագրերը, առաջնային են հանդիսանում սպառողական կոոպերատիվների կողմից նախընտրելի տեխնիկական բնութագրերով առաջարկները: Համայնքային սպառողական կոոպերատիվներն են հանդիսանում գյուղտեխնիկայի շահառուները և վերջնական սպառողները, ուստի բոլոր տրակտորները և սարքավորումները գնվում են իրենց ցանկությամբ և անմիջական մասնակցությամբ: Օրինակում նշված դեպքում հենց Ախպրաձոր, Լիչք, Լճաշեն համայնքների կոոպերատիվների ներկայացված գնման հայտերը հաստատում են, որ ՍՊՈՒ-4 մակնիշի շարքացանները մատակարարվել են այդ համայնքների պահանջով: Սպառողական Կոոպերատիվների նախագահները հանդիսանում են մրցույթների գնահատող հանձնաժողովի անդամներ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՎՊ առաջարկությունը, կփորձենք մշակել մեխանիզմներ արդյունավետությունը առավել բարձրացնելու նպատակով:

- Հրավերի օրինակելի ձևը հաստատվել է ՀԲ կողմից դեռ 2015թ-ի մայիսի 18-ին Ծրագրի մեկնարկի ժամանակ (ՀԲ կողմից առաջարկված օրինակելի տարբերակից ընտրվել է առավել համապատասխանողը տվյալ գնման առարկային և ոլորտին), ըստ որի մատակարարի գնառաջարկը կգնահատվի ամբողջ տեսականու համար և պայմանագիրը կշնորհվի ամբողջ տեսականու համար նվազագույն գնահատված գնառաջարկ ներկայացրած կազմակերպությանը: Այդ պայմանը առավել օպտիմալն է գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման համար, քանի որ մրցույթին ներկայացվող տեսականին ընտրվում է այն սկզբունքով, որ խմբավորի տրակտորները և գյուղմեքենաները ըստ նշանակության: ՀՀ-ում տրակտորները և գյուղմեքենաները հիմնականում մատակարարվում են համաձայն նախնական պատվերի, շատ քիչ քանակի: ԳԾԻԳ-ի կողմից կատարվել են անհրաժեշտ աշխատանքները գյուղտեխնիկայի ամենաարդյունավետ ձևով խմբավորման վերաբերյալ: Օրինակ, առանձին մեկ մրցույթում խմբավորվում են հողամշակիչ գործիքները, խոտհավաքի մեքենաները, հակավորիչ մեքենաները, և այլը: Դա մատակարարին հնարավորություն է տալիս խմբավորել իր մատակարարումները և կրճատել տրանսպորտային ծախսերը: Եթե գնառաջարկները գնահատվեն առանձին լոտերով, ապա մեծ է հավանականությունը, որ մատակարարները կառաջարկեն այլ, ավելի բարձր գներ՝ ամեն տեսակի տեխնիկայի (լոտի) համար հաշվարկելով նաև առանձին տրանսպորտային փոխադրման գումար, որը բավականին թանկ է:

ա) CARMAC2-CP-J-16-35 ծածկագրով մրցույթի 8 լոտերից յուրաքանչյուրի համար պետք է հաշվարկվեր առանձին տրանսպորտային ծախս, շահույթ և այլն, ինչը ավելի թանկ կարժենար, քան մեկ լոտի համար:

Նույնը վերաբերվում է նաև բ) CARMAC-CPP-L-8-2-1 ծածկագրով մրցույթին:

ՀԲ-ն նույնպես խորհուրդ է տալիս հնարավորինս խոշորացնել գնման ենթակա փաթեթները: Դա հնարավորություն է տալիս ստանալ ավելի մրցունակ առաջարկներ, հաշի առնելով, որ կներկայացվեն մեծածախ գներ, կկրճատվեն տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև գնառաջարկների գնահատման ժամանակը և պայմանագրի կնքման ժամկետը:

Միևնույն ժամանակ, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը ներկայումս տանում է աշխատանքներ նույնանման գյուղտեխնիկաների հնարավորինս խմբավորման և բաց ընթացակարգով մրցույթների անցկացման ուղղությամբ:

- CARMAC2-CP-J-15-16, CARMAC-CPP-J-103 ծածկագրերով մրցույթների մասնակցելու հրավերները սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ-ում գրանցված ավտոմեքենաների ներկրմամբ և վաճառքով զբաղվող բոլոր ընկերություններին: «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենաների գները ՀՀ շուկայում ձևավորվում է նաև մրցույթում հաղթած «Կարկոմավտո» ՍՊԸ-ի առաջարկած գներով, քանի որ վերջինս հանդիսանում «ՈՒԱԶ» գործարանի միակ ներկայացուցիչը և դիստրիբյուտորը ՀՀ-ում: Պետք է նաև նշել, որ մատակարարված ավտոմեքենաների գինը ներառում է նաև գազաբալոնային սարքավորումների և ավտոմեքենաների վրա դրանց տեղադրման ծախսերը:

Ինչ վերաբերում է CARMAC-CPP-J-96 և CARMAC2-CP-J-15-09 ծածկագրերով մրցույթներին ՎՊ նկատառմանը՝ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի մասնակցությանը «Գալոպեր» ՍՊԸ-ի հրավերով, ընդունելի է: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ CARMAC-CPP-J-96 ծածկագրով մրցույթին «Կարկոմավտո» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ընդհանրապես չի դիտարկվել թերի լինելու պատճառով:

- «Սպիտակի ագրոսպասարկում» ԲԲԸ-ն որպես հայտատու նշվել է «Ագրոսպասարկում» Արտադրական Միավորման Սպիտակի Շրջանային Միավորում ԲԲԸ-ի փոխարեն զուտ երկար անվանումը կրճատելու նպատակով: Պայմանագրերում, ընդունման-հանձնման ակտերում նշվել է ԲԲԸ-ի գրանցված անվանումը:

**Շուկայական գների ուսումնասիրություն**

- Շուկայական գները ուսումնասիրելիս և նախահաշիվները կազմելիս մեր կողմից հաշվի են առնվել ապրանքի գինը ՌԴ-ում, Բելառուսի և Ուկրաինայի հանրապետություններում, տրանսպորտային ծախսերը մինչև ՀՀ համայնքներ, գյուղտեխնիկայի կոմպլեկտավորման, հավաքման, կարգավորմանն առնչվող ծախսերը (քանի որ որոշ դեպքերում տեխնիկան Հայաստան է մատակարարվում հանգույցները քանդած վիճակում և մինչև վերջնական սպառողին տրամադրելը այն պետք է հավաքվի և կատարվեն կանոնավորումները), մատակարար կազմակերպության ակնկալվող շահույթը (մատակարարները տեխնիկան գնում և փոխադրում են ՀՀ առանց կանխավճարի, իրենց հաշվին և 2 ամիս տևողությամբ մատակարարումից մինչև 30 օր հետո հնարավոր է ստանան պայմանագրով նախատեսված գումարը), երաշխիքային ժամկետում առաջացող հնարավոր տեխնիկայի խափանման և անհատույց սպասարկման ծախսերը և այլն:

Ստորև ներկայացված են **Աղյուսակ 4 և 5-ում** բերված պայմանագրերի և վերահսկող հանձնաժողովի կողմից ներկայացված շուկայական գների պարզաբանումը:

1. **<u>Գութան 4 իրանանի, կախվող, քարքարոտ հողերի համար ՊԳՊ-4-40-3</u>**՝ 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $8,000 արժեքով, իսկ սեպտեմբերին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 2,928,000 դրամ ($6,037) արժեքով: Այդ տեսակի գութանների ԱՊՀ երկրներում միակ արտադրող «Օրշաագրոպրոմմաշ» ԲԲԸ-ի գործարանային բացթողնման գինն է $3,900: Գութանի արժեքին գումարվում է նաև տեղափոխումը բելառուսական Օրշա քաղաքից Շիրակի մարզի Ծաղկուտ, Արևշատ, Գուսանագյուղ և Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքներ (մեկ ա/մեքենայի մեջ տեղավորվում է առավելագույնը 2 հատ գութան (գաբարիտային չափսերն են՝ 4200x2200x1500մմ)), շուկայական գին ձևավորող այլ ծախսեր: Այդ մակնիշի գութանը 2014թ-ին նույնպես մատակարարվել է $8,000 արժեքով:
2. **<u>Գութան 3 իրանանի, կախվող ՊՆՊ-3-35 (համարժեք է ՊԼՆ-3-35, ՊՆվ-3-35)</u>՝** 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $1,900 արժեքով, իսկ սեպտեմբերին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 878,400 դրամ ($1,811) արժեքով: Ըստ ԳԾԻԳ-ի ուսումնասիրությունների 2015թ-ի շուկայական գները չեն տարբերվել 2013-14թթ-ի գներից, որոնք եղել են 960,000-1,125,000 դրամ (ՀՀ ներմուծող կազմակերպությունների՝ «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ի և «Գալոպեր» ՍՊԸ-ի վաճառքի գներ, համաձայն ՀՀ ՎՊ 2014թ ընթացիկ հաշվետվության): Իսկ 2016թ-ին այդ գութանները մատակարարվել են $1,090-

1,124 գնով: Ի դեպ, 2017թ-ին ՊԼՆ-3-35Պ գութանի շուկայական գինը սահմանվել է 950,000 ՀՀ դրամ (համաձայն ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գների (smeinvest.am)):

3. **Գութան 4 իրանանի, կախվող ՊՆՊ-4-40 (համարժեք է ՊԼՆ-4-35, ՊՆՎ-4-35)՝** 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $2,400 արժեքով, իսկ սեպտեմբերին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 1,195,600 դրամ ($2,465) արժեքով: Ըստ ԳԾԻԳ-ի ուսումնասիրությունների 2015թ-ի շուկայական գները չեն տարբերվել 2013-14թթ-ի գներից, որը եղել է 1,182,500 դրամ («ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ի վաճառքի գինը 2014-15թթ): Իսկ 2016թ-ին 4 խոփանի գութանների մատակարարման գինն է եղել $1,350-1,430: Ի դեպ, 2017թ-ին ՊԼՆ-4-35Պ գութանի շուկայական գինը սահմանվել է 1,150,000 ՀՀ դրամ (համաձայն ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գների (smeinvest.am)):

4. **Հնձիչ մատնասեգմենտային, կախվող ԿՍՊ-2.1 (համարժեք է ԿՍ-Ֆ-2.1Բ-4)՝** 2015թ-ի սեպտեմբերին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 707,600 դրամ ($1,460) արժեքով: Ըստ ԳԾԻԳ-ի ուսումնասիրությունների 2015թ-ի շուկայական գները չեն տարբերվել 2013-14թթ-ի գներից, որոնք եղել են 752,000-755,000 դրամ (ՀՀ ներմուծող կազմակերպությունների՝ «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ի և «Գալոպեր» ՍՊԸ-ի վաճառքի գներ, համաձայն ՀՀ ՎՊ 2014թ ընթացիկ հաշվետվության): Իսկ 2016թ-ին հնձիչի մատակարարման գինն է եղել 533,500 դրամ ($1,116): 2017թ-ի համար ԿՍՊ-2.1 մակնիշի շուկայական գին է սահմանվել 609,000 դրամ (համաձայն ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գների (smeinvest.am)):

5. **Տրակտոր Агромаш-90ТГ**՝ 2016թ-ին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 24,800,000 դրամ արժեքով: «Սպեցմաշ» ՍՊԸ-ն է հանդիսանում ռուսական «Ագրոմաշհոլդինգ»-ի միակ ներկայացուցիչը և դիստրիբյուտորը ՀՀ-ում և հենց ինքն է ձևավորում շուկայական գինը, որը, օրինակ, 2017թ-ի համար սահմանվել է 22,000,000 դրամ (համաձայն ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գների (smeinvest.am)):

6. **Տրակտոր Беларус-892.2**՝ 2016թ-ին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 9,000,000 դրամ արժեքով: «Սպեցմաշ» և «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊ ընկերություններն են հանդիսանում Մինսկի տրակտորային գործարանի միակ ներկայացուցիչները և դիստրիբյուտորները ՀՀ-ում, իսկ «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ն այդ մակնիշի տրակտորը 2016թ-ին արժեցել է 10,000,000 դրամ: Նույն գինն է գործել է նաև ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի համար (smeinvest.am):

7. **Հացահատիկային շարքացան СЗ-3.6А-04**՝ 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $11,950 արժեքով (5,700,000 ՀՀ դրամ համարժեք), իսկ 2016թ-ի մարտին «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 4,500,000 դրամ ($9,417) արժեքով: Ըստ ԳԾԻԳ-ի ուսումնասիրությունների 2015թ-ի շուկայական գները չեն տարբերվել 2012-14թթ-ի գներից, որոնք եղել են մոտ 7,000,000 դրամ (ՀՀ ներմուծող կազմակերպությունների՝ «Գալոպեր» ՍՊԸ-ի վաճառքի գին, համաձայն ՀՀ ՎՊ 2014թ ընթացիկ հաշվետվության): 2017թ-ին СЗ-3.6 շարքացանի շուկայական գին է սահմանվել 5,150,000 ՀՀ դրամ ($10,730), համաձայն ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի գների (smeinvest.am):

8. **Բեռնատար ավտոմեքենա UAZ-330945-460, UAZ-330365-460 և UAZ-330945-441՝** 2015-16թթ-ին «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է բազային UAZ-3309

ավտոմեքենաների 12 հատ տարբեր մոդիֆիկացիայի բեռնատար ավտոմեքենաներ 6,550,000-7,480,000 դրամ արժեքով: «Կարկոմավտո» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՈՒԱԶ» գործարանի միակ ներկայացուցիչը և դիստրիբյուտորը ՀՀ-ում և հենց ինքն է ձևավորում շուկայական գինը: 2014-15թթ.-ին «Ֆերմեր» (UAZ-39094) տեսակի ա/մեքենայի «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից վաճառքի գինն է եղել 7,500,000 դրամ: ԳԾԻԳ-ին մատակարարված ՈՒԱԶ «Ֆերմեր» ավտոմեքենաների գները համարժեք են եղել ընկերության ք.Երևանում գործող վաճառասրահի զեղչված գներին: Պետք է նաև նշել, որ մատակարարված ա/մեքենաների գինը ներառում է նաև գազաբալոնային սարքավորումների գինը և տեղադրումը ա/մեքենաների վրա, որը կազմել է 580,000-590,000 դրամ:

**9. <u>Հողաֆռեզ կախվող հողի մշանման համար ԿՆՍ-4.0</u>՝** 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $4,100 արժեքով: 2014թ-ին այդ մոդելի կուլտիվատորի արտադրող բելառուսական «Տեխմաշ» ԱՍՊԸ-ի գործարանային բացթողնման գինն է եղել 96,500 ռուբլի ($2,840 համարժեք): Գործարանային գնին ավելանում է կուլտիվատորի տեղափոխման ծախսերը բելառուսական Լիդա քաղաքից ՀՀ 5 մարզերի 6 համայնքներ և շուկայական գին ձևավորող այլ ծախսեր:

**10. <u>Ցաքան զիգ-զագ ԲԶՏ-1.0</u>՝** 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է ընդամենը 8 հատ ցաքան յուրաքանչյուրը $290 արժեքով: 2014թ-ին այդ ցաքաններ արտադրող բելառուսական «Տեխմաշ» ԱՍՊԸ-ի գործարանային բացթողնման գինն է եղել 3,100 ռուբլի ($91 համարժեք): Տվյալ մրցույթում «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ն ներկայացրել է ամենացածր գինը ամբողջ տեսականու համար (6 անվանում և 32 միավոր գյուղ մեքենաներ, ներառյալ 8 հատ ԲԶՏ-1.0 ցաքանները):

11. **<u>Գութան 3 իրանանի, կախվող, քարքարոտ հողերի համար ՊԳՊ-3-35</u>՝** 2015թ-ի փետրվարին «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է $6,000 արժեքով: Այդ տեսակի գութանների ԱՊՀ երկրներում միակ արտադրող «Օրշաագրոպրոմմաշ» ԲԲԸ-ի գործարանային բացթողնման գինն է $3,040: Գութանի արժեքին գումարվում է նաև տեղափոխումը բելառուսական Օրշա քաղաքից Արագածոտնի մարզի Ագարակ, Վերին Բազմաբերդ և Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքներ և շուկայական գին ձևավորող այլ ծախսեր:

12. **<u>Հացահատիկային շարքացան ունիվերսալ СПУ-4Д</u>՝** 2016թ-ի սեպտեմբերին «Ռեմտեխնոկար» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է $7,300 արժեքով: Նշված շարքացանի շուկայական արժեքը 2016թ-ին կազմել է 350,000-450,000 ռուբլի ՌԴ-ում: «ԱՐ-ԲԵ հայ-բելառուսական առևտրային տուն» ՍՊԸ-ում տվյալ շարքացանի վաճառքի գինն է 3,880,000 ՀՀ դրամ (կամ մոտ $8,000 համարժեք), որը գործում է 2016թ-ից մինչ այժմ: ՌԴ-ում СПУ-4Д շարքացանի վաճառքի գինն էր 2016թ-ին 293,000 ռուբլի (մոտ $4,880):

**Կոոպերատիվների կողմից ձեռք բերված գյուղտեխնիկայի շահագործում**

- Տեխնիկական մասնագրերը կազմելիս ուշադրություն է դարձվում կոոպերատիվների կողմից առաջարկված տեխնիկայի առանձնահատկությունների ներառմանը: Չնայած գնահատող հանձնաժողովների կողմից պարտադիր ուսումնասիրվում են մատակարարների կողմից առաջարկված տեխնիկական մասնագրերը, առաջնային են հանդիսանում սպառողական կոոպերատիվների կողմից նախընտրելի տեխնիկական բնութագրերով առաջարկները: Համայնքային սպառողական կոոպերատիվներն են հանդիսանում գյուղտեխնիկայի շահառուները և վերջնական սպառողները, ուստի բոլոր տրակտորները և սարքավորումները գնվում են իրենց ցանկությամբ և անմիջական մասնակցությամբ:

Համայնքների արոտների կառավարման և անասնապահության զարգացման կոմիտեն ելնելով ծրագրի նպատակներից. իր կողմից մշակված կառավարման պլանով առաջարկում է ծրագրեր՝ այդ թվում համայնքի արոտօգտագործողների միավորում ՍԿ-ի համար համապատասխան գյուղատնտեսական տեխնիկաի քանակը և լրակազմը: Կառավարման պլանը հաստատվում է ՀԲ-ի կողմից, որից հետո Ծրագիրը ներդրում է կատարում ուղղված համայնքին և կոոպերատիվին:

Շահառուների կողմից կատարվող ներդրումների հստակ ուղղությունները որոշվել են Ծրագրի նախապատրաստման ժամանակ մասնագիտական ուսումնասիրությունների հիման վրա և սահմանված են միջազգային համաձայնագրերով:

- Մոնիտորինգի վերաբերյալ նշված է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի իրականացում» բաժնում
- Ուսումնասիրության ենթարկած 111 միավոր գյուղտեխնիկայից 47-ը չի շահագործվում (42.3%), այդ թվում
- 24 միավոր տեխնիկան (ընդհանուրի 22%) կամ տրակտորի, կամ սարքավորումների բացակայության պատճառով:

Մինչև Ծրագրի ավարտը նման ժամանակավոր երևույթներ կարող է տեղի ունենալ և այն անխուսափելի է: Դա կապված է կոոպերատիվների կողմից ներդրումների անկանոն վճարելու հետ: Կոոպերատիվները, հիմնականում, գումարները վճարում են մասերով (մինչև անգամ 7-8 մասերից), Ծրագիրը ունի սահմանափակում եռամսյակային և տարեկան գումարների իրացման մեջ: Բացի դա, հարկ է նշել, որ համաձայն Ծրագիրը կարգավորող փաստաթղթերի, կոոպերատիվները ինքնուրույն են որոշում գյուղտեխնիկայի գնման առաջնահերթությունները:

- Անսարքության պատճառով 20 տեխնիկա (ընդհանուրի 18%)

Մեխանիզմների օգտագործման ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրները նորմալ են և կրում են իրավիճակային բնույթ: Բոլոր մատակարարվող տեխնիկաները ունեն երաշխիքային սպասարկում և ԳԾԻԳ-ը կոոպերատիվների կողմից սպասարկման հետ կապված ցանկացած հարցին մշտապես տվել է օպերատիվ լուծում:

- Նախատեսված չէ ՄՏՋ 82.1 տրակտորի համար

Հարկ է նշել, որ ինչպես արդեն ներկայացվել է տեխնիկայի ցանկը և լրակազմը ներկայացվում է մասնագետների կողմից մշակված կառավարման պլանում և հաստատվում է ՀԲ կողմից: Ինչպես նաև ամեն առանձին գնում կատարելիս կոոպերատիվը ներկայացնում է համապատասխան հայտ: Եվ ԳԾԻԳ-ի աշխատակազմը իրավասու չէ ինքնուրույն որոշել, թե ինչ մակնիշի տեխնիկայի գնում է անհրաժեշտ իրականացնել:

2015-2017թթ. ընթացքում 56 կոոպերատիվների արդեն տրամադրվել է գյուղտեխնիկա, ավարտվել է 42 համայնքի արոտների ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները:

Մինչ ծրագրի ավարտը (2018-2020թթ. ընթացքում) գյուղտեխնիկա կտամադրվի նաև ստեղծված մյուս կոոպերատիվներին, ջրարբիացում կիրականացվի նաև շահառու մյուս համայնքներում: Իրականացվելիք միջոցառումների արդյունքում գործունեություն կիրականացնեն ծրագրում ընդգրկված բոլոր կոոպերատիվները:

# 2.13 ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/3 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման արդյունավետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրություն: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարմանն ու օգտագործմանն ուղղված աշխատանքները, գործարքներն ու ընթացակարգը: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն: |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 20-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017թ. օգոստոսի 7-ից մինչև 2018թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:<br><br>Դիտարկման փուլում վերահսկվող օբյեկտից պահանջվել և ստացվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ Վերահսկիչ պալատի տարեկան ծրագրով սահմանված թեմայի վերաբերյալ:<br><br>Ստուգման փուլում ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթերի ստուգման, ընթացակարգի և գործընթացի ուսումնասիրության, հարցման և հաշվարկման մեթոդները: Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապակցվածության և/կամ համեմատության վերլուծություն: |

Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման մեթոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել, ինչպես նաև վերլուծվել են վերահսկողության դիտարկման և ստուգման փուլերը:

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը: Օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ այդ բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:*

**Նշանակված վարչական տուգանքներն ըստ տարիների**




## 1 Պետական վերահսկողություն սննդամթերքի անվտանգության բնագավառում

Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողությունն իրականացվում է ստուգումների, իրացման ցանցում տնտեսվարողների մոտ դիտարկումների և արտադրողների մոտ անվտանգության չափորոշիչների ներդրման նկատմամբ աուդիտի հիման վրա:

2016թ. իրականացվել է 50 պլանային ստուգում, 194 դիտարկում, 36 անասնահամաճարակային մշտադիտարկում: Արդյունքում, կայացվել է արտադրության գործունեության կասեցման 13 որոշում, վարչական տուգանք նշանակելու մասին 32 որոշում, նշանակվել է 3450,0 հազ. դրամ ընդհանուր գումարով վարչական տուգանք:

2017թ. 9 ամիսների արդյունքում իրականացվել է 533 ստուգում, 481 դիտարկում, 84 անասնահամաճարակային մշտադիտարկում: Ստուգումներից և դիտարկումներից 163-ի արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Ընդհանուր առմամբ, կայացվել է արտադրության կասեցման 90 որոշում, որից 48-ը ստուգման, իսկ 42-ը՝ դիտարկման հիման վրա, վարչական տուգանք նշանակելու մասին 219 որոշում, նշանակվել է 42710,0 հազ. դրամ ընդհանուր գումարով վարչական տուգանք: Վերստուգում է իրականացվել կասեցված 90 օբյեկտներից ընդամենը 16-ում:




*Ընդհանուր առմամբ, 2017թ.-ին ստուգումների քանակը 2016թ.-ի համեմատությամբ ավելացել է 14 անգամ:*

***Վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են համակարգային բնույթի խախտումներ և անհամապատասխանություններ:***

*Մասնավորապես.*

**Ծրագրում բացակայում է յուրաքանչյուր սուբյեկտի ռիսկայնությունը և ստուգման անցկացման ժամանակահատվածը**

1. **Ստուգումների 2017թ. տարեկան պլանը չի համապատասխանում «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերին՝ ծրագրում առկա չէ յուրաքանչյուր սուբյեկտի ռիսկայնությունը և յուրաքանչյուր ստուգման անցկացման ժամանակահատվածը:**

- Ստուգումների տարեկան պլանը պետք է կազմվի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.12.2012թ. 1679-Ն որոշմամբ սահմանված՝ սննդի օպերատորների ռիսկայնության հաշվարկման մեթոդաբանության պահանջներին համապատասխան: Որոշմամբ սահմանված են ոլորտային և անհատական ռիսկի չափորոշիչներ:

Չնայած ծառայության աշխատակազմի կառուցվածքում առկա է Ռիսկերի կառավարման վարչություն, տարեկան ստուգումները պլանավորելիս ըստ տնտեսվարող սուբյեկտների ռիսկի անհատական չափորոշիչներ չեն հաշվարկվում:

**2. Ծառայության կողմից ստուգումներն իրականացվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերով, որոնցում ներառված են բացառապես ազգային օրենսդրությամբ սահմանված նորմեր, իսկ անհամապատասխանություններն արձանագրվում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում ամրագրված նորմերի նկատմամբ:**

**Պետական հսկողությունը պետք է իրականացվի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ, մինչդեռ ծառայության կողմից ստուգումներն իրականացվում են ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների պահանջների պահպանման նկատմամբ**

Համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» (այսուհետ՝ Միություն) 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 53-րդ հոդվածի 3-րդ կետի՝ միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից անդամ պետությունների տարածքներում արտադրանքին, կամ արտադրանքին և դրան ներկայացվող պահանջների հետ կապված՝ նախագծման (ներառյալ հետազննման), արտադրության, շինարարության, մոնտաժի, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող համապատասխան պարտադիր պահանջները, որոնք սահմանված են անդամ պետությունների օրենսդրությամբ կամ Հանձնաժողովի ակտերով, գործում են միայն անցումային դրույթներով սահմանված մասով, և Միության տեխնիկական կանոնակարգով և (կամ) Հանձնաժողովի ակտով սահմանված անցումային դրույթների գործողության ավարտի ամսաթվից չեն տարածվում արտադրանքը շրջանառության մեջ դնելու, տեխնիկական կանոնակարգման օբյեկտների

համապատասխանությունը գնահատելու, Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) վրա: «**Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 2-րդ հավելվածի 48-րդ կետի համաձայն՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 53-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիս հետո՝ բացառությամբ Մաքսային միության հետևյալ տեխնիկական կանոնակարգերի, որոնց համար սահմանվում են նշված դրույթներն ուժի մեջ մտնելու հետևյալ ժամկետները (բացառության մեջ մտնող տեխնիկական կանոնակարգերի ցանկում ներառված չեն սննդամթերքի անվտանգության ոլորտը կարգավորող տեխնիկական կանոնակարգերը):**

**Վերը նշված իրավական նորմերի իմաստով** պետական հսկողությունը (վերահսկողությունը) պետք է իրականացվի Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ, մինչդեռ ծառայության կողմից ստուգումներն իրականացվում են ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների պահանջների պահպանման նկատմամբ, ինչը հակասում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և «**Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի պահանջներին:**

**ՀՀ կառավարության** 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշմամբ հետևյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների նկատմամբ վերահսկողության իրավասությունը վերապահվել է ՍԱՊԾ-ին. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 67 որոշմամբ հաստատված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ,

2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2012 թվականի հունիսի 15-ի N 34 որոշմամբ հաստատված «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 874 որոշմամբ հաստատված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են վավերացված պայմանագրերի նորմերը: Եթե Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատած միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են իրավական այլ ակտերով, ապա կիրառվում են հաստատված պայմանագրերի նորմերը:

**Բուն արտադրական և պահեստավորման գործընթացներում դիտարկում չի կարող իրականացվել, քանի որ այդ դեպքերում իրացում(վաճառք) չի կատարվում**

**3. Դիտարկումներն իրականացվում են ինչպես իրացման ցանցերում, այնպես էլ արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ՝ որոշ դեպքերում նաև արտադրության փուլում**:

«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշմանը և պիտանիության ժամկետին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև անհամապատասխանության դեպքում՝ իրացման (վաճառքի) կասեցում և ցուցումներ հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու վերաբերյալ, ինչպես նաև կենդանական ծագման մթերքի պահման պայմանների

անհամապատասխանության դեպքում՝ իրացման (վաճառքի) կասեցում և նմուշառում՝ լաբորատոր փորձաքննության համար: Տվյալ իրավական նորմով սահմանված «իրացման (վաճառքի) կասեցում» հարկադրանքի միջոցը կարող է կիրառվել բացառապես վաճառքի փուլում: Բուն արտադրական և պահեստավորման գործընթացներում դիտարկում չի կարող իրականացվել, քանի որ այդ դեպքերում իրացում (վաճառք) չի կատարվում:

**Արտադրությունում դիտարկում կարող է իրականացվել միայն տվյալների հավաքագրման նպատակով: Դիտարկման հրամանի հիման վրա արտադրություններում փաստացի իրականացվել են ստուգման ընթացակարգերով նախատեսված գործողություններ:**

- Դիտարկումների ընթացքում տնտեսվարողների նկատմամբ կայացվել է գործունեության կասեցման որոշումներ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 20.01.2011թ. ընդունված N 34-Ն Կառավարության որոշումը, մինչդեռ դիտարկման արդյունքներով կարող է կայացվել միայն արտադրանքի իրացումը (վաճառքը) կասեցնող որոշում, երբ առկա է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերը (օր.՝ 14.02.2017թ. դիտարկման N 33 հրաման, 03.03.2017թ դիտարկման N 54 հրաման, «27.06.2017թ. դիտարկման N 377 հրաման):
- Օրենսդրությունը սահմանում է դիտարկման ընթացքում իրականացվող գործողությունները, մինչդեռ Ծառայության պետի հրամանով յուրաքանչյուր դիտարկման համար սահմանված գործողությունները հակասում են Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության օրենքով նախատեսված գործողություններին՝ դիտարկման գործընթացը վերածելով ստուգման գործընթացի:

**4.** ՀՀ տարածք ներմուծած վտանգավոր սննդամթերքի մասին միջազգային արագ արձագանքման համակարգի միջոցով ստացված տեղեկատվությունը որոշ դեպքերում չի վերլուծվում, նշված սննդամթերքի նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում, վերահսկողության արդյունքում այն որպես անհատական ռիսկի չափորոշիչ չի հաշվարկվում:

**Չեն կատարվել ՀՀ կառավարության որոշման պահանջները**

**5.** Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի՝ կենդանական ծագման մթերք արտադրողները և վերամշակողները գործունեություն են իրականացնում Ծառայության կողմից տրված եզրակացության հիման վրա: Եզրակացության տրամադրման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության

29.09.2016թ. թիվ 989-Ն որոշմամբ, որը ուժի մեջ է մտել 05.10.2017թ.-ին: Որոշմամբ հանձնարարված է Ծառայության պետին, մինչև որոշումն ուժի մեջ մտնելը, բացահայտել կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի գործող օպերատորներին և վերջիններիս յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն տրամադրել գործունեության եզրակացություն ստանալու ժամկետների և կարգի, ինչպես նաև եզրակացության հիման վրա գործունեություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Նշված գործողությունները ծառայության կողմից չեն իրականացվել: Եզրակացությունը պետք է տրամադրվի «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված աուդիտի իրականացման հիման վրա: Աուդիտի իրականացման հարցաշար ոչ մի իրավական ակտով սահմանված և հաստատված չէ:

**Խախտվել է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածները*:***

**Չեն պահպանվում ոլորտին առնչվող իրավական ակտերի նորմերը և ընթացակարգերը**

**6.** Տեսչական ստուգումների և դիտարկումների իրականացման ընթացքում չեն պահպանվում ոլորտին առնչվող իրավական ակտերի նորմերը և ընթացակարգերը: Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են իրականացված ստուգումների 10 փաթեթներ, որոնցից 8-ում հայտնաբերվել են հետևյալ ընթացակարգային խախտումները.

***6.1.*** *Ծառայության պետի թիվ 38-17 հանձնարարագրով տնտեսվարողի մոտ 16.03.2017-29.03.2017թթ. իրականացված ստուգման ընթացքում կատարվել է արտադրատեսակներից նմուշառում և ուղարկվել է լաբորատոր փորձաքննության: Համաձայն 27.03.2017թ. N 866 փորձարկման արձանագրության՝ «Կոլոլակ» արտադրատեսակը չի համապատասխանել ՄՄՏԿ 034/2013 պահանջներին մանրէաբանական «ԱՑԽՄ» ցուցանիշով, և 30.03.2017թ. կայացվել է որոշում արտադրական գործունեության առանձին գործառույթները կասեցնելու և խախտումները վերացնելու վերաբերյալ: Փաթեթի ուսումնասիրությունից պարզվեց.*

➢ Ստուգաթերթը լրացված է մատիտով, որը հնարավորություն է ընձեռում փոխել հարցերի պատասխանները, իսկ կարգադրագրերը լրացված են թերի: Պահեստում առկա և հետ կանչված վտանգավոր արտադրանքի 17.1 կգ-ը՝ ըստ N 3817 ոչնչացման ակտի, տեսուչի կողմից ոչնչացվել է միանձնյա, հանձնաժողովի անդամներից ոչ մեկը չի ստորագրել համապատասխան ակտում:

**Խախտվել են Կառավարության 10.09.2015թ. թիվ 1060-Ն որոշման պահանջները:**

**Չի թողարկվել փորձնական արտադրանք և չի ներկայացվել լաբորատոր փորձաքննության**

➢ Բացակայել են Ծառայության պետի 30.03.2017թ. որոշման պահանջների կատարման վերաբերյալ փաստաթղթերը, չի կազմակերպվել սանիտարական օր, չի թողարկվել փորձնական արտադրանք և չի ներկայացվել լաբորատոր փորձաքննության «ԱՑԽՄ» ցուցանիշով, սույն որոշման կատարման մասին տեղեկանքը փաթեթում բացակայում է: **Սույն որոշման չկատարումը՝ սահմանված ժամկետում, առաջացնում է պատասխանատվություն օրենքով, սակայն Ծառայության կողմից ոչինչ չի ձեռնարկվել:**

➢Ներկայացված փաթեթից պարզ է դառնում, որ արտադրական գործունեության առանձին գործառույթը կասեցնելու մասին որոշումը հանված չէ:

**6.2. Ծառայության պետի թիվ 116-17 հանձնարարագրով Ընկերությունում 07.04.2017-21.04.2017թթ. իրականացվել է ստուգում. հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ 04.05.2017թ. տրվել է N 116-17 հանձնարարականը, որով անհամապատասխանությունների վերացման ժամկետ է սահմանվել 01.06.2017թ.: Փաստաթղթերից պարզ է դառնում, որ.**

➢Սահմանված ժամկետում Ծառայությանը անհամապատասխանությունների վերացման մասին չի տեղեկացվել:

➢Ծառայության տեսուչների կողմից ստուգման ընթացքում պատրաստի արտադրանքից և հումքից նմուշառում չի արվել և լաբորատոր փորձաքննություններ չեն նշանակվել՝ չնայած այն հանգամանքին, որ նույն տեսուչները տնտեսվարողի մոտ արձանագրել էին խախտում այն մասին, որ ՍՊԸ-ի արտադրանքը ընդհանրապես լաբորատոր փորձաքննություն չի անցել:

➢Ստուգման պահին սննդի շղթայում ներգրավված 22 աշխատակիցներից ստուգման փաթեթում առկա են միայն 10-ի բժշկական զննության գրքույկների պատճենները, որոնցից առնվազն 5-ի պատճենները արժանահավատ չեն: **Խախտվել են «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները:**

**6.3. Ծառայության պետի թիվ 384-17 հանձնարարագրով Ընկերությունում իրականացվել է ստուգում 19.06.2017-30.06.2017թթ. ժամանակահատվածում:**

**Հանրային սնունդ մատուցողը վերականգնել է անհայտ ծագման ապրանքի մակնշումը**

➢ Ընկերությունում 19.06.2017թ.-ին տեսուչի կողմից հայտնաբերվել է անհայտ ծագման թթվասեր՝ 3 կգ և պանիր՝ 10 կգ: Արձակվել է N 384 կարգադրագիրը՝ վերը նշված ապրանքի իրացումը կասեցնելու մասին: 23.06.2017թ. Ծառայության պետի որոշումով ապրանքի իրացման կասեցումը վերացվել է, քանի որ մակնշումը համապատասխանեցվել է «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: **Պարզ չէ, թե հանրային սնունդ մատուցող ընկերությունը ինչպես է վերականգնել անհայտ ծագման ապրանքի մակնշումը:**

➢ Ստուգման ընթացքում տեսուչները արձանագրել են, որ ՍՊԸ-ի տնօրենի հայտարարության մեջ նշված ընդամենը 6 աշխատակիցները ենթարկվել են նախնական և պարբերական բժշկական զննությունների, սակայն գործում կարված սանգրքույկներից երևում է, որ 6-ից առնվազն 5-ը ստուգման պահին օրենսդրությամբ սահմանված կարգով բուժզննում չեն անցել: Խախտվել են Կառավարության 20.01.2011թ. N 34 որոշման հավելվածի 55-րդ կետի պահանջները:

➢ Ըստ ստուգաթերթի 8.1. կետի՝ ընդունվող ամբողջ հումքը և սննդամթերքը ուղեկցվում են անվտանգությունը և որակը հաստատող փաստաթղթերով: Սակայն ստուգման փաթեթում բացակայում է կենդանական ծագման հումքի անվտանգությունը և որակը հաստատող որևէ փաստաթուղթ: Խախտվել են «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

**6.4. Ծառայության պետի թիվ 477-17 հանձնարարագրով տնտեսվարողի մոտ 19.07.2017-08.08.2017թթ. իրականացվել է ստուգում.**

➢ Ստուգաթերթը լրացված է թերի՝ տեղեկատվական բնույթի հարցաշարի 18 կետերից լրացված է միայն 1 կետ:

**Ստուգման փաթեթում բացակայում են խախտման վերաբերյալ փաստաթղթեր**

➢ Տեսուչների կողմից արձանագրվել է խախտում՝ ըստ որի բացակայում են ռուսերեն գրառումները 13 արտադրատեսակի պիտակների վրա: Ընդ որում, ստուգաթերթի 8.9 կետով նախատեսված վերահսկողությունը պետք է իրականացվեր «ակնադիտական և փաստաթղթային զննման» միջոցով, սակայն հայտնաբերված և արձանագրված խախտումները հիմնավորված չեն, քանի որ ստուգման փաթեթում բացակայում են խախտման վերաբերյալ փաստաթղթեր,

պիտակներ: Նաև բացակայում են արդեն ուղղված տարբերակները, որոնք տվյալ ապրանքների պիտակների իրացման կասեցումը դադարեցնելու հիմք են:

➢Ստուգող հանձնաժողովին տրամադրած տեղեկանքում չի նշվել, որ կազմակերպությունը արտադրում է հում ապխտած հավի կրծքամիս: Սակայն փաթեթում առկա է եղել «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի 15.06.2017թ. թիվ 2029 փորձաքննության արձանագրությունն այն մասին, որ տնտեսվարողի կողմից արտադրվող հում ապխտած հավի կրծքամսի նմուշում հայտնաբերել է E.Coli աղիքային ցուպիկ: Տեսուչների կողմից ստուգման ընթացքում փաստաթղթերի անհամապատասխանությունների վերացման և վտանգավոր սննդամթերքի հայտնաբերման ուղղությամբ որևէ գործողության մասին տեղեկություն փաթեթում արտացոլված չէ:

**6.5. Ծառայության պետի թիվ 454-17 հանձնարարագրով Ընկերությունում 06.07.2017-26.07.2017թթ. իրականացվել է ստուգում. Ծառայության կողմից 01.08.2017թ. կազմվել է N 454 տեղեկանքը խախտումներ չհայտնաբերելու մասին:**

➢Ստուգման փաստաթղթերի փաթեթում բացակայում են հումքի մակնշումը և հումքի անվտանգության վերաբերյալ փաստաթղթերը՝ մասնավորապես կաթի և կաթի փոշու, իսկ տեսուչները դրանց առկայությունը փաստել են ստուգաթերթում:

**Առկա չեն արտադրանքի լաբորատոր փորձաքննության արձանագրությունները**

**6.6. Ծառայության պետի թիվ 6-Ա հանձնարարագրով Ընկերությունում 30.11.2016-13.12.2016թթ. իրականացվել է ստուգում:** Ծառայության պետի 01.12.2016թ. որոշումով կասեցվել է ՍՊԸ-ի արտադրական գործունեությունը, քանի որ խախտվել են ՀՀ Կառավարության 20.01.2011թ. N 34-Ն որոշման հավելվածի մի շարք կետերի պահանջներ և Կառավարության 19.10.2006թ. N 1560-Ն որոշման հավելվածի N 1 և N 2 աղյուսակի պահանջները՝ առկա չեն արտադրանքի լաբորատոր փորձաքննության արձանագրությունները:Ծառայության պետի 13.01.2017թ. N 6-Ա հրամանով 16-18.01.2017թ. իրականացվել է կրկնակի ստուգում նախկին ստուգման ընթացքում կայացված կասեցման որոշման պահանջների կատարման փաստը բացահայտելու նպատակով և կազմվել է N 6 տեղեկանքը խախտումներ չհայտնաբերվելու մասին: Ստուգման փաթեթի ուսումնասիրությամբ պարզվել է.

➢Առաջին ստուգման ակտում նշվել է, որ արտադրանքի լաբորատոր փորձաքննություններ չեն իրականացվել, սակայն տնտեսվարողի կողմից

խախտումը վերացվել է ստուգման ընթացքում: Խախտման վերացումը հավաստող որևէ փաստաթուղթ փաթեթում առկա չէ:

➢Կրկնակի ստուգման փաթեթում բացակայում է Ծառայության պետի հրամանը նախկինում կայացված որոշումը (արտադրական գործունեությունը կասեցնելու վերաբերյալ) վերացնելու վերաբերյալ:

➢Կրկնակի ստուգմամբ խախտում չի արձանագրվել, սակայն ստուգման փաթեթում նույնպես բացակայում են լաբորատոր փորձաքննության արձանագրությունները, որոնց բացակայության հիման վրա արձանագրվել էր նախկին խախտումը:

**Արտադրատեսակներից նմուշառում չի իրականացվել և լաբորատոր փորձաքննություններ չեն նշանակվել**

**6.7. Ծառայության պետի թիվ 150-17 հանձնարարագրով Ընկերությունում 05.05.2017-25.05.2017թթ. իրականացվել է ստուգում**: Ստուգման ընթացքում ընկերությունը տուգանվել է 100.000 դր.՝ մսամթերքի ծխեցման հատվածի առաստաղի ոչ մաքուր վիճակի համար: Ստուգման փաթեթի ուսումնասիրությամբ պարզվել է.

➢Արտադրատեսակներից նմուշառում չի իրականացվել և լաբորատոր փորձաքննություններ չեն նշանակվել, մինչդեռ նախկինում ընկերության կողմից պատվիրված փորձաքննությունների ընթացքում հայտնաբերվել են մանրէաբանական ցուցանիշների խախտումներ մի շարք արտադրատեսակներում:

**Մսամթերքում հայտնաբերվել են Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ**

**6.8.** Մսամթերքի ներմուծմամբ և պահածոների արտադրությամբ զբաղվող տնտեսվարողի մոտ 2017թ. օգոստոսի 25-ին Ծառայության պետի թիվ 638-Ա հրամանով իրականացվել է դիտարկում: Դիտարկման ընթացքում պահածոների մեջ օգտագործվող տավարի գլխամսից արվել է նմուշառում և ուղարկվել լաբորատոր փորձաքննության՝ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ: Լաբորատորիայի 31.08.2017թ. թիվ 3091 փորձարկման արձանագրությամբ հաստատվել է, որ նմուշում առկա են **Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ** (ԱՑԽՄ, ՄՄ ՏԿ 034/2013):

**Ախտահարված 25տ. մսամթերքը չի ոչնչացվել**

ՍԱՊԾ-ի կողմից 01.09.2017թ արձակվել է թիվ 638 կարգադրագիրը՝ փորձարկված նմուշի ամբողջ խմբաքանակը (25տ. տավարի սառեցված գլխամիս) 10 օրում

ոչնչացման կամ օգտահանման ենթարկելու մասին: Նույն օրը ՍՊԸ տնօրենը նամակով դիմել է ՍԱՊԾ պետին՝ թույլ տալ վերը նշված մսի խմբաքանակը օգտագործել պահածոների արտադրության մեջ՝ քանի որ այն անցնելու է 100°c ջերմային մշակում, նամակի հետ կցվել է նաև մսաբուսական պահածոների արտադրության տեխնոլոգիական հրահանգը և բաղադրագիրը:

➢ ԱՑԽՄ-ով ախտահարված 25տ. մսամթերքը չի ոչնչացվել և չի օգտահանվել:

**Խախտվել է ՀՀ Կառավարության 10.09.2015թ. թիվ 1060-Ն որոշումով սահմանված Կարգի 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ կետերի պահանջները:**

➢ Ըստ էության, Ծառայության կողմից թույլատրվել է ՄՄՏԿ 021/2011, ՄՄՏԿ 034/2013 կանոնակարգերի պահանջների անհամապատասխանությունների պատճառով վտանգավոր ճանաչված հումքը օգտագործել մսաբուսական պահածոների արտադրության մեջ: Ընկերության տնօրենի կողմից մշակված և հաստատված ՏՀԲ 39346281. 02-2017 մսաբուսական պահածոների արտադրության տեխնոլոգիական հրահանգի և բաղադրագրի 3.3 կետով սահմանված է, որ պահածոների պատրաստման համար օգտագործվող հումքում թունավոր տարրերի, պեստիցիդների և ռադիոնուկլիդների պարունակությունները, ինչպես նաև մանրէաբանական ցուցանիշները չպետք է գերազանցեն թույլատրելի մակարդակները, որոնք սահմանված են ՄՄՏԿ 021/2011, ՄՄՏԿ 034/2013, ՄՄՏԿ 015/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով: Տեսուչի եզրակացությամբ առաջարկվող դրույթները չեն ապահովում նշված հրահանգի պահանջների կատարումը:

2

**Ընդհանուր առմամբ, վերոնշյալ դեպքերի փաթեթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ստուգումների և դիտարկումների ընթացքում կայացվել են ապրանքների վաճառքը և արտադրության գործունեությունը կասեցնելու որոշումներ, սակայն որոշումների կատարման ապահովման գործընթացի վերաբերյալ փաստաթղթավորում չի իրականացվել:**

## Սահմանային պետական վերահսկողություն

Սահմանային պետական վերահսկողությունը իրականացվում է Ագարակի, Բագրատաշենի, Բավրայի, Գոգավանի, Երևանի և Զվարթնոցի սահմանային հսկիչ կետերում:

2016թ.-ին երրորդ երկրներից ներմուծված 10360 բեռներից 4564 /44 տոկոս/ բեռների ձևակերպում իրականացվել է լաբորատոր փորձաքննության

արդյունքում: 2016թ.-ին Երևանում գործող երկու սահմանային հսկիչ կետերում ձևակերպվել է անասնաբուժական հսկողության բեռների 80.4 տոկոսը, բուսասանիտարական հսկողության բեռների 55.8 տոկոսը, սննդամթերքի անվտանգության հսկողության բեռների 85.1 տոկոսը:

2017թ. 10 ամիսների ընթացքում երրորդ երկրներից ներմուծված 9072 բեռներից 3752 /41.4 տոկոս/ բեռների ձևակերպում իրականացվել է լաբորատոր փորձաքննության արդյունքում: 2017թ.-ի 10 ամիսներին Երևանում գործող երկու սահմանային հսկիչ կետերում ձևակերպվել է անասնաբուժական հսկողության բեռների 88 տոկոսը, բուսասանիտարական հսկողության բեռների 55.8 տոկոսը, սննդամթերքի անվտանգության հսկողության բեռների 98.8 տոկոսը:

Սահմանային պետական վերահսկողությունը կարգավորվում է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքներով, 21.10.2010թ. թիվ 1442-Ն, 21.02.2013թ. թիվ 218-Ն կառավարության որոշումներով և ԵԱՏՄ ընթացակարգերով, որոնցով սահմանված են ընթացակարգերը և բեռի ռիսկայնության որոշման կարգը և չափորոշիչները:

*Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ներմուծման հավաստագիր տրամադրվում է առանց հաշվի առնելու նշված իրավական ակտերի դրույթները: Առկա են դեպքեր, երբ.*

1. Նույն արտադրողի կողմից արտադրված նույն ապրանքի միևնույն ծավալի բեռների ռիսկը՝ տարբեր ոչ ռիսկային ներմուծողների պարագայում, գնահատվել է տարբեր.

**Միևնույն պայմաններում ներմուծված բեռի ռիսկայնությունը 3 տնտեսվարողների համար գնահատվել է տարբեր միավորներով**

➢ 2017թ. փետրվար ամսին 3 տնտեսվարողներ (Մ.Պ.Հ.Հ. 29, 260 և 5787) բրազիլական «Սեարա Ալիմենտոս» ընկերությունից ՀՀ են ներմուծել թռչնամիս: Միևնույն պայմաններում ներմուծված բեռի ռիսկայնությունը 3 տնտեսվարողների համար գնահատվել է տարբեր միավորներով (1-ին դեպքում՝ 65 միավոր, իսկ 2-րդ և 3-րդ դեպքերում՝ 80 միավոր, բոլորն էլ միջին ռիսկայնության): Միավորների տարբերությունն առաջացել է Կառավարության 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման 3-րդ մասի 4-րդ կետի պահանջների տարամեկնաբանության արդյունքում: Առաջին դեպքում բրազիլական արտադրողը ունեցել է ՀԱՍՊ սերտիֆիկատ, իսկ 2-րդ և 3-րդ դեպքերում սերտիֆիկացված չի եղել, ինչի արդյունքում ներմուծվող

բեռի ռիսկայնությունը բարձրացել է, և վերջիներիս կողմից ներմուծված սննդամթերքը լինելով միջին ռիսկային՝ ուղղարկվել է լաբորատոր փորձաքննության:

➢2017թ. փետրվար ամսին Տնտեսվարող ընկերությունը բրազիլական «ՋԻ ԲԻ ԷՍ ԱՎԵ» ՍՊԸ-ից ներմուծել է 25 տ. խոզի միս, որն ըստ ռիսկայնության գնահատման համակարգի, ստացել է 65 միավոր, վերջինիս առանց լաբորատոր փորձաքննության տրամադրվել է անվտանգության սերտիֆիկատ N00006643, քանի որ ՓԲԸ-ի կողմից ներմուծված բեռի փաստաթղթերում առկա է արտադրողի BRC սերտիֆիկատ՝ տրված սակայն ոչ թե խոզի, այլ հավի մսի արտադրության համար:

**Խախտվել է Կառավարության 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման 3-րդ մասի 4-րդ կետի պահանջները**:

2. 2017թ. ընթացքում նույն տնտեսվարողի կողմից (Մ.Պ.Հ.Հ. 111 և 174) բրազիլական «ՋԻ ԲԻ ԷՍ ԱՎԵ» ՍՊԸ արտադրողից ներկրվել է 9 խմբաքանակ հավի միս (ընդամենը 228973 կգ): 9 ներկրումից 2-ի պարագայում ռիսկայնությունը գնահատվել է 65 միավոր, իսկ մնացած 7-ի դեպքում՝ 80 միավոր: Տարբերությունը պայմանավորված է եղել ՀԱՍՊ սերտիֆիկատի առկայությամբ կամ բացակայությամբ:

*Արդյունքում հասկանալի չէ, թե բրազիլական արտադրողի մոտ արտադրության անվտանգության համակարգ ներդրված է, թե ոչ: Ցուցադրվել է ոչ համակարգված մոտեցում, քանի որ արտադրողի մոտ արտադրության անվտանգության համակարգի ներդրման վերաբերյալ հավաստագիրը տրվում է ոչ թե արտադրված արտադրանքի խմբաքանակին, այլ արտադրությանն ընդհանրապես:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

3. Ներմուծման հավաստագրերը տրվել են լաբորատոր փորձաքննության արդյունքում անվտանգության չափանիշներին չհամապատասխանող բեռների համար.

**Օգտագործման համար վտանգավոր մսամթերքը չի ոչնչացվել և տրամադրվել է անվտանգության սերտիֆիկատ**

➢ Ներմուծող ընկերության կողմից 02.04.2017թ. ուկրաինական «Պտիցեկոմպլեքս Գուբին» ընկերությունից ներմուծված սառեցված հավը (15տ.) ՍԱՊԾ կողմից նմուշառվել է Բ1-483 ծածկագրով և ուղարկվել փորձաքննության «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ: 04.04.2017թ. N491 արձանագրությամբ լաբորատորիան հավաստել է, որ Բ1-483 կոդով նմուշում հայտնաբերվել են սալմոնելաներ՝ այսինքն «**Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն** սննդամթերքը վտանգավոր է օգտագործման համար և ՍԱՊԾ որոշումով խմբաքանակը պետք է ոչնչացվեր կամ արտահանվեր ՀՀ-ից: Սակայն նույն օրը՝ 04.04.2017թ., սառեցված հավի այդ խմբաքանակի համար ՍԱՊԾ-ն տրամադրել է անվտանգության սերտիֆիկատ (N00007217), փաստացի հաշվի չառնելով մթերքի մասին լաբորատորիայի կողմից տրված եզրակացությունը:

**Խախտվել են «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, օրենքի 5-րդ գլխի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը, 24-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները, 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, Կառավարության 21.10.2010թ. թիվ 1442 Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ, 19-րդ և 20-րդ կետերի պահանջները:**

**Ընդեղենը ուղարկվել է լաբորատոր փորձաքննության՝ չնայած այն հանգամանքին, որ ներմուծված ամբողջ խմբաքանակի համար արդեն տրամադրվել էր անվտանգության սերտիֆիկատ**

➢ 26.10.2016թ. Ընկերությունը ԱՄԷ-ից ներմուծել է 8 տեսակ ընդեղեն: 03.11.2016թ. 2 անուն ապրանքատեսակից (կարմիր բիբար և պիստակ) ծառայության տեսուչի կողմից նմուշառվել և ուղարկվել է լաբորատոր փորձաքննության՝ չնայած այն հանգամանքին, որ 31.10.2016թ. Ծառայության կողմից ներմուծված ամբողջ խմբաքանակի համար արդեն տրամադրվել էր անվտանգության սերտիֆիկատ (N025924): 10.11.2016թ. լաբորատորիայի կողմից տրված փորձաքննության արձանագրության համաձայն՝ պիստակը չի համապատասխանել

անվտանգության ստանդարտներին (դրանում առկա է եղել բորբոսասունկ): Հիմք ընդունելով լաբորատոր փորձաքննության արձանագրությունը՝ 24.11.2016թ. Ծառայության կողմից որոշում է կայացվել ոչնչացնել պիստակի խմբաքանակը, այն պարագայում, երբ առնվազն 24 օր այն եղել է վաճառքում: Տեսուչի կողմից կազմվել է արձանագրություն, ըստ որի՝ նույն օրն ինքն անձամբ ոչնչացրել է 100 կգ. պիստակ՝ ներմուծող ընկերության տնօրենի ներկայությամբ: Բացակայում են նշված խմբաքանակի գտնվելու վայրը, առկայությունը հավաստող հիմնավոր փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն:

**Խախտվել են ՀՀ Կառավարության 21.10.2010թ. N1442Ն որոշումով սահմանված Կարգի 17-րդ, 18-րդ կետերի և 20-րդ կետի պահանջները, ՀՀ Կառավարության 10.09.2015թ. թիվ 1060-Ն որոշման պահանջները:**

4. Ներմուծման հավաստագրերը տրվել են ավելի շուտ, քան ստացվել է տվյալ բեռի լաբորատոր փորձաքննության արձանագրությունը:

**Ներմուծման հավաստագրերը տրվել են ավելի շուտ, քան ստացվել է տվյալ բեռի լաբորատոր փորձաքննության**

Սննդամթերք ներմուծող ընկերությունը 09.02.2017թ. Բրազիլիայից ներկրել է թռչնամիս: Ռիսկայնության գնահատման արդյունքում Ծառայության սահմանային տեսուչների կողմից նմուշառում է իրականացվել և ուղարկվել է լաբորատոր փորձաքննության, սակայն, արդեն 13.02.2017թ., առանց լաբորատոր փորձաքննության արդյունքների Ծառայության կողմից տրամադրվել է բեռի անվտանգության սերտիֆիկատ (N00006717): Իսկ լաբորատոր փորձաքննության արդյունքները ստացվել են միայն 11 օր անց՝ 24.02.2017թ.: Սննդամթերք ներմուծող ընկերության կողմից ներմուծված 22 տ. մարինացված վարունգի անվտանգության սերտիֆիկատը (N026248) տրվել է 24.11.2016թ., սակայն լաբորատոր փորձաքննության եզրակացությունը ստացվել է 01.12.16թ.: Ընկերության կողմից ներմուծված 100 կգ պիստակի անվտանգության սերտիֆիկատը (N025924) տրվել է 31.10.2016թ., սակայն լաբորատոր փորձաքննության եզրակացությունը ստացվել է 10.11.17թ.: Ընկերության կողմից ներմուծված 103.8տ. մսամթերքի սանվտանգության սերտիֆիկատը (N00006457) տրվել է 11.01.2017թ., սակայն լաբորատոր փորձաքննության եզրակացությունը ստացվել է 16.01.17թ.:

**Խախտվել են ՀՀ Կառավարության 21.10.2010թ. N1442-Ն որոշումով սահմանված Կարգի 17-րդ և 18-րդ կետերի պահանջները:**

5. Ծառայության կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվում սննդամթերքի ներմուծման փաստաթղթերի իրավաչափության և վավերականության նկատմամբ.

**Ժամկետնանց BRC սերտիֆիկատի հիման վրա տրամադրվել է անվտանգության սերտիֆիկատ**

Ընկերությունը ամերիկյան «Պիլիգրիմ Պրայդ» ընկերությունից ներմուծել է 102տ. հավի սառեցված միս: Ներմուծման փաստաթղթերում ներկայացվել է BRC սերտիֆիկատ, որի գործողության ժամկետը ավարտված է եղել: Սակայն այն ընդունվել է Ծառայության սահմանային տեսուչի կողմից, ինչի արդյունքում բեռի ռիսկայնությունը 15 միավորով նվազել է և մսամթերքին առանց զննման ու լաբորատոր փորձաքննության 20.06.17թ. տրամադրվել է անվտանգության սերտիֆիկատ (N00008089) և թույլատրվել ներմուծումը ՀՀ:

**Խախտվել են ՀՀ Կառավարության 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման 3-րդ մասի 4-րդ կետի պահանջները:**

*6.* Չեն իրականացվում վերլուծություններ և գործողություններ առավել ռիսկային երկրներից և արտադրողներից ՀՀ ներմուծվող սննդամթերքի մուտքը կանխարգելելու և անվտանգությունն ապահովելու համար: ՀՀ Կառավարության 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման համաձայն՝ ռիսկը գնահատվում է բարձր, եթե միևնույն երկրից բերված նույն կամ նմանատիպ սննդամթերքի համար դրա վտանգավորության վերաբերյալ եղել են ստացված ծանուցումներ կամ ներմուծման արգելում կամ, եթե միևնույն կազմակերպության կողմից արտադրված միևնույն տեսակի սննդամթերքը նախկինում ունեցել է սննդամթերքի անվտանգության պահանջների հետ կապված անհամապատասխանություն ներմուծման պահին:

Ներմուծվող ապրանքների ուղեկցող փաստաթղթերի ընտրանքային ուսումնասիրությամբ պարզվել է, որ 19.11.16թ. հայկական ընկերությունը ուկրաինական «Վինիդսկի պտիցիֆաբրիկա» ընկերությունից ներմուծել է 19800կգ. հավի միս, 08.11.16 անհատ ձեռնարկատիրոջ կողմից ՌԴ-ից ներմուծվել է 1000 կգ կարագ, 02.07.17թ. մսամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերության կողմից բելգիական «Կիկո դոմակո» ֆիրմայից ներմուծվել է հավի աղացած միս և բոլոր դեպքերում էլ ներմուծվող խմբաքանակներում հայտնաբերվել են աղիքային ցուպիկներ խմբի մանրէներ (ԱՑԽՄ):

**Ներմուծվող բեռների ռիսկայնության գնահատումը իրականացվում է թերություններով**

Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական ակտերով կարգավորվում է ներմուծվող բեռների ռիսկայնությունը՝ ըստ արտադրող երկրների և արտադրող ընկերությունների, հետագայում նշված երկրներից և արտադրողներից ներմուծվող բեռների սահմանային ստուգումների ժամանակ հաշվի չեն առնվել վտանգավոր բեռների ներմուծման նախադեպերը և ռիսկայնության գնահատումը թերություններով է իրականացվել:

**Խախտվել են ՀՀ Կառավարության 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման 4-րդ մասի 8-րդ կետի և 5-րդ մասի 10-րդ կետի պահանջները:**

**Սահմանային տեսուչների աշխատանքը ևս մեկ անգամ կատարվում է Երևանում այլ տեսուչների կողմից**

*7.* Սահմանին ծառայության տեսուչները փաստացի առաջինն են առնչվում ներմուծվող բեռի և բեռի հետ կապված փաստաթղթերի հետ: Ըստ պաշտոնի անձնագրի նրանց վրա է դրված բեռի զննման և փաստաթղթավորման պարտականությունները: Տեսուչը սահմանին, ըստ ներկայացվող փաստաթղթերի, հաշվում է ներմուծվող բեռի ռիսկայնությունը (Կառավ. Որոշ. 21.02.2013թ. N218-Ն և 21.10.2010թ. N1442-Ն.) և որոշում է կայացնում՝ արդյոք բեռը ենթակա է զննման, լաբորատոր ստուգման կամ սերտիֆիկացման: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ անկախ ՀՀ սահմաններում գտնվող տեսուչների կողմից կատարվող հաշվարկի, բոլոր դեպքերում կարգադրագիր է կազմվում ներմուծումը կասեցնելու մասին, մինչև լաբորատոր փորձաքննության արդյունքներով բեռի անվտանգ ճանաչվելը: Չնայած դրան, փաստաթղթերը կրկնակի ստուգում են անցնում և վերջնական որոշումը կայացվում է Երևանում: Ստացվում է, որ սահմանային տեսուչների աշխատանքը ևս մեկ անգամ կատարվում է Երևանում այլ տեսուչների կողմից: Կան նաև դեպքեր, որ սահմանային տեսուչը տնտեսվարողի ներմուծումը կասեցնում է սեփական նախաձեռնությամբ, անգամ ներմուծվող բեռի ոչ ռիսկային համարվելու պարագայում:

**Խախտվել են ՀՀ Կառավարության 21.10.2010 N 1442-Ն որոշումով սահմանված կարգի 16-րդ և 17-րդ կետերի պահանջները և 21.02.2013թ. թիվ 218-Ն որոշման պահանջները:**

8. Ներմուծման ընթացքում նմուշառած և լաբորատոր փորձաքննությունների արդյունքում անվտանգության չափանիշներին չհամապատասխանող սննդամթերքը չի ոչնչացվել կամ հետ ուղարկվել: Դրանց տրվել են անվտանգությունը հավաստող սերտիֆիկատներ, ներմուծման փաստաթղթերի փաթեթներում փորձաքննությունների արձանագրությունները չեն կցվել կամ փոխարինվել են լաբորատոր փորձաքննությունների դրական արձանագրություններով: Իսկ որոշ դեպքերում անվտանգության սերտիֆիկատի տրամադրման հիմք է հանդիսացել տնտեսվարողի կողմից ներկայացված լաբորատոր փորձաքննության արձանագրությունը, ինչը հակասում է նմուշառման և լաբորատոր փորձաքննության կարգին:

**Անվտանգության չափանիշներին չհամապատասխանող սննդամթերքը չի ոչնչացվել կամ հետ ուղարկվել**

- Հայկական ներմուծող ընկերության կողմից 20.01.17թ. բրազիլական «Ագրիկոլա Ջանգելս» ընկերությունից ներմուծված սառեցված հավի թևերը ՍԱՊԾ-ի կողմից նմուշառվել և Բ1-70, Բ2-70 ծածկագրերով ուղարկվել են փորձաքննության «Ստանդարտ Դիալոգ» լաբորատորիա: 24.01.2017թ. N83 արձանագրությամբ լաբորատորիան հավաստել է, որ Բ1-70 կոդով նմուշում հայտնաբերվել են սալմոնելներ, այսինքն՝ «**Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն** սննդամթերքը պիտանի չէ օգտագործման համար և ՍԱՊԾ որոշումով խմբաքանակը պետք է ոչնչացվեր կամ արտահանվեր ՀՀ-ից: Լաբորատորիայի արձանագրությունից 14 օր անց Ընկերության կողմից «էֆ Դի էյ Լաբ» լաբորատորիա է ներկայացվում պոլիէթիլենային տոպրակի մեջ դրված հավի թևեր և պատվիրվում սալմոնելների հայտնաբերման փորձաքննություն: 13.02.17թ. «էֆ Դի էյ Լաբ»-ի թիվ 17/02/045 արձանագրությունով վերոնշյալ հավի թևում սալմոնելա չի հայտնաբերվել: Արձանագրությունը ներկայացվում է ՍԱՊԾ, որի հիման վրա Ընկերությանը 14.02.2017թ. տրվում է անվտանգության սերտիֆիկատ (N00006739)՝ 20.01.2017թ. ներմուծված 26տ. հավի թևերի համար: Համաձայն կառավարության 16 հոկտեմբեր 2014 թ. 1142-Ն որոշման 28-րդ կետի պահանջների՝ պետական վերահսկողության նպատակով կատարված փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտը կարող է դրանք բողոքարկել՝ օրենքով սահմանված կարգով:

**Խախտվել են՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, 6-րդ գլխի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, Կառավարության**

**21.10.2010թ. թիվ 1442-Ն որոշմամբ սահմանված կարգի 13-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ և 28-րդ կետերի պահանջները:**

➢Հայկական ներմուծող ընկերության կողմից 13.11.16թ. ուկրաինական «Վինիցկայա պտիցիֆաբրիկա» ընկերությունից ներմուծված աղացած հավի միսը ՍԱՊԾ-ի կողմից նմուշառվել և Բ1-1786 ծածկագրով 14.11.2016թ. ուղարկվել է փորձաքննության «Ստանդարտ Դիալոգ» լաբորատորիա: 15.11.2016թ. N1651 արձանագրությամբ լաբորատորիան հավաստել է, որ Բ1-1786 կոդով նմուշում հայտնաբերվել են սալմոնելներ, այսինքն՝ «**Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն,** սննդամթերքը պիտանի չէ օգտագործման համար և ՍԱՊԾ որոշումով խմբաքանակը պետք է ոչնչացվի կամ արտահանվի ՀՀ-ից:

Սակայն, 18.11.2016թ. ՍԱՊԾ տեսուչը 1 նմուշ է ներկայացրել «ՀԱԲԼԾԿ» լաբորատորիա՝ Բ1-1786/1 ծածկագրով: 23.11.2016թ. լաբորատորիան N3665 արձանագրությամբ հավաստում է նմուշի համապատասխանությունը անվտանգության ստանդարտներին և 29.11.2016թ. ՍԱՊԾ կողմից ներմուծողին տրվում է անվտանգության սերտիֆիկատ (N00006007): Քանի որ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը չի համարվում ռեֆերենս լաբորատորիա, ապա պահեստային նմուշի փորձաքննության արդյունքները չեն կարող համարվել վերջնական: Համաձայն կառավարության 16 հոկտեմբեր 2014թ. թիվ 1142-Ն որոշման 28-րդ կետի պահանջների՝ պետական վերահսկողության նպատակով կատարված փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտը կարող է դրանք բողոքարկել՝ օրենքով սահմանված կարգով:

**Խախտվել են՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, 6-րդ գլխի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, Կառավարության 21.10.2010թ. թիվ 1442-Ն որոշմամբ սահմանված կարգի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները:**

**Խախտվել են՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մի շարք կետեր**

➢ Հայկական ներմուծող ընկերության կողմից 24.01.2017թ. ուկրաինական «Ագրո Օվեն» ընկերությունից ներմուծված սառեցված հավ (21.8տ) և սառեցված հավի թև (1.5տ.) ՍԱՊԾ-ի կողմից նմուշառվել և Բ1-92 և Բ2-92 ծածկագրերով 25.01.2017թ. ուղարկվել են փորձաքննության «Ստանդարտ Դիալոգ» լաբորատորիա: 27.01.2017թ. N102 արձանագրությամբ լաբորատորիան հավաստել է, որ Բ1-92

կոդով նմուշում հայտնաբերվել են սալմոնելներ, այսինքն՝ «**Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն** սննդամթերքը վտանգավոր է օգտագործման համար և ՍԱՊԾ որոշումով խմբաքանակը պետք է ոչնչացվեր կամ արտահանվեր ՀՀ-ից:

Սակայն 30.01.2017թ Ընկերությունը անհայտ հավի մսի նմուշ է ներկայացրել «ՀԱԲԼԾԿ» լաբորատորիա ու պատվիրել փորձաքննություն: 02.02.2017թ. լաբորատորիան արձանագրությամբ հավաստել է նմուշի համապատասխանությունը անվտանգության ստանդարտներին, իսկ 03.02.2017թ. ՍԱՊԾ-ն արձանագրությունը կցել է ներմուծման փաստաթղթերին և ներմուծողին տրվել է անվտանգության սերտիֆիկատ (N00006637):

**Խախտվել են՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, 6-րդ գլխի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, Կառավարության 21.10.2010թ. թիվ 1442 Ն որոշմամբ սահմանված կարգի 13-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ և 28-րդ կետերի պահանջները:**

- Ընկերության կողմից 08.05.2017թ. իրանական ընկերությունից ներմուծված 2 խմբաքանակ յոդացված աղը ՍԱՊԾ կողմից նմուշառվել և Բ1-739 և Բ2-739 ծածկագրերով ուղարկվել է փորձաքննության «Ստանդարտ դիալոգ» լաբորատորիա: 16.05.2017թ. N650 փորձաքննության արձանագրությամբ լաբորատորիան հավաստել է, որ Բ1-739 նմուշը (11975կգ) «**Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն** պիտանի չէ սննդում օգտագործման համար և ՍԱՊԾ որոշումով խմբաքանակը պետք է ոչնչացվեր կամ արտահանվեր ՀՀ-ից: Սակայն, արդեն մեկ ամիս անց, 15.06.2017թ. ԵՍՀԿ գլխավոր տեսուչի կողմից կատարվել է բեռի կրկնակի զննում և նմուշառում, որն էլ ներկայացվել է ՀԱԲԼԾԿ: 16.06.2017թ. ՀԱԲԼԾԿ արձանագրությամբ բեռը համարվել է համապատասխան անվտանգության ստանդարտներին և տրամադրվել է անվտանգության սերտիֆիկատ (N028876):

**Խախտվել են՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերը, 6-րդ գլխի 27-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, Կառավարության 21.10.2010թ. թիվ 1442 Ն որոշմամբ սահմանված կարգի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները:**

## 3 Բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն

**Հայտնաբերվել են կարանտին վնասակար օրգանիզմներ, սակայն կարանտին միջոցառումներ չի իրականացվել**

2016 և 2017 թվականներին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրականացվել է բուսասանիտարական մոնիթորինգ, որի ընթացքում կատարվել է նմուշառում և իրականացվել է շուրջ 6000 փորձաքննություն (յուրաքանչյուր տարի): Արդյունքում 2016թ. հայտնաբերվել է թվով 8 կարանտին վնասակար օրգանիզմներ (կարտոֆիլի ոսկեփայլ նեմատոդ, կոլորադյան բզեզ, կալիֆորնիական վահանակիր, պտղատուների բակտերիալ այրվածք, արևելյան պտղակեր, ֆիլոքսերա, օղակաձև փտում, գաղձ), իսկ 2017 թվականին՝ թվով 7 կարանտին վնասակար օրգանիզմներ (կարտոֆիլի ոսկեփայլ նեմատոդ, կալիֆորնիական վահանակիր, պտղատուների բակտերիալ այրվածք, արևելյան պտղակեր, ֆիլոքսերա, գաղձ, արևմտյան ծաղկային թրիպս):

**Հայտնաբերված կարանտին օրգանիզմներով վարակված տարածքներում կարանտին միջոցառումներ չի իրականացվել:**

**Խախտվել է «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածների պահանջները:**

## 4 Անասնաբուժության ոլորտում պետական վերահսկողություն

**Բացակայում են կենդանիների հաշվառման, համարակալման համակարգերը**

Անասնահամաճարակային հետազոտությունների արդյունքում հիվանդությունների վերաբերյալ ստացված փաստաթղթավորումը և հիվանդությունների հայտնաբերումը չի արտացոլում առկա իրավիճակը, քանի որ բացակայում են կենդանիների հաշվառման, համարակալման համակարգերը և կենդանիների տեղաշարժման ներդրված գործող մեխանիզմները: Տվյալ համակարգերի բացակայությունը հնարավորություն չի տալիս իսպառ վերացնել հիվանդությունները կամ գոնե բարձրացնել պետ. բյուջեի հաշվին իրականցվող բուժ-կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը: Սանիտարական

սպանդը իրականացվում է ոչ սպանդանոցային պայմաններում, լայնորեն կիրառվում է բակային մորթ, որը հիվանդությունների տարածման ևս մեկ ռիսկ է:

ՀՀ-ն, հանձինս լիազոր մարմնի, հանդիսանում է Կենդանիների Առողջության Համաշխարհային Կազմակերպության (OIE) լիիրավ անդամ և պետք է կենդանիների հիվանդությունների արագ արձագանքման համակարգին (WAHIS) տվյալներ տրամադրի և ստանա: Սակայն, դիտարկվող ժամանակահատվածում որոշ երկրների նկատմամբ, որոնց հետ առկա են էական առևտրային հարաբերություններ, որևէ ապրանքի կասեցում /նույնիսկ ժամանակավոր/ չի իրականացվել: Մանրամասն տեղեկատվությունը առկա է **www.oie.int** կայքում:

Պետական պատվերի շրջանակներում իրականացվող պատվաստումների նկատմամբ վերահսկողությունը զուտ փաստաթղթային է: Պատվաստանյութի ազդեցության ստուգման շճաբանական հետազոտություններ չեն իրականացվում: Արդյունքում, անասնաբուժական պետական վերահսկողությունը իրականացվում է թերի և առանց որևէ գիտական կամ ռիսկայնության հաշվարկի հիմքերի:

## 5 Ֆինանսատնտեսական գործունեություն

Ֆինանսատնտեսական գործունեություն ուսումնասիրությամբ արձանագրվել են հետևյալ **խախտումներն ու թերությունները**.

**Չեն պահպանվել հաշվապահական հաշվառման վարման օրինակելի ձևերը**

*1. Չեն պահպանվել հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. 37-Ն հրամանի պահանջները, մասնավորապես.*

1.1. Տրանսպորտային նյութերի, բենզինի, ավտոմեքենաների վերանորոգման և ավտոլվացման հետ կապված ծախսերի համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (մուտքի օրդեր, զեկուցագիր, պահանջագիր) հիմնականում բացակայում են կամ թերի են:

1.2. Ավտոմեքենաների շահագործման երթուղային թերթիկները մի շարք դեպքերում լրացված են թերություններով, ինչպես նաև առկա է անհամապատասխանություն վազքի ցուցիչների միջև: ՍԱՊԾ կողմից շահագործվող ավտոմեքենաների ցանկը չի համապատասխանում Ծառայության և ՀԱԲԼԾԿ միջև կնքված գույքի վարձակալության պայմանագրին կից

ավտոմեքենաների ցանկին: Տրանսպորտային նյութերի ձեռքբերումից հետո վերջիններիս բաշխման անալիտիկ հաշվառում չի իրականացվել, որի արդյունքում հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ծրագրով հնարավոր չէ տեսնել պահեստի շարժը, ինչպես նաև ովքեր, թե որքան և երբ են ստացել վերոնշյալ նյութերը:

**Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի N 313-Ն որոշման պահանջները:**

1.3. Մինչև 16.06.2016-ը ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ը խախտելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ին ավտոմեքենաներ է տրամադրել անհատույց օգտագործման պայմանագրերի հիման վրա:

## 6 Աշխատակազմ և վարձատրություն

2017թ. օգոստոսի 31-ից ՍԱՊԾ հաստիքների ընդհանուր թիվը ազգային Մեկ պատուհան ծրագրի ներդրման շրջանակներում ավելացել է 58-ով՝ 282-ից հասնելով 340-ի: Ավելացված հաստիքների համար 4 ամսվա ֆինանսավորման չափը կազմել է 42,576,000 դրամ: Ավելացված հաստիքներից 39-ը նախատեսված է եղել սահմանային հսկիչ կետերի ստորաբաժանումները համալրելու համար՝ չնայած այն հանգամանքին, որ 2017թ.-ին բեռների շուրջ 80 տոկոսը ձևակերպվել են Երևանում:

**Ավելացվել են 58 հաստիքներ**

**Հայտնաբերվել են հետևյալ խախտումները.**

1. Ծառայության կողմից 27 անձանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Տվյալ անձինք ներգրավվել են որպես փորձագետներ, սակայն, նրանց քաղաքացիական ծառայության թափուր աշխատատեղերի համար նախատեսված վարձատրության հաշվին վճարվել է 20 մլն. դրամ աշխատավարձ: Գումարը ծախսվել է առանց բյուջետային համապատասխան հոդվածի փոփոխության: Փորձագետների աշխատավարձի սահմանումը կրել է անհատական, ոչ կանոնակարգված բնույթ:

**Պայմանագրային աշխատողներին վճարվել է 20 մլն դրամ աշխատավարձ քաղ.ծառայության աշխատավարձի ֆոնդից**

2. Ծառայության աշխատողների նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի (արտաբյուջե) օգտագործման ուսումնասիրությամբ պարզվեց.

**Խախտելով Կառավարության որոշման պահանջները՝ թվով 24 փորձագետների տրվել է 9,8 մլն դրամ պարգևավճար**

- 01.01.2016 - 01.08.2017թթ. ժամանակահատվածում Ծառայությունում աշխատող փորձագետներից 24-ին տրվել է 9863.0 հազ. դրամի չափով պարգևավճար: Փորձագետը ծառայության աշխատակից չէ, հետևաբար չէր կարող խրախուսվել (պարգևատրվել) ծառայության աշխատողների նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին:

**Խախտվել են ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 938-Ն որոշման հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները:**

- **Խախտելով Կառավարության 26.07.2012թ. թիվ 938-Ն որոշմամբ հաստատված Կարգի 6-րդ և 8-րդ կետերի պահանջները՝** ծառայության պետը և աշխատակազմի ղեկավարը պարգևատրման հրամաններ են արձակել, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի առաջարկությունների բացակայության կամ դրանք պարգևատրման հրամանից հետո ներկայացնելու պարագայում: Հանձնաժողովի նիստի արձանագրությունները բացակայում են, իսկ եզրակացությունները եղել են առանց պարգևատրվողների ցուցակների:

## 7 Գնումների գործընթացի կազմակերպում

Ուսումնասիրվել է 2016-2017 թվականներին կազմակերպված գնումների գործընթացների համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և ընտրանքային կարգով ուսումնասիրվել են Պատվիրատուի բյուջետային և արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացված գնման ընթացակարգերին առնչվող փաստաթղթերի փաթեթները, որոնց արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումներն ու անհամապատասխանությունները.

### 2016 թվական

1. Կազմակերպված գնման ընթացակարգերում բացակայել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և պարտադիր կիրառման ենթակա հետևյալ փաստաթղթերը.

- փաստաթուղթ՝ պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող սահմանելու վերաբերյալ,
- գնման հայտ, ինչը չկիրառելու արդյունքում բացակայում է որևէ փաստաթուղթ շուկայի ուսումնասիրություն իրականացրած լինելու կամ նախահաշվային գնի որոշման վերաբերյալ,

**Բացակայում են մի շարք փաստաթղթեր**

- գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի /անձանց/ կողմից հաստատված հայտարարություն այն մասին, որ իր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից,
- գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հաստատված հայտարարություն այն մասին, որ իր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից,
- գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի արձանագրություն,
- գնման ընթացակարգի արձանագրություն:

**Խախտվել են տվյալ պահին գործող ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N168-Ն որոշման /այսուհետև՝ Որոշում/ Կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով, 13-րդ, 22-րդ, 23-րդ, համապատասխան կետերով սահմանված պահանջները, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները:**

*Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն, երբ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, կազմակերպված գնման ընթացակարգերում՝ բանակցային ընթացակարգ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու, գնման գործընթացի թղթեր չեն կիրառվել և գործարքներն իրականացվել են միայն հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:*

**Խախտվել են Որոշման 74-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:**

Պատվիրատուի մոտ բացակայում են մինչև հաշիվ-ապրանքագրերը Որոշմամբ պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ մասնակցի գնային առաջարկը:

Վերը նշված և ուսումնասիրված առանձին գնման ընթացակարգերում առկա են նաև հետևյալ խնդիրները.

## 2. *Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/19 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-1 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

www.gnumner.am կայքում հրապարակված է հրավերը: Հրավերը լավ մշակված չէ, առկա են թերություններ (չափաբաժնի անվանումը լրացված չէ, նմանատիպ ծառայությունները սահմանված են):

Կիրառված է պայմանագրի ապահովման համար ներկայացված վճարման պահանջագրի հին ձև, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված օրինակելի ձևին, վճարման պահանջագրի վրա դրված է ամսաթիվ, որը համընկնում է պայմանագրի կնքման ամսաթվին, սակայն, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների», որը առկա է նաև հրավերում, այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: Ուստի, վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով, այն դարձել է անվավեր փաստաթուղթ: Ներկայացված պայմանագրի ապահովման հիման վրա Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:

**Առկա են թերություններ հրավերների մշակման հարցում**

Գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրությունը ստորագրված չէ:

**Խախտվել են Որոշման կարգի 29-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:** Հրավերի պայմանագրի նախագծի գնման առարկայի տեխնիկական բնութագրում որպես ծառայությունների մատուցման պահանջ նշված է, որ ավտոլվացման կետը պետք է գտնվի Պատվիրատուի հասցեից ոչ ավելի, քան 1 կմ շառավղով հեռավորության վրա: Ամբողջ հրավերում՝ ներառյալ պայմանագրի նախագծում, նշված չէ Պատվիրատուի հասցեն:

## 3. *Պատվերով տպագրվող նյութերի ձեռք բերման ՇՀԱՇՁԲ 15/4-2 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 16-1 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

Մասնակցի ներկայացրած գնային առաջարկում, 10-րդ չափաբաժնում, առկա է հաշվարկային սխալ, մասնավորապես՝ ինքնարժեք, ԱԱՀ հանրագումարը պետք է լինի 695 510՝ համաձայն ներկայացված գնային առաջարկի, սակայն մասնակիցը, որպես վերջնական առաջարկվող գին ներկայացրել է 168 000, ինչը չի համապատասխանում ներկայացված բաղադրիչների գումարին:

**Խախտվել է Որոշման 45-րդ կետի պահանջները, ուստի տվյալ մասնակցի հայտը ենթակա է մերժման տվյալ չափաբաժնի մասով, սակայն գնահատող հանձնաժողովը բացման նիստի արձանագրությամբ արձանագրել է այլ, մասնակցի առաջարկածից տարբերվող թիվ և մասնակցի հայտը գնահատել է բավարար՝ մասնակցին ճանաչելով առաջին տեղը զբաղեցնող բոլոր չափաբաժիններով՝ գնման գործընթացի հետագա բոլոր փաստաթղթերում ներկայացնելով ճշգրտված թիվը:**

4. ***Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/9 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16 ծածկագրով գնման ընթացակարգ՝***

**Պայմանագիրը կնքվել է ներկայացված գնային առաջարկից բարձր գնով**

Տվյալ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ Ա/Ձ Նարեկ Մայիլյան և Ա/Ձ Անուշ Պետրոսյան: Մասնակիցները ներկայացրել են հավասար գնային առաջարկներ՝ 598 000: Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կազմակերպվել են բանակցություններ, որոնց արդյունքում Նարեկ Մայիլյան Ա/Ձ-ն նվազեցրել է իր գնային առաջարկը 5.000 դրամով և 593.000 ՀՀ դրամ գնային առաջարկով ճանաչվել է մրցույթում առաջին տեղը զբաղեցնող: Սակայն անհասկանալիորեն գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքվել 980.000 ՀՀ դրամով:

5. ***Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռք բերման ՇՀ ԾՁԲ-15/3 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-16-1 ծածկագրով գնման ընթացակարգ՝***

Տվյալ գնման ընթացակարգում գնումների պլանով գնման առարկայի նախահաշվային գինը սահմանված է 4.000.000 ՀՀ դրամ: 26.09.2016թ. տեղի է ունեցել սույն ընթացակարգի հայտերի բացման նիստը: Հայտ է ներկայացրել «Ֆերդիկ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով 4.600.000 ՀՀ դրամ գնային առաջարկ, ինչը 600.000 դրամով գերազանցում է տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը: Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրության մեջ նշված կետի կիրառման վերաբերյալ որևէ ակնարկ չկա, նույն օրը նշված մասնակիցը հայտարարվել է առաջին տեղը զբաղեցնող: Արդյունքում, մասնակցի հետ, անհասկանալիորեն պայմանագիր է կնքվել 4.000.000 ՀՀ դրամով:

**Խախտվել են Որոշման 44-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:**

### 6. *Համացանցի /ինտերնետ կապի/ ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ 15/1 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 16-2 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

Մասնակցի կողմից, որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում դրված է ամսաթիվ: Խախտվել են ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնները» որոշման պահանջները, որը առկա է նաև հրավերում, այն լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: Ուստի, վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դարձել է անվավեր փաստաթուղթ:

**Առանց գնման առարկայի անվանման հայտը գնահատվել է բավարար**

### 7. *Համացանցի /ինտերնետ կապի/ ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ 15/1 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 16-3 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

Տվյալ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 2 մասնակիցներ: «Կոմպլաբ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում գնման առարկայի անվանումը նշված չէ, սակայն գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատել է բավարար և ճանաչել երկրորդ տեղը զբաղեցնող:

**Խախտվել են Որոշման 45-րդ կետի պահանջները:**

Անգործության ժամկետ սահմանված չէ ոչ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության և ոչ էլ գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարության /հաշվետվություն/ մեջ:

**Խախտվել են Օրենքի 9-րդ կետի պահանջները:**

**Համաձայնագրում որոշակի դաշտեր լրացված չեն եղել**

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրում «ամիս»-ը լրացված չէ, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում դրված է ամսաթիվ, վճարման պահանջագրում «գումարը բառերով» դաշտը լրացված չէ, «գումարը բառերով և կոդով» դաշտում լրացված է «ՀՀԴ»: Խախտված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն

վավերապայմանների և դրանց լրացման կանոնները», ուստի ներկայացված տվյալ պայմանագրի ապահովման հիման վրա:

**Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:**

## 8. *Հեռուստահաղորդումների հեռարձակման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/4 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

**Հայտերում որոշակի դաշտեր չեն լրացվել**

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել 1 մասնակից՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն: Մասնակցի ներկայացրած հայտում, գնային առաջարկում գումարը տառերով նշված չէ:

**Խախտվել են Որոշման 45-րդ կետի պահանջները**:

Ուստի տվյալ մասնակցի հայտը ենթակա է մերժման, սակայն գնահատող հանձնաժողովը բացման նիստի արձանագրությամբ մասնակցի հայտը գնահատել է բավարար և ճանաչել առաջին տեղը զբաղեցնող:

Չկան տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

**Խախտվել են Որոշման 65-րդ կետի պահանջները:**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից որպես պայմանագրի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում «12. Գումարը թվերով և բառերով» դաշտում լրացված է միայն թվերով, «13. Արժույթը բառերով և կոդով» դաշտում լրացված է «Ութ հարյուր հազար ՀՀ Դրամ» արժույթի կոդը՝ AMD նշված չէ, գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված: Խախտված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնները», ուստի ներկայացված տվյալ պայմանագրի ապահովման հիման վրա Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:

# 2017 թվական

Պատվիրատուի 2017 թվականի կարիքների համար կատարվող գնման գործընթացները սկսվել են 2016 թվականի դեկտեմբերից: Օրինակ ինտերնետ կապի ծառայությունների ձեռք բերման համար Տեղեկագրում հրապարակվել է

**Որոշակի ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար չկա հրապարակված գնումների պլան**

գնման ընթացակարգի հրավերը 15.12.2016 թվականին և բջջային հեռախոսակապի ծառայությունները 16.12.2016 թվականին, վառելիքի ձեռք բերմանը՝ 16.12.2016 թվականին և այլն: Այս ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար չկա հրապարակված գնումների պլան:

**Խախտված են Որոշման 15-րդ և 16-րդ կետերի պահանջները:**

1. ***Ծրագրային ապահովման ծառայությունների ձեռք բերման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ 17/1 ծածկագրով գնման ընթացակարգ՝***

Գնման առարկան ներառված է 10.04.2017թ. հրապարակված գնումների պլանում, որտեղ գնման ընթացակարգը նշված է շրջանակային համաձայնագրով, նախահաշվային գինը՝ 22,000,000 ՀՀ դրամ: Սակայն գնման գործընթացը կազմակերպվել է 12.06.2017 թվականին, գնանշման հարցման ընթացակարգով, իսկ գնման հայտով ներկայացված նախահաշվային գինը սահմանվել է 21,550,000 ՀՀ դրամ:

Գնման հայտը առկա է, սակայն հայտում բացակայում է Նոր որոշման 21-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը: Համաձայն գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության՝ գնահատող հանձնաժողովի առաջին նիստը տեղի է ունեցել 12.06.2017թ., սակայն գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանը հաստատված է 13.06.2017թ.: Առկա է ժամանակագրական անհամապատասխանություն:

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել 1 մասնակից՝ «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ն: Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ, ներկայացրած գնային առաջարկը 21 550 000 ՀՀ դրամ է՝ նույնը, ինչ նախահաշվով է սահմանված: Հայտերի բացման նիստում մասնակցի հայտը գնահատվել է բավարար, ճանաչվել առաջին տեղը զբաղեցնող և առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Որպես հրավերով սահմանված «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

- «Ֆրանսիական բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ 01.09.2015թ. կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն

կից ներկայացված հաշիվ ապրանքագրերի, կազմում է 313,000 ՀՀ դրամ: Բոլոր հաշիվ-ապրանքագրերում առկա է միայն «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային ստորագրությունը: Մյուս կողմի ստորագրությունը չկա: Բացակայում են տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- «Սարմէ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 29.01.2015թ. կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, կազմում է 332,000 ՀՀ դրամ: Բացակայում են տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

**Բացակայում են պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրությունները**

- «Միրա Տրանս» ՍՊԸ-ի հետ 2015 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, կազմում է 515 000 ՀՀ դրամ: Բացակայում են տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- «Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ-ի հետ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, կազմում է 2 550 000 ՀՀ դրամ: Բացակայում են տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- «Երևանի տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի հետ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, կազմում է 467,310 ՀՀ դրամ: Բացակայում են տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման

արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

• «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ 2016 թվականի ապրիլի 27-ին կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, կազմում է 3,172,584 ՀՀ դրամ: Ընդունման-հանձնման արձանագրություններով գումարը կազմում է 2,776,011 ՀՀ դրամ: Տարբերության մասով չկա ընդունման-հանձնման արձանագրություն կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

**Պայմանագրի կատարման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրություններով գումարը կազմում է 2,7 մլն դրամ, 3,2 մլն ի փոխարեն**

• «Վեբ Օպտիկա» ՍՊԸ-ի հետ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պայմանագիր: Տվյալ պայմանագրի շրջանակներում մատուցված նմանատիպ ծառայությունների գումարը, համաձայն կից ներկայացված հաշիվ-ապրանքագրի և ընդունման-հանձնման արձանագրությունների, կազմում է 4,440,000 ՀՀ դրամ: Սույն պայմանագրում ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանված 08.01.2016 - 30.12.2016թ.: Ընդունման-հանձնման արձանագրություններն էլ հաստատված են նշված 12 ամիսների համար: Սակայն միակ հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրված 23.06.2017 թվականին: 2017 թվականի հունիսի 15-ին կազմված է Կատարողական ակտ, որտեղ պայմանագրի կնքման ամսաթիվ նշված է 30 դեկտեմբերի 2015թ., ամիսների քանակը՝ 12, կատարման վերջնաժամկետ 15.06.2017թ.: Առկա է անհամապատասխանություն:

*Ներկայացված փաստաթղթերով մասնակցի «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորված չէ, քանի որ բացակայում են պայմանագրի /պայմանագրերի/ պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի /հանձման-ընդունման արձանագրություն և այլն/ պատճենը /պատճենները/ կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:*

**Խախտվել են Նոր որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:**

Մասնակցի կողմից որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում Վճարողի բանկը նշված է Յունիբանկ ՍՊԸ: Վճարողի բանկի իրավակազմակերպական ձևը սխալ է նշված,

**Թերի են լրացված որոշ տվյալներ**

պետք է լինի ՓԲԸ: 12-րդ տողում «Գումարը թվերով և բառերով» մասում գումարի չափը գրված է միայն բառերով:

**Խախտվել են ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնները»,** ուստի ներկայացված տվյալ պայմանագրի ապահովման հիմա վրա Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:

2. ***Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/3 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-17 ծածկագրով գնման ընթացակարգ՝***

Վերոնշյալ թղթերը բացակայում են: Գնումների պլանում նախահաշվային գինը նշված է 4,286,900 ՀՀ դրամ: Հետագայում, ըստ առանձին չափաբաժինների նշված չէ: «Մ ԲԻ Ռ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը սխալ է, քանի որ գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված անվանմանը:

**Գնային առաջարկում առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված անվանմանը**

**Խախտված են Նոր որոշման Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները**, ուստի այն ենթակա էր մերժման, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից այն գնահատվել է բավարար:

**Գնման ընթացակարգի հաղթողների որոշումը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին**:

**Խախտված են 16.12.2016 թվականի «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետև՝ Նոր օրենք/ 34-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետի, Նոր որոշման Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի, 32-րդ կետի 8-րդ ենթակետի, Կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի պահանջները:**

Այստեղից հետևում է, որ տվյալ գնման ընթացակարգին մասնակցելիս մասնակիցները պետք է ներկայացնեին յուրաքանչյուր չափաբաժնի համար մեկ ընդհանուր գնով գնային առաջարկներ և հաղթողը որոշվեր բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Սակայն կազմակերպված տվյալ ընթացակարգում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներն ու արդյունքում կնքված պայմանագրերի գումարները չեն համապատասխանում:

3. **Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգ՝**

**Հրավերի պայմանագրի նախագծում նախահաշիվ-ծավալաթերթը հրապարակված է առանց առանձին աշխատանքների գումարների**

Աշխատանքների ձեռք բերման համար Տեղեկագրում 24.08.2017 թվականին հրապարակվել է գնման ընթացակարգի հրավերը: Հրավերի պայմանագրի նախագծում նախահաշիվ-ծավալաթերթը հրապարակված է առանց առանձին աշխատանքների գումարների:

**Խախտվել են Նոր որոշման 34-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները**:

Հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներով սահմանված չեն նվազագույն պահանջներ: Խախտված է Նոր որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի 2-րդ պարբերության պահանջները: Գնման առարկայի նախահաշվային գինը 14,623,000 դրամ է:

Տվյալ ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Սասունասար» ՍՊԸ-ի, որի գնային առաջարկը 9,000,000 դրամ է առանց ԱԱՀ /ԱԱՀ-ով աշխատող է/ հայտը մերժվել է, «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը չհիմնավորելու հիմքով: Տվյալ դեպքում, Պատվիրատուն պետք է նախաձեռներ տվյալ մասնակցին գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց, ինչպես նաև մասնակցից գանձեր հայտի ապահովման գումարը: Սակայն ոչինչ չի նախաձեռնվել:

**Խախտվել են Նոր օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի պահանջները:**

«Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը, որի գնային առաջարկը 9 870 695 ՀՀ դրամ է առանց ԱԱՀ /ԱԱՀ վճարող չէ/ ևս մերժվել է՝ հայտի ապահովման անհամապատասխանության հիմքով, սակայն հայտերի բացման նիստի արձանագրության մեջ մանրամասն ներկայացված չէ մերժման հիմնավորումը:

**Մերժվել է հայտը՝ առանց մանրամասն հիմնավորման**

Սակայն հետագայում պարզվել է, որ մերժման հիմք է հանդիսացել այն, որ մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է 5%-ից բարձր: Սակայն տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, որի վերաբերյալ գոյություն ունի ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը: Ընթացակարգի հաղթող է ճանաչվել «ԱԼՖԱ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը 11 150 000 ՀՀ դրամ է առանց ԱԱՀ /ԱԱՀ վճարող է/:

4. ***Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռք բերման ՇՀ ԾՁԲ-15/3-16 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 17-1 ծածկագրով ընթացակարգ՝***

Տվյալ գնման առարկայի նախահաշվային ընդհանուր գինը գնումների պլանով սահմանված է 7 000 000 դրամ: Գնման հայտը բացակայում է: Գնման ընթացակարգը կազմակերպվել է չորս չափաբաժիններով: Յուրաքանչյուր չափաբաժնի նախահաշվային գները գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությամբ և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարության /հաշվետվության/ մեջ նշված է 1-ին չափաբաժնի համար՝ 6 550 000 դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 150 000 դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 150 000 դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 150 000 դրամ: Ընթացակարգին մասնակցած և բոլոր բավարար գնահատված մասնակիցների գնային առաջարկները 2-4-րդ չափաբաժիններով գերազանցել են տվյալ գնման՝ առարկաների ձեռք բերման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերը, ուստի, պետք է կազմակերպվեին բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով: Սակայն բանակցություններ չեն կազմակերպվել, ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆլեշ մոթորս» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված գնային առաջարկներն են՝ 1-ին չափաբաժնի համար՝ 1 543 750 դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 3 549 820 դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 3 628 540 դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 3 275 750 դրամ և այս գներով էլ արդյունքում կնքվել է պայմանագիր:

**Բացակայում է գնման հայտը**

**Խախտվել են Նոր որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները**:

5. ***Տպագրական աշխատանքների ձեռք բերման ՇՀԱՇՁԲ-15/4-2 ՀՀ ԳՆՍԱՊԾ-17 ծածկագրով գնման ընթացակարգ՝***

Տվյալ ընթացակարգի փաստաթղթերում բացակայում են վերը սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ գնման հայտը: Գնումների պլանում և գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությամբ նախահաշվային գինը ներկայացված է մեկ թվով, առանձին-առանձին չափաբաժինների գումարները չկան: Ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ն, որը գնային առաջարկ է ներկայացրել բոլոր չափաբաժինների համար՝ առանձին-առանձին: Քանի որ առանձին չափաբաժինների նախահաշվային գները անհայտ են, ուստի անհնար է գնահատել, արդյոք մասնակցի

**Նախահաշվային գինը ներկայացվել է մեկ ընդհանուր թվով**

ներկայացրած առանձին չափաբաժինների գները բարձր են այդ չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցներից, թե ոչ: Գների համեմատումը տեղի է ունեցել ընդհանուր սկզբունքով, այլ ոչ թե ըստ առանձին չափաբաժինների՝ մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը /բոլոր չափաբաժինների հանրագումարը/ համեմատվել է գնումների պլանով նախատեսված ընդհանուր գումարի հետ:

Տվյալ ընթացակարգի հրավերի 8.1.5 կետի 2-րդ պարբերությամբ սահմանված է, որ Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների և, քանի որ չկան սահմանված առանձին չափաբաժինների նախահաշվային գները, ուստի հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողներին որոշելը չի կատարվել ըստ առանձին չափաբաժինների:

Ընտրված մասնակցի կողմից որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում դրված է ամսաթիվ, որը չի համապատասխանում տուժանքի համաձայնագրի ամսաթվին: Խախտված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնները» որոշումը, ուստի, ներկայացված տվյալ պայմանագրի ապահովման հիման վրա:

**Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:**

## 6. *Տպագրական աշխատանքների ձեռք բերման ՇՀԱՇՁԲ-15/4-2 ՀՀ ԳՆՍԱՊԾ-17-1 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

### Սխալ է հաշվարկվել գինը

Տվյալ ընթացակարգը կազմակերպվել և անցկացվել է նույն սկզբունքով ինչ նախորդը: Ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ն, որը գնային առաջարկ է ներկայացրել բոլոր չափաբաժինների համար: Գնային առաջարկում, 8-րդ չափաբաժնով ներկայացրած գնի հաշվարկի մեջ առկա է անհամապատասխանություն. մասնավորապես՝ ներկայացված առաջարկում արժեքը նշված է 620,000 դրամ, ԱԱՀ-ն՝ 12,400 դրամ, առաջարկված ընդհանուր գինը՝ 744,000 դրամ: Արժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասար չէ առաջարկված ընդհանուր գնին: Համաձայն Որոշման 45-րդ կետի, տվյալ մասնակցի հայտը ենթակա է մերժման տվյալ չափաբաժնի մասով, սակայն գնահատող հանձնաժողովը բացման նիստի արձանագրությամբ մասնակցի հայտը գնահատել է բավարար՝ նրան ճանաչելով առաջին տեղը զբաղեցնող բոլոր չափաբաժիններով և կնքել պայմանագիր:

Ընտրված մասնակցի կողմից որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում «Արժույթի կոդը» նշված չէ:

**Խախտված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնները» որոշումը,** ուստի ներկայացված տվյալ պայմանագրի ապահովման հիման վրա Պատվիրատուն իրավունք չուներ պայմանագիր կնքելու:

## 7. *Սոցիալական, տեղեկատվական հոլովակների ծառայությունների ձեռք բերման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ 17/4 ծածկագրով գնման ընթացակարգ՝*

➢Տվյալ ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Մասնակցի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրում տնօրենի անձը հաստատող փաստաթղթի տվյալները նշված չեն, ինչը համարվում է պարտադիր վավերապայման և այն չպահպանելու դեպքում հայտը ենթակա է մերժման: Սակայն գնահատող հանձնաժողովը բացման նիստի արձանագրությամբ մասնակցի հայտը գնահատել է բավարար՝ նրան ճանաչելով առաջին տեղը զբաղեցնող:

**Խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները:**

➢Ներկայացված փաստաթղթերից բացակայում է պայմանագրի կատարման ապահովումը:

➢ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1228-Ն որոշման համաձայն, Ծառայությունը 02.11.2017թ. հրապարակել է Ծառայության կարիքների համար 2018 թվականի ընթացքում ձեռք բերվելիք փորձաքննության ծառայությունների իրականացման համար փորձարկման լաբորատորիաների գնման «ՓԾՁԲ/ՍԱՊԾ-18» ծածկագրով ընթացակարգի հրավեր: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2017 թվականի դեկտեմբերի 12-ին: Արդյունքում, պայմանագրեր են կնքվել «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ-ի, «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի, «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:

# 8 «Հանրապետական անասնաբուժական և բուսասանիտարիայի լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

## 1. Ֆինանսատնտեսական գործունեություն

«Հանրապետական անասնաբուժական և բուսասանիտարիայի լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ) իրականացնում է կենդանիների հիվանդությունների ախտորոշման, բույսերի կարանտին օրգանիզմների, հիվանդությունների և մոլախոտերի հայտնաբերման, բույսերի պաշտպանության միջոցների, բուսական և կենդանական ծագում ունեցող մթերքների, կարգավորող առարկաների լաբորատոր և կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննություններ:




**1.1.** 2016թ. 936,600 լաբորատոր փորձաքննությունների դիմաց ֆինանսավորումը կազմել է 347,892.3 հազ. ՀՀ դրամ: 2017թ. 900,000 լաբորատոր փորձաքննության միջոցառումների համար նախատեսվել է 312,408.8 հազ. ՀՀ դրամ: 2017թ.-ի ընթացքում պետական ֆինանսավորումը նվազեցվել է և կազմել 227,619.0 հազ. ՀՀ դրամ: 130000 փորձաքննություններով նվազեցվել է նաև լաբորատոր ախտորոշիչ փորձաքննության միջոցառումների քանակը: Հիվանդությունների ախտորոշիչ փորձաքննությունների քանակի նվազեցումը կհանգեցնի անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ ոչ լիարժեք

տեղեկատվության և հիվանդությունների հսկողության մեխանիզմների թուլացման:

**1.2.** 2016թ. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության գծով իրականացրել է 3301 փորձաքննություն՝ 176,188.9 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ 01.01.2017-20.11.2017թթ. ժամանակահատվածում՝ անասնաբուժական, բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության գծով 5449 փորձաքննություն՝ 197,388.0 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով:




«ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի և ՍԱՊԾ միջև 07.03.2016թ. կնքվել է ԴՄՇՀՀ ՍԱՊԾ-16-2 պայմանագիրը, ըստ որի, «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը պետք է իրականացնի ՍԱՊԾ կողմից իրականացվող տեսչական ստուգումների ընթացքում նմուշառված ապրանքների լաբորատոր փորձաքննություններ: 2016թ.-ին պետական պատվերի շրջանակներում կնքված պայմանագրով նախատեսված ցուցանիշներից բացի իրականացվել են փորձաքննություններ, որոնք նախատեսված չեն եղել պայմանագրում: 2016թ.-ին ՀԱԲԼԾԿ-ն պետական վերահսկողության շրջանակներում ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ի հետ կնքված պայմանագրի խախտումով իրականացրել է 221 (մանրէաբանական, նույնականացման, լևոմիցիտին անտիբիոտիկի) ցուցանիշի փորձաքննություն՝ 1,547.2 հազ. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Նշված ծառայությունների մատուցումները սահմանված կարգով հաշվապահական ձևակերպումներ չեն ստացել, ՀԱԲԼԾԿ-ի արտաբյուջետային հաշվին գումարը չի մուտքագրվել, որի արդյունքում թաքցվել են ՊՈԱԿ-ի եկամուտները և ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերը:

➢ **Խախտվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Խախտվել են նաև**

**«ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի և ՍԱՊԾ միջև 07.03.2016թ. կնքված ԴՄՇՀՀ ՍԱՊԾ-16-2 պայմանագրի պահանջները:**

**1.3.** Պայմանագրի շրջանակներում 2016թ. ՊՈԱԿ-ի կողմից կազմվել է 59 փորձաքննության արձանագրություն, որի արժեքը՝ պայմանագրի հավելվածով նախատեսված գնացուցակի համաձայն, կազմել է 1,997.1 հազ. ՀՀ դրամ: «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կողմից վերը նշված աշխատանքների կատարման համար ՍԱՊԾ է ներկայացվել ընդհանուր 2,536.1 հազ. ՀՀ դրամի հարկային հաշիվ, որը վճարվել է ՀՀ պետական բյուջեից: Հարկային հաշիվներում բացի ստուգված ցուցանիշներից, ներառվել են այլ ցուցանիշներ, որոնք չեն ստուգվել կամ ստուգված ցուցանիշների քանակը ավել է ներկայացվել: **Արդյունքում, ՊՈԱԿ-ը ՀՀ պետական բյուջեից 539.0 հազ. ՀՀ դրամ ավել գումար է ստացել՝ չմատուցված ծառայությունների դիմաց:**

**1.4.** 2017թ.-ին տեսչական ստուգումների շրջանակներում նմուշառված սննդամթերքի փորձաքննությունների իրականացման համար պայմանագիր չի կնքվել: Ստուգումների արդյունքում ներկայացված նմուշների նկատմամբ իրականացված փորձաքննություններից 149 արձանագրություններում նշված փորձաքննությունները սահմանված կարգով հաշվապահական ձևակերպումներ չեն ստացել: Ընդհանուր առմամբ 12,045.7 հազ. ՀՀ դրամ արժողությամբ մատուցված ծառայության դիմաց հաշվապահական ձևակերպում են ստացել 4,917.6 հազ. ՀՀ դրամի աշխատանքները, իսկ 7,128.5 հազ. ՀՀ դրամ գումարի չափով մատուցված ծառայությունը չի ստացել հաշվապահական ձևակերպում, ՀԱԲԼԾԿ-ի արտաբյուջետային հաշվին նշված գումարը չի մուտքագրվել, որի արդյունքում թաքցվել են ՊՈԱԿ-ի եկամուտները և ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերը:

➢ **Խախտվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջները:**

**1.5.** 2017թ. նոյեմբերին ՍԱՊԾ պետի կողմից ՀԱԲԼԾԿ տնօրենին տրվել է հանձնարարական. ծառայության կողմից իրականացված ստուգումների և դիտարկումների շրջանակում ներկայացված փորձանմուշների լաբորատոր փորձաքննությունները իրականացնել «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին:

➢ **Նշված հանձնարարականը հակասում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի պահանջներին:**

**1.6.** Ընտրանքային սկզբունքով ուսումնասիրվել են 2016թ. դեկտեմբեր ամսվա 142 և 2017թ. հունվար-փետրվար ամիսներին տրված 279 փորձարկման արձանագրությունները: Պարզվել է, որ մինչև 2017թ. մարտ ամսին Էքսպրես մանրէաբանական մեթոդի հավատարմագրումը, մանրէաբանական ցուցանիշներով փորձաքննված մոտ 40 նմուշների փորձարկման տևողությունը չի համապատասխանում փորձարկման արձանագրություններում նշված փորձարկման մեթոդը սահմանող նորմատիվ փաստաթղթում սահմանված տևողությանը: Արդյունքում՝ փորձաքննությունները իրականացվել են կա՛մ նորմատիվ փաստաթղթերի խախտումներով, կա՛մ ընդհանարապես չեն իրականացվել: Օրինակ.

| | Ապրանքի անվանում | Լաբորատորիա նմուշի ստացման ամսաթիվ | Լաբորատոր արձանագրության տրման ամսաթիվ | Փորձաքննության նվազագույն տևողությունները՝ ըստ նորմատիվ փաստաթղթերի |
|---|---|---|---|---|
| 1 | Հավկիթ | 29.12.2016 | 30.12.2016 | 3 օր |
| 2 | Մաստակ | 21.12.2016 | 21.12.2016 | 5 օր |
| 3 | Վարունգ մարինացված | 01.12.2016 | 01.12.2016 | 3 օր |
| 4 | Կաթնային մածուկ | 22.02.2017 | 24.02.2017 | 3 օր |
| 5 | Հավի թև | 20.02.2017 | 23.02.2017 | 5 օր |
| 6 | Խնձորի խտանյութ | 07.02.2017 | 10.02.2017 | 5 օր |
| 7 | Կարագ | 06.02.2017 | 09.02.2017 | 5 օր |
| 8 | Մայոնեզ | 06.02.2017 | 09.02.2017 | 5 օր |
| 9 | Կարագ | 31.01.2017 | 03.02.2017 | 5 օր |
| 10 | Նարնջի խտանյութ | 31.02.2017 | 03.02.2017 | 5 օր |
| 11 | Բուսական սերուցք | 25.01.2017 | 27.01.2017 | 5 օր |
| 12 | Ելակի չիր | 25.01.2017 | 27.01.2017 | 5 օր |
| 13 | Ձուկ | 11.01.2017 | 13.01.2017 | 4 օր |

**1.7.** ՍԱՊԾ կողմից դիտարկման հիման վրա նմուշառված և «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ ներկայացված թռչնամսի վերաբերյալ անվտանգության ցուցանիշների գծով արձանագրվել են շեղումները, մինչդեռ սահմանային պետական վերահսկողության շրջանակներում նույն խմբաքանակից նմուշառված և

«ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ ներկայացված նմուշների մասով շեղումներ չեն արձանագրվել: Այսպիսով՝ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կողմից նույն խմբաքանակի նմուշի վերաբերյալ առկա են 2 տաբեր լաբորատոր փորձաքննության արձանագրություններ՝ տարբեր ելքային արդյունքներով:

**1.8.** Ընտրանքային սկզբունքով ուսումնասիրվել են 2016թ. դեկտեմբեր ամսվա սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիայի նմուշների ընդունման գրանցամատյանը և արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ավելի ուշ ստացված նմուշները գրանցամատյանում մուտքագրվել են ետին ամսաթվերով:

## 2. Գույքի տնօրինում

**Մատակարարվել է միայն պայմանագրով նախատեսված սարքավորման օժանդակ սարքերը, իսկ բուն սարքավորումը (12,300.0 հազ. ռուբլի) չի մատակարարվել**

**2.1.** ՀՀ ԳՆ ՍԱՊԾ և ՌԴ Սպառողների շահերի պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտներում վերահսկողության դաշնային ծառայության միջև 21.05.2015թ. կնքված պայմանագրով տրամադրված գույքը 07.06.2017թ. անհատույց օգտագործման է հանձնվել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին: Պայմանագրի շրջանակներում՝ 817,429.5 հազ. ՌԴ ռուբլի ընդհանուր գումարով կնքված 12 պետական պայմանագրերից 8-րդը (3,020.0 հազ. ռուբլի) չի մատակարարվել, 7-րդ պայմանագրից մատակարարվել է միայն պայմանագրով նախատեսված սարքավորման օժանդակ սարքերը, իսկ բուն սարքավորումը (12,300.0 հազ. ռուբլի) չի մատակարարվել:

**2.2.** Ստուգման ընթացքում պարզվեց, որ՝ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը 18,404.7 հազ. ռուբլի (156,808.5 հազ ՀՀ դրամ) ընդհանուր արժեքով գույքը վարձակալությամբ տրամադրվել է այլ կազմակերպությունների:

➢ **Նշված գործողություններով խախտվել են ՀՀ ԳՆ ՍԱՊԾ և ՌԴ Սպառողների շահերի պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտներում վերահսկողության դաշնային ծառայության միջև 21.05.2015թ. կնքված միջգերատեսչական պայմանագրի 2-րդ հոդվածի 5 կետի**

**պահանջները, ըստ որի ՍԱՊԾ-ն երաշխավորում է ստացված սարքավորումների նպատակային օգտագործումը ՀԱԲԼԾԿ-ի կողմից:**

**2.3.** Անհատույց օգտագործման իրավունքով ստացված գույքից ՍԱՊԾ պետի համաձայնությամբ, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mullberry համակարգում չգրանցված և ՊՈԱԿ-ի կողմից մուտք չարված, առանց էլեկտրոնային ստորագրության և ելքի համարի փաստաթղթի հիման վրա «ՎԱԿ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին արտոնյալ պայմաններով վարձակալության է հանձնվել կենսաօրգանական (սպանդային) թափոնների ջերմային ոչնչացման համար տրակտորային կցորդով շարժական կայան (ИЫ-300М, անձնագիր՝ ИУП-300.000.00.000 ПС, Իժևսկ 2016 թվական)՝ 1.306.260 ռուբլի (11.129.335 ՀՀ դրամ) արժեքով, իսկ «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ-ին արտոնյալ պայմաններով վարձակալության է հանձնել 6 անուն լաբորատոր գույք՝ ընդհանուր 17.098.489 ռուբլի (145.679.126 ՀՀ դրամ) արժեքով: **Ծառայության պետի կողմից տրված գրավոր համաձայնագրերը ձևակերպված չեն որպես ելից փաստաթղթեր, որով խախտվել են Ծառայության աշխատակազմի ընդհանուր բաժնի կանոնադրության 3-րդ բաժնի գործառույթների 2-րդ կետի պահանջները:**

**2.4.** ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1731-Ա որոշման համաձայն ՊՈԱԿ-ին պատկանող անասնաբուժական սպասարկման կենտրոնների շենքերը և դրանց կից շինությունները 25 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի «Աջակցություն սկսնակ ձեռներեցներին» ծրագրի հատուկ դասընթացի արդյունքում հավանության արժանացած գործարար ծրագրերի շահառուներին:

Շահառուները նոր ստեղծված մասնավոր ընկերություններ են, որոնցից 2-ը պետական գրանցում են ստացել կառավարության որոշման ընդունումից 3 և 8 օր առաջ:

| Կազմապերպության անվանում | Հիմնադրման տարեթիվ | ԱԱՀ | Ծննդ. թիվ | Մարզ, համայնք | Հասցե |
|---|---|---|---|---|---|
| **«ԱՐՄԱՎԻՐ ՍՊԱՆԴԱՆՈՑ» ՍՊԸ** | 03.11.2017 | Սարգսյան Հովագիմ Վոլոդյայի | 05/01/1995 | Արմավիր Արմավիր | Նալբանդյան Փ.108 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՍՊԱՆԴԱՆՈՑ» ՍՊԸ** | 16.08.2017 | Հարությունյան Ավետիք Սամվելի | 25/05/1967 | Գեղարքունիք Վաղաշեն | 7 Փ. 8 |
| **«ԼԷՌ» ՍՊԸ** | 19.09.2017 | Հակոբյան Էդուարդ Գագիկի | 13/05/1990 | Երևան Արաբկիր | Գրիբոյեդովի Փ. 26 28 |
| **«ԹԱՀ ԹԱԼԻՆ ՍԼՈՏԵՐ ՀՕՈՒՍԵ» ՍՊԸ** | 11.09.2017 | Հարոյան Բաբկեն Եղիշեի | 07/03/1981 | Արագածոտն Թալին | Մյասնիկյան Փ. 37 18 |
| **«ԱՌՈՂՋ ՄՍԱՄԹԵՐՔ» ՍՊԸ** | 19.09.2017 | Մխիթարյան Քրիստինե Միշայի | 10/02/1979 | Երևան Նոր Նորք | Նոր Նորք 9 Զնգվ.16բն 352 |
| **«ՆԱՏՈՒՐ ՄԻԹ» ՍՊԸ** | 25.12.2017 | Զուրաբյան Սեյրան Սուրենի | 27/01/1997 | Տավուշ Նոյեմբերյան | Բերդավան 6 Փ. 537 |
| **«ՀՐԱԶ-ՍՊԱՆԴԱՆՈՑ» ՍՊԸ** | 19.12.2017 | Ղազարյան Աշոտ Զուրաբի | 27/02/1984 | Երևան Նոր Նորք | Նոր Նորք 9 Զնգվ. 20 15 |

## 3. Իրականացված գնումների գործընթացի կազմակերպման մասին.

**3.1.** ՊՈԱԿ-ը 2017թ.-ի ընթացքում, առանց գնումների պլաններում ներառելու և գնման մրցակցային ձևեր կիրառելու, ձեռք է բերել տարբեր տեսակների ծառայություններ և իրականացրել է շինարարական աշխատանքներ թվով 41 ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ վճարելով շուրջ 13 մլն դրամ: Օրինակ՝ շինարարական և վերանորոգման աշխատանքների ընդհանուր գումարը գերազանցել է 2 000 000 ՀՀ դրամը:

➢ **Խախտվել են 22.12.2010 թվականի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168 որոշման 15-րդ և 16-րդ կետերի, 25-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:**

2017 թվականի գնումների մասին գործող օրենսդրությամբ վերը նշվածը կարգավորվում է 16.12.2016 թվականի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 16-րդ, 17-րդ կետերով և 23-րդ կետի 2-րդ ենթակետով:

2017 թվականին Պատվիրատուն օբյեկտի պահպանության իրականացման համար պայմանագիր է կնքել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատի հետ՝ 8,652.0 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Պայմանագրով նախատեսվում է պետական

պահպանություն իրականացնել նաև ՍԱՊԾ Կոմիտաս 49/2 հասցեում գտնվող շենքում՝ 2,885.0 հազ. ՀՀ դրամ գումարով:

Ուսումնասիրվել է «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի 2016-2017 թվականներին կազմակերպված գնումների գործընթացների համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, ինչպես նաև, իրականացվել է բյուջետային և արտաբյուջետային միջոցների հաշվին կազմակերպված 20 գնման ընթացակարգերի կազմակերպման ու անցկացման, դրանց շրջանակներում կիրառված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի առկայության, դրանց ճշգրիտ և ժամկետներում կիրառման վերլուծություն:

**Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է՝**

**3.2.** Կազմակերպված գնման ընթացակարգերում բացակայել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և պարտադիր կիրառման ենթակա հետևյալ փաստաթղթերը.

- Որոշման Կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի /անձանց/ կողմից հաստատված հայտարարություն այն մասին, որ իր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի արձանագրություն
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրություն

**3.3. Ուսումնասիրված որոշ գնման ընթացակարգերում առկա են հետևյալ խնդիրները.**

- Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և հրապարակման ենթակա փաստաթղթերից և հայտարարություններից տեղեկագրում /www.gnumner.am կամ www.old.gnumner.am/ հրապարակված չեն գնումների պլաններ, գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրություններ, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություններ, գնման ընթացակարգը կամ որոշ չափաբաժիններ չկայացած հայտարարելու մասին հայտարարություններ, գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ /հաշվետվություններ/:
- Մասնակիցը հայտով ներկայացրել է հայտարարություն, որ իր կողմից մատակարարվելիք ապրանքները հանդիսանում են եվրասիական տնտեսական

միության ապրանք և պարտավորվել է հաղթող ճանաչվելուց և պայմանագիր կնքելուց հետո ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման դեպքում ներկայացնել ծագման երկրի սերտիֆիկատ, սակայն այդ սերտիֆիկատները առկա չեն /Օրինակ՝ Շարժական պահատնակի ձեռք բերման համար կազմակերպված ընթացակարգում «Արգոհշին» ՍՊԸ, ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԲԼԾԿ ՊԸԱՊՁԲ-17/8 , Գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռք բերման «Արգավանդ Կահույք» ՍՊԸ, ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԳՆ ՀԱԲԼԾԿ ՇՀԱՊՁԲ-15/13-9/:

**Խախտվել են Որոշման 36-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները:**

**3.4.** Մասնակիցների ներկայացրած մասնակցության հայտերում, որակավորումը հիմնավորող փաստաթղթերում, որպես պայմանագրի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրերում և վճարման պահանջագրերում առկա են թերություններ, մասնավորապես՝

**3.4.1.** Կան մասնակիցների կողմից ներկայացրած ծրարներ, որոնք ստորագրված չեն /Խախտվել են հին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մաս, նոր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մաս/, ուստի ենթակա են մերժման, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից դրանք գնահատվել են բավարար /օրինակ՝ Օդորակիչների ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի «Զիգզագ» ՍՊԸ-ի և Գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռք բերման ՀՀ ԳՆ ՀԱԲԼԾԿ ՇՀԱՊՁԲ-15/13-9 ծածկագրով գնման ընթացակարգի «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի ծրարները/,

**3.4.2.** Որպես պայմանագրի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրերի վրա ամսաթվեր նշված չեն /օրինակ՝ Գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռք բերման ՀՀ ԳՆ ՀԱԲԼԾԿ ՇՀԱՊՁԲ-15/13-9 ծածկագրով գնման ընթացակարգի «Արգավանդ Կահույք» ՍՊԸ, Օդորակիչների ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով ընթացակարգ, Համակարգչային տեխնիկայի ձեռք բերման ընթացակարգի «Կոմպմարկետ» ՍՊԸ, Պատուհանների տեղադրման աշխատանքների ՀԱԲԼԾԿ-17/26 ծածկագրով գնման ընթացակարգի «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ և այլն/:

**Խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները:**

**3.4.3.** Կան համաձայնագրեր, որոնց վրա բացակայում են ընկերության տնօրենի անձնագրային տվյալները /Օրինակ՝ Օդորակիչների ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի «Զիգզագ. ՍՊԸ/:

**Խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները:**

**Պահանջագրի մեջ նշված չէ «վճարման նպատակը», արժույթի կոդ և այլն**

**3.4.4.** Որպես պայմանագրի ապահովում ներկայացրած, տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրերում առկա են թերություններ: Կա պահանջագիր, որի վրա դրված է ամսաթիվ, պահանջագրի մեջ նշված չէ «վճարման նպատակը», արժույթի կոդ նշված չէ և այլն: Նշված թերություններով ներկայացրած փաստաթղթերը ենթակա են մերժման՝ **համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168 որոշման 45-րդ կետի /մինչև 04.05.2017թ/ և ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների», որն առկա է նաև գնման ընթացակարգերի հրավերներում**: Նշված թերություններով ներկայացված պայմանագրերի ապահովումների հիման վրա «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը իրավունք չուներ պայմանագրեր կնքելու:

- 2016 թվականի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռք բերման համար կազմակերպված գնման ընթացակարգում երկու մասնակիցներ ներկայացրել են հավասար նվազագույն գներ, և գնահատող հանձնաժողովը որոշել է հրավիրել բանակցությունների: Բանակցությունները կազմակերպվել են նշված որոշման հաջորդ օրը:

**Խախտվել են ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168 որոշման 44-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:**

- 2017 թվականին «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը օբյեկտի պահպանության իրականացման համար պայմանագիր է կնքել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատի հետ՝ առանց որևէ գնման ընթացակարգ կիրառելու՝ գնումների պլաններում նշված ծառայությունները ներառելով որպես գնում չհանդիսացող ծախս: Ծառայությունների ընդհանուր գումարը գնումների պլանով սահմանված է 8 652 000 ՀՀ դրամ:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ նշված ծառայությունների ձեռք բերումը հանդիսանում է գնում, ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատի վերաբերյալ չկա իրավասու մարմնի տրամադրած իրավական կարգավորման կամ վարչական նորմի հիմքով որպես գնվելիք ծառայության միակ մատուցող

հանդիսանալու մասին իրավական ակտ, ուստի 2017 թվականի կարիքների համար պետք է կազմակերպվեր համապատասխան գնման ընթացակարգ՝ տվյալ դեպքում պարզեցված ընթացակարգ, և այդ ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվեր պայմանագիր:

**3.5.** Ապրանքների ձեռք բերման գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերում, համաձայնագրեր կնքելով կատարել է լրացուցիչ ծավալների ավելացումներ, սակայն դրանցում առկա են խնդիրներ.

**Կնքվել է համաձայնագիր, որով ձեռք է բերվել պահատնակի հատակ, ինչը նախապես չի եղել ոչ գնման ընթացակարգի հրավերում, ոչ արդյունքում կնքված պայմանագրում**

**3.5.1.** Օրինակ 1: Շարժական պահատնակի ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ՊԸԱՊՁԲ-17/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքվել «Արգոհշին» ՍՊԸ-ի հետ, այնուհետև կնքվել է համաձայնագիր, որով ձեռք է բերվել պահատնակի հատակ, ինչը նախապես չի եղել ոչ գնման ընթացակարգի հրավերում, ոչ արդյունքում կնքված պայմանագրում:

**Խախտվել են տվյալ պահին գործող ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168 որոշման 60-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:**

**3.5.2.** Օրինակ 2: ԻՖԱ թեստերի հավաքածուի ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/11 ծածկագրով և անվտանգության համակարգերի ձեռք բերման ՀԱԲԼԾԿ ՊԸԱՊՁԲ-17/7 ծածկագրով գնման ընթացակարգերի պայմանագրերում կատարվել է լրացուցիչ ծավալների ձեռք բերում, որտեղ առկա են հետևյալ խնդիրները: Այս երկու գնման առարկաներում չափման միավորը սահմանված է «հավաքածու», քանակը՝ «1»: Հավաքածուներն իրենց մեջ պարունակում են տասնյակից ավելի անվանում ապրանքներ: Լրացուցիչ ծավալներ ավելացվել է հավաքածուների բաղադրիչներ հանդիսացող ապրանքներ ավելացնելով: Քանի որ, համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնակիցներն իրենց գնային առաջարկները ներկայացնում են մեկ թվով՝ չափաբաժնի համար նախատեսված ընդհանուր գումարով, առանց բաղադրիչների բացվածքների, ուստի Հավաքածուների բաղադրիչ հանդիսացող առանձին ապրանքների գները հայտնի չեն, հետևաբար, նման ավելացումներ անելով՝ կասկածի տակ է դրվում հավելյալ ծավալների ապրանքների գների մրցակցային, շուկայականից ցածր լինելը:

**Կասկածի տակ է դրված հավելյալ ծավալների ապրանքների գների մրցակցային, շուկայականից ցածր լինելը**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հրապարակված 2017թ. ստուգումների տարեկան պլանը կազմված է առանց անհատական ռիսկի հաշվարկման, ինչը հակասում է «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

2 Ստուգաթերթերում սահմանված նորմերը հակասում են ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված տեխնիկական կանոնակարգերին: Տեխնիկական կանոնակարգերի կիրառման նկատմամբ Ծառայությունը վերահսկողություն չի ապահովել:

3 Դիտարկումների ընթացքում արտադրությամբ զբաղվող տնտեսվարողների նկատմամբ կայացվել են արտադրական գործունեության կասեցման որոշումներ՝ հիմք ընդունելով իրավական ակտերի այնպիսի դրույթներ, որոնք կիրառելի են միայն իրացման(վաճառքի) կետերում:

4 Դիտարկման հրամանի հիման վրա տնտեսվարողների մոտ իրականացվել է ստուգման ընթացակարգով նախատեսված գործողություններ:

5 «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված աուդիտի ընթացակարգեր չեն կիրառվում:

6 Տեսչական ստուգումների և դիտարկումների իրականացման ընթացքում չեն պահպանվում ոլորտին առնչվող իրավական ակտերի նորմերը և ընթացակարգերը: Ստուգումների և դիտարկումների ընթացքում կատարվող գտործողությունները կրում են ոչ իրավաչափ բնույթ:

7 Չեն պահպանվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջները: Հարուցված վարչական

վարույթների առանձին գործերում փաստաթղթերի ամբողջականությունը պահպանված չէ:

8

Ներմուծման ընթացքում սննդամթերքի անվտանգության հավաստագրերը տրամադրվում են առանց հաշվի առնելու իրավական ակտերի դրույթները: Արձանագրվել են դեպքերը, երբ.

8.1. Ներմուծման հավաստագրերը տրվել են լաբորատոր փորձաքննության արդյունքում ոչ պիտանի համարվող բեռների համար:

8.2. Ներմուծման հավաստագրերը տրվել են ավելի շուտ, քան ստացվել է տվյալ բեռի լաբորատոր փորձաքննության արձանագրությունը:

8.3. Ներմուծման ընթացքում նմուշառած և լաբորատոր փորձաքննությունների արդյունքում ոչ պիտանի ճանաչված սննդամթերքը չի ոչնչացվել կամ հետ ուղարկվել: Դրանց տրվել են անվտանգությունը հավաստող սերտիֆիկատներ:

9

Մեծամասամբ չեն իրականցվում վերլուծություններ և գործողություններ՝ առավել ռիսկային երկրներից և արտադրողներից ՀՀ ներմուծվող սննդամթերքի մուտքը կանխարգելելու և անվտանգությունն ապահովելու համար:

10

Պետական վերահսկողության շրջանակներում առանց նախատեսված ֆինանսական միջոցների առակայության և առանց մրցույթ հայտարարելու պատվիրվել է անվճար լաբորատոր փորձաքննություններ, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

11

ՀՀ տարածքում իրականացված բուսասանիտարական մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված կարանտին օրգանիզմներով վարակված տարածքներում կարանտին միջոցառումներ չեն իրականացվել, ինչը կարող է հանգեցնել հիվանդության տարածմանը:

12

Անասնաբուժության ոլորտում պետական պատվերի շրջանակներում իրկանացվող պատվաստումների նկատմամբ վերահսկողությունը զուտ փաստաթղթային է: Պատվաստանյութի ազդեցության ստուգման շճաբանական հետազոտություններ չեն իրականացվում:

13

Ծառայությունը ներգրավել է փորձագետների, որոնց օրենքի խախտմամբ քաղծառայության թափուր աշխատատեղերի հաշվին վճարել է աշխատավարձ և պարգևատրել է ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին:

14 Գնումների գործընթացը կազմակերպվել է խախտումներով: Մասնավորապես, որոշ դեպքերում գնման առարկան ներառված չէ գնումների պլանում, կազմակերպված գնման ընթացակարգերում չեն կիրառվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և պարտադիր կիրառման ենթակա փաստաթղթեր, առկա են մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերի գնահատման թերություններ: Որոշ դեպքերում ընթացակարգերի հաղթողների մասին որոշումները չեն համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

15 ՌԴ կառավարությունից ստացված դրամաշնորհով կնքված պետական պայմանագրերից 15,320,000 ռուբլի արժեքով սարքավորումներ չի մատակարարվել «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ին, իսկ մեկ այլ խմբաքանակից մատակարարվել են միայն նախատեսված սարքավորման օժանդակ սարքերը:

16 Անհատույց օգտագործման իրավունքով ստացված գույքից ՍԱՊԾ պետի համաձայնությամբ, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mullberry համակարգում չգրանցված և ՊՈԱԿ-ի կողմից մուտք չարված, առանց էլեկտրոնային ստորագրության և ելքի համարի փաստաթղթի հիման վրա ստացված սարքավորումներից 8-ը «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվել է վարձակալությամբ այլ մասնավոր ընկերությունների, խախտելով միջգերատեսչական պայմանագիրը, որի համաձայն Ծառայությունը երաշխավորում է, որ մատակարարված լաբորատոր սարքավորումները պետք է նպատակային օգտագործվեն «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կողմից: «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի նպատակն է լաբորատոր ծառայությունների մատուցումը, այլ ոչ թե լաբորատոր գույքը վարձակալության հանձնելը:

17 «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կողմից փորձաքննության ենթարկված մի շարք ապրանքների վերաբերյալ արձանագրությունները կազմվել են փորձաքննության ավարտից ավելի շուտ, որը փաստում է, որ փորձաքննությունները իրականացվել են կա՛մ նորմատիվ փաստաթղթերի խախտումներով, կա՛մ ընդհանարապես չեն իրականացվել:

18 2016-2017թթ. «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ը իրականացրել է փորձաքննություններ, որոնք հաշվապահական ձևակերպումներ չեն ստացել, ինչի արդյունքում թաքցվել են ՊՈԱԿ-ի եկամուտները և ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը**

1.1. Ձեռնարկել միջոցառումներ վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ:

1.2. Միջոցներ ձեռնարկել ՍԱՊԾ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

1.3. Տեսչական ստուգումների և դիտարկումների իրականացման համար նախատեսված ստուգաթերթերում սահմանված նորմերը համապատասխանեցնել ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված տեխնիկական կանոնակարգերին: Տեխնիկական կանոնակարգերի կիրառման նկատմամբ ապահովել պատշաճ վերահսկողություն:

1.4. Ներմուծման ընթացքում սննդամթերքի անվտանգության հավաստագրերի տրամադրման գործընթացը կազմակերպել բացառապես իրավական ակտերի դրույթներին համապատասխան՝ վտանգավոր համարվող սննդամթերքի մուտքը երկիր կանխարգելելու համար:

1.5. Պետական սեփականություն հանդիսացող լաբորատոր գույքի կառավարումը և օգտագործումը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին և կատարել միջգերատեսչական պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

1.6. Գնումների գործընթացը կազմակերպել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

**2. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին**

2.10 Լաբորատոր փորձաքննությունները իրականացնել փորձարկման մեթոդը սահմանող նորմատիվ փաստաթղթում սահմանված պահանջներին համապատասխան:

2.11 Գնումների գործընթացը կազմակերպել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

2.12 Բացառել առանց հաշվապահական ձևակերպումների ծառայությունների մատուցումը:

2.13 Ձեռնարկել միջոցներ վարձակալության հանձնված պետական գույքի ետ վերադարձման և միջգերատեսչական համաձայնագրով նախատեսված պայմաններով օգտագործման ուղղությամբ:

***«ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ/ կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:***

***Հավելված***

## Պարզաբանում

**Ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրությամբ արձանագրված թերությունների վերաբերյալ հատնում ենք.**

Ծառայության կողմից 2017թ-ի սեպտեմբերից Ֆինանսատնտեսական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

**Աշխատակազմ և վարձատրություն պարբերության վերաբերյալ.**

ՍԱՊԾ կողմից փորձագետներ են ընդունվել հիմք ընդունելով ՀՀ նախագահի 22 հուլիսի 2013 թվականի N ՆԿ-129-Ա «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ «ՄԵԿ ԿԱՆԳԱՌ, ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» և 22 ապրիլի 2014 թվականի N ՆԿ-50-Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ «ՄԵԿ ԿԱՆԳԱՌ, ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» կարգադրությունները, ինչպես նաև ՀՀ կառավարության 11 դեկտեմբեր 2014 թվականի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ «ՄԵԿ ԿԱՆԳԱՌ, ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1404-Ն որոշման համաձայն Ծառայության առջև ծառացած խնդիրներին իրավիճակային ժամանակավոր լուծումներ տալու նպատակով՝ «Մեկ կանգառ մեկ պատուհան» համակարգով աշխատող **օպերատորներ** ՀՀ պետական մաքսային սահմաններում Ծառայության աշխատակազմի սահմանային հսկիչ կետերում աշխատելու, ինչպես նաև Ծառայությունում ժամանակակից տեղեկատվական բազաներ ստեղծելու և այդ բազաները կառավարելու համար: Ծառայության կողմից վերը նշված գործառույթների իրականացման նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծեր, որոնք ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել և ընդունվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 340-Ն և ՀՀ Վարչապետի մայիսի 3-ի N 409-Ն որոշումներով: **Ինչ վերաբերում է փորձագետներին, ապա նրանք իրականացրել են տեխնիկական բնույթի գործառույթներ (համակարգչային օպերատոր)**: **Փորձագետների վարձատրության չափը սահմանվել է ըստ իրականացված աշխատանքների ծավալների չափի**:

**Գնումների գործընթացի պարբերության վերաբերյալ հայտնում ենք.**

1. Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն, երբ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա կիրառվում են Որոշման 75-րդ կետի պահանջները (75. Գնումն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 6-րդ կետերի հիման վրա կատարվելու դեպքում, եթե կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ, և գործարքը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա), որը Ծառայության կողմից չի խախտվել:
2. Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/19 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-1 ծածկագրով ընթացակարգի վճարման պահանջագրի վրա նշված ամսաթվի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն սխալմամբ լրացվել է մասնակիցների կողմից: <<Վճարահաշվարկային գործառնությունների փաստաթղթերի նվազագույն

վավերապայմանները սահմանելու մասին>> ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.01.1999թ. թիվ 09 որոշմամբ հաստատված <<վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների>> 3-րդ կետով սահմանված է, որ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է, սակայն նշված չէ ում կողմից է դա իրականացվում, իսկ հրավերում նշված է, որ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից, սակայն չկա որևէ դրույթ վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դառնում է անվավեր փաստաթուղթ և, որպես հետևանք, Պատվիրատուն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, այսինքն պայմանագիրը կնքվել է սահմանված կարգին համապատասխան:

3. Պատվերով տպագրվող նյութերի ձեռք բերման ՇՀԱՇՁԲ-15/4-2 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկում, 10-րդ չափաբաժնում առկա սխալի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ Որոշման 44-րդ կետի 3)-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովը գնային առաջարկում հաշվարկային սխալի դեպքում հիմք է ընդունում տառերով գրվածը:

4. Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/9 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ սպասարկման ծառայությունների դեպքում մասնակիցների կողմից ներկայացվում է գնային առաջարկ նախատեսված ծառայությունների յուրաքանչյուր միավորի համար առանձին գին (գնացուցակ)՝ ինչը կարող է կազմել նախատեսված ֆինանսական միջոցներից պակաս կամ ավել, սակայն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կնքվում է պայմանագիր նախատեսված ֆինանսական միջոցների չափով, քանի որ նախօրոք հնարավոր չէ կանխատեսել թե քանի սարքավորում շարքից դուրս կգա և ինչ սպասարկում պետք է իրականացվի:

**5.** Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/3 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ վերանորոգման ծառայությունների դեպքում մասնակիցների կողմից ներկայացվում է գնային առաջարկ նախատեսված ծառայությունների յուրաքանչյուր միավորի համար առանձին գին (գնացուցակ)՝ ինչը կարող է կազմել նախատեսված ֆինանսական միջոցներից պակաս կամ ավել, սակայն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կնքվում է պայմանագիր նախատեսված ֆինանսական միջոցների չափով, քանի որ նախօրոք հնարավոր չէ կանխատեսել թե քանի սարքավորում շարքից դուրս կգա և ինչ սպասարկում պետք է իրականացվի:

6. Համացանցի (ինտերնետ կապի) ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/1 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-2 ծածկագրով ընթացակարգի վճարման պահանջագրի վրա դրված ամսաթվի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն սխալմամբ դրվել է մասնակիցների կողմից: <<Վճարահաշվարկային գործառնությունների փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները սահմանելու մասին>> ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.01.1999թ. թիվ 09 որոշմամբ հաստատված <<վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների>> 3-րդ կետով սահմանված է, որ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է, սակայն նշված չէ ում կողմից է դա իրականացվում, իսկ հրավերում նշված է, որ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից, սակայն չկա որևէ դրույթ վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դառնում է անվավեր փաստաթուղթ և, որպես հետևանք, Պատվիրատուն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, այսինքն պայմանագիրը կնքվել է սահմանված կարգին համապատասխան:

**7.** Համացանցի (ինտերնետ կապի) ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/1 ՀՀԳՆ ՍԱՊԾ-16-3 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Կոմպլաբ ՍՊԸ-ի կողմից

ներկայացրած գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի նշվել, սակայն ճիշտ է նշվել չափաբաժնի համարը, ինչպես նաև մյուս հավելվածներում նշված է նույն չափաբաժինը՝ ինչը հնարավորություն է տալիս մասնակցի հայտը գնահատել բավարար:Ղ-Տելեկոմ ՓԲԸ-ի կողմից վճարման պահանջագրի վրա դրված ամսաթվի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն սխալմամբ դրվել է մասնակիցների կողմից: <<Վճարահաշվարկային գործառնությունների փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները սահմանելու մասին>> ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.01.1999թ. թիվ 09 որոշմամբ հաստատված <<վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների>> 3-րդ կետով սահմանված է, որ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է, սակայն նշված չէ ում կողմից է դա իրականացվում, իսկ հրավերում նշված է, որ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից, սակայն չկա որևէ դրույթ վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դառնում է անվավեր փաստաթուղթ և, որպես հետևանք, Պատվիրատուն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, այսինքն պայմանագիրը կնքվել է սահմանված կարգին համապատասխան:

**8.** Ինտերնետ կապի, բջջային կապի ծառայությունները և վառելիքի ձեռքբերման գնման ընթացակարգերը կազմակերպվել են Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, որի դեպքում չեն նախատեսվում ֆինանսական միջոցներ: Հետևաբար չեր կարող լիներ հաստատված և հրապարակված գնումների պլան:

9. Ծրագրային ապահովման ծառայությունների ձեռքբերման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ 17/1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ սույն թվականի հունիսին կատարվել է գնման պլանի փոփոխություն և ՇՀ գնման ձևը փոխվել է ԳՀ-ով և նվազեցվել են ֆինանսական միջոցները:
Գնահատող հանձնաժողովի նիստի օրվա և հրամանի օրերի տարբերությունը հետևանք է Mulberry համակարգի չաշխատելու՝ ինչի հետևանքով 12.06.2017թ.-ի հրամանը թվագրվել է 13.06.2017թ.: Մասնակցի մասնագիտական փորձառության վերաբերյալ փաստաթղթեր ներկայացվել են մասնակցի կողմից:
10. Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման ՇՀԾՁԲ 15/3 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-17 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ գնման ընթացակարգն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, որ վերանորոգման ծառայությունների դեպքում մասնակիցների կողմից ներկայացվում է գնային առաջարկ նախատեսված ծառայությունների յուրաքանչյուր միավորի համար առանձին գին (գնացուցակ)՝ ինչը կարող է կազմել նախատեսված ֆինանսական միջոցներից պակաս կամ ավել, սակայն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կնքվում է պայմանագիր նախատեսված ֆինանսական միջոցների չափով, քանի որ նախօրոք հնարավոր չէ կանխատեսել թե քանի սարքավորում շարքից դուրս կգա և ինչ սպասարկում պետք է իրականացվի:
11. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Սասունասար ՍՊԸ-ի հայտը մերժվել և մերժման հիմքերն ու արձանագրությունները ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն և հրապարակվել են Կարգով սահմանված պաշտոնական կայքում: Նամենասեդ ՍՊԸ-ի հայտի մերժման համար հիմք է հանդիսացել գործող օրենսդրությամբ սահմանված դրույթները, ինչպես նաև գնումների բողոքարկման խորհրդի կողմից ընդունված նախադեպային որոշումը: Տեղեկացնեմ նաև, որ վերոնշյալ գնման գործընթացը չի հաշվառվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և այն **լուծարվել է:**
12. Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռք բերման ՇՀԾՁԲ-15/3 ՀՀԳՆ ՍԱՊԾ-17-1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ վերանորոգման ծառայությունների դեպքում մասնակիցների կողմից ներկայացվում է գնային առաջարկ նախատեսված ծառայությունների յուրաքանչյուր միավորի համար առանձին գին

(գնացուցակ)՝ ինչը կարող է կազմել նախատեսված ֆինանսական միջոցներից պակաս կամ ավել, սակայն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կնքվում է պայմանագիր նախատեսված ֆինանսական միջոցների չափով, քանի որ նախօրոք հնարավոր չէ կանխատեսել թե քանի ավտոմեքենա շարքից դուրս կգա և ինչ սպասարկում պետք է իրականացվի:

**13.** Տպագրական աշխատանքների ձեռք բերման ՇՀԱՇՁԲ-15/4-2 ՀՀ ԳՆՍԱՊԾ-17 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք, որ և գնումների պլանում և գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրության մեջ նախահաշվային գինը ներկայացված է եղել մեկ թվով և գնման գործընթացը կազմակերպվել է համապատասխանաբար մեկ չափաբաժնով, որի տեխնիկական բնութագրեր մասում նշվել են առանձին ենթաբաժիններ ինչը թույլ է տալիս գործող օրենսդրությունը, իսկ վճարման պահանջագրի վրա դրված ամսաթվի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն սխալմամբ դրվել է մասնակիցների կողմից: <<Վճարահաշվարկային գործառնությունների փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները սահմանելու մասին>> ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.01.1999թ. թիվ 09 որոշմամբ հաստատված <<վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների>> 3-րդ կետով սահմանված է, որ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է, սակայն նշված չէ ում կողմից է դա իրականացվում, իսկ հրավերում նշված է, որ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից, սակայն չկա որևէ դրույթ վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դառնում է անվավեր փաստաթուղթ և, որպես հետևանք, Պատվիրատուն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, այսինքն պայմանագիրը կնքվել է սահմանված կարգին համապատասխան:

14. Տպագրական աշխատանքների ձեռք բերման ՇՀԱՇՁԲ-15/4-2 ՀՀ ԳՆՍԱՊԾ-17-1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք, որ և գնումների պլանում և գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրության մեջ նախահաշվային գինը ներկայացված է եղել մեկ թվով և գնման գործընթացը կազմակերպվել է համապատասխանաբար մեկ չափաբաժնով, որի տեխնիկական բնութագրեր մասում նշվել են առանձին ենթաբաժիններ ինչը թույլ է տալիս գործող օրենսդրությունը, իսկ վճարման պահանջագրի վրա դրված ամսաթվի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն սխալմամբ դրվել է մասնակիցների կողմից: <<Վճարահաշվարկային գործառնությունների փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները սահմանելու մասին>> ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.01.1999թ. թիվ 09 որոշմամբ հաստատված <<վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների>> 3-րդ կետով սահմանված է, որ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է, սակայն նշված չէ ում կողմից դա իրականացվում, իսկ հրավերում նշված է, որ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից, սակայն չկա որևէ դրույթ վճարման պահանջագրում պայմանագրի կնքման ամսաթիվ նշելով այն դառնում է անվավեր փաստաթուղթ և, որպես հետևանք, Պատվիրատուն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, այսինքն պայմանագիրը կնքվել է սահմանված կարգին համապատասխան:

15. 8-րդ կետի բովանդակությունից հասկանալի չէ թե ինչ թերություններ կան:

**Պետական վերահսկողություն սննդամթերքի անվտանգության բնագավառում պարբերության վերաբերյալ հայտնում ենք.**

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարեկան ստուգումների պլանը/ծրագիրը կազմվում է ելնելով օրենքի 2.1 հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N937-Ն և ՀՀ կառավարության 2012 թվականի N1697-Ն որոշումներով: Մասնավորապես՝ համաձայն օրենքի 2.1 հոդվածի 4-րդ մասի՝ Ծառայությունը յուրաքանչյուր տարվա ստուգումների պլանը կազմում է պահպանելով նշված

օրենքի 4-րդ մասի բոլոր կետերը, (որը հնարավոր է ճշտել յուրաքանչյուր տարվա ստուգումների տարեկան պլանը, հաստատված Ծառայության պետի հրամանով mulberry համակարգում դիտարկելով), իսկ համաձայն օրենքի 2.1 հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերության՝ ստուգում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է օրենքի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը: Բացի նշվածից, համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի <<Ստուգում իրականացնող պետական մարմինների ստուգումների տարեկան ծրագրի օրինակելի ձևը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու մասին>> N937-Ն որոշման 2-րդ կետի՝ ստուգումների պլանի օրինակելի ձևի 8-րդ և 9-րդ սյունակները (նշված սյունակների բովանդակությունը վերաբերում է տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությանը և ստուգման անցկացման ժամանակահատվածին) ենթակա չեն հրապարակման:

Ինչ վերաբերում է նրան, որ ստուգումների տարեկան պլանը կազմելիս չի հաշվարկվում տնտեսավարողների անհատական ռիսկայնությունը, ապա դա կապված է Ծառայությունում մեկ էլեկտրոնային ծրագրային համակարգի գործարկելու հետ, որի համար ներկայումս տարվում են համապատասխան աշխատանքներ 2018 թվականին այն գործարկելու նպատակով:

2. Ծառայության կողմից վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերը ամբողջությամբ չեն լրացնում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների ծավալը՝ որոնց լրացման համար այսօր Ծառայության կողմից իրականացվում են իրավական ակտերի նախագծերի պատրաստում, բայց դրանցում ներառված պահանջները սահմանված են ոչ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նաև ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով: Սա փաստում է, որ Ծառայության կողմից վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերում ներառված պահանջները չեն հակասում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում ներառված պահանջներին, իսկ Մաքսային միության անդամ երկրներում կարող են և պետք է գործեն նաև իրենց օրենսդրությամբ սահմանված պահանջները, եթե դրանք չեն հակասում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Հետևաբար Ծառայության կողմից իրականացված դիտարկումները, դրանց ընթացքում Ծառայության կողմից հայտնաբերված **անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները և կիրառվող սահմանափակումները օրինաչափ են և չեն հակասում օրենսդրությամբ Ծառայությանը վերապահված իրավասություններին:**

3. 3-5-րդ կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 34-րդ կետի՝ սննդի շղթայի բոլոր փուլերում գործառնություն իրականացնող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ **սննդի շղթայի օպերատոր է, այսինքն անկախ այն հանգամանքից սննդի շղթայի որ փուլում էլ տնտեսավարող սյուբեկտը իրականացնի տնտեսական գործունեություն, նա ենթակա է Ծառայության կողմից** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **սահմանված կարգով պետական վերահսկման: Համաձայն** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, դիտարկումը հանդիսանում է Ծառայությանը վերապահված վերահսկողության գործիքներից մեկը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն Ծառայությունը իրականացնում է պետական վերահսկողություն՝ սննդամթերքի արտադրության, մշակման, վերամշակման, ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման, տեղափոխման, պահման, պահպանման, իրացման (վաճառքի), ոչնչացման և օգտահանման փուլերում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործառույթների և պահանջների շրջանակում: Դիտարկումը որպես վերահսկողության գործիք տարբերվում է Ծառայությանը վերապահված մեկ այլ վերահսկողական գործիքից՝ ստուգումից որոշակի առանձնահատկություններով, մասնավորապես դիտարկում

գործիքը տրված է Ծառայությանը որպես արագ արձագանքման գործիք ի տարբերություն ստուգմանը, որը ունի մի շարք սահմանափակումներ դրա իրականացման և ժամկետների առումով, եթե ստուգման ընթացքում վերահսկողություն կարող է իրականացվել ԵԱՏՄ կանոնակարգերով, «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների ամբողջական ծավալի նկատմամբ, իսկ դրա արդյունքում հայտնաբերված խախտումների և անհամապատասխանությունների համար վարչական պատասխանատվության միջոցներ պետք է կիրառվեն, դիտարկման ընթացքում վերահսկողություն է իրականացվում միայն նշված իրավական ակտերով սահմանված սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշմանը, պիտանիության ժամկետին և դրանց պահման պայմաններին վերաբերող հարցերի շրջանակում և դրա արդյունքում հայտնաբերված խախտումների և անհամապատասխանությունների համար վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում:

3. Դիտարկումը Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հանդիսանում է Ծառայությանը վերապահված վերահսկողության գործիք, հետևաբար դիտարկման ընթացքում անհամապատասխանությունները հայտնաբերելու դեպքում Ծառայության կողմից ոչ միայն իրականացվում են **հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցներ՝** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով, այլ նաև կարող են **կիրառվել սահմանափակումներ** Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով, եթե **հայտնաբերված անհամապատասխանությունների առկայության պայմաններում մինչև դրանց վերացումը գոյություն ունի** Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված չափանիշներից որևիցե մեկը, այսինքն հայտնաբերվել է վտանգավոր սննդամթերք, կամ այն կարող է ազդել սննդամթերքի, հումքի կամ փաթեթավորող նյութերի պահման պայմանների վրա, պահման պայմանները, իրենց մեջ ներառում են նաև սննդամթերքի, հումքի և փաթեթավորող նյութերի հետ շփվող հոսքագիծը կամ այլ արտադրական սարքերը, շենքերը կամ սանէպիդ նորմերին չհամապատասխանող արտադրական տարածքները:

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դիտարկումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մշակված, հաստատված և հրապարակված ստուգաթերթով (այսուհետ՝ դիտարկման ստուգաթերթ), Ծառայության կողմից դիտարկման ընթացքում կիրառվող ստուգաթերթերը մշակված, հաստատված և հրապարակված են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, չնայած այն հանգամանքին որ դրանք կիրառվում են նաև ստուգման ընթացքում, քանի որ իրենց մեջ ներառում են սննդամթերքի ոլորտին վերաբերող իրավական ակտերով սահմանված պահանջների ամբողջական ծավալը, դա դեռ չի նշանակում որ դրանք դիտարկման ընթացքում կիրառելը Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է, քանի որ դիտարկման հրամանում միայն նշվում է դիտարկում իրականացնելու համար նախատեսված ստուգաթերթերի այն կետերը, որոնք առնչվում են միայն սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշմանը, պիտանիության ժամկետին և դրանց պահման պայմաններին ներկայացվող պահանջները: Այսինքն անիմաստ է ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել մի ձևաթուղթ, որն արդեն իսկ գոյություն ունի, նամանավանդ ստուգաթերթերում նախատեսված է սյունյակ, որում նշվում են տվյալ վերահսկողական շրջանակում չպահանջված կետերի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. Օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելելու նպատակով ժամանակավորապես արգելվել են., 2015թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից, Թուրքիայի Հանրապետությունից, 2016թ. Իրանի Իսլամական Հանրապետության մի շարք նահանգներից, և 2017թ. Ուկրաինայի Հանրապետության մի շարք մարզերից՝ կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը, 2016թ. Ուկրաինայի Հանրապետությունից կենդանի խոզերի, նրանց գենետիկական նյութերի, խոզի մսի և այլ սննդային մսային հումքի, վայրի խոզի մսի, իրենց բաղադրության մեջ խոզի միս պարունակող պատրաստի արտադրանքների, եղջյուրակճղակային, կաշվե, աղիքային հումքի, խոզաստևի, որսորդական հաղթանշանների, խոզերի կերակրման համար բոլոր տեսակի կերերի և լրացակերերի (բացառությամբ սինթետիկ և քիմիական նյութեր պարունակող լրացակերերի), ներմուծումը: 2017 թվականին Լեհաստանի Հանրապետությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և Իրանի Իսլամական Հանրապետության Ղազվին նահանգում արձանագրված բարձր ախտածին թռչնի գրիպ հիվանդության վերացման վերաբերյալ **Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE) պաշտոնական կայք էջում հրապարակված տեղեկատվության հիման վրա** վերոնշյալ տարածքներից կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծման ժամանակավոր արգելքները հանվել են:
5. Հայտնում ենք, որ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել **«Անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող** անձանց համար ստուգաթերթը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1679-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության **որոշումների նախագծերը, որով սահմանվում է** անասնաբուժության բնագավառում իրականացվող ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:
6. (Հանձնարարագիր 38-17) Ծառայության պետի կողմից կայացվել է արտադրական գործունեության առանձին գործառույթի կասեցումը վերացնելու մասին որոշում, որը ծանուցվել է տնտեսավարողին փոստային առաքման եղանակով, իսկ փաստաթղթաշրջանառությունը իրականացվել է Mulberry համակարգի միջոցով:

   Վերահսկիչ պալատի ներկայացուցիչների կողմից նշված դիտողությունների 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ առարկություններ չկան: Տեղեկացնում եմ նաև, որ ստուգում իրականացնող խմբի ղեկավար տեսուչն աշխատանքից ազատվել է և պատշաճ հիմնավորում գործի թերությունների վերաբերյալ չենք կարող ներկայացնել:
7. (Հանձնարարագիր 116-17)

   Ստուգման ընթացքում ներկայացվել է սննդամթերքի և սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգությունը հավաստող հավաստագրերը, սանիտարական և պահման պայմանների խախտում չի արձանագրվել հետևաբար նմուշառման և լաբորատոր փորձաքննության կարիք չի առաջացել: Ինչ վերաբերվում է պարտադիր բուժ. զննության գրքույկներին ապա դա վատ պատճենահանման հետևանք է:
8. (Հանձնարարագիր 384-17)

   • ստուգման պահին առկա են եղել կարգադրագրում նշված անհայտ ծագման ապրանքների անվտանգությունը հավաստող փաստաթղթերը, սակայն բացակայել է մակնշումը, որը մատակարարի կողմից ստուգման ընթացքում վերացվել է՝ պիտակավորելու միջոցով:

   • քանի որ Ընկերությունը գործում է որպես հանրային սննդի կետ (բուֆետ), իսկ ստուգումն իրականացվել է ուսումնական տարվա ավարտին՝ 19.06.2017-30.06.2017 ընկած ժամանակահատվածում, բուֆետը գտնվում էր գործունեության դադարեցման փուլում և

սպասարկվում էր միայն մեկ աշխատակցի կողմից, ում սանգրքույկը ստուգման պահին ուժի մեջ էր: Մյուս աշխատակիցները պետք է ենթարկվեին բժշկական զննությունների ուսումնական տարվա սկզբին:

• գործում առկա են տվյալ պահին առկա արտադրատեսակների անվտանգությունը հավաստող փաստաթղթերը: Իսկ կենդանական ծագման մթերքի վերաբերյալ հայտնում եմ, որ իրականացվել է անասնաբուժասանիտարական փորձաքննություն, որը փաստում է ԱՍՓ պայմանագիրը:

9. (Հանձնարարագիր 477-17)

• ստուգման ընթացքում տրված կարգադրագրի պահանջների կատարման վերաբերյալ կազմակերպության կողմից տեղեկատվություն Ծառայությանը չի ներկայացվել, ուստի ռուսերեն պիտակները չէին կարող գործում առկա լինել: Քանի որ վարչական վարույթի քննությունը տեղի է ունենալու 2018 թվականի հունվարի 11-ին, քննության շրջանակներում կբացահայտվի կազմակերպության կողմից կարգադրագրի կատարման, չտեղակացման կամ չկատարման փաստը:

• ստուգաթերթի տեղեկատվական մասում տեղեկատվությունը երկրորդ էջում ամբողջապես լրացված չէ, քանի որ տեղեկատվական բնույթի հարցերը կրկնվում են առաջինում:

• ստուգման ընթացքում հում-ապխտած հավի կրծքամիս չի տրվել լաբորատոր փորձաքննության: Գործում առկա հում-ապխտած հավի կրծքամսի նմուշը տնտեսավարողը տվել է իր նախաձեռնությամբ, ստուգումից առաջ՝ ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ–ի հետ ունեցած պայմանագրի շրջանակներում, որի ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունից հետո տվյալ արտադրատեսակի արտադրությունը դադարեցվել է և ստուգման ժամանակ արդեն իսկ չի եղել արտադրությունում:

10. (Հանձնարարագիր 454-17)

• ստուգման գործի մեջ չկան որոշ անվտանգությունը հավաստող փաստաթղթեր, քանի որ այդ քանակությամբ փաստաթղթեր հնարավոր չէ ներառել գործի մեջ, փաստաթղթերը դրվում են ընտրանքային, մյուս փաթեթները պահվում են տեսուչների մոտ: Քանի որ գործի ուսումնասիրությունը վերահսկիչ պալատի ներկայացուցիչների կողմից չի կատարվել Ծառայության աշխատակազմի Երևանի կենտրոնի տեսուչների ներկայությամբ, փաստաթղթերը չեն ներկայացվել, թեև առկա են եղել և չեն պահանջվել:

• Հումքի մակնշումները դաջված են պարկերի կամ արկղերի վրա, որոնք հնարավոր չէ կցել գործին:

11. (Հանձնարարագիր 6-Ա)

• ստուգման ընթացքում կատարվել է նմուշառում և տրվել լաբորատոր փորձաքննության, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Հետևաբար, վերստուգման ընթացքում կրկնակի լաբորատոր փորձաքննության անհրաժեշտություն չի եղել:

12. (Հանձնարարագիր 150-17)

Ստուգում իրականացնող տեսուչների կողմից կատարված ստուգման ընթացքում ուսումնասիրվել է արտադրական գործընթացը և տնտեսվարողի կողմից թողարկվող արտադրանքի տեսականու պարբերաբար լաբորատոր փորձարկման արձանագրությունները, որոնց մեջ եղել է նաև տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումով լաբորատոր փորձարկման արձանագրություն, որը շտկելու համար ընկերության կողմից կատարվել են համապատասխան աշխատանքներ և ներկայացվել նոր փորձաքննության՝ համաձայն լաբորատոր փորձարկման արձանագրության, արտադրանքը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, հետևաբար կրկնակի փորձաքննության կարիք չի առաջացել:

13. (Հանձնարարագիր 638-Ա)

• սահմանային մոնիթորինգի ընթացքում հայտնաբերվել է միայն մանրէաբանական ԱՑԽՄ ցուցանիշի անհամապատասխանություն, հետևաբար, Երևանի կենտրոնի կողմից վերահսկողություն իրականացվել է տվյալ ցուցանիշի նկատմամբ:

իրականացվել է օգտահանում, տրվել է փորձնական արտադրանք, որի անվտանգությունը հավաստում է լաբորատոր փորձաքննությունը: Օգտահանման ակտը չի գտնվում գործի մեջ, քանի որ Երևանի կենտրոնի կողմից իրականացված ոչնչացման և օգտահանման ակտերը պահվում են առանձին փաթեթներով, որը նույնպես չի պահանջվել վերահսկիչ պալատի ներկայացուցիչների կողմից:

**Սահմանային պետական վերահսկողություն պարբերության վերաբերյալ հայտնում ենք.**

2017 թվականի փետրվար ամսին 3 տնտեսվարողներ՝ բրազիլական ընկերությունից Հայաստանի Հանրապետություն ներմուծված թռչնամսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի սահմանային հսկիչ կետի աշխատակիցներն (այսուհետ՝ Աշխատակից) ապրանքի ռիսկայնության գնահատման համակարգ են մուտքագրում տնտեսվարողի կողմից ներկայացված փաստաթղթերը: Եթե խմբաքանակի ընդհանուր ռիսկայնության միավորը 56-80, ապա բեռը համարվում է միջին ռիսկայնության և լաբորատոր փորձաքննությունը պարտադիր չէ: Տեղեկանքում նշված երեք տնտեսվարողներից մեկն է ներկայացրել բեռն ուղեկցող փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

2017 թվականի փետրվար ամսին ՓԲԸ-ն բրազիլիայից ներմուծված 25 տոննա խոզի մսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ ներկայացվել է արտադրողի խոզի մսի BRC սերտիֆիկատը: Քանի որ բեռի խմբաքանակի ընդհանուր ռիսկայնության միավորը 56-80 միջակայքում է, բեռը համարվել է միջին ռիսկայնության և լաբորատոր փորձաքննությունը պարտադիր չէ:

2017 թվականի ընթացքում ՍՊԸ-ի կողմից բրազիլիաից ներմուծված 9 խմբաքանակ հավի մսի (ընդամենը 228973 կգ) վերաբերյալ պարզաբանում ենք, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման հայտ առանձին գործարք է, տնտեսավարող սուբյեկտը մի դեպքում ներկայացրել է BRC սերտիֆիկատի պատճենը, մյուս դեպքում՝ ոչ: Քանի որ բեռի խմբաքանակի ընդհանուր ռիսկայնության միավորը 56-80 միջակայքում է, բեռը համարվել է միջին ռիսկայնության:

2017 թվականի ապրիլի 2-ին ՍՊԸ-ի կողմից ուկրաինական ընկերությունից ներմուծված 15 տոննա սառեցրած հավի վերաբերյալ պարզաբանում ենք, քանի որ բեռի ռիսկայնություն գնահատվել է միջին ռիսկայնության, ուստի տրամադրվել է անասնաբուժական սերտիֆիկատ միաժամանակ բեռն ուղարկվել է լաբորատոր փորձաքննության: Բացասական պատասխանի դեպքում տնտեսվարողը պահեստային նմուշը հանձնել է այլ հավատարմագրված լաբորատորիա և ներկայացրել է դրական պատասխան:

2016 թվականի հոկտեմբերի 26-ին ՍՊԸ-ի կողմից ԱՄԷ-ից ներմուծված 8 տեսակ ընդեղենի վերաբերյալ պարզաբանում ենք, որ բեռն ըստ ռիսկայության գնահատվել է միջին ռիսկայնության և տրամադրվել է սերտիֆիկատ միաժամանակ «լրացուցիչ նշումներ» տողում նշվել է, որ իրացումը թույլատրվում է միայն լաբորատոր փորձաքննության դրական պատասխանի դեպքում: Մեկ նմուշի բացասական պատասխանի դեպքում այցելություն է կատարվել տնտեսվարողի պահեստ: Նույնականացվել է տվյալ ապրանքատեսակի խմբաքանակը և Աշխատակցի ներկայությամբ տնտեսվարողի կողմից ոչնչացվել է:

2017 թվականի փետրվարի 9-ին ՓԲԸ-ի կողմից Բրազիլիայից ներկրված թռչնամսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ բեռի ռիսկայնությունը գնահատվել է միջին ռիսկայնության և տրամադրվել է անասնաբուժական սերտիֆիկատ միաժամանակ «լրացուցիչ նշումներ» տողում նշվել է, որ իրացումը թույլատրվում է միայն լաբորատոր փորձաքննության դրական պատասխանի դեպքում:

2017 թվականի ՍՊԸ-ի կողմից ամերիկյան ընկերությունից ներմուծված 102 տոննա հավի սառեցրած մսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ տնտեսվարողի կողմից BRC սերտիֆիկատ չի

ներկայացվել Ծառայություն, բեռի ռիսկայնությունը գնահատվել է միջին ռիսկայնության և ուղարկվել է լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր փորձաքննության պատասխանի հիման վրա տրամադրվել է անասնաբուժական սերտիֆիկատ:

2016 թվականի նոյեմբերի 19-ին ՍՊԸ-ի կողմից ուկրաինական ընկերությունից ներմուծված 19800 կգ հավի մսի, 2016թվականի նոյեմբերի 8-ին ԱՁ-ի կողմից Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված 100 կգ կարագի, 2017 թվականի հուլիսի 2-ին ՍՊԸ-ի կողմից բելգիական ֆիրմայից ներմուծված հավի աղացած մսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ նշված արտադրողների նմանատիպ արտադրանքների ներմուծման ժամանակ Աշխատակիցների կողմից որոշակի ժամանակ և ապրանքային խմբաքանակներ ուղարկվել են լաբորատոր փորձաքննության, մասնավորապես, 24.11.16թ., 02.12.16թ., 17.12.16թ., 19.12.16թ., 21.12.16թ. ուկրաինական ընկերությունից ներմուծված արտադրանքները և 07.07.17թ., 18.07.17թ., 24.07.17թ., 15.08.17թ., 24.08.17թ. բելգիական ֆիրմայից ներմուծված արտադրանքները:

Սահմանին ըստ ներկայացվող փաստաթղթերի բեռի ռիսկայնության որոշման հիման վրա Աշխատակցի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ պարզաբանում ենք, որ վարորդների մոտ բեռն ուղեկցող փաստաթղթերի բնօրինակների բացակայության կամ ոչ ամբողջական փաթեթը ներկայացնելու կամ բեռի մաքսազերծումը Երևան քաղաքում իրականացնելու, ինչպես նաև սահմանային հսկիչ կետում զննման պայմանների բացակայության պատճառով բեռների ներմուծման ժամանակ սահմանային հսկիչ կետերում տրամադրվում է ներմուծումը կասեցնելու մասին կարգադրագիր:

2017 թվականի հունվարի 20-ին ՍՊԸ-ի կողմից բրազիլական ընկերությունից ներմուծված հավի սառեցրած թևերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N1142-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի՝ բեռից նմուշառման ժամանակ Աշխատակիցը վերցնում է 2 նմուշ: Մեկը ուղարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ մյուսը որպես պահեստային նմուշ ի պահ է հանձնվում ապրանքը տնօրինողին: Ուստի, տնտեսվարողի կողմից լաբորատոր փորձաքննության ներկայացվել է պահեստային նմուշը:

2016 թվականի նոյեմբերի 13-ին ՍՊԸ-ի կողմից ուկրաինական ընկերությունից ներմուծված աղացած հավի մսի վերաբերյալ պարզաբանում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N1142-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի բեռից նմուշառման ժամանակ Աշխատակիցը վերցնում է 2 նմուշ: Մեկը ուղարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ մյուսը որպես պահեստային նմուշ ի պահ է հանձնվում ապրանքը տնօրինողին: Ուստի, տնտեսվարող սուբյեկտի կողմից լաբորատոր փորձաքննության ներկայացվել է պահեստային նմուշը:

2017 թվականի հունվարի 24-ին ՍՊԸ-ի կողմից ուկրաինական ընկերությունից ներմուծված 21,8 տոննա սառեցրած հավի մսի և 1,5 տոննա սառեցրած հավի թևի վերաբերյալ պարզաբանում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N1142-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի բեռից նմուշառման ժամանակ Աշխատակիցը վերցնում է 2 նմուշ: Մեկը ուղարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ մյուսը որպես պահեստային նմուշ ի պահ է հանձնվում ապրանքը տնօրինողին: Ուստի, տնտեսվարող սուբյեկտի կողմից լաբորատոր փորձաքննության ներկայացվել է պահեստային նմուշը:

2017 թվականի մայիսի 8-ին ՍՊԸ-ի կողմից իրանական ընկերությունից ներմուծված 2 խմբաքանակ յոդացված աղի վերաբերյալ պարզաբանում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N1142-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի բեռից նմուշառման ժամանակ Աշխատակիցը վերցնում է 2 նմուշ: Մեկը ուղարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ մյուսը որպես պահեստային նմուշ ի պահ է հանձնվում ապրանքը

տնօրինողին: Ուստի, տնտեսվարողի կողմից լաբորատոր փորձաքննության ներկայացվել է պահեստային նմուշը:

**Բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն**

Բուսասանիտարիայի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն բույսերի կարանտին է հայտարարվում կարանտին օրգանիզմից զերծ գոտում կարանտին վնասակար օրգանիզմով վարակվածություն հայտնաբերվելու դեպքում:

Վերահսկիչ պալատի կողմից նշված բոլոր կարանտին օրգանիզմները ՀՀ տարածքում առկա են եղել մինչև Ծառայության ստեղծվելը: Դրանցից որոշները ունեն սահմանափակ տարածում իսկ որոշները տարածված են ամբողջ հանրապետությունով: Ֆիլոքսերա վնասատուն համարվում է սահմանափակ տարածված:

2016-2017 թվականներին իրականացված բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքում միայն ֆիլոքսերա կոչվող կարանտին վնասատուն է հայտնաբերվել ֆիլոքսերայից զերծ գոտում: ՀՀ կառավարության 08.01.2009 թ. N 8-Ն որոշման համաձայն խաղողի մշակության ֆիլոքսերազերծ տարածաշրջաններն ընդգրկում էին Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական տարածքները: Սակայն սկսած 2009 թվականից ՀՀ Արմավիրի մարզում ֆիլոքսերայի վարակվածություն նկատվեց: Վարակված տարածքներում իրականացվեցին կարանտին միջոցառումներ, որոնք հաստատված են ՀՀ կառավարության 03 դեկտեմբերի 2009 թվականի N 1443-Ն, 28 փետրվարի 2013 թվականի N 265-Ն, 27 փետրվարի 2014 թվականի N 189-Ն, 30 հունվարի 2015 թվականի N 92-Ն որոշումներով: Չնայած այն հանգամանքին, որ նշված տարիներին մարզի տարածքներում իրականացվեցին այգիների քանդման և կարանտին գործողություններ, այնուամենայնիվ 2016 թվականի բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերը ամբողջությամբ վարակված են ֆիլոքսերայով: Նշված մարզերում հետագայում կարանտին հայտարարելու և վարակված այգիների քանդման հարցի գիտական և մասնագիտական բազմակողմանի քննարկման արդյունքում ՀՀ կառավարության կողմից որոշում կայացվեց ոչ թե կարանտին հայտարարել և նշված մարզերի խաղողի այգիները քանդել և այրել այլ ՀՀ Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերը սահմանել ֆիլոքսերայով վարակված գոտիներ, որը ընդունվեց ՀՀ կառավարության 23.06.2017 թ. N 746-Ն որոշմամբ: Նշված որոշմամբ նաև հնարավորություն ստեղծվեց այդ մարզերում հիմնել խաղողի այգիներ՝ ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալներով, որոնք չեն տուժում ֆիլոքսերա վնասատուից:

**Անասնաբուժության ոլորտում պետական վերահսկողություն պարբերության վերաբերյալ հայտնում ենք.**

2017 թվականի մարտի 9-ին հաստատվել է «Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 10 արձանագրային որոշումը, համաձայն որի 2017թ. մայիսի 1-ից սպանդանոցային ծագման մսի ձեռքբերումը իրականացվել է պետական գնումներով, նոյեմբերի 1-ից՝ մսամթերքի արտադրություն (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում) և տեղական արտադրության սպանդանոցային ծագման մսի արտահանումը, իսկ 2018թ. հուլիսի 1-ից հանրապետության ողջ տարածքում (հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում և իրացման կետերում) տեղական միսը կունենա սպանդանոցայի ծագում: Սպանդային ծագման մսի ձեռքբերման կանոնակարգման և դաշտում պատշաճ հսկողությունն ապահովելու նպատակով Ծառայության նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել է անասնաբուժական հսկողության N5 անասնաբուժական վկայականի ձևը՝ սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի և հումքի՝ հանրապետության տարածքով փոխադրման և իրացման համար: Ծառայությունը ապահովել է N 5 ձևի անասնաբուժական վկայականների տպագրումը և Ծառայության աշխատակազմի մարզային կենտրոնների միջոցով դրանց բաշխումը գործող սպանդանոցներին: Մշակվել և Ծառայության պաշտոնական կայքում

տեղադրվել է «Սպանդանոցներին ներկայացվող պահանջները»: Միաժամանակ տեղեկացվում է, որ համաձայն «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի դրույթների բակային մորթը արգելված չի:

Ինչ վերաբերվում է կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման համակարգի և կենդանիների տեղաշարժի մեխանիզմի բացակայությանը, հայտնում եմ, որ 2017թ. սկզբից Ծառայությունը Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի (CARD) հետ համատեղ մշակել է «Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման, գրանցման և անձնագրավորման ծրագիրը և դրա իրականացման քայլերի» ժամանակացույցը, որը հավանության է արժանացել «Ավստրիական զարգացման գործակալության» կողմից: Ծրագրի հետագա իրականացման ու ֆինանսավորման հետ կապված հարցերը գտնվում են քննարկման փուլում:

Օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելելու նպատակով ժամանակավորապես արգելվել են., 2015թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից, Թուրքիայի Հանրապետությունից, 2016թ. Իրանի Իսլամական Հանրապետության մի շարք նահանգներից, և 2017թ. Ուկրաինայի Հանրապետության մի շարք մարզերից՝ կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը, 2016թ. Ուկրաինայի Հանրապետությունից կենդանի խոզերի, նրանց գենետիկական նյութերի, խոզի մսի և այլ սննդային մսային հումքի, վայրի խոզի մսի, իրենց բաղադրության մեջ խոզի միս պարունակող պատրաստի արտադրանքների, եղջյուրակճղակային, կաշվե, աղիքային հումքի, խոզաստևի, որսորդական հաղթանշանների, խոզերի կերակրման համար բոլոր տեսակի կերերի և լրացակերերի (բացառությամբ սինթետիկ և քիմիական նյութեր պարունակող լրացակերերի), ներմուծումը: 2017 թվականին Լեհաստանի Հանրապետությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և Իրանի Իսլամական Հանրապետության Ղազվին նահանգում արձանագրված բարձր ախտածին թռչնի գրիպ հիվանդության վերացման վերաբերյալ **Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE) պաշտոնական կայք էջում հրապարակված տեղեկատվության հիման վրա** վերոնշյալ տարածքներից կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծման ժամանակավոր արգելքները հանվել են:

Պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների արդյունավետության, ինչպես նաև հիվանդությունների հնարավոր առկայության, տարածվածության և ներթափանցման ռիսկերը գնահատելու նպատակով 2018թ. միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառվել են դաբաղ և մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդությունների սերոմոնիտորինգի իրականացման աշխատանքները:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել **«Անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող** անձանց համար ստուգաթերթը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1679-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության **որոշումների նախագծերը, որով սահմանվում է** անասնաբուժության բնագավառում իրականացվող ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

**«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.**

Ֆինանսատնտեսական գործունեություն

1. Ծրագրի շրջանակներում ոչ ֆինանսական ցուցանիշների (լաբորատոր փորձաքննություններ) կրճատումը պայմանավորված է պետության կողմից ֆինանսավորման կրճատմամբ, որը մինչև 2017 թվականը կրել է շարունակական բնույթ: Անասնահամաճարակային իրավիճակի և հիվանդությունների լիարժեք հսկողության համար անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որը ներկայացվել է տվյալ տարվա բյուջետային հայտով, սակայն Բյուջեի սղության պատճառով ներկայացված ֆինանսավորման չափը շարունակաբար կրճատվել է:

2. ՊՈԱԿ-ի և ՍԱՊԾ-ի միջև 07.03.2016 թվականին կնքված ԴՄՇ ՀՀ ՍԱՊԾ-16-2 պայմանագրով չնախատեսված փորձաքննությունների կատարումը պայմանավորած է եղել օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Ինչ վերաբերում է հարկերի վճարմանը, ապա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ից 18-ն իրականացված ստուգումների արդյունքում նշված խախտումներն արձանագրվել են, և ՊՈԱԿ-ը առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունները պարտավորվել է վերականգնել պետական բյուջե:

3. 2017 թվականին տեսչական ստուգումների շրջանակներում լաբորատոր փորձաքննություններն ՊՈԱԿ-ն իրականացրել է օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով, իր արտաբյուջետային միջոցների հաշվին, համաձայն «Պ**ետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ԳՆ ՍԱՊԾ պետի գրավոր հանձնարարականի հիման վրա, որն օրինաչափ է, քանի որ համաձայն «Պ**ետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը սույն հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները վերապահել է լիազորված պետական մարմնին՝ ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ին, «Պ**ետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ն իրականացնում է ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար: Ինչ վերաբերում է 7,128.5 հազ. ՀՀ դրամ գումարի չափով մատուցված ծառայություններին, ապա դրանք ՊՈԱԿ-ի կողմից ստացել են համապատասխան հաշվապահական ձևակերպում (հարկային հաշիվներ դուրս չեն գրվել համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի), իսկ հարկային պարտավորությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ից 18-ն իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են և ՊՈԱԿ-ի կողմից ստանձնել է դրանց կատարման պարտավորվածությունը:

4. 2016թ դեկտեմբեր ամսվա 142 և 2017թ հունվար-փետրվար ամիսներին տրված 279 փորձարկման արձանագրությունների ուսումնասիրությունների արդյունքում պարզված մանրէաբանական ցուցանիշներով փորձաքննված մոտ 40 նմուշներից որոշների փորձարկման տևողության մասին խախտումները զուտ տեխնիկական սխալմունքի հետևանք է (մաստակ՝ 21.12.2016-21.12.2016 (իրականում պետք է լինի 21.12.2016-26.12.2016թ, որը ակնհայտ երևում է մանրէաբանական հետազոտությունների բաժնի աշխատանքային գրանցամատյաններում), Վարունգ մարինացված՝ 01.12.2016-01.12.2016թ(իրականում պետք է լինի 01.12.2016-05.12.2016թ) որը ակնհայտ երևում է մանրէաբանական հետազոտությունների բաժնի աշխատանքային գրանցամատյաններում ), իսկ մի մասի կարճ տևողությունը հիմնավորվում է փորձարկման մեթոդի պահանջներով՝ ԳOUS 10444.12-88 (արդյունքների նախնական գնահատում երեք օրից և պինդ սննդարար միջավայրում աճի առկայության դեպքում վերջնական գնահատում՝ 5 օրից), ԳOUS 10444.15-94 (արդյունքների գնահատում 72±3 ժամ, իսկ պատասխանը տրվել է 66 ժամից): Հավկիթ – (29.12.2016-30.12.2016) համաձայն փորձարկման արձանագրության մեջ նշված փորձարկման մեթոդի՝ ՄՈՒ 4.2.2578-10 փորձարկումը տևում է 24 ժամ: Նույն մոտեցումը վերաբերում է մյուս կետերին:

Թռչնամսի վերաբերյալ անվտանգության ցուցանիշների գծով արձանագրությունների շեղումների վերաբերյալ հավելենք, որ փորձարկման լաբորատորիան պատասխանատու է միայն ներկայացված նմուշի փորձարկման արդյունքների հավաստիության համար:

5. Պայմանագիրը համարվում է գերատեսչությունների միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագիր, քանի որ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է միջազգային պայմանագիրը կնքելու և նախապատրաստելու ընթացակարգ:

6. Նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը սահմանում է՝

6.1. 5-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կարող է կնքվել՝

6.2. 3-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության նախարարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա պետական կառավարման այլ մարմնի (այսուհետ՝ գերատեսչություններ) անունից, որին օրենքով միջգերատեսչական, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասով միջբանկային պայմանագիր (այսուհետ՝ միջգերատեսչական պայմանագիր) կնքելու իրավասություն է տրված:

7. ՊՈԱԿ-ը հիմք ընդունելով 21.05.2015թ. կնքված պայմանագիրը, ինչպես նաև ՊՈԱԿ-ի և ՍԱՊԾ-ի միչև կնքված 2017թ.-ի հունիսի 07-ի Գույքի Անհատույց օգտագործման պայմանագիր 1-ը, չտեսնելով արգելող որևէ նորմ, գույքը երրորդ անձի օգտագործմանն է հանձնել՝ Փոխատուի համաձայնությամբ և 07.09.2017թ., 26.10.2017թ. ծառայության պետի կողմից տրված գրավոր համաձայնագրերով:

8. «ՎԱԿ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ», «ԷՖ ԴԻ ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ-ների և ՊՈԱԿ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրերում ամրագրված «արտոնյալ» պայմանները վերաբերում են միայն վարձավճարի վճարման ժամկետներին:

9. ՊՈԱԿ-ը 2017 թվականի մայիսի 21-26-ը Փարիզում կայանալիք «Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության 85-րդ տարեկան գլխավոր նստաշրջանին իր գործունեությունը հավուր պատշաճի ներկայացնելու նպատակով, չունենալով համապատասխան որակավորմամբ մասնագետ-փորձագետ, աշխատանքի է ընդունել մեկին, ով ունի ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ազգային փորձագետի որակավորում՝ անասնաբուժական մի շարք հիվանդությունների գծով և ոլորտում աշխատում է սկսած 2006 թվականից:

10. ՊՈԱԿ-ը 2017 թվականի ընթացքում առանց մրցույթի հայտարարման ձեռք է բերել տարբեր տեսակի ծառայություններ և շինարարական աշխատանքներ ֆիզիկական անձանց միջոցով՝ վերջիններիս հետ կնքվելով քաղաքացիաիրավական պայմանագրեր: Նշված մոտեցումը պայմանավորված է ՊՈԱԿ-ի աշխատանքների առավել արդյունավետ, տնտեսապես շահավետ, օպերատիվ և մատչելի կազմակերպմամբ: Հարկ է նշել, որ նմանատիպ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսդրությամբ:

11. 2016-2017թթ համար կնքվել է պայմանագիր ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատի հետ զենք կրելու բացառիկ իրավունքի համար:

12. Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված և հրապարակման ենթակա փաստաթղթերը և հայտարարությունները էլ. փոստով ուղարկվել է վերադաս լիազոր մարմնին: Մի շարք դեպքերում հայտարարությունները դժվար է գտնել տեղեկագրում /gnumner.am կամ old.gnumner.am/, որը մեծ մասամբ պայմանավորված է տեխնիկական անճշտություններով :

13. «Ագրոհշին» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի ծագման երկրի (ԵԱՏՄ) սերտիֆիկատ չի ներկայացվել, քանի որ տվյալ ապրանքը չի հանդիսացել 1 ամբողջական միավոր. Շարժական տնակի մասով սերտիֆիկատը վերաբերվում է վերջինիս առանձին դետալներին, այլ ոչ թե տնակին որպես այդպիսին:

14. Ինչ վերաբերում է հին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի, նոր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի, ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168 որոշման

44-րդ կետի 5-րդ ենթակետի, 45-րդ կետի, 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի և ՀՀ ԿԲ հաստատված «Վճարահաշվարկային գործառույթների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների», դրույթների պահանջների խախտումներին, ապա դրանք բացառապես պայմանավորված են տեխնիկական վրիպումներով, որոնք շտկելի են, և ֆինանսական հետևանքներ չեն ենթադրում:

Ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգերի արդյունքում կնքված համաձայնագրերով լրացուցիչ ծավալների ավելացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ նշված ապրանքների լրացուցիչ ծավալների չներգրավման դեպքում գնման ընթացակարգով ապրանքների հիմնական մասի ձեռքբերումը դառնում է անիմաստ:

# 2.14 ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/5 որոշում: |
| **Վերահսկողության նպատակը** | «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց», «Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ», «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ», «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման արդյունավետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրություն, ՀՀ-ում ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի իրականացման, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների կողմից բյուջետային ծրագրերի, նրանց միջև վերաբաշխումների և պայմանագրային գումարներում կատարված փոփոխությունների, ՀՀ առողջապահության նախարարության և բուժկազմակերպությունների միջև կնքված պայմանագրային գումարների վերաբաշխումների օրինականության և առողջապահության ֆինանսավորման հիմնահարցերի ուսումնասիրություն: Միաժամանակ, վերահսկողության շրջանակներում ընտրանքային կարգով դիտարկմամբ և ստուգմամբ ընդգրկվել են նաև ՀՀ առողջապահության նախարարության առանձին ծրագրերի իրականացման նպատակով ՓԲ ընկերություններին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության ու օրինականության հարցեր: |
| **Վերահսկողության առարկան** | Վերահսկվող ծրագրերի շրջանակներում պետական բյուջեից հատկացված միջոցներ, ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված գործառույթներ և ընթացակարգեր: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ առողջապահության նախարարություն, ներառյալ նախարարության համակարգի կազմակերպություններ (ընտրանքային): |

| | |
|---|---|
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման (ընտրանքային) և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները:<br><br>Դիտարկման փուլում և ստուգման ընթացքում իրականացվել է վերահսկողությամբ ընդգրկված օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, դասակարգում, ռիսկերի գնահատում և վերլուծություն: Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման/համեմատման մեթոդներ, կատարվել են փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրություն, ինչպես նաև առկա տեղեկատվական բազաների համադրումներ:<br><br>Վերլուծության փուլում ամփոփվել, վերլուծվել են դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## 1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Անցած 20 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է առողջապահության բյուջետային միասնական ֆինանսավորման համակարգ, ինչը ենթադրում է կենտրոնացված կարգով՝ հարկերի հավաքագրման միջոցով բյուջեի պլանավորում և ֆինանսական միջոցների բաշխում: 1998 թվականին առողջապահության ֆինասավորման բարեփոխումների շրջանակներում, Համաշխարհային բանկի տեխնիկական և ֆինանսական օժանդակությամբ տարանջատվեցին առողջապահության քաղաքականություն իրականացնողի և ֆինանսավորողի ֆունկցիաները: Ստեղծվեց կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալությունը, որը պետք է իրականացներ առողջապահական ծառայությունների միասնական վճարողի ֆունկցիաներ և որոշ ժամանակ անց իրականացներ պարտադիր բժշկական ապահովագրության ֆոնդի գործառույթներ: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2000 թվականի օգոստոսի 10-ի N 33 որոշմամբ հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգը»: Սակայն, 2002 թվականին պետական առողջապահական գործակալությունը դարձավ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առանձնացված ստորաբաժանում (այսուհետ՝ ՊԱԳ)՝ այսինքն, նորից առողջապահության ոլորտում քաղաքականություն իրականացնողի և ֆինանսավորողի ֆունկցիաները միավորվեցին: Ֆինանսավորումը դեռևս շարունակում է իրականացվել միասնական վճարողի սկզբունքով, սակայն, արդեն որոշումները կայացվում են Նախարարության կողմից:

**1998թ. տարանջատվեցին առողջապահության քաղաքականություն իրականացնողի և ֆինանսավորողի ֆունկցիաները**

**2002թ. Առողջապահության ոլորտում քաղաքականություն իրականացնողի և ֆինանսավորողի ֆունկցիաները նորից միավորվեցին**

**2012թ. Փորձ կատարվեց զարգացնել կամավոր բժշկական ապահովագրությունը**

Չնայած միասնական վճարողի սկզբունքի կիրառմանը 2012 թվականին փորձ կատարվեց զարգացնել կամավոր բժշկական ապահովագրությունը՝ ներդնելով սոցիալական փաթեթի շրջանակներում պետական ծառայողների պարտադիր առողջապահական ծածկույթով ապահովման ծրագիրը: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով պետական ծառայողների աշխատավարձի 10% աճի համար նախատեսված գումարները, ուղղվել են վերջիններիս սոցիալական փաթեթի ծրագրի իրականացմանը, որից առողջության ապահովագրության պարտադիր բաղադրիչի համար նախատեսված միջոցները տրամադրվել են մասնավոր ապահովագրական ընկերություններին:

**2013թ. զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց, փրկարար ծառայության ծառայողների, իսկ 2014թ.՝ պետական ծառայողների համար առողջության ապահովագրության ծառայությունները դուրս բերվեցին սոց. փաթեթի շրջանակներից և այդ գումարները փոխանցվեցին Նախարարությանը**

ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 210-Ն և 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշումներով, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների, իսկ 2014 թվականի մարտի 26-ի N 375-Ն որոշմամբ՝ պետական ծառայողների համար առողջության ապահովագրության ծառայու-թյունները դուրս բերվեցին սոցիալական փաթեթի շրջանակներից և այդ գումարները փոխանցվեցին Նախարարությանը՝ վերոհիշյալ անձանց (սոցիալական փաթեթի շահառուներին) մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի ու մատչելիության, ինչպես նաև, այդ նպատակով պետական բյուջեից հատկացվող միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման համար, ինչը որպես իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունք, հիմք է հանդիսացել վերը նշված որոշման ընդունման համար: Ընդ որում, պետք է փաստել, որ Նախարարությանը փոխանցելուց հետո, ֆինանսավորման ավելի փոքր ծավալների շրջանակներում, ավելացվեցին այս ծրագրերի շրջանակներում սպասարկվող շահառուների թվաքանակը (զինծառայողների և նրանց ընտանիքների մասով որպես շահառուների խումբ ավելացվեցին ժամկետային զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները), վերացվեցին հատուկ և դժվարամատչելի հետազոտություններ, ինչպես նաև թերապևտիկ ծառայություններ տրամադրելու

սահմանափակումները և հանվեց առավելագույն փոխհատուցման շեմը (ապահովագրականների դեպքում գործում էր 3,8 մլն դրամ առավելագույն փոխհատուցման շեմ): Փաստորեն, այս դեպքում, ՀՀ կառավարությունը կարողացավ վերաբաշխել առկա ֆինանսական ռեսուրսները և ուղղել առողջապահական այլ ծրագրերի ֆինանսավորմանը, մինչդեռ ապահովագրական ընկերություններին փոխանցելու դեպքում նման վերաբաշխման հնարավորություն Կառավարությունը չուներ և ավել փոխանցված գումարները մնացին ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ:

**Ավել փոխանցված գումարները մնացին ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ**

ՀՀ կառավարությունը 2017 թվականի հուլիսի 27-ի N 915-Ն որոշմամբ, փոփոխություններ մտցրեց գործող կարգում և սոցիալական փաթեթի շահառուների մասով բյուջետային գումարները միայն 4-րդ եռամսյակի համար շուրջ 945.1 մլն. դրամի չափով (94.4 հազար շահառուի համար) 2017 թվականի հոկտեմբերի 1-ից նորից փոխանցվեց մասնավոր ապահովագրական ընկերություններին: Նախատեսված է, որ հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին պետք է ունենա 90% ուղենշային մակարդակ կամ ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ կմնա 10% (94.5 մլն դրամ):

2018 թվականի փետրվարի 7-ին Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից փաստացի վճարված (հատուցված) գումարը կազմում է 722,1 մլն դրամ, իսկ ապահովագրական ընկերությունների կողմից ընդունված և ճանաչված վճարման հայտերը՝ 836,2 մլն դրամ: Այսինքն, տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ 114,1 մլն դրամը դեռևս փաստացի վճարված չի եղել բժշկական կազմակերպություններին: Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարի հետ համաձայնեցված ապահովագրական ընկերությունների և առողջապահական կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրերի վճարման կարգերի համաձայն, բժշկական կազմակերպությունները, մինչև ընթացիկ ամսվա 20-ը պետք է ներկայացնեն նախորդ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների կատարողական հաշվետվությունները և վճարման հաշիվները, իսկ չներկայացնելու կամ ուշ ներկայացնելու դեպքում կիրառվում են պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցներ: Այսինքն, մինչև 2018 թվականի հունվարի 20-

ը 2017 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների կատարողական հաշվետվությունները և էլեկտրոնային վճարման հաշիվները բժշկական կազմակերպությունների կողմից պետք է ներկայացված լինեին, առավել ևս, որ վերջիններս շահագրգռված են հնարավորինս շուտ ստանալ ծառայությունների դիմաց հատուցումները: Իսկ այդ հաշիվները և կատարողական հաշվետվությունները ապահովագրական ընկերությունների կողմից կարող են մերժվել դրանք ներկայացվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կամ վճարվել հիմգ աշխատանքային օրվա ընթացքում: Հետևաբար անհասկանալի է, թե ինչպես են ձևավորվել ապահովագրական ընկերությունների կողմից ընդունված և ճանաչված վճարման հայտեր 836,2 մլն դրամի չափով, որոնցից 114,1 մլն դրամը փաստացի վճարված չէ առողջապահական կազմակերպություններին համագործակցության պայմանագրով սահմանված վճարման ժամկետներում: Հետևաբար, ելնելով բժշկական կազմակերպություններին ուղղված վճարումների չափից (հատուցում) փաստացի հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին կազմել է 76.4% կամ ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ մնացել է շուրջ 222.9 մլն դրամ՝ 128.4 մլն դրամ ավելի, քան նախատեսված 94.5 մլն դրամը (Աղյուսակ 1):

Մինչդեռ, 2017թ. բոլոր առողջապահական ծրագրերը (67.0 մլրդ դրամ) կառավարելու համար, պետությունը ՊԱԳ-ի վրա ծախսել է շուրջ 360.0 մլն դրամ:

ՊԱԳ-ը հանդիսանում է Նախարարության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, որի նպատակները և խնդիրներն են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կնքված պայմանագրերի համաձայն բժշկական օգնություն իրականացնողների փաստացի կատարված աշխատանքների դիմաց ֆինանսական միջոցների հատկացման կազմակերպումը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ապահովումը:

ՊԱԳ գործառույթներից է պետական պատվերի շրջանակներում բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի կնքման կազմակերպումը, դրանց համապատասխան փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ամփոփումը և սահմանված կարգով ֆինանսական միջոցների հատկացման ապահովումը, ինչպես նաև կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկումը:

*Հարկ է նշել, որ Նախարարության կողմից էլեկտրոնային առողջապահական համակարգում դիտարկման հնարավորություն տրամադրված չլինելու պատճառով ՊԱԳ-ը չի տիրապետում ապահովագրական ընկերությունների կողմից սոց. փաթեթի շահառուների սպասարկման հաշվետվությունների տվյալներին:*

**Աղյուսակ 1**

01.10.-31.12.2017 թվականի ընթացքում սոցիալական փաթեթի ծրագրի շրջանակներում հատուցումների բաշխվածքն ըստ մասնավոր ապահովագրական ընկերությունների[11]

*դրամ*

| | Ընդամենը ապահովագրավճար | Ընդամենը հատուցման ներկայացված կատարողական | Հատուցում/ Ապահովագրավճար հարաբերություն (%) | Ընդամենը ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ մնացած գումար |
|---|---|---|---|---|
| Արմենիա Ինշուրանս ԱՍՊԸ | 52 223 160 | 44 959 150 | 86% | 7 264 010 |
| Ինգո Արմենիա ԱՓԲԸ | 262 698 950 | 197 060 400 | 75% | 65 638 550 |
| Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ | 181 192 680 | 140 470 900 | 77,5% | 40 721 780 |
| Ռեսո ԱՓԲԸ | 47 703 730 | 32 344 200 | 67,8% | 15 359 530 |
| Ռոսգոսստրախ-Արմենի ԱՓԲԸ | 271 896 310 | 206 181 850 | 75,8% | 65 714 460 |
| Սիլ ինշուրանս ԱՓԲԸ | 129 341 250 | 101 057 950 | 78% | 28 283 300 |
| Ընդամենը | **945 056 080** | **722 074 450** | **76,4%** | **222 981 630** |

Հատուցումների ուղենշային ցուցանիշից շեղման պատճառ կարող են հանդիսանալ չհատուցման համար սահմանված այնպիսի բացառությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ բուժօգնության դեպքերի մերժման (չհատուցման) համար: Այսպես, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի թիվ 915-Ն որոշման հավելված 2-ով հաստատված «Սոցիալական փաթեթի

[11] Աղբյուրը՝ Նախարարության կողմից տրամադրված տեղեկանք:

շահառուների՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների փաթեթի» ծրագրի շրջանակներում «Հատուցման բացառությունները» բաժնի կետ 11-ի 9)-րդ ենթակետով սահմանված է, որ առողջության վատթարացումները (բացառությամբ վնասվածքների), որոնք առաջացել են շահառուի կողմից *ալկոհոլի* կամ առանց բժշկի նշանակման դեղերի օգտագործման դեպքում կամ հետևանքով, հատուցման ենթակա չէ: Ուշագրավ է, որ սոցիալական փաթեթի առողջապահական բաղադրիչն ապահովագրական ընկերությունների միջոցով իրականացնելու գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ հաստատված «Առողջության ապահովագրության բազային փաթեթի» «Ապահովագրական հատուցման բացառություններ» բաժնի 12-րդ կետի 28) և 29)-րդ ենթակետերով նույնպես սահմանված էին ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերի, *ալկոհոլիզմի* հետևանքով առաջացած հիվանդությունների դեպքում չհատուցման պայմաններ, որոնք իրենց ուժը կորցրել են ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման հաստատումից հետո, երբ սոցիալական փաթեթի ծրագրի առողջության ապահովագրության բաղադրիչը սկսեց իրականացվել Նախարարության կողմից: *Ուստի, 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մասնավոր ապահովագրական ընկերությունների միջոցով իրականացվող սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության իրականացման ընթացքում նման բացառությունների սահմանումը կարող է ունենալ իր ազդեցությունը բուժօգնության դեպքերի մերժումների (չհատուցումների) քանակի վրա:*

## 2. «ԴԺՎԱՐԱՄԱՏՉԵԼԻ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառված է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ենթակա ծառայությունների ցանկում:

Ուսումնասիրվող ծրագրով 2015, 2016 և 2017 թվականների պետական բյուջեի ծախսերը պլանավորվել են յուրաքանչյուր տարվա համար 514,562.9 հազ. դրամի չափով, 2015 թվականի ճշգրտված բյուջեն կազմել է 676,737.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 664,981.5 հազ. դրամ, կամ 98.2%, 2016 թվականի ճշգրտված բյուջեն կազմել է 616,823.2 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 578,711.0 հազ. դրամ կամ 93.8%, իսկ 2017 թվականի ճշգրտված բյուջեն կազմել է 525,147.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 521,294.0 հազ. դրամ կամ 99.2%:

- 2015, 2016 և 2017 թվականներին Նախարարության կողմից Ծրագրի իրականացման համար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքվել համապատասխանաբար՝ թվով 32, 40 և 32 կազմակերպությունների հետ, որոնցից թվով 6-ին բաժին է ընկել կատարված աշխատանքի շուրջ 54.1, 60.8 և 60.5 տոկոսը (համապատասխանաբար՝ 2015, 2016 և 2017 թվականներ), իսկ ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար՝ 54.2, 58.3 և 60.7 տոկոս:

- Ծրագրի շրջանակներում ՊԱԳ ամսական հաշվետվություններով ներկայացված «Գլխուղեղի ախտորոշիչ անգիոգրաֆիա» հետազոտության (ծառայության կոդը՝ 0707116) տեսակը ներառված է ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների տրամադրման չափորոշիչը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 53-Ն հրամանում, սակայն ՀՀ առողջապահության նախարարի

2017 թվականի հունվարի 27-ի «2017 թվականին բնակչութանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման, առողջապահական հարակից ծառայությունների «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի նորմատիվները և միջինացված գները հաստատելու մասին» թիվ 146-Ա հրամանի հավելվածի դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում ներառված չէ: Նշենք, որ տվյալ հետազոտությունը ՀՀ առողջապահության նախարարի 2015 և 2016 թվականների համապատասխան հրամանների դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում ներառված եղել է, այդ իսկ պատճառով վերահսկողությամբ անդրադարձ է կատարվել միայն 2017 թվականի կտրվածքով:

ՊԱԳ ամսական հաշվետվություններով ներկայացվել են մի շարք ախտորոշիչ հետազոտությունների տեսակներ, որոնք ներառված չեն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 53-Ն հրամանով հաստատված ցանկում: Մասնավորապես՝ «Ալֆա-ֆետոպրոտեինի որոշում» հետազոտության դիմաց (ծառայության կոդը՝ 0901601), որը դասվում է կենսաքիմիական (բիոքիմիական) հետազոտությունների շարքին, Նախարարությունն Ծրագրի շրջանակներում իրականացրել է ֆինանսավորում՝ մեկ հետազոտության համար 3000 դրամի չափով:

- Կազմակերպությունների կողմից ներկայացված կատարողականներում ներառվել են «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի հետազոտություններ, սակայն պատվիրատուն վերը նշված կատարողականների դիմաց իրականացրել է ֆինանսավորում Ծրագրի շրջանակներում: Արդյունքում **խախտվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի** «Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և

ֆինանսավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 28-ի N 517 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **թիվ 806-Ն որոշմամբ սահմանված պահանջը**: Վերոնշված որոշման 1-ին կետով սահմանված է, որ *սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող* զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար սույն որոշման N 2 հավելվածում ներկայացված փաթեթի մասով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը *ֆինանսավորվում են* «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի *«Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում Նախարարությանը հատկացված միջոցների հաշվին*, իսկ N 2 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում սահմանված է, որ վերոնշյալ ծրագրի շրջանակներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար փոխհատուցման ենթակա են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ 2015-2017 թվականների ընթացքում Նախարարության կողմից «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրում չներառված հետազոտությունների դիմաց իրականացվել է 10,149.5 հազ. դրամի ֆինանսավորում, ինչի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ կազմակերպությունների ներկայացված է Աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3**

| h/h | Բուժհիմնարկի անվանումը | Կատարած աշխատանքը/հազ.դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2015 | 2016 | 2017 | ընդամենը 2015-2017 |
| 1 | Բժշկական գենետիկայի եվ առողջության առաջնային պահպանման կենտրոն ՍՊԸ | 426.0 | 654.0 | 522.0 | 1,602.0 |
| 2 | Լ.Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ ՓԲԸ | - | 680.0 | 872.0 | 1,552.0 |
| 3 | Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ ՊՈԱԿ | 350.0 | - | 485.9 | 835.9 |
| 4 | Նորք ինֆ. հիվ. ՓԲԸ | 72.8 | 392.0 | 6.0 | 470.8 |
| 5 | Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀ կենտրոն ՊՓԲԸ | 336.0 | 87.0 | 42.0 | 464..0 |
| 6 | Լոռիմեդ ՍՊԸ | 253.2 | - | - | 253.2 |
| 7 | Իռ Վինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) | 8.0 | - | 4,764.0 | 4772.0 |
| 8 | Արինտերլեվ ՍՊԸ Վարդանանց նորարարական ԲԿ | - | 11.1 | 59.9 | 70.0 |
| 9 | Իզմիրլյան ԲԿ ՓԲԸ | - | 48.0 | - | 48.0 |
| 10 | Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա ՊՓԲԸ | 8.0 | 32.0 | - | 40.0 |
| 11 | Սպիտակի ԲԿ ՓԲԸ | - | 7.0 | 12.0 | 19.0 |
| 12 | Նորք-Մարաշ ԲԿ ՓԲԸ | - | - | 16.2 | 16.2 |
| 13 | Գյումրու ԲԿ | - | 4.0 | - | 4.0 |
| 14 | Արմենիա ԲԿ ՓԲԸ | - | 2.4 | - | 2.4 |
| | Ընդհանուրը | 1454.0 | 1917.5 | 6,778.0 | 10,149.5 |

- Նախարարության կողմից 2015-2017 թվականների ընթացքում պայմանագրային գումարներում փոփոխությունները և վերաբաշխումները հիմնականում չեն կատարվել Որոշման 35-րդ կետի համաձայն: Նշված Որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, պայմանագրային գումարները հաստատվում են վերը նշված որոշման V գլխի համաձայն հաշվարկված՝ սահմանափակված բյուջեի ծավալների չափով: Այսինքն՝ 2015 թվականի տարեսկզբին կազմակերպությունների հետ կնքված պայմանագրային գումարները (շուրջ 493,3 մլն դրամ), սույն որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն, պայմանավորված դեպքերի ավելացումով, կարող են տարվա ընթացքում փոփոխվել (ավելանալ) մինչև 2015 թվականի բյուջեով պլանավորված 514.6 մլն դրամը: Համաձայն N 2 հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատված պայմանագրային գումարից փաստացի ծավալների 10

տոկոս գերակատարումը համարվում է ռիսկի գոտի, որի պայմաններում փոխհատուցումը կատարվում է պայմանագրային գումարի չափով: Ելնելով կազմակերպությունների կողմից փաստացի կատարված աշխատանքների ծավալներից՝ ՀՀ պետական բյուջեով տվյալ ծրագրին հատկացված միջոցների սահմաններում կազմակերպությունների պայմանագրային գումարներում վերաբաշխումները կատարվում են V գլխի 35-րդ կետի համաձայն: Նշված կետով սահմանված է, որ տարվա ընթացքում կազմակերպությունների պայմանագրային գումարների վերաբաշխումները կատարվում են ըստ անհրաժեշտության՝ ծրագրերի ընդհանուր գումարների (ծրագրերում առկա մնացորդներ և կանխատեսվող տնտեսումներ) սահմաններում: Վերաբաշխումները կատարվում են նախարարի հրամանով՝ կանխատեսվող գերակատարումների չափով ավելացվում են պայմանագրային գումարները, սակայն ոչ ավելի, քան ծրագրային պայմանագրային գումարի 10 տոկոսը, իսկ ավելի լինելու դեպքում պայմանագրային գումարի վերաբաշխումները կատարվում են ՀՀ վարչապետի համաձայնությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստացվում է, որ մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի պայմանագրային գումարներում վերաբաշխում կատարելու վերաբերյալ թիվ 3413-Ա հրամանի ընդունումը «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրում կատարված պայմանագրային գումարներում փոփոխությունները որպես վերաբաշխում չդիտարկելը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման տրամաբանությանը: Ավելին, ՀՀ վարչապետի 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 02/23.13/20251-15 հանձնարարականին կից ներկայացված տեղեկանք-հիմնավորման 3-րդ կետով ՀՀ առողջապահության նախարարի կողմից առաջարկվել է «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի միջոցներն ավելացնել 63.0 մլն դրամով և այն ուղղել կանխատեսվող գերակատարումների մարմանը: Եթե 2015 թվականի տարեվերջին կազմակերպությունների ճշտված պայմանագրային գումարներից՝ 676,7 մլն դրամից, հանենք ՀՀ վարչապետի համաձայնությամբ վերաբաշխված 63.0 մլն դրամը, կստացվի շուրջ 614 մլն. դրամ գումար, ինչը շուրջ 100 մլն դրամով ավելի է, քան 2015 թվականին բյուջեով ծրագրավորված 514.6 մլն դրամը:

- 2016 թվականին կատարված պայմանագրային գումարների փոփոխությունները և վերաբաշխումները նույնպես հակասում են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման տրամաբանությանը: Ավելին, 2016 թվականին կատարված

վերաբաշխումներն իրականացվել են առանց ՀՀ վարչապետի համաձայնության:

ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման պայմանագրային գումարներում փոփոխություններ կատարելու մասին թիվ 531-Ա (11.03.2015թ), 1853-Ա (14.07.2015թ), 2600-Ա (24.09.2015թ) և 3413-Ա (01.12.2015թ) հրամաններով կազմակերպությունների կնքված պայմանագրային գումարները հաստատված 493,250.0 հազ. դրամից աճել են շուրջ 37%-ով՝ կազմելով 676,737.6 հազ. դրամ, 2016 թվականին թիվ 939-Ա (31.03.2016թ.), 3187-Ա (24.10.2016թ.) և 3424-Ա (17.11.2016թ.) հրամաններով՝ 397,267.2 հազ. դրամից շուրջ 55%-ով՝ կազմելով 616,823.2 հազ. դրամ, իսկ 2017 թվականին թիվ 876-Ա (20.03.2017թ.), 2177-Ա (10.07.2017թ.) և 2226-Ա (22.11.2017թ.) հրամաններով՝ 488,925.0 հազ. դրամից աճել են շուրջ 7%-ով՝ կազմելով 525,147.0 հազ. դրամ: Աղյուսակ 4-ում ներկայացված է այն բժշկական կազմակերպությունների ցանկը, որոնց մոտ **2015-2017 թվականների ընթացքում վերաբաշխման արդյունքում պայմանագրային գումարներում փոփոխությունները գերազանցել են սահմանված 10 տոկոսի շեմը**:

**Աղյուսակ 4**

**հազ.դրամ**

| Բժշկական կազմակերպության անվանումը | 2015 թվականի բյուջե | | | 2016 թվականի բյուջե | | | 2017 թվականի բյուջե | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաստատված | Ճշգրտված | Աճ,% | Հաստատված | Ճշգրտված | Աճ,% | Հաստատված | Ճշգրտված | Աճ,% |
| Նորք-Մարաշ բժշկ. կենտրոն ՓԲԸ | 32,000 | 72,054 | 125% | 0 | 6,000 | - | 1,326 | 1,631 | 23% |
| Արմենիա ԲԿ ՓԲԸ | 22,000 | 51,000 | 132% | 12,550 | 30,784 | 145% | 27,372 | 32,548 | 19% |
| Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ ՊՈԱԿ | 32,000 | 41,187 | 29% | 15,375 | 26,468 | 72% | - | - | - |
| Բժշկական գենետիկայի եվ առողջության առաջնային պահպանման կենտրոն ՍՊԸ | 25,000 | 33,000 | 32% | 25,000 | 36,781 | 47% | - | - | - |
| Դիագնոստիկա ԲՄ ԲԲԸ | 25,000 | 32,523 | 30% | 25,000 | 33,793 | 35% | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ | 21,000 | 29,472 | 40% | 21,000 | 26,357 | 26% | 23,437 | 33,104 | 41% |
| Մարատ Ստեփանյան ԱՁ | 15,000 | 25,000 | 67% | 15,000 | 28,876 | 93% | 13,297 | 18,297 | 38% |
| Իզմիրլյան ԲԿ ՓԲԸ | - | - | - | 2,000 | 11,174 | 459% | 4,153 | 6,180 | 49% |
| ՈՒլտրահիմիջինգ ԳԿ ՍՊԸ | 15,000 | 24,000 | 60% | 15,000 | 30,419 | 103% | - | - | - |
| Էրեբունի ԲԿ ՓԲԸ | 13,000 | 20,000 | 54% | 5,265 | 14,378 | 173% | - | - | - |
| ԿՀՄԻ բժշկա-ախտորոշիչ կենտրոն Երևան ՍՊԸ | 5,000 | 16,653 | 233% | 5,000 | 10,826 | 117% | - | - | - |
| Արինտերլեվ ՍՊԸ Վարդանանց նորարարական ԲԿ | 0 | 12,000 | - | 0 | 4,000 | - | - | - | - |
| Նատալի Ֆարմ ՍՊԸ | 1,000 | 10,843 | 984% | 261 | 20,328 | 7700 % | - | - | - |
| Ճառագայթային բժշկության եվ այրվածքների հանր. գիտ. կենտրոն ՊՓԲԸ | 7,000 | 11,560 | 65% | - | - | - | - | - | - |
| Նորմեդ ՍՊԸ | 6,000 | 9,000 | 50% | 6,000 | 9,500 | 58% | - | - | - |
| Լոռիմեդ ՍՊԸ | 3,500 | 5,000 | 43% | 3,500 | 6,127 | 75% | - | - | - |
| Իռ Վինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) | 0 | 3,000 | - | 0 | 623 | - | - | - | - |
| Արմամաքս ՍՊԸ | 152,450 | 174,613 | 15% | 152,450 | 186,532 | 22% | - | - | - |
| Պերինատալոգիայի, մանկաբարձության եվ գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ԲԲԸ | - | - | - | 23,000 | 26,947 | 17% | - | - | - |
| Գյումրու ԲԿ | - | - | - | 5,025 | 13,473 | 168% | - | - | - |
| Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան հանր. արյունաբանական կենտրոն ՊՓԲԸ | - | - | - | 0 | 6,000 | - | - | - | - |
| Գորիսի ԲԿ ՓԲԸ | - | - | - | 0 | 2,000 | - | - | - | - |
| Լ.Ա. Հովհաննիսյանի | - | - | - | 0 | 1,191 | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| անվան սրտաբանության ԳՀԻ ՓԲԸ | | | | | | | | | |
| Սպիտակի ԲԿ ՓԲԸ | - | - | - | 0 | 814 | - | - | - | - |
| Բարեկամ ՍՊԸ | - | - | - | 0 | 5,000 | - | - | - | - |
| Աշտարակի ԲԿ ՓԲԸ | - | - | - | 0 | 300 | - | - | - | - |
| Նատա-Մեդ ՍՊԸ | - | - | - | 0 | 1,000 | - | - | - | - |
| Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ | - | - | - | 0 | 300 | - | - | - | - |
| Ընդամենը | 493,250 | 676,737 | 37% | 397,267 | 616,823 | 55% | 488,925 | 525,147 | 7% |

*Արդյունքում, խախտվել է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման 35-րդ կետի պահանջները:*

Ուշագրավ է, որ վերոնշյալ ցանկում ներառված են կազմակերպություններ, որոնց հետ տարեսկզբին Ծրագրով չեն կնքվել պետպատվերի պայմանագրեր, սակայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների համաձայն, վերաբաշխումների արդյունքում, բյուջետային տարվա վերջին եռամսյակում իրականացրել են ախտորոշիչ հետազոտություններ, որոնց դիմաց ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Այսպես՝

1. 3413-Ա (01.12.2015թ.) հրամանով «Վարդանանց» նորարարական ԲԿ-ի («Արինտերլեվ» ՍՊԸ) Ծրագրով ճշտված պայմանագրային գումարը կազմել է 12,000.0 հազ. դրամ, որի դիմաց Նախարարությունն իրականացրել է ֆինանսավորում: 3187-Ա (24.10.2016թ.) հրամանով ճշտված պայմանագրային գումարը կազմել է 24,000.0 հազ. դրամ, որը 3424-Ա (17.11.2016թ.) հրամանով նվազեցվել է 20,000.0 հազ. դրամով՝ կազմելով 4,000.0 հազ. դրամ, ինչը նույնպես ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2. 531-Ա (11.03.2015թ.) հրամանով «Իռ Վինգ» ՍՊ ընկերության (Դիլիջանի ԲԿ) Ծրագրով ճշտված պայմանագրային գումարը կազմել է 3,000.0 հազ. դրամ,

որի դիմաց Նախարարությունն իրականացրել է ֆինանսավորում: 3187-Ա (24.10.2016թ.) հրամանով «Իռ Վինգ» ՍՊ, «Գորիսի ԲԿ», «Սպիտակի ԲԿ», «Լ.Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» ՓԲ ընկերությունների ճշտված պայմանագրային գումարները կազմել են համապատասխանաբար՝ 623.0 հազ. դրամ, 2,000.0 հազ. դրամ, 114.0 հազ. դրամ և 191.0 հազ. դրամ, որոնք նույնպես ամբողջությամբ ֆինանսավորվել են:

**3.** 939-Ա (31.03.2016 թ.) հրամանով «Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան հանրապետական արյունաբանական կենտրոն» ՊՓԲ, «Նորք-Մարաշ բժշկ. կենտրոն» ՓԲ, «Լ.Ա. հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» ՓԲ, «Բարեկամ» ՍՊ, «Աշտարակի ԲԿ» ՓԲ, «Նատա-Մեդ» ՍՊ, «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲ ընկերությունների Ծրագրով ճշտված պայմանագրային գումարները կազմել են համապատասխանաբար՝ 6,000.0 հազ. դրամ, 6,000.0 հազ. դրամ, 1,000.0 հազ. դրամ, 5,000.0 հազ. դրամ, 300.0 հազ. դրամ, 1,000.0 հազ. դրամ և 300.0 հազ. դրամ, որոնց դիմաց Նախարարությունն իրականացրել է ֆինանսավորում:

- Դիտարկման ընթացքում պարզվել է, որ համաձայն ներկայացված ամսական հաշվետվությունների՝ «Նորմեդ» ՍՊ ընկերության 2015 թվականի կատարողականը կազմել է 5,616.0 հազ. դրամ, սակայն ֆինանսավորումը կազմել է 6,936.0 հազ. դրամ, ավել է վճարվել 1,320 հազ. դրամ: Իսկ «Իզմիրլյան ԲԿ» ՓԲ ընկերության 2015 թվականի կատարողականը կազմել է 174.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 333.0 հազ. դրամ, ավել վճարված գումարը կազմում է 159.0 հազ. դրամ: Համաձայն «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման 47-րդ կետի՝ ավելի վճարված գումարները կազմակերպությունների կողմից ենթակա են հետ վերադարձման ՀՀ պետական բյուջե: **Ավելի է վճարվել 1,479.0 հազ. դրամ գումար:**

- Համաձայն Որոշման 40-րդ կետի՝ Նախարարություն ներկայացվող ամսական հաշվետվություններում ներառվում են կատարված փաստացի աշխատանքների ծավալները, սակայն ոչ ավելի, քան պայմանագրով նախատեսված ամսական համամասնությունների գումարը: Դիտարկման ընթացքում իրա-կանացված ուսումնասիրությունից պարզվեց, որ կազմակերպությունների կողմից բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները հիմնականում չեն կատարվել պատվիրատուի կողմից սահմանված պայմանագրային գումարի ամսական համամասնությունների չափով (Հավելված 1):

**Բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները հիմնականում չեն կատարվել պատվիրատուի կողմից սահմանված պայմանագրային գումարի ամսական համամասնությունների չափով**

Արդյունքում, **խախտվել է Որոշման 39-րդ կետի պահանջը**, այն է՝ *Կազմակերպությունները բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները կատարում են պատվիրատուի կողմից սահմանված պայմանագրային գումարի ամսական համամասնությունների չափով*, **և 44-րդ կետի պահանջը**, այն է՝ *Կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված ամսական հաշվետվությունները վերահսկվում են պատվիրատուի կողմից: Վերահսկողությունը կատարվում է հաշվետվությունը ներկայացնելու պահին՝ համակարգչային ծրագրի և հաշվետվությունն ընդունող մասնագետի կողմից, ներկայացված հաշվետվություններում ուսումնասիրությունների ու մոնիթորինգի և կազմակերպություններում փաստաթղթային ստուգումների միջոցով: Նախարարը սահմանում է ստուգման յուրաքանչյուր փուլում պարտադիր հսկման ենթակա հաշվետվությունների տվյալների ցանկը և հսկման ենթակա հաշվետվությունների ընտրության կարգը:*

Հարկ է նշել, որ համաձայն ՊԱԳ-ի կողմից տրված տեղեկանքի՝ 2015 թվականին մի շարք բուժհաստատություններում կատարված հերթագրման կարգի պահանջների կատարման ուսումնասիրությունների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել, իսկ 2015, 2016 և 2017 թվականների ընթացքում «Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում այլ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

## 3. «ՀԵՄՈԴԻԱԼԻԶԻ ԵՎ ՊԵՐԻՏՈՆԻԱԼ ԴԻԱԼԻԶԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում **ծրագրային հեմոդիալիզի համար սահմանված չափորոշիչներ չկան**, իսկ յուրաքանչյուր տարի նախատեսված ֆինանսավորումը իրականացվում է բժշկական կազմակերպությունների կողմից հիվանդների սահմանված առավելագույն չափաքանակով՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով (հաշվարկվում է փաստացի հիվանդների թվով): Ծառայության գինը սահմանվում է ելնելով տվյալ տարվա համար ՀՀ պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից: Ծառայությունն իրականացվում է թվով 14 կազմակերպությունների կողմից:

**Աղյուսակ 5**

Աղյուսակի տեսքով ներկայացվում է հեմոդիալիզի քվոտաների, հիվանդների թվի և բյուջեի դինամիկայի վերաբերյալ տեղեկատվությունը

| | 2015 | 2016 | 2017 |
|---|---|---|---|
| Քվոտա | 690 | 696 | 697 |
| Հիվանդների թիվ | 731 | 787 | 794 |
| Տարեկան աճ | 12% | 7% | 8% |
| Մահացածների թիվ | 132 | 96 | * |
| Բյուջե հազ.դրամ | 1,937,251.5 | 2,071,065.0 | 2,229,612.0 |

**Նախարարության կողմից 2017թ. մահացածների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել*

**Աղյուսակ 6**

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ֆինանսավորումը ըստ իրականացնող կազմակերպությունների

հազ.դրամ

| Հեմոդիալիզ իրականացնող կազմակերպություններ | Մարզ | | | |
|---|---|---|---|---|
| | | 2015 | 2016 | 2017 |
| Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ | Երևան | 373,530 | 384,933 | 412,191 |
| Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ | Երևան | 233,884 | 224,751 | 223,137 |
| Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ | Երևան | 190,653 | 188,389 | 198,829 |
| Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ | Երևան | 154,610 | 160,812 | 163,769 |
| Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն | Երևան | 448,088 | 524,670 | 574,476 |
| Վանաձորի բժշկական կենտրոն | Լոռի | 147,131 | 159,317 | 161,995 |
| Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ ՓԲԸ | Արմավիր | 59,909 | 60,207 | 50,047 |
| Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 77,197 | 91,912 | 133,886 |
| Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ | Սյունիք | 13,118 | 31,077 | 44,291 |
| Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ | Սյունիք | 42,965 | 36,797 | 36,743 |
| Գավառի ԲԿ ՓԲԸ | Գեղարքունիք | 76,074 | 76,987 | 78,844 |
| Նոյեմբերյանի բժշկական կենտրոն ՓԲԸ | Տավուշ | 38,010 | 42,463 | 50,372 |
| Վայքի ԲՄ | Վայոց Ձոր | 0 | 9,557 | 24,725 |
| Սամարիթեր վերականգնողական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 82,084 | 77,178 | 76,310 |
| *Ընդհանուրը* | | **1,937,251.5** | **2,071,065** | **2,229,612** |

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծրագրային հեմոդիալիզի համար յուրաքանչյուր այցի արժեքը (սեանս) կազմում է 18.100 դրամ: Յուրաքանչյուր հիվանդ տարվա

ընթացքում այցելում է 153 անգամ (մեկ հիվանդի համար տարեկան գումարը կազմում է 2,769.3 հազ. դրամ (153 x 18100)):

Դիտարկմանը ներկայացված հեմոդիալիզի ծառայության գների հաշվարկի տեղեկատվության համաձայն հեմոդիալիզի ծառայություն մատուցող կազմակերպությունները յուրաքանչյուր հիվանդի մեկ սեանսի համար ներկայացրել են 17.4 հազ. դրամից մինչև 26.9 հազ. դրամ գումար:

**Աղյուսակ 7**

հազ. դրամ

| Կազմակերպության անվանումը | Բժշկական օգնության և սպասարկման ծառայության ծախսերը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդա-մենը | Հեմոդիալիզատոր | Բժշկական պարագաներ | Դեղեր | Աշխատանքի վարձատրություն | Հիմնական միջոցի մաշվածք | Տնտեսական, կոմունալ ծախս |
| «Գավառի ԲԿ» ՓԲԸ | 18.10 | 6.09 | 8.20 | 2.0 | 1.81 | 0 | 0 |
| «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ | 17.66 | 6.23 | 6.25 | 0.62 | 3.41 | 0.90 | 0.25 |
| «Գյումրու ԲԿ» ՓԲԸ | 20.0 | 6.10 | 7.0 | 0.70 | 2.50 | 3.20 | 0.50 |
| «Սամարիթեր կենտրոն» ՓԲԸ | 18.04 | 6.09 | 5.25 | 0.88 | 3.39 | 0.99 | 1.45 |
| «Կապանի ԲԿ» ՓԲԸ | 20.55 | 5.22 | 4.66 | 1.90 | 2.24 | 5.42 | 1.11 |
| «Զարիշատ Մկրտչյանի անվ. կենտրոն» | 20.43 | 6.09 | 4.47 | 2.17 | 3.75 | 2.03 | 1.92 |
| «Արաբկիր ԲԿ» ՓԲԸ | 26.90 | 6.50 | 9.0 | 0.60 | 5.10 | 2.10 | 3.60 |
| «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ | 17.40 | 6.20 | 7.20 | 0.60 | 3.00 | 0.05 | 0.40 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Նատալի ֆարմ Մալաթիա ԲԿ» | 21.71 | 4.56 | 4.56 | 0.43 | 3.26 | 2.82 | 6.08 |
| Ընդամենը միջին ծախս | 20.09 | 5.90 | 6.29 | 1.10 | 3.16 | 1.95 | 1.70 |

**Ընկերությունները գների ինքնարժեքում հեմոդիալի-զատորի համար հաշվարկել են 4.56 հազ. դրամից մինչև 6.5 հազ. դրամ, այն դեպքում, երբ դրա արժեքը, ստացված տեղեկատվության համաձայն միջին հաշվով կազմում է 3.0-3.9 հազ. դրամ**

Հարկ է նշել, որ ընկերությունները գների ինքնարժեքի մեջ հեմոդիալիզատորի համար հաշվարկել են 4.56 հազ. դրամից մինչև 6.5 հազ. դրամ, այն դեպքում, երբ դրա արժեքը, ստացված տեղեկատվության համաձայն, միջին հաշվով կազմում է 3.0-3.9 հազ. դրամ: 2017 թվականի համար նշված ծառայության համար նախատեսված է եղել 2,080,049.5 հազ. դրամ: ՀՀ կառավարության 24.08.2017թ թիվ 1134 որոշմամբ սահմանվել է, որ «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու Նախարարությանը գումար հատկացնելու մասին» և ըստ կառավարության որոշման ընդունման հիմնավորման՝ հաշվի առնելով 2017 թվականի ապրիլի 30-ի դրությամբ հեմոդիալիզի կարիք ունեցող քաղաքացիների քանակը և վերջին տարիներին հիվանդների քանակի կայուն աճը (8-10% տարեկան), այդ թվում պայմանագրային գումարներից դուրս ՀՀ առողջապահության նախարարի անհատական հրամաններով տրամադրված լրացուցիչ քվոտաները, առաջարկվել է նշված ծառայության գումարն ավելացնել է 216,8 մլն դրամով: Արդյունքում, «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» ծրագրի կատարման համար սահմանվել է 2,296,849.5 հազ. դրամ, որի դիմաց ֆինանսավորումը կազմել է 2,229,612 հազ. դրամ:

**Նախարարությունը չունի գնագոյացման հաշվարկ**

Նախարարության կողմից կարգավորման կարիք ունի ծառայության գների հաշվարկը, քանի որ նախարարությունը չունի գնագոյացման հաշվարկ, և ինչպես նշվեց վերևում, ծառայության գինը սահմանվում է ելնելով տվյալ տարվա համար ՀՀ պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից: Գների վերանայման անհրաժեշտությունը առաջանում է նաև այն հանգամանքից, որ

կազմակերպությունների կողմից ներկայացված գների հաշվարկի մեջ կան խիստ էական տարբերություններ, թե դիալիզատորների գների, և թե մնացած բաղադրիչների մասով:

## 4. ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծննդօգնությունը պետության կողմից երաշխավորված բնակչության բոլոր խմբերի համար անվճար ծառայություն է: 2015 թվականին ֆինանսավորվել է 62 կազմակերպություն, կատարողականը կազմել է՝ 6,876,900.9 հազ. դրամ, 2016 թվականին ֆինանսավորվել է 58 կազմակերպություն, կատարողականը կազմել է՝ 6,720,279.0 հազ. դրամ, իսկ 2017 թվականին ֆինանսավորված 58 կազմակերպությունների կատարողականը կազմել է 6,450,380.2 հազ. դրամ: ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով սահմանվել է 2015-2017 թվականներին բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով մանկաբարձական բժշկական օգնության միջինացված գները, որից՝ նորմալ և թեթև շեղումներով ծննդաբերություն՝ 109400 դրամ, բարդացած ծննդաբերություն, այդ թվում՝ I աստիճանի բարդություններ՝ 117600 դրամ, II աստիճանի բարդություններ՝ 133000 դրամ, III աստիճանի բարդություններ՝ 163600 դրամ: Ծննդալուծում կեսարյան հատումով՝ I աստիճանի բարդություններ 198500 դրամ, II աստիճանի բարդություններ՝ 276200 դրամ: Սակայն վերը նշված գների գնագոյացման հաշվարկ գոյություն չունի:

Հայաստանի Հանրապետության ծննդատներում արձանագրված ծնունդների քանակը և դրանց համեմատական աճը (նվազումը) 2014-2017 թվականներին ներկայացվում է հավելված 2-ում, համաձայն որի ընդհանուր ծնունդների քանակը ՀՀ-ում տարեց-տարի նվազում է՝ 2014 թվականին՝ 43340 ծնունդի դիմաց 2017 թվականին այն կազմել է՝ 37841 ծնունդ:

ՀՀ ծննդատներում արձանագրված կեսարյան հատումների քանակը և դրանց համեմատական աճը (նվազումը) 2014-2017 թվականներին ներկայացվում է հավելված 3-ում, համաձայն որի, կեսարյան հատումների աճը 2017 թվականին 2014 թվականի համեմատ կազմել է՝ 589 դեպք կամ 6.0%:

ՀՀ-ում 1990-2017 թվականներին ծնունդների ու կեսարյան հատումների թիվը և նրանց հարաբերակցությունը տոկոսներով արտահայտված ներկայացվում է հավելված 4-ում, համաձայն որի, 1990 թվականի հետ համեմատած 2017 թվականին ծնունդների թիվը 80039-ից նվազել է մինչև 37841-ի կամ 53%-ով, իսկ կեսարյան հատումների թիվը 2687-ից, որը կազմել է ընդհանուր ծնունդների թվի 3.4%-ը, հասել է մինչև 11539-ի կամ ընդհանուր ծնունդների թվի 30.0%-ը:

**ՀՀ-ում ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումով ավարտված ծննդաբերությունների տոկոսը տարեցտարի ավելանում է և վերջին տարիներին նույնիսկ սկսել է գերազանցել որոշ Եվրոպական և ԱՊՀ երկրների տարեկան ցուցանիշները**

Եվրոպական և ԱՊՀ որոշ երկրների ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումների տոկոսներն ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների 2000-2015 թվականներին ներկայացվում է հավելված 5-ում (2016 և 2017 թվականների տվյալները ԱՀԿ-ի կողմից առայժմ չեն ներկայացվել): ՀՀ-ում ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումների տոկոսը կազմել է 2016 թվականին՝ 28.3%, իսկ 2017 թվականին՝ 30.0%: ՀՀ-ում ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումով ավարտված ծննդաբերությունների տոկոսը տարեցտարի ավելանում է և վերջին տարիներին նույնիսկ սկսել է գերազանցել որոշ Եվրոպական և ԱՊՀ երկրների տարեկան ցուցանիշները: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 30.07.2012թ. թիվ 1760-Ա հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի, այն է՝ «ծննդօգնություն իրականացնող կազմակերպություններում սահմանել ընդհանուր ծնունդների (ներառյալ կեսարյան հատումները) թվաքանակում կեսարյան հատումով ավարտված ծնունդների և կեսարյան հատումով ավարտված ընդհանուր ծնունդների թվաքանակում, ըստ բարդության աստիճանի ծնունդների առավելագույն չափաբաժինները,

ա. I Բ մակարդակի կազմակերպություններում կեսարյան հատումով ավարտված ծնունդների թվաքանակը՝ 10 տոկոս, միայն առաջին աստիճանի բարդության,

բ. II մակարդակի կազմակերպություններում կեսարյան հատումով ավարտված ծնունդների թվաքանակը ՀՀ մարզերում՝ 17 տոկոս, իսկ ք. Երևանում՝ 20 տոկոս, միայն առաջին աստիճանի բարդության,

գ. III մակարդակի կազմակերպություններում՝ կեսարյան հատումով ավարտված ծնունդների թվաքանակը՝ 30 տոկոս, որից առաջին աստիճանի բարդության՝ 50 տոկոս, երկրորդ աստիճանի բարդության՝ 50 տոկոս:

Հանրապետական գործառույթ իրականացնող III «Բ» մակարդակի Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտում՝ Երևանից ուղեգրված հղիների/ծննդաբերների դեպքում կեսարյան հատումները՝ 37 տոկոս, որից 1-ին աստիճան՝ 35 տոկոս, 2-րդ աստիճան՝ 65 տոկոս, իսկ մարզերից ուղեգրված ռիսկի խմբի հղիների/ծննդաբերների կեսարյան հատումով ավարտված ծնունդները՝ առանց դեպքերի սահմանափակման», կեսարյան հատումով ավարտված ծննդաբերությունների համար կազմակերպություններին ըստ մակարդակների պետության կողմից ֆինանսավորման չափը սահմանափակվում է, իսկ կեսարյան հատումով ավարտված ծնունդների սահմանված տոկոսը գերազանցելու դեպքում ֆինանսավորումը կատարվում է նորմալ ծնունդի միջինացված գնով: Սակայն, նույնիսկ ծննդատների ֆինանսավորման սահմանափակումների ՀՀ-ում ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումների տոկոսը հասնում, որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում է այդ սահմանված չափաբաժինները:

## 5. «ԴԵՂՈՐԱՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախարարությունը «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում հիվանդների դեղապահովումն իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 23.11.2006թ. «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 1717-Ն և ՀՀ կառավարության 02.05.2013թ. «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշումների:

Նախարարության կողմից կենտրոնացված կարգով դեղերի գնումներն իրականացվում են հաստատված գնումների պլանի հիման վրա, որը կազմվում է ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի համաձայն: Ըստ հրամանի՝ գնումների պլանի հիմքում ընկած են՝ գլխավոր մասնագետների ու մասնագիտացված բժշկական կազմակերպությունների և դիսպանսերների կողմից ներկայացված հայտերը և եզրակացությունները, որոնցում նշվում է համապատասխան հիվանդություններով հաշվառված հիվանդների թիվը, տարվա համար (12 ամիս) անհրաժեշտ դեղերի քանակը, ՀՀ մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքով ներկայացված հաշվետվությունները՝ ըստ առկա մնացորդների, դեղերի ծախսի, հիվանդների թվի և Նախարարության, մասնագիտացված բժշկական կազմակերպությունների, դիսպանսերների անունով որպես մարդասիրական օգնություն ստացված դեղերի կամ համարժեք փոխարինող դեղերի քանակային մնացորդները: Դեղերի անվանացանկը կազմելիս առաջնահերթությունը տրվում է այն դեղերին, որոնք ըստ հիվանդությունների ընդգրկված են բոլոր բուժման սխեմաներում՝ կախված հիվանդության տեսակից և ընթացքից:

Վերահսկողությամբ ընտրանքային կարգով ուսումնասիրվել են Նախարարության կողմից ձեռք բերված (հիմնականում ՀՀ ներմուծվող դեղերի) գների, գնումների պլանի կազմման և դեղերի քանակի որոշման, դրանց ծախսման, հաշվառման և հաշվետվությունների կազմման գործընթացների ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության հարցերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վերահսկիչ պալատի վերահսկողությամբ ընդգրկվել են Նախարարության կողմից 2015 թվականին կենտրոնացված կարգով դեղերի գնման արդյունավետությանն առնչվող մի շարք հարցեր, տվյալ վերահսկողության շրջանակներում արտացոլվել են 2016-2017 թվականներին դիտարկվող ծրագրի իրականացմանը վերաբերող հիմնական ցուցանիշները՝ բնագավառի իրավիճակային վերլուծություն կատարելու նպատակով օգտագործելով 2015 թվականի տվյալները:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 2015 թվականին կենտրոնացված կարգով դեղերի ձեռք բերման նպատակով պետական բյուջեի ծախսերը ծրագրավորվել են 2,038,672.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,920,889.2 հազ. դրամ, 2016 թվականին համապատասխանաբար՝ 2,074,972.5 և 1,846,035.5 հազ. դրամ, 2017 թվականին՝ 2,185,341.4 և 2,114,199.1 հազ. դրամ:

Ըստ առանձին ուղղությունների իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացված են ստորև:

- *Ներմուծման և մատակարարման գների տարբերության և դեղերի թանկացման ազդեցությունը բյուջետային ծախսերի վրա (հավելված 6)*

***Նախարարության կողմից դեռևս պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի թանկացման, ինչպես նաև կազմակերպությունների կողմից մատակարարվող դեղերի ներմուծման արժեքներից էապես թանկ գներով դրանց գնման փաստերը բացառելու ուղղությամբ: Այդ նպատակով թերի են օգտագործվել Նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» գործակալությունում առկա դեղերի ներմուծման բազային տվյալները, որոնց հաշվառումը թույլ կտար դեղերի գնման մրցույթին ներկայացվող գնառաջարկի նկատմամբ կիրառել ներմուծված դեղերի նախահաշվային ցուցանիշները:***

Օրինակ՝

- *Ցիկլոսպորին 50 մգ* դեղի մեկ դեղապատիճը 2015 թվականին գնվել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ից 1.100 դրամով, որը ներմուծվել է 414 դրամով, կամ մատակարարվել է ներմուծման արժեքից 166.0 % ավելի թանկ գնով: 2016 թվականին մեկ դեղապատիճը գնվել է նույն «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ից 990 դրամով՝ 415 դրամ գնով ներմուծվելու պարագայում, կամ դեղը մատակարարվել է ներմուծման արժեքից 138.0 % ավելի թանկ գնով: Ներմուծման և մատակարարման գումարների տարբերությունը 2016 թվականին կազմել է 5,806.3 հազ. դրամ:

- ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման համար իմունոքրոմատոգրաֆիկ արագ թեստի մեկ միավորը մատակարարվել է «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 2016 թվականին 468.0 դրամով, իսկ 2017 թվականին՝ 878 դրամով, կամ նախորդ տարվա համեմատ՝ 87.6 %-ով ավելի թանկ գնով: Արդյունքում, 2016 թվականի համեմատ՝ 2017 թվականին թեստի միավորի գնի աճը հանգեցրել է 2,050.0 հազ. դրամով ծախսի ավելացմանը:

- *Օմնոպոն 2%*-1մլ դեղը մատակարարվել է «Արֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականին մեկ սրվակը 241.0 դրամով, իսկ 2016-2017 թվականներին՝ 345.0 դրամով, կամ 43.2 %-ով ավելի թանկ գնով: 2016-2017 թվականներին գնի աճը հանգեցրել է ծախսի ավելացմանը համապատասխանաբար՝ 3,365.4 և 4.586.4 հազ. դրամով:

- *Էրիթրոպոէտին բետտա 2000 ՄՄ* դեղը 2015-2016 թվականներին գնվել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից մեկ սրվակը 6.500 դրամով, որը ներմուծվել է 4.982 դրամով, կամ մատակարարվել է ներմուծման արժեքից 31.0 % ավելի թանկ գնով: Ներմուծման և մատակարարման գումարների տարբերությունը 2015 թվականին կազմել է 91,104.0 հազ. դրամ, 2016 թվականին՝ 68,328.0 հազ. դրամ:

➢ *Գնումների պլանի կազմման ընթացքում գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի ձևավորումը (հավելված 7)*

***Գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկը հաշվարկներով հիմնավորված չէ և հիվանդների թվի տատանումներին համարժեք չի փոփոխվում: Ընդ որում, մեծամասամբ գնվող դեղերի քանակները՝ հիվանդների թվի համեմատ, աճել են առաջանցիկ տեմպերով, ինչը պայմանավորված չէ հիվանդությունների բուժման սխեմաների փոփոխություններով: Նախարարության կողմից դեռևս չեն մշակվել և ընդունվել մի շարք հիվանդությունների բուժման սխեմաները, որոնք պետք է կիրառվեն դեղորայքի պահանջարկի ձևավորման ընթացքում:***

Օրինակ՝

- *Ֆլուֆենազին 25 մգ/1մլ/մոդիտեն-դեպո/* դեղի մասով 2015 թվականին ներկայացվել է 30.000 հատի պահանջարկ՝ 1410 դեղից օգտվող հիվանդի պարագայում, սակայն հաջորդ տարիներին տվյալ դեղից օգտվողների թվի ավելացման պարագայում ներկայացված պահանջարկը կտրուկ նվազել է՝ 2016 թվականին կազմելով 16.600, 2017 թվականին՝ 17.100 հատ:

- *Տրիֆլոպերազին 5 մգ* դեղի 2015 թվականին պահանջարկը 3400 հիվանդի հաշվարկով ներկայացվել է 2.150.000 հատի չափով, իսկ 2016-2017 թվականներին՝ 1.400.000 հատի չափով, այն դեպքում, երբ տվյալ դեղն ստացող հիվանդների թիվը 2015-2017 թվականներին կազմել է համապատասխանաբար՝ 46.000, 50.000 և 51.167 մարդ: Այլ կերպ՝ հիվանդների թիվը 3 տարվա ընթացքում աճել է 11.2 %-ով՝ դեղերի ներկայացվող պահանջարկի 34.9%-ով նվազման պարագայում:

- *Մետֆորմին 500 մգ* դեղի պահանջարկը 2015-2017 թվականներին ներկայացվել է համապատասխանաբար՝ 16.800.000, 16.500.000 և 21.000.000 հատ, հիվանդների թիվը՝ 63.000, 65.000 և 68.000 մարդ, կամ 7.9 %-ով հիվանդների թվի աճի պարագայում մեկ հիվանդի հաշվով դեղի ներկայացված պահանջարկն աճել է 21.7 %-ով:

- *Ինսուլին մարդու իզոֆան ներարկման լուծույթ 100 ՄՄ/մլ* դեղի մասով 2015 թվականին ներկայացվել է 19.335 հատի, 2016 թվականին՝ 28.395 հատի, իսկ 2017 թվականին՝ 49.400 հատի պահանջարկ, համապատասխանաբար՝ 400, 350 և 720 հիվանդների համար: Արդյունքում, մեկ հիվանդի հաշվով միջին տարեկան պահանջարկը 2015 թվականին կազմել է 48 հատ, 2016 թվականին հիվանդների թվի 12.5 %-ով նվազման պարագայում պահանջարկն աճել է 46.9 %-ով և մեկ հիվանդի հաշվով կազմել է 81 հատ: 2017 թվականին հիվանդների թիվը՝ նախորդ տարվա համեմատ, ներկայացվել է կրկնակի անգամ ավելի, իսկ մեկ հիվանդի հաշվով դեղի քանակը կազմել է 69 հատ, կամ նախորդ տարվա համեմատ նվազել է 15.4 %-ով:

➢ *Գնումների պլանի ձևավորման ընթացքում գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի, դրանց գնման ծավալների և փաստացի ծախսերի համապատասխանությունը (հավելված 8):*

---

***Նախարարության կողմից չի ապահովվել ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի պահանջների կատարումը՝ հանգեցնելով կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի մասով ներկայացվող պահանջարկի, գնումների պլանով***

***նախատեսված և փաստացի ծախսված քանակների միջև շեղումների առաջացմանը:***

Օրինակ՝

- *Մետֆորմին 1000 մգ.* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 16.800.000 հատ, գնվել է 5.000.000 հատ, փաստացի ծախսը կազմել է 2.388.797 հատ: 2016 թվականին պահանջարկը ներկայացվել է 16.500.000 հատի չափով, գնվել է 4.213.000 հատ, փաստացի ծախսը կազմել է 5.438.432 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է արդեն 21.000.000 հատ, գնվել է 8.101.372 հատ, իսկ փաստացի ծախսը կազմել է 7.727.090 հատ:

- *Ֆլուֆենազին 25մգ/1մլ/մոդիտեն-դեպո/* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 30.000 հատի չափով, գնվել է 12.314 հատ, իսկ տարվա փաստացի ծախսը կազմել է 23.172 հատ: Նմանապես 2016 թվականին դեղի պահանջարկը ներկայացվել է 16.600 հատ՝ հաշվի առնելով տարեսկզբի մնացորդը, դեղ չի գնվել, իսկ փաստացի ծախսը կազմել է 10.220 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է 17.100 հատի համար, նույնքան էլ գնվել է՝ հաշվի չառնելով նախորդ տարվա փաստացի ծախսը: Արդյունքում, 2017 թվականին դեղի փաստացի ծախսը կազմել է 14.652 հատ:

- *Կարբամազեպին 200 մգ* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 3.065.000 հատ, գնվել է 2.317.500 հատ, իսկ փաստացի ծախսը կազմել է 1.456.170 հատ: 2016 թվականին պահանջարկը ներկայացվել է 2.724.000 հատ, գնվել է 720.000 հատ՝ ելնելով տարեսկզբին առկա մնացորդից, փաստացի ծախսը կազմել է 1.663.029 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է 2.830.000 հատ՝ հաշվի չառնելով նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և գնվել է 2.300.000 հատ դեղ, իսկ փաստացի ծախսը կազմել է 1.662.402 հատ:

- *Տրիֆլոպերազին 5 մգ* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 2.150.000 հատ՝ մոտ 2.000.000 հատի չափով տարեսկզբի մնացորդի առկայության պարագայում, գնվել է 2.024.000 հատ: Փաստորեն, 2015 թվականին դեղի ընդհանուր քանակը կազմել է 4.025.705 հատ, որից ծախսվել է ընդամենը 1.412.773 հատ: 2016 թվականին պահանջարկն, ըստ գլխավոր մասնագետի, կազմել է 1.400.000 հատ, գնում չի կատարվել, իսկ

փաստացի ծախսը կազմել է 1.747.285 հատ՝ ձևավորելով 865.695 հատի մնացորդ: 2017 թվականին պահանջարկը կրկին ներկայացվել է 1.400.000 հատի չափով, գնվել է 1.475.000 հատ, փաստացի ծախսը կազմել է 1.677.416 հատ:

- *Հիդրոքսիկարբամիդ 500 մգ* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 80.000 հատ, գնվել է 54.900 հատ, փաստացի ծախսը կազմել է 61.515 հատ: 2016 թվականին նույն պահանջարկի պարագայում գնվել է 64.500 հատ, փաստացի ծախսը կազմել է 55.229 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է 90.000 հատ, պայմանագիրը կնքվել է նույն քանակի համար (առավելագույնը 55.229 հատ ծախսի պարագայում), իսկ փաստացի ծախսը կազմել է 67.047 հատ:

- *Ցիկլոսպորին/սանդիմուն ներորալ/ 50 մգ* պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 20.000 հատի չափով, սակայն հաշվի առնելով մեծաքանակ մնացորդների առկայությունը, գնվել է 17.000 հատ, տվյալ տարվա փաստացի ծախսը կազմել է 35.912 հատ: 2016 թվականին նույն պահանջարկի պարագայում գնվել է 10.100 հատ և փաստացի ծախսը կազմել է 4.929 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է և պայմանագիր է կնքվել 20.000 հատի չափով, իսկ փաստացի ծախսը կազմել է 25.177 հատ:

- *Դեսմոպրեսին քթակաթիլներ 0.1 մգ/մլ* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 6.024 հատ, գնվել է 5.000 հատ, փաստացի ծախսը կազմել է 2.888 հատ: 2016 թվականին մեծաքանակ մնացորդն օգտագործելու նպատակով պահանջված 6.000 հատի համար գնում չի կատարվել, իսկ փաստացի ծախսը կազմել է 4.386 հատ: 2017 թվականին դեղի պահանջարկը ներկայացվել է 6.024 հատ, կնքվել է 5.300 հատի պայմանագիր, փաստացի ծախսը կազմել է 3.898 հատ:

- *Դոքսորուբիցին 10 մգ դեղի* համար 2015 թվականին ներկայացվել է 3.600 հատի պահանջարկ, նոր գնում չի իրականացվել և մեծաքանակ՝ 4.997 հատի չափով մնացորդի պարագայում ծախսվել է ընդամենը 2.891 հատ: 2016 թվականին 3.000 հատ պահանջարկի պարագայում գնվել է ընդամենը 1.267 հատ, իսկ փաստացի ծախսը կազմել է 2.486 հատ: 2017 թվականին նույն 3000 հատի չափով պահանջարկի և գնման ծավալների պարագայում փաստացի ծախսը կազմել է 2.809 հատ:

- *Ինտերֆերոն ալֆա 2Ա-3ՄՄ* դեղի պահանջարկը 2015 թվականին ներկայացվել է 2.000 հատ, գնվել է 821 հատ, իսկ տարվա ծախսը կազմել է 1.097 հատ: 2016 թվականին նույն պահանջարկի պարագայում՝ հաշվի առնելով 1.093 հատի չափով առկա մեծաքանակ մնացորդը, գնում չի կատարվել, իսկ փաստացի ծախսը կազմել է 1.058 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է 2.500 հատ, պայմանագիրը կնքվել է նույն քանակի համար, փաստացի ծախսը կազմել է 1.294 հատ:

- *L - ասպաարագինազա 10000* դեղի պահանջարկը և գնման ծավալը 2015 թվականին կազմել են 120 հատ, տարվա ծախսը կազմել է 3 հատ: 2016 թվականին նույն պահանջարկի պարագայում գնվել է 20 հատ, տարվա փաստացի ծախսը կազմել է 56 հատ: 2017 թվականին պահանջարկը ներկայացվել է 146 հատի չափով, իսկ փաստացի ծախսը կազմել է 50 հատ:

- *L - ասպաարագինազա 5000 դեղի* պահանջարկը և գնման ծավալը 2015 թվականին կազմել են 260 հատ, տարվա փաստացի ծախսը կազմել է 6 հատ: 2016 թվականին առկա մնացորդն օգտագործելու նպատակով գնում չի կատարվել, տարվա փաստացի ծախսը կազմել է 272 հատ: 2017 թվականին ներկայացվել է 365 հատի պահանջարկ, նույն քանակի համար կնքվել է պայմանագիր, փաստացի ծախսը կազմել է 114 հատ:

Գրեթե նույն վիճակն արձանագրվել է նաև *Ինսուլին Ինսուլատարդ/ միջին ազդեցության մարդկային /100ՄՄ/մլ 10մլ, Ինսուլին Միքստարդ/կարճատև և միջին ազդեցության մարդկային /100ՄՄ/ մլ 10 մլ, Ինսուլին մարդու իզոֆան ներարկման լուծույթ 100 ՄՄ/մլ և այլ դեղերի մասով:*

- *Տվյալ տարվա գնումների ծավալների ձևավորման ընթացքում Նախարարության մարդասիրական օգնության պահեստում և բժշկական կազմակերպություններում տարեսկզբի դրությամբ առկա դեղերի քանակների հաշվառումը (հավելված 9)*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենտրոնացված կարգով գնվող դեղերի ընդհանուր ծավալում ամենաբարձր տեսակարար կշիռը պատկանում է հակադիաբետիկ դեղերին՝ ընտրանքային կարգով վերոնշյալ հարցի ուսումնասիրությամբ ընդգրկվել են հենց տվյալ խմբի դեղերը:

***արդյունավետ օգտագործման պահանջից: Տվյալ տարվա դեղերի գնման համար նախատեսված ծախսերի հաշվին գնվել և բաշխվել են իրական պահանջարկը գերազանցող քանակությամբ դեղեր, որոնք բավարարել են նաև հաջորդ տարվա որոշակի քանակության պահանջարկը և որոնց համար պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել են միջոցներ: Արդյունքում, տարեց-տարի գնված դեղերի բաշխումից հետո առաջացել են մեծաքանակ մնացորդներ:***

Օրինակ՝

- *Գլիկլազիդ 60 մգ/Դիաբետոն MR60 մգ դեղի* համար 2015 թվականին հաշվի չի առնվել տարեսկզբի մնացորդը, գնվել է 8.588.500 հատ, տարվա փաստացի ծախսը կազմել է 9.152.225 հատ, իսկ տարեվերջի մնացորդը՝ 4.531.746 հատ (199.850.0 հազ. դրամ), որը կազմում է գրեթե 6 ամսվա ծախսը: 2016 թվականին գնվել է 9.450.000 հատ, փաստացի ծախսվել է 8.586.831 հատ և տարեվերջի մնացորդը կազմել է 5.394.915 հատ (7.5 ամիս կամ 237.3776.3 հազ. դրամ): 2017 թվականին՝ չնայած առկա մեծաքանակ մնացորդին և չնչին տարբերությամբ փաստացի ծախսերին, գնվել է նախորդ տարիներից ավելի շատ քանակով դեղ՝ 10.372.365 հատի չափով, ծախսվել է 12.033.251 հատ դեղ, որի արդյունքում տարեվերջին գոյացել է 5.184.244 հատ դեղի մնացորդ (5 ամիս կամ 217.738.2 հազ. դրամ), որը գումարային արտահայտությամբ 2015-2017 թվականներին կազմել է 654.964.5 հազ. դրամ:

- *Մետֆորմին հիդրոքլորիդ 1000 մգ դեղի* համար 2015 *դեղի* համար հաշվի չի առնվել դեղի տարեսկզբի 498.072 հատի մնացորդը և կնքվել է 5.000.000 հատի պայմանագիր, փաստացի ծախսը կազմել է 2.388.797 հատ, իսկ տարեվերջի մնացորդը կազմել է 3.109.275 հատ (32.243.2 հազ. դրամ), որը գերազանցում է տվյալ տարվա 15 ամսվա փաստացի ծախսը: 2016 թվականին կնքվել է 4.200.000 հատի պայմանագիր և 5.438.432 հատ փաստացի ծախսի արդյունքում տարեվերջի մնացորդը կազմել է 1.883.843 հատ (4.5 ամիս կամ 19.535.5 հազ. դրամ): 2017 թվականին կնքվել է արդեն 8.101.372 հատի պայմանագիր, որը շուրջ երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա պայմանագրային գումարը, փաստացի ծախսը կամել է 7.727.090 հատ, իսկ տարեվերջի մնացորդը կազմել է 2.708.193 հատ (4.5 ամիս կամ 27.759.0 հազ. դրամ): Ընդհանուր առմամբ, դիտարկվող դեղի

մասով մնացորդի գումարը երեք տարվա կտրվածքով կազմել է շուրջ 79,537.6 հազ. դրամ:

- *Ինսուլին կարճատև ազդեցության 100 ՄՄ, 10 մլ դեղի* համար 2015 թվականին կնքվել է 72.000 հատի պայմանագիր, որից տարեվերջի մնացորդը կազմել է 37.584 հատ (75.706.0 հազ. դրամ)՝ ավելի քան կրկնակի անգամ գերազանցելով 6 ամսվա փաստացի ծախսը: 2016 թվականին հաշվի չի առնվել առկա մնացորդը և գնվել է 80.000 հատ դեղ, փաստացի ծախսը կազմել է 60.778 հատ՝ տարվա վերջին առաջացնելով 56.806 հատի չափով մնացորդ (11 ամիս կամ 113.612.0 հազ. դրամ): 2017 թվականին գնվել է 29.600 հատ դեղ, որը՝ հաշվի առնելով նախորդ տարիների իրական ծախսերը, չէր ապահովի առկա մնացորդների օգտագործումը: Արդյունքում, 2017 թվականին 62.830 հատ փաստացի ծախսի դեպքում, տարեվերջի մնացորդը կազմել է 23.576 հատ դեղ (4.5 ամիս կամ 47.152.0 հազ. դրամ): Փաստորեն՝ 2015-2017 թվականներին բյուջետային միջոցների հաշվին գնված դեղերի մասով առաջացել է 235.932.0 հազ. դրամի մնացորդ:

- *Ինսուլին միջին ազդեցության 100 ՄՄ, 10 մլ դեղի* համար 2015 թվականին կնքվել է 144.950 հատի պայմանագիր, որից տարեվերջի մնացորդը կազմել է 83.062 հատ (166.124.0 հազ. դրամ)՝ հաջորդ տարվա համար ապահովելով ավելի քան 9 ամսվա պահուստ: 2016 թվականին գնվող դեղի քանակն ավելացվել է (160.000 հատ), փաստացի ծախսը կազմել է 125.547 հատ՝ հանգեցնելով տարեվերջի մնացորդի էլ ավելի աճին, որը կազմել է 117.515 հատ (11 ամիս կամ 235.030.0 հազ. դրամ): Այդուհանդերձ, դեղի կուտակումների վերացման նպատակով 2017 *դեղի* համար կատարված գնումները քիչ ազդեցություն են ունեցել իրավիճակի վրա՝ 2017 թ. գնվել է 73.000 հատ դեղ, փաստացի ծախսը կազմել է 127.841 հատ, իսկ տարեվերջի մանցորդը կազմել է 62.674 հատ (6 ամիս կամ 125.348.0 հազ. դրամ): Արդյունքում, 2015-2017 թվականներին դիտարկվող դեղի մասով մնացորդի ծավալը կազմել է 526.502.0 հազ. դրամ:

- *Ինսուլին 30/70 կարճատև/միջին ազդեցության խառնուրդ 100 ՄՄ, 10 մլ* 2015 թ. կնքվել է 21.975 հատի պայմանագիր, ծախսվել է 18.048 հատ, իսկ տարեվերջի մնացորդը կազմել է 13.362 հատ (26.724.0 հազ. դրամ)՝ հաջորդ տարվա համար ապահովելով շուրջ 9 ամսվա պահուստ: Չնայած դրան, 2016 թվականին գնվող դեղի քանակն ավելացվել է մինչև 24.000

հատի, փաստացի ծախսը կազմել է 21.057 հատ՝ հանգեցնելով տարեվերջի մնացորդի էլ ավելի աճին, որը կազմել է 16.305 հատ (9 ամիս կամ 32.610.0 հազ. դրամ): 2017 թվականին կատարված գնումները կիսով չափ նվազեցվել են և 20.207 հատ ծախսի պարագայում տարեվերջի մնացորդը կազմել է 7.498 հատ փաստացի ծախսը կազմել է 21.057 հատ (4.5 ամիս կամ 14.996.0 հազ. դրամ):

- *Ինսուլին լիզպրո ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3 մլ դեղի* համար 2015 թվականին կնքվել է 28.470 հատի պայմանագիր, տարեվերջի մնացորդը կազմել է 22.970 հատ (117,147.0 հազ. դրամ), այն դեպքում, երբ տարվա փաստացի ծախսը կազմել է ընդամենը 5.500 հատ (50 ամիս): 2016 թվականին գնվող դեղի քանակն ավելացվել է մինչև 30.463 հատի և թեև փաստացի ծախսն ավելացել է՝ կազմելով 21.369 հատ, սակայն տարեվերջի մնացորդը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ կազմելով 173,338.0 հազ. դրամ գումարով 32.064 հատ (18 ամիս): Դեղի մեծաքանակ մնացորդը հաշվի չի առնվել նաև 2017 թվականին՝ պայմանագրով գնվել է 32.595 հատ դեղ, փաստացի ծախսը կազմել է 27.233 հատ՝ տարեվերջին առաջացնելով 37.426 հատի կամ 190.872.6 հազ. դրամի մնացորդ (16.5 ամիս):

- *Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3 մլ դեղի* համար 2015 թվականին կնքվել է 28.470 հատի պայմանագիր, տարեվերջի մնացորդը կազմել է 23.461 հատ (66.160.0 հազ. դրամ), այն դեպքում, երբ տարվա փաստացի ծախսը կազմել է ընդամենը 5.009 հատ (56 ամիս): 2016 թվականին գնվող դեղի քանակն ավելացվել է մինչև 30.463 հատի, փաստացի ծախսը կազմել է 18.857 հատ, իսկ տարեվերջի մնացորդը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ կազմելով 104.815.3 հազ. դրամ գումարով 35.067 հատ (22 ամիս): 2017 թվականին պայմանագրով գնվել է 176 հատ դեղ, փաստացի ծախսը կազմել է 21.894 հատ՝ տարեվերջին առաջացնելով 13.349 հատի կամ 37.644.2 հազ. դրամի մնացորդ (7 ամիս): Տվյալ դեղը մասամբ փոխարինվել է *Ինսուլին Գլարգին 100ՄՄ, 3մլ դեղով,* որից գնվել է 30.602 հատ՝ առաջացնելով 174.431.4 հազ. դրամի մնացորդ:

- *Օսելտամիվիր – Տամի Ֆլու 75մգ. դեղի* գնումն իրականացվել է 2016 թվականին՝ շրջանակային համաձայնագրով (Ծածկագիր՝ «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2016/9»): 50.000 հատ դեղի համար գնառաջարկ են

ներկայացրել «Վագա Ֆարմ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ները համապատասխանաբար՝ 59 900.0 և 60 050.0 հազ. դրամ գումարով: Արդյունքում, 26.02.2016թ. պայմանագիրը կնքվել է նվազագույն գին ներկայացրած «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հետ: Հատկանշական է, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն դեղը ներմուծել է երկու խմբաքանակով՝ 28.560 և 50.060 հատ (միավորի ներմուծման արժեքները համապատասխանաբար՝ 961 և 1.004 դրամ), իսկ նվազագույն գին առաջարկած «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 2016 թ. ընթացքում ներմուծել է ընդամենը 1.780 հատ: Այլ կերպ՝ մատակարարումը «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հնարավոր կլիներ միայն «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից անհրաժեշտ խմբաքանակները ձեռք բերելու դեպքում: Ընդ որում, մատակարարման արժեքի և ներմուծման գնի միջև տարբերությունը կազմել է 25 %:

- 2017 թվականին Նախարարության կողմից ձեռք է բերվել Ալուվիա, Լոպինավիր/ռիտոնավիր 200մգ+50մգ 187.200 հատ դեղ՝ 47,923.2 հազ. դրամ արժեքով: Տվյալ դեղի ձեռք բերումը գնումների պլանով չի նախատեսվել, այլ գնվել է 2018 թվականի համար: Արդյունքում, Նախարարության կողմից 2017 թվականին հատկացված բյուջետային միջոցների տնտեսման փոխարեն, կատարվել են ծախսեր՝ 2018 թվականի համար նախատեսված դեղորայքի գնման նպատակով: 2017 թվականին գնված դեղը չի բաշխվել՝ առաջացնելով 47,923.2 հազ. դրամի մնացորդ:

➢ Հաշվարկները ցույց են տվել, որ միայն հակադիաբետիկ դեղերի մասով 2015 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված 1.259.736.4 հազ. դրամի գնումներից տարեվերջի մնացորդը կազմել է 778.202.1 հազ. դրամ (62.0 %-ը), 2016 թվականին տվյալ ցուցանիշները կազմել են համաապատասխանաբար՝ 1.401.016.0 հազ. դրամ և 925.530.8 հազ. դրամ (66.0 %-ը), իսկ 2017 թվականին՝ 1.227.283.0 հազ. դրամ և 888.367.5 հազ. դրամ (72.0 %-ը):

➢ Կենտրոնացված կարգով ձեռք բերված բոլոր դեղերի մասով 2015 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված 1.985.055.8 հազ. դրամի գնումներից տարեվերջի մնացորդը կազմել է 1,055.387.0 հազ. դրամ (53.0 %-ը), 2016 թվականին տվյալ ցուցանիշները կազմել են համաապատասխանաբար՝ 2.072.370.5 հազ. դրամ և 1,111,009.8 հազ. դրամ (54.0 %-ը), իսկ 2017 թվականին՝ 2,146,956.1 հազ. դրամ և 1,184,934.2 հազ. դրամ (55.0 %-ը):

## 6. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 2-րդ հավելվածի 28-րդ կետի համաձայն՝ արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ըստ մարդաշնչի ֆինանսավորվող ծրագրերի՝ բյուջետային ծախսերի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդ տարվա հունիսի 1-ի դրությամբ գրանցված և տվյալների շտեմարանում առկա բնակչության թվաքանակը: Ըստ տարիների՝ Նախարարության կողմից բյուջետային ծախսերը հաշվարկվել են ելնելով բնակչության հետևյալ թվաքանակից՝ 2015 թվականի համար 2,935,000, 2016 թվականի համար՝ 2,980,300, 2017 թվականի համար՝ 2,980,300, 2018 թ. համար՝ 2,980,300:

Վերահսկողությամբ պարզվել է, որ 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա բնակչության թիվը կազմել է 2,946,815 (ՊԱԳ-ի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա է եղել 2,971,112 բնակիչ), հետևաբար, 2016 թվականի արտահիվանդանոցային բյուջետային ծրագրերի հաշվարկը պետք է կատարվեր վերոնշյալ թվաքանակով, մինչդեռ հիմք է ընդունվել 2,980,300 թվաքանակը (տարբերություն՝ 33,485 բնակիչ), որը հետագայում որպես ելակետային տվյալ է ընդունվել նաև 2017 թվականի բյուջետային ծախսերի հաշվարկման համար:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2017 թվականի բյուջեի հաշվարկման համար պետք է հիմք ընդունվեր էլեկտրոնային համակարգում 2016 թվականի հունիսի 1-ի դրությամբ գրանցված 3,022,839 բնակչության թվաքանակը, ինչը 24,262 մարդով գերազանցում է վիճակագրական վարչության կողմից ներկայացված 2016 թվականի դրությամբ նույն ցուցանիշը (ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ ՀՀ բնակչության թվաքանակը 2016 թվականին կազմել է 2,988,577, իսկ 2017 թվականին՝ 2,986,151 մարդ): Համաձայն ՊԱԳ-ի տեղեկատվության՝ 2017 թվականի բյուջեի հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվել 2016 թվականի տվյալները:

2018 թվականի բյուջետային ծախսերի հաշվարկման հիմքում ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային համակարգում գրանցված 2,980,300 բնակչության թվաքանակը՝ 2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ էլեկտրոնային համակարգում առկա 2,608,790 բնակչության փոխարեն (տարբերությունը՝ 371,510 բնակիչ):

Ըստ առանձին մարզերի բնակչության թվաքանակի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ բնակչության թվի վերաբերյալ էլեկտրոնային համակարգում գրանցված և վիճակագրական տվյալների միջև տարբերությունները հատկապես էական են Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերում, որը հանգեցրել է բյուջետային ծրագրերի պլանավորման մակարդակի անկման: 2015-2018 թվականների ընթացքում արտահիվանդանոցային ծառայության համար հիմք հանդիսացած բնակչության թվերը ներկայացված են հավելված 10-ում:

ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման N 2 հավելվածի 32-րդ կետի համաձայն՝ արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ըստ մարդաշնչի ֆինանսավորվող ծրագրերի պայմանագրային գումարների հաշվարկման համար հիմք է ընդունվում տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից գրանցված բնակչության թիվը, իսկ նույն հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի՝ պայմանագրային գումարների հաշվարկման համար՝ ըստ կազմակերպությունների գրանցված բնակիչների թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացնում են Երևանի քաղաքապետը և ՀՀ մարզպետները՝ հիմք ընդունելով առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ գրանցված և տվյալների շտեմարանում առկա բնակիչների թվաքանակը: Հատկանշական է, որ 2017 թվականին պայմանագրային գումարների հաշվարկման համար ՀՀ մարզպետներից և Երևանի քաղաքապետից նախարարություն գրություններ չեն ստացվել:

Միաժամանակ, վերոնշյալ որոշման N 2 հավելվածի 7-րդ կետով սահմանվել է, որ «պայմանագրերի կնքման պահին արտահիվանդանոցային բուժօգնության ծրագրերի բյուջետային ծախսերի հաշվարկման համար հիմք ընդունված՝ գրանցված բնակչության թվաքանակի փոփոխության դեպքում նախարարի կողմից՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ, կատարվում է նորմատիվների և միջինացված գների վերահաշվարկ՝ տվյալ տարվա պետական բյուջեով առողջապահության ոլորտի համապատասխան ծրագրերի գծով նախատեսված միջոցների սահմաններում և

ելնելով գրանցված բնակչության թվաքանակից», որի կատարումը չի ապահովվել: Պետական առողջապահական գործակալության կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն, 2015-2017 թվականներին սահմանված կարգով գների հաստատման ընթացքում նորմատիվների վերահաշվարկներ չեն իրականացվել:

Բացի այդ, Նախարարության կողմից բժշկական կազմակերպությունների հետ պայմանագրերն ըստ տարիների կնքվել են համապատասխանաբար՝ 02.02.2015թ., 01.02.2016թ., 09.02.2017թ. և 19.01.2018թ., սակայն ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվել են՝

**1.** 2015 թվականի համար՝ 2014 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա 2,980,389 բնակիչների թվաքանակով,

**2.** 2016 թվականի համար՝ 2015 թվականի մայիսի 31-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա 2,971,112 բնակիչների թվաքանակով:

2017 թվականին պայմանագրային գումարների հաշվարկման համար հիմք է ընդունվել 2016 թվականի պայմանագրային գումարների հաշվարկման համար կիրառված բնակչության թվաքանակը, իսկ 2018 թվականին պայմանագրային գումարների հաշվարկման նպատակով շահառուների թվաքանակի համար հիմք է ընդունվել 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային առողջապահության համակարգում գրանցված՝ 2,798,483 բնակչության թվաքանակը:

Արդյունքում, 2015-2018 թվականների ընթացքում տարեսկզբին արտահիվանդանոցային ծրագրերի և կնքված պայմանագրային գումարների միջև տարբերություններից առաջացել են մնացորդներ, որոնք 2015 թվականին կազմել են 381,777.0 հազ. դրամ, 2016 թվականին՝ 243,391.7 հազ. դրամ, 2017 թվականին՝ 1,199,739.1 հազ. դրամ և 2018 թվականին՝ 1,902,135.1 հազ. դրամ (հավելված 11):

ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանվել է, որ «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» և «Նեղ մասնագիտական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի տարեկան պայմանագրային գումարները պատվիրատուի կողմից ֆինանսավորվում են ամբողջությամբ: Ընդ որում, կազմակերպությունները ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված չափորոշիչներով նախատեսված պայմանները չապահովելու հետևանքով

առաջացող տնտեսումների գումարը կարող են ուղղել սպասարկվող բնակչությանն անվճար կամ արտոնյալ պայմաններով լրացուցիչ դեղերի տրամադրմանը և լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների լրացուցիչ ծավալներով ապահովմանը՝ նախարարի կողմից սահմանված կարգով: Ինչ վերաբերում է Նախարարությանը, ապա այն սահմանված կարգով փաստացի կատարված աշխատանքների չափով նշված ծրագրերում կատարում է միջծրագրային վերաբաշխումներ:

**Նախարարությունն իրակա-նացրել է վերաբաշխումներ՝ խախտումներով**

Գործնականում Նախարարությունն իրակա-նացրել է վերաբաշխումներ՝ խախտելով վերոնշյալ դրույթների պահանջները, և 2015, 2016 և 2017 թվականների բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունները նեղ մասնագիտական ծառայությունների ծրագրերից վերաբաշխվել է համաձայն հավելված 12-ի:

Աղյուսակ 8-ում ներկայացված է ըստ ծրագրերի կատարված վերաբաշխումների վերաբերյալ տեղեկատվությունը:

**Աղյուսակ 8**

հազ. դրամ

| Ծրագրի անվանումը | Վերաբաշխում | | |
|---|---|---|---|
| | 2015թ. | 2016թ. | 2017թ. |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | - 460,000,0 | - 254 266,0 | - 379 000,0 |
| Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ | - 83,000,0 | - 78 055,0 | - 86 000,0 |
| Ընդամենը | - 543,000,0 | - 332 321,0 | - 465,000,0 |
| Ընդամենը՝ 2015-2017թթ. | **- 1 340 321, 0** | | |

2015 թվականին վերոնշյալ 2 ծրագրերով վերաբաշխվել է (նվազեցվել է) 543,000.0 հազ. դրամ, որից 103,000.0 հազ. դրամը ՀՀ կառավարության այլ որոշումներով, որոնցում ուժը կորցրած չեն ճանաչվել Որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթները, հետևաբար՝ ՀՀ կառավարության այլ որոշումների, ինչպես նաև 440,000.0 հազ. դրամի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնության վերաբերյալ ծանուցագրի հիման վրա իրականացված վերաբաշխումները չեն կարող ընդունվել, որպես հիմնավոր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր): ՀՀ

կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի խախտմամբ վերաբաշխվել է 428,561.7 հազ. դրամ:

Նույն կերպ՝ 2016 թվականին վերոնշյալ 2 ծրագրերով վերաբաշխվել է (նվազեցվել է) 332,321.0 հազ. դրամ, որից 19,201.0 հազ. դրամը ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ 313,120.0 հազ. դրամը՝ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնության վերաբերյալ ծանուցագրով: ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի խախտմամբ վերաբաշխվել է 330,294.0 հազ. դրամ:

Նույն կերպ՝ 2017 թվականին դիտարկվող 2 ծրագրերով վերաբաշխվել է (նվազեցվել է) 465,000.0 հազ. դրամ, որից 337,000.0 հազ. դրամը կառավարության որոշմամբ, իսկ 128 000,0 հազ. դրամը՝ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնության վերաբերյալ ծանուցագրով: ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի խախտմամբ վերաբաշխվել է 358,229.1 հազ. դրամ: (հավելված 12):

***Արդյունքում, 2015-2017 թվականներին ՀՀ կառավարության 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների խախտմամբ «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» և «Նեղ մասնագիտական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերով վերաբաշխվել է 1,117,084.8 հազ. դրամ:***

# 7. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԺԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

2015-2017 թվականների ընթացքում Նախարարության և բուժկազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի և փաստացի ֆինանսավորումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ տարվա համար կնքված պայմանագրային գումարների վերաբաշխումների ընթացքում թույլ են տրվել սահմանված պահանջների խախտումներ, որոնք էապես ազդել են վերաբաշխումների գործընթացում պայմանագրային գումարների որոշման հիմնական սկզբունքների պահպանման և օրինաչափության վրա:

Հաշվի առնելով բուժկազմակերպությունների մեծ թվաքանակը և պայմանագրային գումարներում կատարված փոփոխությունների ծավալները՝ ընտրանքային կարգով ուսումնասիրությամբ ընդգրկվել են հիմնականում բարձր պայմանագրային գին ունեցող բուժկազմակերպությունները:

**Պայմանագրային գումարների և փաստացի ֆինանսավորման միջև տարբերությունների առկայությունը չունի բավարար տնտեսագիտական հիմնավորում և կրում է արհեստական բնույթ**

Հավելված 13-ում ներկայացված են այն բուժկազմակերպությունները, որոնց հետ Նախարարության կողմից վերջին երեք տարվա ընթացքում շարունակաբար կնքվել են պայմանագրեր նախորդ տարվա փաստացի ֆինանսավորումներից զգալի պակաս ծավալով: Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ տարեցտարի կնքված պայմանագրային գումարների և փաստացի ֆինանսավորման միջև տարբերությունների առկայությունը չունի բավարար տնտեսագիտական հիմնավորում և կրում է արհեստական բնույթ: Միայն ընտրանքով ընդգրկված թվով 14 բուժկազմակերպությունների մասով կնքված պայմանագրային գումարների և փաստացի ֆինանսավորման միջև 2015 թվականին արձանագրվել է 1,979,594.0 հազ. դրամի տարբերություն, որը կազմել է պայմանագրային գումարի 13.4 %-ը, 2016 թվականին համապատասխանաբար՝ 1,830,075.0 հազ. դրամ և 12.3 %: Չնայած այն հանգամանքին, որ 2017 թվականին պայմանագրային գումարների վերաբաշխումների տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 5.5 %, այդուհանդերձ, արձանագրված տարբերությունները՝ գումարային արտահայտությամբ, մնացել են բավականին բարձր՝ 865,855.0 հազ. դրամի չափով:

Միաժամանակ, Նախարարության կողմից բուժկազմակերպությունների հետ կնքված պայմանագրային գումարների որոշման գործում արձանագրվել են նաև հակառակ միտումներ, երբ պայմանագրային գները սահմանվել են նախորդ տարվա փաստացի ֆինանսավորման գումարի գերազանցմամբ (հավելված 14): Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է ընդամենը թվով 7 բուժկազմակերպությունների հետ կնքված պայմանագրային գումարները, որի արդյունքում պարզվել է, որ 2015 թ. կնքված պայմանագրային գումարների և փաստացի ֆինանսավորումների միջև տարբերությունները կազմել են 8.6 %, 2016 թ.՝ 9.0 %, իսկ 2017 թ.՝ 9.4 %:

***Այսպիսով՝ Նախարարության կողմից բուժկազմակերպությունների հետ տվյալ տարվա պայմանագրային գումարների որոշման ընթացքում հաշվի չեն առնվել նախորդ տարվա փաստացի ֆինանսավորման ցուցանիշները, որը հանգեցրել է նրանց միջև բյուջետային միջոցների վերաբաշխմանն ինչպես պայմանագրային գումարների ավելացման, այնպես էլ դրանց նվազեցման ուղղությամբ:***

**Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրային գումարների ավելացումը Նախարարությունն իրականացրել է ինքնուրույնաբար՝ առանց Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնության (հավելված 15):**

Նախարարության կողմից չի ապահովվել Որոշման V գլխի 35-րդ կետի պահանջն՝ ըստ որի, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կանխատեսվող գերակատարում-ների չափով պայմանագրային գումարները կարող են ավելացվել ծրագրային պայմանագրային գումարի մինչև 10 %-ի, իսկ կազմակերպություններում տարեկան պայմանագրային գումարների ավելացման ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ընդհանուր պայմանագրային գումարի 5 %-ի չափով, իսկ այդ գումարներից ավելի լինելու դեպքում պայմանագրային գումարի վերաբաշխումները կատարվում են նախարարի կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ:

**Առկա է միտում, երբ կնքված պայմանագրային գումարներում կատարված փոփոխությունները հանգեցրել են ՀՀ մարզերի բուժկազմակերպությունների պայմանագրային գումարների նվազմանը և առաջացած ազատ միջոցների վերաբաշխմանը Երևանի բժշկական կազմակերպությունների միջև**

2015-2017 թվականներին Նախարարության և բուժկազմակերպությունների միջև կնքված պայմանագրային գումարների և հետագա փոփոխությունների (վերաբաշխումների) ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև հստակ միտում, երբ կնքված պայմանագրային գումարներում կատարված փոփոխությունները հանգեցրել են ՀՀ մարզերի բուժկազմակերպությունների պայմանագրային գումարների նվազմանը և արդյունքում առաջացած ազատ միջոցների վերաբաշխմանը Երևանի բժշկական կազմակերպությունների միջև (հավելված 16): Ավելին, հենց Երևանի բուժկազմակերպություններին են բաժին ընկել տարեսկզբի դրությամբ պետական բյուջեով հաստատված, սակայն չբաշխված ծրագրային գումարներն ու պետական բյուջեի ճշտգրտման արդյունքում առողջապահական ծրագրերի իրականացմանն ուղղված ավելացված գումարները (հավելված 17):

## 8. «ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՎ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕՐԹԵԶՆԵՐՈՎ ԵՎ ԿՈՐՍԵՏՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) 2015 թվականին նախատեսվել և փաստացի կատարվել են 98,811.0 հազ. դրամի, 2016 թվականին՝ 81,811.0 հազ. դրամի, իսկ 2017 թվականին՝ 50,685.0 հազ. դրամի ծախսեր: Ծրագրի իրականացման նպատակով Նախարարության կողմից 2015-2016 թվականներին պայմանագրեր են կնքվել «Օրթեզ» ՍՊԸ-ի, «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտրոն» և «Գյումրու Արիե Կուփերսթոքի անվան վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ների հետ, իսկ 2017 թվականին՝ «Օրթեզ» ՍՊԸ-ի, «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտրոն» ՓԲԸ-ի հետ: Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրային գումարների, ինչպես նաև, նրանց կողմից մատուցված

ծառայությունների քանակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 18-ում:

Ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի արդյունավետության գնահատման նպատակով դիտարկմամբ ընդգրկվել են կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների կազմակերպման հարցերը, դրանց գների ձևավորման մեխանիզմները և իրավական հիմքերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

- Նախարարության հետ կնքված պայմանագրերին կից հավելվածով **չեն ներկայացվել կորսետների և օրթեզների տեխնիկական բնութագրերը**, որով պետք է առաջադրվեին դրանց ֆունկցիոնալ և որակական հատկանիշների նկատմամբ պահանջները: **Փաստորեն՝ յուրաքանչյուր կազմակերպություն ինքնուրույնաբար որոշել և իր մասնագիտական հնարավորությունների և փորձառության սահմաններում է պատրաստել երեխաների կորսետներն ու օրթեզները**:

- **Նախարարության կողմից ծրագիրն իրականացնող կազմակերպությունները տարիներ շարունակ որոշվել են առանց մրցույթ հայտարարելու**՝ խախտելով ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. «Շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկը հաստատելու մասին» թիվ 220-Ն որոշման պահանջը, միաժամանակ սահմանափակելով դիտարկվող ծառայություններ մատուցող այլ տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը ծրագրի իրականացմանը և մրցակցային մթնոլորտի ստեղծմանը:

- Ծառայությունների միավոր գների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաշվետու ժամանակաշրջանում դրանք ունեցել են նվազման միտում: Այսպես՝ 2015 թվականին մեկ օրթեզի գինը սահմանվել է 50.0 հազ. դրամ, 2016 թվականին՝ 45.9 հազ. դրամ, 2017 թվականին՝ 27.7 հազ. դրամ, իսկ մեկ կորսետի գինը 2015 թվականին սահմանվել է 80.0 հազ. դրամ, իսկ 2016-2017 թվականներին՝ 76.2 հազ. դրամ: **Հատկանշական է, որ միավորի գները հաստատվել են անկախ պատրաստվող օրթեզի կամ կորսետի քանակից, չափից և այլ առանձնահատկություններից:** Օրինակ՝

- **Պայմանագրի գինը ձևավորվել է անկախ մատուցվող ծառայությունների քանակից**, այն պարագայում, երբ ծառայության մեկ միավորը կարող է բաղկացած լինել ինչպես մեկ, այնպես էլ երեք մասից: Այլ կերպ՝ նույն

գումարի սահմաններում ծառայություն մատուցող կազմակերպությունները հնարավորինս կձգտեն պատրաստվող արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը, որը չի կարող չանդրադառնալ դրա որակի վրա, մինչդեռ այդ հարցերը Նախարարության կողմից որևէ կերպ չեն վերահսկվել:

- Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ պայմանագրային գների և մեկ միավոր ծառայության գնի որոշման հիմքում ընդունվել են ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից հաստատված վճարովի ծառայությունների գնացուցակները, սակայն վերջին հաշվով ընդունվել է «Օրթեզ» ՍՊԸ-ի ներկայացրած ինքնարժեքի հաշվարկը, որից ելնելով էլ ընդունվել է արտադրանքի միջին կշռված գինը: Ընդ որում, «Օրթեզ» ՍՊԸ-ն Նախարարության կողմից գնահատվել է որպես «հիմնական մատակարար», իսկ մյուս կազմակերպությունների ներկայացրած հաշվարկները՝ բարձր ինքնարժեքի պատճառով, հաշվի չեն առնվել:

- Նախարարության կողմից ներկայացված մատուցվող ծառայությունների մեկ միավորի գնի հաշվարկների վերլուծությամբ պարզվել է, որ արտադրանքի ինքնարժեքը նվազել է հիմնականում աշխատավարձի նվազման (2017 թվականին՝ 2015 թվականի համեմատ, գրեթե երեք անգամ օրթեզավորման դեպքում), դեղերի և բժշկական նշանակության պարագաների նյութածախսի կրճատման (2017 թվականին 2015 թվականի համեմատ, 3.6 անգամ նույն օրթեզավորման դեպքում) հաշվին: Տվյալ փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ **պատրաստվող արտադրանքի գնի էժանացումը հետևանք է կամ նախորդ տարիներին մատուցվող ծառայությունների գնի ուռճացման, կամ պատրաստվող օրթեզների և կորսետների որակական ցուցանիշների էապես վատթարացման**:

- Նախարարության կողմից ներկայացված 2017 թ. մատուցվող ծառայությունների մեկ միավորի գնի հաշվարկի համար հիմք է հանդիսացել «Օրթեզ» ՍՊԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի մատուցված ծառայությունների միջին կշռված գինը՝ 27.7 հազ. դրամի չափով, մինչդեռ պայմանագրով օրթեզով ապահովման ծառայության մեկ միավորի գինը սահմանվել է 45.9 հազ. դրամ: Արդյունքում, 2016 թվականին «Օրթեզ» ՍՊԸ-ի գնացուցակով պայմանագիր կնքելու դեպքում **կարող էին տնտեսվել 18,964,4 հազ. դրամի բյուջետային միջոցներ** (հավելված 19):

# 9. ՀՀ-ՈՒՄ ՁԻԱՀ-Ի ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ-ում Գլոբալ հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) գործունեության հիմնական ուղղություններն են դրամաշնորհային աջակցությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրերին: Դրամաշնորհային միջոցների հիմնական ստացող է հանդիսացել Նախարարությունը:

2015 թվականին Նախարարության կողմից մշակվել և Հիմնադրամի կողմից հաստատվել են 2016-2018 թվականներին տուբերկուլոզի և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի դրամաշնորհային ծրագրերը՝ համապատասխանաբար 9,2 միլիոն և 5,5 միլիոն ԱՄՆ դոլար արժեքով, որոնց վերաբերյալ Շրջանակային համաձայնագիրը վավերացվել է 2015 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից:

***ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացման դրամաշնորհային ծրագիր***

ՀՀ կառավարության 26.02.2015թ. թիվ 183-Ն որոշմամբ հաստատված՝ 2015 թվականին Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ընթացիկ եկամուտները՝ ներառյալ տարեսկզբի ազատ մնացորդը, նախատեսվել է 417,812.29 հազ. դրամի, իսկ փաստացի ծախսերը՝ 417,812,2 հազ. դրամի չափով: Հետագայում, ՀՀ կառավարության 05.11.2015թ. թիվ 1290-Ն որոշմամբ եկամուտները և ծախսերը ավելացվել են 407,228.4 հազ. դրամով՝ կազմելով համապատասխանաբար 825,040.7 հազ. դրամ և 825,040.6 հազ. դրամ: Տարվա ընթացքում փաստացի եկամուտները կազմել են 829,508.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը՝ 821,897.54 հազ. դրամ կամ նախատեսվածի 99.1%: Ծախսերի կազմում 211,101.3 հազ. դրամը (25.7 %) հատկացվել է ենթաստացող կազմակերպություններին, 445,855.0 հազ. դրամը (54.2 %) ուղղվել է գնումների ընթացակարգով դեղերի, ծախսանյութերի, բժշկական կահույքի ձեռք բերմանը, 50,197.7 հազ. դրամը (6.1 %) կազմել են աշխատավարձի և հավելավճարների, 60,381.3 հազ. դրամը՝ (7.3 %) ծառայությունների և ապրանքների ձեռք բերման, 54,261.9 հազ. դրամը (6.6 %) շենքերի և շինությունների վերանորոգման և 100.0 հազ. դրամը՝ այլ ծախսերը: Տարեվերջի մնացորդը ձևավորվել է 7,611.15 հազ. դրամի չափով:

2016 թվականին Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորումը կազմել է 1,326,004.3 հազ. դրամ, իսկ պետության կողմից կատարված համաֆինանսավորումը՝ 84,621.02 հազ. դրամ: Փաստացի

ծրագրային ծախսը կազմել է 983,278.2 հազ. դրամ կամ նախատեսվածի 74.2 %-ը, իսկ համաֆինանսավորման ծախսը՝ 80,778.8 հազ. դրամ կամ 95.5 %-ը: Կատարված 1,064.057.0 հազ. դրամ ընդհանուր ծախսերից 481,757.3 հազ. դրամը (45.3 %), հատկացվել է ենթաստացող կազմակերպություններին, 92,089.0 հազ. դրամը (8.6 %) կազմել են աշխատավարձը և հավելավճարները, 49,522.1 հազ. դրամը (4.7 %)՝ հարկերը և պարտադիր վճարները, 440,688.7 հազ. դրամը (41.4 %)՝ դեղերի, ծախսանյութերի, սարքավորումների և բժշկական կահույքի ձեռք բերման ծախսերն են, այդ թվում՝ 418,356.3 հազ. դրամը ոչ դրամային՝ ուղղակի գնումների տեսքով:

2017 թվականին Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորումը կազմել է 652,291.86 հազ. դրամ, իսկ պետության կողմից կատարված համաֆինանսավորումը՝ 48,793.22 հազ. դրամ: Փաստացի ծախսը դրամաշնորհի ծրագրով կազմել է 702,501.6 հազ. դրամ, իսկ համաֆինանսավորման ծախսը՝ 48,372.24 հազ. դրամ կամ 99.1 %-ը: Կատարված 750,873.8 հազ. դրամի ընդհանուր ծախսերից 301,740.3 հազ. դրամը (40.2 %), հատկացվել է ենթաստացող կազմակերպություններին, 95,994.33 հազ. դրամը (12.8 %) կազմել են աշխատավարձի և հավելավճարների ծախսերը, 44,734.6 հազ. դրամը (5.9 %)՝ հարկերը և պարտադիր վճարները, 308,404.6 հազ. դրամը (41.1 %)՝ դեղերի, ծախսանյութերի, սարքավորումների և բժշկական կահույքի ձեռք բերման, այդ թվում՝ 294,909.4 հազ. դրամը (613,983.3 $) ոչ դրամային՝ ուղղակի գնումների տեսքով (հավելված 20):

***Հիմնադրամի միջոցների հաշվին կատարված գնումների գործընթացի վերաբերյալ***

Հիմնադրամի դրամաշնորհային միջոցներից 2015 թվականին Նախարարության կողմից կատարվել են 561,868.3 հազ. դրամի գնումներ, որից բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով ծախսվել է 445,855.0 հազ. դրամ, իսկ այդ գումարից 425,616.0 հազ. դրամը կամ 95.0 %-ը (իսկ ընդհանուր գումարի 75.0 %-ը) կազմել են «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերը:

2014 թվականի նոյեմբեր ամսին անցկացվել է շրջանակային համաձայնագրով նախատեսված մրցույթ՝ բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերման նպատակով: Մրցույթին հայտ է ներկայացրել թվով 8 կազմակերպություն հավելված 21-ում նշված գնային առաջարկներով:

Հաղթող է ճանաչվել «Մեդիտեք» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժիններով, որի հետ կնքվել է 143,608.0 հազ. դրամի չափով պետական գնման պայմանագիր:

**Տեխնիկական բնութագիրը կազմվել է մրցակցության հավասար պայմանների ստեղծման վերաբերյալ պահանջների խախտմամբ**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 5-րդ չափաբաժնով գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմվել է մրցակցության հավասար պայմանների ստեղծման վերաբերյալ պահանջների խախտմամբ՝ առաջացնելով խոչընդոտներ գնումների գործընթացում մրցակցության համար: Տվյալ սարքավորման տեխնիկական բնութագիրը ուղղակի հղում է պարունակում որոշակի՝ ՌԴ-ում գրանցված «Ամիկո» ՓԲԸ-ի կողմից արտադրվող ապրանքի տեխնիկական բնութագրին, որի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում հանդիսանում է հենց «Մեդիտեք» ՍՊԸ-ն: Արդյունքում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 5-րդ կետի պահանջների խախտման հետևանքով տվյալ չափաբաժնով այլ մասնակիցների կողմից հայտեր չեն ներկայացվել:

Շուկայական գների ձևավորման համար հիմք է ծառայել գնահատող հանձնաժողովին «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 87,000.0 հազ. դրամ արժեքով առաջարկը, որը 10,000.0 հազ. դրամով գերազանցել է իր իսկ կողմից հետագայում մրցույթում ներկայացված գնի մակարդակը:

Ըստ Գլոբալ հիմնադրամի համակարգող խմբի կողմից տրամադրված փաստաթղթերի՝ ֆլյուրոգրաֆիայի համալիրի արժեքը կազմել է շուրջ 40,536.0 հազ. դրամ (24,956.0 հազ. դրամ ֆլյուրոգրաֆիայի համալիր + 15,580.0 հազ. դրամ Mitsubishi Canter Fuso ավտոմեքենա)12, որը 36,400.0 հազ. դրամով պակաս է մրցույթում հաղթած գնառաջարկից: Ֆլյուրոգրաֆիայի համալիրի արժեքի վերաբերյալ վերոնշյալ ցուցանիշը հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տվյալներով:

[12] «Ամիկո» ՓԲԸ-ի կողմից արտադրված սարքավորումների գնացուցակում տվյալ սարքավորման գինը՝ համաձայն 06.10.2017թ. դրությամբ Medcom.ru ինտերնետային էջում տեղակայված տվյալների, կազմել է 2,380.0 հազ. ռուսական ռուբլի, որը համարժեք է 19,770.0 հազ. դրամին:

**«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից շուկայական գների ուսումնասիրության ընթացքում ներկայացվել ենսարքավորումների իրական արժեքն էապես գերազանցող առաջարկներ, որոնք էլ հետագայում օգտագործվել են նախահաշիվները կազմելու և նույն «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ բարձր արժեքով պայմանագիր կնքելու համար**

Նույն մրցույթին 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով շուկայական գների ուսումնասիրությունը նույնպես կատարվել է, որին արձագանքել է միայն «Մեդիտեք» ՍՊԸ-ը՝ 3-րդ չափաբաժնի համար ներկայացնելով 18,000.0 հազ. դրամ, իսկ 4-րդ չափաբաժնով 59,500.0 հազ. դրամի գնառաջարկ: Մրցույթի արդյունքում «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ կնքվել են պայմանագիր ըստ չափաբաժինների համապատասխանաբար՝ 13,650.0 հազ. դրամ և 52,250.0 հազ. դրամ գումարով: Վերոնշյալ չափաբաժինների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մատակարարված 52,250.0 հազ. դրամի սարքավորման ձեռք բերման արժեքը կազմել է 21,234.0 հազ. դրամ, իսկ 13,650.0 հազ. դրամով մատակարարվածինը՝ 3,391.0 հազ. դրամ, որը հիմնավորվել է Գլոբալ հիմնադրամի համակարգող խմբի կողմից տրամադրված փաստաթղթերով և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տվյալներով (հավելված 22): Փաստորեն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից շուկայական գների ուսումնասիրության ընթացքում ներկայացվել են սարքավորումների իրական արժեքն էապես գերազանցող առաջարկներ, որոնք էլ հետագայում օգտագործվել են նախահաշիվները կազմելու և նույն «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ բարձր արժեքով պայմանագիր կնքելու համար:

2015 թվականի նոյեմբեր ամսին անցկացվել է շրջանակային համաձայնագրով նախատեսված մրցույթ՝ բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերման նպատակով: Ընդ որում, մրցույթն անցկացնելիս ներկայացվել է պայման, որ սարքավորումները կգնվեն ֆինանսական միջոցների առկայության դեպքում և առանց նախահաշվային գնի: Մրցույթին հայտ է ներկայացրել միայն «Մեդիտեք» ՍՊԸ-ն 281,880.0 հազ. դրամ գնառաջարկով, որի հետ էլ 16.12.2015թ. կնքվել է սարքավորումների մատակարարման պայմանագիր, ընդ որում, գումարն ամբողջությամբ վճարվել է կանխավճարի տեսքով:

**Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմվել է մի շարք պահանջների խախտմամբ՝ առաջացնելով խոչընդոտներ գնումների գործընթացում մրցակցության համար:**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ սարքավորման նկարագրում նշված է DICOM 4 ստանդարտ, որը 2015-2017թթ. գոյություն չի ունեցել, հետևաբար՝ նման ստանդարտին համապատասխանող ապրանք չէր կարող առաջարկվել, առավել ևս՝ մատակարարվեր: «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից առաջարկված (ֆենիկս 4000) սարքավորումը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, որի արդյունքում մրցույթը գնահատող հանձնաժողովի կողմից հայտը պետք է մերժվեր, իսկ ապրանքների գնման պայմանագիր չկնքվեր:

Ինչ վերաբերում է մատակարարվող սարքավորման համապատասխանության մասով թույլ տրված սահմանված պահանջների խախտումներին, ապա դրանցից հիմնականները հետևյալներն են: Մասնավորապես՝

- տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ «Դետեկտորի հարթության մեջ չափաբաժինը չպետք է գերազանցի 750 միկրոռենտգեն», սակայն «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ՖԵՆԻԿՍ-4000 սարքավորումը գերազանցել է նախատեսված չափանիշները 50 միկրոռենտգենով՝ մատակարարելով «Դետեկտորի հարթության մեջ չափաբաժինը 800 միկրոռենտգեն» սարքավորում:

- տեխնիկական բնութագրի համաձայն՝ «Կոնտրաստային զգայությունը պետք է կազմեր առնվազն 1.5 տոկոս», որը համարվում է գնման հայտի զգայունության նվազագուն շեմը: Իրականում, «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից առաջարկված և արդյունքում մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագրում կատարվել է նշում զգայունության շեմի 1.5 տոկոսից ոչ ավելի լինելու վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Գլոբալ հիմնադրամի համակարգող խմբի կողմից ներկայացված տեղեկատվության՝ մատակարարված սարքավորման ձեռք բերման արժեքը կազմել է շուրջ 138,132,0 հազ. դրամ (12 x 11,500,0), իսկ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել 281,881.0 հազ. դրամով (12x 23,490,0), շուրջ 2 անգամ ավելի թանկ գնով: Սարքավորման իրական արժեքի վերաբերյալ ցուցանիշները հաստատվել են նաև Գլոբալ հիմնադրամի ներկայացրած տվյալներով (հավելված 22):

***Այսպիսով՝ Գլոբալ հիմնադրամի միջոցներով ձեռք բերվող սարքավորումների նախահաշվային արժեքի չսահմանումը կամ ոչ արդյունավետ գնահատումը հանգեցրել է դրամաշնորհային միջոցների փաստացի ծախսի ավելացմանը, ինչը դիտարկված սարքավորումների մասով կազմել է շուրջ 221,5 մլն. դրամ:***

## 10. «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառուցվածքային փոփոխությունները իրականացվել են փուլային՝ 2017 թվականի ընթացքում: Մասնավորապես՝ կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում իրականացվել են ներքոհիշյալ միջոցառումները՝

- Թվով 10 մարզային մասնաճյուղի մասնագիտական կադրերով թերհամալրված և համապատասխան սարքավորումներով չհագեցած թվով 26 տարածաշրջանային կառույցներում աշխատանքային գործունեության դադարեցում, աշխատանքների կազմակերպում մարզային կենտրոնների կողմից:
- Երևան քաղաքի թվով 4 մասնաճյուղի լուծարում և մեկ՝ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի ստեղծում:
- Կազմակերպության կենտրոնական ապարատի թվով 15 բաժինների միավորում 11-ում:
- Ընդհանուր հաստիքակազմի փոփոխություններ:

Ներկայում Կազմակերպությունն ունի 13 մասնաճյուղ, որից 10-ը ՀՀ մարզերում, իսկ «Երևանի քաղաքային կենտրոն», «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» և «Ակուստիկայի գիտական կենտրոն» մասնաճյուղերը՝ քաղաք Երևանում:

**Վերահսկողությամբ պարզվեց.**

1. ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության միջև 06.05.2015թ. կազմված հանձման-ընդունման ակտով ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանն է հանձնվել Կազմակերպության 48 հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Հետագայում 2015-2018թթ. ընթացքում միայն թվով 25 հասցեներում գտնվող շենք/շինությունների համար են սահմանված կարգով կնքվել տարածքների անհատույց օգտագործման պայմանագրեր: Սակայն

նույն ժամանակահատվածում Կազմակերպության կողմից **օգտագործվել են ևս թվով 26 հասցեներում գտնվող շենք/շինություններ, որոնց օգտագործման համար համապատասխան պայմանագրեր չեն կնքվել**:

Վերոգրյալով խախտվել է ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» (այսուհետ՝ ՔՕ) 10-րդ հոդվածը և 135-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման, հետևաբար օգտագործման իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի «Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ և փակ բաժնետիրական ընկերություններ վերակազմակերպելու ու «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1134-Ն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

**2.** Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Բագրատունյանց 2-րդ նրբանցքի 23 հասցեում գտնվող տարածքը՝ 0.08 հա հողամասով և 1253.5 քմ շենք/շինությունով, ՀՀ կառավարության 14.09.2017թ. թիվ 1126-Ա որոշման համաձայն ուղղակի վաճառքի ձևով 16,842.4 հազ. դրամ արժեքով (գնահատված արժեքի 50 %-ի չափով) օտարվել է քաղաքացի՝ Տ. Տոնոյանին: 19.04.2016թ. կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը լուծվել է 11.10.2017թ.-ի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին համաձայնագրի հիման վրա: Վերահսկողությամբ պարզվեց, որ չնայած վերոնշյալ համաձայնագրին կից 2017 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված ոչ բնակելի տարածքի հանձնման-ընդունման ակտով Բագրատունյանց 2-րդ նրբանցքի 23 հասցեում գտնվող տարածքը Կազմակերպության կողմից հանձնվել է, սակայն նշված տարածքում դեռևս առկա են Կազմակերպությանը պատկանող ակուստիկայի սարք/սարքավորումներ:

Վերոգրյալով խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի «Պետական գույքն օտարելու մասին» թիվ 1126-Ա որոշման պահանջները, քանի որ **առանց Կազմակերպության գույքը ապամոնտաժելու՝ շենքը հանձնվել է գնորդին**:

**3.** Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Անդրֆեդերացիա 2 հասցեում գտնվող տարածքը՝ 0.05 հա հողամասով և

203.5 քմ շենք/շինությունով, ՀՀ կառավարության 20.04.2017թ. թիվ 423-Ա որոշման հավելվածի 21-րդ կետի համաձայն ներկայացվել է օտարման մրցույթով, նվազագույն գին է սահմանվել 6,185.7 հազ.դրամ: Նշված տարածքը 2017 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած մրցույթով օտարվել է քաղաքացի՝ Ա. Դավթյանին 4,700.0 հազ. դրամ արժեքով (օտարման պայմանագիր N809-Օ՝ կնքված 29.09.2017թ.): Հարկ է նշել, որ 23.06.2015թ. կնքված անհատույց օգտագործման թիվ 84/0015 պայմանագիրը դեռևս լուծված չէ:

Վերոգրյալով խախտվել է ՀՀ ՔՕ 476-րդ հոդվածը, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 14-ի «Պետական գույքն օտարելու մասին» թիվ 423-Ա **որոշմամբ չի նշվել տվյալ գույքի՝ երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ**: Բացի այդ, վերոնշյալ որոշման հավելվածի 21-րդ կետում Անդրֆեդերացիա 2 հասցեում գտնվող **տարածքը նշված է, որպես նախկին սանիտարահակահամաճարակային տեղամաս, այնինչ** տվյալ հասցեում գտնվող տարածքը, համաձայն 23.06.2015թ. կնքված անհատույց օգտագործման թիվ 84/0015 պայմանագրի, **առ այսօր օգտագործվում էր Կազմակերպության կողմից**: Ի դեպ, վերահսկողության արդյունքում Անդրֆեդերացիա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվել է 2018 թվականի մարտի 17-ին՝ համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Կազմակերպության դիմումին ի պատասխան տրված տեղեկանքի:

**4.** Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Հերցենի 25 հասցեում գտնվող տարածքը՝ 0.32447 հա հողամասով և 1443 քմ շենք/շինությունով, որն օգտագործվում է Կազմակերպության կողմից առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր ունենալու, ՀՀ կառավարության 20.04.2017թ. թիվ 423-Ա որոշման հավելվածի 20-րդ կետի համաձայն ներկայացվել է օտարման մրցույթի միջոցով: Հարկ է նշել, որ նշված գույքը դեռևս չի օտարվել:

Վերոգրյալով խախտվել է ՀՀ ՔՕ 476-րդ հոդվածը, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 14-ի «Պետական գույքն օտարելու մասին» թիվ 423-Ա որոշմամբ չի նշվել տվյալ գույքի՝ երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ: Բացի այդ, վերոնշյալ որոշման հավելվածի 20-րդ կետում Հերցենի 25 հասցեում գտնվող տարածքը նշված է որպես վարչական տարածք, այնինչ, տվյալ հասցեում գտնվող տարածքը,

առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր ունենալու, առ այսօր փաստացի օգտագործվում է Կազմակերպության կողմից:

5. Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում Կազմակերպության կողմից հետ վերադարձման ենթակա շենք/շինությունների պահպանման համար 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել են շուրջ 3,447.9 հազ. դրամի ծախս:

# 11. «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ (այսուհետ՝ Ինստիտուտ) հանդիսանում է բժիշկների հետդիպլոմային կրթության, վերապատրաստման, գիտական և բուժկանխարգելիչ աշխատանքների կազմակերպման ճանապարհով շահույթ ստանալու նպատակով ստեղծված առևտրային կազմակերպություն՝ 100% պետական բաժնեմասով: Այն ստեղծվել է հիմնադրի՝ Նախարարության 1999թ. մայիսի 12-ի թիվ 269 հրամանով: Համաձայն Ինստիտուտի կանոնադրության 13-րդ կետի, ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հաստատումն իրականացվել է հիմնադրի կողմից: ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 433-Ա հրամանի համաձայն Ինստիտուտի տնօրեն է նշանակվել Ա. Բազարչյանը, ով մինչև օրս զբաղեցնում է այդ պաշտոնը:

**Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծություն**

Ինստիտուտի եկամուտները 2015 թվականին նախատեսվել են 369,424.7 հազ. դրամ, ծախսերը՝ 366,488.9 հազ. դրամ, իսկ շահույթը կանխատեսվել է 2,935.8 հազ. դրամ կամ ընդամենը 0.8%: Փաստացի մուտքերը կազմել են 366,682.0 հազ. դրամ, ծախսերն իրականացվել են 395,851.0 հազ. դրամ գումարով:

2015 թվականի եկամուտներում պետական պատվերով կատարված աշխատանքների դիմաց մուտքերը կազմել են 232,407.0 հազ դրամ, ինչը կազմել է ընդհանուր եկամտի 63.4%-ը: Պետական պատվերի շրջանակներում կնքվել են խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության, առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների մատուցման մասին թվով 3 պայմանագրեր: Պետական պատվերի շրջանակներում ծրագրերն իրականացվել են ամբողջ ծավալով:

Եկամուտների 135,238.0 հազ. դրամը կամ 36.9%-ը կազմել են «այլ եկամուտները», որի կազմում էական տեսակարար կշիռ ունեն կրթական, դրամաշնորհային,

լաբորատոր հետազոտությունների և վարձակալությունից ստացված եկամուտները: Դրանք կազմել են համապատասխանաբար՝ 45,832.6 հազ. դրամ (33.9%), 35,356.0 հազ. դրամ (26.1%), 26,245.0 հազ. դրամ (19.4%) և 10,038.8 հազ. դրամ (7.4%):

2015 թվականին ծախսերը կազմել են 395,851.0 հազ դրամ, որի գերակշիռ մասը բաժին է ընկել «հաստիքային աշխատողների աշխատավարձ» և «այլ ծախսեր» հոդվածներին, համապատասխանաբար՝ 206,548.7 հազ. դրամ (52.2%) և 143,830.5 հազ. դրամ (36.3%) գումարներով:

Տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով վնասը կազմել է 29,169.0 հազ. դրամ, որից 19,620.0 հազ. դրամը՝ հարկային օրենսդրության խախտման դիմաց պատժամիջոցների կիրառման արդյունքում: Հարկային պարտավորության գերակշիռ մասը արձանագրվել է ԱԱՀ-ի գծով՝ 9,344.0 հազ. դրամ և եկամտահարկով՝ 8,376.0 հազ. դրամ:

Ինստիտուտի եկամուտները 2016 թվականին նախատեսվել են 727,155.5 հազ. դրամ, ծախսերը՝ 723,455.5 հազ. դրամ, շահույթը ծրարգրավորվել է 3,700.0 հազ. դրամ կամ ընդամենը 0.5%: Փաստացի եկամուտները կազմել են 808,444.0 հազ. դրամ, ծախսերն իրականացվել են 805,724.0 հազ. դրամ գումարով, շահույթը կազմել է 2,720.0 հազ դրամ:

2016 թվականին փաստացի 808,444.0 հազ. դրամ եկամուտներում պետական պատվերի մասով դրանք կազմել են 242,277.0 հազ. դրամ, ինչն ամբողջի 30.0%-ն է: Պետական պատվերի շրջանակներում կնքվել են խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության, առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման, ինչպես նաև ստոմատոլոգիական ծառայություններ մատուցելու նպատակով թվով 3 պայմանագրեր, որոնք իրականացվել են ամբողջ ծավալով: Բացի այդ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կապիտալ դրամաշնորհի ծրագրով ստացվել է 27,979.1 հազ դրամ, որից ծախսվել է 18,386.9 հազ. դրամը:

Եկամուտների 70.0%-ը կամ 566,167.0 հազ. դրամը կազմել են «այլ եկամուտները», որից 404,295.6 հազ. դրամը կամ 71.4%-ը գոյացել է դրամաշնորհային ծրագրերից, 48,773.5 հազ. դրամը կամ 8.6%-ը՝ լրացուցիչ կրթական ծրագրերից, 43,357.0 հազ. դրամը կամ 7.7%-ը՝ հետբուհական կրթության վարձավճարներից և այլն:

2016 թվականին ծախսերը կազմել են 805,724.0 հազ. դրամ, որի գերակշիռ մասը բաժին է ընկել «հաստիքային աշխատողների աշխատավարձին» և «այլ ծախսերին», որոնք կազմել են համապատասխանաբար 235,135.1 հազ. դրամ (29.2%) և 516,245.0 հազ. դրամ (64.1%): Նշենք, որ այլ ծախսերում էական է կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով մատուցված ծառայությունների դիմաց տրված վճարի տեսակարար կշիռը, որը «այլ ծախսերում» կազմել է 284,291.0 հազ. դրամ կամ 55.1%:

2016 թվականին ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե շահաբաժին չի վճարվել, քանի որ Ինստիտուտը դեռևս 2011 թվականից կուտակված վնաս է ունեցել, ինչը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 147,541.0 հազ. դրամ:

Ինստիտուտի եկամուտները 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 436,736.0 հազ. դրամ, ինչը կազմել է տարեկան 569,509.0 հազ. դրամ կամ ծրագրային ցուցանիշի 76.7%-ը: Ծախսերը կազմել են 383,825.0 հազ. դրամ, ինչը տարեկան ծրագրային ցուցանիշի 67.6%-է:

Ընդամենը եկամուտներում պետական պատվերի գծով մուտքերը կազմել են 197,547.0 հազ դրամ, ինչն ընդհանուր եկամտի 45.2%-ն է: Պետական պատվերի շրջանակներում կնքվել են խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության և ստոմատոլոգիական ծառայությունների մատուցման թվով 2 պայմանագրեր՝ 209,737.0 հազ. դրամ գումարով: 2017 թվականի 11 ամիսների տվյալներով նշված երկու պայմանագրերով մատուցվել են 197,547.0 հազ. դրամի ծառայություններ կամ պայմանագրով նախատեսվածի 94.7%-ը: Եկամուտների 41.2%-ը կամ 179,723.0 հազ. դրամը «այլ եկամուտներն» են, որից 59,086.0 հազ. դրամը կամ 32.9%-ը մուտքերն են լրացուցիչ կրթական ծրագրերից, իսկ 73,618.0 հազ. դրամը կամ 41.0%-ը՝ հետբուհական կրթության վարձավճարներից:

Ծախսերը 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 568,044.0 հազ. դրամ, որի գերակշիռ մասը բաժին է ընկել «հաստիքային աշխատողների աշխատավարձին» և «այլ ծախսերին», կազմելով համապատասխանաբար 204,046.0 հազ. դրամ (35.9%) և 133,713.0 հազ. դրամ (23.5%): Նշենք որ «այլ ծախսերում» մեծ է կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով մատուցված ծառայությունների դիմաց տրված վճարի տեսակարար կշիռը, ինչը կազմել է 36,975.4 հազ. դրամ կամ 27.7%:

2015-2017 թվականներին առանձին ծրագրեր իրականացնելու նպատակով 49 դեպքով կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր (54,163.9 հազ. դրամ գումարով) այն անձանց հետ, ովքեր Ինստիտուտի աշխատակիցներ են հանդիսացել և լիարժեք դրույք են զբաղեցրել, փաստացի աշխատանքները կատարել են համատեղությամբ: Համաձայն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 99-րդ հոդվածի, համատեղությամբ աշխատանքը համարվում է հիմնական աշխատանքային ժամանակից դուրս միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքը, և աշխատանքային պայմանագրում պետք է նշվեր, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ, ինչը բացակայում է բոլոր պայմանագրերում:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատվել է «Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցություն» դրամաշնորհային ծրագրի միջոցների ծախսման 2017 թվականի նախահաշիվը, կազմելով 49,509.7 հազ. դրամ: Ինստիտուտը սահմանվել է ենթադրամաշնորհատու, որի հետ նախատեսվել է կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր: Սակայն, դեռևս նոյեմբեր ամսից սկսած, ծրագրի իրականացման նպատակով Ինստիտուտի կողմից կնքվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր, այլ կերպ՝ պայմանագրերը կնքվել են վերոհիշյալ որոշումով Ինստիտուտին որպես ենթադրամաշնորհատու սահմանելուց շուրջ 1 ամիս առաջ: Ծրագրի իրականացման նպատակով Նախարարության և Ինստիտուտի միջև 2017 թվականի դեկտեմբերի 4-ին կնքվել է համապատասխան պայմանագիր, որի դրույթները, համաձայն պայմանագրի 8.1 կետի, տարածվել են կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած 2017 թվականին նոյեմբերի 1-ից: Ծրագրի իրականացման շրջանակում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կնքվել են թվով 37 պայմանագրեր՝ 28,700.0 հազ. դրամ գումարով, իսկ դեռևս 2017 թվականի դեկտեմբերի 4-ին Ինստիտուտի տնօրենը թիվ 01-460/3 գրությամբ դիմել է Նախարարություն, ներկայացնելով ֆինանսավորման հայտը՝ պայմանագրով նախատեսված 49,509.7 հազ. դրամն ամբողջությամբ ստանալու համար: Նախարարությունը բավարարել է նշված հայտը և դեկտեմբերի 8-ին դրամաշնորհային ծրագիրը ֆինանսավորվել է 100.0%-ով: 2018 թվականի հունվարի 31-ի դրությամբ պայմանագրի շրջանակում փաստացի ծախսվել է 28,700.0 հազ. դրամ, ծրագրային մնացորդը կազմել է 20,809.7 հազ. դրամ:

***Ստուգմամբ պարզվեց, որ չեն ապահովվել պայմանագրի 2.3.2. և 2.4.1. կետերով նախատեսված դրույթները, որոնք վերաբերում են մոնիթորինգի, իրականացման ընթացքի ու որակի ստուգումներին: Պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվել 2017 թվականի հունվարի 30-ը, սակայն պայմանագրով նախատեսված միջոցառումները դեռևս գտնվում են իրականացման փուլում, իսկ ժամկետը երկարացված չէ:***

**ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին վերանորոգման աշխատանքների կատարման մասին**

Ինստիտուտի 2-րդ հարկի տարածքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և հեղինակային հսկողություն իրականացնելու նպատակով 01.04.2016թ. պայմանագիր է կնքվել «ԱսքմեդԴիզայն» ՍՊԸ-ի հետ՝ 950.0 հազ. դրամ արժեքով: ՀՀ կառավարության 04.08.2016թ. N 801-Ա որոշմամբ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի շրջանակներում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով Նախարարությանը հատկացվել է 27,979.1 հազ. դրամ՝ Ինստիտուտի մասնաշենքի 2-րդ հարկի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար:

**Հսկողությունը չէր կարող իրականացված լինել, քանի որ վերանորոգման աշխատանքները դեռևս չէին սկսվել**

Ուշագրավ է, որ «ԱսքմեդԴիզայն» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծանախահաշ-վային աշխատանքներն ընդունվել են 30.04.2016թ. կազմված հանձնման-ընդունման ակտով, որով ընդունվել է նաև հեղինակային հսկողության իրականացման աշխատանքը՝ 130.0 հազ դրամ գումարով: Բնականաբար, հեղինակային հսկողությունը չէր կարող իրականացված լինել, քանի որ վերանորոգման աշխատանքները դեռևս չէին սկսվել:

Համաձայն պայմանագրի 4.2 կետի «ԱսքմեդԴիզայն» ՍՊԸ-ն պարտավոր է հատուցել պատճառված վնասը, այսինքն ավելի վճարված 130.0 հազ դրամը ենթակա է վերադարձման Ինստիտուտին:

Ըստ կազմված նախագծի վերանորոգման նախահաշվային արժեքը կազմել է 27,970.0 հազ. դրամ: Գնման գործընթացն իրականացվել է բաց ընթացակարգով, հաղթող է ճանաչվել «Մեծ հիմք» Ա/Կ-ն, որի հետ 19.10.2016թ. կնքված պայմանագրի արժեքը սահմանվել է 16,995.0 հազ. դրամ:

**Աշխատանքը կարելի էր կատարել առանց նախագծի, իսկ 950.0 հազ դրամը՝ տնտեսել**

ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման կարգի 27-րդ կետի համաձայն՝ ցածր ռիսկայնության աստիճանի (1-ին կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ աշխատանքները, որոնք կարող են իրականացվել առանց նախագծման և շինարարության թույլտվությունների, հետևաբար աշխատանքը կարելի էր կատարել առանց նախագծի, իսկ 950.0 հազ դրամը՝ տնտեսել:

Հեղինակային հսկողության համար 19.10.2016թ. կրկին կնքվել է պայմանագիր «ԱսքմեդԴիզայն» ՍՊԸ-ի հետ, որին վճարվել է 102.0 հազ. դրամ:

**Նախագծով նախատեսվել է ապամոնտաժված գույքի հանձնում Ինստիտուտին, որը չի կատարվել և հաշվեկշռում չի արտացոլվել**

Ստուգմամբ ի հայտ եկած փաստերը վկայում են, որ վերանորոգման աշխատանքների նախահաշվային արժեքը էականորեն տարբերվել է բաց ընթացակարգով ընտրված մասնակցի կողմից առաջարկված գնից և կազմել է 16,995.0 հազ դրամ, կամ նախահաշվով նախատեսված 27,970.0 հազ դրամի 61%-ը: Նախագծով նախատեսվել է ապամոնտաժված գույքի հանձնում Ինստիտուտին, որը չի կատարվել և հաշվեկշռում չի արտացոլվել:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով ֆինանսավորված 27,979.0 հազ. դրամը Նախարարությունն առանց դրամաշնորհի պայմանագիր կնքելու 10.11.2016թ.-ին հատկացրել է Ինստիտուտին: **Նախարարության կողմից խախտվել է ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937 «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» որոշման պահանջը:** Որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ դրամաշնորհը կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում է,

որի հատկացման պայմանագրում համապատասխան մարմնի ղեկավարի կողմից նշվում է նաև պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերի պատասխանատվությունը: **Այսպիսով, վերոհիշյալ պահանջի չկատարման արդյունքում անորոշ է մնացել չծախսված գումարի՝ 9,584.0 հազ. դրամի տնօրինման հարցը:**

**Ինստիտուտի կողմից վարձակալված գույքի մասին**

Համաձայն Ինստիտուտի և քաղաքացի Գեղամ Չինարյանի միջև 01.07.2016թ. կնքված գույքի վարձակալության պայմանագրի, Ինստիտուտը վարձակալել է թվով 5 անուն տպագրական սարքավորումներ, որի դիմաց պարտավորվել է վճարել ամսական 60 հազ. դրամ վարձավճար: Հետագայում՝ 01.12.2016թ. կնքված պայմանագրով գույքի կազմն ավելացել է, հասնելով 11-ի, իսկ պայմանագրային արժեքը սահմանվել է 118.0 հազ. դրամ: Պայմանագիրը գործել է մինչև 01.12.2017թ., վճարվել է ընդամենը 1,716.0 հազ. դրամ:

**Ուշագրավ է, որ տվյալ գույքը նախկինում սեփականության իրավունքով պատկանել էր Ինստիտուտին և տնօրենի 06.04.2009թ. հրամանով 406.5 հազ. դրամով օտարվել էր Ինստիտուտի աշխատակից՝ տպարանի ղեկավար Գեղամ Չինարյանին:** Այլ կերպ՝ գույքի ձեռք բերման արժեքը կազմել է հետագայում վարձակալության հանձնված գույքի շուրջ 3.5 ամսվա վարձավճարը: Իսկ **վարձակալության պայմանագրի գործողության ողջ ընթացքում Գեղամ Չինարյանը հանդիսացել է Ինստիտուտի տպարանի ղեկավարը և վարձավճարներից բացի ստացել է հաստիքացուցակով նախատեսված աշխատավարձը:**

Ինստիտուտում առկա է եղել «տպարան» ստորաբաժանումը թվով 5 աշխատողներով, սակայն տպագրական աշխատանքների կատարումը պատվիրվել է այլ կազմակերպությունների՝ օրինակ 2015 թվականին բուկլետների և հարցաթերթերի տպագրումը՝ 998,0 հազ. դրամ գումարով, պատվիրվել է «Լիմուշ» ՍՊԸ-ին, 2016 թվականին բուկլետների տպագրումը 1,620.0 հազ. դրամ գումարով՝ «Աշխատանքի գիտական կազմակերպման կենտրոն» ՓԲԸ-ին:

Ինստիտուտի և ֆիզիկական անձանց միջև 2015-2016 թվականների ընթացքում կնքվել են թվով 4 գույքի վարձակալության պայմանագրեր մեկական ամիս ժամկետներով յուրաքանչյուրը՝ 750,0 հազ. դրամ, ընդամենը՝ 3,000.0 հազ. դրամ գումարով: Վարձակալված գույքը՝ պրոցեսոր QDS՝ 3 հատ, մոնիտոր LG FLATRON

E2042՝ 4 հատ, Printer Canon iSENSYS MF3010, լիցենզավորված ծրագրային ապահովում՝ թվով 6 ծրագիր, պետք է օգտագործվեր «Առողջապահություն» հանդեսի հրատարակչական աշխատանքների կազմակերպման նպատակով:

Շուկայի ուսումնասիրությամբ պարզվեց, որ վարձակալած գույքի շուկայական գինը գրեթե համարժեք է վարձակալած գույքի 1 ամսվա վարձավճարին: Հարկ է նշել, որ **վարձատու Զ. Քոլոյանը հանդիսացել է Ինստիտուտի աշխատակից՝ «Առողջապահություն» հանդեսի գլխավոր խմբագիր**:

**Տարածքների օգտագործման մասին**

Ինստիտուտին սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության շենքային տարածքները կազմում են 10649.0 քմ, որից գլխամասային մասնաշենքը՝ 8236.3 քմ, կլինիկայի մասնաշենքը՝ 2412.6 քմ, շինությունները՝ 166 քմ: Հողամասը՝ 0.35264 հա մակերեսով տրամադրվել է վարձակալության իրավունքով:

Ինստիտուտն իր կանոնադրական խնդիրների իրագործման համար զբաղեցրել է ընդամենը 5294.0 քմ տարածք կամ ընդհանուրի 50 %-ը: Անբարեկարգ է 1994 քմ մակերեսով տարածք, որը չի օգտագործվում, իսկ 948.0 քմ մակերեսով տարածքներն օգտագործվում են այլ կազմակերպությունների կողմից: ՀՀ Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ կլինիկայի մասնաշենքը 2412.6 քմ, մակերեսով հետ է վերցվել Ինստիտուտից և հանձնվել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին: Ընդունման-հանձման աշխատանքները դեռևս ընթացքում են:

Վարձակալության հանձնված գույքից Ինստիտուտի եկամուտները կազմել են ընդամենը 26,912.2 հազ. դրամ, որից՝ 2015 թվականին 9,498.8 հազ. դրամ, 2016 թվականին 9,210.4 հազ. դրամ, 2017 թվականին 8,203.0 հազ. դրամ: Մինչդեռ առկա են փաստացի օգտագործվող տարածքներ, որոնց տրամադրման համար պայմանագրեր չեն կնքվել և վարձավճարներ չեն հաշվարկվել: Արդյունքում, Ինստիտուտի եկամուտներն ամբողջությամբ չեն հաշվառվել և ֆինանսական փաստաթղթերում չեն արտացոլվել: Համաձայն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի, շենքերի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների մասով հարկվող շրջանառությունը գույքի արժեքի բացակայության

դեպքում որոշվում է գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5%-ի հաշվարկով:

**ա) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքված վարձակալության պայմանագրի մասին**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ 18.10.2017թ. կնքվել է 184.8 քմ (գլխավոր մասնաշենքի առաջին հարկից՝ 117.5 քմ և 11-րդ հարկից՝ 67.3 քմ) մակերեսով տարածքի վարձակալության պայմանագիր՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով:

Վարձակալության ժամկետ սահմանվել է 18.10.2017թ. մինչև 30.11.2017թ.: Պայմանագրի 3.1 կետով վարձավճարը վարձակալության ամբողջ ժամանակահատվածի համար սահմանվել է 1,265.0 հազ. դրամ: Մինչդեռ, համաձայն կողմերի միջև կնքված կոմունալ ծառայությունների մատուցման պայմանագրի, տարածքն օգտագործվել է 2017 թվականի ամբողջ ընթացքում:

Այս տարածքի մասով վճարվել է 1,265.0 հազ դրամ վարձավճար: Մինչդեռ 01.01.2017-18.10.2017թթ. և 2017 թվականի դեկտեմբեր ամսին **տարածքն օգտագործվել է ապօրինի, առանց պայմանագրի, որի արդյունքում ընկերությունում չի ապահովվել այդ ժամանակահատվածի համար տարածքի օգտագործման դիմաց հաշվարկվող վարձավճարի գանձումը:** Այսպիսով, Ինստիտուտի եկամուտները 2017 թվականին պակաս են հաշվարկվել 713.4 հազ դրամի չափով (10 ամիս*67.3 հազ+67.3*18/30 հազ ): ԱԱՀ հաշվարկով գումարը կկազմի 856.1 հազ դրամ:

**բ) «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման պայմանագրով տրամադրված գույքի մասին**

ՀՀ առողջապահության նախարարի 22.01.2013թ. թիվ 86-Ա հրամանի համաձայն «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ և Ինստիտուտի միջև 14.02.2013թ. կնքվել է կլինիկայի մասնաշենքից 872.1 քմ տարածքի մասով գույքի անհատույց օգտագործման անժամկետ պայմանագիր, վճարվել են միայն տարածքի կոմունալ ծախսերը:

Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հաշվարկված եկամտի գումարը 3 տարիների համար կազմել է 14,090.4 հազ դրամ, իսկ ԱԱՀ հաշվարկով՝ 16,908.5 հազ դրամ:

**գ) Նախարարության լիցենզավորման գործակալության կողմից զբաղեցված տարածքի մասին**

ՀՀ առողջապահության նախարարի 11.09.2013թ. թիվ 2460-Ա հրամանով լիցենզավորման գործակալությունը տեղափոխվել է Ինստիտուտի գլխավոր մասնաշենքի 4-րդ հարկի 344 քմ մակերեսով տարածք: Սակայն գործակալության հետ տարածքի օգտագործման վերաբերյալ որևէ պայմանագիր առկա չէ, իսկ կոմունալ վճարները իրականացվել են Նախարարության կողմից: **Այսպիսով, եկամուտները 2015-2017 թվականներին յուրաքանչյուր տարի պակաս են հաշվարկվել 1,053.6 հազ. դրամ (12 ամիս x 87.8 դրամ/ամիս), ընդամենը 3 տարիների համար՝ 3,160.8 հազ դրամ:** ԱԱՀ հաշվարկով գումարը կլինի 3,792.9 հազ դրամ:

**դ) «Դելտա» ՍՊԸ-ի հետ կնքված վարձակալության պայմանագրի մասին**

Պայմանգիրը կնքվել է 12.07.2013թ. և գործել է մինչև 01.06.2017թ.: **Պայմանագիրը կնքվել է որպես գրասենյակ օգտագործելու նպատակով, սակայն փաստացի տարածքն օգտագործվել է արտադրական նպատակով**:

**ե) «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ կնքված վարձակալության պայմանագրի մասին**

Համաձաձայն «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Ինստիտուտի միջև 24.12.2015թ. կնքված պայմանագրի, վարձակալությամբ տրամադրվել է գլխավոր մասնաշենքի 5-րդ հարկի 419,4 քմ տարածքը մինչև 31.12.2019թ. ժամկետով: Պետական հիմնարկի հետ դեռևս 04.09.2014թ. կնքված է եղել կոմունալ ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր, որով փաստվել է, որ խախտելով ՀՀ օրենսդրության պահանջը շուրջ 16 ամիս պետական հիմնարկի կողմից տարածքը զբաղեցվել է առանց վարձակալության պայմանագրի:

**Եկամուտները 2015 թվականին պակաս են հաշվարկվել 1,284.0 հազ. դրամ (12 ամիս x 107.0 հազ դրամ/ամիս)**, իսկ ԱԱՀ հաշվարկով՝ 1,540.8 հազ. դրամ:

**ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի վերաբերյալ**

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) և Նախարարության միջև 2015 թվականի օգոստոսի 7-ին կնքվել է համաձայնագիր՝ «Հայաստանում տուբերկուլոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» ծրագրի իրականացման նպատակով, մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը ժամկետով: ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 3603-Ա հրամանով հաստատվել էին 2016 և 2017 թվականների աշխատանքային ծրագրերը և բյուջեները, համաձայն որի Ինստիտուտին նախատեսվել էր հատկացնել 2016 թվականին՝ 195,358.5 հազ. դրամ, 2017 թվականին՝ 94,680.0 հազ. դրամ, ընդամենը՝ 290,038.5 հազ. դրամ: Սակայն, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 165-Ն որոշմամբ աշխատանքների կատարման ավարտ է սահմանվել 2016 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ պատվիրված աշխատանքների ծավալը հասցվել է 345,852.4 հազ. դրամի: Այլ կերպ՝ աշխատանքային ծրագրերով պլանավորված ծավալների իրականացման համար նախատեսված 24 ամիս ժամանակահատվածը կրճատվել է մինչև 9-ը ամսի, իսկ աշխատանքների ծավալը ավելացել է 55,813.9 հազ. դրամով կամ 19.2%-ով:

Նախարարությունը՝ որպես Գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրի իրականացնող՝ «ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում, 10.03.2016թ. Ինստիտուտի հետ կնքել է թիվ NAAG-111-6-10-002/30-MOH-NIH-2016-1 դրամաշնորհի տրամադրման պայմանագիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր) 345,852.4 հազ դրամ գումարով, համաձայն որի Ինստիտուտը պարտավորվել է վերոհիշյալ ծրագրի շրջանակներում մինչև 31.12.2016թ. իրականացնել «Մոր և Մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավման և այլ բաղադրիչներով» ամրագրված աշխատանքները:

Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսացել մոր և մանկան առողջության ու ընտանիքի պլանավորման, գերակա ոլորտներում հանրային առողջության համաճարակաբանական վերահսկողության բարելավումը և հանրային ծառայությունների տրամադրման համակարգում թափանցիկության ու հաշվետվողականության կատարելագործումը:

Պայմանագրի հավելված 1-ի աշխատանքային պլանով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը նախատեսվել էր 53 միջոցառումներով աշխատանքների իրականացում, որոնք կատարվել են ինչպես Ինստիտուտի կողմից՝ 273,096.7 հազ. դրամ գումարով, այնպես էլ այլ կազմակերպությունների հետ կնքված 71,713.7 հազ դրամի գնման պայմանագրերի համաձայն: **Աշխատանքների կատարման ժամանակ չի օգտագործվել *1,042.0 հազ դրամը*: Մինչդեռ, համաձայն Պայմանագրի 2.4.4 կետի, Նախարարությունը պետք է Ինստիտուտից պահանջեր վերադարձնել ծրագրի իրականացման ընթացքում տնտեսված գումարները:**

Դրամաշնորհի տրամադրման պայմանագրի թվով 12 աշխատանքների մասով «Մոր և մանկան առողջության, ընտանիքի պլանավորման, վերարտադրողական առողջության որակյալ ծառայությունների հասանելիության բարելավման ծառայությունների ձեռքբերում» բաղադրիչով պայմանագիր է կնքվել «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ, պայմանագրային գումարը կազմել է 57,150.0 հազ. դրամ, իսկ թվով 4 աշխատանքների մասով՝ 14,563.7 հազ. դրամ գումարով, կնքվել են պայմանագրեր կահույքի, համակարգչային տեխնիկայի և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման համար: Անվանացանկի աշխատանքներից 11-ով՝ 125,026.4 հազ. դրամ գումարով, նախատեսվել է իրականացնել համակարգչային ծրագրային ապահովման փաթեթների ստեղծում և ներդրում, իսկ 26-ի մասով, կամ 149,112.3 հազ. դրամ գումարով՝ ուղեցույցների, ուսուցողական նյութերի նախապատրաստում և դասընթացների իրականացում:

«Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրով մշակվել են թվով 7 ուղեցույցներ, որոնք հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 15.09.2016թ. թիվ 2830-Ա հրամանով և տպագրվել յուրաքանչյուրից 300-ական օրինակ: Հարկ է նշել, որ Պայմանագրով «հղիների ախտաբանության հոսպիտալացման ցուցումների կառուցվածքի իրավիճակի գնահատում հանրապետությունում, ախտաբանությունների վարման գործընթացի ուսումնասիրություն» աշխատանքի համար նախատեսվել է հատկացնել 6,627.6 հազ. դրամ, սակայն, առանց Պայմանագրում փոփոխություն կատարելու, տվյալ աշխատանքի կատարման համար Ինստիտուտի և «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրով

նախատեսվել և փաստացի վճարվել է *12,327.4 հազ. դրամ* կամ *5,699.8 հազ. դրամով* ավելի:

Ինստիտուտի կողմից Պայմանագրի շրջանակներում կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով կատարված աշխատանքների իրականացման ընթացքի ստուգմամբ արձանագրվեց հետևյալը.

***Պայմանագրով նախատեսված միջոցառումները չեն կատարվել, այսպես.***

- ՊԱԳ-ի կայքէջի (www.sha.am) բարելավման ուղղությամբ աշխատանքները սկսվել են, սակայն չեն ավարտվել: Նախատեսված աշխատանքի փոխարեն մշակվել է Ինստիտուտի կայքէջը, ինչը չէր նախատեսվել Պայմանագրով, հատկացվել է *2,367.0 հազ. դրամ:*

- Միջոցառումներ են նախատեսվել պետության կողմից ֆինանսավորվող հիվանդանոցային ծառայություններ ստանալու նպատակով քաղաքացիների ուղեգրման և հիվանդանոցներում հերթագրման էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ: Սակայն մշակված համակարգը չի ներդրվել և չի գործում՝ ֆինանսավորումը կազմել է *17,752.5 հազ. դրամ:*

- Պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպություններում բժշկական անձնակազմի վարձատրության չափորոշիչների մշակման աշխատանքների շրջանակներում մշակվել և ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ, սակայն չափորոշիչը չի հաստատվել և չի ներդրվել, ֆինանսավորումը կազմել է *1,893.6 հազ. դրամ:*

- Նախատեսվել է կազմել բժշկական անձնակազմի վարձատրությանն ուղղվող գումարների բաշխման ավտոմատացված համակարգ, որը պետք է ինտեգրվեր գործող տեղեկատվական համակարգում: Ավտոմատացված համակարգը մշակվել և հանձնվել է Նախարարությանը, սակայն չի ներդրվել և չի ինտեգրվել գործող տեղեկատվական համակարգում, ֆինանսավորվել է *19,882.8 հազ. դրամով:*

- Նախատեսվել է ներդնել պետության կողմից կենտրոնացված գնումներով ձեռք բերվող բոլոր դեղամիջոցների, ներառյալ հակաբեղմնավորիչների համար միասնական լոգիստիկ կառավարման տեղեկատվական համակարգ, որի նպատակն է ավտոմատացնել պետական գնումներով ձեռք բերվող և հումանիտար պահեստի կողմից բաշխվող դեղերի տրամադրումը: Ծրագիրը չի ներդրվել և չի ինտեգրվել էլեկտրոնային առողջապահության միասնական համակարգում, ֆինանսավորվել է *6,627.6 հազ. դրամ* գումարով:

Համաձայն դրամաշնորհային ծրագիրը համակարգող խմբի տեղեկանքի, մշակված իրավական ակտերը, համակարգչային ծրագրերը և դրամաշնորհի հատկացման պայմանագրով ստեղծված արդյունքները չեն ներդրվել, քանի որ 2016 թվականի տարեվերջին Նախարարության քաղաքականության փոփոխությունների արդյունքում փոխվել են նաև առաջնահերթությունները:

Պայմանագրում չեն արտացոլվել աշխատանքների տեխնիկական բնութագրերը, այլ ներկայացվել են իրականացման ենթակա ուղղությունները՝ աշխատանքային պլանի ձևով, առանց միջոցառումների ցանկի և մանրամասնված բյուջեի: Աշխատանքների կատարման վերաբերյալ Ինստիտուտի կողմից յուրաքանչյուր ամիս, ինչպես նաև եռամսյակային կտրվածքով Նախարարություն ներկայացվել են հաշվետվություններ: Գործակալության կողմից ընդունումը հաստատվել է հաջորդ փուլի կանխավճարի փոխանցմամբ:

ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2016թ. թիվ 296-Ա հրամանով ստեղծվել էր աշխատանքային խումբ՝ ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, դրամաշնորհի պայմանագրի դրույթներին համապատասխանության ստուգման և հաշվետվությունները Գործակալություն ներկայացնելու նպատակով: Այդ հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահվել էր ՀՀ առողջապահության նախարարի տեղակալին: Չնայած այն հանգամանքին, որ համաձայն Նախարարության և Ինստիտուտի կողմից ներկայացված տեղեկանքների, ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են Նախարարություն և քննարկվել նախարարի տեղակալի ու խմբի անդամների մասնակցությամբ, սակայն **որևէ թերություն, անհամապատասխանություն կամ խախտում չի արձանագրվել:** Չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ, չի ապահովվել պայմանագրի հետևյալ դրույթներից և ոչ մեկը.

- Պայմանագրի 4.3 կետով սահմանվել է, որ պայմանագրի դրույթների էական խախտման, պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ծրագրային ցուցանիշների անբավարար իրականացման դեպքում Նախարարությունը պետք է գրավոր ծանուցեր Ինստիտուտին՝ թերությունները վերացնելու համար, իսկ դրանք չվերացնելու դեպքում՝ լուծել պայմանագիրը:

- Պայմանագրի 4.4 կետով սահմանվել է, որ դրամաշնորհային միջոցների անարդյունավետ ծախսման դեպքում այն կարող էր լուծվել առանց նախապես Ինստիտուտին ծանուցելու:

Ըստ պայմանագրի 7.2 կետի՝ «պայմանագրում ցանկացած փոփոխություն վավեր է այն պայմանով, եթե կատարված է գրավոր և ստորագրված՝ կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից»:

**Նշված փաստերի առնչությամբ նախարարության կողմից ներկայացվել են պարզաբանումներ (կցվում են):**

## 12. «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Պետության կողմից 2015 թվականին երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման և դրանց գների վերաբերյալ**

Պայմանագրով մատուցված ծառայությունների համար սահմանվել է 138,988.7 դրամ գումար: Պայմանագրի հավելված 3-ով (ծառայությունների և գների ցանկ) ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդի կամ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով), (առանց դեղորայք) սահմանվել է 2300 դրամ:

Առողջապահության նախարարի 16.07.2015թ թիվ 1901-Ա հրամանով և 14.08.2015թ. համաձայնագրով (Նախարարության և ՁԻԱՀ կենտրոնի միջև) վերը նշված ծառայության գինը վերանայվել և սահմանվել է 4500 դրամ:

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում նշված ծառայության մատուցման համար գնի հաշվարկ չի կատարվել և Նախարարություն չի ներկայացվել, իսկ Նախարարությունը առանց նույն ծառայության գնի հաշվարկի հիմնավորման այն 2300 դրամից բարձրացրել է 4500 դրամի:

Հարկ է նշել, որ չնայած ծառայության գնի բարձրացման համար ՀՀ առողջապահության նախարարի հրամանը տրվել է 16.07.2015թ., սակայն 14.08.2015թ. երկկողմանի համաձայնագրով (առողջապահության նախարարության և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև) սահմանվել է, որ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2015 թվականի հունվարից ծագած հարաբերությունների վրա:

Արդյունքում՝ 01.01.2015թ. մինչև 30.09.2015թ (ծառայության գնի բարձրացումը) կենտրոնի կողմից նշված ծառայության համար ներկայացվել է 12731 դեպք 29,281.3 հազ. դրամ գումարով, սակայն հաշվարկվել է նոր (բարձր) գներով և նույն դեպքերի համար այն կազմել է 57,289.5 հազ. դրամ, կամ տարբերությունը կազմում է 28,008.2 հազ.դրամ: Այսպիսով **առանց ծառայությունների գների**

**հաշվարկի հիմնավորմամբ կատարվել է 28,008.2 հազ. դրամի վերահաշվարկ, որից որպես կատարողականի ճշտում ներկայացվել է ՊԱԳ, որի կողմից ընդունվել է 26,026.5 հազ. դրամը, որն ամբողջությամբ վճարվել է:**

01.01.2015թ. մինչև 30.09.2015թ. (մինչև ծառայության գնի բարձրացնելը) ընկած ժամանակաշրջանում ամսական միջինը սպասարկվել է 1415 դեպք, այն դեպքում երբ 01.10.2015թ. մինչև 15.12.2015թ. ամսական այն կազմել է 1174 դեպք, այսինքն ծառայության գինը ցածր լինելով պայմանավորված դեպքերի քանակը կատարողական ակտերով՝ որոնք ներկայացվում է ՊԱԳ, ավելանում է:

**Պետության կողմից 2016 թվականին երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման և դրանց գների վերաբերյալ**

Պայմանագրով մատուցված ծառայությունների համար սահմանվել է 285,155.8 հազ. դրամ գումար: Պայմանագրի հավելված 1-ով (ծառայությունների և գների ցանկ) ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդի կամ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով), (առանց դեղորայք) սահմանվել է 4500 դրամ:

ՀՀ առողջապահության նախարարի 22.08.2016թ. թիվ 2627 հրամանով և 31.10.2016թ. համաձայնագրով (Նախարարության և ՁԻԱՀ կենտրոնի միջև) վերը նշված ծառայության գինը վերանայվել և սահմանվել է 12350 դրամ:

Հարկ է նշել, որ չնայած ծառայության գնի բարձրացման համար առողջապահության նախարարի հրամանը տրվել է 22.08.2016թ., սակայն 31.10.2016թ. երկկողմանի համաձայնագրով (Նախարարության և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև) սահմանվել է, որ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է ամբողջ՝ 2016 թվականի գործունեության վրա սկսած 01.01.2016թ.:

Արդյունքում, 01.01.2016թ. մինչև 31.08.2016թ. (ծառայության գնի բարձրացումը) կենտրոնի կողմից նշված ծառայության համար ներկայացվել է 7793 դեպք՝ 35,068.5 հազ. դրամ գումարով, սակայն հաշվարկվել է նոր (բարձր) գներով և նույն դեպքերի համար այն կազմել է 96,243.5 հազ.դրամ: Տարբերությունը կազմում է 61,175.0 հազ.դրամ: Կամ **առանց ծառայությունների գների հաշվարկի հիմնավորմամբ կատարվել է 61,175.0 հազ. դրամի վերահաշվարկ և որպես**

**կատարողականի ճշտումով ներկայացվել առողջապահության նախարարության ՊԱԳ, որի կողմից ընդունվել է և վճարվել ամբողջությամբ:**

Բացի այդ, որ 2016 թվականին ՄԻԱՎ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ վարակակրի հաշվով) ծառայության դիմաց վճարվել է 86,400.0 հազ. դրամ (2700 դեպք՝ մեկ դեպքը 32000 դրամ), որի համար 2015 թվականին, չնայած ծառայության առկայության, դեպքեր չեն եղել:

2015-2016 թվականներին նույն ծառայության համադրմամբ պարզվել է (հաշվարկը կատարվել է 16.12.2014-15.12.2015թթ. և 16.12.2015-15.12.2016թթ. ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների հիման վրա), որ ծառայության 2015 թվականի ցածր գնի դեպքում դիսպանսերային հսկողության դեպքերի թիվն ավելի շատ է՝ 15665 (12731+2934) դեպք, քան 2016 թվականի բարձր գնի դեպքում, որը կազմում է 11382 (7813+3569) դեպք: Տարբերությունը կազմում է 4283 դեպք:

***Արդյունքում, նշված ծառայության համար 2016 թվականին պետական բյուջեից 2015 թվականի համեմատ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինան-սավորումը կրկնապատկվել է և 138,989.2 հազ. դրամից կազմել 284,903.8 հազ. դրամ, սակայն այդ պայմաններում նշված ծառայության դեպքերի թիվը պակասել է 4283-ով:***

**Կազմակերպության կողմից դեղերի ստացման և բաշխման վերաբերյալ**

Կանխարգելման հանրապետական կենտրոնին (այսուհետ՝ ԿՀԿ) դեղերը տրամադրվել են Նախարարության կողմից ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով, ՀՀ-ում Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «ՀՀ–ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Հիմնադրամի կողմից տրամադրվում են նաև թեստեր և բժշկական նշանակության ապրանքները:

Դեղերի բաշխման ուսումնասիրությունից պարզվել է, որ դեղերը, բացի պացիենտներին անմիջապես տրամադրելուց, տրամադրվում են նաև միջնորդավորված ձևով, լիազորագրերի հիման վրա: Լիազորագրերը տրված են

հիվանդների հարազատներին, բարեկամներին, կամավորների, ինչպես նաև սոցիալական աշխատողներին:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ամբուլատոր հիվանդի բժշկական գրքույկներում բժշկի կողմից կատարված գրառումներով պարզվել է, որ լիազորագրերի հիման վրա տրամադրված դեղերը, բացի ՀՀ տարածքից, այլ անձանց միջոցով ուղարկվել են նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող հիվանդներին: Մանրամասն ներկայացված է հետևյալ աղյուսակում.

**Աղյուսակ 9**

| Տարի | Մարդ | Դեպք | Դեղերի քանակ /հաբ/ | Դեղերի գումար /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|
| 2015 | 150 | 421 | 63090 | 6,592.7 |
| 2016 | 294 | 947 | 101520 | 12,964.0 |
| 2017 | 406 | 1351 | 96805 | 13,614.5 |

ԿՀԿ կանոնադրությամբ սահմանված է, որ կազմակերպության գործունեության նպատակն ու առարկան Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման աշխատանքների իրականացումն ու համակարգումն է:

«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման» չափորոշիչի 3-րդ բաժնի 20-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների դիսպանսերային (շարունակական) հսկողությունն իր մեջ ներառում է խորհրդատվություն, կլինիկական, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ:

«ՄԻԱՎ հիվանդ մեծահասակների հակառետրովիրուսային բուժում ու վարում» ազգային ուղեցույցի հավելված 1-ի ցանկով սահմանված է դիսպանսերային հսկողության տակ գտնվող ՄԻԱՎ վարակով հիվանդներին տրամադրվող լաբորատոր-գործիքային հետազոտությունների պլանային ծավալը և պարբերականությունը:

**Կան հիվանդներ, որոնք 8 ամսից մինչև 2.5 տարի ժամանակահատվածում ամբուլատոր այց չեն ունեցել, սակայն ստացել են դեղորայք**

Համաձայն այդ պլանային ծավալների և պարբերականության, բուժում ստացող յուրաքանչյուր հիվանդ պարտավոր է 3-12 ամիսը մեկ անգամ պարբերականությամբ կենտրոնում անցնել ցանկով սահմանված լաբորատոր-գործիքային հետազոտություններ: Սակայն ՀՀ տարածքից դուրս դեղեր ստացող հիվանդների ամբուլատոր բժշկական գրքույկների ընտրանքային ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ հիվանդների շարքում կան հիվանդներ, որոնք 8 ամսից մինչև 2.5 տարի ժամանակահատվածում ամբուլատոր այց չեն ունեցել, սակայն ստացել են դեղորայք:

**Օտարերկրյա քաղաքացիներին պետպատվերի շրջանակներում բուժման վերաբերյալ**

«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերման» չափորոշիչի 12-րդ բաժնի 36-րդ կետի պահանջների համաձայն, ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ բնակչությանն անվճար ծառայություններ մատուցելու համար, ինչպես նաև ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց ՄԻԱՎ վարակի վերջնական ախտորոշումը և ՄԻԱՎ վարակակրության կարգավիճակի վերաբերյալ վերջնական եզրակացության տրամադրումը: Սակայն ուսումնասիրությամբ պարզվեց, որ Նախարարության կողմից օտարերկրյա քաղաքացիներին տրվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման անժամկետ ուղեգրեր, որոնց հիման վրա ուղեգրված օտարերկրյա քաղաքացիներին մատուցվում է անվճար դիսպանսերային հսկողության և բուժման ծառայություններ՝ ընդամենը 24 մարդ (2015թ.՝ 18 մարդ, որոնց տրվել է 4535 դեղահատ՝ 386.0 հազ. դրամ գումարի, 2016թ.՝ 2 մարդ, որոնց տրվել է 9499 դեղահատ՝ կազմում է 1,381.8 հազ. դրամ գումար, 2017թ.՝ 4 մարդ, որոնց տրվել է 7380 դեղահատ՝ 920.4 հազ. դրամ գումարի):

**Արդյունքում, ստուգման ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցներից (Գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրված դեղորայք) օտարերկրյա քաղաքացիների բուժման նպատակով տրվել է 21414 դեղահատ 2,688.2 հազ. դրամ գումարի:**

**Նշված փաստերի առնչությամբ նախարարության կողմից ներկայացվել են պարզաբանումներ և հիմնավորումներ (կցվում են):**

## 13. «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏՈԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ՈՒՄ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՓԲԸ) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՆԴԻՊԱԿԱՑ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից 2015-2017 թվականներին նախատեսված և ըստ տարիների փաստացի հատկացված գումարները ներկայացվում են աղյուսակի տեսքով.

**Աղյուսակ 10**

*2015, 2016, 01.01.2017-31.10.2017թթ. եկամուտները*

*հազ. դրամ*

| *Ծրագրերի անվանումը* | *Տարեթիվ* | | *Տարեթիվ* | | *Տարեթիվ* | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Բյուջե* | *Փաստացի* | *Բյուջե* | *Փաստացի* | *Բյուջե* | *Փաստացի* |
| | *2015* | | *2016* | | *16.12.2016-15.12.2017* | *16.12.2016-31.10.2017* |
| *Մանկա-բարձական* | *1,045,268.0* | *1,045,268.0* | *1,034,778.5* | *1,034,778.5* | *1,026,841.4* | *886,940.0* |
| *Գինեկոլո-գիական* | *80,192.2* | *80,192.2* | *80,192.2* | *80,192.2* | *78,864.0* | *68,715.4* |
| *Անպտուղ զույգեր* | *2,093.5* | *2,093.5* | *42,878.6* | *42,878.6* | *13,593.4* | *11,893.7* |
| *Անցանկալի հղիութ.* | *-* | *-* | *45,820.0* | *45,820.0* | *5,000.0* | *-* |
| *Ընդամենը* | *1,127,553.7* | *1,127,553.7* | *1,203,669.3* | *1,203,669.3* | *1,124,298.8* | *967,549.1* |

Պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին նախատեսվել է իրականացնել հղի կանանց, ծննդաբերների և ծննդկանների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը՝ հղիության ախտաբանությամբ, ցածր և բարձր ռիսկի հղիների բուժօգնությունը, ծննդալուծումը բնական ճանապարհով, կեսարյան հատման միջոցով, բուժօգնությունը հետծննդյան շրջանում:

ՓԲԸ-ն որպես III բ մակարդակի ծննդօգնության հիմնարկ, համաձայն Նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 2864-Ա հրամանի,

մարզերից ընդունված բարձր ռիսկի խմբի հղիները, ծննդաբերները, այդ թվում կեսարյան հատման անհրաժեշտություն ունեցող դեպքերը, ընդունել է առանց սահմանափակման: Բացի այդ, համաձայն 2013 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 80-Ն հրամանի, սպեցիֆիկ և այլ պերինատալ ինֆեկցիաներով (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, տուբերկուլոզ, վիրուսային վարակներ, կարմրախտ, ջրծաղիկ, A, B, C հեպատիտներ, մահացած պտուղ, պտղի զարգացման արատներ, 22 շաբաթական և ավելի) տառապող հղիներն ընդունվում են «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ:

ՓԲԸ-ին 2015-2017թթ. ժամանակաշրջանում մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորման բաշխվածությունն ըստ նորմալ ծննդաբերության, կեսարյան հատման և հղիության ախտաբանության ներկայացվում է աղյուսակի տեսքով:

**Աղյուսակ 11**

| h/h | Պ/Պ խմբի անվանումը | 16.12.14թ-15.12.15թ | | 16.12.15թ-15.12.16թ | | 16.12.16թ-31.10.17թ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գումար /հազ.դր./ | % | գումար /հազ.դր./ | % | գումար /հազ.դր./ | % |
| 1 | Ընդամենը՝ մանկաբարձա-կան բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում՝ | 1,045,268.0 | 100.0 | 1,037,778.5 | 100.0 | 886,950.0 | 100.0 |
| 1.1 | ծննդաբերություն, որից | 685,627.2 | 65.6 | 675,050.8 | 65.0 | 585,677.5 | 66.0 |
| 1.1.1 | կեսարյան հատում | 370,490.7 | 35.4 | 384,363.1 | 37.0 | 358,274.4 | 40.4 |
| 1.2 | հղիության ախտաբանություն | 359,640.8 | 34.4 | 362,727.7 | 35.0 | 301,272.5 | 34.0 |

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացրած հաշվետվությունների արժանահավատության և պայմանագրային պարտավորությունների կատարման համապատասխանության ստուգմամբ **պարզվել է, որ պայմանագրային պարտավորությունները կատարվել են ՀՀ կառավարության թիվ 318-ն որոշմամբ հաստատված «Ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար սպասարկման ու ֆինանսավորման կարգի» պահանջների, ինչպես նաև կնքված պայմանագրի ու պայմանագրին կից հատուկ պայմանների որոշակի խախտումներով**: Այսպես՝ հղիության ախտորոշման կապակցությամբ բուժօգնություն ստացած որոշ դեպքերի համար 2015-2016 թվականների հաշվետվությունները ներկայացվել և ֆինանսավորվել են տվյալ ծառայության համար նախատեսված ամբողջ գնով, սակայն, ելնելով բուժման ծավալներից և հիվանդանոցում անցկացված մահճակալ-օրերի փաստացի քանակից, դեպքերը պետք է ներկայացվեին ընդունման և դուրս գրման օրերը որպես մեկ օր, ֆինանսավորման փաստացի օրերի դիմաց հաշվարկված գնով: Սակայն պետական պատվերի շրջանակում սահմանված չափորոշիչների խախտման հետևանքով ընդունման և դուրս գրման օրերը հաշվել են առանձին - առանձին, որի պատճառով վճարվել են ավել գումարներ: Մասնավորապես՝

**Պետական պատվերի շրջանակում սահմանված չափորոշիչների խախտման հետևանքով ընդունման և դուրս գրման օրերը հաշվել են առանձին - առանձին, որի պատճառով վճարվել են ավել գումարներ**

- Հղիության ախտաբանությամբ 2016 թվականին ստացիոնար բուժօգնություն է ստացել 5 հղի՝ (հիվանդության պատմագիր. 4759մ/բ, 155մ/բ, 270 հ/պ, 621 հ/պ, 367 կ/գ), որոնցից յուրաքանչյուրը ստացիոնարում անցկացրել է 4 մահճակալ/օր և փոխհատուցման է ներկայացվել 57.6 հազ. դրամի չափով, սակայն ելնելով բուժման ծավալներից, պետք է ներկայացվեր որպես կարճաժամկետ հոսպիտալացում՝ 34,2 հազ. դրամ, տարբերությունը կազմում է ընդամենը 117.0 հազ. դրամ:

- Հղիության ախտաբանությամբ 2016 թվականին թվով 4 ծննդաբեր (հիվանդության պատմագիր. 694մ/բ, 829մ/բ, 575 հ/պ, 1922 մ/բ) մինչև ծննդաբերությունը ստացիոնարում բուժում են ստացել 5 օր, այնուհետև ծննդաբերել, տվյալ դեպքերում յուրաքանչյուրը պետք է ներկայացվեր փոխհատուցման մինչև ծննդաբերությունը 5 օրվա համար՝ 72.0 հազ. դրամ,

սակայն ներկայացվել է 6 օրվա արժեքով՝ 86.4 հազ. դրամ: Տարբերությունը կազմում է ընդամենը 57.6 հազ. դրամ:

- Ելնելով ախտաբանության բնույթից 2015 թվականի ընթացքում 4 ծննդաբեր՝ (հիվանդության պատմագիր. 4810մ/բ, 299հ/պ, 695մ/բ, 1932հ/պ) և 2016թ. ընթացքում 3 ծննդաբեր՝ (հիվանդության պատմագիր. 931մ/բ, 557 հ/պ, 1057 հ/պ), ընդունվել են վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունք և մի քանի ժամ հետո ենթարկվել են վիրահատման ու ներկայացվել յուրաքանչյուրի համար փոխհատուցման վերակենդանացման մեկ օրվա արժեքով՝ 51.0 հազ. դրամ: Սակայն, քանի որ նույն օրը նրանք վիրահատվել են, ուստի չպետք է ներկայացվեր փոխհատուցման: Ընդհանուր տարբերությունը կազմում է 357.0 հազ դրամ:

- 2015 թվականին հղիության ախտաբանությամբ ստացիոնար բուժօգնություն ստացած 3 հղի՝ 12 շաբաթականից բարձր, (հիվանդության պատմագիր. 443մ/բ, 221մ/բ, 282 մ/բ), ստացիոնարում անց են կացրել յուրաքանչյուրը 3 մահճակալ/ օր, այնուհետև վիժել են, որոնց կատարվել է արգանդի խոռոչի քերում: Փոխհատուցման է ներկայացվել յուրաքանչյուրը 3 օրվա արժեքով՝ 43.2 հազ. դրամ (մեկ օրվա արժեքը՝ 14.4 հազ. դրամ), սակայն նրանց պետք է ներկայացվեր միայն որպես արգանդի խոռոչի քերում՝ յուրաքանչյուրը 23.5 հազ.դրամով: Փոխհատուցման ավել է ներկայացվել 59.1 հազ. դրամ:

***Ընդամենը ավել է փոխհատուցման ներկայացվել 590.7 հազ. դրամ:***

**<u>Անցանկալի հղիություն</u>**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ օժանդակության համաձայնագրի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 4 փոփոխության փաստաթղթով նախատեսված պարտավորությունների կատարման, ինչպես նաև «Վերարտադրողական առողջության բարելավման 2007-2015թթ. ռազմավարության» դրույթների ու հազարամյակի ազգային նպատակների հասանելիության ապահովման, վերարտադրողական առողջության բարելավման նպատակով, Նախախարությունը իրականացրել է բնակչության և հատկապես սոցիալապես

անապահով ու առանձին հատուկ խմբերի անձանց համար «Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների ապահովում» ծրագիրը :

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ նախնական պայմանավորվածության համաձայն 2015 թվականի համար նախատեսված էր առողջապահության նախարարության կողմից ժամանակակից հակաբեղմնավորիչների գնման 25 տոկոս մասնակցություն, համաֆինանսավորում 11.5 միլիոն դրամի չափով, հետագա տարիներին մեծացնելով մասնակցությունը և 2018 թվականին ստանձնելով գնման 100 տոկոս պարտավորություն:

Սակայն, համաձայն 2015 թվականի օգոստոսի 7-ին ՀՀ առողջապահության նախարարին հղած ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ղեկավարի գրության, Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև Աջակցության Համաձայնագրի 4-րդ հավելվածով նախատեսված ֆինանսավորման համար պայման է հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 2015 թվականից սկսած բնակչության խոցելի խմբերին անհրաժեշտ ժամանակակից հակաբեղմնավորիչների գնման պարտավորության ամբողջական ստանձնումը, ինչն առողջապահության պետական բյուջեում պահանջում է 35,5 միլիոն դրամի ֆինանսավորման ավելացում: Արդյունքում՝ ՀՀ պետական բյուջեից Նախարարությանը հատկացվել է պահանջվող գումարը: Ծրագրի իրականացման համար 09.03.2016թ. Նախարարության որոշումով «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի և Նախարարության միջև կնքվել է 45,820.0 հազ.դրամի պայմանագիր: Համաձայն պայմանագրի, ինստիտուտը որպես վերարտադրողական առողջության հանրապետական բուժ. հաստատություն, պետք է իրականացներ ծրագրի կոորդինացումը, բեղմնականխման միջոցների ձեռքբերումը, պահեստավորումը, պահպանումը և տրամադրումը հանրապետության 95 բուժհաստատությունների: Բեղմնականխման միջոցները ձեռք են բերվել ՄԱԿ-ի գրասենյակի միջնորդությամբ և օժանդակությամբ: Հակաբեղմնավորիչների բաշխումը և մնացորդների առկայությունը ըստ մարզերի առ 11.12.2017թ. ներկայացվում է աղյուսակների տեսքով.

**Աղյուսակ 12**

*Հանրապետության մարզերի 95 բուժ. հաստատություններում հակաբեղմնավորիչների բաշխումը*

| Մարզեր | Պոստինոր /ՊԻԼԼ | Մարվելոն | Պահպա նակներ/Male latex | Պարույր |
|---|---|---|---|---|
| | Քանակ | Քանակ | Քանակ | Քանակ |
| Արագածոտնի մարզ | 160 | 25200 | 72000 | 450 |
| Շիրակի մարզ | 360 | 45360 | 122400 | 750 |
| Արարատի մարզ | 160 | 16800 | 57600 | 400 |
| Տավուշի մարզ | 220 | 23940 | 79200 | 550 |
| Կոտայքի մարզ | 200 | 26460 | 72000 | 500 |
| Սյունիքի մարզ | 220 | 19320 | 64800 | 450 |
| Գեղարքունիքի մարզ | 220 | 21000 | 72000 | 400 |
| Վայոց Ձորի մարզ | 60 | 5460 | 14400 | 100 |
| Լոռու մարզ | 400 | 36540 | 103680 | 650 |
| Արմավիրի մարզ | 120 | 16800 | 57600 | 350 |
| Երևան | 1760 | 154980 | 436320 | 3400 |
| Ընդամենը | 3880 | 391860 | 1152000 | 8000 |

**Աղյուսակ 13**

*Հանրապետության մարզերի 95 բուժ հաստատություններում հակաբեղմնավորիչների մնացորդները առ 11.12.2017թ.*

| Մարզեր | Պոստինոր/ ՊԻԼԼ | Մարվելոն | Պահպա նակներ/Male latex | Պարույր |
|---|---|---|---|---|
| | Քանակ | Քանակ | Քանակ | Քանակ |
| Արագածոտնի մարզ | 0 | 5040 | 0 | 0 |
| Շիրակի մարզ | 270 | 26208 | 92460 | 569 |
| Արարատի մարզ | 120 | 12011 | 42652 | 280 |
| Տավուշի մարզ | 220 | 20663 | 79140 | 548 |
| Կոտայքի մարզ | 180 | 15540 | 57940 | 435 |
| Սյունիքի մարզ | 180 | 16912 | 62874 | 419 |
| Գեղարքունիքի մարզ | 200 | 17220 | 53220 | 299 |
| Վայոց Ձորի մարզ | 60 | 5460 | 14400 | 100 |
| Լոռու մարզ | 220 | 16102 | 38762 | 300 |
| Արմավիրի մարզ | 54 | 7560 | 24190 | 195 |
| Երևան | 896 | 63924 | 232724 | 1942 |
| Ընդամենը | 2400 | 206640 | 698362 | 5087 |

***Ձեռք բերված հակաբեղմնավորիչ միջոցների փաստացի մնացորդների առկայությունը ենթադրել է պալիս, որ գնված միջոցները ավելի են, քան դրանց անհրաժեշտությունը:***

## 14. «ՇԵՆԳԱՎԻԹ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՆԴԻՊԱԿԱՑ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանդիպակաց ստուգմամբ ուսումնասիրվել է «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2015-2017թթ. ընթացքում Նախարարության հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման գործընթացը:

*Հանդիպակաց ստուգմամբ արձանագրվել է*

1. 2015-2017թթ. ընթացքում Ընկերություն այցելած մարզերում փաստացի բնակվող նորմալ կամ թեթևակի շեղումներով ծննդաբերների քանակը կազմել է 718 հոգի:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 412 հիվանդության պատմություն, որոնցից 112-ը չեն ունեցել Երևանում ժամանակավոր բնակության տեղեկանք, կամ վճարովի հիմունքներով կանանց կոնսուլտացիայում չեն կանգնել հաշվառման (ծննդօգնության հավաստագիրը ստացել են մարզերից):

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի՝ 29.11.2013թ. թիվ 80-Ն և 20.05.2013թ. թիվ 1371-Ա հրամանների, ընկերությունը այդ կարգի ծննդաբերների համար **բժշկական օգնությունը պետք է կազմակերպեր վճարովի հիմունքներով, մինչդեռ թվով 112 ծննդաբերների դիմաց պետական պատվերի շրջանակներում ստացել է 12,252.8 հազ. դրամի չափով վճարում (112 X 109,400=12,252,800):**

2. Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2013թ. թիվ 202-Ա և 22.01.2015թ. թիվ 74-Ա հրամաններով սահմանված ծննդաբերություն, վերակենդանացման բաժամունքում ծառայություն և ախտաբանություն իրականացնող աշխատողների վարձատրության նվազագույն չափաքանակների, մանկաբարձական բժշկական օգնության ծրագրով հատկացված գումարի 68%-ը, վերակենդանացման բաժամունքի գծով հատկացված գումարի առնվազն 50%-ը և ախտաբանության ծառայության գծով հատկացված գումարի 20%-ը պետք է ուղղել նշված ծառայությունների մատուցումն ապահոված աշխատողների աշխատանքի վարձատրությանը:

Ընկերությունը 2015-2017թթ. հաշվարկներով ըստ առանձին ծառայությունների պետք է երեք ուղղություններով 901,633.6 հազ. դրամ գումարը վերաբաշխեր հետևյալ սկզբունքով՝

- մանկաբարձական բժշկական օգնություն՝ 774,626.7 հազ. դրամ (1,139,157.0 հազ. դրամ X 68%)
- վերակենդանացման բաժանմունք (ծառայություն)՝ 102,698.5 հազ. դրամ (205,397.0 հազ. դրամ X 50%)
- ախտաբանության ծառայություն՝ 24,308.4 հազ. դրամ (121,542.0հազ. դրամ X 20%):

**Սակայն կազմակերպության կողմից 2015-2017թթ. նշված ծառայությունների գծով աշխատանքի վարձատրության ֆոնդին է ուղղվել՝ 777,241.4 հազ. դրամ: Տարբերությունը կազմել է՝ 124,392.2 հազ. դրամ (901,633.6-777,241.4):**

**3.** Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 03.12.2013թ թիվ 78-Ն հրամանով սահմանված չափորոշիչի 2-րդ կետի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը իրականացվում է համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Երեխաների բժշկական օգնության ծառայություն ծրագրով Ընկերությունն, առանց համապատասխան լիցենզիայի, պետական պատվերի շրջանակներում իրականացրել է 205,396.0 հազ. դրամի չափով նորածինների և մինչև մեկ տարեկան երեխաների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի գործառույթ, մասնավորպես.

- 2015 թվականին 2925 ծնունդներից 234 երեխա տեղափոխվել է ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունք ու դուրս գրվել, որի դիմաց փոխհատուցումը կազմել է՝ 74,767.0 հազ.դրամ:
- 2016 թվականին 2315 ծնունդներից ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունքից դուրս գրված 222 երեխայի դիմաց փոխհատուցումը կազմել է՝ 72,406.0 հազ.դրամ:
- 2017 թվականին 2090 ծնունդներից բաժամունքից դուրս գրված 173 երեխայի դիմաց փոխհատուցումը կազմել է՝ 58,223.0 հազ.դրամ:

4. ՀՀ կառավարության 24.12.2015թ թիվ 1528-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 03.07.2015թ թիվ 39-Ն հրամանի համաձայն, անպտուղ զույգերը պետք է ընտրվեն ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներից:

Նախարարության կողմից վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություն ստանալու նպատակով 2016թ.-ին Ընկերություն են ուղեգրվել թվով 11 անպտուղ զույգ:

**Ստուգմամբ պարզվել է, որ բժշկական կենտրոն ուղեգրված և անվճար բժշկական օգնություն ստացած քաղաքացին, լինելով Երևան քաղաքի բնակիչ, արհեստական բեղմնավորման ուղեգիր ստանալուց 41 օր առաջ գրանցվել է Տավուշի մարզի Չինար գյուղում:**

2015-2016թթ. նշված քաղաքացին ՀՀ առողջապահության նախարարության կողմից 4 անգամ ուղեգրվել է Ընկերություն հետազոտման, որի դիմաց պետական բյուջեի միջոցներից վճարվել է՝ 1,962.7 հազ. դրամ, որից 1,400.0 հազ. դրամը արհեստական բեղմնավորման համար:

**Նշված փաստերի առնչությամբ ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են առարկություններ, պարզաբանումներ և հիմնավորումներ (կցվում են):**

## 15. «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացված ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ

### 2015 թվականին կնքված պայմանագրի վերաբերյալ

ՀՀ առողջապահության նախարարության և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2015 թվականին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրով փոխհատուցման ենթակա գումարը կազմել է 758,080.7 հազ. դրամ, այդ թվում՝

1. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ»՝ 738,589.9 հազ. դրամ,
2. «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ»՝ 19,490.7 հազ. դրամ:

ՀՀ առողջապահության նախարարի 01.12.2015թ. թիվ 3413-Ա հրամանով՝ 2015 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման պայմանագրային գումարներում կատարվել են վերաբաշխումներ, որի արդյունքում պայմանագրի գումարն ավելացվել է 50,676.5 հազ. դրամով, որից

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունները» ծրագրի գծով՝ 48,575.2 հազ. դրամ*(հրամանի 16-րդ կետով ձևակերպվել է «Տարեվերջյան ամփոփիչ հաշվետվություններում կատարել կատարողականների ճշտում (ավելացում) ճշտված պայմանագրային գումարի և կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների տարբերության չափով»:*
- «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունները» ծրագրի գծով՝ 2,101.3 հազ. դրամ:

Արդյունքում, 09.12.2015թ. Նախարարության և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի պայմանագրի վերջնական գումարը կազմել է 810,757.2 հազ. դրամ:

Ըստ ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների, «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2015 թվականի ընթացքում «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների» ծրագրի մասով ՊԱԳ է ներկայացրել 26,019,5 հազ. դրամի կատարված աշխատանք, որի դիմաց ՊԱԳ-ը 2,927.6 հազ. դրամի չափով չի փոխհատուցել:

2015 թվականի ընթացքում «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների» մասով փոխհատուցման է ներկայացվել 787,165.0 հազ. դրամ, այդ թվում.

- 140,439.7 հազ. դրամը բուժված հիվանդների մահճակալ/օրերի համար փոխհատուցման ներկայացված գումարն է:
- 623,889.3 հազ. դրամը (599,350.9 + 24,538.4) այլ ծախսերի գումարն է, որից 599.350.9 հազ. դրամը (12 ամիս x 49,945.9 հազ.դրամ) 2015 թվականի պահպանման ծախսերի գումարն է (ՀՀ առողջապահության նախարարի 10.02.2015թ. թիվ 234-Ա հրամանի 14 հավելվածով հաստատված), իսկ 24,538.4 հազ. դրամը 2014 թվականի դեկտեմբեր ամսի երկրորդ կեսի, այսինքն 16.12.2014թ. մինչև 31.12.2014թ. ընկած ժամանակաշրջանի այլ ծախսերի գումարն է, որի վերաբերյալ հաշվետվությունը ՊԱԳ է ներկայացվել 2014 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսի համար, որի դիմաց փաստացի «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունն արդեն ֆինանսավորված է եղել:
- 22,836.1 հազ. դրամը որպես կատարողականի ճշտում հաշվետվություններում ներկայացվել է 2015թ.-ի առաջին կեսի համար, որի դիմաց կատարված աշխատանք չի եղել:

***Այսպիսով, ՊԱԳ-ը ըստ «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հաշվեփվությունների, «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների» գծով ավելի է փոխհատուցել 47,374.5 հազ. դրամ, որից՝***

- Նախկինում կատարված և վճարված գումար՝ 24,538.4 հազ. դրամ
- Չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումար՝ 22,386.1 հազ. դրամ:

**2016 թվականին կնքված պայմանագրի վերաբերյալ**

Նախարարության և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության միջև 2016 թվականին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրով փոխհատուցման ենթակա գումարը կազմել է 765,984.3 հազ. դրամ, այդ թվում.

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրի գծով՝ 738,589.4 հազ. դրամ,
- «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ» ծրագրի գծով՝ 27,394.9 հազ. դրամ:

«Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունն, ըստ հաշվետվությունների, ՊԱԳ-ին փոխհատուցման է ներկայացրել է 1,260.3 հազ. դրամի չափով ավելի գումար, որը ՊԱԳ-ի կողմից չի ընդունվել:

29.12.2016թ. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունների միջև կնքվել է փոխառության պայմանագիր, համաձայն որի «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն ընկերությանն առանց տոկոսի տրամադրել է 42,754.0 հազ. դրամ փոխառության գումար՝ 01.04.2017թ. մինչև 31.12.2017թ. վերադարձնելու պայմանով:

ՀՀ առողջապահության նախարարի 09.02.2017թ. թիվ 315-Ա հրամանով «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության 2017 թվականի պայմանագրային գումարը լրացուցիչ ավելացել է 42,727.2 հազ. դրամով և փոխառության գումարը 31.12.2017թ. դրությամբ ամբողջությամբ հետ է վերադարձվել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

**2017 թվականին կնքված պայմանագրի վերաբերյալ**

Նախարարության և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության միջև 2017 թվականին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրով փոխհատուցման ենթակա գումարը կազմել է 790,951.9 հազ. դրամ, այդ թվում.

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրի գծով՝ 762,977.0 հազ. դրամ,
- «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ» ծրագրի գծով՝ 27,974.9 հազ. դրամ:

**Հատկանշական է, որ 2017 թվականի համար կնքված պայմանագրի գումարը նախորդ տարվա համեմատ 24,992.1 հազ. դրամով ավելի է եղել, չնայած այն բանին, որ հիվանդների թիվը մնացել է անփոփոխ:**

12.12.2017թ.-ին «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության և ՊԱԳ-ի միջև կնքվել է նոր համաձայնագիր, ըստ որի պայմանագրի գումարն ավելացվել է 20,000.0 հազ. դրամով՝ արդյունքում, 2017 թվականի պայմանագրի վերջնական գումարը կազմել է 810,951.9 հազ. դրամ:

***Այսպիսով, «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված 2016 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսի (16.12.2016թ. մինչև 31.12.2016թ.) հաշվետվությունում «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրով հաշվետվությունում ներկայացված մահճակալ/օրերի թիվը և դրանց դիմաց հաշվարկված գումարը ներկայացված է ամբողջ ամսվա համար, սակայն պետք է ներկայացվեր կես ամսվա համար նախատեսված գումարի չափով: Տարբերությունը կազմում է 4,230.7 հազ. դրամ, այդ թվում.***

- Հոգեբուժական հարկադիր բուժում՝ 2,454.0 հազ. դրամ (1636 մահճ/օր x 1500 դրամ)

- Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք՝ 1,780.7 հազ. դրամ (1349 մահճ./օր x 1320 դրամ):

Համաձայն կնքված պայմանագրի 2.1.3 կետի, հերթագրման ոչ ենթակա դեպքերում բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում պատվիրատուին չներկայացված հաշվետվությունները փոխհատուցման պետք է ներկայացվի պայմանագրով հաստատված գումարի շրջանակներում:

Բոլոր այն հիվանդները, որոնք դիմել են «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերություն, ստացել են անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն, մինչդեռ 2017 թվականի ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունում հերթագրման համար նախատեսված մեխանիզմ չի եղել:

***Արդյունքում, 2017 թվականի ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՊԱԳ է ներկայացվել պայմանագրային ծավալների ամսական համամասնություններից ավելի աշխատանք, որի դիմաց փաստացի վճարվել է 18,864.1 հազ. դրամ:***

2017 թվականի մայիս ամսին ընկերության կողմից ՊԱԳ է ներկայացվել 68,483.9 հազ. դրամի կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվություններին կից ՊԱԳ է ներկայացվում նաև ըստ ծառայությունների հոգեբուժարանում բուժված հիվանդների վերաբերյալ անվանական տեղեկատվություն: Նշված տեղեկատվության ուսումնասիրությամբ **պարզվել է, որ որոշ հիվանդների անուններ ամսական ցուցակներում ներկայացված են մի քանի անգամ, ընդ որում, նույն հիվանդների բուժման սկիզբը և բուժման ավարտը կրկնվում է, արդյունքում, չորս հիվանդի բուժման համար 2017 թվականի մայիս ամսին ստացվել է *397.3 հազ. դրամ* ավելի գումար:**

## 2015-2017թթ. ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ

**Աղյուսակ 14**

հազ.դրամ

| Ծառայության անվանումը | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մահճ./օր | գումար | Մահճ./օր | գումար | Մահճ./օր | գումար |
| **Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ** | | | | | | |
| Քրոնիկ հոգեկան հիվանդների սրացման բուժում | 5606 | 8,409.0 | 7356 | 11,034.0 | 9827 | 14,737.5 |
| Հոգեբուժական՝ սուր դեպքերի բուժում | 21276 | 31,914.0 | 22232 | 33,348.0 | 31074 | 46,564.5 |
| Հոգեբուժական հարկադիր բուժում | 35707 | 53,560.5 | 34201 | 51,301.5 | 38300 | 57,466.5 |
| Դատահոգեբուժական փորձաքննություն /մեծ/ | 2875 | 4,312.5 | 2441 | 3,661.5 | 2598 | 3,850.5 |
| Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք /մեծ/ | 31938 | 42,158.2 | 30860 | 40,735.2 | 30179 | 39,758.4 |
| Հետազոտում հիվանդանոցային պայմաններում, ախտորոշման նպատակով /մեծ/ | 57 | 85.5 | 107 | 160.5 | 189 | 283.5 |
| Հոգեբուժական դիսպանսերում 1 մահճակալի այլ ծախսեր | - | 24,538.4 | | | | 619,140.6 |
| Հոգեբուժական դիսպանսերում 1 մահճակալի այլ ծախսեր | | 599,350.9 | | 599,350.9 | | |
| Կատարողականի ճշտում | | 22,836.1 | | -1,002.2 | | |
| **Ընդամենը** | **97459** | **787,165.0** | **97497** | **738,589.4** | **112167** | **781,801.5** |
| Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության ծառայություններ | 3179 | 26,019.5 | 3782 | 27,653.0 | 2319 | 27,964.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կատարողականի ճշտում | | -2,927.6 | | -258.1 | | |
| **Ընդամենը** | **3179** | **23,091.9** | **3782** | **27,394.9** | **2319** | **27,964.0** |
| **Ընդամենը** | **100638** | **810,256.9** | **100979** | **765,984.3** | **114486** | **809,765.5** |

2015-2017 թվականների ընթացքում ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում արտացոլված մահճակալ/օրերի թիվն ըստ տարիների համեմատվել է ընկերության ճաշացուցակներում հաշվառված հիվանդների թվի հետ: **Պարզվել է, որ 2015 թվականի ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկված հիվանդների թիվը 2217-ով ավելի է /102855-100638/, քան հաշվետվություններում ներկայացված մահճակալ օրերի թիվն է, 2016 թվականի ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկված հիվանդների թիվը 5528-ով ավելի է, քան հաշվետվություններում արտացոլված մահճակալ/օրերի թիվն է և 2017 թվականի ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկված հիվանդների թիվը 3552-ով /110934-114486/ պակաս է, քան հաշվետվություններում արտացոլված մահճակալ/օրերի թիվն է:**

2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ընկերությունում փորձաքննություն անցած և բժշկական օգնություն ստացած զինակոչ և նախազորակոչ տարիքի անձինք բոլորն էլ ընդգրկվել են ճաշացուցակ-պահանջագրերում և նրանց համար դուրս է գրվել սննդամթերք: 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ընկերությունում ճաշարանից օգտվել են փորձաքննություն անցած և բժշկական օգնություն ստացած անձանց 11.3%-ը: Այսպես, նույն ժամանակահատվածում փորձաքննություն են անցել և բժշկական օգնություն ստացել 1110 անձինք, որոնցից 984 անձ ընդհանրապես չի ընդգրկվել ճաշացուցակ-պահանջագրերում կամ ճաշարանից օգտվել է 126 անձ:

Համաձայն ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների, 2015-2017 թվականների ընթացքում ընկերությունում «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ» ծրագրով փորձաքննություն են անցել 4,078 զորակոչ և նախազորակոչ տարիքի անձինք, որոնց համար փոխհատուցվել է 78,450.8 հազ. դրամ: Ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ 2015-2017 թվականների ընթացքում ընկերություն ուղեգրված թվով 51 զորակոչիկ, ըստ հիվանդության պատմագրերի, իրենց դիմումի համաձայն կամ

ինքնակամ հեռացել են ընկերությունից, առանց փորձաքննություն անցնելու, սակայն նրանց համար «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունը ստացել է 1,020.0 հազ. դրամի չափով ավելի փոխհատուցում, յուրաքանչյուր դեպքի համար՝ 20,000 դրամ:

**2015-2017 թվականների ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ձեռք բերված սննդամթերքի վերաբերյալ**

2015-2017 թվականների ընթացքում ձեռք բերված սննդամթերքի միավորի գների համամատությամբ պարզվել է, որ 2015-2016 թվականների և 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ձեռքբերված սննդամթերքի միավորի գները էականորեն բարձր են 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ձեռք բերված սննդամթերքի միավորի գներից, որոշ սննդամթերքի միավորի գները բարձր են մոտ երկու և ավելի անգամ: Պետք է նշել, որ ստուգող հանձնաժողովի կողմից կատարվել է նաև սննդամթերքի շուկայական գների ուսումնասիրություն և պարզվել է, որ 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ընկերության կողմից ձեռք բերված սննդամթերքի գները մոտ են շուկայական մեծածախ գներին:

**Աղյուսակ 15**

ՀՀ դրամ

| **Որոշ սննդամթերքի ձեռք բերման միավոր գներն՝ ըստ տարիների** | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ***h/h*** | ***Անվանումը*** | ***Չ/Մ*** | ***2015թ.*** | ***2016թ.*** | ***2017թ. 1-ին կիսամյակ*** | ***2017թ. 2-րդ կիսամյակ*** |
| 1 | Հաց | կգ | 480 | 450-468 | 440 | 240 |
| 2 | Թեյ | կգ | 6200 | 3500-6150 | 5900-6000 | 2348 |
| 3 | Բուսական յուղ | լ | 775 | 770 | 750-765 | 537 |
| 4 | Բրինձ | կգ | 620 | 350-550 | 520-540 | 309 |
| 5 | Խնձոր | կգ | 350 | 350 | 340 | 190 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Խտացրած կաթ | կգ | 1200 | 1150-1200 | 1050 | 758 |
| 7 | Կակաո | կգ | 7500 | | | 1725 |
| 8 | Հաճար | կգ | 760 | 430-450 | 420-440 | 226 |
| 9 | Հնդկաձավար | կգ | 950 | 670-700 | 680 | 377 |
| 10 | Մածուն | կգ | 576 | 365-570 | 540 | 292 |
| 11 | Մակարոնեղեն | կգ | 470 | 450 | 430-440 | 246 |
| 12 | Մեղր | կգ | 3400 | 3400 | 3100-3150 | 2118 |
| 13 | Սպիտակաձավար | կգ | 370 | 370 | 350 | 262 |
| 14 | Տավարի միս | կգ | 2500 | 2490 | 2490 | 1797 |

2015թ., 2016թ. և 2017 թվականի առաջին կիսամյակի միավորի գները համեմատվել են 2017 թվականի երկրորդ կիսամյակի միավորի գների հետ, որի արդյունքում տարբերությունը կազմել է *84,790.7 հազ. դրամ*, այդ թվում, 2015 թվականին՝ *33,520.6 հազ. դրամ*, 2016 թվականին՝ *31,883.7 հազ. դրամ* և 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ *19,386.4 հազ.դրամ*:

**Աղյուսակ 16**

**2015-2017 թվականներին գնված սննդամթերքի համեմատություն**

հազ.դրամ

| Տարեթիվ | Ձեռք բերված սննդամթերքի արժեքը, այդ թվում | Սննդամթերք, որոնց միավորի գները չի համեմատվել 2017թ.-ի 2-րդ կիսամյակի գների հետ | Համեմատված սննդամթերք | Ձեռք բերված ապրանքներ՝ արտահայտված 2017թ.-ի միավորի գներով | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| 2015թ. | 125,009.2 | 32,287.0 | 92,722.2 | 59,201.6 | 33,520.6 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2016թ. | 134,267.3 | 36,069.7 | 98,197.7 | 66,314.0 | 31,883.7 |
| 2017թ. | 64,645.1 | 5,069.7 | 59,575.4 | 40,189.0 | 19,386.4 |
| ***Ընդ.*** | ***323,921.6*** | ***73,426.4*** | ***250,495.3*** | ***165,704.6*** | ***84,790.76*** |

**«Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության սննդամթերքի պահեստում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ**

Ընկերության սննդամթերքի պահեստում առկա բնական մեղրի և սերուցքային կարագի տեխնիկական բնութագրերին համապատասխանության արժանահավատության նպատակով կատարված սննդամթերքների նմուշառմամբ փորձնական նմուշները ուղղարկել են փորձաքննության, որի արդյունքներով պարզվել է:

- **Որպես կարագ ներկայացված նմուշը, համաձայն ԳՕՍՏ 33490-2015-ի իրենից ներկայացնում է կարագի և բուսական յուղերի խառնուրդ՝ սպրեդ:**
- **Ներկայացված մեղրը չի համապատասխանում բնական մեղրի համար նախատեսված դիաստազայի թվի արժեքին, սախարոզի քանակին և անվտանգության ցուցանիշ հանդիսացող օքսիմեթիլֆուրֆուրոլի ցուցանիշին:**

Սերուցքային կարագը և բնական մեղրն Ընկերությունը ձեռք էր բերել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ից, 31.08.2017թ. կնքված թիվ ՆՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/2-1 պայմանագրով: Պայմանագրով նախատեսվել է մատակարարել 14 անվանում սննդամթերք 6,013.8 հազ. դրամի չափով, որից.

- Բնական մեղր՝ 600կգ, մեկ կիլոգրամի գինը՝ 2118 դրամ (1,270.8 հազ. դրամ):
- Կարագ սերուցքային՝ 750կգ, մեկ կիլոգրամի գինը՝ 2400 դրամ (1,800.0 հազ. դրամ):

31.08.2017թ. մինչև 12.12.2017թ. ընկած ժամանակահատվածում վերը նշված կազմակերպությունից ձեռք է բերվել 83 կգ բնական մեղր, 176.0 հազ. դրամ գումարով, որից ծախսվել է 60.8 կգ բնական մեղր, 176.0 հազ. դրամ գումարով:

12.12.2017թ. դրությամբ բնական մեղրի մնացորդը կազմել է 22.2 կգ, գումարով 47.0 հազ. դրամ: 31.08.2017թ. մինչև 12.12.2017թ. ընկած ժամանակահատվածում ձեռք է բերվել 340 կգ սերուցքային կարագ՝ 816.0 հազ. դրամ գումարով, որից ծախսվել է նույն ժամանակաշրջանում 316.7 կգ սերուցքային կարագ՝ 760.0 հազ. դրամ գումարով, 12.12.2017թ. դրությամբ մնացորդը կազմել է 23.3 կգ՝ 55.9 հազ. դրամ գումարով:

Ընկերությունը 2015-2016թթ. և 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ձեռք է բերել 323,921.7 հազ. դրամի սննդամթերք, որից «Մարիետտա Ասիրյան» ՍՊԸ-ից 132,142.0 հազ. դրամի սննդամթերք:

Պետք է նշել, որ «Մարիետտա Ասիրյան» ՍՊԸ-ն «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությանը մատակարարել է երկու տեսակի սննդամթերք՝ հաց և խմորեղեն: 2015-2016թթ. և 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Մարիետտա Ասիրյան» ՍՊԸ-ից ձեռք է բերել 141810 կգ հաց, 65,531.5 հազ. դրամի և խմորեղեն՝ 34127 կգ, 66,610.5 հազ. դրամի:

«Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ձեռք բերված խմորեղենի ծախսի ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը խախտել է ՀՀ կառավարության 26.05.2011թ. «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների վերաբերյալ» թիվ 711 որոշման պահանջները և ընկերությունում պահվող մեկ մարդու համար շաքար, մուրաբա, ջեմ, մեղր, ալրային և շաքարային հրուշակեղեն սննդամթերքների գծով օրական նախատեսված 60 գրամ միջին չափաբաժնի փոխարեն ճաշացուցակ-պահանջագրերով միայն խմորեղեն սննդամթերքի գծով դուրս է գրվել առնվազն 150 գրամ:

***Արդյունքում, 2015-2016 թվականների ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերով դուրս է գրվել նախատեսվածից ավելի 19,411.1 կգ (37,976.4 հազ. դրամ) խմորեղեն, այդ թվում 2015 թվականի ընթացքում՝ 9728.4 կգ (19,161.1 հազ. դրամ) և 2016 թվականին՝ 9,682.7 կգ (18,815.3 հազ. դրամ):***

**2015-2017թթ. ընթացքում ընկերությունում շահագործվող տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի վերաբերյալ**

«ԳԱԶ 21074» մակնիշի 444LS63 պետհամարանիշի ավտոմեքենան գնահատվել է անկախ գնահատողի կողմից 290.0 հազ. դրամ և 2016 թվականի մայիս ամսին աճուրդ վաճառքով օտարվել է 220.0 հազ. դրամով:

«Շեվրոլե ՆԻՎԱ 2123» մակնիշի 222LL62 պետհամարանիշի ավտոմեքենան գնահատվել է անկախ գնահատողի կողմից 350.0 հազ. դրամ և 2016 թվականի մայիսին աճուրդ վաճառքով օտարվել է 265.0 հազ. դրամով:

2015-2017 թվականների ընթացքում ըստ կնքված պայմանագրերի «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունը ձեռք է բերել 48,418.2 լիտր բենզին, 19,221.6 հազ. դրամի, այդ թվում 2015 թվականին՝ 22000 լիտր բենզին, 9,900.0 հազ. դրամի, 2016 թվականին՝ 15980լ. 5,925.0 հազ. դրամի և 2017 թվականին՝ 10438.2 լիտր, 3396.6 հազ. դրամի:

01.01.2015թ. դրությամբ «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունում բենզինի մնացորդը կազմել է 1293 լիտր, 580.4 հազ. դրամի: 2015-2017 թթ. բենզինի ծախսը կազմել է 49782 լիտր բենզին, 19,691.5 հազ. դրամի, այդ թվում 2015 թվականին՝ 23,161 լիտր, 10,421.1 հազ. դրամի, 2016 թվականին՝ 16,505 լիտր 5981.9 հազ. դրամի և 2017 թվականին՝ 10116 լիտր, 3,288.3 հազ. դրամի:

2015-2017 թվականների ընթացքում «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունն ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման համար պայմանագիր է կնքել «Մ-ԲԻ-ՌԵ» ՍՊԸ-ի հետ 7,050.0 հազ. դրամ ընդհանուր գումարով, սակայն փաստացի մատուցվել է 10,031.7 հազ. դրամի տեխնիկական սպասարկում:

## 16. «ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Դիսպանսեր) փաստացի եկամուտները 2015 թվականին կազմել են 188,654.0 հազ. դրամ, 2016 թվականին՝ 182,966.0 հազ. դրամ, 2017 թվականին՝ 189,523.0 հազ. դրամ:

Դիսպանսերի փաստացի ծախսերը 2015 թվականին կազմել են 180,949.0, 2016 թվականին՝ 179,966.0 հազ. դրամ, 2017 թվականին՝ 184,240.0 հազ. դրամ:

ՊԱԳ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Դիսպանսերի կողմից իրականացվում են հետևյալ ծրագրերը՝

- Տուբերկուլոզով հիվանդների բժշկական օգնության ծառայություններ
- Պետական պատվերի շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ
- Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ ամբողջ կցագրված բնակչության համար:

### «Տուբերկուլոզով հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր

Դիսպանսերի կողմից տուբերկուլոզով հիվանդների բժշկական օգնության ծառայությունների մատուցումը նախատեսված է 48 մահճակալի հաշվարկով:

«Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով ընդհանուր ծախսերի 2015 թվականին 137,998.8 հազ. դրամի կազմում զուտ բժշկական օգնության ծավալը կազմել է 8681 մարդ/օր, որի դիմաց ֆինանսավորումը կազմել է 16,928.0 հազ. դրամ[13], իսկ ծրագրի շրջանակներում հաստատագրված այլ ծախսերը կազմել են 121,070.4 հազ. դրամ, կամ ծրագրային ընդհանուր ծախսերի 87.7 %-ը:

[13] Մեկ մարդ/օրվա համար ֆինանսավորումը սահմանվել է 1950 դրամ, որից 1300 դրամը սննդի, իսկ 650 դրամը՝ դեղորայքի համար

2016 թվականին 134,484.9 հազ. դրամի ընդհանուր ծախսերի կազմում մատուցված բժշկական օգնության ծառայությունների ծավալը կազմել է 7826 մարդ/օր, որի դիմաց ֆինանսավորումը կազմել է 15,260.6 հազ. դրամ, իսկ ծրագրի շրջանակներում հաստատագրված այլ ծախսերը՝ 119,224.3 հազ. դրամ, կամ ծրագրային ընդհանուր ծախսերի 86.4 %-ը:

2017 թվականին 130,858.2 հազ. դրամի ընդհանուր ծախսերի կազմում մատուցված բժշկական օգնության ծառայությունների ծավալը կազմել է 7523 մարդ/օր, որի դիմաց ֆինանսավորումը կազմել է շուրջ 14,669.9 հազ. դրամ, իսկ ծրագրի շրջանակներում հաստատագրված այլ ծախսերը՝ 116,188.3 հազ. դրամ, կամ ծրագրային ընդհանուր ծախսերի 88.9 %-ը:

Ընդհանուր ծրագրային ծախսերի վերլուծությունը ցույց է տվել, որ հաշվետու ժամանակաշրջանում մեկ հիվանդի հաշվով հաստատագրված այլ ծախսերն ունեցել են աճի միտում՝ 2015 թվականին կազմելով 13.9 հազ. դրամ (121,070.4 : 8681 մ/օր), 2016 թվականին՝ 15.2 հազ. դրամ, իսկ 2017 թվականին՝ 17.4 հազ. դրամ, այն դեպքում, երբ բժշկական օգնության ծավալները (մարդ/օր) ակնհայտորեն նվազել են:

Որպես բացասական երևույթ է գնահատվում նաև ըստ տարիների ստացիոնար բաժանմունքի մահճակալների օգտագործման միջին ցուցանիշի նվազումը՝ 2015 թվականին այն կազմել է 19.8 մարդ/օր կամ 41.3 % (19.8/48*100), 2016 թվականին՝ 18.6 մարդ/օր կամ 38.8 %, 2017 թվականին՝ 16.9 մ/օր կամ 35.2%:

***Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում «Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով արձանագրվել է հիվանդների թվի նվազում՝ հաստատագրված ծախսերի ավելացման պարագայում, իսկ ստացիոնար բաժանմունքի հզորությունները թերի են օգտագործվել:***

Ըստ ստացիոնար բաժանմունքի հաշվետվությունների՝ 2015 թվականին բժշկական օգնություն մասով կատարողականը կազմել է 7225, 2016 թվականին՝ 6786, իսկ 2017 թվականին՝ 6181 մարդ/օր, մինչդեռ ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում տվյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 8681, 7826 և 7523 մարդ/օր: Արդյունքում, ըստ տարիների մատուցված ծառայությունների դիմաց ֆինանսավորումը գերազանցել է փաստացի կատարված ծախսերը, 2015 թվականին՝ 2,839.2 հազ. դրամով, 2016 թվականին՝

2,028.0 հազ. դրամով, իսկ 2017 թվականին՝ 2,616.9 հազ. դրամով, կամ ընդամենը 7,484.1 հազ. դրամով:

Տվյալ երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ դիտարկվող ծրագրում ընդգրկվել, հաշվետվություններում ներառվել և ՊԱԳ-ի կողմից ֆինանսավորվել են նաև բոլոր զորակոչիկները, մինչդեռ ստացիոնար պայմաններում բժշկական ծառայություններից օգտվել են նրանց մի մասը: Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ ծրագրային ծախսերի մեջ 2015-2017 թվականներին ներառվել են համապատասխանաբար՝ 1456, 1040 և 1177 մարդ/օրի չափով թվով 278, 179 և 204 զորակոչիկների օրական 5-6 օր տևողությամբ հիվանդանոցային պայմաններում փորձաքննության ծախսերը, որը ոչ Դիսպանսերի և ՊԱԳ-ի միջև կնքված պայմանագրով, ոչ էլ որևէ այլ փաստաթղթերով չի սահմանվել: Իրականում, ստացիոնար պայմաններում 2015 թվականին բուժում են ստացել ընդամենը 6 զորակոչիկ 300 մարդ/օր, 2016 թվականին՝ 8 զորակոչիկ 327 մարդ/օր և 2017 թվականին՝ 10 զորակոչիկ 446 մարդ/օր:

***Հետևաբար՝ ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում արտացոլված ցուցանիշները չեն համապատասխանում մատուցված փաստացի ծառայությունների ծավալներին:***

**Պետական պատվերի շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ**

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ պետական պատվերի շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով 2015 թվականին կատարված աշխատանքների դիմաց ֆինանսավորումը կազմել է 26,680.9 հազ. դրամ, 2016 թվականին՝ 27,745.4 հազ. դրամ, 2017 թվականին՝ 27,826.9 հազ. դրամ[14]:

**ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում չեն նախատեսվել հետազոտվող անձանց անհատական տվյալները, ինչը թույլ չի տալիս գնահատել ծախսված միջոցների հավաստիությունը**: Ավելին, հետազոտություն անցած հիվանդների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը բացակայում է նաև Դիսպանսերում:

[14] Դիտարկվող ծառայությունների մասով տարեկան ծախս է համարվում նախորդ տարվա դեկտեմբերի 16-ից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը:

Դիսպանսերի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2004թ. թիվ 318-Ն որոշման 7-րդ հավելվածով սահմանված՝ առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացիներին բժշկական կազմակերպություններ ուղեգրելու, ուղեգիր տրամադրելու և ուղեգրերի ձևաթղթեր հատկացնելու վերաբերյալ պահանջը: Ընտրանքային կարգով առավել ծախսատար առանձին հետազոտությունների մասով իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ հետազոտվողների անհատական տվյալների, սահմանված ձևաչափի ուղեգրերի բացակայության պարագայում **Դիսպանսերի կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվությունները չունեն բավարար հիմնավորվածություն**:

Այսպես՝ մեկ անձի հաշվով ֆլյուորոգրաֆիկ հետազոտության գինը սահմանվել է 1.650 հազ. դրամ: Ըստ հաշվետվությունների՝ 2015 թվականին կատարվել է 8785, 2016 թվականին՝ 9605, իսկ 2017 թվականին՝ 10688 ֆլյուորոգրաֆիկ հետազոտություն, որի դիմաց պետական բյուջեից Դիսպանսերին հատկացվել է համապատասխանաբար՝ 14,495,3, 15,848,3 և 17,635.2 հազ. դրամ: Անկախ ուղեգրման տեսակից (ներքին ուղեգրում կամ այլ բժշկական կազմակերպությունների կողմից ուղեգրում)՝ **ուղեգրումը կատարվել է սահմանված կարգի խախտումներով՝ ուղեգրերը լրացվել են ուղեգրող բժշկի կամ կազմակերպության հայեցողությամբ, սովորական, անգամ արդեն օգտագործված թղթերի մյուս երեսի վրա, չեն պարունակել գրառումներ հետազոտության նպատակի, նախնական ախտորոշման, անձի անհատական տվյալների և այլ անհրաժեշտ տեղեկատվության վերաբերյալ:** Չի ապահովվել նաև ՀՀ կառաավարության թիվ 318-Ն որոշմամբ սահմանված պահանջները գրանցամատյանների վարման վերաբերյալ՝ բացի հետազոտվողի անուն, ազգանունից, ծննդյան թվից և որոշ դեպքերում՝ հասցեից, հետազոտվողի տվյալները նույնականացնելու (իդենտիֆիկացնելու) համար այլ պահանջվող տվյալներ (հայրանուն, հեռախոսահամար, ուղեգրող բժշկի ազգանունը և կազմակերպությունը, ուղեգրի սերիան ու համարը և այլն) չեն նշվել: Վերոնշյալը հիմք է հանդիսանում Դիսպանսերի կողմից կատարողականները ֆինանսավորելու նպատակով ՊԱԳ ներկայացված հաշվետվությունները գնահատել որպես ոչ արժանահավատ, ինչը հաստատվել է նաև ուղեգրերի և հետազոտվողների մասին գրանցամատյաններում կատարված գրառումների թվի համադրմամբ: Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ հետազոտություն անցած հիվանդին վերոնշյալ ուղեգրերը վերադարձվում են, իսկ Դիսպանսերում

կատարված ծախսի վերաբերյալ, բացի թերի գրանցումներից, որևէ այլ հիմք չի պահպանվում:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ գրանցամատյանում հետազոտվողների թիվը, որն ընկած է ՊԱԳ ներկայացվող ցուցանիշների հիմքում, էականորեն գերազանցում է ուղեգրերի ընդհանուր թիվը՝ Դիսպանսերի բժիշկների կողմից հետազոտման նպատակով ուղեգրված անձանց թվի հանրագումարը զգալիորեն պակաս է Դիսպանսերի գրանցամատյանի տվյալներից: Ընտրանքային կարգով միայն 2017 թվականի նոյեմբեր ամսին թվով 530 անձի վերաբերյալ բժիշկների գրանցամատյաններում գրառումները բացակայում են:

***Ելնելով վերոնշյալից՝ ֆլյուորոգրաֆիկ հետազոտության համար 2015-2017 թվականներին 47,968.9 հազ. դրամի ծախսերը փաստաթղթերով չեն հիմնավորվել, իսկ ՊԱԳ-ը Դիսպանսերի կողմից ներկայացված հաշվետվությունների ճշտության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացրել՝ ֆինանսավորելով փաստացի ծառայությունները գերազանցող ծավալները:***

*Սոնոգրաֆիկ հետազոտության* մեկ դեպքի գինը սահմանվել է 2,8 հազ. դրամ: Ըստ հաշվետվության՝ 2015 թվականին կատարվել է 759, 2016 թվականին՝ 734, իսկ 2017 թվականին՝ 653 սոնոգրաֆիկ հետազոտություն, որի դիմաց պետական բյուջեից Դիսպանսերին հատկացվել է համապատասխանաբար՝ 2,125,2, 2,055,2 և 1,828.4 հազ. դրամ: Ինչպես ֆլյուորոգրաֆիայի, այնպես էլ սոնոգրաֆիկ հետազոտության դեպքում, խախտվել է ուղեգրման կարգն ինչպես ուղեգրման գործընթացի և ներկայացվող ուղեգրերի, այնպես էլ գրանցամատյանների վարման ուղղությամբ: Այսպես, համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 2015 թվականին 698 սոնոգրաֆիկ հետազոտությունից 18-ը կատարվել է այլ կազմակերպությունների ուղեգրերով, 391-ը՝ ներքին ուղեգրերով, իսկ 289-ը՝ զորակոչիկներն են: Այլ կազմակերպություններից ստացված 18 ուղեգրերից միայն 9-ն են համապատասխանում ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշմամբ սահմանված ձևաչափին, իսկ ուղեգրման վերաբերյալ գրանցամատյանը վարվել է վերը նկարագրված թերություններով: 2016 թվականին 734 սոնոգրաֆիկ հետազոտությունից 16-ը կատարվել է այլ կազմակերպությունների ուղեգրերով, 496-ը՝ ներքին ուղեգրերով, իսկ 218-ը՝ զորակոչիկներն են: Այլ կազմակերպություններից ստացված 16 ուղեգրերից միայն 6-ն են համապատասխանում սահմանված ձևաչափին: 2017 թվականին 653

սոնոգրաֆիկ հետազոտությունից 27-ը կատարվել է այլ կազմակերպությունների ուղեգրերով, 390-ը՝ ներքին ուղեգրերով, իսկ 203-ը՝ զորակոչիկներն են: Այլ կազմակերպություններից ստացված 27 ուղեգրերից միայն 11-ն են համապատասխանում սահմանված ձևաչափին: Արդյունքում, իրականացված սոնոգրաֆիկ հետազոտությունների քանակի վերաբերյալ ֆինանսավորման նպատակով ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը հնարավոր չէ գնահատել:

Դիսպանսերի կողմից իրականացվում է 4 տեսակի ռենտգեն հետազոտություն, որից ռենտգենոսկոպիայի գինը սահմանվել է 1.9 հազ. դրամ, ռենտգենոգրաֆիա (մեկ ժապավեն 18x24)՝ 2,1 հազ. դրամ, ռենտգենոգրաֆիա (մեկ ժապավեն 24x30)՝ 2.2 հազ. դրամ և ռենտգենոգրաֆիա (մեկ ժապավեն 30x40)՝ 2.5 հազ.դրամ:

Ըստ ներկայացված հաշվետվությունների՝ 2015 թվականին կատարվել է ընդամենը 3385, 2016 թվականին՝ 2975, իսկ 2017 թվականին՝ 2458 ռենտգենոգրաֆիա, որի դիմաց պետական բյուջեից Դիսպանսերին հատկացվել է համապատասխանաբար՝ 7,615.3, 6,605.9 և 5,507.7 հազ. դրամ: Ռենտգեն հետազոտությունների ծավալների հաշվառման, ուղեգրման և գրանցամատյանների վարմանը բնորոշ են նախորդ հետազոտություններին վերաբերող խախտումները և թերությունները:

***Հետևաբար՝ նման ուղեգրումը, ինչպես նաև գրանցամատյանի թերի վարումը բավարար հիմք չեն հանդիսանում ՊԱԳ ներկայացված հաշվետվությունները արժանահավատ համարելու և կատարողականները ֆինանսավորելու համար:***

***<u>Սննդի կազմակերպում</u>***

Համաձայն ոլորտի մասնագետների հետազոտության արդյունքների՝ տուբերկուլոզով հիվանդների համար կարևոր է ոչ այնքան մեծ քանակությամբ սնունդ ընդունելը (3500-5000 կկալ), որքան դրա բաղադրությունը, որն ապահովում է համարժեք էներգիա՝ սպիտակուցների ոչնչացման, ճարպերի և ածխաջրերի փոխանակման վատթարացման, վիտամինների ծախսի և հանքային նյութերի կորստի բարձր մակարդակին դիմակայելու համար: Ելնելով վերոնշյալից՝ սրացման փուլում և բորբոքային երևույթներով ուղեկցվող տուբերկուլոզով հիվանդների համար օրական ընդունվող սննդի էներգետիկ արժեքը կարող է

տատանվել 3100-ից մինչև 3500 կկալ, իսկ տուբերկուլոզի մարման փուլում՝ 2500-ից մինչև 2700 կկալ սահմաններում:[15]

Հաշվի առնելով տուբերկուլոզով հիվանդների բուժման գործում ճիշտ սննդակարգի ընտրության խնդրի կարևորությունը, Նախարարության «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դեռևս 2015 թվականին մշակվել են «Տուբերկուլոզով հիվանդներին հատկացվող սննդի անհրաժեշտ էներգետիկ արժեքների վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը, սակայն, մինչև 2017 թվականի ավարտը չի ընդունվել՝ հանգեցնելով Դիսպանսերի կողմից 2001 թվականից ի վեր տուբերկուլոզով հիվանդների բուժման համար ոչ պիտանի սննդակարգի կիրառմանը:

Ինչ վերաբերում է Դիսպանսերի կողմից հիվանդներին հատկացվող սննդին, ապա ճաշացանկերի ուսումնասիրությունը ցույց է տվել հետևյալը՝

- ✓ Սնունդը հիմնականում բաղկացած է կենդանական ճարպերից՝ կարագ, մսի պահածո, նրբերշիկ, ինչպես նաև ածխաջրերից՝ հաց, մակարոնեղեն, ձավարեղեն, խմորեղեն, խտացրած կաթ և այլն:
- ✓ Սպիտակուցների քանակը՝ ճարպերի և ածխաջրերի համեմատ, խիստ սահմանափակ է: Այսպես՝ ճաշացանկերում իսպառ բացակայում են սպիտակուցի աղբյուր հանդիսացող կաթնամթերքը՝ կաթը, կաթնաշոռը, պանիրը, թթվասերը, չմշակված միսը:
- ✓ Ճաշացանկերում ընդհանրապես չի ներառվել բնական վիտամիններ և հանքային նյութեր պարունակող սնունդը՝ բանջարեղենը, միրգը, հյութերը և այլն:

Բացի այդ, վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ հիվանդներին հատկացվող սնունդն աչքի է ընկել իր բարձր էներգետիկ արժեքով, որը հաշվետու ժամանակաշրջանում ունեցել է կայուն աճի միտում: Ընտրանքային կարգով առանձին ամիսների ճաշացանկերում ընդգրկված սննդի տեսակներով, որոնց ցանկը՝ համաձայն ներկայացված տեղեկանքի՝ վերջին 15 տարվա ընթացքում գրեթե փոփոխության չի ենթարկվել, իսկ սննդի էներգետիկ արժեքների հաշվարկի արդյունքում պարզվել է, որ եթե 2015 թվականի հունվար ամսին այն կազմել է միջինը 3300 կկալ, ապա 2016 թվականի օգոստոս ամսին՝ 4300 կկալ,

[15] Օգտագործվել են ՌԴ առողջապահության նախարարության կողմից 21.04.2006թ. հաստատված՝ տուբերկուլոզով հիվանդների դիետիկ թերապիայի մեթոդական երաշխավորությունները:

իսկ 2017 թվականի նոյեմբեր ամսին՝ արդեն 5200 կկալ: Միաժամանակ՝ առավել ճշգրիտ գնահատման ապահովման նպատակով, հաշվարկվել է տարվա կտրվածքով սննդի մեկ օրվա միջին էներգետիկ արժեքը, որը ցույց է տվել հետևյալը՝ 2015 թվականին այդ ցուցանիշը կազմել է 4074 կկալ, 2016 թվականին՝ 4127 կկալ, 2017 թվականին՝ 4572 կկալ: Հատկանշական է, որ վերոնշյալ ցուցանիշների սրընթաց աճը մեծամասամբ պայմանավորված է հենց սննդակարգում ընդգրկվող ճարպերի, սպիտակուցների, ածխաջրերի և հանքային տարրերի հարաբերակցության սխալ ընտրությամբ:

Դիսպանսերի կողմից գնված սննդամթերքի հատկանիշների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ **մատակարարվող առանձին ապրանքներ չեն համապատասխանում տեխնիկական բնութագրերին**: Մասնավորապես, հալած յուղը պետք է լիներ բուտերբրոդային տեսակի, իսկ մատակարարվել է բուսայուղային հագեցված խառնուրդ, որն իր անվտանգության չափանիշներով չի համապատասխանում տեխնիկական բնութագրին: Մսի պահածոյում՝ համաձայն տեխնիկական բնութագրի, մսի և ճարպի զանգվածային մասը պետք է լիներ առնվազն 54 %, մինչդեռ պիտակի վրա տվյալ ցուցանիշը նշված չէ, իսկ ճարպի իրական զանգվածը գերազանցել է պահանջվող քանակը: Նույն կերպ՝ ձկան պահածոյի մեջ՝ ըստ տեխնիկական բնութագրի, ձկան զանգվածային մասը պետք է կազմեր 75 %, փաստացի ցուցանիշը կազմել է 55,2 %: իսկ յուղային մասը 10 %՝ փաստացի 8.0 %-ի պարագայում: Կիսելը պետք է մատակարարվեր 0.22-0.25 կգ տուփային փաթեթավորմամբ, սակայն մատակարարվել է 5.0 կգ պարունակությամբ պոլիէթիլենային պարկերով և այլն:

***<u>Գնումների գործընթաց</u>***

2015 թվականի հունվար ամսին մեկ ամսվա համար Դիսպանսերի կողմից «Հռիփսիմե Հակոբյան» Ա/Ձ-ի հետ կնքվել է 316,5 հազ. դրամի պայմանագիր՝ բժշկական սարքավորումների սպասարկման ծառայությունների գնման նպատակով, որում չի նշվել սպասարկման ենթակա սարքավորումների ցանկը և մատուցվող ծառայությունների բովանդակությունը: Ըստ ծառայությունների մատուցման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրության՝ իրականացվել են «պայմանագրի հավելված 1-ի 1-ին, 11-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանված աշխատանքներ», մինչդեռ պայմանագիրը հավելված չի ունեցել:

2015 թվականի հունվար ամսին անցկացվել է նույն ծառայությունների գնման շրջանակային համաձայնագրով նախատեսված մրցույթ, որին մասնակցել է միայն «Հռիփսիմե Հակոբյան» Ա/Ձ-ն, որի հետ կնքվել է 3,481,5 հազ. դրամ գումարի պայմանագիր: Մրցույթի հրավերը կազմվել է միասնական 24 չափաբաժնի համար՝ ներառյալ տվյալ ծառայությունները՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը: Ըստ պայմանագրի՝ կատարողը պետք է սպասարկումն իրականացներ շաբաթը երկու անգամ, մինչդեռ այսպիսի հաճախականություն սարքավորումների տեխնիկական անձնագրերով նախատեսված չէ:

Դիսպանսերի կողմից տվյալ ծառայությունների շուկայական գների ուսումնասիրություն չի կատարվել: 2015 թվականի մրցույթի հրավերում ներկայացվել է պահանջ միջուկային անվտանգության պետական կոմիտեի կողմից տրված լիցենզիայի առկայության վերաբերյալ, սակայն մրցույթում հաղթած Ա/Ձ-ն նման լիցենզիա չի ունեցել: Ծառայությունների մատուցման վերաբերյալ ընդունման-հանձնման արձանագրություններում նշվել են չափաբաժիններով կատարված աշխատանքները, իսկ վճարումը կատարվել է ամեն ամիս ամբողջ ծավալի համար հավասար չափերով՝ անկախ ներկայացված կատարողականների փաստացի ծավալներից: Արդյունքում, 11 ամսվա ընթացքում վճարվել է 3,481.5 հազ. դրամ, մինչդեռ կատարողականներով ներկայացվել է 1,198.1 հազ. դրամ կամ 2,283.4 հազ. դրամով ավելի գումար:

2016 թվականին նույն ծառայությունների գնման նպատակով հայտարարված մրցույթի պայմաններում նույնպես նշվել է լիցենզիայի առկայության պահանջ, որի ապահովման նպատակով «Հռիփսիմե Հակոբյան» Ա/Ձ-ն մասնակցել է մրցույթին «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի հետ կոնսորցիումով (այսուհետ՝ Կոնսորցիում): Այլ մասնակիցների բացակայության պատճառով մրցույթում հաղթող ճանաչված Կոնսորցիումի հետ կնքվել է 3,798.0 հազ. դրամի պայմանագիր: Ինչպես 2015 թվականի, այնպես էլ 2016 թվականի ընդունման-հանձնման արձանագրություններում նշվել են սարքավորումների և սարքերի անվանումները՝ առանց մատուցվող ծառայության բնույթի, որի հետևանքով հնարավոր չէ գնահատել փաստացի կատարված աշխատանքի ծավալը և դրա դիմաց վճարումների հավաստիությունը: Բացի այդ, բոլոր կատարողականները ներկայացվել և ստորագրվել են «Հռիփսիմե Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից, որը դիտարկվող ծառայությունների մատուցման լիցենզիա չի ունեցել:

2017 թվականին Կոնսորցիումի հետ կնքվել է 3,798.0 հազ. դրամի պայմանագիր, իսկ ծառայությունների մատուցման վերաբերյալ կատարողականների ներկայացման ու վճարումների մասով հիմնականում կրկնվել են 2015-2016 թվականներին արձանագրված թերությունները և խախտումները:

Ըստ առանձին ծառայությունների կատարված աշխատանքների և վճարվող գումարների չափի վերլուծությունը ցույց է տվել հետևյալը՝

- ԿՓԿ 2 կալորիմետրի սպասարկման համար սահմանվել է 95.0 հազ. դրամ: Ամեն ամիս ներկայացվել են օպտիկայի կարգաբերման և մաքրման վերաբերյալ կատարողական ակտեր այն դեպքում, երբ սարքի արժեքն ընդամենը 170.0 հազ. դրամ է, կամ 2 տարվա շահագործման ընթացքում սպասարկման ծախսերն արդեն իսկ գերազանցել են սարքի արժեքը: Ավելին, համաձայն տեխնիկական անձնագրի՝ սարքը պետք է անցներ ՏՕ-1 և ՏՕ-2 տեխնիկական զննում, որից մաքրման աշխատանքները (ՏՕ-1) կատարվում են բժշկական անձնակազմի կողմից, իսկ կարգաբերումը (ՏՕ-2)՝ տարին մեկ անգամ:

- DIO թորման սարքի սպասարկման դիմաց վճարվել է 75.0 հազ. դրամ, իսկ կատարողական ակտերում ներկայացվել է ջրի տվիչի կարգաբերում: Տվյալ սարքի շուկայական արժեքը կազմում է 170.0-200.0 հազ. դրամ, կամ երեք տարվա ընթացքում սպասարկման համար ծախսվել է 225.0 հազ. դրամ այն դեպքում, որ այդ ընթացքում սարքն աշխատել է անխափան և որևէ մաս չի փոխարինվել:

- AURA 2000 կենսաանվտանգության պահարանի սպասարկման կատարողական ակտերում նշվել է օդափոխանակման հանգույցի ստուգում և կարգաբերում, սակայն նշված չէ կարգաբերման եղանակը՝ տեսողական կամ գործիքային: Եթե խոսքը գնում է տեսողական ստուգման մասին, ապա վճարված 230.0 հազ. դրամի ծախսն ուղղակի անիմաստ է, իսկ գործիքային ստուգման պարագայում պետք է նշումներ կատարվեին հոսքի լամինարության, վարընթաց հոսքի և արագության ստանդարտներին համապատասխանության մասին, որից հետո չափման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվեր հաշվետվություն: Նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր չեն կազմվել:

***Այսպիսով՝ վերոնշյալ փաստերը վկայում են, որ կատարողական ակտերում նշված աշխատանքների արժեքներն արհեստականորեն ուռճացվել են, տնտեսապես հիմնավորված չեն, չեն համապատասխանում Դիսպանսերի սարքավորումների և սարքերի սպասարկման աշխատանքների բնույթին և ծավալին, կրում են ձևական բնույթ:***

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

**1.1** ՀՀ կառավարության 2012 թվականի որոշմամբ պետական ծառայողների աշխատավարձի 10% աճի համար նախատեսված գումարներն ուղղվել են վերջիններիս սոցիալական փաթեթի ծրագրի իրականացմանը՝ առողջության ապահովագրության պարտադիր բաղադրիչի միջոցներն ուղղելով ապահովագրական ընկերություններին:

**1.2** ՀՀ կառավարության 2013 և 2014 թվականների համապատասխան որոշումներով, սոցփաթեթի առողջության ապահովագրության ծառայությունները և համապատասխան ֆինանսական միջոցները փոխանցվեցին ՀՀ առողջապահության նախարարությանը, ինչը ապահովեց.

**1.2.1** պետական բյուջեի ծախսերի էական նվազեցում

**1.2.2** ավելացավ ծրագրի շահառուների թիվը (ժամկետային զինծառայողները և նրանց ընտանիքի անդամները),

**1.2.3** ընդլայնվեց բուժծառայությունների փաթեթը (հատուկ և դժվարամատչելի հետազոտություններ, թերապևտիկ ծառայություններ և այլն),

**1.2.4** վերացվեց հատուցման շեմը (հատուցվում էին մինչև 3,8 մլն դրամի ծառայությունները):

**1.3** Չնայած ապահովագրական ընկերությունների միջոցով իրականացված սոցփաթեթի ծրագրի շրջանակներում առողջության ապահովագրման 2012-2013թթ. (1,5 տարի) կառավարության արձանագրած ծախսատար փորձառությանը, ՀՀ կառավարությունը 2017 թվականի հոկտեմբերի 1-ից սոցփաթեթի բյուջետային գումարները (94.4 հազար շահառու) 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար 945.0 մլն. դրամի չափով նորից փոխանցեց մասնավոր ապահովագրական ընկերություններին: Նախատեսված է, որ հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին պետք է ունենա 90% ուղենշային մակարդակ կամ ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ կմնա 10% (94.5 մլն դրամ): Սակայն, փաստացի հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին կազմել է 76.4% կամ ապահովագրական ընկերությունների մոտ մնացել է շուրջ 222.9 մլն դրամ՝ 128.4 մլն դրամ ավելի, քան հասանելիք 94.5 մլն դրամը: Ի դեպ, 2017 թվականին բոլոր առողջապահական ծրագրերը (67.0 մլրդ դրամ) կառավարելու համար, պետությունը ՊԱԳ-ի վրա ծախսել է շուրջ 360.0 մլն դրամ:

**1.4** Մասնավոր ապահովագրական ընկերությունների դերը կայանում է հիմնական փաթեթում չներառված հարակից ծառայությունների (ստոմատոլոգիա, կոսմետոլոգիա և այլն) ապահովագրումը:

**1.5** Թե միջազգային փորձի վերլուծությամբ, և թե միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված ուսումնասիրություններում տրված խորհուրդ-առաջարկներով կարևորվում է գործող համակարգերի արդյունավետության բարելավման նպատակով ամրապնդել վարչարարությունը, արդիականացնել հսկման և վերահսկման մեխանիզմները, և դրանով պայմանավորված՝ բարձրացնել պետական բյուջեից ծախսվող ֆինանսական միջոցների հասցեականությունը և նպատակայնությունը:

**1.6** Նախարարության կողմից էլեկտրոնային առողջապահական համակարգում դիտարկման հնարավորություն տրամադրված չլինելու պատճառով ՊԱԳ-ը չի տիրապետում ապահովագրական ընկերությունների կողմից սոց. փաթեթի շահառուների սպասարկման հաշվետվությունների տվյալներին, չնայած որ կանոնադրությամբ սահմանված կարգով պետք է ապահովի պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործումը, ինչպես նաև կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկումը:

## 2 «ԴԺՎԱՐԱՄԱՏՉԵԼԻ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**2.1** «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում բյուջետային միջոցների հաշվին մատուցվող ծառայությունների գերկենտրոնացումը արդյունք է օրենսդրական բացերի, ոչ հավասար մրցակցային պայմանների, մասնավորապես՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման հավելված 2-ի 4-րդ կետով սահմանվել է, որ պայմանագրային գումարները հաշվարկվում են նախորդ տարում փաստացի ֆինանսավորված գումարի, գների բարձրացման և դեպքերի ավելացման նպատակով նախատեսված գումարի հանրագումարով: Այսինքն, գործող կարգի համաձայն, մեծ ծավալ իրականացնող բուժ. հիմնարկների համար հետագա ծավալների նույն չափով մեծությունը երաշխավորված է:

**2.2** ՊԱԳ ներկայացված ամսական հաշվետվություններով մի շարք ախտորոշիչ հետազոտությունների տեսակներ ներառված չեն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի «Բնակչությանը պետության

կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների տրամադրման չափորոշիչը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 53-Ն հրամանում, ինչպես նաև 2017 թվականի հունվարի 27-ի «2017 թվականին բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման, առողջապահական հարակից ծառայությունների «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի նորմատիվները և միջինացված գները հաստատելու մասին» թիվ 146-Ա հրամանի հավելվածի դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում: Առկա են դեպքեր, երբ կատարողականներում ներառվել են «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսված հետազոտություններ, սակայն պատվիրատուն «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի միջոցներից վերը նշված կատարողականների դիմաց իրականացրել է ֆինանսավորում: Խախտվել է 53-Ն հրամանով սահմանված չափորոշիչի պահանջը: 2015-2017թթ. ընթացքում նախարարության կողմից «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրում չներառված հետազոտությունների դիմաց իրականացվել է 10,149.5 հազ. դրամի ֆինանսավորում: Նշված գումարը ենթակա է հետ վերադարձման ՀՀ պետական բյուջե:

**2.3** «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման 47-րդ կետի համաձայն՝ «Նորմեդ» ՍՊ և «Իզմիրլյան ԲԿ» ՓԲ ընկերություններին ավելի վճարված 1,479.0 հազ. դրամ գումարը ենթակա է հետ վերադարձման ՀՀ պետական բյուջե:

**2.4** Պայմանագրային գումարներում փոփոխությունները և վերաբաշխումները հիմնականում չեն կատարվել «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման 35-րդ կետի համաձայն: ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հրամաններով «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի բյուջեն աճել է շուրջ 37%-ով, 2016 թվականին՝ շուրջ 55%-ով, իսկ 2017 թվականին՝ շուրջ 7%-ով: 2015-2017թթ. ընթացքում վերաբաշխման արդյունքում պայմանագրային գումարներում փոփոխությունները հիմնականում գերազանցել են սահմանված 10 տոկոսի շեմը: Խախտվել է վերոնշյալ որոշման 35-րդ կետի պահանջը:

**2.5** ՊԱԳ-ի կողմից 2015 թվականին մի շարք բուժհաստատություններում կատարված հերթագրման կարգի պահանջների կատարման

ուսումնասիրությունների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել, իսկ 2015-2017 թվականների ընթացքում «Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում այլ ուսումնասիրություններ չեն իրականացվել: Խախտվել է *«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշման 39-րդ կետի* պահանջը, այն է՝ Կազմակերպությունները բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները կատարում են պատվիրատուի կողմից սահմանված պայմանագրային գումարի ամսական համամասնությունների չափով, և *44-րդ կետի պահանջը*, այն է՝ Կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված ամսական հաշվետվությունները վերահսկվում են պատվիրատուի կողմից:

## 3 «ՀԵՄՈԴԻԱԼԻԶԻ ԵՎ ՊԵՐԻՏՈՆԻԱԼ ԴԻԱԼԻԶԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ առողջապահության նախարարությունը չունի հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի գնագոյացման հաշվարկ, ծառայության գինը սահմանվում է ելնելով տվյալ տարվա համար ՀՀ պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից:

## 4 ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**4.1** ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված մանկաբարձական բժշկական օգնության ծառայության միջինացված գների գնագոյացման հաշվարկները բացակայում են:

**4.2** ՀՀ-ում կեսարյան հատումով ավարտված ծննդաբերությունների տոկոսը ընդհանուր ծնունդների մեջ տարեց-տարի ավելանում է և նույնիսկ վերջին տարիներին սկսել է գերազանցել որոշ Եվրոպական և ԱՊՀ երկրների տարեկան ցուցանիշները:

## 5 «ԴԵՂՈՐԱՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**5.2** ՀՀ առողջապահության նախարարությունը պատշաճ միջոցներ չի ձեռնարկել կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի թանկացման, ինչպես նաև կազմակերպությունների կողմից մատակարարվող դեղերի ներմուծման արժեքներից էապես թանկ գներով դրանց գնման փաստերը բացառելու ուղղությամբ:

**5.3** Գնումների պլանի կազմման ընթացքում գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկը հաշվարկներով չի հիմնավորվել և դեղերի քանակների որոշման ընթացքում հաճախ չի հաշվառվել՝ հանգեցնելով ներկայացված պահանջարկի, գնումների պլանով նախատեսված և փաստացի ծախսված քանակների միջև էական շեղումների առաջացմանը: ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեռևս չեն մշակվել և ընդունվել մի շարք հիվանդությունների բուժման սխեմաները, որոնք պետք է կիրառվեն դեղորայքի պահանջարկի ձևավորման ընթացքում:

**5.4** ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղերի գնումների պլանավորումն ու իրականացումը չի բխել բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման պահանջից, ամեն տարի գնված դեղերի բաշխումից հետո առաջացել են մեծաքանակ մնացորդներ: Արդյունքում, 2015 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված 1.985.055.8 հազ. դրամի գնումներից տարեվերջի մնացորդը կազմել է 1,055.387.0 հազ. դրամ (53.0 %-ը), 2016 թվականին տվյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 2.072.370.5 հազ. դրամ և 1,111,009.8 հազ. դրամ (54.0 %-ը), իսկ 2017 թվականին՝ 2,146,956.1 հազ. դրամ և 1,184,934.2 հազ. դրամ (55.0 %-ը): Ընդ որում, տվյալ մնացորդների գերակշռող մասը բաժին է ընկել հակադիաբետիկ դեղերին, որոնց տեսակարար կշիռը 2015-2017 թվականներին տվյալ խումբ դեղերի ծախսերում կազմել է համապատասխանաբար՝ 62.0 %, 66.0 % և 72.0 %:

**5.5** Տարեվերջի մեծաքանակ մնացորդների առկայությունը պայմանավորող հիմնական գործոններից են դեղորայքից օգտվող հիվանդների հաշվառման գործում տեղ գտած թերությունները, որոնց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցները դեռևս արդյունավետ չեն:

## 6 ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

## ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խախտվել է ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 2-րդ հավելվածի 28-րդ կետի պահանջը ֆինանսավորվող ծրագրերի բյուջետային ծախսերի հաշվարկման վերաբերյալ՝ ՊԱԳ-ը պայմանագրերի կնքման ընթացքում օգտագործել է շտեմարանում առկա տվյալներից տարբերվող ցուցանիշներ՝ հանգեցնելով բյուջետային ծախսերի պլանավորման մակարդակի իջեցմանը և տարեսկզբին մնացորդների առաջացմանը: «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» և «Նեղ մասնագիտական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերով 1,117,084.8 հազ. դրամի վերաբաշխումներն իրականացվել են ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջի խախտմամբ:

## 7 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԺԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից պայմանագրային գումարների 5%-ի և ծրագրային պայմանագրային գումարների 10%-ի շեմերի գերազանցման դեպքում դրանց ավելացումն իրականացվել է առանց ՀՀ վարչապետի համաձայնության՝ խախտելով ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման V գլխի 35-րդ կետի պահանջը: Միաժամանակ, բուժկազմակերպությունների հետ պայմանագրային գումարների որոշման ընթացքում հաշվի չի առնվել նախորդ տարվա փաստացի ֆինանսավորումը՝ հանգեցնելով բյուջետային միջոցների անհիմն վերաբաշխմանը:

## 8 «ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՎ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕՐԹԵԶՆԵՐՈՎ ԵՎ ԿՈՐՍԵՏՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**8.2** Կորսետների և օրթեզների պատրաստումը կատարվել է առանց տեխնիկական բնութագրերի:

**8.3** Նախարարության կողմից ծրագիրն իրականացնող կազմակերպությունները տարիներ շարունակ որոշվել են առանց մրցույթ հայտարարելու՝ խախտելով ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. «Շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկը հաստատելու մասին» թիվ 220-Ն որոշման պահանջը:

**8.4** Ծառայությունների միավոր գներն ունեցել են նվազման միտում և հաստատվել են անկախ պատրաստվող օրթեզի կամ կորսետի քանակից, չափից և այլ առանձնահատկություններից:

**8.5** Պատրաստվող արտադրանքի գնի էժանացումը պայմանավորված է նախորդ տարիներին մատուցվող ծառայությունների գնի ուռճացմամբ:

## 9 ՀՀ-ՈՒՄ ՁԻԱՀ-Ի ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2015 թվականին Նախարարության կողմից բժշկական սարքավորումների գնումները կատարվել են գնումների մասին օրենսդրության խախտմամբ՝ գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ուղղակի հղում է պարունակել արտադրվող ապրանքի առևտրային նշանին և ֆիրմային անվանմանը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 5-րդ կետի պահանջները: Մատակարարված սարքավորումների գներն էապես գերազանցել են մաքսային արժեքը: Մատակարարված սարքավորումները չեն համապատասխանում մրցույթին ներկայացված տեխնիկական բնութագրերին՝ նման ստանդարտին համապատասխանող ապրանք կամ ընդհանրապես գոյություն չի ունեցել, կամ մի շարք չափանիշներով չի բավարարել ներկայացված պահանջներին:

## 10 «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**10.2** Կազմակերպության կողմից թվով 26 հասցեներում գտնվող շենք/շինություններն օգտագործվել են առանց համապատասխան պայմանագրերի: Խախտվել է՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» համապատասխան հոդվածների պահանջները, քանի որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման, հետևաբար օգտագործման իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից: Կազմակերպությունը, փաստացի օգտագործելով վերը նշված շենք/շինությունները, չի կնքել

անհատույց օգտագործման պայմանագրեր և դրանք չեն հանձնվել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը:

**10.3** Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Բագրատունյանց 2-րդ նրբանցքի 23 հասցեում գտնվող տարածքը ուղղակի վաճառքի ձևով 16,842.4 հազ. դրամ արժեքով (գնահատված արժեքի 50 %-ի չափով) օտարվել է: Խախտվել է ՀՀ կառավարության «Պետական գույքն օտարելու մասին» որոշման պահանջները, քանի որ 19.04.2016թ. կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը լուծվել է 2017 թվականի հոկտեմբերի 11-ին, տարածքը Կազմակերպության կողմից հանձնվել է գնորդին՝ առանց Կազմակերպության սարք/սարքավորումները շենքից ապամոնտաժելու:

**10.4** Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Հերցենի 25 հասցեում գտնվող տարածքը օգտագործվում է Կազմակերպության կողմից առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր ունենալու: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ այն ներկայացվել է օտարման՝ մրցույթի միջոցով: Նշված գույքը դեռևս չի օտարվել: Խախտվել է ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» համապատասխան հոդվածը, քանի որ ՀՀ կառավարության «Պետական գույքն օտարելու մասին» որոշմամբ չի նշվել տվյալ գույքի՝ երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ: Բացի այդ, վերոնշյալ որոշմամբ Հերցենի 25 հասցեում գտնվող տարածքը նշված է որպես վարչական տարածք, այնինչ տվյալ հասցեում գտնվող տարածքը, առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր ունենալու, փաստացի օգտագործվում է Կազմակերպության կողմից:

**10.5** Կազմակերպության կողմից հետագա օգտագործման համար ոչ նպատակահարմար շենք/շինությունների պահպանման համար 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել է շուրջ 3,447.9 հազ. դրամի ծախս:

## 11 «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**11.2** Ընկերությունն իր կանոնադրական խնդիրների իրագործման համար զբաղեցնում է 5294.0 քմ տարածք, որը կազմում է ընդհանուր մակերեսի 50 %-ը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական գործակալության, ինչպես նաև Նախարարության

«Հատուկ պոլիկլինիկա» ՓԲ ընկերության, «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ու «Լիցենզավորման գործակալության» կողմից 948.0 քմ մակերեսով տարածքն օգտագործվել է ապօրինի՝ առանց պայմանագիր կնքելու և վարձավճարներ վճարելու: Արդյունքում, 23,098.6 հազ. դրամով պակաս են հաշվարկվել Ինստիտուտի եկամուտները:

**11.3** Ֆինանսատնտեսական ցուցանիշների՝ եկամուտների և ծախսերի, ինչպես նաև շահութաբերության նորմի վերաբերյալ իրատեսական կանխատեսումներ չեն կատարվել: Այսպես, չեն սահմանվել ցուցանիշներ, որոնք կնպաստեին Ինստիտուտի գործունեության արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես յուրաքանչյուր տարվա համար շահութաբերության նորման ցածր է ծրագրավորվել՝ կազմելով 1%-ից փոքր մեծություն:

**11.4** Նախարարության և Ինստիտուտի միջև 10.03.2016թ. կնքած՝ «ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության, և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհի հատկացման պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի ստուգմամբ արձանագրվել է.

- Դրամաշնորհի իրականացման ժամանակ մշակվել են առանձին ծրագրեր, ուղեցույցեր ու չափորոշիչներ, որոնք հետագայում չեն ներդրվել և չեն կիրառվում, արդյունքում դրամաշնորհի հատկացման պայմանագրի շրջանակներում կատարված 48,523.5 հազ. դրամի ծախսը ըստ էության արդյունավետ չէ: Ծրագրի իրականացումը չի հանգեցրել դրամաշնորհի պայմանագրով նախատեսված արդյունքներին, ուստի դրամաշնորհային ծրագիրը որակվում է ոչ նպատակային,
- Նախարարությունը պատշաճ հսկողություն չի իրականացրել Ինստիտուտի կողմից պայմանագրային պահանջների կատարման նկատմամբ: Մասնավորապես, պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ծրագրային ցուցանիշների անբավարար իրականացման դեպքում Նախարարությունը պետք է գրավոր ծանուցեր Ինստիտուտին՝ թերությունները վերացնելու համար, իսկ դրանք չվերացնելու դեպքում՝ պայմանագիրը լուծեր:

**11.5** Ինստիտուտին՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով, Նախարարությունը հատկացրել է 27,979.1 հազ. դրամ, առանց համապատասխան պայմանագիր կնքելու, իսկ շին. աշխատանքների իրականացման արդյունքում տնտեսված 9,584.0 հազ. դրամը չի վերադարձվել պետական բյուջե:

**11.6** Ինստիտուտի ֆինանսատնտեսական գործունեության կառավարման գործընթացներն ու գործառույթները բարելավման կարիք ունեն: Այսպես.

- Ոչ արդյունավետ կառավարման արդյունքում չի ապահովվել Ինստիտուտի շահութաբեր գործունեությունը, ունեցել է շարունակական վնաս (կուտակված վնասը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 147,541.0 հազ. դրամ) և չի վճարել շահաբաժիններ,
- Տպագրության իրականացումը 2,618.0 հազ. դրամով պատվիրվել է այլ կազմակերպությունների այն դեպքում, երբ Ինստիտուտում առկա էր «տպարան» ստորաբաժանումը՝ թվով 5 աշխատակիցներով,
- Տպարանի ղեկավարի կողմից Ինստիտուտին վարձակալությամբ գույք է տրամադրվել, որի դիմաց վճարվել է 1,716.0 հազ. դրամ: Տվյալ գույքը նախկինում սեփականության իրավունքով պատկանել էր Ինստիտուտին և տնօրենի 06.04.2009թ. հրամանով 406.5 հազ. դրամով օտարվել էր Ինստիտուտի տպարանի ղեկավարին՝ գույքի ձեռք բերման արժեքը կազմել է հետագայում վարձակալության հանձնված գույքի 4 ամսվա վարձավճարը:
- Հեղինակային հսկողության իրականացումը՝ 130.0 հազ. դրամ գումարով ընդունվել է 30.04.2016թ., երբ վերանորոգման աշխատանքները դեռևս չէին սկսվել և, բնականաբար, հեղինակային հսկողություն չէր կարող իրականացված լինել: Միաժամանակ, վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս շինարարության թույլտվություն չի պահանջվում, հետևաբար, աշխատանքը կարելի էր կատարել առանց նախագծի, իսկ ծախսված 950.0 հազ դրամը՝ տնտեսել:
- 2015-2017 թվականներին առանձին ծրագրեր իրականացնելու նպատակով 49 դեպքով կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր (54,163.9 հազ. դրամ գումարով) այն անձանց հետ, ովքեր Ինստիտուտի աշխատակիցներ են հանդիսացել և ամբողջական դրույք են զբաղեցրել, փաստացի աշխատանքները կատարել են համատեղությամբ: Համաձայն ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 99-րդ հոդվածի՝ աշխատանքային պայմանագրում պետք է նշվեր, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ, ինչը բացակայում է բոլոր պայմանագրերում:

**11.7** «Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը Նախարարության և Ինստիտուտի միջև ստորագրվել է 04.12.2017թ., իսկ 08.12.2017թ. ֆինանսավորվել է 49,509.7 հազ. դրամով կամ 100.0%-ով, պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվել 2018 թվականի հունվարի 30-ը: Դրամաշնորհային ծրագիրը պայմանագրի գործողության ժամկետում չի

իրականացվել՝ 31.01.2018թ. դրությամբ մնացորդը կազմել է 20,809.7 հազ. դրամ կամ 42.0%: Պայմանագրի դրույթներով նախատեսված դրամաշնորհային ծրագրի մոնիթորինգ, կատարման ընթացքի ու որակի ստուգումներ չեն իրականացվել, պայմանագրի գործողության ժամկետը լրացել է, սակայն երկարացված չէ:

## 12 «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**12.2** 2015 թվականին ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդի կամ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով, առանց դեղորայք) ծառայության սակագինը առողջապահության նախարարությունը առանց ծառայության գնի հաշվարկի հիմնավորման, 2300 դրամից բարձրացրել է 4500 դրամի, իսկ 2016 թվականին նույն ծառայությունը, նույն կերպ, առանց ծառայության գնի հաշվարկի հիմնավորման, 4500 դրամից բարձրացրել է 12350 դրամի: Արդյունքում, նշված ծառայության համար 2015 թվականին, առանց հիմնավորման, ՀՀ պետական բյուջեից ավելին է վճարվել 26,026.5 հազ.դրամ, իսկ 2016 թվականին՝ 61,175.0 հազ. դրամ, մինչդեռ գնի բարձրացման պարագայում 2016 թվականին նշված ծառայության դեպքերի թիվը 2015 թվականի համեմատ պակասել է 4283-ով: Բացի այդ, 2016 թվականին ՄԻԱՎ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ վարակակրի հաշվով) ծառայության դիմաց վճարվել է 86,400.0 հազ. դրամ /2700 դեպք՝ մեկ դեպքը 32000 դրամ/, որի համար 2015 թվականին, չնայած ծառայության առկայության, դեպքեր չեն եղել:

**12.3** «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերման» չափորոշիչի և «ՄԻԱՎ հիվանդ մեծահասակների հակառետրովիրուսային բուժումն ու վարում» ազգային ուղեցույցի պահանջների խախտումներով 33,171.2 հազ. դրամի դեղորայք այլ անձանց միջոցով ուղարկվել է ՀՀ տարածքից դուրս գտնվող հիվանդներին:

**12.4** ՀՀ առողջապահության նախարարի կողմից տրամադրված անժամկետ ուղեգրերով ՀՀ պետական բյուջեի միջոցներից (Գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրված դեղորայք) օտարերկրյա քաղաքացիների բուժման նպատակով տրվել է 2,688.2 հազ. դրամ գումարի դեղորայք:

## 13 «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏՈԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**13.1** Պայմանագրային պարտավորությունները կատարվել են ՀՀ կառավարության թիվ 318-ն որոշմամբ հաստատված «Ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար սպասարկման ու ֆինանսավորման կարգի» պահանջների, ինչպես նաև կնքված պայմանագրի ու պայմանագրին կից հատուկ պայմանների որոշակի խախտումներով, որի արդյունքում 2015-2016 թվականներին ավել է ներկայացվել փոխհատուցման 590.7 հազ. դրամ:

**13.2** Վերարտադրողական առողջության բարելավման նպատակով, ՀՀ առողջապահության նախախարությունը 2016 թվականին իրականացրել է բնակչության և հատկապես սոցիալապես անապահով ու առանձին հատուկ խմբերի անձանց համար «Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների ապահովում» ծրագիրը: Մինչև այժմ ձեռք բերված հակաբեղմնավորիչ միջոցների փաստացի մնացորդների առկայությունը ՀՀ բուժհաստատություններում ենթադրել է տալիս, որ գնված միջոցները ավելի են քան դրանց անհրաժեշտությունը:

## 14 «ՇԵՆԳԱՎԻԹ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**14.1** Ընկերությունը 2015-2017 թվականներին մարզերում փաստացի բնակվող նորմալ կամ թեթևակի շեղումներով՝ Երևանում ժամանակավոր բնակության տեղեկանք չունեցող, կամ վճարովի հիմունքներով կանանց կոնսուլտացիայում հաշվառման չկանգնած (ծննդօգնության հավաստագիրը մարզերից ստացած), ծննդաբերների համար բժշկական օգնությունը պետք է կազմակերպեր վճարովի հիմունքներով, մինչդեռ թվով 112 ծննդաբերների դիմաց պետական պատվերի շրջանակներում ստացել է 12,252.8 հազ. դրամի չափով վճարում:

**14.2** Ընկերությունը 2015-2017 թվականներին ծննդաբերություն, վերակենդանացման բաժամունքում ծառայություն և ախտաբանություն իրականացնող աշխատողների վարձատրությանը պակաս է ուղղել 124,392.2 հազ. դրամ:

**14.3** Ընկերությունն 2015-2017 թվականներին առանց համապատասխան լիցենզիայի իրականացրել է 205,396.0 հազ. դրամի չափով նորածինների և մինչև

մեկ տարեկան երեխաների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի գործառույթ:

ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ 1528-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 03.07.2015թ թիվ 39-Ն հրամանի համաձայն, 2015-2016 թվականներին անպտուղ զույգերը պետք է ընտրվեն ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներից, սակայն բժշկական կենտրոն ուղեգրված և անվճար բժշկական օգնություն ստացած քաղաքացին, լինելով Երևան քաղաքի բնակիչ, արհեստական բեղմնավորման ուղեգիր ստանալուց 41 օր առաջ գրանցվել է Տավուշի մարզի Չինար գյուղում և Նախարարության կողմից 4 անգամ ուղեգրվել է ընկերություն հետազոտման, որի դիմաց պետական բյուջեի միջոցներից վճարվել է՝ 1,962.7 հազ. դրամ, որից 1,400.0 հազ. դրամը արհեստական բեղմնավորման համար:

## 15 «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**15.1** ՊԱԳ-ը, ըստ ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների, «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների» մասով ավելի է փոխհատուցել 47,374.5 հազ. դրամ, որից՝

- Նախկինում կատարված և վճարված գումար՝ 24,538.4 հազ. դրամ
- Չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումար՝ 22,386.1 հազ. դրամ:

**15.2** Ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված 2016 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսի (16.12.2016թ. մինչև 31.12.2016թ.) հաշվետվությունում «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրով հաշվետվությունում ներկայացված մահճակալ/օրերի թիվը և դրանց դիմաց հաշվարկված գումարը ներկայացված է ամբողջ ամսվա համար, սակայն պետք է ներկայացվեր կես ամսվա համար նախատեսված գումարի չափով: Տարբերությունը կազմում է 4,230.7 հազ. դրամ, այդ թվում.

- Հոգեբուժական հարկադիր բուժում՝ 2,454.0 հազ. դրամ :
- Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք՝ 1,780.7 հազ. դրամ:

**15.3** Համաձայն կնքված պայմանագրի 2.1.3 կետի, հերթագրման ոչ ենթակա դեպքերում բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում պատվիրատուին չներկայացված հաշվետվությունները փոխհատուցման պետք է ներկայացվեն պայմանագրով հաստատված գումարի շրջանակներում:

2017 թվականի ընթացքում Ընկերությունում հերթագրման համար նախատեսված մեխանիզմ չի եղել, արդյունքում ՊԱԳ է ներկայացվել պայմանագրային ծավալների ամսական համամասնություններից ավելի աշխատանք, որի դիմաց փաստացի վճարվել է 18,864.1 հազ. դրամ:

**15.4** 2017 թվականի մայիս ամսին ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվությունում որոշ հիվանդների անուններն ամսական ցուցակներում կրկնվում են, արդյունքում չորս հիվանդի բուժման համար 2017 թվականի մայիս ամսին ստացվել է 397.3 հազ. դրամ ավելի գումար:

**15.5** 2015-2017 թվականների ընթացքում ընկերության կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում արտացոլված մահճակալ/օրերի թիվն ըստ տարիների համեմատվել է ընկերության ճաշացուցակներում հաշվառված հիվանդների թվի հետ: Պարզվել է, որ 2015 թվականի ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկված հիվանդների թիվը 2217-ով ավելի է, քան հաշվետվություններում ներկայացված մահճակալ օրերի թիվն է, 2016 թվականի ընթացքում՝ ավելի է 5528-ով, և 2017 թվականի ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկված հիվանդների թիվը 3552-ով պակաս է, քան հաշվետվություններում արտացոլված մահճակալ/օրերի թիվն է:

**15.6** 2015-2017 թվականների ընթացքում ընկերությունում «Զորակոչ և նախազորակոչ տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ» ծրագրով փորձաքննություն են անցել 4,078 զորակոչ և նախազորակոչ տարիքի անձինք, որոնցից թվով 51 զորակոչիկ, ըստ հիվանդության պատմագրերի, իրենց դիմումի համաձայն կամ ինքնակամ հեռացել են ընկերությունից, առանց փորձաքննություն անցնելու, սակայն նրանց համար ընկերությունը ստացել է 1,020.0 հազ. դրամի չափով ավելի փոխհատուցում, յուրաքանչյուր դեպքի համար՝ 20,000 դրամ:

**15.7** 2015թ., 2016թ. և 2017 թվականի առաջին կիսամյակի սննդամթերքի ձեռք բերման միավորի գները համեմատվել են 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ձեռք բերված միավորի գների հետ, արդյունքում ձեռք բերման գների տարբերությունը կազմել է 84,790.7 հազ. դրամ, այդ թվում 2015 թվականին՝ 33,520.6 հազ. դրամ, 2016 թվականին՝ 31,883.7 հազ. դրամ և 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ 19,386.4 հազ.դրամ:

**15.8** Ընկերության սննդամթերքի պահեստում առկա բնական մեղրի և սերուցքային կարագի տեխնիկական բնութագրերին համապատասխանության արժանահավատության նպատակով կատարված սննդամթերքների նմուշառմամբ փորձնական նմուշները ուղղարկել են փորձաքննության, որի արդյունքներով պարզվել է.

- «Որպես կարագ ներկայացված նմուշը, համաձայն ԳՕՍՏ 33490-2015-ի իրենից ներկայացնում է կարագի և բուսական յուղերի խառնուրդ՝ սպրեդ»,
- «Ներկայացված մեղրը չի համապատասխանում բնական մեղրի համար նախատեսված դիաստազայի թվի արժեքին, սախարոզի քանակին և անվտանգության ցուցանիշ հանդիսացող օքսիմեթիլֆուրֆուրոլի ցուցանիշին»:

**15.9** Ընկերության կողմից ձեռք բերված խմորեղենի ծախսի ստուգմամբ պարզվել է, որ Ընկերությունը խախտել է ՀՀ կառավարության 26.05.2011թ. «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների վերաբերյալ» թիվ 711 որոշման պահանջները և ընկերությունում պահվող մեկ մարդու համար շաքար, մուրաբա, ջեմ, մեղր, ալրային և շաքարային հրուշակեղեն սննդամթերքների գծով օրական նախատեսված 60 գրամ միջին չափաբաժնի փոխարեն ճաշացուցակ-պահանջագրերով միայն խմորեղեն սննդամթերքի գծով դուրս է գրվել առնվազն 150 գրամ: Արդյունքում, 2015-2016 թվականների ընթացքում ճաշացուցակ-պահանջագրերով դուրս է գրվել նախատեսվածից ավելի 19,411.1 կգ (37,976.4 հազ. դրամ) խմորեղեն, այդ թվում 2015 թվականի ընթացքում՝ 9728.4 կգ և 2016 թվականին՝ 9,682.7 կգ :

## 16 «ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**16.1** «Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրն արդյունավետ չէ՝ ստացիոնար բաժանմունքի 48 մահճակալից 2015 թվականին օգտագործվել է 20-ը (41.3 %), 2016 թվականին՝ 19 (38.8 %), 2017 թվականին՝ 17 (35.2 %): Միաժամանակ, աճել են պահպանման ծախսերը, որոնք մեկ հիվանդի հաշվով կազմել են ծրագրային ծախսի 87.7, 86.4 և 89.9 %-ը: Ստացիոնարում բուժվող մեկ հիվանդի հաշվով անձնակազմից բաժին է ընկնում 4 մարդ:

**16.2** Մատուցված ծառայությունների դիմաց ֆինանսավորումը գերազանցել է փաստացի կատարված ծախսերը 3838 մարդ/օրով կամ 7,484.1 հազ. դրամով:

**16.3** ՊԱԳ-ը ֆինանսավորել է հիվանդանոցային պայմաններում 661 զորակոչիկների փորձաքննության ծախսերը (3673 մարդ/օր՝ 7162.4 հազ. դրամ), մինչդեռ ստացիոնար պայմաններում 2015-2017 թթ. բուժում է ստացել ընդամենը 24 զորակոչիկ՝ 1073 մարդ/օրի չափով:

**16.4** ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում չկան հետազոտվող անձանց անհատական տվյալները, որոնք բացակայում են նաև Դիսպանսերում: Արդյունքում, հնարավոր չէ գնահատել

հետազոտությունների մասով պետական բյուջեից հատկացված գումարների ծախսման արդյունավետությունն ու օրինականությունը:

**16.5** Սոնոգրաֆիկ և ռենտգենոգրաֆիկ հետազոտության մասով ուղեգրերի մի մասը բացակայում է, իսկ դրանց գերակշռող մասը չի համապատասխանում սահմանված ձևաչափին:

**16.6** Հիվանդների սնունդը չի նպաստում տուբերկուլոզով հիվանդների բուժմանը, բաղկացած է կենդանական ճարպերից և ածխաջրերից, իսկ սպիտակուցներ, կաթնամթերք, բանջարեղեն, միրգ և հյութեր ընդհանրապես չի գնվում: Սննդի մեկ օրվա միջին էներգետիկ արժեքը 2015 թվականին կազմել է 4074 կկալ, 2016 թվականին՝ 4127 կկալ, 2017 թվականին՝ 4572 կկալ՝ տվյալ հիվանդների համար նախատեսված 2500-3500 կկալ փոխարեն: Գնված սննդամթերքի զգալի մասը չի համապատասխանում տեխնիկական բնութագրերին:

**16.7** Բժշկական սարքավորումների սպասարկման ծառայությունների գնման գործընթացում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ հրավերը կազմվել է բոլոր 24 չափաբաժինների համար: Պայմանագրով սպասարկումը պետք է իրականացվեր շաբաթը երկու անգամ, որը սարքավորումների տեխանձնագրերով նախատեսված չէ:

**16.8** Պայմանագրով բոլոր սարքերի գծով սպասարկումը պետք է իրականացվեր շաբաթը երկու անգամ, որը դրանց տեխանձնագրերով նախատեսված չէ: 2015 թվականին կատարողական ակտերում նշվել են 2,283.4 հազ. դրամի չկատարված աշխատանքներ, դրանց արժեքները տնտեսապես հիմնավորված չեն համապատասխանում սարքավորումների սպասարկման աշխատանքների բնույթին և ծավալին:

**16.9** Այսպիսով՝ Դիսպանսերին հատկացված բյուջետային միջոցների և հզորությունների օգտագործման արդյունավետությունը ցածր է, հետևաբար, նույն կարգավիճակով և նույն ծառայությունների հետագա մատուցումն ընկերության կողմից նպատակահարմար չէ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ կառավարությանը՝

Հաշվի առնելով սոցփաթեթի առողջապահական բաղադրիչի սոցիալական ուղղվածությունը և բյուջեից կատարվող ծախսերի նպատակայնության և արդյունավետության սկզբունքը, առաջարկվում է քննարկել.

**Տարբերակ 1:** Ապահովագրական ընկերությունների միջոցով սոցիալական փաթեթի շահառուների բժշկական ապահովագրման դեպքում՝

Բուժհաստատություններին հատուցված գումարների հարաբերակցությունը 90%-ից ցածր լինելու դեպքում սահմանել շահույթի և բյուջե հետ վերադարձման գումարների հիմնավորված հարաբերակցություն (օրինակ՝ 85% հետ վերադարձ բյուջե, իսկ 15% ապահովագրական ընկերություններին՝ որպես շահույթ): Չափաքանակների հաշվարկման ընթացքում հաշվի առնել, որ պետության կողմից առողջապահական բյուջետային ծրագրերի (67,0 մլրդ դրամ) կառավարման համար ծախսերը կազմում են շուրջ 0.5%:

**Ակնկալվող արդյունքը.**

- Բացառել հատուցման համար նախատեսված գումարները նվազեցնելու միջոցով ապահովագրական ընկերությունների կողմից դեպքերի մերժումների կամ ոչ ամբողջական փոխհատուցման շահագրգռվածությունը:
- Տարածաշրջաններում գործող միջին և ցածր շրջանառություն ունեցող բուժհաստատությունների համար մրցակցությունից դուրս չմնալու համար պայմանների ապահովում:

**Տարբերակ 2:** Պետական առողջապահական գործակալության կողմից ծրագրի իրականացման շարունակություն՝

Փոփոխել պետական առողջապահական գործակալության ենթակայությունը՝ դարձնելով կառավարությանն առընթեր մարմին: Ի դեմս գործակալության ստեղծել պարտադիր բժշկական ապահովագրության հիմնադրամ՝ պետություն-մասնավոր հատվածի համագործակցության սկզբունքով, հսկիչ փաթեթի կառավարումը վերապահելով գործակալությանը:

**Ակնկալվող արդյունքը.**

- Առողջապահության ֆինանսավորման և քաղաքականության հստակեցում՝ գործառույթների տարանջատման միջոցով:

Պարտադիր բժշկական ապահովագրության ինստիտուտի ներդրում՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքի հիման վրա:

**ՀՀ առողջապահության նախարարությանը՝**

**1.** Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների արդյունավետության բարելավման նպատակով ամրապնդել վարչարարությունը, արդիականացնել հսկման և վերահսկման մեխանիզմները, և դրանով պայմանավորված՝ բարձրացնել պետական բյուջեից ծախսվող ֆինանսական միջոցների հասցեականությունը և նպատակայնությունը:

**2.** Նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում մանրամասն ուսումնասիրել սոցիալական փաթեթի շահառուներին 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկանքով ներկայացված վճարման ենթակա 836.2 միլիոն դրամի արժանահավատությունը (որը ՎՊ կողմից խիստ կասկածելի է) և արդյունքների մասին համապատասխան հիմնավորումներով, օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ վերահսկիչ պալատին:

**3.** Պատշաճ ուսումնասիրություն իրականացնել բուժ. հաստատությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված ամսական հաշվետվությունների նկատմամբ, վերլուծության ենթարկել ներկայացվող հաշվետվությունները, մշակել միջոցառումներ կառավարման մեխանիզմների կատարելագործման, բուջետային միջոցների արդյունավետ կառավարման ուղղությամբ:

**4.** Ուժեղացնել ներքին հսկողական համակարգը, բարելավել ռիսկերի կառավարման գործընթացը և ապահովել վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացումը, ներքին աուդիտի ռազմավարական ու տարեկան ծրագրերում ներառել կազմակերպությունների ընթացիկ գործունեությանը և տարեկան հաշվետվությունների արժանահավատությանը վերաբերող թեմաներ:

**5.** Օրենսդրական խախտումները բացառելու նպատակով քննարկել չիրականացված գործառույթների համար պատասխանատու համապատասխան

պաշտոնատար անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հարցը:

**6.** Հաշվարկել հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայությունների գնագոյացումը և վերանայել գործող գները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունների կողմից ներկայացված գների հաշվարկի մեջ կան խիստ էական տարբերություններ թե դիալիզատորների գների և թե մնացած բաղադրիչների մասով:

**7.** Սահմանել ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված մանկաբարձական բժշկական օգնության ծառայության միջինացված գների գնագոյացման հաշվարկը:

**8.** Ձեռնարկել քայլեր կեսարյան հատումների քանակները ընդհանուր ծնունդների թվի մեջ նվազեցնելու նպատակով:

**9.** Ապահովել դեղերի գնային քաղաքականության բնագավառում առկա խնդիրների վերացմանն ուղղված գործուն մեխանիզմների կիրառումն՝ ուշադրություն դարձնելով պետության կարիքների համար գնվող դեղերի գնագոյացման հարցերի կարգավորմանը:

**10.** Բարձրացնել գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների պատասխանատվությունը կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի պահանջարկի և հիվանդների թվի հաշվարկման նկատմամբ, վերանայել ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի դրույթները՝ կապված դեղորայքի քանակների որոշման մոտեցումների արդիականցման, առկա թերությունների վերացման հետ: Մշակել և ընդունել դեղորայքի պահանջարկի ձևավորման ընթացքում կիրառվող հիվանդությունների բուժման սխեմաները:

**11.** Խիստ միջոցներ ձեռնարկել կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի շահառուների թվաքանակի ճշգրտման, հաշվառման բարելավման և այդ դեղերն ստացող բժշկական կազմակերպությունների կողմից նրանց վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների հավաստիության բարձրացման ուղղությամբ: Վերլուծել գնվող դեղորայքի գծով տարեվերջին մնացորդների առաջացման պատճառները, մշակել գործնական միջոցառումներ դրանց վերացման և այդ նպատակով կատարվող բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

**12.** Հետևողականորեն բարձրացնել բյուջետային ծախսերի պլանավորման մակարդակն՝ ապահովելով ՀՀ կառավարության 04.03.2004 թ. թիվ 318-Ն որոշման պահանջները ֆինանսավորվող ծրագրերի ծախսերի հաշվարկման, այդ նպատակով օգտագործվող ելակետային տվյալների ճիշտ ընտրության վերաբերյալ, ուշադրություն դարձնել տարեսկզբին մնացորդների առաջացմանը նպաստող գործոնների վերացմանը:

**13.** Խստորեն պահպանել ՀՀ կառավարության մարտի 4-ի 2004 թ. թիվ 318-Ն որոշման V գլխի 35-րդ կետի պահանջը՝ բացառելով պայմանագրային գումարների ավելացման դեպքերն առանց ՀՀ վարչապետի համաձայնության: Բուժկազմակերպությունների հետ պայմանագրային գումարների որոշման ընթացքում ապահովել դրանց իրական պահանջարկը՝ հաշվի առնելով նախորդ տարվա փաստացի ֆինանսավորման մակարդակը:

**14.** Ապահովել կորսետների և օրթեզների պատրաստման ծառայությունների մատուցման ծրագրի իրականացումը մրցակցային պայմաններում՝ մրցույթի միջոցով կազմակերպությունների ընտրության միջոցով: Գնագոյացման հաշվարկը կատարելիս պարտադիր կերպով հաշվի առնել մրցույթին հայտ ներկայացրած գնառաջարկները և գնի հաշվարկները՝ որպես անհրաժեշտ պայման ընդունելով ներկայացվող տեխնիկական բնութագրերի առկայությունը: Ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման գործում կիրառել երեխաների համար պատրաստվող կորսետների և օրթեզների գնագոյացման գործուն մեխանիզմներ:

**15.** Խստացնել պահանջը ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի կողմից հատկացված դրամաշնորհային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման, այդ գումարների հաշվին կատարվող գնումների օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Ապահովել գնումների գործընթացի արդյունավետ կազմակերպումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կազմակերպվող մրցույթներում տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող հայտերի, գնառաջարկների և գնվող սարքավորումների տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև մատակարարվող ապրանքների դրանց համապատասխանության համակողմանի ուսումնասիրման, այդ գործում գնահատող հանձնաժողովների պատասխանատվության բարձրացման և գործունեության բարելավման հարցերին:

**16.** Ձեռնարկել միջոցներ պետական ունեցվածքի՝ ըստ գերատեսչական պատկանելության հաշվառումն իրականացնելու, շենքերի և շինությունների

շահագործումն արդյունավետ կազմակերպելու, բյուջետային պլանավորումը և հաշվապահական հաշվառումը գործող օրենքների պահանջների համաձայն իրականացնելու, ինչպես նաև բյուջետային միջոցներն արդյունավետ և նպատակային օգտագործելու համար:

**17.** Սահմանել եկամուտների և ծախսերի նախահաշվային այնպիսի ցուցանիշներ, որոնք կնպաստեն «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գործունեության շահութաբերության մակարդակի բարձրացմանը,

**18.** Պատշաճ հսկողություն իրականացնել «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ՝ թերությունները բացառելու նպատակով:

**19.** «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների գների փոփոխումը իրականացնել համապատաս-խան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա, ինչպես նաև հսկողություն սահմանել դիսպանսերային ծառայության դեպքերի քանակի նկատմամբ:

**20.** Օրենսդրորեն սահմանել հստակ ընթացակարգ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների բուժումը և դեղորայքի տրամադրումը իրականացնելու համար:

**21.** Ուղեգրերը տրամադրել միայն «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից օրենդրությամբ սահմանված ծառայությունների մատուցման համար, ինչպես նաև տրամադրված ուղեգրերի համար նախատեսել հստակ ժամկետներ:

**22.** Բնակչության և հատկապես սոցիալապես անապահով ու առանձին հատուկ խմբերի անձանց համար «Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների ապահովում» ծրագիրը իրականացնել հաշվի առնելով դրա անհրաժեշտությունը:

**23.** Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայության ծրագրի շրջանակներում անպտուղ զույգերն ընտրել ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներից:

**24.** «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները փոխհատուցման ընդունել միայն կնքված պայմանագրային գումարների շրջանակներում և կատարված աշխատանքների դիմաց:

**25.** «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում «Հոգեբուժական հարկադիր բուժում» և «Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք» ծառայությունների մասով փոխհատուցումը կատարել ելնելով փաստացի բուժում իրականացրած օրերի թվից:

**26.** «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում ներառված գումարների փոխհատուցումը կատարել պայմանագրով նախատեսված՝ ընկերությունում առկա հերթագրման մեխանիզմի առկայության դեպքում:

**27.** Հետևողական լինել «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններին կից հիվանդների անվանական ցուցակներում ներկայացված տեղեկատվության արժանահավատության խնդիրը պարզելու ուղղությամբ:

**28.** Հետևողական լինել «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունում փորձաքննություն անցնող զինակոչ և նախազորակոչ տարիքի անձանց ճաշացուցակ-պահանջագրերում ընդգրկելու հարցում՝ հաշվի առնելով նաև նրանց ճաշարանից օգտվելու հաճախականությունը:

**29.** «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից զինակոչ և նախազորակոչ տարիքի անձանց փորձաքննության համար նախատեսված գումարը հաշվետվություններում ներառել միայն փորձաքննությամբ ախտորոշումը ճշտելուց հետո:

**30.** «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար գնումներն իրականացնել օբյեկտիվ, հաշվի առնելով շուկայական գները, ինչպես նաև պահպանել ՀՀ կառավարության 26.05.2011թ. «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների վերաբերյալ» թիվ 711 որոշման պահանջները:

### «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝

Ձեռնարկել միջոցներ՝ Ինստիտուտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

### «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝

Պայմանագրային պարտավորությունները կատարել ՀՀ կառավարության թիվ 318-ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի պահանջներին համապատասխան:

### «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը՝

**1.** Մարզերում փաստացի բնակվող նորմալ կամ թեթևակի շեղումներով՝ Երևանում ժամանակավոր բնակության տեղեկանք չունեցող, կամ վճարովի հիմունքներով կանանց կոնսուլտացիայում հաշվառման չկանգնած (ծննդօգնության հավաստագիրը մարզերից ստացած), որոշ ծննդաբերների համար բժշկական օգնությունը կազմակերպել վճարովի հիմունքներով:

**2.** Ծննդաբերություն, վերակենդանացման բաժամունքում ծառայություն և ախտաբանություն իրականացնող աշխատողների վարձատրությունն իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի հրամաններին համապատասխան:

**3.** Նորածինների և մինչև մեկ տարեկան երեխաների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի գործառույթն իրականացրել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

**«Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ում իրականացված ստուգման արդյունքների վերաբերյալ**

**1.** Քննարկել «Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ում իրականացված ստուգման արդյունքները, միջոցներ ձեռնարկել բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ:

**2.** Բարձրացնել ՊԱԳ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը՝ որպես գործուն միջոց հնարավորինս արագորեն ներդնելով հետազոտությունների մասով անհատական հաշվետվությունների ներկայացման մեխանիզմները:

**3.** Բացառել հետազոտվող զինակոչիկների սպասարկման դիմաց «Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով և փաստացի կատարված աշխատանքի ծավալը գերազանցող կատարողականների ֆինանսավորումը: Մատուցված ծառայությունների դիմաց ֆինանսավորումը գերազանցել է փաստացի կատարված ծախսերը 3838 մարդ/օրով կամ 7,484.1 հազ. դրամով:

**4.** Մշակել և ընդունել տուբերկուլոզով հիվանդների բուժման ընթացքում կիրառվող սննդակարգը, հետազոտվող անձանց ներքին և այլ բուժկազմակերպությունների կողմից ուղեգրման կարգը, ինչպես նաև ուղեգրերի ձևաչափերը:

**5.** Ելնելով հատկացված բյուջետային միջոցների և հզորությունների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակից՝ քննարկել Դիսպանսերի նույն կարգավիճակով և նույն ծառայությունների հետագա մատուցման նպատակահարմարության հարցը:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ԿՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի կատարման 2015թ. ցուցանիշները** /հազ. դրամ/ **Հավելված 1**

| Բժշկական կազմակերպության անվանումը | Ցուցանիշները | Հաստատված բյուջե | Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բուժիմնարկների | | | | | | | | | | | | | | Ճշգրտված բյուջե | Տարբերությունը՝ ճշգրտված բյուջեի և կատարողականի միջև |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 16.12.14թ - 30.12.14թ | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | 01-12.15 թ - 15.12.15թ. | Ընդամենը կատարված տարվա ընթացքում | | |
| Եռամսյակային համամասնությունները | | | | | | 17% | | | 24% | | | 27% | | | 32% | | | |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿ. ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | քանակական | | 27 | 21 | 15 | 0 | 5 | 16 | 15 | 51 | 20 | 110 | 30 | 30 | 66 | 406 | | |
| | կատարողական | 32,000.0 | 4,725 | 3,675 | 2,625 | 0 | 875 | 2,800 | 2,625 | 8,925 | 3,500 | 19,250 | 5,250 | 5,250 | 11,550 | 71,050.0 | 72,054 | (1,004.2) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 3,555 | 1,776 | 2,560 | 12,560 | 2,560 | 2,608 | 6,380 | 0 | 6,500 | 14,447 | 18,105 | 71,050.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 34% | | | 15% | | | 96% | | | 31% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 55% | | | 21% | | | 54% | | | |
| ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ ԲՄ ԲԲԸ | քանակական | | 47 | 265 | 621 | 517 | 447 | 429 | 496 | 639 | 349 | 778 | 438 | 360 | 238 | 5,624 | | |
| | կատարողական | 25,000.0 | 273 | 1,557 | 3,152 | 2,318 | 2,084 | 2,083 | 2,083 | 3,957 | 2,333 | 4,706 | 2,585 | 2,581 | 2,264 | 31,973.3 | 32,523 | (550.0) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 2,777 | 1,388 | 3,500 | 2,412 | 2,084 | 2,265 | 2,203 | 2,360 | 2,480 | 5,045 | 5,460 | 31,973.3 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 29% | | | 22% | | | 39% | | | 23% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 32% | | | 24% | | | 40% | | | |
| ԿՀՄԻ ԲԺՇԿԱ-ԱԽՏՈՐՈՇԻՉ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ ՄՊԸ | քանակական | | 0 | 0 | 10 | 23 | 19 | 6 | 4 | 7 | 8 | 9 | 44 | 15 | 203 | 348 | | |
| | կատարողական | 5,000.0 | 0 | 0 | 825 | 1,650 | 1,125 | 440 | 960 | 440 | 440 | 575 | 1,945 | 1,125 | 9,683 | 19,207.6 | 16,653 | 2,555.0 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 555 | 278 | 0 | 0 | 767 | 292 | 408 | 412 | 613 | 575 | 12,753 | 16,652.6 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 50% | | | 36% | | | 21% | | | 77% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 15% | | | 22% | | | 84% | | | |
| ԱՐԻՆՏԵՐԼԵՎ ՄՊԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԲԿ | քանակական | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 2,788 | 2,790 | | |
| | կատարողական | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 50 | 11,898 | 11,947.8 | 12,000 | (52.2) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 11,948 | 11,947.8 | | |
| | կատարող. տոկոս | | | | | | | | | | | | | | 100% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | | | | | | | | | | 100% | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ՍՊԸ | քանակական | | 0 | 8 | 16 | 7 | 13 | 8 | 13 | 8 | 7 | 51 | 54 | 30 | 27 | 242 | | |
| | կատարողական | 1,000.0 | 0 | 80 | 130 | 85 | 85 | 80 | 85 | 80 | 85 | 1,145 | 3,400 | 2,700 | 2,695 | 10,650.0 | 10,843 | (192.9) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 111 | 55 | 80 | 80 | 80 | 91 | 91 | 89 | 33 | 1,145 | 8,795 | 10,650.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 30% | | | 25% | | | 131% | | | 81% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 24% | | | 27% | | | 92% | | | |
| ԼՈՌԻՄԵԴ ՍՊԸ | քանակական | | 0 | 0 | 0 | 24 | 108 | 93 | 100 | 123 | 78 | 83 | 245 | 346 | 348 | 1,548 | | |
| | կատարողական | 3,500.0 | 0 | 0 | 0 | 81 | 440 | 64 | 281 | 389 | 267 | 245 | 851 | 1,214 | 1,171 | 5,000.0 | 5,000 | 0.0 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 80 | 440 | 65 | 281 | 389 | 267 | 245 | 3,235 | 5,000.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 2% | | | 22% | | | 26% | | | 65% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 0% | | | 15% | | | 21% | | | 75% | | | |
| ԻՌ ՎԻՆԳ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) | քանակական | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 10 | 8 | 13 | 9 | 9 | 18 | 26 | 42 | 135 | | |
| | կատարողական | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 240 | 180 | 315 | 205 | 215 | 410 | 610 | 825 | 3,000.0 | 3,000 | 0.0 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 240 | 180 | 315 | 205 | 215 | 1,845 | 3,000.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | | | | 14% | | | 25% | | | 62% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 0% | | | 0% | | | 25% | | | 76% | | | |
| ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՊՓԲԸ | քանակական | | 0 | 0 | 0 | 28 | 27 | 29 | 14 | 1 | 13 | 18 | 33 | 20 | 19 | 202 | | |
| | կատարողական | 600.0 | 0 | 0 | 0 | 74 | 71 | 80 | 38 | 4 | 33 | 46 | 84 | 50 | 50 | 527.5 | 600 | (72.5) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 67 | 33 | 0 | 0 | 45 | 80 | 38 | 0 | 36 | 46 | 183 | 527.5 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 12% | | | 31% | | | 14% | | | 31% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 7% | | | 20% | | | 44% | | | |
| ԻԶՄԻՐԼԻՑԱՆ ԲԿ ՓԲԸ | քանակական | | 0 | 0 | 0 | 4 | 8 | 7 | 10 | 4 | 2 | 1 | 0 | 3 | 1 | 40 | | |
| | կատարողական | 2,000.0 | 0 | 0 | 0 | 18 | 34 | 31 | 44 | 18 | 8 | 4 | 0 | 14 | 5 | 174.0 | 2,000 | (1,826.0) |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 222 | 111 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 333.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 1% | | | 5% | | | 1% | | | 10% | | | |
| | ֆինասավ. տոկոս | | | | | 17% | | | 0% | | | 0% | | | 0% | | | |

**Ծանոթություն.** Տոկոսները հաշվարկվել են հաշվի առնելով տվյալ եռամսյակում կատարված վերաբաշխումները

| «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի կատարման 2016թ. ցուցանիշները | | | | | | | | | | | | | | | | | | /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բժշկական կազմակերպության անվանումը | Ցուցանիշները | Հաստատված բյուջե | Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքները ըստ բուժհիմնարկների | | | | | | | | | | | | | Ընդամենը 2016թ. Ընթացքում | Ճշգրտված բյուջե | Տարբերությունը ճշգրտված բյուջեի և կատարողականի միջև |
| | | | 16.12.15թ. - 30.12.15թ. | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | 01-12.16թ - 15.12.16թ. | | | |
| Եռամսյակային համամասնությունները | | | | | | 17% | | | 24% | | | 25% | | | 34% | | | |
| ԱՐՄԵՆԻԱ ԲԿ ՓԲԸ | քանակական | | 82 | 55 | 149 | 103 | 308 | 240 | 245 | 217 | 87 | 103 | 172 | 139 | 58 | 1,958 | | |
| | կատարողական | 12,550 | 3,546 | 1,406 | 5,005 | 3,436 | 13,512 | 7,619 | 7,490 | 6,994 | 2,213 | 3,753 | 5,616 | 2,864 | 1,522 | 64,974.2 | 30,784 | 34,190.7 |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 1388.0 | 695.0 | 1004.0 | 1004.0 | 6843.0 | 2235.0 | 2235.0 | 2256.3 | 2249.2 | 3035.0 | 7839.0 | 30,783.5 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 107% | | | 106% | | | 29% | | | 32% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 33% | | | 25% | | | 43% | | | |
| ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՑԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՑԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ | քանակական | | 0 | 95 | 508 | 440 | 245 | 386 | 359 | 224 | 202 | 247 | 253 | 345 | 535 | 3,839 | | |
| | կատարողական | 25,000 | 0 | 1,254 | 4,017 | 1,949 | 4,803 | 2,642 | 2,670 | 2,672 | 2,672 | 2,670 | 2,655 | 3,759 | 3,099 | 34,859.5 | 36,781 | (1,921.8) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 2766.0 | 1384.0 | 2000.0 | 2000.0 | 4842.0 | 2656.0 | 2656.0 | 2667.4 | 2667.9 | 3624.0 | 7596.2 | 34,859.5 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 29% | | | 32% | | | 18% | | | 26% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 28% | | | 25% | | | 38% | | | |
| ՈՒԼՏՐԱՀՄԻՋԻՆԳ ԳԿ ՍՊԸ | քանակական | | 31 | 12 | 0 | 22 | 64 | 37 | 46 | 27 | 21 | 25 | 27 | 190 | 30 | 532 | | |
| | կատարողական | 15,000 | 2,128 | 1,005 | 0 | 1,240 | 3,875 | 1,841 | 1,832 | 1,800 | 1,820 | 1,820 | 1,807 | 9,959 | 1,292 | 30,418.8 | 30,419 | 0.0 |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 1660.0 | 830.0 | 1200.0 | 1200.0 | 4041.0 | 1826.0 | 1826.0 | 1829.4 | 1828.2 | 2502.0 | 11676.2 | 30,418.8 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 29% | | | 34% | | | 15% | | | 43% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 29% | | | 25% | | | 53% | | | |
| ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ՍՊԸ | քանակական | | 31 | 0 | 0 | 0 | 21 | 52 | 45 | 62 | 38 | 38 | 184 | 318 | 192 | 981 | | |
| | կատարողական | 261 | 2,175 | 0 | 0 | 0 | 858 | 674 | 674 | 676 | 672 | 674 | 3,112 | 5,146 | 4,558 | 19,216.0 | 20,328 | (1,111.7) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 28.0 | 15.0 | 21.0 | 20.0 | 2977.0 | 673.5 | 673.5 | 674.0 | 673.8 | 1132.2 | 12328.0 | 19,216.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 835% | | | 27% | | | 7% | | | 63% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 37% | | | 25% | | | 70% | | | |
| ԷՐԵԲՈՒՆԻ ԲԿ ՓԲԸ | քանակական | | 23 | 40 | 60 | 86 | 90 | 53 | 64 | 37 | 7 | 6 | 8 | 72 | 56 | 602 | | |
| | կատարողական | 5,265 | 965 | 900 | 1,370 | 1,910 | 1,940 | 1,215 | 1,390 | 795 | 155 | 120 | 150 | 1,315 | 1,035 | 13,260.0 | 14,378 | (1,118.3) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 582.0 | 291.0 | 422.0 | 421.0 | 1842.0 | 728.0 | 727.0 | 736.0 | 859.0 | 859.0 | 5793.0 | 13,260.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 98% | | | 52% | | | 6% | | | 17% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 31% | | | 25% | | | 52% | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԳՑՈՒՄՐՈՒ ԲԿ | քանակական | | 36 | 0 | 0 | 0 | 308 | 33 | 60 | 140 | 100 | 89 | 58 | 198 | 33 | 1,055 | | |
| | կատարողական | 5,025 | 1,500 | 0 | 0 | 0 | 1,826 | 462 | 620 | 2,038 | 854 | 861 | 688 | 1,954 | 364 | 11,164.5 | 13,473 | (2,308.4) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 556.1 | 278.0 | 401.9 | 820.1 | 1826.0 | 461.5 | 730.0 | 1371.0 | 910.0 | 1492.9 | 2317.0 | 11,164.5 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 30% | | | 28% | | | 20% | | | 22% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 30% | | | 25% | | | 35% | | | |
| ԱՐԻՆՏԵՐԼԵՎ ՍՊԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԲԿ | քանակական | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 127 | 0 | 129 | | |
| | կատարողական | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 95 | 4,752 | -93 | 4,753.0 | 4,000 | 753.0 |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 4000.0 | 4,000.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | | | | | | | 0% | | | 119% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | | | | | | | | | | 100% | | | |
| ԻՌ ՎԻՆԳ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) | քանակական | | 8 | 24 | 7 | 0 | 1 | 10 | 1 | 0 | 0 | 0 | 2 | 29 | 5 | 87 | | |
| | կատարողական | 0 | 158 | 530 | 175 | 0 | 25 | 220 | 25 | 0 | 0 | 0 | 35 | 530 | 93 | 1,790.9 | 623 | 1,168.0 |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 622.9 | 0.0 | 622.9 | | |
| | կատարող. տոկոս | | | | | | | | | | | 0% | | | 106% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | | | | | | | | | | 100% | | | |
| ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | քանակական | | 1 | 6 | 17 | 12 | 22 | 27 | 66 | 20 | 35 | 12 | 35 | 63 | 122 | 438 | | |
| | կատարողական | 1,200 | 3 | 15 | 43 | 30 | 55 | 72 | 181 | 60 | 95 | 30 | 98 | 175 | 340 | 1,194.0 | 1,200 | (5.5) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 132.7 | 66.4 | 0.0 | 0.0 | 0.0 | 17.4 | 60.0 | 180.0 | 95.0 | 128.0 | 514.5 | 1,194.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 8% | | | 26% | | | 15% | | | 51% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 17% | | | 0% | | | 21% | | | 61% | | | |
| ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՊՓԲԸ | քանակական | | 0 | 0 | 17 | 25 | 23 | 28 | 37 | 0 | 16 | 2 | 18 | 25 | 40 | 231 | | |
| | կատարողական | 528 | 0 | 0 | 45 | 65 | 59 | 71 | 93 | 0 | 40 | 5 | 45 | 56 | 98 | 575.0 | 617 | (41.8) |
| | ֆինանսավորում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 44.5 | 64.5 | 58.5 | 71.0 | 62.5 | 30.0 | 40.0 | 50.0 | 154.0 | 575.0 | | |
| | կատարող. տոկոս | | | | | 21% | | | 42% | | | 7% | | | 32% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | | 0% | | | 32% | | | 31% | | | 40% | | | |

**Ծանոթություն.** Տոկոսները հաշվարկվել են հաշվի առնելով տվյալ եռամսյակում կատարված վերաբաշխումները

| «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի կատարման 2017թ. ցուցանիշները | | | | | | | | | | | | | | | | | | /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակական | Ցուցանիշներ | Հաստատված բյուջե | Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքները ըստ բուժհիմնարկների | | | | | | | | | | | | | Ընդամենը 2017թ. Ընթացքում | Ճշգրտված բյուջե | Տարբերությունը ճշգրտված բյուջեի և կատարողականի միջև |
| | | | 16.12.16թ. 30.12.16թ. | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | 01-12.17թ - 15.12.17թ. | | | |
| Ամսական համամասնությունները | կատարողական | | | | 20.83% | 8..34% | 8.33% | 8.33% | 8.34% | 8.33% | 8.33% | 8.34% | 8.33% | 8.33% | 4.17% | | | |
| | ֆինանսավորում | | | | 11.11% | 5.56% | 8.33% | 8.33% | 8.34% | 8.33% | 8.33% | 8.34% | 9.52% | 9.52% | 14.29% | | | |
| ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՀ ԿԵՆՏՐՈՆ ՊՓԲԸ | քանակական | | 0 | 31 | 34 | 101 | 74 | 37 | 99 | 51 | 29 | 32 | 71 | 83 | 24 | 666 | | |
| | կատարողական | 2,029 | 0 | 115 | 108 | 309 | 216 | 74 | 273 | 171 | 156 | 180 | 174 | 166 | 88 | 2028.9 | 2029 | -0.3 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 309 | 367 | 145 | 193 | 169 | 169 | 193 | 194 | 266 | 2004.7 | | |
| | կատարող. տոկոս | | | | 10.96% | 15.23% | 10.62% | 3.65% | 13.45% | 8.43% | 7.70% | 8.85% | 8.57% | 8.18% | 4.34% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | 0.00% | 0.00% | 15.23% | 18.09% | 7.15% | 9.51% | 8.33% | 8.33% | 9.51% | 9.56% | 13.09% | | | |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿ. ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | քանակական | | 24 | 79 | 27 | 0 | 36 | 38 | 38 | 37 | 38 | 37 | 34 | 106 | 21 | 515 | | |
| | կատարողական | 1,327 | 72 | 235 | 80 | 0 | 108 | 112 | 110 | 110 | 112 | 111 | 111 | 403 | 67 | 1631.4 | 1631 | 0.0 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | | 0 | 331 | 111 | 110 | 111 | 110 | 111 | 126 | 127 | 494 | 1631.4 | | |
| | կատարող. տոկոս | | | | 29.17% | 0.00% | 8.14% | 8.44% | 8.29% | 8.29% | 8.44% | 8.37% | 8.40% | 24.70% | 4.11% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | 0.00% | 0.00% | 24.95% | 8.37% | 8.29% | 8.37% | 8.29% | 8.37% | 9.50% | 7.78% | 30.31% | | | |
| ՍՊԻՏԱԿԻ ԲԿ ՓԲԸ | քանակական | | 8 | 46 | 0 | 22 | 13 | 18 | 31 | 18 | 25 | 18 | 26 | 17 | 8 | 250 | | |
| | կատարողական | 724 | 27 | 123 | 0 | 52 | 36 | 51 | 102 | 54 | 68 | 44 | 76 | 62 | 31 | 723.5 | 724 | -0.3 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 180 | 58 | 51 | 73 | 60 | 60 | 69 | 68 | 98 | 717.3 | | |
| | կատարող. տոկոս | | | | 20.80% | 7.18% | 4.97% | 6.98% | 14.02% | 7.46% | 9.33% | 6.01% | 10.43% | 8.50% | 4.28% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | 0.00% | 0.00% | 24.87% | 8.01% | 7.05% | 10.07% | 8.29% | 8.29% | 9.53% | 9.39% | 13.59% | | | |
| ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՊՓԲԸ | քանակական | | 0 | 0 | 43 | 32 | 20 | 22 | 10 | 2 | 48 | 20 | 22 | 21 | 8 | 248 | | |
| | կատարողական | 511 | 0 | 0 | 86 | 64 | 40 | 44 | 22 | 4 | 101 | 42 | 44 | 42 | 18 | 505.0 | 511 | -6.3 |
| | ֆինանսավորում | | 0 | 0 | 0 | 0 | 127 | 43 | 43 | 43 | 4 | 81 | 49 | 48 | 67 | 504.1 | | |
| | կատարող. տոկոս | | | | 16.82% | 12.52% | 7.82% | 8.61% | 4.20% | 0.78% | 19.66% | 8.12% | 8.61% | 8.21% | 3.42% | | | |
| | ֆինանսավ. տոկոս | | | | 0.00% | 0.00% | 24.84% | 8.41% | 8.41% | 8.31% | 0.78% | 15.90% | 9.54% | 9.39% | 13.01% | | | |

**Ծանոթություն.** Տոկոսները հաշվարկվել են հաշվի առնելով տվյալ եռամսյակում կատարված վերաբաշխումները

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ԿՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

Հավելված 2

**ՀՀ-ում ծնունդների քանակը 2014-2017թթ.**

| N | **Ծննդօգնության հիմնարկի անվանումը** | **Ընդամենը ծնունդներ** | | | | **+/- 2015-2016** | **+/- 2016-2017** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Երևան քաղաք** | **2014թ.** | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | | |
| 1.1 | Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ | 3987 | 3990 | 3862 | 3528 | -128 | -334 |
| 1.2 | Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն | 2928 | 2835 | 2884 | 2582 | +49 | -302 |
| 1.3 | Էրեբունի ԲԿ | 4016 | 4325 | 4578 | 4594 | +253 | +16 |
| 1.4 | Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ | 3178 | 3106 | 3131 | 2819 | +25 | -312 |
| 1.5 | Բեգլարյան ԲԿ | 1124 | 1245 | 1321 | 1038 | +76 | -283 |
| 1.6 | Շենգավիթ ԲԿ | 2997 | 2902 | 2291 | 2097 | -611 | -194 |
| 1.7 | Գրիգոր Նարեկացի ԲԿ | 761 | 751 | 677 | 576 | -74 | -101 |
| 1.8 | Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն | 391 | 224 | 66 | 303 | -158 | +237 |
| 1.9 | Աստղիկ ԲԿ | 1354 | 1344 | 1790 | 2152 | +446 | +362 |
| 1.10 | Սուրբ Աստվածածին ծննդատուն | 567 | 418 | 283 | 242 | -135 | -41 |
| 1.11 | Էլեն-Նարե | 955 | 1023 | 950 | 836 | -73 | -114 |
| 1.12 | Սլավմեդ | 248 | 561 | 620 | 444 | +59 | -176 |
| | Ընդամենը Երևան | **22506** | **22724** | **22453** | **21211** | **-271** | **-1242** |
| 2. | **Մարզեր** | | | | | | |
| 2.1 | Արագածոտն | 1065 | 925 | 833 | 775 | -92 | -58 |
| 2.2 | Սյունիք | 1450 | 1331 | 1349 | 1216 | +18 | -133 |
| 2.3 | Արարատ | 2584 | 2510 | 2291 | 1930 | -219 | -361 |
| 2.4 | Կոտայք | 2641 | 2498 | 2374 | 2141 | -124 | -233 |
| 2.5 | Արմավիր | 1798 | 1482 | 1472 | 1384 | -10 | -88 |
| 2.6 | Գեղարքունիք | 2530 | 2543 | 2357 | 2221 | -186 | -136 |
| 2.7 | Լոռի | 2992 | 2713 | 2599 | 2234 | -114 | -365 |
| 2.8 | Շիրակ | 3965 | 3671 | 3403 | 3122 | -268 | -281 |
| 2.9 | Տավուշ | 1322 | 1272 | 1240 | 1234 | -32 | -6 |
| 2.10 | Վայոց ձոր | 487 | 449 | 467 | 373 | +18 | -94 |
| | **Ընդամենը մարզեր** | **20834** | **19394** | **18385** | **16630** | **-1009** | **-1755** |
| | **Ընդամենը հանրապետություն** | **43340** | **42118** | **40838** | **37841** | **-1280** | **-2997** |

Հավելված 3

**ՀՀ-ում կեսարյան հատումների քանակը 2014-2017թթ.**

| N | Ծննդօգնության հիմնարկի անվանումը | Ընդամենը կեսարյան հատումներ | | | | +/- 2015-2016 | +/- 2016-2017 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Երևան քաղաք** | **2014թ** | **2015թ** | **2016թ.** | **2017թ.** | | |
| 1.1 | Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ | 1486 | 1564 | 1371 | 1493 | -193 | +122 |
| 1.2 | Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն | 838 | 921 | 867 | 859 | -54 | -8 |
| 1.3 | Էրեբունի ԲԿ | 1410 | 1516 | 1667 | 1776 | +151 | +109 |
| 1.4 | Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ | 1198 | 1236 | 1268 | 1142 | +32 | -126 |
| 1.5 | Բեգլարյան ԲԿ | 452 | 530 | 556 | 465 | +26 | -91 |
| 1.6 | Շենգավիթ ԲԿ | 914 | 926 | 719 | 788 | -207 | +69 |
| 1.7 | Գրիգոր Նարեկացի ԲԿ | 218 | 243 | 221 | 204 | -22 | -17 |
| 1.8 | Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն | 117 | 68 | 21 | 105 | -47 | +84 |
| 1.9 | Աստղիկ ԲԿ | 361 | 385 | 479 | 638 | +94 | +159 |
| 1.10 | Սուրբ Աստվածածին ծննդատուն | 133 | 96 | 54 | 61 | -42 | +7 |
| 1.11 | Էլեն-Նարե | 246 | 248 | 232 | 239 | -16 | +7 |
| 1.12 | Սլավմեդ | 129 | 214 | 245 | 168 | +31 | -77 |
| | **Ընդամենը Երևան** | **7502** | **7947** | **7700** | **7938** | **-247** | **+238** |
| 2. | **Մարզեր** | | | | | | |
| 2.1 | Արագածոտն | 77 | 64 | 95 | 87 | +31 | -8 |
| 2.2 | Սյունիք | 296 | 286 | 300 | 296 | +14 | -4 |
| 2.3 | Արարատ | 630 | 634 | 653 | 605 | +19 | -48 |
| 2.4 | Կոտայք | 585 | 565 | 488 | 513 | -77 | +25 |
| 2.5 | Արմավիր | 139 | 121 | 183 | 237 | +62 | +54 |
| 2.6 | Գեղարքունիք | 310 | 341 | 329 | 356 | -12 | +27 |
| 2.7 | Լոռի | 381 | 418 | 488 | 489 | +70 | +1 |
| 2.8 | Շիրակ | 659 | 670 | 692 | 648 | +22 | -44 |
| 2.9 | Տավուշ | 293 | 358 | 244 | 303 | -114 | +59 |
| 2.10 | Վայոց ձոր | 78 | 73 | 71 | 67 | -2 | -4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը մարզեր** | **3448** | **3530** | **3543** | **3601** | **+13** | **-58** |
| | **Ընդամենը հանրապետություն** | **10950** | **11477** | **11243** | **11539** | **-234** | **+296** |

Հավելված 4

**ՀՀ-ում ծնունդների ու կեսարյան հատումների քանակը և դրանց հարաբերակցությունը 1990-2017թթ.**

| **Տարեթիվ** | **Ծնունդների թիվը** | **Կեսարյան հատումների թիվը** | **Կեսարյան հատումների %** |
|---|---|---|---|
| **1990** | 80039 | 2687 | 3.4% |
| **1995** | 45445 | 2097 | 4.6% |
| **2000** | 35279 | 2553 | 7.2% |
| **2005** | 37992 | 4248 | 11.2% |
| **2006** | 38053 | 4512 | 11.9% |
| **2007** | 40319 | 5638 | 14.0% |
| **2008** | 41462 | 6234 | 15.0% |
| **2009** | 44554 | 7882 | 17.6% |
| **2010** | 44739 | 8439 | 18.8% |
| **2011** | 43301 | 9385 | 21.6% |
| **2012** | 42709 | 9558 | 22.3% |
| **2013** | 41923 | 9949 | 23.7% |
| **2014** | 43332 | 11156 | 25.7% |
| **2015** | 42123 | 11472 | 27.2% |
| **2016** | 40791 | 11525 | 28.3% |
| **2017** | 37841 | 11539 | 30.0% |

Հավելված 5

**Եվրոպական և ԱՊՀ որոշ երկրների ծնունդների ընդհանուր թվի մեջ կեսարյան հատումների տոկոսները ըստ ԱՀԿ տվյալների՝ 2000-2015 թթ.**

| Երկիր | 2000թ. | 2005թ. | 2010թ. | 2014թ. | 2015թ. |
|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 7.5 | 11.3 | 18.8 | 25.9 | 26 |
| Ադրբեջան | 2.3 | 5.3 | 13.1 | 18.3 | 27.6 |
| Բելոռուս | 16.7 | 18.9 | 22.9 | 27 | ... |
| Ալբանիա | 12.5 | 20.6 | 29.5 | ... | ... |
| Բուլղարիա | 13.5 | 22 | 31 | | |
| Չեխոսլովակիա | 12.9 | 17 | 22.5 | 25.4 | ... |
| Դանիա | 15.3 | 19.9 | 21.4 | 21.3 | 20.8 |
| Էստոնիա | 14.5 | 18.8 | 20.3 | 20 | ... |
| Ֆրանսիա | 17.9 | 20 | 21 | 20.8 | ... |
| Վրաստան | 8.7 | 19.5 | 31 | 38.5 | ... |
| Գերմանիա | ... | 26.3 | 30.4 | 30.8 | ... |
| Իսրայել | 13.7 | 15.7 | 17.5 | 16.1 | ... |
| Իտալիա | ... | 39 | 38.8 | 36.4 | ... |
| Ղազախստան | 6.8 | 10 | 13.5 | 15.7 | 16 |
| Ղրղզստան | 3.8 | 5 | 6.7 | 9.7 | 9.4 |
| Լատվիա | 15 | 20 | 23 | 20 | ... |
| Լիտվա | 12.8 | 19 | 24.8 | 20.4 | ... |
| Մոլդովա | 7.5 | 9.8 | 13.8 | 18.3 | ... |
| Ռուսաստան | 14 | 17.2 | 22 | ... | ... |
| Տաջիկստան | 1.5 | 2 | 3.5 | 6.1 | ... |
| Թուրքիա | ... | ... | 46.5 | ... | ... |
| Թուրքմենստան | 3.2 | 3.2 | 4.7 | 8.3 | 8.5 |
| Ուկրաինա | 10.4 | 13.7 | 15.8 | ... | ... |
| Միացյալ Թագավորություն | 19.6 | 22.6 | 23.8 | 25.1 | ... |
| Ուզբեկստան | 3.1 | 4.9 | 8.6 | 11.7 | .... |
| Եվրոպական ռեգիոն | 19.1 | 20.7 | 24.5 | 26 | ... |
| Եվրոմիություն | 22.1 | 24.2 | 26.2 | 27.3 | ... |
| ԱՊՀ | 9.3 | 12 | 15.9 | 17.6 | 24.8 |

Հավելված 6

2015-2017 թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի ներմուծման և մատակարարման գների տարբերության վերաբերյալ

| Դեղի անվանում | Պայմանագրի կնքման տարին | Ներմուծող կազմակերպությունը | Միավորի ներմուծման գինը ներառյալ ԱԱՀ (դրամ) | Մատակարարման արժեքը (դրամ) | Ներմուծման և մատակարարման գների տարբերությունը | Մատակարար կազմակերպությունը | Ներմուծման և պայմանագրային գումարի տարբերությունը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. Օսելտամիվիր 75մգ /Տամիֆլու/ | 2016թ. | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 961 | 1,198 | 25% | Վագա Ֆարմ ՍՊԸ | 9,716,000 |
| | | | 1,004 | | | | |
| | | Վագա Ֆարմ ՍՊԸ | 992 | | | | |
| | | | 1,511 | | | | |
| 2. Դեսմոպրեսին քթակաթիլներ 5մլ | 2015թ. | Արմֆարմ ՍՊԸ | 3,055 | 5,267 | 72% | Արմֆարմ ՍՊԸ | 9,896,633 |
| | | | 3,288 | | 60% | | |
| | 2017թ. | Ռիխտեր-Լամբրոն ՍՊԸ | 4,091 | 5,100 | 25% | Ռիխտեր-Լամբրոն ՍՊԸ | 4,036,800 |
| | | | 4,091 | 4,990 | 22% | | 1,168,960 |
| 3. Ցիկլոսպորին 50 մգ /Սանդիմուն Նեօրալ/ | 2015թ. | Վագա Ֆարմ ՍՊԸ | 414 | 1,100 | 166% | Վագա Ֆարմ ՍՊԸ | 2,914,398 |
| | | | 418 | 990 | 137% | | 7,296,680 |
| | 2016թ. | Վագա Ֆարմ ՍՊԸ | 415 | 990 | 138% | Վագա Ֆարմ ՍՊԸ | 5,806,265 |
| | 2017թ. | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 299 | 336 | 12% | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 645,249 |
| | | | 304 | | | | |
| | | | 304 | | | | |
| 4. Էրիթրոպոէտին բետտա 2000 ՄՄ /Ռեկորմոն/ | 2015թ. | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 4,982 | 6,500 | 32% | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 91,104,000 |
| | | | 4,930 | | | | |
| | | | 4,982 | | | | |
| | | | 4,950 | | | | |
| | 2016թ. | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 5,106 | 6,500 | 30% | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 68,328,000 |
| | | | 4,982 | | | | |
| | | | 5,141 | | | | |
| | | Վագա Ֆարմ ՍՊԸ | 4,971 | 5,440 | 9% | Վագա Ֆարմ ՍՊԸ | 3,291,200 |

Հավելված 7

2015-2017 թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի՝ գնումների պլանի կազմման ընթացքում գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի ձևավորումը

| Հ/Հ | Դեղի անվանումը | Չ/Մ | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հիվանդների թիվ | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) | Հիվանդների թիվ | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) | Հիվանդների թիվ | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) |
| 1 | Ֆլուֆենազին 25մգ/1մլ | սրվակ | 1,410 | 30,000 | 50,000 | 16,600 | 51,167 | 17,100 |
| 2 | Կարբամազեպին 200մգ | դեղահատ | 5,100 | 3,065,000 | | 2,724,000 | | 2,830,000 |
| 3 | Բենզոբարբիտալ 100 մգ (Բենզոնալ) | դեղահատ | 340 | 287,000 | | 217,000 | | 200,000 |
| 4 | Տրիֆլուոպերազին 5մգ (Տրիֆտազին) | դեղահատ | 3,400 | 2,150,000 | | 1,400,000 | | 1,400,000 |
| 5 | Ազալեպտին 100մգ (Կլոզապին) | դեղահատ | 14,450 | 1,000,000 | | 760,000 | | 720,000 |
| 6 | Տրիհեքսիֆենիդիլ 2մգ (Ցիկլադոլ) | դեղահատ | 1,400 | 1,450,000 | | 1,220,000 | | 1,460,000 |
| 7 | Հալոպերիդոլ 5մգ | դեղահատ | 2,730 | 1,200,000 | | 1,030,000 | | 1,030,000 |
| 8 | Լորազեպամ 2մգ | դեղահատ | 1,600 | 1,033,000 | | 770,000 | | 856,000 |
| 9 | Դիազեպամ 5մգ | դեղահատ | 2,320 | 1,050,000 | | 1,350,000 | | 1,320,000 |
| 10 | Ամիտրիպտիլին 25մգ | դեղահատ | 1,230 | 450,000 | | 540,000 | | 545,000 |
| 11 | Օլանզապին 10մգ | դեղահատ | 450 | 165,000 | | 60,000 | | 110,000 |
| 12 | Տիզերցին /Լևոմեպրոմազին/ 25մգ | դեղահատ | 520 | 35,000 | | 300,000 | | 290,000 |
| 13 | Գլիկլազիդ 60մգ/ Դիաբետոն MR60մգ | դեղահատ | 63,000 | 12,000,000 | 65,000 | 12,000,000 | 68,000 | 12,000,000 |
| 14 | Մետֆորմին հիդրոքլորիդ 1000 մգ | դեղահատ | 63,000 | 16,800,000 | 65,000 | 16,500,000 | 68,000 | 21,000,000 |
| 15 | Դեսմոպրեսին քթակաթիլներ 5մլ | 22հկ | 251 | 2,994 | 250 | 6,000 | 255 | 6,024 |
| 16 | Ինսուլին կարճատև ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 13,000 | 55,000 | 14,500 | 57,000 | 14,500 | 57,000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Ինսուլին միջին ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 13,000 | 120,000 | 14,500 | 139,000 | 14,500 | 145,480 |
| 18 | Ինսուլին 30/70 կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 13,000 | 20,000 | 14,500 | 21,500 | 14,500 | 21,500 |
| 19 | Ինսուլին լիզպրո ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | | 19,335 | | 12,775 | | |
| 20 | Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) դեղակախույթ ներարկման 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | 705 | 19,335 | 780 | 12,775 | 894 | 32,400 |
| 21 | Ինսուլին Գլարգին 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | | 3,867 | | 12,775 | | |
| 22 | Գլիմեպիրիդ 2մգ/500մգ Dinga | դեղահատ | 63,000 | 10,800,000 | 65,000 | 12,000,000 | 71,500 | 18,000,000 |
| 23 | Էրիթրոպոէտին բետտա 2000 ՄՄ | սրվակ | 680 | 65,000 | 730 | 60,000 | 780 | 60,000 |
| 24 | Ցիկլոսպորին /սանդիմուն նեօրալ/ 50 մգ | դեղապատիճ | - | 20,000 | - | 20,000 | - | 20,000 |
| 25 | Վալպրոաթթվի նատրիումական աղ 300մգ | դեղահատ | 3,900 | 1,000,000 | 4,300 | 1,160,000 | 4,400 | 1,300,000 |
| 26 | Կոլխիցին 1մգ | դեղահատ | 15,420 | 6,400,000 | 13,447 | 603,000 | 16,500 | 1,800,000 |
| 27 | Բերակտանտ /սուրվանտա/ | սրվակ | | - | 100 | 150 | 200 | 200 |

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ԿՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

Հավելված 8

2015, 2016 և 2017 թթ. գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի, դրանց գնման ծավալների և փաստացի ծախսերի համապատասխանությունը

| Հ/Հ | Դեղի անվանումը | Չ/Մ | 2015թ. | | | 2016թ. | | | 2017թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) | Գլխավոր մասնագետի հայտ (հատ) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) |
| 1 | Ֆլուֆենազին 25մգ/1մլ | սրվակ | 30,000 | 12,314 | 23,172 | 16,600 | - | 10,220 | 17,100 | 17,100 | 14,652 |
| 2 | Կարբամազեպին 200մգ | դեղահատ | 3,065,000 | 2,317,500 | 1,456,170 | 2,724,000 | 720,000 | 1,663,029 | 2,830,000 | 2,300,000 | 1,662,402 |
| 3 | Բենզոբարբիտալ 100 մգ (Բենզոնալ) | դեղահատ | 287,000 | 212,304 | 289,513 | 217,000 | 173,136 | 259,141 | 200,000 | 350,016 | 267,477 |
| 4 | Տրիֆլուոպերազին 5մգ (Տրիֆտազին) | դեղահատ | 2,150,000 | 2,024,048 | 1,412,773 | 1,400,000 | | 1,747,285 | 1,400,000 | 1,475,040 | 1,677,416 |
| 5 | Ազալեպտին 100մգ (Կլոզապին) | դեղահատ | 1,000,000 | 1,028,100 | 630,805 | 760,000 | - | 691,924 | 720,000 | 700,000 | 697,524 |
| 6 | Տրիհեքսիֆենիդիլ 2մգ (Ցիկլադոլ) | դեղահատ | 1,450,000 | 1,450,000 | 1,431,799 | 1,220,000 | 1,130,000 | 1,612,058 | 1,460,000 | 1,700,160 | 1,455,442 |
| 7 | Հալոպերիդոլ 5մգ | դեղահատ | 1,200,000 | 1,200,000 | 909,811 | 1,030,000 | 220,000 | 1,048,957 | 1,030,000 | 1,100,160 | 930,443 |
| 8 | Լորազեպամ 2մգ | դեղահատ | 1,033,000 | 930,000 | 847,713 | 770,000 | 465,400 | 998,294 | 856,000 | 1,233,024 | 988,277 |
| 9 | Դիազեպամ 5մգ | դեղահատ | 1,050,000 | 1,050,056 | 1,011,114 | 1,350,000 | 781,080 | 1,137,452 | 1,320,000 | 1,407,000 | 1,160,962 |
| 10 | Ամիտրիպտիլին 25մգ | դեղահատ | 450,000 | 450,000 | 444,347 | 540,000 | 347,000 | 499,629 | 545,000 | 657,120 | 500,825 |
| 11 | Օլանզապին 10մգ | դեղահատ | 165,000 | _ | 32,133 | 60,000 | 52,080 | 40,095 | 110,000 | 140,040 | 71,205 |
| 12 | Տիզերցին /Լևոմեպրոմազին/ 25մգ | դեղահատ | 35,000 | 320,833 | 255,135 | 300,000 | 75,000 | 276,289 | 290,000 | 350,000 | 292,525 |
| 13 | Դոքսոռուբիցին 10մգ/5մլ | սրվակ | 3,600 | - | 2,891 | 3,000 | 1,267 | 2,486 | 3,000 | 3,000 | 2,809 |
| 14 | Ինտերֆերոն ալֆա 2-Ա 3ՄՄ | սրվակ | 2,000 | 821 | 1,097 | 2,000 | - | 1,058 | 2,500 | 2,500 | 1,294 |
| 15 | Հակահեմոֆիլիկ 8-րդ գործոն 500 ՄՄ | սրվակ | 800 | 830 | 1,098 | 800 | 800 | 801 | 1,000 | 1,000 | 583 |
| 16 | Ցիտարաբին 100մգ/5մլ | սրվակ | 4,500 | - | 3,376 | 4,500 | - | 2,067 | 4,500 | 4,500 | 1,960 |
| 17 | Լ Ասպարագինազա 10000ՄՎ | սրվակ | 120 | 120 | 3 | 120 | 20 | 56 | 146 | 146 | 50 |
| 18 | Լ Ասպարագինազա 5000ՄՎ | սրվակ | 260 | 260 | 6 | 260 | - | 272 | 365 | 365 | 114 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Հիդրոքսիկարբամիդ 500մգ / Հիդրեա | դեղապատիճ | 80,000 | 54,900 | 61,515 | 80,000 | 64,500 | 55,229 | 90,000 | 90,000 | 67,047 |
| 20 | Գլիկլազիդ 60մգ/ Դիաբետոն MR60մգ | դեղահատ | 12,000,000 | 9,438,490 | 9,152,225 | 12,000,000 | 9,450,000 | 8,586,831 | 12,000,000 | 11,822,580 | 12,033,251 |
| 21 | Մետֆորմին հիդրոքլորիդ 1000 մգ | դեղահատ | 16,800,000 | 5,000,000 | 2,388,797 | 16,500,000 | 4,213,000 | 5,438,432 | 21,000,000 | 8,551,440 | 7,727,090 |
| 22 | Դեսմոպրեսին քթակաթիլներ 5մլ | շիշ | 2,994 | 5,000 | 2,888 | 6,000 | 35 | 4,386 | 6,024 | 5,312 | 3,898 |
| 23 | Ինսուլին կարճատև ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 55,000 | 72,000 | 55,643 | 57,000 | 80,000 | 60,778 | 57,000 | 29,600 | 62,830 |
| 24 | Ինսուլին միջին ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 120,000 | 144,950 | 110,110 | 139,000 | 160,000 | 125,547 | 145,480 | 73,000 | 127,841 |
| 25 | Ինսուլին 30/70 կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 20,000 | 21,975 | 18,048 | 21,500 | 24,000 | 21,057 | 21,500 | 11,400 | 20,207 |
| 26 | Ինսուլին լիզպրո ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | 19,335 | 28,470 | 5,500 | 12,775 | 30,463 | 21,369 | 32,400 | 32,595 | 27,233 |
| 27 | Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) դեղակախույթ ներարկման 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | 19,335 | 28,470 | 5,009 | 12,775 | 30,463 | 18,857 | | 176 | 21,894 |
| 28 | Ինսուլին Գլարգին 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | 3,867 | - | - | 12,775 | - | - | | 30,602 | - |
| 29 | Գլիմեպիրիդ 2մգ/500մգ Dinga | դեղահատ | 10,800,000 | 7,000,000 | 4,592,053 | 12,000,000 | 1,700,000 | 5,992,841 | 18,000,000 | 7,624,710 | 5,111,541 |
| 30 | Էրիթրոպոէտին բետտա 2000 ՄՄ | սրվակ | 65,000 | 60,000 | 57,406 | 60,000 | 56,000 | 59,446 | 60,000 | 72,000 | 74,620 |
| 31 | Ցիկլոսպորին /սանդիմուն նեօրալ/ 50 մգ | դեղապատիճ | 20,000 | 17,000 | 35,912 | 20,000 | 10,100 | 4,929 | 20,000 | 20,000 | 25,177 |
| 32 | Վալպրոաթթվի նատրիումական աղ 300մգ | դեղահատ | 1,000,000 | 1,000,000 | 641,241 | 1,160,000 | 254,250 | 722,419 | 1,300,000 | 1,471,300 | 960,147 |
| 33 | Կոլխիցին 1մգ | դեղահատ | 6,400,000 | 1,000,128 | 693,325 | 603,000 | 218,016 | 834,878 | 1,800,000 | 1,850,112 | 1,127,400 |
| 34 | Տուբերկուլին | դոզա | | | | | 50,000 | 50,000 | | 50,000 | 50,000 |
| 35 | Ռիֆամպիցին 300մգ/ Rifampicin 300mg | | | | | | 40,000 | 40,000 | | | - |
| 36 | Բերակտանտ /սուրվանտա/ | սրվակ | - | | 90 | 150 | 100 | 99 | 200 | 36 | 7 |
| 36 | Մորֆին հիդրոքլորիդ 1%-1մլ (մեծածախ) | սրվակ | - | - | 20,921 | | 10,780 | 18,581 | | 21,000 | 23,695 |
| 37 | Օմնոպոն 2%-1մլ (մեծածախ) | սրվակ | 8,482 | 8,482 | 26,878 | | 32,360 | 32,869 | | 37,000 | 30,708 |
| 38 | Պրոմեդոլ 2%-1մլ (մեծածախ) | սրվակ | | - | 2,243 | | 1,340 | 1,078 | | 408 | 683 |
| 39 | Օսելտամիվիր | | - | - | - | - | 50,000 | 4,550 | | - | 6,500 |
| 41 | Ալուվիա, Լոպինավիր/ռիտոնավիր 200մգ+50մգ | դ/հատ | | | | | | | - | 187,200 | - |

Հավելված 9

## 2015-2017 թթ. գնումների ծավալների ձևավորման ընթացքում Նախարարության մարդասիրական օգնության պահեստում և բժշկական կազմակերպություններում տարեսկզբի դրությամբ առկա դեղերի քանակների հաշվառումը

| Հ/Հ | Դեղի անվանումը | Չ/Մ | 2015թ. | | | | | | 2016թ. | | | | | 2017թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սկզբնական մնացորդ (հատ) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) | Վերջնական մնացորդ (հատ) | Մնացորդի գումար (դրամ) | Պաշարի սպառման ժամկետ (ամիս) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) | Վերջնական մնացորդ (հատ) | Մնացորդի գումար (դրամ) | Պաշարի սպառման ժամկետ (ամիս) | Դեղի մուտք (հատ) | Տարվա Փաստացի ծախս (հատ) | Վերջնական մնացորդ (հատ) | Մնացորդի գումար (դրամ) | Պաշարի սպառման ժամկետ (ամիս) |
| 1 | Ֆլուֆենազին 25մգ/1մլ | սրվակ | 21,104 | 12,314 | 23,172 | 10,246 | 5,461,118 | 5 | - | 10,220 | 26 | 13,858 | 0.03 | 17,100 | 14,652 | 2,474 | 1,335,960 | 2.0 |
| 2 | Կարբամազեպին 200մգ | դեղահատ | 356,427 | 2,317,500 | 1,456,170 | 1,217,757 | 10,850,215 | 10 | 720,000 | 1,663,029 | 274,728 | 2,472,552 | 1.98 | 2,300,000 | 1,662,402 | 912,326 | 8,575,864 | 6.6 |
| 3 | Բենզոբարբիտալ 100 մգ (Բենզոնալ) | դեղահատ | 205,470 | 212,304 | 289,513 | 128,261 | 1,782,828 | 5 | 173,136 | 259,141 | 42,256 | 633,840 | 1.96 | 350,016 | 267,477 | 124,795 | 1,747,130 | 5.6 |
| 4 | Տրիֆլուոպերազին 5մգ (Տրիֆտազին) | դեղահատ | 2,001,705 | 2,024,048 | 1,412,773 | 2,612,980 | 10,556,439 | 22 | | 1,747,285 | 865,695 | 3,497,408 | 5.95 | 1,475,040 | 1,677,416 | 663,319 | 2,679,809 | 4.7 |
| 5 | Ազալեպտին 100մգ (Կլոզապին) | դեղահատ | 722,332 | 1,028,100 | 630,805 | 1,119,627 | 31,349,556 | 21 | - | 691,924 | 427,703 | 11,975,684 | 7.42 | 700,000 | 697,524 | 430,179 | 12,045,012 | 7.4 |
| 6 | Տրիհեքսիֆենիդիլ 2մգ (Ցիկլադոլ) | դեղահատ | 833,349 | 1,450,000 | 1,431,799 | 851,550 | 3,746,820 | 7 | 1,130,000 | 1,612,058 | 369,492 | 1,625,765 | 2.75 | 1,700,160 | 1,455,442 | 614,210 | 2,702,524 | 5.1 |
| 7 | Հալոպերիդոլ 5մգ | դեղահատ | 661,441 | 1,200,000 | 909,811 | 951,630 | 7,803,366 | 13 | 220,000 | 1,048,957 | 122,673 | 1,005,919 | 1.40 | 1,100,160 | 930,443 | 292,390 | 2,397,598 | 3.8 |
| 8 | Լորազեպամ 2մգ | դեղահատ | 584,922 | 930,000 | 847,713 | 667,209 | 8,540,275 | 9 | 465,400 | 998,294 | 134,315 | 1,719,232 | 1.61 | 1,233,024 | 988,277 | 379,062 | 4,851,994 | 4.6 |
| 9 | Դիազեպամ 5մգ | դեղահատ | 496,549 | 1,050,056 | 1,011,114 | 535,491 | 3,368,238 | 6 | 781,080 | 1,137,452 | 179,119 | 1,146,362 | 1.89 | 1,407,000 | 1,160,962 | 425,157 | 2,721,005 | 4.4 |
| 10 | Ամիտրիպտիլին 25մգ | դեղահատ | 188,556 | 450,000 | 444,347 | 194,209 | 1,553,672 | 5 | 347,000 | 499,629 | 41,580 | 332,640 | 1.00 | 657,120 | 500,825 | 197,875 | 1,583,000 | 4.7 |
| 11 | Օլանզապին 10մգ | դեղահատ | 32,133 | _ | 32,133 | - | - | - | 52,080 | 40,095 | 11,985 | 1,839,698 | 3.59 | 140,040 | 71,205 | 80,820 | 11,314,800 | 13.6 |
| 12 | Տիզերցին /Լևոմեպրոմազին/ 25մգ | դեղահատ | 206,300 | 320,833 | 255,135 | 271,998 | 6,854,350 | 13 | 75,000 | 276,289 | 70,709 | 1,781,867 | 3.07 | 350,000 | 292,525 | 128,184 | 3,076,416 | 5.3 |
| 13 | Դոքսոռուբիցին 10մգ/5մլ | սրվակ | 4,997 | - | 2,891 | 2,106 | 2,948,400 | 9 | 1,267 | 2,486 | 887 | 1,330,500 | 4.28 | 3,000 | 2,809 | 1,078 | 1,676,290 | 4.6 |
| 14 | Ինտերֆերոն ալֆա 2-Ա 3ՄՄ | սրվակ | 1,369 | 821 | 1,097 | 1,093 | 20,329,800 | 12 | - | 1,058 | 35 | 651,000 | 0.40 | 2,500 | 1,294 | 1,241 | 15,866,185 | 11.5 |
| 15 | Հակահեմոֆիլիկ 8-րդ գործոն 500 ՄՄ | սրվակ | 431 | 830 | 1,098 | 163 | 10,594,185 | 2 | 800 | 801 | 162 | 7,776,000 | 2.43 | 1,000 | 583 | 579 | 23,449,500 | 11.9 |
| 16 | Ցիտարաբին 100մգ/5մլ | սրվակ | 5,443 | - | 3,376 | 2,067 | 1,392,922 | 7 | - | 2,067 | - | - | - | 4,500 | 1,960 | 2,540 | 1,711,960 | 15.6 |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Լ Ասպարագինազա 10000ՄՎ | սրվակ | 2 | 120 | 3 | 119 | 4,087,650 | 476 | 20 | 56 | 83 | 2,851,050 | 17.79 | 146 | 50 | 179 | 7,330,050 | 43.0 |
| 18 | Լ Ասպարագինազա 5000ՄՎ | սրվակ | 18 | 260 | 6 | 272 | 6,718,400 | 544 | - | 272 | - | - | - | 365 | 114 | 251 | 7,068,160 | 26.4 |
| 19 | Հիդրոքսիկարբամիդ 500մգ / Հիդրեա | դեղապատիճ | 19,121 | 54,900 | 61,515 | 12,506 | 2,301,104 | 2 | 64,500 | 55,229 | 21,777 | 4,006,968 | 4.73 | 90,000 | 67,047 | 44,730 | 7,559,370 | 8.0 |
| 20 | Գլիկլազիդ 60մգ/ Դիաբետոն MR60մգ | դեղահատ | 4,245,481 | 9,438,490 | 9,152,225 | 4,531,746 | 199,849,999 | 6 | 9,450,000 | 8,586,831 | 5,394,915 | 237,376,260 | 7.54 | 11,822,580 | 12,033,251 | 5,184,244 | 217,738,248 | 5.2 |
| 21 | Մետֆորմին հիդրոքլորիդ 1000 մգ | դեղահատ | 498,072 | 5,000,000 | 2,388,797 | 3,109,275 | 32,243,182 | 16 | 4,213,000 | 5,438,432 | 1,883,843 | 19,535,452 | 4.16 | 8,551,440 | 7,727,090 | 2,708,193 | 27,758,978 | 4.2 |
| 22 | Դեսմոպրեսին քթակաթիլներ 5մլ | շշիկ | 2,994 | 5,000 | 2,888 | 5,106 | 26,893,302 | 21 | 35 | 4,386 | 755 | 3,976,585 | 2.07 | 5,312 | 3,898 | 2,169 | 10,823,310 | 6.7 |
| 23 | Ինսուլին կարճատև ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 21,227 | 72,000 | 55,643 | 37,584 | 75,168,000 | 8 | 80,000 | 60,778 | 56,806 | 113,612,000 | 11.22 | 29,600 | 62,830 | 23,576 | 47,152,000 | 4.5 |
| 24 | Ինսուլին միջին ազդեցության մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 48,222 | 144,950 | 110,110 | 83,062 | 166,124,000 | 9 | 160,000 | 125,547 | 117,515 | 235,030,000 | 11.23 | 73,000 | 127,841 | 62,674 | 125,348,000 | 5.9 |
| 25 | Ինսուլին 30/70 կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100 ՄՄ, 10մլ | սրվակ | 9,435 | 21,975 | 18,048 | 13,362 | 26,724,000 | 9 | 24,000 | 21,057 | 16,305 | 32,610,000 | 9.29 | 11,400 | 20,207 | 7,498 | 14,996,000 | 4.5 |
| 26 | Ինսուլին լիզպրո ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | - | 28,470 | 5,500 | 22,970 | 117,147,000 | 50 | 30,463 | 21,369 | 32,064 | 173,337,984 | 18.01 | 32,595 | 27,233 | 37,426 | 190,872,600 | 16.5 |
| 27 | Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) դեղակախույթ ներարկման 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | - | 28,470 | 5,009 | 23,461 | 66,160,020 | 56 | 30,463 | 18,857 | 35,067 | 104,815,263 | 22.32 | 176 | 21,894 | 13,349 | 37,644,180 | 7.3 |
| 28 | Ինսուլին Գլարգին 100 ՄՄ, 3մլ | քարտրիդժ | - | - | - | - | - | | - | - | - | - | | 30,602 | - | 30,602 | 174,431,400 | - |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | Գլիմեպիրիդ 2մգ/500մգ Dinga | դեղահատ | 2,246,830 | 7,000,000 | 4,592,053 | 4,654,777 | 67,354,623 | 12 | 1,700,000 | 5,992,841 | 361,936 | 5,237,214 | 0.72 | 7,624,710 | 5,111,541 | 2,875,105 | 41,602,769 | 6.7 |
| 30 | Էրիթրոպոէտին բետտա 2000 ՄՄ | սրվակ | 8,972 | 60,000 | 57,406 | 11,566 | 75,179,000 | 2 | 56,000 | 59,446 | 8,120 | 52,780,000 | 1.64 | 72,000 | 74,620 | 5,500 | 28,825,500 | 0.9 |
| 31 | Ցիկլոսպորին /սանդիմուն նեօրալ/ 50 մգ | դեղապատ իճ | 34,048 | 17,000 | 35,912 | 15,136 | 14,984,640 | 5 | 10,100 | 4,929 | 20,307 | 20,103,930 | 49.44 | 20,000 | 25,177 | 15,130 | 5,083,680 | 7.2 |
| 32 | Վալպրոաթթվի նատրիումական աղ 300մգ | դեղահատ | 296,637 | 1,000,000 | 641,241 | 655,396 | 34,080,592 | 12 | 254,250 | 722,419 | 187,227 | 9,698,359 | 3.11 | 1,471,300 | 960,147 | 698,380 | 33,661,916 | 8.7 |
| 33 | Կոլխիցին 1մգ | դեղահատ | 425,673 | 1,000,128 | 693,325 | 732,476 | 9,375,693 | 13 | 218,016 | 834,878 | 115,614 | 1,526,105 | 1.66 | 1,850,112 | 1,127,400 | 838,326 | 11,065,903 | 8.9 |
| 34 | Տուբերկուլին | դոզա | | | | | - | | 50,000 | 50,000 | - | - | - | 50,000 | 50,000 | - | - | - |
| 35 | Ռիֆամպիցին 300մգ/ Rifampicin 300mg | | | | | | - | | 40,000 | 40,000 | - | - | - | | - | | - | |
| 36 | Մորֆին հիդրոքլորիդ 1%-1մլ (մեծածախ) | սրվակ | 33,165 | - | 20,921 | 12,244 | 2,950,804 | 7 | 10,780 | 18,581 | 4,443 | 1,070,763 | 2.87 | 21,000 | 23,695 | 1,748 | 421,268 | 0.9 |
| 37 | Օմնոպոն 2%-1մլ (մեծածախ) | սրվակ | 21,557 | 8,482 | 26,878 | 3,161 | 761,801 | 1 | 32,360 | 32,869 | 2,652 | 914,940 | 0.97 | 37,000 | 30,708 | 8,944 | 3,085,680 | 3.5 |
| 38 | Պրոմեդոլ 2%-1մլ (մեծածախ) | սրվակ | 2,561 | - | 2,243 | 318 | 151,050 | 2 | 1,340 | 1,078 | 580 | 275,500 | 6.46 | 408 | 683 | 305 | 144,875 | 5.4 |
| 39 | Օսելտամիվիր | դ/հատ | - | - | - | - | - | | 50,000 | 4,550 | 45,450 | 54,449,100 | 119.87 | - | 6,500 | 38,950 | 46,662,100 | 71.9 |
| 40 | Ալուվիա, Լոպինավիր/ռիտոնավիր 200մգ+50մգ | դ/հատ | | | | | | | | | | | | 187,200 | - | 187,200 | 47,923,200 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | 1,055,387,044 | | | | | 1,111,009,795 | | | | | 1,184,934,234 | |

Հավելված 10

| Մարզ | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | | 2018թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վիճ. վարչության տվյալներ բնակչության թվաքանակի վերաբերյալ (հունվարի 1-ի դրությամբ) | Պայմանագրային գումարների հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ | Վիճ. վարչության տվյալներ բնակչության թվաքանակի վերաբերյալ (հունվարի 1-ի դրությամբ) | Պայմանագրային գումարների հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ | Վիճ. վարչության տվյալներ բնակչության թվաքանակի վերաբերյալ (հունվարի 1-ի դրությամբ) | Պայմանագրային գումարների հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ | Վիճ. վարչության տվյալներ բնակչության թվաքանակի վերաբերյալ (հունվարի 1-ի դրությամբ) | Պայմանագրային գումարների հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) |
| Երևան | **1,071,511** | **1,025,593** | **1,073,660** | **1,041,358** | **1,075,841** | **1,041,358** | **1,076.4** | **965,280** |
| Արմավիրի մարզ | **267,002** | **263,925** | **266,613** | **261,458** | **265,759** | **261,458** | **265.4** | **250,619** |
| Արարատի մարզ | **260,102** | **250,921** | **258,911** | **249,372** | **258,407** | **249,372** | **257.4** | **234,937** |
| Կոտայքի մարզ | **254,990** | **260,703** | **253,898** | **256,768** | **252,830** | **256,768** | **250.7** | **255,191** |
| Շիրակի մարզ | **246,409** | **261,510** | **243,152** | **257,951** | **239,278** | **257,951** | **236.3** | **233,336** |
| Գեղարքունիքի մարզ | **232,988** | **223,273** | **231,794** | **217,532** | **230,715** | **217,532** | **229.2** | **206,614** |
| Լոռու մարզ | **227,999** | **265,643** | **224,954** | **263,518** | **221,098** | **263,848** | **217.8** | **255,295** |
| Սյունիքի մարզ | **140,182** | **124,612** | **139,471** | **122,446** | **138,953** | **122,446** | **138.6** | **115,067** |
| Արագածոտնի մարզ | **131,332** | **131,003** | **129,774** | **129,997** | **128,518** | **129,997** | **127.9** | **121,782** |
| Տավուշի մարզ | **126,677** | **123,816** | **125,514** | **122,050** | **124,475** | **122,050** | **123.4** | **113,980** |
| Վայոց Ձորի մարզ | **51,406** | **49,390** | **50,836** | **48,662** | **50,277** | **48,662** | **49.8** | **44,084** |
| **Ընդամենը** | **3,010,598** | **2,980,389** | **2,998,577** | **2,971,112** | **2,986,151** | **2,971,442** | **2,972.9** | **2,796,185** |

| Բյուջեի հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ (նախորդ տարվա հունիսի 1-ի դրությամբ) | | | | |
|---|---|---|---|---|
| | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | **2018թ.** |
| | 2,935,000 | 2,980,300 | 2,980,300 | 2,980,300 |

*Հավելված 11*

**2015 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և կազմակերպությունների համար հաստատված ընդհանուր պայմանագրային գումարների տարբերության չափով առաջացած մնացորդները**

հազար դրամ

| Խումբ | Դաս | Ծրագիր | Բուժօգնության և սպասարկման տեսակը | 2015 թվականի բյուջեով հաստատված | 2015 թվականի պայմանագրային գումար | Մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ-որից** | **66,317,901.8** | **64,724,971.9** | **1,592,929.9** |
| **02** | | | **ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ-որից** | **27,284,556.8** | **26,902,779.8** | **381,777.0** |
| | **01** | | **Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, այդ թվում** | **10,921,339.2** | **10,791,102.6** | **130,236.6** |
| | | 01 | Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | 10,921,339.2 | 10,791,102.6 | 130,236.6 |
| | **02** | | **Մասնագիտացված բժշկական ծառայություններ, այդ թվում** | **8,077,394.8** | **7,944,317.3** | **133,077.5** |
| | | 01 | Մտավոր, հոգեկան, լողոլական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ | 249,863.8 | 249,863.8 | 0.0 |
| | | 02 | Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ | 1,980,049.5 | 1,915,278.4 | 64,771.1 |
| | | 03 | Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 1,519,789.2 | 1,511,492.9 | 8,296.3 |
| | | 05 | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ | 138,988.7 | 138,988.7 | 0.0 |
| | | 06 | Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ | 4,000,883.6 | 3,986,693.5 | 14,190.1 |
| | | 07 | Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ | 142,000.0 | 142,000.0 | 0.0 |
| | | 08 | Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովում | 45,820.0 | | 45,820.0 |
| | **03** | | **Ստոմատոլոգիական ծառայություններ, այդ թվում** | **892,992.9** | **806,461.6** | **86,531.3** |
| | | 01 | Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 805,276.5 | 724,057.6 | 81,218.9 |
| | | 02 | Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ | 87,716.4 | 82,404.0 | 5,312.4 |
| | **04** | | **Պարաբժշկական ծառայություններ, այդ թվում** | **7,392,829.9** | **7,360,898.3** | **31,931.6** |
| | | 01 | Շտապ բժշկական օգնության ծառայություններ | 3,292,269.6 | 3,291,898.6 | 371.0 |
| | | 02 | Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | 3,568,683.9 | 3,537,518.4 | 31,165.5 |
| | | 03 | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ | 531,876.4 | 531,481.3 | 395.1 |

*Հավելված 11*

**2016 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և կազմակերպությունների համար հաստատված ընդհանուր պայմանագրային գումարների տարբերության չափով առաջացած մնացորդները**

հազար դրամ

| Խումբ | Դաս | Ծրագիր | Բուժօգնության և սպասարկման տեսակը | 2016 թվականի բյուջեով հաստատված | 2016 թվականի պայմանագրային գումար | Մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ-որից** | **67,874,020.2** | **65,038,772.2** | **2,835,248.0** |
| **02** | | | **ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ-որից** | **27,557,599.5** | **27,314,207.8** | **243,391.7** |
| | **01** | | **Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, այդ թվում** | **11,213,704.3** | **11,211,977.3** | **1,727.0** |
| | | 01 | Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | 11,213,704.3 | 11,211,977.3 | 1,727.0 |
| | **02** | | **Մասնագիտացված բժշկական ծառայություններ, այդ թվում** | **8,389,701.8** | **8,292,749.5** | **96,952.3** |
| | | 01 | Մտավոր, հոգեկան, լողոլական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ | 258,863.8 | 258,863.8 | 0.0 |
| | | 02 | Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ | 1,980,049.5 | 1,937,251.5 | 42,798.0 |
| | | 03 | Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 1,632,493.8 | 1,585,260.9 | 47,232.9 |
| | | 05 | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ | 285,155.8 | 285,155.8 | 0.0 |
| | | 06 | Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ | 4,100,138.9 | 4,093,217.5 | 6,921.4 |
| | | 07 | Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ | 133,000.0 | 133,000.0 | 0.0 |
| | **03** | | **Ստոմատոլոգիական ծառայություններ, այդ թվում** | **892,992.9** | **802,140.7** | **90,852.2** |
| | | 01 | Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 805,276.5 | 719,949.1 | 85,327.4 |
| | | 02 | Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ | 87,716.4 | 82,191.6 | 5,524.8 |
| | **04** | | **Պարաբժշկական ծառայություններ, այդ թվում** | **7,061,200.5** | **7,007,340.4** | **53,860.1** |
| | | 01 | Շտապ բժշկական օգնության ծառայություններ | 3,292,269.6 | 3,287,747.6 | 4,522.0 |
| | | 02 | Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | 3,202,028.0 | 3,153,700.2 | 48,327.8 |
| | | 03 | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ | 566,902.9 | 565,892.6 | 1,010.3 |

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

*Հավելված 11*

**2017 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և կազմակերպությունների համար հաստատված ընդհանուր պայմանագրային գումարների տարբերության չափով առաջացած մնացորդները**

հազար դրամ

| Սումմ | Դաս | Ծրագիր | Բուժօգնության և սպասարկման տեսակը | 2017 թվականի բյուջեով հաստատված | 2017 թվականի պայմանագրային գումար | Մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ-որից** | **67,165,431.8** | **65,222,584.3** | **1,942,847.5** |
| **02** | | | **ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ-որից** | **27,400,554.0** | **26,200,814.9** | **1,199,739.1** |
| | **01** | | **Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, այդ թվում** | **11,004,912.7** | **10,876,615.2** | **128,297.5** |
| | | 01 | Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | 11,004,912.7 | 10,876,615.2 | 128,297.5 |
| | **02** | | **Մասնագիտացված բժշկական ծառայություններ, այդ թվում** | **8,494,667.3** | **8,301,766.8** | **192,900.5** |
| | | 01 | Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ | 258,863.8 | 258,863.8 | 0.0 |
| | | 02 | Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ | 2,080,049.5 | 1,952,356.5 | 127,693.0 |
| | | 03 | Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 1,627,043.0 | 1,585,154.1 | 41,888.9 |
| | | 05 | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ | 282,101.6 | 262,904.0 | 19,197.6 |
| | | 06 | Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ | 4,113,609.4 | 4,113,143.3 | 466.1 |
| | | 07 | Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ | 133,000.0 | 129,345.1 | 3,654.9 |
| | **03** | | **Ստոմատոլոգիական ծառայություններ, այդ թվում** | **839,773.5** | **0.0** | **839,773.5** |
| | | 01 | Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 756,407.1 | | 756,407.1 |
| | | 02 | Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ | 83,366.4 | | 83,366.4 |
| | **04** | | **Պարաբժշկական ծառայություններ, այդ թվում** | **7,061,200.5** | **7,022,432.9** | **38,767.6** |
| | | 01 | Շտապ բժշկական օգնության ծառայություններ | 3,292,269.6 | 3,291,681.1 | 588.5 |
| | | 02 | Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | 3,202,028.0 | 3,163,908.5 | 38,119.5 |
| | | 03 | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ | 566,902.9 | 566,843.3 | 59.6 |

*Հավելված 11*

**2018 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և կազմակերպությունների համար հաստատված ընդհանուր պայմանագրային գումարների տարբերության չափով առաջացած մնացորդները**

հազար դրամ

| Խումբ | Դաս | Ծրագիր | Բուժօգնության և սպասարկման տեսակը | 2018 թվականի բյուջեով հաստատված | 2018 թվականի պայմանագրային գումար | Մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ-որից** | **67,380,695.6** | **64,350,399.9** | **3,030,295.7** |
| **02** | | | **ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ-որից** | **27,203,748.3** | **25,301,613.3** | **1,902,135.1** |
| | **01** | | **Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, այդ թվում** | **20,002,290.8** | **18,799,005.5** | **1,203,285.4** |
| | | 01 | Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ | 20,002,290.8 | 18,799,005.5 | 1,203,285.4 |
| | **02** | | **Մասնագիտացված բժշկական ծառայություններ, այդ թվում** | **3,650,925.9** | **3,409,303.6** | **241,622.3** |
| | | 01 | Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ | 258,863.8 | 258,863.8 | 0.0 |
| | | 02 | Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ | 2,484,755.3 | 2,243,133.0 | 241,622.3 |
| | | 04 | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ | 262,101.6 | 262,101.6 | 0.0 |
| | | 05 | Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ | 133,000.0 | 133,000.0 | 0.0 |
| | | 06 | Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի անցկացում | 303,534.3 | 303,534.3 | |
| | | 07 | Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում | 208,670.9 | 208,670.9 | 0.0 |
| | **03** | | **Ստոմատոլոգիական ծառայություններ, այդ թվում** | **457,227.4** | **0.0** | **457,227.4** |
| | | 01 | Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 407,227.4 | | 407,227.4 |
| | | 02 | Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ | 50,000.0 | | 50,000.0 |
| | **04** | | **Պարաբժշկական ծառայություններ, այդ թվում** | **3,093,304.2** | **3,093,304.2** | **0.0** |
| | | 01 | Շտապ բժշկական օգնության ծառայություններ | 3,093,304.2 | 3,093,304.2 | 0.0 |

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի*
*2018թ. մարտի 29-ի թիվ 9/1 որոշմամբ*

Հավելված 12

| ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերի 2015թ. ճշտված և հաստատված գումարներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անվանումը | Հաստատ-ված բյուջե | Պայմանա-գրային գումար | Տարե-սկզբի մնացորդ | ՀՀ կառ. 08.10.15թ. թիվ 1159-Ն որոշում | ՀՀ կառ. 03.12.15թ. թիվ 1409-Ն որոշում | ՀՀ ՖՆ 07.12.15թ. թիվ 01/38810-15 | Ընդամենը վերաբաշ-խում | Ճշտված բյուջե | Ֆինանսա-վորում |
| Բյուջեի հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ (Գրանցված մարդկանց թվաքանակ) | 2,935,000 (մարդ) | 2,980,389 (մարդ) | | | | | | | |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ (հազ. դրամ) | 10,921,339.2 | 10,791,102.6 | 130,236.6 | -85,000.0 | -11,000.0 | -364,000.0 | -460,000.0 | 10,461,339.2 | 10,429,228.8 |
| Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ (հազ. դրամ) | 4,000,883.6 | 3,986,693.5 | 14,190.1 | -7,000.0 | | -76,000.0 | -83,000.0 | 3,917,883.6 | 3,883,208.6 |
| Ընդամենը | 14,922,222.8 | 14,777,796.0 | 144,426.8 | -92,000.0 | -11,000.0 | -440,000.0 | -543,000.0 | 14,379,222.8 | 14,312,437.4 |

Հավելված 12

| ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերի 2016թ. ճշտված և հաստատված գումարներ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անվանումը | Հաստատ-ված բյուջե | Պայմանա-գրային գումար | Տարեսկզբի մնացորդ | ՀՀ կառ. 07.07.16թ. թիվ 724-Ն որոշում | ՀՀ ՖՆ 12.09.16թ. թիվ 1159-Ն որոշում | Ընդամենը վերաբաշ-խում | Ճշտված բյուջե | Ֆինանսավորում |
| Բյուջեի հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ (Գրանցված մարդկանց թվաքանակ) | 2,980,300 (մարդ) | 2,971,112 (մարդ) | | | | | | |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ (հազ. դրամ) | 11,213,704.3 | 11,211,977.3 | 1,727.0 | -18,146.0 | -236,120.0 | -254,266.0 | 10,959,437.9 | 10,906,441.6 |
| Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ (հազ. դրամ) | 4,100,138.9 | 4,093,217.5 | 6,921.4 | -1,055.0 | -77,000.0 | -78,055.0 | 4,022,084.2 | 3,978,248.3 |
| Ընդամենը | 15,313,843.2 | 15,305,194.8 | 8,648.4 | -19,201.0 | -313,120.0 | -332,321.0 | 14,981,522.1 | 14,884,689.9 |

Հավելված 12

| ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերի 2017թ. ճշտված և հաստատված գումարներ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անվանումը | Հաստատ-ված բյուջե | Պայմանա-գրային գումար | Տարեսկզբի մնացորդ | ՀՀ ՖՆ 19.09.16թ. 01/9-1/168868-17 | ՀՀ կառ. 30.11.17թ. Թիվ 1504-Ն որոշում | Ընդամենը վերաբաշ-խում | Ճշտված բյուջե | Ֆինանսավորում |
| Բյուջեի հաշվարկման հիմքում ընդունված սպասարկման տարածքի բնակչության թվաքանակ (Գրանցված մարդկանց թվաքանակ) | 2,980,300 (մարդ) | 2,971,112 (մարդ) | | | | | | |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ (հազ. դրամ) | 11,004,912.7 | 10,876,615.2 | 128,297.5 | -128,000.0 | -251,000.0 | -379,000.0 | 10,625,913.0 | 10,548,804.0 |
| Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ (հազ. դրամ) | 4,113,609.4 | 4,113,143.3 | 466.1 | | -86,000.0 | -86,000.0 | 4,027,609.0 | 3,980,985.0 |
| Ընդամենը | 15,118,522.1 | 14,989,758.5 | 128,763.6 | -128,000.0 | -337,000.0 | -465,000.0 | 14,653,522.0 | 14,529,789.0 |

Հավելված 13

հազ. դրամ

**Կազմակերպությունների տարեսկզբի պայմանագրային գումարները կնքվել են ավելի պակաս քան նախորդ տարվա փաստացի ֆինանսավորումները**

| | | | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | | 2018թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Կազմակերպություն** | **Մարզ** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ գումար** |
| 1 | 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | Երևան | 3,120,466 | 3,844,522 | 3,243,640 | 3,728,697 | 3,430,949 | 3,483,673 | 3,084,084 |
| 2 | 'Արաբկիր' Բժշկական Համալիր ՍՊԸ | Երևան | 2,755,581 | 2,868,021 | 2,764,119 | 2,912,112 | 2,887,952 | 3,023,747 | 2,980,306 |
| 3 | 'Մ. Հերացու անվ.Երեւանի պետ. բժշկական համալս.' ՊՈԱԿ | Երևան | 2,031,911 | 2,253,633 | 2,098,369 | 2,213,378 | 2,086,705 | 2,186,183 | 2,027,562 |
| 4 | 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | Երևան | 1,715,704 | 1,908,845 | 1,680,615 | 1,851,931 | 1,735,989 | 1,836,647 | 1,671,048 |
| 5 | 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | Երևան | 1,316,216 | 1,522,229 | 1,307,222 | 1,709,356 | 1,532,155 | 1,771,950 | 1,625,495 |
| 6 | 'Նորք Մարաշ' ԲԿ ՓԲԸ | Երևան | 1,297,616 | 1,355,744 | 1,284,695 | 1,356,013 | 1,228,634 | 1,315,477 | 1,058,028 |
| 7 | Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 610,671 | 684,215 | 640,536 | 711,987 | 643,608 | 684,049 | 713,021 |
| 8 | Գորիսի ԲԿ | Սյունիք | 548,131 | 629,235 | 562,983 | 659,075 | 624,629 | 601,386 | 546,471 |
| 9 | 'Նորք' ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց' ՓԲԸ | Երևան | 520,748 | 589,981 | 519,181 | 557,625 | 541,741 | 531,695 | 517,561 |
| 10 | 'Սրտաբանության ԳՀԻ' ՓԲԸ | Երևան | 210,998 | 273,428 | 230,481 | 299,592 | 265,927 | 280,303 | 257,676 |
| 11 | 'Արմամաքս' ՍՊԸ | Երևան | 199,103 | 222,266 | 199,103 | 233,450 | 200,683 | 216,681 | 204,464 |
| 12 | Մեդլայն կլինիկ ՍՊԸ | Երևան | 174,898 | 214,417 | 181,482 | 229,021 | 203,844 | 240,156 | 178,059 |
| 13 | 'Վ. Ավագյանի անվան ԲԿ' ՍՊԸ | Երևան | 159,743 | 192,036 | 156,565 | 184,297 | 185,700 | 203,850 | 161,330 |
| 14 | 'Նաիրի' ԲԱՄ ՓԲԸ | Երևան | 57,707 | 140,513 | 57,707 | 110,242 | 96,593 | 155,166 | 102,979 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **14,719,491** | **16,699,086** | **14,926,700** | **16,756,775** | **15,665,109** | **16,530,964** | **15,128,083** |

**Հավելված 14**

հազ. դրամ

**Կազմակերպությունների տարեսկզբի պայմանագրային գումարները կնքվել են ավելի շատ քան նախորդ տարվա փաստացի ֆինանսավորումները**

| | | | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | | 2018թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Կազմակերպություն** | **Մարզ** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ գումար** |
| 1 | «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Արագածոտն | 397,366 | 376,358 | 403,647 | 379,667 | 396,102 | 365,989 | 349,276 |
| 2 | «Արթիկի ԲԿ» ՓԲԸ | Շիրակ | 237,294 | 207,073 | 236,872 | 208,276 | 227,545 | 196,224 | 192,945 |
| 3 | «Ախուրյանի ԲԿ» ՓԲԸ | Շիրակ | 133,144 | 124,409 | 132,009 | 120,348 | 127,824 | 117,234 | 104,987 |
| 4 | «Կարմիր բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ | Երևան | 109,617 | 97,388 | 104,112 | 96,872 | 102,535 | 99,517 | 96,909 |
| 5 | «Ամասիայի ԱԿ» ՓԲԸ | Շիրակ | 72,903 | 65,280 | 73,440 | 66,428 | 71,865 | 64,196 | 62,955 |
| 6 | Սարուխանի ԲԱ | Գեղարքունիք | 70,442 | 64,065 | 70,940 | 59,895 | 68,946 | 59,956 | 63,580 |
| 7 | «Ախուրիկի ԲԱ» ՓԲԸ | Շիրակ | 53,239 | 46,944 | 53,668 | 46,890 | 52,206 | 45,110 | 51,145 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1,074,005** | **981,517** | **1,074,690** | **978,376** | **1,047,024** | **948,226** | **921,798** |

**Հավելված 15**

հազ. դրամ

## Կազմակերպությունների պայմանագրային գումարների 5%-գերազանցմամբ վերաբաշխումների օրինակներ

| N | Կազմակերպություն | Մարզ | տարեսկզբի պայմ. գումար | տարեվերջի պայմ գումար | Պայմ. Գումարի փոփոխություն | ֆինանսավորում | 5%ը գերազանցող գումար | Փոփոխության տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **2015թ.** | | | | |
| 1 | Ֆրանս-Հայ.սրտ. կենտրոն ՍՊԸ | Սյունիք | 29,133 | 86,197 | 57,064 | 62,292 | 55,607 | 195.9% |
| 2 | 'Նաիրի' ԲԱՄ ՓԲԸ | Երևան | 57,707 | 146,713 | 89,006 | 140,513 | 86,121 | 154.2% |
| 3 | Սլավմեդ ՍՊԸ | Երևան | 48,864 | 95,427 | 46,563 | 94,110 | 44,120 | 95.3% |
| 4 | Արինտերլև ՍՊԸ Վարդանանց ԲԿ ՓԲԸ | Երևան | 41,764 | 79,272 | 37,507 | 75,691 | 35,419 | 89.8% |
| 5 | 'Իզմիրլյան' ԲԿ ՓԲԸ | Երևան | 166,120 | 241,606 | 75,485 | 238,045 | 67,179 | 45.4% |
| 6 | 'Արտաբանության ԳՀԻ' ՓԲԸ | Երևան | 210,998 | 281,850 | 70,852 | 273,428 | 60,302 | 33.6% |
| 7 | 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | Երևան | 3,120,466 | 3,869,027 | 748,561 | 3,844,522 | 592,538 | 24.0% |
| 8 | 'Բեգլարյան ԲԿ' ՓԲԸ | Երևան | 294,430 | 363,844 | 69,414 | 356,893 | 54,693 | 23.6% |
| 9 | Մեդլայն կլինիկ ՍՊԸ | Երևան | 174,898 | 215,433 | 40,535 | 214,417 | 31,790 | 23.2% |
| 10 | 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | Երևան | 1,316,216 | 1,540,512 | 224,297 | 1,522,229 | 158,486 | 17.0% |
| 11 | Գորիսի ԲԿ | Սյունիք | 548,131 | 629,438 | 81,307 | 629,235 | 53,900 | 14.8% |
| 12 | 'Նորք' ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց' ՓԲԸ | Երևան | 520,748 | 591,768 | 71,020 | 589,981 | 44,983 | 13.6% |
| 13 | 'Մ. Հերացու անվ.Երեւանի պետ. բժշկական համալս.' ՊՈԱԿ | Երևան | 2,031,911 | 2,287,840 | 255,930 | 2,253,633 | 154,334 | 12.6% |
| 14 | Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 610,671 | 687,584 | 76,913 | 684,215 | 46,379 | 12.6% |
| 15 | 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | Երևան | 1,715,704 | 1,911,138 | 195,434 | 1,908,845 | 109,649 | 11.4% |
| 16 | 'Շենգավիթ' ԲԿ ՓԲԸ | Երևան | 701,691 | 767,751 | 66,060 | 754,635 | 30,976 | 9.4% |

| N | Կազմակերպություն | Մարզ | տարեսկզբի պայմգումար | տարեվերջի պայմ գումար | Պայմ. Գումարի փոփոխություն | Ֆինանսավորում | 5%ը գերազանցող գումար | Փոփոխության տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **2016թ.** | | | | |
| 1 | Սլավմեդ ՍՊԸ | Երևան | 46,261 | 104,296 | 58,034 | 104,295 | 55,721 | 125.4% |
| 2 | 'Նաիրի' ԲԱՄ ՓԲԸ | Երևան | 57,707 | 110,242 | 52,535 | 110,242 | 49,650 | 91.0% |
| 3 | Արինտերլև ՍՊԸ Վարդանանց ԲԿ ՓԲԸ | Երևան | 79,727 | 138,420 | 58,692 | 135,962 | 54,706 | 73.6% |
| 4 | Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա | Լոռի | 166,053 | 256,467 | 90,414 | 253,671 | 82,111 | 54.4% |
| 5 | Ֆրանս-Հայ.սրտ. կենտրոն ՍՊԸ | Սյունիք | 67,862 | 103,462 | 35,600 | 103,462 | 32,207 | 52.5% |
| 6 | 'Իզմիրլյան' ԲԿ ՓԲԸ | Երևան | 164,294 | 223,606 | 59,312 | 217,102 | 51,097 | 36.1% |
| 7 | 'Սրտաբանության ԳՀԻ' ՓԲԸ | Երևան | 230,481 | 303,084 | 72,603 | 299,592 | 61,079 | 31.5% |
| 8 | 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | Երևան | 1,307,222 | 1,714,537 | 407,315 | 1,709,356 | 341,954 | 31.2% |
| 9 | Մեդլայն կլինիկ ՍՊԸ | Երևան | 181,482 | 229,119 | 47,637 | 229,021 | 38,563 | 26.2% |
| 10 | 'Բեգլարյան ԲԿ' ՓԲԸ | Երևան | 306,333 | 368,696 | 62,363 | 365,412 | 47,047 | 20.4% |
| 11 | Գորիսի ԲԿ | Սյունիք | 562,983 | 660,625 | 97,642 | 659,075 | 69,493 | 17.3% |
| 12 | Վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական կենտրոն ՊՓԲԸ | Երևան | 343,375 | 397,615 | 54,240 | 397,555 | 37,071 | 15.8% |
| 13 | 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | Երևան | 3,243,640 | 3,745,601 | 501,961 | 3,728,697 | 339,779 | 15.5% |
| 14 | Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 640,536 | 721,800 | 81,264 | 711,987 | 49,237 | 12.7% |
| 15 | 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | Երևան | 1,680,615 | 1,861,301 | 180,686 | 1,851,931 | 96,655 | 10.8% |
| 16 | 'Սուրբ Աստվածամայր ԲԿ' ՓԲԸ | Երևան | 1,344,888 | 1,452,523 | 107,635 | 1,449,310 | 40,391 | 8.0% |

| 2017թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Կազմակերպություն | Մարզ | տարեսկզբի պայմգումար | տարեվերջի պայմ գումար | Պայմ. Գումարի փոփոխություն | Ֆինանսավորում | 5%ը գերազանցող գումար | Փոփոխության տոկոս |
| 1 | Արմենակ և Աննա Թադեոսեանների բժշկական կենտրոն հիմնադրամ | Արագածոտն | 9,864 | 30,160 | 20,296 | 30,147 | 19,803 | 205.8% |
| 2 | Նաիրի ԲԱՄ ՓԲԸ | Երևան | 96,593 | 167,621 | 71,028 | 155,166 | 66,199 | 73.5% |
| 3 | Մեդլայն կլինիկ ՍՊԸ | Երևան | 203,844 | 240,288 | 36,445 | 240,156 | 26,252 | 17.9% |
| 4 | Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն | Երևան | 1,532,155 | 1,799,695 | 267,540 | 1,771,950 | 190,933 | 17.5% |
| 5 | Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ | Երևան | 1,228,634 | 1,315,553 | 86,919 | 1,315,477 | 25,487 | 7.1% |
| 6 | Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ | Երևան | 1,735,989 | 1,851,981 | 115,992 | 1,836,647 | 29,192 | 6.7% |

**Հավելված 16**

հազ. դրամ

| | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | | 2015թ. | 2016թ. | 2017թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **տարեսկզբի պայմ. գումար** | **Ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **Ֆինանսավորում** | **տարեսկզբի պայմ. գումար** | **Ֆինանսավորում** | **Ֆինանսավորման և տարեսկզբի պայմ. գումարի տարբերություն** | | |
| Երևան | 38,607,405 | 41,333,672 | 38,965,843 | 41,973,861 | 39,934,328 | 40,960,297 | 2,726,267 | 3,008,018 | 1,025,969 |
| մարզեր | 26,117,567 | 25,891,461 | 26,072,887 | 25,969,706 | 25,288,360 | 24,896,504 | -226,106 | -103,181 | -391,856 |
| Ամբողջը | 64,724,972 | 67,225,133 | 65,038,730 | 67,943,567 | 65,222,688 | 65,856,801 | 2,500,161 | 2,904,837 | 634,113 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | **Հավելված 17** |
| | | | | | հազ. դրամ |

| **2015-2017թթ. պետական բյուջեով նախատեսված առողջապահական կազմակերպությունների հետ կնքված առողջապահական ծրագրերի վերաբերյալ** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Հաստատված բյուջե | Բյուջեի փոփոխություն | Ճշտված բյուջե | Հաստատված բյուջեի և տարեսկզբի կնքված պայմ. գումարի մնացորդ | Ֆինանսավորում |
| 2015թ. | 66,350,719 | 1,415,000 | 67,765,719 | 1,625,747 | 67,225,133 |
| 2016թ. | 67,874,020 | 536,193 | 68,410,213 | 2,835,248 | 67,943,567 |
| 2017թ. | 67,165,432 | 397,444 | 67,562,876 | 1,942,847 | 66,801,857 |
| ***2017թ. | 945,056.0 հազ. դրամ ֆինանսավորվել է ապահովագրական ընկերություններին | | | | |

Հավելված 18

Հազ. դրամ

| Հ/Հ | Մատակարար | Գնման ձև | 2015թ. | | 2016թ. | | 2017թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Պայմանա-գրային գումար | Ֆինան-սավորում | Պայմանա-գրային գումար | Ֆինան-սավորում | Պայմանա-գրային գումար | Ֆինան-սավորում |
| 1 | «Օրթեզ» ՍՊԸ | ԲԸԱՀ | 61,580.0 | 61,580.0 | 54,580.0 | 54,580.0 | 36,349.4 | 36,365,0 |
| 2 | «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտրոն» ՓԲԸ | ԲԸԱՀ | 29,011.0 | 29,011.0 | 22,011.0 | 22,011.0 | 14,335.6 | 14,058,7 |
| 3 | «Գյումրու Արիե Կուփերսթոքի անվան վերականգնողական կենտրոն» ՓԲԸ | ԲԸԱՀ | 8,220.0 | 8,220.0 | 5,220.0 | 5,220.0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | | | **98,811.0** | **98,811.0** | **81,811.0** | **81,811.0** | **50,685.0** | **50,423.7** |

Հավելված 19

Հազ. դրամ

| Օրթեզ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | Քանակ | Միավորի գին 2016 | Միջին կշռված գին | Տարբերության գումար | Գումար | Տարբերության գումար |
| «Օրթեզ» ՍՊԸ | **1042** | **45,9** | **27,7** | **18,2** | **47,827.8** | **18964,4** |

Հավելված 20

## Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր

հազ. դրամ

| | Անվանումը | 2015թ. | | 2016թ. | | 2017թ | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարեսկզբի մնացորդ և բանկային տոկոսներ | Փաստացի վճարում | Տարեսկզբի մնացորդ և բանկային տոկոսներ | Փաստացի վճարում | Տարեսկզբի մնացորդ և բանկային տոկոսներ | Փաստացի վճարում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | ***Դրամաշնորհներ այլ կազմակերպություններին*** | | | | | | | |
| GLS | «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ | *111,769.6* | **130,596.1** | *45,996.6* | **458,974.9** | *11,516.7* | **301,740.3** | 891,311.3 |
| GLS | «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ | *56,284.7* | **74,745.2** | | | | | 74,745.2 |
| GLS | «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» | | **5,760.0** | *5,760.0* | **22,782.4** | *5,320.0* | - **18.0** | 28,524.4 |
| | | | | | | | | - |
| 2 | ***Այլ ծախսեր*** | | | | | | | - |
| GLS | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | | 50,197.7 | | 92,089.0 | | 95,994.3 | 238,281.0 |
| GLS | Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | | 60,381.7 | | 330,584.1 | | 308,404.6 | 699,370.4 |
| GLS | Այլ մեքենաներ և սարքավորումներ | | 445,855.0 | | 110,104.6 | | | 555,959.6 |
| GLS | Շենքերի, շինությունների վերանորոգում և նախագծում | | 54,261.9 | | | | | 54,261.9 |
| GLS | Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր | | 100.0 | | 49,522.1 | | 44,752.6 | 94,374.7 |
| | | | | | | | | - |
| **Ընդամենը այդ թվում՝** | | *168,054.3* | **821,897.5** | *51,756.6* | **1,064,057.0** | *16,836.7* | **750,873.8** | **2,636,750.5** |
| | Համաֆինանսավորում | | | | 80,778.80 | | 48,372.20 | |

Հավելված 21

2015 թ. Գլոբալ ֆոնդի դրամաշնորհային միջոցների հաշվին սարքավորումների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցող կազմակերպությունների գնառաջարկների վերաբերյալ

| չափաբաժին | Անվանումը | Քանակ | Նախահաշվային գին մեկ միավորի համար | **Հաղթող կազմակերպություն** | «Վիոլա» ՍՊԸ | «Տելիա-Մեդ» Ա/Ձ | «Մեդտեխսերվի» | «Դիասերվ» | «Փինք ֆլամինգո» | «Էսզեթ ֆարմա» | «Կոնցեռն-էներգոմաշ» | «Մեդիտեք» |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով | գինը ԱԱՀ-ով |
| 1 | Դոնորական բազկաթոռ | 3 | 770,000 | **Չկայացած** | 4,440,000 | | 2,685,000 | | | | 8,700,000 | |
| 2 | Թրոմբոցիտների պահպանման տատանվող (ճոճանակով) թվային թերմոստատիկ | 1 | 6,000,000 | **«Վիոլա» ՍՊԸ 5,880,000** | 5,880,000 | | | | | | 4,759,000 | |
| 3 | Ռենտգենյան նկարահանումների թվայնացնող համակարգ | 1 | 18,000,000 | **«Մեդիտեք» 13,650,000** | | | | 16,500,000 | | 19,152,000 | | 13,650,000 |
| 4 | Շարժական թվային ռենտգեն նկարահանման սարք | 1 | 59,500,000 | **«Մեդիտեք» 52,250,000** | | 54,000,000 | 56,900,000 | 55,700,000 | | 67,149,000 | 119,000,000 | 52,250,000 |
| 5 | Սակավաչաբաժն ային շարժական թվային տեսածրող ֆլուորոգրաֆիայի համալիր | 1 | 87,000,000 | **«Մեդիտեք» 76,980,000** | | | | | | | | 76,980,000 |
| 6 | Քարշիչ պահարան | 1 | 17,000,000 | **Չկայացած** | | | | | 23,988,000 | | 4,860,000 | |
| 7 | Ռենտգեն պաշտպանիչ ապակի | 1 | 1,000,000 | **«Մեդիտեք» 728,000** | | | | | | | | 728,000 |

Հավելված 22

| ՀՀ Առողջապահության նախարարության կողմից Գլոբալ հիմնադրամի միջոցների հաշվին 2015 թ. կատարված գնումների գործընթացի վերաբերյալ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Բժկական սարքավորումների ձեռք բերման նպատակով ծախսվել է 446 մլն դրամ, այդ թվում՝ <<Մեդիտեք>> ՍՊԸ-ի հետ պայմանագրեր է կնքվել 425 մլն դրամի:** | | | | | |
| **N** | **Սարքավորման անվանումը** | **Քանակ** | **Ապրանքի պայմանագրային արժեք** | **մաքսային արժեք** | **տարբերություն** |
| 1 | Ռենտգենյան նկարահանումների թվայնացնող համակարգ | 1 հատ | 13 650,0 | 3 391,0 | 10 259,0 |
| 2 | Շարժական թվային ռենտգեն նկարահանման սարք | 1 հատ | 52 250,0 | 21 234,0 | 31 016,0 |
| 3 | Շարժական թվային տեսաձրող ֆլուորոգրաֆիայի համալիր (հավելված 1) | 1 հատ | 76 980,0 | 40 536,0 | 36 444,0 |
| 4 | Ժապավենային ֆլյուորոգրաֆիկ սարքավորման մոդերնիզացնող համալիր (հավելված 2) | 12 հատ | 281 880,0 | 138 132,0 | 143 748,0 |
| **ընդամենը** | | | **424 760,0** | **203 293,0** | **221 467,0** |
| * 2-րդ, 3-րդ, 4-րդ տողերի ԱԱՀ-ն = 0 դրամ | | | | | |

**ՀԱՎԵԼՎԱԾ**

# ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

## ՏԵՂԵԿԱՆՔ
## Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի, նրանց վերաբաշխումների և պայմանագրային գումարների փոփոխությունների օրինականության վերաբերյալ առարկություններ և պարզաբանումներ

### Ա. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն

**1. 2015 թվական**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության բնակչության թիվը կազմել է 3,017,100: 2015 թվականի բյուջետային ծախսերը հաշվարկվել են 2,935,000 բնակչության թվաքանակից ելնելով: 2015 թվականի պայմանագրային գումարները հաշվարկվել են 2,980,389 բնակչության թվաքանակով, որը ներառում է 2014 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա բնակչության թվաքանակը, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող Ռուսաստանի Դաշնության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամները, սիրիահայերը, այլ երկրներում ծնված, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի ծնող ունեցող և հանրապետությունում բնակվող երեխաները: Այս պայմաններում բյուջետային ծախսերի չգերազանցման համար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 2 հավելվածի (այսուհետ՝ հավելված) 7-րդ կետը, նախքան պայմանագրային գումարների հաշվարկը և պայմանագրերի կնքումը վերահաշվարկվել են մեկ շնչի հաշվով նախատեսված նորմատիվները, և ծախսերը համապատասխանեցվել է բյուջեով նախատեսված միջոցներին: Քանի որ արտահիվանդանոցային ծառայությունների շրջանակներում իրականացվող բյուջետային ծրագրերից ըստ մարդաշնչի ֆինանսավորման սկզբունքներ մասնակի կիրառվում են միայն «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ», և «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում, ուստի տվյալները այսուհետ կբերվեն միայն այս ծրագրերի մասով: Պետական բյուջեով նշված ծրագրերի մասով 2015 թվականին նախատեսված է եղել 14,922,222.8 հազար դրամ: 2015 թվականին, ելնելով 2,980,389 բնակչության թվաքանակից, նշված ծրագրերով կնքվել է 14,777,796.0 հազար դրամի պայմանագրեր կամ ծրագրերով մնացորդը կազմել է 144,426.8 հազար դրամ (ՀՀ ՎՊ կողմից արձանագրված է 381,777.0 հազար դրամ՝ արտահիվանդանոցային ծառայությունների բոլոր ծրագրերով): Մնացորդը պայմանավորված է ոչ թե բնակչության թվաքանակով, այլ այն հանգամանքով, որ տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի և ընտանեկան բժիշկների կողմից գրանցված բնակչության առավելագույն թվաքանակի գերազանցման պայմաններում գերազանցող բնակչության թվաքանակի համար կիրառվում է մեկ շնչի համար հաստատված ավելի ցածր նորմատիվ (մեկ շնչի հաշվով նախատեսված տարեկան նորմատիվի 80 տոկոսը՝ այսուհետ՝ ոչ լիարժեք նորմատիվ): Նշված ոչ լիարժեք նորմատիվը որոշմամբ սահմանված կարգով հաստատված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից՝ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ: Այս նորմատիվի կիրառման արդյունքում կազմակերպությունների հաշվարկային պայմանագրային գումարներում կատարվել են համապատասխան նվազեցումներ:

Տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից նշված ծրագրերի շրջանակներում ըստ մարդաշնչի ֆինանսավորվող ծառայությունները (առողջության առաջնային պահպանում և նեղ մասնագիտացված ծառայություններ) հատուցվել են ամբողջությամբ: Ծրագրերի շրջանակներում իրականացվում են նաև այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրումը, առողջության առաջնային պահպանման բժշկի գործունեության ցուցանիշների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորումը,

գյուղական բնակավայրերում աշխատող ընտանեկան բժիշկների կողմից մասնագիտացված խորհրդատվության ուղեգրումները ֆինանսավորվում են փաստացի կատարված աշխատանքների դիմաց (համապատասխանաբար՝ դեղերի փաստացի ծախսի ֆինանսավորում, գործունեության փաստացի ցուցանիշների ֆինանսավորում, հաճախումների ֆինանսավորում): Թվարկված երեք ծառայությունների մասով 2015 թվականի տարեսկզբին կնքվել է 1,906,701.9 հազար դրամ: Նշված ծառայությունների մասով առկա են թերակատարումներ և, ելնելով փաստացի կատարված աշխատանքներից, կազմակերպությունների պայմանագրային գումարները տարվա ընթացքում նվազեցվել են 379,225.7 հազար դրամ: Նշված 379,225.7 հազար դրամ թերակատարումներից 132,810.0 հազար դրամը կազմում են անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի ծախսերը, ուստի ակնհայտ է, որ տնտեսման պայմաններում դեղերի ծախսերին լրացուցիչ գումարներ չեն ուղղվել: Ոչ լիարժեք նորմատիվներով ներկայացված աշխատանքների մասով տնտեսումները կազմել են 190,694.8 մլն դրամ: Հիմք ընդունելով որոշման հավելվածի 35-րդ կետի 2)-րդ ենթակետը՝ առկա տնտեսումներից և մնացորդներից ըստ անհրաժեշտության իրականացվել են 543,000.0 հազար դրամի վերաբաշխումներ առողջապահական գերակայություններ հանդիսացող այլ ծրագրերով և ծառայություններով կատարված փաստացի աշխատանքների հատուցմանը: Ընդ որում իրականացված վերաբաշխումներից «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի միջոցները ավելացվել են 56.0 մլն դրամով:

***<u>Արդյունքում՝ ամբողջությամբ պահպանվել են որոշման հավելվածի 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները (հավելված 1.1):</u>***

**2. 2016 թվական**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության բնակչության թիվը կազմել է 3,010,598: 2015 թվականի օգոստոս ամսին ներկայացված բյուջետային հայտով 2016 թվականի բյուջետային ծախսերը հաշվարկվել են 2,980,300 բնակչության թվաքանակից ելնելով, որը ներառում է 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա 2,946,815 բնակչության թվաքանակը, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող Ռուսաստանի Դաշնության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամները, սիրիահայերը, այլ երկրներում ծնված, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի ծնող ունեցող և հանրապետությունում բնակվող երեխաները: 2016 թվականի պայմանագրային գումարները հաշվարկվել են 2,791,112 բնակչության թվաքանակով, որը ներառում է 2015 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա բնակչության թվաքանակը, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող Ռուսաստանի Դաշնության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամները, սիրիահայերը, այլ երկրներում ծնված, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի ծնող ունեցող և հանրապետությունում բնակվող երեխաները: Պետական բյուջեով «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ», և «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի մասով 2016 թվականին նախատեսված է եղել 15,313,843.2 հազար դրամ: 2016 թվականին, ելնելով 2,791,112 բնակչության թվաքանակից, նշված ծրագրերով կնքվել է 15,305,194.8 հազար դրամ պայմանագրեր կամ ծրագրերով մնացորդը կազմել է 8,648.4 հազար դրամ (ՀՀ ՎՊ կողմից արձանագրված է 243,391.7 հազար դրամ՝ արտահիվանդանոցային ծառայությունների բոլոր ծրագրով):

Տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից նշված ծրագրերի շրջանակներում ըստ մարդաշնչի ֆինանսավորվող ծառայությունները (առողջության առաջնային պահպանում և նեղ մասնագիտացված ծառայություններ) հատուցվել են ամբողջությամբ: Սակայն ծրագրերի շրջանակներում շարունակվել են իրականացվել այնպիսի ծառայություններ ինչպիսիք են անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրումը, առողջության առաջնային պահպանման բժշկի գործունեության ցուցանիշների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորումը, գյուղական բնակավայրերում աշխատող ընտանեկան բժիշկների կողմից մասնագիտացված խորհրդատվության ուղեգրումները, որոնք ֆինանսավորվում են փաստացի կատարված

աշխատանքների դիմաց: Թվարկված երեք ծառայությունների մասով 2016 թվականի տարեսկզբին կնքվել է 1,862,836.9 հազար դրամ: Նշված ծառայություններով, ելնելով փաստացի կատարված աշխատանքներից, կազմակերպությունների պայմանագրային գումարները տարվա ընթացքում նվազեցվել են 296,431.4 հազար դրամ: Նշված տնտեսումներից 124,828.7 հազար դրամը կազմում են անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի ծախսերը, ուստի ակնհայտ է, որ տնտեսման պայմաններում նշված ծախսերին լրացուցիչ գումարներ չեն ուղղվել: Ոչ լիարժեք նորմատիվներով ներկայացված աշխատանքների մասով տնտեսումները կազմել են 191,398.1 մլն դրամ: Հիմք ընդունելով որոշման հավելվածի 35-րդ կետի 2)-րդ ենթակետը՝ առկա տնտեսումներից և մնացորդներից ըստ անհրաժեշտության իրականացվել են 332,321.0 հազար դրամի վերաբաշխումներ առողջապահական գերակայություններ հանդիսացող այլ ծրագրերով և ծառայություններով կատարված փաստացի աշխատանքների մասնակի հատուցմանը: Ընդ որում տարվա ընթացքում «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի միջոցները ավելացվել են 64.5 մլն դրամով:

***<u>Արդյունքում՝ ամբողջությամբ պահպանվել են որոշման հավելվածի 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները (հավելված 1.2):</u>***

**3. 2017 թվական**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության բնակչության թիվը կազմել է 2,998,577: 2016 թվականի հունիսի 1-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա բնակչության թվաքանակը կազմել է 3,022,839 կամ վիճակագրական տվյալներից 24,262-ով ավելի: 2016 թվականի օգոստոս ամսին ներկայացված բյուջետային հայտով 2016 թվականի բյուջետային ծախսերը հաշվարկվել են 2,980,300 բնակչության թվաքանակից ելնելով: 2016 թվականի հունիսի 1-ի դրությամբ տվյալների շտեմարանում առկա բնակչության 3,022,839 թվաքանակով բյուջետային հայտի ներկայացումը ՀՀ պետական բյուջեից կպահանջեր լրացուցիչ միջոցներ, ուստի հիմք են ընդունվել 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված բնակչության թվաքանակի տվյալները: Հաշվի առնելով առողջապահական էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացը, ինչպես նաև նոր էլեկտրոնային համակարգում ԱԱՊ բժշկի մոտ գրանցված բնակչության վերագրանցումները (գործընթացը բավականին աշխատատար է և մինչև օրս դեռևս իրականացվում են վերագրանցումներ), ինչպես պետական բյուջեի ծախսերի հաշվարկման, այնպես էլ 2017 թվականի պայմանագրային գումարների հաշվարկման համար հիմք ընդունել 2016 թվականի պայմանագրային գումարների հաշվարկման համար կիրառված բնակչության թվաքանակը և Երևանի քաղաքապետի ու ՀՀ մարզպետների կցագրումները: Արդյունքում 2017 թվականի պայմանագրային գումարները հաշվարկվել են 2,791,442 բնակչության թվաքանակով: Պետական բյուջեով «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ», և «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի մասով 2017 թվականին նախատեսված է եղել 15,118,522.1 հազար դրամ: Ելնելով 2,791,442 բնակչության թվաքանակից, նշված ծրագրերով կնքվել է 14,989,866.7 հազար դրամ պայմանագրեր կամ ծրագրերով մնացորդը կազմել է 128,655.4 հազար դրամ (ՀՀ ՎՊ կողմից արձանագրված է 1,199,739.1 հազար դրամ՝ արտահիվանդանոցային ծառայությունների բոլոր ծրագրով): Մնացորդը պայմանավորված է ոչ թե բնակչության թվաքանակով, այլ այն հանգամանքով, որ տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի և ընտանեկան բժիշկների կողմից գրանցված բնակչության առավելագույն թվաքանակի գերազանցման պայմաններում գերազանցող բնակչության թվաքանակի համար կիրառվում է ոչ լիարժեք նորմատիվ: Նշված ոչ լիարժեք նորմատիվը որոշմամբ սահմանված կարգով հաստատված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից՝ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ: Այս նորմատիվի կիրառման արդյունքում կազմակերպությունների հաշվարկային պայմանագրային գումարներում կատարվել են համապատասխան նվազեցումներ:

Տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից նշված ծրագրերի շրջանակներում ըստ մարդաշնչի ֆինանսավորվող ծառայությունները (առողջության առաջնային պահպանում և նեղ

մասնագիտացված ծառայություններ) հատուցվել են ամբողջությամբ: Սակայն ծրագրերի շրջանակներում շարունակվել են իրականացվել այնպիսի ծառայություններ ինչպիսիք են անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրումը, առողջության առաջնային պահպանման բժշկի գործունեության ցուցանիշների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորումը, գյուղական բնակավայրերում աշխատող ընտանեկան բժիշկների կողմից մասնագիտացված խորհրդատվության ուղեգրումները, որոնք ֆինանսավորվում են փաստացի կատարված աշխատանքների դիմաց, սակայն ոչ ավելի քան հաստատված պայմանագրային գումարները: Թվարկված երեք ծառայությունների մասով 2017 թվականի տարեսկզբին կնքվել է 1,788,570.4 հազար դրամ: Նշված ծառայություններով, ելնելով փաստացի կատարված աշխատանքներից, կազմակերպությունների պայմանագրային գումարները տարվա ընթացքում նվազեցվել են 356,556.4 հազար դրամ: Նշված տնտեսումներից 205,223.7 հազար դրամը կազմում են անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի ծախսերը, ուստի ակնհայտ է, որ տնտեսման պայմաններում նշված ծախսերին լրացուցիչ գումարներ չեն ուղղվել: Ոչ լիարժեք նորմատիվներով ներկայացված աշխատանքների մասով տնտեսումները կազմել են 158,024.7 մլն դրամ: Հիմք ընդունելով որոշման հավելվածի 35-րդ կետի 2)-րդ ենթակետը՝ առկա տնտեսումներից և մնացորդներից ըստ անհրաժեշտության իրականացվել են 465,000.0 հազար դրամի վերաբաշխումներ առողջապահական գերակայություններ հանդիսացող այլ ծրագրերով և ծառայություններով կատարված փաստացի աշխատանքների մասնակի հատուցմանը: Ընդ որում տարվա ընթացքում «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում առկա տնտեսումների հաշվին կազմակերպությունների պայմանագրային գումարները ելնելով կատարված փաստացի աշխատանքներից ավելացվել են 109,091.0 մլն դրամով:

***<u>Արդյունքում ամբողջությամբ պահպանվել են որոշման հավելվածի 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները (հավելված 1.3):</u>***

**Բ. Կազմակերպությունների պայմանագրային գումարների վերաբաշխումներ**

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվում են ՀՀ պետական բյուջեով նախատեսված առանձին ծրագրերով, այլ ոչ կազմակերպություններով: ՀՀ ՎՊ հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունները իրականացվել են կազմակերպությունների ընդհանուր պայմանագրային գումարներով: Նման մոտեցման պայմաններում հաշվի չեն առնվում ՀՀ պետական բյուջեի առանձին ծրագրերով նախատեսված միջոցների աճը/նվազումը, ՀՀ պետական բյուջեով նոր ծրագրերի նախատեսումը և տվյալ կազմակերպության կողմից նոր ծառայությունների կազմակերպումը և նախորդ տարի իրականացվող ծառայությունների կամ ծրագրերի դադարումը և այլն: Միևնույն ժամանակ նման մոտեցման ժամանակ, կազմակերպության ընդհանուր պայմանագրային գումարներով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում հաշվի չեն առնվում, որ կազմակերպությունների կողմից իրականացվում են նաև այնպիսի ծրագրեր որոնք չեն կարգավորվում ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ: ՀՀ ՎՊ տեղեկանքի հավելված 4-ում և 5-ում ընդգրկված կազմակերպությունները իրականացնում են ՀՀ պետական բյուջեի մինչև 20 առողջապահական ծրագիր: Այդ ծրագրերը տարիների ընթացքում ունեցել են աճի/նվազման միտումներ (հավելված 2), որոնցից կախված տվյալ կազմակերպության տվյալ ծրագիրը կարող է աճել/նվազել: Կազմակերպության ընդհանուր պայմանագրային գումարներում կոնկրետ ծրագրի տեսակարար կշռից և դրա աճից/նվազումից կախված կազմակերպության ընդհանուր պայմանագրային գումարները կարող է փոփոխվել ոչ համաչափ: Հավելված 4-ով և հավելված 5-ով ներկայացված ուսումնասիրություններին հնարավոր կլինի անդրադառնալ եթե վերլուծությունները իրականացվեն ըստ պետական բյուջեի առանձին ծրագրերի: Կազմակերպությունների հիվանդանոցային ծրագրերի պայմանագրային գումարները 2015-2017 թվականներին հաշվարկվել են ըստ առանձին ծրագրերի՝ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերով:

***Ամփոփելով, ցանկանում ենք նշել, որ կազմակերպության ընդհանուր պայմանագրային գումարը, որպես վերլուծության առանցքային ցուցանիշ դիտարկելը անտեսում է պետական բյուջեով առողջապահական պետական ծրագրերի գաղափարը և բյուջետային ծրագրավորման հիմնական սկզբունքները (պետական բյուջեի առողջապահության բաժնի տեսանկյունից գերակայություն են ծրագրերը այլ ոչ դրանք իրականացնող կազմակերպությունները), ինչը բերում է ուսումնասիրության ոչ ճիշտ մեթոդաբանության և արդյունքում ոչ ճիշտ եզրակացությունների:***

Նույն մոտեցումն է կիրառվել կազմակերպությունների պայմանագրային գումարների փոփոխությունների ուսումնասիրության ընթացքում՝ ՀՀ կառավարության մարտի 4-ի 2004 թվականի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 35-րդ կետի պահանջի տիրույթում դիտարկվել են կազմակերպությունների ընդհանուր պայմանագրային գումարները: Այս մոտեցման պայմաններում հաշվի չեն առնվում այն ծրագրերը որոնք չեն կարգավորվում նշված որոշմամբ, օրինակ «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» (կարգավորվում է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի N 806-Ն որոշմամբ), «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության ծառայություններ» (կարգավորվում է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27 N 375-Ն որոշմամբ) և այլն: Որոշման N 2 հավելվածի 35-րդ կետը սահմանում է ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրային գումարների միջև իրականացվող վերաբաշխումների կարգը, հետևաբար կազմակերպությունների ընդհանուր պայմանագրային գումարների վերլուծության ընթացքում հաշվի չեն առնվում նաև որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 6)-րդ կետի համաձայն տարվա ընթացքում պետական բյուջեի առանձին ծրագրերով դեպքերի ավելացման համար նախատեսված միջոցների բաշխման հանգամանքները: Հաշվի չի առնվել նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 3413-Ա հրամանով իրականացված փոփոխությունները համաձայնեցված են ՀՀ վարչապետի հետ (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 02/23.13/20251-15 հանձնարարականը ուսումնասիրության ընթացքում տրամադրվել է հանձնաժողովի անդամներին): Հավելված 3-ով բերված է կազմակերպությունների 2015 թվականի պայմանագրային գումարներում կատարված փոփոխությունների բացվածքը ըստ առանձին ծրագրերի: ՀՀ ՎՊ տեղեկանքի հավելված 6-ում 2015 թվականի համար առանձնացված են թվով 16 կազմակերպություններ, որոնց 2015 թվականի ընդհանուր պայմանագրային գումարներում կատարվել են 2,205,948.0 հազար դրամ փոփոխություններ: Առանձին ծրագրերով դիտարկելիս պարզ է դառնում, որ կատարված փոփոխություններից 926,346.0 հազար դրամը իրականացվել է «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» (կարգավորվում է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի N 806-Ն որոշմամբ), «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության ծառայություններ» (կարգավորվում է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշմամբ) ծրագրերով և այս ծրագրերի վրա չի տարածվում ՀՀ կառավարության մարտի 4-ի 2004 թվականի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 35-րդ կետի պահանջները: Իսկ կատարված 530,350.0 հազար դրամի փոփոխությունների համար ստացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությունը: Մնացած փոփոխությունների հիմնական մասը իրականացվել են ՀՀ կառավարության մարտի 4-ի 2004 թվականի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 6)-րդ կետով սահմանված կարգով: Օրինակ՝ պայմանագրային գումարների մնացած 749,252.0 հազար դրամ փոփոխություններից միայն 507,930.0 հազար դրամը ՀՀ կառավարության 13.08.2015թ N910-Ն որոշմամբ «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծրագրին հատկացված միջոցների բաշխումն է (ՀՀ ԱՆ 24.09.2015թ. N2600-Ա հրաման՝ հիմք ՀՀ կառավարության մարտի 4-ի 2004 թվականի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 6)-րդ կետ): Մնացած փոփոխությունների հիմնական մասը նույնպես իրականացվել ՀՀ պետական բյուջեով առանձին ծրագրերում դեպքերի ավելացման համար նախատեսված գումարների բաշխման սկզբունքով:

***Ամփոփելով՝ ցանկանում ենք նշել, որ 2015 թվականի օրինակով, պարզ է դառնում, որ ոչ ճիշտ մեթոդաբանության կիրառման արդյունքում, որի դեպքում հաշվի չեն առնվում առանձին ծրագրերի կարգավորման առանձնահատկությունները և պետական բյուջեով առողջապահական ծրագրերի արդյունավետության բարձրացման համար նպատակային ավելացված միջոցների բաշխումները, կատարվում են ոչ ճիշտ եզրահանգումներ:***
***Ցանկանում են նշել, որ 2016-2017 թվականներին պայմանագրային գումարներում փոփոխությունները նույնպես իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով:***

Հավելված 6-ով ներկայացված ուսումնասիրություններին հնարավոր կլինի անդրադառնալ, եթե վերլուծությունները իրականացվեն ըստ առանձին կազմակերպությունների առանձին ծրագրերի, որոնցում հաշվի կառնվեն վերոգրյալ հանգամանքները:

Պայմանագրային գումարներում փոփոխությունները իրականացվում են ելնելով փաստացի կատարված աշխատանքներից՝ կանխատեսվող կատարողականների հիման վրա: Ինչպես հայտնի է, հագեցվածության և մասնագիտական ներուժի առկայությամբ Երևան քաղաքի կազմակերպությունները ավելի բարվոք վիճակում են, քան ՀՀ մարզերում գործող առողջապահական կազմակերպությունները: Այս պատճառով հանրապետության տարբեր տարածաշրջաններից դեպի Երևան քաղաքի կազմակերպություններ դիմող հիվանդների հոսքը բավականին բարձր է (Երևանում բժշկական օգնություն ստացողների 30-40%-ը ՀՀ մարզերից են), որն էլ իր հերթին բերում է ֆինանսական միջոցների կենտրոնացում Երևան քաղաքի առողջապահական կազմակերպություններում: ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռնարկվում են միջոցառումներ ՀՀ մարզերում տեղակայված կազմակերպությունների վերանորոգման, սարքավորումներով և մասնագետներով հագեցման ուղղությամբ:

### Գ. «Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» ծրագրի վերաբերյալ

«Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» ծրագրի ուսումնասիրության արդյունքում արձանագրված կետերի վերաբերյալ հայտնում ենք՝

- Հաշվի առնելով, որ նշված ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունները ներառում են ոչ միայն օրթեզների և կորսետների պատրաստումը, այլ նաև դրանց գծով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները (խորհրդատվություն, հսկողություն, բուժման ընթացքի գնահատում), ուստի վերջիններս դիտարկվել են որպես արտահիվանդանոցային ծառայություններ, որոնք ներառված են պետական գնումները կարգավորող օրենսդրությամբ սահմանված բացառիկ, հեղինակային իրավունքով պայմանավորված գնումների ցանկում:
- Հաշվի առնելով մատուցվող ծառայությունների առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ծառայության դեպքում մատակարարները ցուցաբերում են անհատական մոտեցում՝ պայմանավորված յուրաքանչյուր երեխայի ֆիզիկական և զարգացման դինամիկայով, սահմանել հստակ քանակներ և տեխնիկական բնութագրեր ամեն առանձին դեպքի համար եղել է խնդրահարույց, ուստի կիրառվել է միջինացված գնի սկզբունքը:
- Ինչ վերաբերվում է մատակարարների կողմից պատրաստվող արտադրանքի որակի հնարավոր իջեցմանը և դրա՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից որևէ կերպ չվերահսկելուն՝ հայտնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարությունը երբևէ թեժ գծի միջոցով կամ գրավոր որևէ բողոք չի ստացել: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ ծրագրի շահառուները գտնվում են մշտական դիսպանսեր հսկողության տակ նաև այլ բուժհաստատություններում, պատասխանատու ստորաբաժանումը բուժմանը մասնակցող այլ մասնագետների կողմից ևս դիտողություններ և բողոքներ չի ստացել:

- Ստուգման ժամանակահատվածում իրականացված գների վերանայումները կատարվել են փաստացի մատուցված ծառայությունների կոնյուկտուրայի ուսումնասիրության հիման վրա, որի արդյունքներով ստացված նոր միջինացված գների վերաբերյալ մատակարարներն առարկություններ չեն ունեցել և կնքել են ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ առավել ցածր գներով:

Միաժամանակ, հայտնում ենք, որ հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները և բարձրաձայնված մտահոգությունները, վերջինս 2016 թվականի ավարտից նախաձեռնել է մի կողմից գների կանոնակարգմանը, մյուս կողմից ծառայությունների մրցակցային եղանակով ձեռքբերմանն ուղղված աշխատանքներ՝ հիմքում ունենալով բարելավել մատուցվող ծառայությունների որակը, ապահովել շարունակականությունը և չխաթարել արդեն բուժման մեջ գտնվող երեխաների բուժման ընթացքը: ***Արդյունքում՝ ոլորտի լավագույն մասնագետների մասնակցությամբ ձևավորված հանձնաժողովի կողմից մշակվել են օրթեզների և կորսետների հնարավոր ընդգրկուն և համապարփակ տեխնիկական բնութագրեր, որոնց հիման վրա 2018 թվականին պետության կարիքների համար հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունները ձեռք են բերվել մրցակցային եղանակով:***

**Դ. «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» ծրագրի վերաբերյալ**

Հեմոդիալիզի անցկացման մեկ սեանսի 18100 դրամ արժեքը սահմանված է դեռևս 2008 թվականից: Գինը հաշվարկվել և հաստատվել է այդ ժամանակահատվածում գործող մեթոդաբանության համաձայն: 2008-2017 թվականների ընթացքում հանրապետություն տեղի է ունեցել նվազագույն աշխատավարձի 60% աճ, 52% գնաճ: Այս ամենի հետ մեկտեղ հեմոդիալիզի մեկ սեանսի արժեքը չի վերանայվել պետական բյուջեի միջոցների սղության պատճառով: Միաժամանակ ՀՀ ՎՊ հանձնաժողովի տեղեկանքում բերված տվյալներից երևում է, որ կազմակերպություններում մեկ սեանսի միջին ծախսը կազմում է 20090 դրամ: Գնագոյացման մեթոդաբանության փոփոխության և դրա հիմքում կազմակերպությունների փաստացի ծախսերը հիմք ընդունելով մեկ սեանսի համար կստացվի ավելի բարձր արժեք, քան ներկայումս հատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Հարկ է նշել, որ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկանքում նշված է «Բի-Բրաուն» ֆիրմայի արտադրության հեմոդիալիզատորի արժեքը, այնինչ կազմակերպությունների մի մասը հեմոդիալիզը անցկացնում է «Ֆրեզեն» ֆիրմայի արտադրության տարբեր տեսակի հեմոդիալիզատորներով, որոնց արժեքները էականորեն տարբերվում են «Բի-Բրաուն» ֆիրմայի արտադրության հեմոդիալիզատորի արժեքից: Միաժամանակ հայտնում ենք, որ աղյուսակում բերված 9 կազմակերպություններից 7-ը պետության 100 տոկոս մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերություններ են, որոնք գնումներն իրականացնում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և այս պայմաններում հեմոդիալիզատորների գները կարգավորվում են շուկայում՝ մրցույթային կարգով:

Ի հավելումն վերոգրյալի՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է մինչև 2019 թվականի ավարտը մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն՝ հիմնված բժշկատնտեսագիտական ստանդարտների և շուկայական առողջ մրցակցության վրա:

**Ե. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի վերաբերյալ**

1990-2017 թվականների ընթացքում ընդյալնվել է կեսարյան հատումով ծննդալուծում իրականացնելու բացարձակ և հարաբերական ցուցումները, կատարելագործվել է կեսարյան հատումներ իրականացնելու տեխնիկան, կիրառվում է առավել անվտանգ անձգայնացման մեթոդներ, ինչպես նաև կրճատվել է շուրջօրյա հինանդանոցային հետվիրահատական ժամանակահատվածը: Այս զարգացումներով է հիմնականում պայմանավորված կեսարյան

հատումների տրամաբանական աճը, որը իր հերթին ազդեցություն է ունեցել է մանկաբարձությունը բնութագրող առողջապահական ցուցանիշների բարելավման վրա: Մասավորապես.

1) Մայրական մահացության եռամյա ցուցանիշը 100,000 կենդանածնի հաշվով 2000 թվականին կազմել է 40.8, 2016 թվականին՝ 20.1: Այսինքն մայրական մահացության վերը նշված ցուցանիշը կրճատվել է շուրջ 2 անգամ:
2) Միչև 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 1000 կենդանածնի հաշվով 1990 թվականի կազմել է 18,5, 2016 թվականին՝ 8,64: Այսինքն մանկական մահացության վերը նշված ցուցանիշը կրճատվել է ավելի քան 2 անգամ,

Վերոնշյալ ցուցանիշները ներառված են ԱՀԿ կողմից երկրների առողջապահության համակարգը բնութագրող առանցքային ցուցանիշների շարքում:

Հավելված 1.1

**2015 թվական**

| Բաժին, խումբ, դաս, ծրագիր | Ծրագրի և ծառայության անվանումը | 2015 թվականի բյուջե | 2015 թվականի տարեսկզբի պայմանագրային գումար | Մնացորդ | 2015 թվականի տարեվերջի պայմանագրային գումար | Պայմանագրային գումարներում կատարված փոփոխություններ | Բյուջեում կատարված վերաբաշխումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը, այդ թվում՝** | **14,922,222.8** | **14,777,796.0** | **144,426.8** | **14,376,535.3** | **-401,260.7** | **-543,000.0** |
| **07.02.01.01** | **Բնակչության առողջության առաջնային պահպանում այդ թվում** | **10,921,339.2** | **10,791,102.5** | **130,236.7** | **10,460,313.0** | **-330,789.5** | **-460,000.0** |
| 1 | Տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի կողմից բժշկական օգնություն և սպասարկում, որից | | 9,153,090.5 | | 9,122,046.7 | -31,043.8 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | *9,263,597.9* | | *9,263,597.9* | | |
| *1.2* | *գրանցված բնակչության առավելագույն սահմանի գերազանցող թվաքանակի համար կատարված փոփոխություններ* | | *-110,507.4* | | *-141,551.2* | | |
| 2 | ԱԱՊ բժշկի գործունեության արդյունքների գնահատման արդյունքների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորում | | 292,494.2 | | 125,558.5 | -166,935.7 | |
| 3 | Անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում | | 1,345,517.8 | | 1,212,707.8 | -132,810.0 | |
| **07.02.02.05** | **Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | **4,000,883.6** | **3,986,693.5** | **14,190.1** | **3,916,222.3** | **-70,471.2** | **-83,000.0** |
| 1 | Մասնագիտացված բժշկական օգնություն, որից | | 3,718,003.6 | | 3,727,012.4 | 9,008.8 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | 3,776,156.0 | | 3,776,156.0 | | |
| *1.2* | *Մասնագիտացված բուժօգնություն ոչ փվալ մասնագիտացում ունեցող, համատեղության կարգով աշխատող, ինչպես նաև գրանցված բնակչության առավելագույն սահման գերազանցման համար կատարված փոփոխություններ* | | -58,152.4 | | -49,143.6 | | |
| 2 | Ընտանեկան բժիշկների կողմից կոնսուլտացիաների ուղեգրում մեծահասակների համար | | 268,689.9 | | 189,209.9 | -79,480.0 | |

Հավելված 1.2

**2016 թվական**

| Բաժին, խումբ, դաս, ծրագիր | Ծրագրի և ծառայության անվանումը | 2016 թվականի բյուջե | 2016 թվականի տարեսկզբի պայմանագրային գումար | Մնացորդ | 2016 թվականի տարեվերջի պայմանագրային գումար | Պայմանագրային գումարներում կատարված փոփոխություններ | Բյուջեում կատարված վերաբաշխումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը, այդ թվում՝** | **15,313,843.2** | **15,305,194.8** | **8,648.4** | **14,980,816.8** | **-324,378.0** | **-332,321.1** |
| **07.02.01.01** | **Բնակչության առողջության առաջնային պահպանում այդ թվում** | **11,213,704.3** | **11,211,977.3** | **1,727.0** | **10,958,938.1** | **-253,039.2** | **-254,266.4** |
| 1 | Տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի կողմից բժշկական օգնություն և սպասարկում, որից | | 9,618,899.1 | | 9,586,820.5 | -32,078.6 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | *9,723,452.1* | | 9,723,452.1 | | |
| *1.1* | *գրանցված բնակչության առավելագույն սահմանի գերազանցող թվաքանակի համար կատարված փոփոխություններ* | | *-104,553.0* | | *-136,631.6* | | |
| 2 | ԱԱՊ բժշկի գործունեության արդյունքների գնահատման արդյունքների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորում | | 292,234.0 | | 196,102.1 | -96,131.9 | |
| 3 | Անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում | | 1,300,844.2 | | 1,176,015.5 | -124,828.7 | |
| **07.02.02.05** | **Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | **4,100,138.9** | **4,093,217.5** | **6,921.4** | **4,021,878.7** | **-71,338.8** | **-78,054.7** |
| 1 | Մասնագիտացված բժշկական օգնություն, որից | | 3,823,458.8 | | 3,827,590.8 | 4,132.0 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | *3,882,357.3* | | *3,882,357.3* | | |
| *1.2* | *Մասնագիտացված բուժօգնություն ոչ տվյալ մասնագիտացում ունեցող, համատեղության կարգով աշխատող, ինչպես նաև գրանցված բնակչության առավելագույն սահման գերազանցման համար կատարված փոփոխություններ* | | *-58,898.5* | | *-54,766.5* | | |
| 2 | Ընտանեկան բժիշկների կողմից կոնսուլտացիաների ուղեգրում մեծահասակների համար | | 269,758.7 | | 194,287.9 | -75,470.8 | |

Հավելված 1.3

**2016 թվական**

| Բաժին, խումբ, դաս, ծրագիր | Ծրագրի և ծառայության անվանումը | 2016 թվականի բյուջե | 2016 թվականի տարեսկզբի պայմանագրային գումար | Մնացորդ | 2016 թվականի տարեվերջի պայմանագրային գումար | Պայմանագրային գումարներում կատարված փոփոխություններ | Բյուջեում կատարված վերաբաշխումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը, այդ թվում՝** | **15,118,522.1** | **14,989,866.7** | **128,655.4** | **14,651,550.0** | **-338,316.7** | **-465,000.0** |
| **07.02.01.01** | **Բնակչության առողջության առաջնային պահպանում այդ թվում** | **11,004,912.7** | **10,876,718.7** | **128,194.0** | **10,624,852.0** | **-251,866.7** | **-379,000.0** |
| 1 | Տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի կողմից բժշկական օգնություն և սպասարկում, որից | | 9,360,029.9 | | 9,375,590.0 | 15,560.1 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | *9,473,427.4* | | 9,473,427.4 | | |
| *1.1* | *գրանցված բնակչության առավելագույն սահմանի գերազանցող թվաքանակի համար կատարված փոփոխություններ* | | *-113,397.5* | | *-97,837.4* | | |
| 2 | ԱԱՊ բժշկի գործունեության արդյունքների գնահատման արդյունքների հիման վրա իրականացվող խրախուսական ֆինանսավորում | | 292,256.1 | | 230,053.0 | -62,203.1 | |
| 3 | Անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում | | 1,224,432.7 | | 1,019,209.0 | -205,223.7 | |
| **07.02.02.05** | **Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | **4,113,609.4** | **4,113,148.0** | **461.4** | **4,026,698.0** | **-86,450.0** | **-86,000.0** |
| 1 | Մասնագիտացված բժշկական օգնություն, որից | | 3,841,266.4 | | 3,843,946.0 | 2,679.6 | |
| *1.1* | *բժշկական օգնության և սպասարկման համար հաշվարկված պայմանագրային գումար* | | *3,904,133.3* | | *3,904,133.3* | | |
| *1.2* | *Մասնագիտացված բուժօգնություն ոչ տվյալ մասնագիտացում ունեցող, համատեղության կարգով աշխատող, ինչպես նաև գրանցված բնակչության առավելագույն սահման գերազանցման համար կատարված փոփոխություններ* | | *-62,866.9* | | *-60,187.3* | | |
| 2 | Ընտանեկան բժիշկների կողմից կոնսուլտացիաների ուղեգրում մեծահասակների համար | | 271,881.6 | | 182,752.0 | -89,129.6 | |

**Հավելված 2**

| Ծրագրի անվանումը | 2014 թվականի ֆինանսավորում | 2015 թվականի բյուջե | | | 2016 թվականի բյուջե | | | 2017 թվականի բյուջե | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բյուջե | ֆինանսավորում | բյուջեի աճ/նվազում նախորդ տարվա ֆինանսավորման համեմատ | բյուջե | ֆինանսավորում | բյուջեի աճ/նվազում նախորդ տարվա ֆինանսավորման համեմատ | բյուջե | ֆինանսավորում | բյուջեի աճ/նվազում նախորդ տարվա ֆինանսավորման համեմատ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ-որից** | **60,424,444.0** | **67,350,718.8** | **67,208,756.6** | **6,926,274.9** | **67,874,020.2** | **67,943,566.9** | **665,263.6** | **67,165,431.8** | **66,801,858.0** | **-778,135.1** |
| **ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ-որից** | **23,799,070.3** | **27,238,736.8** | **26,555,288.6** | **3,439,666.5** | **27,557,599.5** | **27,033,850.2** | **1,002,310.9** | **27,400,554.0** | **26,474,039.4** | **366,703.8** |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | 9,308,975.1 | 10,921,339.2 | 10,429,228.8 | 1,612,364.1 | 11,213,704.3 | 10,906,441.6 | 784,475.5 | 11,004,912.7 | 10,548,804.1 | 98,471.1 |
| Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ | 234,000.0 | 249,863.8 | 249,861.4 | 15,863.8 | 258,863.8 | 258,863.8 | 9,002.4 | 258,863.8 | 278,385.8 | 0.0 |
| Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ | 1,812,871.8 | 1,980,049.5 | 1,937,251.5 | 167,177.7 | 1,980,049.5 | 2,069,048.8 | 42,798.0 | 2,080,049.5 | 2,229,612.3 | 11,000.7 |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 1,339,835.2 | 1,519,789.2 | 1,471,314.5 | 179,954.0 | 1,632,493.8 | 1,532,473.8 | 161,179.3 | 1,627,043.0 | 1,474,341.2 | 94,569.2 |
| ՄԻԱՀ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ | 132,098.8 | 138,988.7 | 138,988.7 | 6,889.9 | 285,155.8 | 284,903.8 | 146,167.1 | 282,101.6 | 262,901.8 | -2,802.2 |
| Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ | 3,213,862.6 | 4,000,883.6 | 3,883,208.6 | 787,021.0 | 4,100,138.9 | 3,978,248.3 | 216,930.3 | 4,113,609.4 | 3,980,985.1 | 135,361.1 |
| Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ | 140,059.0 | 142,000.0 | 141,892.0 | 1,941.0 | 133,000.0 | 132,997.9 | -8,892.0 | 133,000.0 | 151,985.6 | 2.1 |
| Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 765,575.1 | 805,276.5 | 803,114.2 | 39,701.4 | 805,276.5 | 748,246.3 | 2,162.3 | 756,407.1 | 637,645.7 | 8,160.8 |
| Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ | 79,987.8 | 87,716.4 | 78,995.0 | 7,728.6 | 87,716.4 | 77,259.2 | 8,721.4 | 83,366.4 | 0.0 | 6,107.2 |
| Շտապ բժշկական օգնության ծառայություններ | 3,179,105.0 | 3,292,269.6 | 3,323,501.5 | 113,164.6 | 3,292,269.6 | 3,241,597.1 | -31,231.9 | 3,292,269.6 | 3,226,420.1 | 50,672.5 |
| Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | 3,191,803.7 | 3,568,683.9 | 3,567,303.1 | 376,880.2 | 3,202,028.0 | 3,237,456.2 | -365,275.1 | 3,202,028.0 | 3,118,298.4 | -35,428.2 |
| Ձորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ | 400,896.3 | 531,876.4 | 530,629.3 | 130,980.1 | 566,902.9 | 566,313.4 | 36,273.6 | 566,902.9 | 564,659.4 | 589.5 |
| **ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ծառայություններ, որից** | **36,158,620.6** | **39,597,419.1** | **40,004,992.1** | **3,438,798.5** | **39,801,857.8** | **40,331,002.7** | **-203,134.3** | **39,250,314.9** | **39,806,524.1** | **-1,080,687.8** |
| Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ | 2,179,254.9 | 1,908,294.4 | 2,212,399.2 | -270,960.5 | 1,909,980.4 | 1,997,650.4 | -302,418.8 | 1,852,683.5 | 2,022,476.7 | -144,966.9 |
| Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ | 6,575,719.1 | 7,202,267.1 | 7,438,190.8 | 626,548.0 | 6,205,645.1 | 6,378,501.4 | -1,232,545.7 | 6,202,710.5 | 6,330,986.1 | -175,790.9 |
| Զինծառայողներին, ինչպես նաև փարկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ | 3,441,186.8 | 2,683,555.0 | 2,849,410.4 | -757,631.8 | 2,201,234.0 | 2,337,131.9 | -648,176.4 | 2,200,218.3 | 2,203,333.6 | -136,913.6 |
| Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության ծառայություններ | 1,411,216.3 | 3,305,484.0 | 2,257,886.6 | 1,894,267.8 | 2,579,566.0 | 2,644,436.9 | 321,679.4 | 2,483,217.2 | 2,869,952.0 | -161,219.7 |
| Պետական հիմնարկների և կազմակերպությունների բժշկական օգնության ծառայություններ (արտաքսուցե) | | 1,000,000.0 | 992,683.0 | 1,000,000.0 | | | -992,683.0 | | | 0.0 |
| Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ | 1,211,646.2 | 1,425,100.8 | 1,425,043.1 | 213,454.6 | 1,453,302.3 | 1,405,028.6 | 28,259.2 | 1,414,143.5 | 1,329,921.4 | 9,114.9 |
| Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ | 1,239,661.7 | 1,221,046.8 | 1,220,066.8 | -18,614.9 | 1,225,326.8 | 1,218,621.6 | 5,260.0 | 1,219,950.8 | 1,252,246.1 | 1,329.2 |
| Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ | 181,344.1 | 185,709.8 | 185,644.0 | 4,365.7 | 186,359.8 | 181,344.1 | 715.8 | 185,171.4 | 173,067.3 | 3,827.3 |
| Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ | 2,347,098.3 | 2,613,416.9 | 2,727,160.7 | 266,318.6 | 2,887,100.1 | 2,703,736.5 | 159,939.4 | 2,815,412.0 | 2,666,059.6 | 111,675.5 |
| Ձորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ | 936,115.1 | 871,144.9 | 857,707.2 | -64,970.2 | 883,369.6 | 845,942.2 | 25,662.4 | 882,962.0 | 851,654.6 | 37,019.8 |
| ՈՒռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ | 1,133,382.4 | 1,121,485.3 | 1,120,940.3 | -11,897.1 | 1,125,414.3 | 1,139,028.3 | 4,474.0 | 1,117,578.8 | 1,134,418.4 | -21,449.5 |
| Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ | 606,693.2 | 613,346.8 | 613,072.3 | 6,653.6 | 615,495.8 | 610,473.9 | 2,423.5 | 610,801.9 | 609,627.4 | 328.0 |
| Թրաֆիկինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ | 0.0 | 2,200.0 | 0.0 | 2,200.0 | 2,200.0 | 0.0 | 2,200.0 | 2,200.0 | 0.0 | 2,200.0 |
| Սրտի անհետաձգելի վիրահատությունների ծառայություններ | | 500,000.0 | 951,094.5 | 500,000.0 | 3,085,722.0 | 3,615,925.3 | 2,134,627.5 | 3,084,298.1 | 3,478,582.4 | -531,627.2 |
| Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ | 6,879,804.7 | 6,922,000.8 | 6,876,900.9 | 42,196.1 | 6,945,253.8 | 6,720,279.0 | 68,352.9 | 6,693,910.2 | 6,382,812.0 | -26,368.8 |
| Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ | 334,112.4 | 372,790.2 | 343,981.0 | 38,677.8 | 374,096.2 | 354,514.0 | 30,115.2 | 366,976.7 | 337,284.8 | 12,462.7 |
| Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ | 7,681,385.5 | 7,570,939.3 | 7,876,746.1 | -110,446.2 | 8,043,154.6 | 8,142,552.0 | 166,408.5 | 8,039,443.0 | 8,148,761.1 | -103,109.0 |
| Անպտուղ զույգերի համար վերատադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ | | 78,637.0 | 56,065.2 | 78,637.0 | 78,637.0 | 35,836.6 | 22,571.8 | 78,637.0 | 15,340.7 | 42,800.4 |
| **Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ** | **466,753.1** | **514,562.9** | **648,475.8** | **47,809.8** | **514,562.9** | **578,714.0** | **-133,912.9** | **514,562.9** | **521,294.5** | **-64,151.1** |

1 Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրեր որոնք չեն կարգավորվում ՀՀ կառավարության 04.03.2004թ N 318-Ն որոշմամբ
2 Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրեր որոնք կարգավորվում են ՀՀ կառավարության 04.03.2004թ N 318-Ն որոշմամբ

| | | | |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ-փոփոխություններ, այդ թվում | 2,205,948 | հազար դրամ | **Հավելված 3** |
| Ծրագրեր որոնք չեն կարգավորվում ՀՀ կառավարության 04.03.2004թ N 318-Ն որոշմամբ | 926,346 | հազար դրամ | |
| ՀՀ վարչապետի համաձայնեցմամբ | 530,350 | հազար դրամ | |
| Այլ փոփոխություններ | 749,252 | հազար դրամ | |

| N | Կազմակերպություն | Մարզ | Տարեսկզբի պայմանագրային գումար | Տարեվերջի պայմանագրային գումար | Պայմանագրային գումարի փոփոխություն | Փոփոխություններ համաձայնեցված ՀՀ վարչապետի հետ | Այլ փոփոխություններ | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ՀՀ կառավորության 13.08.2015թ N910-Ն որոշմամբ «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծրագրին հատկացված միջոցների բաշխում՝ ՀՀ ԱՆ 24.09.2015թ. N2600-Ա հրամանով | Այլ փոփոխություններ |
| **2015 թվական** | | | | | | | | | |
| | **Ընդամենը, այդ թվում** | | **11,589,452** | **13,795,400** | **2,205,948** | **0** | **0** | **0** | **0** |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | **1,992,512** | **2,918,858** | **926,346** | **0** | **0** | **0** | **0** |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | **9,596,940** | **10,876,542** | **1,279,602** | **530,350** | **749,251** | **507,930** | **241,321** |
| 1 | Ֆրանս-Հայ.սրտ. կենտրոն ՍՊԸ | Այունիք | 29,133 | 86,197 | 57,064 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | | | 0 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 29,133 | 86,197 | 57,064 | -1,166 | 58,230 | 57,800 | 430 |
| 2 | 'Նաիրի' ԲԱՄ ՓԲԸ, այդ թվում | Երևան | 57,707 | 146,713 | 89,006 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 51,032 | 133,882 | 82,850 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 6,675 | 12,831 | 6,156 | 1,156 | 5,000 | | 5,000 |
| 3 | Սլավմեդ ՍՊԸ | Երևան | 48,864 | 95,427 | 46,563 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 16,638 | 18,348 | 1,710 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 32,227 | 77,079 | 44,852 | 35,352 | 9,500 | | 9,500 |
| 4 | Արինտերլև ՍՊԸ Վարդանանց ԲԿ ՓԲԸ | Երևան | 41,764 | 79,272 | 37,507 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 4,034 | 30,215 | 26,180 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 37,730 | 49,057 | 11,327 | 11,327 | 0 | | |
| 5 | 'Իզմիրլյան' ԲԿ ՓԲԸ | Երևան | 166,120 | 241,606 | 75,485 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 106,391 | 148,391 | 42,000 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 59,729 | 93,214 | 33,485 | 12,485 | 21,000 | | 21,000 |
| 6 | 'Արտաքանության ԳՀԻ' ՓԲԸ | Երևան | 210,998 | 281,850 | 70,852 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 51,816 | 82,855 | 31,039 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 159,182 | 198,995 | 39,813 | 7,513 | 32,300 | 7,300 | 25,000 |
| 7 | 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | Երևան | 3,120,466 | 3,869,027 | 748,561 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 694,351 | 1,005,808 | 311,457 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 2,426,115 | 2,863,219 | 437,105 | 80,569 | 356,535 | 285,140 | 71,395 |
| 8 | 'Բեգլարյան ԲԿ' ՓԲԸ | Երևան | 294,430 | 363,844 | 69,414 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 6,290 | 8,290 | 2,000 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 288,141 | 355,555 | 67,414 | 30,414 | 37,000 | | 37,000 |
| 9 | Մեդլայն կլինիկ ՍՊԸ | Երևան | 174,898 | 215,433 | 40,535 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 153,062 | 184,062 | 31,000 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 21,835 | 31,370 | 9,535 | 9,535 | 0 | | |
| 10 | 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | Երևան | 1,316,216 | 1,540,512 | 224,297 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 298,627 | 420,620 | 121,993 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 1,017,588 | 1,119,892 | 102,304 | 33,144 | 69,160 | 68,160 | 1,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Գորիսի ԲԿ | Սյունիք | 548,131 | 629,438 | 81,307 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 91,329 | 111,329 | 20,000 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 456,802 | 518,109 | 61,307 | 32,904 | 28,403 | | 28,403 |
| 12 | 'Նորք' ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց' ՓԲԸ | Երևան | 520,748 | 591,768 | 71,020 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 82,212 | 140,303 | 58,091 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 438,535 | 451,465 | 12,929 | 12,929 | 0 | | |
| 13 | 'Մ. Հերացու անվ.Երեւանի պետ. բժշկական համալս.' ՊՈԱԿ | Երևան | 2,031,911 | 2,287,840 | 255,930 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 190,071 | 227,472 | 37,401 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 1,841,839 | 2,060,368 | 218,529 | 152,279 | 66,250 | 63,830 | 2,420 |
| 14 | Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | Շիրակ | 610,671 | 687,584 | 76,913 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 73,253 | 81,753 | 8,500 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 537,418 | 605,831 | 68,413 | 37,713 | 30,700 | 25,700 | 5,000 |
| 15 | 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | Երևան | 1,715,704 | 1,911,138 | 195,434 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 104,637 | 223,763 | 119,126 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 1,611,067 | 1,687,375 | 76,308 | 74,195 | 2,113 | | 2,113 |
| 16 | 'Շենգավիթ' ԲԿ ՓԲԸ | Երևան | 701,691 | 767,751 | 66,060 | | | | |
| | **1-ին խումբ ծրագրեր** | | 68,767 | 101,767 | 33,000 | | | | |
| | **2-րդ խումբ ծրագրեր** | | 632,924 | 665,984 | 33,060 | | 33,060 | | 33,060 |

**Հավելված**

## ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/5 որոշման հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» միջանկյալ արձանագրության, մասնավորապես՝ առողջապահության ֆինանսավորման հիմնահարցերի վերաբերյալ առարկություններ և պարզաբանումներ**

### *1. ՍՈՑՓԱԹԵԹԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Արձանագրությամբ ներկայացված առանցքային եզրակացության համար հիմք հանդիսացող վերլուծությունն ամբողջությամբ կառուցված է ի սկզբանե ոչ ճիշտ մեթոդաբանությամբ կատարված հաշվարկների վրա, ինչի հետևանքով ՀՀ կառավարության 2017թ. 915-Ն որոշմամբ 2017թ. հոկտեմբերի 1-ից ներդրված ապահովագրական համակարգի և պետական բյուջեի միջոցների ծախսման արդյունավետության վերաբերյալ ձևավորվել է ոչ ճիշտ արդյունքային ցուցանիշ: Մասնավորապես, խոսքը գնում է համակարգի փաստացի վնասաբերության ցուցանիշի (հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին) մասին, որը հաշվարկվում է էլեկտրոնային առողջապահական համակարգում արձանագրված անձնավորված տվյալների հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 915-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ կիրառելով ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգերով սահմանված մոտեցումները և մեթոդաբանությունը: Այսպիսով 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար հաշվարկված վնասաբերության (հատուցումների հարաբերությունն ապահովագրավճարներին) ***<u>փաստացի ցուցանիշը կազմել է 88.5% կառավարության որոշմամբ սահմանված ուղենշային 90%-ի դիմաց, այնինչ արձանագրությունում նշվել է 76.4% (էջ 5, տող 14):</u>*** Արձանագրությունում վնասաբերության՝ իրականությանը չհամապատասխանող ցուցանիշը ստացվել է այն պատճառով, որ դրա բաղկացուցիչ տարրի՝ ապահովագրական հատուցումների մեծության հաշվարկման համար ապահովագրական ընկերությունների կողմից հաստատված և ապահովագրական ընկերության և բուժհաստատության միջև կնքված համագործակցության պայմանագրերի հիման վրա վճարման ենթակա գումարների փոխարեն ***<u>օգտագործվել է ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության պրակտիկայում չկիրառվող «Ընդամենը հատուցման ներկայացված կատարողական» անվանմամբ ցուցանիշ, չնայած այն հանգամանքին, որ ապահովագրական ընկերությունների կողմից հաստատված և վճարման ենթակա գումարների ճիշտ ցուցանիշը գրավոր տեղեկանքի տեսքով ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված է եղել սպուգող խմբին</u>***:

Ելնելով վերոգրյալից՝ հաշվետու եռամսյակում հատուցումների գումարը կազմել է ոչ թե 722.1 մլն ՀՀ դրամ (արձանագրության աղյուսակ 2), այլ 836.2 մլն ՀՀ դրամ, հետևաբար ապահովագրական ընկերությունների տնօրինմանը մնացած (ՀՀ կառավարության 27 մարտի 2014թ, N 375-Ն որոշմամբ սահմանված ուղենշային 90%-ը չգերազանցող) գումարները կազմել են ոչ թե 128.4 մլն ՀՀ դրամ (արձանագրության աղյուսակ 2), այլ՝ 14.2 մլն ՀՀ դրամ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ համակարգի հաշվետվողականության և թափանցիկության բարձր մակարդակի ապահովման նպատակով ապահովագրական ընկերությունները միացվել են էլեկտրոնային առողջապահական համակարգին, որի

սպասարկման գումարը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 7.4 մլն ՀՀ դրամ, ընդ որում՝ նշված ծախսերը ներառված չեն եղել ապահովագրավճարների հաշվարկներում և փաստացի ապահովագրական ընկերությունների համար հանդիսացել են լրացուցիչ գործավարման ծախս:

***<u>Ամփոփելով՝ ապահովագրական ընկերությունների կողմից փնօրինվող լրացուցիչ գումարի ցուցանիշը կազմել է ընդամենը 6.8 մլն ՀՀ դրամ արձանագրությունում նշված 128.4 մլն ՀՀ դրամի փոխարեն, այսինքն արձանագրությունում նշված ցուցանիշը գերագնահատված է 19 անգամ, իսկ ստացված 6.8 մլն ՀՀ դրամը, ըստ էության, վկայում է այն մասին, որ կատարված բոլոր հաշվարկները և կանխատեսումները ճիշտ են եղել և գործ ունենք հավանականության տեսության համաձայն վիճակագրական թույլատրելի շեղման հետ:</u>***

## 2. ՈՉ ՃԻՇՏ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՈՉ ՃԻՇՏ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արձանագրությունում նշված իրականությանը չհամապատասխանող վնասաբերության ցուցանիշը փորձ է արվել մեկնաբանել և ուղենշային վնասաբերությունից «ցածր» լինելը ենթադրությունների միջոցով փորձ է արվել հիմնավորել լրացուցիչ բացառությունների կիրառման և փաթեթից ծառայությունների կրճատման գործոններով: Որպես ավելացված բացառության օրինակ՝ արձանագրությունում մատնանշվել է հետևյալը՝ *«առողջության վատթարացումները (բացառությամբ վնասվածքների), որոնք առաջացել են շահառուի կողմից ալկոհոլի կամ առանց բժշկի նշանակման դեղերի օգտագործման դեպքում կամ հետևանքով»*: ***<u>Բավական է նշել միայն, որ մինչ օրս նշված բացառության կետով որևէ ծառայության մատուցում չի մերժվել:</u>*** Ինչ վերաբերում է ուղենշայինից «ցածր» վնասաբերության ցուցանիշը մատուցված ծառայությունների տեսակների քանակի կրճատման գործոնով պայմանավորելու ենթադրությանը, ապա հարկ է նկատել, որ կրճատված ծառայությունների ներքո արձանագրությունում ներկայացվել են գնացանկից հանված ծառայությունները, ինչն օբյեկտիվ ցուցանիշ չի կարող լինել, քանի որ ***<u>շահառուներին մատուցվող ծառայությունների ծավալը սահմանվում է ոչ թե գնացանկով, այլ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշմամբ,</u>*** իսկ գնացանկը հանդիսանում է միայն ապահովագրական ընկերության և բժշկական կազմակերպության միջև փոխադարձ հաշվարկների իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ընդ որում նույն փաստաթղթով սահմանվում է, որ ***<u>բոլոր այն դեպքերում, երբ ծածկույթում նախատեսված ծառայության համար գնացանկում բացակայում է համապատասխան ծառայության անվանմամբ գինը, կիրառվում է գնացանկից համանման ծառայության համար սահմանված գինը:</u>***

Արձանագրությունում արվել է սոցիալական փաթեթի շրջանակներում մատուցված ծառայությունների համեմատական 2016 թվականի և 2017թ. 4-րդ եռամսյակի տվյալների հիման վրա, ընդ որում համեմատականը կատարելու համար օգտագործվել են ոչ համադրելի ժամանակաշրջաններ, քանի որ 2016 թվականի համար եռամսյակային ցուցանիշների փոխարեն ներկայացվել են 2016թ. տարեկան ցուցանիշները: Համեմատությունը համակողմանի իրականացվելու պարագայում, կարծում ենք, համեմատականում պետք է տեղ գտնեին նաև նախորդ ժամանակաշրջանի համեմատ ավել մատուցված ծառայությունները: Մասնավորապես ***<u>2017 թվականի 4-րդ եռամսյակում սոցիալական փաթեթի շրջանակներում սրտաբանության գծով մատուցվել է 241.7 մլն ՀՀ դրամ, այն դեպքում, երբ 2016 թվականի համադրելի ժամանակահատվածի համար նշված գումարը կազմել է ընդամենը 147.5 մլն ՀՀ դրամ (64% աճ)</u>***, իսկ նյարդավիրաբուժական ծառայությունների ծավալը համապատասխանաբար կազել է 23.3 մլն ՀՀ դրամ՝ 4.4 մլն ՀՀ դրամի դիմաց ***(435%***

***աճ)***, նույն աղյուսակում նշված ակնաբուժական ծառայությունների ծավալը՝ 30.6 մլն ՀՀ դրամ, 18.3 մլն ՀՀ դրամի դիմաց ***(67% աճ)***: Նույնը վերաբերում է նաև դիմածնոտային վիրաբուժության և քիթ-կոկորդ-ականջաբանության ծառայություններին ***(150% աճ)***, գինեկոլոգիային ***(108% աճ)***, ուրոլոգիային ***(101% աճ)***, պրոկտոլոգիային ***(175% աճ)*** և այլն:

## *3. ՍՈՑՓԱԹԵԹԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՊԵՏՊԱՏՎԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ) «ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ» ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՉ ՃԻՇՏ ՈՒ ՉՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՐՔՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Սույն գրության երկրորդ բաժնում ներկայացված համեմատականում միայն սրտաբանության մասով ներկայացված մատուցված ծառայությունների ծավալների ավելացման ցուցանիշը (ավելի քան 1,6 անգամ) խոսում է այն մասին, որ ***բժշկական ծառայությունների իրական պահանջարկը ամբողջությամբ հնարավոր է եղել բավարարել միայն ներդրված նոր համակարգի պայմաններում,*** ինչը չի կարելի ասել նախկին համակարգի մասին, երբ հատկացվող միջոցները բժշկական հաստատությունների միջև բաշխվում էին նախապես՝ մինչև կոնկրետ բժշկական ծառայություն մատուցելը, և ըստ բժշկական հաստատությունների սահմանվում էին մատուցվող ծառայությունների առավելագույն ծավալի եռամսյակային սահմանաչափեր, ինչի հետևանքով տարվա ընթացքում առաջանում էր բաշխված գումարի և առկա պահանջարկի անհամապատասխանություն: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բժշկական կենտրոններն իրենց հերթին բաշխված գումարի շրջանակում 100% կատարողական ապահովելու նպատակով մատուցված ծառայությունների ծավալում ներկայացնում էին առողջապահական ցուցանիշների բարելավման և անհրաժեշտության, ինչպես նաև շահառուների համար ֆինանսապես հասանելիության ռիսկի լուծման տեսանկյունից ավելի քիչ արդյունավետ թերապևտիկ ծառայություններ: ***Դրա հետևանքով նախկին համակարգի պայմաններում հիվանդանոցային դեպքերի շուրջ 30%-ը բաժին է ընկել հենց թերապևտիկ ծառայություններին, իսկ ներդրված նոր համակարգի պարագայում գումարներն օգտագործվել են առավել արդյունավետ, ինչի արդյունքում հիվանդանոցային դեպքերի շուրջ 97%-ը բաժին է ընկել վիրաբուժական ծառայություններին, որոնք անձի առողջության վերականգնման համար ունեն առավել մեծ կարևորություն: Միաժամանակ, հաշվի առնելով վիրաբուժական ծառայությունների բարձր արժեքը և կիրառվող հերթագրումների հանգամանքը, նախկին մեխանիզմի պայմաններում այդ ծառայությունները կա՛մ շահառուների համար հասանելի չէին լինում, կա՛մ նրանց համար դառնում էին ֆինանսական ծանր բեռ:***

Միևնույն ժամանակ, նախկին համակարգի պարագայում յուրաքանչյուր անձի գծով գումարային սահմանափակման թվացյալ բացակայությունը լրացվում էր եռամսյակի ընթացքում հատկացվող միջոցների ընդհանուր սահմանաչափերի կիրառումով, ինչի հետևանքով առաջանում էին ամիսներով ձգվող հերթագրումներ, արհեստականորեն կրճատվում էր շահառուների դիմելիությունը և ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների տարեկան ծավալը: Նշված մեխանիզմն էականորեն սահմանափակում էր փաթեթով նախատեսված ծառայությունները ծրագրի շրջանակներում ստանալու հնարավորությունը, և շատ դեպքերում շահառուները, չսպասելով հերթագրումներին, ծառայություններից օգտվում էին վճարովի հիմունքներով (տարբեր գնահատականներով հերթագրումների և ծառայությունների մատուցման բարդ ընթացակարգի պատճառով դեպքերի 30%-ից ավելին վճարվել են քաղաքացիների գրպանից), հետևաբար պետպատվերի մեխանիզմի կիրառում ենթադրող նախկին համակարգով սահմանված տարեկան գումարները շատ դեպքերում թերագնահատված էին և շահառուների համար չէին կարող ապահովել անհրաժեշտ ծավալով ծառայությունների լիարժեք ստացում, ինչն ապացուցվում է նաև

սոցիալական փաթեթի շրջանակներում հավաքագրված վիճակագրության հիման վրա կատարված հաշվարկներով:

**Ամփոփելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ թյուրընկալում է այն պնդումը, որ պետական բյուջեից հատկացվող նույն միջոցներով «այլ հավասար պայմաններում» պետպատվերի բաշխման մեխանիզմով կարելի է ապահովել ավելի լայն ծառայությունների տրանադրում ավելի մեծ թվով շահառուների և առանց մեկ անձի գծով գումարային սահմանափակումներ կիրառելու: Որպես դրա ցայտուն օրինակ՝ ցանկանում ենք նշել զինծառայողներին, ինչպես նաև փրկարարներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններով ապահովման պետական ծրագիրը, որի գծով տարեկան ընդհանուր նախատեսված է 3,077 մլն ՀՀ դրամ, այն դեպքում, երբ օբյեկտիվ վիճակագրության հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նշված խմբի համար բժշկական ծառայությունների իրական պահանջարկը կազմում է 17,215 մլն ՀՀ դրամ (10% դիմելության պայմաններում 264,000 ՀՀ դրամ միջին հիվանդանոցային դեպքի հաշվարկով), ինչը նշանակում է, որ ծրագրի լիարժեք իրականացման համար հատկացված բյուջետային միջոցները թերագնահատված են ավելի քան 5 անգամ:**

## *4. ՀԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՉ ՃԻՇՏ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Արձանագրության եզրափակիչ մասում ներկայացված կանխատեսումը և ամփոփող եզրահանգումը ևս կատարվել է ոչ ճիշտ վերլուծությունների հիման վրա և տրվել իրականությանը չհամապատասխանող գնահատական: Սոցիալապես անապահով և խոցելի խմբերի համար ներդրվող 600,000 շահառուների համար արձանագրությունում ներկայացված կանխատեսումներում որպես ապահովագրավճարի մեծություն ընդունվել է 1 եռամսյակի համար 1 շահառուի գծով 9556.5 ՀՀ դրամը, այնինչ նախարարության կողմից իրականացված հաշվարկներով, հաշվի առնելով մեկնարկային ժամանակահատածում դիմելության ցածր մակարդակը, իրականում ապահովագրավճարի մեծությունը կազմում է 6482.2 ՀՀ դրամ՝ 90% հատուցումների պայմաններում (համապատասխան հաշվարկների և հիմնավորումների փաթեթը ներկայացվել է նաև ՀՀ նախագահին և վարչապետին):

Հետևաբար արձանագրության աղյուսակ 4-ում նշված ***ապահովագրավճարների ընդհանուր մեծությունը (600 հազար անապահով ու խոցելի խմբերում ընդգրկված քաղաքացիների և շուրջ 100 հազար սոցփաթեթի շահառուների գծով) կազմում է ոչ թե 21 մլրդ ՀՀ դրամ, այլ՝ 15.7 մլրդ ՀՀ դրամ***: Նույնը վերաբերում է նաև փաստացի հատուցումների մակարդակի ցուցանիշին, որն ***արձանագրությունում նշված 76.4%-ի փոխարեն կազմում է 90%*** (հիմնավորումները ներկայացված են սույն փաստաթղթի 1-ին էջում): Այսպիսով աղյուսակ 4-ում ներկայացված ամբողջ վերլուծությունը, հետևաբար նաև վերլուծության արդյունքում որպես հիմնական ցուցանիշ ներկայացվող **4.96 մլրդ ՀՀ դրամը (ապահովագրականների տնօրինման տակ մնացող գումար) չի համապատասխանում իրականությանը**:

## *5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻՆ ՉՎԵՐԱԲԵՐՈՂ ԺԱՄԱՆԿԱՀԱՏՎԱԾԻ ՄԱՍՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Արձանագրությունում տեղ էին գտել նաև որոշակի վերլուծություններ, գնահատականներ մինչև 2015թ. ընկած ժամակահատվածի վերաբերյալ, որոնց անդրադարձ չի կատարվել սույն փաստաթղթում, քանի որ ստուգման ժամանակահատվածը ընդգրկում է 2015-2018թթ.:

Միևնույն ժամանակ չենք կարող չնշել, որ ստուգման ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածին վերաբերվող մասում ևս ներկայացված են իրականությանը

չհամապատասխանող և էական անճշտություններ ունեցող մի շարք փաստական և վիճակագրական տվյալներ, և դրանց հիման վրա կատարված գնահատականներ և եզրակացություններ: Բավական է նշել ընդամենը հետևյալ 2 օրինակները՝

- առողջության ապահովագրության պարտադիր բաղադրիչի համար նախատեսված գումարը արձանագրությունում 2012թ.-ի համար նշվել է 10.5 մլրդ ՀՀ դրամ, որն էլ բաժանելով ապահովագրված անձանց քանակի վրա ստացվել է **71,713 ՀՀ դրամ (աղյուսակ 1), այնինչ առողջության ապահովագրության պարտադիր բաղադրիչի համար սահմանված ապահովագրավճարի մեծությունը 1 անձի գծով իրականում կազմել է 52,000 ՀՀ դրամ,** ինչը սահմանված է եղել նաև ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1691-Ն որոշմամբ (տե՛ս մայր փաստաթուղթը): Արդյունքում վերլուծությունը կատարվել է ոչ ճիշտ և դրան համապատասխան տրվել գնահատականներ,

- ապահովագրական համակարգի վերաբերյալ արձանագրությունում կատարվել է մեկ այլ վերլուծություն, որի արդյունքում կազմվել է հետևյալ եզրակացությունը՝ «…. *վիճակագրությունը ցույց է տալիս, որ ապահովագրական ընկերությունների դեմ ներկայացված բողոք-պահանջների թիվն ունի շեշտակի աճման միտումը, ինչը պայմանավորված է նաև սոցփաթեթում ընդգրկված շահառուների բողոքներով*»: Նման եզրահանգումը հիմնավորվել է ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացված դիմում-բողոքների վերաբերյալ մեջբերված վիճակագրությամբ՝ հղում կատարելով «Արմենպրես» լրատվական կայքում տեղադրված հոդվածին[16]: Նշված հոդվածի վերնագրից «ԱՊՊԱ համակարգի հետ կապված դժգոհություններ» բխում է, որ **նյութը գլխավորապես վերաբերում է ապահովագրության միանգամայն այլ տեսակին՝** Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը (ԱՊՊԱ), **հետևաբար նյութում ներկայացված բողոք-պահանջների թիվը չպետք է վերագրվեր սոցիալական փաթեթի շրջանակներում մատուցվող առողջության ապահովագրությանը և չէր կարող հիմք հանդիսանալ արձանագրությունում սոցփաթեթի շրջանակներում մատուցվող ապահովագրական ծառայությունների վերաբերյալ որակական գնահատական տալուն:**

*Ինչ վերաբերում է ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացված դիմում-բողոքների իրական ցուցանիշին, ապա 2014թ.ողջ տարվա ընթացքում դրանց թիվը կազմել է ընդամենը 59 հատ կամ ընդհանուր բողոքների շուրջ 5%, ինչը նշանակում է, որ արձանագրությունում նշված 145,000 ապահովագրված անձանցից դժգոհություն ներկայացնողների թիվը գիրազանցել 0,04%:*
*Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ համակարգի ներդրման օրվանից՝ 2017թ. հոկտեմբերի 1-ից մինչ օրս շահառուների կողմից ֆինանսական համակարգի հաշտարարին* ***որևէ բողոք-պահանջ*** *սոցփաթեթի շրջանակներում մատուցվող առողջության ապահովագրության գծով* ***չի ներկայացվել****:*

[16] https://armenpress.am/arm/news/761367/appa-hamakargi-het-kapvats-dzhgohutyunnern-avelacel-en.html

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ԹԻՎ 14/5 ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ,ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ՝«ԴԵՂՈՐԱՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունը, համապատասխան հիվանդների դեղապահովվումը իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N 1717-Ն որոշման, իսկ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի գնումների գործընթացը իրականացնում է հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն և 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն կառավարության որոշումները:

**Կետ 1.** ***ՀՀ առողջապահության նախարարությունը ներմուծման արժեքների ուսումնասիրության իրավասություն չունի, քանի որ 2015 թվականի ապրիլի 1-ից, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կատարված փոփոխությունների արդյունքում, շուկայի ուսումնասիրության*** մասով պարտադիր պահանջն ուժը կորցրել է: Այն ժամանակահատվածում, երբ նշված պահանջը գոյություն ուներ, նկարագրված իրավական ակտերով չէր կարգավորվում՝ ինչպես շուկայի ուսումնասիրության մեթոդաբանության ընտրությունը, այնպես էլ գնման գործընթացներում մասնակիցների շահույթի սահմանափակումը:

ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացրել է համապատասխան շուկաների ուսումնասիրություն յուրաքանչյուր գնման գործընթացի համար: Ընդ որում, շուկայի ուսումնասիրությունները կատարվել են առնվազն Գնումների աջակցման կենտրոնի կողմից տվյալ գնման ընթացակարգի մասով որակավորված բոլոր մասնակիցների շրջանում: Միևնույն ժամանակ, ՀՀ առողջապահության նախարարությունը չի կարող կազմակերպել գնման գործընթացները հիմք ընդունելով միայն ներկրման գները և ԱԱՀ-ն,( հարկ է նշել, որ առկա են բազմաթիվ այլ գործառնական ծախսեր, որոնք ինքնարժեքի մաս են կազմում), քանի որ ոչ մի ներկրող կամ արտադրող առանց համապատասխան առևտրային շահի չի մասնակցի կազմակերպված գնման գործընթացներին: Իսկ այդ գործընթացները չկայանալու արդյունքում առաջացած պահանջարկի բավարարման մասով ճեղքվածքը կհանգեցնի հիվանդների բնականոն դեղապահովման խախտմանը:

Գործող իրավական ակտերով չկա նախատեսված դրույթ, որի համաձայն՝ դեղերի նախահաշվային գները պետք է հաշվարկվեն հիմք ընդունելով ներմուծման գները: Այն պարագայում, երբ առկա կլինեն մասնակիցների իրական շահույթի գնահատման և դրա սահմանափակման իրավական մեխանիզմներ, ՀՀ առողջապահության նախարարությունը, ինչպես և մնացած այլ պատվիրատուները, անշուշտ, կառաջնորդվեն տվյալ իրավական կարգավորման պահանջներով:

«Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի 11-րդ հոդվածով ամրագրված են դեղերի գների կարգավորման մեխանիզմներ, ըստ որի օրենքի ընդունումից հետո ՀՀ-ում իրականացվելու է լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ դեղերի գների պետական կարգավորում, մասնավորապես՝

1) դեղի հենակետային գին, դրա նկատմամբ մեծածախ ու մանրածախ առավելագույն հավելագին սահմանելու միջոցով,

2) դեղի համընդհանուր անվանմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում սույն օրենքով սահմանված կարգով գրանցված դեղերի համար՝ ըստ դրանց դեղաձևի և դեղաչափի:

***Սակայն 2017 թվականին 2015-2016 թվականների համեմատ դեղերի միավորի գները նվազել են.***

Օրինակ՝ Ցիկլոսպորին դեղի 2015 թվականի միավորի գինը կազմել է՝ 1100 դրամ, 2016թ՝ 990, իսկ 2017թ.՝ 336 դրամ, գինը նվազել է շուրջ 3 անգամ,

Էպոետին բետա դեղի 2015 թվականի միավորի գինը կազմել է՝ 6500 դրամ, 2016թ.՝ 5970, իսկ 2017թ.՝ 5241 դրամ,

Հակահեմոֆիլիկ գործոն դեղի 2015 թվականի միավորի գինը կազմել է՝ 64995 դրամ, 2016թ.՝ 48000, իսկ 2017թ.՝ 40500 դրամ,

Կետ 2. ***2015-2016 թվականների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից չեն մշակվել և ընդունվել մի շարք հիվանդությունների բուժման սխեմաները, սակայն հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված հավելվածի «4.3. առողջապահություն» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, 2017 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից,*** ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետների մասնակցությամբ, մշակվել են մի շարք հիվանդությունների բուժման 30 ընթացակարգ, 126 գործելակարգ և 154 ուղեցույց, որից հաստատվել են՝ 4 ընթացակագ, 8 գործելակարգ և 133 ուղեցույց՝ բժշկական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետների կողմից ներկայացվող հաշվառված և փաստացի հիվանդների թվի շեղումները վերացնելու նպատակով, 2016-2017թթ ՀՀ ԱՆ-ի կողմից մշակման և ներդրման փուլում է գտնվում «Էլեկտրոնային առողջապահական համակարգը», որի ներդրման արդյուքում հաշվառված և փաստացի դեղ ստացող հիվանդների վերաբերյալ տվյալները կմուտքագրվեն համակարգ: Համակարգի ներդրման շնորհիվ կբացառվի միևնույն հիվանդի կրկնակի և սխալ հաշվառումը, քանի որ հիվանդները հաշվառվելու են իրենց անձնական տվյալների հիման վրա և ծրագիրը բացառում է միևնույն մուտքարված անձնական տվյալներով այլ հիվանդի հաշվառումը:

**Կետ 3**. ***ՀՀ առողջապահության նախարարության կողմից ապահովել է 18.04.2014թվականի 837-Ա հրամանի պահանջները, քանի որ դեղերի գնումների պլանի կազմման աշխատանքների համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքով ներկայացված հաշվետվությունները, ըստ հիվանդությունների***՝ հաշվառված հիվանդների թիվը, ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության կենտրոնում և բժշկական հաստատություններում առկա դեղերի մնացորդները: Դեղերի անվանացանկը կազմելիս առաջնահերթությունը տրվում է այն դեղերին, որոնք ըստ հիվանդությունների ընդգրկված են բոլոր բուժման սխեմաներում, կախված հիվանդության տեսակից և ընթացքից, կիրառվում են բուժման առաջնային ու երկրորդային սխեմաներում:

***2015 թվականին արձանագրված թերությունները վերացնելու ուղությամբ նախարարության կողմից իրականացվել են՝***

1. Ուսումնասիրվել են ՀՀ մարզերի և ք.Երևանի բժշկական հաստատություններում՝ պետության կողմից կենտրոնացված կարգով տրամադրված դեղերի առկա մնացորդները, փաստացի ծախսը և հիվանդների թիվը: Արդյունքում իրականացվել են վերաբաշխումներ, ինչպես նաև կազմակերպվել են որոշ դեղերի վերադարձ ՀՀ առողջապահության նախարարություն:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպվել են դասընթացներ՝ յուրաքանչյուր մարզի համապատասխան մասնագետների և ՀՀ ԱՆ համապատասխան մասնագետների հետ համատեղ, դեղերի հաշվառման, հաշվետվությունների կազմման, ամփոփման, եռամսյակային կտրվածքով բժշկական հաստատություններում առկա դեղերի

մնացորդների և դրանց պիտանիության ժամկետների վերաբերյալ՝ խուսափելու համար դեղերի ոչ պատշաճ բաշխումներից և հավելյալ մնացորդներից:

**Կետ 4. 2015 թվականին նախարարության կողմից դեղերի գնումների պլանավորման և բյուջետային միջոցների, ոչ արդյունավետ օգտագործման խնդիրներից ելնելով՝ 2016-2017 թթ. ընթացքում մի շարք դեղեր ձեռք չեն բերվել կամ ձեռք են բերվել մասնակի, քանի որ ճշգրտվել են դեղերի հաշվետվությունները և դեղերը բաշխվում են ըստ ներկայացված հաշվետությունների՝ հաշվի առնելով եռամսյակային փաստացի ծախսերը և մնացորդները, արդյունքում՝**

1. 2017 թվականին ինսուլին դեղի մատակարարվող քանակները նվազեցնել՝ հիմք ընդունելով փաստացի ծախսերը: Պայմանագրի վերանայման արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 23-ին պայմանագիրը երկարաձգվել է մինչև 2019 թվականը 2018 թ-ի փոխարեն, որի համար նախատեսվում է օգտագործել հնգամյա պայմանագրով նախատեսված գումարը: Ինսուլին դեղի 2017 թվականի միջին տարեկան ծախսը կազմում է 217 126 սրվակ, իսկ 2018թ. հունվարի 8-ի դրությամբ մնացորդը ՀՀ ԱՆ-ի պահեստում կազմել է 57096 սրվակ, որը կազմում է 3 ամիս 10 օրվա պաշար:

2. Հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի ՀՆԱ-8 հանձնարարականի հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 42 արձանագրային որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետը, արդյունքում՝ 2015 թվականին ՀՀ առողջապահության նախարարությունը ֆրանսիական «Լե Լաբոդատուար Սեղվիե» կազմակերպության հետ կնքել է հնգամյա պայմանգիր: Նշեմ, որ 2015թ-ին հիվանդների դեղով ապահովածության մակարդակը բարձրացել է շուրջ 80 տոկոս, նախորդ տարիների շուրջ 30 տոկոսի փոխարեն: 2016թ-ին և 2017թ-ին ապահովածության մակարդակը հասել է 100 տոկոսի, քանի որ արտադրող կողմը յուրաքանչյուր տարվա համար պայմանագրով նախատեսված դեղի քանակի 10 տոկոսը հատկացնում է որպես մարդասիրական օգնություն: Անմիջապես արտադրող «Սերվիե» ընկերությունից 2015թ. համար ձեռքբերվող «Դիաբետոն» դեղի համար ծախսվել է 280.7 մլն դրամ (մեկ դեղահաբը՝ 36.7 դրամ), որի արդյունքում տնտեսվել է 61.2 մլ դրամ: Ինչ վերաբերվում է «Դիաբետոն ՄՌ» դեղին ապա 2016-2017թթ. հունվարի 1-ի դրությամբ առկա մնացորդները, նախատեսվում էր ծախսել 2017-2018 թվականներին առաջին եռամսյակում, քանի որ եռամսյակի ծախսը քաղաք Երևանի և ՀՀ մարզերի բժշկական հաստատություններում կազմում է 2 934 437 դեղահատ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ շաքարային դիաբետով հիվանդների տարեկան աճը կազմում է 10%՝ այսինքն կարիք է առաջանում նաև տարվա ընթացքում ընդգրկել նոր հիվանդներ և ապահովել անհրաժեշտ քանակի դեղերով (ըստ տարիների հիվանդների թվի աճի վերաբերյալ աղուսյակը կցվում է):




2016թ-ին 2013թ-ի համեմատ դիտվել է 100 000 բնակչի նկատմամբ շաքարային դիաբետից մահացության և մահաբերության ցուցանիշների նվազեցում ավելի քան 10 %-ով: 2016-ին 2014-ի համեմատ նվազել է նաև պետական պատվերի շրջանակներում սպասարկված դեպքերի թիվը և մեկ դեպքի հաշվով փոխհատուցվող գումարը, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է պետության կողմից տրամադրված դեղերի առավելությունները:

Հաշվի առնելով պաշտոնական վիճակագրական տվյալները (ներառյալ հիվանդացության դեպքերին բաժին ընկնող հոսպիտալացման դեպքերի համեմատական վերլուծություն, հոսպիտալացման մեկ դեպքին բաժին ընկնող փոխհատուցվող գումար) պետության կողմից հակադիաբետիկ դեղերի ապահովվածության ցածր մակարդակը ուղեկցվում է հարակից այլ բարդությունների զարգացմամբ, մասնավորապես արյան մեջ գլյուկոզայի չվերահսկվող մակարդակը ուղեկցվում է սիստոլիկ և դիստոլիկ զարկերակային ճնշման բարձրացմամբ, մասնավորապես՝ գլյուկոզայի միջին մակարդակի բարձրացումը մոտ 1մմոլ/լ-ով բերել է սիստոլիկ զարկերակային ճնշման մոտ 25% և դիստոլիկ զարկերակային ճնշման 13% բարձրացման: Կից ներկայացնում եմ աղյուսակը՝




Միաժամանակ հարկ եմ համարում տեղեկացնել, որ առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացվում է «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ծրագիր, որի շրջանակներում 2015-2017 թվականների ընթացքում հետազոտվել են բնակչության 35-68 տարեկան ռիսկային խմբերում ընդգրկված շուրջ 455000 մարդ, որից ըստ կատարած հետազոտությունների շուրջ 7%-ի մոտ կյանքում առաջին անգամ հայտնաբերվել է շաքարային դիաբետ:

3. 2017 թվականի ընթացքում 0-22 տարեկան տարիքային խմբի հաշվառված ինսուլինակախյալ երեխաների և երիտասարդների կյանքի որակը բարձրացնելու, ինչպես նաև բուժման արդյունավետությունը և նրանց առողջական վիճակը բարելավելու նպատակով «Հաղթահարենք դիաբետը միասին» ծրագրի շրջանակներում 2015-2019 թվականների ընթացքում, առողջապահության նախարարության կողմից, ՀՀ-ում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված վերոնշյալ տարիքային խմբին անվճար տրամադրվել է ինսուլինային անալոգներ և ինսուլինային գրիչ-ներակիչներ: Ծրագիրը գործում է ՀՀ առողջապահության նախարարության և «Էլայ Լիլի» ամերիկյան դեղագործական կազմակերպության միջև: Սույն ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունը «Էլայ Լիլի» ամերիկյան դեղագործական կազմակերպության հետ համատեղ ՀՀ-ում իրականացրել է դիաբետի կառավարման 4 կենտրոնի վերանորոգում և կահավորում, ինչպես նաև այդ 4 կենտրոններում տեղադրվել են գլիկոլիզացված հեմոգլոբինի չափման անալիզատորներ և նրանց համար նախատեսված թեստ-երիզներ: Ծրագրի շրջանակներում տրամադրվող գրիչ-ներարկիչների կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանցով կարելի է ներարկել ինսուլինի նույնիսկ շատ փոքր չափաբաժին՝ ընդամենը 0.5 միավոր, մինչդեռ սովորական ներակիչով 1 միավորից ավելի քիչ հնարավոր չէ

հավաքել: Փոքր չափաբաժիններ օգտագործելու հնարավորությունը շատ կարևոր է առաջին հերթին փոքրիկ երեխաների համար: Բացի դրանից, այն թույլ է տալիս խուսափել ինսուլինի կորուստից, չի պահանջում պահպանման հատուկ պայմաններ: Այդ գրիչ ներարկիչների շնորհիվ շաքարային դիաբետով հիվանդ երեխաների համար ավելի հեշտ կլինի սովորել, սպորտով զբաղվել, խաղալ ու անել այն ամենն, ինչ ուզում են: Իսկ նրանց ծնողներին ավելի հեշտ կլինի վերահսկել հիվանդությունը ու դրա բարդությունները:

Տեղեկացնում եմ, որ ինսուլինի առաջին չափաքանակը բաշխվել է 2015թ -ի նոյեմբերի 4-ին ծրագրի մեկնարկից հետո: Ձեռք բերված քանակը իրացվել է ամբողջ 2016թ-ի ընթացքում: Փաստացի ստացվում է, որ ի տարբերություն օրացույցային տարվա ծրագրային տարին դիտարկվում է նոյեմբերից մինչև հաջորդ տարվա նոյեմբերը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինսուլինի գնումը կատարվել է ոչ թե առաջին եռամսյակում ինչպես սովորաբար, այլ ինսուլինի յուրաքանչյուր չափաքանակը ձեռք է բերվել տարվա 2-րդ կեսին հաջորդ ծրագրային տարվա համար:

| Տարեթիվ | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|
| Հիվանդների թիվ | 730 | 808 | 880 |

2016-2017թթ միջին տարեկան ծախս՝

| | |
|---|---|
| Ինսուլին լիզպրո | 26 218 |
| Ինսուլին իզոֆան | 21 925 |

2018թ-ի մարտի 7-ի դրությամբ ունենք հետևյալ մնացորդները՝

| | |
|---|---|
| Ինսուլին լիզպրո | 27 754 |
| Ինսուլին իզոֆան | 3401 |
| Ինսուլին գլարգին | 28002 |

Հաշվի առնելով, որ ծրագրի մեջ ընդգրկված հիվանդների թվի տարեկան միջին 10% աճը, ինչպես նաև ընթացիկ ժամանակահատվածում ինսուլինի սպառումը ակնհայտ է դառնում, որ առկա ինսուլինի մնացորդը կբավարարի ծրագրում ընդգրկված հիվանդներին մինչև ծրագրային տարվա ավարտը և ***առկա ինսուլինների պիտանիության ժամկետը կազմում է 31.05.2019թ:*** Ինսուլին դեղի մատակարարումը պետք է լինի անընդմեջ, քանի որ կենսական կարևորություն ունեցող դեղ է և հիվանդների կյանքը կախված է ինսուլինի ամենօրյա ներարկումներից:

3. **Մեթֆորմին 1000 մգ** դեղի մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 3 290 468 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 5 879 184հզ. դեղահատ, ձեռք է բերվել 4 200 000 դեղահատ, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 1 743 702 դեղահատ, միջին տարեկան ծախսը 9 077.110 դեղահատ, ձեռք է բերվել 8.101.000 դեղահատ:

4. **Ֆլուֆենազին 25մգ դեղի** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 6652 սրվակ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 25804 սրվակ, ձեռք է բերվել 3700 սրվակ, քանի որ արտադրող ընկերությունից ստացվել է գրություն, որ գործարանը այրվել է և դեղի արտադրությունը դադարեցվել է, որի հիմքով պայմանագիրը լուծվել է: 2017 թվականի ձեռք բերումը իրականացվել է ըստ գլխավոր մասնագետի, ինպես նաև նախորդ տարիների փաստացի ծախսը:

5. **Կարբամազեպին 200 մգ դեղի** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 1 214 507 դեղահատ, միջին տարեկան

ծախսը 2016թ-ին՝ 1 825 332 դեղահատ, ձեռք է բերվել 720 000, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 348 825 դեղահատ, միջին տարեկան ծախսը՝ 2 285 335 դեղահատ, ձեռք է բերվել 2 300 000 դեղահատ:

6. **Տրիֆլուոպերազին 5 մգ դեղի** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 2 612 500 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 1 620 376 դեղահատ, ձեռք չի բերվել, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 883 512 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2 255 875 դեղահատ, ձեռք է բերվել 1 300 000 դեղահատ:

7. **Հիդրոքսիկարբամիդ 500 մգ, L-ասպարագինազա 5000ՄՄ և 10000 ՄՄ և Ցիտարաբին 100 մգ դեղերի** ձեռք բերումը և պլանավորումը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ ԱՆ գլխավոր արյունաբանի պահաջարկը, քանի որ արյունաբանական ծառայությունը կրում է սպեցիֆիկ բնույթ և նշված դեղերը նախատեսված են սուր լեյկոզով հիվանդների համար, պետություն կողմից ձեռք բերված քանակները հատկացվում են միայն մանկանան ծառայությունը: Նշված դեղերը ՀՀ-ում չունեն համարժեք փոխարինողներ: 2016-2017 թվականների համար դեղերը ձեռք բերելու նպատակով 2-3 անգամ գնման ընթացակարգ է իրականացվել, սակայն մրցույթը երկու անգամ չի կայացել, կայացել է միայն երրորդ անգամ և մատակարարումը իրականացվել է 3-րդ եռամսյակի ընթացքում: Ուստի տարվա փաստացի ծախսը հիմք չի հանդիսացել հաջորդ տարվա դեղի պլանավորման համար:

8. **Արյան 8-րդ** գործոն մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 163 հատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 1 232 հատ, ձեռք է բերվել 800 հատ, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 219 հատ, միջին տարեկան ծախսը 1165 հատ, ձեռք է բերվել 1 000 հատ: 2017 թվականին մարդասիրական օգնությամբ ստացվել է 640 սրվակ որը ծախսվել է առաջնահերթ, հաշվի առնելով դեղի պիտանիության ժամկետները և պահետավորելով գնված քանակները:

9. **Ցիկլոսպորին 50 մգ** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 13000 դեղապատիճ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 19 920 դեղապատիճ, ձեռք է բերվել 10 100, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 7600 դեղապատիճ, միջին տարեկան ծախսը 26 700 դեղապատիճ, ձեռք է բերվել 20 000 դեղապատիճ: 2017 թվականի տարեկեսին մարդասիրական օգնությամբ ստացվել է ցիկլոսպորին դեղի՝ 4920 դեղապատիճ, որը ծախսվել է առաջնահերթ, հաշվի առնելով դեղի պիտանիության ժամկետները:

10. **Դեսմոպրեսին** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 5098 սրվակ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 4256 սրվակ, ձեռք չի բերվել, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 574 սրվակ, միջին տարեկան ծախսը 7300 սրվակ, ձեռք է բերվել 5300 սրվակ:

11. **Դոքսորուբիցին** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 2106 սրվակ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 3480 սրվակ, ձեռք է բերվել 1267, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ

պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 541 սրվակ, միջին տարեկան ծախսը 3350 սրվակ, ձեռք է բերվել 3000 սրվակ:

12. **Ինտերֆերոն** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 1093 սրվակ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 1316 սրվակ, ձեռք չի բերվել, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 120 սրվակ, միջին տարեկան ծախսը 1294 սրվակ, ձեռք է բերվել 2500 սրվակ:

13. **Վալպրոաթթվի նատրիումական** աղ դեղի մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 654 296 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 862 100 դեղահատ, ձեռք է բերվել 275 500, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 91950 դեղահատ, միջին տարեկան ծախսը 742 715 դեղահատ, ձեռք է բերվել 1 000 000 դեղահատ:

14. **Կոլխիցին 1 մգ** 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 726 908 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 854 892 դեղահատ, ձեռք է բերվել 48000, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 464 739 դեղահատ, միջին տարեկան ծախսը 1 094 325 դեղահատ, ձեռք է բերվել 1 850 000 դեղահատ, հիմք ընդունելով «Արաբկիր» ԲԿ-ի գրությունը: Տարիներ շարունակ «Հովարդ Կարագյուզյան» Հիշատակի Ընկերակցությունը ծրագրի սահմանում իրականացրել է 3000 դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների դեղաապահովում, սակայն Ընկերակցությունը պաշտոնապես տեղեկացրել է, որ 2017 թվականին դադարեցնելու է ծրագրի շրջանակներում կոլխցին դեղի ապահովումը: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Արաբկիր ԲԿ-ի 2016 թ. օգոստոսի 5-ի գրությունը՝ ՀՀ ԱՆ-ի կողմից ձեռք է 1 000 000 դեղահաբ:

15. **Օլանզապին 5մգ դեղի** մնացորդը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեսոտում և բժշկական կենտրոններում կազմել է 16 944 դեղահատ, միջին տարեկան ծախսը 2016թ-ին՝ 102 356 դեղահատ, ձեռք է բերվել Օլանզապին 10մգ 52000 դեղահատ, մնացորդը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստում և բժշկական կենտրոններում կազմել է 7655 սրվակ, միջին տարեկան ծախսը կենտրոնացված 62000 դեղահատ և մարդասիրական՝ 89 240 ընդհանուր ծախսը կազմում է՝ 151 240 ձեռք է բերվել 140 000 դեղահատ:

16. **Օսելտամիվիր՝** 2015-2016 թվականին հանրապետությունում արձանագրվել է գրիպի աննախադեպ սեզոնային ակտիվություն, ինչը բնորոշվել է նաև հիվանդների մեծ հոսքով, այդ թվում՝ հետգրիպային բարդացած ձևերով: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գրիպի և հետգրիպային բարդություններով հիվանդների բուժման միայն արդյունավետ միջոցը համարվում էր հակավիրուսային «Տամիֆլյու (օզելտամիվիր)» դեղը, ինչը նաև ամրագրված էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված ուղեցույցներում, Առողջապահության նախարարությունը, չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում առկա էր հակավիրուսային «Տամիֆլյու (օզելտամիվիր)» դեղի որոշակի պաշար (1507 տուփ / 15070 դեղապատիճ), ձեռք է բերել նաև նշված դեղի անհրաժեշտ քանակություններ՝ հիվանդների բուժումն առանց խոչընդոտների և ժամանակին կազմակերպելու համար: Դեղորայքը կիրառելի էր բնակչության բոլոր տարիքային խմբի անձանց համար՝ երեխաներ, մեծահասկաներ, և այն անձանց համար

ովքեր ունեն ուղեկցվող հիվանդություններ (դիաբետով, սիրտ անոթային անբավարարությամբ, երիկամային անբավարարությամբ և այլն տառապող անձնիք) և վիճակներ (հղիություն): Դեղը համարվում էր նաև լավագույն միջոց թե գրիպանման հիվանդությունների (հիվանդության թեթև ձև) և թե ծանր սուր շնչառական վարակներով (հիվանդության ծանր ձև) հիվանդների բուժման համար: 2015 թվականի գրիպի սեզոնի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված 124088 դեպք, 2016 թվականի գրիպի սեզոնի ընթացքում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված 184987 դեպք, որոնցից հոսպիտալացվել է 12203 դեպք, 2017 թվականին արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված 120822 դեպք, որոնցից հոսպիտալացվել է 7627 դեպք, որոնց նկատմամբ ապահովվել է համապատասխան բուժում՝ ելնելով հիվանդների կլինիկական վիճակից և անհրաժեշտությունից: Ձեռք բերված դեղերի բաշխումն իրականացվել է համաձայն հանրապետության, թե՛ մարզային, և թե՛ Երևան քաղաքի հիվանդանոցների և պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ձեռք բերված դեղը մինչ այսօր կիրառվում է հանրապետությունում, ինչի արդյունքում վերջին տարիների գրիպի սեզոնի ընթացքում կանխվել են գրիպի բարդացած դեպքերը, ինչպես նաև հետգրիպային բարդություններով (վիրուսային ծագման թոքաբորբ) մահվան դեպքեր չեն արձանագրվել: Միաժամանակ հայտնում եմ, որ տնտեսվարող կազմակերպությունների փոխհարաբերությունների կարգավորումը դուրս է ՀՀ առողջապահության նախարարության շրջանակներից:

17. **Լոպինավիր-ռիտոնավիր** 2018 թվականի կարիքների բավարարման համար նախատեսված Ալուվիա հակառետրովիրուսային դեղը (ՄԻԱՎ/ՁԻԱՀ- հիվանդների բուժման համար) ձեռք է բերվել 2017 թվականի վերջին, քանի որ համաձայն Գլոբալ հիմնադրամի հետ կնքված դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակում պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 2017 թվականին պետք է պետական միջոցներով գներ մինչ այդ բացառապես Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային միջոցներով Հիմնադրամի կողմից ուղղակի մատակարարվող հակառետրովիուսային դեղամիջոցների որոշ մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ծավալով: Պետության կողմից նշյալ պարտավորությունների կատարումն անհրաժեշտ պայման է հաջորդ դրամաշնորհային շրջանում Դրամաշնորհատուի կողմից ֆինանսական միջոցների փոխանցման համար: Հարկ ենք համարում նշել նաև, որ Ալուվիան ձեռք է բերվել նախկին տարիներին Գլոբալ հիմնադրամի կողմից տվյալ դեղամիջոցի ձեռքբերման արժեքից շուրջ 20%-ով ցածր գնով:

***18.*** **2016թ. ՄԻԱՎ-ի** վերաբերյալ հետազոտություններ կատարելու համար ձեռք է բերվել «Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման համար» թեստ-հավաքածուն, որը նախատեսված է ամբողջական արյան մեջ և արյան շիճուկում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման համար, որը 3-րդ սերնդի թեստ-հավաքածու է, իսկ 2017թ.՝ «Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման համար» թեստ-հավաքածուն, որը նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակածին/հակամարմինների հայտնաբերման համար, որը 4-րդ սերնդի թեստ-հավաքածու է: ՄԻԱՎ-ի նկատմամբ 4-րդ սերնդի հակածին/հակամարմինների հայտնաբերման իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածուն, ի տարբերություն 3-րդ սերնդի միայն հակամարմիններ հայտնաբերող արագ թեստ-հավաքածուի հնարավորություն է ստեղծում

հայտնաբերելու թե՛ հակամարմինները, թե՛ p24 հակածինը: p24 հակածնի հայտնաբերումն օգնում է ՄԻԱՎ վարակի ախտորոշմանը հիվանդության վաղ շրջանում: Այսպիսով, 2016թ. և 2017թ. ձեռք են բերվել տարբեր թեստ-հավաքածուներ՝ 2016թ. միայն ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, իսկ 2017թ.՝ ՄԻԱՎ-ի հակածնի և հակամարմինների հայտնաբերման համար (ոչ միայն հակամարմինների, ինչպես նշված է Վերահսկիչ պալատի արձանագրությունում), որով և պայմանավորված է գնային տարբերությունը: ***Առաջարկում ենք, դեղերի ծախսերը հաշվարկելիս, որպես մեթոդաբանություն, հիմք ընդունել բուժհաստատությունների փաստացի ծախսերը, որոնք ՀՀ ԱՆ-ին տրամադրվում են եռամսյակային կտրվածքով՝ ՀՀ մարզպետարաններից և ք. Երևանի քաղաքապետարանից:***

**Կետ 5. 2015 թվականին** պետական բյուջեի միջոցների հաշվին, կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի գումարը կազմել է՝ 1 985 053,8 հազ. դրամ, 2016թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 696.028.0 հազ. դրամ (35 %), իսկ հակադիաբետիկ դեղերի մասով կազմել է՝ 1 259 736,4 հազ. դրամ, 2016թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 488 958,0 հազ. դրամ:

**2016 թվականին** պետական բյուջեի միջոցների հաշվին կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի գումարը կազմել է՝ 2 072 370,5 հազ. դրամ, 2017թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 714 286,4 հազ. դրամ (34 %), իսկ հակադիաբետիկ դեղերի մասով կազմել է՝ 1 401 016,0 հազ. դրամ, 2016թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 594 644 հազ. դրամ:

**2017 թվականին** պետական բյուջեի միջոցների հաշվին կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի գումարը կազմել է՝ 2 146 956,1 հազ. դրամ, 2018թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 900 455,1 հազ. դրամ (42 %), իսկ հակադիաբետիկ դեղերի մասով կազմել է՝ 1 227 283,0 հազ. դրամ, 2018թ. հուվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ պահեստի մնացորդը կազմել է՝ 615 389,3 հազ: 2015-2017 թվականներին ՀՀ ԱՆ պահեստի մնացորդները պայմանավորված են ինսուլին դեղի քանակներով, որի պայմանագիրը վերանայվել է 2017 թվականին, ինչպես նաև ինսուլինային անալոգներով, որոնց ծրագրային տարին դիտարկվում է նոյեմբերից մինչև հաջորդ տարվա նոյեմբերը: Լոպինավիր-ռիտոնավիր դեղի մնացորդը, որը ձեռք է բերվել 2017թվականին, սակայն ծախսվելու է 2018թ:

Միաժամանակ հայտնում եմ, որ 2018 թվականի դեղերի պլանը կազմելիս հաշվի են առնվել առկա մնացորդները, որոնք առաջացել են 2017 թվականի ընթացքում, քանի որ ստացվել են որպես մարդասիրական օգնության և ծախսվել են առաջնահերթ՝ ելնելով պիտանիության ժամկետներից: Հաշվի առնելով վերոնշյալը 2018 թ. մի շարք դեղեր ձեռք չեն բերվել կամ ձեռք են բերվել մասնակի:

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ Պալատի՝ 12.03.2018թ.-ի «ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/5 որոշման հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» միջանկյալ արձանագրության, մասնավորապես՝ ՀՀ-ում ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ, հայտնում ենք, որ անհասկանալի է արձանագրության 5-րդ էջի երրորդ պարբերության մեջ 2017 թվականին հղումը (*մեջբերում՝ «Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ սարքավորման նկարագրում նշված է DICOM 4 ստանդարտ, որը 2015 և **2017** թթ. գոյություն չի ունեցել…»*), քանի որ մրցույթներն իրականացվել են 2014-2015 թվականներին և 2017 թվականի հետ որևէ առնչություն չունեն:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/5 որոշման հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» միջանկյալ արձանագրության, մասնավորապես՝ «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի վերաբերյալ առարկություններ և պարզաբանումներ**

1. «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 53-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների տեսակները: ՀՀ ՎՊ հանձաժողովի կողմից տրամադրված տեղեկանքի աղյուսակ 2-ում նշված են հետազոտություններ, որոնք ընդգրկված Հրամանով հաստատված ցանկում: Մասնավորապես.

1) «Գլխուղեղի ախտորոշիչ անգիոգրաֆիա» հետազոտությունը ներառված է Հրամանով հաստատված ցանկի 8-րդ կետում,

2) «Ալֆա-ֆետոպրոտեինի որոշում» հետազոտությունը պատկանում է իմունոլոգիական հետազոտությունների շարքին, որը ներառված է Հրամանով հաստատված ցանկի 41-րդ կետում:

**<u>Արդյունքում ՀՀ ՎՊ հանձաժողովի կողմից տրամադրված տեղեկանքի աղյուսակ 2-ում առանձնացված 2,849.0 հազար դրամից միայն 311,0 հազար դրամի հետազոտություններն են, որոնք իրականացվել են պետական պատվերից օգտվելու իրավունք ունեցող անձանց և դրանք կազմակերպությունների կողմից պետք է ներկայացվեր և ֆինանսավորվեր ՀՀ պետական բյուջե «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում:</u>**

2. ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ Ծրագիրը ներառված է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ենթակա ծառայությունների ցանկում և Ծրագրի շահառուներ են հանդիսանում Որոշման հավելված 1-ով հաստատված ցանկում ընդգրկված անձինք: Նշված ցանկի համաձայն զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամներ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամները, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, փրկարարական ծառայողները և նրանց ընտանիքների անդամները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողները, հաշմանդամ դարձած փրկարարական ծառայողները, ծառայության ընթացքում զոհված (մահացած) փրկարարական ծառայողների ընտանիքների անդամները համարվում են դժվարամատչելի հատազոտություններից օգտվելու իրավունք ունեցող շահառուներ, որոնց մատուցվող բժշկական օգնությունը կազմակերպվում և ֆինանսավորվում է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշմամբ սահմանված կարգով: ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված են «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շահառուները, իսկ 3-րդ կետով սահմանված է, որ «3. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների ընտանիքների անդամների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների (այդ թվում՝ երկրապահ կամավորականների) և նրանց ընտանիքների անդամների, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողների, ինչպես նաև ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում և փոխհատուցվում է Հայաստանի

Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման համաձայն՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված «Առողջապահություն» բաժնի համապատասխան ծրագրերի շրջանակներում:» Այսինքն վերը նշված շահառուների դժվարամաչելի հետազոտությունները (տվյալ դեպքում ՀՀ ՎՊ հանձնաժողովի տեղեկանքի աղյուսակ 3-ում նշված 7,300.5 հազար դրամի հետազոտությունները) պետք է իրականացվեն և ֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում:

**<u>Արդյունքում պահպանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման, ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի N 53-Ն հրամանի պահանջները:</u>**

**3. 2015-2017թթ. ընթացքում պայմանագրային գումարներում կատարված փոփոխություններ:**

1. ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսվել է 514,6 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար 2015 թվականի տարեսկզբին կազմակերպությունների կնքված պայմանագրային գումարները կազմել են 493,3 մլն դրամ: Ծրագրի 2015 թվականի ճշտված բյուջեն կազմել է 677,6 մլն դրամ կամ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով դեպքերի ավելացման համար նախատեսվել է 163,0 մլն դրամ: ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 2 հավելվածի (այսուհետ որոշման հավելված) 4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն (դեպքերի ավելացման համար նախատեսված գումարները կարող են հատկացվել տարվա ընթացքում) կատարված փոփոխությունները ՀՀ ՎՊ հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվել են որպես վերաբաշխումներ, որը մեթոդաբանական տեսակյունից ճիշտ չէ: 2015 թվականի տարեվերջին կազմակերպությունների ճշտված պայմանագրային գումարները կազմել են 676,7 մլն դրամ կամ տարվա ընթացքում իրականացվել է 183,4 մլն դրամի փոփոխություններ: Մասնավորապես.

1) տարվա ընթացքում ծառայությունների զարգացման, ընդլայնման, հասանելիության և մատչելության ապահովման նպատակով «Արինտերլեվ» ՍՊԸ-ում («Վարդանանց» նորարարական ԲԿ) և «Իռ Վինգ» ՍՊԸ-ում տեղադրվել է պետական պատվեր և կնքվել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ համապատասխանաբար 12,0 մլն դրամ և 3,0 մլն դրամ պայմանագրային գումարներով (հիմք ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 2 հավելվածի (այսուհետ որոշման հավելված) 4-րդ կետի 2)-րդ ենթակետ),

2) կազմակերպությունների պայմանագրային գումարների մնացած 168,4 մլն դրամ փոփոխությունները իրականացվել են հիմք ընդունելով որոշման հավելվածի 4-րդ կետի 6)-րդ ենթակետը և 35-րդ կետը:

Ընդ որում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 3413-Ա հրամանով կազմակերպությունների պայմանագրային գումարներում կատարված 89,5 մլն դրամ ավելացումները համաձայնեցված են Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 02/23.13/20251-15 հանձնարարական):

2. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսվել է 514,6 մլն դրամ: Հաշվի առնելով կազմակերպությունների ֆինանսավորման հրատապությունը, 2016 թվականի տարեսկզբին կազմակերպությունների կնքված պայմանագրերով սահմանվել է 395,4 մլն դրամ պայմանագրային գումարներ՝ կանխավճարային ֆինանսավորումից հետո վերահաշվարկման պայմանով: Պայմանագրային գումարները սահմանվել են 2015 թվականի տարեսկզբի պայմանագրային գումարների չափով՝ հաշվի առնելով Ծրագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների փոփոխությունները: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 31-ի N939-Ա հրամանով վերահաշվարկված պայմանագրային գումարները կազմել են 514,5 մլն դրամ: Ծրագրի 2016

թվականի ճշտված բյուջեն կազմել է 616,9 մլն դրամ կամ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով դեպքերի ավելացման համար նախատեսվել է 102,3 մլն դրամ: 2016 թվականի տարեվերջին կազմակերպությունների ճշտված պայմանագրային գումարները կազմել են 616,8 մլն դրամ կամ տարվա ընթացքում իրականացվել է 102,3 մլն դրամի փոփոխություններ: Մասնավորապես.

1) տարվա ընթացքում ծառայությունների զարգացման, ընդլայնման, հասանելիության և մատչելության ապահովման նպատակով թվով 11 կազմակերպություններում տեղադրվել է պետական պատվեր և կնքվել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ ընդհանուր 27.2 մլն դրամ ճշտված պայմանագրային գումարներով,

2) կազմակերպությունների պայմանագրային գումարների մնացած 75,1 մլն դրամ փոփոխությունները իրականացվել են հիմք ընդունելով որոշման հավելվածի 4-րդ կետի 6)-րդ ենթակետը և 35-րդ կետը:

3. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսվել է 514,6 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար 2015 թվականի տարեսկզբին կազմակերպությունների կնքված պայմանագրային գումարները կազմել են 488,9 մլն դրամ: 2017 թվականի տարեվերջին կազմակերպությունների ճշտված պայմանագրային գումարները կազմել են 533,1 մլն դրամ կամ տարվա ընթացքում իրականացվել է 44,2 մլն դրամի փոփոխություններ: Կազմակերպությունների պայմանագրային գումարների մնացած 168,4 մլն դրամ փոփոխությունները իրականացվել են հիմք ընդունելով որոշման հավելվածի 4-րդ կետի 6)-րդ ենթակետը և 35-րդ կետը:

**4. «Նորմեդ» ՍՊԸ-ում և «Իզմիրլյան ԲԿ» ՓԲԸ-ում** 2015 թվականին «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրով կատարված աշխատանքներից ավելի հատկացված 1,479.0 հազար դրամ գումարի չափով պակաս են վճարվել կազմակերպությունների կողմից իրականացվող այլ ծրագրերով կատարված աշխատանքները, որի արդյունքում 2015 թվականին կազմակերպությունները ֆինանսավորվել են բոլոր ծրագրերով կատարված աշխատանքների ընդհանուր գումարի չափով:

5. Կազմակերպությունները ֆինանսավորվում են փաստացի կատարված աշխատաների դիմաց, սակայն ոչ ավելի քան ֆինասավորման համամասնությունները: Հաշվի առնելով վերոգրյալը, հարկ է նշել, որ կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվություններով ամսական համամասնություններից ավելի կատարողականների պայմաններում ֆինանսավորումն իրականացվել է ֆինանսավորման ամսական համամասնությունների շրջանակներում: Այսինքն, անկախ կազմակերպության կողմից ներկայացված աշխատանքների ամսական համամասնության գերազանցումների, ֆինանսավորման տեսանկյունից կատված աշխատանքները փոխհատուցվել են ֆինանսավորման ամսական համամասություններով:

«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի 2015 թվականի պայմանագրային գումարներ

| | | |
|---|---|---|
| 2015 թվականի բյուջեով նախատեսված | 514,562.9 | հազար դրամ |
| 2015 թվականի ճշտված բյուջեով նախատեսված | 677,562.9 | հազար դրամ |
| դեպքերի համար համար նախատեսված վելացումներ | 163,000.0 | հազար դրամ |

/հազար դրամ/

| Կազմակերպության անվանումը | 2015 թվականի պայմանագրային գումար (ՀՀ ԱՆ 10.02.2015թ N234-Ա) | ՀՀ ԱՆ 11.03.2015թ. N531-Ա հրաման | ՀՀ ԱՆ 14.07.2015թ. N1853-Ա հրաման | ՀՀ ԱՆ 24.09.2015թ. N2600-Ա հրաման | ՀՀ ԱՆ 01.12.2015թ. N3413-Ա հրաման | 2015 թվականի ճշտված պայմանագրային գումար | ԸՆԴԱՄԵՆԸ-փոփոխություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ, որից** | **493,250.0** | **0.0** | **19,000.0** | **102,000.0** | **62,487.6** | **676,737.6** | **183,487.6** |
| **Երևան, այդ թվում** | **448,450.0** | **-3,000.0** | **19,000.0** | **92,000.0** | **59,481.2** | **615,931.2** | **167,481.2** |
| 'Սուրբ Աստվածամայր ԲԿ' ՓԲԸ | 10,000.0 | | | | | 10,000.0 | 0.0 |
| 'Նորք Մարաշ' ԲԿ ՓԲԸ | 32,000.0 | | 10,000.0 | 20,000.0 | 10,054.2 | 72,054.2 | 40,054.2 |
| 'Մ. Հերացու անվ.Երեւանի պետ. բժշկական համալս.' ՊՈԱԿ | 32,000.0 | | | 8,000.0 | 1,187.1 | 41,187.1 | 9,187.1 |
| 'Ճառագայթային բժշկության և այրվածքների ԳԿ ' ՓԲԸ | 7,000.0 | | | | 4,560.2 | 11,560.2 | 4,560.2 |
| 'Գրիգոր Լուսավորիչ ԲԿ' ՓԲԸ | 30,000.0 | | | 10,000.0 | -13,000.0 | 27,000.0 | -3,000.0 |
| 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | 22,000.0 | | | 15,000.0 | 14,000.0 | 51,000.0 | 29,000.0 |
| 'Արաբկիր' Բժշկական Համայիր ՍՊԸ | 21,000.0 | | | | 8,472.2 | 29,472.2 | 8,472.2 |
| 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | 13,000.0 | | | 7,000.0 | | 20,000.0 | 7,000.0 |
| 'Վերարտ. առողջ., պերինատ.,մանկաբ. և գինեկ. հանրապ. ինստ. ՓԲԸ | 23,000.0 | | | | 1,025.3 | 24,025.3 | 1,025.3 |
| 'Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ' ՓԲԸ | 2,000.0 | | | | | 2,000.0 | 0.0 |
| 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | 1,000.0 | | | 5,000.0 | 4,842.9 | 10,842.9 | 9,842.9 |
| 'Վ. Ավագյանի անվան ԲԿ' ՍՊԸ | 5,000.0 | | | 2,000.0 | | 7,000.0 | 2,000.0 |
| Բժշկական գենետիկայի և ԱԱՊ ՍՊԸ | 25,000.0 | | | 6,000.0 | 2,000.0 | 33,000.0 | 8,000.0 |
| 'Դիագնոստիկա բժշկական միավորում' ԲԲԸ | 25,000.0 | | 3,000.0 | 3,000.0 | 1,523.3 | 32,523.3 | 7,523.3 |
| 'Արմամաքս' ՍՊԸ | 152,450.0 | -3,000.0 | | 10,000.0 | 15,163.4 | 174,613.4 | 22,163.4 |
| 'Ոյտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն' ՍՊԸ | 15,000.0 | | 6,000.0 | 1,000.0 | 2,000.0 | 24,000.0 | 9,000.0 |
| 'Օլիոս-Մեդ' ՍՊԸ | 12,000.0 | | | | -12,000.0 | 0.0 | -12,000.0 |
| 'Նորմեդ' ՍՊԸ | 6,000.0 | | | 3,000.0 | | 9,000.0 | 3,000.0 |
| 'Ագֆա-Բետտա ԲԱԿ' ՍՊԸ | 4,000.0 | | | | | 4,000.0 | 0.0 |
| «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկա-ախտորոշիչ կենտրոն–Երևանե ՍՊԸ | 5,000.0 | | | 2,000.0 | 9,652.6 | 16,652.6 | 11,652.6 |
| Նորք ինֆեկցիոն հիվանդանոց ՓԲԸ | 2,000.0 | | | | | 2,000.0 | 0.0 |
| 'Իզմիրլյան' ԲԿ ՓԲԸ | 2,000.0 | | | | | 2,000.0 | 0.0 |
| Արինտերյև ՍՊԸ Վարդանանց ԲԿ ՓԲԸ | | | | | 12,000.0 | 12,000.0 | 12,000.0 |
| 'Գրիգոր Նարեկացի ԲԿ' ՓԲԸ | 2,000.0 | | | | -2,000.0 | 0.0 | -2,000.0 |
| **Շիրակի մարզ, այդ թվում** | **39,700.0** | **0.0** | **0.0** | **10,000.0** | **1,506.4** | **51,206.4** | **11,506.4** |
| «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամ | 8,500.0 | | | | | 8,500.0 | 0.0 |
| «Գյումրու Վ.Աբաջյանի անվ ընտանեկան բժշկության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն | 1,200.0 | | | | | 1,200.0 | 0.0 |
| «Մարատ Ստեփանյան» Ա/Ձ | 15,000.0 | | | 10,000.0 | | 25,000.0 | 10,000.0 |
| «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ | 15,000.0 | | | | 1,506.4 | 16,506.4 | 1,506.4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռու մարզ, այդ թվում** | **5,100.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **1,500.0** | **6,600.0** | **1,500.0** |
| | «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ | 600.0 | | | | | 600.0 | 0.0 |
| | «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ | 1,000.0 | | | | | 1,000.0 | 0.0 |
| | «Լոռի-մեդ» ՓԲԸ | 3,500.0 | | | | 1,500.0 | 5,000.0 | 1,500.0 |
| | **Տավուշի մարզ, այդ թվում** | **0.0** | **3,000.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **3,000.0** | **3,000.0** |
| | Իռ Վինգ ՍՊԸ (Դիլիջանի ԲԿ) | 0.0 | 3,000.0 | | | | 3,000.0 | 3,000.0 |

«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի 2016 թվականի պայմանագրային գումարներ

| | | |
|---|---|---|
| 2016 թվականի բյուջեով նախատեսված | 514,562.9 | հազար դրամ |
| 2016 թվականի ճշտված բյուջեով նախատեսված | 616,862.9 | հազար դրամ |
| դեպքերի համար համար նախատեսված վճեագումներ | 102,300.0 | հազար դրամ |

հազար դրամ

| | Կազմակերպության անվանումը | 2015 թվականի ֆինանսավորում | Ծրագրի հաշվարկման բազայի ճշտում (կորոնարոանգիոգրաֆիա ն տեղափոխվել է այլ ծրագիր) | 2016 թվականի պայմանագրային գումարի հաշվարկման ճշտված բազա | 2016 թվականի տարեսկզբի պայմանագրային գումար (ՀՀ ԱՆ 01.02.2016թ N253-Ա հրաման) | 2016 թվականի տարեսկզբի վերահաշվարկված պայմանագրային գումար (ՀՀ ԱՆ 31.03.2016թ N939-Ա հրաման) | ՀՀ ԱՆ 21.10.2016թ. N3187-Ա հրաման | ՀՀ ԱՆ 17.11.2016թ. N3424-Ա հրաման | 2015 թվականի ճշտված պայմանագրային գումար | ԸՆԴԱՄԵՆԸ-փոփոխություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ, որից** | **661,490.2** | **-76,524.4** | **584,965.8** | **395,441.2** | **514,534.3** | **134,289.0** | **-32,000.0** | **616,823.3** | **102,289.0** |
| | **Երևան, այդ թվում** | **604,525.0** | **-66,549.4** | **537,975.6** | **361,172.7** | **454,354.9** | **119,122.3** | **-20,000.0** | **553,477.2** | **99,122.3** |
| | 'Սուրբ Աստվածամայր ԲԿ' ՓԲԸ | 9,960.0 | | 9,960.0 | 9,960.0 | 10,960.0 | | | 10,960.0 | 0.0 |
| | 'Նորք Մարաշ' ԲԿ ՓԲԸ | 71,050.0 | -32,000.0 | 39,050.0 | 0.0 | 6,000.0 | | | 6,000.0 | 0.0 |
| | 'Մ. Հերացու անվ.Երեւանի պետ. բժշկական համալս.' ՊՈԱԿ | 41,187.0 | -16,625.0 | 24,562.0 | 15,375.0 | 19,968.5 | 6,499.6 | | 26,468.1 | 6,499.6 |
| | 'Ճառագայթային բժշկության և այրվածքների ԳԿ ' ՓԲԸ | 8,829.0 | | 8,829.0 | 7,000.0 | 7,914.5 | 1,184.1 | | 9,098.6 | 1,184.1 |
| | 'Գրիգոր Լուսավորիչ ԲԿ' ՓԲԸ | 27,000.0 | | 27,000.0 | 27,000.0 | 27,000.0 | | | 27,000.0 | 0.0 |
| | 'Արմենիա' հանրապետական ԲԿ ՓԲԸ | 50,763.0 | -9,450.0 | 41,313.0 | 12,550.0 | 26,931.5 | 3,852.0 | | 30,783.5 | 3,852.0 |
| | 'Արաբկիր' Բժշկական Համալիր ՍՊԸ | 29,472.2 | | 29,472.2 | 21,000.0 | 21,000.0 | 5,357.3 | | 26,357.3 | 5,357.3 |
| | 'Էրեբունի' ԲԿ ՓԲԸ | 20,000.0 | -7,735.0 | 12,265.0 | 5,265.0 | 8,765.0 | 5,613.3 | | 14,378.3 | 5,613.3 |
| | 'Վերարտ. առողջ., պերինատ.,մանկաբ. և գինեկ. հանրապ. ինստ. ՓԲԸ | 24,025.2 | | 24,025.2 | 23,000.0 | 23,512.6 | 3,434.4 | | 26,947.0 | 3,434.4 |
| | 'Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ' ՓԲԸ | 1,997.5 | | 1,997.5 | 1,997.5 | 1,997.5 | 295.9 | | 2,293.4 | 295.9 |
| | 'Նաթալի ֆարմ' ՍՊԸ 'Մալաթիա' ԲԿ | 10,650.0 | -739.4 | 9,910.6 | 260.6 | 8,085.6 | 12,242.1 | | 20,327.7 | 12,242.1 |
| | 'Վ. Ավագյանի անվան ԲԿ' ՍՊԸ | 6,985.0 | | 6,985.0 | 5,000.0 | 8,992.5 | 3,410.9 | | 12,403.4 | 3,410.9 |
| | Բժշկական գենետիկայի և ԱԱՊ ՍՊԸ | 32,168.5 | | 32,168.5 | 25,000.0 | 32,000.0 | 4,781.3 | | 36,781.3 | 4,781.3 |
| | 'Դիագնոստիկա բժշկական միավորում' ԲԲԸ | 31,973.3 | | 31,973.3 | 25,000.0 | 28,486.7 | 5,306.0 | | 33,792.7 | 5,306.0 |
| | 'Արմամաքս' ՍՊԸ | 174,613.4 | | 174,613.4 | 152,450.0 | 163,531.7 | 23,000.0 | | 186,531.7 | 23,000.0 |
| | 'Ուլտրաիմիջինգ գիտամեթոդական կենտրոն' ՍՊԸ | 23,999.9 | | 23,999.9 | 15,000.0 | 22,000.0 | 8,418.9 | | 30,418.9 | 8,418.9 |
| | 'Նորմեդ' ՍՊԸ | 6,936.0 | | 6,936.0 | 6,000.0 | 8,068.0 | 1,432.0 | | 9,500.0 | 1,432.0 |
| | 'Ալֆա-Բետտա ԲԱԿ' ՍՊԸ | 3,617.8 | | 3,617.8 | 3,617.8 | 3,617.8 | | | 3,617.8 | 0.0 |
| | «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկա-ախտորոշիչ կենտրոն–Երևանե ՍՊԸ | 16,652.6 | | 16,652.6 | 5,000.0 | 10,826.3 | | | 10,826.3 | 0.0 |
| | Նորք ինֆեկցիոն հիվանդանոց ՓԲԸ | 522.8 | | 522.8 | 522.8 | 522.8 | 103.7 | | 626.5 | 103.7 |
| | 'Իզմիրլյան' ԲԿ ՓԲԸ | 174.0 | | 174.0 | 174.0 | 1,174.0 | 10,000.0 | | 11,174.0 | 10,000.0 |
| | 'Գրիգոր Նարեկացի ԲԿ' ՓԲԸ | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | | | 0.0 | 0.0 |
| | Արինտերլև ՍՊԸ Վարդանանց ԲԿ ՓԲԸ | 11,947.8 | | 11,947.8 | 0.0 | 0.0 | 24,000.0 | -20,000.0 | 4,000.0 | 4,000.0 |
| | 'Պրոֆ© Ռ.Օ.Յոլյանի անվան հանրապետական այրունաբանական կենտրոն' ՓԲԸ | | | | | 6,000.0 | | | 6,000.0 | 0.0 |
| | Բարեկամ ՍՊԸ | | | | | 5,000.0 | | | 5,000.0 | 0.0 |
| | Նատա-Մեդ | | | | | 1,000.0 | | | 1,000.0 | 0.0 |
| | Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ | | | | | 1,000.0 | 190.8 | | 1,190.8 | 190.8 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Շիրակի մարզ, այդ թվում** | **50,921.2** | **-9,975.0** | **40,946.2** | **29,724.5** | **40,835.4** | **11,213.3** | **0.0** | **52,048.7** | **11,213.3** |
| | «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամ | 8,500.0 | | 8,500.0 | 8,500.0 | 8,500.0 | | | 8,500.0 | 0.0 |
| | «Գյումրու Վ.Աբաջյանի անվ ընտանեկան բժշկության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն | 1,199.5 | | 1,199.5 | 1,199.5 | 1,199.5 | | | 1,199.5 | 0.0 |
| | «Մարատ Ստեփանյան» Ա/Ձ | 24,715.3 | | 24,715.3 | 15,000.0 | 20,857.7 | 8,018.6 | | 28,876.3 | 8,018.6 |
| | «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ | 16,506.4 | -9,975.0 | 6,531.4 | 5,025.0 | 10,278.2 | 3,194.7 | | 13,472.9 | 3,194.7 |
| | **Լոռու մարզ, այդ թվում** | **6,044.0** | **0.0** | **6,044.0** | **4,544.0** | **7,044.0** | **1,330.5** | **0.0** | **8,374.5** | **1,330.5** |
| | «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ | 527.5 | | 527.5 | 527.5 | 527.5 | 89.3 | | 616.8 | 89.3 |
| | «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ | 516.5 | | 516.5 | 516.5 | 516.5 | | | 516.5 | 0.0 |
| | «Լոռի-մեդ» ՓԲԸ | 5,000.0 | | 5,000.0 | 3,500.0 | 5,000.0 | 1,127.2 | | 6,127.2 | 1,127.2 |
| | Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՓԲԸ | | | | | 300.0 | | | 300.0 | 0.0 |
| | Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ | | | | | 700.0 | 114.0 | | 814.0 | 114.0 |
| | **Կոտայքի մարզ, այդ թվում** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **12,000.0** | **0.0** | **-12,000.0** | **0.0** | **-12,000.0** |
| | 'Օլիոս-Մեդ' ՍՊԸ | 0.0 | | 0.0 | 0.0 | 12,000.0 | | -12,000.0 | 0.0 | -12,000.0 |
| | **Արագածոտնի մարզ, այդ թվում** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **300.0** | **0.0** | **0.0** | **300.0** | **0.0** |
| | Աշտարակի ԲԿ | | | | | 300.0 | | | 300.0 | 0.0 |
| | **Սյունիքի մարզ, այդ թվում** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **2,000.0** | **0.0** | **2,000.0** | **2,000.0** |
| | Գորիսի ԲԿ | | | | | | 2,000.0 | | 2,000.0 | 2,000.0 |
| | **Տավուշի մարզ, այդ թվում** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **622.9** | **0.0** | **622.9** | **622.9** |
| | Իռ Վինգ ՍՊԸ | | | | | | 622.9 | | 622.9 | 622.9 |

«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի 2017 թվականի պայմանագրային գումարներ

| | | |
|---|---|---|
| 2017 թվականի բյուջեով նախատեսված | 514,562.9 | հազար դրամ |
| 2017 թվականի ճշտված բյուջեով նախատեսված | 525,562.9 | հազար դրամ |
| դեպքերի համար համար նախատեսված վեյացումներ | 11,000.0 | հազար դրամ |

հազար դրամ

| | Կազմակերպության անվանումը | 2017 թվականի պայմանագրային գումար (ՀՀ ԱՆ 09.02.2017թ N315-Ա) | ՀՀ ԱՆ 20.03.2017թ. N876-Ա հրաման | ՀՀ 10.07.2017թ. N2177-Ա հրաման | ՀՀ ԱՆ 22.2017թ N3336-Ա հրամանով | 2015 թվականի ճշտված պայմանագրային գումար | ԸՆԴԱՄԵՆԸ-փոփոխություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ, որից** | **488,925** | **6,563** | **15,000** | **22,633** | **533,121** | **44,196** |
| 1 | Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ | 20,804.2 | | | 2,907.3 | 23,711.5 | 2,907.3 |
| 2 | Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ | 11,790.8 | | | 0.0 | 11,790.8 | 0.0 |
| 3 | Արաբկիր Բժշկական Համայիր ԵԴԱԻ ՍՊԸ | 23,436.9 | 6,563.1 | | 3,104.1 | 33,104.1 | 9,667.2 |
| 4 | Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ | 23,190.3 | | | 0.0 | 23,190.3 | 0.0 |
| 5 | Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ | 27,372.7 | | | 5,175.7 | 32,548.4 | 5,175.7 |
| 6 | Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի,մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ | 23,961.3 | | | 0.0 | 23,961.3 | 0.0 |
| 7 | Նաթալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն | 17,086.9 | | | 1,028.6 | 18,115.4 | 1,028.6 |
| 8 | Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ | 9,505.5 | | | 0.0 | 9,505.5 | 0.0 |
| 9 | Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ | 1,326.7 | | | 304.8 | 1,631.4 | 304.8 |
| 10 | Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ ՓԲԸ | 2,029.2 | | | 0.0 | 2,029.2 | 0.0 |
| 11 | Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ | 9,927.5 | | | 0.0 | 9,927.5 | 0.0 |
| 12 | Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ | 1,778.4 | | | 0.0 | 1,778.4 | 0.0 |
| 13 | Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ | 539.7 | | | 0.0 | 539.7 | 0.0 |
| 14 | Աշտարակի բժշկական կենտրոն ՓԲԸ | 117.4 | | | 0.0 | 117.4 | 0.0 |
| 15 | Սպիտակի ԲԿ | 723.8 | | | 0.0 | 723.8 | 0.0 |
| 16 | Պրոֆ. Ռ.Օ.Յոյլանի անվան այրունաբանական կենտրոն ՓԲԸ | 5,334.9 | | | 497.6 | 5,832.5 | 497.6 |
| 17 | Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն ՓԲԸ | 8,090.5 | | | 587.7 | 8,678.2 | 587.7 |
| 18 | Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ | 1,058.9 | | | 0.0 | 1,058.9 | 0.0 |
| 19 | Ախուրյանի մոր և մանկան ԱԿ հիմնադրամ | 7,558.2 | | | 0.0 | 7,558.2 | 0.0 |
| 20 | Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա | 511.3 | | | 0.0 | 511.3 | 0.0 |
| 21 | Արմամաքս ՍՊԸ | 159,864.0 | | 15,000.0 | 0.0 | 174,864.0 | 15,000.0 |
| 22 | ԻռՎինգ ՍՊԸ | 6,553.9 | | | 0.0 | 6,553.9 | 0.0 |
| 23 | Իզմիրլյան բժշկական կենտրոն ՓԲԸ | 4,152.6 | | | 2,027.9 | 6,180.5 | 2,027.9 |
| 24 | Վ. Ավագյանի անվան բժշկական կենտրոն ՍՊԸ | 10,643.6 | | | 2,000.0 | 12,643.6 | 2,000.0 |
| 25 | Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա | 22.2 | | | 0.0 | 22.2 | 0.0 |
| 26 | Արինտերլև ՍՊԸ Վարդանանց բժշկական կենտրոն ՓԲԸ | 3,556.8 | | | 0.0 | 3,556.8 | 0.0 |
| 27 | Գյումրու Վ.Աբաջյանի անվան Ընտանեկան ԲԿ ՓԲԸ | 1,061.7 | | | 0.0 | 1,061.7 | 0.0 |
| 28 | Դիագնոստիկա բժշկական միավորում ԲԲԸ | 29,126.5 | | | 0.0 | 29,126.5 | 0.0 |
| 29 | Ուլտրահիմիֆինգ գիտամեթոդական կենտրոն ՍՊԸ | 27,048.4 | | | 0.0 | 27,048.4 | 0.0 |
| 30 | Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն ՍՊԸ | 30,997.1 | | | 0.0 | 30,997.1 | 0.0 |
| 31 | Մարատ Ստեփանյան Ա/Ձ | 13,296.8 | | | 5,000.0 | 18,296.8 | 5,000.0 |
| 32 | Նորմեդ ՍՊԸ | 6,456.5 | | | 0.0 | 6,456.5 | 0.0 |

**Պարզաբանումներ**
**Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2018 թվականի մարտի 12-ի միջանկյալ արձանագրության վերաբերյալ**

Իրականացված ստուգման ընթացքում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) ամրացված շենք/շինությունների մասին հայտնաբերված փաստերի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

**1-ին կետ կետում** նշված է, որ 2015-2018թթ. ընթացքում միայն թվով 25 հասցեներում գտնվող շենք/շինությունների համար են սահմանված կարգով կնքվել տարածքների անհատույց օգտագործման պայմանագրեր, սակայն փաստացի անհատույց օգտագործման պայմանագիր է կնքվել թվով 26 շենքի համար, իսկ նույն ժամանակահատվածում Կազմակերպության կողմից օգտագործվել է ոչ թե 26, այլ 21 հասցեներում գտնվող շենք/շինություններ (թեև պայմանագիր չեն ունեցել, սակայն չեն էլ օգտագործվել Արմավիրի մարզի ք. Արմավիր, Հերացի 5, Արմավիրի մարզի, Բաղրամյանի տարածաշրջանի գ. Մյասնիկյան և ք. Մարալիկ հասցեներում գտնվող մասնաշենքերը, իսկ ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան 120, ք. Կապան, Շինարարների 1 հասցեներում գտնվող մասնաշենքերի համար կնքվել են անհատույց օգտագործման պայմանագրեր):

**3-րդ կետում նշվում** է, որ խախտվել է ՀՀ ՔՕ 476-րդ հոդվածը, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 14-ի «Պետական գույքն օտարելու մասին» թիվ 423-Ա որոշմամբ չի նշվել տվյալ գույքի՝ երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ: Հարկ է նշել, որ ՀՀ ՔՕ 476-րդ հոդվածով սահմանված են պարտականություններ վաճառողի համար, իսկ Կազմակերպությունն այդ հարաբերություններում հանդես է եկել որպես գույքի անհատույց օգտագործող, հետևաբար վերը նշված հոդվածը Կազմակերպության կողմից չի խախտվել:

Միաժամանակ հայտնում եմ, որ Կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքը Անդրեֆերացիայի փողոց 2 հասցեում գտնվող անշարժ գույքի

նկատմամբ դադարեցվել է՝ համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված N ԱՏ-17/03/2018-2-0182 տեղեկանքի:

4-րդ կետում նշվում է, որ Կազմակերպությանն անհատույց օգտագործման տրամադրված ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Հերցենի 25 հասցեում գտնվող տարածքը՝ 0.32447 հա հողամասով և 1443 քմ շենք/շինությունով, որն օգտագործվում է Կազմակերպության կողմից առանց օրենքով սահմանված կարգով
կնքված պայմանագիր ունենալու, ՀՀ կառավարության 20.04.2017թ. թիվ 423-Ա որոշման հավելվածի 20-րդ կետի համաձայն ներկայացվել է օտարման մրցույթի միջոցով: Հարկ է նշել, որ նշված գույքը Կազմակերպությանն անհատույց օգտագործման չի տրամադրվել և երրորդ անձանց, մասնավորապես՝ Կազմակերպության, անհատույց օգտագործման իրավունքով ծանրաբեռնված չի եղել, հետևաբար ՀՀ ՔՕ 476-րդ հոդվածը Կազմակերպության կողմից չի խախտվել:

**5-րդ կետում նշվում է, որ**
**Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում Կազմակերպության կողմից ետ վերադարձման ենթակա շենք/շինությունների պահպանման համար 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել են շուրջ 3,447.9 (էլ. էներգիա՝ 1,191.7, ջուր՝ 66.6, գազ՝ 58.9 և անվտանգություն՝ 2,130.6) հազ. դրամի ծախս:**

Հարկ է նշել, որ կազմակերպության օպտիմալացման գործընթացը իրականացվել է փուլային, տարբեր ժամանակահատվածներում և տվյալ հասցեներում շենք շինություններում առկա գույքի տեղափոխման և լաբորատոր սարքավորումների

ապամոնտաժման աշխատանքները ժամանակատար լինելու կապակցությամբ կատարվել են պահպանման ծախսեր, իսկ որոշ հասցեներում ծախսերը շարունակվել են՝ կապված գույքի պահպանման հետ, ինչը հիմնավորվում է ներքոհիշյալ փաստարկներով.

Կազմակերպության Երևանի թիվ 1 մասնաճյուղի գործունեության դադարեցումը իրականացվել է 2017 թվականի նոյեմբերի 29-ին, իսկ Մեծամորի ենթակառուցվածքում 2017 թվականի դեկտեմբերի 25-ին և Երևանի թիվ 1 մասնաճյուղի պահակներին նոյեմբեր, իսկ Մեծամորի մասնաշենքի պահակներին նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին վճարվել է աշխատավարձ (855.000 ՀՀ դրամ): Բնականաբար նշված ամիսներին կատարվել է նաև կոմունալ ծախսեր՝ 99.454 ՀՀ դրամ: Մարտունի ՀՎՎ, Հարությունյան 3 և Սիսիանի Արցախի 1 հասցեի մասնաշենքերում և Տավուշի մարզի ք.Դիլիջան, Շամախյան 2/1 հասցեում
պահպանվել է պահակային ծառայությունը (1.140 000 ՀՀ դրամ) և կատարվել է կոմունալ ծախսեր (165.906 ՀՀ դրամ), կապված մասնաշենքերում առկա գույքի և սարքավորումների հետ: Սյունիքի մարզի ք.Գորիս, Գուսան Աշոտի 30 հասցեում դեռևս շարունակում է գործել տարածաշրջանային կառույցի լաբորատոր մասը (30.766 ՀՀ դրամ): Գեղարքունիքի մարզի ք.Վարդենիսի Համբարձումյան 47 հասցեում գործող տարածաշրջանային կառույցի լաբորատորիան դեռևս շարունակում է գործել նույն հասցեում (121.629 ՀՀ դրամ): Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Տիգրան Մեծի 17/1 , Սևան, Նաիրյան 169, Կոտայքի մարզի ք.Եղվարդ, Չարենցի 198, ք. Երևանի Սեբաստիայի 3 և Տիգրանյան 6, Լեոյի 7, Արագածոտնի մարզի ք.Թալին, Խանջյան 24 հասցեներում գործող մասնաշենքերում կոմունալ ծախսեը կատարվել են՝ կապված գույքի և սարքավորումների տեղափոխման ժամանակատար գործընթացի հետ (602.206 ՀՀ դրամ): ՊՈԱԿ-ի «Վայոց Ձոր» մասնաճյուղի տեղափոխումը ք. Վայքից ք. Եղեգնաձոր նախատեսվել և իրականացվել է 2017 թվականի դեկտեմբերի 29-ից (94.368 ՀՀ դրամ):

**Վերահսկիչ պալատի նախագահի 2017թ-ի դեկտեմբերի 19-ի N12 հրամանի հիման վրա <Շենգավիթ բժշկական կենտրոն> ՓԲԸ-ում իրականացված հանդիպակաց ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ առարկությունները, պարզաբանումները և հիմնավորումները**

Վերահսկիչ պալատի նախագահի 2017թ. դեկտեմբերի 19-ի N 12 հրամանի հիման վրա "Շենգավիթ բժշկական կենտրոն" ՓԲԸ - ում (այսուհետ՝ Ընկերություն) իրականացվել է հանդիպակաց ստուգում, որով ուսումնասիրվել է Ընկերության կողմից 2015-2017թթ-ի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման գործընթացը:
Հանդիպակաց ստուգմամբ արձանագրվել է որ՝

1. 2015-2017թթ ընթացքում Ընկերություն այցելած մարզերում փաստացի բնակվող նորմալ կամ թեթևակի շեղումներով ծննդաբերների քանակը կազմել է 718 հոգի:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 412 հիվանդության պատմություն, որոնցից 112-ը չեն ունեցել Երևանում ժամանակավոր բնակության տեղեկանք, կամ վճարովի հիմունքներով կանանց կոնսուլտացիայում չեն կանգնել հաշվառման (ծննդօգնության հավաստագիրը ստացել են մարզերից), ինչպես նաև այն, որ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի՝ 29.11.2013թ. N 80-Ն, 20.05.2013թ. N1371-Ա հրամանների, Ընկերությունը այդ կարգի ծննդաբերների համար բժշկական օգնությունը պետք է կազմակերպեր վճարովի հիմունքներով, մինչդեռ թվով 112 ծննդաբերների դիմաց պետական պատվերի շրջանակներում ստացել է 12,252.8 հազ. դրամի չափով վճարում (112X109,400-12,252.800):

Ի պատասխան արձանագրության սույն կետի հայտնում ենք, որ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի՝ "Ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ ուղեգրման կարգը և ըստ բժշկական կազմակերպությունների մակարդակների հղիների/ծննդաբերների ուղեգրման և ընդունելության բժշկական ցուցումներն ու պայմանները հաստատելու մասին" և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 22 հունվարի 2013 թվականի Հ 89-ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին 20 մայիսի 2013թ. մայիսի 20-ի Հ 1371 - Ա հրամանի 2-կետի 3-րդ ենթակետի՝

"3) Բժշկական կազմակերպությունների վարչատարածքային ընտրության սկզբունքի սահմանափակումը չի տարածվում սույն հրամանի հավելված 1-ով և 2-ով սահմանված բժշկական ցուցումներով համապատասխան մակարդակների բժշկական կազմակերպություններ ռիսկի խմբի ուղեգրված հղիների/ծննդաբերների, անհետաձգելի իրավիճակների, մոր և պտղին վտանգ սպառնացող, նորմալ կամ բարդացած ծննդաբերական գործունեությամբ դեպքերի, ինչպես նաև այն դեպքերում, երբ հղիի նախածննդյան հսկողությունը իրականացվել է իր բնակության վայրից դուրս այլ վարչական տարածքների (Երևան/մարզեր) ծննդօգնության բժշկական կազմակերպություններում վճարովի հիմունքներով և տրամադրվել է հավաստագիր":

Բոլոր նշված հղիները ունեն համապատասխան ցուցում, համաձայն որի Ընկերությունը պարտավոր էր մատուցել անհետաձգելի բուժօգնություն պետական պատվերի շրջանակներում: Այդ բոլոր ցուցումները առկա են հիվանդությունների պատմություններում: Դրանք են՝ պտղաջրի վաղաժամ և վաղ արտահոսք, ծննդաբերության լատենտ ակտիվ և կոնքային փուլեր, պտղի սրտի աշխատանքի անոմալիաներ, նախկինում ծննդաբերությունների ընթացքում եղած բարդություններ: Հիվանդության պատմությունները, նշված հիմքերով, ուղարկվում են պետական առողջապահական գործակալություն և միայն ճշգրտման դեպքում են ֆինանսավորվում:

2. Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2013թ. N 202-Ա և 22.01.2015թ. N 74-Ա հրամաններով սահմանված ծննդաբերություն, վերակենդանացման բաժանմունքում ծառայություն և ախտաբանություն իրականացնող աշխատողների վարձատրության նվազագույն չափաքանակների, մանկաբարձական բժշկական օգնության ծրագրով հատկացված գումարի 68%-ը, վերակենդանացման բաժանմունքի գծով հատկացված առնվազն 50%-ը և ախտաբանության

ծառայության գծով հատկացված գումարի 20%-ը պետք է ուղղել նշված ծառայությունների մատուցումն ապահոված աշխատողների աշխատանքի վարձատրությանը:

Ընկերությունը 2015-2017թթ. հաշվարկներով ըստ առանձին ծառայությունների պետք է երեք ուղղություններով 901,633.6 հազ. դրամ գումարը վերաբաշխեր հետևյալ սկզբունքով՝

- Մանկաբարձական բժշկական օգնություն՝ 774,626.7 հազ. դրամ (1,139,157.0 հազ. դրամ X 68 %),
- Վերակենդանացման բաժանմունք (ծառայություն)՝ 102,698,5 հազ. դրամ (205,397.0 հազ. դրամ X 50 %),
- Ախտաբանության ծառայություն՝ 24,308.4 հազ.դրամ (121,542.0 հազ. դրամ X 20 %):

Սակայն կազմակերպության կողմից 2015-2017թթ.նշված ծառայությունների գծով աշխատանքի վարձատրության ֆոնդին է ուղղվել՝ 777,241.4 հազ.դրամ:

Տարբերությունը կազմել է՝ 124,392.2 հազ.դրամ (901,633.6 - 777,241.4):

Արձանագրության սույն կետում նշված դիտողությունների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝ "Շենգավիթ" ԲԿ ՓԲԸ-ում ծառայությունների մատուցումը տարբերվում է այլ նմանատիպ կազմակերպությունների գործելավոճից: Ընկերությունում նույն բուժ աշխատողը (բժիշկ թե միջին բուժ. անձնակազմ) ընդգրկված է ծննդի, հետծննդյան և ախտաբանության գործընթացում: Եվ որպեսզի պահպանվի աշխատակիցների միջև աշխատանքի վարձատրության միջինացված հաշվեկշիռը, Ընկերության ղեկավարությունը ցուցաբերել է այլ մոտեցում վարձատրության գործում: Այլ պարագայում կստացվեր, որ նմանատիպ աշխատանք կատարելով աշխատակիցները կստանային կտրուկ անհավասարաչափ վարձատրություն:

Արձանագրության մեջ նշված 124,392.2 դրամ վարձատրության ֆոնդից ավելացված գումարը պարգևատրման ձևով ուղղվել է սպասարկման գործընթացին անուղղակի մասնակցություն ունեցող աշխատակիցների վարձատրմանը (ցուցակը կցվում է), որի գումարը երեք տարվա կտրվացքով կազմել է 129,361,470 դրամ: Ընդ որում Ընկերության կողմից կատարվել են այդ կապակցությամբ բոլոր հարկային պարտավորությունները:

3. Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 03.12.2013թ. N 78-Ն հրամանով սահմանված չափորոշիչի 2-րդ կետի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Երեխաների բժշկական օգնության ծառայություն ծրագրով Ընկերությունն առանց համապատասխան լիցենզիայի պետական պատվերի շրջանակներում իրականացրել է 205,396.0 հազ.դրամի չափով նորածինների և մինչև մեկ տարեկան երեխաների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի գործառույթ, մասնավորապես.

- 2015թ.-ին 2925 ծնունդներից 234 երեխա տեղափոխվել է ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունք ու դուրս գրվել, որի դիմաց փոխհատուցումը կազմել է ՝ 74,767.0 հազ. դրամ:
- 2016թ-ին 2315 ծնունդներից ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունքից դուրս գրված 222 երեխայի դիմաց փոխհատուցումը կազմել է ՝ 72,406.0 հազ. դրամ:
- 2017թ.-ին 2090 ծնունդներից բաժանմունքից դուրս գրված 173 երեխայի դիմաց փոխհատուցումը կազմել է՝ 58,223.0 հազ. դրամ:

Ի պատասխան արձանագրության սույն կետի հայտնում ենք, որ Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում էր համաձայն 30.09.2002թ. տրված թիվ կ-XX-000001 լիցենզիայի, որը տրամադրվել էր համաձայն ՀՀ առողջապահության նախարարի

համապատասխան հրամանի: Ընդ որում վերոհիշյալ լիցենզիան տրամադրված է անժամկետ: Այս օրվա դրությամբ Ընկերությունը ՀՀ առողջապահության նախարարությունից չի ստացել որև՝ ցուցում լրացուցիչ լիցենզիա ստանալու անհրաժեշտության վերաբերյալ:

Այս օրվա դրությամբ Ընկերությունը՝ նոր մասնաշենքը գործողության մեջ դնելու կապակցությամբ, արդեն իսկ շտկել է այդ հարցը:

4. ՀՀ կառավարության 24.12.2015թ. N1528-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 03.07.2015թ. N39-Ն հրամանի համաձայն, անպտուղ զույգերը պետք է ընտրվեն ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներից:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերարտադրողական օժանակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություն ստանալու նպատակով 2016թ.-ին Ընկերություն են ուղեգրվել թվով 11 անպտուղ զույգ:

Ստուգմամբ պարզվել է, որ բժշկական կենտրոն ուղեգրված և անվճար բժշկական օգնություն ստացած քաղաքացին, լինելով Երևան քաղաքի բնակիչ (Սարի թաղ 2-րդ շարք, տուն 43), արհեստական բեղմնավորման ուղեգիր ստանալուց 41 օր առաջ գրանցվել է Տավուշի մարզի Չինար գյուղում:

2015-2016թթ. նշված քաղաքացին ՀՀ առողջապահության նախարարության կողմից 4 անգամ ուղեգրվել է Ընկերություն հետազոտման, որի դիմաց պետական բյուջեի միջոցներից վճարվել է՝ 1,962.7 հազ.դրամ, որից 4,400.0 հազ.դրամը արհեստական բեղմնավորման համար:

Ի պատասխան արձանագրության սույն կետի հայտնում ենք, որ Ընկերությունը իրավասու չէ հսկելու քաղաքացիների հաշվառման վայրի փոփոխության գործընթացը:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ, մեր կարծիքով, ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2013թ. N 202-Ա, 22.01.2015թ. N 74-Ա, 20.05.2013թ. N1371-Ա հրամանները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

Վերոնշված հրամանները սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ և համաձայն “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի, որը ընդունված է Ազգային Ժողովի կողմից 2002 թվականի ապրիլի 3-ն (հոդված 4, կետ 2) հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում ընդունված իրավական ակտեր (գերատեսչական ակտեր):

“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքը (հոդված 2, կետ 3) սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքը (հոդված 2, կետ 3) սահմանում է, որ իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած վարքագծի կանոնն է, որն ունի ժամանակավոր

կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար:

Վերոհիշյալ հրամանները սահմանում են վարքագծի կանոններ, որոնք ունեն մշտական բնույթ, նախատեսված են բազմակի կիրառման համար և պարտադիր են անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար և հանդիսանում են նորմատիվ ակտ:

Համաձայն "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթների (4-րդ կետ) գերատեսչական նորմատիվ ակտերը կարող են հրապարակվել և ուժի մեջ մտնել "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստանալուց հետո:

"Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման կարգը:

Վերոհիշյալ հրամանները բացակայում են Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական Հայաստանի իրավական Տեղեկատվության Համակարգում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ հրամանները չեն անցել պետական իրավական փորձաքննություն և պետական գրանցում:

## ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պարզաբանումները և հիմնավորումները ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրության վերաբերյալ

**Կազմակերպության կողմից դեղերի ստացման և բաշխման վերաբերյալ**

Մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) պայմանավորված վարակը՝ ՄԻԱՎ վարակ, երկարատև ընթացքով քրոնիկ վարակային հիվանդություն է, որը դեռևս չունի արմատական բուժում: Առ այսօր չի ստեղծվել այնպիսի դեղ, որը կարողանար օրգանիզմից լիովին վտարել ՄԻԱՎ-ը և վերականգնել նրա պաշտպանական մեխանիզմները: Վիրուսը մարդու օրգանիզմում պահպանվում է ողջ կյանքի ընթացքում: Այդ պատճառով ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ողջ կյանքի ընթացքում բժշկական օգնության կարիք ունեն, իսկ բուժումը ցմահ գործընթաց է:

ՄԻԱՎ վարակի բուժման հիմքը հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժումն է:

<u>ՀՌՎ բուժման նշանակությունը և առանց ընդհատումների դեղերի տրամադրման կարևորությունն ու անհրաժեշտությունը</u>

ՀՌՎ բուժումը երեք և ավելի, ազդեցության տարբեր մեխանիզմներ ունեցող ՀՌՎ դեղերի համակցման օգտագործումն է օրգանիզմում ՄԻԱՎ-ի վերարտադրության ընկճման նպատակով: ՀՌՎ բուժման նպատակներն են՝ կյանքի տևողության երկարացումն ու կյանքի որակի բարելավումը, իմունիտետի պահպանումը/վերականգնումը օպորտունիստական վարակների (ՕՎ) և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) հետ ասոցացված հիվանդությունների կանխարգելման համար, վիրուսային ծանրաբեռնվածության (ՎԾ) առավելագույն նվազեցումը հնարավորինս երկար ժամանակով՝ հիվանդության զարգացումը դանդաղեցնելու նպատակով, ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգի նվազեցումը:

ՀՌՎ բուժման շնորհիվ այսօր ՄԻԱՎ վարակն անբուժելիի փոխարեն համարվում է քրոնիկ հիվանդություն և այլևս չի նշվում ՄԻԱՎ վարակով հիվանդի կյանքի վերին սահման, այսինքն՝ ՄԻԱՎ-ով մարդը կարող է ապրել այնքան, որքան առանց ՄԻԱՎ-ի: ՀՌՎ բուժման ֆոնին էապես նվազում է ՄԻԱՎ-ի փոխանցման հավանակությունը: Քանի որ ՀՌՎ բուժման արդյունքում ՎԾ-ն, այսինքն՝ արյան մեջ շրջանառվող վիրուսների քանակը նվազում է մինչև չհայտնաբերվող մակարդակ, զգալիորեն նվազում է ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը, այսինքն՝ ՀՌՎ բուժումն ունի նաև անմիջական կանխարգելիչ նշանակություն: ՀՌՎ դեղերի կիրառումը զգալիորեն նվազեցնում է ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը՝ ՄԻԱՎ վարակով կնոջը ՄԻԱՎ վարակից զերծ երեխա ունենալու հնարավորություն տալով:

ՀՌՎ բուժումն սկսում են հիվանդից գրավոր տեղեկացված համաձայնություն ստանալուց և ՀՌՎ դեղերի ընդունման կարգի պահպանման կարևորությունը բացատրելուց հետո: Որպեսզի ՀՌՎ բուժումը երկար ժամանակ լինի արդյունավետ, անհրաժեշտ է, որ հիվանդը խստորեն պահպանի բուժման կարգը՝ բուժման ողջ ընթացքում ամեն օր ընդունի նշանակված դեղերը սահմանված դեղաչափերով, սահմանված ժամին, պահպանելով անհրաժեշտ սննդակարգ: Դրա շնորհիվ նվազում են ՄԻԱՎ վարակով պայմանավորված հիվանդությունների զարգացման հաճախականությունն ու մահացությունը, մինչդեռ դեղերի ընդունման կարգի խախտման դեպքում արագ զարգանում է դեղակայունություն, ինչը հանգեցնում է բուժման անարդյունավետության և հիվանդության պրոգրեսիվ զարգացման: Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ նույնիսկ շաբաթվա ընթացքում մեկ կամ երկու դեղաչափի բացթողումը զգալիորեն ազդում է բուժման բարեհաջող ելքի վրա: Դեղակայունություն զարգանալիս ծագում է բուժման նոր, ավելի թանկարժեք սխեմաներին անցնելու անհրաժեշտություն: ՀՌՎ դեղերի սահմանափակ քանակի պայմաններում նվազում են հետագայում ակտիվ դեղերի ընտրության հնարավորությունները: Այսպիսով, ՀՌՎ դեղերի ընդունման կարգի պահպանումը՝ ամեն օր, ժամանակին և ճիշտ ընդունումը, բուժման արդյունավետության կարևոր նախապայմաններից է:

***Այսպիսով, պացիենտներին ՀՌՎ դեղերի անխափան և անընդհատ տրամադրումը բխում է երեք հիմնական բաղադրիչների ապահովման անհրաժեշտությունից:***

Իրավական բաղադրիչ

ՄԻԱՎ վարակը ներառված է ՀՀ կառավարության 27.12.01թ. հ. 1286 որոշմամբ հաստատված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում, որոնց բուժումը ըստ էության պարտադիր է համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, քանի որ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունով պացիենտն իրավունք չունի հրաժարվել բժշկական միջամտությունից: Հետևաբար ՀՌՎ դեղերի տրամադրումը պացիենտներին, անգամ այն ժամանակահատվածում, երբ նա ժամանակավորապես գտնվում է ՀՀ-ից դուրս, բխում է բուժման անընդհատության ապահովման իրավական պահանջից:

Առողջության պահպանման և բժշկական բաղադրիչ

ՀՌՎ բուժման դադարեցումը հանգեցնում է ՄԻԱՎ վարակով պացիենտի առողջական վիճակի վատթարացման, օպորտունիստական հիվանդությունների զարգացման և մահվան:

Բուժման անընդհատությունը խախտելու պայմաններում արյան մեջ ՀՌՎ դեղերի խտությունը լինում է ոչ բավարար վիրուսի բազմացումը ճնշելու համար, ինչը էականորեն նվազեցնում է բուժման արդյունավետությունը: Արյան մեջ շրջանառվող վիրուսների քանակի ավելացումը մեծացնում է ուրիշին վարակի փոխանցման հավանականությունը: Հետևաբար դեղերի տրամադրման դադարեցումը, բացասաբար անդրադառնալով ՄԻԱՎ վարակի կանխարգելման վրա և նպաստելով դրա հետագա տարածմանը, կարող է լուրջ խնդիրներ առաջացնել հանրային առողջապահության տեսանկյունից:

Դեղերի ընդունման ընդհատումների պայմաններում ի վերջո զարգանում է ՄԻԱՎ-ի դեղակայունություն, ինչը ՀՌՎ դեղերի սահմանափակ քանակի պայմաններում նվազեցնում է հետագայում ակտիվ դեղերի ընտրության հնարավորությունները: Մյուս կողմից ՄԻԱՎ-ի դեղակայուն ենթատեսակների տարածվածության աճի հետ մեկտեղ մեծանում է նոր վարակվողներին դրանց փոխանցման հավանականությունը: ՄԻԱՎ-ի դեղակայուն ենթատեսակով վարակումը նվազեցնում է առաջին շարքի արդյունավետ սխեմաների ընտրության հնարավորությունները և բացասաբար է անդրադառնում ՀՌՎ բուժման արդյունավետության վրա:

Ֆինանսական բաղադրիչ

Դեղերի անհրաժեշտ քանակները հաշվարկելիս հաշվի են առնվում պացիենտների թիվը՝ ըստ բուժման կիրառվող սխեմաների, դրանցում կանխատեսվող փոփոխությունները, նոր պացիենտների թիվը՝ ըստ սխեմաների: Դեղերի պատվերը կազմելիս հնարավոր չէ կանխատեսել արդեն իսկ բուժում ստացող և այն նոր սկսող պացիենտների թիվը, որոնք հնարավոր է տարվա ընթացքում ժամանակավորապես բացակայեն ՀՀ-ից: Հետևաբար նրանց դեղեր չտրամադրելու պայմաններում կառաջանա դեղերի ավելցուկ և դրանց խոտանման անհրաժեշտություն պիտանելիության ժամկետը լրանալու պատճառով:

Դեղակայունություն զարգանալիս, նաև ՄԻԱՎ-ի դեղակայուն ենթատեսակներով հարուցված ՄԻԱՎ վարակի բուժման համար պահանջվում է կիրառել երկրորդ և երրորդ շարքի սխեմաներ, որոնք առաջին շարքի սխեմաների համեմատ էականորեն թանկ են (տասնյակ անգամներ):

Դրանից բացի, բուժման անընդհատության խախտումը բարձրացնում է հիվանդության պրոգրեսիվ զարգացման և օպորտունիստական հիվանդությունների զարգացման վտանգը՝ մեծացնելով դրանց բուժման համար անհրաժեշտ ծախսերը:

**Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման և դրանց գների վերաբերյալ**

2015թ. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ՀՀԱՆՊԱԳ-ԾՁԲ-06910000 պայմանագրի հավելված 3-ում թույլատրված արտահիվանդանոցային ծառայությունները և գները սահմանվել են 19.01.2015թ. ՀՀ ԱՆ N45-Ա հրամանի հիման վրա: Հավելվածում «ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով) (առանց դեղորայքի)» ծառայության գինը սահմանվել է 2300դրամ: Նույն պայմանագրի 14.08.2015թ. N 06910000-1 համաձայնագրի հավելվածում 16.07.2015թ. ՀՀ ԱՆ N1901-Ա հրամանի հիման վրա նշված ծառայության գինը սահմանվել է 4500 դրամ, որը տարածվել է 2015թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: 2015թ. համար պետական պատվերի շրջանակում ներկայացվել և ընդունվել է այս ծառայության 15685 դեպք:

2016թ. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-06910000 պայմանագրի հավելված 1-ում թույլատրված արտահիվանդանոցային ծառայությունները և գները սահմանվել են 19.01.2016թ. ՀՀ ԱՆ N102-Ա հրամանի հիման վրա: Հավելվածում «ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդի կամ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով) (առանց դեղորայքի)» ծառայության գինը սահմանվել է 4500 դրամ: Նույն պայմանագրի 31.10.2016թ. N 06910000-2 համաձայնագրի հավելվածում 22.08.2016թ. ՀՀ ԱՆ N2627-Ա հրամանի հիման վրա նշված ծառայության գինը սահմանվել է 12350 դրամ, որը տարածվել է 2016թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: 2016թ. ընթացքում պետական պատվերի շրջանակում ներկայացվել և ընդունվել է այս ծառայության 12853 դեպք և ՄԻԱՎ վարակակրի դիսպանսերային հսկողություն (մեկ ամսվա համար, մեկ հիվանդի հաշվով) ծառայության 2700 դեպք, որը 2015թ. չի իրականացվել, այսինքն՝ 2016թ. համար պետական պատվերի շրջանակում ներկայացվել և ընդունվել է դիսպանսերային հսկողության 15553 դեպք, որը 2015թ. համեմատ պակաս է 132 դեպքով: Այսպիսով, կարելի է փաստել, որ 2015թ. և 2016թ. դիսպանսերային հսկողության դեպքերի քանակները գրեթե նույնն են:

2016թ. պետական բյուջեից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների ֆինանսավորման աճը 2015թ. համեմատ պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես. ՄԻԱՎ վարակով պացիենտներին որակյալ և արդյունավետ բժշկական օգնության տրամադրելու նպատակով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի բժշկական օգնության և սպասարկման և լաբորատոր ախտորոշման բաժինների ընդլայնված ենթակառուցվածքները 2016թ. համալրվել են բժշկական անձնակազմով, ավելացել են դիսպանսերային հսկողություն ծառայության մեջ ներառված հետազոտությունները և ենթածառայությունները (օրինակ՝ ռենտգենաբանական, խորխի ՊՇՌ մեթոդով հետազոտությունները, հակառետրովիրուսային դեղերի նկատմամբ դեղակայունության որոշումը, տուբերկուլոզի և իմունականխարգելման ենթածառայությունները՝ կանխարգելիչ պատվաստումներով և համապատասխան բժիշկների խորհրդատվություններով և այլն):

***Այսպիսով, 2015-2017թթ. ընթացքում կազմակերպության կողմից պայմանագրային բոլոր պարտավորությունները կատարվել են և պետական պատվերի պայմանագրերով սահմանված ծավալներն ամբողջությամբ ընդունվել են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Արդյունքում, ծառայությունների գների փոփոխությունը չի ազդել պայմանագրերի գների վրա և լրացուցիչ ֆինանսավորում չի իրակացվել:***

## «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ում ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 30/2 ՈՐՈՇՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի պատասխան ՀՀ Վերահսկիչ պալատի «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. դեկտեմբերի 1-ի թիվ 30/2 որոշմամբ իրականացված ստուգման ընթացքում հայտնաբերված փաստերի վերաբերյալ միջանկյալ արձանագրությամբ ներկայացված որոշ կետերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները՝

1. 1-ին՝ Ֆինանսատնտեսագիտական արդյունքների վերլուծություն բաժնի 14-րդ պարբերության համաձայն. *«Ինստիտուտում բավարար ֆինանսական միջոցների առկայության պայմաններում 2015-2017թթ. ժամանակահատվածում թվով 5 փոխառության պայմանագրերով ներգրավվել են շուրջ 13,000.0 հազ. դրամի միջոցներ՝ առանց գումարների ներգրավման անհրաժեշտության հիմնավորման: Ի դեպ, շուրջ 2,700.0 հազ. դրամ գումարով կնքված փոխառության թվով 3 պայմանագրերում փոխառուն և փոխատուն միևնույն անձն է հանդիսացել՝ Ինստիտուտի տնօրենը:»*

Նշվածի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի տնօրեն Ա. Բազարչյանը նշանակվել է պաշտոնում 2014 թվականի դեկտեմբերի 17-ին: ՀՀ ԱՆ ԱԱԻ-ն իր գործունեության ընթացքում, բացառությամբ վերջին տարվա, շահույթ չի ունեցել, ավելին ինստիտուտի ֆինանսական վիճակը եղել է ոչ բավարար և նախկինում գործունեության ընթացքում եղել են կուտակված պարտքեր: Այդ իրավիճակում ցանկացած դրամական միջոց, որը մուտք է եղել ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի հաշվին, ծախսվել է նպատակային: 2015-2017 թվականներին ակտիվացել է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի գործունեությունը, կնքվել են դրամաշնորհային ծրագրեր և վերջիններիս հատկացված գումարները, համաձայն Դրամաշնորհատու կազմակերպության պահանջի մուտք են եղել ՀՀ ԱՆ ԱԱԻ առանձին հաշվեհամարներին և կարող էին միայն ծախսվել տվյալ ծրագրերով նախատեսված գործառույթները իրականացնելու համար: Նկատի ունենալով, որ ՀՀ ԱՆ ԱԱԻ ֆինանսավորումն իրականացվում է եռամսյակային կտրվածքով՝ ըստ իրականացված աշխատանքների ներկայացված կատարողական ակտի, որը պետք է հաստատվի ՀՀ ԱՆ-ի կողմից, ուստի մինչև համապատասխան գումարների փոխանցումը բավականին ժամանակ է անցնում: Հաշվի առնելով, որ փոխանցումների վերը նշված մեխանիզմի առկայության պայմաններում հարկային պարտավորությունները պարբերաբար մասնակի է հնարավոր եղել ապահովել և պարբերաբար ՀՀ ԱՆ ԱԱԻ հաշիվները կալանքի տակ են դրվել (ակտերի կրկնօրինակները կցվում են, 3 էջ), ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին միջազգային դրամաշնորհային ծրագրերով ստանձնած պարտավորությունները պատշաճ իրականացնելու համար, ՀՀ ԱՆ ԱԱԻ-ում աշխատանքային պայմաններն ապահովելու նպատակով (գազ, ջուր, լույս) տնօրենի կողմից ձևակերպվել են նշված փոխառությունները՝ ինստիտուտի բնականոն գործունեությունը ապահովելու համար: Միաժամանակ ներկայացնում ենք մանրամասն պարզաբանում ըստ առանձին դեպքերի.

1) 25 օգոստոս 2015 թ-ին կնքված № 01-15 անտոկոս փոխառության պայմանագիր «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի հետ՝ 10000000 դրամի չափով: Դրամական միջոցների մնացորդը (դրամարկղում և բանկային հաշիվներում) փոխառության ստացման օրվա դրությամբ կազմել է 2913506 դրամ: Փոխառու միջոցների ներգրավման նպատակն է հանդիսացել հարկային պարտավորությունների կատարումը, մասնավորապես՝ 26.08.2015 ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 10401900 դրամ, ավելացած արժեքի հարկի, եկամտահարկի գծով պարտավարությունների մարման համար:
2) 02 սեպտեմբեր 2015թ-ին կնքված անտոկոս փոխառության պայմանագիր 700000 դրամի չափով «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՓԲԸ-ի տնօրենի միջև: Դրամական միջոցների մնացորդը

(դրամարկղում և բանկային հաշիվներում) փոխառության ստացման օրվա դրությամբ կազմել է 2314357 դրամ: Փոխառու միջոցների ներգրավման նպատակն է հանդիսացել հարկային պարտավորությունների կատարումը, մասնավորապես՝ 02.09.2015 ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 2464013 դրամ: Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության 27.08.2015թ. որոշմամբ (կցված է, 1 էջ) արգելանք է դրված եղել «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի դրամական միջոցների վրա:

3) 08 սեպտեմբեր 2015թ-ին կնքված անտոկոս փոխառության պայմանագիր 300000 դրամի չափով «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՀՀ քաղաքացի Նարեկ Թևոնի Հովնանյանի միջև:

Հաշվի առնելով հարկային պարտավորությունները ժամանակին չկատարման պատճառով ընկերության ֆինանսական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը, դրամական միջոցների առկայության պայմաններում «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն լրացուցիչ ներգրավել է անտոկոս փոխառություններ ներքոհիշյալ պայմանագրերով, որոնք օգտագործվել են ընկերության սպառած էլէկտրաէներգիայի և հեռախոսավարձի առաջնահերթ վճարումների համար.

4) 31 օգոստոս 2017թ-ին կնքված անտոկոս փոխառության պայմանագիր 1750000 դրամի չափով «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՓԲԸ-ի տնօրենի միջև: Դրամական միջոցների մնացորդը (դրամարկղում և բանկային հաշիվներում) փոխառության ստացման օրվա դրությամբ կազմել է 2245596 դրամ, Փոխառու միջոցների ներգրավման նպատակն է հանդիսացել ընկերության սպառած էլեկտրաէներգիայի և հեռախոսավարձի առաջնահերթ վճարումների կատարումը:

5) 07 սեպտեմբեր 2017թ-ին կնքված անտոկոս փոխառության պայմանագիր 244000 դրամի չափով «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՓԲԸ-ի տնօրենի միջև: Դրամական միջոցների մնացորդը (դրամարկղում և բանկային հաշիվներում) փոխառության ստացման օրվա դրությամբ կազմել է 3698525 դրամ, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ 035538 02.08.2017թ. որոշմամբ (կցված է, 2 էջ) արգելանք է դրված եղել «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի դրամական միջոցների վրա: Փոխառու միջոցների ներգրավման նպատակն է հանդիսացել ընկերության հեռախոսավարձի առաջնահերթ վճարման կատարումը:

6) 2. 1-ին՝ Ֆինանսատնտեսագիտական արդյունքների վերլուծություն բաժնի 15-րդ պարբերությամբ ներկայացված. «*2015-2017 թվականներին առանձին ծրագրեր իրականացնելու նպատակով 49 դեպքով կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր (54,163.9 հազ. դրամ գումարով) այն անձանց հետ, ովքեր Ինստիտուտի աշխատակիցներ են հանդիսացել և լիարժեք դրույք են զբաղեցրել:*» վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ ԱԱԻ կողմից պարբերաբար իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր, որոնց իրականացումը պատվիրակվել է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին հաշվի առնելով իր մասնագիտական կարողությունները, ուստի պարբերաբար ՀՀ ԱՆ ԱԱԻ հաստիքացուցակի համաձայն աշխատող անձնակազմը, բացի իրենց զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված գործառույթներից իրականացրել են նաև լրացուցիչ կարճաժամկետ աշխատանքներ, որոնք և ձևակերպվել են քաղաքացիաիրավական պայմանագրերի տեսքով:

2. Տարածքների անհատույց օգտագործման մասով Ձեր կողմից նշված «Ավելացած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին համապատասխան առաջացած հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կողմից

ամբողջովին կատարվել են առաջացած համապատասխան հարկային պարտավորությունները (կցվում է 6 էջ):

3. Նույն բաժնի հերթական պարբերությամբ արձանագրված խնդրի, այն է. *«Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցություն» դրամաշնորհային ծրագրի միջոցների ծախսման վերաբերյալ,* հայտնում եմ, որ տվյալ դրամաշնորհային ծրագրի նախահաշիվը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին (հետևաբար ՀՀ ԱՆ և ԱԱԻ միջև կնքվել է պայմանագիր դեկտեմբերի 4-ին), իսկ աշխատանքները մեկնարկել են 2017 թվականի նոյեմբերին, քանի որ 2017 թվականին ԳԱՎԻ հիմնադրամի հետ իրականացված բանակցությունների և ձեռքբերված պայմանավորվածությունների համաձայն ՀՀ ԱՆ և ԳԱՎԻ հիմնադրամի միջև կնքվել էր պայմանագիր՝ իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության համար, քննարկվել էր նաև ՀՀ-ում այդ ծրագրի իրականացման կողմ հանդիսանալու հարցը: ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին ստանալով գրություն ԳԱՎԻ հիմնադրամից գործընկեր կողմ հանդիսանալու և համապատասխան միջոցները հատկացնելու վերաբերյալ (գրությունը կցվում է, 1 էջ), նկատի ունենալով խնդրի կարևորությունը ու արդեն իսկ երկրում մեկնարկած իմունականխարգելման ծրագիրը, աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար ՀՀ ԱՆ մի շարք հրամաններին համապատասխան մեկնարկել է աշխատանքները 2016 թվականի նոյեմբեր ամսից: Միաժամանակ հայտնում ենք, որ աշխատանքային գործընթացը սկսվել է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի հրամանով ( N1857-Ա ՀՀ ԱՆ նախարարի հրաման): Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ նշված պայմանագրի երկարացման համաձայնագիրը կնքված է (կից ներկայացվում է, 1 էջ):

4. 2-րդ՝ *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին վերանորոգման աշխատանքների կատարման մասին*, հայտնում ենք, որ

շինարարության աշխատանքներ իրականացնելու համար 2016 թվականի օգոստոսի 4-ին ընդունվել ՀՀ կառավարության 801-Ն որոշումը, որով ՀՀ ԱՆ գումար է հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Սակայն, նշված նախագծի մշակման և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան շահագրգիռ գերատեսչությունների, այդ թվում ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ստանալու և սահմանված կարգով փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելու համար անհրաժեշտ էր հաշվարկել թե որքան գումար պետք կլինի շինարարական աշխատանքներ իրականացնելու համար և հետևապես պահուստային ֆոնդից գումար հատկացնելու համար, ուստի շինարարության համար նախգծային աշխատանքների իրականացումը անհրաժեշտ պահանջ է եղել տվյալ որոշումը ներկայացնելու համար, որպես հիմնավորված ծախսերի հաշվարկ: Ինչ վերաբերում է շինարարության արդյունքում տնտեսված գումարներին, ապա արդեն իսկ ՀՀ ֆինանսների նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, կազմվում է ժամանակացույց՝ փուլային տնտեսված գումարները հետ վերադարձնելու համար:

*5. 3-րդ՝ ինստիտուտի կողմից վարձակալված գույքի մասին բաժնում* արձանագրվածի վերաբերյալ հայտնում եմ.

ինչ վերաբերում է Ինստիտուտում առկա «տպարան»-ին և 2015թ-ին ու 2016թ-ին այլ կազմակերպություններին պատվիրակված տպագրական աշխատանքների իրականացմանը, ապա հայտնում եմ, որ նշված տպագրությունները նախատեսված են եղել ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կողմից իրականացվող դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում և միայն համապատասխան հաշիվ ապրանքագրերի առկայության (որպես ծախսը հիմնավորող փաստաթուղթ) պարագայում նշված ծախսերը կփոխհատուցվեին Դրամաշնորհատու կազմակերպության կողմից: Տվյալ պարագայում ինստիտուտի կողմից նշված աշխատանքների կազմակերպումը հնարավոր չէր իրականացնել: Ինստիտուտի տպարանի կողմից իրականացվում են ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի

գործառույթներից բխող տպագրական աշխատանքները՝ հավաստագրերի, վկայականների տպագրություն, տարեկան ժողովածուների, հարցաթերթերի տպագրություն և այլն:

6. *5-րդ՝ ԱՄՆ Միջազգայի զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի մասով արձանագրված* պայմանագրով նախատեսված չկատարված միջոցառումների *վերաբերյալ.*

• *ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կայքէջի (www.sha.am) բարելավման ուղղությամբ աշխատանքները սկսվել են, սակայն չեն ավարտվել: Նախատեսված աշխատանքի փոխարեն մշակվել է Ինստիտուտի կայքէջը:*

ՀՀ ԱՆ ԱԱԻ կողմից պետական առողջապահական գործակալության կայքէջի աշխատանքները իրականացնելու համար ձևավորվել էր աշխատանքային խումբ, որը մեկնարկել էր աշխատանքները 2016 թվականին, սակայն այդ խմբի կողմից աշխատանքները համաձայն Դրամաշնորհատուի հետ ձեռք բերված համաձայնության պետք է շարունակվեին 2017 թվականին, ուստի և կայք էջի աշխատանքները ամբողջովին ավարտված չեն եղել: Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կայքէջի մշակման աշխատանքներին, պա նշված աշխատանքները ներառվել են տվյալ աշխատանքային խմբի անդամների հետ կնքված պամանագրերում՝ Դրամաշնորհատուի և ՀՀ ԱՆ համապատասխան խմբի հետ համաձայնեցնելուց հետո:

Ինչ վերաբերում է *պետության կողմից ֆինանսավորվող հիվանդանոցային ծառայություններ ստանալու նպատակով քաղաքացիների ուղեգրման և հիվանդանոցներում հերթագրման էլեկտրոնային համակարգի մշակման, Պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպություններում բժշկական անձնակազմի վարձատրության չափորոշիչների մշակման, ինչպես նաև բժշկական անձնակազմի վարձատրությանն ուղղվող գումարների բաշխման ավտոմատացված համակարգի, պետության կողմից կենտրոնացված գնումներով ձեռք բերվող բոլոր դեղամիջոցների, ներառյալ հակաբեղմնավորիչների համար միասնական լոգիստիկ կառավարման տեղեկատվական համակարգի* ներդրմանը, ապա ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին հանդիսանալով ՀՀ ԱՆ ենթակայության փակ բաժնետիրական ընկերություն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում աջակցում է ոլոտում իրականացվող քաղաքականությանը իր մասնագիտական կարողություններով մշակելով համապատասխան իրավական ակտերի նախագծեր, մեթոդական ցուցումներ, չափորոշիչներ և այլն, սակայն այս կամ այն քաղաքականության և/կամ գործիքի ներդրման գործընթացը ՀՀ ԱՆ իրավասության շրջանակներում է, ուստի Դրամաշնորհի շրջանակներում պատվիրակվված աշխատանքները իրականացվել է պատշաճ որակով և ընդունվել են Դրամաշնորհատու կազմակեպության կողմից: Ավելին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության կողմից պատվիրված, Գրանտ Տորնտնի անկախ աուդիտորական կազմակերպության կողմից՝ Միացյալ Նահանգների ընդհանուր հաշվապահական հաշվառման գրասենյակի կողմից սահմանված ԱՄՆ կառավարական աուդիտի ստանդարտներին համապատասխան իրականացած անկախ աուդիտի արդյունքները դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքի, ծրագրային արդյունքների, ֆինանսական հաշվետվությունների մասով **թերություններ չեն արձանագրել ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կողմից իրականացված աշխատանքների** վերաբերյալ (կցվում է աուդիտի արդյունքերի վերաբերյալ կազմված զեկույցը անգլերենով, 29 էջ և ամփոփ եզրակացությունը թարգմանված հայերեն, 2 էջ):

Միևնույն ժամանակ առաջարկում ենք քննարկել ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին վերաբերող միջանկյալ արձանագրության մեջ Դրամաշնորհային ծրագիրը համակարգող խմբի աշխատանքներին վերաբերող մասը ներառելու հարցը, քանի որ ըստ էության ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին վերջինիս կողմից իրականացված աշխատանքների վրա որևէ կերպ ազդեցություն չի ունեցել: Ավելին, և Դրամաշնորհատուի և ՀՀ ԱՆ տվյալ աշխատանքային խմբի կողմից սահմանված բոլոր պահանջները՝ հաշվետվությունները ներկայացնելու և այլն ապահովվել են, ինչը նաև արձանագրված է: Աշխատանքների կատարման վերաբերյալ Ինստիտուտի կողմից յուրաքանչյուր ամիս, ինչպես նաև եռամսյակային կտրվածքով Նախարարություն ներկայացվել են հաշվետվություններ: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ընդունումը հաստատվել է հաջորդ փուլի կանխավճարի փոխանցմամբ: Նշված հաշվետվությունները քննարկվել են Նախարարի տեղակալի ու խմբի

անդամների մասնակցությամբ, *սակայն որևէ թերություն, անհամապատասխանություն կամ խախտում չի արձանագրվել,* ինչը արձանագրվել է նաև Ձեր կողմից:
Ուստի այս պարագայում պարզ չէ նախ թե ինչ պատասխանատվության միջոցների կիրառման մասին է խոսքը եթե Դրամաշնորհատուի կողմից կատարված աշխատանքները ընդունվել են, իսկ եթե խոսքը վերաբերում է Աշխատանքային խմբի կողմից որևէ աշխատանքների ոչ պատշաճ իրականացմանը, ապա ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին որևէ իրավասություն չի ունեցել միջամտելու այդ խմբի աշխատանքներին:

Միաժամանակ հայտնում ենք, որ ԱՄՆ ՄԶԳ-ն շարունակում է դրամաշնորհային ծրագրի իրականացումը ՀՀ ԱԱԻ հետ, ծրագրի նպատակներին համահունչ և որոշ ծրագրային ուղղություններ, որոնք սկսվել և անավարտ էին մնացել առաջին փուլում շարունակվում են, ներդնելու և կյանքի կոչելու նպատակով:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

**ՀՀ վերահսկիչ պալատի կողմից «Պետական պատվերի շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում արձանագրությունում ներկայացված փաստերի կապակցությամբ պարզաբանում ենք.**

1.Հաշվարկային երեք տարում օգտագործվել է 73 թմբուկ ֆլյուորոժապավեն: Մեր աշխատակցի կողմից թյուրիմացաբար ներկայացվել է մեկ թմբուկից՝ 306 նկար ,որի համար ստացել է գրավոր նկատողություն: Մեկ թմբուկի ժապավենի երկարությունն է 30.5 մ մեկ կադրի երկարությունը կազմում է 7 սմ: Այսինքն, մեկ թմբուկից պետք է ստանալ 435 կադր: Ամեն օր ֆլյուորոժապավենը երևակելու համար կտրելուց կորցնում ենք 3-4 կադր: Մեկ թմբուկը օգտագործվում է 9-11 աշխատանքային օր: Ուստի, ամեն թմբուկից կորցնում ենք 30- 40 կադր: Այսպիսով, միջինացված տվյալներով մեկ թմբուկից ստացվում է 397-399 կադր:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 29078 ֆլյուորո հետազոտություն, որի համար օգտագործվել է 73 թմբուկ ( մոտ 73x398=29054 հետազոտություն):

Այսպիսով, դիսպանսերի կողմից ՊԱԳ ներկայացված հաշվետվությունները կազմել են 29043 ֆլյուորո հետազոտություն՝ 73 թմբուկով ,որի դիմաց ստացվել է համապատասխան ֆինանսավորում 47978.8 հազ դրամ: ՈՒստի, ՊԱԳ ներկայացված հաշվետվությունում չկատարված ֆլյուորո հետազոտություններ չի եղել և ընկերությունը 10098.0 հազ դրամ հավելյալ գումար չի ստացել:

Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ համարվում է հակատուբերկուլյոզային ծառայության քաղաքային գլխամասային կենտրոն: Երևանի ժամանակին 21, իսկ այժմ 9 պոլիկլինիկաներում գործում են հակատուբերկուլյոզային կաբինետներ: Այդ կաբինետներից շատերը չունեն հնարավորություն իրականացնելու խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն, թոքերի շերտավոր նկարներ, սոնոգրաֆիա և թոքերի կենսական տարողությունն որոշելու հնարավորություն և այլն: Նշված պոլիկլինիկաներից բժշկի ուղեգրով հիվանդները, հիվանդների կոնտակտավորները, տուբ. հիվանդությամբ կասկածվող մարդկանց հետազոտություններն անցկացվում ե Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ–ում: Այդ քաղաքացիները մեր բժիշկների գրանցամատյաններով չեն գրանցվում: Նրանք գրանցվում են այն գրանցամատյաններում, որտեղ անցնում են իրենց համապատասխան հետազոտությունները: Մեր բժշկների գրանցամատյանով չեն գրանցվում նաև բոլոր ուժային կառույցների աշխատակիցները, օրինակ՝ Ոստիկանության, Ազգային Անվտանգության, Դատական Դեպարտամենտի և այլն: Վերջիններս ռազմաբժշկական հանձնաժողովում զննություն անցնելիս ներկայացնում են նաև մեր կողմից տրված եզրակացությունը: Իրենք ներկայանում են մեզ մոտ հատուկ ուղեգրով , որոնց վրա գրվում է եզրակացությունը և դա ներկայացնում են ռազմաբժշկական հանձնաժողովին:

Տարվա ընթացքում շատ հաճախ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային կազմակերպությունների կողմից ուղեգրվել են նոր հայտնաբերված հիվանդների կոնտակտավորները 15,20, 30 հոգանոց ցուցակներով: Այս քաղաքացիները նույնպես մեր բժիշկների գրանցամատյաններում չեն գրանցվում: Սա էլ հետագայում բերում է բժիշկների գրանցամատյաններում գրանցվածների և տարբեր ստորաբաժանումներում հետազոտություն անցած մարդկանց թվաքանակի անհամապատասխանությանը:

ՈՒղեգրման կարգի և ուղեգրերի ձևաչափի վերաբերյալ հայտնում են, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից կատարված դիտողություններն ընդունվել են ի գիտություն: Հստակորեն իրականացվում է ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշմամբ սահմանված պահանջները գրանցամատյանների վարման վերաբերյալ:

2. Տեղեկացնում ենք Ձեզ , որ Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ –ի ստացիտոնար բաժանմունքը սկսել է գործել 2001թ-ից: Այդ ժամանակահատվածում նկատվում էր տուբերկուլյոզի առումով էպիդեմիոլոգիական իրավիճակի կտրուկ վատացում ոչ միայն Երևան քաղաքում, այլ նաև ամբողջ հանրապետությունում:

Էպիդեմիոլոգիական ցուցանիշները հասել էին վտանգավոր չափերի: Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ ի սկզբանե նախատեսված չի եղել հիվանդանոցային բուժօգնություն ցուցաբերելու համար:

2000-2001թթ կատարվեցին վերանորոգման աշխատանքներ՝ այն հարմարացնելով հիվանդանոցային բուժօգնություն ցուցաբերելու համար, որը ժամանակի հրամայականն էր:

Հիվանդների սննդի կազմակերպման գործընթացը իրականացնելիս մենք օգտվել ենք Խորհրդային շրջանում գործող տուբերկուլյոզով հիվանդներին անհրաժեշտ սննդակարգի չափանիշներով, այն հարմարեցնելով մեր պայմանների հետ: Հաշվի է առնվել նաև այն փաստը, որ մեր հիվանդների բացարձակ մեծամասնությունը սոցիալապես անապահով խավերից են, ինչպես նաև հիվանդությունից ելնելով նրանք հիմնականում հյուծված են և թերսնված: Այդ փաստից ելնելով մենք հիվանդներին տվել ենք լիարժեք բարձր կալորիականությամբ սնունդ: Առ այսօր սննդի վերաբերյալ հիվանդների կողմից ոչ մի բողոք կամ դժգոհություն չի արձանագրվել: Որոշ սննդացանկերի ռացիոնից բացակայելը հիմնականում պայմանավորված է եղել դրանց պահպանելու հնարավորություն չունենելու հանգամանքով: Հարկ եմ համարում նաև նշել, որ ՀՀ ԱՆ հիվանդների կանխարգելման ՊՈԱԿ-ի կողմից մշակված տուբերկուլլոզով հիվանդներին հատկացվող սննդի անհրաժեշտ էներգետիկ արժեքների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում դեռևս չի ընդունվել:

2018թ-ից ամբողջությամբ վերանայվել է Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ում հիվանդանոցային բուժօգնություն ստացող հիվանդների սննդակարգը: Ներկայումս սնունդ ստացվում է պատրաստի, թարմ, միանգամյա օգտագործման սպասքով՝ օրը 3 անգամ: Սննդակարգում պարունակում է բավարար քանակի բնական վիտամիններ, բանջարեղեն, միրգ, հյութեր, մսեղեն:

3. Զորակոչիկների փորձաքննությունն Երևանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ում իրականացվում է երկար տարիներ: Ժամանակին ՊԱԳ-ի հետ կնքված պայմանագրում հատկացված էր առանձին տող զորակոչիկների փորձաքննության համար՝ հաստատագրված գումարով: Այն ժամանակ էլ զորակոչիկների համար բացվում էր ստացիոնարի համար նախատեսված հիվանդության պատմություն, իսկ հաշվետվությունները ՊԱԳ ներկայացվել են նաև մարդ/օր-ով:

Հետագայում հաշվետվությունների ծրագրային փոփոխությունից հետո, մենք շարունակել ենք հաշվետվությունները ներկայացնել նույն ձևով: Նոր համակարգով (e-hosp) : Հաշվետվությունները ներկայացնելիս ծրագիրը ավտոմատ բերում է մարդ/ օրվա համար նախատեսված 1950 դրամները: Զորակոչիկների փորձաքննության համար ծրագրում ֆինանսական այլ փոխհատուցում նախատեսված չի եղել:

ՈՒստի այդ գումարները հիմք են ընդունվել որպես փոխհատուցում:

Զորակոչի փորձաքննությանը մասնակցում են հանձնաժողովի 5 անդամները, 1 հետազոտող բժիշկ:

2018թ ՊԱԳ-ին ներկայացվող հաշվետվությունների մեջ կատարվել են ծրագրային փոփոխություններ, փոխվել է ֆինանսավորման մեխանիզմը և այդ հարցը լուծում է ստացել:

4. 2018թ բժշկական սարքավորումների սպասարկման ծառայությունների գնման նպատակով մրցույթ չի հայտարարվել: Սպասարկումը նախատեսվում է իրականացնել բարձր որակավորում ունեցող մասնագետի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով:

# 2.15 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 14/7 որոշում: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման արդյունավետության և օրինականության որոշում: |
| **Վերահսկողության առարկան** | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին ծրագրերի իրականացման և աշխատանքների կատարման ապահովմանն ուղղված գործառույթներ և ընթացակարգեր: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ Արարատի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզպետարաններ, ինչպես նաև, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ և Հայաստանի զարգացման հիմնադրամ (ընտրանքային): |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թ. Օգոստոսի 7-ից մինչև 2018 թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության ընթացքում կիրառվել են դիտարկման (ընտրանքային) և վերլուծության ձերը, ինչպես նաև՝ համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները:<br>Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկողությամբ ընդգրկված օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, դասակարգում, ռիսկերի գնահատում և վերլուծություն: Վերլուծության փուլում ամփոփվել, վերլուծվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Ընդհանուր նկարագիր

2015 թվականի պետական բյուջեով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվել են 30,505,861.4 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսը կազմել է 29,903,302.6 հազ. դրամ կամ նախատեսվածի 98.0 %-ը:

2016 թվականի պետական բյուջեով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվել են 16,094,836.9 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսը կազմել է 15,132,217.2 հազ. դրամ կամ նախատեսվածի 94.0 %-ը:

2017 թվականի պետական բյուջեով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվել են 28,770,496.9 հազ.դրամի ծախսեր:

Հաշվի առնելով վերոնշյալ ծավալները, նախնական ընտրանքի արդյունքում վերահսկողության դիտարկման փուլի ուսումնասիրությամբ ընդգրկվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հատկացված միջոցների օգտագործմանն առնչվող հարցերը:

Դիտարկման ընթացքում վերոնշյալ հատկացումներից որոշներն առանձնացվել են՝ հաշվի առնելով 2017 թվականին ՀՀ վերահսկիչ պալատի որոշումներով համապատասխան պետական կառավարման մարմիններում իրականացվելիք վերահսկողությունները, ինչպես նաև այն, որ որոշ ոլորտներ ներառվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2018 թվականի ծրագրում:

Արդյունքում, իրականացվել է վերահսկողություն ՀՀ առողջապահության նախարարությունում՝ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի ստեղծման և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գործունեության ապահովման նպատակով հատկացված բյուջետային միջոցների հատկացման մասով:

## ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված բյուջետային միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման վերաբերյալ

Ուսումնասիրությամբ ընդգրկվել են «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կենտրոն) ստեղծման ծրագրի փուլերը, կատարված ծախսերը, ինչպես նաև որպես պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման գործընթացները:

### «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ ստեղծման վերաբերյալ

**2008թ.**
**Ստեղծել միջուկային բժշկության կենտրոն**

**1.** Կենտրոնի ստեղծման համար հիմք է ծառայել **ՀՀ կառավարության 2008 թ. հուլիսի 24-ի թիվ 878-Ն որոշումը,** որի հավելվածի «4.4.1 Առողջապահություն» բաժնի «Հայաստանը տարածաշրջանային առողջապահական կենտրոնի վերածման ծրագրերի իրականացման աջակցություն» կետով նախատեսվել է, մասնավորապես, «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ում ստեղծել միջուկային բժշկության կենտրոն:

**2009թ.**
**«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ում «Ցիկլոն-30» տեղադրել իզոտոպների արտադրության համալիր**

**2. ՀՀ կառավարության 19.02.2009 թ. թիվ 310-Ն որոշում.** Հավանություն է տրվել «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ում «Ցիկլոն-30» իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և ՀՀ-ում միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագրին: Կենտրոնի ստեղծման իրականացնողներ են սահմանվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի բազայի վրա ստեղծվող միջուկային բժշկության կենտրոնը, Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի տարածքի վրա ստեղծվող ուռուցքաբանության ֆրանսիական կետրոնը՝ Փարիզի ուռուցքաբանության կենտրոնի հայ մասնագետների մասնակցությամբ: Ընդհանուր առմամբ ծրագիրը գնահատվել էր 19 մլն Եվրո և բաղկացած էր 3 փուլից և պետք է ծրագիրը իրաքկանացվեր 2009-2011 թվականներին:

**2010թ. Ստեղծել Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն**

**3. ՀՀ կառավարության 07.10.2010 թ. թիվ 1424-Ն որոշում.** Հավանություն է տրվել «Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագրին: Նույն որոշմամբ հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Կենտրոն), որի բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին առաջարկվել է աջակցել ՀՀ միջուկային բժշկության ոլորտի զարգացմանը և իրականացնել ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման աշխատանքների կառավարումը, այդ թվում՝ ցիկլոտրոնի գնման, տեղափոխման, տեղադրման, գործարկման և շինարարական աշխատանքների համակարգումը, կառավարման ու մասնագիտական անհրաժեշտ աշխատակազմով համալրումը, ախտորոշիչ սարքավորումներով հագեցումը, հնարավոր ներդրողների հետ բանակցությունների իրականացումը, պայմանագրերի կազմումը, անհրաժեշտ իրավական փաստաթղթերի նախագծերի մշակումը՝ համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ: Նույն որոշմամբ «Ցիկլոն-30» իզոտոպների արտադրության համալիրը փոխարինվել է «Ցիկլոն-18/18» համալիրով:

**07.10.2010թ.** ՀՀ ֆինանսների նախարարության և «ՔԵՅ ԲԻ ՍԻ ՎԻ» բանկի միջև կնքվել է 5,080,629.52 եվրոյի Վարկային Համաձայնագիր՝ «Ցիկլոն 18/18» համալիրի գնման նպատակով: Ընդունվել է Կենտրոնի ստեղծման նոր եռափուլ ծրագիր՝ *Փուլ 1.* 2012-2014թթ. ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնի ստեղծում, *Փուլ 2.* 2013-2015 թթ. ճառագայթային բուժման կենտրոնի ստեղծում, հիմնականում արտահիվանդանոցային ծառայություններով, *Փուլ* 3. Մասնավոր ներդրումների առկայության դեպքում 2014 թ. քիմիաթերապիայի և վիրաբուժական կենտրոնի ստեղծում՝ առնվազն 150 մահճակալ հզորությամբ և արտահիվանդանոցային ծառայություններով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության միջև կնքվել է 5,080,629.5 եվրո «Ցիկլոն 18/18» համալիրի գնման պայմանագիր: «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի տարածքից 13500 քառ.մ ամրացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որից 3000 քմ ռադիոիզոտոպների արտադրություն կազմակերպելու, 10500 քմ՝ էմիսիոն տոմոգրաֆներով համալրված ախտորոշիչ կենտրոն և ուռուցքաբանական կլինիկա հիմնելու նպատակով:

**4. ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 23-ի թիվ 1424 որոշում.** Հավանություն է տրվել ՀՀ-ում ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման ծրագրին: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության միջև կնքվել է «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագիր, որի առարկան է «Ցիկլոն 18/18» սարքը, դրա համակարգերի, լաբորատորիայի ընդհանուր և որակի կառավարման սարքավորումների, հակաճառագայթային անվտանգության համակարգերի և ճառագայթման աստիճանի մոնիթորինգի սարքավորումների մատակարարումը և շահագործման հանձնումը:

**5. 29.12.2010 թ.** գրանցվել է Կենտրոնի կանոնադրությունը:

**2011թ.**
**50,6 մլն. դրամի բյուջետային վարկի տրամադրում**

**6. ՀՀ կառավարության 20.05.2011 թ. թիվ 681-Ն որոշում.** Կենտրոնի մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման և համապատասխան փորձագիտական թույլտվությունների ստացման նպատակով տրամադրվել է 50,600.0 հազ. դրամի բյուջետային վարկ: Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին առաջարկվել է ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկություններ Կենտրոնի կառուցման, կառավարման, այլ ծախսերի և առաջիկա երկու տարվա շահագործման համար անհրաժեշտ բյուջետային վարկի տրամադրման վերաբերյալ:

**7. ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 22-ի թիվ 323-Ա որոշում**. Սահմանվել է, որ Կենտրոնն իր կարիքների համար «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության կողմից մշակված տիպային նախագծի հիման վրա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններն առավելագույնը 45,000.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով, ձեռք է բերում բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու:

**8. ՀՀ կառավարության 2012 թ. ապրիլի 12-ի թիվ 438-Ա որոշում**. ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ամրացված 13500 քմ հողամասի շուկայական գնահատված արժեքով ներդրումը համարվել է Կենտրոնի կանոնադրական կապիտալի ավելացում՝ Կենտրոնի կանոնադրական կապիտալում լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

**2012թ.**
**1,1 մլրդ. դրամի բյուջետային վարկի տրամադրում**

**9. ՀՀ կառավարության 2012 թ. օգոստոսի 2-ի թիվ 1018-Ն որոշում.** Կենտրոնի մասնաշենքի շինմոնտաժային աշխատանքնե-րըն (միայն արտաքին կոնստրուկցիաներ) իրականացնելու նպատակով տրամադրվել է 1,1 մլրդ. դրամի բյուջետային վարկ, որի շրջանակներում «Այգեձոր» ՍՊԸ-ի հետ կնքվել է 832,026.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր: Պայմնագրում կատարվել են բազմաթիվ ծավալային փոփոխություններ (արժեքը կազմել է 872,590.0 հազ. դրամ), իսկ աշխատանքների կատարման ժամկետները անընդհատ փոփոխվել են:

**10. ՀՀ կառավարության 2012 թ. օգոստոսի 16-ի թիվ 1053-Ն որոշում** «Գնման գործընթացը կազմակերպելու մասին», որով սահմանվել է, որ Կենտրոնի բելգիական «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպությունից ձեռք բերվելիք «Ցիկլոն 18/18» ցիկլոտրոնի տեղակայման, շենքի կառուցման (միայն արտաքին կոնստրուկցիաներ), շինարարության ընթացքում հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներն իրականացվում է բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու:

**11. ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 8-ի թիվ 477-Ն որոշում.** Կենտրոնի կանոնադրական կապիտալն ավելացվել է 3,000.0 հազ. դրամով՝ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

**2013թ.**
**Կենտրոնի կառավարիչ կազմակերպություն է ճանաչվել «Գլոբալ մեդիքլ սոլյուշնս» ընկերությունը**

**12. ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 8-ի թիվ 940-Ն որոշում.** Կենտրոնի բնականոն գործունեության ապահովման և ընթացիկ գործունեության ղեկավարման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում, Կենտրոնի կառավարիչ կազմակերպություն է ճանաչվել «Գլոբալ մեդիքլ սոլյուշնս» ընկերությունը: 2013թ. գրանցվել է «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս Էյէմ» ՓԲԸ-ն, որին տրամադրվել է Կենտրոնի գործարկման համար անհրաժեշտ լիցենզիաները:

**13. ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի թիվ 899-Ա որոշում.** Կատարվել է փոփոխություն «Ցիկլոն 18/18» ծրագրի վերաբերյալ «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության հետ կնքված պայմանագրում՝ արժեքն ավելացել է 265200 եվրո գումարով՝ լրացուցիչ մատակարարվող սարքավորումների/պարագաների համար:

**14.** «Ցիկլոն 18/18» արագացուցիչը և այլ սարքավորումները ներմուծվել են Հայաստան 2013-2014 թվականներին:

**15.** ՀՀ կառավարության և «Գլոբալ մեդիքլ սոլյուշնս» ընկերության միջև կնքվել է պայմանագիր (հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 44 արձանագրային որոշմամբ), որով ՀՀ կառավարությունն ընկերությանը բացառիկ իրավունքներ է տվել ղեկավարելու, կառավարելու և տնտեսապես շահագործելու Ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնը՝ որպես լիովին ինտեգրված Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի առաջին բաղադրիչ:

**2014թ.**
**792 մլն. դրամի բյուջետային վարկի տրամադրում**

**16. 2014 թ. փետրվարի 6-ի թիվ 194-Ն որոշում.** Կենտրոնին տրամադրվել է ՀՀ պետական բյուջեից (կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից) 792,386.6 հազ. դրամի բյուջետային վարկ՝ ՓԲԸ-ի մասնաշենքի ներքին և արտաքին ինժեներական համակարգերի, հարդարման աշխատանքների իրականացման և տեխնիկական վերահսկողության իրականացման նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնի միջև 2014թ. մարտի 19-ին կնքվել է 3/2014 վարկային պայմանագիր:

**17. 2014 թ. մարտի 24-ին** կնքվել է պայմանագիր «Այգեձոր» ՍՊԸ-ի հետ 868,740.0 հազ դրամ արժեքով: Այս պայմանագրի դեպքում ևս կատարվել են ծավալային փոփոխությունները (արժեքը կազմել է 1,042,400.0 հազ. դրամ), և աշխատանքների կատարման ժամկետները անընդհատ հետաձգվել են

**18. ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1462-Ա որոշում.** «ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմ» ՊԿՀ-ին ամրացվել է 9225 հա հողամաս՝ ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ճառագայթային կենտրոնի կառուցման համար, իսկ Կենտրոնի կանոնադրական կապիտալը այդ գումարի չափով նվազեցվել է:

**19. ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 15-ի թիվ 5-Ն որոշում**. Կենտրոնի բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ առողջապահության նախարարությանը:

**2015թ.**
**255 մլն. դրամի բյուջետային վարկի և 16 մլն. դրամի դրամաշնորհի տրամադրում**

**20. ՀՀ Կառավարության 2015 թ. հունիսի 10-ի թիվ 638-Ն որոշում.** Կենտրոնի կողմից սարքավորումների ձեռք բերման և մոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով տրամադրվել է 254.672,3 հազ. դրամի չափով բյուջետային վարկ, իսկ «Ցիկլոն 18/18» հիմնական սարքի տեղափոխման ու տեղադրման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 15.876,7 հազ. դրամի դրամաշնորհ՝ Կենտրոնի 2015 թ. ընթացիկ գործունեության և «Ցիկլոն 18/18» հիմնական սարքի տեղափոխման ու տեղադրման համար:

**21. ՀՀ Կառավարության 2015 թ. մայիսի 14-ի թիվ 504-Ն որոշում.** Կենտրոնին կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից տրամադրվել է 223,038.9 հազ. դրամ՝ տրամադրված 1,100,000.0 և 792,386.6 հազ. դրամ՝ բյուջետային վարկերի մնացորդի գումարից (92,803.8 հազ. դրամ՝ 1-ին վարկից և 130,235.1 հազ. դրամ՝ 2-րդ վարկից):

**22. ՀՀ կառավարության 2016 թ. մարտի 31-ի թիվ 374-Ն որոշում.** Կենտրոնին հատկացվել է 204,709.0 հազ. դրամ («Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժինների ձեռքբերում» հոդվածով) լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով կանոնադրական կապիտալն ավելացնելու, ինչպես նաև 40,275.0 հազ.դրամ («Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով) կենտրոնի պահպանման ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 204,709.0 հազ. դրամից 110,315.1 հազ. դրամն ուղղվել է բարեկարգման աշխատանքների կատարմանը[17] (աշխատանքները կատարվել են «Ջի Ար Բիդինգ» ՍՊԸ-ի կողմից), 14,163.0 հազ. դրամը՝ գրասենյակային և 22,872.6 հազ. դրամը՝ բժշկական գույքի ձեռք բերմանը և 2,870.3 հազ. դրամը գործուղման ծախսերին, իսկ մնացած 54,486.9 հազ. դրամը ՀՀ կառավարության 25 մայիսի 2017 թվականի մայիսի 25-ի «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» N 564-Ա որոշմամբ թույլատրվել է ֆինանսավորել 2017 թվականի առաջին կիսամյակի պահպանման ծախսերը: Ինչ վերաբերում է պահպանման ծախսերը

[17] Բարեկարգման աշխատանքները կատարվել են «Ջի Ար Բիդինգ» ՍՊԸ-ի կողմից՝ 18.07.2016 թ. կնքված պայմանագրի և 08.11.2016 թ. կնքված համաձայնագրով դրանում կատարված փոփոխությունների հիման վրա: Աշխատանքների գինը կազմել է 107,563.2 հազ. դրամ, որից 17,927.2 հազ. դրամն ԱԱՀ-ն

կատարելու նպատակով հատկացված 40,275.0 հազ. դրամին, ապա այդ գումարից ֆինանսավորումը կատարվել է 33.886,0 հազ. դրամի չափով:

Կենտրոնի հիմնման սկզբից առաջին անգամ գույքագրում կատարվել է 2017թ. օգոստոս ամսին, որի համար հիմք է հանդիսացել տնօրենի 26.07.2017թ. թիվ 013 հրամանը:

Գույքագրման արդյունքների վերաբերյալ Կենտրոնի կողմից ներկայացված տեղեկատվությունը ցույց է տվել հետևյալը՝

- Կենտրոնի տարածքում առկա են 3 679 841 եվրո արժեքով սարքեր և սարքավորումներ, որոնք ձեռք են բերվել 2010թ. նոյեմբերի 23-ին ՀՀ Կառավարության և «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության միջև կնքված պայմանագրի շրջանակներում և ներմուծվել են ՀՀ տարածք 2013-2015 թվականների ընթացքում: Վերոնշյալ սարքավորումների հիմնական մասը չի հաշվառվել: ՀՀ կառավարության 02.08.2012թ. թիվ 1018-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 02.10.2015թ. թիվ 2705-Ա հրամանի հիման վրա Կենտրոնի կանոնադրական կապիտալում ներառված է միայն 798,357,0 հազ. դրամի չափով «Ցիկլոն 18/18» սարքի արժեքը:

- Կենտրոնում չկան ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «ԱյԲիԷյ մոլեկուլյար» կազմակերպության միջև կնքված պայմանագրի փոփոխությունները՝ բացառությամբ 04.06.2012թ. և 01.08.2013թ. ստորագրվածների, որի հետևանքով հնարավոր չէ պարզել պայմանագրի շրջանակներում ձեռք բերվելիք սարք-սարքավորումների ամբողջական ցանկը:

ՀՀ առողջապահության նախարարությունը դիմել է ՀՀ կառավարությանը 293,397.0 հազ. դրամ հատկացնելու հարցով՝ որպես հիմնավորում նշելով մասնավորեցման գործընթացը սկսելու համար Կենտրոնը մեկնարկային վիճակի բերելու և գործարկման փորձն իրականացնելու անհրաժեշտությունը:

Միաժամանակ, հիմնավորման մեջ նշվել է, որ Կենտրոնի գործունեության համար օգտագործվող թանկարժեք սարքավորումները գտնվել են երկարատև պարապուրդում և նշված միջոցառումների արդյունքում կարող է ի հայտ գալ լրացուցիչ միջոցների ներգրավման անհրաժեշտություն, որի չափն այս պահին հնարավոր չէ գնահատել:

**Կենտրոնը ներառվել է մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրում:**

Կենտրոնը ներառվել է մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրում: Կենտրոնի կանոնադրական կապիտալը վերջին փոփոխությամբ հաստատվել է 1,045.0 հազ. դրամի չափով:

01.01.2017թ. դրությամբ Կենտրոնի հաշվեկշռային արժեքը կազմել է 3,186,296.3 հազ. դրամ:

Կենտրոնի ստեղծման պահից ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ երբևէ չի իրականացվել:

Չնայած որ, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Կենտրոնի ստեղծման նպատակով կատարվել են 5,730,464.7 հազ. դրամի ծախսեր՝ ներառյալ բելգիական վարկի գումարները, որոնց կազմում 2,966,699.0 հազ. դրամը սարքավորումների ձեռք բերման, 2,321,532.9 հազ. դրամը՝ շինարարական աշխատանքների կատարման ծախսերն են, իսկ 442,232.8 հազ. դրամն այլ ծախսերը (Հավելված 1), սակայն կենտրոնը 01.01.2018 դրությամբ փաստացի չի գործում:

Շինարարական աշխատանքներից (ներառյալ համապատասխան սարքավորումների մատակարարումը) 2,012.0 մլն դրամի աշխատանքները կատարվել է Այգեձոր ՍՊԸ-ի կողմից:

**Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ**

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է ՀՀ կառավարության 23.06.2016 թիվ 646-Ն որոշմամբ, որով հաստատվել է նրա կանոնադրությունը և հատկացվել է 103,500.0 հազ. դրամ՝ կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանն աջակցելու նպատակով:

ՀՀ կառավարության 13.07.2016 թիվ 1307-Ն որոշմամբ որպես աջակցություն (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով) Հիմնադրամին հատկացվել է 108,250.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 15.06.2017 թիվ 671-Ն որոշմամբ նախատեսվել է Հիմնադրամին հատկացնել 144,031.0 հազ. դրամի դրամաշնորհ, որից փաստացի հատկացվել է 94,031.1 հազ. դրամ:

*Այսպիսով՝ 2016-2017 թթ. ընթացքում Հիմնադրամի հաշվին մուտքագրվել է 348,821.1 հազ. դրամի միջոցներ՝ ներառյալ 43,039.9 հազ. դրամի այլ դրամաշնորհներ և մուտքերը:*

Գործառույթների իրականացման ուղղությամբ Հիմնադրամի 2017 թ. հուլիսի 31-ի դրությամբ կատարած աշխատանքների դիտարկմամբ պարզվել է հետևյալը՝

- ***Խաղողագործության և գինեգործության զարգացման բնագավառ***

Հիմնադրամի կողմից կանոնադրությամբ սահմանված գործառույթների դիտարկմամբ պարզվել է, որ դրանց մեծ մասը դուրս է մնացել իրականացվող աշխատանքների շրջանակներից: Մասնավորապես, համաձայն Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության՝ կանոնադրության 1-ից 5-րդ, 7-ից 11-րդ, 14-րդ և 15-րդ, 17-ից 20-րդ և 22-րդ կետերով միջոցառումներ չեն իրականացվել, իսկ նախատեսված գործառույթների շրջանակներում փաստացի իրականացված

աշխատանքների կատարման մասին ներկայացվել են դրանց վերաբերյալ պատկերացումները և տեսլականը (հավելված 1):

Վերոնշյալ կետերով կանոնադրությամբ ընդունված գործառույթները նպատակ են հետապնդել Հայաստանում հատկապես գինեմետ խաղողագործության զարգացմանը, որին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումների ցանկում նշվել են գինու արտադրության համար ներուժ ունեցող՝ տեղական և միջազգային ճանաչում ստացած խաղողի սորտերի ընտրությանը և բազմացմանն աջակցելը, այգետարածքների մշակման, խաղողահումքի որակի բարելավման միջոցառումներին մասնակցելը, արտադրող-խաղողագործ քաղաքակիրթ հարաբերությունների ձևավորմանը, գյուղացիական փոքր տնտեսությունների և մթերող կազմակերպությունների միջև երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններին աջակցելը և այլն: Գինեգործության զարգացման բնագավառի գործառույթները վերաբերում են գինեգործական կազմակերպություններին աջակցելուն, համաշխարհային շուկաներում նրանց մրցունակությունը բարձրացնելուն, գինեգործության մարքեթինգային և գովազդային գործունեություն իրականացնելուն, գինու զբոսաշրջության զարգացմանն աջակցելուն, հայկական գինիների մասին հանրայնացմանն ու իրազեկմանը և այլն:

**Հիմնադրամի կողմից կանոնադրության 23 գործառույթներից 14-ի իրականացումը չի ապահովվել, իսկ գործառույթների գերակշռող մասը հստակ չէ, ինչը հնարավորություն չի ընձեռում գնահատելու նաև մնացած գործառույթների իրականացման արդյունավետությունը**

Այսպիսով՝ Հիմնադրամի կողմից կանոնադրության 23 գործառույթներից 14-ի իրականացումը չի ապահովվել, իսկ գործառույթների գերակշռող մասը հստակ չէ (աջակցել, մասնակցել, խթանել, նպաստել և այլն), ինչը հնարավորություն չի ընձեռում գնահատելու նաև մնացած գործառույթների իրականացման արդյունավետությունը:

Համաձայն Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության՝ դիտարկումից հետո մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ն իրականացվել են կանոնադրությամբ նախատեսված՝ դեռևս չիրականացված որոշ գործառույթներ: Մասնավորապես, աշխատանքներ են կատարվել կանոնադրության Հավելված 1-ի 1-ին, 3-րդ, 5-րդ, 9-րդ և այլն կետերով նախատեսված գործառույթների

իրականացման ուղղությամբ, որոնց գնահատումը հնարավոր է կատարել լրացուցիչ վերահսկողության արդյունքում:

➢ ***Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը***

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 31.12.2017 թ. դրությամբ Հիմնադրամի մուտքերը կազմել են 348,821.1 հազ. դրամ՝ ներառյալ արտարժույթով և այլ մուտքերը: Նույն ժամանակահատվածում ծախսերը կազմել են 332,168.8 հազ. դրամ (Հավելվածներ 2 և 3):

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ ըստ առանձին ուղղությունների ծախսերը ներկայացված են ստորև.

հազ. դրամ

| Ծախսերի բնույթը | Կատարված ծախսը |
|---|---|
| Աշխատավարձ (առանց եկամտահարկի և սոց. վճարների) | 59,392.7 |
| Ծառայությունների ձեռք բերում | 29,331.7 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում (այդ թվում՝ 15,000,0 հազ. դրամով մեկ ավտոմեքենա) | 28,426.4 |
| Ծրագրային ծախսեր (հայկական գինիների ներկայացում) | 176,970.7 |
| Այլ ծախսեր (ներառյալ հարկերը, տուրքերը և այլ վճարները ) | 38,047.2 |

Աղյուսակում արտացոլված ցուցանիշները ցույց են տվել, որ ընդհանուր ծախսերի կազմում ամենաբարձր տեսակարար կշիռը՝ 53.3 %-ը կամ 176,970.7 հազ. դրամը կազմել են Մունդուս գինու մրցանակաբաշխության, Prodexpo, Prowin և ProwinChina գինու ցուցահանդեսներին մասնակցությանն ու բլոգերների այցերի կազմակերպմանն ուղղված գումարները, որոնք առաջնային են համարվել Հիմնադրամի գործունեության ընթացքում:

*Հիմնադրամի հաստիքացուցակում առկա է 12 հաստիք, որից խաղողագործության բնագավառի մասնագետները երեքն են:*

**Հիմնադրամը չի զբաղվել կանոնադրությամբ սահմանված՝ Հայաստանի տարածքում աճեցվող խաղողի սորտերի գույքագրմամբ**

Մասնավորապես, դիտարկմամբ ընդգրկված ժամանակահատվածում Հիմնադրամը չի զբաղվել կանոնադրությամբ սահմանված՝ Հայաստանի տարածքում աճեցվող խաղողի սորտերի գույքագրմամբ, ինչը կարևոր նշանակություն ունի մրցունակ գինու տեսակների արտադրության ներուժի գնահատման, այգետարածքներում խաղողի գինեմետ սորտերի աճեցման տեսանկյունից: 2017 թ. հունիս ամսին Հիմնադրամի կողմից փորձ է կատարվել 200 համայնքների 3796 ֆերմերների շրջանում կատարել հարցում՝ խաղողագործության ոլորտում առկա խնդիրների բացահայտման, ստացվող խաղողի սորտերի ու քանակների և այլ հարցերի շուրջ: Սակայն ծրագրված միջոցառումն արդյունք չի տվել՝ հարցմանը մասնակցել է ընդամենը 415 ֆերմեր, իսկ հարցման արդյունքները չեն ամփոփվել:

Հիմնադրամի կողմից 2017 թ. մշակվել է 2018-2022թթ. խաղողագործության և գինեգործության զարգացման համալիր ծրագիր, որն իր բովանդակությամբ ընդհանրական է և չունի միջոցառումների կոնկրետ ուղղվածություն: Ինչ վերաբերում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներին, ապա ծրագրի արժեքը գնահատվել է 525,000.0 հազ. դրամ, որը պետք է հատկացվի պետական բյուջեից:

*Այսպիսով՝ Հիմնադրամի կողմից իր գործառույթների իրականացման գնահատման նպատակով ստացված տեղեկատվությունը վկայում է, որ մի շարք գործառույթներ չեն իրականացվել, որոշների իրականացման արդյունավետությունը հնարավոր չէ գնահատել՝ դրանց անորոշության պատճառով:*

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1 *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված բյուջետային միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման վերաբերյալ*

1.1. Կենտրոնի մասով կատարվել են շուրջ 5.7 մլրդ դրամի ծախսեր, սակայն կենտրոնը մինչ օրս փաստացի չի շահագործվում:

1.2. Կենտրոնին պատկանող գույքը ամբողջությամբ չի ներառվել կենտրոնի հաշվեկշռում և համապատասխան փոփոխություններ չեն կատարվել Կենտրոնի կանոնադրական կապիտալում:

1.3. Շինարարական աշխատանքները (ներառյալ համապատասխան սարքավորումների մատակարարումը) հիմնականում կատարվել են Այգեձոր ՍՊԸ-ի կողմից՝ 2,012.0 մլն դրամ գումարով: Շինարարական պայմանագրերում կատարվել են բազմաթիվ ծավալային և արժեքային փոփոխություններ, անընդհատ երկարաձգվել են աշխատանքների կատարման ժամկետները: Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները արդեն իսկ ավարտված են, ուստի անհրաժեշտություն է առաջացել Վերահսկիչ պալատի կողմից կատարել շինարարական աշխատանքների որակի և գործող նորմերին համապատասխանության մասով վերահսկողություն:

## 2 **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ**

2.3. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից մի շարք գործառույթներ չեն իրականացվել, որոշների իրականացման արդյունավետությունը հնարավոր չէ գնահատել՝ դրանց անորոշության պատճառով:

2.4. Հիմնադրամն իր գործունեության հիմնական խնդիրն ու նպատակն է համարել հայկական գինիների ներկայացումը միջազգային ցուցահանդեսներին և

համտեսներին մասնակցության միջոցով, այդ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 53.3 %:

2.5. Հիմնադրամը պատշաճ ուշադրություն չի հատկացրել խաղողագործության զարգացմանը, Հայաստանում գինեմետ խաղողի սորտերի աճեցմանը նպաստող միջոցառումների իրականացմանը:

2.6. Հիմնադրամի կողմից 2017 թ. մշակվել է 2018-2022 թթ. խաղողագործության և գինեգործության զարգացման համալիր ծրագիր, որն իր բովանդակությամբ ընդհանրական է և չունի միջոցառումների կոնկրետ ուղղվածություն, ժամկետներ և կատարողներ: Ծրագիրը գնահատվել է 525,000.0 հազ. դրամի չափով, որն ամբողջությամբ պետք է ֆինանսավորվի պետական բյուջեից:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ կառավարությանը**

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունից ելնելով առաջարկվում է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գործառույթները վերապահել արդեն իսկ գործող (փորձ ու համապատասխան աշխատակազմ ունեցող) և նմանատիպ գործառույթներ իրականացնող պետության կողմից հիմնադրված այլ կազմակերպություններին, մասնավորապես՝ Հայաստանի զարգացման հիմնադրամին կամ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին:

**ՀՀ կառավարությանը**

Հաշվի առնելով, որ ուռուցքային հիվանդությունները ոչ ինֆեկցիոն հիվանդությունների շարքում դիտարկվում են աշխարհում, այդ թվում Հայաստանում որպես բնակչության մահացության հիմնական առողջապահական պատճառներից մեկը, ուստի առաջարկվում է հնարավորինս սեղմ ժամկետներում մշակել և կենտրոնի խորհրդի կողմից հաստատել «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի ստեղծման և գործարկման համար անհրաժեշտ միջոցառումներն ու ժամանակացույցը, ապահովել կենտրոնի կողմից բոլոր հիմնական միջոցների գույքագրումն ու հաշվառումը, աուդիտի իրականացումը և կանոնադրական կապիտալում փոփոխությունների ժամանակին կատարումը:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:***

| Հավելված 1 | | | | |
|---|---|---|---|---|
| ***«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի ստեղծման նպատակով ֆինանսավորված միջոցների վերաբերյալ*** | | | | |
| **Ֆինանսավորման ամսաթիվը** | **Գումարը** | | **Գումարների տրամադրման աղբյուրը** | **Նպատակը/նկարագրությունը** |
| | Եվրո | Հազ. դրամ | | |
| ***1. Սարքավորումների ձեռք բերում*** | | | | |
| **2011-2015թթ.** | 5,374,691.46 | 2,927,345.0 | Բելգիական վարկ | IBA կազմակերպությունից սարքավորումների գնման համար* |
| **31.03.2016 թ.** | | 39,354.0 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | ՓԲԸ-ի համար սարքավորումներ և կահույք ձեռք բերելու համար |
| | | **2,966,699.0** | | |
| ***2. Շինարարական աշխատանքներ*** | | | | |
| **20.05.2011 թ.** | | 50,600.0 | Բյուջետային վարկ | Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման և փորձագիտական թույլտվությունների ստացման համար |
| **02.08.2012 թ.** | | 1,100,000.0 | Բյուջետային վարկ | «Այգեձոր» ՍՊԸ-ի կողմից ՓԲԸ-ի մասնաշենքի շինմոնտաժային աշխատանքների (միայն արտաքին կոնստրուկցիաներ) կատարման համար |
| **02.02.2013 թ.** | | 792,386.6 | Բյուջետային վարկ | «Այգեձոր» ՍՊԸ-ի կողմից շենքի ներքին և արտաքին ինժեներական համակարգերի, ներքին հարդարման աշխատանքների կատարման և տեխսկողության իրականացման համար |
| **10.06.2015 թ.** | | 254,672.3 | Բյուջետային վարկ | «Այգեձոր» ՍՊԸ-ի կողմից ՓԲԸ-ի կողմից սարքավորումների ձեռք բերման և մոնտաժման աշխատանքների կատարման համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **10.06.2015 թ.** | | 15,876.7 | Պահուստային ֆոնդ | «Այգեձոր» ՍՊԸ-ի կողմից «Ցիկլոտրոն 18/18» հիմնական սարքի տեղափոխման ու տեղադրման համար |
| **31.03.2016 թ.** | | 105,725.1 | Պահուստային ֆոնդ | «ՋԻ-ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ կողմից բարեկարգման աշխատանքների կատարման համար |
| **31.03.2016 թ.** | | 1,584.2 | Պահուստային ֆոնդ | «Յանինա» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացման համար |
| **31.03.2016 թ.** | | 688.0 | Պահուստային ֆոնդ | «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից հեղինակային հսկողության աշխատանքների իրականացման համար |
| | | **2,321,532.9** | | |
| ***3. Այլ ծախսեր*** | | | | |
| **09.06.2011թ.** | | 5,000.0 | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | կանոնադրական կապիտալի ստեղծում |
| **14.06.2013թ.** | | 3,000.0 | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | կանոնադրական կապիտալի ավելացում |
| **10.03.2015թ.** | | 4,600.0 | Հայաստանի Զարգացման Հիմնադրամ | ապահովագրական ծախս |
| **23.01.2014 թ.** | | 332,000.0 | Պետական բյուջե | Բելգիական վարկի հաշվին ձեռք բերված և ներմուծված սարքավորումների մաքսազերծման համար |
| **31.03.2016 թ.** | | 40,275.0 | Պահուստային ֆոնդ | ՓԲԸ-ի պահպանման ծախսերի կատարման նպատակով |
| **31.03.2016 թ.** | | 2,870.9 | Պահուստային ֆոնդ | Արտասահմանյան գործուղումներ վերապատրաստումների նպատակով |
| **31.03.2016 թ.** | | 54,487.0 | Պահուստային ֆոնդ | Հաջորդ տարի տեղափոխված մնացորդ |
| | | **442,232.8** | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **5,730,464.7** | | |

***Ծանոթագրություն* 19.02.2009թ. ՀՀ կառավարության թիվ 310-Ն որոշմամբ նախատեսվել է ձեռք բերել Ցիկլոն 30 ցիկլոտրոն ռադիոիզոտոպների համալիր, որը ՀՀ կառավարության 07.10.2010թ. թիվ 1424-Ն որոշմամբ փոխարինվել է Ցիկլոն 18/18 իզոտոպների արտադրության համալիրով:***

*Հավելված 2*

**Խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ**

| Սահմանված գործառույթը | Կատարված աշխատանքը |
|---|---|
| 1. Գինու արտադրության համար ներուժ ունեցող՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող խաղողի սորտերի ընտրության և բազմացմանն աջակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 2. Այգետարածքների մշակման, խաղողահումքի որակի բարելավման և խնամքի, ընդլայնմանն ուղղված ծրագրերի մշակմանը և իրականացմանը մասնակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 3. Գինու արտադրության հումք հանդիսացող խաղողի վնասատուների և հիվանդությունների դեմ կանխարգելիչ և պայքարի ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը մասնակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 4. Խաղողագործության և գինեգործության օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելը և դրանց մասնակցելը՝ ապահովելով օրենսդրական դաշտի ամբողջականացումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին | Մասնակցություն <<Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին>> օրենքի նախագծի մշակմանը |
| 5. Արտադրող-խաղողագործ քաղաքակիրթ հարաբերությունների ձևավորմանն աջակցելը՝ ուշադրություն դարձնելով գյուղացիական փոքր տնտեսությունների և մթերող կազմակերպությունների միջև երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններին | Աշխատանք չի կատարվել |
| 6. Խաղողագործության և գինեգործության զարգացման ծրագրեր մշակելն ու դրանք իրականացնելը. | Հաստատվել է 2018-2022թթ. խաղողագործության և գինե-գործության զարգացման համալիր ծրագիրը |
| 7. Գինեգործական կազմակերպություններին աջակցելը՝ բարձրացնելով նրանց մրցունակությունը համաշ-խարհային շուկաներում՝ տեղական ընկերություններին հաղորդակից դարձնելով միջազգային լավագույն փորձին և գիտելիքին | Աշխատանքը չունի գնահատման չափանիշներ |

| | |
|---|---|
| 8. Հիմնական շուկաների գործարար շրջանակների և վերլուծություններ իրականացնող կազմակերպու-թյունների հետ կապեր հաստատելը | 2017թ. հունիս ամսին մշակվել է ՀՀ գինեգործության ոլորտում գործող ընկերությունների մարկետինգային հնարավորությունների գնահատման հետա- զոտություն, որը չի կատարվել |
| 9. Հայկական ընկերությունների ղեկավար անձնակազմի և մասնագետների հմտությունների զարգացմանն աջակցելը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը նպաստելը | Աշխատանք չի կատարվել |
| 10. Խաղողագործության և գինեգործության ոլորտների տնտեսվարողների տեխնիկական և տեխնոլոգիական զարգացմանն աջակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 11. Խաղողագործներին աջակցելը՝ խորհրդատվության տրամադրման հարցում | Աշխատանք չի կատարվել |
| 12. Գործարար միջավայրի բարելավմանն աջակցելը | Աշխտանքը չունի գնահատման չափանիշներ |
| 13. Խաղողագործության-գինեգործության ոլորտի ազգային և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրեր իրականացնելը | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ իրականացվում է տնայնագործների աջակցու-թյան և Խաղողի տնկարկների քարտեզագրման ծրագիրը: 2017թ. սեպտեմբերի 16-19-ը ՀՀ-ում կազմակերպում է միջազգային գնորդների այց՝ գինեգործական ընկերությունների հետ համագործակցության եզրեր գտնելու նպատակով: Կազմակերպվում է Պրովայն Չայնա ցուցահանդեսին հայկական գինեգործական և կոնյակագործական ընկերությունների մասնակցությունը: |
| 14. Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպությանն (OIV) աջակցելը՝ Հայաստանի անդամակցությունից բխող գործառույթների պատշաճ իրականացման գործում | Աշխատանքը չունի գնահատման չափանիշներ |

| | |
|---|---|
| 15. «Հայկական գինիներ» ապրանքանիշի և դրա չափանիշների համակարգը մշակելը, շնորհելը և վերահսկելը, միջազգային շուկաներում ապրանքանիշի ճանաչմանը և առաջմղմանն աջակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 16. Հայաստանում գինու սպառման մշակույթի զարգացումը խթանելը՝ բարձրացնելով բնակչության տեղեկացվածությունը գինու վերաբերյալ և հայրենական որակյալ գինու նկատմամբ պահանջարկ ձևավորելը | Պատրաստվել են 28 և 32 որպե տևողությամբ հաղորդումներ՝ 13.5 մլն դրամ արժեքով |
| 17. Ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համաժողովներին, փառատոններին, համտեսներին, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումներին խաղողագործության և գինեգործության ոլորտների տնտեսվարողների մասնակցությանն աջակցելը (կազմակերպելը) | Կրկնվում է |
| 18. Գինեգործության մարքեթինգային և գովազդային գործունեություն իրականացնելը | Աշխատանք չի կատարվել |
| 19. Պետական աջակցություն ցուցաբերող այլ կառույցների հետ համագործակցելը՝ իրականացվող պետական աջակցության ծրագրերում ոլորտներում գործող տնտեսվարողների ընտրության հարցի քննարկումների և ընդգրկման վերաբերյալ առաջարկությունների տրամադրման ուղղություններով. | Աշխատանք չի կատարվել |
| 20. Գինու զբոսաշրջության զարգացմանն աջակցելը | «Արենի փառատոն» հիմնադրամի հետ համատեղ Արենի գինու փառատոնի կազմակերպում, որը մշտապես անցկացվել է |
| 21. Մշտական գործող համտեսային հանձնաժողով ստեղծելը և դրան աջակցելը | Աշխատանք չի կատարվել |
| 22. Հայկական գինիների մասին հանրայնացնելը և իրազեկելը | Աշխատանք չի կատարվել |
| 23. Համապատասխան ոլորտային խորհուրդների քարտուղարության վարումը | Գործադիր տնօրենը հանդի-սանում է մի շարք ոլորտային խորհուրդների անդամ, սակայն քարտուղարության վարում չի իրականացնում |

*Հավելված 3*

**Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի մուտքերի և ելքերի վերաբերյալ 31.12.2017թ դրությամբ**

դրամ, եվրո, ռուբլի

| Հաշիվ | Աղբյուրներ | Մուտքեր | | Ելքեր | |
|---|---|---|---|---|---|
| | | EURO | AMD | EURO/RUB | AMD |
| **Դրամային հաշիվ** | ՀՀ կառավ. պահուստային ֆոնդից հատկացումներ /211,75 մլն դրամ/ | | 211,750,000.00 | | **155,457,602.00** |
| | *ՀՀ կառավ. պահուստային ֆոնդից հատկացումներ /144,031մլն դրամ/* | | *94,031,100.00* | | |
| | Հաշվեգրված տոկոսային եկամուտ | | 1,891,179.50 | | |
| | Մասնակցության վճար | | 150,000.00 | | ***110,737,671.50*** |
| | Այլ մուտքեր | | 63,812.00 | | |
| | | | *1,245,000.00* | | |
| **Քարտային հաշիվ** | | | | | **214,416.00** |
| **Եվրոյով հաշիվ** | CBI /Դրամաշնորհ/ | € 58,679.00 | 30,798,564.49 | **€ 86,291.71** | **44,375,871.00** |
| | BOELS VERLEIH GMBH C/O | € 1,943.76 | 1,051,457.53 | | |
| | *CBI /Դրամաշնորհ՝ Գնորդների այց Ծրագրի համար/* | *€ 13,975.00* | *7,839,975.00* | | |
| **Ռուբլիով հաշիվ** | | | | **2,712,133.00 ₽** | **21,383,187.50** |
| ***Գումարների վերադարձ ՀՀ բյուջե*** | | | | | **5,464,140.50** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **348,821,088.52** | | **337,632,888.5** |

*Հավելված 4*

**Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացված ծախսեր 2016-2017թթ**

/դրամ, եվրո, ռուբ/

| | Ծախսերի անվանումը | Վճարում 2016թ. | | Վճարում 31.07. 2017թ. դրությամբ | | Ընդամենը | Վճարում 31.07. 17- 31.12.17թթ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | EURO/RUB | AMD | EURO/RUB | AMD | **AMD** | EURO/RUB | AMD |
| **1** | **Հարկեր, տուրքեր և վճարներ** | | | | | | | |
| **1.1** | Բանկից ստացված տոկոսների եկամտից շահութահ. | | | | 306,059.6 | **306,059.6** | | 83,468.0 |
| **1.2** | Ավտոկայանտեղի համար վճար պետ. տուրքեր | | 153,408.0 | | 12,000.0 | **165,408.0** | | |
| **1.3** | Բանկային, ապահովագրական ծախսեր | | 187,067.0 | | 422,338.2 | **609,405.9** | | 45,955.0 |
| **1.4** | Գույքահարկ | | | | 49,200.0 | **49,200.0** | | 51,375.0 |
| **1.5** | ԱԱՀ-ի վճարում | | 381,788.0 | | | **381,788.0** | | |
| **1.6** | Եկամտային հարկ և սոցիալական վճար | | 6,216,292.0 | | 13,218,837.0 | **19,435,129.0** | | 9104973.0 |
| **1.7** | Քարտային հաշվի ծախսեր /բանկ. ծախս. և այլն/ | | 214,416.00 | | | **214,416.0** | | |
| **2** | **Աշխատավարձ** /առանց եկամտահարկի և սոց վճարների/ | | | | | | | |
| **2.1** | Աշխատավարձ և պարգևատրումներ | | 18,902,111.00 | | 22,288,732.00 | **41,190,843.0** | | 18201935.0 |
| **2.3** | Դատական ծախսեր և փոխհատուցում | | | | 7,600,000.00 | **7,600,000.0** | | |
| **3** | **Ծառայությունների ձեռք բերում** | | | | | | | |
| **3.1** | Կոմունալ ծախսեր | | 30,000.00 | | 476,000.00 | **506,000.0** | | 26,000.0 |
| **3.2** | Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | | 438,103.00 | | 864,246.30 | **1,302,349.3** | | *635,712.5* |
| **3.3** | Աուդիտի իրականացում | | | | 380,000.00 | **380,000.0** | | |
| **3.4** | Թարգմանչական ծառայության ծախսեր | | | | 150,000.00 | **150,000.0** | | |
| **3.5** | Խաղողի այգիների կադաստրի ստեղծում | | | | 200,000.00 | **200,000.0** | | 448,662.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.6** | Ավիատոմսերի ձեռք բերման ծախսեր | | 39,999.00 | | 112,149.00 | **152,148.0** | | *286,238.0* |
| **3.7** | Հայտարարությունների հրապարակում | | 14,000.00 | | 64,000.00 | **78,000.0** | | |
| **3.8** | Հասարակայնության հետ կապերի ծառայություններ | | 960,000.00 | | | **960,000.0** | | |
| **3.9** | Կայքի պատրաստում | | 6,000,000.00 | | | **6,000,000.0** | | |
| **3.10** | Հեռուստահաղորդումների պատրաստում | | 13,959,000.00 | | | **13,959,000.0** | | |
| **3.11** | Գնումների մասնագետի վճար | | 810,000.00 | | | **810,000.0** | | 475,000.0 |
| **3.12** | Գրասենյակի նորոգում | | 995,000.00 | | | **995,000.0** | | |
| **3.13** | Առհաշիվ գումարներ | | | | 121,875.00 | **121,875.0** | | 25,700.0 |
| **3.14** | Հարկային խորհրդատվություն | | | | | | | *420,000.0* |
| **3.15** | Լոգոյի պատրաստում | | | | | | | 550,000.0 |
| **3.16** | Ինտերնետ կայքի սպասարկում | | | | | | | *850,000.0* |
| **4** | **Հիմնական միջոցների ձեռք բերում** | | | | | | | |
| **4.1** | Հաշվապահական ծրագրեր | | 220,000.0 | | 69,000.0 | **289,000.0** | | |
| **4.2** | Գրասենյակային ծախսեր | | 1,055,500.0 | | 773,350.0 | **1,828,850.0** | | 278,700.0 |
| **4.3** | Անվադողերի ձեռք բերում | | 120,000.0 | | | **120,000.0** | | |
| **4.4** | Վառելիքի ձեռք բերում | | 171,000.0 | | 460,600.0 | **631,600.0** | | 433,003.0 |
| **4.5** | Ֆոտոխցիկ | | | | 704,300.0 | **704,300.0** | | |
| **4.6** | Ավտոմեքենա | | 15,000,000.0 | | | **15,000,000.0** | | |
| **4.7** | Օդորակիչներ | | 995,000.0 | | | **995,000.0** | | |
| **4.8** | Գինեգործության գրքեր և ուղեցույցներ | | 985,000.0 | | | **985,000.0** | | |
| **4.9** | Բազկաթոռներ | | 1,300,000.0 | | | **1,300,000.0** | | |
| **4.10** | Շերտավարագույրներ | | 663,000.0 | | | **663,000.0** | | |
| **4.11** | Բազմաֆունկցիոնալ սարքեր | | 155,220.0 | | | **155,220.0** | | |
| **4.12** | Տնտեսական գույք / աթոռներ, սեղաններ / | | 860,756.0 | | | **860,756.0** | | |
| **4.13** | Տպիչ և անկախ սնուցման սարք | | 351,000.0 | | | **351,000.0** | | |
| **4.14** | Համակարգիչներ | | 3,831,000.0 | | | **3,831,000.0** | | |
| **5** | **Ծրագրային ծախսեր*** ** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **5.1** | Գինեգործ.փորձագ. այց հայկական գինու որակի ապահովմ. խոչընդոտող գործոն. գնահատ նպատ. | *3,600.0 €* | 900,000.0 | | | **900,000.0** | | |
| **5.2** | Արտահանմ.ծախսեր-՝ Մունդուս /մրցանակաբ./ | | 1,349,400.0 | | 987,400.0 | **2,336,800.0** | | |
| **5.3** | Մունդուս գինու մրցանակաբաշխության մասնակցություն /CBI/ | | | *17,536.9 €* | 1,149,236.0 | **1,149,236.0** | | |
| **5.4** | **Prodexpo** /գինու ցուցահանդ. մասնակց., ՌԴ/ | *1,381,430 ₽* | | *1,330,703.0 ₽* | 4,189,630.0 | **4,189,630.0** | | **20,066,724.0** |
| **5.5** | **Prowein 2017** /գինու ցուցահանդ. . Գերմ./ | *19,169.5 €* | | *42,066.5 €* | 6,750,501.9 | **6,750,501.9** | | **10,307,121.0** |
| **5.6** | CBI համաժողովի մասնակցություն /Գերմանիա/ | | 880,313.0 | | 171,200.0 | **1,051,513.0** | | |
| **5.7** | Գինու միջազգային փառատոն | | 1,500,000.0 | | | **1,500,000.0** | | |
| **5.8** | Բլոգերների այց | | 1,748,080.0 | | 753,338.0 | **2,501,418.0** | | **3,808,088.0** |
| **5.9** | Բլոգերների այց /CBI դրամաշնորհ/ | *2,618.9 €* | 8,014,305.0 | | 45,000.0 | **8,059,305.0** | | |
| **5.10** | Բրյուսելում ՀՀ դեսպանատան կողմից կազմակ. գինիների համտեսում | | 1,694,098.0 | | | **1,694,098.0** | | |
| **5.11** | Գինու քարտեզի ստեղծում | | | | 30,000.0 | **30,000.0** | | |
| **5.12** | OIV Կոնգրես | | 1,320,712.0 | *1,300.0 €* | 907,457.0 | **2,228,169.0** | | **888,678.0** |
| **5.13** | «Գինու համաշխ. միտում. և լավագ. փորձը. հետևութ.. ու առաջ. ՀՀ համար» խորագ. համաժ. | | | | | | | **8,821,895.0** |
| **5.14** | «Արենի» փառատոնին մասնակցություն՝ որպես ծրագրի համակազմակերպիչ | | | | | | | **3,245,000.0** |
| **5.15** | Գինու մասին հեռուստահաղորդումների շարք | | | | | | | **2,750,000.0** |
| **5.16** | Prowine China 2017 ցուցահանդ. մասնակց /Զարգացման Հիմնադրամի հետ համատեղ/ | | | | | | | **13,555,058.0** |
| **5.17** | Երևանի գինու ակադեմիային աջակցություն | | | | | | | **10,000,000.0** |
| **5.18** | Հնդկաստան գինիների արտահանում | | | | | | | **648,547.0** |
| **5,19** | գնորդների այց | | | | | | | **4,729,839.00** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը /ելքեր/** | | | | | | | |
| | ՀՀ դրամով | | 92,415,568.0 | | 63,256,450.0 | **155,672,018.0** | | |
| | Եվրոյով | *25,388.4 €* | 13,056,069.79 | *60,903.4 €* | 31,319,801.2 | **44,375,871.0** | | |
| | ՌԴ ռուբլով | *1,381,430 ₽* | 10,891,566.42 | *1,330,703 ₽* | 10,491,621.1 | **21,383,187.5** | | |
| | | | 116,363,204.8 | | 105,067,872 | **221,431,076.5** | | 110,737,671.5 |
| | | | | | | **332,168,748.0** | | - |
| ****** Ծանոթագրություն -«Ծրագրային ծախսեր» բաժնում ներառված են նաև Հիմնադրամի աշխատակիցների գործուղման հետ կապված ծախսերը*** | | | | | | | | |

***Հավելված 5***

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

## Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ

Ի պատասխան ՀՀ վերահսկիչ պալատի (այսուհետ՝ ՎՊ) խորհրդի 2017թ. հուլիսի 31-ի թիվ 14/7 որոշման հիման վրա իրականացված վերահսկողությամբ ներկայացված արձանագրության՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ վերահսկիչ պաալտի հանձնաժողովի կողմից արձանագրությամբ բերված գործառույթների կապակցությամբ հայտնում ենք, որ 2017 թ. օգոստոսից-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

ԵՊՀ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնը, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը համատեղ իրականացնում են «Հայաստանի խաղողի գենետիկական բազմազանության բնութագրում և պահպանում» նախագիծը, որի արդյունքները ներկայացվել են 2017թ. նոյեմբերի 23-ին ՀԽԳՀ կողմից կազմակերպված Գինու միջազգային համաժողովի շրջանակներում: Այս պահի դրությամբ արդեն իսկ ուսումնասիրվել է մշակովի և վայրի խաղողի շուրջ 300 սորտ, ուսումնասիրությունները շարունակվում են: 2018թ.-ին նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որտեղ կհավաքագրվի և կհամալրվի վերոնշյալ տեղեկատվությունը, ինչը հասանելի կլինի խաղող և գինի արտադրողների համար:

ՀԽԳՀ Խաղողագործության և գինեգործության բաժնի կողմից մշակվել է «ՀՀ-ում 2018-2025 թթ խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրություն եվ նոր այգիների հիմնում» նախագիծը, որը կմեկնարկի 2018-ին: Բացի այդ՝ ՀԽԳՀ-ն հանդիսանում է 2015-ին ՀՀ-ում մեկնարկած «Տեխնիկական աջակցություն խաղողի ֆիլոքսերադիմացկուն հավաստագրված տնկանյութի» ծրագրի իրավահաջորդը, որով նախատեսված է պիլոտային մասի ավարտից հետո 2018-ի մարտից ծրագրի իրականացումը պատվիրակել հիմնադրամին:

ՀԽԳՀ կողմից նախաձեռնվել են խաղողի տարբեր սորտերի ինքնարժեքի հաշվարկման աշխատանքներ, որոնց արդյունքում հաշվարկված միջին գնացանկը ներկայացվել է ՀԽԳՀ հոգաբարձուների խորհուրդի 13-րդ նիստի քննարկմանը: Հավանության արժանանալուց հետո նախարարի հանձնարարությամբ ինքնարժեքի հաշվարկները՝ որպես ուղեցույց տրամադրվել են մթերում իրականացնող ընկերություններին: Հաշվարկների հիման վրա սահմանվել է մթերման համար տրամադրվող վարկավորման չափը:

2017թ. նոյեմբերի 23-24 ՀԽԳՀ նախաձեռնությամբ կազմակերպված գինու միջազգային համաժողովի շրջանակում անցկացված «Գինու բիզնես և գինեգործության ոլորտի ներդրումներ» աշխատաժողով-քննարկումների ընթացքում տեղական ընկերությունների ներկայացուցիչներին ներկայացվել են միջազգային լավագույն փորձը, հետևություններ և խորհուրդներ Հայաստանի համար, վերհանվել են ոլորտի հիմնական մարտահրավերները, որոնց շուրջ ներկայում մշակվում է ուղեցույց, որը 2018-ին կտրամադրվի գինեգործական ընկերություններին:

ProWine China 2017 ցուցահանդեսին ընդառաջ՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը նախաձեռնել է մասնագիտական խորհրդատվություն գինի և կոնյակ արտադրող ընկերությունների ներկայացուցիչների համար՝ ցուցահանդեսի ընթացքում պատշաճ և արդյունավետ ներկայանալու և առաջադրվող պահանջներին համապատասխանելու նպատակով: Խորհրդատվությունն անց է կացվել ՀԽԳՀ աջակցությամբ հրավիրված բարձրակարգ փորձագետ Վիլլի Գալաբովայի կողմից (CBI Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոն): Մասնակից ընկերությունների ներկայացուցիչների հետ Գալաբովան կիսվել է միջազգային էքսպոներում հաջողության հասնելու իր փորձով՝ առաջարկելով հայկական գինիների ճանաչելության բարձրացմանն ուղղված գործիքներ:

**Միաժամանակ, հայտնում ենք, որ**

- ՀԽԳՀ կողմից Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել է «Հայաստանում խաղողի այգիների կադաստրի ստեղծման պոտենցիալը» թեմայով միջազգային աշխատաժողով: Աշխատաժողովին հրավիրված են եղել ինչպես հայ մասնագետներ և շահագրգիռ անձինք, այնպես էլ գործընկերներ Վրաստանից և Պորտուգալիայից:

Աշխատաժողովի արդյունքների քննարկումներին հաջորդել են ՀԽԳՀ-ի կողմից «Հայաստանի խաղողի տնկարկների կադաստր» համակարգի համապարփակ հայեցակարգի մշակման աշխատանքները: Դրանք իրականացնելու, ինչպես նաև պատշաճ փաստաթուղթ մշակելու նպատակով տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ տարբեր մասնագիտական խմբերի հետ, ինչպես օրինակ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի «ԱՏՀ և հեռահար զոնդավորման լաբորատորիաների», ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, ՏՏ ոլորտի և տառաթվային տեղեկություններ հավաքագրող տարբեր ընկերությունների մասնագետների հետ: «Հայաստանի խաղողի տնկարկների կադաստր»-ի հայեցակարգի նախնական տարբերակը ոլորտի շահագրգիռ ներկայացուցիչների հավանությունն է ստացել ՀԽԳՀ հոգաբարձուների խորհրդի 17.08.2017թ. կայացած նիստում: Այնուհետև մշակվել է ծրագրի իրականացման տեխնիկական առաջադրանք:

Վերոնշյալ հայեցակարգը ներկայացվել է Համաշխարհային Բանկ, և ձեռք է բերվել համաձայնություն ծրագրի ամբողջական ֆինանսավորման համար, այդ իսկ պատճառով նպատակահարմար չի համարվել Հիմնադրամի ֆինանսական միջոցները ուղղել տվյալ ծրագրի ֆինանսավորմանը:

Ֆերմերների շրջանում իրականացված հարցումների վերաբերյալ հայտնում ենք, որ ծախսերի արդյունավետության տեսանկյունից հիմնավոր է համարվել հարցումները շարունակել և արդյունքներն ամփոփել խաղողի այգետարածքների արբանյակային լուսանկարների ձեռք բերումից հետո: Հավաքագրած բոլոր արդյունքները կմուտքագրվեն էլեկտրոնային տեղեկատվական համակարգ:

- Հիմնադրամի 2018-2022թթ ներկայացված ծրագրից բխող կոնկրետ միջոցառումները, ժամկետները և դրանց իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները հաստատվում են յուրաքանչյուր տարեսկզբին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հիմնադրամի կողմից իրականացվել են նաև այլ գործառույթներ:

# 2.16 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. հուլիսի 31-ի թիվ 14/2 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման, արտաբյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն: |
| **Վերահսկողության օբյեկտը** | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե: |
| **Վերահսկողության տեսակները** | Ֆինանսական, համապատասխանության և կատարողական (արդյունավետության): |
| **Վերահսկողության իրականացման ժամկետը** | 2017թ. օգոստոսի 7-ից մինչև 2018թ. մարտի 15-ը: |
| **Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջանը** | 2015թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 29-ը: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Իրականացվել են վերահսկողության դիտարկման, ուսումնասիրության և վերլուծության ձևերը: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## 1. Բյուջետային մուտքերի ապահովում

### 1. Տնտեսվարող սուբյեկտներ

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թիվը կազմել է. 01.01.2015թ. դրությամբ՝ 307,567 սուբյեկտ, 01.01.2016թ. դրությամբ՝ 330,797 սուբյեկտ, 01.01.2017թ. դրությամբ՝ 352,158 սուբյեկտ, 31.12.2017թ. դրությամբ՝ 374,735 սուբյեկտ: Լուծարված/մահացած սուբյեկտների թիվը կազմել է 01.01.2015թ. դրությամբ՝ 128,202 սուբյեկտ, 01.01.2016թ. դրությամբ՝ 129,822 սուբյեկտ, 01.01.2017թ. դրությամբ՝ 131,101 սուբյեկտ, 31.12.2017թ. դրությամբ՝ 158,538 սուբյեկտ:



## 2. Հավաքագրված եկամուտներ

2.1. **ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հավաքագրված հարկային և մաքսային եկամուտներն, ըստ տարիների, կազմել են.**

- 2015թ. – 1,067.3 մլրդ դրամ
- 2016թ. – 1,078.6 մլրդ դրամ
- 2017թ. – 1,204.5 մլրդ դրամ




2.2. **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմինների կողմից փաստացի հավաքագրված եկամուտներն, ըստ տարիների, կազմել են.**

- 2015թ. – 777.5 մլրդ դրամ
- 2016թ. – 820.8 մլրդ դրամ
- 2017թ. – 886.7 մլրդ դրամ

2.3. **ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից փաստացի հավաքագրված եկամուտներն, ըստ տարիների, կազմել են.**

- 2015թ. – 289.8 մլրդ դրամ
- 2016թ. – 257.8 մլրդ դրամ
- 2017թ. – 317.8 մլրդ դրամ

2.4. **2015-2017թթ. ընթացքում փաստացի հավաքագրված հարկային եկամուտների գերակշիռ մասը կազմել են եկամտային հարկը և ԱԱՀ-ն.**

- 2015թ. – 311.7 մլրդ դրամ (եկ. հարկ), 232.9 մլրդ դրամ (ԱԱՀ)
- 2016թ. – 324.8 մլրդ դրամ (եկ. հարկ), 222.4 մլրդ դրամ (ԱԱՀ)
- 2017թ. – 343.7 մլրդ դրամ (եկ. հարկ), 249.1 մլրդ դրամ (ԱԱՀ)

2.5. **2015-2017թթ. ընթացքում փաստացի հավաքագրված մաքսային եկամուտների գերակշիռ մասը կազմել են ԱԱՀ-ն և մաքսատուրքը՝**

- 2015թ. – 191 մլրդ դրամ (ԱԱՀ), 61.5 մլրդ դրամ (մաքսատուրք)
- 2016թ. – 168.2 մլրդ դրամ (ԱԱՀ), 55.4 մլրդ դրամ (մաքսատուրք)
- 2017թ. – 203.3 մլրդ դրամ (ԱԱՀ), 72.6 մլրդ դրամ (մաքսատուրք)

2.6. **2015-2017թթ. ընթացքում հարկ վճարողների գերավճարները կազմել են՝**

- 01.01.2015թ. դրությամբ՝ 270.5 մլրդ դրամ
- 01.01.2016թ. դրությամբ՝ 268.4 մլրդ դրամ
- 01.01.2017թ. դրությամբ՝ 286.1 մլրդ դրամ
- 31.12.2017թ. դրությամբ՝ 278.8 մլրդ դրամ

2.7. **2015-2017թթ. ընթացքում հարկ վճարողների հարկային պարտավորությունները կազմել են՝**

- 01.01.2015թ. դրությամբ՝ 332.6 մլրդ դրամ
- 01.01.2016թ. դրությամբ՝ 330.9 մլրդ դրամ
- 01.01.2017թ. դրությամբ՝ 342.3 մրդ դրամ
- 31.12.2017թ. դրությամբ՝ 321.3 մլրդ դրամ




2.8. **«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի հիման վրա վերադարձված ԱԱՀ-ն 2015թ.-ին կազմել է 44 մլրդ դրամ, 2016թ.-ին՝ 48.7 մլրդ դրամ, իսկ 2017թ.-ին՝ 60.6 մլրդ դրամ:**

## 3. Հարկային ստուգումներ




3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից ստուգումներ են իրականացվել.

- 2015 թվականի հուլիսի 1-ից 2016 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 14,571 կազմակերպություններում,
- 2016 թվականի հուլիսի 1-ից 2017 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 7,673 կազմակերպություններում,
- 2017 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,097 կազմակերպություններում:




3.2. Ամենամեծ թվով ստուգումներն իրականացվում են հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետև՝ ՀԴՄ-ների) գծով՝ կազմելով ընդհանուրի.

- 45.7%-ը՝ 2015-2016թթ. հաշվետու ժամանակահատվածում,
- 36.9%-ը՝ 2016-2017թթ. հաշվետու ժամանակահատվածում,
- 38.9%-ը՝ 2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում:

3.3. իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարի ընդհանուր չափը կազմել է.

- 2015 թվականի հուլիսի 1-ից 2016 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 20.3 մլրդ դրամ,
- 2016 թվականի հուլիսի 1-ից 2017 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 16.8 մլրդ դրամ,
- 2017 թվականի հուլիսի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 11.5 մլրդ դրամ:

3.4. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը պատկանում է բյուջետային ստուգումներին, մասնավորապես՝

- 70.9%-ը՝ 2015-2016թթ.,
- 68.1%-ը՝ 2016-2017թթ.,
- 85.9%-ը՝ 2017թ. II կիսամյակի ընթացքում

3.5. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարի գերակշիռ մասը բաժին է ընկնում շահութահարկի և ԱԱՀ-ի գծով խախտումներին, մասնավորապես,

- 68.4%-ը՝ 2015-2016թթ.,
- 65.7%-ը՝ 2016-2017թթ.,
- 54.7%-ը՝ 2017թ. II կիսամյակի ընթացքում

## 4. 2015-2016թթ. տարեկան ծրագրի կազմում

Ստուգումների ծրագրում 1,631 կազմակերպություն, որից 1,414-ը բարձր ռիսկայնությամբ

4.1. Ընդհանուր հարկ վճարողների բազայից ձևավորված ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների ցանկից (այսուհետ՝ ՌՉՍ ցանկից)՝ 75,038-ից, ընտրվել է ստուգման ենթակա 1,522 ընկերության նախնական ցանկ:

4.2. Կատարվել է ցանկից հանման 590 առաջարկություն, որից ընդունվել է 295-ը, և ներառման 712 առաջարկություն, որից ընդունվել է 399-ը:

***Արդյունքում, 2015-2016թթ.-ների ՊԵԿ-ի կողմից իրականացվող ստուգումների ծրագրում ընդգրկվել է 1,631 կազմակերպություն, որոնցից 1414-ն ընդգրկված են բարձր, 175-ը՝ միջին, 42-ը՝ ցածր ռիսկայնության խմբերում:***

## 5. 2016-2017թթ. տարեկան ծրագրի կազմում

5.1. Ընդհանուր հարկ վճարողների բազայից ձևավորված ՌՀՍ ցանկից՝ 47,988-ից, ընտրվել է ստուգման ենթակա 1,503 ընկերության նախնական ցանկ:

Ստուգումների ծրագրում 1,577 կազմակերպություն, որից 1,392-ը բարձր ռիսկայնությամբ

5.2. Կատարվել է ցանկից հանման 496 առաջարկություն, որից ընդունվել է 337-ը, և ներառման 808 առաջարկություն, որից ընդունվել է 421-ը:

***Արդյունքում, 2017-2018թթ.-ների ՊԵԿ-ի կողմից իրականացվող ստուգումների ծրագրում ընդգրկվել է 1,577 կազմակերպություն, որոնցից 1,392-ն ընդգրկված են բարձր, 155-ը՝ միջին, 30-ը՝ ցածր ռիսկայնության խմբերում:***

## 6. 2017-2018թթ. տարեկան ծրագրի կազմում

Ստուգումների ծրագրում 1,385 կազմակերպություն, որից 1,098-ը բարձր ռիսկայնությամբ

6.1. Ընդհանուր հարկ վճարողների բազայից ձևավորված ՌՀՍ ցանկից՝ 26,690-ից, ընտրվել է ստուգման ենթակա 1,341 ընկերության նախնական ցանկ:

6.2. Կատարվել է ցանկից հանման 312 առաջարկություն, որից ընդունվել է 211-ը, և ներառման 385 առաջարկություն, որից ընդունվել է 264-ը:

***Արդյունքում, 2017-2018 թթ.-ների ՊԵԿ-ի կողմից իրականացվող ստուգումների ծրագրում ընդգրկվել է 1,385 կազմակերպություն, որոնցից 1,098-ն ընդգրկված են բարձր, 219-ը՝ միջին, 68-ը՝ ցածր ռիսկայնության խմբերում:***

## 7. Մաքսային ստուգումներ




7.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության կողմից 2015թ.-ին իրականացվել է թվով 20 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկված գումարը կազմել է 334.2 մլն դրամ մաքսային վճարներ և տույժեր, որից 01.01.2016թ. դրությամբ ՀՀ պետական բյուջե է վճարվել 226.9 մլն դրամը:

7.2. 2016թ.-ին իրականացվել է թվով 26 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկված գումարը կազմել է 455.3 մլն դրամ, փաստացի վճարվել է 226.7 մլն դրամը:

7.3. 2017թ.-ին իրականացվել է թվով 35 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ գանձված մաքսային վճարների գումարը հաշվարկվել է 630.8 մլն դրամ, փաստացի վճարվել է 379.3 մլն դրամը:

***Առավել տարածված խախտումները վերաբերում են պակաս մաքսային արժեքով, ապրանքի սխալ նկարագրով (պակաս վճարված հակադեմպինգային տուրք), սխալ ծածկագրերով հայտարարագրումներին, ինչպես նաև արտոնությունների սխալ կիրառմանը:***

## 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՐԿՈՒՄ

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ուշացման հիմքով.

- 2015 թվականի ընթացքում նշանակվել է 11,442 հատ վարչական տուգանք՝ 167.4 մլն ՀՀ դրամ գումարի չափով:
- 2016 թվականի ընթացքում նշանակվել է 12,139 հատ վարչական տուգանք՝ 176.8 մլն դրամ գումարի չափով:
- 2017 թվականի ընթացքում նշանակվել է 9,603 հատ վարչական տուգանք՝ 192 մլն ՀՀ դրամ գումարի չափով:

2. 2015-2017թթ. ընթացքում թվով 2,693 տնտեսվարող սուբյեկտների մասով ներկայացվել են 37.9 մլրդ դրամ գումարի սնանկության հայցադիմումներ:

3. 2015թ. ընթացքում մաքսային վճարների և վարչական տուգանքների բռնագանձման ուղղությամբ կայացվել են 1,284 որոշումներ՝ 2.7 մլրդ դրամ գումարով: Ներկայացված հայցերով (այդ թվում նաև նախորդ ժամանակաշրջանի) կայացվել են 97 վճիռներ՝ 144.6 մլն դրամ հայցագնով, որոնցից բավարարվել են 68 հայցեր՝ 79.7 մլն դրամ հայցագնով, մերժվել է 7 հայց՝ 10.7 մլն դրամ հայցագնով, կարճվել է 19 հայց՝ 3.7 մլն դրամ հայցագնով, կասեցվել է 3 հայց՝ 50.6 մլն դրամ հայցագնով:

4. **2015 թվականին գանձվել է 626.9 մլն դրամ գումար:**

5. 2016թ. ընթացքում մաքսային վճարների և վարչական տուգանքների բռնագանձման ուղղությամբ կայացվել են 1,545 որոշումներ՝ 1.4 մլրդ դրամ գումարով: Ներկայացված հայցերով կայացվել են 181 վճիռներ՝ 72.6 մլն դրամ հայցագնով, որոնցից բավարարվել են 178 հայցեր՝ 71.4 մլն դրամ հայցագնով, մերժվել են 3 հայցեր՝ 1.3 մլն դրամ հայցագնով: 25 դեպքով ներկայացվել է սնանկության պահանջ՝ 908.2 մլն. դրամի չափով:

6. **2016 թվականին գանձվել է 675.5 մլն դրամ գումար:**

7. 2017թ. ընթացքում մաքսային վճարների և վարչական տուգանքների բռնագանձման ուղղությամբ կայացվել են 1,604 որոշումներ՝ 210.5 մլն դրամ գումարով: Ներկայացված հայցերով կայացվել են 112 վճիռներ՝ 265.7 մլն դրամ հայցագնով, որոնցից բավարարվել են 89 հայցեր՝ 181.0 մլն դրամ հայցագնով, մերժվել են 15 հայցեր՝ 7.75 մլն դրամ հայցագնով, կարճվել են 8 հայցեր՝ 76.9 մլն դրամ հայցագնով: 26 դեպքով ներկայացվել է սնանկության պահանջ՝ 584.3 մլն դրամի չափով:

**8. 2017 թվականին գանձվել է 279.9 մլն դրամ գումար:**

9. ***Իրավաբանական վարչության գործառույթների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խնդիրները.***

9.1. ՊԵԿ-ը, որպես վարչական մարմին, չի վարել վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյաններ, ինչպես նաև՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի հաշվառման առանձին գրանցամատյաններ:

ՊԵԿ-ը պատշաճ չի վարել գրանցամատյաններ

9.2. ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. օգոստոսի 29-ի «ՀՀ ֆինանսների նախարարության հարկային (տարածքային) տեսչությունների կողմից հարկային և այլ պարտավորությունների գանձման ուղղությամբ իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը միասնական կարգով ներկայացնելու վերաբերյալ» թիվ 559-Ա հրամանով սահմանված մայքրոսոֆթ օֆիս էքսել (Microsoft Office Excel) ձևաչափով վարչություն ներկայացվող հաշվետվությունները ներկայացվել են ՊԵԿ իրավաբանական վարչությանը մինչև 01.08.2015թ., երբ տարածքային հարկային տեսչությունների իրավաբանական ստորաբաժանումներն ընդգրկվել են ՊԵԿ-ի իրավաբանական վարչության կազմում:

## 3. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

1. *2015թ.-ից 2016թ.-ի մարտ ամիսը ներքին աուդիտի գործառույթն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի վարչության կողմից:*
2. 2016թ.-ի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ներքին աուդիտի ենթակա միավորները, մինչև ՀՀ Նախագահի 01.03.2016թ. թիվ ՆՀ-213-Ն հրամանագրի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի առանձնացումը, ներառված են եղել ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի 2016-2018թթ. ռազմավարական և 2016թ. տարեկան ծրագրերում: Տարեկան ծրագրի առաջին վավերացմամբ նախատեսվել են աուդիտներ թվով 15 միավորներում, իսկ վերակազմավորումից հետո հաստատված ներքին աուդիտի 2016թ. տարեկան ծրագրի հիման վրա իրականացվել են աուդիտորական առաջադրանքներ թվով 9 միավորներում:

Իրականացվել են աուդիտորական առաջադրանքներ թվով 9 միավորներում

2.1. 2016թ.-ին իրականացված ներքին աուդիտների արդյունքում.

- բացահայտվել են 4,174 անհամապատասխանություններ,
- տրվել են 79 առաջարկություններ,
- կազմվել են գործողությունների ծրագրեր, որոնցում սահմանվել են 202 միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են եղել աուդիտի առաջադրանքների ընթացքում բացահայտված խախտումների վերացման համար:

Բացահայտվել են 4,174 անհամապատասխանություններ

2.2. Ներքին աուդիտի 2017թ. տարեկան ծրագրի համաձայն, տարվա ընթացքում իրականացվել են աուդիտներ թվով 23 միավորներում, որի արդյունքում.

- բացահայտվել են՝ 3,400 անհամապատասխանություններ,
- տրվել են 145 առաջարկություններ,
- կազմվել են գործողությունների ծրագրեր, որոնցում սահմանվել են 169 միջոցառումներ: Ըստ ներքին աուդիտի վարչության կողմից տրամադրված տեղեկատվության՝ նշված առաջարկություններից 126-ն արդեն կատարվել են:

2.3. 2016թ. տարեկան ծրագրով նախատեսված, սակայն 2017թ. ավարտված միավորում («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի կիրառման ճշտություն) բացահայտվել են 1,488 անհամապատասխանություններ և տրվել է թվով 3 առաջարկություն: Կազմվել են գործողությունների ծրագրեր, որոնցում սահմանվել են 5 միջոցառումներ: Ըստ ներքին աուդիտի վարչության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 5 առաջարկություններից 4-ն արդեն կատարվել են:

***ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ներքին աուդիտի ինչպես 2016թ.-ի, այնպես էլ 2017թ. տարեկան հաշվետվությունների համաձայն, ՊԵԿ-ի ընդհանուր հսկողական համակարգը գնահատվել է որպես բավարար արդյունավետ:***

# 4. ԳՆՈՒՄՆԵՐ

**2015-2017թթ. ընթացքում պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ հարկային վարչարարության արդիականացման վարկային ծրագրով և ՌԴ կառավարության աջակցությամբ իրականացվող Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհով (այսուհետ՝ ՌԴ դրամաշնորհ) իրականացված գնումներն՝ ըստ գնման առարկայի.**

## 1. SS ապրանքներ և ծառայություններ

SS համակարգերի համար պայմանագիր՝ 4 մլրդ 283.6 մլն ՀՀ դրամի

1.1. Ինչպես ՀՀ գնումների օրենսդրությամբ, այնպես էլ՝ Համաշխարհային բանկի գնման ընթացակարգերով նախատեսված է գնումների պլանների մշակում և դրանց պարբերական վերանայում:

*Գնումների պլանների ուսումնասիրության արդյունքում պարզվել է.*

1.1.1. Հետևյալ գնման նախահաշիվները կազմվել են առանց մանրամասն հաշվարկների՝

**1.1.1.1.** Մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի արդիականացման և/կամ/ նոր տեղեկատվական համակարգերի ներդրման աշխատանքներ (ՌԴ դրամաշնորհ), պայմանագրի գումար՝ 4 մլրդ 283.6 մլն ՀՀ դրամ.

**1.1.1.2.** Տեխնիկական ենթակառուցվածքի արդիականացման, գործող ենթակառուցվածքի հետ ինտեգրման և ներդրման ծառայություններ (ՌԴ դրամաշնորհ), պայմանագրի գումար՝ 663.3 մլն ՀՀ դրամ,

1.1.2. Հետևյալ գնումներն իրականացվել են առանց նախահաշվային փաստաթղթերի.

**1.1.2.1.** Մաքսային ծառայությունների համար մոնիթորինգային կենտրոնի ստեղծման/տեղադրման/ ծառայություններ (ՌԴ դրամաշնորհ), պայմանագրի գումար՝ 499.3 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.2.** էլեկտրոնային կշեռքների կենտրոնացված համակարգի ստեղծման ծառայություններ (ՌԴ դրամաշնորհ), պայմանագրի գումար՝ 505 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.3.** Տեսակոնֆերանսների սարքերի ձեռք բերում (ՌԴ դրամաշնորհ), պայմանագրի գումար՝ 298.3 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.4.** ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլ. համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու-3» համակարգի) սպասարկման ծառայությունների մատուցում (Պետական բյուջե), պայմանագրի գումար՝ 234.7 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.5.** Եկամտային հարկի և սոցիալական վճարների անձնավորված հաշվառման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցում (Պետական բյուջե), պայմանագրի գումար՝ 75.8 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.6.** ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված ՀԴՄ-ների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայությունների մատուցում (Պետական բյուջե), պայմանագրի գումար՝ 54.9 մլն ՀՀ դրամ.

**1.1.2.7.** Տվյալների մշակման կենտրոնի համար լրացուցիչ զովացման համակարգերի ձեռք բերում (Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր)՝ 92 մլն դրամ:

1.2. *2015-2017թթ. մատակարարված ապրանքների գույքագրման և հաշվառման, ինչպես նաև, դրանց հետագա հաշվապահական ձևակերպումների մասով պարզվել են հետևյալ խնդիրները.*

Ձեռք բերված ակտիվների հաշվառման վերաբերյալ առկա են անճշտություններ ներկայացված տվյալներում

1.2.1. ՌԴ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված ակտիվների հաշվառման վերաբերյալ ներկայացված տվյալներում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

1.2.2. Մասնավորապես, ներկայացված ակտիվների արժեքները չեն ներառել տեղակայման ու կարգաբերման աշխատանքների արժեքը և այդ նպատակով ծախսված նյութերի գծով կատարված ծախսումները:

Ծրագրի շրջանակներում ձեռք բերված ակտիվների արժեքները ներառել են միայն ակտիվների ձեռք բերման գները, առանց հաշվի առնելու ակտիվը նախանշած նպատակներով օգտագործելու համար

աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ծախսումները:

1.2.3. Ակտիվները ձեռք են բերվել մինչև ՀՀ ՎՊ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում իրականացվող վերահսկողության սկիզբը, սակայն վերահսկողության ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվապահության կողմից ներկայացված հիմնական միջոցների անալիտիկ ցանկերում տվյալ ակտիվները (տեղեկատվությամբ ներկայացված գույքային համարներով) ներառված չեն եղել:

1.2.4. Վերահսկվող օբյեկտի կողմից տրամադրված տեղեկատվությամբ ՌԴ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՊԵԿ մաքսային ծառայությունների համար ստեղծված մոնիթորինգի կենտրոնի սարքավորումների նյութական պատասխանատու անձ է նշվել տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետը, մինչդեռ, սարքավորումների մի մասը տեղակայված են մաքսակետերում և մաքսատներում, իսկ մյուս մասը տեղակայված է ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչությունում և շահագործվում է վարչության կողմից:

1.2.5. Սովորաբար, աշխատողի վրա ապրանքանյութական արժեքների նկատմամբ նյութական պատասխանատվություն սահմանվում է աշխատողի աշխատանքային պարտականություններով և գործառույթներով պայմանավորված նրա կամ նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանումների կողմից օգտագործվող նյութական արժեքների նկատմամբ, մինչդեռ, վերը նշված սարքավորումները շահագործվում են ՊԵԿ այլ ստորաբաժանումների կողմից և գտնվում են նրանց վերահսկողության ներքո:

1.2.6. Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի շրջանակներում ձեռք բերված ակտիվների հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել այն պատճառաբանությամբ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ֆինանսահաշվային վարչությանը դրանց մասով տեղեկատվություն տրամադրվել է 21.12.2017թ.-ին և այն գտնվում է աշխատանքային փուլում: Ծրագրի շրջանակներում առնվազն 3 պայմանագրի մասով («Ինկրիպտ», «Այյունեթվորքս» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ների կողմից) հարկային հաշիվները դուրս են գրվել և ապրանքների մատակարարման հանձնման-ընդունման ակտերն ընդունվել են ՊԵԿ պատասխանատու աշխատողների կողմից:

1.3. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի հետ 04.12.2015թ.-ին կնքված 499.2 մլն ՀՀ դրամ գումարով ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-15/22 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մաքսային ծառայությունների համար մոնիթորինգի նպատակներով 2017թ. ապրիլին մատակարարված թվով 224 հատ Bosch մակնիշի տեսախցիկից 36 հատը (21 հատ գմբեթաձև, 11 հատ կաղապարային և 4 հատ PTZ տեսակի տեսախցիկներ) պահեստավորված են և դրանց հետագա ճակատագիրը հայտնի չէ:

Մի շարք սարքավորումներ պահեստավորված են և դրանց հետագա ճակատագիրը հայտնի չէ

1.4. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի հետ 18.04.2017թ.-ին կնքված թիվ TAMP-G-1.14/2 պայմանագրի շրջանակներում զովացման համակարգերի ձեռք բերման, տեղադրման և վերամոնտաժման նպատակով իրականացվել է 92 մլն ՀՀ դրամի գնում (զովացման համակարգեր և հարակից սարքավորումներ՝ 56 մլն ՀՀ դրամ, տեղադրման, կարգաբերման և վերամոնտաժման աշխատանքներ՝ 36 մլն ՀՀ դրամ): Քանի որ տեղադրման, կարգաբերման և վերամոնտաժման աշխատանքների նախահաշիվ չի կազմվել, հստակ չէ տեղադրման, կարգաբերման և վերամոնտաժման աշխատանքներից յուրաքանչյուրի չափաբաժինը և շրջանակը:

Զովացման համակարգերի ձեռք բերման, տեղադրման և վերամոնտաժման նպատակով իրականացվել է 92 մլն ՀՀ դրամի գնում

1.5. «Ֆոռս Ցենտր Ռազրաբոտկի» ընկերության հետ 30.11.2015թ.-ին կնքված 505 մլն ՀՀ դրամ գումարով ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-15/17 ծածկագրով պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային կշեռքների կենտրոնացված համակարգը մատակարարվել է 2017թ. ապրիլին: Համակարգը փորձարկվել է 2017թ. ապրիլ-օգոստոս ամիսներին, սակայն 2017թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ դեռևս չէր գործարկվել:

## 2. Ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակներ

2.1. 2015-2017թթ. պետական բյուջեի միջոցներով «Էյ-Էմ-Փի-Ջի գրուպ» ՍՊԸ-ից ձեռք են բերվել ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակներ՝ հաշվի չառնելով ՊԵԿ-ում առկա մնացորդները: Արդյունքում, մեծ քանակությամբ մնացորդի առկայության պարագայում պարբերաբար ձեռք են բերվել հավելյալ ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակներ: Մասնավորապես.

Մնացորդի առկայության պարագայում պարբերաբար ձեռք են բերվել հավելյալ ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակներ

2.2. 01.01.2015թ. դրությամբ առկա է եղել մնացորդ՝ 1,286 մլն հատ դրոշմապիտակ և 273.7 մլն հատ ակցիզային դրոշմանիշ, նույն տարում ձեռք է բերվել լրացուցիչ 834.5 մլն հատ դրոշմապիտակ և 277.2 մլն հատ ակցիզային դրոշմանիշ:

2.3. 2015թ. ընթացքում ելքագրվել է ընդամենը՝ 730.1 մլն հատ դրոշմապիտակ և 283.9 մլն հատ ակցիզային դրոշմանիշ:

2.4. 01.01.2016թ. դրությամբ առկա է եղել մնացորդ՝ 1,390.7 մլն հատ դրոշմապիտակ և 269.8 մլն հատ ակցիզային դրոշմանիշ, նույն տարում ձեռք է բերվել լրացուցիչ 500 մլն հատ դրոշմապիտակ և 304.6 մլն հատ ակցիզային դրոշմանիշ:

2.5. 2016թ. ընթացքում ելքագրվել է ընդամենը՝ 1,172 մլն հատ դրոշմապիտակ և 220.7 մլն հատ ակցիզային դրոշմանիշ:

2.6. 01.01.2017թ. դրությամբ առկա է եղել մնացորդ՝ 1,171.9 մլն հատ դրոշմանիշ և 220 մլն հատ ակցիզային դրոշմանիշ, նույն տարում ձեռք է բերվել լրացուցիչ 332.8 մլն հատ ակցիզային դրոշմանիշ, իսկ դրոշմապիտակ ձեռք չի բերվել:

2.7. 2017թ. հունվարի 1-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ելքագրվել է ընդամենը՝ 650.8 մլն հատ դրոշմապիտակ և 332.7 մլն հատ ակցիզային դրոշմանիշ:

## 3. ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցակետերի արդիականացման վարկային և դրամաշնորհային ծրագրեր

3.1. Ծրագրի գումարը կազմել է 60.6 մլն եվրո, որից Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ տրամադրված վարկ՝ 30.3 մլն եվրո, Եվրոպական հարևանության ներդրումային գործիքի կողմից դրամաշնորհ՝ 12 մլն եվրո, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրամադրած վարկ՝ 10.3 մլն եվրո, ԵՄ աջակցությամբ դրամաշնորհ 3.3 մլն եվրո, Վարկառուի սեփական միջոցներ՝ 3.9 մլն եվրո և Միացյալ ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) դրամաշնորհ՝ 0.8 մլն եվրո, որի միջոցներով պետք է իրականացվեին վերը նշված ծրագրերը:

> Ծրագրի գումարը կազմել է 60.6 մլն եվրո

3.2. Ծրագրերի շրջանակներում իրականացված գնումների գործընթացն ամբողջությամբ իրականացվել է ՄԱԶԾ երևանյան գրասենյակի միջոցով: Ծրագրով ձեռք բերված ակտիվները պատկանում են ՄԱԶԾ-ին: Ամբողջ գույքը վերջնական տեսքի և աշխատանքային վիճակի բերելուն պես պետք է տրամադրվի ՀՀ կառավարությանը: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 366-Ա որոշմամբ ստեղծվել է ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողով և հաստատվել է դրա անհատական կազմը: Վերահսկողության ժամանակահատվածում վերջնական հանձնման-ընդունման գործընթացը դեռևս չէր ավարտվել, ուստի ծրագրի կատարումը հնարավոր կլինի ուսումնասիրել ՀՀ կառավարությանն ակտիվների վերջնական հանձնումից հետո:

3.3. Վերահսկողության ժամանակահատվածում վերահսկողության հանձնաժողովին վերահսկվող օբյեկտը գնումների գործընթացի վերաբերյալ տրամադրել է սահմանափակ տեղեկատվություն: Արդյունքում, հնարավոր չի եղել ստուգել ծրագրերի իրականացումը և տրամադրել եզրակացություններ:

## 4. Հայաստանի մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման վարկային ծրագիր

4.1.1. Չինաստանի արտահանման-ներմուծման բանկը ՀՀ մաքսային զննման տեխնոլոգիաների եվ սարքավորումների արդիականացման նպատակով ՀՀ-ին տրամադրել է 155.4 մլն յուան վարկ, որով չինական «Նյուքթեք Քոմփնի Լիմիթեդ» ընկերությունից ՀՀ-ն ձեռք է բերել տարբեր տեսակի թվով 11 զննման համակարգեր, ինչպես նաև, ինտեգրված ավտոմատ համակարգ և հարակից տեխնիկա:

ՀՀ մաքսային զննման տեխնոլոգիաների եվ սարքավորումների արդիականացման նպատակով ՀՀ-ին տրամադրվել է 155.4 մլն յուան վարկ

4.1.2. Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ ծրագրի շրջանակներում ձեռք բերված ապրանքները և դրանց արժեքները հաշվառված են կոմպլեկտներով և հավաքածուներով, ինչն անհնարին է դարձնում առանձին ապրանքների հաշվառումը: Ուստի, ձեռք բերված առանձին ապրանքները հաշվառված չեն՝ չկան քանակային տվյալներ և նյութական պատասխանատուներ:

4.1.3. Ինչ վերաբերում է մաքսային զննման համակարգերի կիրառման արդյունավետությանը, ապա, դրա ընդհանուր նկարագիրը ներկայացված է ռենտգենյան սարքավորումներով փաստացի զննված բեռների քանակների վերաբերյալ կից աղյուսակում: Աղյուսակից պարզ է դառնում, որ անհրաժեշտ վարչարարական միջոցառումների անցկացումից հետո հնարավոր է էլ ավելի բարելավել համակարգի կիրառման արդյունավետությունը, ինչն, անշուշտ, դրական կազդի մաքսային հսկողության գործընթացը բնութագրող ցուցանիշների վրա:

## «ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՈԱԿ

**1. Գրասենյակի գործունեության վերահսկողության արդյունքում պարզվել է.**

1.1. ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 579-Ն որոշման համաձայն՝ 2016թ. սեպտեմբերի 1-ից գրասենյակը պետք է իրականացներ ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկում, մինչդեռ, կանոնադրության մեջ սույն փոփոխությունը չի իրականացվել, իսկ սպասարկումը փաստացի շարունակել են իրականացնել նախկինում տեխնիկական սպասարկում իրականցնող կազմակերպությունները:

Տեխնիկական սպասարկման կազմակերպման համար գրանցամատյան չի վարվել

1.1.1. ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 452-Ն որոշմամբ Գրասենյակի «տեխնիկական սպասարկում» գործունեությունը կրկին վերանայվել է «տեխնիկական սպասարկման կազմակերպում՝ որոշմամբ սահմանված ընթացակարգով» գործունեությամբ:

1.2. ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 452-ն որոշման Հավելվածով սահմանված ընթացակարգի 2-րդ գլխի 3-րդ կետի համաձայն՝ Գրասենյակը ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկման կազմակերպման համար պետք է վարեր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցամատյան:

Նույն որոշման Հավելվածով սահմանված ընթացակարգի 3-րդ գլխի 9-րդ կետի համաձայն՝ գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասին Գրասենյակի տրամադրած տվյալները տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

1.2.1. Վերահսկողության ժամանակահատվածում տեխնիկական սպասարկման կազմակերպման համար գրանցամատյան չի վարվել, իսկ տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպությունների մասին տվյալները տեղադրված չեն հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ՊԵԿ-ը, որպես վարչական մարմին, չի վարել վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյաններ, ինչպես նաև՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի հաշվառման առանձին գրանցամատյաններ:

2 ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. օգոստոսի 29-ի «ՀՀ ֆինանսների նախարարության հարկային (տարածքային) տեսչությունների կողմից հարկային և այլ պարտավորությունների գանձման ուղղությամբ իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը միասնական կարգով ներկայացնելու վերաբերյալ» թիվ 559-Ա հրամանով սահմանված հաշվետվությունները չեն ներկայացվում ՊԵԿ-ի իրավաբանական վարչությանը:

3 Մի շարք գնումներ իրականացվել են առանց նախահաշվային փաստաթղթերի կամ ոչ մանրամասն նախահաշիվների:

4 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հարկային վարչարարության արդիականացման և Չինաստանի արտահանման-ներմուծման բանկի աջակցությամբ իրականացված Հայաստանի մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման վարկային ծրագրերի շրջանակներում ձեռք բերված ակտիվները հաշվառված չեն, իսկ ՌԴ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված ակտիվների հաշվառման վերաբերյալ ներկայացված տվյալներում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

5 Մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում մատակարարված զննման համակարգի արդյունվետ կիրառման մասով անհրաժեշտ է վարչարարական միջոցառումների իրականացում:

6 Մաքսային ծառայությունների համար մոնիթորինգի նպատակներով ձեռք բերված 224 հատ տեսախցիկից 36-ը պահեստավորված են և դրանց հետագա ճակատագիրը հայտնի չէ:

7 Մաքսային ծառայությունների համար էլեկտրոնային կշեռքների կենտրոնացված համակարգը մատակարարվել էր 2017թ. ապրիլին, սակայն 2017թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ դեռևս չէր գործարկվել:

8 Տվյալների մշակման կենտրոնի համար ձեռք բերված լրացուցիչ զովացման համակարգերի տեղադրման, կարգաբերման և վերամոնտաժման աշխատանքներից յուրաքանչյուրի չափաբաժինը և շրջանակը հստակ չէ:

9 Ձեռք են բերվել լրացուցիչ ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակներ՝ հաշվի չառնելով առկա մնացորդները:

10 «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկման կազմակերպման համար չի վարել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցամատյան, ինչը պահանջվում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 452-ն որոշման Հավելվածով սահմանված ընթացակարգի 2-րդ գլխի 3-րդ կետով:

11 ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպությունների մասին տվյալները տեղադրված չեն հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչը պահանջվում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 452-ն որոշման Հավելվածով սահմանված ընթացակարգի 3-րդ գլխի 9-րդ կետով:

12 Վերահսկողության ժամանակահատվածում հնարավոր չի եղել ստուգել ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցակետերի արդիականացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացումը և տրամադրել եզրակացություններ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին

1. Ապահովել վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի հաշվառման առանձին գրանցամատյանների վարումը:
2. Ապահովել ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. օգոստոսի 29-ի թիվ 559-Ա հրամանով սահմանված հաշվետվությունների ներկայացումը ՊԵԿ-ի համապատասխան ստորաբաժանմանը:
3. Գնումներն իրականցնել մանրամասն հաշվարկներ պարունակող նախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Գնումների առարկան սահմանելիս հստակեցնել տեղադրման, կարգաբերման և վերամոնտաժման աշխատանքներից յուրաքանչյուրի չափաբաժինները և շրջանակը, ինչպես նաև գնումներն իրականացնելիս հաշվի առնել նույն ապրանքի առկա մնացորդները:
4. Իրականացնել վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռք բերված ակտիվների ամբողջական հաշվապահական հաշվառում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
5. Որոշել մաքսային ծառայությունների համար մոնիթորինգի նպատակներով ձեռք բերված թվով 36 պահեստավորված տեսախցիկի հետագա ճակատագիրը:
6. Ամբողջությամբ գործարկել մաքսային ծառայությունների համար մատակարարված էլեկտրոնային կշեռքների կենտրոնացված համակարգը:
7. Բարելավել զննման համակարգի կիրառման արդյունավետությունն՝ անհրաժեշտ վարչարարական միջոցառումների անցկացման միջոցով:
8. Ապահովել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 452-ն որոշման Հավելվածով սահմանված ընթացակարգի պահանջների կատարումը:
9. ՀՀ վերահսկիչ պալատի ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցակետերի արդիականացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման մասով հնարավոր կլինի

իրականացնել վերահսկողություն ՀՀ կառավարությանն ակտիվների վերջնական հանձնումից հետո:

***«ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ/ կետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:***

*Աղյուսակ 1*

## Ռենտգենյան սարքավորումներով փաստացի զննված բեռների քանակի վերաբերյալ

| Սարքավորման անվանում և դիտարկման ժամանակահատված | Մեղրու մ/կ | Արևմտյան մաքսատուն-վարչություն Զվարթնոց | Արարատյան Մաքսատուն վարչության 2-րդ բաժին | Այրում մ/կ | Նախաբաց թողումային հսկողության վարչություն | Բագրատաշեն մ/կ | Բավրա մ/կ | Տրանսալիանս մաքսային պահեստ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Nuctech CS 1000 20.01.2016 -26.01.2018** | **2263** | | | | | | | |
| **Nuctech CS 1000 15.04.2016 -26.01.2018** | | | **280** | | | | | |
| **Nuctech BX 1000 25.07.2016 -26.01.2018** | | **60** | | | | | | |
| **Nuctech BX 1000 28.07.2016 -26.01.2018** | **372** | | | | | | | |
| **Nuctech BI 2002 25.07.2016 -26.01.2018** | | **63** | | | | | | |
| **Nuctech BI 2002 28.07.2016 -26.01.2018** | **118** | | | | | | | |
| **Nuctech RF6010 18.12.2017-26.01.2018** | | | | **67 շարակազմ** | | | | |
| **Nuctech LT1213LH(10802) 17.11.2015-26.01.2018** | | | | | | | **33** | |
| **Nuctech LT1213LH(10803) 17.11.2015-26.01.2018** | | **51** | | | | | | |
| **Nuctech LT1213LH(10804) 29.01.2016-26.01.2018** | | | | | | | | **71** |
| **Nuctech LT1213LH(10805) 29.01.2016-26.01.2018** | | | | | | **533** | | |
| **Վերահսկողության ինգտեգրված համակարգ (GPS փականներ) 28.06.2017-26.01.2018** | | | | | **Օգտագործվում է 100 հատ կողպեք** | | | |

# 2.17 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ (ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 22-րդ հոդվածը, «Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտի (հսկողության) մասին» 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33 Հիմնադրույթը, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից հաստատված համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու 2017 թվականի արտաքին աուդիտի (հսկողության) պլանը, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի զ) կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. հուլիսի 25-ի թիվ 13/2 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | Եվրասիական տնտեսական միության մարմիններում (այսուհետ՝ ԵԱՏՄ մարմիններ) բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետության նկատմամբ հսկողական միջոցառման իրականացում: |
| **Վերահսկողության առարկան** | ԵԱՏՄ մարմիններում բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման գործընթացներ, Միության գույքի և այլ ակտիվների օգտագործում: |
| **Վերահսկողության օբյեկտները** | ԵԱՏՄ անդամ պետությունների մարմիններ՝<br>Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ք. Մոսկվա)<br>Եվրասիական տնտեսական միության դատարան (ք. Մինսկ) |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ և 2017 թվականի 1-ին կիսամյակ: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտի (հսկողության) մասին թիվ 33 Հիմնադրույթով սահմանված հետագա, ընթացիկ և նախնական աուդիտներով իրականացված ֆինանսական, համապատասխանության, արդյունավետության վերահսկողության տեսակները:<br>Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են ստուգման արդյունքները: |

# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *Համատեղ վերահսկողական աշխատանքների վերաբերյալ*

**2017 թվականին աշխատանքների պատասխանատու է հանդիսացել Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեն**

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 22-րդ հոդվածի, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտ (հսկողություն) իրականացնելու մասին Հիմնադրույթի (այսուհետ՝ Հիմնադրույթ) ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինները Միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Միության գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետությունը որոշելու նպատակով 2017 թվականին համատեղ արտաքին աուդիտ (հսկողություն) են իրականացրել ԵԱՏՄ մարմիններում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և Եվրասիական տնտեսական միության դատարանում (այսուհետ՝ ԵԱՏՄ դատարան):

Համաձայն Հիմնադրույթի 36-րդ կետի՝ արտաքին աուդիտի (հսկողության) կազմակերպման մասով գործունեությունը ռոտացիոն կարգով համակարգվում է պետական ֆինանսական վերահսկողության պատասխանատու բարձրագույն մարմնի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ ըստ Միության անդամ պետության անվանման ռուսերեն այբբենական հերթականության: 2017 թվականին նշված աշխատանքների պատասխանատու է հանդիսացել Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեն, որը կազմակերպել և համակարգել է այդ աշխատանքները:

Հիմք ընդունելով Հիմնադրույթի 37-րդ և 43-րդ կետերը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից համատեղ վերահսկողական միջոցառման իրականացման նպատակով 2017 թվականի մարտի 16-ին հաստատվել է արտաքին աուդիտի (հսկողության) 2017 թվականի պլանը, 2017 թվականի օգոստոսի 15-ին հաստատվել են վերահսկողական

աշխատանքներն իրականացնող տեսուչների անհատական կազմը և միջոցառման անցկացման ծրագրերը, ինչպես նաև նշանակվել է տեսուչների խմբի ղեկավարը:

Արտաքին աուդիտի (հսկողության) 2017 թվականի պլանի համաձայն, Միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից վերահսկողական միջոցառումները 2017 թվականի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 6-ն իրականացվել են ԵԱՏՄ դատարանում և սեպտեմբերի 7-ից 30-ը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

Վերահսկողական միջոցառումների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և ԵԱՏՄ դատարանում Եվրասիական տնտեսական միության 2016 թվականի բյուջեի կատարման հետագա աուդիտի և Եվրասիական տնտեսական միության 2018 թվականի բյուջեի ձևավորման նախնական աուդիտի իրականացման ընթացքում կազմվել են համապատասխան արձանագրություններ (ակտեր), ինչպես նաև կամերալ ուսումնասիրությունների ձևով իրականացվել է 2017 թվականի առաջին կիսամյակում Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման ընթացիկ աուդիտ, որի արդյունքներով կազմվել են համապատասխան եզրակացություններ:

## *Համատեղ վերահսկողական արդյունքների ամփոփմանն ուղղված աշխատանքներ*

Հիմնադրույթի 59-րդ և 61-րդ կետերով սահմանված է, որ հետագա աուդիտի, ընթացիկ աուդիտի և նախնական աուդիտի իրականացման արդյունքներով, միջոցառումների անցկացման արդյունքների հիման վրա կազմված ամփոփիչ հաշվետվությունները տեսուչների խմբի ղեկավարի կողմից ուղարկվում է պատասխանատու բարձրագույն վերահսկողական մարմին, հետագայում դրանք պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների համատեղ քննարկմանը ներկայացնելու և հաստատելու համար:

2017 թվականին ԵԱՏՄ մարմիններում իրականացված արտաքին աուդիտի (հսկողության) արդյունքներով տեսուչների խմբի կողմից կազմված ամփոփիչ հաշվետվություններն անցել են համաձայնեցման փուլը և ըստ գործող կարգի, Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեի կողմից, որպես 2017 թվականին ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտի (հսկողության) իրականացման պատասխանատու բարձրագույն վերահսկողական մարմին,

պետք է ներկայացվի ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների համատեղ հաստատման:

***Տեսուչների խմբի ղեկավարի ստորագրությամբ հաշվետվությունները, 2018 թվականի մարտի 22-ի դրությամբ, պետական ֆինանսական վերահսկողության պատասխանատու բարձրագույն մարմնի կողմից պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմիններին, այդ թվում՝ ՀՀ վերահսկիչ պալատին, պաշտոնապես հաստատման դեռևս չեն ներկայացվել:***

Բացի այդ, համաձայն Հիմնադրույթի 62-րդ կետի, ձևակերպված ամփոփիչ հաշվետվությունները ԵԱՏՄ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների, այդ թվում՝ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից քննարկվելուց հետո, համատեղ որոշումներով հաստատվում և համապատասխան որոշումների նախագծերի հետ միասին ներկայացվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ) քննարկմանը:

Նկատի ունենալով վերոգրյալը, հիմք ընդունելով Հիմնադրույթի 4-րդ կետի 14-րդ պարբերության, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հիմնադրույթի 70-րդ կետի դրույթները՝ «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, ամփոփիչ հաշվետվությունները կներկայացվեն ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի հաստատմանը, իսկ ԵԱՏՄ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից համատեղ որոշումներով հաստատվելուց հետո, տասն օրվա ընթացքում, կներկայացվեն ՀՀ Ազգային ժողով, դրանց մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին:

ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից ԵԱՏՄ մարմիններում իրականացված արտաքին աուդիտի (հսկողության) արդյունքների վերաբերյալ Բարձրագույն խորհրդի որոշումն ընդունվելուց հետո հաշվետվությունները սահմանված կարգով կտեղադրվեն Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում:

# 2.18 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ, ԴՐԱՆՔ, ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ, ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| **Վերահսկողության հիմքը** | «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 53-րդ կետը, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու մասին 2017 թվականի մայիսի 12-ի համաձայնագիրը, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի զ) կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. մայիսի 2-ի թիվ 9/1 որոշումը: |
| **Վերահսկողության նպատակը** | Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու կարգի կիրառման նկատմամբ հսկողական միջոցառման իրականացում: |
| **Վերահսկողության օբյեկտները** | Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (ք. Երեւան),<br><br>Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն (ք. Մինսկ),<br><br>Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտե (ք. Աստանա),<br><br>Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան (ք. Բիշքեկ),<br><br>Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչություն (ք. Մոսկվա), Դաշնային գանձապետարան (ք. Մոսկվա): |
| **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը** | 2016 թվականի հունվար-դեկտեմբեր: |
| **Վերահսկողության կատարման ժամկետը** | 2017 թվականի մայիսի 12-ից մինչև 2017թ. նոյեմբերի 30-ը ներառյալ: |
| **Վերահսկողության մեթոդաբանությունը** | Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են ստուգման արդյունքները: |

## *Համատեղ վերահսկողական աշխատանքների վերաբերյալ*

Համաձայն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից համատեղ վերահսկողական միջոցառում իրականացնելու վերաբերյալ համաձայնագրի և միասնական ծրագրի, 2017 թվականի մայիսի 25-ից մինչև հուլիսի 14-ը ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) իրականացվել են համատեղ վերահսկողական միջոցառումներ:

Վերահսկողական միջոցառումների ընթացքում յուրաքանչյուր վերահսկողության օբյեկտում կազմվել են համապատասխան ակտեր, որոնց ամփոփումից հետո կազմվել է հաշվետվություն, որը հաստատվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին կայացած (տեսակոնֆերանսի տեսքով) ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների համատեղ կոլեգիայի որոշմամբ: Վերահսկիչ պալատի կողմից հաստատված հաշվետվության նախագիծը դեռևս 2017թ. դեկտեմբերի 20-ին ուղարկվել էր պաշտոնական թարգմանության, որի հայերեն տարբերակը ստացվել է 2018թ. հունվարի 25-ին:

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատը, որպես վերահսկողական միջոցառումների կազմակերպիչ և համակարգող, հաստատված հաշվետվությունը ստորագրման նպատակով, այբբենական ընթացակարգով ուղարկել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմիններին: Հաշվետվությունը ստորագրվել է Ղրղզստանի հաշվիչ պալատի, ՀՀ վերահսկիչ պալատի, Բելառուսի պետական հսկողության կոմիտեի ղեկավարների կողմից և ուղարկվել է Ղազախստանի հաշվիչ կոմիտե: Ղազախստանի հաշվիչ կոմիտեի կողմից հաշվետվությունը ստորագրվելուց հետո այն ուղարկվելու է ՌԴ հաշվիչ պալատ, սակայն կատարված հարցումից պարզվել է, որ 2018 թվականի մարտի 15-ի դրությամբ ՌԴ հաշվիչ պալատը հաշվետվությունը չի ստացել և հաշվետվությունը դեռևս չի ստորագրվել բոլոր բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավական ակտը (տվյալ դեպքում համատեղ խորհրդի որոշումը), ընդունված է համարվում իրավասու պաշտոնատար անձանց կողմից այն ստորագրվելու օրվանից, հետևաբար կարող ենք արձանագրել, որ բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից հաշվետվության վավերացման գործընթացը դեռևս ավարտված չէ, այսինքն՝ փաստաթուղթը դեռ ուժի մեջ չէ:

Այսպիսով, ստորագրման գործընթացը ավարտվելուց հետո, ստորագրված հաշվետվության օրինակը ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ստանալուն պես, սահմանված կարգով 10 օրվա ընթացքում կներկայացվի ՀՀ Ազգային ժողով, դրա մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին, ինչպես նաև 30 օրվա ընթացքում կտեղադրվի ՀՀ վերահսկիչ պալատի պաշտոնական կայքում:

# 3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## 3.1. Զարգացման ծրագրեր

**3.1.1 ՀՀ-ում Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) պատվիրակությունը և «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը» (այսուհետև՝ ԳՄՀԸ) շարունակում են մնալ ՀՀ վերահսկիչ պալատի կարողությունների զարգացման գործում կարևոր դերակատարներ: ԵՄ և ԳՄՀԸ համատեղ տեխնիկական աջակցության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները.**

- Ամփոփվել են 2016թ. ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակիցների և հրավիրված խորհրդատուների (որակավորված աուդիտորների) մասնակցությամբ հաշվեքննության բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտներին (ISSAI-ներին) համապատասխան իրականացված թվով 6 պիլոտային ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության և թվով 2 արդյունավետության հաշվեքննության արդյունքները:

- Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի ևս 50 աշխատակիցներ մասնակցել են ISSAI-ների հիման վրա ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության հաշվեքննության վերապատրաստման դասընթացներին: Աշխատակիցները հրավիրված խորհրդատուների (որակավորված աուդիտորների) մասնակցությամբ իրականացրել են ISSAI-ներին համապատասխան թվով 6 պիլոտային ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն 6 հանրային կազմակերպություններում:

- Նախապես վերապատրաստված ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակիցներն իրականացրել են ISSAI ստանդարտներին համապատասխան թվով 2 պիլոտային արդյունավետության հաշվեքննություն:

- Հիմք ընդունելով պիլոտային հաշվեքննությունների արդյունքները՝ ներգրավված խորհրդատուների կողմից վերանայվել են ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության ձեռնարկները:

Նշված պիլոտային աուդիտների կատարման պահանջը բխում էր «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրից:

Նախորդ տարիներին Հայաստանի արտաքին հաշվեքննության համակարգի անկախության, արդյունավետության և թափանցիկության հզորացման գործում նշանակալի ձեռքբերումները հիմք են հանդիսացել ՀՀ վերահսկիչ պալատի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և ԳՄՀԸ-ի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրման համար, որով մեկնարկել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության համաֆինանսավորմամբ «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» 2017-2020թթ. նոր ծրագիրը:

Նոր ծրագրի շրջանակներում Վերահսկիչ պալատը և ԳՄՀԸ-ն համատեղ մշակել են «Վերահսկողությունից ISSAI-ներին համահունչ հաշվեքննության անցման 2017-2020թթ. միջոցառումների պլան», որը կվերանայվի ծրագրի ողջ ընթացքում՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի կայացման և զարգացման մարտահրավերների դիմագրավման նպատակով: Հաշվետու տարում արդեն իսկ ձեռք է բերվել պայմանավորվածություն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված շտեմարանների առցանց հասանելիության ապահովման վերաբերյալ:

**3.1.2 Հաշվեքննության կարողությունների զարգացման նպատակով նախնական պայմանավորվածություններ է ձեռք բերվել ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության հետ, որի շրջանակներում դոնոր կազմակերպության կողմից առաջիկայում նախատեսվում է տեխնիկական աջակցություն ՀՀ վերահսկիչ պալատին:**

**3.1.3 Հաշվետու տարում, դեռևս 2016 թվականին ձևավորված հատուկ խումբը շարունակել է Վերահսկիչ պալատի կատարողականի ինքնագնահատման աշխատանքները: Ինքնագնահատումը կատարվել է INTOSAI-ի կողմից մշակված SAI PMF ձևաչափով (ստանդարտով):**

**Ինքնագնահատման հաշվետվության վերջնական տարբերակի՝ միջազգգային հավաստիացում ստանալու ուղղությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում INTOSAI Զարգացման նախաձեռնության (IDI) գրասենյակի հետ: Միջազգային հավաստիացում ստանալուց հետո, 2018 թվականին, նախատեսվում է հրապարակել ինքնագնահատման**

**հաշվետվությունը և դրա հիման վրա մշակել Զարգացման ռազմավարության նոր հնգամյա ծրագիր:**

### 3.2. Մասնակցություն միջազգային և տարածաշրջանային միջոցառումներին

ՀՀ վերահսկիչ պալատի պատվիրակությունները մասնակցել են միջազգային և տարածաշրջանային նշանակության մի շարք միջոցառումների, մասնավորապես՝

- 2017թ. մայիսի 22-ից 25-ը ՀՀ վերահսկիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է Թուրքիայի ք. Ստամբուլ քաղաքում կայացած հաշվեքննության բարձրագույն մարմինների եվրոպական կազմակերպության (ԵՎՐՈՍԱԻ) 10-րդ համագումարի աշխատանքներին: Համագումարի հիմնական թեման էր՝ ISSAI-ների ներդրման մարտահրավերները և լուծումները: Համագումարի արդյունքում ԵՎՐՈՍԱԻ անդամներն ընդունել են ստամբուլյան հռչակագիր, որի հիմնական ուղերձը ԵՎՐՈՍԱԻ-ի անդամ երկրների կողմից ISSAI-ների ներդրման շարունակականության ապահովումն է:

- ՀՀ վերահսկիչ պալատը 2017թ. մայիսի 23-25-ը մասնակցություն է ունեցել Ուկրաինայի Կիև քաղաքում կայացած Գնումների, օրինավորության, կառավարման և հրապարակայնության (PRIMO) 13-րդ ֆորումի աշխատանքներին: Ֆորումը կազմակերպվում է ամեն տարի Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Իսլամական զարգացման բանկի համաֆինանսավորմամբ: Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում Վերահսկիչ պալատը ձեռք բերեց Համաշխարհային բանկի Client Connection տեղեկատվական համակարգն առցանց հասանելի դարձնելու հնարավորություն, ինչն էլ կբարձրացնի պալատի աուդիտների արդյունավետությունը և թույլ կտա կիրառել ռիսկերի գնահատման մեթոդաբանություն: Ներկայումս աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ Վերահսկիչ պալատի համար գնումների ոլորտի «STEP – Sys-tematic Tracking of Exchanges in Procurement» տեղեկատվական համակարգի առցանց հասանելիության ապահովման ուղղությամբ, ինչը նույնպես կբարձրացնի պալատի գործունեության արդյունավետության մակարդակը:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գնումների վերահսկողության ոլորտում

թափանցիկության բարձրացման նպատակով համատեղ միջոցառումներ են իրականացվել Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի հետ:

### 3.3. Համատեղ վերահսկողություն

ՀՀ վերահսկիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված, ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից իրականացված թվով երկու համատեղ վերահսկողության միջոցառումներին հետևյալ թեմաներով՝

- ԵԱՏՄ անդամ պետությունների ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրում և բաշխում, դրանք, որպես եկամուտ, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցում

- ԵԱՏՄ բյուջեի միջոցների ձևավորում, կառավարում ու տնօրինում, Եվրասիական տնտեսական միության գույքի և այլ ակտիվների օգտագործում:

ԵԱՏՄ շրջանակում համատեղ ստուգումները կրում են շարունակական բնույթ: 2018 թվականին, արդեն Հաշվեքննիչ պալատը, ԵԱՏՄ անդամ երկրների բարձրագույն աուդիտի մարմինների հետ համատեղ, կրկին կիրականացնի նմանատիպ միջոցառումներ: